

ՆԻԻԹԵՐ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԺԳ. ՀԱՏՈՐ

Պեյրուք – Դեկտեմբեր 2019





Խմբագիր՝ ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

**«ՆԻԺԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ» մատենաշարի
հրատարակութիւնը կը կատարուի Հ.Յ.Դ. Բիւրոյի որոշումով:**

© All rights reserved
ISBN 978-9953-0-4669-3

**Ներկայ հատորին տպագրութիւնը իրականացած է նուիրատուութեամբ
Տէր եւ Տիկին Կարայիս եւ Մարալ Մխճեաններու:**





Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» շարքի ընթացիկ ԺԳ. հատորը սահմանուած է հիմնականին մէջ առաջին աշխարհամարտի 1916, 1917 եւ մասամբ 1918 տարիներուն: Կը հասնի մինչեւ նախօրեակը Մայիսեան յաղթական ճակատամարտերուն, որոնց արդիւնքով պիտի յառնէր մեր հայրենիքը իր դարաւոր գերեզարութենէն, եւ պիտի ստեղծուէր Հայաստանի անկախ հանրապետութիւնը:

Ընդհ. պատերազմի այդ տարիներուն, երբ երկրագունդի ժողովուրդներուն մեծագոյն մասը այս կամ այն չափով մասնակից էր կամ ենթակայ՝ աշխարհաւեր եւ արիւնալի մարտերուն, երբ ւաւերումի կ'ենթարկուէին ու կը քանդուէին հազարամեակներու քաղաքակրթութեան նիւթական եւ մշակութային բազմաթիւ արժէքներ, հայ ժողովուրդը պիտի վճարէր իր պատմութեան ծանրագոյն տուրքը. դաժանօրէն պիտի բնաջնջուէր Օսմանեան կայսրութեան տարածքին ապրող հայ խաղաղ ազգաբնակչութիւնը: Աւելին, ան պիտի կորսնցնէր իր պապենական հայրենիքին մեծագոյն մասը:

Դժխեմ այդ տարիներուն, Թուրքիոյ իշխող խաւի՝ Իթթիհատ վէ Թերաքքը կուսակցութեան ծրագրած եւ բուրք պետութեան գործադրած հայասպանութենէն մազապուրծ բեկորներու խլեակներ Սուրիոյ եւ Սիջազետքի անապատներուն մէջ վերապրումի յուսահատական ջանքեր ի գործ կը դնէին, դիմագրաւելով միաժամանակ համատարած սովն ու անոր հետեւող տեսակաւոր համաճարակներու արհաւիրքը:

Ջարդերէն ճողոպրած եւ Անդրկովկաս ապաստանած ւաւելի քան 300,000 ուրիշ արեւմտահայեր, համեմատաբար նուազ դաժան պայմաններու մէջ – բայց եւ այնպէս ենթակայ այլազան գրկանքներու – վերջնական տուն-դարձի համար պիտի սպասէին, որ վերջ գտնեն ռուսական զօրքերու ետ-առաջ շարժելու ռազմախաղերը, որոնք կարծես ուրիշ նպատակ չէին հետապնդեր, բացի Արեւմտահայաստանի մէջ իր գոյութեան համար հայութեան պայքարող մնացորդացիին ի սպառ ոչնչացումէն: Արդարեւ, ցարական իշխանութիւնները կը շարունակէին ծրագրուած ձեւով իրագործել «Հայաստան առանց հայոյ» իրենց վաղեմի քաղաքականութիւնը, որ նոր թափ կը ստանար Անգլիոյ եւ Ֆրանսայի, ապա նաեւ Ռուսիոյ միջեւ կնքուած Մայքս-Փիքո անունով ծանօթ համաձայնագրով: Արդարեւ, պատերազմի սկիզբէն, 1914-1916 երկարող տարիներու բանակցութիւններէն ետք, գաղտնի համաձայնութիւններով դաշնակից պետութիւնները վճռած էին Օսմանեան կայսրութեան վերջնական անդամահատումը, որմէ Ռուսիոյ բաժին պիտի իյնար, ի միջի այլոց, Տրապիզոնի, Էրզրումի, Վանի եւ Պիթլիսի նահանգները՝ մինչ այդ գրաւուած արդէն ռուսական զօրքերու կողմէ: Ուստի ցարական իշխանութիւններուն համար խօսք չէր կրնար ըլլալ այլեւս «ռուսական հովանաւորութեամբ Թուրքահայաստանին ինքնավարութիւն» տալու մասին, որ խոստացուած էր նախապէս հայութիւնը զօրաշարժի ենթարկելու համար. գրաւուած նահանգները մաս պիտի կազմէին պարզապէս ռուսական կայսրութեան, որուն նոր սահմաններուն ամրապնդման համար կը ծրագրուէր կոզակներով վերաբնակեցնել Ալաշկերտի հովիտը, Վանի եւ Էրզրումի նահանգները: Այդ պատճառով ալ կ'արգիւտէր հայ գաղթականութեան վերադարձը վերոյիշեալ շրջանները: Առաւելագոյնը որ կը նախատեսուէր հայութեան համար՝ «դպրոցական եւ եկեղեցական» գործերու մէջ ինքնավարութիւն տալ էր, եւ սեփական լեզուէն օգտուելու իրաւունք:

Ռուսական հակահայ քաղաքականութեան մէկ ուրիշ արտայայտութիւնը հանդիսացաւ հայ կամաւոր-





րական գունդերու լուծարքը: Ռուս-թրքական թշնամութեանց սկսելէն մինչեւ 1915-ի աւարտը՝ կամաւորական գունդերը օգտագործուած էին ցարական պետութեան ռազմա-նուաճողական առաջադրանքները իրագործելու նպատակով: Այժմ՝ երբ գրաւուած էր արդէն հայկական նահանգներու իրենց բաժին ինկած տարածքներուն մեծագոյն մասը, նոյն կամաւորները կը համարուէին այլեւս անբաղձալի տարր. միեւնոյն ժամանակ խոչընդոտ՝ ցարական կառավարութեան ռուսացման ծրագրի իրականացման: Ուստի վերջ պէտք է տրուէր՝ ռուսական զէնքի յաջողութիւններուն այնքան թանկագին ծառայութիւններ մատուցած այդ անձնուէր մարտիկներու ինքնուրոյն գոյութեան: Կեդրոնական կառավարութեան եւ բանակի հրամանատարութեան որոշումով անոնք պիտի ձուլուէին ռուսական բանակին մէջ իբրեւ առանձին հրաձանաձիգ գունդեր, գործելով հայազգի սպաներու հրամանատարութեան ներքեւ:

Հակահայ այս քաղաքականութիւնը վերջ պիտի գտնէր կամ ընդհատուէր, գէթ ժամանակաւորապէս, երբ 1917 թ. Փետրուար 27-ին անսպասելի կերպով պայթեցաւ յեղափոխութիւն, որ տապալելով Ռոմանովներու միապետական վարչակարգը՝ Ռուսիոյ տարածքին հռչակեց ժողովրդավարական կարգերու հաստատումը: Պետրոգրադի մէջ իշխանութեան գլուխ անցաւ ժամանակաւոր կառավարութիւն մը, որ Անդրկովկասի ղեկավարման համար նշանակեց Առանձին կամ Յատուկ կոմիտէ՝ ծանօթ Օգակոմ անունով՝ բաղկացած ռուս, վրացի, հայ եւ թուրք-թաթար ներկայացուցիչներէ: Շուտով, տեղական ինքնակառավարման սկզբունքով, ստեղծուեցան նահանգային, գաւառական, քաղաքային եւ գիւղական գործադիր կոմիտէներ:

Բռնակալութեան փլուզումը եւ իշխանութեան գլուխ ազատական ուժերու երեսան գալը խանդավառութեան մեծ ալիք բարձրացուց կայսրութեան տարածքին ապրող ժողովուրդներու շարքին նաեւ հայութեան տարբեր խաւերուն մէջ անխտիր: Յեղափոխութեան առաջին ամիսներուն արդէն, Կովկասի բոլոր հայաշատ քաղաքներուն մէջ, Թիֆլիսէն սկսեալ մինչեւ Ալեքսանդրապոլ (Գիւմրի), Երեսան, Կարս, Շուշի, Պաքու եւ այլուր արտակարգ եռուզեռի մէջ էին կուսակցական եւ հասարակական կազմակերպութիւնները, որոնք կայացուցին արհեստակցական, գիւղացիական, ուսանողական, գրական եւ մշակութային խորհրդրդաժողովներ եւ համագումարներ, ուր առանձնաբար կը շեշտուէր անհրաժեշտութիւնը ազատօրէն եւ ազգային հիմունքներով տնօրինելու հասարակական գործերը, որոնց կարգին նաեւ կրթականը՝ դպրոցական ծրագիրներու մէջ բոլոր առարկաները մայրենի լեզուով դաստիարակելու պայմանով:

Վերաշխուժացաւ նոյնպէս Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութիւնը, Կովկասի քաղաքներուն եւ գաւառային շրջաններուն մէջ վերակենդանացաւ կուսակցական կեանքը, վերակազմուեցան շարքերն ու գործադիր մարմինները՝ իրենց յարակից բանուորական, գիւղացիական եւ ուսանողական միութիւններով: Կուսակցութեան վարկը բարձր էր այն աստիճան, որ համառուսական Սահմանադիր ժողովի ընտրութիւններուն, Անդրկովկասի մէջ ան ստացաւ հայութեան քուէներուն 95% տոկոսը, ինչ որ ցուցանիշ էր հայկական իրականութեան մէջ անոր վայելած անվիճելի ժողովրդականութեան:

Ինչ կը վերաբերի արեւմտահայութեան, հոս վճռական նշանակութիւն պիտի ունենար ժամանակաւոր կառավարութեան 1917 թ. Ապրիլ 25-ի այն որոշումը, որուն համաձայն Թրքահայաստանի գրաւուած շրջաններէն «բուն հայկական համարուող» էր գրումի, Պիթլիսի եւ Վանի նահանգները, այլեւ Տրապիզոնը, դուրս բերուելով Թիֆլիսի իշխանութեանց (Օգակոմ) եւ կովկասեան ռազմաճակատի հրամանատարութեան իրաւասութենէն, կը դրուէին ուղղակի կեդրոնի՝ Պետրոգրադի կառավարութեան տնօրինութեան ներքեւ: Ասիկա կը նշանակէր մէկ կողմէ պաշտօնական որոշ ճանաչում հայկական նահանգներու ինքնավարութեան իրաւունքին, ապա՝ Արեւմտահայաստանի զինուորական թէ վարչական գործերու ղեկավարումը ազատել Կովկասի մէջ այդ օրերուն տիրող ազգամիջեան վէճերէն եւ հակասութիւններէն: Այդպիսի եր, օրինակ, վրացիներու մօտ առկայ այն տեսակետը, որ գրաւուած այդ հողամասերը ի վերջոյ պիտի վերադարձուէին Թուրքիոյ, մինչ թուրք-թաթարները ոչ միայն չէին ծածկեր իրենց համակրանքը միեւնոյն Թուրքիոյ նկատմամբ, այլեւ գաղտնի եւ բացայայտ ճամբաներով գործակցութեան մէջ էին անոր հետ: Բացի քաղաքական հարցերէն, անդրկովկասեան երեք ազգութիւններու ներհակ ուղղութիւնը կ'արտայայտուէր նաեւ այնպիսի այժմեական խնդրի մը մէջ, որ կը վերաբերէր ցարական վարչակարգի հաստատած նահանգային սահմանագծումները վերաքննելուն եւ գաւառներու պատկանելիութիւնը (օրինակ՝ Լոռի, Ախալքալաք) ճշդելուն՝ համաձայն տեղական ազգաբնակչութեան կազմին:

Վերադառնալով ժամանակաւոր կառավարութեան նշեալ հրամանագրին, յայտնենք որ գրաւեալ հայկական նահանգներու իշխանութեան գլուխ կարգուեցաւ զօրավար Աւերիանով, որուն քաղաքացիական





ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԲ

5

բաժնի օգնականներին մեկը պիտի ըլլար ռուս քաղաքական շրջանակներում հետ սերտ կապեր ունեցող Բժ. Յ. Չարեան: Յաջորդող ամիսներում, կեղծոճական կառավարութեան որոշումներով պիտի ճշգրտուէին զօրավար-կոմիսարին լիազօրութիւններն ու պարտականութիւնները, որոնցմէ ամենէն կարեւորները պէտք է համարել՝

ա- Թուրքիայէն գրաւուած հայկական նահանգները վերաբնակեցնել Կովկաս ապաստանած հայ գաղթականներով. նիւթական եւ այլ կարգի դիրութիւններ ընծայելով հայրենիք վերադարձողներուն:

բ- Կովկասեան ռազմաճակատի քիւրմըր ապահելովու նպատակով՝ կազմակերպել նոյն շրջանին մէջ տեղական միլիցիա, որ պէտք է կազմուէր ազգային հիմունքով:

Վերջին այս միջոցառումը առաջնակարգ նշանակութիւն պիտի ունենար հետագային՝ ազգային զօրանասեր առաջացնելու եւ երկրամասի ապահովական վիճակը ամրապնդելու տեսակէտով. կարեւոր էր նաեւ այն առումով, որ հայկական զինեալ ուժերը՝ բաղկացած բանակայիններէ, նախկին կամաւորներէ եւ նոր զինուորագրեալներէ՝ պիտի օգտագործուէին ոչ միայն թուրք եւ քիւրտ տարրերու խափանարարական գործողութիւնները չեզոքացնելու, այլեւ զօրացնելու համար ռազմաճակատի պաշտպանութեան գործը, մանաւանդ որ պատերազմը դադարեցնելու ուղղութեամբ բոլշեւիկեան քարոզչութեան հետեւանքով բանակին մէջ դասալքութիւնը սկսած էր ստանալ վտանգաւոր համեմատութիւններ: Եւ փաստօրէն, զօրավար Աւերիանովի եւ շատ մը ռուս բարձրաստիճան զինուորականներու վկայութեամբ, կովկասեան ճակատի վրայ միայն հայկական զօրանասերն էին կարգապահ եւ կայուն վիճակի մէջ, մինչդէռ թրքական վտանգը դիմագրաւելու համար անհրաժեշտ էր ունենալ մարտունակ ուժեր:

Արեւմտահայաստանի գրաւուած շրջաններուն ուղղակի կերպով Ժամանակաւոր կառավարութեան կապուիլն ու ռազմավարչական նոր ղեկավարման տակ դրուիլը բախտորոշ նշանակութիւն պիտի ունենար Կովկաս ապաստանած գաղթականութեան տուն-դարձի գործընթացի իրագործման համար: Արդարեւ, 1917 տարուան ընթացքին նոր թափ ստացաւ ատերակուած եւ ամայացած հայրենի օճախ վերադարձողներու շարժումը, ինչ որ ատելի քան 360,000-ի բարձրացուց Վանի, Խնուս-Ալաշկերտի, Կարնոյ եւ Տրապիզոնի հայութեան թուաքանակը:

Մայիս 2-11-ին Երեւանի մէջ կայացաւ արեւմտահայերու Ա. համագումարը, որուն մասնակիցներու շարքին էին՝ Արամ Մանուկեան, Անդրանիկ Վահան Փափագեան, Լեւոն Շանթ, Կարո Մասունի, Մեայուհ, Չապէլ Եսայեան եւ ուրիշ շատ յայտնի դէմքեր: Համագումարը զբաղեցաւ գաղթականներու տեղաւորման, անոնց ֆիզիքական գոյութեան պահպանումին, երկրամասի վերաշինութեան ու պաշտպանութեան, նոր սերունդի կրթական, ֆիզիքական եւ քաղաքացիական դաստիարակութեան վերաբերող հարցերով: Բնականաբար այս բոլորը կը կարօտէին նիւթական լայն միջոցներու. այս նպատակով պիտի դիմուէր ամենուր բարեսիրական կազմակերպութիւններուն, որպէսզի համայն հայութիւնը մասնակից դառնար հայրենիքի վերաշինութեան նուիրական գործին: Համագումարի աւարտին, ընտրուեցաւ 15 անդամներէ բաղկացած «Արեւմտահայոց Ազգ. Խորհուրդ»ը, որ իր կարգին եւ իր կազմէն պիտի ստեղծէր 5 հոգինոց գործադիր բիւրօ (Վահան Փափագեան, Արտակ Դարբինեան, Կարո Մասունի, Հրանտ Գալիկեան, Յ. Տէր Չաքարեան):

Արեւմտահայերու համագումարի փակումէն անմիջապէս ետք, Մայիս 12-ին Երեւանի մէջ կայացաւ «Հ.Յ.Դ. Թուրքահայ հատուածի ռայոնական ժողովը»: Բացի Հ.Յ.Դ. Արեւելեան եւ Հայաստանի բիւրոներէն եւ շարք մը կուսակցական գործիչներէ, Ռայոնական ժողովին կը մասնակցէին՝

ա- Պատգամաւորներ՝ որոնք կը ներկայացնէին Անդրկովկասի տարբեր կեղծոճներուն մէջ գործող կուսակցական մարմինները (Երեւան, Կարս, Թիֆլիս, Մուխոմ, Պաքու, Իզմիր, Արտաշատ, Նոր Պայազիտ, Էջմիածին եւ այլն):

բ- Պատգամաւորներ՝ ազատագրուած Վանի, Մուշի, Ալաշկերտի, Բասենի, Խնուսի, Տրապիզոնի եւ այլ շրջաններէ: Այս երկրամասին մէջ վերակազմուած էին եւ կը գործէին արդէն Հ.Յ.Դ. Վասպուրականի, Տարօնի եւ Կարնոյ նախկին Կեդր. կոմիտէութիւնները. անոնց կողքին ստեղծուեցան նորերը՝ Ալաշկերտի եւ Բասենի մէջ:

Ռայոնական ժողովը զբաղեցաւ Կովկաս ապաստանած արեւմտահայերու կուսակցական-կազմակերպական խնդիրներով (300 խումբ, 3500 շարքային ընկերներով), առանձին քննութեան առարկայ դարձնելով մանաւանդ բուն Երկրի տնտեսութեան վերականգնումի, կրթական գործի կազմակերպման եւ քիւրտ աւազակային խումբերու սանձումին կապուած հարցերը:

Այսպէս, բնականոն կեանքը պիտի սկսէր հետզհետէ վերակենդանանալ ազատագրուած հողամասե-





րուն մէջ, ուր բացառաբար հայերէ բաղկացած վարչական եւ զինուորական մարմինները կը ղեկավարէին զիւղատնտեսութեան, կրթութեան, որբանոցներու եւ այլ հաստատութեանց գործերը: Ս. Վրացեանի խօսքերով «Թիրքահայաստանը յարութիւն էր առնում մոխիրների տակից, եռանդով վերաշինում ու պատրաստում էր նոր կեանքով ապրելու համար» (Հայաստանի Հանրապետութիւն, 1958, էջ 27):

Յաջորդող ամիսներուն Անդրկովկասի տարբեր կեդրոններուն մէջ զումարուեցան կուսակցական, հասարակական բազմաթիւ ուրիշ համաժողովներ: Յատկանշական էր կազմութիւնը Հայ զինուորական միութեան՝ Կովկասեան ռազմաճակատի պաշտպանութեան համար հայկական ազգային զորամասեր ստեղծելու նպատակով: Նշուած հաւաքներէն ամէնէն կարեւորը հանդիսացաւ Սեպտ. 27 – Հոկտեմբեր 13 երկարող Թիֆլիսի մէջ զումարուած «Հայոց Ազգային համախորհրդակցութիւնը»՝ նախագահութեամբ Ա. Ահարոնեանի եւ մասնակցութեամբ հայ իրականութիւնը ներկայացնող գրեթէ բոլոր հոսանքներու աւելի քան երկու հարիւր պատգամաւորներու, ներառեալ Արեւմտահայ Ազգային խորհուրդի ամբողջական կազմն ու կամաւորական զունդերու ղեկավարները (Անդրանիկ, Դրօ, Համազասպ, Խանասարի Վարդան, Իշխան Արղութեան, Պանդուխտ): Խորհրդաժողովի գլխաւոր առաջադրանքներէն մէկը պիտի ըլլար հայութեան արեւելեան եւ արեւմտեան հատուածներու միաւորումը: Օրակարգը կ'ընդգրկէր այժմեական կարեւորութեան շատ մը հարցեր, ինչպէս՝ Անդրկովկասի Յատուկ Կոմիտէի գործունէութիւնը եւ քաղաքական արժեւորումը, ազգամիջեան յարաբերութիւնները, նահանգներու եւ գաւառներու սահմաններուն փոփոխութիւնները, տեղական իշխանութիւններու կազմակերպումը, ռազմաճակատի պահպանումը, զաղթականութեան վերաբերող խնդիրներ, դպրոցներու ազգայնացում եւ այլն: Այս հարցերու մասին կարդացուեցան հանգամանալի զեկուցումներ եւ եղան լայն քննարկումներ: Համազգային այս խորհրդակցութեամբ վերջ կը գտնէր 1912-էն ի վեր գոյութիւն ունեցող Ազգ. Բիւրոյի գործունէութիւնը. փոխարէնը կ'ընտրուէր 15 հոգինոց Հայոց Ազգային Խորհուրդը, բաղկացած 6 դաշնակցականներէ (Ա. Ահարոնեան, Ա. Մանուկեան, Ն. Աղբալեան, Ռ. Տէր Մինասեան եւ այլք), 6 անդամ միւս կուսակցութիւններէն (Ժողովրդական, Սոցիալ յեղափոխական, Սոցիալ դեմոկրատ-մենշեիկ) եւ 3 անկուսակցականներէ: Ազգ. Խորհուրդը ընտրուած էր իբրեւ գործադիր մարմին. պարագաներու բերումով, մասնաւոր 1918 թ. ճակատագրական օրերուն, ան պիտի դառնար ընդհանուր հայութեան գերագոյն իշխանութիւնը:

Այն միջոցին երբ հայկական պետականութեան մը գոյառման մօտակայ հեռանկարը կը ձեւաւորուէր ընդհանուր հայութեան համար, նոր անակնկալ մը եկաւ հիմնովին շրջելու կացութիւնը: Ատիկա 1917 թ. Հոկտեմբեր 25-ին Ռուսիոյ մէջ համայնավարներու իրագործած յեղափոխութիւնն էր, որուն յաջորդեցին քաղաքացիական երկարատեւ եւ բուռն կռիւներ՝ անիշխանութիւն առաջացնելով կայսրութեան տարածքին: Բախումներու այդ ալիքը թէւ չհասաւ Անդրկովկասի սահմաններուն, բայց Լեւինի գլխաւորած կառավարութեան հռչակած համայնավարական սկզբունքները, այլեւ անոր վարած ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը ամիս եղան, որ պետութեան այս հեռաւոր երկրամասը որդեգրէ բացասական կեցուածք խորհրդային իշխանութեան նկատմամբ եւ բռնէ անջատման, մինչեւ իսկ անկախացման ուղի: Մոսկուայի հետ կապերը խզուած ըլլալով, նախկին Ժամանակաւոր կառավարութեան նշանակած Յատուկ կոմիտէն վարկաբեկուած էր եւ անոր գործունէութեան շարունակումը դարձած անիմաստ: Հետեւաբար, Անդրկովկասը առաջացուց իր ուրոյն խորհրդարանը (Սէյմ) եւ գործադիր մարմին-կառավարութիւնը (Կոմիսարիատ):

Այսուհանդերձ պէտք է հաստատել որ, ինչպէս նախկին Յատուկ կոմիտէն, նոյնպէս եւ Սէյմն ու Կոմիսարիատը, պատերազմի այդ տագնապալի օրերուն պիտի չկարենային ցուցաբերել ներդաշնակ ու արդիւնաւոր գործունէութիւն, իբրեւ հետեւանք Անդրկովկասի բաղկացուցիչ ազգութեանց հետեւած հակասական ու իրերամերժ ընթացքին: Մինչ հայոց գլխաւոր մտահոգութիւնը Արեւմտահայաստանի պաշտպանութեան զերխնդիրն էր, վրացիները կը ճգնէին ամէն միջոցով իրենց ձեռքերուն մէջ պահել Անդրկովկասեան իշխանութեան ղեկը եւ նախապատրաստել Վրաստանի անկախացումը, իսկ թուրք-թաթարները բացայայտօրէն կը գործակցէին թշնամի Թուրքիոյ հետ՝ միասնաբար իրագործելու համար երկուստեք փայփայտած համաթուրանական երազը:

Անդրադառնալով Արեւմտահայաստանի ճակատագրի տնօրինման, յայտնենք որ Հոկտեմբերեան յեղափոխութիւնը եւ ի մասնաւորի համայնավար Ռուսիոյ վարած թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին քաղաքականութիւնը պիտի ունենային խիստ բացասական հետեւանքներ այդ, ինչպէս նաեւ ընդհանուր հայկական հարցի լուծման տեսակէտէն:





ՆԻԹԵՐ Հ. 3. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՐ

7

Ճիշդ է, որ նոր իշխանապետ Լենինը, մեկնելով ժողովուրդներու ինքնորոշման սկզբունքին, Գեկտեմբերի վերջին օրերուն հրապարակեց «Թուրքահայաստանի մասին ղեկրետ»-հրովարտակը, որ կը հռչակէր «Թուրքահայաստանի հայերու ազատ ինքնորոշման իրաւունքը՝ ընդհուպ մինչեւ լիակատար անկախութիւն», բայց միեւնոյն ժամանակ կ'որոշուէր ռուսական զօրքերու դուրսբերումը «Թուրքահայաստանի» սահմաններէն, որոնց պաշտպանութեան համար, ըստ հրովարտակին, պէտք է կազմակերպուէր տեղական միլիցիա տեղոյն ազգաբնակութենէն: Նշենք որ այս հրամանագրի նախագիծը պատրաստող պաշտօնական յանձնաժողովը (բաղկացած ընդհանրապէս հայ գործիչներէ, որոնց շարքին նաեւ Ռոստոմ) նախատեսած էր որ մինչեւ տեղական միլիցիայի կազմակերպումը՝ անհրաժեշտ քանակութեամբ ռուսական զօրքեր պէտք է պահուէին Արեւմտահայաստանի պաշտպանութեան համար: Վերջում էր այս վերջին բաժինը, իմաստագործի դարձնելով հռչակուած հրովարտակը: Այլապէս նաեւ յեղափոխութեան առաջին օրերէն դասալքութիւնը բանակին մէջ համատարած էր եւ ռուս զինուորները տասնեակ հազարներով կը լքէին ռազմաճակատները ու կ'աճապարէին տուն՝ տէր դառնալու համար իրենց խոստացուած հողերուն: Աւելի՛ն, արդէն Նոյեմբեր 22-ին համայնավար իշխանութիւնները սկսած էին անջատ բանակցութիւններ վարել Գերմանիոյ հետ՝ պատերազմական գործողութիւնները դադրեցնելու եւ հաշտութիւն կայացնելու նպատակով:

Բանակցութիւնները, որոնց կը մասնակցէր նաեւ Օսմ. Թուրքիոյ ներկայացուցիչը, ընթացան երեք հանգրուաններով եւ վերջացան 1918 թ. Մարտ 3-ին Պրես-Լիթովսկի ամօթալի դաշնագրին կնքումով: Առանձնապէս ծանր էին Հայաստանի վերաբերող պայմանները, որոնցմով Թուրքիոյ կը յանձնուէին ոչ միայն Էրզրումի, Վանի եւ Պիլիսի նահանգները, այլեւ 1878-էն ի վեր ռուսական կայսրութեան տիրապետութեան տակ գտնուող Կարսը, Արտահանը եւ Պաթումը: Այս դաշնագրով, Ռոսիա հարկադրուած ըլլալով իր զօրքերը դուրս բերել նշեալ շրջաններէն, հայութեան համար կը ստեղծուէր իսկապէս տագնապալի կացութիւն:

Արդարեւ, Պրես-Լիթովսկի դաշնագրի ստորագրութենէն անմիջապէս ետք, հայկական ճակատի վրայ Թուրքիա պիտի սկսէր պատերազմական գործողութիւններու: Իրականութեան մէջ ռուսական յեղափոխութեան օրերուն իսկ, թուրքերը սկսած էին կազմակերպելու կովկասեան ճակատի վրայ մինչ այդ իրենց նօսրացած ուժերը, համարել զանոնք երոպական շրջանէն փոխադրուած զօրքերով, բոլորը կեդրոնացնելու համար հայկական սահմանագիծերուն վրայ: Միեւնոյն ժամանակ Արեւմտահայաստանի քիւրտերը, թուրքերու դրդումով եւ ներքին խռովութիւններ յարուցանելու նպատակով, կը բազմապատկէին իրենց աւազակային ու հրոսակային յարձակումները: Այս բոլորէն ետք, պատրուակ բռնելով հայերու գործած «վայրագութիւնները» տեղոյն մահմետականներուն վրայ, թրքական բանակը խզեց 1917 թ. Գեկտ. 5-ին հաստատուած զինադադարը եւ յարձակման անցաւ Կարնոյ նահանգին ուղղութեամբ:

Պատերազմի վերսկսումը, ինչպէս ըսուեցաւ, դժնդակ կացութեան պիտի մատնէր հայութիւնը. անոր ուսերուն կ'իյնար միայնակ պաշտպանելու ռուսական զօրքերէն պարպուած եւ 400 քիլոմէթր երկարութեամբ ռազմաճակատ մը: Հայոց Ազգ. Խորհուրդի ղիմումներուն իբր արդիւնք, ի վերջոյ, Կովկասեան բանակի գլխաւոր հրամանատարի որոշումով կազմուեցաւ հայկական զօրաբանակը (կորպուս), հրամանատարը՝ զօր. Թովմաս Նազարբէկեան, զինուորական կոմիսար՝ Դրօ: Չեռնարկուեցաւ ռուսական բանակի հայ սպաներու եւ զինուորականներու զօրահաւաքին: Միեւնոյն օրերուն, արեւմտահայոց Ապահովութեան խորհուրդի ջանքերով կազմակերպուեցաւ Արեւմտահայութեան զօրամիատրումը (դիւիզիա), որ դրուեցաւ այդ առթիւ զօրավարի տիտղոս ստացած Անդրանիկի հրամանատարութեան տակ: Այդ դիւիզիային միացեացան ընդհանրապէս հին ֆետայիներէ եւ կամաւորներէ բաղկացած ու Արեւմտահայաստանի զանազան շրջաններուն մէջ գործող մարտական գունդերը, ինչպէս նաեւ յայտարարուած նոր զօրակոչին ընդառաջած բազմաթիւ երիտասարդներ: Այս բոլորով, զօր. Նազարբէկեանի ընդհանուր հրամանատարութեան ներքեւ կը գտնուէին՝ ռազմաճակատի վրայ կռուող 20-25 հազար եւ թիկունքային 10 հազար, ընդամենը՝ 30-35 հազար զինուորներ:

Թրքական նոր յարձակումը Հայաստանի դէմ կը վայելէր Գերմանիոյ աջակցութիւնը: Անդրկովկասի մէջ թուրքերուն գործակից էին թաթարները. վրացիները շահագրգռուած էին ամենէն առաջ Պաթումի փրկութեամբ, ապա հետամուտ՝ նոյն Գերմանիոյ օժանդակութեամբ իրականացնելու Վրաստանի անկախացումը: Անդրկովկասի կառավարութիւնը եւս, որուն ղեկը կը գտնուէր մենշեիկ կուսակցութեան ձեռքերուն մէջ, տրամադիր չէր եւ ոչ ալ ի վիճակի դիմադրութիւն կազմակերպելու. իսկ համայնավար գործիչները



ընդ լծուած էին ժողովուրդն ու զօրքը բարոյալքելու գործին: Այս պայմաններուն մէջ հասկնալի է, որ հայ կռուող ուժերը անբաւարար ըլլալին պաշտպանելու պոնտական լեռներէն մինչեւ Վան երկարող ընդարձակ տարածքը, մանաւանդ որ անոնց զգալի մէկ մասը տեղակայուած էր Անդրկովկաս եւ պարտականութիւն ունէր զապելու թաթարներու խափանարարական արարքները:

Վեհիպ փաշայի ղեկավարած թրքական զօրքերուն յարձակողականը սկսաւ 1918 թ. Յունուար 31-ին Երզնկա գաւառին ուղղութեամբ: Հայկական զօրքերը հերոսական մարտնչումներէ ետք, Երզնկայէն, Դերջանէն ու Բաբերդէն նահանջեցին դէպի Էրզրում. այս վերջինի պաշտպանութիւնը վստահուած էր Անդրանիկին, որուն կրկնակի դիմումները Թիֆլիս՝ օգնական ուժեր ղրկելու մասին՝ մնացին անհետեւանք, եւ Փետրուար 27-ին ինկաւ հայկական բարձրաւանդակի այդ նշանաւոր բերդաքաղաքը:

Հայկական զօրքերու նահանջը տեղի ունեցաւ չափազանց տարապայման պարագաներու տակ. թրքական զորամասերուն կ'ընկերանալին, ըստ սովորականին, անպաշտպան ժողովուրդին վրայ գործադրուող կոտորածներն ու խժոժութիւնները: Նահանջող հայկական զօրքերը՝ առաջնորդութեամբ Սեպուհի եւ Սեբաստացի Մուրատի նման անուանի մարտիկներու՝ պարտաւոր էին կատաղի կռիւներ մղել առաջացող թուրք զօրքին եւ շրջակայքի քիւրտ ասպատակներուն դէմ, որպէսզի սպառնալի կայաններ հասցնեն իրենց հետ տեղահանուած բազմահազար ժողովուրդը: Յաջորդող Մարտ եւ Ապրիլ ամիսներուն, համանման պարագաներու տակ պիտի կատարուէր տեղահանութիւնը Մշոյ, Խնուսի, Ալաշկերտի, Վանի շրջաններէն եւ Արեւմտահայաստանը վերջնականապէս պիտի պարպուէր իր բազմադարեան բնիկ ժողովուրդէն:

Էրզրումի անկումը, այլեւ Պրես-Լիթովսկի դաշնագրին ստորագրութիւնը նոր թափ տուին թրքական զօրքերու առաջխաղացքին: Հարթուած էր առաջին առթիւ Կարսի ճամբան: Դէպքերը այնուհետեւ առին չափազանց արագ ընթացք: Ապրիլ 1-ին թուրքերուն ձեռքը անցաւ Պաթումը, Ապրիլ 10-ին Սարրղամիշը: Յաջորդ օրերուն (Ապրիլ 10-12) տեղի ունեցաւ Կարսի յանձնումը, առանց դիմադրութեան, իբրեւ հետեւանք թուրքերու հետ վրացի ղեկավարներու սարքած դաւադրութեան, մինչդեռ բերդապահ զօրքը պատրաստ էր պաշտպանելու քաղաքը: Ինչպէս Էրզրումի, նոյնպէս նաեւ Կարսի պարագային, թշնամիին ձեռքը կ'անցնէին հարիւրաւոր թնդանօթներ եւ մեծաքանակ ռազմամթերք:

Ռուս-գերմանական դաշնագրով իրենց խոստացուած շրջաններու գրաւումը ամբողջացուցած ըլլալով հանդերձ՝ թուրքերը կանգ չառին: Չօրքերը կեղրոնացնելով Ախուրեան գետի ափին՝ անցան յարձակողականի դէպի Արեւելահայաստան: Մայիս ամսուան կէսերուն գրաւեցին Ալեքսանդրապոլը (Գիւմրի), ապա ուղղուեցան մէկ թեով դէպի Ախալքալաք ու Ախալցխա, միւս թեով՝ Լոռի: Գրաւուած շրջաններուն մէջ, ամէն տեղ, թուրք զօրքերը տեղույն հայ ազգաբնակչութեան վրայ կը գործադրէին զանգուածային կոտորածներ: Լոռի գաւառին մէջ, յատկապէս Դարաքիլիսայի (այժմ Վանաձոր) ճակատին վրայ թուրքերը հանդիպեցան կատաղի դիմադրութեան. Մայիս 28-ին, չորսօրեայ կռիւներէ ետք, հայկական զօրքերը հեռացան քաղաքէն: Այսուհանդերձ, մեծաթիւ կորուստներու ենթարկուած թրքական զօրքերը անկարող եղան շարունակելու իրենց առաջխաղացքը դէպի Գանձակ եւ Պաքո:

Վճռական եւ բախտորոշ նշանակութիւն պիտի ունենային այն բուռն մարտերը, որ մղուեցան Մայիսի երկրորդ կէսէն սկսեալ, երբ թրքական զօրքերը, Իգուիթ քաղաքը գրաւելէ ետք, անցան Արաքս գետը, մուտք գործեցին Հայաստանի սիրտը համարուող Արարատեան դաշտ եւ ուղղուեցան դէպի Սարդարապատ: Հայկական զօրքանակի հրամանատարութիւնը (զօր. Թովմաս Նազարբէկեան) զգալով մօտալուտ վտանգը՝ կանուխէն այս ճակատի վրայ կեղրոնացուցած էր իր ուժերուն հիմնական մասը. հրամանատար կարգուած էր զօր. Մովսէս Միլիկեան, օգնական զօր. Դանիէլ բէկ Փիրումեան: Ռազմաճակատի թիկունքային օգնութիւնը կազմակերպելու առաքելութեամբ Թիֆլիսի Հայոց Ազգ. Խորհուրդը, դեռ 1917 թ. Դեկտեմբերի վերջերուն, Երեսան գործուղած էր Արամ Մանուկեանը, վերջինիս տալով արտակարգ լիազօրութիւններ: Յեղափոխական հարուստ անցեալ ունեցող, Վանի հերոսական եւ յաղթական հերոսամարտի ղեկավար այս անձնաորութեան վիճակուած պիտի ըլլար նախախնամական դերակատարութիւն:

Արդարեւ, արեւելքէն եւ հիւսիսէն դէպի Երեսան շարժուող թրքական զօրքերը, անոնց ընկերացող վայրագութիւնները, թուրք-թաթարներու յարուցած ներքին խռովութիւնները, այլեւ Արեւելահայաստան խռնուած հարիւր հազարաւոր փախստական գաղթականութիւնը, համատարած սովն ու համաճարակ հիւանդութիւնները՝ յուսալքում եւ խուճապ առաջացուցած էին երեսանեան նահանգի տարածքին: Կը զարգանար նոյնիսկ Երեսանը պարպելու գաղափարը:

Յուսահատութեան այս պայմաններուն մէջ, Ա. Մանուկեան կարողացաւ՝ արտաքին աշխարհէն





ՆԻԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

9

կտրուած, միայնակ ու անօգնական ժողովուրդին ներշնչել ազգովին համախմբուելու եւ միասնական ուժերով յաղթանակ տանելու կամքը. ապա, բանակի հրամանատարութեան հետ համախորհուրդ, կազմակերպել թիկունքը ամրացնելու եւ բանակին օգնութիւն փութացնելու գործը: Խստագոյն պատժամիջոցներու սահմանումով՝ Ա. Մանուկեան չէզոքացուց դասալքութիւնը, երիտասարդութիւնը մղելով որ զինուորագրուի եւ անյապաղ մեկնի ռազմաճակատ:

Եւ տեղի ունեցաւ հրաշքը: Երեսնէն եւ շրջակայքէն գունդ առ գունդ ճակատ փութացին կամաւորներ, հին ֆետայիներու խումբեր, ժողովրդային զանգուած մը ամբողջ, կին ու տղամարդ, որ կ'երթար միանալու բանակին, կամ սատարելու անոր ինչով որ կարող էր: Հոգեւորականութիւնը իր կարգին անմասն չմնաց ընդհանուր գորաշարժէն: Ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ Ե. Սուրէնեանց մերժեց Էջմիածնէն հեռանալու մասին իրեն եղած առաջարկը, եւ հինաւորց մայրավանքին զանգերը այդ օրերուն դողանջեցին անդադար ահագանգ հնչեցնելով Արարատեան աշխարհի հայութեան, իսկ Գարեգին եպս. Յովսէփեանց ռազմաճակատի մարտիկներուն կողքին էր եւ իր բոցավառ ճառերով կը հրահրէր զինուորներու մարտական ոգին:

Այսպէս, Մայիս 22ին, համազգային միահամուռ ճիգերով ոգեւորուած հայոց բանակը հակայարձակման անցնելով ջախջախիչ պարտութեան մատնեց թրքական զօրքերը, որոնք ծանր կորուստներ տալով դիմեցին փախուստի ամբողջ ռազմաճակատի երկայնքին (Մայիս 29): Միաժամանակ, Բաշ Ապարանի ճակատ մեկնած զինուորական կոմիսար Դրոն (Դրաստամատ Կանայեան) նոյնպէս հակայարձակում գործելով փախուստի մատնեց թուրքերը եւ ազատագրեց Բաշ Ապարանն ու շրջակայքը:

Մարդարապատի եւ Բաշ Ապարանի փառաւոր յաղթանակներուն, ինչպէս նաեւ Ղարաքիլիսայի հերոսական մարտնչումներուն շնորհիւ, նախ ձախողութեան կը մատնուէր հայութեան մնացորդացը եւս բնաջնջելու թրքական ծրագիրը, ապա հիմքը կը նետուէր նորանկախ Հայաստանին:

Ե. Փ.



ԳԼՈՒԽ I

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ

Քաղաքական գործունեության այս գլուխը կ'ամփոփե ընդհ. պատերազմի տարիներուն դաշնակցական կարգ մը գործիչներու կողմէ ձեռնարկուած աշխատանքները արեւմտեան Եւրոպայի եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ:

Ա. քաժին.– 1916 Յունուարէն մինչեւ 1917 Յունուար, «Դրօշակ»ի խմբագրութեան անունով Յոնան Դաթեանի նամակները, յղուած առհասարակ Թիֆլիս՝ Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյին: Թէեւ դադրեցուած էր «Դրօշակ» պաշտօնաթերթի հրատարակութիւնը՝ իբրեւ հետեւանք թղթատարական սպասարկութեան խանգարման, եւ Ժընեւ գտնուող շարք մը դէմքեր (Ռոստոմ, Մ. Վարանդեան, Ա. Սիւրոնեան) անցած էին Կովկաս, սակայն խմբագրութիւնը, մամուլի հաղորդագրութիւններով, կը շարունակէր աշխատանք ծաւալել՝ Եւրոպայի հանրային կարծիքը իրազեկ պահելու համար թուրք կառավարութեան կողմէ հայ ժողովուրդի վրայ գործադրուող ցեղասպանական արարքներու մասին,– մտաւորական եւ դեկավար տարրի ձեռքակալութիւն եւ ոչնչացում, զանգուածային ջարդեր ու տեղահանութիւն եւայլն: Այս աշխատանքները կը դեկավարէր Դաշնակցութեան հիմնադիր սերունդի ականատր դէմքերէն Յոնան Դաթեան:

Մեծ մասամբ սեւագրութեան բնոյթ ունին այս վերջինին խմբագրած նամակները, որոնք վերջնական տեսք ստանալէ ետք՝ պիտի արտագրուէին գաղտնի քանակով եւ ուղարկուէին Կովկաս: Գաղտնի մելանով գրուած են նոյնպէս Արեւելեան բիւրոյի պատասխան գրութիւնները:

Թղթակցութեան ճամբով Յ. Դաթեան յարաբերական կապ կը պահէր արտասահմանի կուսակցական մարմիններուն հետ, գլխաւորաբար Եգիպտոսի եւ Ամերիկայի հետ:

Բ. քաժին.– Միջայէլ Վարանդեանի նամակները՝ 1916 թ. Հոկտեմբերէն մինչեւ 1918 թ. Մայիս ամիսը, ընդհանրապէս ուղղուած Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտէին:

Վարանդեան 1915 թ. առաջին ամիսներուն հեռացած էր Ժընեւէն եւ Իտալիոյ ու Պալքաններու վրայով անցած Թիֆլիս, ուր կը վարէր «Հորիզոն» պաշտօնաթերթի խմբագրութիւնը: 1916 թ. Հոկտեմբերին գործուողեցաւ Եւրոպա՝ դաշնակից պետութիւններու եւ չեզոք երկիրներուն մէջ յօգուտ հայ դատի աշխատանքներ ծաւալելու համար: Սիւնոյն նպատակով Եւրոպայի մէջ, տարիներէ ի վեր արդէն, կը գործէր Ամենայն հայոց կաթողիկոսի կողմէ նշանակուած Ազգ. պատուիրակութիւնը՝ գլխաւորութեամբ Պօղոս Նուպար փաշայի: Եւ հակառակ անոր որ կարգ մը տարակարծութիւններ գոյութիւն ունէին Դաշնակցութեան եւ Պօղոս Նուպարի միջեւ, Վարանդեան անհրաժեշտ կը գտնէր վերջինիս հետ աշխատիլ սերտ գործակցութեամբ: Հայ դատի շուրջ միասնական ճակատի ստեղծման նախանձախնդրութեամբ, միւսնոյն ժամանակ բարձր գնահատելով Պօղոս Նուպարի մօտ հնուտ դիւանագէտի արժանիքները, ինչպէս նաեւ Եւրոպայի քաղաքական շրջանակներուն մէջ վայելած վարկը, Վարանդեան զօրավիճ կանգնեցաւ անոր, նոյնը թելադրելով Եգիպտոսի եւ Ամերիկայի դաշնակցական մարմիններուն:

Գ. քաժին.– Արմէն Գարօ (Փաստրմաճեան), իբրեւ յատուկ պատուիրակ Ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենեանցի, 1917 Ապրիլին Թիֆլիսէն մեկնեցաւ դէպի Ամերիկա: Առաքելութեան նպատակն էր՝ Միացեալ Նահանգներու կառավարութեան եւ քաղաքական շրջանակներուն մօտ աշխատանք տանիլ ի նպաստ հայ դատին, ապա, Կովկասի մէջ տեղի ունեցող զարգացումներուն զուգահեռ, ապահովել Նոր աշխարհի այդ մեծ հանրապետութեան զինական եւ դրամական օժանդակութիւնը ռազմաճակատի վրայ մարտնչող հայկական ուժերուն:

Արմէն Գարօ ժրջան եւ արդիւնատր աշխատանք տարաւ գործակցութեամբ Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտէին: Վերջինիս ուղղուած իր նամակները մանրամասնօրէն կը պարզաբանեն այդ ուղղութեամբ ձեռք բերուած արդիւնքները:

Հայաստանի անկախացումէն ետք, Ա. Գարօ պիտի կարգուէր Ռաշինկոնի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան:

Դ. քաժինով տրուած են՝ 1) Եւրոպական շարք մը երկիրներու մէջ ի նպաստ հայկական հարցին գումարուած հաւաքներ եւ հրատարակուած կոչեր. 2) Պրետտ Լիթովսկի դաշնագրին դէմ բողոքի արտայայտութիւններ. 3) Պօղոս Նուպարի երկու նամակները՝ ուղղուած Արմէն Գարոյի եւ Սիիրան Սվազլեանի. 4) Արմէն Գարոյի երկու դիմումները Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Լենսինկին. 5) Լիպարիտ Նազարեանցի պատասխան-նամակը Սիմոն Վրացեանին՝ 1917-19ին Պետերբուրգի եւ Մոսկուայի մէջ հայ պատուիրակներու վարած բանակցութեանց մասին:



Ա.– ԺԸՆԵՒԷՆ ՅՈՆԱՆ ԴԱՒԹԵԱՆԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ, ԹԻՖԼԻՍ

Փաստ. 64-60
(Պատճենի տեսք, № 210)

Ա 1

Ղարիբը¹ ճանապարհուկեց: Մի քանի օր կը մնայ Պարիզ եւ Լոնդոն, կ'ունենայ տեսակցութիւններ եւ ձեզ կը բերի տեղեկութիւններ: Ռուսաց կառավար[ութեան] բռնած դիրքը մեծ մտահոգութիւն է պատճառով: Դուք այդ մասին ոչինչ չէք գրում, բայց Մուշի, Սեւ ծովի ափի խնդիրները, կամաւորներին թոյլ չտալ առաջ դնալ կամ քրդերին զսպել, գաղթականներին աջակցել, չինայել եւայլն եւայլն, գալիս են ասելու, որ մենք մի հատիկ քար չունենք գլուխ դնելու: Այս մասին պէտք է խօսուի ուր պէտք է: Ի՛նչ էք արել կամ անում այս ուղղութեամբ: Ի՛նչ կը լինի եթէ բարի լինէք երբեմն մեզ եւս տեղեկ պահել անցողարձին: Յովսէփի² նամակը ստացել եմ:

Ես ստիպուած եմ նորից կրկնել այն, ինչ որ գարնանը գրել եմ: Լեզուներ իմացող եւ խօսող երկու հոգի ուղարկեցէք կամ յաջողեցրէք ուղարկել տալ դէպի Եւրո-

պա: Շատ ենք ուշանում մեր պրոպագանդայի մէջ: Խեղճ է մեր ժողովուրդը: Այդ սոսկալի աւերումից յետոյ գոնէ մինիմում մի բանի հասնե՞նք: Հասարակական կարծիքը թէ՛ չէզոքների եւ թէ՛ կռուող կողմերի ահագին նշանակութիւն է ունենալու խաղաղութեան բանակցութեան ժամանակ: Պէտք է պատրաստել, յուզել այդ հասարակութիւնը եւ մամուլը գինուած փաստերով: Փաշան բոլորովին ատրոֆիէի է եսթարկուել³, եւ իր ոյժերից վեր է: Մինչեւ այսօր երբեք նրա ձայնը չստուեց մամուլի մէջ. չէ՛ որ հայոց կաթող[իկոսի] ներկայացուցիչն է. նա լաւ է բանակցութիւնների համար եւ այն էլ եթէ ունի օգնողներ. բայց իբրեւ ազիտատոր, յուզող, հասարակական կարծիքի եւ մամուլի հետ գործ ունեցող մէկը՝ բոլորովին անբաւարար է: Զոռ խօսմ չի՛ մարդը չի ապրում այդ խնդրում, նա չէ յուզում, ուստի եւ ձայն չէ հանում: Շեշտում եմ՝ պէտք է երկու հոգի ուղարկել լիազօրուած՝ խօսելու եւ հասարակութեան, եւ մամուլին. սրանց վրայ մսխուածը կորած չէ: Ի սէր Աստուծոյ այս խնդրով դուք զբաղեցէք. արդէն բաւականին ուշ է, յետոյ աւելի ուշ կը լինի: Ձեր վիճակը չափազանց ծանր է, հասկանում եմ, բայց ի՛նչ անել, ուրիշ ելք չկայ, սրանով եւս պէտք է զբաղուել:

Փաստ. 64-54

Ա 2

(Ծածկագիր գրած Տիֆլիս)

Ժընեւ, 5 Յունուար 1916

Միրելիք,

Աւետիսը⁴ յոյս ունեմ արդէն ձեզ հետ է: Նրանից կ'իմանաք մեր, ինչպէս եւ ա՛յն յաջողութեան մասին որ նա ունեցել է Պարիզ: Շատ ափսո՛ս որ նա Լոնդոն չէ կարողացել մնալ: Պարիզի տեղեկութիւնները Աւետիսի, նորից կը գայ ձեզ ասելու եւ պնդելու, որ այնտեղ մարդիկ են պէտք, որ տարաբախտաբար Փաշան լաւ է միայն դիպլոմատիկ յարաբերութիւնների համար: Ինչպէս առաջի նամակումս էլ եմ ասել, այս մարդիկը պէտք է գան աջակցելու-լրացնելու փաշային: Բացասաբար վերաբերուելով Փաշայի «ներկայ» գործունէութեան, ես երբեք այն կարծիքի չեմ, որ պէտք է նրան չէզոքացնել կամ ձգտել հեռացնել. ոչ, նա իր տեղն ունի եւ այժմ այդ բոլորովին ցանկալի չէ: Ամենախելացի քաղա-

քականութիւնը կամ տակտիկը այն է, որին մենք հետեւում ենք՝ անկուսակցական գործունէութեան, ձգտել բոլոր խաւերը եւ հոսանքները ի մի բերել: Չպէտք է մենք առանձին կարեւորութիւն տանք Ամերիկ[այի] եւ Եգիպ[տոսի] հակադաշնակցական շարժման, դա չպէտք է ստիպի մեզ փոխել մեր տակտիկը: Մինչեւ պատերազմի վերջը պէտք է մենք տանենք, այսպէս ասենք, «ազգային» գործունէութիւն: Այդ երկու մարդիկը, որոնց մասին երրորդ անգամն է, որ գրում եմ, պէտք է անպայման լիազօրուած լինեն եւ ձայն ունենան Փաշայի յանձնաժողովի մէջ⁵. այլպէս նա մեծ թիւրիմացութիւնների տեղիք կը տայ: Մենք եռանդուն աշխատանք պէտք է ցոյց տանք Պետրոգրադ, Լոնդոն, Հռոմ եւ Պարիզ, մանաւանդ վերջինումս, որ իսկական տոն տուողն է այժմ: Նա հետզհետէ առանձին ազդեցութիւն եւ մեծ

1.- Ղարիբ – ծածկանուն Աւետիս Ախարոնեանի, որ 1915 թ. Դեկտեմբերի սկիզբը մեկնած էր Ժընեւէն դէպի Փարիզ եւ Լոնտոն, ապա Կովկաս երթալու համար:
2.- Տէր Դարբեան Յովսէփ, անդամ Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյի:
3.- Փաշան՝ Պողոս Նուպարն է, նախագահ Ազգ. Պատուիրակութեան, նշանակուած Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսի կողմէ: Ատրոֆիայի ենթարկուած՝ հիւժած, ուժասպառ եղած:
4.- Նոյն՝ Աւետիս Ախարոնեանը:
5.- Ակնարկութիւն հայ Ազգ. պատուիրակութեան:





հեղինակությունն է ձեռք բերում: Աւելին չեմ ծանրանում այս խնդրի վրայ. Աւետիսը ձեզ կը տայ հարուստ տեղեկություններ իբրև իրազեկ, եւ վերջապէս ձեզանից շատերը խնդրին աւելի լաւ ծանօթ էք: Ես միայն ուզում եմ երկրորդել. «Pro Armenia»⁶ խիստ անհրաժեշտ է: Մենք մեզ պէտք է միշտ յիշեցնենք եւ այլն:

Մի բաց նամակ գրուած է Լօզանի մի վանեցի ուսանողի — երեւի մի վանեցու — կողմից. իմացնում է որ ռաջոնական ժողով է եղել եւ որոշուել է վերսկսել «Pro Armenia»-ի եւ «Դրօշակ»ի հրատարակութիւնը: Գրուած է անունները Միք[այէլի] եւ Աւետ[իսի]⁷: Ո՞վ է էդ երեւան, որ հրապարակ է հանել կուսակց[ական] այդ որոշումը եւ ռուս կառավարութեան յանձնել մեր երկու ընկերների անունները: Էս ինչո՞ւ պէտք է պատահական մարդիկ այդ իմանան եւ գործեն այդպիսի մի մեծ յիմարութիւն: «Pro Armenia»-ի մասին խօսք լինել չի կարող: «Դրօշակ»ի մասին կարելի է վիճել: Եւ այն հիման վրայ, որ մենք ունենք, «Հորիզոն», «Հայրենիք», «Յուսաբեր» — երեք մեծ կենտրոններում, որ մենք կը տանենք մեր պրոպագանդը, պէտք է միայն երեք իմբագրութիւններին էլ տալ դիրեկտիւններ, որ նրանք դեկավարուեն մեր կուսակց[ութեան] ցանկութիւններով: Դրութիւնը շատ է փափուկ, մանաւանդ մեր դիրքը ռուս կառավար[ութեան] վերաբերմամբ, եւ կուսակց[ութեան] պաշտօն[ական] օրգանում չենք կարող որոշակի չասել ինչ որ պէտք է⁸: Եթէ կշտացել էք ռուս կառավարութիւնից ու որոշել էք երեսին ու աշխարհին ասել ամէն բան, այդ ուրիշ խնդիր է: Բացի այս կայ եւ տեխնիկական եւ գործ[նական] ծախսի խնդիր: Ի հարկէ գիտէք եւ այն, որ «Դրօշակ»ը միայն կարող է ուղարկուել Ամերիկա եւ Եգիպտոս, միւս վայրերը անհնարին է: Պէտք է ասեմ որ Ամերիկան եւս առաջարկել է «Դրօշակ» հրատարակել:

Ես յոյս ունեմ, որ դուք չէք մտածում, թէ էստեղի ուսանողները կարող են գրաշարութիւն անել. այդ միտքը պէտք է թողնել բոլորովին: Ուրեմն դուք պէտք է գրաշար բերել տաք, որ ծախս կը նստի: Եւ ափսոս է,

որովհետեւ չեմ կարծում, որ հնարաւոր լինի կանոնաւոր հրատարակել: Դառն փորձը ցոյց է տուել, եւ այդ ամէնից լաւ գիտէ Միքայէլը, մանաւանդ այժմ, հնարաւոր չէ: Ուրեմն նա կը հրատարակուի անկանոն, եւ երեւի հազիւ 3-4 համար մինչեւ պատերազմի վերջը, յուսալով որ պատերազմը մի տարուց կը վերջանայ: Եթէ անպայման պէտք է հրատարակուի, «Դրօշակ»ը ամէնից լաւ է տպագրուի Պարիզ — պահպանելով ժընեւի հասցէն ինչպէս մի ժամանակ մտածուում էր — ուր կարծեմ այդ յարմարութիւնը կայ, եւ մանաւանդ իմբագրողը պէտք է ապրի անպատճառ Պարիզ: Սրանով թէ ծախսը կը թեթեւանայ եւ թէ կը հրատարակուի երբ նիւթը պատրաստ կը լինի ու մենք էլ գրաշար պահելու ծախսից ազատ կը գտնուենք: Սա մի միտք է որ ես տալիս եմ, մնացածը դուք գիտէք:

Յամենայն դէպս պէտք է շտապել եկողները ճանապարհել եւ «Pro Armenia»-ն սկսել, որովհետեւ տարօրինակ հասկացողութեամբ, Փաշան «մեռել» ձեւանալու քաղաքականութեան է հետեւում մինչ խաղաղութեան բանակց[ութեան] սկսելը. եւ եթէ այսպէս շարունակուի, այն ժամանակ մեր թաղման կարգը կը կատարեն: Գործելու, շարժուելու, բղաւելու ժամանակն է. «Դրօշակ»ը երբ ուզում էք սկսէք, սա ինձ շատ չէ գրաւում — կարգինայլ⁹ քաղաքականն է: Կուսակցութեան այժմեան տակտիկան հիանալի է եւ նա ունենալու է դրական խորը հետեւանք կուսակցական տեսակէտով, իսկ պատմութեան առջեւ մենք մեծացած կը լինենք: Խաղաղութեան բանակցութիւնը վերջանալուն պէս մեր կուսակցական պրոպագանդը նորից կը բարձրացնենք: Բայց խաղաղ[ութեան] բանակց[ութեան] մէջ մենք պէտք է պատուաւոր տեղ ունենանք, եւ այդ եկողները հէնց այդ դերն էլ պիտի կատարեն:

Յ. Գ.— Զէ՞ կարելի է ջմիածնին հասկացնել, որ ամերիկացիների ներկայացուցիչը որոմ է ցանում, եւ մի խելքը գլխին մարդ ուղարկեն հոն, եթէ միայն այդպիսինը կայ:

Յ. Գ.— Քանի որ «Pro Armenia»-ն պիտի լոյս տեսնի, եթէ Միսակին¹⁰ պէտք պիտի գագցուի իր Ֆրանսերէն գիտնալուն համար, նամակս ստանալուց հեռագրեցէք: Եթէ թւիցս մինչեւ մի ամիս հեռագիր չստանայ, նա ազատ կը լինի Կովկաս գալու, ինչ որ ծրագրում էր անել այժմ:

6.- Դաշնակցութեան նախաձեռնութեամբ հրատարակուող ֆրանսերէն թերթի այս դատի քարոզչութեան նուիրում: դադրած էր լոյս տեսնել Ընդի. պատերազմի տարիներում:

7.- Միքայէլ Վարանդեան եւ Աւետիս Ահարոնեան:

8.- Այսինքն՝ բացայայտ չարտայայտուիլ Ռուսիոյ վարած հակահայ քաղաքականութեան դէմ, մկատի առնելով, անշուշտ, անոր Դաշնակից պետութիւններուն զինակից ըլլալու փաստը:

9.- Գլխաւորը, հիմնականը:

10.- Միսակ Ղազարեան, «Դրօշակ»ի խմբագրութեան գործավար-քարտուղար:





Փաստ. 64-56

Ա 3

Սիրելիք,

Յոյս ունենք ստացել էք սրանից առաջ գրած երկու նամակները: Սրանով գալիս ենք նորէն շեշտելու, որ «Pro Armenia»-ն պիտի շտապեցնել, ու որքան ուշանանք, այնքան կորուստը կը մեծանայ: Եւրոպական բոլոր փոքրիկ ազգերը ունեն իրենց օրգանները. մենք ենք, որ լուռ ենք եւ անպաշտպան ու մոռացուած:

Ստիպուած ենք նորէն ծանրանալ Պօղոս փաշայի քաղաք[ականութեան] վրայ: Մարդը ջուր է առել բերանը ու նստել: Ինչպէս պէտք է անել այս կորստաբեր քաղաքակ[անութեան] վերջ տալու: Կտրուկ ճանապարհն է յարձակումներ սկսել նրա թէ ներքին եւ թէ արտաքին քաղաքականութեան դէմ: Բայց չէինք ուզենալ շեղուել մեր բռնած ընթացքից առանց ձեր համաձայնութեան

եւ առանց նրա հետ խօսելու: Պէտք է խնդիրը դնել որոշ ու դրական՝ ազատ մնալու թէ թիւրիմացութիւնից եւ թէ պատասխանատուութիւնից: Եւ նորէն պնդում ենք՝ պէտք է շտապել յիշատակած երկու մարդիկը ուղարկել: Շատ ենք վախենում, որ մեր կասկածը Փաշայի քաղաք[ականութեան] վերաբերմամբ արդարանայ: Ահա ինչ են գրում Ամերիկայից¹¹

Պօղոս փաշայի հովանաւորելը կուսակց[ական] տեսակէտներով կազմած միութեան, է՛ միջամտութիւն կուսակցական պայքարի, որով նա ներկայանում է կողմնակից մեր հակառակորդների: Բացի այս, պարզ է, որ նա ձգտում է իր կողմից օգտուել հանգամանքից չէզոքացնելու Ազգ[ային] Բիւրոն եւ իր դիրքը ամրացնելու. կայ է՛ մի այլ փաստ, որ նոյնպէս գալիս է հաստատելու, որ Նուբար փաշան կասկածելի քաղաքականութեան է հետեւում: Ահա թէ նա ինչ է գրում այնտեղի հայ կոմիտէին: (Նամակը բաւականին ճարպիկ է գրուած, որ ապագայում կարելի լինի դուրս պրծնել մեղադրանքից)¹²:

ՅՈՆԱՆ

11.- Սեւագրութեան մէջ կը պակսի մշուած գրութիւնը:
12.- Կը պակսի մոյնպէս Պօղոս Նուպարի նամակին հատուածը: Պակտող մէջբերումները հաւանաբար պիտի լրացուէին նամակի արտագրութեան ժամանակ:

[5/2/1916]





Փաստ. 25-3

Ա 4.- ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՅՈՆԱՆԻՆ

Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյի այս նամակը, գաղտնի մեղանով գրուած, մասամբ բացուած է միայն: Բաց ձգուած բաժինները նշուած են բազմակէտերով: Արտագրութիւնը անթուակիր է, հաւանաբար 1916 թ. Մարտ-Ապրիլ ամիսներու նամակ է:

Սիրելի Յոնան,

Քո երկու նամակները ստացած ենք. Փաշայի վերաբերմամբ մենք էլ կասկածներ ունենք, աշխատում ենք համոզել Գարոյին, Աւետիսին եւ Միքայէլին¹³ գալ այդտեղ բայց առաջինը բոլորովին հրաժարուեց զանազան պատճառաբանութեամբ: Իսկապէս խեղճը շատ է ընկճուած. երկրորդը կ'ուզէ գալ բայց պիտի 3 ամիս կազդուրուի Կիսրովոյսկոյում, իսկ Միքայէլը շատ է տատանուում: Մենք կը խնդրենք որ դու որոշ ազդեցութիւն գործէիր Փաշայի վրայ, տեղեկացնելով նրան որ հայերի մեծ մասը տարբեր սպասելիքներ ունի, որ միմիայն Կիլիկիայի մասին խորհել, աչքաթող անելով բուն Հայաստանը, դա նշանակում է վանը եւ մասամբ Մուշի վիլայէթը թողնել թուրքերի ձեռքին:

Այստեղ կարծում են որ ռուսները պիտի բաւականան էրզրումի առմամբ եւ մասամբ Վանի եւ Տրապիզոնի վիլայէթները եւ իր սահմանները:

Ձաւրիեւը չի երեւում. եթէ նա կրկին անցնէր ձեզ մօտ, լաւ կը լինէր. նա գոնեա որոշ չափով պիտի ազդէր Փաշայի վրայ: ----- նպատակաշարմար է եւրոպական երկիրներու մէջ ----- որպէսզի ----- ազդէիք: Այստեղ ինչ ----- չկայ պարբերաբար տեղեկութիւն պիտի տանք ձեզ. դուք էլ աշխատեցէք յարմար բաներ տպել Փարիզ եւ Լոնդոնի թերթերում:

Անցեալ անգամ էրզրումի մասին զեկուցում էինք ուղարկել ձեզ, խնդրում ենք այն մասը որ կը վերաբերի ռուս զինուորներու կողմից թալանի վրայ, այդ վերաբերմամբ չտպէք առայժմ: էրզրումի հայկական եկեղեցում հայերի ապրանքները ռուսները հաշուում են տաճիկ կառավարութեան ղեկավարից ըրած¹⁴ հայ ապրանք եւ իբրեւ պատերազմական աւար հայերին չի վերադարձուում: Հայ վաճառականներին չեն թոյլ տալիս զբաղել քաղաքում, այլ հրաւիրում են յոյն կամ տաճիկներ: Նոյնիսկ այն հայ վալադներին¹⁵ որ ճանապարհ էին ցոյց տուել զօրքին, չեն թոյլ տալիս մնալ քաղաքում:

Ահա մէկուկէս ամիս է ինչ հրաման է եկած հայ խմբերը դարձնել ----- եւ բաւականին ընդարձակ եւ մի քանի անգամ յայտարարութիւն տրուեցաւ թէ ինչ տարբերութիւններ կան հայկական խմբերի եւ վրացի եւ լատիշ խմբերի մէջ, բայց երեւում է այդ յայտարարութիւնները քիչ ազդեցութիւն ունեցան, այնպէս որ ----- ստացանք Երեւանից որ բոլոր ----- պահենք եւ ----- ծառայութիւն պէտք է անցնէին, եւ մինչեւ այժմ մնում են միշտ ----- դրքա կը կազմեն մօտ 25%, մնացածը պէտք է -----

Ռոստոմը էրզրում է. նրա գրած նամակը ստացած կը լինէք: Արդեօք -----

13.- Արմէն Գարօ (Փաստըմանեան Գարեգին), Ախարոնեան Աւետիս եւ Վարանդեան Միքայէլ:
14.- Գրաւած:
15.- Մուրիանդակներին:





Փաստ. 64-61

Ա 5

Սիրելիք,

«Հորիզոն»ին հեռագրածիցս իմացած կը լինէք իմ տեսակցութիւնը յայտնի գերմանացու¹⁶ հետ: Այդ այն անձնաւորութիւնն է, որ գնացել էր մերոնց առաջարկութեամբ Պոլիս՝ աշխատելու մեր բանտարկեալները կեանքը ապահովելու համար: Այս մասին ասածները վրայ չեմ ծանրանում, որովհետեւ վստահ եմ, որ Բալկանները այդ մասին գրել են:

Այժմս ձեր ուշադրութիւնն եմ դարձնում արտասահմանեան գործունէութեան երկու կէտի վրայ, որոնք խիստ կարեւոր են, բայց որն անորոշութեան է տուած: Դիպլոմատիկական աշխատանքը լաւ է եւ այդ ձեռնհաս մարդու ձեռքումն է, թէեւ ես այն համոզումն ունեմ, որ չպէտք է մենակ ձգուի այդ մարդը¹⁷: Նա այլ միջավայրի ծնունդ է եւ չի կարող տեսնել ու ըմբռնել ճշտութեամբ մեր ցանկութիւնները եւ ձգտումները: Առանց Զաւրիեւի, նա պէտք է մի մեծ սխալ գործէր: Իր գործունէութեան ընթացքում այդ տեղի կ'ունենայ՝ եթէ մերոնցից մարդ չլինի: Այս մէկ: Դիպլոմատիկական աշխատանքը խնդրի մի կողմն է եւ կուլիսի ետեւում: Բայց կայ բեմը — հասարակական կարծիքը եւ տրամադրութիւնը եւ մամուլը: Ահա այս երկու մեծ գործօնները անուշադիր են մնացել նոյն կոմիսիայի կողմից¹⁸: Մենք անում ենք ինչ որ հնարաւոր է: Դա բաւարար չէ, դա չնչին է: Մեր գործունէութեան ծաւալ ստանալուն խոչընդոտ է լինում մեծապէս այն հանգամանքը, որ մեծ թերթերը վերապահ են մեր տուած տեղեկութիւնների վերաբերմամբ: Սա երկու պատճառով — իբրեւ հայկական աղբիւր եւ իբրեւ յեղափոխական-

սոց[իալիստական] կուսակցութիւն: Հէնց մի փաստ: J[ournal] de Gen[ève] մի քանի ամիս առաջ ուղարկած մի յօդուածը մի քանի շաբաթ պահեց. երբ անգլ[իական] թերթում երեւացին նոյն տեղեկութիւնները, այնուհետ ինքն էլ տպագրեց: Ահարոնեանի յօդուածը ակելի ուշ է: Բացի այս, անշատ գործունէութիւն այս վայրկեանիս ցանկալի էլ չէ: Պէտք է աշխատել Նուբար փաշայի կոմիսիոնը լրացնել ձեռնհաս անձնաւորութիւններով, որոնք տիրապետեն եւրոպական լեզուներից 1-2-ը թէ կոնֆերանսներ տալու եւ հասարակական կարծիքը յուզելու՝ ահաւոր եղելութիւնները երեւան հանելով ու տրամադրութիւն ստեղծելու, եւ ապա կանոնաւոր կերպով բիւրեւները հրատարակելու եւ մեծ թերթերի հետ կապեր հաստատելու: Այս հնարաւոր կը լինի, եւ կարեւորութիւն կը ստանայ երբ այդ անում է մի պաշտօնական մարմնի կողմից: Այս ձեռով են գործում բելգիացիք եւ լեհերը: Այդ պէտք է հասկացնել էջմիածնին եւ շուտափոյթ իրագործել: Նպաստների եւ հայկական դատի պաշտպանութեան տեսակէտով խիստ անհրաժեշտ է: Նուբար փաշան մենակ անկարող է եւ ձեռնհաս էլ չէ: Մնացած անդամները այդ մարմնի անուանական են եւ ոչինչ չեն անում: Մեղաւորը Նուբարն է թէ միւսները, դա այլ խնդիր է, բայց իրողութիւնը այս է: Այդ մարմնին գործ եւ կենդանութիւն պիտի տալ: Նա պէտք է եւ ազգային բնաւորութիւն ունենայ, որպէսզի յաջողութիւն գտնի: Յաւալի է, որ էջմիածինը դեր ունի այս գործում: Նա վատ է տանում: Դուք այդ լաւ գիտէք: Վաղուց գրել էի, կաթողիկոսի շրջապատը մաքրել, փոխել, քանի որ այժմ նա քաղաքական կարեւորութիւն է ստացել: Վաղը նա ակելին կը լինի. այս եւս աչքաթող մի անէք: Այս էլ երկու: Ուրեմն պէտք է շտապել ուժեղացնել կամ վերակազմել Նուբարի կոմիսիոնը՝ տալով նրան ազգային բնաւորութիւն, որպէսզի նա կարողանայ սկսել եռանդուն պրոպագանդ խօսքի եւ մամուլի, հասարակական կարծիքը կազմակերպելու, եւ միաժամանակ նիւթական օգնութիւն ձեռք բերելու. հայկական միջոցներով անհնարին է այդ ահռելի աղէտին դարման անել թէ այժմ եւ թէ ապագայում:

16.- Յայտնի գերմանացին՝ Երաննէս Լեպսիուսն է: Տես այս մասին Հ.Յ.Դ. Պալքանի Կեդր. կոմիտէի արձանագրութեանց տետրը, էջ 64-65:
17.- Խօսքը Պոդոս Նուպարի մասին է:
18.- Խօսքը միշտ Հայ Ազգ. պատմիրակութեան մասին է:

ՅՈՒԱՆ



Փաստ. 64-55

Ա 6

Սիրելիք,

Դեռ անցեալ տարի ես ձեզ գրել եմ, որ Նուբար փաշան հաստեղ եղած ժամանակ ասում էր, որ Ֆրանս. դիպլոմատ[ացիան] առաջարկում է ներկայացնել թէ հայկական աֆտոնոմ[իա] ասելով ինչ էք հասկանում եւ ինչպիսին է ձեր ուզածը: Ես չգիտեմ այդպիսի աշխատանք անում է Կովկասում թէ ոչ: Ես նորէն ձեր լուրջ ուշադրութեան եմ հրաւիրում այդ կարգինալ խնդրի վրայ: Մենք պէտք է պատրաստ լինենք: Այլեւս չպէտք է յանկարծակի դալ եւ դարձեալ մի աղէտ ունենալ: Ինչքան էլ Կովկասի վիճակը սոսկալի լինի, ինչպէս էլ դուք եւ թէ ուրիշները շունչ քաշելու ժամանակ չունենաք անհուն տառապանքի եւ շատ հրամայողական կարիքների ու պահանջների առջեւ, բայց այս խնդրը է՛ն կենսական խնդիրներից է, որին պէտք է նուիրուել: Թէ ինչպէս եւ ինչ ձեռով, այդ դուք լաւ կ'իմանաք: Միամտութիւն եւ մինչեւ իսկ վնասակար է յոյսը դնել Փաշայի վրայ, սա նրա ձգտումներից եւ ձեւականութիւններից վեր է: որքան գիտեմ նա ինքն կաթողիկ[ոսից] է սպասում այդ պահանջը: Ահսոս որ Վիգէն¹⁹ Կովկաս չէ: նա այս մասին շատ բան ձեզ կը պատմէր: Կրկնում եմ եւ աղաչում, որ այս խնդրով լրջորէն զբաղուէք եւ ձեռնհաս մարդկանց զբաղեցնէք:

Ես մի այլ խնդրի վրայ եւս ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում: Սա հետեւանք է կասկածի ու ենթադրութեան, որ ինձ ներշնչում են Ամերիկայում եւ Եգիպտոսում տեղի ունեցող դէպքեր: Ձեզ յայտնի է, որ հակադաշնակցականները ամէն կերպ աշխատում են ի մի դալ եւ գաղութների նիւթական միջոցների առաքումը Կովկաս արգելել եւ ոչ մի միջոցի առջեւ չեն կանգ առնում — եւ իրենց պաշտպանած կաթողիկոսն էլ է այժմ կասկածելի, եւ ամբողջ կովկասահայր: Այս յայտարարումն է պարզապէս Փաշայի օրգաններում. երեւի դուք կարդացած կը լինէք: Ինչո՞ւ համար է: Իրաւ է որ նրանք այնպէս համոզուած են, որ նրանց այդտեղից խաբում սխալեցնում են. գուցէ այդ էլ կայ: Բայց ես

այն կարծիքին եմ, որ դա հետեւանք է մի որոշ ծրագրի: Այդ ծրագիրը իրագործելու համար դրամական միջոց է պէտք: Բացի այս, այդ ծրագիրը իրագործելու համար անհրաժեշտ է չէզոքացնել կովկասահայր, եւ ահա ինչու են նրանք դիմում իրենց արժանի միջոցի — էնսունհրացիայի²⁰. իրանց անհրաժեշտ է կովկասահայր բաժանել մնացած հայութիւնից, եւ ահա սկսուել է հակառուսահայ պրոպագանդա: Ես ենթադրում եմ, որ նրանց ծրագիրն է միայն աշխատել Կիլիկիայի համար եւ թողնել Տաճկահայաստանը: Արդե՞՞ք նրանք համոզուած են որ Հայաստանը կորած է, որ Ռուսիան նրան ձեռքից չի տալ եւայլն, այդ չգիտեմ, բայց համոզուած եմ, որ սրանք ուրիշի գուռնան են փչում: Այստեղ է վտանգը, եւ ա՛յս կասկածն է, որ ինձ առիթ է տալիս ձեզ գրելու ու ձեզ զբաղեցնելու: Ես ամբողջ սրտով մաղթում եմ որ ես սխալած լինեմ, բայց այդ կասկածը ինձ հանգիստ չէ թողնում: Ո՞ւմ եմ կասկածում. կասկածում եմ, եթէ չասեմ Փաշայի, Փաշայի շրջապատը: Ինչո՞ւ եմ կասկածում,— որովհետեւ նրանք եռանդուն պրոպագանդ են մղում ամէն տեղ դրամը ուղարկել Փաշային, ամէն ինչ կենտրոնացնել Փաշայի ձեռքում: Կասկածում եմ նոյնպէս, որովհետեւ Փաշայի նախկին ծրագիրն է այդ եւ Վիգէնին հագիւ է յաջողուել Փաշային համոզել՝ հրաժարուել այդ կորստաբեր ծրագրից: Իսկ ինքը Փաշան համակրում է այդ շարժման թէ չէ, Աւետիսը գուցէ որեւէ բացատրութիւն տալ կարողանայ այդ մասին: «Արեւը»²¹ նրա օրգանն է, նրա մէջ գրող[ներ]ը իր մարդիկն են, իրեն շրջապատողները: Այս հանելուկը պէտք է լուծել: Յամենայնդէպս այդ միջավայրը կասկածելի է: Ուստի, ձեռք առէք բոլոր զգուշութիւնները մօտենալու այդ խնդրին մեծ տակտով — նրբութեամբ: Ըստ իս՝

1.- Ոչ մի դէպքում չպիտի Փաշային թողնել մենակ՝ իր այժմեան շրջապատով: Երկու հոգին, որոնց մասին գրել եմ, պէտք է շտապեցնել. բայց դրանք պէտք է լիազօրուած լինեն եւ ձայնի իրաւունք ունենան Փաշայի յանձնաժողովում: Սրանք էլ պէտք է ունենան որոշ, դրական դիրեկտիւներ մեր պահանջի վերաբերմամբ:

2.- Կաթողիկոսը պարտաւոր է դրական, կասկած չվերցնող հրահանգ տալ, որ պահանջը պիտի լինի ե՛ւ Հայաստանի ե՛ւ Կիլիկիայի համար, որ Փաշան իրաւունք չունի այս երկուսը մէկմէկուց բաժանել եւայլն:

19.- Վիգէն — ծածկանուն բժ. Յակոբ Չարեանի:
 20.- Չարամիտ ակնարկութիւն, սպորտասացութիւն:
 21.- «Արեւ» — Գահիրէ լոյս տեսնող ռամկավար լրագիր, 1915 թուականէն սկսեալ:

Ջերմ համբոյրներով
ՅՈՆԱՆ



Փաստ. 64-57

Ա 7

1916, Մայիսի 16

Միքայելը մենակ արտասահմանում[անում] բաւական չէ: Պէտք է մղել ինտանսիւ պրոպագանդ հասարակութեան եւ մամուլի մէջ, որն էական է եւ առաջնակարգ. այս տեսակէտով պէտք է լարուած եւ հսկայական աշխատանք: Բացի այս, նա պիտի յաճախ լինի Պարիզ-Լոնդոն-Հռոմի ճանապարհի վրայ: Անհրաժեշտ է գոնէ երկու հոգի: Այս կէտի վրայ պնդում եմ: Եթէ յոյս ունի Պարիզ կազմակերպել այդպիսի ոյժեր, այդ այլ խնդիր է: Միքայելը լաւ գիտէ արտասահմանեան միջավայրը. ինձ անծանօթ է, ուստի թեր ու դէմ ոչինչ կարող եմ ասել: Վիգէնը¹⁹ մեծապէս կ'օգնի այս խնդրին իր տեղեկութիւններով:

Բացի երկու գլխաւոր ոյժերից, որոնք պէտք է տանեն պատասխանատու գործերը, պէտք է վստահելի մէկը, որ կ'անի, այսպէս ասենք՝ սեւ աշխատանքը, օրինակ հայ թերթերը թարգմանել, սովորական երկրորդական գրագրութիւն պահպանել եւ այլն: Ամենայարմար եւ վարժ այսպիսի աշխատանքում մեր Միսակն է²², մի համեստ, բարեխիղճ, ընդունակ եւ աշխատասէր ընկեր: Ամենայաւ ընտրութիւնը սա կը լինի: Սա ունի եւ այն առաւելութիւնը, որ մեր գործերին ծանօթ է, ուստի հեշտ կը լինի: Պարիզ փոխադրել ե՛լ այստեղի գործերը: Խնդրում եմ եթէ համաձայն էք, հեռագրէք որ նրան պահեմ, նա շուտով քննութիւնները կը տայ ու խիստ

ցանկութիւն ունի դալ կովկաս: Իսկ եթէ ոչ ոք Պարիզ չպիտի գնայ եւ ես ստիպուած պիտի լինեմ եօլա տանել, դարձեալ նրա ներկայութիւնը պէտք է. առանց սրան ես խիստ դժուարութեան մէջ կը մնամ ի նկատի ունենալով իմ առողջական վիճակը: Այս դիպուածում պիտի համաձայնէք վճարել նրան մի համեստ ամսական. խեղճ տղան խրուած է մինչեւ կոկորդը պարտքերի մէջ: Ռոստոմի եւ Միքայելի որոշումով նա ստանում է 50 Փր[անկ], որն ինքը համարում է իբրեւ փոխառութիւն: Խիստ կարիքը ստիպեց նրան վերջիվերջոյ այդ գումարը ստանալ:

Անտոնի²³ վիճակը եւս նախանձելի չէ, կեանքը մէկուկէս անգամ թանգացել է եւ օրէցօր թանգանում:

Վիգէնը այստեղ էր: Սրանից իմացայ որ՝ ա՛յն իմ տպաւորութիւնը, թէ Փաշան տրամադիր է աւելի պաշտպանել Կիլիկիայի խնդիրը, սխալ է: Գոհ եմ որ այդպէս է: Բայց միւս գրածները նրա մասին մնում են իրենց գորութեան մէջ: Վիգէնը ձեզ շատ բան կը պարզի: Նրա գալը կովկաս անհրաժեշտ է, ես դրա վրայ շատ պնդեցի:

Վիգէնը մտել է բաւականին բարդ եւ վտանգաւոր շախմատային (դիպլոմատիկ) խաղերի մէջ, որ հետեւանք է կացութեան ծանր եւ յուսահատ վիճակի կամ գուցէ յուսահատ տրամադրութեան. իմ վերաբերմունքը իրեն յայտնի է: Յոյս ունեմ որ դուք էլ հնարաւորութիւն կ'ունենաք ծանօթանալու այդ գործունէութեան հետ:

Մեր բանաստեղծ Աւոն²⁴ շատ է ուզում վերադառնալ հայրենիք, աշխատեցէք նրան մի կերպ օգնել. պէտք է 800 Փրանկ:

Լիպարիտից²⁵ երէկ հեռագիր ստացանք, որ փոխադրել է 600 Փր.: Ես խնդրել եմ այս գումարը հրատարակութիւնների համար:

Զէ՞ք կարող մի կերպ մեզ հասցնել մի որեւէ գրութիւն կամաւորների գործունէութեան համար. Փրանսերէն հրատարակենք:

ՅՈՆԱՆ

22.- Միսակ Ղազարեան:
23.- Անտոն կամ Անտոն Գոշ, բուն անունով Անտոն Պոյաճեան (1849-1927), «Դրօշակ»ի խմբագրատան երկար տարիներու պահապան, դիւանապետ եւ այլն:
24.- Խօսքը Աւետիք Իսահակեանի մասին է, որ այդ տարիներուն ժընեւ կը մնար:
25.- Լիպարիտ Նազարեանց (1874-1947), ծանօթ նաեւ Լեւոնեան ծածկանունով:



Փաստ. 64-58

Ա 8

Միրելիք²⁶,

Ստացանք N4 նամակը: Լաւ է որ համար էք նշանակում. այսպիսով կ'իմացուի թէ նամակ կորչում է: Մենք էլ այդպէս կ'անենք: Սա առաջինը կը հաշուենք:

Ես ստիպուած եմ անդրադառնալ ցաւոտ հարցի վրայ: Դու կտորը գրում է, որ Ղարիբը երկու ամսից կը գայ այդ կողմերը, իսկ Միք[այէ]լի գալը ձգտուած է անցագրի պատճառով. հաւանական է, որ իսկի էլ թոյլ չտան: Մեզ համար ոչ թէ անցած ամիսը թանգ արժէ, այլեւ շաբաթը, օրը: Ես մինչեւ իսկ վախենում եմ, որ մենք ուշացել ենք: Ես այն կարծիքին եմ, որ բոլոր քաղաքական խնդիրները, դրանց թւում եւ մերը²⁷, Allié- [ների] մէջ վճռուած է, որ մենք յանձնուած ենք Ռուսիային: Խաղաղութեան կոնգրէսը գալու է միայն կնիք դնի այդ որոշումների վրայ: Ո՞վ է մեղաւորը, որ մենք մնացինք անտէր, անպաշտպան: Էջմիածինը, որը գործիք է վատերի ձեռքին. Փաշան, որը ծնունդ է այդ վատերի, որն իբրեւ դիպլոմատ պատկանում է հին սերունդին եւ հին հասկացողութեան — վախկոտ, յարմարուող, որը չունի բողոքի շեշտ, որը խիզախ ու յանդուգն չէ: Հասարակական կարծիքը չէ զբաղուած «հայկ[ական] հարց»ով: Հասարակութիւնը գիտէ որ հայերը կոտորուում են եւ նա խղճում է — ահա բոլորը: Հատուկտոր ձայները արժէք չունեն: Մենք վրիպել ենք նախապատրաստական շրջանում, մենք վրիպել ենք եւ որոշող շրջանում: Մենք տանուլ ենք տուել եւ ռուսերի այդպիսի վերաբերմունքը դէպի մեզ, հակառակ մեր զոհերի եւ մեր կամաւորների ահագին ծառայութեան, հակառակ մեր բռնած դիրքին, այդ է ասում²⁸: Ի հարկէ այս տխուր տողերով ես չեմ ուզում ասել թէ մնում է մեզ լալ ու կրճտել ատամները: Չէ՛: Պէտք է ապրել եւ կռուել: Բայց սրա համար էլ պէտք է կեանք ու գործունէութիւն ցոյց տալ: — Հէնց այնտեղ, ուր որոշում է մեր խնդիրը, այդ գոյութիւն չունի: Ի՞նչ պէտք է անել: Մենք հրապարակ գանք ու խնդիրը իր ամբողջութեամբ մեր ձեռքը առնենք: Այս տեսակէտով ես մնում եմ նոյն կարծիքին — որ կոսակցական բնաւորութիւն

չտալ, պահպանել ազգովինը: Ուստի անհրաժեշտ է, որ մերոնց միանան եւ մի երկու ուրիշը: Սա անհրաժեշտ է եւ Փաշայի վրայ ճնշում գործ դնելու, որ նա իր պարտականութիւնը չհասկանայ իւրատեսակ, թողնել «մեռել ձեւանալու» քաղաքականութիւնը եւ «կենդանի ձեւանալ»: Սա անհրաժեշտ է նոյնպէս մաքրելու համար այդ մարդու շրջապատը: Չափազանց մեծ չարիք գործեց Փաշան իր Համբարձումով²⁹: Մեր ներկայ ներքին կացութիւնը այս երկու մարդու գործն է: Եթէ Փաշան ազնիւ ու մաքուր լինէր, Համբարձումը մենակ չէր կարող գործել այդպիսի չարիք, որն ամենայն եռանդով շարունակուում է: Լաւ կը լինէր եթէ հնարաւոր լինէր Փաշային հեռացնել: Ներկայ պարագայում այս մասին չպիտի մտածել թէ ներքին քաղաքակ[անութեան] տեսակէտով եւ թէ մանաւանդ արտաքին, քանի որ նա պետութիւնների կողմից ճանաչուած է, եւ յետոյ, ա՛յն կպերը որ նա ունի եւ իր միասխայի շնորհիւ էլ ձեռք է բերել, ոչ ոք կարող է փոխարինել:

Եզրափակեմ.— 1) Պէտք է շտապել, շտապել մարդկանց ուղարկել: 2) մերոնց հետ պէտք է լինեն ուրիշները եւս: 3) խիստ քաղաքականութեան հետեւել: 4) ուստի եկողները պէտք է ի մտի ունենան, որ նրանք ուժեղ պայքար պիտի մղեն ռուս[ական] քաղաքականութեան դէմ շրջաններում, հրապարակում եւ մամուլում: 4) Սրա համար անհրաժեշտ է փաշայի շուրջը մաքրել եւ ճնշում գործ դնել:

3 եւ 4 կէտերը չափազանց պատասխանատու են: Իսկ ուրիշ ելք կա՞յ, քանի որ մեր եւ հայ ազգի բռնած դիրքը դէպի Ռուսիան չգնահատուեց եւ ոչ մի հետեւանքի չբերեց: Ի հարկէ այս հարցերը կովկաս խորը եւ լրջօրէն կը ծեծուեն. ի հարկէ եկողները տեղեկութիւններ կ'ունենան եւ այլն եւ այլն:

Ինձ պէտք է ներէք, որ ես նոյն խնդրի մասին նորից գրում եմ եւ կրկնութիւններ անում: Երեւի ինձ հասկանաք: Եթէ ինձ յայտնի լինէր այդտեղ կատարուած աշխատանքները այս խնդրի վերաբերմամբ, ես ի հարկէ նորէն չէի անդրադառնալ: Եթէ հնարաւոր է մի քանի տողով գրեցէք թէ դուք ի՞նչ էք անում այդ մասին:

Արտասահմանի վերաբերմամբ մեր միակ յոյսը հասարակական կարծիքն է եւ մամուլը: Քաղաքական շրջաններում, մանաւանդ պաշտօնական, հայկական խնդիրը «ռուսական» է. ուզում եմ ասել, որ Ռուսիայի դէմ ոչ մի խօսք չի անիլ ո՛չ Ֆրանս[իան] եւ ո՛չ Անգլ[իան]: Ամենակարճ եւ գործնական ճանապարհը Ռուսիայում աշխատելն է՝ եթէ փոքր յոյս ունիք: Էն ժամանակ արտասահմանեան պրոպագանդը միայն երկրորդական ու բարոյական արժէք ունի: Եթէ այդ յոյսը կայ աւելի լաւ, որովհետեւ ուզենանք, չուզենանք պէտք է հակառուսական խօսք անենք պրոպագանդայում, ինչ որ վերեւը ասացի, իսկ այդ վտանգաւոր է...

26.- Մակագրում է «Բժ. Գ-ին», այսինքն Արեւելեան բիրոյի անդամ Բժիշկ Տէր Գալսեան Յովսէփի:
27.- Ալմարկոյի Օսմ. Թուրքիոյ անդամահատման մասին Գաշնակից (Alliés) պետութիւններու միջեւ վարուող բանակցութիւններուն:
28.- Ալմարկոյի Արեւմտեան Հայաստանի ցահանգներուն գրաւումէն ետք՝ Ռուսիոյ բռնած հակահայ դիրքին:
29.- Համբարձում Առաքելեան — կովկասահայ հասարակական գործիչ, «Մշակ» թերթի խմբագիր:



Հ.Յ.Դ. Արեւելեան բիրոյին ուղղուած Յոնան Դաւթեանի այս նամակը ունի երկու տարբերակներ. 64-51-ը ընդարձակն է, մատիտով գրուած 4 էջ. միւսը՝ համառօտ եւ մելանով գրուած՝ երկու էջ: Առաջինի վերջաւորութեան, ինչպէս Միսակ (Գազարեան) կը նշէ՝ «Այս բոլոր խօսուածներից, միայն մելանով գրուած մասն է ուղարկուած Կովկաս», այսինքն փաստաթուղթ 64-51ա-ը: Իրենց շահեկանութեան համար, յաջորդաբար կը ներկայացնենք երկուքն ալ:

Փաստ. 64-51

Ա 9

Ժընեւ, 24/IX 1916

Սիրելիք,

Կը հաստատենք Օգոստոս 12-ի մեր նամակը, որով յայտնել էինք մեր Աւոյի՝ Մասեհեանի խանի³⁰ հետ ունեցած տեսակցութեան առթիւ:

Ձեր No 4 գեկուցումից յետոյ ոչինչ չենք ստացել:

Երէկ Մասեհեան խանը եկաւ մեզ մօտ, հայկական հարցի շուրջ խօսելու համար:

Ինչպէս գիտէք կաթողիկոսի կողմից նա նշանակուել է — Վիգէնի եւ Նորատունկեանի³¹ հետ միասին — հայ պատուիրակութեան անդամ:

Սակայն խոստացած լինելով հանդերձ փաշային իր հնարաւոր աջակցութիւնը, մերժել է պաշտօնապէս մասնակցելու պատուիրակութեան, առարկելով որ ինքը մնալով պարսկական կառավարութեան պաշտօնեայ — թէեւ նա յայտնել է իր կառավարութեան որ պատերազմի ընթացքում պիտի պաշտօն չընդունէ — աննպատակաբար մար է գտնում իր պաշտօնական մասնակցութիւնը: Նրա ասելով փաշան ուղարկած է եղել կաթողիկոսին իր հրաժարականը, սակայն երբ վերջինս նորից փաշայի հետ գործելու իր տրամադրութիւնն է յայտնել, փաշան գրել է կաթողիկոսին եւ յետ վերջերի իր հրաժարականը:

Նա ասում էր որ փաշան ոչինչ չունի մեր դէմ եւ յատկապէս լաւ է տրամադրուած դէպի Վիգէնն ու Միքայէլը, որ նա դէմ չէ համագործակցութեան գաղափարին. փաստ, որ նա իրեն մենակ զգալու եւ իր վրայ դրուած բեռը մենակ չտանելու հնարաւորութիւն չունենալու համար է որ տուել է իր հրաժարականը:

Մեր հարցը եւրոպական ցամաքում թարմ պահելու

եւ մոռացնել չտալու համար, նրա կարծիքով, անհրաժեշտ է եռանդուն գործունէութիւն Ֆրանսիա, Անգլիա եւ Ռուսաստանում. առաջինների քաղաքական շրջանակների հետ փաշան մօտ եւ լաւ յարաբերութիւնների մէջ է, իսկ վերջինի հետ քայլեր պահպանելու համար անհրաժեշտ է Վիգէնի մասնակցութիւնը պատուիրակութեան, որով կը լինեն 3 հոգի, իսկ Միքայէլի փարիզ լինելը նոյնպէս օգտակար է որովհետեւ նա կը լինի trade-union-ը³² կուսակցութեան եւ պատուիրակութեան մէջ, որը Մասեհեանի կարծիքով անհրաժեշտ եւ յատկապէս իրեն ցանկալի է:

Փաշան վերջերս Evian³³ էր եւ մի քանի օրով առաջ է եղել տեղս, այցելել է Favre-ին³⁴ եւ J[ournal] de Genève-ի խմբագրութեան. երբ Մասեհեանը Փաշային իր վերջին տեսակցութեան ժամանակ ասել է որպէսզի գայ մեզ տեսնելու, նա էլ ասել է որ ինքը նոյնպէս կ'ուզէր տեսնուել եւ խորհուրդ տուեց գնալ տեսնուել իրենց, խօսել մեր հարցի մասին եւ ըստ հնարաւորութեան այս սառնութիւնը վերցնել մէջտեղից:

Գրէնֆիլդը³⁵ պիտի գար տեսնուէր փաշային եւ Մ-ին երկրի վիճակի մասին: Մ-ի եւ փաշայի ստացած վերջին տեղեկութիւնների համաձայն գերման եւ ամերիկական կառավարութիւնների դիմումները թուրքիային երկրի տարագիրներու դրութեան համար, դժբախտաբար ոչ մի դրական հետեւանքի չէին յանգել: Թուրքերը յետ են մղել թէ մէկի եւ թէ միւսի միջամտութիւնները առարկելով թէ չեն թոյլ տալ իրենց ներքին գործերի մէջ խառնուելու: Մասեհեանի կարծիքով եթէ կասկածելու լինենք գերմանացիներու վրա[յ] պիտի ընդունինք սակայն որ ամերիկացիները անկեղծ են:

Իրերի այս դրութեան մէջ առաջ է գալիս մի նոր կարեւոր հարց: Ֆրանսացիք որոշել են Կիլիկիայի շրջանում զօրք ափ իջեցնել, դիմել են փաշային, առաջարկե-

30.- Աւետիք Իսահակեան (Աւօ) եւ Յովհաննէս խան Մասեհեան:

31.- Վիգէնը՝ բժ. Յ. Չարիեան է: Գաբրիէլ Նորատունկեան (1852-1936) Թուրքիոյ մէջ Սահմանադրութեան հռչակումէն ետք, մինչեւ 1913 թ. եղած է Օսմ. կայսրութեան առեւտրի, հանրօգուտ շինութեանց եւ Արտաքին գործոց նախարար:

32.- Հաղորդակցութեան կապ:

33.- Հանքային ջուրերով հարուստ քաղաք Ժընեւի լճի հարաւային ափին:

34.- Լեոփոլտ Ֆավը – նախագահ Միջազգային Կարմիր խաչի Ժընեւի կեդրոնի:

35.- Ջէյմս Գրինֆիլդ (1870-1939), ազգութեամբ հայ, ընդհանրապէս գերմանաբնակ. անդամ էր Լեպսիուսի նախագահութեամբ կազմուած գերման-հայկական ընկերութեան եւ գործօն մասնակցութիւն կը բերէր Գերմանիոյ հայ կեանքին եւ հայ դատի աշխատանքներուն: Առաջին հանրապետութեան օրօք կարգուած է Հայաստանի դեսպան Պերլինի մէջ:





լով եզրկատարակներու գինական աջակցութիւնը: Այդ առթիւ փաշան խորհրդակցել է Մ[ասեհեան]ի հետ թէ մեր ներկայ փափուկ դրութեան մէջ ի՞նչ պատասխան տալ: Վերջինս գտել է որ փաշան լաւ կ'անի գնայ Briand-ին³⁶ տեսնէ ապա անցնի Լոնդոն անձամբ ներկայացնէ մեր դրութիւնը եւ հարցնէ թէ ի՞նչ անգաժումաններ³⁷ են իրենց վրայ վերցնում: Փաշան 4-5 օրից պիտի մեկնի Փարիզ այդ առթիւ, իսկ Մ-ն էլ 10 օրից կը մեկնի: Խոստացաւ թէ այդ եւ թէ այլ խնդիրների առթիւ մեզ իրագեկ պահէ, խոստացաւ նոյնպէս Միքայէլի գալուց յետոյ նորից շարունակէ կապեր պահպանել փաշայի եւ մեզ հետ:

Ֆրանսական պրոպագանդայի բիւրոյի նախագահը, վերջերս Մ[ասեհեան]ի հետ մեր հարցի առթիւ խօսելիս իւր դժգոհութիւնն ու զայրոյթն էլ յայտնել ուսու կառավարութեան դէպի մեզ բռնած դիրքից:

Դժգոհ են նաեւ անգլիացիք, սակայն ըստ երեւոյթին թէ մէկ եւ թէ միւսը, հարկադրական պայմանների տակ ճնշուած, առ այժմ տանում են նրանց վարմունքները:

Ինչպէս գիտէք անգլ. ու ֆրանսական կառավարութիւնները շատ վերապահ քաղաքականութիւն են ցոյց

տալիս դէպի ուսաները, իսկ նրանց մամուլը միանգամայն ուսամէտ դենտեցներ է ցոյց տալիս: Հակաուսական եւ ո՛չ մի խօսք կարելի է տեսնել նրանց էջերում, լինեն նրանք լիբերալ թէ պահպանողական:

Անցեալ շաբաթ³⁸ No 70-ում տպուած Միլոկովի³⁹ (12/24 Մարտ 1916) ճառն ու նոյն No 205ի Տաճկահայաստանի կողմնորոգչի⁴⁰ առթիւ գրած յօդուածը թարգմանելով ցրեցինք համաշխարհային մամուլին (բացառութեամբ գերմ[անականի] եւ ուսականի). տեսնենք Ֆրանսական ու անգլիական գրաքննութիւնը պիտի թոյլ տայ թերթերին հրատարակելը?

Դոկտորի վերջին գրած բաց նամակի համաձայն (17/30 Յուլիս) Միքայէլը մի ամսից ի վեր այստեղ պիտի լինէր, սակայն մինչեւ օրս չեւեցաւ:

Անցեալ շաբաթ հեռագրեցի իմանալու համար պիտի գայ թէ ոչ:

Այս բոլոր խօսուածներից, միայն մելանով գրուած մասն է ուղարկուած Կովկաս⁴¹:

ՄԻՍԱԿ

36.- Արիսթիա Պրիան (1862-1932) – Ֆրանսայի վարչապետ եւ արտաքին գործոց նախարար (1915-1917):

37.- Յանձնառութիւններ:

38.- Անընդունելի բառ, հաւանական ռուսական բերթի մը անունը:

39.- Պատել Նիկոլայեւիչ Միլոկով (1859-1943), ռուս քաղաքական ազդեցիկ գործիչ:

40.- Գաղութացում:

41.- Տես յաջորդ փաստ. 64-51ա-ը:





Փաստ. 64-51ա

Ա 10

Ժընեւ, 24/IX 1916

Սիրելիք,

Կը հաստատենք Օգ. 12-ի մեր նամակը, որով յայտնել էինք մեր Առոյի՝ Մասեհեան խանի հետ ունեցած տեսակցութեան առթիւ:

Ձեր No 4 զեկուցումից յետոյ ոչինչ չենք ստացել:

Երէկ Մասեհեան խանը եկաւ մեզ մօտ, մեր հարցի շուրջ խօսելու համար: Մեր տպատրութիւնը – Ատն էլ ներկայ էր – այն էր որ նա եկել էր Փաշայի կողմից:

Ինչպէս գիտէք կաթողիկոսի կողմից Վիզէնի եւ Նորատունկեանի հետ նա նշանակուել է հայ պատուիրակութեան անդամ. թէն հրաժարուել է պաշտօնապէս մասնակցելու, սակայն միշտ աջակցում է փաշայի աշխատանքներին:

Նա ցանկութիւն յայտնեց – որը միեւնոյն ժամանակ էր Փաշայի ցանկութիւնը պիտի համարել – որ մեզանից մի ներկայացուցիչ լինի Փարիզում:

Ինչպէս գիտէք Հայաստանը բաժանել են երկու մասի, որից՝ Կիլիկիայի մասը Ֆրանսային է տրուած:

Առաջ եկած ամենալուրջ հարցը հետեւեալն է.

Ըստ երեւոյթին Անգլիան ու Ֆրանսիան որոշել են դեսանտ անել Կիլիկիայում եւ կը ցանկանային դեսանտի գործում ունենալ հայերու աջակցութիւնը:

Փաշան – որը վերջին ամսում եղել է Evian եւ այս կողմերը – մի քանի օրից մեկնելու է Փարիզ տեսնուելու Briand-ին, այդ առթիւ եւ հարց տալու թէ ինչպիսի engagement-ներ են ընդունում իրենց վրայ: Խնդիրը լուրջ է այն տեսակետից որ մեր մասնակցութեան դէպքում, Միջագետքում մնացածները եթէ մինչեւ օրս չեն ոչնչացրուած կարող են ոչնչացնել⁴²:

Մենք այս առթիւ դրական ոչինչ չպիտի կարողանանք ասել. ի՞նչ է ձեր կարծիքը այս մասին. անմիջապէս գրեցէք:

Այս առթիւ եթէ որեւէ նորութիւն ունենանք ձեզ կը յայտնենք:

Յանկութիւն յայտնեց որ Վիզէնը Փարիզ գար կապ պահպանելու համար պատուիրակութեան եւ ռուս կառավարութեան մէջ:

Դոկտորին գալը շտապեցրէք:

42.- Խօսքը կը վերաբերի Միջագետք տարուած հայ տարագիրներուն վիճակուած ճակատագրին:



Փաստ. 64-59

Ա 11

Հոկտ. 13 1916

Միրելիք,

Խանը⁴³ մեզ այցելեց երկրորդ անգամ: Մեզ հետ սերտ յարաբերութեան մտնելը ակնբախ էր: Շեշտեց նորից Վիգէնի Պարիզ գալու անհրաժեշտութեան մասին, նոյնպէս եւ Վարանդեանի⁴⁴ բարեկամական կապեր պահպանելու: Ինչպէս ասել ենք սա միայն Խանի ցանկութիւնն է, այլեւ Փաշայի: Նշանակալից է: Շարժառիթներ երկու կարող են լինել: 1) Կամ ի մի բերելու բոլոր հոսանքները եւ խաւերը՝ ի նկատի ունենալով խնդրի յուսահատական վիճակը եւ ապա որ մենք էնքան էլ անտես առնելու ոյժ չենք եւ 2) ինչ որ էլ լինի մեր մասնակցութիւնը այդ աշխատանքին անհրաժեշտ է, եւ ուրախ եմ, որ Միքայէլը արդէն Ստոկհոլմ է, այսօր նամակ առի: Յոյս ունեմ, որ ամենամանրամասն կերպով խնդիրը ուսումնասիրուած է իր բոլոր դրութիւններում՝ հաւանական եւ անհաւանական եւ ըստ այդմ էլ մեկին⁴⁴ ու որոշ դիրեկտիւ է տուած նրան:

Կրիլիկիայի մասին գրածը մեր նախկին նամակում թիւրիմացութիւն է – պաշտօնական առաջարկ չէ եղել, այլ Ալեքսանդրիայում Փաշայի բարեկամներից մէկին մի ֆրանսիացի խօսել է: Ինչպէս գիտէք, Անգլիայի կողմից էլ մեզ է եղել այսպիսի մի առաջարկ: Էնպէս որ խնդիրը պաշտօնական չլինելով հազիւ թէ կարեւոր արժէք ունի: Հայաստանը երեքի չէ բաժանուած: Այս մասին Վիգէնը ձեզ մանրամասն պատմած կը լինի, նորութիւն չէ:

Խանը մեզ ուղարկել է Փաշայի ներկայացրած նոտան պետութիւններին. կազմած է հմտալից ու ճկուն: Դիպլոմատիական շնորհքին աշխատանք է. քաղաքական կացութիւնը ի նկատի առնելով գոհացուցիչ կարելի է համարել: Յանկալի էր՝ որ նա աւելի շեշտած լինէր այն կէտի վրայ, որ մեր ցանկութիւնն է: Առհասարակ բաց դռներ շատ կան: Հակառակ այս թերութեանը՝ թւում է որ կարող ենք մենք եւս պաշտպանել:

Ձեր խոստացած լրագրերը չստացանք ու չստացանք: Ուրախացել էինք, որ մեզ յիշել էք. որքան կարճ եղաւ P...ի յօդուածը՝ ուսու գաղթականութիւն] Հայաստ[անում] տեղաւորելու մասին. թարգմանեցինք եւ ցրեցինք Ալիէներին⁴⁵ եւ չէզոք թերթերին եւ յայտնի անձնաւորութեանց N.N. ստորագրութեամբ: Շատ ենք զգուշանում «Դրօշակի» եւ Դաշնակցութեան] անունը խառնել – ի նկատի ունենալով ներկայ վիճակում հակառուսական խնդիրները:

Մենք յայտնեցինք Խանին, որ ոչ մի դէպքում Կրիլ-

կ[իայի] խնդիրը չպիտի արուի առանձին, որ ամենածանր պատասխանատուութիւնը կ'ընկնի նրանց վրայ, որոնք Հայաստանի խնդիրը կորած կը համարեն. մինչեւ վերջին շունչը պէտք է պահպանել ամբողջութիւնը՝ Հայաստան – Կրիլիկիա – թող իրենք պետութիւնները բաժանեն:

Ընկերներ,

Մասեհեանը, ինչպէս գիտէք, կաթողիկոսի կողմից նշանակուել է Փաշայի օգնական, թէեւ պաշտօնապէս չի ընդունել սակայն խոստացել է անպաշտօն կերպով օգտակար լինել եւ իրօք որ Փաշայի հետ գործում է: Երկու անգամ եղել է մեզ մօտ եւ ցանկութիւն յայտնել որ սերտ յարաբերութիւն ստեղծենք Փաշայի եւ մեր մէջ պնդելով նրա օգտակարութիւնը: Անշուշտ սա ցանկութիւնն է նաեւ Փաշայի: Վերջինս երեւի նոր է գգում մեր աջակցութեան անհրաժեշտութիւնը:

Փաշան իր ներկայացրած համաձայնութիւնն դիւանագիրտութեան՝ ուղարկել է մեզ: Նա լուրջ եւ խնամքով պատրաստուած աշխատութիւն է, իր որոշ թերութիւններով հանդերձ հնարաւոր է համաձայնել նրա ներկայացրած պահանջների հետ:

Խանը պնդում էր շտապեցնել ընկերներ Վիգէնի եւ Վարանդեանի Փարիզ գալը, ինչ որ է եւ Փաշայի ցանկութիւնը: Սա նշանակում է որ նա այժմ աշխատում է մեզ մօտենալ եւ մեր աջակցութիւնը ունենալ:

Ընկ. Վարանդեանը արդէն Ստոկհոլմ է եւ շուտով կը ճանապարհուի Լոնդոն: Տեղիցը եկող մէկը յայտնել է մեր ծանօթներից մէկին որ անգլիացիների թուրքերից վերցրած գերիների շարքում եղել են հայեր որոնք բերւած են եղել Հելիոպոլիս⁴⁶: Դրանք յայտնի են տեղական անգլիական թարգմանչին որ իբր թէ Շահրիկեան, Սիամանթօ եւ Խաժակ ողջ են: Այս առթիւ ձեր գիտցածները խնդրում ենք ծածկագիրով յայտնէք մեզ:

Մեր հեռագիրը ստացած կը լինէք Նորատունկեանի խնդրի առիթով: Մեր աղբիւրը դր. Զաւրիեան է ու Յովհաննէս Մասեհեան-Խան, որն նոյնպէս նշանակուած է պատգամաւորութեան անդամ: Մեզ թւում է թէ խնդիրը դուք շատ էք մեծացրել: «Յուսաբեր»ի երկու յօդուածով պիտի բաւականանայիք: Բացի այս, դուք պիտի ծանրանայիք էջմիածնի վրայ, որովհետեւ մեղաւորը նա է, աւելի ճիշտ նրա շրջապատը: Ինչպէս գիտէք կաթողիկոսը խեղճ է եւ քաղաքականութեան հետ անծանօթ: Նա դեկավարուում է հին ժամանակների հասկացողութեամբ, որ ազգի ճակատագիրը տնօրինողները մեծատուններն են: Շրջապատը օգտուում է կաթողիկոսի այս նահապետական հասկացողութիւնից, մանա-

43.- Այստեղ եւ այսուհետեւ խանը՝ Յովհաննէս խան Մասեհեանն է:

44.- Մեկին՝ պարզ եւ յստակ իմաստով:

45.- Ալիէների – Դաշնակից պետութիւններու:

46.- Հելիոպոլիս – քաղաք՝ Գահիրէի մօտ:



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

լանդ որ կովկասում այժմ տիրում է յետադիմական պետական ոգին: Յետադիմական է եւ ինքը կաթողիկոսի շրջապատը: Տարօրինակ է, որ Ջաւրիեւին եւս նշանակել է. Մասեհեան խանը իբրեւ չէզոք է:

Փաշան այդ անուան[ման] հետ կապակից չէ: Վերջերս մէկին ասել է՝ որ եթէ Նորատունկեանը համաձայնուէր ընդունել պատգամաւորութեան անդամակցութիւնը, ինքը պիտի հրաժարուէր: Գուցէ սա եւս դիպումատուութիւն է, դա նրա խղճի գործն է: Յամեանայնդէպս չէ բողոքել: Նա մինչեւ վերջերս էլ պաշտօնական լռութիւն է պահել: Զուրիցերիայում երկու անգամ եղած ժամանակ էլ նրա հետ տեսնուել է, հաւանականօրէն իբրեւ հին բարեկամ: Փաշայի բռնած դիրքի վերաբերմամբ գիտենք եւ այս, որ նա մի բարեկամի ներշնչել է, որ Նորատունկեանի հետ խօսելիս այդ խնդրի առիթով հասկացնէ նրան՝ որ լաւ է հրաժարել այդ պաշտօնից, եթէ ինքը տրամադիր է ընդունելու: Գուցէ սա էլ դիպումատուութիւն է, բայց թողնենք իր խղճին:

Իրողութիւնը սա է.—

1. Հայոց կաթողիկոսը Նորատունկեանին, Մասեհ-

եան-խանին եւ դր. Ջաւրիեւին նշանակել է պատգամաւորութեան անդամ:

2. Պօղոս փաշան այդ նշանակման մէջ մաս չունի:

3. Ջաւրիեւը հրաժարուել է չկամենալով Նորատունկեանի հետ լինել եւ ուրիշ պատճառներով:

4. Նորատունկեանը ինքն է յայտնել մի խօսակցութեան մէջ, որ չի կարող ընդունի:

5. Յայտնի չէ թէ նա հրաժարական է տուել:

6. Յայտնի չէ, թէ կաթողիկոսը այժմ ինչ որոշում է տուել:

7. Հաւանականը — պաշտօնական տեսակէտով նա համարուում է պատգամաւորութեան անդամ:

8. Պօղոս փաշան չէ բողոքել այդ նշանակման դէմ, չէր էլ կարող, կարող էր միայն հրաժարուել:

9. Յայտնի է մեկին⁴⁷, որ եթէ Նորատունկեանը մնայ, ինքը ստիպուած կը լինի հրաժարուել:

10. Կողմնակի կերպով ներշնչում է արել մի բարեկամի՝ խորհուրդ տալ Նորատունկեանին չընդունել այդ անուանումը եթէ նա տրամադիր է:

Այս բոլոր տեղեկութիւնները ձեզ տալով, յոյս ենք յայտնում որ խնդիրը փակուած կը համարէք:

Պէտք է աշխատել ժողովրդի ուշադրութիւնը չցրել իւր մեծ ցաւից եւ խնդրից:

47.- Տես ծանօթ 44-ը:





Փաստ. 65-3

Ա 12.- ԸՆԿԵՐ ՅՈՆԱՆԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ՄԵՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ժընե, 15 / I / 917

Ընկեր Յոնանի կարծիքները մեր անելիքների մասին, որոնք ընկեր Միսակը Փարիզ գնալուց պիտի յայտնէ Միքայէլին [Վարանդեան]:

1.- Յայտնել թէ ինչո՞ւ ենք պնդել Կովկաս որ ընկերներ ուղարկուեն, Փաշային մենակ չթողնելու համար: Նրա մտայնութիւնն ու գործելակերպը:

2.- Միքայէլը Փարիզից կարծիք է յայտնել, որ լաւ կը լինէր եթէ ո՛ւշ գար: Յոնանը կարծում է որ հէնց սխալը սա է: Միքայէլը պիտի իմանայ որ բոլոր քաղաքական խնդիրները հէնց պատերազմի ընթացքում լուծուում են եւ խաղաղութեան ժամին մենք կանգնած ենք լինելու fait accompli-ի⁴⁸ առջեւ: Ուստի վայրկեան անգամ աչքից բաց չպէտք է թողնել: Բոլոր աշխատանքը այժմ պէտք է անել:

3.- Եւրոպական մամուլն ու հասարակութիւնը մեզ ընդունում է ու խօսում է մեր մասին իբրեւ մարտիրոս, գոհուած ժողովրդի. անգամ սոցիալիստականը: Մենք իբրեւ քաղաքական միութիւն, քաղաքական խնդիր գոյութիւն չունենք. մեր քաղաքական իրաւունքների մասին խօսք չկայ ո՛չ մի տեղ: Ամէն տեղ յիշուում, խօսուում է Սերբ[իայի], Բելգիա[յի] ու Լեհաստանի մասին ու նրանց իրաւունքների, բայց մեր մասին երբեք:

4.- Մամուլը եւ հասարակական միտքը պէտք է զբաղեցնենք մեր քաղաքական իրաւունքներով եւ դրա համար ես պնդում էի որ պէտք է ջերմ, եռանդուն պրոպագանդ սկսել չէզոքներից⁴⁹: Այս ուղղութեամբ ի՛նչ որ Պօղոս փաշան անում է, անում է կուլիսի յետեւում, եւ այս էլ՝ եթէ անուում է: Մամուլը, հասարակական կարծիքը, մանաւանդ դեմոկրատին, ահա ուր պէտք է կենտրոնացուի մեր աշխատանքը, որովհետեւ ես կարծում եմ, որ այս Ֆակտորները⁵⁰ ահագին արժէք են ունենալու խաղաղութեան ժամին: Յետոյ որ Խանը խիստ ցանկութիւն է յայտնել որ կամ Բփիշկը կամ Միքայէլը գան Փարիզ, որոնց ներկայութիւնը իրենք — Փաշան եւ ինքը — կարեւոր են համարում:

5.- Իմ մտքում չի եղել Փաշայից առանձին գատ գործել. չէ, միայն ես նկատում եմ որ նա եթէ ձեռնհաս է դիպլոմատիայի գործունէութեան մէջ, բայց ոչ հասարակութեան եւ մամուլի: Գուցէ եւ իբրեւ փաշա նա արհամարհում է, չգիտեմ. պէտք է նրան հասկացնել եւ ստեղծել որոշ օրգան խօսքի եւ գրչի պրոպագանդի համար:

6.- Միքայէլը ուզում է գալ Ժընե: Չգիտեմ ինչո՞ւ

համար: Բայց ասացէք՝ դեռ աւելի լաւ է մի Խտալիա գնայ, ուր բաւականին լաւ հող կայ մեր խնդրին համար նպաստաւոր:

7.- Ո՛չ պակաս կարեւոր է աշխատել ամէն կերպ արտասահմանում վերջ տալու մեր ներքին անհամաձայնութեան «ազգային խնդրի շուրջը»: Փաշան բացասական դեր է կատարել մինչեւ այժմ եւ պէտք է աշխատել նոյնիսկ բարոյական ճնշում գործ դնել, որ նա իր շրջանի մէջ վերջ տայ այդ տնաւեր գործունէութեան ու մտայնութեան:

Մանրամասնութիւնների մէջ չեմ մտնում, որովհետեւ դու իրագեկ ես ամէն ինչի եւ լաւ էլ յիշողութիւն ունես:

8.- Կիլիկիայի եւ Հայաստանի խնդիրը եւս պիտի պարզել: Ինչպիսի տրամադրութիւններ կան քաղաքական շրջանակում: Կա՞յ հասկացում որեւէ համաձայնութիւն Ալիէներու մէջ:

9.- Միքայէլի Ժընե գալն էլ անհրաժեշտ չէ, թէեւ ի հարկէ մեզ շատ ցանկալի է իմանալ տեղեկութիւններ: Առաջին տեղիդ գործը: Մանաւանդ դու գիտես թէ որքան դժուարութիւն կայ նորէն վերադառնալու Ֆրանսիա: Ասա, եթէ մեզ համար է, վնաս չունի, թող ուշանայ, գլխաւորը գործն է, մանաւանդ որ դժուարութիւններ շատ կայ: Թող աշխատի Խտալիա գնալ համաձայնելով Փաշայի հետ: Յոյս ունեմ որ այժմ էլ չի փոշմանում որ եկել է Եւրոպա:

10.- Խօսել Միքայէլի հետ, թէ նա կ'ուզէ՞ արդեօք յարբերութիւն պահպանել, թէ ոչ: Առանց ձեզ չեմ կարծում էրպիսի բաների համար նա տրամադրութիւն ունենայ եւ երեւի ժամանակ էլ չի ունենալ: Կը տեսնէք:

11.- Բարի եղէք Միքայէլին ասել, որ իր գալը պիտի ուշանայ Ժընե, գուցէ իսկի չգայ էլ, թող քեզ պատմի եւ դու բարի կը լինես մեր ճանապարհով գրել: Սկզբում այդ հնարաւոր կը լինի քեզ համար, որովհետեւ յամենայն դէպս երեկոները ժամանակ կ'ունենաս:

12.- Միքայէլին կ'ասէք իմ կողմից որ ես հայ պատգամաւորութեան առանձին ուշադրութիւնն եմ հրաւիրում իսպանական կառավարութեան վրայ, որին վերապահուած է ազդեցիկ դեր խաղաղութեան ժողովում, ինչպէս եւ Պապի, որի դերը պակաս չէ լինելու:

48.- Կատարուած իրողութեան, փաստի առջեւ:
49.- Չէզոք, ոչ-պատերազմիկ պետութիւններից:
50.- Ազգակները, գործօցները:



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

13.- Աւելացրէ՞ք այս տողերս.— Մտերմաբար ասէք Միքայէլին, որ Աղաթօն բէյին պաշտօնական յանձնարարութիւններ չանեն — եթէ անուամ է. որովհետեւ թէ՛ լուրջ չէ, եւ թէ՛ քաղաքական խնդիրներում տհաս է ու տակաւ չունի:


Թեան խնդրի առթիւ: Ես դո՛ւ եմ որ Եգիպտոսը այդ ուղղութեամբ գործնական քայլեր է անում:

14.- Ասել մեր տեսակէտը ազգային համերաշխու-

Ընկեր Յոնանի կողմից, գրուած Montana-ից⁵¹ Միսսիսի, ժընեւ՝ Փարիզ գնալուց Միքայէլին ասելու համար:

51.- Չուիցերիոյ մէջ ճմեռնային մարզավայր եւ լեռնային հանգրստավայր ուր կը մնար Յոնան Դաթեան:

ժընեւ, 17/1/917



Նոյնը մը Յոնան Դաթեանի ձեռագրէն (փաստ. 64-55):



Փաստ. 1404-105

Բ 1.- ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

Ստոկհոլմ, 15 Հուլիս. 1916

Միրելի ընկերներ,

Նոր եկայ Շուկտիայի մայրաքաղաքը: Պիատիգորսկից գրել էի ձեզ իմ Եւրոպա մեկնելու մասին: Մեծ դժուարութեամբ ստացայ անցագիրս եւ սահմանում էլ բաւական նեղեցին: Թիֆլիսում եւ Բազում վաղուց որոշուած էր, որ Ահարոնեանը եւ ես վերադառնանք Եւրոպա՝ վերսկսելու համար պրոպագանտը յօգուտ մեր հարցի բարեյաջող լուծման:

Ահարոնեանը դեռ տկար լինելով, փոքր ինչ կ'ուշանայ: Իսկ ես մի առ ժամանակ այս կողմերն մնալուց յետոյ՝ կ'երթամ Պարիզ, այնտեղից պարբերաբար Հռոմ, Միլան, Ջուրիցերիա եւ այլ տեղեր: Գուցէ երբեմն էլ գործի ընթացքը մղէ ինձ դէպի չէզոք սկանտինաւեան երկիրներ: Պէտք է մտածել մեր կէս միլիոն հայրենակիցների մասին, որ ապրում — աւելի ճիշտ — մեռնում են Միջագետքի անապատներում: Կիլիկեցիների վիճակը համեմատաբար լաւ է (ականատեսների ասելով, Կիլիկիոյ հայերից շատ քչերն են կոտորուած), իսկ Մեծ Հայքից տարուածները ենթակայ են անասելի զրկանքների:

Պէտք է աշխատել թեթեւացնել նրանց վիճակը: Ամերիկան մեծ ծառայութիւն կարող է մատուցել. ամէն ջանք թափեցէք ամերիկացիների միջոցով ճնշում գործ դնել գերմանական կառավարութեան վրայ, որովհետեւ միմիայն Գերմանիայի միջոցով է որ հնարաւոր է ազդել թուրքերի վրայ եւ ապրեցնել անապատաբնակ եղբայրներին մինչեւ պատերազմի վախճանը:

Իմ տեղս մնալու նպատակն այս է: Մի երկու հին բարեկամներ ունէի, աշխատում եմ նրանց միջոցով. կ'երթամ թերեւս եւ Դանիմարք, կ'անցնեմ եւ Քրիստիանա: Հեռագրեցի [Նուպար] փաշային որ եթէ նոր ծանօթներ ու բարեկամներ ունի Սկանտինաւիոյ մէջ, հաղորդէ հասցէները: Կ'աշխատեմ տեսնուել տեղւոյս գերմանական] դեսպանի հետ եւ կարգալ նրան տարրական մարդասիրութեան քարոզ: Լաւ կը լինի որ դուք էլ Վաշինկթոնում ամերիկացի բարեկամների հետ հաւաքական մի դիմում անէք գերմ. դեսպանին (եթէ չէք արած) եւ բացատրեցէք, որ Գերմանիոյ վարկը անդարմանելիօրէն պիտի ընկնէ Արեւելքում եթէ շարունակէ անտարբեր մնալ հայաջինջ քաղաքականութեան հանդէպ:

Պօղոս] փաշայի հետ պիտի աշխատենք թեւ թեւի գործել. աշխատեցէք, խնդրում եմ, այդտեղ եւս գլուխ բերել համերաշխութիւնը: Կովկասում, մանաւանդ այս վայրկեանին, անհամաձայնութիւն չկայ: Վերաշինու-

թեան գործը, ինչպէս տեսնում էք, դանդաղ է գնում. ռուս կառավարութիւնն էլ ամէն տեսակ խոչընդոտներ է դնում:

Մեր ազդեցիկ ընկերներից երկուսը, Ռոստոմ եւ Բժ. Զաւրեան, գնացին Էրզրում եւ անձնական կապերի շնորհիւ խլեցին մի քանի գիջումներ Իւդենիչից⁵²: Թոյլատրում է, վերջապէս, հայերին՝ ազատօրէն բնակութիւն հաստատել թէ Կարին եւ թէ վիլայէթում:

Փոխարքայի դէպի մեր հարցը բռնած դիրքը միանգամայն բացասական է: Ոչ մի հայկական ինքնավարութեան մասին լսել չի ուզում⁵³: Տարաբախտաբար նրա ազդեցութիւնը մեծ է Պետրոգրադում: Փոխարքայի հետ՝ կովկ. գիւղեր[ական] իշխանութիւններն պարզապէս խեղդել են կամենում մեր դատը:

Այդ առթիւ երկար խորհրդակցութիւններ ունեցայ Պետրոգրադում Միլիկովի եւ այլ մեզի համակիր պարլամենտական գործիչների հետ: Յորդորում են չյուսահատուել եւ գործել: Իրենք խոստանում են պայքարել յետագէմ ու հակահայ հոսանքների դէմ:

Պէտք է ամէնից առաջ մշակել Եւրոպայի (Ֆրանսա, Անգլիա, Իտալիայի) հանրային կարծիքը եւ դաշնակիցների միջոցով ազդել Ռուսաստանի վրայ: Այդ ուղղութեամբ պէտք է մենք աշխատենք:

Մի քանի մանրամասներ Միլիկովի հետ ունեցածս զրոյցի մասին յետոյ կը գրեմ:

Պետրոգրադից տեղս եկայ ընկերակցութեամբ մի ֆրանսիացի դիւանագէտի (agent diplomatique), որը նոյնպէս կարեւոր տեղեկութիւններ տուեց արեւմտեան պետութիւնների ծրագիրներին մասին. նրա կարծիքով որոշուած է Պոլիսը ռուսին տալ, բայց Նեղուցները՝ երբեք: Հայաստանի ճակատագիրը անծանօթ է իրեն. Թուրքիան եւ Բուլղարիան ոտի տակ կ'երթան, ասում է նոյն պարոնը. Անատոլիան միայն կը թողնեն թուրքերին:

Զգոյշ կացէք. ամէն բան մի հրատարակէք Հայրենիքի մէջ: Տեղդ թուրքական դեսպան կայ, մի մոռացէք, եւ առհասարակ նպատակալարմար էլ չէ Թուրքիոյ դէմ շարունակ ու անտեղութեամբ յարձակումներ գործել. օգուտ չկայ դրանից, իսկ վնաս կարող է լինել:

52.- Չօր. Ն. Ն. Իպեմիչ — Կովկասի ռուսական զօրքերու սպայակոյտի պետ:
53.- Կովկասի փոխարքայ, միեւնոյն ժամանակ կովկասեան բանակի գլխաւոր հրամանատար Աշմակուտաժ Էր մեծ իշխան Նիկոլայ Ռոմանով (25 Օգ. 1915 թ.):



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Միջազգետքի հայերի մասին եւս շատ գրելու եւ խօսելու չէ:

Կ'աշխատեմ գրել ձեզ իւրաքանչիւր շաբաթ, սակայն իմ կոյր բախտից իսկ, Պետրոգրադի հայկական կոմիտէն խնդրեց ինձ իւրաքանչիւր 3-4 ամիս երթալ այնտեղ տեղեկութիւններ տալ եւ փոխադարձաբար ստանալ տեղեկութիւններ:

Պիտի կարողանա՞մ, չգիտեմ: Նամակագրութիւնը գրեթէ անհնարին է Ռուսաստանի մարմինների հետ: Մենք որոշել ենք՝ Փաշան կը մնայ Պարիզ, իսկ ես կը թափառեմ: Շատ կարեւոր են մեր կապերը Իտալիայում, որի աջակցութիւնը թանկ պիտի լինի մեզ համար եւ որի մայրաքաղաքում 1½ տարի առաջ իմ ներկայութեամբ հիմնուել էր իտալո-հայ կոմիտէ:

Այժմ ամենաանախորժ մի հարցի մասին — դրամի: Ահարոնեանին պիտի ղրկէ Բագուն, իսկ ինձ համար Թիֆլիսում որոշուեց, որ դուք ղրկէք ամսական հազար ֆրանք — 200 դոլլար:

Առաջները բաւականանում էինք աւելի համեստ գումարով, բայց այլեւս նախկին ձեռով պրոպագանդանելու չենք, որովհետեւ նորէ նոր բարեկամներ գտնելու համար (մամուլի, պարլամենտական գործիչների շարքերում) դրամը խնայելու չենք:

Փոքրի ինչ աւելի շնորհքով ապրելու եւ գործելու —, ապա եւ անհրաժեշտ ուղեւորութիւններ կատարելու, յարաբերութիւններ պահպանելու համար, անհրաժեշտ

է առնուազը 1000 ֆրանք կեանքի ներկայ սուղ պայմաններում եւ իմ առողջական պայմաններում:

Խնդրել էի առաջին անգամ ղրկել 1500 ֆրանք Փաշայի հասցէին. ոչինչ չկայ վրաս, ոտից ցգլուխ պէտք է նորոգուեմ. դրա համար 500 ֆրանք աւելի էի խնդրել: Եթէ դեռ չէք ղրկել, լաւ կը լինի հեռագրով փոխադրել, որովհետեւ Պարիզ հասնելուց ոչինչ չեմ ունենալ:

Իսկ պարտք անելու տեղ չկայ: Փաշային երբեք դրամի համար չպիտի դիմեմ:

Ապա իւրաքանչիւր ամիս կը խնդրեմ կանոնաւորապէս:

Ուրեմն այս հարցը միանգամընդամիշտ կարգադրուած է:

Առայժմ կը խնդրեմ ղրկել Փաշայի հասցէին, Avenue Trocadéro 12, Paris, Son Exc[ellence] Boghos Noubar, pour Varandian.


Ընկերական բարեկներով
ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

Հեռագիրները եւ նամակները ղրկեցէք

Mr. Lounkewitch
Montbrun 15, Paris, pour Varandian

Նոյն հասցէով խնդրեմ ղրկէք «Հայրենիքը»: Ի՞նչպէս են ձեր գործերը:





HÔTEL GÖTA KÄLLARE

Telegrafadress: GÖTA KÄLLARE
Rikstelefon: GÖTA KÄLLARES CENTRAL

Göteborg den 27 oct 1916

Փաստ. 1404-109

Բ 2

Գեոտերբորգ, 27 Հոկտ. 1916

Միրելի ընկերներ,

Ստոկհոլմից երկար նամակ եմ գրել ձեզ: Եկայ շուէտական այս միւս քաղաքը՝ խորհրդակցելու մի պրոֆեսորի հետ, որին հեռագրով յանձնարարել է ինձ Պ[օղոս] Նուպարը: Այստեղից գուցէ երթամ Դանըմարքի մայրաքաղաքը մի երկու օրով: Ապա պէտք է մեկնեմ Լոնդոն: Պ. Նուպարը հեռագրում է, որ կ'ուզէր շուտով հանդիպել ինձ Լոնդոնի մէջ: Յոյս ունիմ, որ միութարական տեղեկութիւններ կը ստանամ նրանից Միջագետքի մեր հարիւր հազարաւոր աքսորականների կացութեան եւ լինելիք օգնութեան մասին: Այսօրուայ մեր մեծագոյն խնդիրն է՝ ապրեցնել այդ զանգուածը մինչեւ պատերազմի վերջը:

Թերեւս ստիպուած լինիմ մօտ ապագայում վերադառնալ այս կողմերը: Չեզոքներին պէտք է շարժել: Պրոպագանդ սկսուած է արդէն նրանց մէջ. այսօր զարմանքով տեսայ մի քանի բրոշիւրներ — շուէտական եւ դանիական լեզուներով — հայոց հարցի եւ հակահայ հալածանքների մասին: Ստոկհոլմում տեսնուեցայ մի շարք ազդեցիկ անձերի հետ:

Մէկը նրանցից Գերմ[անիոյ] քայքերի բարեկամն է, հեղինակաւոր ճանապարհորդ Ս.էն Հետին: (Սրանք հրատարակելու բաներ չեն): Երկար ունկնդրութիւնից յետոյ յայտարարում է, որ հալածանքները դադարել են, որ ճիշտ է կացութիւնը (աքսորականների) խեղճ է, բայց... հալածանքները դադարել են: Այսպէս բառացի յայտարարեց Ս.էն Հետինը:

«Հալածանք» բառը առաձգական է, ի հարկէ. հնարաւոր է որ իրօք մեղմացած լինին Միջագետքի սարսափները (Ամերիկայի, գուցէ եւ Բերլինի ճնշման տակ), բայց, անկասկած, դրութիւնը դեռ սոսկալի է:

Եղայ նաեւ միախոնարներու մօտ: Դժբախտաբար, պատերազմի շնորհիւ կտրուած են նրանց յարաբերու-

թիւնները իրենց հեռաւոր գործակալների հետ. ոչինչ չկարողացայ իմանալ եւ մեր աքսորուած մտաւորականների մասին:

Անշուշտ Պ[օղոս] փաշան եւ Լոնդոնի կոմիտէն քայլեր արել են՝ այդ դրութիւնը գէթ փոքր ինչ մեղմելու համար:

Հեռագրով ստացայ յանձնարարականներ նաեւ Զուլիցերիոյ մեր բարեկամներէն (Լէոպոլդ Ֆալր): Մէկը նրա յանձնարարած շուէտներից — նոյնպէս յայտնի արեւելեան ճանապարհորդ — երկու օր առաջ գնաց Դանըմարք, եւ այնտեղից պիտի աշխատէր իր գ[երման] բարեկամների միջոցով ազդել Բերլինի մարդկանց վրայ, որպէսզի սրանք էլ ազդեն թ[ուրք] կառավարութեան վրայ:

Սրանք բոլորը քայլեր են, որոնք դժուար թէ թեթեւութիւն բերեն մեր թշուառ եղբայրներին:

Ինձ ամէն տեղ ասում են, որ չէզոք պետութիւններից Ամերիկան է, որ կարող է իրօք ազդել Բերլինի ու Կ. Պոլսի վրայ: Այդտեղ է, ուրեմն, որ պէտք է աշխատէք, շարունակ դիմումներ անէք եւ նկարագրէք Միջագետքի կացութիւնը, քաղելով տեղեկութիւններ կովկասի ու Եգիպտոսի հայ թերթերից:

Հեռագրել եմ, գրել եմ երկար նամակով եւ Պ[օղոս] Նուպարին այդ մասին, կը պնդեմ եւ բերանացի՝ մի քանի օրէն Լոնդոնէն, ուր նա պիտի մնայ մի 10 օր, ինչպէս հեռագրում է: Կարծեմ Բրայսը⁵⁴ շատ կարող է օգնել այդ ուղղութեամբ (յատկապէս Ամերիկայի վրայ ազդել):

Անցեալ անգամ խնդրել էի, որ գգոյշ լինէք թերթի մէջ Միջագետքի հայերի եւ առհասարակ հայկական գործերի մասին գրելիս: Նոյնը պիտի խնդրեմ նամակով Եգիպտոսի մեր ընկերներին:

Խնդրում եմ ղրկել ինձ «Հայրենիք», առ այժմ այս հասցէով՝

M. Loukévitch, 15 Montbrun
Paris, pour Varandian

54.- Ջէյն Բրայս (1838-1922), անգլիացի պետական դէմք, հայասեր: Նախապէս Մեծն Բրիտանիոյ դեսպան Միացեալ Նահանգներու մօտ:



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Այդ հասցեով կարող էք եւ գրել ու հեռագրել ինձ: Կարող էք օգտուել եւ Պ[օղոս] Նուպարի հասցէից: Լուսկեւիչը (Արարատսկին), ինչպէս գիտէք, մեր շատ մօտիկ ընկերներէն է:

«Հորիզոնը» թողցի մեծ դժուարութեամբ. մնաց համարեա անտէր. ազատ ընկերներ քիչ կան այժմ: Չգիտեմ՝ ինչ վիճակում է այժմ:

Ահագին գործ է «Հորիզոնը»: Կովկասի ամենատարածուած թերթն է այժմ (նոյնիսկ կովկասեան ռուս թերթերից աւելի). անդադար քաղուածքներ են անում նրանից մայրաքաղաքի թերթերը եւ մեծ խնդիրներին մէջ ունկնդրում են նրա կարծիքին: Բաժանորդների թիւը հետզհետէ աճում էր: Թէ մեր դատի եւ թէ կազմակերպութեան պրեստիժի համար պէտք էր աւելի եւս բարձրացնել, ճոխացնել «Հորիզոնը»: Դա մի ամբիոն է, ուսկից խօսում ենք հարիւր հազարաւոր գիտակից հայերին:

Թողցի ցաւօք սրտի. ընկերները ասացին, որ ես այս կողմերում աւելի օգտակար կը լինեմ: Չգիտեմ թէ որքան պիտի արդարանայ այդ կարծիքը: Մի բան միայն ճիշտ է. Պ[օղոս] փաշան հաւատում է ինձ եւ ընդհանրապէս վերաբերմունքը շատ լաւ է, հեռագրով իր ուրախութիւնն է յայտնում իմ գալու մասին: Նա մի տարի առաջ արդէն գրել էր ինձ եւ խնդրել, որ Պարիզ անցնեմ. չկարողացայ գալ: Մեր միւս մի շարք գործիչների հետ այնքան էլ չի հաշտուում: Այս կողմից գուցէ մի յայտնի չափով օգտակար կը լինի իմ ներկայութիւնը՝ միջկուսակցային այս կռիւների օրերում երբ անհրաժեշտ է համերաշխ ընթանալ — համերաշխ ընթանալ, ի հարկէ, պահպանելով հանդերձ մեր physionomie-ն⁵⁵:

Ծերունուն պէտք է աջակցել: Եթէ լքենք, մենակ թողնենք, կարող է եւ վրիպումներ անել. նա էլ մարդ է, մանաւանդ ոչ շատ գիտակ մեր իրականութեան:

Ես երբեք չեմ թաքցրել նրա վրիպումները, ասել եմ երեսին, գրել եմ եւ Կովկասից (Ազգային Պաշտպանութեան) կոմիտէի կազմելու առթիւ, գրել եմ նոյնիսկ «Հորիզոն»ում, բայց ես երբեք էլ չեմ էլ սակարկել իմ յարգանքը 70-ամեայ ծերունուն, որ իրօք շատ աշխատեց վերջին 3 տարիներում, աշխատեց սրտով եւ հայրենասիրական մեծ եռանդով:

Պէտք է թողնել բոլոր յարձակումներն ու ակնարկները նրա դէմ:

Նորատունկ[եան]ից ու միւսներից էլ վազ անցէք. ժամանակը չէ ներքին վէրքերը քրքրելու: Աշխատեցէք «Հայրենիքը» բարձր պահել վատ կրքերից, ժամանակ է առհասարակ թողնելու բոլոր պոլեմիկները⁵⁶, մանաւանդ արտասահմանում, ուր մեր վէճերը անդրադառնում են նոյնիսկ մեր խնդրի կացութեան վրայ. զգուցանում են մեր օտար բարեկամներին:

Կովկաս «Հայրենիք» չի հասնում. երբեմն մի մի համարներ: Վերջերս մեծ քանակութեամբ կտրօններ ստացայ տեղւոյդ հայ թերթերից (կարծեմ մեր ընկեր Շահան Նաթալիի դրկած), իմ յօդուածների քննադատականներ: Ինչպէս տեսնում եմ, թունդ դիպել են մեր հակառակորդներին իմ մի քանի ակնարկները: Ես հարկ չտեսայ պատասխանելու: Բաւական է՝ մեր ասելիքն ասացինք: Այժմ լաւն է: Այսօր մեր ընկերները (Աւետիք Սահակեան, Արշակ Թադէոսեան եւայլն) ձեռք ձեռքի են ընթանում՝ անգամ Առաքելեանի հետ, որից աւելի վատթար տիպ անկարելի է երեւակայել: Ի՛նչ արած. վայրկեանն այնպէս է: Իմ յօդուածների առթիւ (համերաշխութեան մասին) շատ մեղադրանքներ լսեցի, թէ իբր անկեղծ չեն իմ համերաշխութեան յորդորները, թէ միայն կամեցել եմ մի անգամ եւս ստորնացնել հակառակորդներին եւայլն: Հաւատացնում եմ, որ դժգոհ է եղել եւ Պ[օղոս] փաշան: Բայց յամենայնդէպս, նա իմ անկեղծութիւնը չի կարող կասկածի տակ դնել: Եւ ես չեմ գղջում, որ մի քանի դառն ճշմարտութիւններ ասացի մի շարք մարդկանց:

Ընկեր Նաթալին, իմ կարծիքով, լաւ կ'անէ որ տեղդ մնայ: Կովկասի մէջ այժմ թուրքահայ մտաւորականները շատ են, բայց ռուսերէնի անձանթութեան պատճառով պաշտօն չեն գտնում: Ոմանք սկսել են արդէն ռուսերէն սովորել:

Ընկ. Մարտիրոս Յարութիւնեանը, որ մեր լաւ պրոպագանդիստներից է, անկարող եղաւ գալ, մնաց Թիֆլիս: Ընկեր Լեոնեանին⁵⁷ գրեցի (Բուքրէշ), որ շտապի Պետրոգրադ, ուր նոյնպէս ռուսերէն լաւ գիտցող գործիչի պէտք ունինք:

Առ այժմ մի երկու ազատ ընկերները — Միրջանը եւ Արսէնը⁵⁸ թող տանեն «Հայրենիքի» եւ պրոպագանդի գործը, տեսնենք մօտիկ ապագան ինչ է բերում մեզ:

Սրտագին բարեկներով
ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

55.- Դիմագիծը:
56.- Բանավէճերը:
57.- Լեոնեան — ծածկանուն Լիպարիտ Նազարեանցի:
58.- Մերութեան Օզանեան եւ Արսէն Միքայելեան, կուս. գործիչներ Ամերիկայի մէջ:

Կենտրոնական [կոմիտէ]ի հասցէն մոռացել եմ, զրկում եմ բոլոր նամակներս «Հայրենիքին»:



Փաստ. 1404-137

Բ 3

Պարիզ, 28 Դեկտ. 1916

Միրելիք,

Նախագահ Wilson-ի Note-ը շատ կարեւոր է նաեւ մեր խնդրի տեսակէտից: Նրա մէջ – ինչպէս դուք եւս նկատեցիք – յաճախ է շեշտուում փոքրիկ ազգերի մասին, ազգայնութեան սկզբունքի մասին: Ազգ. պատգամաւորութիւնը Պարիզից նամակ կը գրէ Wilson-ին (նչինչ այդ առթիւ «Հայրենիք»-ի մէջ): Լսում եմ, որ նախագահը ջերմ համակրանք ունի մեր ազգի ու դատի նկատմամբ. պէտք է մշակել, պահպանել այն: Անհրաժեշտ է մշտնջենաւոր յարաբերութեան մէջ մնալ տեղւոյդ ամերիկեան մարմինների հետ, Barton⁵⁹, միսիոնարների եւ այլոց, որոնք կը զբաղին մեր ժողովրդով:

Զգիտեմ ինչպէս են ձեր յարաբերութիւնները: Բարի եղէք տեղեկացնել ինձ: Թւում է թէ միմիայն հակառակորդներն են յարաբերութիւն պահպանում մեր ամերիկացի բարեկամների հետ:

Ամերիկան մեծ դեր ունի խաղալիք (զայոց Congrès-ի մէջ), մասնաւորապէս փոքրիկ ազգերի ճակատագիրը տնօրինելու հարցում: Պէտք է առաջ քաշել անգլիերէնին լաւ ծանօթ անհատներ, մօտենալ այդ մարդկանց եւ նրանց միջոցով (ամերիկեան հայասէրների միջոցով) ազդել բարձր կառավարական շրջանների վրայ, ցուցադրել նրանց ոչ միայն մեր տառապանքները, այլեւ հայ ժողովրդի քաղաքակրթական արժէքները:

Յատկապէս այս առթիւ խորհրդակցելու էին հրաւիրուած երէկ Վիք[տոր] Բերարի⁶⁰ մօտ, Փաշան, Յովհ[աննէս Մասեհեան] խանը եւ ես: Փաշան ու Յովհ. խ[ան]ը խորհուրդ են տալիս, որ ես այժմ իսկ մեկնեմ դէպի Ամերիկա (գէթ կարճ ժամանակով) նաեւ համերաշխութեան խնդրի համար, բայց դա անկարելի է: Եթէ ուրիշ արգելքներ էլ չլինէին, անգլիերէնի խնդիրը բաւական է, որ ես հրաժարուեմ այդ առաքելութիւնից: Տարաբախտաբար վատ գիտեմ այդ լեզուն:

Ի վերջոյ եկանք այն եզրակացութեան, որ հարկ է

յենուել տեղական ուժերի վրայ: Եւ հարկ է վերստին կոչ անել բոլոր ուժերի համերաշխութեան: Իմ բոլոր նամակները այդ կէտի շուրջն են դառնում. անցեալ օրն էլ հեռագրեցի ձեզ: Տեղիցը Սըվազլըի ստորագրութեամբ մի մեծ հեռագիր [էր] եկել Փաշային (վերջինը կարդաց ինձ) Վեհուկնի սրբազանի⁶¹ «հակահամերաշխական արարքների» մասին: Զգիտեմ, ի հարկէ, թէ որքան ստոյգ են այդ հեռագրի մէջ ծանուցուած մեղադրանքները (կը խնդրէի այդ մասին եւս տեղեկացնել ինձ): Մեր ժողովը (այսինքն երեքիս) որոշեց առանց թեր կամ դէմ արտասայտուելու, հեռագրել երկու կողմերին էլ եւ վերստին համերաշխութեան հրաւիրել նրանց: Պատգամաւորութիւնը հեռագրեց երկարօրէն Ազգ. Պաշտպանութեան «տեղւոյդ յանձնաժողովին յորդորելով նրան՝ թողնել փոխադարձ հալածանքները եւ ձգտել դէպի համերաշխութիւն բոլոր տարրերի հետ»: Ես էլ նոյն մտքով հեռագրեցի ձեզ: Շուտով կը գան պատգամաւորներ Եգ[իպտոս]ից:

Նամակիս պարունակութեան մասին խնդրում եմ ոչինչ չհրատարակել, ոչ էլ հաղորդել մասնաւոր կերպով ձեր շրջաններից դուրս: Զեզ եմ գրում մտերմաբար:

Ինձ ցաւ ազդեց Ամերիկայից Փաշայի հասցէին եկած մի հեռագիր, որի համեմատ Ամերիկայից ղրկուած կենսամթերքները միայն սիւրիացիների համար են, իսկ հայոց համար՝ միմիայն դրամ: Այդ դրամն էլ տեղ հասնում է արդեօք... Ահա մի հարց, որ սաստիկ հետաքրքրում է մեզ բոլորիս եւ կովկասցիներին: Միջազեռք որեւէ օգնութիւն հասնում է եւ ի՞նչ ճամբով, ո՞ւմ միջոցով: Դուրսը Գիբբոնս⁶², որի հետ երբեմն տեսնուած ենք ամէն բանի տեղեակ չէ:

Խնդրում եմ՝ ձեր գիտցածը հաղորդել ինձ: Ամերիկա 10 միլիոն Ֆրանկ հաւաքուեց միայն «հայկական օրերում». ո՞ւր գնաց այդքան դրամ:

Ներփակ ղրկում եմ Temps թերթի մի խմբագրականը, որ արտատպուեց ուրիշ թերթերում եւս:

Կովկաս ուղղուած ձեր նամակները զգուշութեամբ խմբագրեցէք: Ամէն բանի մասին գրել չի կարելի:

Ստացայ շնորհակալութեամբ ձեր հեռագրած 5000 Ֆրանկը. սպասում եմ ձեր նամակին:

Շուտով կարող են կանչել ինձ Կովկասից, որովհետեւ դժբախտաբար, ինչպէս ծանուցում է Հորիզոնը, Ահարոնեանը վերստին հիւանդացել է երեւի ծանր կերպով, քանի որ բժիշկները հրահանգել են թողնել գրական աշխատանքը եւ վերադառնալ Կիսլովոզսկ: Բայց ես առ այժմ Կովկաս վերադարձողը չեմ:

Ընկերական բարեկենդրով
Մ. Վ.

P. S.— Ի՞նչ է արել Վեհուկնի սրբազանը, որ այդքան

59.- Ամերիկացի հայաստի միսիոնար, հիմնադիրներէն պատերազմի տարիներուն ամերիկացիներու կազմած «Հայ օգնութեան կոմիտէի»:

60.- Ֆրանսացի պետական անձնատրուքիւն, բարեկամ հայերու եւ Հ. Յ. Դաշնակցութեան:

61.- Միհրան Սվազլեան. Վեհուկնի սրբազան՝ Ամերիկահայոց առաջնորդ:

62.- Հերբերտ Ադամս Գիբբոնս (1880-1934) – Ամերիկացի միջազգային իրաւաբան, ականատես վկայ հայկական կոտորածներուն, որոնց մասին 1916 թ. հեղինակած է «Նոր պատմութեան ամենասեւ էջը, իրադարձութիւնները Հայաստանի մէջ 1915 թ., Փաստեր եւ պատասխանատւութիւն» հատորը:



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

յուզուած հեռագիր են խփել նրա հակառակորդները: Նրանք խնդրում են Փաշայից, որ սա կաթողիկոսի միջոցով սաստէ սրբազանին: Լաւ տակտիկ չէ այդ պարոնների կողմից, երբ նրանք ուզում են օգտուել Փաշայի հեղինակութիւնից իրենց հատուածական քմահաճոյքները առաջ մղելու: Ես այդպէս էլ ասացի մեր խորհրդակցութեան միջոցին: Փաշան հեռագրեց կաթողիկոսին, բայց միայն խնդրելու համար՝ որ կաթողիկոսն եւս համերաշխութեան յորդոր կարդայ ամէնքին:

Անձնական հակառակութիւնները մի կողմ թողէք, ի սէր Քրիստոսի, պատերազմից յետոյ ինչքան կ'ուզէք էլի հայհոյեցէք միմեանց:

*

**

Ոչինչ այս մասին Հայրենիքի մէջ: Այլապէս ինձ կը դնէք շատ գէշ կացութեան մէջ Ազգ. Պատգ[ամաւորութեան] հանդէպ:



Փաստ. 1405-77

Բ 4.- ՄԻ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

Գրեթէ այլևս գաղտնիք չէ – եւ իտալական թերթերի մէջ եղան արդէն որոշ ակնարկներ – որ անցեալ տարի Ֆրանսիոյ, Անգլիոյ եւ Ռուսաստանի միջեւ կայացել է համաձայնութիւն՝ Թուրքիան բաժնելու նպատակով:

Ռուսաստանը պահանջել է Պոլիսն ու երեք գրաւած հայ վիլայէթները, Անգլիան՝ Միջագետքը, Ֆրանսիան՝ Սիւրիան, Կիլիկիան եւ միւս երեք հայ վիլայէթները (Սեբաստիա, Խարբերդ եւ Դիարբեքիր):

Այդ կարեւոր համաձայնութիւնը կնքելուց յետոյ, Հայկական Պատուիրակութիւնը, որի կարծիքը, բնականաբար, չեն հարցրել Հայաստանի բախտը որոշելու միջոցին, ամէն ճիշդ թափել է, որպէսզի գէթ Հայաստանի անջատուած մասերին տրուի լայն ինքնօրինակութիւն: Նա շատ աշխատել է մասնաւորապէս ձեռք բերելու այդ ինքնօրինակութիւնը Ֆրանսիայի կողմէն գրաւելիք Հայաստանի մէջ: Եւ նրա ճիշդը պսակել են աջողութեամբ: Ֆրանսիական կառավարութիւնը խոստացել է յարգել հայ ազգային տենչանքները, ստեղծել ինքնօրէն Հայաստան, որի մէջ պիտի մտնէին Սեբաստիոյ, Խարբերդի, Դիարբեքիրի վիլայէթները, Կիլիկիան եւ նոյնիսկ Իսկենդերուն նաւահանգիստը: Ինքնավար Հայաստան՝ Ֆրանսիայի հովանաւորութեան տակ:

Սակայն, այսօր կացութիւնը հիմնականապէս փոխուած է: Ռուսական յեղափոխութիւնը եւ Ամերիկայի թատերամուտը տակնուվրայ արին բոլոր եղած համաձայնութիւնները, բացի Լոնդոնի ծանօթ համաձայնութիւնից, որ արգելում է անջատ խաղաղութիւն:

Ինչպէս գիտէք, ռուս յեղափոխութեան առաջին յայտարարութիւնից մէկն եղաւ՝ «Ո՛չ մի անէքսիոն»⁶³: Եւ արդէն իսկ Ժամանակաւոր Կառավարութիւնը առաջարկել է Դաշնակիցներին վերաքննել տեղի ունեցած համաձայնութիւնները: Ֆրանսիա եւ Անգլիա տւին իրենց համամտութիւնը: Նախարարապետ Ռիբո յայտարարեց հանդիսաւորապէս Խորհրդարանի մէջ, որ Ֆրանսիան նոյնպէս կը հրաժարուի անէքսիոնից, բայց որ, այնուամենայնիւ, պիտի շարունակէ պահանջել Ալզաս-Լորէնը, քանի որ դա չի դիտւիր իբրեւ անէքսիոն: Ռիբոյի այդ վճռական եւ արի յայտարարութիւնը մահացու հարւած տւեց Ֆրանսիական colonialux-ների* ախորժակներին...:

Դա մէկն է ռուս յեղափոխութեան բարերար հետեւանքներից...: Տարակոյս չկայ, որ colonialux-ների այդ

քիկը իր անսահման նւաճողական ախորժակներով – Մարոքի, Սիւրիայի եւ այլ վայրերի մէջ – շատ է վնասել համաշխարհային խաղաղութեան գործին...: Եւ երբ այսօր ռուս յեղափոխականների մի մասը յայտարարում է, թէ ներկայ պատերազմը արդիւնք է բոլոր երկրների ինպերիալիստական (նւաճողական) քաղաքականութեան, անտարակոյս, ճշմարտութեան մի մասնիկ կայ այդ յայտարարութեան մէջ: (Անուրանալի է, այնուամենայնիւ, որ պատերազմը շղթայազերծողը Գերմանիան էր, որ կը ձգտէր համաշխարհային հէժէ-մոնիի⁶⁴):

Դառնանք մեզի հետաքրքրող համաձայնութեան: Միանգամայն հակառակ լինելով անէքսիոնի, նոյն Ռուսաստանը, յանձին Ժամանակաւոր Կառավարութեան, հրաժարեց Կ. Պոլսից, հրաժարեց եւ Մեծ Հայքի երեք վիլայէթներից**:

Հետեւաբար, Անգլիան էլ կը հրաժարուի Միջագետքից, Ֆրանսիան՝ Սիւրիայից, Կիլիկիայից ու միւս երեք հայ վիլայէթներից:

1916-ի համաձայնութիւնը ոչնչանալով՝ Հայկական Պատուիրակութիւնը կը վերադառնայ, բնականաբար, իր նախնական ծրագրին: Այն է՝ պահանջել որ ստեղծւի ինքնօրէն (autonome) Հայաստան – բաղկացած բոլոր վեց վիլայէթներից եւ Կիլիկիայից – պետութիւնների հովանաւորութեան տակ: Այդպէս է հայութեան ճնշող մեծամասնութեան բաղձանքը:

Հրաժարուել անէքսիոնից չի նշանակում պահել Հայաստանը իր նախկին վիճակի մէջ: Բոլոր դաշնակից պետութիւնները, մասնաւորապէս նոր Ռուսաստանն ու Ամերիկան, քանիցս արդէն շեշտեցին, որ ճնշուած ազգութիւնները պէտք է ստանան իրաւունք՝ իրենց բախտը սեփական ձեռքով տնօրինելու: Ինչպէս նորերս շատ ճիշտ կերպով կը յայտարարէին Եւրոպայի Բրանտինգ եւ Վանդերվելդ՝ «Հայաստանը իր դարաւոր լծից ազատելը չի նշանակեր annexer, այլ désannexer»:

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

Պարիզ, 25 Յունիս [1917]

Ընկերներ, Կարող էք հրատարակել ներկայ յօդուածը: Պատւիրակութիւնը արտօնած է ինձի⁶⁵:

Ս. Վ.

63.- Կցում (հողային):
64.- Գերիշխանութեան, տիրապետութեան:
65.- Իմա՝ «Հայրենիք»ի մէջ, որովհետեւ այս գրութիւնն եւս ուղարկուած է Ամերիկայի Կեդր. կոմիտէին:

*) Դեռ այսօր եւս Ֆրանսիոյ մէջ կայ բաւական զօրաւոր կուսակցութիւն, որ կ'ուզէ նոր գաղութներ նուաճել, մանաւանդ Սիւրիան:

***) Եւ Միլիկոպիւս հեռացրին արտաքին գործոց նախարարութիւնից, որովհետեւ նա կը պահանջէր եւ Պոլիսը, եւ Էրզրումի վիլայէթը:



Փաստ. 1405-87

Բ 5

Ժընև, 5 Օգոստոս 1917

Սիրելի ընկերներ,

Երեք շաբաթ է Զուլիցերիա եմ, հիւանդ էի եւ անկարող եղայ նոր թղթակցութիւններ զրկել «Հայրենիք»ին: Հագիւ կրցայ գրել ընկ. Վռամեանի կենդանագիրը, որն այսօր իսկ զրկում եմ ձեզ ապահովագրուած ծրարով:

Վաղը պիտի մեկնիմ Պարիզ, այստեղ մի շաբաթ մնալուց յետոյ պիտի երթամ Լոնդոն: Որոշուած է իմ Պետրոկրապոլ եւ Կովկաս երթալը: Մեկնելու պատճառների մասին կը գրեմ ձեզ հանգամանօրէն Լոնտոնից: Այդ վերջին քաղաքում պիտի տեսնեմ Զէյմա Բրայսին եւ մեր միւս բարեկամներին:

Անցեալ օր այստեղ էր Պօղոս Փ[աշա] Նուպարը, եկել էր Ֆրանսիայից մի քանի ժամով, եղաւ մեզ մօտ խումբագրատուն, հաղորդեց մի քանի տեղեկութիւններ թուրքական պրոպագանդի մասին Եւրոպայի ու Ամերիկայի մէջ: Հարկ է ստեղծել զօրաւոր հակակշիռ այդ պրոպագանդին, որ սկսած է նոյնիսկ թափանցել մի շարք օրգանների մէջ (մասնաւորապէս Զուլիցերիայում): Թուրքական դրամը առատօրէն շուսլուում է այդ աղտոտ գործի համար:

Ինչպէս կը լսեմ, Արմէն Գարոն դեռ Պետրոգրադ է, իսկ դոկտոր Զաւրեան նշանակուած է բարձր կոմիսարի օգնական գրաւուած վիլայէթների մէջ: Մեր ընկերը շատ օգտակար կը լինի այդ նոր եւ կարեւոր պաշտօնի մէջ:

Ռուսական նահանջը, տարաբախտաբար, շարունակուում է, բայց ներսում անդորրացման ու կազմակերպման գործը յուսալի ճամբու վրայ է:

Լենինիզմը աղէտաւոր եղաւ: Կովկասը եւ մասնաւորապէս հայութիւնն ու մեր կուսակցութիւնը անխնայ պայքարում են այդ աւերիչ ու տարրալուծող հոսանքի դէմ, որ կարելի է ասել արդէն իսկ սանձահարուած է:

Որոշ վտանգ կայ տակաւին մեզ համար (Կովկասի մէջ) մեր դրացի թուրքերի կողմից:

Հոս գալէ առաջ եղայ Ֆրանսա, արտաքին գործ[եւրո] նախարարութեան մէջ, եւ ամօթով լսեցի բարձր պաշտօնեայի (chef du cabinet) կողմից տեղեկութիւններ Զուլիցերիոյ մի երկու վատ հայերի մասին... յանձնարարեց որ հսկենք նրանց վրայ եւ թոյլ չտանք որ վնաս հասցնեն Allié-ներին⁶⁶ դատին: Այդ սրիկաների գոյութիւնը մի անհանդուրժելի նախատինք է մեզ համար, սակայն ճար չկայ, պէտք է առ այժմ տոկանք:

Տեսայ մեր բարեկամ Ֆավրին, ստացայ միտիթարական լուրեր օգնութեան գործի մասին:

Պօղոս Նուպարը վերադարձաւ Պարիզ, կը սպասէ մինչեւ իմ վերադարձը: Կը խորհրդակցենք իրեն ու Յովհաննէս Խանի հետ, ապա իրենք կ'երթան ամարանոց, եւ կ'երթամ Լոնդոն, այստեղից Ռուսաստան:

Մի քանի ամսէն գուցէ վերադառնամ: Այդպէս է Պատուիրակութեան ջերմ ցանկութիւնը: Բայց թերեւս Կովկասեան գործերը եւ ընկերները պահեն ինձ: Ես պաշտօն ունիմ, ի միջի այլոց, Գերկայացնելու պատուիրակութիւնը Համազգային քոնկրէին, եթէ այդպիսին տեղի ունենայ Թիֆլիսում կամ Էջմիածնում: Գոհ եմ այն անսահման վստահութիւնից, որ տածում է դէպի ինձ Պատուիրակութիւնը: Ես կ'աշխատեմ միշտ ի գործ դնել այդ վստահութիւնը յօգուտ մեր դատի:

Լեռը մնացի մի շաբաթի չափ, պէտք էր կազդուրուել, նախ քան մեծ ու տանջալի ուղեւորութիւնը: Տեսնուեցայ երկարօրէն ժընեւի եւ Լօզանի ընկերների հետ. ունեցայ գրոյցներ ու կոնֆերանսներ: Մերայիները կ'ուզեն կազմակերպել պրոպագանդի բիւրօ թուրքաց յարձակումներին ու insinuation-ներին⁶⁷ դիմագրաւելու համար: Պէտք է, ի հարկէ, կազմակերպել այն՝ միջկուսակցային հողի վրայ:

Յաւով կարդացի Ձեր վերջին նամակին մէջ մի քանի աննպաստ տեղեկութիւններ Ս[ապազ] Գ[իւլեան]ի մասին: Աշխատելու է, այնուամենայնիւ, չխախտել կայացած համերաշխութիւնը: Վատ է պահուում իրան եւ Պարիզեան թերթիկը: Այժմ մի նորը աւելացաւ նրան՝ «Վերածնունդ»ը — օրգանը մեր յաւիտենական intriguing⁶⁸ Չոպանեանի:

Այդ մարդու մասին երկարօրէն գրել եմ ձեզ: Պէտք է զսպել նրա megalomanie-ն⁶⁹, պէտք է երբեմնապէս զգաստացնել նրան, այլապէս կարող է վնասներ հասցրնել համերաշխութեան գործին: Նրա նպատակն է coûte que coûte⁷⁰ վարկաբեկել Պատուիրակութիւնը, որի անդամ չի ընտրուած ինքը: Նրա նպատակն է (բառը իրենն է) «տապալել Պօղոս Փաշային», մի անզուսպ մեծամոլ եւ հիւանդոտ...

*
**

Հայկական դժոխքից մի քանի նոր տեղեկութիւններ (ամենաստոյգ աղբիւրից): Ողջ է բանաստեղծ Արամ Զարբը, որ դէպքի սկզբից Կարին էր: Հայկալից նամակ է գրել ինձ, օգնութիւն կ'ուզէ (օգնութեան գործը, ինչպէս ըսաւ ինձ Ֆավրը) համեմատաբար լաւ է կազմա-

66.- Դաշնակիցներու:
67.- Ֆրանսերէն՝ չարամիտ ակնարկութիւններու, սպրդասացութիւններու:
68.- Ֆրանսերէն՝ բանասերկու, ցնցամիտ, դաւադիր:
69.- Ֆրանսերէն՝ մեծամոլութիւնը:
70.- Ֆրանսերէն՝ ոնիւ կերպ:





կերպուած Հալէպի մէջ եւ շրջակայքում, ուր 70,000 հայու թիւն կայ:

Ողջ է եւ Պոլիսի մէջ կը գտնուի Մշոյ Գեղամը⁷¹ (երեսփոխան): Պոլիս եւ Իզմիր կացութիւնը հանգիստ է: Շարունակում են իրենց պաշտօնները հայ մտաւորականութիւնից այնպիսի մարդիկ, ինչպէս Հրանտ Ասատուր, Վուստիկ Մանուկեան, Խնդիր Սիմոնեան եւ այլն (պետական ծառայութեան մէջ են): Ծերունի մանկավարժ Քալանթարեան իր աղջկայ հետ բանտ նետուած է հինգ տարով:

Խարբերդի բանտն է զրկուած դէպքերի սկզբին Բարսեղ Շահպազը⁷², թերեւս ողջ է:

Հայր Կոմիտասը կը խնամուի ջրաբուժական հիւանդանոցի մէջ: Վարդգէսը⁷³ սպանուած է, ինչպէս եւ Զօհրապը (վերջինը իբրեւ «Ռուսիոյ մարդ»): Մնացածների մասին լուր չկայ: Մի մասը կարող է ողջ լինել:

Տեղահանութեան ծրագիրը տուած են եղել գերմանացիք:

Մօտ 300,000 հայեր դեռ կ'ապրին Միջագետքի ու Անատոլիոյ մէջ, մօտ 200,000 Պոլսոյ, Իզմիրի եւ այլ վայրերի մէջ: Բազմաթիւ եւ Քէօթահիսլի մէջ թուրք կառավարիչները (երկու եղբայր) ընդդիմացել են կենտրոնական կառավարութեան հրամանին եւ հայ տարրը այդ վայրերում բնաւ չի ենթարկուել տեղահանութեան:

Մարաշ, Այնթապ, Հաճըն, Ադանա, ամբողջ հայու-

թիւնը չի տեղահանուել: Հագարաւորներ մնացել են եւ այժմ այլեւս ձեռք չեն տալիս նրանց:

Կիլիկիոյ եւ Սիւրիոյ մէջ գրեթէ ամէն տեղ հասնում է ամերիկեան օգնութիւնը: Միջագետք եւս հասնում է, բայց աւելի սակաւ ու աւելի դժուարութեամբ:

Ուրիշ շատ բաներ լսեցի, բայց նամակի նիւթ չի կարող դառնալ: Կ'աշխատեմ ճամբուց հակիրճ նամակներ դրկել «Հայրենիք»ի համար. կը գրեմ նաեւ Ռուսաստանից:

Ներփակ կը գտնէք մի հեռագիր Ռոստոմից որ եկել է Պետրոգրադ մեր գործերով⁷⁴: Գրել էիք թէ սուղ են կազմակերպական] միջոցները. այնուամենայնիւ այդ 1000 Ֆրանքի առաքումը հրամայական պարտք է, այլպէս (գրում եմ առանց չափազանցութեան) ընկ. Դաւթեանը⁷⁵ շատ ու շատ ծանր կացութեան մէջ է (pleurésie) եւ նրան փրկելու համար բժիշկները կը յանձնարարեն լեռը դրկել 2-3 ամսով: Այդ դրամը ընկերը կը վերցրնէ փոխարինաբար եւ առաջին իսկ պատեհութեան պիտի վերադարձնէ կազմակերպութեան: Կովկասէն պէտք է դրկէին, բայց 100 ռուբլին արժէ այժմ ընդամէնը... 97 Ֆրանկ. մէկ ռուբլին մէկ Ֆրանքէն անգամ իջած է⁷⁶:

Բարի եղէք այդ վերջին առաքումն էլ անել Դրօշակի խմբագրութեան հասցէով, թախանձանօք կը խնդրեմ ըստ կարելոյն շուտով:

Կրկնում եմ այդ գումարը տրուում է Յոնանին փոխարինաբար քանի որ նա երկու տարուց ի վեր երբեք դրամ չի վերցրել կազմակերպութեան դրամարկղից, այլ ստացել է միշտ Բագուրի մի խումբ ընկերներից:

Ընկ. բարեկներով ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

Եթէ ոեւէ բան ունենաք ինձ հաղորդելու, գրեցէք Լոնտոն Սաֆրաստեանի կամ Մոստիչեանի հասցէին:

71.- Գեղամ Տէր Կարապետեան:
72.- Բարսեղ Շահպազ սպանուած էր արդէն 1915ին:
73.- Վարդգէս, ինչպէս Գրիգոր Զօհրապ, անդամ Օսմ. խորհրդարանի, բուն անունով՝ Յովհաննէս Սերենկիլիւեան:
74.- Ռոստոմ Մտկիոլմ էր որպէս Հ. Յ. Դաշնակցութեան պատգամատու Ընկերվարական համագումարին:
75.- Խօսքը Յոնան Դաւթեանի մասին է, որ ծանրօրէն հիւանդացած էր եւ պիտի մահանար 1918 թ՝ Փետրուար 17ին:
76.- Ընդհ. պատերազմի նախօրէին ռուբլին կ'արժէր մօտ 2,5 ֆրանկ:





Փաստ. 1406-8

Բ 6.– ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆԷՆ ԱՐՄԷՆ ԳԱՐՈՅԻՆ, Ամերիկա⁷⁷

Լոնդոն, 19 Յուն[ուար] 1918

Mon cher Karo,

Tu auras reçu ma carte de Paris. Je suis à Londres depuis une quinzaine de jours et je fais continuellement des démarches auprès des personnages influants pour attirer leur attention sur la situation tragique de la Transcaucasie.

Muni des lettres de recommandation de mon ami Albert Thomas j'ai pu voir et consulter longuement certaines personnes au pouvoir.

Le résultat – je t'écris brièvement, n'ayant pas beaucoup de temps – le résultat n'est pas encourageant. Jusqu'ici il n'y a presque pas de forces britanniques en Perse et les turco-germans poursuivent tranquillement leur "Drang" vers Afganistan et l'Inde à travers le Caucase et la Perse.

J'ai lu hier avec frisson quelques dépêches dans la presse anglaise. Tchkhengkéli, le ministre géorgien, s'est rendu à Berlin où il a fait un arrangement... Il a pu sauver la grande partie de sa patrie avec Tiflis, tandis que toute l'Arménie russe ainsi que Bakou, Batoum, la province d'Akhaltzie ont été livré aux turcs.

Le "Times" annoçait hier que Tebriz aussi est occupé par les troupes turques.

Nous sommes ainsi complètement isolés au Caucase, sous la menace de pires catastrophes. Le bruit court que les turcs, devenus trop arrogants à la suite de leurs derniers succès, ont défendu aux allemands l'accès du Caucase craignant peut être que la présence des troupes allemandes serait un obstacle à l'accomplissement de leur infernal projet en pays arménien...

Je vais frapper désespérément toutes les portes; je pars bientôt pour les pays scandinaves, j'irai peut-être aussi en Hollande. Chanth a promis de travailler en Suisse, d'où l'on pourrait agir sur Mesropian (Nous avons reçu en son temps ta dépêche et nous l'avons pris en considération).

J'ai vu Huysmans, Henderson, Barnes et d'autres socialistes influents. Et avec nos compatriotes du Comité arménien, j'ai longuement consulté nos amis anglais, députés et hommes d'Etat.

On me conseille de rester jusqu'au Congrès de Labour Party qu'aura lieu le 26-28. Je ne crois pas qu'il soit utile d'y prendre la parole, mais je présenterai un

Թարգմանութիւնը.–

Սիրելի Գարօ,

Ստացած պէտք է ըլլաս Փարիզէն ղրկած բացիկս: Լոնտոն եմ շուրջ տասնչինգ օրէ ի վեր եւ շարունակ ղիմովմներ կը կատարեմ ազդեցիկ անձնաւորութեանց մօտ՝ Անդրկովկասի ողբերգական կացութեան վրայ իրենց ուշադրութիւնը հրաւիրելու համար:

Իմ բարեկամիս՝ Ալպերտ Թոմասի տուած յանձնարարականներով՝ կրցայ տեսնել եւ երկարօրէն խորհրդակցիլ իշխանութեան գլուխ գտնուող որոշ անձերու հետ:

Արդիւնքը – շատ ժամանակ չունենալով՝ կարճ կը գրեմ–, արդիւնքը քաջալերական չէ: Ցարդ՝ բրիտանական զօրքեր գրեթէ չկան Պարսկաստան, եւ թուրքերն ու գերմանացիները, Կովկասի եւ Պարսկաստանի վրայ, հանդարտօրէն կը շարունակեն իրենց «առաջխաղացքը»⁷⁸ դէպի Աֆղանիստան եւ Հնդկաստան:

Անգլիական մամուլին մէջ երէկ սոսկումով կարդացի կարգ մը հեռագրալուրեր: Վրացի նախարար Զիւենկելին գացած է Պերլին, ուր կարգադրութիւն մը ըրած է... Կրցած է փրկել իր հայրենիքին մեծագոյն մասը՝ Թիֆլիսով, մինչ ամբողջ Ռուսահայաստանը, ինչպէս նաեւ Պաքուն, Պաթումը, Ախալցխայի նահանգը կը տրուին Թուրքիոյ:

«Թայմզ»ը կը յայտնէր երէկ, որ Թաւրիզը եւս գրաւուած է թրքական զօրքերու կողմէ:

Այս ձեւով, մենք ամբողջովին մեկուսացուած ենք Կովկասի մէջ, ենթակայ յռեգոյն պատուհասներու սպառնալիքին: Զրոյց կը շրջի որ թուրքերը, իրստ գոռոզացած իրենց վերջին յաջողութիւններէն, գերմանացիներուն արգիլած են Կովկաս մտնել, վախնալով թերեւս որ գերմանական զօրքերու ներկայութիւնը կըրնար խոչընդոտել հայկական հողի վրայ իրենց դժոխսին ծրագրի ամբողջացումը:

Յուսահատօրէն պիտի բախեմ բոլոր դռները: Շուտով կը մեկնիմ սկանտինաւեան երկիրներ, թերեւս անցնիմ նաեւ Հոլանտա: [Լեւոն] Շանթ խոստացաւ աշխատիլ Զուրիցերիա, ուրկէ կարելի է ազդել Մեսրոպեանի վրայ (հեռագրալուրդ ստացանք ատենին, եւ նկատի ունեցանք զայն):

77.- Պատերազմի տարիներուն, գրաքննութեան պատճառով նամակներու առաքումը կ'ուշանար, կամ բոլորովին վար կը դրուէին անոնք. այդ իսկ պատճառով, Վարանդեանի կարգ մը նամակները ֆրանսերէն շարադրուած են: Կողքին կու տանք անոնց քարգմանութիւնը:



Mémorandum et je travaillerai les membres influents du Congrès. Branting, Touitson [?], Albert Thomas etc. y assisteront.

* * *

J'ai lu avec plaisir le magnifique discours de Lyttle, si richement documenté par toi, j'ai lu aussi les Mémoires que tu as présentés aux sénateurs et hommes d'Etat d'Amérique. C'est bien. Je ne contesterai qu'une chose. Il me paraît dangereux – surtout dans ce moment de l'épreuve suprême – de parler de la séparation éventuelle de l'Arménie persane. Les secrets des documents confidentiels peuvent transpirer un jour et les arméniens de la Perse en payeraient les conséquences. Je ne crois pas non plus, qu'il soit opportun pour nous de demander la création d'une Kurdistan sous le protectorat de la Perse. Cette dernière puissance ne paraît même pas capable de se gouverner et de s'assimiler les principes élémentaires de la civilisation occidentale. La Jeune Perse est malheureusement à la remorque de la Jeune Turquie...

Je ne trouve pas de mots pour qualifier la conduite du leader hintchakiste Sabah-Gulle, lequel ouvertement et stupidement dans son journal, manifeste des tendances séparatistes vis-à-vis de la Perse. Ces gens sont dépourvus de tout sentiment de responsabilité, ils ne se doutent pas que les persanes (agents turcs) en Europe suivent notre action avec une attention soutenue et retiennent chaque parole imprudente dans nos journaux et nos brochures.

* * *

Notre compatriote Hagopian, le membre le plus actif du Comité de Londres, va se rendre à Java et s'arrêtera un mois en Amérique. Il te verra, ainsi que d'autres compatr[iotes].

A propos, tous les membres du Comité de Londres se méfient de Chmav[on], de même Nubar, Hohannes Khan.

A toi, bien cordialement
MIKAEL

Je te prie de transmettre cette lettre au Comité Central.

78.- Մ. Վարանդեանի նշած Յիշատակագիրը՝ ուղղուած Բրիտանիոյ Աշխատատրական կուսակցութեան համագումարին:

79.- Լիթլ – Ներկայացուցիչներու Տան մէջ երեսփոխան Քասս նահանգէն:

80.- Շմատոն – ծածկանուն Հնչակեան կուսակցութեան հիմնադիրներէն Կաֆեան Կարապետի:

Տեսայ Հիւսմանսը, Հենտերսոնը, Պառնէսը եւ այլ ազդեցիկ ընկերվարականներ: Եւ հայկական կոմիտէի մեր հայրենակիցներուն հետ միասին, երկարօրէն խորհրդակցեցայ մեր անգլիացի բարեկամներուն հետ, երեսփոխաններ եւ պետական մարդիկ:

Խորհուրդ կու տան որ մնամ մինչեւ Աշխատաւորական կուսակցութեան Համագումարը, որ տեղի պիտի ունենայ 26-28 [Յունուարին]: Չեմ կարծեր, որ հոն խօսք առնելը օգտակար ըլլայ, բայց Յուշագիր մը պիտի ներկայացնեմ⁷⁸ եւ պիտի ջանամ համոզել համագումարին ազդեցիկ անդամները: Պրանտինը, Տուրիթսոնը [?], Ալբերդ Թոմասը եւ ուրիշներ ներկայ պիտի ըլլան:

* * *

Հաճոյքով կարդացի Լիթլի հոյակապ ճառը⁷⁹, քու կողմէդ հայթայթուած այնքան հարուստ վաւերագրերով: Կարդացի նաեւ ամերիկացի ծերակուտականներու եւ պետական մարդոց ներկայացուցած յուշագիրները: Լաւ է: Միայն մէկ բան վիճելի կը գտնեմ: Վտանգաւոր կը թուի ինձի, մանաւանդ օրհասական այս օրերուն, խօսիլ Պարսկաստանի հաւանական բաժանման մասին: Խորհրդապահական փաստաթուղթերու գաղտնիքները կրնան բացայայտուիլ օր մը, եւ պարսկահայերը կրեն անոր հետեւանքները: Չեմ կարծեր նոյնպէս, որ մեզի համար պատեհ առիթ ըլլայ պահանջել Քիւրտիստանի մը ստեղծումը՝ Պարսկաստանի հովանաւորութեան ներքեւ: Վերջին այս տէրութիւնը ի վիճակի չ'երեւիր ինքզինք կառավարելու եւ իրացնելու արեւմտեան քաղաքակրթութեան տարրական սկզբունքները: Երիտասարդ Պարսկաստանը, դժբախտաբար, լծուած է Երիտասարդ Թուրքիոյ կառքին:

Բառեր չեմ գտներ որակելու համար ընթացքը հնչակեան ղեկավար Սապահ Գիւլի, որ իր լրագրին մէջ բացայայտօրէն եւ յիմարաբար անջատողական ձգտումներ կ'արտայայտէ Պարսկաստանի նկատմամբ: Այս մարդիկ զուրկ են պատասխանատուութեան ամէն զգացումէ. չե՞ն մտածեր, որ Եւրոպայի մէջ պարսիկները (թուրք գործակալներ) աշալուրջ կը հետեւին մեր գործունէութեան, եւ կ'արձանագրեն մեր թերթերուն ու պրոչիւրներուն մէջ անխոհմտօրէն յայտնուած իւրաքանչիւր խօսք:

* * *

Մեր հայրենակից Յակոբեանը, Լոնտոնի կոմիտէին ամենագործօն անդամը, պիտի մեկնի Ճաւա, եւ ամիս մը պիտի մնայ Ամերիկա: Պիտի տեսնէ քեզ, ինչպէս նաեւ ուրիշ հայրենակիցներ:

Ի դէպ, Լոնտոնի կոմիտէին բոլոր անդամները կը զգուշանան Շմաւոնէն⁸⁰. [կը զգուշանան] նոյնպէս [Պօղոս] Նուպարը, Յովհաննէս խանը:

Ջերմօրէն՝ ՄԻԿԱԵԼ

Կը ինդրեմ որ այս նամակը փոխանցես Կեդր. կոմիտէին:



Փաստ. 1406-37

Բ 7

Պարիզ, 23 Մարտ 1918

Սիրելի ընկերներ,

Վերջին երկու շաբաթը անցուցինք ժողովների ու խորհրդակցությունների մէջ (Լոնդոնէն եկած են տեղ-
ւոյն կոմիտէի 3 կարեւոր անդամները)՝ մասամբ այդ,
մասամբ տկարութեան պատճառով անկարող եղայ
գրիչ առնել ձեռքս: Այս անհանգիստ տրամադրութեան
մէջ անկարելի է թղթակցութիւն գրել: Հայրութիւնը
կանգնած է մի նոր ու մեծ փորձութեան առջեւ:

Հայրենիքից եկող լուրերը կցկտուր են ու հակասա-
կան:

Ինչպէս երեւում է, մեր 20-30 հազար ռազմիկները
էրզրումի եւ Վանի շրջաններում կռուում են օրհասա-
կան կատաղութեամբ: Տեղ-տեղ նրանց աջողուել է
ջարդ տալ ու յետ մղել թշնամուն: Յամենայն դէպս առ
այժմ ոչ Վանը, որ Բաթումը, ոչ իսկ էրզրումը չեն
գրաւուած թուրքերի ձեռքով: Վախ կայ թէ գերմանա-
ցիք Օդեսայից զօրք դրկեն թուրքերի օգնութեանը.—
թուրքական ոյժը հայոց ճակատի վրայ, իրազեկներու
ասելով, չի անցնում 50,000-ից:

Թէ ինչ կը բերէ վաղուան օրը, անկարելի է կռահել:
Մեր անդրկովկասեան թաթարների բռնելիք դիրքը առ
այժմ առեղծուած է... Վրացիները մեզ հետ են բարե-
բախտաբար եւ Բաթումի ինդիքը եկաւ նոր ու հուժկու
զարկ տալու երկու ազգերի համերաշխութեան. (յայտ-
նի չէ, թէ որքան զօրք կը տայ վրացութիւնը, ՄԵՐԸ
կարծում եմ, շուտով կը հասնի գոնէ 50,000-ի):

Ռազմամթերք բաւական կայ: Դաշնակիցների
աջակցութիւնը առ այժմ սահմանափակուած է մի եր-
կու միլիոն ռուբլի դրկելով: Մասնաւորապէս շա-
հազարգոռուած են ի հարկէ անգլիացիք, որոնք կ'ըսեն
շուտով պատկառելի թուով զօրք պիտի դրկեն դէպի
Պարսկաստան... Այդ եւս մի բան է. յուսահատական
վայրկեաններին գէթ Արարատեան գաւառներում ապ-
րող հայրութեան մի մասը ապաստան կը գտնէր Պարս-
կաստանում:

Առանց անգլիական բանակի Պարսկաստան եւս կը
մատնուի թուրքօ-գերման ազդեցութեան եւ պարսկա-
հայրութեան գոյութիւնն եւս կը վտանգուի...

Սակայն, տարաբախտաբար, դաշնակիցները ինչպէս
միշտ դանդաղում են եւ ուշանում:

Վրացի leader-ներից մէկը իշխան Թամանով (սոցիալ
դեմոկրատ) ինձ հետ միասին եկաւ հարաւէն որպէսզի
մէկտեղ քայլեր անենք Պարիզում: Անցեալ օր եղանք
Quai D'orsay-ում⁸¹: Լաւ ընդունելութիւն եւ խոստում-
ներ... Կը տեսնենք: Հեռագր[ական] թելերը կտրուած
են Թիֆլիսի հետ:

Կացութիւնը շատ ծանր է, բայց դեռ մեծ յոյս կայ,
որ հայ-վրացական ուժերը չպիտի թոյլ տան թուրքերին
ի կատար ածելու իրենց ծրագիրը:

Գարոյին առանձին չեմ գրում: Կարծեմ Բոստոն է:

Այստեղ լուր է տարածուել, թէ Բարեգործականին
դէմ ուժեղ պայքար էք սկսել (դաշնակցականները) Ա-
մերիկայի մէջ: Փաշայի վրայ շատ գէշ է ազդել:
Կարծում եմ լուրը չափազանցուած է: Յամենայն դէպս,
ժամը չէ այդպիսի պայքարների: Եթէ հնչակեանները կը
շարունակեն իրենց պառակտիչ ընթացքը, մեղքը իրենց
վրայ:

Այս երկու օրը Պարիզ կը հասնի Շանթը: Ձեր ղրկած
դրամից մի 1000 Ֆրանք արդէն դրկուած է նրա տիկնո-
ջը. մնացածը իրեն կը յանձնենք, եթէ պէտք ունենայ:
Եթէ ոչ՝ ձեզ կը վերադարձուի (դրամը Յովհ. Խանի մօտ
է):

Ռոստոմին ղրկած ձեր 1000 տոլարն եւս մնում է
Յովհաննէս Խանի մօտ, բանքայում: Եթէ կ'ուզէք իս-
կոյն ձեզ կը դրկէ: Կը սպասենք ձեր հրահանգին: Դրա-
մը ապահով տեղ է, չի ծախսուի:

Շմաւոնի վերաբերմամբ մեր բոլորիս կարծիքը (նա-
եւ Լոնդոնի հայրենակիցների) միանգամայն բացասա-
կան է: Չգիտենք ինչպէս անենք այդ մարդու վնասա-
կար ազդեցութիւնը չէզոքացնելու համար:

Մօտ ապագային երեւի նոր մարդ կը դրկենք ձեզ
մօտ՝ աջակցելու համար Գարոյին ու Սըվ[ազ]լիին:

Երանի թէ մի քանի օրէն միախառնական լուրեր առ-
նէինք հայրենիքից: Պէտք է ամէն կերպ աշխատել նոր
ջարդերի առաջն առնելու:

Գերման Ռայխստագի մէջ Ledebour-ը արդէն բարձ-
րացրեց իր հեղինակաւոր ձայնը:

**Ձերմ բարեկներով՝
Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ**

81.- Քէ տ'Օրսէ – Փարիզի Սէն գետի ափին երկարող փողոցի
անուն, ուր կը գտնուէր Արտաքին գործերու նախարարութեան
շէնքը. հետեւաբար Քէ տ'Օրսէ կը դառնար հոմանիշ այդ նախա-
րարութեան:



Փաստ. 1406-33

Բ 8

Փարիզ, 13 Մայիս 1918

Chers camarades,

Depuis longtemps je ne vous ai pas écrit – ni à Hairenik – étant occupé de notre propagande surtout dans les milieux parisiens.

Nous faisons de notre mieux pour prévenir l'horrible catastrophe qui nous menace. Nous avons fait une série de démarches.

Nubar vient de rentrer, après un mois d'absence. Artavazde a dû vous informer qu'il y a quelques semaines, nous avons eu des délibérations en présence de nos compatriotes de Londres.

Il a été décidé alors que je parte en Suisse afin d'entreprendre à Genève, Berne, Zurich, Bâle une campagne de propagande contre les turcs qui ont déployé une grande activité dans ces villes là.

Et tandis que je sollicitais l'autorisation des gouvernements français et suisse pour aller avec Chanthé en Suisse, je reçois une lettre de notre comité de Londres me priant instamment de partir de suite pour les pays scandinaves dans le but de réagir contre les mêmes intrigues turques.

Il paraît que nos ennemis cherchent avec l'aide des allemands à former un Comité d'enquête composé des socialistes des pays neutres, afin de l'expédier à Erzeroum pour y constater les prétendus atrocités commises récemment par les volontaires arméniens sur la population turque... Il faudra déjouer cette manœuvre turque. Le comité de Londres et Toynbee en personne ont écrit à la Délégation Nationale et, vu le grand danger, ont insisté sur la nécessité de mon départ.

Je m'incline et je vais. Si une commission d'Enquête doit être expédié en Arménie, il faut d'abord qu'il soit composé de gens impartiales; il faut ensuite qu'il procédât à une enquête plus large, non seulement des événements récents mais de toute la tragédie arménienne depuis trois ans*.

J'attends donc l'autorisation des gouvernements français et anglais pour partir.

Je vous écrirai, ainsi qu'à "Hairénik".

*) *Personnellement je crois que nos troupes ont dû commettre des excès à Erzeroum contre la population turque.*

Թարգմանութիւնը.—

Սիրելի ընկերներ,

Երկար ատենէ ի վեր չեմ գրած ձեզի, ինչպէս նաեւ Հայրենիքին, զբաղած ըլլալով, մանաւանդ փարիզեան շրջանակներուն մէջ, մեր քարոզչական գործով:

Կ'ընենք մեր կարելին, առաջին առնելու համար մեզի սպառնացող ահռելի աղէտին: Շարք մը դիմումներ ըրինք: Նուպար փաշան, ամսուան մը բացակայութենէ ետք, նոր վերադարձաւ: Արտաւազգը [Հանրմեան] ձեզի տեղեկացուցած պէտք է ըլլայ, որ քանի մը շաբաթ առաջ խորհրդակցութիւններ ունեցանք, Լոնտոնի մեր հայրենակիցներու ներկայութեամբ:

Այդ օրերուն, որոշուեցաւ իմ Զուլիցերիա մեկնումս, որպէսզի ժընեւի, Պերնի, Յիւրիխի եւ Պագէյի մէջ ձեռնարկեմ քարոզչական արշաւի մը թուրքերուն դէմ, որոնք մեծ գործունէութիւն ցոյց տու տան այդ քաղաքներուն մէջ: Եւ մինչ ես Ֆրանսական եւ զուլիցերիական կառավարութեանց դիմած էի արտօնագիր ստանալու եւ Շանթի հետ Զուլիցերիա մեկնելու, նամակ մը կը ստանամ Լոնտոնի մեր Կոմիտէէն, որ կը խնդրէ անյապաղ փութալ սկանտինաւեան երկիրներ, թրքական միեւնոյն սադրանքներուն հակազդելու նպատակով:

Կը թուի թէ մեր թշնամիները կը ջանան՝ գերմաններու աջակցութեամբ՝ չէզոք երկիրներու ընկերվարականներէն բաղկացեալ Քինիչ կոմիտէ մը կազմել եւ էրզրում ուղարկել, որպէսզի տեղւոյն վրայ անոնք ստուգեն հայ կամաւորներու կողմէ թուրք ազգաբնակչութեան վրայ վերջերս գործադրուած կարծեցեալ խտրութիւնները: Պէտք է ի դերեւ հանել այս խորամանկութիւնը: Լոնտոնի կոմիտէն եւ անձնապէս Թոյնբի⁸² գրած են Ազգ. Պատուիրակութեան եւ, նկատի ունենալով մեծ վտանգը, պնդած են իմ մեկնումիս վրայ:

Կը համակերպիմ ու կ'երթամ: Եթէ Քինիչ յանձնախումբ պիտի ղրկուի Հայաստան, պէտք է նախ եւ առաջ ան բաղկացած ըլլայ անկողմնակալ մարդոցմէ ապա, ձեռնարկէ աւելի լայն քննութեան մը ոչ միայն վերջին օրերու դէպքերուն, այլ ամբողջ երեք տարիներու հայկական ողբերգութեան*:

Մեկնելու համար, ուրեմն, կը սպասեմ Ֆրանսական

*) Անձնապէս, կը կարծեմ որ էրզրումի մէջ մեր գունդերը ծայրայեղութիւններ գործած ըլլան թուրք ազգաբնակչութեան դէմ:

82.- Արնոլտ Թոյնբի – անգլիացի պատմաբան, որ խմբագրած էր հայկական կոտորածներուն առիթով բրիտանական կառավարութեան 1916 թ.ին հրատարակած "The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916" փաստագրական ծաւալուն հատորը:



ՆԻԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԲ

L'effroyable drame du Caucase domine naturellement toutes nos préoccupations. Il est fort probable que les turcs n'ont pu encore prendre Kars et que leurs commu-

niqués à ce sujet sont mensonges. Mais, hélas! Il semble que nos munitions s'épuisent. A en croire les dernières communications, les troupes britanniques seraient tout près de la frontière perso-caucasienne. Espérons qu'elles marcheront contre les tartares qui, comme vous savez, sont en pleine ébullition. Le chemin de fer Tiflis-Bakou est depuis longtemps dans les mains tartares et à Bakou des orgies sanglantes ont eu lieu. Et mes pauvres enfants y sont.

Il semble, cependant, que finalement les nôtres ont repoussé les tartares.

Les russes, les bolchéviks-mêmes, ont combatus dans nos rangs. La flotte bolchéviste de la mer Caspienne a mombardé les quartiers tartares.

Mais combien de temps notre résistance durera-t-elle, c'est là la grande, l'angoissante question...

Le voyage au Caucase et en Russie est impossible. J'ai fait bien des tentatives, mais sans résultat.

*
* *

Nos camarades de Buenos-Ayres m'avaient écrit pour obtenir des facilités de la part du gouvernement français afin qu'ils puissent être débarqués⁸³ et expédiés comme volontaires à Ch... J'ai fait les démarches nécessaires au Quai d'Orsay; le ministre a fait télégraphié au consul de France l'engageant à faire partir les jeunes gens, aux frais du gouvernement français.

*
* *

Je suppose qu'une grande partie de la dernière somme que vous avez envoyé à l'adresse de Hanemian (je crois un millier de dollars) a été destinée à nos deux invalides Honan et Youssoufian.

Notre cher Honan n'étant plus, j'ai dit d'envoyer mille francs à Youssoufian qui est le fondateur de nos organisations à Constantinople et en Amérique. Le reste de la somme est confié à la Banque (à Genève) par notre vieil et brave camarade Anton Goche.

Comme je vous avais écrit, un millier de dollars (celui

83.- Պէտք է ըլլայ՝ être embarqués.

և անգլիական կառավարութեանց արտօնութեան:

Կը գրեմ ձեզի, ինչպէս եւ «Հայրենիք»ին:

Մեր գլխաւոր մտահոգութիւնը, բնականաբար, Կովկասի ապրած սարսափելի ողբերգութիւնն է: Շատ հաւանական է, որ թուրքերը դեռ չեն կրցած գրաւել Կարսը, եւ այդ մասին իրենց հաղորդագրութիւնները սուտ են:

Բայց, աւա՛ղ, կը թուի թէ ռազմամթերքը սպառելու վրայ է: Ըստ վերջին տեղեկութեանց, բրիտանական զօրքերը շատ մօտ են պարսկա-կովկասեան ռազմաճակատին: Յուսանք որ պիտի առաջանան թաթարներուն դէմ, որոնք, ինչպէս գիտէք, ամբողջական խլրտումի մէջ են: Թիֆլիս-Պաքու գնացքը երկար ատեն է Վեր թաթարներու ձեռքը կը գտնուի, եւ Պաքուի մէջ արիւնայի շուռտութիւններ գործուեցան: Եւ իմ խեղճ գալակներս հոն են:

Կը թուի այսուհանդերձ, որ ի վերջոյ, մերինները ետ մղած են թաթարները:

Ռուսերը, նոյնիսկ բոլշեւիկները, կռուած են մեր շարքերուն կողքին: Կասպից ծովու բոլշեւիկեան նաւատորմը ռմբակոծած է թաթարական թաղամասերը: Սակայն, որքա՞ն ժամանակ պիտի տեւէ մեր դիմադրութիւնը. ահա, մեծ, անձկութիւն պատճառող խնդիրը...

Կովկաս եւ Ռուսիա ճամբորդելը անկարելի է. շատ փորձեցի, բայց ապարդիւն:

*
* *

Պուէնոս Այրէսի մեր ընկերները գրած էին որ դիւրութիւններ ձեռք բերեմ Ֆրանսական կառավարութենէն, որպէսզի կարենան ցամաքահանուիլ եւ իբրեւ կամաւոր զրկուին Շի...: Հարկ եղած դիմումները կատարեցի Քէ ս'Օրսէ. նախարարը հեռագրել տուաւ Ֆրանսայի հիւպատոսին, յորդորելով որ երիտասարդները ճամբայ հանէ Ֆրանսական կառավարութեան ծախքով:

*
* *

Կ'ենթադրեմ որ Հանրմեանի հասցէին ձեր ուղարկած վերջին գումարին (կարծեմ շուրջ հազար տոլար) մէկ մեծ բաժինը յատկացուեցաւ մեր երկու վեթերաններուն՝ Յոնանին եւ Իոսուֆեանին:

Մեր սիրելի Յոնանը մահացած ըլլալով, ըսի որ հազար Ֆրանք ուղարկեն Իոսուֆեանին, որ հիմնադիրն է Կոստանդնուպոլսոյ եւ Ամերիկայի մեր կազմակերպութեանց: Գումարին մնացեալ մասը մեր սիրելի եւ ազնիւ ընկերոջ՝ Անտոն Գոչի կողմէ դրուած է ժընեւի դրամատունը:

Ինչպէս գրած էի, հազար տոլար մը (Ռոստոմին





destiné à Rostom) reste ici à la banque, au soin de notre ami Hohannes Khan.

Je continuerai à dépenser mes 750 fr.; la Délégation ne me donnera que pour les frais de voyage.

J'ai écrit à Anton Goche qu'il transmitt 1130 francs à Issahakian. La somme destinée à la sœur de Vramian doit être déjà envoyée par Anton, selon votre désir. Mais je tâcherai de vous envoyer un compte rendu des sommes reçues et distribuées.

Salutations fraternelles
M. VARANDIAN

Je vous prie d'envoyer cette lettre, après lecture, à Armen Karo. Le discours de Lyttle est excellent.

յատկացուած) կը մնայ հոս, մեր բարեկամ Յովհաննէս Խանի [Մասեհեան] մօտ:

Պիտի շարունակեմ ծախսել իմ 750 ֆրանքը. [Ազգ.] Պատուիրակութիւնը պիտի հոգայ ճամբորդական ծախքերս միայն:

Գրեցի Անտոն Գոչին, որ [Աւետիք] Իսահակեանին փոխանցէ 1130 ֆրանք: Ձեր փափաքին համաձայն, Անտոն Գոչ ուղարկած պէտք է ըլլայ արդէն Վրամեանի քրոջ յատկացուած գումարը: Այսուհանդերձ, պիտի ջանամ զրկել ձեզի ստացուած եւ բաշխուած գումարներու համարատուութիւն մը:

Ընկերական բարեկներով՝
Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

Կը խնդրեմ որ այս նամակը կարդալէ ետք, փոխանցէք Արմէն Գարոյին: Լիթլի⁸⁴ ճառը հոյակապ է:

84.- Միացեալ Նահանգներու Քանասս նահանգի երեսփոխան, որ նոյն տարուան Փետրուար 7ին Ներկայացուցչական Տան մէջ երկարօրէն արծարծած էր հայկական հարցը՝ Արմէն Գարոյի կողմէ իրեն հայթայթուած փաստացի հարուստ տուեալներու հիման վրայ:





ԱՐՄԷՆ ԳԱՐՈՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Փաստ. 1405-88

Գ 1.- ԱՐՄԷՆ ԳԱՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ ՅՈՆԱՆ ԴԱԻԹԵԱՆԻՆ (Ժրգնու)

Պատճռն, 7 Օգոստ. 1917

Միրելի Յովնան,

Պետրոգրադից մեկնելիս քեզ մի քանի տող գրեցի, բայց չգիտեմ տեղ հասաւ թէ ոչ. փոստի վարչութիւնը այնքան անկանոն էր դարձել որ նամակներն ու հեռագիրները ամիսներով մնում էին ընկած փոստատանը:

Այսօր 5 օր է որ տեղս հասայ: Տեսնուեցայ Արտաւազդին եւ Տամատեանին⁸⁵ հետ: Երկուսով էլ շատ օգտակար եւ բեղմնաւոր գործունէութիւն են ունեցած այստեղ. ի հարկէ ես էլ կ'աշխատեմ այդ ուղղութեամբ շարունակել նրանց սկսածը:

Գալով իմ յատուկ միսիոնիս, անշուշտ Միքայէլից լսած կը լինիք: Իմ գործունէութիւնը պիտի սահմանափակուի միայն ամերիկեան շրջանակներում եւ պիտի աշխատեմ ճիշտ այն ուղղութեամբ՝ ինչ որ Փաշան արդէն ընդգրկել է քաղաքական այս փոփոխութիւններից յետոյ, այսինքն մեր դատի պաշտպանութեանը մէջ active⁸⁶ կերպով շահագրգռել ամերիկացոց. մանրամասնութիւնները Միքայէլից կ'իմանաս: Փաշային այստեղ գրած Յունիս 4 թուակիր նամակում շատ լաւ ընդգծած էր մեր բռնելիք նոր դիրքը Ռուսական յեղափոխութեան եւ Ամերիկայի միջամտութեամբ⁸⁷ առաջ եկած նոր պայմաններում: Աւելի մանրամասնութեանց մէջ չեմ մտնում:

Այստեղ լսեցի որ Միքայէլը մտադիր է Կովկաս վերադառնալ եւ այնտեղ մնալ. սա ի՞նչ խապար է? Մենք Կովկասում մտածում էինք դեռ նոր ուժեր եւս ուղարկել արտասահմանեան մեր պրոպագանդը ուժովցնելու, եւ ահա մեր միակ մարդն էլ թողնում հեռանում է Փարիզից⁸⁸: Լաւ կը լինէր որ Միքայէլը այս մասին Կովկասի ընկերներու համաձայնութիւնը առնէր եւ յետոյ միայն տեղիցը շարժուէր, որպէսզի թիւրիմացութիւններ առաջ չգային:

Կովկասի ընկերներու ցանկութիւնն էր որ դուք այդտեղից մի քիչ աւելի գործունէութիւն սկսէիք ընկերվարական զանազան հատուածներում, մեր դատի որոշ եւ պարզ ձեւակերպումը բոլորին համար ընդունելի դարձնէիք: Կովկասի բոլոր շրջաններում համոզուած են որ եթէ մեր պրոպագանդը լաւ տանենք, ներկայ պայմաններում մեր խոչալի maximum իրագործումը կարող ենք ձեռք բերել, այսինքն 6 վիլայէթները մի քիչ սրբագրուած սահմաններով եւ Կիլիկիայի մի մասը՝ միացեալ մի ինքնավար Հայաստան է դառնալու բոլոր պետութիւններու պաշտպանութեանը տակ, բայց որովհետեւ հաւաքական պաշտպանութիւնը անգործնական է եւ որ գլխաւորն է՝ մեր քանդուած հայրենիքը պէտք ունի վերաշինութեան ու մի 20-25 տարուայ իրական պաշտպանութեան մինչեւ որ հայ ժողովուրդը կարողանայ իւր իսկ սեփական ուժերով կառավարել այդ ստեղծուելիք պետութիւնը, անհրաժեշտ է որ մի որեւէ մեծ պետութեան յանձնուի Հայաստանի վերաշինութիւնը եւ կազմակերպումը: Իսկ թէ որն է լինելու այդ իսկական պաշտպան պետութիւնը, դրա մասին մեր մէջ երկու կարծիք չկայ. Կովկասում էլ բոլոր հոսանքները համակարծիք են Տուլա-ի[?] նոր մտքին, որը առանց նրանից լուր ունենալու մենք էլ էինք մտածում:

Անշուշտ Դաշնակիցներուն մէջ այս հարցի նկատմամբ կան զանազան ցանկութիւններ եւ իրար հակասող ուղղութիւններ: Մեզ կը մնայ այնպէս տանել մեր գործունէութիւնը եւ պրոպագանդի գործը, որ մեզ համար ամէնից աւելի ցանկալի combinaison⁸⁹ յաջողուի: Եւ ինձ թւում է որ դէպքերի ներկայ դասաւորութիւնը պիտի ստեղծէ մի դրութիւն, որը հնարաւորութիւն պիտի տայ մեր նախընտրած combinaison-ի յաջողութիւնը, թէեւ առայժմ բաւական դժուար է երեւում արտաքուստ:

85.- Արտաւազ Հանրմեան եւ Միքայի Տամատեան, որոնք Ազգ. պատուիրակութեան կողմէ Ամերիկա ուղարկուած էին կուսակցութեանց եւ հասարակական կազմակերպութեանց միջեւ համերաշխութիւն գոյացնելու առաքելութեամբ:

86.- Գործօն:

87.- Ալեքսանդր Միացեալ Նահանգներու Ընդհ. պատերազմին մասնակցութեան:

88.- Մ. Վարանդեան պիտի չկարենար Կովկաս մեկնիլ. պիտի մնար Եւրոպա:

89.- Ֆրանսերէն՝ կարգադրութիւն, լուծում իմաստով:



Կովկասի մասին տալիք լուրերն արդէն ուշացած են. Թիֆլիսից հեռացել եմ Ապրիլ 6ին: Այն ատենուայ դրութիւնը լաւ կարելի է հաշուել, բայց մտահոգիչ նշաններ երեւում էին: Թուրքերու գինումը մէկ կողմից, իսկ վրացոց սեփարիստական⁹⁰ շարժումն էլ միւս կողմից, մերոնց դրել էին երկու կրակի մէջ: Եւ կեանքի ironie-ն⁹¹ այն տեղ էր բերել մեզ որ մեր ընկերները հրատարուում էին, կամ աւելի ճիշտը ըսած, աշխատում էին զանազան սոփիզմներով⁹² մեր “sociologue”ներու⁹³ կազմած 1907 թուի ծրագրի մէջ յիշուած կովկասեան Ֆեդերալիզմը չեղեալ նկատել, գտնելով որ այդ շվեցերական Ֆեդերալիզմը անգործադրելի է մեր իրականութեան մէջ եւ նոյնիսկ վնասակար 1.800.000 հայութեան շահերուն:

Միլիթարական լուր մը ունիմ տալու գրաւուած վայ-

90.- Անջատողական:
 91.- Ֆրանսերէն՝ հեզնանք:
 92.- Իմաստակոթիւններով, սոփեստութիւններով:
 93.- Ֆրանսերէն՝ «ընկերաբաններու»:
 94.- Յաջորդաբար՝ Աւետիք Իսահակեանին, Անտոն Գոչին (Պոյաճեան) եւ Լեւոն Շանթին:


րերու մասին: Շնորհիւ յեղափոխութեանը մեզ յաջողեց հին վարչութիւնը քշել տալ երկրից եւ նրա տեղը նորը հաստատել:

Տաճկահայաստանի գրաւուած մասին ընդհանուր կառավարիչ նշանակուեց գեներալ Աւերիանով (մի բարեմիտ ոռու) իսկ նրա քաղաքացիական գործերուն օգնական Տոք. Չալրիեւ, տալով նրանց կատարեալ ազատութիւն երկրի վարչութիւնը դնելու նոր հիմքերու վրայ. եւ այս բոլորը ժամանակաւոր բնոյթ մ'ունին, սպասելով Հայաստանի բախտի որոշմանը խաղաղութեան կոնգրէին: Երկրի վերաշինութեան գործն էլ նրանց յանձնուեցաւ:

Առ այժմ այսքան: Սպասում եմ ձեր լուրերուն: Առ այժմ կը մնամ Բոստոն այստեղի մեր գաղութին հետ մի քիչ ծանօթանալու համար, բայց հաւանական է որ կը հաստատուիմ Նիւ Եորքում, ուր են գտնուում իմ ծանօթները:

Բարեկներ իմ կողմից Աւոյին, Անտոնին եւ Լեւոնին⁹⁴:

Համբոյրներով՝
 ԳԱՐՕ



Նմոյշ մը Արմէն Գարոյի ձեռագրէն (փաստ. 1406-5):



ԱՐՄԷՆ ԳԱՐՈՅԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Փաստ. 1405-121

Գ 2

Նիւ Եորք, 30 Դեկտ. 1917

Ընկերներ,

Ընկեր Պաղտոյեանէն լսեցի որ որոշել էք անմիջապէս 30 հազար տոլարի գումար մը ուղարկել Կովկաս: Ի նկատի առնելով Ռուսաստանի ներկայ խառնակ դրութիւնը, մանաւանդ բանքաներու վրայ կառավարութեան կողմէ դրուած արգելքին, խոհեմութիւն չէ որ եւէ դրամական գործառնութիւն ընել Ռուսաստանի հետ բանքաներու միջոցաւ, հետեւաբար առայժմ սպասելու է մինչեւ որ դրութիւնը աւելի վստահութիւն ներշնչէ:

Ես վաղը կը մտնեմ Գիւլբէնկեաններու մօտ իմանալու համար թէ մի գուցէ անոնք յանձն առնեն այդ գումարի փոխադրութիւնը իրենց Թիֆլիսի բաժանմունքին հետ, իսկ եթէ դա էլ չյաջողուի, առայժմ սպասելը խոհեմութիւն է:

Նիւ Եորք 3-4 օր էլ կը մնամ դեռ եւս, յետոյ Վաշինգթոն կը մեկնեմ:


Վաղը տեսնուելու եմ Թիրեաքեանի հետ իօսելու համար The New Armenia-ի մասին:

Կովկասէն Հայաստանի բերրոյէն եկած նամակի պատճէնը խնդրեմ ինձ ուղարկէք:

Ընկերական ջերմ բարեկներով
Ա. ԳԱՐՕ

Փաստ. 1406-5

Գ 3



Ընկերներ,

Այօր մեր նոր-տարին է: 1918ի Յունուարի մէկն էլ անցուցինք օտար երկնքի տակ եւ անորոշութեան ու սուգի մէջ: Գիտեմ, ձեր ցանկութիւնն է որ գալիք նոր տարին աւելի ուրախ հեռանկարներով եւ մեր հարազատ երկրումը անցընենք: Այդ յոյսով բոլորիդ շնորհաւորում եմ գալիք նոր տարուայ համար:

Մինչեւ հիմա Նիւ Եորք մնացի երկու պատճառներով, նախ որ երկու անգամ գրեցի Վաշինգթոն հիւրանոցին խնդրելու որ ինձ մէկ սենեակ պահեն. մինչեւ հիմա ոչ մի ազատ սենեակ չկայ իմ ուզածս հիւրանոցին մէջ: Բացի այդ, այս ժամանակամիջոցում այստեղ մի քանի նոր ծանօթութիւններ հաստատեցի Ամերիկեան Ֆինանսական այն շրջանակներուն հետ, որոնք հիմակուանից սկսել են հետաքրքրուել մեր երկրի տնտեսական հարցերով:

Այս օրերս ծանօթացայ նաեւ այստեղի մեր հայ բուրժուաներէն շատերուն հետ:

3-4 օրէն անպատճառ կը մեկնեմ Վաշինգթոն:

Եթէ իմ հասցէիս նամակներ կան խնդրեմ ուղարկէք այստեղ, ինչպէս նաեւ Կովկասէն եկած լուրերը:

Թիֆլիսէն մեր տուած հեռագրին պատասխան եթէ գայ անմիջապէս ինձ իմաց տուէք որ քանի այստեղ եմ Գիւլբէնկեաններու միջոցաւ փոխադրէք դրամը:

Նիւ Եորքի հոգաբարձական ընտրութեանց մէջ մեր «Համերաշխ» կազմակերպութեանց խաղացած օյինը լսեցիք անշուշտ, Չատիկը⁹⁵ աւելի մանրամասնօրէն պիտի գրէ ձեզ: Սա մի լաւ դաս է մեզ համար ապագային համար:

Ընկերական ջերմ բարեկներով
Ա. ԳԱՐՕ

95.- Չատիկ Մաթիկեան, անդամ Հ.Յ.Գ. Ամերիկայի Կեդր. կոմիտէի:





Փաստ. 1406-15

Գ 4



CONGRESS HALL HOTEL
WASHINGTON, D. C.

Վաշինգթոն, 3 Փետրուար 1918

Ընկերներ,

Ստացայ Հանրամեանի վերջին նամակի պատճէնը, որը չափազանց հետաքրքիր տեղեկութիւններ կու տար Կովկասի ներկայ դրութեանը մասին:

Այս նամակի կարեւոր կէտերը թարգմանելով տուի այստեղի State Department-ին⁹⁶, իրենց ուշադրութիւնը հրաւիրելով Արեւելքի դրութեանը, մանաւանդ Հայկական նոր վտանգի մասին:

Շատ հետաքրքրուեցան եւ ինձ խոստացան Լոնտոնի իրենց դեսպանին միջոցաւ անգլիական կառավարութեան լուրջ ուշադրութիւնը հրաւիրել:

Այստեղի տրամադրութիւնը այնպէս է որ պատրաստ են ամէն նիւթական եւ բարոյական աջակցութիւն տրամադրել մեզ, բայց գործնական ոչ մի միջոց չկայ:

Միակ միջոցն այն է որ անգլիացիք Բաղտատէն որքան կարելի է շուտ առաջնան եւ օր առաջ յարաբերութեան մէջ մտնեն կովկասեան մեր ուժերուն հետ: Այս ուղղութեամբ էլ Լոնտոնում պիտի խօսեն: Եթէ այս բանը յաջողուի, այն ատեն Կովկասի վտանգը բոլորովին կը չէզոքանայ:

Այստեղ իմ խօսակցութեանս միջոցին կարեւոր մէկին այն միտքը յայտնեցի թէ անհրաժեշտ պիտի լինի ստեղծել նախ մի քիւրտական փոքրիկ պետութիւն 1 1/2 միլիոն քիւրտ ազգաբնակչութեամբ, բայց որովհետեւ քիւրտերը անընդունակ են լինելու առանձին կառավարուելու, պէտք է դնել Պարսկաստանի գերիշխանութեան տակ, միացնելով նաեւ պարսկական Քիւրտիստանը: Ապագայ այդ փոքրիկ պետութիւնը պիտի տարածուի Հեքքիարիէն սկսած մինչեւ Սիւլէյմանիէ, Տիգրիսի ձախ ափին, առնելով իւր մէջ բուն Քիւրտիստանի լեռնաշղթան: Այսպիսով նա շրջապատուած պիտի լինի հիւսիսէն մեր Վանայ նահանգով, հարաւէն ու արեւմուտքէն Միջագետքով, իսկ արեւելքէն Պարսկաստանով:

Ինձ խոստացան այս հարցի վրայ եւս հրաւիրել անգլիական կառավարութեանը ուշադրութիւնը, գտնելով որ դա կ'ունենայ այն առաւելութիւնը որ Պարսկաստանը շահագրգռուած լինելով, կ'անցնի դաշնակիցներու կողմը եւ կը նպաստէ Կովկասին օգնութիւն հասցնելու գործին:

Կովկասի այս դրութիւնը ինձ չափազանց մտահոգութիւն կը պատճառէ. ինչով կարող ենք այստեղէն օգնել մերոնց?: Եթէ դուք որեւէ թելադրութիւններ ունիք, յայտնեցէք ինձ:

Խնդրում եմ եկած լուրերը անմիջապէս ինձ հասցնէք:

Վաղը ժամադրութիւն եմ խնդրած post-master-ից⁹⁷ թերթին համար խօսելու: Պիտի աշխատեմ բոլոր հայ թերթերու համար էլ թոյլատուութիւն ստանալ:

Սպասելով ձեր լուրերուն.

Ընկերական ջերմ բարեկներով բոլորիդ
Ա. ԳԱՐՕ

96.- State Department-ը Միացեալ Նահանգներու Արտաքին գործոց նախարարութիւնն է:

97.- Նամակատան տեսուչից: Հարցը կը վերաբերէր այս վերջինին կողմէ եղած այն կարգադրութեան, որ հայկական թերթերէն կը պահանջուէր նախքան տպագրութիւն՝ ներկայացնել յօդուածներուն անգլերէնի թարգմանութիւնը:





Փաստ. 1406-17

Գ 5

G. PASDERMADJIAN, D. Sc.
EX-DEPUTY OF ERZERUM
SPECIAL ENVOY OF HIS HOLINESS
THE CATHOLICOS OF ALL
ARMENIANS

Վաշինգթոն, 9 Փետրուար 1918

Ընկերներ,

Այսօր վերջապէս Սվազլիին հետ միասին գնացինք փոստ-օֆֆիսը եւ հայ թերթերուն հարցը վերջացրինք: Մեզ խոստացան անմիջապէս կարգադրել որ բոլոր հայ թերթերն էլ ազատ կացուցանեն նախնական թարգմանութեան հարկադրութենէն, բացի «Երիտասարդ Հայաստան»էն եւ «Տաւրոս»էն, որովհետեւ այս երկու թերթերը դեռ խնդրագիր չեն ներկայացուցած այդ մտքով, բայց մեզ խոստացան նաեւ այդ երկուսին էլ ազատել եթէ պէտք եղած դիմումը ընեն:

Միայն «Երիտասարդ Հայաստան»ի մասին solicitor-ը⁹⁸ որոշ նկատողութիւններ ըրաւ անոր սոսիալիստական ուղղութեան համար, բայց մենք բացատրեցինք որ անոր ընկերվարական ուղղութիւնը բնաւ չի նմանիր այն սոսիալիստական ուղղութեանը, որը դէմ է դաշնակիցներու ներկայ քաղաքականութեանը. ի վերջոյ գոհ մնալով մեր բացատրութիւններէն, խոստացան անոր մասին էլ նոյն կարգադրութիւնը ընել, երբ պէտք եղած ձեւակերպութիւնները կատարուեն:

Երէկ չէ առջի օրը, House of Representative-ի⁹⁹ մէջ, Kansas-ի երեսփոխան Mr. E. Little, մի երկար ատենախօսութիւն ըրաւ Հայկական Հարցի մասին եւ շատ հետաքրքրութիւն շարժեց մեր հարցի շուրջ բոլոր երեսփոխաններուն կողմէն: Այստեղ հասնելուս պէս իրեն հետ ծանօթացայ, ինքը ժամանակին Եգիպտոսում Ամերիկեան քոնսիւլ է եղած եւ այնտեղ ծանօթացել է Նուպարին եւ կարգ մը ուրիշ բարձրաստիճան հայերու հետ, ինչպէս նաեւ մեր աննման Հայրիկին¹⁰⁰, որը շատ խորը տպաւորութիւն է թողել իւր վրայ: Այս երկու շաբաթը անցուցի իրեն մանրամասն ծանօթացնելով մեր ներկայ անցուղարձին հետ. մի քանի երեկոյ միասին պարապեցանք Congress library-ին մէջ, եւ ինչպէս իրեն ճառէն պիտի տեսնէք, բաւական բազմակողմանի կերպով ըմբռնել է մեր հարցը եւ շատ սրտանց էլ խօսեց ժողովասրահին մէջ մի քանի անգամ բոլորի ծափահարութիւնը առաջ բերելով:

Երբ ճառը տպուած դուրս գայ իրենց պաշտօնական record-ներուն¹⁰¹ մէջ, անմիջապէս մի օրինակ կ'ուղարկեմ որ «Հայրենիք»ը լինի առաջինը հայ հասարակութեան ներկայացնողը: Քանիցս իրեն խնդրեցի թէ չլինի թէ իմ մասին որեւէ խօսք ըսէ իւր ճառին մէջ եւ խոստացաւ էլ, բայց նորէն մի մասի մէջ ակնարկութիւնը կ'ընէ իմ մասին, բարեբախտաբար առանց անունս տալու: Զլինի թէ «Հայրենիք»ը բերան բացութիւն ընէ եւ իմ մասին որեւէ բան գրէ: Ստիպուած եմ այս նախազգուշութիւնը ընել, խրատուած «Հորիզոն»ի 1914ի ըրած գէլգէլութիւնից:

Ինչպէս նախորդ նամակովս ըսի, ծանօթութիւններու շարքս կամաց կամաց մեծանում է եւ յոյս ունեմ անմիջական յարաբերութեան մէջ մտնել նաեւ Col. House-ի հետ, որը ինչպէս գիտէք նախազգահին մօտիկ խորհրդականն է:

Այստեղ սկսել են հիմա լուրջ կերպով ուսումնասիրել Արեւելքի բոլոր ազգային հարցերը, մէջը առնելով Տաճկաստանի, Կովկասի եւ Պարսկաստանի բոլոր խնդիրները: Ռուսական կազմալուծումը նորանոր combinaison-ներու¹⁰² հնարաւորութիւններ է ստեղծում:

Փաշայէն ստացած նամակի օրինակը Միութեան ուղարկեցի, որին անշուշտ ծանօթացած կը լինէք:

Ընկերական ջերմ բարեկներով
Ա. ԳԱՐՕ

Յ. Գ.— Ռոստոմի ընտանիքին մասին գրածներս մոռացութեան [չտաք]:

98.- Նամակատան տեսուչի փոխամորդը:

99.- Ներկայացուցիչներու (երեսփոխաններու) Տուն:

100.- Խօսքը Խրիմեան Հայրիկի մասին է անշուշտ, բայց ե՞րբ եւ ո՞ր, չի ճշուիր: Սկրտիչ Խրիմեան 1890 Դեկտ.— 1893 Յունիս, Սուլքան Համիտ Բ-ի կարգադրութեամբ կը գտնուէր Երուսաղէմ, ուխտագնացութեան կամ աւելի ճիշդ՝ «պատուաւոր աքսորի» կարգալիճակով: Այդ ժամանակամիջոցին, 1892 թ. Մայիսին, Էջմիածնի մէջ գումարուած Ազգ. ընդ. ժողովին, ան միաձայնութեամբ ընտրուեցաւ Ամենայն Հայոց կաթողիկոս: Ընտրութեան պաշտօնական վաւերացումը՝ Թուրքիոյ սուլթանին եւ Ռուսիոյ Յարին կողմէ՝ առիթ հանդիսացան երկու պետութիւններու միջեւ երկարատեւ բանակցութիւններու, որոնց հետեւանքով 1893 թ. Օգոստոսին միայն ան ճամբայ ելաւ Երուսաղէմէն դէպի Էջմիածին: Խրիմեանի ուղեւորութեան առաջին հանգրուանը Եգիպտոսն էր, ուր շատ հաւանաբար է. Լիթթըլ առիթ ունեցած է ծանօթանալու Հայոց Հայրիկին:

101.- Ամերիկեան կառավարութեան հրատարակած պաշտօնական մատենաներուն մէջ:

102.- Ֆրանսերէն՝ դասատրոսիւն:





Փաստ. 1406-22

Գ 6

Վաշինգթոն, 18 Փետրուար 1918

Ընկերներ,

Ներփակ կ'ողորակեմ Յոնանին նամակը, որը աւելի որոշ կերպով կը հաղորդէ մեր ընկերներուն կենդանի լինելու լուրը¹⁰³: Թէեւ ինքը վերապահութեամբ կը հաղորդէ, բայց իմ կարծիքս այն է որ այդ լուրերը շատ հաւանական են, հետեւաբար շտապելու է օգնութեան միջոցներ տրամադրել ժընեւի ընկերներին որ անոնք ի վիճակի լինին մեր ընկերներուն օգնութեան հասնելու:

Կը հետաքրքրուիք Քիւրտիստանի մասին իմ անցեալ նամակովս յայտնած մտքերովս: Այս մտքերը նոր չեն մեզ համար, մենք շատոնց եկել ենք այն եզրակացութեան որ Քիւրտիստանի հարցը պէտք է աշխատել զատել Հայկական Հարցէն եւ այդ իսկ պատճառով անհրաժեշտ է լինելու ստեղծել մի անջատ քիւրտական երկիր: Մեր այս միտքը ես պատճառաբանուած ձեւով յայտնեցի յայտեղի Պարոններուն շեշտելով այն բանը որ եթէ ստեղծուի մի Քիւրտիստան մօտ 1 1/2 միլիոն ազգաբնակչութեամբ եւ դրուի այդ երկիրը Պարսկաստանի գերիշխանութեանը տակ, այն առաւելութիւնը կ'ունենան Դաշնակիցները որ Պարսկաստանի համակրութիւնը եւ աջակցութիւնը ձեռք կը բերեն կռուելու համար փան-թուրքական շարժման դէմ:

Ինչպէս յայտնի է տաճիկներուն նախկին սիրելի փանիսլամութիւնը évolué եղաւ¹⁰⁴, գերմանական ազդեցութեան տակ, դէպի փան-թուրանականութիւն, որի յաւակնութիւնները նոյնքան մեծ են ինչ որ փան-իսլամիզմինը: Այս évolution-ին գլխաւոր պատճառն այն է որ արաբական տարրերը այլեւս առաջնայ պէս¹⁰⁵ չեն թուրքական imperialisme-ին¹⁰⁶:

Այս օրերս Սվազիին¹⁰⁷ հետ միասին մի տեղեկագիր ենք ներկայացնելու Արտ[աքին] գործ[ոց] նախարարութեանը Հայկական Հարցին վրայ: Իրենք ուզեցին: Կ'ուզեն մեր պատճառաբանուած կարծիքները իմանալ մեր հարցի մասին: Այդ տեղեկագիրն մէջ ես աշխատելու եմ շօշափել նաեւ մեր հարցին մօտիկ Քիւրտիստանը եւս, ինչպէս նաեւ Տաճիկաստանի հպատակ բոլոր ժողովուրդներու պահանջները: Չափազանց պէտքը կայ որչափ կարելի է համոզիչ նիւթեր դնել այս Պարոններուն առաջ:

Ապագայ Հայաստանի երկաթուղիներով հետաքրքրողները ալ կան. անցեալ օր Նիւ Եորքէն մէկը յատուկէն եկել էր ինձ խօսելու: Իմ տուած տեղեկութիւններէն շատ գոհ մնաց եւ խնդրեց երբ Նիւ Եորք գնամ իրեն տեսնեմ աւելի մանրամասնօրէն խօսելու: Նոյն նիւթի մասին Փարիզէն նամակ մ'ստացայ իմ հին ծանօթներէն մէկէն: Մէկ խօսքով կամաց-կամաց գործնական հետաքրքրութիւն կը սկսին ունենալ դէպի մեզ եւ մեր հարցը:

Միայն Կովկասի դրութիւնն է որ մոլթ ամպի պէս մեր գլխուն վրայ կանգնած է: Փաշայէն նոր նամակ մ'ստացայ ուր կ'ըսէ թէ Ֆրանսական եւ անգլիական կառավարութիւնները խոստացել են ամէն տեսակ աջակցութիւն տրամադրել Կովկասի հայկական ուժերուն կազմակերպութեան համար: Արդէն բաւական դրամ փոխադրել են:

Թերթը շատ անկանոն կը ստանամ. Օգանեանին¹⁰⁸ լուրջ ուշադրութեան դիմում կ'ընեմ: Ֆիլատելֆիայի ընկերներուն ես իմաց կու տամ երբ ազատուիմ ներկայ աշխատանքներէս: Հաց ուտելու ժամանակը չէ:

Ընկերական ջերմ բարեկներով՝
Ա. ԳԱՐՕ

103.- Խօսքը կը վերաբերի Մեծ Եղեռնին զոհուած ընկերներուն. պատերազմի տարիներուն գրեթէ անընդհատ գրոյցներ կը շրջէին անոնցմէ ոմանց ողջ մնացած ըլլալու մասին:
104.- Ֆրանսերէն՝ զարգացում ունեցաւ, փոխուեցաւ:
105.- Անընթեռնելի բառ, հաւանաբար «ենթակայ չեն» իմաստով:
106.- Ֆրանսերէն՝ կայսերապաշտութեան:
107.- Սվազիեան Միլիան (1863-1935), ռամկավար, ատենապետ Ամերիկայի Հայ Ազգ. Միութեան:
108.- Օգանեան Մերուժան (1885-1965), խմբագիր «Հայրենիք» օրաթերթի եւ կուս. գործիչ Ամերիկայի մէջ:





ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Փաստ. 1406-24

Գ 7

Վաշինգթոն, 24 Փետրուար 1918

Ընկերներ,

Թէեւ վերջին նամակովս խոստացայ ձեզ գալիք շաբաթ օրը Պոստըն լինել ձեր ժողովին մասնակցելու համար, բայց ինչպէս կը տեսնեմ հիմակուանից անկարող պիտի լինեմ այդպէս շուտով Վաշինգթոնը թողուլ:

Կովկասէն եկած լուրերը շատ յուզիչ են: Թուրքերը արդէն Երզնկան ու Բաբերդը գրաւել են եւ դէպի Էրզրում կ'առաջանան: Ռուսները, կամ աւելի ճիշտը Ռուսական բանակի վերջին մնացորդները եւ նորակազմ հայկական ուժերը սկսել են Կարինը եւս դատարկել: Ինչպէս կ'երեւայ դեռ այնքան քիչ են մեր ուժերը որ անհնարին պիտի լինի ներկայ սահմանագիծը պահել: Հաւանականաբար մերոնք հագիւ թէ հնարաւորութիւնը ունենան հին Ռուսական սահմանին վրայ առաջին լուրջ միջոցներու դիմելու եւ Կովկասի մեր գինուորական ուժերը կազմակերպելու:

Հանրմեանին¹⁰⁹ նամակէն դիտէք արդէն թէ Փարիզ ինչ քայլեր են առնուած այդ ուղղութեամբ: Ես էլ ձեռքէս եկածը կ'ընեմ որ Վաշինգթոնի կառավարութիւնը եւս իւր օգնութեան ձեռքը հասցնէ մեր հերոս ժողովուրդին որը կանգնած է լինել չլինելու dilemma-ի¹¹⁰ առաջ Կովկասում:

Այս օրերս յոյս ունեմ ազդեցիկ մի քանի երեսփոխաններու հետ ներկայանալ Mr. Lansing-ին¹¹¹ խնդրելու որ անմիջական նիւթական աջակցութիւն հասցնեն Կովկաս: Մինչեւ որ մի շոշափելի արդիւնքի չհասնիմ այս ուղղութեամբ, Վաշինգթոնէն հեռանալս անկարելի պիտի լինի: Այս գործը լմննալուսն պէս կու գամ մի քանի օրով Պոսթոն ձեզ հետ խորհրդակցելու ներկայ լուրջ դրութեանը մասին:

Յամենայն դէպս յուսահատուելու բնաւ տեղիք չկայ, ես համոզուած եմ որ եթէ լուրջ օգնութիւն հասնի մերոնց Կովկաս, մեր եւ վրացի ուժերը բաւական են լինելու ջախջախելու թուրքական ուժերը, միայն թէ այդ օգնութիւնը շուտ հասցնելու է:

Ախմախ Բերենսքին¹¹², եթէ Մայիսին մեր առաջարկը գործադրութեան դնէր, մենք այսօր 150.000-նոց հայ բանակ մկ կ'ունենայինք Կովկաս: Ինչ որ է:

Ընկերական ջերմ բարեկեցութեամբ
Ա. ԳԱՐՕ

Փաստ. 1406-28

Գ 8

Վաշինգթոն, 4 Մարտ 1918

Ընկերներ,

Նախ չմոռնամ ըսելու, որ «Հայրենիք»ի համար գնացի post office-ը, յայտնեցի իրենց որ հակառակ իրենց խոստմանը մինչեւ հիմա ոչինչ չէ գրուած: Ինձ պատասխանեցին որ ի նկատի առնելով այն որ «Հայրենիքը» սոցիալիստական ուղղութիւն ունի post master-ը կարգադրել է որ նախքան վերջնական արտօնութիւն տալը Հայրենիքի այս տարուայ թուերէն որոշ քանակութիւն թարգմանուի ամբողջութեամբ, տեսնելու համար թերթի ուղղութիւնը: Ներկայումս այդ թարգմանութիւնները կ'ընեն, երբ լրանայ անմիջապէս հարցը պիտի կարգադրեն:

Ես իրենց ըսի որ ճիշտ է թէ «Հայրենիքը» իր ուղղութեամբ սոցիալիստական է, բայց ոչ ձեր կարծած տեսակէն. նա առաջին օրէն այս պատերազմին մէջ դաշնակիցներու կողմն է բռնած եւ միշտ լուսայեալ¹¹³ է եղած Ամերիկեան կառավարութեան քաղաքականութեանը:

Ինձ վստահացրին որ թարգմանութիւնները լմննալուսն պէս իրենք պիտի կարգադրեն հարցը:

109.- Արտաւազդ Հանրմեան (1878-1945), քարտուղար Փարիզի Ազգ. պատուիրակութեան:

110.- Դժուար երկրմտրաճիւղ, անել դրութեան:

111.- Ռապրթ Լենսինգ, Միացեալ Նահանգներու պետական քարտուղար, այսինքն արտաքին գործոց նախարար:

112.- Ալեքսանդր Քերենսքի (1881-1970), Ռուսիոյ ժամանակաւոր կառավարութեան (1917) վարչապետ:

113.- Հաւատարիմ, օրինապահ:





Անցեալ շաբթու ընթացքին մի շարք տես[ակց]ութիւններ ունեցայ Երեսփոխանական ժողովի Արտաքին Գործոց յանձնախումբի նախագահին եւ միւս անդամներուն հետ բացատրելու համար Կովկասի դրութիւնը: Անոնց խորհուրդով գրաւոր կերպով դիմեցի Պր. Լենսինկին բացատրելով մեր դրութեան լրջութիւնը եւ քսան միլիոնի մի աջակցութիւն խնդրեցի Ամերիկեան կառավարութենէն ի նպաստ Կովկասի նորակազմ բանակին: Յանձնախումբին նախագահը ինձ խոստացաւ իր ազդեցութիւնը ի գործ դնել այս խնդրի նպաստաւոր լուծման համար:

Վաղը պիտի տեսնուիմ նաեւ Սենատի¹¹⁴ յանձնախումբին նախագահին հետ անոր ուշադրութիւնը եւս հրաւիրելու համար Կովկասի ներկայ դրութեանը վրայ:

Սվազլիին գրածին նայելով այս շաբթու վերջին Dr. Barton¹¹⁵ նոյն հարցի համար գալու է Washington, որով իմ ներկայութիւնս անհրաժեշտ է լինելու այստեղ դեռ մի քանի օր եւս:

Washington-ի մէջ բոլոր պէտք եղած անձնաւորութիւնները տեսնելէ յետոյ միտք ունիմ 2-3 օրով Նիւ Եորք անցնիլ Mr. Morgenthau-ի¹¹⁶ եւ Col[onel] House-ի¹¹⁷ եւս բացատրելու համար մեր կացութիւնը: Մէկ խօսքով ամէն դուռ զարնելու ենք ստիպելու համար այս պարոններուն մի քիչ էլ մեր մասին մտածելու:

Իմ կարծիքով անհրաժեշտ է Ամերիկեան կառավարութեան անմիջական մասնակցութիւնը ներկայումս՝ նախ անոր համար որ իր այդ քայլով Ամերիկեան պիտի ստիպէ Անգլիացոց աւելի լուրջ կերպով ձեռք առնել Կովկասի հարցը, եւ երկրորդ, սա առաջին գործնական քայլը կը լինի Ամերիկեան ապագայ պաշտպանութեանը մեր նկատմամբ:

Այսօրուայ թերթերուն լուրերը կարդացիք անշուշտ: Եթէ նոյնիսկ Ռուս կառավարութիւնը պաշտօնապէս ընդունի Գերմանացոց պայմանները՝ կովկասցիք իրենք չպիտի համակերպին եւ թուրքերուն կը մնայ գէնքի ուժով՝ յառաջանալ Կովկասի այս մասերը գրաւելու համար: Եթէ մերոնք գոնէ 100.000 հոգի կարողանան մոպլիլիզէ ընել¹¹⁸ ի վիճակի պիտի լինեն թուրքերուն առաջն առնել, պայմանաւ որ Անգլիացիք Պաղտատի մէջ խուրմա ուտելով չզբաղուին¹¹⁹, ինչպէս որ ըրին այս մէկ տարին:

Պիտի փորձեմ նաեւ Անգլիական դեսպանին տեսնել այս շաբթու եւ խօսիլ նոյն հարցի մասին:

Անցեալ շաբթու Կովկասէն ոչ մի նոր լուր չեկաւ, որով կարելի է ենթադրել որ թուրքերը նոր գրաւումներ չեն ըրած բացի Երզնկայէն եւ Բաբերդէն:

Ձեր ուղարկած 1000 տոլլարը հեռագրով փոխադրեցի ժընեւ իմ քրոջս հասցէին եւ կարգադրեցի որ այդ գումարէն 250 տոլլար յանձնէ Տիկին Զօրեանին, 200 տոլլար Ա. Իսահակեանին, 150 տոլլար Եոսուֆեանին եւ 150 տոլլար Տիար Անտոնին: Իսկ մնացեալ 250 տոլլարը յատկացուցի իմ ընտանիքի պէտքերուն, որով պիտի խնդրեմ ձեզմէն այդ գումարը, ինչպէս նաեւ ասկէ յետոյ նոյն նպատակին համար ստանալիքս գումարները նշանակէք իմ անձնական հաշուոյն փոխարինաբար վերցրած:

Կովկասէն մեկնելիս հետս բերի հազար տոլլար անձնական դրամ իմ ընտանիքիս պէտքերուն համար այն հաշուով որ յետոյ նորէն հնարաւորութիւն պիտի ունենայի Կովկասէն դրամ ստանալու իմ անձնական միջոցներէն: Ներկայումս դա անկարելի է այլեւս, որով ստիպուած պիտի լինեմ Կ.Կ.ի սնտուկէն ամսական մօտ 500 Փր.ի փոխառութիւն մ'ընել մինչեւ որ հնարաւորութիւնն ունենամ վերադարձնել այդ գումարները:

Քանի որ դրամի մասին կը խօսինք, սա էլ ըսեմ որ ինձ մօտ եղած դրամը արդէն վերջացած է, որով պիտի խնդրէի անմիջապէս կարգադրէիք այդ մասին, ապա թէ ոչ Վաշինգթոնէն չպիտի կարողանամ շարժուիլ: Այս մասին էլ մի փոքրիկ բացատրութիւն տամ թիւրիմացութեանց տեղի չտալու համար: Դեկտեմբերի վերջերին ստացածս 1000 տոլլար գումարէն 500 տոլլար ուղարկեցի ժընեւ Ամերիկեան կոմիտէի ներկայացուցիչ Dr. Chambers-ին որպէսզի նա ամսէ ամիս փոխադրէ Հալէպ իմ մօրս ու քրոջս իրենց ապրուստին համար, որով միայն 500 տոլլարը իմ վրայ ծախսած եմ այդ գումարէն:

Չմոռնամ խնդրելու որ չէքը ուղարկէք Վաշինգթոնի բանքերէն մէկի անունով եւ ոչ թէ Նիւ Եորքի վրայ ինչպէս ըրեր էիք անցեալ անգամ: 2-3 օր ժամանակ եւ մի քիչ էլ ծախս կ'առնէ Նիւ Եորքի վրայ եղած չէքերը գանձելը:

Ճիշտն ասած ես էլ կը շտապեմ դէպի Պոստոն գալու, Ամերիկացոց պաղ սուֆաթներէն գահլաս գնաց եւ ձեզ բոլորիդ կարօտնալ սկսայ, բայց հնար չկայ, մինչեւ որ որեւէ քայլ մը կատարուի ասկէ հեռանալ չեմ կարող:

Ընկերական ջերմ բարեկներով բոլորիդ
Ա. ԳԱՐՕ

114.- Ծերակոյտի:
115.- Ճէյմըս Պարթըն – Ամերիկեան Նպաստամատոյցի հիմնադիրներէն:
116.- Հենրի Մորկընթաւ (1856-1946), Միացեալ Նահանգներու դեսպան Կ. Պոլսոյ մէջ 1913-1916ին, մինչեւ Ամերիկայի մասնակցութիւնը պատերազմին Դաշնակից պետութիւններու կողմէն:
117.- Գոնրապետ Հաուզը միտապահին գլխաւոր խորհրդակցանքերէն էր:
118.- Զօրաշարժի ենթարկել:
119.- Չյամենան, չղանդաղին իմաստով:





ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Փաստ. 1406-29

Գ 9

Վաշինգտոն, 6 Մարտ 1918

Ընկերներ,

Ստացայ Հանրմեանին վերջին նամակին պատճէնը: Իմ կարծիքով իւր առաջարկը շատ նպատակայարմար է մեզ համար եւ ինքը շատ յարմար այդ պաշտօնին: Ես էլ իրեն հետ համակարծիք եմ որ մեր ներկայացուցիչը Պատուիրակութեան մէջ պէտք է անպատճառ նիւթապէս անկախ լինի Պատուիրակութենէն: Հետեւաբար պիտի առաջարկէի որ այս խնդիրը իւր ըսած ձեւով ընդունիք եւ Կ. Կ. ը ստանձնէր անոր նիւթական հոգսը¹²⁰:

Այս երկու օրս Mr. Little-ի հետ երեսփոխաններուն եւ սենաթորներուն մէջ ազիթասիտն կ'ընենք մեր հարցին շուրջը: Շատ սրտանց կ'աշխատի մարդը: Երէկ բոլոր երեսփոխաններու եւ սենաթորներու առաջին առանձին անհատական նամակներով ուղարկութիւննին հրաւիրեց իւր ճառին վրայ, որը ինչպէս կը տեսնէք վերջին օրը տպագրութենէն առաջ որոշ փոփոխութեան ենթարկեցինք յարմարեցնելով ներկայ դրութեանը: Ներփակ կ'ողորակեմ իւր գրած նամակին օրինակը:

Ինչպէս գիտէք Ազգ. միութեան միջոցներով մօտ 50 հազար օրինակ այդ ճառէն պիտի տպագրենք ցրուելու համար ամէն կողմ: Այսօր մի քանի երեսփոխաններ խնդրել էին Mr. Little-էն որ հազարական օրինակ էլ իրենց հաշուոյն տպագրուի որպէսզի ուղարկեն իրենց շրջանները: Այս փաստը ցոյց կու տայ թէ որքան հետաքրքրութիւն առաջ կը բերէ այդ ճառը երեսփոխանական շրջաններուն մէջ: Նոյն ճառէն մէկ մէկ օրինակ էլ առանձին նամակներով պիտի ուղարկէ նախագահին եւ Mr. Lansing-ին: Մէկ խօսքով մարդը դաշնակցական շինեցի, ես իրեն colonel կ'ըսեմ նա էլ ինծի capitaine:

Ընկերական ջերմ բարեկներով բոլորիդ
Ա. ԳԱՐՕ

Փաստ. 1406-31

Գ 10

Վաշինգտոն, 9 Մարտ 1918

Ընկերներ,

Ստացայ ձեր 7 Մարտ թուակիր նամակը ինչպէս նաեւ ներփակեալ 100 տոլլարի չէքը ու Լ. Շանթի նամակը: Քանի որ նամակը բաց էք ստացած, անշուշտ կարդացած կը լինէք, որով ձեզ ետ չեմ ուղարկի:

Պիտի խնդրէի որ որչափ կարելի է շուտ կարգադրէիք անոր դրամական հաշիւները եթէ մինչեւ հիմա չէք կրցած ընել:

Իմ մեկնումս ասկէ արդէն կ'ուշանայ: Այսօր Սենատի Արտաքին գործոց յանձնախումբին նախագահ Սենաթոր Stone-ին [հետ] տեսնուեցայ եւ խնդրեցի որ ինքը եւս անձամբ տեսնուի Mr. Lansing-ին հետ իմ ըրած դիմումին ընթացք տալու համար: Ինձմէն խնդրեց մի նոր աւելի մանրամասն տեղեկագիր ներկայացնել իրեն որպէսզի գալիք չորեքշաբթի յանձնախումբին քննութեանց նիւթ դարձնէ մեր հարցը: Հաւանական է որ ես ինքս անձամբ էլ բացատրութիւններ տալու ստիպուած լինեմ յանձնախումբին:

Եթէ նոր կարեւոր գործ մը չպատահի, պիտի աշխատիմ անպատճառ գալիք շաբաթ օրը ձեզ մօտ լինել:

Ընկերական ջերմ բարեկներով
Ա. ԳԱՐՕ

120.- Արտաւազդ Հանրմեանը (1878-1945) նախապէս ներկայացուցիչն էր Հ.Յ.Դ. Եզիպտոսի Կոմիտէին, ապա անցած Փարիզ, ուր Պօղոս Նուպարի գլխատրած Ազգ. Պատուիրակութեան կողմէ մաս կազմած էր եռանդամ այն պատուիրակութեան, որուն վստահուած էր Ամերիկայի մէջ հայկական տարբեր կուսակցութիւններու եւ կազմակերպութիւններու միջեւ համերաշխութիւն գոյացնելու առաքելութիւնը: Փարիզ վերադարձին, նոյն Ազգ. Պատուիրակութեան կողմէ հրաւիրուած ըլլալով գործավար-քարտուղարութեան, ան պիտի չուզէր վճարովի այդ պաշտօնը ստանձնել: Ի վերջոյ, Արմէն Գարոյի յանձնարարութեամբ, Ամերիկայի Կեդր. կոմիտէն յանձն առաւ անոր աշխատավարձին հայթայթումը, ենթակային կողմէ «Հայրենիք» պաշտօնաթերթին աշխատակցութեան փոխարէն:





Փաստ. 1406-32

Գ 11

Վաշինգթոն, 11 Մարտ 1918

Ընկերներ,

Ձեր Մարտ 8 թուակիր նամակը եւ ներփակեալ 400 տոլլարի չէքը շնորհակալութեամբ ստացայ երէկ: Ինչպէս երէկուայ նամակովս ալ ըսի, պիտի աշխատիմ այս շաբթու անպատճառ գալ ձեզ մօտ, հաւանական է որ ուրբաթ կամ շաբաթ լինեմ Պոստոն:

Այս երկու օրս մի քանի դիմումներ եւս ունիմ ընելիք: Mr. Lansing-ը ներկայումս այստեղ չէ: Իմ իրեն նամակը ներկայացրածս օրը իսկ մեկնեցաւ 10-15 օրով հանգստանալու, հետեւաբար մինչեւ այսօր ոչ մի պատասխան չունեմ իրմէն, եւ լաւ է որ այսպէս եղաւ: Մինչեւ անոր վերադարձը իր շուրջը եղողները այնքան պատրաստուած պիտի լինեն որ յոյս ունիմ թէ մերժում չենք ստանալու:

Ի միջի այլոց, Mr. Little-ի ճառը շատ մեծ տպաւորութիւն է թողուցած այստեղի երեսփոխաններուն եւ սենատորներուն վրայ, եւ բոլորին խօսակցութեան նիւթն է հիմա:

Senator Stone-ին¹²¹ ներկայացնելիք տեղեկագիրս, որը վաղը պատրաստ պիտի լինի, մտադրութիւն ունիմ մի հազար օրինակ թայփրայթ ընել տալ¹²² եւ ուղարկել բոլոր երեսփոխաններուն ու senator-ներուն: Ժամանակ չկորցնելու համար հետս կը բերեմ Պոստոն եւ այդտեղէն կ'ուղարկենք:

Վերջին օրերս London-էն մամուլին մէջ երեւցած իրար յաջորդող հեռագիրները ինձ մտածել կու տան թէ վերջապէս Անգլիացիք իրենց քունէն արթնցել են եւ լուրջ ուշադրութեան նիւթ են ըրած կովկասի մեր դրութիւնը, որը իրենց համար ալ վտանգաւոր հետեւանքներ կարող է ունենալ: Հետեւաբար ձեռքերնէն եկածը պիտի ընեն օգնութեան հասնելու համար:

Բայց այդ արգելք չի լինելու որ մենք աշխատինք Ամերիկայի օգնութիւնը եւս հասցնելու:

Աւելի մանրամասն կը խօսինք երբ Պոստոն լինեմ:

Առայժմ ցտեսութիւն կ'ըսեմ ընկերական ջերմ բարեւներով բոլորիդ:

Ա. ԳԱՐՕ

Փաստ. 1406-43

Գ 12

Նիւ Եորք, 28 Մարտ, 1918

Ընկերներ,

Երէկ տեսնուեցայ Col. House-ի մօտիկ մարդոց հետ. իրենց ըսելով Ջատկէն յետոյ միայն լինելու է Վաշինգթոն: Միւս կողմէն ի նկատի առնելով որ այս տօներու առթիւ շատերը պիտի բացակային, որոշեցի մինչեւ գալիք երկուշաբթի մնալ այստեղ:

Եթէ որեւէ նոր լուր ստանաք ինդրեմ անմիջապէս ինձ հաղորդէք:

Լաւ կը լինէր որ Հանրմեանի նամակին ամբողջութիւնը չհաղորդէիք բոլոր ընկերներուն. մանաւանդ Անդրանիկի ըրած յիմարութիւնը շատ սեղմ շրջանակներու մէջ պահելու է առայժմ. վհատեցնելէ զատ ոչինչի չի ծառայելու այդ լուրին տարածումը¹²³:

Այս անգամ այս հոթէլին մէջ հազիւ տեղ գտայ: Նամակ կամ հեռագիր այստեղ ուղղեցէք:

Ընկերական բարեւներով՝
Ա. ԳԱՐՕ

121.- Ծերակուտական Սթոն: Միացեալ Նահանգներու Ծերակոյտի արտաքին գործերու կոմիտէի նախագահ:
122.- Մեքսիկացի տալ:
123.- Տես այս մասին էջ 52, աւելի մանրամասն՝ էջ 176:





ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Փաստ. 1406-48

Գ 13

[Նիւ Եորք], 3 Ապրիլ 1918

Ընկերներ,

Ինչպէս կը տեսնէք նամակէս դեռեւս այստեղ եմ: Այսօր Գիւլպէնկեանները յանձն առան Կովկաս փող փոխադրել Լոնդոնի միջոցաւ. եւ որովհետեւ Կովկասի մէջ անգլիական ոսկին աւելի արժէք ունի, անգլիական ոսկիով պիտի փոխադրեն:

Մենք այստեղ իրենց կը յանձնենք դոլլարի եւ ստերլինկի հաշուով, իսկ իրենք կը հեռագրեն Լոնդոն որ Թիֆլիս հանեն այսքան ոսկի:

Հետեւաբար պիտի խնդրէի որ անմիջապէս գոնէ 30,000 դոլլարի մի գումար փոխադրէք այստեղ որպէսզի իրենց յանձնեմ Թիֆլիսի համար: Չուշացնէք:

2-3 օր եւս մնալու եմ այստեղ եւ լաւ կը լինէր որ ես անձամբ ընէի այդ փոխադրութիւնը:

Ընկերական բարեւաններով
Ա. ԳԱՐՕ

Հասցէս նոյնն է (Knickerbocker Hotel):

Փաստ. 1406-49

Գ 14

Նիւ Եորք, 6 Ապրիլ 1918

Ընկերներ,

Ստացայ ձեր 5 թուակիր նամակները:

Այսօր իսկ կը մեկնեմ Washington, որով անկարող պիտի լինեմ վաղուայ ձեր ժողովին ներկայ լինելու:

Գալով Կովկաս դրամ փոխադրելու խնդրին, ինձ կը թուի թէ ձեր կասկածները Գիւլպէնկեաններու մասին անհիմն են. եւ յետոյ, ձեր ըսած ձեռով ալ անյարմար է այդ բանը ընել: Միակ միջոցը այն կը լինի որ այդ գումարը յանձնուի իրենց այստեղ եւ իրենցմէն մի թուղթ ստացուի որով իրենք կը պարտաւորուին այդ գումարը փոխադրել: Երբ մենք Կովկասէն լուր կ'առնենք թէ դրամը ստացել են, Գիւլպէնկեաններու ստորագրութիւնը իրենց ետ կու տանք:

Այսօր ես կ'աշխատեմ Պարոյրեանին տեսնել եւ իրեն հետ խօսել այդ մասին: Թող Պարոյրեանը կարգադրէ անոնց հետ: Յամենայնդէպս աշխատելու է օր առաջ այդ գումարը Կովկաս հասցնել: Ես պիտի աշխատեմ այս անգամ Վաշինգթոնէն հեռագրական յարաբերութեան մէջ մտնել Թիֆլիսի հետ եւ իրենց պիտի հեռագրեմ թէ Գիւլպէնկեաններու միջոցաւ 6000 Աճգլ. ոսկի պիտի ուղարկուի Երուանդ Տէր Մինասեանի հասցէով:

Այսօրեւս ինձ յաջողուեց ստանալ շատ զօրաւոր յանձնարարականներ, մէկը Col. House-ին եւ միւսը Mr. Creel-ին ներկայանալու համար: Ինձ խորհուրդ կու տան ուղղակի անոնց դիմել Կովկաս դրամ ուղարկելու գործը յաջողցնելու համար:

Էրզրումի վերագրաւման լուրը եթէ հաստատուի շատ յատկանշական է, դա արդէն ցոյց կու տայ նաեւ թուրքերու թուլութիւնը եւ մերոնց բաւական ուժ հաւաքելը:

Վաշինգթոնէն աւելի երկար կը գրեմ երբ ծանօթանամ վերջին լուրերուն հետ:

Իմ Շմաւոնեանին գրած նամակիս պատմութիւնը ես արդէն գիտէի, դա արդիւնք է անոր ապրած օթէլին վրայ եղած խիստ հսկողութեան. այդ օթէլին մէջ ձերբակալուեցան Պոլսէն եկած այն լրտես կիւնն ու պարոնը որոնց մասին գրուեցաւ:

Ընկերական բարեւաններով
Ա. ԳԱՐՕ





Փաստ. 1406-54

Գ 15

Վաշինգթոն, 12 Ապրիլ 1918

Ընկերներ,

Այստեղ Կովկասէն ոչ մի լուր չկայ հինգ շաբաթէ ի վեր, որով ենթադրուում է որ Պարսկաստանի հեռագրաթե-լը եւս կտրուած է:

Ասկէ 1½ շաբաթ առաջ Senate Committee of foreign Affairs-ը¹²⁴ ի նկատի է առած իմ ներկայացրած գրութիւնը նախագահ Stone-ին եւ յանձնարարել է իրեն տեսնուել Mr. Lansing-ին հետ այդ հարցի առթիւ: Senator Stone արդէն խօսակցութիւն է ունեցել Mr. Lansing-ին հետ, բայց թէ ինչ եզրակացութեան են եկած, դեռ եւս չկարողացայ իմանալ: Ճիշտ այն օրը որ ինձ ժամադրութիւն էր ըրած տեսնուելու, կաթնուածով հիւանդացաւ: Սա էլ մեր բախտն էր:

House Committee-ի նախագահը տեսայ, այսքանը ինձ յայտնեց որ Mr. Lansing-ը շատ sympathique է այդ առաջարկին, բայց դեռ եւս ոչ մի գործնական քայլ չէ առած:

Նախարարութեան ստորադաս պաշտօնեաներէն Յ հոգու հետ տեսնուեցայ, բոլորն ալ համակարծիք են որ անհրաժեշտ է նիւթական աջակցութիւն հասցնել Կովկաս, միայն հարցի դիւանագիտական կողմը մի քիչ իրենց համար դժուար կը թուի (չէ՞ որ Թուրքիոյ հետ պատերազմի մէջ չեն...), բայց իմ տուած բացատրութիւններս, թէ Կովկասը Ռուսաստանի մասն է, եւ որ ասկէ առաջ էլ հարիւրաւոր միլիոններ տրամադրուեցան Ռուսաստանին, գոհացուցիչ երեւցաւ իրենց:

Այս երկու օրս երբ իմանամ նախարարին պատասխանը, ըստ այնմ էլ պիտի դիմեմ աւելի ազդեցիկ շրջանակներու աջակցութեանը:

Կարնոյ վերարգաւման լուրը ոչ հաստատուեց եւ ոչ ալ հերքուեցաւ:

London-ի յարաբերութիւնները եւս կտրուած են Կովկասի հետ ներկայումս, որով լաւ կը լինի առայժմ սպասել 30,000ի փոխադրութեան համար:

Անդրանիկի¹²⁵ ընթացքին առթիւ Փարիզ տուածս հեռագրին պատասխանը ստացայ որը հետեւեալն է.

«Կովկասի հետ ամէն յարաբերութիւն կտրուած է ներկայիս. բայց քանիցս մենք արդէն չափաւորութեան եւ միաբանութեան խորհուրդներ տուած ենք Անդրանիկին: ՆՈՒՊԱՐ»:

Այստեղ գալով իմացայ թէ Գիւլիզեանը ինչ խաղեր է խաղացած: Զինուած մի շարք յանձնարարականներով ներկայացել է ալ ու ձախ իբր հայերու կողմէն ներկայացուցիչ եւ զանազան առաջարկներ է ըրած, ի միջ այլոց մի միսիոն ուղարկել Կովկաս Ամերիկեան կառավարութեան կողմէն, որին գլուխը ինքը պիտի անցնի իբրեւ գինուորական կրթութիւն ստացած անձ: Եւ որովհետեւ իրեն պատասխանել են թէ քանի որ Ամերիկեան պատերազմի մէջ չէ¹²⁶, անյարմար է գինուորական միսիոն ուղարկել: Պարոնս գացել գտել է Mr. Little-ը եւ անոր հրաւիրել է որ Պոստոն գայ մի միթինկ կազմելու, ուր պահանջեն պատերազմի հրատարակուած Թուրքիոյ դէմ, եւ իւր այս բոլոր դիմումներուն մէջ միշտ կը խառնէ եղեր իմ, Dr. Barton-ի, Շմաւոնեանի¹²⁷ եւ Dr. Peet-ի անունները, որ իբր թէ մենք բոլորս էլ իրեն համակարծիք ենք: Մէկ խօսքով այս հէրիֆը համը կը տանի արդէն, թէեւ ես իրեն շատ քաղաքավարի կերպով հասկացուցի Պոստոն եղած միջոցիս, որ այդ տեսակ դիմումներու համար ունինք արդէն կազմակերպուած մարմիններ եւ ներկայացուցիչներ, բայց այս բոլորը իրեն համար նշանակութիւն չունեցաւ. մարդը իւր գործը կ'ուզէ առաջ քշել:

«Պահակ»ը արդէն գրել է այդ մասին. լաւ կը լինէր որ Հայրենիքն էլ նոյն ոճով մի բան գրէր եւ թերթէն մէկ օրինակ իւր անգլերէն թարգմանութեամբը ուղարկուէր իրեն, Dr. Barton-ի եւ Miss Blackwell-ին, ինչպէս նաեւ Mr. Little-ին այստեղ: Քանի ուշ չէ պէտք է այդ ավանթիւրիստի դիմակը պատուել:

Այստեղ ինձմէն խնդրեցին մանրամասն տեղեկութիւններ տալ այս անձնաւորութեան մասին:

John Isaiah Taminosian
4912 Chicago st.
Omaha, Nebraska

124.- Ծերակոյտի արտաքին գործերու կոմիտէ:
125.- Չօր. Անդրանիկ Օգանեան:
126.- Նկատի ունի Թուրքիան, որուն դէմ, ի տարբերութիւն Աւստրո-Գերմանիոյ, Միացեալ Նահանգները պատերազմ չէին յայտարարած:
127.- Արշակ Ծնաւոնեան – Պոլսոյ ամերիկեան դեսպանատան նախկին թարգման:





ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Եթէ այդ քաղաքին մէջ ունինք ընկերներ, խնդրեմ անմիջապէս գրէք որ մանրամասն տեղեկութիւններ հաւաքեն եւ ուղարկեն, առանց իրեն զգալ տալու որ իրմով կը հետաքրքրուին:

Սաչաքլեանէն¹²⁸ կը խնդրեմ որ շուտով հասցնէ իմ rapport-ի տպուած օրինակները, ինչպէս նաեւ իմ հասցէին թերթ ուղարկելը չմոռնայ կարգադրել:

Ընկերական ջերմ բարեկներով
Ա. ԳԱՐՕ

Փաստ. 1406-55

Գ 16

Վաշինգթոն, 16 Ապրիլ 1918

Ընկերներ,

Ստացայ ձեր 11 Ապրիլ նամակը եւ ներփակեալ Հայաստանի բիւրոյին շրջաբերականը: Ինչպէս նաեւ Վ[ետտ] Հոպոքընի ընկերներու հրահանգը: Թէեւ ինձ համար շատ անցանկալի է այս օրերս Վաշինկթոնէն հեռանալ, բայց ինչ արած, այս անգամ մէկ օրով պիտի երթամ:

Անցեալ շաբաթ ամբողջ գնացի ու եկայ զանազան մարդոց մօտ եւ վերջապէս յաջողեցայ համոզել S[tate] D[epartment]ի մարդոց որ հնարաւոր է Կովկասի հայութեան դրամական աջակցութիւն հասցնել առանց ստիպուած լինելու պատերազմ հրատարակելու Թուրքիոյ դէմ:

Գումարի մասին ոչ մի ակնարկութիւն չկայ, միայն պատշաճութեան եւ հնարաւորութեան մասին էր խօսքը: Երէկ վերջապէս որոշեցին իմ առաջարկած ձեւով կարգադրել, այսինքն՝ անգլիական կառավարութեանը յանձնել գումարը եւ անոր միջոցաւ էլ փոխադրել:

Այս նպատակաւ երէկ հեռագրեցին Փարիզ՝ իմանալու համար Վերսայլի ժողովին¹²⁹ կարծիքը, յայտնելով իրենց որ հայերու կողմէն իրենց դիմում եղած է 20 միլիոն տոլարի դրամական աջակցութիւն խնդրելով. եթէ Դաշնակիցները նպատակաւարմար կը գտնեն, ամերիկեան կառավարութիւնը պատրաստ է այդ գումարը տրամադրել: Յոյս ունեմ որ Փարիզէն յաջող պատասխան մը գայ եւ այս օրերս վերջնականապէս կարգադրուի այս հարցը:

Կովկասէն նոր լուր չկայ:

Հայկական հարցին մասին մեր ներկայացրած տեղեկագիրը շատ համակրական ընդունելութիւն է գտած այս տեղի շրջաններուն մէջ¹³⁰: Իրաւունք պիտի խնդրեմ անպաշտօն կերպով մի քանի հազար օրինակ տպել տալու եւ ցրուելու քաղաքական շրջաններուն մէջ:

Թերթի մասին դիմեցի Mr. Little-ի աջակցութեանը: Երէկ նա մի նամակ գրեց Post-master-ի օգնականին. եթէ այս միջամտութիւնն ալ օգուտ չունեցաւ, S[tate] D[epartment]ի միջամտութեան եմ դիմելու:

Գիգէլեանի մասին գրածներս չմոռնաք: Այդ պարունը հանգիստ չի կենալու մինչեւ որ մի լաւ դաս չստացայ: Երէկ մի նամակով դիմել էր Շմաւոնեանին եւ անոր ու իմ կարծիքս կ'ուզէր իմանալ «Transcript»-ի խմբագրականի մասին, որը անշուշտ իւր միջամտութեամբ էր գրուած: Իրեն կարճ խելքովը կ'աշխատի պատերազմ հրատարակել տալ Թուրքիոյ դէմ որպէսզի ինքը հնարաւորութիւն ունենայ օֆֆիսիէի պաշտօն ստանալ եւ յատուկ միսիոնով Կովկաս գնալ: Ոչ Շմաւոնեանը եւ ոչ էլ ես չենք պատասխանելու իւր հարցումին: Լաւ կը լինէր որ իւր մասին մեր թերթին մէջ գրուածը թարգմանաբար ուղարկէք նաեւ «Transcript»-ին:

S[tate] D[epartment]ը նամակով մը դիմեց Dr. Barton-ին, յայտնելով որ D-ը շատ ուրախ պիտի լինի դիմելու իւր նախագահութեանը տակ կազմուած հայանպատ ամերիկեան կոմիտէի խորհուրդներուն՝ դիմելու հայկական հարցին մասին, որով այդ Կոմիտէն պաշտօնապէս ճանչցուեցաւ D[epartment]ի կողմէն:

Այս լուրերը ձեզ կը հաղորդեմ ի գիտութիւն եւ ոչ թէ թերթին մէջ հրատարակելու:

Ընկերական ջերմ բարեկներով
Ա. ԳԱՐՕ

128.- Սահարն Սաչաքլեան – վարչական պատասխանատու «Հայրենիք» օրաթերթի:

129.- Փարիզի հարաւ գտնուող քաղաք, ուր պատերազմի ատարտէն արդէն, Դաշնակից պետութիւններու ղեկավարներուն մասնակցութեամբ, կը գումարուէր Վերսայլի վեհաժողովը: Վերսայլի պալատին մէջ, 28 Յունիս 1919-ին պիտի կնքուէր Խաղաղութեան առաջին դաշնագիրը Դաշնակից յաղթական պետութիւններու եւ պարտեալ Գերմանիոյ միջեւ:

130.- Արտաքին գործոց նախարար Ռ. Լեմսինկին ուղղեալ Արմէն Գարոյի 4 Մարտ 1918 թ.տեղեկագիրը, տեսնել էջ 71-72:





Փաստ. 1406-57

Գ 17

Վաշինգթոն, 19 Ապրիլ 1918

Ընկերներ,

Երէկ ստացայ Վարանդեանի նամակին պատճէնը ինչպէս նաեւ Հանրմեանի հեռագիրը Կովկասի մասին: Հեռագիրը անմիջապէս հաղորդեցի S[tate] D[eartment]-ին, ուր շատ լաւ տպաւորութիւն թողուց հեռագրի վերջին մասը, որ կ'ըսէ թէ Վանը վերագրաւուած է հայերու կողմէն:

Փարիզէն դեռ պատասխան չկայ: Վարանդեանի նամակին այն մասը թէ մինչեւ հիմա 1-2 միլիոն են փոխադրած, իմ վրայ շատ վատ ազդեց. դա արդէն ցոյց կու տայ թէ որ չափով Դաշնակիցները ըմբռնած են Կովկասի հարցի կարեւորութիւնը: Նոյեմբերէն սկսած այս crise-ը¹³¹ գոյութիւն ունի եւ հազիւ մի քանի միլիոն ռուբլի բարեհաճել են ուղարկել:

Իրենց այդ հոգեբանութիւնը ի նկատի առած կը վախնամ թէ Վերսալլէն թէրս պատասխան մը տան S[tate] D[eartment]-ի հեռագրին: Այն ատեն ինձ կը մնայ հարցը տանիլ նախագահին մօտ իւր անձնական բարեկամին միջոցաւ:

Երէկ այստեղ մի հեռագիր ստացան Թեհրանէն 17 թուակիր, ուր կ'ըսէ թէ Կովկասում սովը քանի կ'երթայ կը սաստկանայ: Հիւսիսային Պարսկաստանի մէջ եւս անկարգութիւններ սկսած են (Ատրպատական), իսկ Բագուայ համար կ'ըսէ թէ թաթարներուն եւ հայերուն ու բոլշեւիկներուն մէջ լուրջ կռիւներ տեղի ունեցած են. թաթարներէն մօտ 1000 հոգի սպանուած են:

Բոլշեւիկ ըսելով պիտի հասկնալ Բագուայ ռուս ազգաբնակչութիւնը որ մօտ 120.000 է, մեծ մասամբ բանուորներ:

Ինչպէս կ'երեւայ մերոնք լաւ դաս մը տուել են Բագու եւ որ գլխաւորն է, ռուսները մերոնց հետ են այս կռուում: Սա ինձ յոյս կու տայ որ հիւսիսային Կովկասէն օգնութեան հասնին Բագուայ եւ Գանձակի նահանգներու հայ եւ ռուս ազգաբնակչութեան ընդդէմ թաթարներուն:

Վերելի լուրը եթէ հրապարակել ուզենաք մի քիչ փոփոխութեան ենթարկեցէք եւ իբրեւ Փարիզէն եկած լուր դրէք:

Վազը գիշեր կը մեկնիմ ասկէ մէկ օրուայ համար Նիւ Եորք Վ. Հոպոքընի ճաշկերոյթին ներկայ լինելու համար, բայց պիտի խնդրէի որ առայժմ ուրիշ հացկերոյթներու հրակէրներ չուղարկէք ինձ մինչեւ որ Կովկասի դրութիւնը մի քիչ պարզուի:

Ընկերական ջերմ բարեկներով
Ա. ԳԱՐՕ

Յ. Գ.— Իմ rapport-ի տպուած օրինակները դեռ մինչեւ այսօր չստացայ:

Փաստ. 1406-60

Գ 18

Վաշինգթոն, 24 Ապրիլ 1918

Ընկերներ,

Երկուշաբթի օրը Նիւ Եորքէն դարձիս վերջապէս ձեռքս հասան Հայրենիքի ուղարկած ծրարները: Մի փոքրիկ նկատողութիւն այս առթիւ. ինձ կը թուի թէ մի քիչ աւելի շնորհքով թղթի վրայ տպուած լինէր այս բանը շատ աւելի լաւ պիտի լինէր, բայց ինչպէս կը տեսնեմ «for saving»¹³² պրոպանդանդը մինչեւ մեր տպարանը մտել է արդէն:

Մինչեւ այսօր Փարիզէն ոչ մի պատասխան չկայ S[tate] D[eartment]-ին տուած հեռագրին: Երէկ մի երկրորդ եւ

131.- Ֆրանսերէն՝ տազնապ, ճզնաժամ:
132.- Անգլերէն՝ խնայողութեան համար:





ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

աւելի մանրամասն հեռագրով նորէն S.D.ը դիմեց Վերսայի Վեհաժողովին ուշադրութիւնը հրաւիրելով Կովկասի տազնապալի դրութեան վրայ: Տեսնենք պատասխանը երբ կու գայ:

Կովկասէն նոր լուր չկայ: Թաւրիզէն մի հեռագիր կար երէկ, որով կը յայտնէին թէ Ատրպատականի թուրքերը եւս ոտքի ելած են: Խոյ մի քանի հայեր ու ասորիներ են կոտորած: Ուրմիոյ մէջ թուրքերը (տեղական պարսիկները) փորձել են ասորիներուն կոտորել, բայց չեն յաջողած զի այնտեղ գտնուող ասորիներէ կազմուած մի բաթալոնի¹³³ կամաւորները մի լաւ դաս են տուած թուրք ուժերին: Թաւրիզ լուր է հասել թէ որոշ թուրք թուրք զօրք անցել է պարսկական սահմանը եւ դէպի Կովկաս կ'ուզեն անցնել: Պարսիկ կառավարութիւնը ոչ մի միջոցի չէ դիմած անոնց արգելելու: Ամբողջ Ատրպատականը լիքն է գերմանական ազէնտներով¹³⁴, որոնք տեղական իսլամութիւնը կը գրգռեն դաշնակիցներուն դէմ:

Թաւրիզի ամերիկեան քոնսիւլին կարծիքը այն է որ անգլիացիք պարտաւոր են զինուորական ուժ հասցնել հարաւային Պարսկաստանին զսպելու համար այս շարժումը:

Այսօր այդ հեռագրին պատճէնը թէ Փարիզ եւ թէ Լոնտոն պիտի հեռագրուի՝ անգլիական կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրելու համար ստեղծուած կացութեան վրայ:

Այստեղէն դրամի փոխադրութեանը համար, ի նկատի առնելով Պարսկաստանի ներկայ դրութիւնը, ես առաջարկեցի հետեւեալ միջոցը.— Ամերիկեան կառավարութիւնը իր Թիֆլիսի քոնսիւլին միջոցաւ թող յանձնարարէ հեռագրով Կովկասի մեր Ազգային խորհուրդին որ նա անմիջապէս 20 միլիոնի փոխարինութիւն մը կնքէ տեղւոյն վրայ ամերիկեան կառավարութեան երաշխաւորութեամբ: Ես համոզուած եմ որ Բագուայ եւ Թիֆլիսի մեր քափիթալիստները ուրախութեամբ ընդառաջ են գնալու եւ այդ գումարը մի քանի օրում մեր Ազգային մարմնոյն ձեռքը կը լինի: Այստեղ համաձայնեցան իմ առաջարկին եւ երէկուայ Փարիզի հեռագրին մէջ յիշեցին նաեւ այս կէտը, որպէսզի դրամ հասցնելու դժուարութեանց մասին առարկութեան չընեն անոնք:

Ներկայումս ամենակարեւորը դրամի խնդիրն է. եթէ մերոնք մեծ գումարներ ունենան իրենց տրամադրութեան տակ, ներքին ճակատի վրայ էլ պիտի կարողանան կուռել եւ որ գլխաւորն է՝ հիւսիսային Կովկասէն հաց ստանալ մեր գաւառներուն համար, իսկ թաթարները այդ չեն կարողանալու ընել:

Ընկերական բարեկեցութեամբ
Ա. ԳԱՐՕ

Յ. Գ.— Վեստ Հոբոքնի ճաշկերոյթին գնացի. թէեւ օդը ցուրտ էր, բայց մերոնց միջավայրը շատ տաք էր: Թէեւ ինձ մեծ հաճոյք պատճառեց, բայց առայժմ չլինի թէ ուրիշ տեղերու խօսք տաք:

Փաստ. 1406-62

Գ 19

Վաշինգթոն, 28 Ապրիլ 1918

Ընկերներ,

Ներփակ կ'ուղարկեմ Փարիզէն ստացածս մէկ նամակին պատճէնը, գրուած Պետրոգրատէն, Փետր. 5-ին: Գրողը Պետրոգրադի հայկական կոմիտէի անդամներէն է՝ Սարուխանեան, բնիկ Տաճկաստանցի, Մանթաշեանի մօտ պաշտօնեայ: Տուած տեղեկութիւնները իմ կարծիքով շատ յուսադրիչ են. նախ այն փաստը, որ Յ հայ բոլշեւիկներ ունինք ներկայ կառավարութեան շարքերում, դա ինքնին գրաւական է որ ներկայ կառավարութիւնը իւր ձեռքէն եկածը պիտի ընէ մերոնց աջակցելու համար Կովկասի պաշտպանութեանը համար: Բագուայ վերջին դէպքերը կ'ապացուցանեն իմ այս ենթադրութիւնը: Բացի այդ, ինչպէս նկատեցիք վերջերս մեզի Մոսկուայէն զանազան հեռագիրներ կու գային թուրքերու գազանութեանց դէմ բողոքող եւ յետոյ այն որ ներկայ կառավարութիւնը 2,000,000 ռուբլի յատկացուցեր է մեր գաղթականներուն ի նպաստ եւ խոստացել է շարունակել. այս բոլորը միասին առած ինձ ենթադրել կու տան որ մերոնք Կովկասում հնարաւոր աջակցութիւնը պիտի ստանան ներկայ կառավարութենէն, հակառակ այն փաստին որ մերոնք չեն ճանչցած բոլշեւիկ ռեժիմը:

133.- Գումարտակի:
134.- Գործակալներով:





Եթէ յաջողուի մեզ մի մեծ գումար տրամադրել մերոնց եւ վրացոց Կովկասում, ես համոզուած եմ որ մեր ուժերը բաւական պիտի լինեն թէ թուրքերը կասեցնել եւ թէ թաթարներուն մի լաւ դաս տալ՝ հիւսիսային Կովկասի կողաքններուն աջակցութեամբ: Կովկասի պայքարը, ինչպէս կը տեսնէք, վերջի վերջոյ կը վերածուի մեր հին հարցին, այսինքն քրիստոնէութեան եւ իսլամութեան պայքարն է որ տեղի կ'ունենայ հակառակ մեր տհաս sociologue-ներու ցանկութեանց ու նախատեսութիւններուն: Մէկ կողմը հայ, վրացի, ռուս, ասորի եւ յոյն, իսկ միւս կողմը թուրք, թաթար, լեզգի, քիւրտ ու պարսիկ: Մեր հասարակ ժողովուրդը իր բնազդով այս բանը կը նախատեսէր, իսկ մեր դպրոց տեսած եւ գանազան համալսարաններ չափած ինտելիգէնտ երիտասարդութեանը այս գոեհիկ իրականութեանը հասկանալի դարձնելու համար հարկաւոր էին այսպիսի արիւնալի demonstration-ները: Ես գուցէ իմ բաժնիս աւելի ուրախ պիտի լինէի որ այս դառն օրերուն թափուած եւ թափուելիք արեան մէջ բաժինը ընկնէր ոչ թէ սասունցի, շատախեցի, դարաբաղցի կամ աբարանցի հայ շինականին ու արհեստաւորին, այլ այն պոռոտախօս եւ մեծամիտ երիտասարդութեանը որը մեծ քաղաքներում նստած մեծ մեծ վճիռներ կու տային Արեւելքի այդ յետամնաց անկիւնում: Ինչ որ է: Թողնենք այս հարցերու պարզաբանութիւնը յետոյ:

Փարիզէն դեռ պատասխան չկայ այստեղի երկու հեռագիրներուն: Մտադիր եմ այս երկու օրս նորէն դիմել Mr. Lansing-ին:

Ընկերական ջերմ բարեկներով՝
Ա. ԳԱՐՕ

Փաստ. 1406-63

Գ 20

Վաշինգթոն, 4 Մայիս 1918

Ընկերներ,

Ներփակ կ'ուղարկեմ Հանրմեանի նամակը, որը անշուշտ նկատողութեան կ'առնէք: Իւր գրածներէն ես այն եզրակացութեան կու գամ որ Փաշան չ'ուզեր Պատուիրակութեան միջոցներով հոգալ անոր ծախսերը: Մենք չենք կարող Փաշայի վրայ ազդել որ նա ուրիշ կերպ ընէ, բայց մենք կարող ենք Հանրմեանին Փարիզ պահել, ուր անոր ներկայութիւնը իմ կարծիքով ներկայ պայմաններուն մէջ չափազանց օգտակար է թէ մեր կուսակցական տեսակէտէն եւ թէ ընդհանուր տեսակէտէն: Հետեւաբար Կ. Կ. ին կը մնայ այդ հարցը նորէն քննութեան առնել եւ անհրաժեշտ կարգադրութիւնը ընել: Ինձ կը թուի թէ Փաշան չ'ախորժիր Հանրմեանի ներկայութեան ճիշդ անոր համար որ Հանրմեանը շատ էլ պէլի էֆէնտիմ¹³⁵ ըսողներէն չէ, եւ ընդհանուր գործին շահուն տեսակէտէն մեզ հարկաւոր է այդպիսի մէկուն ներկայութիւնը Փարիզ: Մնացածը ձեր գիտնալիքն է:

Այս շաբաթն ալ անցաւ առանց Փարիզէն պատասխան մը ստանալու, բայց ինչպէս թերթերու մէջ կարդացիք այս անցած չորեքշաբթի եւ հինգշաբթի օրերը Abbeville-ի¹³⁶ մէջ տեղի է ունեցած Դաշնակիցներու պատերազմական Խորհուրդը, ուր յոյս ունիմ թէ Կովկասի դրութեան մասին էլ որոշումներ տրուած կը լինեն, որովհետեւ անցեալ շաբաթուայ S[tate] D[eartment]ին տուած երկար հեռագրին մէջ ամերիկեան կառավարութիւնը Դաշնակիցներուն լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրէր Կովկասի տագնապալից դրութեանը վրայ եւ կը խնդրէր շուտափոյթ պատասխան: Ի միջի այլոց, կը շեշտէր որ թէեւ ներկայումս Կովկասի հետ յարաբերութիւնները բոլորովին խզուած են, բայց հիմնուելով իմ տուած հաւաստիքներուն վրայ, կ'ըսէր որ հնարաւոր է Կովկասի մէջ տեղական մի փոխառութիւն ընել անմիջապէս, եթէ Դաշնակիցներու երաշխաւորութիւնը ապահովուի տեղական Հայ Ազգային Խորհուրդին¹³⁷:

Չեմ կարծեր թէ Դաշնակիցներու Խորհուրդը այս առաջարկին դէմ որեւէ առարկութիւն կարողանայ ընել, եւ յոյս ունիմ որ այս օրերս մի որեւէ պատասխան կը ստացուի այստեղ:

Կարսի գրաւումը անշուշտ ձեզ ալ բաւական ընկճած կը լինի, բայց անոր յաջորդող այն լուրը, թէ Բաղդադի անգլիական բանակը սկսել է լուրջ կերպով դէպի հիւսիս շարժուիլ, ինձ մի քիչ կը յուսադրէ Կովկասի դրութեան

135.- Այո էֆէնտիմ – իլու-հնագանդ:
136.- Ապպելիլ – քաղաք Ֆրանսայի Փիքարտիա նահանգին մէջ:
137.- Հայ Ազգային Խորհուրդը ընտրուած էր 1917 թ. Սեպտ.-Հոկտեմբեր ամիսներուն Թիֆլիսի մէջ գումարուած Ազգ. Համագումարին կողմէ, փոխարինելու համար նախկին Ազգ. բիւրոն:





ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

մասին: Եթէ ճիշդ է այն ենթադրութիւնը թէ անգլիացիք որոշել են անմիջական կապ հաստատել մեր կովկասեան ուժերուն հետ, այդ բանը շուտով կարող է իրականանալ, քանի որ թուրքերը ոչ մի ուժ չունին Մոսկուլի եւ Վանի մէջտեղը, եւ հիմա ստիպուած պիտի լինեն կարսի դիմացը եղած իրենց ուժերու մեծ մասը դէպի հարաւ քշել՝ անգլիացոց դիմագրաւելու համար. այս պարագան ի հարկէ մերոնց հնարաւորութիւն է տալու իրենց ուժերը հաւաքելու գալիք նոր կռիւներուն համար:

Այս շաբաթ նորէն հիւանդ էի. այնքան ծաղրեցի մեր հիւանդութեան սիրահար վարանդեանին ու Ահարոնեանին, որ ես էլ ի վերջոյ անոնց օրին ընկայ: Մի քանի անգամ գնացի բժշկին. դեռ եզրակացութեան չէ եկած, բայց առ այժմ իւր տպաւորութիւնը այն է որ ջղային ընդհանուր թուլութենէն առաջ կու գայ թէ իմ գլխի ցաւերս եւ թէ մարսողութեան անկանոնութիւնս:

Ընկերական ջերմ բարեկներով՝
Ա. ԳԱՐՕ

Փաստ. 1406-69

Գ 21

Վաշինգթոն, 11 Մայիս 1918

Ընկերներ,

Վերջապէս կարողացայ ստանալ Հայրենիքին եւ Ասպարէզին «Ֆերմանները»: «Հայրենիք»ինը ներփակեալ կ'ողորկեմ: Այսքան ուշանալուն պատճառը դարձեալ մեր ազգային հին ցաւին գոյութիւնն է. այսինքն, հայ հրատարակիչներէն մէկը, որի անունը ինձ չըսին ի հարկէ, «ազնուութիւնն» է ունեցած Post Master-ի ուշադրութիւնը հրաւիրել այս երկու թերթերուն վրայ իբրեւ վտանգաւոր սոցիալիստական թերթերու: Ինչպէս նախորդ անգամ, այս անգամ էլ բացատրեցի իրենց թէ ինչ տեսակ սոցիալիստներ են մերոնք, եւ ի վերջոյ խնդրեցի որ դիմեն State Department-ի կարծիքին եթէ իմ վկայութիւնս անբաւարար կը գտնեն: Այդպէս էլ ըրին, եւ վերջապէս համոզուեցին որ մեր թերթերը անվտանգ են:

Այս շաբաթն էլ անցաւ առանց Փարիզէն լուր մը գալու: Երէկ նորէն մի գրութեամբ դիմեցի Mr. Lansing-ին, նոյն հարցի մասին, գրութեանս տակ իւր քարտուղար Mr Crone-էն խնդրելով որ նախարարին անձամբ խօսի այս մասին:

Այստեղի իմ բարեկամներու խորհուրդով դիմեցի նաեւ Mr. Morgenthau-ին որ ինքը եւս անձամբ գայ Վաշինկթոն նախագահին հետ խօսելու այս հարցի շուտափոյթ կարգադրմանը համար:

Կովկասէն ոչ մի լուր չկայ: Մոսկուա տրուած հեռագրին ալ պատասխանը չեկաւ մինչեւ այսօր: Անցեալ օրը Թաւրիզէն մի հեռագիր եկաւ, որով կը յայտնուէր թէ թուրքերը խոյր գրաւել են: Ինչպէս կ'երեւայ, այդ փոքր-թիւ թուրքական ուժերն են որոնք ասկէ մի քանի շաբաթ առաջ անցել էին պարսկական սահմանը Համատանի կողմերը: Թուրքերու այս շարժումը նպատակ ունի անշուշտ կապ հաստատելու Երեւանի նահանգի եւ Բագուի թաթարներուն հետ Ջուղայի վրայով եւ առաջն առնելու անգլիական որեւէ expedition-ի Պարսկաստանէն դէպի Կովկաս: Ներկայ պայմաններում մերոնց Վանի մէջ մնալը շատ վտանգաւոր կը լինի. հաւանական է արդէն քաշուած լինեն դէպի Երեւան¹³⁸:

Ամսուս 15ին գնալու եմ Ֆիլիտալֆիա ուր 16-17ին մի հաւաքոյթ կայ Mr. Taft-ի¹³⁹ նախագահութեանը տակ:

Այս առթիւ մերոնց ալ կը տեսնեմ, բայց լաւ կը լինէր որ ինձ յայտնէիք մեր այնտեղի աչքի ընկնող ընկերներուն անունները: 18-ին, Կիրակին մերոնց հետ կ'անցնեմ, իսկ Երկուշաբթի կը դառնամ Վաշինգթոն, ուր լինելու է նաեւ Mr. Morgenthau:

Պիտի խնդրէի Կ. Կ.էն որ իմ անձնական հաշուէն ինձ փոխադրէիք 500 տոլլար ընտանիքիս ուղարկելու համար Մայիս, Յունիս, Յուլիս եւ Օգոստոս ամիսներուն համար. այսպիսով նախորդ ստացածս 250ի հետ միասին 750 տոլլարի պարտք մը կ'ունենամ:

Իմ մօտ եղած գումարը իմ ծախսերուն կը բաւէ մինչեւ այս ամսու վերջը: Այս շաբթու առողջութիւնս աւելի լաւ էր. բժշկին տուած դեղերը բաւական օգնեցին:

Ընկերական ջերմ բարեկներով՝
Ա. ԳԱՐՕ

138.- Արդարեւ, Ապրիլի առաջին կիսուն Վանը պարպուած էր հայ զօրքին եւ ժողովուրդին կողմէ:
139.- Վիլեամ Հովարտ Թաֆթ (1857-1930), Միացեալ Նահանգներու նախագահ 1909-1913 տարիներուն:





Փաստ. 1406-71

Գ 22

Վաշինգթոն, 21 Մայիս 1918

Ընկերներ,

Երէկ վերադարձայ Ֆիլատելֆիայէն եւ գտայ ձեր 14 թիւ նամակը, ինչպէս նաեւ ներփակեալ 500 տոլլարի չէքը, որի համար շատ շնորհակալ եմ:

Ֆիլատելֆիա 2 օր մերոնց հետ անցուցի եւ շատ գոհ մնացի երթալուս համար:

Այսօր Mr. Morgenthau-ի հետ միասին ներկայացանք Արտաքին գործոց նախարարի այն օգնականին, որը մասնաւորապէս մեր գործերով կը զբաղուի, եւ խնդրեցինք որչափ կարելի է շուտ հասցնել դրամական աջակցութիւնը կովկաս: Ինչպէս սպասելի էր նա պատասխանեց թէ իրենց տուած հեռագիրներուն ոչ մի պատասխան չեն ստացած Փարիզի Դաշնակիցներու խորհուրդէն եւ երկրորդ՝ որ իրենք, անգլիացիք եւս, անկարող են դրամ հասցնել կովկաս՝ յարաբերութիւններու խզուած լինելուն համար:

Mr. Morgenthau երկարօրէն բացատրեց կովկասեան ճակատի նշանակութիւնը եւ անհրաժեշտութիւնը ամէն գնով օժանդակութեան հասնելու մերոնց: Նախարարի օգնականը պատասխանեց թէ S[tate] D[epartment]ը եւս նոյն կարծիքի է եւ ձեռքէն եկածը չի խնայելու: Անոր այս յայտարարութեանը ես հետեւեալ առաջարկը ըրի.— քանի որ դուք ուղղակի յարաբերութիւն չունիք Թիֆլիսի հետ, հեռագրեցէք Մոսկուայի ձեր քոնսուլին որ նա այնտեղի հայկական կոմիտէի նախագահ Ստեփան Մամիկոնեանին միջոցաւ աշխատի յարաբերութեան մէջ մտնել Թիֆլիսի ձեր քոնսուլին հետ եւ յայտնէ Թիֆլիսի քոնսուլին ձեր հրամանը՝ որով դուք կ'երաշխաւորէք հայոց Ազգային խորհուրդին 20 միլիոն տոլլարի մը փոխադրութիւնը:

Mr. Philipps-ը համաձայնեցաւ իմ այս առաջարկին եւ կարգադրեց անմիջապէս որ այդ մտքով մի հեռագիր տրուի այսօր իսկ Մոսկուա իմանալու համար թէ Մամիկոնեանը կարող պիտի լինի՞ մասնաւոր courier-ով¹⁴⁰ լուր հասցնել Թիֆլիս:

Ինչպէս կը տեսնէք այս բոլորէն, դրամի քանակը կամ ուրիշ որեւէ արգելք չկայ, բայց միայն յարաբերութեանց խզուած լինելն է որ ուշացուց այս հարցի կարգադրութիւնը:

S[tate] D[epartment]ը ոչ մի լուր չունի ոչ կովկասէն եւ ոչ ալ Պարսկաստանէն:

Ներփակ կ'ուղարկեմ Ն[ուպար] փաշային երկու նամակները, որոնք կարդալով ետ կը վերադարձնէք:

Ինչպէս պիտի տեսնէք այս նամակներէն, փաշան վերջապէս նորէն եկել է այն եզրակացութեան՝ թէ պէտք է կամաւորական շարժումը շարունակել¹⁴¹: Ֆրանսական դեսպանութեանը հետ յարաբերութեան մտայ այդ հարցի մասին: Առայժմ ամերիկեան S[tate] D[epartment]ը շատ հակամէտ չէ այդ ուղղութեամբ զիջումներ ընելու, բայց ինձ կ'ըսուի որ եթէ Ազգ. միութեան անունով մի լաւ խմբագրուած դիմում լինի, ամերիկեան կառավարութիւնը հեշտութեամբ պիտի համաձայնուի որ բոլոր հայ զինուորները յանձնուին Ֆրանսացոց կամ անգլիացոց Տաճկաստանի դէմ ուղարկելու համար: Սվազլիին հետ խօսեցայ այդ մասին. Միութեան որոշումը ստանալէն յետոյ պիտի գայ այստեղ որ միասին կատարենք այդ դիմումը:

Ինչպէս լրագիրներէն կ'իմանանք, մերոնց դրութիւնը քանի կ'երթայ այնքան յուսահատական կը դառնայ. միակ լաւ լուրը այն է, որ ռուսները լուրջ կերպով օգնութեան են հասած Բագու եւ հաւանական է որ այդ ուղղութեամբ կը շարունակեն:

Ձերմ բարեկենդիվ բոլորիդ՝
Ա. ԳԱՐՕ

140.- Ֆրանսերէն՝ թղթատարով:
141.- Խօսքը անշուշտ Արեւելեան կամաւորներու կը վերաբերի. տես այս մասին Պօղոս Նուպարի նամակները, էջ 74-76:





ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Փաստ. 1406-73

Գ 23

Վաշինգթոն, 26 Մայիս 1918

Ընկերներ,

Այս շաբաթու նորէն ոչ Փարիզէն եւ ոչ ալ Մոսկուայէն որեւէ պատասխան չեկաւ S[tate] D[epartment]ի տուած հեռագիրներուն:

Ներփակ կ'ուղարկեմ մի օրինակ այն memorandum-էն որը կազմուեցաւ ամսուս 21ին մեր ունեցած խօսակցութեան առթիւ: Ինչպէս նախորդ նամակումս ըսի, յաջորդ օր նոյն մտքով հեռագրուեցաւ Մոսկուա, որի պատասխանը դեռ չէ ստացուած:

Տիկին Զօրեանէն (Ռոստոմիրն կիրնը) մի նամակ ստացայ որով շատ շնորհակալութիւն կը յայտնէ իւր ստացած 250 դոլլարին համար: Կովկասի հետ ոչ մի յարաբերութիւն չունին որով Յուլիս ամսէն սկսեալ նորէն ձեզ դիմելու է. ամսական մօտաւորապէս 50 դոլլարի պէտքն է ունենալու մինչեւ որ հնարաւորութիւնը ունենայ կովկասէն դրամ ստանալու: Նա եւս փոխարինաբար կ'ուզէ օգտուել ձեր նիւթական աջակցութենէն:

Կը սպասեմ կովկասի դրամական հարցին վերջնական կարգադրութեանը, որպէսզի փոխադրուեմ դէպի Պոստոն մի առ ժամանակ:

Ընկերական ջերմ բարեկներով
Ա. ԳԱՐՕ

Փաստ. 1406-74

Գ 24

Վաշինգթոն, 2 Յունիս 1918

Ընկերներ,

Շաբաթ մը եւս անցաւ, ոչ Փարիզէն եւ ոչ ալ Մոսկուայէն ոչ մի պատասխան չկայ S[tate] D[epartment]ին տուած հեռագիրներուն:

S. D.-ը ստացաւ 27 թուակիր (Մայիս) մի հեռագիր Մոսկուայէն, ուր կը բացատրէր թէ ինչպէս հիւսիսային կովկասի Լեռնականները (տաղստանցիք եւ չէչէնները) դիմել են գերմանական ղեկավարին Մոսկուա, որպէսզի նա միջամտէ իրենց եւ ռուս բոլշեւիկ կառավարութեանը մէջ հաշտութիւն ընելու: Անշուշտ Պոստոնի թերթերուն մէջ եւս կարդացիք վերջերս այն լուրը թէ գերմանական ղեկավարն առաջարկել է Մոսկուայի կառավարութեանը իւր միջնորդութիւնը հաշտութեան համար ռուս կառավարութեան եւ կովկասի կառավարութեանը մէջ: Այս լուրը կը վերաբերի հիւսիսային կովկասին եւ ոչ թէ մերոնց:

Հետաքրքիրը այն է որ կովկասեան Լեռնականները իրենց նոր ստեղծելիք հասարակապետութեան սահմանները կը հասցնեն շատ հեռու դէպի հիւսիս՝ իւր մէջ առնելով Don-ի շրջանի արեւելեան մասը, ամբողջ Kuban-ի շրջանը մինչեւ Կասպից ծովը, իսկ իրենց հարաւային սահմաններու որոշումը կը թողուն ապագային Անդրկովկասեան հասարակապետութեան հետ համաձայնելու:

Մոսկուայի բոլշեւիկներու կառավարութիւնը բողոքել է Լեռնականներու այդ պահանջին դէմ՝ հիմնուած այն իրողութեան վրայ թէ այդ շրջանի ազգաբնակչութեան ստուար մեծամասնութիւնը ռուսեր են (կողակներ) եւ այս վերջինները կը ցանկանան Ռուսաստանէն չբաժանուել:

Այս բոլորը ցոյց կու տան թէ գերմանական ազդեցութիւնը ինչպէս արագ կերպով կը շարժուի դէպի կովկաս, իսկ մեր բարեկամ Դաշնակիցները դեռ քնած են իշու ալանջին մէջ: Այս վերջին Յ շաբաթ մի շաբթ դիմումներ ըրի այստեղ՝ առաջարկելով մի դիւանագիտական նոր combinaison¹⁴², որը իմ կարծիքով միակ միջոցն է լինելու գերմանական առաջնադասութեան առաջը առնելու Արեւելքում, բայց տարօրինակ մտայնութեան հանդիպեցի որ մարդ կը յուսահատուի ի վերջոյ: Կարծես այս բոլոր անցուղարձին մէջ մի ինչ որ գաղտնի ուժ մեր Դաշնակից բա-

142.- Դասաւորում, հնարք:





ընկամներու աչքերը ծածկած է մի կախարդական քողով իրենց իսկ շահերը չտեսնելու համար:

Մի շատ տարօրինակ առաջարկ ստացալ վերջերս Փարիզէն եկող իմ ամերիկացի ծանօթներէն մէկուն միջոցաւ, որը ցոյց կու տայ թէ ինչպիսի մտայնութիւն ունին Դաշնակիցներու ղեկավար շրջանները: Առաջարկը անպատուաբեր լինելէ զատ անգործնական եւս էր: Այս բոլորի մասին բերանացի կը պատմեմ եբր Պոստոն գամ:

Հաւանականաբար գալիք շաբթուայ ընթացքին Մոսկուայէն պատասխան ստացուի եւ ես հնարաւորութիւն ունենամ հեռանալու Վաշինգթոնէն մի առ ժամանակ: Տաքերը սոսկալի են արդէն այստեղ:

Մօտիս դրամը վերջանալու վրայ է, որով պիտի ինդրէի գալիք նամակով դրամ փոխադրէք իմ ծախքերուն համար:

Ընկերական ջերմ բարեկներով՝
Ա. ԳԱՐՕ

* * *

Փաստ. 1406-76

Գ 25

Վաշինգթոն, 5 Յունիս 1918

Ընկերներ,

Այսօր մի լաւ լուր եւս կայ որը թէեւ դեռ չէ հաստատուած, բայց ինձ կը թուի թէ իրողութիւն է: Այսօր S[tate] D[epartment]ը Սթոքհոլմէն մի հեռագիր ստացաւ, որի համաձայն, ըստ գերմանական agence Wolfի տուած վերջին լուրերուն, անգլիացիք Բադդադի բանակէն օթոմոպիլներու միջոցաւ, Պարսկաստանի վրայով արդէն հասել են Կովկաս մերոնց օգնութեան: Այդ հեռագրին նայելով արդէն մի քանի օր է որ անգլիացիք Կովկաս են: Ոչ Պարսկաստանէն եւ ոչ ալ Մոսկուայէն այս մասին տեղեկութիւն չկայ. բայց շատ հաւանական է որ լուրը ճիշտ լինի, ապա թէ ոչ գերմանացիք իրենց համար աննպաստ այդ լուրը մէջտեղ չէին հանէ:

Երէկուայ մերոնց նոր յաղթութեան լուրը՝ Կարսի եւ Արտահանի շրջանում¹⁴³ եւ այսօրուայ այս լուրը կու գան կարծես մեզ սիրտ տալու եւ ըսելու որ դեռ ամէն բան կորած չէ, բացի այդ յաղողութեան շանսերը մեր կողմն են դառնում կամաց կամաց:

Մեր բանաստեղծ Աւոյին¹⁴⁴ ըսածին պէս մեր բախտի որոշումը մնացել է մի ինչ որ Ֆաթալ¹⁴⁵ ուժի, որին կառչած մնացել է մեր ժողովուրդը այսքան դարերէ ի վեր:

Այն յոյսով որ շուտով ուրիշ աւելի միտիթարիչ լուրեր տալու հնարաւորութիւնը պիտի ունենամ:

Ջերմ բարեկներով՝
Ա. ԳԱՐՕ

143.- Լուրը ճիշդ չէր անշուշտ:

144.- Խօսքը կը վերաբերի Աւետիք Իսահակեանին:

145.- ճակատագրական:






ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Փաստ. 1406-77

Գ 26



Վաշինգթոն, 6 Յունիս 1918

Ընկերներ,

Այսօր եղայ Անգլիական դեսպանատունը ստուգելու համար Երէկուայ լուրը՝ իրենց ունեցած վերջին տեղեկութեանց համաձայն, անգլիական զինուորական ուժերը Պարսկաստանի վրայով բաւական առաջ գնացած են դէպի Ատրպէյճան, ուր յոյս ունին միանալու հայկական ուժերուն հետ, որոնք արդէն անցել են պարսկական սահմանը (հաւանականաբար Վանի մեր ուժերն են)։ Ինչպէս յայտնի է Ատրպէյճանի մէջ կան նաեւ բաւականաչափ թուրքական ուժեր Ուրմիոյ լճին հարաւային կողմերը։ Անգլիացոց լուրերուն նայելով այս բոլորի մի շարք կռիւներ տեղի կ'ունենան այդ կողմերը եւ շուտով անգլիական եւ հայկական ուժերը կը միանան Պարսկաստանի մէջ։ Այս լուրերը հրատարակութեան չտաք, ինձմէն յատուկ խնդրեցին։

Վաղը ժամադրութիւն ունիմ Mr. Phillip-ին¹⁴⁶ հետ Կովկաս ուղարկուելիք հեռագրին մասին խօսելու համար։ Երէկուայ իրենց որոշումը եղած է նախ հարցնել Թիֆլիսի իրենց քոնսլիւլին կարծիքը իմ առաջարկիս մասին եւ յետոյ միայն պէտք եղածը ընել։ Վաղը պիտի աշխատիմ համոզել որ ուղղակի կարգադրեն առանց ժամանակ կորսնցնելու. տեսնենք պիտի յաջողիմ թէ չէ, ապա թէ ոչ՝ էլի մէկ ամիս պիտի ուշանայ այս հարցին լուծումը։

Ընկերական ջերմ բարեկեցութիւնով՝
Ա. ԳԱՐՕ

Յ. Գ.— Շնորհակալութեամբ ստացայ տղուս եւ քրոջս պատկերները։

Փաստ. 1406-78

Գ 27

Վաշինգթոն, 8 Յունիս 1918

Ընկերներ,

Երէկ նամակս գրելէն յետոյ Թեհրանէն մի նոր հեռագիր եկաւ, որը կը հաստատէ անգլիացոց ունեցած լուրերը։ Թեհրանի հեռագրին համաձայն Բագուէն 1300 հոգի (հայ զինուորներ) ցամաք ելած է Էնզելի եւ յայտնել են որ դեռ ուրիշ ուժեր եւս գալու են։ Իսկ միւս կողմէն անգլիական ուժերը արագ կերպով կը շարժուին դէպի Ռէշտ (որը Էնզելիին շատ մօտ է), որ միանալու են հայկական ուժերուն։

Երէկուայ իմ ենթադրութիւնս, թէ Վանայ մեր ուժերը անցած կը լինին Պարսկաստան, չի հաստատուում, բայց

146.- Միացեալ Նահանգներու Արտաքին գործերու նախարարի տեղակալ։





մխիթարականը այն է որ մերոնք այնքան զօրաւոր են Բագուայ մէջ, որ այնտեղէն ուժեր կարողացել են ուղարկել Պարսկաստան: Էնգելիի եւ Ռէչտի միջոցաւ անգլիացոց հետ կապ հաստատելէն յետոյ մերոնց դրուժիւնը շատ պիտի լաւանայ եւ շուտով պիտի կարողանան ամբողջ Ատրպէյճանը մաքրել թուրքական ուժերէն:

Այսօրուայ տեսակցութենէս յետոյ նորէն կը գրեմ:

Նորէն կը կրկնեմ, այս լուրերը թերթին մէջ ՀՏրատարակէք մինչեւ որ անգլիական պաշտօնական հեռագիրները չգան Լոնտոնէն:

Ինչպէս կը տեսնէք լաւ լուրերու շարքը սկսաւ:

Ձերմ բարեկներով՝
Ա. ԳԱՐՕ

Փաստ. 1406-79

Գ 28

Վաշիգթոն, 10 Յունիս 1918

Ընկերներ,

Շնորհակալութեամբ ստացայ ձեր 500 տուլի չէքը իմ անձնական ծախքերուն համար:

Շաբաթ օրը չկրցայ տեսնուել նախարարի օգնականին հետ որովհետեւ քաղաքէն հեռացած էր:

Այսօրուայ տեսակցութեանս արդիւնքը հետեւեալն է.—

Պիտի օգտուին Մոսկուայի գծէն իմացուելու համար Թիֆլիսի իրենց քոնսիւլէն որ անմիջապէս իրենց իմացնէ այնտեղի հայութեան մասին եւ յայտնէ նաեւ մերոնց որ ամերիկեան կառավարութիւնը պատրաստակամ է ամէն տեսակ նիւթական աջակցութիւն ընել մերոնց: Բացի այդ իրաւունք պիտի տրուի քոնսիւլին որ նա կարիքին համաձայն գումարներ պահանջէ ինք այստեղէն:

Ինչպէս կը տեսնէք, վերջապէս գործնական ճամբուն վրայ ընկան, երեք ամսուայ քաջընկներէն յետոյ, իսկ այդ քաջընկներու պատճառը ուրիշ տեղ է, որի մասին անձամբ կը պատմեմ երբ ձեզ հետ լինեմ:

Այս վերջին երեք օրս ոչ մի նորութիւն չկայ ոչ կովկասէն եւ ոչ ալ Պարսկաստանէն: Անհամբեր կը սպասենք մերոնց եւ անգլիացոց միանալու լուրին: Այդ միացումը կատարուելէ յետոյ շատ բան կայ ընելիք այստեղ:

Պիտի աշխատիմ գոնէ մէկ շաբաթ առաջ Պատգամաւորական ժողովէն՝ լինել Պոստոն:

Այսօր վերջապէս մի քիչ թեթեւութիւն զգացի սրտիս վրայ. կ'երեւակայեմ մերոնց դրուժիւնը կովկասում, երբ իմանան թէ Ամերիկան եւս կանգնած է իրենց ետեւը. շատ աւելի ուժ պիտի զգան իրենց մէջ դիմագրաւելու եղած դժուարութեանց:

Աւելի լաւ լուրերու յոյսով,
ընկերական ջերմ բարեկներով՝
Ա. ԳԱՐՕ

Փաստ. 1406-82

Գ 29

Վաշիգթոն, 15 Յունիս 1918

Սիրելի ընկերներ,

Վերջին նամակովս յոյս ունէի ձեզ լաւ լուրեր հաղորդել, բայց իմ սպասածիս հակառակ մի վատ լուր է տալիքս: Այսօր այստեղ ստացուեց Մոսկուայէն հետեւեալ հեռագիրը:

«Մոսկուա, 2 Յունիս: Մայիս 28ին այստեղի կառավարութիւնը յայտնեց որ ստացել է Թիֆլիսէն հետեւեալ անթիւ հեռագիրը. Թիֆլիս, 27 Մայիս. ամսուս 26ին լուծուեցաւ կովկասեան հասարակապետութեան կառավարութիւնը, ցրուեցաւ կովկասեան պարլամենտը. հրատարակուեցաւ Անկախ Վրաստանի հասարակապետութիւնը: Թիֆլիսի մէջ հաստատուեց գերմանական Chambre de Commerce: Մայիս 26ին երեկոյեան ժամը 7ին թուրք կա-





ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

ուսման ժամանակը ուղարկեց հետեւեալ ultimatum-ը, որ Կովկասի հետեւեալ մասերը պէտք է միանան Թուրքիոյ՝ Նախիջեւանի գաւառը առանց Օրտուկատի, Շարուր-Ռարալակեազի գաւառին կէսը, Երեւանի գաւառին կէսը առանց Երեւան քաղաքին, Սուրմալուի գաւառը ամբողջութեամբ, Echo Indinski? գաւառը գրեթէ ամբողջութեամբ, Ալեքսանդրապոլի մէկ մասը քաղաքին հետ միասին եւ Ախալքալաքի գաւառը ամբողջ: Բացի այս, իրաւունք կովկասեան բոլոր երկաթուղիներուն վրայ զօրք փոխադրել եւ այս զօրքերուն պաշար հայթայթել: 72 ժամ միջոց է տրուած պատասխանի, որմէ յետոյ թուրք կառավարութիւնը պիտի որոշէ իւր բռնելիք դիրքը»:

Ահաւաստիկ ձեզ օրուայ սեւ լուրը իւր ամբողջ մերկութեամբ:
Շատ բան կարելի է եզրակացնել. այս կամ այն է որ վրացիք վերջին ընդհանր մերոնց լքեցին եւ մերոնք դիմեցին այդ յուսահատական քայլին, այսինքն, լուծել Կովկասեան կառավարութիւնը՝ ստիպուած չլինելու [համար] թուրքերուն պատասխան տալ:

Եթէ այդ է իրողութիւնը, թուրքերը անշուշտ գրաւեցին արդէն վերոյիշեալ գաւառները եւ իրենք իրենց հաշուոյն յայտարարեցին թէ հաշտութիւն եղած է կովկասեան կառավարութեանը հետը, որը արդէն գոյութիւն ունենալէ դադարած էր Մայիս 26էն ի վեր: Ինչպէս գիտէք Յունիս 13ին Ամստերտամէն կը հեռագրէին թէ Պոլսէն ստացած հեռագրի մը համաձայն հաշտութիւն տեղի ունեցաւ Կովկասեան կառավարութեանը հետ:

Այս ենթադրութիւնը շատ բնական կը թուի առաջին նայուածքէն, բայց, ինչպէս ժողովրդական առածը կ'ըսէ, ջուրը ընկնողը փրփուրին կը փարի. ես ինձ թոյլ կու տամ ենթադրել որ այդպէս չէ իրողութիւնը, ահա թէ ինչու:

Նախ, ինչ է դերը այդ Գերմանական Chambre de commerce ըսուած մարմինն որը նոյն օրը կազմուել է Թիֆլիսի մէջ երբ տեղական հաւաքական կառավարութիւնը լուծուեց? Ահաւաստիկ մի մեծ հարց, որին պատասխանը յետոյ ենք է ստանալու: Ըսել է գերմանացիք արդէն Թիֆլիս մարդիկ ունէին որոնք այդ նոր մարմինը կազմեցին:

Հեռագիրը պարզ չի ըսէ, բայց հաւանական է որ թուրքական ultimatum-ին ստանալուն վրայ է որ Կովկասեան կառավարութիւնը զինքը լուծուած է հրատարակէ մէկ կողմէն, իսկ նոյն միջոցին եւս յայտարարուել է թէ՛ Վրաստանի անկախութիւնը եւ թէ՛ գերմանական Chambre de Commerce-ի մը հաստատումը Թիֆլիսի մէջ:

Եթէ այս դէպքերուն հետ կապենք նաեւ վերջերս, ասկէ մօտ 10-12 օր առաջ, գերմանական մամուլին մէջ երեւցած այն յօդուածները, որոնք կը քննադատէին թուրքերու փանթ-թուրանական ախորժակները, արդեօք գերմանացիք իրենց կազմած այդ նոր organe-ին ձեռքը չէ՞ն ուզեր հաւաքել Կովկասի կառավարութեան Փոնքսիոնը?

Ահա այս հարցն է որ ինձ մի քիչ յոյս կը ներշնչէ թէ թուրքերը ի վիճակի չեղան իրենց ծրագիրները գործադրել եւ դա այն պարզ պատճառով որ լուծուած Կովկասեան կառավարութեանը տեղ իրենց դէմը գտան գերմանական մի մարմին: Հակառակ դէպքում, եթէ թուրքերը հնարաւորութիւնը ունենային գրաւելու վերոյիշեալ գաւառները եւ իրենց կցելու, ամսուն 13ին Պոլսէն հեռագրին մէջ անպատճառ պիտի յիշէին իրենց այս նոր յաջողութիւնները:

Առայժմ այսքան. մի քանի օրէն անշուշտ աւելի կը պարզուի միջնորոտը:

Այս գիշեր կը մեկնեմ Նիւ Եորք ուր կը մնամ 3-4 օր եւ յետոյ գալու եմ ձեզ մօտ եթէ մի անակնկալ չպատահի: Կարող է պատահել որ S[tate] D[epartment]էն ինձ ետ կանչեն եթէ կարեւոր լուր մը ստանան:

Կարող է պատահել նաեւ որ մօտ օրերս առիթը ունենամ նախագահ Վիլսոնին ներկայանալու. ինչպէս նախորդ նամակներէն մէկումը ըսի, Պոլսոյ իմ հին ծանօթներէն մէկը վերջերս Փարիզէն այստեղ էր եկած. նա կը լինի առհասարակ Նիւ Եորք. այս շաբթու նորէն եկել էր այստեղ եւ ուզել էր նախագահին հետ տեսակցութիւն մը ունենալ. իրեն պատասխանել էին որ այս շաբթի բոլոր օրերը բռնուած են եւ յոյս էին տուած դալ շաբթուայ համար:

Երէկ ինձ առաջարկեց որ միասին գնանք նախագահին մօտ. ի հարկէ ես ուրախութեամբ ընդունեցի իւր առաջարկը:

Նիւ Եորք իրեն հետ եմ լինելու շարունակ. եթէ մօտ օրերս իւր ժամադրութիւնը նշանակեն, իրեն հետ գնալու եմ Վաշինգթոն եւ յետոյ միայն Պոստոն:

Բայց այսօրուայ այս լուրին վրայ չգիտեմ թէ ինչ եմ ըսելու նախագահին եթէ առիթը ունենամ իրեն ներկայանալու?

Մէկ խօսքով՝ իմ բոլոր հաշիւներս իրար խառնուեցան. այս նոր ստեղծուած դրութեան վրայ նոր ծրագիրներ պիտի կազմել ու առաջ քշել: Տեսնենք:

Յամենայն դէպս, տղերք ջան մի յուսահատուէք, մեր խեղճ Սիմոնին¹⁴⁷ ըսածին պէս՝ «Մեծ է հայու Աստուածը»:

Ընկերական ջերմ բարեկեցութիւնով՝
Ա. ԳԱՐՕ

Օթէլին տուի իմ Պոստոնի հասցէս. եթէ նամակներ գան պահեցէք մինչեւ ես լուր տամ թէ ինչ ընէք: Ըսէք իմբագրութեանը, թող թերթը չուղարկեն քանի հեռու եմ Վաշինգթոնէն:





Փաստ. 1184ա-2

Դ 1.- ԹԵ ԻՆՉՊԷՄ ՏՈՔԹ. ԼԵՓՄԻՈՒՍ ՅԱԶՈՂԵՑԱԻ ՊԵՐԼԻՆ ԵՐԹԱԼ 1915ԻՆ

Ներկայացուած փաստաթուղթը քաղուած է Հ.Յ.Դ. Պալքանեան Կեդր. կոմիտէի 1915 թ. աստեմագրութեանց տետրակէն, Յուլիս 16 (նոր տոմարով 29), նիստ ԻԱ, ժամը 9 1/2ին, երկրորդ օրակարգ: Ձեկուցողն է ընկ. Գուրգէն (Վահագն Քրմոյեան), Պերլին կատարած իր այցելութենէն վերադարձին:

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԵԻ
ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ
(1915 Փետրուար – Սոֆիա)

Նիստ ԻԱ.,
16 Յուլիս ժամը 9 1/2 – 2րդ օրակարգ

2.- Ձեկնութիւն ԸՆԿ. ԳՈՒՐԳԷՆԻ

Բերլին հասայ Յունիս Տին. նոյն երեկոյ Տքթ. Գրէնֆիլտի¹⁴⁸ հետ գնացինք Տքթ. Լեփսիուսի մօտ, որին մանրամասնօրէն ներկայացրի այն զարհուրելի կացութիւնը որ ստեղծուած է Հայաստանում եւ Կիլիկիայում (մասսայական ջարդեր, տեղափոխութիւն, բռնի իսլամացում եւն. եւն.) եւ ապա ներկայացրի այն վտանգը որին ենթարկուած են մասնաւորապէս դաշնակցական կալանաւորները:

Ապա շեշտելով թէ՛ գերմանական, թէ՛ թրքական եւ թէ՛ հայկ. շահերու վրայ, բռնուն կերպով սպառնացի, որ եթէ այդ հալածանքները չզղաղրին եւ եթէ մեր ընկերներէն ոմանք կախաղան բարձրացուին, այն ժամանակ Հ. Յ. Դաշնակցութիւնը դուրս կու գայ իր օրինականութեան սահմաններէն, մի բան որ մինչեւ այժմ խստիւ պահպաներ է, եւ կ'աշխատի ամէն գնով ներկայ պետական եւ իթթիհատական անձանց տեւորով եւ կամ այլ միջոցներով տապալել ներկայ կառավարութիւնը, որի վրայ հիմնուած է գերմանական ազդեցութիւնը: Աւելացրի նաեւ որ հայերու՝ մանաւանդ Դաշնակցութեան պայքարը ուժեղ կերպով կ'արտայայտուի, որովհետեւ հակառակ այդ հալածանքներուն եւ հակառակ մեր դեկալար շարքերու ձերբակալման, մենք ունինք մեր երիտասարդութիւնը եւ որ գլխաւորն է ոեւէ տեղ չեն բռնուած ոչ մեր պահեստները եւ ոչ ալ մեր դիւանը:

Տքթ. Լեփսիուսը յայտնեց որ արդէն Սոֆիայէն մեր

տուած հեռագրին հիման վրայ ինքը դիմել է Արտաքին գործոց նախարարութեան, որ կտրուկ հեռագիր է գարկած Պոլսոյ գերման դեսպ[անին], որպէսզի արգիլէ հաւանական կախաղանները:

Ապա Տքթ. Լեփսիուսը նոյն փաստերու հիման վրայ ընդարձակ տեղեկագիր մը ներկայացուց արտաքին գործոց նախարարութեան, որ առանձին սուրհանդակով անմիջապէս ուղարկեց Պոլիս իրենց դեսպանին:

Յաջորդ տեսակցութենէն յետոյ դարձեալ կտրուկ առաջարկներ ներկայացուց նախարարութեան շեշտելով որ հնարաւորինս հայերու եւ թուրքերու միջեւ իրաւախոհութիւն յառաջ բերէ, բայց ասոր իբր նախապայման պէտք է դնել, որ կախաղաններ չլինեն եւ տեղափոխութիւնը անմիջապէս դադարեցուի:

Այդ գրութեան պատճէնը նմանապէս անմիջապէս հեռագրուեցաւ Պոլսոյ դեսպանին:

Իմ առաջին անգամ Բերլին գնալու ժամանակ ես միայն զեկուցում տուի այն կացութեան մասին, որին ենթարկուած էին տաճկահայերը եւ վերադարձայ առանց սպասելու որոշ կարգադրութեան:

Այս անգամ իմացայ որ Գերման-հայ Ընկերութիւնը այդ փաստերու հիման վրայ ընդարձակ տեղեկագիր մը տուած էր Արտաքին գործոց նախարարութեան եւ ապա՝ Տքթ. Ռորպախ¹⁴⁹ գնացած էր արդիւնքն հասկընալու համար, եւ հոն իմացած էր (Վանկենհայմ¹⁵⁰ տուած տեղեկութեան համաձայն), որ թուրքերը ուղղակի կատաղել [են] հայերու դէմ եւ ոչինչ չեն ուզեր լսել:

Ապա Ընկերութիւնը կ'իմանայ նաեւ, որ Վանկենհայմ հեռագրած է արտաքին գործոց նախարարու-

148.- Ձէյնս Գրինֆիլդ, Թեհրան ծնած, մօր կողմէ հայ, ընդհանրապէս գերմանաբնակ. անդամ էր Եոհան Լեպսիուսի նախագահութեան ներքեւ գործող գերման-հայկական ընկերութեան:

149.- Փոլ Ռորպախ, նոյնպէս անդամ գերման-հայկական ընկերութեան:

150.- Հանց Ֆոն Վանկենհայմ – Գերմանիոյ դեսպանը Թուրքիոյ մէջ:





ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

թեան եւ խնդրած է արգելք չլինել այն տեղափոխման, որ թուրքիոյ զինուորական իշխանութիւնները որոշել են կատարել պատերազմական շրջաններին եւ որի մասին էնվեր փաշան իմացրել է] գերման դեսպանատան:

Այս կացութեան առաջ ընկերութիւնը կ'որոշէ Տոքթ. Լեփսիուսը ուղարկել Պոլիս եւ այդ մասին կ'իմացնեն նախարարութեան, որ իր կողմէ կը հարցնէ Պոլսոյ գերման դեսպանին. դեսպանն ալ թալէաթ պէյին կ'իմացնէ անոր հաւանութիւնն ուղելով, իսկ թալէաթ պէյ բոլորովին կը մերժէ:

Այդ մերժումին վրայ Տոքթ. Լեփսիուս կը պատրաստէ ընդարձակ գրութիւն մը, բացատրելով իր Պոլիս լինելու օգտակարութիւնը եւ կը յանձնէ նախարարութեան որ կ'ուղարկէ դեսպանին: Երկու շաբաթ է ի վեր այդ գրութեան պատասխան չէր եկած, բայց վերջին տեղեկագիրներն ու հեռագիրները ընթացք տուին գործին եւ Տոքթ. Լեփսիուս իրաւունք ստացաւ Պոլիս երթալ (թալէաթ պէյի կողմէ) բայց պայմանաւ որ գաւառները չայցելէ:

Բերլին լինելու երրորդ օրը Ի.—ը¹⁵¹ նամակ ստացաւ ժընեւէն որպէսզի հոն երթալ Տոքթ. Չ[աւրիելը] տեսնելու: Իր հիւանդութեան պատճառաւ ես ստիպուե-

ցայ երթալ ժընեւ, ուր դրութիւնը մանրամասնօրէն ներկայացրի ընկ. Չ[աւրիելին] եւ Յ[ոնան Դաւթեանին]: Անհրաժեշտ եղաւ տեսակցութիւն նշանակել Տոքթ. Չ. եւ Տոքթ. Լեփսիուսի հետ, որ մի քանի օր յետոյ տեղի ունեցաւ Յիւրիխում: Հոն ալ Տոքթ. Չ. աշխատած էր համոզել Տոքթ. Լեփսիուսը որ թուրքերը պէտք է դադրեցնեն իրենց հայաժանքները հայերու դէմ եւ գերմանները պէտք է աշխատին այդ ուղղութեամբ, հակառակ պարագային մենք պայքարի դուրս կու գանք թուրք կառավարութեան դէմ, որից կը վնասուեն թէ Երիտասարդ թուրքերը եւ թէ գերմանացիները: Թուրքերը պէտք է ազատ արձակեն բոլոր բանտարկեալները եւ պէտք է իրենց տեղերը վերադարձնեն տեղահանուած ժողովուրդը. իսկ ատոր փոխարէն Տաճկաստանում մենք կը կատարենք մեր քաղաքացիական բոլոր պարտականութիւնները: Իսկ ռուսահայերու գործունէութեան մասին ոչ մի պայմանի տակ չէ կարելի մտնել, քանի որ անոնք ալ իրենց քաղաքական պարտականութիւնները ունին կատարելիք:

Տոքթ. Լեփսիուսը Պոլիս մեկնեցաւ մասնաւորապէս լաւ յանձնարարականներ ունենալով զինուորական իշխանութիւններու վրայ եւ յոյս ունէր մի բան յաջողցնել Ֆոնտերկոյցի¹⁵² եւ նոր դեսպան Հոհենհայմի¹⁵³ միջոցաւ:

Ատենը ուշ ըլլալուն ընկ. Օզանեանի¹⁵⁴ գեկուցումը յետաձգուեցաւ յաջորդ նիստին:

Քարտուղար

151.- Հաւանաբար՝ Աւետիք Իսահակեանը:
152.- Քոլմար Ֆոն տէր Կոլդ – Սուլթանին խորհրդական եւ քրքական 6-րդ գորաբանակի իրամանատար:
153.- Էրնեստ Հոյենրիէ – Գերմանիոյ դեսպան Թուրքիոյ մէջ՝ 1915 Նոյեմբերէն սկսեալ, Վանկենիայմի յանկարծամահ ըլլալէն ետք:
154.- Մերուժան Օզանեան (1885-1965), այդ օրերուն կուս. գործիչ Սոֆիայի մէջ:





Փաստ. 1477-50ա

**Դ 2.- ԺԸՆԵԻԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵ
ՀԵՌԱԳԻՐ ՈՒՂՂՈՒԱԾ 1917 Թ. ԱՊՐԻԼ 5-Ի ՀԱՒԱՔԻՆ**

Adressé au meeting international du 5 avril 1917

Թարգմանությունները.—

Le groupe des socialistes arméniens “Daschnak-tzagans” de Genève, salue avec joie la victoire de la Révolution Russe.

Il exprime toute sa confiance au gouvernement provisoire et désire voir se raffermir dans la Nouvelle Russie les principes de liberté qu'il a inaugurés!

Dans la conviction que le gouvernement russe assurera au peuple arménien – comme aux autres nationalités – la liberté la plus complète,

Considérant que la cessation de la guerre en ce moment signifierait une infâme trahison pour la cause de la Démocratie mondiale et de la libération des peuples opprimés,

Et persuadé, enfin, que le triomphe du militarisme prussien serait une menace perpétuelle pour l'humanité,

Il déclare tenir pour impérieuse la poursuite de la guerre jusqu'au moment où la Démocratie allemande, consciente enfin de la réalité des faits, s'affranchisse de la tutelle de son gouvernement militariste et tende la main à la Démocratie internationale!

LE GROUPE DES SOCIALISTES ARMÉNIENS
“DASCHNAKTZAGANS” DE GENEVE

Ժընեւի դաշնակցականներու հայ ընկերվարական խմբակցութիւնը ուրախութեամբ կ'ողջունէ Ռուսական յեղափոխութիւնը¹⁵⁵:

Ամբողջական վստահութիւն կը յայտնէ ժամանակաւոր կառավարութեան, եւ կը ցանկայ նոր Ռուսիոյ մէջ տեսնել իր սկզբնաւորած ազատական սկզբունքներու ամրապնդումը: Համոզուած որ ռուս կառավարութիւնը հայ ժողովուրդին – ինչպէս եւ միւս ազգութիւններուն – պիտի ապահովէ ամբողջական ազատութիւն,

Նկատի առնելով որ այս պահուն պատերազմին դադարեցումը ամօթալի դաւաճանութիւն մը պիտի ըլլար համաշխարհային Դեմոկրացիայի դատին եւ ճնշուած ժողովուրդներու ազատագրութեան համար,

Եւ համոզուած, վերջապէս, որ պրուսիական (գերմանական) ռազմապաշտութեան յաղթանակը մշտական սպառնալիք պիտի հանդիսանար մարդկութեան համար,

Հրամայական պահանջ կը գտնէ պատերազմին շարունակումը մինչեւ որ գերմանական դեմոկրացիան, գիտակցելով վերջապէս իրողական կացութեան մասին, կը թօթափէ իր ռազմատենչ կառավարութեան լուծը, եւ ձեռք կ'երկարէ միջազգային ժողովրդավարութեան:

**ԺԸՆԵԻԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ-ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆ**

155.- Խօսքը կը վերաբերի 1917 թ. Փետրուարեան յեղափոխութեան:





Փաստ. 1362ա-34

Դ 3.- ԻՏԱԼԱՑԻ ՀԱՅԱՍՏԵՐՆԵՐՈՒ ՀԵՌԱԳԻՐԸ ՌՈՒՄ ՆԱԽԱՐԱՐԻՆ
(Պատճեն)

Ֆիրենցե, 14 Յունիս 1917

<p>COMITATO ITALIANO = "PRO ARMENIA", =</p>	<p>Firenze, li 14 Giugno 1917 Via degli Artisti, 8 (Studio Focardi) Telefono 11-00</p>

Թարգմանութիւնը.—

Monsieur le Ministre,

Պարոն նախարար,

Comme président du Comité Italien "Pro Armenia", j'ai l'honneur de vous communiquer qu'une grande manifestation a eu lieu, en faveur de l'indépendance de l'Arménie, le Dimanche 10 Juin, au Palazzo Vecchio, sous la présidence du maire. Dans cette réunion les citoyens de Florence ont voté l'ordre du jour suivant:

Որպէս նախագահ «Պրօ-Արմենիա» իտալական կոմիտէի, պատիւն ունիմ ձեզի հաղորդելու՝ որ Կիրակի 10 Յունիսին Փալացցօ Վեքքիոյի մէջ, քաղաքապետի նախագահութեան ներքեւ տեղի ունեցաւ մեծ ցոյց մը՝ ի նպաստ Հայաստանի անկախութեան: Այս հաւաքի ընթացքին Ֆլորանսի քաղաքացիները քուէարկեցին հետեւեալ օրակարգը.—

"Les citoyens de Florence, réunis à Palazzo Vecchio sous la présidence du maire, expriment leur profonde sympathie pour l'Arménie, qui a donné à la cause des Alliés 150.000 combattants et le sang innocent de 600.000 victimes immolées par les Turcs, au service des Allemands; ils émettent en même temps le vœu que l'Entente, devenue, après la révolution russe, la ligue des cinq grandes démocraties du monde, reconnaisse les Arméniens au nombre des Alliées et s'engage à reconstituer l'Arménie, comme la Pologne, en nation libre et indépendante.

«Ֆլորանսի քաղաքացիները, նախագահութեամբ քաղաքապետին, հաւաքուած Փալացցօ Վեքքիօ, կը յայտնեն իրենց խոր համակրանքը Հայաստանին, որ դաշնակիցներու դատին տուաւ 150.000 մարտիկներ եւ արիւնը 600.000 անմեղներու, խողխողուած զոհեր՝ գերմանացիներու ծառայութեան մէջ գտնուող թուրքերու կողմէ: Միեւնոյն ժամանակ, անոնք կը բաղձան որ Համաձայնական պետութիւնները,— ռուսական յեղափոխութենէն ետք վերածուած աշխարհի հինգ մեծ ժողովրդավար երկիրներու Լիկայի — ճանչնան հայերը Դաշնակիցներու շարքին եւ յանձն առնեն վերականգնել Հայաստանը (ինչպէս Լեհաստանը) իբրեւ ազատ եւ անկախ ազգ:»

Etant certain que ce vœu correspond aux vues générales de la nouvelle politique russe, je vous prie, Monsieur le Ministre, d'accepter l'assurance de ma plus haute considération.

Վստահ ըլլալով որ այս բաղձանքը կը համապատասխանէ ռուսական նոր քաղաքականութեան վսեմ առաջադրանքներուն, կը խնդրեմ, պարոն նախարար, որ ընդունիք յարգանացս հաւաստիքը:

Président du Comité Italien "Pro Armenia"
G. FERRERO

Նախագահ «Պրօ-Արմենիա իտալական կոմիտէի»
Գ. ՖԵՌԵՐՕ





Փաստ. 1477-50

**Դ 4.- ԺԸՆԵՒԻ ԳԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ԲՈՂՈՔԸ
ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻՆ
ԹՈՒՐՔ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐՈՒ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԷՄ**

Le 17/VIII/1917

Թարգմանութիւնը.—

Le groupe des étudiants socialistes arméniens de Genève a adressé le télégramme suivant à la commission socialiste hollando-scandinave de Stockholm.

Ժընևի հայ ընկերվար ուսանողութեան խմբակցութիւնը հետեւեալ հեռագիրը յղեց Ստոկհոլմի հոլանտոսկանտինաւեան Յանձնաժողովին.—

Ayant appris par les agences des journaux l'arrivée à Stockholm d'une délégation turque soi-disant socialiste, nous tenons d'abord à proclamer que c'est là un piège grossier tendu par le gouvernement jeune-turc dans le but de mettre l'idée du socialisme au service de ses criminels desseins.

Հրագրական գործակալութիւններէն տեղեկացած ըլլալով Ստոկհոլմ ժամանումը իբր թէ ընկերվարական թուրք պատուիրակութեան մը, պարտք կը համարենք յայտարարելու նախ եւ առաջ, որ ասիկա երիտասարդ-թուրք կառավարութեան կողմէ լարուած ստորին թակարդ մըն է՝ ընկերվարութեան զաղափարը իրենց ոճրային դիտաւորութիւններուն ծառայեցնելու նպատակով:

Il n'y eut jamais en effet, chez les turcs, même l'ombre d'une organisation socialiste ni même le germe des idées socialistes. Ces émissaires des bureaux de Constantinople n'ont donc d'autres mandats (en réalité) que de justifier devant le socialisme International l'horrible forfait de ceux qui les envoient. D'ailleurs leurs déclarations mêmes: ils sont solidaires des crimes monstrueux dont l'Arménie a été victime.

Արդարեւ, թուրքերու մօտ գոյութիւն չէ ունեցած բնաւ ընկերվարութեան նշոյլն անգամ, ոչ իսկ սաղմը՝ ընկերվար զաղափարներու: Կոստանդնուպոլսոյ դահլճներուն այս պատուիրակները իրականութեան մէջ ունին միայն մէկ պատուէր, այն է՝ արդարացնել Միջազգային ընկերվարութեան մօտ զիրենք առաքողներու քստմնելի ոճիրը: Բաց աստի, իրենց յայտարարութիւններով իսկ, անոնք զօրավիզ կը կանգնին այն հրէշային ոճիրներուն, որոնց զոհ դարձաւ Հայաստան:

Tout en protestant énergiquement contre le cynisme de ces pseudo-socialistes, nous avons le ferme espoir que la commission socialiste hollando-scandinave ne permettra jamais la profanation de l'Internationale par l'admission de ces criminels dans son sein. Nous espérons au contraire que fidèle à ses principes le socialisme International proclamera les droits indiscutables de l'Arménie à une vie libre et indépendante.

Ուժգնօրէն բողոքելով այս կեղծ-ընկերվարականներու շնական կեցուածքին դէմ, հաստատ յոյսն ունինք, որ հոլանտոսկանտինաւեան ընկերվար Յանձնաժողովը պիտի չթոյլատրէ բնաւ Միջազգայնականի սրբապղծումը իր ծոցին մէջ ընդունելով այս ոճրագործները: Ընդհակառակն, կը յուսանք որ, հաւատարիմ մնալով իր սկզբունքներուն, Ընկերվար միջազգայնականը պիտի հռչակէ՝ ազատ եւ անկախ ապրելու Հայաստանի անվիճելի իրաւունքները¹⁵⁶:

17-VIII-1917

*Համաձայն ենք.—
[Ստորագրութիւններ]*

Համաձայն ենք.— Ստորագրութիւններ

Աշոտ Գասպարեան, Օ. Մաճառեան, Ս. Գարաօղլանեան, Հ. Վարդանեան, Բ. Տէր Յովհանեան, Յ. Սապրնճեան[?]

156.- Ստոկհոլմի ընկերվար Միջազգայնականի աշխատանքներուն եւ ի մասնաւորի Հ.Յ.Գ.ի ներկայացուցիչ Ռոստոմի կարդացած տեղեկագրի մասին տեսնել «ՆԻՒԹԵՐ»ու ԺԲ. հատոր, էջ 263-308:





Փաստ. 1281-7

Դ 5.- ԱՐՏԱԻԱԶԴ ՀԱՆԸՄԵԱՆԷՆ Հ.Յ.Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԵԻՆ

Փարիզ, 7 սեպտ. 1917

Սիրելի ընկերներ,

Ինչպէս հաւանականաբար «Հայրենիք»էն տեղեկացած էք, Ռոստոմը հեռագրած էր ասկից առաջ Ամերիկայի Կեդր. կոմիտէին, որ ռուսական առժամանակեայ կառավարութիւնը Հայաստանի կառավարիչ նշանակած է Աւերիանովը եւ օգնական կառավարիչ մեր ընկեր բժիշկ Զաւրիեւը:

Ընկեր Բաստրմաճեանէն տեղեկացանք որ Աւերիանով յայտնի հայասէր զինուորական մըն է եւ իբրեւ օգնական տրուած է բժիշկ Զաւրիեւը քաղաքական գործերու համար: Ինչ որ շատ աւելի բարեպատէ՛ է մեզ համար, դարձեալ ընկեր Բաստրմաճեանէն տեղեկացանք որ Աւերիանով անձնական բարեկամն է Զաւրիեւի եւ մեծ յարգանք ունի անոր հանդէպ: Առժամանակեայ կառավարութիւնը ընդունած էր դարձեալ որ գրաւուած նահանգներու վարչութիւնը այսուհետեւ ոեւէ կախում չպիտի ունենայ կովկասեան վարչութեանէն (ինչ որ ծնունդ տուած էր բոլոր չարիքներուն), այլ ուղղակի պիտի կապուի ռուսական կառավարութեան:

Երէկ դարձեալ մեր ընկեր Ռոստոմէն (որ Սթոքհոլմ կը գտնուի), 29 Օգոստոս թուակիր հետեւեալ հեռագիրը ստացանք, ռուսական դեսպանատան միջոցաւ: Այդ հեռագիրը հոս կը ղնեմ տառացիօրէն.

Décisions mois juillet gouvernement provisoire. Administration régions conquises séparée Caucase, Avérianoff désigné gouverneur, Zavrieff adjoint pour provinces Van, Bitlis, Erzeroum reconnues arméniennes. Défense retour musulmans parti avec troupes turques. Milice nationale. Bataillons arméniens déployés (?) régiments, intention créer division arménienne – Zorian¹⁵⁷.

Այս գեղեցիկ լուրերուն վրայ կ'ուզեմ ուրիշ մըն ալ աւելցնել, ամէնէն կարեւորը թերեւս:

Ընկեր Բաստրմաճեանէն տեղեկացած էինք որ Կով-

կասի հայերը խնդիրք ներկայացուցած էին առժամանակեայ կառավարութեան, ռուսական բանակներու մէջ գտնուած բոլոր հայ զինուորներն ու սպաները ի մի բերելով հայկական առանձին մեծ բանակ մը կազմելու եւ այդ բանակը կովկասեան ճակատ դրկելու համար:

Ընկեր Բաստրմաճեան մեզ տեղեկութիւն տուած էր դարձեալ, որ այդ խնդիրը լաւ ընդունելութիւն գտած էր կառավարութեան կողմէ:

Նախորդ օր Echo de Paris-ի մէջ կարդացինք Հաւասի հեռագիր մը Ռուսաստանէն՝ որ Տփղիսի «Հորիզոն»էն առնելով կ'աւետէր մեծ լուրը:

Առժամեայ կառավարութիւնը ընդունեւ է հայոց խնդիրքը. ռուս բանակի բոլոր տայ զինուորներն ու սպաները ի մի բերուելով պիտի կազմեն հայկական բանակ մը (այո՛, հայկական բանակ մը, ճիշդ այսպէս է գրուած) գործելու համար կովկասեան ճակատին վրայ: Նախապատրաստական գործողութիւններու կեդրոն ընտրուել է Տփղիսը: Շնորհակալութեան հեռագիրներ դրկուել են Կովկասէն Kerensky-ին եւ այլն: Օտեսայի մէջ հայ սպաներու առաջին խորհրդակցական ժողով մը գումարուել է արդէն իսկ:

Հետեւանքները դուք ինքներդ հանեցէք, այնքան պերճախօս են փաստերը, որ տող մը իսկ չեմ ուզեր աւելցնել:

Աչուընիս լոյս:

Այսքան աղէտէ ու արիւնէ ետք արժանի էինք այս օրուան:

Ընկերական ջերմ բարեւներով
ԱՐՏԱԻԱԶԴ ՀԱՆԸՄԵԱՆ

Յ. Գ.- Մինչեւ այսօր Ֆրանսայէն անցնողներու թիւը 700¹⁵⁸:

157.- Ժամանակաոր կառավարութեան Յուլիս ամսուան որոշումներէն – նուաճուած շրջաններու վարչութիւնը կ'անջատուի Կովկասէն – Աւերիանով նշանակուած է կառավարիչ, Չաւրիեւը կառավարիչի օգնական Վանի, Պիթիսի, Էրզրումի նահանգներուն համար՝ ճանչցուած իբր հայկական – Արգիլուած է քրքական զօրքերու հետ մեկնած մահմետականներուն վերադարձը – հայկական կամատրական գունդերը կը վերադասատրուին՝ հայկական զօրաբաժին ստեղծելու նպատակով – Չօրեան:

1 Սեպտ. 1917 թուակիր նամակով այս մասին Ռոստոմ ատելի մանրամասն կը յայտնէ Միք. Վարանդեանի, որ ռուսական կառավարութեան «պաշտօնական հրահանգների մէջ կան 2 կարեւոր կէտեր, որոնք չեն հրատարակուած.

ա) Բոլոր հայերը, որոնք առաջուց գաղթել են Թուրքիայից, կարող են վերադառնալ եւ վերաբնակել նուաճուած վայրերում, բ) այն թուրքերը, որոնք հեռացել են թուրք զօրքերի հետ միասին, գրկուում են վերադառնալու իրատւոյթից» (Տես «Նիւթեր Հ.Յ.Դ. պատմութեան համար», ԺԲ. հատոր, էջ 210):

158.- Խօսքը կը վերաբերի Արեւելեան Լեզգոնի համար Ֆրանսայէն մեկնող հայ կամատրներուն:





Փաստ. 65-31

Դ 6.- ՌՈՍՏՈՄԷՆ ՅՈՆԱՆ ԴԱԻԹԵԱՆԻՆ

10/XI/1917, Ստոկհոլմ

Սիրելի Յոնան,

Նամակիդ արդէն պատասխանել էի, երբ բացգիրդ ստացայ:

Կովկաս գնալու հարցը առայժմ պէտք է թողնել: Բացի այն, որ հիւանդութիւնը կարող է նորոգուել ճանապարհին, արտասահմանում ահագին գործ կայ անելիք: Մեր պրոպագանդի գործը թոյլ է կազմակերպւած: Չէզոք երկիրների, գերման եւ աստորիական հասարակական կարծիքի վերաբերեալ շատ քիչ բան է կատարւում: Հիմա մանաւանդ պէտք է ուժերը լարել: Ժընեւում բաւական ուժեր կան, որոնք եթէ համախմբուեն, կարող են աշխատանքը տանել: Դժուարութիւնը նիւթականի մէջն է: Այդ մասին կարելի էր հոգալ

Ռոսաստանից, եթէ արդի խառնակ վիճակը ստեղծւած չլինէր¹⁵⁹: Գուցէ Ամերիկան¹⁶⁰ օգնութեան գայ:

Բացի այդ, աքսորուած ընկերների նպաստի գործը պէտք է կանոնաւորել: Գրել եմ Ամերիկայի ընկերներին, մտադիր էի Լոնդոնում մի բան անել այդտեղ գալիս, բայց որովհետեւ միտքս փոխել եմ վերջին դէպքերից յետոյ, կը փորձեմ նամակով մի բան յաջողեցնել:

Վերադառնալու եմ Ռոսաստան: Եթէ խառնակութիւնը անցնի Կովկաս, մեր բաները լաւ չեն լինել[ու]: Թուրք[իոյ] սահմանը եթէ բացուի, — իսկ դա կարող է պատահել — մեր վիճակը շատ կը ծանրանայ:

Մի քանի օր էլ կը սպասեմ. եթէ Բժիշկը¹⁶¹ չերեւնայ, ինչ որ կասկածում եմ, — ճանապարհ կ'ընկնեմ:

Քո Ռ[ՈՍՏՈՄ]

159.- Ակնարկութիւն բոլշեփկեան յեղափոխութեան հետեւանքով Ռոսիոյ տարածքին առաջացած խառնակ վիճակին:

160.- Իմա՝ Ամերիկայի Հ.Յ.Դ. կազմակերպութիւնը:

161.- Խօսքը կը վերաբերի բժ. Յակոբ Չարիեփին:





Փաստ. 1406-167

Դ 7.- ԱՐՄԷՆ ԳԱՐՈՅԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ՌԱՊԸՐԹ ԼԵՆՍԻՆԿԻ ԿՈՎԿԱՍԻ ՏԱԳՆԱՊԱԼԻ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արմեն Գարոյի կողմէ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար (Պետական քարտուղար) Ռապրոք Լենսինկին կատարուած այս դիմումը մեքենագիր է եւ թուական չի կրեր: Հայերէն մէկ պատճենն է ան՝ ուղարկուած, առ ի գիտութիւն, Ամերիկայի Հ.Յ.Դ. Կեդր. կոմիտէին, որմէ կը խնդրէ նոյնպէս «կարդալէ անմիջապէս վերջ վերադարձնել սոյն պատճենն ստանալէ»:

Իսկ ինչ կը վերաբերի թուականին, ան կը ճշդուի շնորհիւ նոյն Ա. Գարոյի 1918 թ. Մարտ 4-ի Կեդր. կոմիտէին ուղղած նամակին, ուր ան կը գրէ՝ «Գրատը կերպով դիմեցի Պր. Լենսինկին բացատրելով մեր դրութեան լրջութիւնը եւ քսան միլիոնի մի աջակցութիւն խնդրեցի Ամերիկեան կառավարութենէն ի նպաստ Կովկասի նորակազմ բանակին» (Տես էջ 48): Հետեւաբար դիմումին գրութեան թուականը Մարտ 4 է, մանաւանդ որ միեւնոյն Լենսինկին ուղղեալ իր երկրորդ դիմումին մէջ (1918 թ. Մայիս 10), Ա. Գարո կը յիշատակէ իր առաջին նամակը՝ Մարտ 4 թուագրեալ (Տես փաստ. 1406-68, էջ 78):

Նորին վսեմափայլութիւն Րապրոք Լենսինկի,
Պետական քարտուղար, Վաշինգթոն

Վսեմափայլ Տէր,

Հայ ժողովուրդի երկրորդ կէսը այսօր կը դիմագրաւէ նոյն վտանգը, որուն ենթարկուեցաւ Թուրքիոյ Հայութիւնը 1915ին: Կազմալուծուած ռուս բանակի վերջին բեկորները կովկասեան ճակատը թողած են, ուր գերմանո-թուրք առաջխաղացումին առջեւ կը մնան միայն հայ եւ վրացի զինուորները: Մենք հայերս այս վտանգը նախատեսեցինք ռուս յեղափոխութեան առաջին օրերուն, եւ ռեւէ կերպով անոր առջեւ առնելու համար Տոքթ. Զաւրիեւ եւ ստորագրեալս, անցեալ մայիսին Փեթրոկրատ գացինք հայերու կողմէ, պատերազմական նախարար Քերենսկիին¹⁶² հետ խորհրդակցելու համար: Մենք առաջարկ ներկայացուցինք Քերենսկիին ռուս բանակի մէջ ցրուած մօտաւորապէս 160,000 հայ զինուորները կեդրոնացնել կովկասեան ճակատին վրայ, որովհետեւ ատիկա էր միակ միջոցը Կովկասը պաշտպանելու թրքական արշաւանքէն: Եւ ասիկա երկու պատճառներով, առաջին՝ որովհետեւ հայերը պոլշեւիկեան փրոփականտային հետեւելու հակումներ չունէին եւ երկրորդ, որովհետեւ անոնք շատ լաւ գիտէին թէ ինչ ահաւոր հետեւանք կրնայ ունենալ 2,300,000 Կովկասի հայութեան համար թրքական արշաւանք մը, այդ սահմանին մէջ:

Քերենսկի մեզի համաձայնեցաւ սկզբունքով, բայց դժբախտաբար այդ խնդրոյն վերաբերմամբ գործնական համակրութիւն ցոյց չտուաւ եւ անցեալ նոյեմբերին իր հրաժարումի ատեն կովկասեան սահմանի վրայ կեդրոնացած էին միայն 18,000 հայ զինուորներ, որոնք

կը կազմէն 18 զուտ հայկական գունդեր: Քերենսկիի անկումէն ի վեր կովկասեան ճակատի վրայ հայ զինուորներու կեդրոնացումը շարունակուեցաւ. մեր վերջին տեղեկութիւններուն համաձայն 50,000 նոր հայկական բանակ մը արդէն կազմուած է եւ ատկէ գատ 20,000 հայ կամաւորներու գունդեր գէնքի տակ են՝ Կովկաս եւ կովկասեան սահմանագլուխը պաշտպանելու համար: Քրիստոնեայ վրացիներն ալ թրքական հաւանական արշաւանք մը նախատեսելով եւ այդպիսի հաւանականութեան մը ահաւոր հետեւանքը գուշակելով՝ իրենց զինուորական ուժերը կը կազմակերպեն Կովկասի պաշտպանութեան համար:

Փարիզի մէջ Ազգ. պատուիրակութիւնը իր նախագահին՝ Պ. Նուպար փաշայի միջոցաւ Ֆրանսական եւ անգլիական կառավարութիւններուն դիմեց խնդրելով դաշնակիցներու նիւթական եւ բարոյական աջակցութիւնները, հայ եւ վրացի ժողովուրդներու ինքնապաշտպանութեան համար: Ֆրանսական եւ անգլիական կառավարութիւնները դէպի Կովկաս թրքական արշաւանքի մը լուրջ եւ ծանրակշիռ հետեւանքները աչքի առջեւ ունէին: Այդպիսի հաւանականութեան մը պարագային Կովկասի միւսլիման տարրերը թրքո-գերմաններուն միանալով կրնային առաջ բերել Կասպեա-կա]նի եւ Կովկասի սահմաններէն մինչեւ Արեւելք, համաթուրանական ապստամբութիւն մը, այսպէսով թրքո-գերման ազդեցութիւնը տարածելով Պոլիսէն մինչեւ հեռաւոր Չինաստանը: Այդ երկու կառավարութիւնները, հետեւաբար, որոշեցին անմիջական օգնու-

162.- Ալեքսանդր Քերենսկի, նախ պատերազմական նախարար, ապա վարչապետ Ժամանակաւոր կառավարութեան:



Թիւն ղրկել նոր կազմուած հայ եւ վրացի ուժերուն: Անգլիական կառավարութիւնը արդէն փոխադրած է դրամ Պարսկաստանի վրայով եւ որոշ կարգադրութիւններ է ըրած որպէսզի Պաղտատի անգլ. բանակը օգնէ հայերուն:

Ուրեմն ներկայիս Ձեր վսեմափայլութեան միջոցաւ կը համարձակիմ Մ. Նահանգներու կառավարութեան օգնութիւնը խնդրել հայ ժողովուրդի մնացորդներուն ինքնապաշտպանութեանը համար, բան մը որ պէտք է ընել, եթէ հարկ է ազատել հայութիւնը վերջնական բնաջնջումէ մը: Ռուսիոյ մէջ գերման բանակի առաջխաղացումին հետ թուրքերը դէպի Կովկաս կ'առաջանան: Թրքական Հայաստանի ռուսներու կողմէ գրաւուած մասերը արդէն վերստին թուրքերու ձեռքը անցած են: Թուրքերը շատ մօտ ատենէն կրնան Անդրկովկաս արշաւել, բայց եթէ դաշնակից կառավարութիւնները առանց ժամանակ կորսնցնելու օգնութեան հասնին հայերուն եւ վրացիներուն, կարելի պիտի ըլլայ կազմել 150,000նոց բանակ մը բաղկացած հայերէ եւ վրացիներէ: Այս բանակը կարող պիտի ըլլայ դիւրութեամբ եւ յաջողութեամբ ետ մղել թրքական բանակի որեւէ յարձակում, որուն թիւը 80,000-90,000ը չ'անցնիր: Վայրկեանը խիստ քրիթիկական է: Յետաձգումները խիստ աղէտալի հետեւանքներ կրնան ունենալ հայ ժողովուրդի մնացորդին համար եւ կրնան չափազանց դժուարացնել դաշնակիցներու յաջողութիւնը Արեւելքի մէջ: Թուրք եւ գերմանները հայերու մեռած դիակներու վրայէն անցնելով կրնան միանալ մօտաւորապէս քսան միլիոն միւսիւման թուրքերուն, այդպիսով իրենց տկարացած բանակներու մարդկային ուժը զօրացնելով: Կովկասեան ճակատի ներկայ կացութիւնը շատ նման է 1915ի սերպիական կացութեան, երբ այդ ազգը ճգմուեցաւ:

Եթէ այն ատեն դաշնակիցները յապաղած չըլլային եւ հասած ըլլային Սերպիոյ օգնութեան, այսօր Պալքան-

ները կրակին ներքեւ պիտի չըլլար. նոյն բանը պիտի պատահի մերձաւոր Արեւելքի մէջ, եթէ դաշնակիցները անմիջապէս ազդուօրէն օգնութիւն չհասցնեն հայերուն իրենց անհաւասար կռիւին մէջ թրքո-գերմաններուն դէմ:

Եւ պո՛ւ. քարտուղար, թոյլ կու տաք ինծի աւելցնել թէ, եթէ հայերը 1914-ին լսած ըլլային թրքո-գերման առաջարկութեան՝ համագործակցելու իրենց Ռուսիոյ դէմ, որուն համար միացեալ թրքական եւ ռուսական Հայաստանի խոստումը ստացած էին, դաշնակիցներու գործը շատ դժուար պիտի ըլլար, քան ինչ որ է այսօր: Հայերը իրենց աւելի քան մէկ միլիոն արեւակիցներուն արիւնի գոհողութիւնով, հաւատարմօրէն դաշնակիցներու դատին ծառայեցին:

Իբր գործնական քայլ, յարգանքով կը խնդրեմ որ արդեօք Մ. Նահանգներու կառավարութիւնը չի կրնար, իրեւ ազդու միջոց մը գերմաններուն դէմ՝ դրամապէս օգնել հայերուն Կովկասի մէջ: Ամերիկեան կառավարութիւնը խոշոր գումարներու փոխատուութիւն ըրաւ ռուս կառավարութեան: Եթէ յարմար կը դատուի 20,000,000 տոլարի փոխատուութիւն մը ընել հայերուն Կովկասի մէջ, որ ինքնին Ռուսիոյ բաղկացուցիչ տարրերէն մէկն է, այդ բանը մեծ օգուտ պիտի ըլլայ նաեւ դաշնակիցներուն դատին, որ դատն է նաեւ Մ. Նահանգներուն:

Յարգանքներով՝ Ձեր խոնարհ ծառան
ՏՈՒԹ. Գ. ՓԱՏՐՄԱՃԵԱՆ

Մասնաւոր պատուիրակ Ն. Ս. Ամենայն հայոց կաթողիկոսին

Քոնկրէս Հոլ, Ուաշինկթոն Տ. Ս.

Կը խնդրուի կարդալ վերջ անմիջապէս վերադարձընել տոյն պատճէն նամակը:





Փաստ. 1406-169

Դ 8.– ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿՈՉԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ

Մթոթույնն ապրիլ [1918 թ.] 14 թուականով կը հեռագրեն, որ Հայաստանի Ազգային Խորհուրդի ներկայացուցիչ պ. Ն. Արոնց, բրոֆեսոր Բեթրոկրատի համալսարանին, հետեւեալ անթել հեռագրական կոչը ուղղած է Պետին Արտաքին գործոց նախարարութեան եւ Բայխաքակի նախագահին:

«Հայաստանի Ազգային Խորհուրդը, որ հայ ժողովուրդի կամքին գերագոյն արտայայտութիւնն է, Չեզ կը դիմէ՝ պարզելու համար ձեր առջեւ հայոց տաժանելի կացութիւնը:

«Հայաստանը, արիւնով ողորուած, հազիւ դուրս եկած իր դարեւոր գերութեան վիճակէն՝ այսօր կրկին մատնուած է տառապանքի: Օգտուելով ռուսական բանակներու ետ քաշուելէն, թուրք բանակները ողորած են անպաշտպան մնացած երկիրը, եւ բնաջնջումի կը մատնեն ոչ միայն թրքահայերը՝ այլ նաեւ հաւասարապէս ռուսահայերը:

«Հակառակ խաղաղութեան պայմաններուն, որոնք Կարսի, Արտահանի եւ Պաթումի կովկասեան երեք շրջաններուն կը ճանչնային իրենց բախտը ինքնորոշելու իրաւունքը, թրքական բանակները կը քալեն Կարսի եւ Արտահանի վրայ՝ թալանելով երկիրը եւ կոտորելով գիւղական բնակչութիւնը:

«Հայոց ապագայ վիճակին ամբողջ պատասխանատուութիւնը Գերմանիոյ ձեռքն է: Ռուս բանակները ետ քաշուած են հայկական նահանգներէն. հիմա գերմանացիք միայն կրնան արգիլել որ թրքական բանակները անձնատուր չըլլան իրենց սովորական ծայրայեղութիւններուն, ատերմի եւ վրէժի իրենց բնագոյններուն:

«Պէտք չէ որ հայերը այն տպաւորութիւնը կրեն, որ Գերմանիոյ պէս մշակուած պետութիւն մը եւ որ ունի պէտք եղած միջոցները ազդելու համար իր դաշնակցին՝ Թուրքիոյ վրայ՝ թոյլ տուած է որ Պրէսթ-Լիթովսքի դաշնագիրը ծառայէ ժողովուրդ մը հակառակ իր կամքին գերութեան ենթարկելու:

«Հայաստանի Ազգային Խորհուրդը համոզուած է, որ դուք ձեռք պիտի առնէք այն միջոցները, որոնք ձեզմէ միայն կախում ունին, ազդելու համար թուրք իշխանութեանց վրայ՝ որպէսզի հայ ժողովուրդին խնայուին նոր սարսափներ»¹⁶³:

Փաստ. 1406-170

Դ 9.– ՊՐԵՍԹ ԼԻԹՈՎՍԿԻ ԴԱՇՆԱԳՐԻ ԴԷՄ ՌՈՒՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԲՈՂՈՔԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ

Արտաքին գործերու կոմիտէի օգնական պ. Չիչէրին հետեւեալ բողոքը ուղղած է գերմանական կառավարութեան.

«Կովկասեան ճակատի վրայ թուրք բանակներու յարձակողականին կ'ընկերանայ հայկական ամբողջ ազգաբնակչութեան զանգուածային բնաջնջումը: Խաղաղ ժողովուրդը, կին ու երախաներ, հազարներով կը կոտորուին, եւ անոնց գոյքերը թալանի ու կրակի կը տրուին:

«Պրէսթ-Լիթովսքի դաշնագրութիւնը, զոր մենք բռնադատուած էինք ստորագրել, Արտահանի, Կարսի եւ Պաթումի ազգաբնակչութեան կը ձգէր իր վիճակը որոշելու իրաւունքը. բայց այն իրողութիւնները, որոնք կը կատարուին այդ շրջաններուն մէջ, ցոյց կու տան, որ հայութիւնը բնաջնջելու հին քաղաքականութիւնը ի գորտ է տակաւին:

«Կովկասեան ճակատին վրայ զինուոց առաւելութիւնը Ռուսիոյ կողմն էր, բայց մենք Արտահանը, Կարսն ու Պաթումը պարտադրուեցանք զիջիլ՝ մի միայն այն պատճառով որ Թուրքիոյ դաշնակիցը Գերմանիան էր:

«Այդ շրջաններու կրած սարսափներու պատասխանատուութիւնը, հիմա որ անոնք գրաւուած են թուրքերու կողմէ, կ'իյնայ ուրեմն Գերմանիոյ վրայ՝ քանի որ անոր ուղղակի աջակցութեամբն է որ Թուրքիա տիրացած է այդ նահանգներուն:

«Ռուս ժողովուրդի Արտաքին գործերու կոմիտէի ատերմի կողմն էր, բայց մենք Արտահանը, Կարսն ու Պաթումը պարտադրուեցանք զիջիլ՝ մի միայն այն պատճառով որ Թուրքիոյ դաշնակիցը Գերմանիան էր: «Այդ շրջաններու կրած սարսափներու պատասխանատուութիւնը, հիմա որ անոնք գրաւուած են թուրքերու կողմէ, կ'իյնայ ուրեմն Գերմանիոյ վրայ՝ քանի որ անոր ուղղակի աջակցութեամբն է որ Թուրքիա տիրացած է այդ նահանգներուն: «Ռուս ժողովուրդի Արտաքին գործերու կոմիտէի ատերմի կողմն էր, բայց մենք Արտահանը, Կարսն ու Պաթումը պարտադրուեցանք զիջիլ՝ մի միայն այն պատճառով որ Թուրքիոյ դաշնակիցը Գերմանիան էր: «Այդ շրջաններու կրած սարսափներու պատասխանատուութիւնը, հիմա որ անոնք գրաւուած են թուրքերու կողմէ, կ'իյնայ ուրեմն Գերմանիոյ վրայ՝ քանի որ անոր ուղղակի աջակցութեամբն է որ Թուրքիա տիրացած է այդ նահանգներուն:»

163.- Այս փաստաթուղթին, ինչպէս նաեւ յաջորդին (1406-170) ձեռագիրները կը պատկանին Արտաւազը Հանրմեանին:





Փաստ. 1406-56

Դ 10.– ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐԷՆ ԱՐՄԷՆ ԳԱՐՈՅԻՆ ԵՒ ՄԻՀՐԱՆ ՍՎԱԶԼԵԱՆԻՆ

Թուլուզ, 18 Ապրիլ 1918

ՀԱՅՈՑ Ա.ՁԳ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ, ՓԱՐԻԶ

Տոքթ. Գ. Փաստրմաճեան,
Մասնաւոր պատուիրակ Ն. Վ. կաթողիկոսին
Ուաշինկթընի մէջ
եւ պ. Սվազլը,
Նախագահ Հայ Ազգ. միութեան, Պոսթըն

Սիրելի հայրենակիցներս,

Իբրեւ շարունակութիւն ներկայ ամիսի 1-ի նամակիս, կը փութամ ձեզի իմացնել թէ Տք. Պարթընէն¹⁶⁴ նամակ մը ստացած եմ, որ ինծի մեծ գոհունակութիւն պատճառած է: Հայկական հարցի լուծման մասին իր զգացումները կը յայտնուին եւ մենք կ'ազատինք այն մտահոգութենէն, որ պատճառած էր մեզի՝ ծերակուտական Լօճին ուղղած իր նամակը Թուրքիոյ մասին ամերիկեան միսիոնարներու հետեւելիք քաղաքականութեան մասին:

Տք. Պարթըն մեզի կը գրէ. «Առաջին առիթով կ'ուզեմ ըսել թէ Թուրքիոյ հետ ոեւէ՛ կերպով իրաւաստութեան գալուն ամբողջովին հակառակ եմ: Ինծի կը թուի թէ Թուրքիա պէտք է անպայման կերպով տեղի տայ թէ վերջին երեք տարիներու ընթացքին ոչինչ չհասած է քան իր վերաբերումը իր հպատակ ժողովուրդներուն: Մ. Նահանգներու բարձր պաշտօնական շրջանակներու մէջ, ինչպէս նաեւ հասարակ կեանքի մէջ, մէ՛կը չեմ գիտեր որ նոյն կարծիքը չունենայ: Թրքական խնդիրին հաշուեյարդարութեան ատեն ոչ-միւսիւման ցեղերուն բացարձակ ազատութիւն պէտք է տրուի, ազատելով զանոնք թրքական յոռի վարչութենէն: Աս է մեր քաղաքականութիւնը:

Այս պարզ եւ յստակ յայտարարութիւնը մեզ ամբողջապէս կ'ապահովցնէ: Նախապէս ունեցած բոլոր երկիւղներս կը փարատին եւ շատ ուրախ [եմ] ըսելու որ կրնանք վստահիլ տք. Պարթընի եւ իր փարթիին:

Ձեր մարտ 13 թուակիր նամակը Պոսթոնէն՝ ստացած եմ, որուն պատասխանած եմ մարտ 25-ի հեռագիրովս եւ ապրիլ 1-ի նամակովս: Անկէ ի վեր ստացած եմ տեղեկութիւն մը, որուն համաձայն Թրոքթի¹⁶⁵, որուն պաշտօնական դիմումներ կատարուած են, խոստացած է դիւրացնել անգլիական զինուորական միսիոնին Թիֆ-

լիզ ժամանումը, որ յետաձգուած էր պոլշեկներու կողմէ յարուցուած դժուարութիւններուն պատճառով:

Հետեւաբար կը յուսանք որ զօրավար Տընսթէրվէլ¹⁶⁶ պիտի կրնայ կովկաս անցնիլ, թէեւ քիչ մը ուշ դժբախտաբար, որովհետեւ Թուրքերը կը շարունակեն յառաջանալ: Ճշգրիտ լուրերը կը պակսին, գիտենք միայն այն, ինչ որ կը կարգանք թերթերուն մէջ, — ինչպէս դուք ալ հոգ: Ամերիկեան մամուլը անկասկած հրատարակած է, ինչպէս եւրոպականը, այն հեռագիրները, որ կը ծանուցանեն Թուրքերու սարքած նոր ջարդերը՝ իրենց յառաջխաղացումի ատեն: Իրենց բնաջընջումի գործէն չբաւականանալով, իրենց գործած ոճիրներուն համար չքմեղանքի պատրուակներ կը փնտռեն, ըսելով թէ հայերն են որ Թուրքերը կը ջարդեն: Անոնք գրեթէ ամէն տեղ գործօն փրփականաւ կը մղեն, մասնաւորապէս Զուլիցերիոյ մէջ, ջանալով ամէն միջոցներով հանրային կարծիքը լարել ի նպաստ իրենց: Կը յուսամ որ չեն յաջողիր իրենց այդ ճիգերուն մէջ: Նկատի ունենալով հայերուն սպառնացող նոր վտանգը հեռագրած եմ բոլոր չէզոք երկիրներու վեհապետներուն եւ նախագահ Ուիլսընին, խնդրելով անոնց միջամտութիւնը ի նպաստ հայերուն: Միւս կողմէ Ազգ. պատուիրակութիւնը պատրաստած է «կոչ մը քաղաքակիրթ աշխարհին», հրատարակուելու բոլոր երկիրներու լրագիրներուն մէջ: Բայց կը խորհինք թէ աւելի լաւ պիտի ըլլար քիչ մը սպասել, քանի որ ան քիչ ուշադրութիւն պիտի գրաւէր ներկայ մեծ ճակատամարտին պատճառով. ուրեմն անոր հրատարակութիւնը պարագաներէն կախում պիտի ունենայ: Ի տեղեկութիւն ձեզի կը զրկեմ անկէ օրինակ մը:

Երէկ միայն ստացայ «Քանկրէշընըլ րէքըրտ»ը, որ կը պարունակէր էտուրրտ Ս. Լիթըլի ճառը, որու ընթերցումը ինծի պատճառեց ամենամեծ գոհունակութիւն: Ճառը հիանալի է, կորովի եւ սքանչելապէս վկայաբանուած (documenté): Բնաւ չեմ տարակուսիր թէ դուք էք որ գինքը լուսաբանած էք այնքան ճշգրտօրէն:

164.- Ճէյմս Պարթըն – Ամերիկեան Նպաստամատոյցի հիմնադիրներէն:
165.- Թրոքթի (Տրոքթի, 1879-1940), հիմնադիր Խորհրդային Ռուսիոյ Կարմիր բանակին, աւելի ուշ հակադրուած Լենինի եւ արքայութեան:
166.- Տրնսթէրվէլ, Պաքու ուղղուող բրիտանական զօրքի հրամանատար:



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Բնականաբար մեծ ազդեցություն պիտի ունենայ ամերիկեան փարլամենտին վրայ, — եւ ճիշտ ժամանակին: Նամակով մը իմ խորունկ երախտագիտութիւնս պիտի յայտնեմ պ. Լիթըլին:

Գալով 119,000 Ֆրանքին, որ Ֆրանսական կառավարութիւնը ինծի յանձնած է մեր կամաւորներու ճամբու ծախքին փոխարէն, գոր փորձած եմ Կովկաս ուղարկել ձեր ցուցումներուն համաձայն, միեւնոյն ատեն ուրիշ գումարներ ալ որ իմ քովս կը գտնուին նոյն նպատակին համար, դժբախտաբար իմ բոլոր ջանքերս ապարդիւն են անցած, նոյնիսկ անկարելի եղած է փոխադրել անգլիական եւ Ֆրանսական կառավարութիւններուն միջոցով: Հետեւաբար ճարահատ դիմած եմ հայանպաստ յանձնախումբին, որ դիտէի թէ վերջերս մեծ գումարներ ուղարկած է Թիֆլիզ: Պ. Վիքսէյ ինծի պատասխանած է թէ յարաբերութիւններու խզումին պատճառով քոմիթէն այլեւս չի կրնար դրամ փոխադրել: Ուրեմն մեզի կը մնայ սպասել:

Միւս կողմէ Ֆրանսական կառավարութիւնը ինծի կ'իմացնէ թէ մօտ ատենէն պիտի վճարէ մեր կամաւորներուն ճամբորդութեան համար եղած ծախքերը, մօտ 153,000 Ֆրանք: Կը խնդրեմ որ ինծի հեռագրէք թէ Ազգ. միութիւնը ի՞նչպէս կ'ուզէր որ գործածեմ այդ գումարը:

Սիրելի հայրենակիցներս, ընդունեցէք լաւագոյն
զգացումներս:
ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐԷ

Յ. Գ.— Հիմա ստացայ պաշտօնական աղբիւրէ հաղորդակցութիւն մը, որ կ'ըսէ թէ (հեռագիր մը Թիֆլիզէն) հակառակ թաթարներու յարուցած խռովութիւններուն, հայերը կը շարունակեն դիմադրել կատաղի կերպով, եւ նոյնիսկ վանը ետ գրաւած են: Երանի՛ թէ այս լուրը հաստատուէր: Ասոր պատճէնը կը դրկեմ պ. Սվազլըին, Պոսթոն:

Պ. Ն.

Փաստ. 1406-59

Դ 11.— ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐԷՆ ԱՐՄԷՆ ԳԱՐՈՅԻՆ ԵՒ ՄԻՀՐԱՆ ՍՎԱԶԼԵԱՆԻՆ

Թուրք, 20 Ապրիլ 1918

ՀԱՅՈՑ ԱԶԳ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ, ՓԱՐԻԶ

Տոքթ. Գ. Փաստրմաճեան,
Մասնաւոր պատուիրակ Ն. Վ. կաթողիկոսին
Ուաշինկիթընի մէջ
եւ պ. Սվազլը ,
նախագահ Հայ Ազգ. միութեան, Պոսթըն

Սիրելի հայրենակիցներս:

Այն ահաւոր վտանգները որ կը սպառնան հայութեան, պոլլեփիքներու դաւաճանութեան եւ Պրեսթ-Լիթովսքի ամօթալի դաշնագրութենէն ի վեր, որ անգամ մըն ալ պատերազմի սկիզբը թուրքերէն ազատուած հայկական գաւառները կը յանձնէ թուրքերուն, Պատուիրակութիւնը կը դնեն նոր կացութեան մը առջեւ:

Այդ լքուած շրջաններու մեր հայրենակիցները, որոնք լքուեցան ռուսերէն եւ չեն կրնար օգնութիւն ստանալ դաշնակիցներէն՝ յուսահատ եւ հերոսական կռիւ կը մղեն: Դժբախտաբար չենք կրնար անոնց օգնել ոչ Հայաստանի եւ ոչ ալ Կովկասի մէջ եւ ուրիշ միջոց

չունինք բայց եթէ ճիշտ մը ընել այն թատերավայրին մէջ, ուր դաշնակիցները կը կռուին թուրքերուն դէմ եւ կրնան յուսալ՝ խորտակելով անոնց ուժերը, հասնիլ հայկական հող — այն է Միւրիա եւ Պաղեստին: Մեր հայրենակիցներուն միայն այդ պատեհութիւնը կայ եւ հոն է որ, Ազգ. պատուիրակութիւնը կը խորհի, պէտք է մեծ ճիշտ մը ընել եւ դաշնակիցներու տրամադրութեան տակ դնել Արեւելեան լեզէոնի մեր կամաւորները, կռուելու Պաղեստինի եւ Միւրիայի բանակներու ընդհ. հրամանատարին ղեկավարութեան տակ: Պատուիրակութիւնը չի կասկածիր թէ աչքի առջեւ ունենալով այն վտանգը որ կը սպառնայ մեր դատին՝ մեր Կիպրոսի կամաւորները խանդավառութիւնով պիտի ընդունին այս կարգադրութիւնը: Ասոր հետ խիստ կարեւոր է որ միեւնոյն ատեն որքան կարելի է մեր կամաւորական գունդերու թիւը մեծցնել, ջանք թափելով այն ամէն երկիրներուն մէջ ուր կ'ապրին հայեր, որոնք պիտի կռուին ամբողջապէս Մերձաւոր Արեւելքի դաշնակից բանակներուն մէջ, նպատակ ունենալով Հայաստանի, ինչպէս նաեւ Միւրիայի եւ Պաղեստինի ձերբազատութիւնը:

Գիտեմ թէ Ամերիկայի մեր հայրենակիցները պիտի չվարանին այս ճիշտ գործել, ես այսպէս է որ ըմբռնած





եմ այն հեռագիրը, որուն [մէջ] ըսեր էինք թէ անոնք պատրաստ են ամէն գոհողութեան: Արդէն շատ կարեւոր գոհողութիւն մըն է որ կ'ընեն, բանալով նոր հանգանակութիւն մը, որուն համար ձեզի յայտնած էի շնորհակալութիւններս եւ շնորհաւորութիւններս, եւ չեմ տարակուսիր թէ մեծ խումբերով պիտի ներկայանան արձանագրուելի (գինուորագրուելի):

Այն շարժառիթները, որոնց համաձայն մեր կամաւորներու արձանագրութիւնը դադրեցուցինք Ամերիկայի մէջ, անցեալ տարի, ինչպէս կը յիշէք, էին,—

Թուրքերու կողմէ փոխ-վրէժի վախը.

Պայմանագրութիւնը թէ կամաւորները հայկական հողի վրայ միայն պիտի կռուէին.

Ամերիկայի պատերազմի մոտաքը, որ հետեւանք ունեցաւ այն որ Ամերիկայի մէջ բնակող հայերը ստիպւեցան գինուոր տարուել ամերիկեան բանակին մէջ, այնպէս որ երբ Ֆրանսական կառավարութիւնը մեր տրամադրութեան տակ շոգենաւ մը կը դնէր կամաւորներու փոխադրութեան համար, կարելի չեղաւ բաւականաչափ կամաւոր գտնել զայն լեցնելու համար:

Ինչ կը վերաբերի թուրքերու փոխ-վրէժին, այս պատճառաբանութիւնը կորսնցուցած է, դժբախտաբար, իր արժէքը, որովհետեւ թուրքերը առանց այդպիսի պատրուակներու ալ առաջ տարած են իրենց բնաջնջումի գործը:

Չափաւոր սահմանի մը մէջ արձանագրութեան պայմանը այլեւս արգելք մը չի կրնար ըլլալ, քանի որ

նոր արձանագրութիւններ պէտք են, որոնց համար այդ պայմանը պիտի ջնջուի:

Երրորդ պատճառը, որ էր Ամերիկայի պատերազմի մոտաքը, եւ նոր կամաւորական արձանագրութիւնները պիտի ըլլան ամերիկեան կառավարութեան հաւանութեամբ, որուն համար պէտք եղած դիմումները պիտի կատարուին: Ամերիկեան բանակին մէջ գինուորագրուած հայերը Արեւելեան լեզէոնին փոխանցումին համար Ֆրանսական կառավարութիւնը խոստացած է աջակցիլ Ուաշինկթընի Ֆրանսական դեսպանին միջոցով: Եւ կը յուսամ թէ այս խնդիրին մասին ամերիկեան կառավարութիւնը դժուարութիւններ պիտի չյարուցանէ մեր կամաւորական նոր շարժումին:

Պատուիրակութիւնը արդէն դիմում կատարած եւ լսուած է, որպէսզի մեր կամաւորական խումբերու փոխադրութեան մէջ այլեւս ձգձգումներ եւ սխալներ տեղի չունենան, ինչպէս առաջ: Եթէ բաւարար թիւով կամաւորներ արձանագրել կարելի ըլլայ, իմացուցէք մեզի հեռագիրով նշանակելով մօտաւոր թուական մը անոնց մեկնումին համար, որպէսզի աւելորդ սպասումներ տեղի չունենան այն նաւահանգիստին մէջ, ուրկէ պիտի մեկնին, եւ Ֆրանսական կառավարութիւնը մեզի խոստացած է ձեր տրամադրութեան տակ դնել մասնաւոր նաւեր՝ իր ատենին: Լաւ պիտի ըլլար քանի մը օր առաջ մեզի իմացնել, որպէսզի կարելի ըլլար նաւերու համար նախապէս պէտք եղած կարգադրութիւնը ընել:

Թուրքի շրջանակներէն կը գրեմ ձեզի, ուր եկած [եմ] տեղաւորելու Տիկին Նուպարը, որ հիւանդ է, բայց կը խորհիմ նորէն վերադառնալ Փարիզ անմիջապէս¹⁶⁷:

Լաւագոյն զգացումներով՝
ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

167.- Պօղոս Նուպարի վերջին երկու գրութիւնները կը ներկայացնեն լեզուական անկրախ անհարթութիւններ, հետեւանք՝ յայտնաբար ֆրանսերէն բնագրէն կատարուած երբեմն բառացի ոչ իմաստային քարզամութեան:






Փաստ. 1378-20

Դ 12.- ԼԻՊԱՐԻՏ ՆԱԶԱՐԵԱՆՑԷՆ Հ.Յ.Դ. ԺԸՆԵԻԻ ՀԱՅ ԿՈՍԻՏԵԻՆ¹⁶⁸

Պեդիմ, 27-IV-1918



Au Comité Arménien de Genève

Messieurs,

Depuis quelques jours nous sommes ici – moi, Archak Djamalian et Georges Mélik-Karageosian – comme délégués du Conseil National Arménien, pour négocier avec le gouvernement allemand et ses alliées en vue de régler quelques affaires arméniennes. Nous nous sommes déjà présentés au Ministère des affaires Etrangères et dès demain commençons nos pourparlers.

En attendant nous considérons utile, pour que vous cessiez la propagande, surtout que nous espérons d'arriver à des résultats positives.

Nous resterons ici jusque 10 mai.

Agréez nos salutations bien amicales.
L. NAZARIANTZ

Թարգմանութիւնը.—

Պարոններ,

Քանի մը օրէ ի վեր հոս ենք – ես, Արշակ Զամալեան եւ Գէորգ Մելիք-Ղարակէօզեան – որպէս պատուիրակներ Հայ Ազգ. խորհուրդի, գերմանական կառավարութեան եւ անոր դաշնակիցներուն հետ կարգ մը խնդիրներ կարգադրելու նպատակով: Արդէն ներկայացանք Արտաքին գործոց նախարարութիւն եւ վաղն իսկ կը սկսինք մեր բանակցութիւններուն:

Մինչ այդ, օգտակար կը համարենք որ դուք դադրեցնէիք քարոզչութիւնը¹⁶⁹, մանաւանդ որ կը յուսանք յանգիլ դրական արդիւնքներու:

Հոս պիտի մնանք մինչեւ 10 Մայիս:

Սիրալիր բարեկներով՝
Լ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

168.- Իմա՝ «Դրօշակ»ի խմբագրութեան:

169.- Ըսել կ'ուզէ հակագերման քարոզչութիւնը:



Փաստ. 1406-68

**Դ 13.- ԱՐՄԵՆ ԳԱՐՈՅԻ ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄՈՒՍԸ
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԼԵՆՍԻՆԿԻ
ԿՈՎԿԱՍԻ ՏԱԳՆԱՊԱԼԻ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Վաշինգթոն, 10 Մայիս 1918

Congress Hall Hotel,
Washington, D.C.

May 10th 1918

His Excellency,
The Hon. Robert Lansing,
Secretary of State,
Washington D.C.

Your Excellency,

By a letter dated the 4th of March, 1918, I took the liberty to call your attention, and through you, that of the United States Government, to the most critical situation which was created on the Caucasian front through the Brest-Litovsk Treaty. At the time when that treaty was signed the disorganized Russian Army abandoning everything, withdraw to the interior of the country. All this took place so suddenly that the newly formed Armenian contingents did not have the possibility of occupying the trenches abandoned by the Russian Army. What happened at Erzeroum may here be cited as an exemple. The Russian troops retired from that stronghold in one day. So that with the few volunteers even Armenian women had to take up arms for the defence of the fortifications, until some detachments of the newly formed Armenian Army arrived from Tiflis.

As it was foreseen, the Turks availing themselves of this situation, advanced at once in the course of these two months occupied most of the liberated provinces of Turkish Armenian except the City of Van, which was occupied by them for a few days, and then recaptured by the Armenian forces.

The Turks, however, will not be satisfied with the reoccupation of provinces which formed part of the Ottoman Empire before 1914. They have already crossed the old Russian frontier, have occupied the important port of Batoum and the stronghold of Kars. But the Turko-German projects are too ambitious to be satisfied with that. The Turko-Germans will use every means to

Թարգմանութիւնը.—

Զերդ Վսեմութիւն,

Մարտ 4, 1918 թուականի նամակով¹⁷⁰ մը ձեր եւ, ձեր միջոցով Միացեալ Նահանգներու կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրեցի այն չափազանց տագնապալի կացութեան վրայ, որ ստեղծուած էր կովկասեան ճակատի վրայ իբրեւ հետեւանք Պրեստ-Լիթովսկի դաշնագրին. այն ժամանակ՝ երբ ռուսական կազմալուծուած բանակը, ամէն ինչ լքելով, կը նահանջէր երկրին խորերը: Այս բոլորը տեղի ունեցան այնքան յանկարծակիօրէն, որ նորակազմ հայկական զօրաբաժինները հնարաւորութիւն չունէին գրաւելու ռուսական բանակի լքած դիրքերը: Հոս կարելի է յիշել այն ինչ որ պատահեցաւ Էրզրումի մէջ.— ռուսական զօրանդերը մէկ օրուան մէջ հեռացան այդ ամրութիւնէն, այնպէս որ սակաւաթիւ կամաւորներու կողքին նոյնիսկ հայ կիները ստիպուեցան զէնք վերցնել ամրոցի պաշտպանութեան համար, մինչեւ որ Թիֆլիսէն հասնին հայկական նորակազմ բանակի կարգ մը ջոկատներ:

Ինչպէս նախատեսելի էր, թուրքերը այս կացութիւնը օգտագործելով, յառաջ անցան անմիջապէս եւ այս երկու ամիսներու ընթացքին գրաւեցին Թրքահայաստանի ազատագրուած նահանգներուն մեծ մասը, բացի Վան քաղաքէն, որ այդ միջոցին քանի մը օրով գրաւուած իրենց կողմէ՝ ապա վերստին անցաւ հայկական զօրքերուն ձեռքը:

Թուրքերը, այսուհանդերձ, պիտի չբաւականան վերագրաւումովը այն նահանգներուն, որոնք նախքան 1914 թ. մաս կը կազմէին Օսմանեան կայսրութեան: Արդէն անցած են անոնք ռուսական նախկին սահմանը, գրաւած՝ Պաթում կարեւոր նաւահանգիստ եւ Կարսի ամրոցը: Սակայն թուրք-գերմանական առաջադրանքերը շատ աւելի փառասիրական են այդքանով գոհա-

170.- Նշուած նամակը տեսնել էջ 71-72:



reach Baku and to dominate the basin of the Caspian Sea, as well as all the countries where the majority of the population amounting to nearly 20,000,000 consists of Tartars or of members of other tribes of Touranian Moslems. This is the German "Drang nach ost[en]". The German under the present circumstances are for their own benefit exploiting the pan-Touranian projects of the Turks, holding to the latter the vision of collecting the royalties, etc., of the rich Baku oil mines, which alone yielded to the Russian Government two hundred million rubles per annum, almost equal to the total yearly revenues of the impoverished, bankrupt Turkish Empire.

And it is no longer Russia, the mighty Empire that exercised a repressive force over the Moslems which is barring the way of the Germano-Turkish borders, seeking to advance towards the East, but only the Armenian and Georgians of the Caucasus, whose total number does not exceed four and a half millions. And if the Bolshevik Government had disclosed its projects sooner, it is probable that the Armenians and Georgians would have had time to organize their military forces, the majority of which was scattered in the Russian Empire. And if those forces had been concentrated at the Caucasian front, the exhausted Turkish Army would have hardly been able to advance.

It is a well known fact that Armenians and Georgians together had 310,000 officers and men scattered in the Russian Army. 160,000 Armenians and 150,000 Georgians. While at present these two nations together have hardly been able to bring together 124,000 men, (50,000 Georgians and 74,000 Armenians). According to the latest information at hand the Armenians will have until June another army corps under arms, so that the number of Armenian troops will be 124,000 of whom 100,000 regulars and 24,000 volunteers.

And as the present struggle in the Caucasus has taken a religious aspect, the other Christian races in the country, Russians, Greeks and Assyrians, though less in number have formed their own National battalions and have united with the Georgians and Armenians against the Germano-Turkish regular troops on the one side, and on the other side against the Tartare and Moslem mountaineers of northern and eastern Caucasia who are already attempting to help by arms realization of the Germano-Turkish projects.

The latest telegrams clearly show the critical state of the Christian nationalities in the Caucasus. The railroad communications with Russia are cut; famine is taking awful proportions; surrounded on two sides by hostile elements, the small Armeno-Georgian Army has

նալու համար: Թուրքերն ու գերմանացիները ամէն միջոցի պիտի դիմեն Պաքու եւ Կասպից ծովու շրջան հասնելու եւ տիրելու այն բոլոր երկիրներուն, որոնց բնակչութեան մեծամասնութիւնը բաղկացած է մօտ 20 միլիոն թաթարներէ կամ Թուրանի պատկանող մահմետական ցեղախումբերէ: Ասիկա գերմանական «ներքին մղում է դէպի Արեւելք»:

Ներկայ պարագաներուն մէջ, գերմանացիները իրենց սեփական շահերուն համար, կը շահագործեն թուրքերու համաթուրանական ծրագիրները, վերջիններուն խոստանալով շահաբաժին եւայլն Պաքուի հարուստ քարիւղի հանքերէն, որոնց առանձին հասոյթը ռուսական կառավարութեան համար տարեկան երկու հարիւր միլիոն ռուբլի էր, գրեթէ համազօր ամողջութեանը՝ աղքատացած, սնանկացած թրքական կայսրութեան տարեկան եկամուտներուն:

Եւ այլեւս Ռուսիան չէ, մահմետականութեան ճնշիչ եւ զսպողական այդ հզօր կայսրութիւնը, որ թումբ կը կանգնի այսօր գերմանո-թրքական հորդաներու դէպի Արեւելք ընթացող ճամբան փակելու համար, այլ միայն Կովկասի հայերն ու վրացիները, որոնց ընդհանուր թիւը չորս ու կէս միլիոնէն աւելի չէ: Եւ եթէ բոլշեւիկեան կառավարութիւնը աւելի կանուխ բացայայտած ըլլար իր առաջադրանքները, հաւանաբար հայերն ու վրացիները ժամանակ ունենային կազմակերպելու իրենց ռազմական ուժերը, որոնց մեծամասնութիւնը ցրուած է ռուսական կայսրութեան տարածքին: Եւ եթէ այդ զօրքերը կեդրոնացած ըլլային կովկասեան ճակատին վրայ, թրքական ուժասպառ բանակը դժուար թէ կարողանար առաջ շարժիլ:

Ծանօթ է ամէնքին որ հայերն ու վրացիները միասնաբար ունին 310,000 սպաներ եւ զինուորներ ռուսական բանակին մէջ — 160,000 հայ եւ 150,000 վրացի: Մինչդեռ այժմ, այս երկու ազգերը միասին, դժուարաւ կարողացած են հաւաքել 124,000 մարդ — 50,000 վրացի եւ 74,000 հայ: Մեր ձեռքը ունեցած վերջին տեղեկութեանց համաձայն, մինչեւ Յունիս հայերը ձեռքի տակ պիտի ունենան ուրիշ գունդ մը, այնպէս որ հայկական զօրքերու թիւը պիտի ըլլայ 124,000, որուն 100,000-ը կանոնաւոր եւ 24,000-ը՝ կամաւորներ:

Եւ որովհետեւ կովկասեան ներկայ պայքարը ստացած է կրօնական նկարագիր, երկրամասի քրիստոնեայ միւս ժողովուրդները՝ ռուս, յոյն եւ ասորի, թէ եւ թուով նուազ, կազմած են իրենց սեփական գունդերը եւ միացած վրացիներուն ու հայերուն ընդդէմ մէկ կողմէ՝ գերմանո-թուրք կանոնաւոր զօրքերուն, միւս կողմէ՝ թաթարներուն եւ հիւսիսային ու արեւելեան Կովկասի մահմետական լեռնականներուն, որոնք կը ջանան զէնքով օժանդակել գերմանո-թուրք ծրագիրներուն իրագործման:

Նորագոյն հեռագրալուրերը յստակ կերպով ցոյց



to oppose the advance of the Turkish regular Army on the west and to defend the Christian population in the eastern provinces against Tartaric plunder and massacre.

As I had the honor to submit in my previous letter, it is only by passing over the dead bodies of Armenians and Georgians that the Turks may succeed in joining the Moslems of the Caspian districts. The events of the last two months have shown with what courage these two old Christian people of the East can resist the danger which threatens them.

Since November last the inter-Allied War council of Versailles took into consideration the strategic importance of the Caucasian front, and therefore decided to send the Armenians financial and military assistance. According to information from the Caucasus, the financial assistance that the Allies have been able to extend up to this date is between eight and ten million roubles, but the promised military assistance has not as yet been materialized.

The example of Serbia is before us and the Caucasus is much farther from the Allies than Serbia was.

It was the above considerations which led me to take The liberty to call the special attention of the United States Government to the hopeless condition of our unfortunate people, trusting, as I do now, that should the United States Government see its way clear to invite the serious attention of the Allies to the situation in the Caucasus, and to extend, at the same time, its own financial assistance, it would be possible, First to save these two old civilized people in the East and secondly to check the dangerous Germano-Turkish advance into the heart of Asia.

Assistance from outside seems to be the only possible salvation for the Armenians and the Georgians. The Caucasian Government does not recognize the authority of the Bolshevik Government, therefore the latter – which has signed the Brest-Litovsk treaty – cannot be induced to advance any financial assistance destined for military purposes. On the other hand, in the present chaotic state of affairs, the Caucasian Government is unable to collect taxes not only to carry on military operations, but even to run the ordinary machine of the administration.

Born and brought up at Erzeroum and having lived ten years in the Caucasus, I have had the opportunity of acquiring first hand knowledge of the local conditions.

And I can assure Your Excellency that if the necessary financial assistance should reach the Armenian

կու տան Կովկասի քրիստոնեայ ազգաբնակչությանը տագնապալի կացութիւնը: Ռուսիոյ հետ երկաթուղային հաղորդակցութիւնները կտրուած են: Երկու կողմերէն շրջապատուած թշնամի տարրերէ՝ հայ-վրացական փոքրաթիւ բանակը արեւմտեան ճակատի վրայ ստիպուած է դէմ դնել թրքական կանոնաւոր բանակի յառաջխաղացքին եւ, արեւելեան նահանգներուն մէջ, պաշտպանել քրիստոնեայ ազգաբնակչութիւնները թաթար աւարողներու եւ ջարդարարներու դէմ:

Ինչպէս յայտնած էի նախորդ նամակովս, միայն հայերու եւ վրացիներու դիակներուն վրայէն է որ թուրքերը կրնան յաջողիլ կասպեան գաւառներու մահմետականներուն միանալ: Վերջին ամիսներու դէպքերը ցոյց տուին թէ ինչ քաջութեամբ Արեւելքի այս քրիստոնեայ վաղեմի ժողովուրդները կրնան դէմ դնել իրենց սպառնացող վտանգին:

Վերսալի մէջ Դաշնակիցներու Պատերազմական ատենանք, վերջին Նոյեմբերին, նկատի առաւ կովկասեան ճակատի ռազմագիտական կարեւորութիւնը եւ, հետեւաբար, որոշեց Ֆրինսասական եւ ռազմական օժանդակութիւն ուղարկել հայերուն: Կովկասէն հասած տեղեկութեանց համաձայն, Դաշնակիցներու Ֆրինսասական օժանդակութիւնը ցարդ եղած է ութէն տասը միլիոն ռուբլի միջեւ, սակայն խոստացուած ռազմական օգնութիւնը տակաւին չէ իրականացած:

Սերպիոյ օրինակը մեր առջեւն է, եւ Կովկասը շատ աւելի հեռու կը գտնուի Դաշնակիցներէն քան Սերպիան:

Վերոյիշեալ նկատումներով է որ համարձակեցայ Միացեալ Նահանգներու կառավարութեան ուշադրութիւնը հրակրել մեր դժբախտ ժողովուրդի յուսահատական կացութեան վրայ, վստահելով, ինչպէս կ'ընեմ ներկայիս եւս, որ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը Դաշնակիցներու լուրջ ուշադրութեան կը յանձնէ Կովկասի կացութիւնը եւ, միեւնոյն ժամանակ, անոր կ'աւելցնէ իր սեփական նիւթական օժանդակութիւնը, նախ՝ փրկելու համար Արեւելքի այդ երկու քաղաքակրթեալ ժողովուրդները եւ ապա՝ արգելք հանդիսանալու գերմանո-թրքական յառաջխաղացքին դէպի Ասիոյ խորերը:

Կը թուի թէ հայերու եւ վրացիներու փրկութեան համար կարելի միակ միջոցը արտաքին օժանդակութիւնն է: Կովկասի կառավարութիւնը չի ճանչնար բոլշեւիկեան կառավարութեան հեղինակութիւնը: հետեւաբար վերջինս, որ Պրեստ Լիթովսկի դաշնագիրը ստորագրած է, չի կրնար ռազմական օգնութեան նպատակով որեւէ օգնութիւն կատարել: Միւս կողմէ, իրերու ներկայ քաոսային դրութեան մէջ, Կովկասի կառավարութիւնը ի վիճակի չէ հարկեր գանձելու ոչ միայն ռազմական գործողութիւնները շարունակելու, այլ մինչեւ իսկ ընթացիկ վարչամեքենան բանեցնելու համար:

Ծնած ու մեծցած ըլլալով էրզրումի մէջ, եւ տասը





ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՐ

and Georgian national Councils in time, the latter will be able to secure food, stuff and other requisites from the friendly Cossacks of the northern Caucasus, and they will also be able to procure large quantities of arms and ammunition from southern Russia, thus keeping up the struggle successfully until they receive the British military assistance promised them six months ago.

տարի Կովկաս ապրած, առիթ ունեցած եմ անձամբ ծանօթ ըլլալու տեղական պայմաններուն: Ես կրնամ վրստահեցնել Ձերդ Վսեմութիւնը, որ եթէ ատենին նիւթական անհրաժեշտ օժանդակութիւն հասնի հայոց եւ վրաց Ազգ. Խորհուրդներուն, վերջինները պիտի կարողանան սննդեղէն, զգեստեղէն եւ այլ պիտոյքներ ապահովել հիւսիսային Կովկասի բարեկամ կողաքներէն. ի վիճակի պիտի ըլլան նոյնպէս հայթայթելու մեծ քանակութեամբ զէնք ու զինամթերք հարաւային Ռուսիայէն, այս ձեւով յաջողութեամբ շարունակելու համար պայքարը, մինչեւ որ ստանան վեց ամիսներ առաջ իրենց խոստացուած բրիտանական ռազմական օգնութիւնը:

I have the honor to be,
Sir
Your obedient Servant.

(signed) DR. C. PASDERMADJIAN

Special Envoy of His Holiness
The Catholicos of all Armenians

Յարգանքներով՝
(Ստորագրութիւն)
Տ. թ. Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ

Յատուկ պատուիրակ՝
Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց կաթողիկոսի



Փաստ. 1686-3

Դ 14.– ԿՈՎԿԱՍԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 18ԴՑ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

[Ներկայացուած Միք. Վարանդեանի կողմէ]

THE TRAGEDY OF THE CAUCASUS

MEMORANDUM PRESENTED TO THE 18TH ANNUAL CONFERENCE OF THE BRITISH LABOUR PARTY

The Brest-Litowsk Arrangement will, perhaps, be the greatest calamity in Armenia's history, already rich in disaster and horror. It has handed over to the Turks not only the provinces of Turkish Armenia freed during this war at the cost of such heavy sacrifice, but also Russian Armenia, forming part of the Caucasian administration and Persian Armenia.

We shall not speak here of the unprecedented atrocities committed since the outbreak of war in Turkish Armenia; these have recently been set in the memorandum submitted by the comrades to the Dutch-Scandinavian Commission. The details of the great Armenian tragedy were compiled from unimpeachable sources and confirmed by the testimony of Germans – professors, members of the Red Cross in Armenia, and others – and are published in the last British Blue Book, presented to Lord Grey by Viscount Bryce. The victims of the massacres perpetrated by order of the Turkish Government number about a million. Hundreds of thousands of men, women, and children were butchered with a refinement of cruelty unparalleled in history. The country was ravaged from end to end; life was brought to a standstill. After the revolution of the Young Turks, to the success of which the Armenians had contributed no small share, our party displayed great progressive activity throughout almost the whole of Anatolia. Far from entertaining any separatist aims,

Թարգմանութիւնը:—

Պրեստ-Լիտովսկի համաձայնագիրը հաւանաբար մեծագոյն աղէտը պիտի հանդիսանայ Հայոց պատմութեան մէջ, որ այլապէս հարուստ է աղէտներով ու սարսափներով: Թուրքերուն տրուած է արդէն ոչ միայն այս պատերազմի ընթացքին այնքան ծանր զոհողութիւններով իրենցմէ ազատագրուած նահանգները, այլև Կովկասի վարչութեան պատկանող Ռուսահայաստանն ու Պարսկահայաստանը:

Մենք պիտի չխօսինք պատերազմի առաջին օրերէն թրքահայաստանի մէջ գործուած գազանութիւններու մասին: Անոնք տեղ գտած են վերջերս Հոլանտո-սկանտինաւեան յանձնաժողովին մեր ընկերներու կողմէ ներկայացուած Յիշատակագրին մէջ¹⁷¹: Հայկական մեծ ողբերգութեան մանրամասնութիւնները հաւաքուած են գերմանական անժխտելի աղբիւրներէ, – դասախօսներէ, Հայաստանի մէջ Կարմիր խաչի անդամներէ եւայլն – եւ հրատարակուած՝ դերկոմս Պրայսի կողմէ Լորտ Կրէյի ներկայացուած՝ բրիտանական վերջին Կապոյտ գրքին մէջ¹⁷²: Թուրք կառավարութեան հրամանով գործուած ջարդերու զոհերուն թիւը կը հասնի շուրջ մէկ միլիոնի: Հարիւր հազարաւոր տղամարդիկ, կիներ եւ երեխաներ սպաննուած են պատմութեան մէջ նմանը չտեսնուած հազուագիւտ վայրագութեամբ մը: Երիտասարդ թուրքերու յեղափոխութենէն ետք, որուն յաջողութեան քիչ չեն նպաստած հայերը, մեր կուսակցութիւնը յառաջդիմական մեծ գործունէութիւն ծաւալեց գրեթէ ամբողջ Անատոլի տարածքին: Հեռու

171.- Նշուած Յիշատակագիրը կազմուած էր Ռոստոմի կողմէ, որ Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ մասնակցած էր Ստոկհոլմի ընկեր-վարական համագումարին: Յիշատակագիրը՝ իր ֆրանսերէն բնագրով եւ հայերէն թարգմանութեամբ, տեսնել «ՆԻԻԹԵՐ»ու ԺԲ. հատորին մէջ, էջ 270-305:

172.- Խօսքը կը վերաբերի փաստագրական այն ծաւալուն հատորին, որ 1916ին կազմուած էր Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Դերկոմս Կրէյի պատուէրով եւ կը կրէր «The Treatment of Armenians in Ottoman Empire» (1915-16) խորագիրը: Փաստաթուղթերը հաւաքողն էր Մեյնս Պրայս, որ գրքին խմբագրութեան գործը վստահած էր պատմաբան Անուլտ Թոյլըմպի: Հայոց տարագրութեան եւ համատարած կոտորածներու մասին՝ հայ եւ մանաւանդ օտարազգի ականատեսներու հարիւրաւոր վկայութիւններով կազմուած այս գիրքը տարի մը ետք, 1917ին, ֆրանսերէն թարգմանութեամբ լոյս տեսաւ Փարիզ:



but, on the contrary, being sincere partisans of the integrity of the Empire – as was proved by their most loyal attitude during the Balkan wars – the Armenians worked zealously for the regeneration of Turkey, which had been ruined by thirty years of the Abdul-Hamid regime. Our party had its trades-organisations and cooperative societies, its own printing presses and daily newspapers at Constantinople, Erzerum, Van, Amassia (as also in the Caucasus and in Russian Armenia, at Tiflis, Baku, Erivan, Alexandropol, and Shusha).

When the war broke out and the Armenians were accused *en masse* of sympathy with the Allies, the persecutions began. The Turks set to work to render the Armenian race headless before proceeding to mutilate and destroy its body. Our printing presses were destroyed, every vestige of Armenian intellectual life was suppressed; all our leaders and hundreds of our comrades, writers, professors, lawyers, and journalists were arrested, deported and executed. Words fail to describe all the horrors wrought by the Young Turk Government in the unfortunate country of Armenia, which surpassed the cruelties of Abdul-Hamid.

And still it would seem that the martyrdom of Armenia has not yet come to an end. The Turks are now in the Caucasus, in Russian Armenia; and the two million of Armenians in that region are threatened with the same fate as that of their compatriots of Turkish Armenia.

After the abandonment of the Armenian Front by the Maximalist troops, the Turkish Army lost no time in the reoccupation of the lost vilayets of Bitlis, Trebizond, Erzerum and Van. But these unexpected successes did not satisfy them. Overcoming the resistance of the Armenian volunteers and exterminating the defenceless Armenian population they came across, the Turks advanced towards the Transcaucasian territories in order to take possession of Kars, Ardahan, and Batum, which the Bolsheviks had handed over to them by the Peace of Brest-Litovsk. Meanwhile, Transcaucasia had declared its independence. The four chief nationalities of that land, Armenians (two millions), Georgians (two millions), Mohammedan Tartars (two millions), Russians (one million), formed a Diet and a Government, which clearly pronounced themselves opposed to the Bolshevik régime, declaring that Transcaucasia would await the summoning of the all-Russian Constituent Assembly (dissolved by Lenin) to join the great Federated Russian Republic.

Transcaucasia, not recognising the Maximalist Government, disavowed the Brest-Litovsk agreement and

անջատողական որեւիցէ նպատակ հետապնդելէ, այլ ընդհակառակն, կողմնակից ըլլալով անկեղծօրէն կայսրութեան ամբողջականութեան պահպանման – ինչպէս փաստուեցաւ Պալքանեան պատերազմի ընթացքին իրենց անվերապահ կեցուածքով – հայերը եռանդազին գործեցին վասն վերածնունդին Թուրքիոյ, որ քայքայուած էր Ապտիւլ Համիտի երեսնամեայ վարչակարգին օրով: Մեր կուսակցութիւնը ունէր իր արհեստակցական կազմակերպութիւնները եւ համագործակցականները, իր սեփական մամուլն ու օրաթերթերը Կոստանդնուպոլսոյ, Էրզրումի, Վանի, Ամասիոյ մէջ (ինչպէս նաեւ Կովկաս եւ Ռուսահայաստան՝ Թիֆլիսի, Երեւանի, Ալեքսանդրապոլսոյ եւ Շուշիի մէջ):

Երբ ծագեցաւ պատերազմը եւ հայերու ամբողջութիւնը ամբաստանուեցաւ իբրեւ համակրող Դաշնակիցներուն, սկսան հալածանքները: Թուրքերը գործի անցան անգլուխ դարձնելու համար հայերը՝ նախքան անոր մարմնին քանդումը: Քանդուեցաւ մեր տպագիր մամուլը, ջնջուեցաւ հայ մտաւորական կեանքի ամէն հետք. մեր բոլոր ղեկավարներն ու հարիւրաւոր ընկերները, – գրողներ, դասախօսներ, իրաւաբաններ եւ հրապարակագիրներ – ձերբակալուեցան, տարագրուեցան ու սպաննուեցան: Բառերը կը պակսին նկարագրելու համար տարաբախտ Հայաստանի մէջ Երիտասարդ Թուրքերու ի գործ դրած գազանութիւնները, որոնք գլխին-անցան Սուլթան Համիտի ոճիրները:

Կը թուի թէ Հայաստանի մարտիրոսութիւնը տակաւին վախճանին չէ հասած: Այժմ Թուրքերը Կովկաս են, եւ այդ շրջանի երկու միլիոն հայերուն հետ կը վարուին այնպէս ինչպէս վարուեցան Թրքահայաստանի անոնց հայրենակիցներուն հետ:

Մեծամասնական գործերու հայկական ռազմաճակատէն հեռանալէն ետք, Թրքական բանակը ժամանակ չկորսնցուց վերագրաւելու համար Պիթլիսի, Տրապիզոնի, Էրզրումի եւ Վանի նահանգները: Սակայն անոնք չգոհացան անսպասելի այս յաջողութիւններով: Ճնշելէ ետք հայ կամաւորներու դիմադրութիւնը, եւ կոտորելէ ետք անպաշտպան հայ բնակչութիւնը, Թուրքերը յառաջացան Անդրկովկասի հողամասերէն ներս, որպէսզի գրաւեն Կարսը, Արտահանը, Պաթումը, զորս բուլղերիկները իրենց յանձնած էին Պրեստ-Լիտովսկի դաշնագրով: Մինչ այդ Անդրկովկաս հռչակած էր իր անկախութիւնը: Երկրամասի գլխաւոր չորս ազգութիւնները, – հայերը (երկու միլիոն), վրացիները (երկու միլիոն), մահմետական թաթարները (երկու միլիոն), ռուսները (մէկ միլիոն) կազմեցին խորհրդարան (Մէյմ) եւ կառավարութիւն (Կոմիտասարիատ), որոնք յստակօրէն դէմ արտայայտուեցան բուլղերիկեան վարչակարգին, յայտարարելով որ Անդրկովկասը պիտի սպասէ համառուսական Սահմանադիր ժողովի գումարումին (Լենինի կողմէ լուծուած) որպէսզի միանայ ռուսական դաշնակցային մեծ միութեան:

Զճանչնալով մեծամասնական կառավարութիւնը՝



declared war on Turkey. An army of about 150,000 men was improvised in great haste to oppose the Turkish peril and to safeguard the freedom and independence of the Caucasus. Unfortunately, from the very start internal dissensions paralysed the common effort. The Mohammedan population of Turco-Turanian stock, long the object of the attentions of emissaries from Constantinople, as well as of the agents of pan-Turanian and pan-Islamic propaganda, refused to take any share in the defensive war against the Turks. Moreover, the Tartars were only awaiting a favourable moment to make common cause with the invaders and to rise against the Socialistic Government which was headed by Georgians, Russians and Armenians. The Tartars, being very backward and devoid of any ideas about democratic freedom, only participated half-heartedly in the new revolutionary Government, which contemplated the introduction of certain social reforms. Thus, the Government decree ordering the confiscation of the large estates had already provoked insurrections amongst the Tartars at Baku and at Elisavetpol, before the Turkish invasion. These insurrections were quelled by Caucasian troops. But antipathy to the democratic regime and, still more, racial and religious affinities attracted the Tartars of the Caucasus to the Turks of Anatolia. Thus, the Tartar was not an element to be relied on for the defence of Caucasian liberty and independence. He, in fact, was *the enemy within the gates*.

As for the Russians, they were anything but united; the saner more reasonable elements, unfortunately not very numerous, were all for saving the rich and beautiful Caucasian district, which had always been considered the brightest jewel in the Russian Crown; but the fighting element, largely steeped in Bolshevik ideas, were rather disposed to desert the national cause. The Russian troops which has returned after the abandonment of the Armenian Front not only showed no desire to oppose the triumphal march of the Turks, but fell like an avalanche upon the population of the Caucasus, pillaging and terrorising the peaceable inhabitants. Finally, they were disarmed by the local troops and sent back to Russia.

Thus it was that the Armenians and Georgians alone stood firm in their resistance to the enemy. The two people has already played a prominent part in the Russian War; about 150,000 Armenian soldiers and the same number of Georgians had fought for four years previously in Galicia and Bukovina, and in East Prussia, as well as in the Caucasian Front. A considerable num-

Անդրկովկասը մերժեց ճանչնալ Պրեստ-Լիտովսկի համաձայնագիրը եւ պատերազմ հռչակեց Թուրքիոյ դէմ: Աճապարանօք կազմուեցաւ 150.000 հոգինոց բանակ մը դիմագրաւելու համար Թրքական վերահաս վտանգը եւ պաշտպանելու Կովկասի ազատութիւնն ու անկախութիւնը: Դժբախտաբար, սկիզբէն իսկ ներքին անհամաձայնութիւններ պատճառ եղան անդամալուծելու հասարակաց ջանքերը: Թուրք-թուրանական ցեղին պատկանող մահմետական բնակչութիւնը, որ ատենէ մը ի վեր ենթարկուած էր Կոստանդնուպոլսէն ուղարկուած լրտեսներու, ինչպէս նաեւ համաթուրանական եւ համիլամական քարոզչութեան, մերժեց պատերազմի մէջ որեւէ մասնակցութիւն ունենալ Թուրքերու դէմ մղուած պաշտպանողական կռուին մէջ: Աւելին, թաթարները կը սպասէին միայն պատեհ առիթի՝ միանալու համար ներխուժողներուն, եւ ապստամբելու վրացիներու, ռուսերու եւ հայերու կողմէ ղեկավարուած ընկերվար կառավարութեան դէմ: Թաթարները, ըլլալով խիստ յետադիմական եւ զուրկ՝ ժողովրդավարական ազատութեան մասին ամէն գաղափարէ, գաղջօրէն կը մասնակցէին յեղափոխական նոր կառավարութեան եւ վերջինիս ներմուծած կարգ մը բարեկարգումներուն: Այսպէս, Թրքական ներխուժումէն առաջ, խոշոր կալուածները բռնագրաւելու կառավարական հրամանագիրը մեծ ըմբոստութիւններ առաջացուցած էր Պաքուի եւ Էլիզապետպոլի թաթարներուն մէջ: Այս ըմբոստութիւնները ընկճուեցան Կովկասեան զօրքերու կողմէ: Սակայն ժողովրդավար վարչակարգին դէմ հակադրանքը, աւելին, ցեղային եւ կրօնական հանգիստութիւնները մղեցին Կովկասի թաթարները հրապուրուելու Անատոլուի Թուրքերով: Այնպէս որ, թաթարը վրատահելի տարր մը չէր Կովկասի ազատութեան եւ անկախութեան համար: Իրականութեան մէջ, ան ներքին թշնամիք էր:

Ինչ կը վերաբերի ռուսերուն, անոնք հեռու էին միասնական ըլլալէ. ամէնէն ողջմիտ, բանաւոր տարրը, դժբախտաբար ոչ այնքան մեծաթիւ, բոլորը կողմնակից էին փրկելու Կովկասեան հարուստ շրջանը, որ միշտ նկատուած էր ռուսական գահուն ամէնէն փայլուն գոհարը: Սակայն կռուող տարրը, լայնօրէն թափանցուած բոլշեւիկեան գաղափարներով, աւելի հակամէտ էր լքելու ազգային դատը: Հայկական ռազմաճակատի լքումէն ետք, տուն վերադարձող ռուսական զօրքերը ոչ միայն ցանկութիւն ցոյց չտուին ընդդիմանալու Թուրքերու յաղթական վերադարձին, այլ ճիւղահայտի պէս թափեցան կովկասեան ազգաբնակչութեան վրայ, կողոպտելով եւ սարսափի մատնելով ժողովուրդը: Ի վերջոյ, տեղական զօրքերու կողմէ գինաթափ եղան անոնք եւ վերստին Ռուսիա դրկուեցան:

Այսպէս է որ հայերն ու վրացիները առանձինն ուժգնօրէն դիմադրեցին թշնամիին: Երկու ժողովուրդները առաջնակարգ դեր խաղացած էին արդէն ռուսական պատերազմին մէջ. շուրջ 150.000 հայ զինուորներ



ՆԻԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

ber fell on the battlefield or were taken prisoners. At this time the Armenians and the Georgians were making a fresh and more strenuous effort, under harder conditions, in a country impoverished and exhausted by four years of war.

Nevertheless, there was great enthusiasm at the beginning of the campaign among the two people engaged in the war, who, confronted with a common danger, forgot their internal dissensions and marched in a body tho the defence of their common country.

The Georgian troops marched on Batum, the Armenian on Kars. Sanguinary fights took place. At Kars and over the whole Armenian front up to the borders of Persia Armenian forces, to the number of about 80,000 volunteers for the most part, under the command of General Nazarbekian and the national hero Andranik, resisted the Turkish attacks for several weeks. But suddenly grave events occurred in their rear, destined to paralyse the Armenian effort while facilitating enemy invasion. Upon the announcement of the capture of Batum by the Turks a Tartar insurrection broke out at Baku and throughout the whole of Russian Armenia. The "enemy within the gates" raised his head, and the Tartars, who but yesterday at the outbreak of the Russian Revolution had been fraternising with Armenians to the strain of revolutionary hymns, overrun the land with savage imprecations and stabbed the Armenians in the back. The Armenians, finding themselves caught between two fires, made superhuman efforts to resist both the Turkish troops and the armed bands of the Tartars who were attacking the peaceful population, cutting the lines of communication and spreading terror and death broadcast over the Armenian provinces. The few telegrams that came through spoke of thousands of deaths in the city of Baku alone, the great centre of the petroleum industry and one of the richest places in the world, soon to be given up to te Talaat-Enver Government.

The Armenian resistance was put to a severe test. The situation was further aggravated by the lack of munitions. Nevertheless, the Armenians went on fighting, resolved never to hand over Transcaucasia the the hosts of the enemy, who had already given but too much proof of their brutality in Turkish Armenia. The Armenian had good reason to fear the repetition of these horrors in Russian Armenia.

Far away in their own country the Georgians, too,

եւ նոյն թուով վրացիներ ամբողջ չորս տարի կռուած էին նախապէս Կալիցիոյ, Պուլքովինայի, Արեւելեան Բրիւսիոյ, ինչպէս նաեւ կովկասեան ռազմաճակատներուն վրայ: Նկատառելի թիւ մը անոնցմէ ինկած էր ռազմի դաշտերուն վրայ կամ գերի վերցուած:

Այդ օրերուն, հայերն ու վրացիները, աւելի դժուարին պայմաններու մէջ եւ չորս տարուան պատերազմէն ուժասպառ երկրի մը մէջ, նոր ու աւելի կորովի ճիգեր կը թափէին:

Այսուհանդերձ, պատերազմի առաջին շրջանին մեծ խանդավառութիւն կը տիրէր պատերազմիկ երկու ժողովուրդներուն մէջ, որոնք հասարակաց վտանգին առջեւ մոռցան իրենց ներքին տարակարծութիւնները եւ մէկ մարմնի պէս քալեցին՝ պաշտպանելու համար իրենց հասարակաց հայրենիքը:

Վրացական զօրքերը քայեցին Պաթումի ուղղութեամբ, հայերը՝ Կարսի: Տեղի ունեցան արիւնալի կռիւներ: Կարսի մէջ եւ մինչեւ Պարսկաստան երկարող ռազմաճակատին վրայ շուրջ 80.000-նոց հայկական զօրքերը, մեծ մասամբ կամաւորներէ բաղկացած, Զօրավար Նազարբէկեանի եւ ազգային հերոս Անդրանիկի հրամանատարութեան ներքեւ, դիմադրեցին շաբաթներով թրքական յարձակումներուն: Յանկարծ, սակայն, թիկունքին պատահեցան ծանր դէպքեր, որոնք ջլատեցին հայոց ջանքերը եւ դիւրացուցին թըշնամիին ներխուժումը: Թուրքերու կողմէ Պաթումի գրաւման լուրին վրայ, Պաքուի մէջ եւ ամբողջ Ռուսահայաստանի տարածքին պայթեցաւ թաթարական ապրտամբուլթիւն մը: «Ներքին թշնամին» գլուխ բարձրացուց եւ թաթարները, որ դեռ երէկ, ռուսական յեղափոխութեան պայթումին, կ'եղբայրանային հայերուն հետ՝ միասին յեղափոխական երգեր հնչեցնելով, սփռուեցան երկրով մէկ վայրագ հայհոյանքներով, եւ թիկունքէն հարուածեցին հայերը: Այս վերջինները, բռնուած երկու կրակի մէջ, գերմարդկային ճիգեր թափեցին դիմադրելու համար թէ՛ թուրքերուն եւ թէ՛ թաթարական հրոսակներուն, որոնք կը յարձակէին խաղաղ բնակչութեան վրայ, կը կտրէին հաղորդակցութեան գիծերը եւ սարսափ ու մահ կը տարածէին հայկական գաւառներուն մէջ: Ստացուած սակաւաթիւ հեռագիրները կը խօսին հազարաւոր մահերու մասին միմիայն Պաքու քաղաքին մէջ, — նաւթային ճարտարարուեստի այս մեծ կեդրոնն ու աշխարհի ամէնէն հարուստ վայրերէն մէկը, որ շուտով յուսահատութեան մատնուած՝ պիտի յանձնուի թալէաթ-էնվերի կառավարութեան¹⁷³:

Հայկական դիմադրութիւնը մատնուած էր խիստ ծանր փորձութեան մը: Դրութիւնը աւելի եւս ծանրացաւ ռազմամթերքին պակասութեան պատճառաւ: Այսուհանդերձ, հայերը շարունակեցին մարտնչիլ, վճռած

173.- Թրքական զօրքերը միայն 1918 թ. Մեպտ. 15ին պիտի յաշողէին Պաքուն գրաւել: Այսինքն ներկայ տեղեկագրի ներկայացումէն շուրջ երեք ամիս ետք:



were struggling with a difficult situation. They, however, had at least this advantage over their Armenian neighbours, in that in Georgia there are hardly any Tartars. Consequently the Georgian people were not exposed to the treachery of an enemy within their gates. However, the taking of Batum, that great seaport on the Black Sea, deeply discouraged the Georgians. It may be said, indeed, that from that moment the struggle in Georgia ceased and the Georgian Social Democratic leaders, of great influence in the Transcaucasian Government (thanks to the predominance of the Social Democratic Party) hastened to open negotiations with the enemy. The Armenians were opposed to these peace negotiations. Well knowing the mentality of the Turks, they implored their Georgian and Russian neighbours to organise themselves without the loss of a moment, to mobilise all the forces at their command, convinced that, even with inadequate munitions, the Armeno-Russo-Georgian troops would be in a position to repel the enemy, better though he was armed and led by German officers. Later events justified the apprehensions of the Armenians. The peace overtures, which the Turks received with favour, were merely used as a pretext for gaining time. Whilst negotiations were going on at Batum, the Turks, in violation of the Brest-Litovsk Treaty, over-ran Russian Armenia and the Tartar territory. Negotiations at Batum were interrupted and a delegation led by the Georgian Tschenkely, Minister of Foreign Affairs, proceeded to Berlin in order to engage the support of the German Government for the preservation of the Georgian Republic. (We relate these facts just as they were reported to the *Vorwaerts* by a Socialist member of the delegation referred to. See the *Vorwaerts* paragraph reproduced in the Times of June 19, 1918).

An arrangement was concluded in Berlin, according to which a portion of Georgia, together with the port of Batum, was ceded to the Turks. The other part was constituted an independent republic with Tiflis as its capital.

Unfortunately, this independence will be merely fictitious and provisional. It will not be long before the enemy occupies Tiflis and the whole of Georgia. Already the telegraph announces that the Turks are demanding the disarmament of the Caucasian troops. This is but the prelude of sinister events. ... In Turkey, before preparing wholesale murder, the Government always disarmed its intended victims. ... However, as we hope, neither the Armenians nor the Georgians will allow themselves to be disarmed. The last dispatches

ըլլալով թոյլ չտալ բնաւ որ Անդրկովկասը իյնայ ձեռքերուն մէջ թշնամիին, որ արդէն Թրքահայաստանի մէջ չափազանց շատ ապացոյցներ տուած էր իր վայրագութեանց: Հայերը արդար պատճառներ ունէին վախնալու որ այդ վայրագութիւնները կը կրկնուին Ռուսահայաստանի մէջ:

Աւելի հեռու, իրենց սեփական երկրին մէջ վրացիները եւս կը պայքարէին դժուարին կացութեան մէջ: Այստե՛հանդերձ, յարաբերաբար իրենց հայ հարեւաններուն, անոնք ունէին այն առաւելութիւնը, որ Վրաստանի մէջ շատ քիչ թաթարներ կային: Հետեւաբար, վրաց ժողովուրդը ենթակայ չէր ներքին թշնամիի մը սադրանքներուն: Սակայն Սեւ ծովեան մեծ նաւահանգիստ Պաթումի գրաւումը խոր մտահոգութիւն պատճառեց վրացիներուն: Կարելի է ըսել վստահաբար, որ այդ պահէն սկսեալ դադրեցաւ Վրաստանի մաքառումը, եւ վրաց սոցիալ դեմոկրատ դեկավարները, որոնք մեծ ազդեցութիւն ունէին Անդրկովկասեան կառավարութեան մէջ (չնորհիւ Սոցիալ դեմոկրատ կուսակցութեան գերակշռութեան), փութացին բանակցութիւններու սկսիլ թշնամիին հետ:

Հայերը հակառակ էին խաղաղութեան բանակցութիւններուն: Քաջածանօթ թուրքերու մտայնութեան՝ անոնք խնդրեցին իրենց դրացի վրացիներէն եւ ռուսերէն անյապաղ նախապատրաստութիւններ տեսնել եւ զօրաշարժի ենթարկել իրենց բոլոր ուժերը, համոզւած որ նոյնիսկ անբաւարար ռազմամթերքով հայ ռուս-վրացական զօրքերը ի վիճակի պիտի ըլլան ետ մղելու թշնամին, որքան ալ ան գինուած ու դեկավարուած ըլլար գերմանացի սպաներու կողմէ: Հետագայ դէպքերը արդարացուցին հայոց վախերը: Խաղաղութեան առաջարկները, զորս թուրքերը յօժարութեամբ ընդունեցին, օգտագործուեցան պարզապէս ժամանակ շահելու համար: Մինչ բանակցութիւնները տեղի կ'ունենային Պաթումի մէջ, բռնաբարելով Պրեստ-Լիտովսկի դաշնագիրը՝ թուրքերը ասպատակեցին Ռուսահայաստանն ու թաթարական հողամասերը: Պաթումի բանակցութիւնները ընդհատուեցան, եւ արտաքին գործոց վրացի նախարար Չխենկելիի առաջնորդութեամբ պատուիրակութիւն մը Պերլինի մէջ սկսաւ բանակցութիւններու, որպէսզի ապահովէր գերման կառավարութեան զօրակցութիւնը Վրաստանի հանրապետութեան: (Այս իրողութիւնները կը նշենք ճիշդ այնպէս՝ ինչպէս հաղորդուած է «Vorwaerts» [օրաթերթին] յիշեալ պատուիրակութեան ընկերվարական անդամի մը կողմէ: Տեսնել «Vorwaerts»-ի պարբերութիւնը՝ արտատպուած «Times»-ի 1918 թ. Յունիս 19 համարին մէջ):

Պերլինի մէջ կնքուած էր համաձայնութիւն մը, ըստ որուն Թուրքիոյ կը զիջուէր Վրաստանի մէկ մասը Պաթում նաւահանգիստով: Միւս մասով կը կազմուէր Վրաստանի հանրապետութիւնը, Թիֆլիսը որպէս անոր մայրաքաղաք:

even report that Georgia, freed from her delusions, has resumed the struggle, and that the Armenian troops have gained an important victory over the Turks.

Will the resistance be of long duration? That depends, above all, on the supply of munitions.

Once master of the Caucasus, the Turkish troops will march on Persia, where thousands of Turks and Kurds have already made incursions from the direction of Lake Urumiah. According to the latest information, Tabriz, the capital of Azerbaijan, is already in Turkish hands.

With the millions of Turco-Tartars of Transcaucasia and Azerbaijan, the Turkish Army will strive after the realisation of the great pan-Turanian dream of uniting under the ægis of Stamboul all the Turco-Tartar races from the shores of Anatolia as far as the Caucasus, Turkestan and Afghanistan.

The Allies will have to pay dear for their heedlessness and lack of initiative on the Armenian Front. Even moderate assistance, if sent in time, would have saved Transcaucasia and saved, at the same time, the vital interests of the Allies. The fall of the Caucasus opens out a vast horizon to the eyes of the enemy – the whole of Persia in turmoil; the grave possibility of trouble in Afghanistan and Baluchistan; India endangered.

Yet it is the Armenian people that will be the chief victim of that irresistible Turco-Turanian thrust, for one needs only recall that it is the Turks who are in occupation of Russian Armenia...

Will again thousands of Armenian children and women be sent to their death by the merciless enemy?

Is that unfortunate people destined to have inflicted upon it another horrible catastrophe? Strong in its alliances, is the Turkish Government to realise its hellish scheme of wiping out the Armenian race, which it regards as the greatest obstacle in the path of the pan-Turanian movement?

Too long have the desperate appeals of the Armenian people to the Western Nations been as the voice of one crying in the wilderness. The Allies – we speak not of the Central Powers, who have always upheld the Turks – have also a heavy responsibility for the periodical massacres which for the last quarter of a century have de-luged Armenia with blood.

This is a fresh and supreme appeal addressed to Democracy by one of the representatives of that people which has suffered such a frightful martyrdom.

Դժբախտաբար այս անկախութիւնը պիտի ըլլար կեղծ ու ժամանակաւոր միայն: Երկար ատեն պիտի չառնէ երբ թշնամին պիտի գրաւէ Թիֆլիսն ու Վրաստանը ամբողջ: Արդէն հեռագիրը կը հաղորդէ որ թուրքերը կը պահանջեն կովկասեան զօրքերու զինամատակարարումը: Ասիկա միայն նախերգանքն է չարագուշակ իրադարձութիւններու...: Թուրքիոյ մէջ, նախքան զանգուածային ջարդերը, կառավարութիւնը միշտ զինամատակարար է իր թիրախ ընտրած զոհերը...: Ամէն պարագայի տակ, կը յուսանք որ ո՛չ հայերը եւ ո՛չ վրացիները զինամատակարար կ'ըլլան: Ստացուած վերջին լուրերը կը յայտնեն նոյնիսկ, որ Վրաստանը՝ պատրանամատակարար եղած՝ վերսկսած է կռիւր եւ հայկական գունդերը կարելոր յաղթանակ մը տարած են թուրքերուն դէմ¹⁷⁴:

Կարելի պիտի ըլլայ արդեօք երկար ատեն դիմադրել. ամէն բանէ առաջ այդ մէկը կախում ունի ռազմամթերքի հայթայթումէն:

Թրքական զօրքերը անգամ մը որ տիրանան կովկասին՝ պիտի քալեն Պարսկաստանի վրայ, ուր Ուրմիոյ լիճին կողմէն ներխուժած են արդէն հազարաւոր թուրքեր եւ քիւրտեր: Ամենավերջին տեղեկութեանց համաձայն, արդէն թուրքերու ձեռքը կը գտնուի Ատրպատականի մայրաքաղաք Թաւրիզը:

Անդրկովկասի եւ Ատրպատականի միլիոնաւոր թուրք-թաթարներով՝ թրքական բանակը պիտի ճգնի իրազործել համաթուրանական մեծ երազը, — Ստամպուլի հովանիին տակ միաւորել թուրք-թաթար բոլոր ցեղերը՝ Անատոլիոյ ծովեզրերէն մինչեւ կովկաս, Թուրքեստան եւ Աֆղանստան:

Դաշնակից պետութիւնները շատ սուղ պիտի վճարեն հայկական ճակատի նկատմամբ իրենց անհոգութեան եւ նախաձեռնութեան պակասին համար: Ճիշդ իր ժամանակին հասած չափաւոր օգնութիւնն իսկ փրկած պիտի ըլլար Անդրկովկասը եւ, միեւնոյն ատեն, դաշնակիցներու կենսական շահերը: Կովկասի անկումը թշնամիին առաջ պիտի բանայ լայնարձակ հորիզոններ, — ամբողջ Պարսկաստանը ծանր տագնապի մատնուած, Աֆղանիստանի եւ Պելուճիստանի մէջ լուրջ խռովութիւններու կարելիութիւն, Հնդկաստանը վտանգուած:

Ու տակաւին, թուրք-թուրանական այս անդիմադրելի թափանցումին գլխաւոր զոհը պիտի հանդիսանայ հայ ժողովուրդը, որովհետեւ պէտք է մտաբերել որ Ռուսահայաստանը գրաւողները թուրքերն են...

Հազարաւոր հայ մանուկներ եւ կիներ՝ անողորմ թշնամիին կողմէ վերստի՞ն պիտի ուղարկուին մահուան գիրկը:

Արդե՞ք դժբախտ այս ժողովուրդին վիճակուած է ենթարկուելու ուրիշ ահաւոր աղէտի մը: Պէ՞տք է որ թրքական կառավարութիւնը, իր զինակցութիւններով հզօրացած, իրազործէ իր դժոխային ծրագիրը՝ բնաջն-

174.- Ամենայն հաւանականութեամբ խօսքը կը վերաբերի Սարդարապատի յաղթական ճակատամարտին:

Neither the devastation of Belgium, nor the hecatombs of Syria, of Lebanon, nor even the ghastly tragedy of Serbia can equal the horrors wrought by the Turks in Armenia.

“None of the fearful horrors perpetrated in the various zones of the War can compare with the tragic lot of the Armenians”, says Mr. Henry Morgenthau, the former Ambassador of the United States, in his article in the Red Cross Magazine (March, 1918), entitled “The Greatest Horror in History”.

And now the people of Armenia are face to face with a new and terrible trial.

Let Socialism and Democracy see to it that they do not allow this small, ancient people to be exterminated – a people which has always been the standard-bearer of progress and civilisation in the darkness of the East!

Let the socialist Party always remember the resolution passed at the last Inter-allied Socialist Congress, which demanded that Armenia be liberated from the Ottoman domination once for all!

The Armenian people has the right to the free determination of its fate. It has earned its right to self-government by twenty-five centuries of work, culture, and struggle for freedom, by its natural gifts, its democratic spirit, and its passionate love of Western civilisation.

MIKAEL VARANDIAN
Representative in Europe
of the Armenian Socialist Party,

Member of the Russian Constituent Assembly.

The Armenian Information Bureau
153, Regent Street.
London, W.

London, June 26, 1918

Printed by Cassell & Company, Limited, La Belle Sauvage,
London, E.C.4

Չերու հայ ցեղը, գոր մեծագոյն վտանգ կը համարէ իր համաթուրանական յառաջխաղացքին:

Արեւմտեան ազգերուն ուղղուած հայ ժողովուրդի յուսահատական բոլոր կոչերը երկար ժամանակ մնացին ձայն բարբառոյ յանապատի: Դաշնակիցները եւս – մենք չենք խօսիր Առանցքի պետութեանց մասին, որոնք միշտ զօրավիզ կանգնած են թուրքերուն – պատասխանատուութեան տակ են պարբերաբար կիրարկուող այն ջարդերուն համար, որոնք Հայաստանը արեամբ ողողեցին վերջին քառորդ դարուն:

Այս մէկը¹⁷⁵ ժողովրդավարութեան ուղղուած նորագոյն եւ գերագոյն կոչ մըն է՝ ներկայացուցիչներէն մէկուն կողմէ ժողովուրդի մը, որ ենթարկուած է նման անհաւոր ողբերգութեան: Ո՛չ Պեճիքայի աւերումը, ո՛չ Սուրիոյ եւ Լիբանանի կոտորածները, ո՛չ իսկ Սերպիոյ սոսկալի ողբերգութիւնը կրնան հաւասարիլ Հայաստանի մէջ թուրքերու կողմէ գործադրուած սարսափներուն:

«Պատերազմի տարբեր գօտիներուն մէջ գործուած սոսկալի սարսափներէն ոչ մէկը կարելի է բաղդատել հայերուն վիճակուած ճակատագրին», կ'ըսէ Միացեալ Նահանգներու նախկին դեսպան պարոն Հենրի Մորկընթաւ՝ «Պատմութեան մեծագոյն սարսափը» խորագրեալ իր յօդուածին մէջ (The Red Cross Magazine, Մարտ 1918):

Եւ այժմ Հայաստանի ժողովուրդը կը գտնուի դէմ յանդիման նոր եւ աւելի անհաւոր փորձութեան մը:

Թող Ընկերավարութիւնն ու ժողովրդավարութիւնը ուշադիր ըլլան ու թոյլ չտան որ բնաջնջուի այս փոքր ու հինաւուրց ժողովուրդը, ժողովուրդ մը՝ որ Արեւելքի այս խաւարին մէջ ջահակիրն է եղած միշտ յառաջդիմութեան եւ քաղաքակրթութեան:

Թող ընկերվար կուսակցութիւնը յիշէ միշտ Ընկերվար միջ-դաշնակցային կոնգրէսի ընդունած վերջին որոշումը, որ կը պահանջէր ազատագրել միանգամընդմիշտ Հայաստանը Օսմանեան տիրապետութենէն:

Հայ ժողովուրդը իրաւունքն ունի իր ճակատագրի ազատ տնօրինման: Ինքնակառավարման այդ իրաւունքը ան ձեռք բերած է քսանհինգ դարերու ջանքով, իր մշակոյթով, ազատութեան համար իր մղած պայքարով, իր բնատուր ձիրքերով, իր ժողովրդավարական ոգիով եւ Արեւմտեան քաղաքակրթութեան նկատմամբ իր տածած ջերմ սիրով:

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

Ներկայացուցիչ Եւրոպայի մէջ
Հայ ընկերվար կուսակցութեան
Անդամ Ռուսիոյ Սահմանադիր ժողովի

Լոնտոն, Յունիս 26, 1918

175.- Այսինքն ներկայ Յիշատակագիրը:



Դ 15.– ԼԻՊԱՐԻՏ ՆԱԶԱՐԵԱՆՑԷՆ ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆԻՆ

Դաշնակցական յայտնի գործիչ եւ բազմահմուտ մտաւորական Լիպարիտ Նազարեանցի (1874-1947) այս գրութիւնը կը գտնուի Պոսթըն, Հ.Յ.Դ. Կեդր. արխիւներուն մէջ պահուած Սիմոն Վրացեանի չհամարակալուած մէկ թղթածրարին մէջ: Պատմական առաջնակարգ կարեւորութիւն ներկայացնող այս փաստաթուղթը պատասխան է Հայաստանի առաջին հանրապետութեան վերջին վարչապետ Ս. Վրացեանի կողմէ 1925ին Լ. Նազարեանցին ուղղուած կարգ մը հարցումներու, որոնք կը վերաբերին 1917-1919 տարիներուն Մոսկուայի եւ Պետերբուրգի մէջ տարուող աշխատանքներուն: Արդարեւ, 1917 թ. Փետրուարեան յեղաշրջումէն ետք, Թիֆլիսի հայ Ազգ. Խորհուրդը Ռուսիոյ մայրաքաղաք Պետերբուրգ առաքած էր բժ. Յ. Չաւրեանն ու Լ. Նազարեանցը Ժամանակաւոր կառավարութեան հետ կապ հաստատելու եւ Կովկասի ինքնապաշտպանութեան ու հայկական ազգային բանակի կազմակերպութեան մասին կարգադրութիւններ ընելու առաքելութեամբ: Աւելի ուշ, Հոկտեմբերեան յեղափոխութենէն ետք, աշխատանքները պիտի շարունակուէին Մոսկուայի մէջ բոլշեւիկ ղեկավարութեան հետ, առանց որ այդ բանակցութիւնները յանգէին բաղձալի ելքի մը, իբրեւ հետեւանք բացասական դերակատարութեանը շարք մը համայնավար հայ գործիչներու, որոնք փաստօրէն ձախողութեան պիտի մատնէին Դաշնակցութեան եւ խորհրդային նոր իշխանութիւններու միջեւ համաձայնութեան մը կայացման ամէն փորձ:

Յայտնենք որ գրութեան հեղինակ Լ. Նազարեանց ավելի ուշ միեւնոյն հարցերու շուրջ Հ. Յ. Դաշնակցութեան եւ խորհրդային իշխանութեան միջեւ «Համաձայնութեան փորձեր» խորագրով համառօտ յօդուած մը ստորագրած է «Դրօշակ»ի մէջ (1928, թիւ 8-9, էջ 231-233):

Կարծէ յիշատակել նոյնպէս Պաքուի Ազգ. Խորհուրդի կողմէ Մոսկուա առաքուած Արտաշէս Չիլինգարեանի (Ռուրէն Դարբինեան) յուշերու 1918-19 տարիներուն վերաբերեալ էջերը, ուր Դարբինեան մանրամասնօրէն կը խօսի ռուս եւ հայ ղեկավարներուն հետ տարուած աշխատանքներուն, ինչպէս նաեւ բոլշեւիկեան յեղափոխութեան առաջին օրերուն Մոսկուայի մէջ տիրող խառնաշփոթ մթնոլորտին մասին, – Ռուրէն Դարբինեան, Երկեր Ա. հատոր (Չորրորդ մաս՝ «Առաքելութիւն Մոսկուայի մէջ», էջ 256-330, Պէյրութ, 1972):

Նազարեանցի ներկայ պատասխան-նամակի բնագրին մէջ անկայ ռուսերէն բազմաթիւ մէջբերումներու բժախնդիր քարգմանութեան համար պարտական ենք «Վէմ» պարբերագրի խմբագիր ընկ. Գեորգ Խուրինեանին: Թարգմանուած բաժինները տրուած են շեղագիր եւ աստղանիշով:

Բերլին, 17/8 [19]25

L. Nazariantz
Berlin – Wilmersdorf
Kaiseralle 20H
Lei Kindler

Սիրելի Սիմէոն,

Թէեւ բաւական ուշ եմ պատասխանում, կարծում եմ այնուամենայնիւ, որ՝ եթէ գրածս անմիջական նպատակին չծառայի էլ, գոնէ ուրիշ կերպով կարող է օգտակար լինել. թէ չէ մի օր կ'ընկնեմ կը սատկեմ, եւ ուզածդ նիւթը, որը հանրային տեսակէտով հետաքրքրութիւնից գուրկ չէ, կը կորսուի – à la Դաշնակցութիւն... Մի մտահոգութիւն ունեմ սակայն. որքա՞ն նպատակայարմար է այժմ հրատարակութեան տալ նման նիւթեր: Եթէ անուններ, վայրեր ու թուականներ չյիշուին, նիւթը անարժէք կը լինի. իսկ եթէ այդ ամէնը յիշուի, ինչպէս որ ես պիտի անեմ, չէ՞ որ հրատարակի սեփա-

կանութիւն կը դառնան այնպիսի խնդիրներ եւ մեր այնպիսի քայլերը, որոնք, իմ կարծիքով, ոչ միայն առայժմ, այլ առհասարակ զաղտնի պէտք է մնան: Յետոյ, գրելով միայն յիշողութեամբ, մենք ամէնքս էլ ենթակայ ենք սխալւելու վտանգին, ինչ որ դարձեալ, անշուշտ, վարկաբեկիչ է նիւթի համար. շահագրգռուած մարդը կարող է այդ թոյլ կողմից բռնել եւ դիւրաւ հերքել կամ առնուազն կասկածի ենթարկել ամբողջը: Ամէն պարագայի մէջ ես իմ պարտքը կը կատարեմ, առարկայօրէն, ջանալով ըստ կարելոյն խոյս տալ անճշտութիւններին. կ'արձանագրեմ այն, ինչ որ յիշում եմ, քո հասկացողութեան եւ խոհեմութեան ձգելով՝ հրատարակել միայն ամենաանհրաժեշտը եւ ինչ որ քո տեսակէտով չի վնասի ոչ մի կերպով գործին: Պիտի խնդրեմ նաեւ, որ խնդիրը որքան կարելի է քիչ դառնայ անձնաւորութիւնների շուրջը:

Ի դէպ կ'ուզէի յիշել, որ նամակիդ պատասխանը ուշացրի ոչ թէ շատ զբաղ լինելուս (թէեւ այդ էլ կայ), այլ հիւանդութեանս պատճառով՝ աչքերս նորէն վատթար





կացութեան մէջ են, գրել-կարդալը ինձ համար ուղղա-
կի տանջանք է:

Կը պատասխանեմ կարգով քո դրած հարցումնե-
րին.—

1. Զաւրիեւր եւ ես կարգուած էինք Ազգային խոր-
հուրդի ներկայացուցիչներ Առժամեայ կառավարու-
թեան մօտ եւ մեր այդ պաշտօնը շարունակում էինք
նաեւ մեծամասնական յեղաշրջումից յետոյ, երբ նոր
կառավարութիւնը փոխադրուեց Մոսկուա: Ս. Յակոբե-
եանը եւ Ա. Զիլինգարեանը¹⁷⁶ յետոյ միացան մեզ. երբ
ես 1918ի մայիսին Բերլինի առաքելութիւնից¹⁷⁷ յետոյ
վերադարձայ Մոսկուա, նրանք մի քանի օր առաջ ար-
դէն հասած էին այնտեղ, բայց դեռ որոշ քայլեր չէին ա-
ռել: Որքան յիշում եմ, նրանք էլ եկած էին Բագուի Ազ-
գային խորհուրդի կողմից եւ կուսակց. Կեդր. կոմիտէի
հաւանութեամբ: Լաւ յիշում եմ հետեւեալը. Յակոբեա-
նը առաջին իսկ օրից ինձ «դուր չեկաւ», ու երբ գար-
մանք յայտնեցի Արտաշէսին, որ Յակոբեանից աւելի
պիտանի մարդ չէին գտել Մոսկուա ուղարկելու, նա
ասաւ «Բագուի մեր ընկերների սովորական քաղաքա-
կանութիւնն է. իրենք իրենց Յակոբեանից ազատելու
համար՝ վերցրին ուղարկեցին նրան Մոսկուա» (այս եւ
նման «ինտիմ» բաներ գրում եմ միայն՝ միջովալըր,
մեր յարաբերութիւնները եւ տրամադրութիւնները քեզ
համար պարզած լինելու համար):

Բանակցութիւնների գլխաւոր նիւթը Հայաստանին
եւ յետոյ յատկապէս Բագուին օգնութիւն հասցնելն էր:
Յակոբեանը տեսնուում էր Կարախանի¹⁷⁸ հետ. կոնկրէտ
առաջարկներ նրա միջոցով մեր կողմից չեն եղած. նրա
միջոցով մենք աշխատում էինք միայն ծանօթանալ կա-
ռավար. շրջանների տրամադրութիւնների հետ, որքան
որ այդ կարող էր արտայայտել Կարախանը՝ իբրեւ ար-
տաքին գործավարութեան պաշտօնեայ: Իսկ թէ ինչ է
խօսել իրապէս Յակոբեանը, կամ որքան ճիշտ էին նրա
մեզ յայտնած տեղեկութիւնները, հարկաւ, անկարող
եմ ասել. յիշեմ միայն, որ մենք վստահութիւն չունէինք
նրա հանդէպ եւ հաշտուում էինք նրա դերի հետ (որ, ի
դէպ, ինքն էր իր վրան առել) ծանր սրտով: Մենք գրեթէ
ամէն օր ժողովներ էինք ունենում (մասնակցում էին՝
Զաւրիեւր, Ա. Զիլինգարեան, Ս. Յակոբեան, Յովսէփ

Թադէոսեան, Հայրիկ Եղիազարեան¹⁷⁹ եւ ես), ուր տի-
րում էր լարուած մթնոլորտ եւ յաճախ տեղի էին ունե-
նում ընդհարումներ, մասնաւորապէս Յակոբեանի
հետ, որին պաշտպանում էր միայն Յ. Թադէոսեանը:
Ես նրա մօտ գտնոււմ եմ արտակարգ դիւանագիտական
ընդունակութիւններ¹⁸⁰: Մեր յարաբերութիւնները աւե-
լի լարուեցին, երբ Յակոբեանը մի օր առաջարկեց, որ
մենք «ձեւի համար» յայտարարենք թէ հեռացած ենք
(կամ անջատուած) Դաշնակցութիւնից եւ կազմած
«ձախ դաշնակցականների» նոր կուսակցութիւն: Իր ա-
սելով, այդ անհրաժեշտ էր՝ ձեռք բերելու համար մեծա-
մասնականների վստահութիւնը: Այդ առաջարկը, բնա-
կանաբար, վրդովումով ետ մղուեց:

2. Ինչպէս յիշեցի, Զաւրիեւր եւ ես տակաւին 1917ին
յարաբերութիւններ էինք պահում Առժամեայ կառա-
վարութեան՝ մասնաւորապէս Կերենսկիի հետ. խնդիրը
գլխաւորաբար հայկական ինքնապաշտպանութեան
կազմակերպման (ազգային բանակի) մասին էր: Նոյն
յարաբերութիւնները շարունակուեցին նաեւ Մեծա-
մասնականների հետ: Վերջինների յեղաշրջումից յետոյ
Զաւրիեւր մեկնեց Կովկաս. Պետերբուրգում մնացի ես
եւ, օգտուելով իմ անձնական ծանօթութիւնից Տրոցկիի
հետ, ունեցայ հետը մի շարք տեսակցութիւններ: Ի մէջ
այլոց, նա ինձ տուաւ ա) բաց թերթիկ¹⁸⁰* ազատօրէն եր-
թեկեկելու համար Պետերբուրգի եւ Մոսկուայի միջեւ
ծառայողական վազնուում*: այդ իրաւունքից լիուլի
օգտուում էի ոչ միայն ես, այլեւ իմ յանձնարարած ան-
ձերը, որոնք ստիպուած էին ճամբորդելու մեր գործե-
րով: Բ) Գրաւոր թոյլտուութիւն ուզածս չափով օգտուե-
լու հեռագրից, հեռագրական գործիքով ուղիղ կապ*
ուղղակի խօսելու համար Մոսկուայի, Ռոստովի (Հա-
մոն¹⁸¹ այնտեղ էր) եւ Թիֆլիսի հետ: Այդ իրաւունքն էլ
երկար ատեն օգտագործուում էր մեր բոլորի (Դաշնակ-
ցութեան եւ հայկական կոմիտէների) կողմից: Երբ
Տրոցկին¹⁸², որը մնացել էր Պետերբուրգ, 1918ի սկիզբը
պատերազմական գործավարի պաշտօնով նոյնպէս փո-
խադրուեց Մոսկուա, ես գնացի այնտեղ եւ նոյն թուի
գարնան [եղան] բանակցութիւնների՝ Կովկասեան ռազ-
մաճակատի ամրացման մասին: Պէտք է ասել, որ Տրոց-
կին միշտ ամենաանկեղծ համակրական արտայայտու-

176.- Արտաշէս Չիլինգարեան (1883-1968), ատլի ծանօթ
Դարբինեան Ռուբէն ծածկանունով. հետագային խմբագիր «Հայ-
րենիք» օրաթերթի եւ ամսագրի: Միմոն Յակոբեան (1880-1942) –
իբրեւ դաշնակցական Մոսկուա գործուողուած, շուտով պիտի յարեր
համայնավար կուսակցութեան:

177.- Տես այս մասին փաստ. 1378-20, էջ 77:

178.- Լեւոն Կարախան(եան) (1889-1937) – Արտաքին գործոց
նախարարի տեղակալ արեւելեան քաղաքականութեան գծով:

179.- Թադէոսեան Յովսէփ (1865-1935) – դաշնակցական, ան-
դամ եւ քարտուղար Մոսկուայի Հայկ. կոմիտէին: Եղիազարեան

Հայրիկ, նոյնպէս դաշնակցական, անդամ եւ գանձապահ նոյն կո-
միտէին:

180.- Չեռագրին մէջ ռուսերէն. այսուհետեւ ռուսերէն մէջբե-
րումները շեղագիր եւ աստղանիշով:

181.- Համազասպ Օհանջանեան (1874-1947):

182.- Լ. Տրոցկի (1879-1940), համայնավար յայտնի գործիչ,
սկիզբը Լեւոնի գործակից, կազմակերպիչ եւ հիմնադիր Կարմիր
բանակի, ապա, Մտալինի օրօք արքայութեան (1929) եւ սպանուած
Մերսիքայի մէջ (1940): Լ. Նազարեանի «անձնական ծանօթու-
թիւնը» Տրոցկիի հետ եղած է Պուկարիոյ մէջ, Պալքանեան պա-
տերազմի օրերուն:





ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Թիւնն էր ցոյց տալիս հայ ժողովրդի հանդէպ. երբ Բրեստի դաշնագրից յետոյ այցելեցի նրան մի ինչ որ գործով Պետերբուրգ, նա ասաւ հետեւեալը. «Այո, ընկեր Ն[ազարեանց], ամէն ինչ չէ լինում այնպէս, ինչպէս ցանկանում ես: Մտնում եմ ձեր դռներէս մէջ: Բրեստի պայմանագիրը – դժբախտութիւն է ձեր ժողովրդի համար եւ ես երջանիկ եմ, որ ինձ չէ, որ վիճակուեց այն ստորագրել: Պատրաստ եմ օգնել ձեզ ինչով որ կարող եմ»*:

Մոսկուայում ես յիշեցրի իրեն այս խնդրի մասին, ու նա առաջարկեց ներկայացնել իրեն մի ծրագիր գործնական քայլերի Հայաստանի համար:

Այդ ատենն էր, որ չեխոսլովակներէ բանակը, լիակատար կազմակերպութեամբ (45,000 մարդ), պատրաստուում էր հեռաւոր արեւելքով հայրենիք վերադառնալ: Վարչական մարմնի մէջ, ի թիւս ուրիշների, գտնուում էր նաեւ մի պարոն, որը պաշտօնավարում էր Կերենսկիի ատեն պատերազմական նախարարութեան մէջ, եւ որի հետ ես մօտէն ծանօթ էի: 1918ին յաճախ տեսնուում էի հետը Մոսկուայում: Իմանալով իրենից, որ չեխ բանակին վերաբերող խնդիրներում մեծ դեր է խաղում (անուշը առայժմ անյարմար եմ նկատում յայտնելու) հարցրի, թէ որն է այդ բանակի անմիջական նպատակը: «Հայրենիք վերադառնալ», պատասխանեց նա, — «Բայց եթէ որեւէ յարմար «գործ» գտնուի, կարող է եւ մնալ»: «Թուրքերի դէմ կռուելու չի՞ դնայ»: «Ինչո՞ւ չէ, նրանց փափաքն է՝ օգտակար լինել գինակիցներին, կռուելով ընդհանուր թշնամիի դէմ. ու քանի որ թուրքերն էլ գինակիցների թշնամիներն են, չեխերի համար նոյնն է՝ որտե՞ղ եւ ո՞ր թշնամիի դէմ կռուել. ուստի վստահ եմ, որ չեխ վարիչները եւս չեն հրաժարւի ուղարկել բանակը թուրքերի դէմ Կովկաս. միայն թէ մեծամասնականները չարգելէին եւ միջոց տային Կովկաս անցնելու»: «Իսկ եթէ Տրոցկին համաձայն լինի՞»: Այդ ժամանակ գործը պատրաստ է^{183*} պատասխանեց խօսակիցս: «Պայմանաւորուեցինք, որ նա խօսի չեխերի հետ, իսկ ես Տրոցկիին: Անմիջապէս փութացի վերջինիս մօտ եւ հարցրի, թէ ի՞նչ են մտադիր անելու չեխերի նկատմամբ: «Տու՛ն են ուզում գնալ, ասաւ նա, բայց մեծ քաշքշուկ է նրանց հետ»*:

«Տու՛նք մեզ նրանց» ասի ու բացատրեցի ծրագիրը: «Ուրախութեամբ», պատասխանեց, «Դուք գիտէք որ ես կ'ուզէի, որ կարելի լինէր պաշտպանել կովկասեան ճակատը թուրքերի դէմ. եթէ չեխերով կարելի է այդ անել, շատ գոհ կը լինեմ»: Ինչպէս յայտնի է, Տրոցկին կուսակից էր պատերազմի շարունակման, ու որովհետեւ այդ անհնարին էր ուսական ճակատի վրայ գերմանացիների դէմ, հասկանալի է, որ նա պիտի փափաքէր շարունակել պայքարը գոնէ Կովկասում. մասնաւանդ որ այդ պիտի փրկէր նրան չեխերի հետ քաշքշուկից*:

Մի երկու օրից յետոյ ստիպուած եղայ մեկնել Բեր-

լին, եւ չեխերի գործը յանձնուեց Յովսէփ Թադէոսեանին: Մէկ ամսից յետոյ վերադառնալով հարցրի վերջինին բանակցութիւնների արդիւնքի մասին: «Երեւակայի, ասաւ, ոչ մի անգամ չկարողացայ տեսնուել Տրոցկիի հետ: Ամբողջովին կլանուած էի կոմիտէի գործերով (Թադէոսեանը Մոսկուայի հայկ. կոմիտէի քարտուղարն էր եւ զբաղուած էր «Խիստ կարեւոր» գործերով...): Իսկ չեխերը արդէն անցել էին Վոլգայի շրջանը, եւ Տրոցկիի կուսած քաշքշուկն* ծայր էր տուել:

Նորէն այցելեցի Տրոցկիին (1918ի մայիսին-յունիսին): Ձարմանք յայտնեց, որ այնքան անփոյթ գտնուեցինք չեխերի վերաբերմամբ: Խնդրեցի աւելի կանոնաւորել մեր յարաբերութիւնները: «Ես հակառակ չեմ, ասաւ, տեսնենք Լենինը ինչ կ'ասի: Իսկոյն խօսեց հեռաձայնով Լենինի հետ.

«Այժմ ինձ մօտ է գտնում Դաշնակցութիւնը կուսակցութեան անդամ Ն[ազարեանց]ն, որին ես անձամբ լաւ ճանաչում եմ եւ բոլոր հիմքերն ունեմ նրա հանդէպ վերաբերուելու լիակատար վստահութեամբ: Ես գտնում եմ, որ մեզ անհրաժեշտ է յարաբերութիւններ հաստատել այդ կուսակցութեան հետ, որը ղեկավար դեր է խաղում հայկական գործերում: Իմ կարծիքով հարկատր է նրանց հետ խորհրդակցութիւն հրաւիրել եւ ճշտել համատեղ աշխատանքի սկզբունքները»*:

Ապա մի վայրկեան յետոյ յայտնեց ինձ Լենինի պատասխանը, որ յիշում եմ գրեթէ բառացի.

«Յայտնէք Ն[ազարեանց]ին, որ Դաշնակցութիւն կուսակցութեան հետ մեր սկզբունքային տարաձայնութիւնները արգելք չեն ծառայի գործնական հիմքի վրայ համատեղ աշխատանքի համար: Համաձայն եմ ձեզ հետ, որ անհրաժեշտ է խորհրդակցութիւն հրաւիրել»*:

Որոշուեց, որ ես էլ իմ կարգին խօսեմ մեր ընկերների հետ եւ, մշակելով մեր առաջարկների նախագիծը, ներկայացնենք խորհրդակցութեան: Պէտք նկատեցի յիշեցնել Տրոցկիին, թէ «Հայկական կոմիսարիատը» կարող է մեր այդ քայլը նկատել վիրաւորում իր իրաւունքներին եւ արգելք հանդիսանալ: «Անշուշտ, մենք հարկադրուած պիտի լինենք յայտնելու նրան այդ մասին, որովհետեւ այսպէս թէ այնպէս նա պաշտօնական օրգան է: Բայց զուր է ձեր մտահոգութիւնը, որովհետեւ հայ կոմիսարիատը վերջիվերջոյ մեզ ստորագաս մի օրգան է եւ ոչ վերադաս, ուստի իր տեսակէտը մեզ համար պարտադիր չէր լինել»:

3. (Ձախողանքի պատճառը): Երկու օրից պիտի ստանայի Տրոցկիից տեղեկութիւն ժողովի կազմի եւ տեղի ու ժամանակի մասին: Երբ եկայ իր պաշտօնավայրը, քարտուղարը գնաց գեկուցանելու իմ մասին ու, մի քա-

183.- Բառացիօրէն՝ եզրաւոր գլխարկի՝ շէտայի մէջ է:





նի բոլոր պատճառներով, դուրս գալով, յանձնեց մի գրութիւն Տրոցկիից: Դժբախտաբար, գրում էր Տրոցկին, ի վիճակի չէնք կազմելու պայմանաւորուած խորհրդակցութիւնը, որովհետեւ, համաձայն մեր առած տեղեկութիւնների, Դաշնակցութիւնը հետեւում է անգլիական օրինատարաբանի, որով մեր միատեղ աշխատանքը դառնում է անհնարին:

Վերջը իմացայ, որ հայ մեծամասնականները (մանաւանդ Աւանդասով, Տէրեան եւ Մակինցեան)¹⁸⁴ սաստիկ բողոքել էին, որ Տրոցկին, արհամարհելով հայկ. կոմիտեի սարխատը (վարիչը Աւանդասովն էր), հակառակ քաղաքականութիւն է վարում եւ շոյում է «հակայեղափոխական եւ անգլիասէր Դաշնակցութիւնը»: ու Տրոցկին ստիպուած է լինում տեղի տալ «ստորադաս օրգանի» առջեւ:

4. (Թ՛նչ էր հայ կոմմունիստները դիրքը): Վերոյիշեալը պատասխան է նաեւ այս կէտին. հայ կոմմունիստները միշտ աշխատում էին վիժեցնել Դաշնակցութեան հետ եւ նրա միջոցով կատարուելիք ամէն մի գործ:

5. (Ինչո՞ւ քանտարկեցին Արտաշէսին ու Ջաւրիելին): Բանտարկուողները Արտաշէսը եւ Ջաւրիելը չէին, այլ Ջաւրիելը եւ Լիպարիտ Նազարեանցը: Երբ անգլիացիները 1918ի ամառը ձերբակալեցին Բագումի Շահումեանին, Ջապարիձէին եւ ընկերներին. մեծամասնական Սմբատ Մարգարեան, որ այն ատեն գտնուում էր Ռուսիա (կարծեմ՝ Հաշտարխան), հեռագրեց այնտեղից Մոսկուա, որ՝ իբրեւ պատանդ՝ ձերբակալւին Մոսկուա գտնուող աչքի ընկնող էս-էրները, էս-դէկները եւ դաշնակցականները: Այդ հեռագիրը, որը լոյս տեսաւ «Իզվեստիա»ի մէջ, ես ինքս կարդացի: Մի քանի օրից յետոյ Մարգարեանի խորհուրդին հետեւեցին սիւայն հայ մեծամասնականները, Աւանդասովի միջոցով (որը միեւնոյն ատեն համառոտաստանեան կենտրոնով*ի քարտուղար եւ Չէ-կաի Յ հոգինոց գլխաւոր խորհուրդի կոլեգիայի* անդամ էր) ձերբակալել տարով Ջաւրիելին եւ Նազարեանցին: Որոշուած էր ձերբակալել նաեւ Չիլինգարեանին, բայց հասցէն չգիտնալով՝ ուշացել էին, իսկ մինչ այդ Չիլինգարեանը, պահուելով ուրիշ բնակարանում, կարողացել էր մի մեծամասնական ընկերող միջոցով յաջողցնել, որ իրեն չհետապնդեն:

Մեր ձերբակալուած ընկերները, որոնք արգե-

լափակուած էին խիստ պայմանների մէջ, անտարակոյս պիտի գնդակահարուէին (որոշումը արդէն տրուած էր), եթէ Ա. Չիլինգարեանը մեր կուսակցութեան անունից չյայտարարէր Մոսկուայի հայ կոմմունիստներին, թէ երկու ձերբակալուած դաշնակցականների համար պատասխանատու են իրենց կեանքով Մոսկուա գտնուող չորս կարեւորագոյն հայ կոմմունիստները (Կարախան, Աւանդասով, Մակինցեան, չորրորդը չեմ յիշում)¹⁸⁵: Այդ էր, որ փրկեց մեր ընկերներին, որոնք բանտից արձակուեցան, 1919ի փետրուարի վերջը, պայմանով սակայն, որ Մոսկուայից չհեռանան: Ջաւրիելը մտաւ պաշտօնի, իբրեւ աւագ բժիշկ, Մոսկուայի խոշոր հիւանդանոցներից մէկը: Այնտեղ նա վարակուեց տիֆով եւ մեռաւ 1920ի փետրուարին, երբ ինքն էլ, Նազարեանցն էլ արդէն իրաւունք էին ստացել մեկնելու արտասահման:

Կարեւոր է յիշել մի կէտ եւս մեր եւ մեծամասնականների յարաբերութեան մասին: Մեր ընկերների ձերբակալութիւնից 8-10 օր առաջ, Ա. Չիլինգարեանը, Ջաւրիելը եւ Նազարեանցը փորձեցին նորէն Սահակ Տէր Գաբրիէլեանի միջոցով (որը բաւական մօտ էր Լենինի հետ) յաջողցնել մի անգամ վիժած խորհրդակցութիւնը. մեր կողմից ընտրուեցին յիշեալ երեքը, իսկ մեծամասնականների կողմից՝ Լենինի կարգադրութեամբ՝ Կամենեւ (իբրեւ նախագահ յանձնաժողովի), Աւանդասով եւ Ս. Տէր Գաբրիէլեան: Առաջին նիստը նշանակուած էր Օգոստոս 27ին Աւանդասովի մօտ: Որոշուած ժամին մեր ընկերները գնում են այնտեղ, երկար սպասում, բայց ոչ ոք չի գալիս: Նոյն գիշերը մեր ընկերները ձերբակալուած են: Վերջը մի կարեւոր մեծամասնական վրդովմումով պատմում է մերոնց, որ Աւանդասովը եւ իր արբանեակները նորէն յաջողում են ոչ միայն չկայացնել խորհրդակցութիւնը, այլեւ ձերբակալել մեր ընկերները:

6. (Հայկական կոմիտեի գերը): Այդ պաշտօնը, ինչպէս յայտնի է, պէտք է լինէր՝ վարել հայերին վերաբերող գործերը, իրագործել մի տեսակ ինքնավարութիւն խորհրդային Ռուսիոյ սահմաններում գտնուող հայերի եւ Աւանդասովը (այդ կոմիտեի անունով վարիչը), մինչեւ կոկորդը զբաղուած լինելով ուրիշ գործերով եւ առհասարակ բնաւ չհետաքրքրուելով հայերով, ձգած էր ամբողջ գործը իր փոխանորդին (յաջորդաբար Տէրեան, Մակինցեան եւ այլն): Իրականութեան մէջ կոմի-

184.- Յաջորդաբար՝ Վառլամ Աւանդասով, Վահան Տէրեան (ծանօթ բանաստեղծ) եւ Պօղոս Մակինցեան. երեքն ալ անդամ հայկական գործերու Կոմիտեի անունով:

185.- Իրականութեան մէջ, ըստ Չիլինգարեան-Դարբինեանի վկայութեան, Հ.Յ.Դ. Թիֆլիսի Կեդր. կոմիտէն է, որ գրաւոր ու կնքուած պաշտօնական գրութեամբ մը, «ուղղուած համառոտական համայնավար կուսակցութեան Կեդր. կոմիտէին», «կը նախագոյնազնէր բոլշեւիկեան գերագոյն մարմինը, որ եթէ Բժ. Ջա-

ւրեան եւ Լ. Նազարեանց սպանուէին կամ մահանային բանտին մէջ, չորս հայ բոլշեւիկներ՝ Աւանդասովը, Կարախանը, Վ. Տէրեանը եւ Պ. Մակինցեանը իրենց գլխով պատասխանատու պիտի նկատուէին եւ մահուամբ պիտի պատժուէին Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ»: Այս ազդարարութիւնը Ա. Չիլինգարեան անձամբ կը հաղորդէ Պ. Մակինցեանին, բառացի կարդալով Թիֆլիսէն ուղարկուած գրութիւնը (Տես Ռուբէն Դարբինեան, Երկեր Ա. հատոր, էջ 293, Պէյրութ, 1972):





ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

սարիատը, կապկերով կեղրոնական իշխանութեան ընթացքը, նկատում էր իր կոչումը քանդելու մէջ այն ամէնը, ինչ որ գոյութիւն ունէր հայկական անունով (գինուորական կոմիսարիատ Պետերբուրգում, հայկական կոմիտէներ մի շարք քաղաքներում, Լազարեան ճեմարան եւ այլն): Դրանից զատ, նա սկսաւ կողոպտել հայերի մասնաւոր գրադարանները, գրաւել թանգարանային արժէք ունեցող իրեր եւ այլն: Կարճ, եղածը քանդել եւ տեղը ոչինչ չչինել — ահա հայկական կոմիսարիատի գոյութեան իմաստը: Փորձեց Մոսկուայում հայերէն թերթ հրատարակել. լոյս տեսաւ միայն մի քանի թիւ, ճապաղ՝ լեզուով եւ բովանդակութեամբ: Զեռնարկեցին մարքսիստ[ական] գրականութեան թարգմանութեան եւ հրատարակութեան. բայց այդ էլ մեռաւ սաղմնային վիճակի մէջ: Հալածանք Դաշնակցութեան դէմ — այս էլ կոմիսարիատի մի ուրիշ կարեւոր պաշտօնն էր: Եթէ մէկը հարցնէր իրենց իսկ հայ մեծամասնականներին կամ ուզէր ճշտել կոմիսարիատի թողած արխիւի հիման վրայ (եթէ այդպիսին մնացել է), թէ ինչ է կատարել իր գոյութեան ընթացքին հայկական գործերի կոմիսարիատը, ոչ իրենք մեծամասնականները պիտի կարողանային որեւէ պատասխան տալ, ոչ էլ արխիւի քննութիւնը պիտի երեւան բերէր որեւէ արդիւնք:

Մի չափազանց յատկանշական փաստ. երբ արդէն մեծամասնական Մոսկուան անգամ սկսել էր վրդովւել Հաշտարիանում Աթարբէկովի կողմէն գործող սարսափների առիթով, հայ կոմմունիստները, որոնք յաճախ նոյնպէս ցասումով էին խօսում այդ ճիւղի մասին, որոշեցին բերել տալ նրան Մոսկուա եւ դատել: Շատերը կարծում էին, թէ Աթարբէկովը առնուազն կը վռնդուի կուսակցութիւնից: Արդի՞ւնքը: Քննելով Աթարբէկովի գործունէութիւնը, հայ կոմմունիստները գտան այն արժանի ամէն գովասանքի եւ ուղարկեցին Աթարբէկեանին գաւառ՝ շարունակելու իր օգտակար աշխատանքը:

7. (Հայ մեծամասնականների դերը Բրեստի բանակցութիւնների ժամանակ). Երբ առաջին անգամ խաղաղութեան պատուիրակութիւն էր ուղարկւում Բրեստ, նկատի ունենալով, որ հայկական հարցն էլ քննութեան նիւթ պիտի լինի, Տէրեանը, որպէս հայ, առնուեցաւ պատուիրակութեան մէջ: Նա դիմեց մեզ՝ խնդրելով տալ իրեն նիւթեր եւ ցուցումներ: Առաջին խորհրդակցութեանը մասնակցեցին ինքը Տէրեանը, Ռոստոմը (որ Ստոկհոլմից էր վերադարձել) եւ Նազարեանը: Որոշւեց, որ մենք կազմենք մի ընդարձակ տեղեկագիր հայկական հարցի մասին: Գործը ստանձնեցին Ռոստոմը եւ Նազարեանը: Յետագային այդ աշխատանքին մասնակցելու հրաւիրուեցին Ն. Ադոնցը եւ զօրավար Լեւոն Տիգրանեան, իսկ վերջին խորհրդակցութեան ներկայ էր նաեւ Մ. Աճէմեանը: Տեղեկագիրը յանձնուեց Տէրեանին,

նին, սակայն Բրեստում նա առիթ իսկ չէր ունեցել խօսելու հայկական խնդրի մասին:

8. (Ի՞նչ էին անում Տէրեան, Կարինեան, Մակինցեան, Միասնիկեան, Գ. Վարդանեան, Հայկունի հայերի համար): Տէրեանի եւ Մակինցեանի դերը որոշ չափով պարզուած է արդէն 6-7 կէտի մէջ: Կարինեանը ուշ եկաւ (Կովկասից), Միասնիկեանը զբաղուած էր գլխաւորապէս ընդհանուր ռուսական գործերով (Բէյթո-ռուսիա). Գր. Վարդանեանը, որը նոյնպէս ուշ երեւաց Մոսկուայի հորիզոնի վրայ, բոլորովին աննշան դեր էր խաղում: Հայկունին, որը Պետերբուրգ էր մեծամասնական յեղաշրջումից անմիջապէս յետոյ, ներկայացել էր Լենինին (Աւանդուովի միջնորդութեամբ) եւ յաջողորէլ էր բաւական խոշոր գումար Կովկասի թուրքահայ գաղթականութեան համար: Թէ որքան ստացաւ եւ ինչպէս ծախսեց՝ ինձ յայտնի չէ: Դեռ 1917ին (կարծեմ նոյեմբերին) նա ինձ ցոյց տուաւ Լենինից ստացած իր լիազօրութեան թուղթը գաղթականութեան վերաբերմամբ: Բովանդակութիւնը չեմ յիշում:

9. Գ. Վարդանեանի եւ Հայկունիի կողմէն կոմիտէներից ստացուած գրամի մասին ոչինչ չգիտեմ: Յիշում եմ միայն որ՝ երբ Հայկունին 1918 զարնան գնում էր Կովկաս, իրենց իսկ շրջանակում խօսում էին իր ստացած մեծ գումարի մասին, ոմանք մինչեւ անգամ անձնական բնոյթ էին տալիս խնդրին, ասելով թէ «Հայկունին իր գործը լաւ սարքեց»:

10. Թայէլաթ-Էնվէր-բուլեղիկեան յարաբերութիւնների մասին ստոյգ տեղեկութիւններ չունեմ: Նկատում էի, որ միթի մէջ որոշ բաներ էին կատարուում (յիշուում էր Մոսկուայի Գէմալի անունը), բայց թէ ինչ — չեմ կարող ասել:

Այսքանը՝ իբրեւ պատասխան քո հարցումներին: Մի քանի ընդհանուր դիտողութիւն եւս: Հայկական կոմիսարիատը եւ առհասարակ հայ մեծամասնականները մի տեսակ «միջապատ» (նոյնը՝ նուսերդէ) էին մեր եւ կառավարութեան միջեւ, եւ այդ պատին զարնուելով փշրուում էին իրերհասկացողութեան գալու բոլոր փորձերը: Այդ տեսակէտը ունէին նաեւ մի քանի ռուս կարեւոր եւ անկեղծ մեծամասնականներ: Իմ համոզումս այն է, որ եթէ չլինէին հայ մեծամասնականները, մեր նորագոյն պատմութեան ընթացքը բոլորովին տարբեր կը լինէր, ու թերեւս տեղի ունեցած չլինէին շատ մը աղէտներ:

Երբ ես բանտից դուրս եկայ եւ այցելեցի իմ մի մեծամասնական բարեկամիս (Ռեազանով, բայց ինչքեմ այս անունը ոչ մի տեղ չլիչես) շնորհակալութիւն յայտնելու մեր մասին իր կատարած ջանքերի մասին, նա ասաւ (գրեթէ բառացի) հետեւեալը. «Ինձ հարկ եղաւ շատ տազնայ ապրել ձեր ճակատագրի համար, որն արդէն

որոշուած էր: Այժմ կարող եմ բացէ ի բաց ասել, որ ես վստահ էի, որ դուք երկուսդ էլ գնդակահարուելու էք: Դուք հրաշքով էք փրկուել եւ իմ համար մեծ ուրախութիւն է իմ առջեւ ձեզ կենդանի տեսնել: Յաւօք ես ոչինչ չկարողացայ անել ձեզ համար, քանի որ իմ բոլոր ջանքերը փշրուած էին բախուելով այդ կատաղի պարսիկի յամառութեանը* (Աւանդակ):»:

Այդ ուղղութեամբ քիչ չէր աշխատել նաեւ Ռակովսկին, բայց նորէն ապարդիւն: Բանտից յետոյ Աւանդակը իր հայ արբանեակների հետ մէկ ամբողջ տարի պահեց մեզ Մոսկուա, անուղղակի պատճառ հանդիսանալով Զաւրիեւի մահուան: Եղայ մի քանի անգամ Կարախանի մօտ, որը պատրաստ էր անցագիր տալու մեզ, որ հեռանանք արտասահման: Բայց նա անգոր էր միայն իր իշխանութեամբ անելու այդ: Վերջը մեզ մեծապէս օգնեց Սահակ Տէր-Փարբիէլեանը: Նրա ջանքերով Տիւկին Վարսենիկ Գասպարեանը (ազդեցիկ մեծամասնական) Ռակովսկիի հետ միասին (որի հետ մօտ ծանօթ էի) ստորագրեցին մեր մասին երաշխաւորութեան թուղթ, եւ դրանից յետոյ միայն Կարախանը կարողացաւ յաջողցնել մեր մեկնումը:

Ս. Տէր-Փարբիէլեանը, թէեւ Փանատիկոս մեծամասնական, կարողացել է պահպանել մարդկային զգացումները: Նոյնը եւ Տիւկին Գասպարեանը: Կարախանը, զուրկ չլինելով այդ զգացումներից, թոյլ եւ անվճռական է, ուստի եւ առանց ազդեցութեան: Մնացած հայ մեծամասնականները անսկզբունք, մասամբ հիսթերիկ, բախտախնդիրներ էին, որոնց համար ոչ մէկ սրբութիւն կար: Դառնացած Դաշնակցութիւնից, որի պատճառով միշտ էլ զուրկ էին եղել հայ միջավայրում դեր խաղալու հնարաւորութիւնից, նրանք օգտուել էին առիթից՝ ամէն քայլափոխում իրենց թոյնը թափելու ամէն անհատ դաշնակցականի եւ առհասարակ հայերի

վրայ: Այս տրամադրութիւնն էր, որից բխում էր նրանց ամբողջ հայկական քաղաքականութիւնը, եւ այդ է պատճառը որ հայ մեծամասնականների քաղաքականութիւնը այնքան կորստաբեր եղաւ հայութեան համար: Այս պարագան մոռանալու չեն նրանք, որ կ'ուզէին կամ կը յուսային ապագային հաշտութեան եզր գտնել հայ մեծամասնականների հետ: Իմ համոզումով, այդ նոյնքան ապարդիւն է, որքան բնութեան որեւէ օրէնք փոխելու փորձը:

Մոռացայ, յիշեմ Աշոտ Յովհաննիսեանին¹⁸⁶, որը նոյնքան քիչնոտ է, որքան անազնիւ իր ընթացքում Դաշնակցութեան նկատմամբ:

Թերեւս անհետաքրքրական չլինի հետեւեալ յիշողութիւնը.—

Մեծամասնական յեղաշրջումից անմիջապէս յետոյ մեզ (Զաւրիեւի, ինձ, ապա եւ Ռոստոմի) հետ տեսնուեց ձախ էս-էր Նաթանսոն եւ յայտնեց թէ Լենինը կ'ուզէր մեզ հետ խօսել: Լենինը ասել էր նրան, թէ իրենց տակտիկը ոչինչով չէր տարբերուում Դաշնակցութիւնից, ուստի ինքը համոզուած է, որ մենք կարող պիտի լինենք միասին գործել: Խորհրդակցելով՝ մենք խուսափողական պատասխան տուինք:

Ահա այն ամէնը, ինչ որ կարողացայ յիշել, եւ ինչ որ քեզ հետաքրքրում է. եթէ ուրիշ բաներ էլ ուզես կամ շօշափած խնդիրներիս որեւէ լուսաբանութիւն, խնդրեմ գրես, կը ջանամ գոհացնել:

Ի վերջոյ, նորից խնդրում եմ ուշադրութեան առնես այն, ինչ որ ասել եմ նամակիս սկիզբը եւ մէջընդմէջ փակագծերում: Կարծում եմ, որ դեռ հիմա էլ մենք շատ զգոյշ պէտք է լինենք:

Ձերմ բարեկներս ամէնքիդ
Համբոյրներով՝ ԼԻՊԱՐԻՏ

186.- Յովհաննիսեան Աշոտ Գարեգինի (1887-1972) – Պատմաբան, համայնավար գործիչ, Հայաստանի համայնավարացումէն ետք Յեղկոմի անդամ:

Հասցէս՝ նամակիս ճակատին: Յոյս ունիմ, որ մի քանի տող կը գրես, որպէսզի համոզուած լինեմ, թէ նամակս ստացել ես:



ԳԼՈՒԽ II

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Ընդհ. պատերազմի պայթումեն անմիջապես ետք կազմուած հայ կամաւորական զունդերը շուրջ երկու տարի անձնուիրութեամբ կռուած էին կովկասեան ռազմաճակատին վրայ եւ անգնահատելի ծառայութիւններ մատուցած ռուսական բանակի յաղթանակներուն, որոնց արդիւնքով ալ վերջինս տիրացած էր Արեւմտեան Հայաստանի մեծագոյն մասին՝ Էրզրումի, Վանի, Պիթլիսի նահանգներուն, ինչպէս նաեւ Տրապիզոնի վիլայէթին: Այդ պահէն սկսեալ, ինչպէս ծանօթ է, հիմնովին փոխուեցաւ ցարական իշխանութեանց քաղաքականութիւնը հայկական հարցին նկատմամբ. ռուսի որոշուեցաւ ցրուել զուտ ազգային նկարագիր ունեցող կամաւորական զունդերը, կռուող ուժերուն հնարաւորութիւն տալով ձուլուելու ռուսական բանակին մէջ: Կառավարական հրամանագիրը կարելի չեղաւ անմիջական կերպով գործադրել: Թիֆլիսի եւ Պետրոգրադի հայ պատասխանատու մարմինները, ինչպէս նաեւ ռուս քաղաքական եւ զինուորական ազդեցիկ անձնաւորութիւններ ղեւ արտայայտուեցան կամաւորները ցրուելու գաղափարին, մանաւանդ ռազմաճակատի հրամանատարութիւնը, որ անհրաժեշտ կը համարէր անոնց մասնակցութիւնը դեռ շարունակուող մարտերուն: Այսուհանդերձ, 1916 թ. կէսերուն հրամանը գործադրութեան դրուեցաւ որոշ փոփոխութիւններով: Պիտի կազմուէին առանձին հրացանաձիգ զունդեր՝ բաղկացած գլխաւորաբար ռուսական բանակին մէջ ծառայող հայ սպաներէ եւ զինուորներէ: Այսպիսով վերջ պիտի տրուէր հայ կամաւորական զունդերու գոյութեան:

Այսուհանդերձ, կամաւորները պիտի շարունակէին իրենց մասնակցութիւնը բերել Հայաստանի պաշտպանութեան գործին. մեծ մասամբ իրենցմէ կազմուած ջոկատներ, անուանի մարտիկներու ղեկավարութեան տակ, Վանի, Սշոյ, Խնուսի, Կարնոյ մէջ եւ այլուր, յարատեւ ծառայութեան մէջ կը գտնուէին: Յետագային այդ բոլորը պիտի մտնէին նորակազմ հայկական զօրաբանակին մէջ եւ մասնակցէին 1917-18ի բախտորոշ ճակատամարտերուն:

*
* *

Կամաւորական շարժման վերաբերող փաստաթուղթերը քաղած ենք, առաջին առթիւ, Հ.Յ.Դ. Պոսթընի կեդրոնական արխիւէն, ուր յատկապէս Ամերիկայի թղթածրարներուն մէջ պահպանուած են փոխանակուած գրութիւնները: Գրաքննութեան պատճառով, Թիֆլիս՝ Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյէն հասած նամակները եւ շրջաբերականները ընդհանրապէս ծածկագիր են ու խմորատիպ, եւ կամ թերթերու լուսանցքներուն վրայ գաղտնի մելանով գրուած: Ուրիշ մաս մը վերցուցած ենք Սիմոն Վրացեանի անձնական ծաւալուն արխիւէն (թուագրուած ՄՎ), որ այժմ Պէյրութէն փոխադրուած է Պոսթըն: Այս վերջիններուն մէջ կը գտնուին թէ՛ իր անձնական թղթակցութիւնները «Հայրենիք» օրաթերթին կամ Կեդր. կոմիտէին, եւ թէ՛ պաշտօնական փաստաթուղթեր, զորս ան հաւաքած է Կովկաս գտնուած օրերուն: Ասոնց կարգին են Թիֆլիսի Ազգ. բիւրոյի հրատարակած խմորատիպ շրջաբերականները Վանի եւ Պիթլիսի ճակատներուն վրայ կամաւորական զունդերու ծաւալած գործունէութեան մասին (1915 թ. Օգոստոս-Դեկտեմբեր):





Փաստ. 1403-121
Թիւ 190

Ա 1.- ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԸՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պոստոն, Յուլիս 28, 1915

Սիրելի ընկերներ,

Կը հաստատեմ մեր 164, 174, 175, 180, 183 եւ 184 թուահամարները:

Յուլիս 18ին, Նիւ Եորքի երկու ընկերներու եւ գործիչներու ներկայութեամբ բաւական երկար ժողով մ'ունեցանք եւ որոշեցինք Կովկասի մարմնի պահանջած 50 գինուորական հեռադիտակներու, 25 դաշտային հեռախօսներու, 100 մաւզէր ատրճանակներու եւ 50,000 փամփուշտներու գնումներն ընել անմիջապէս Ազգ. բիւրոյի հաշուոյն եղած դրամին սահմաններուն մէջ եւ ի նկատի ունենալով պահանջուածներուն ամենակարելորդագոյնը՝ յաջողաբար գնել: Չենք գիտեր թէ որքան պիտի յաջողինք հեռադիտակներու ու մաւզէր ատրճանակներու գնումներուն մէջ, որովհետեւ պատերազմիկ երկիրներու ներկայացուցիչներէն ժողոված են անոնք. բայց այսուհանդերձ պիտի փորձենք եւ որքան որ կըրցանք գնել, երկրորդ խմբին¹ հետ պիտի ղրկենք:

Նկատի ունենալով նաեւ, որ գաղթականական հոսանքի վերադարձը դէպի Երկիր՝ Երկրի ինքնապաշտպանութեան ոյժ կու տայ, տնտեսական կեանքը կը բարձրացնէ, որոշեցինք այդ ուղղութեամբ եւս յարմարատենին աշխատիլ եւ միեւնոյն ժամանակ կոմիտէական միջոցներով այդ շարժումին նպաստել: Եւ վերջապէս լսելով Նիւ-Եորքի ընկերներուն եւ գործիչ ընկերոջ միզեկուցումը հայանպաստ անգղերէն թերթ հրատարակելու՝ մասնակցութեամբ մասնաւոր անձերու, որոշեցինք մեր բարոյական աջակցութիւնը տալ այդ ձեռ-

նարկին եւ մեր ձեռքի տակ գտնուած կարելի լուրերը հաղորդել թերթին մէջ հրատարակելու, քանի որ այդ տեսակ թերթի մը հրատարակութիւնը ե՛ւ կարեւոր է ե՛ւ ժամանակին:

Անհրաժեշտ համարեցինք դրամական առաքում մ'ալ ընել Պալքանեան Կ. Կ.ին Երկրի ինքնապաշտպանութեան համար. բայց այս անգամ չուզեցինք Սոֆիայի ցուցուցած Գերմանիոյ ճամբով ղրկել, այլ նպատակայարմար դատեցինք Անգղիոյ ճամբով ղրկել: Քննութիւն կատարեցինք: Արդիւնքն այն եղաւ, որ հեռագրով իւրաքանչիւր անգամ հազիւ հարիւր անգղիական ոսկի կը փոխադրուի, ան ալ առանց պատասխանատուութեան: Իրերու այս վիճակին մէջ, մենք յարմար դատեցինք երեք հազար տոլլար ուղղակի Թիֆլիս՝ ընկեր Վրացեանին ղրկել, որպէսզի ան ալ իր կարգին Պալքանեան Կ. Կ.ին փոխադրէ: Այդ միայն ամենակարճն ու ամենապահանջողն ըլլալ կը թուի: Երեք հազար տոլլարը հեռագրով ղրկեցինք Յուլիս 26ին:

Ժամանակին Պալքանեան Կ.Կ.ը գրած էր, որ Maison Tateos Alianof Company, Trente Princess street Manchesterի միջոցով, հինգ հազար տոլլար ղրկենք: Մենք այն ատեն արդէն այդքան գումար մը փոխադրած էինք Սոֆիա, Պալքանի Կ.Կ.ին: Այսուհանդերձ կ'ուզենք գիտնալ թէ ի՞նչ հաստատութիւն է այդ եւ որքա՞ն վրստահելի. թերեւս կարողանանք ապագային օգտագործել ան, եթէ վստահելի ըլլալը մեզ գրէք:

Ընկեր Ահարոնեան մեզի պատասխանեց հեռագրով, որ "Maladie empêche voyage"²: Մենք փափաք յայտնեցինք, որ վերանկատէ իր հեռագիրը: Հաճեցէք ձեր ընկերական ազդեցութիւնը գործածել:

1.- Ակնարկութիւն Կովկաս մեկնելիք ամերիկահայոց կամաւորական երկրորդ խումբին:

2.- Ֆրանսերէն «Հիւանդութիւնը արգելք ճամբորդութեան»: Արդարեւ Ամերիկայի Կեդր. կոմիտէն Աւետիս Ահարոնեանը իրբեւ գործիչ հրատարակ էր այցելելու Միացեալ Նահանգներ:

Ընկերական բարեկներով
Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԷ





ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Փաստ. 63-88
Թիւ 189

Ա 2.- «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՍԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ

Ժրմել, 5 Սեպտեմբեր 1915

Սիրելի ընկերներ!

Կը հաստատենք Օգոստ. 25ի No 186 մեր գրուածիւնը: Կովկասի մեր ընկերները ահա երկրորդ անգամ է ինչ գրում են սեփական ռազմամթերք ձեռք բերելու առթիւ, որ առաջ ենք բերում նոյնութեամբ.

«Արդէն աւելի քան ստիպողական անհրաժեշտութիւն է սեփական ռազմամթերք գնել: Մեզ պէտք են առաջին անգամին եապոնական հրացանի փամփուշտներ: Շատ լաւ կը լինէր, եթէ ունենայինք որեւէ ուրիշ տեսակի հրացան՝ թէկուզ անգլիական, գուրգերիական, ամերիկեան, իրենց փամփուշտների որոշ պաշարով կառավարութիւնը յանձն է առնում տեղափոխելու գործը իր վրայ վերցնել. հարկաւոր է միայն «Վրացի-վոստոկ» կամ Արխանգելսկ հասցնել: Մի քանի անգամ գրել ենք այս մասին: Պէտք է դիմել Ամերիկայի ընկերներին. թող գնեն որոշ քանակութեամբ եւ կամաւորներ-

րի հետ տեղափոխեն «Արխանգելսկ», իսկ Յապոնիա ու գում ենք յատուկ մարդ ուղարկել:»

Ուստի խնդրում ենք ձեր հնարաւորը անէք եւ յայտնէք արդիւնքի մասին Կովկաս եւ մեզ:

Բալկանեան Կեդր. Կոմիտէն վաղուց է որ աշխատում է մեզ դրամ փոխադրել, սակայն տեղական կուրսը սոսկալի ընկած լինելու պատճառով մինչեւ այժմ չկարողացաւ մեզ դրամ փոխադրել: Ի նկատի ունենալով որ դրամի մեծ կարիք ունենք, գրեցինք Բալկ. Կեդ. Կոմ.ին որ ձեզ յայտնեն՝ իրենց ուղարկելիք դրամների հաշին որոշ գումար մեզ փոխադրէք. ուստի մինչեւ նրանց ձեզ գրելը խնդրում ենք հնարաւոր եղած գումարը մեզ փոխադրէք:

Ընկերական բարեւաններով
ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԴՐՕՇԱԿԻ

Փաստ. 1403-149
Թիւ 235

Ա 3.- ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՍԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պոստոն, 15 Հոկտ. 1915

Սիրելի ընկերներ,

Կը հաստատենք մեր 217 եւ 233 թուահամար նամակները:

Ստացած ենք ձեր 189 եւ 198 թուահամարները:

Երեք չորս ամիսներ առաջ, ինչպէս անգամ մը գրած էինք ձեզի, ընկերներ Ս. Վրացեան եւ Ջամալեան հեռագրած էին մեզի, հաւանօրէն կամաւորական խումբերու Կարգադրիչ մարմնի գիտակցութեամբ, որ հարիւր ծանօթ մաւզէր ատրճանակներ դրկենք Կովկաս, յիսուն հազար փամփուշտներով: Այն ատեն դժուար ըլլալով մաւզէր գտնել հոս, անմիջապէս հեռագրեցինք իրենց, որ Կովթ եւ կամ այլ տեսակ տասը հարուածեան-

ներ կ'ուզէն. բայց, դժբախտաբար, մինչեւ այժմ մեզի պատասխան եկած չէ: Եթէ տարուան սկիզբը մեզի իմացուած ըլլար զէնքի կարիքն ու պահանջ դրուած, մենք շատ հեշտութեամբ պիտի կարողանայինք ամերիկեան կառավարական մէկ երկու տարի առաջուան գործածած զինուորական զէնքերը աժան ձեռք ձգել ու բաւականաչափ դրկել Կովկաս: Փոխադրութեան համար այնքան ալ դժուարութիւն պիտի չքաշէինք, որովհետեւ, ինչպէս գիտէք, մեր մօտաւորապէս ութ հարիւր կամաւորներու միջոցաւ մաս առ մաս կը փոխադրէինք անոնք: Կար եւ ուրիշ դիւրին պարագայ մը եւ այդ այն էր, որ ուսումներիկեան նաւային ընկերութիւնը մեզի ամէն դիւրութիւն ընծայած էր փոխադրութեան հա-



մար: Եւ արդէն մօտաւորապէս քսան հազար տոլլար արժողութեամբ փամփոռուածներ, binocular³ գինուորական հեռադիտակներ, գինուորական դաշտային հեռախօսներ եւ այլն եւ այլն փոխադրած ենք Կովկաս: Յամենայն դէպս, դարնան մեր սկսելիք կամաւորական շարժման հետ, կը ջանանք հրացաններ գնելու ու փոխադրելու մասին եւս գործնական քայլեր առնել, թէեւ կը տարակուսինք, որ կարողանանք շատ մեծ յաջողութիւն ձեռք բերել, որովհետեւ պատերազմիկ պետութիւններու ներկայացուցիչները հրապարակի վրայ եղած պէտքի գալիք զէնքերը գնած են ու գործարաններու արտադրելիք ապրանքները (գինական) մէկ քանի տարուան համար գնելու պայմանագիր կնքած: Ինչ որ ալ ըլլայ պիտի ջանանք մեր լաւագոյնը ընել:

Իսկ ինչ կը վերաբերի ուսանող-կամաւորներու նպաստելու հնարաւորութեան խնդրին՝ մենք նկատի առնելով, որ բժիշկներու կարիքը Կովկասի մէջ շատ հրամայական է, փափաքեցանք ձեր նպաստելու հարցման դրականապէս պատասխանել, որպէսզի ռուս դեսպանատունէն անցադրելու թոյլտուութիւնը ձեռք բերելէ վերջ, անմիջապէս անոնք ճամբայ հանուին դէպի Կովկաս: Բայց հիմա, երբ արտօնութիւն ստանալու ատեն, նպաստ տալու հարցն ալ կայ, այն ատեն այդ մեր զրկած գումարը հաճեցէք անձեռնմխելի պահել ձեր քով, անկէ գործածելով միայն հարիւր տոլլար եւ կամ

հինգ հարիւր Ֆրանք, խմբագրատան վրայ ընելիք անհրաժեշտ նորոգութեան համար: Խմբագրատունը, մեր բոլորիս սրբավայրն ու ուխտատեղին, որուն հետ կապուած է մեր անմոռանալի Ձաւարեաններու եւ Քրիստափորներու յիշատակները, պէտք չէ որ վնասուի: Կը կրկնենք, գումարին մնացեալ մասը հաճեցէք անձեռնմխելի պահել մինչ ցնոր տնօրինութիւն մեր կողմէ:

Ընկեր Վահաբի⁴ ընտանիքի օգնութեան համար, մեր 217 թուահամարին մէջ ներփակած էինք յիսուս (\$ 50.00) արժողութեամբ չէք մը՝ իրենց փոխադրելու համար: Յուսանք մինչեւ հիմա այդ գումարը ստացած ու ըստ այնմ ալ կարգադրութիւն ըրած էք:

«Դրօշակ»ի հրատարակութեան հարցը մեր ժողովներէն մէկուն մէջ նիւթ ընելով, որոշեցինք ձեզի գրել, որ 1915 տարուան համար թիւ մը լոյս ընծայէիք, No 1-12-ը: Նկատի պիտի ունենալ, որ «Դրօշակ»ի հրատարակութեան մինչեւ այժմ եղած չէ ժամանակ, որ թերթը չհրատարակուի, եւ այս տարի եւս չհրատարակուելու պարագային, բաւական գէշ տպաւորութիւն պիտի ձգէ, նախ հասարակութեան եւ ընկերներու ու յետոյ հաւաքածոյ ընողներու վրայ: Ինչ որ ծախս եղաւ հրատարակուելիք թիւին համար, մենք պատրաստ ենք ծախսը վճարելու: Ձանացէք բազմապիսի, բազմազան ու ճոխ թիւ մը հրատարակել:

Մեզի համար անհրաժեշտ է գիտնալ թէ Պալքանի ընկերներու վիճակն ի՞նչ է, Պուլկարիոյ պատերազմին մասնակցելէն վերջ. հո՞ն են թէ արտասահման եւ կամ Ռուսաստան անցած են: Ու ինչպէ՞ս Վիշապի⁵ հետ յարաբերութիւնները պիտի շարունակուին, եթէ անոնք բոլորը Սոֆիայէն հեռացած են: Եթէ նորութիւններ ունիք, հաճեցէք անոնք մեզի հաղորդել:

Ընկ. բարեկներով
Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

3.- Անգլերէն՝ երկաչեայ (հեռադիտակ):
4.- Վահաբ՝ կուս. ծածկանունն էր Արշակ Վուսնեանի (Գերձակեան Օննիկ), ապրիլեան մահատակներէն:
5.- Վիշապ՝ կուս. ծածկանունն էր Պոլսոյ: Հարցը կը վերաբերի այն դժուարութեան, որ ստեղծուած էր՝ 1915 թ. սեպտեմբերի վերջերուն Գերմանիոյ եւ Թուրքիոյ կողմէն իբրեւ զինակից Պուլկարիոյ մասնակցութեան ընդհանուր աշխարհամարտին, որուն հետեւանքով դադրած էին այն տեղեկութիւնները, որ կը ստացուէին Կ. Պոլսոյ եւ ներքին գաւառներու հայութեան ենթարկուած դժբախտութիւններուն մասին:





Փաստ. 24-23

Ա 4.- ՌՈՍՏՈՍԵՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Ռոստոմի այս նամակը, հաւանաբար գաղտնի թանաքով գրուած, Կովկասէն է եւ ուղղուած է Ամերիկայի Կեդր. Կոմիտէին: Լաւ բացուած չէ եւ արտագրութիւնը դժուար ընթեռնելի: Այսուհանդերձ կարելի եղաւ ամբողջութեամբ վերականգնել գրութիւնը: Մակագրուած է «Ընկեր Ռոստոմի նամակ»: Հաւանաբար 1915 թ. Հոկտեմբեր ամսուան վերջերը գրուած նամակ է, նկատի ունենալով Ամերիկայէն ուղարկուած գեներալին գրատուելուն մասին եղած յիշատակութիւնը:

Սիրելի ընկերներ,

Օգտուում եմ առիթից մի երկու խօսք գրել իմ կողմից: Կամաւորական շարժման դէմ հանած խոչընդոտների մասին կը խօսի բերանացի Սարգիսը⁶: Մենք ամէն ջանք պիտի թափենք ոչ միայն սեղմելու, ընդ հակառակը աւելի ընդարձակելու մեր մասնակցութեան չափը:

Յոյս ունինք հայկական հրացանաձիգ գումարտակների կից պահել մեր կամաւորական խմբերը, գէթ մի քանիսը:

Բացի այդ ծրագրել ենք մի շարք ձեռնարկներ Երկրի ներսի համար, որը կը լինի իբր արտայայտութիւն տեղական ազգաբնակչութեան ապստամբական շարժման: Այդ անհրաժեշտ է, տաճկահայ ժողովրդի ձայնը առանձնաբար շեշտելու համար: Մեր ձգտումն է ըստ կարելոյն շատ զինուած խմբեր ունենալ այլ եւ այլ ձեւերով: Այդ ուժերը պիտի ծառայեն ընդհանուր դատի համար եւ գուցէ Կովկասի, աւելի ճիշտ Արարատեան դաշտի հայ ազգաբնակչութեան եւ նրա մէջ ապաստանած տաճկահայերի ինքնապաշտպանութեան համար: Ձեր միջոցները պահեցէք առ այժմ ձեզ մօտ. մի ծախսէք, պէտք պիտի ունենանք երկրի ձեռնարկների համար: Փոխադրեցէք առ այժմ «Կարմիր խաչ» միջոցները, որ բացառապէս պիտի յատկացուի տաճկահայ ընկերների (նահատակ) ընտանիքներին, մասամբ էլ կենդանի մնացածներին, որոնք թշուառութեան մէջ են:

Այդ նպատակով հանգանակութիւն պիտի կատարուի նաեւ Կովկասի ընկերների շրջաններում:

Ընկերներ կ'ուղարկենք ձեզ. միայն թէ ինքներդ գիտէք, թէ որքան դժուար է այստեղի գործերը թողնել:

Վրացեանը չի կարող գալ: Նա շատ գործ ունի այստեղ: Ինչպէս գիտէք, ձեր ուղարկած գէներալը գրաւուած են կառավարութեան կողմից: Դեռ եւս քիչ յոյս ունենք ստանալու. որեւէ ձեռով մեզ լուր տուէք, թէ ընդամէնը ինչ է ուղարկուած: Պատճառներ շատ կան. բայց քիչ նշանակութիւն չի ունեցել մեր բարեմիտ հայրենակիցների փոփոխութիւնը կառավարութեան ականջին, թէ ատրճանակները բերուած են այն նպատակով, որ ապագայում ապստամբութիւն յարուցանեն կառավարութեան դէմ:

Ձեր գրութիւնները աշխատէք կուսակցական բնոյթ չկրեն. գրէք հասարակ թղթի վրայ:

Մի քանի անգամ գրել ենք օղանաւերի մասին. թէ Աստուած սիրէք մարգել տուէք մի քանի տասնեակ երիտասարդներ: Դրանք մեծ ծառայութիւն կարող են մատուցանել մեզ: Աւելի լաւ էր, որ Ամերիկա մեզ մասնագէտներ աւելի հայթայթէր. կամաւորութեան համար եկած ընկերները չեն կարողանում տանել մեր պայմանները:

Նրանք շատ լաւ կուռուղներ կը լինէին աւելի կուլտուրական միջավայրում: Պէտք էր նախօրօք ծանօթացնել ընկերներին մեր պայմանների հետ եւ ուղարկել խիստ ընտրութեամբ: Դուք ինքներդ զգացած կը լինէք թէ որքան բացասական ազդեցութիւն են թողնում այստեղից վերադարձողները, որոնք ընդհանրապէս պիտի տրամադրուեն իրենց ընթացքը արդարացի ուրիշ միջոցներով: Կրկին անգամ շեշտում եմ օղանաւորների մեծ կարեւորութիւնը:

Ձէ՞ք կարող փորձել կամաւորական մի փոքրիկ խումբ, թէկուզ 100 հոգուց յաջողցնել Բաղդադի ճակատի համար, իբրեւ տեղական լեզուների ծանօթ մարդիկ: Մերոնք գուցէ ընդունուեն անգլիական բանակի մէջ: Փորձեցէք:

6.- Արարատեան Սարգիս (1884-1943), որ այդ օրերուն իբրեւ կուս. գործիչ իրախրուած էր Ամերիկա մեկնելու:



Փաստ. 24-22

Ա 5.– ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԾԱԾԿԱԳԻՐ ՆԱՄԱԿԸ ԹԵՀՐԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Նամակը անթուակիր է. ցկատի առնելով որ խօսք կայ ռուսական բանակի ցահանջին մասին, պետք է թուագրել 1915 թ. Դեկտեմբերի կեսին, որովհետև նոյն Արեւելեան բիրոն Թեհրանի Կ. Կ.ին ուղղած 30 Դեկտ. 1915 նամակին մէջ կը գրէ.– «Մի երկու շաբաթ սրանից առաջ ձեզ նամակ գրեցինք ձեր բռնելիք դիրքի վերաբերեալ» (տես յաջորդող՝ փաստ. թիւ 24-21-ը էջ 101-102):

Ձեր Կ. կ[ոմիտէի] անդամներից մէկը հասաւ այստեղ եւ պատմեց որ դուք այստեղի կամաւորական շարժման մասին անտեղեակ էք: Ահա մի քանի խօսքով նրա պատմութիւնը:

Հագիւ ռուս-տաճկ[ական] պատերազմը սկսած էր, այստեղի փոխարքայի օգնականը դիմեց Մեսրոբեպո-ին⁷ թէ ինչով է հայութիւնը ուզում ակտիւ մասնակցութիւն ունենալ այս պատերազմի մէջ, եւ առաջարկեց մտածել այդ մասին, մանաւանդ որ Հայաստանի բախտը պիտի որոշուի դրանով: Ազգ. բիւրոն, որ ընտրուած էր տաճկահայ խնդիրը տանելու դեռ երկու տարի առաջ, խորհրդակցելուց յետոյ մեզ հետ, որոշեց որոշ պայմանները առաջարկել: Հետեւանքն այն եղաւ, որ երբ կաթողիկոսը տեսնուեցաւ կայսեր հետ այստեղ Դեկտ-ին, նա խոստացաւ Հայաստանի ինքնավարութիւնը Տաճկաստանում: Մենք էլ պատրաստութիւններ էինք տեսնում, մեր ոյժերը հաւաքում ամէն տեղից: Այժմ թէ կառ[ավարութեան] հաշուով են ապրում մեր խմբերը եւ թէ Ազգ. բիւրոյի նախնական ծախքերը՝ մոբիլիզացիայի, հագուստի, անում է Ազգ. բ[իւրոն], իսկ երբ կազմ պատրաստ է լինում խումբը, կառ[ավարութիւն]ն է հոգում նրա պէտքերը:

Ձինտորական տեսակէտից խմբերին, վաշտերին դեկավարները մեր դաշնակց[ական] ճանաչուած խմբապետներն են եւ մեզ մօտիկ օֆիցերներ, իսկ բոլոր դեկա-

վարութիւնը ռազմագիտական տեսակէտից, ի հարկէ, ռուս գեներալներն են: Մեր խմբերը կազմուած են I Անդրանիկի, II.....⁸ զօրաբաժին վարդանի կառավարութեամբ: Ա. զօրաբաժինը իշխ[ան] Արդութեանի դեկավարութեամբ: Հնչակեանները չուզեցան ինքնուրու սակցական անուան տակ դուրս գալ՝ կազմեցին մի խումբ 4-500 հոգինոց, որը գործում է ուրիշ շրջանում՝ Ղարսի: Մենք մեր խմբերը բոլորն էլ վանի եւ Մուշի ուղղութիւնների շրջանում: Հնչակեանների դրուժինիայի անունն է VI Արմեանսկ⁹, իսկ մեր Ազգային բիւրոյինն 1-2-3-4-5-7: Մեր խմբերի գործած դերը շատ խոշոր է. նրանք կազմում են աւանգարդը եւ միշտ առաջ են մղում ռուս զօրքերը: Դա լինում է այն պատճառով, որ մեր խմբերը յատուկ նպատակ ունեն ազատելու հայութիւնը եւ Հայաստանը: Որքան յաջող կամ անյաջող, դա պատմութիւնը ցոյց կը տայ: Այժմ կրիտիկական մոմենտ է. ռուս բանակը յետ է նահանջում. ի հարկէ հազարաւոր հայ գաղթականներ նոյնպէս: Ահագին կարիք է զգացում նրանց տեղաւորելու, կերակրելու, պաշտպանելու:

Դուք կարող էք կամաւորներ տալ, բայց քիչ թւով, գաղտնի, ոչ բացարձակ. իսկ գլխաւորն է դրամ հանգանակել եւ ուղարկել Ազգ. բ[իւրո]ի, Յովսէփ Խոնունցի¹⁰ կամ Մեսրոբեպո-ի անունով, կամ կուսակց[ութեան] անունով, գրելով որ կամաւորների համար է: Լաւ կը լինի եթէ Ստեփանեան¹¹ հանգանակութեան մի ճանապարհորդութիւն անի Հնդկաստան. կարող է մեծ գումարներ ձեռք բերել: Եթէ համաձայն է, թող գրէ, Ազգ բ[իւրո]ի եւ կաթողիկոսի հրամանն առնելու համար:

Համբոյրներով
ԱՐԵՒԵԼ[ԵԱՆ] ԲԻՒՐՈ

7.- Մեսրոպ եպո. Տէր Մովսիսեան՝ Թիֆլիսի առաջնորդ եւ նախագահ Ազգ. բիւրոյի:
8.- Անրնթեռնելի մէկ բառ:
9.- Բնագրին մէջ ռուսատառ:
10.- Յովսէփ Խոնունցի՝ փոխ-նախագահ Ազգ. բիւրոյի:
11.- Բժ. Յարութիւն Մտեփանեան (1875-1935), պարսկահայ դաշնակցական ծանօթ գործիչ:

Փաստ. 24-21

Ա 6.- ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԹԵՀՐԱՆԻ ԿԵՂՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Թիֆլիս, 30 Դեկտեմբեր 1915

Միրելիք,

Մի երկու շաբաթ սրանից առաջ ձեզ նամակ գրեցինք (դուկտորի⁷ հասցեով, որը պիտի բացէիք) ձեր բռնելիք դիրքի վերաբերեալ: Առհասարակ պարսկահայերի դրուժիւնը վերջին ամսուայ ընթացքում այստեղի բոլոր շրջանների հոգատարութեան առարկան է կազմել: Թատերաբեմը Պարսկաստան տեղափոխուելով անտարակոյս որոշ վտանգի է ենթարկուում պարսկահայութիւնը, ուստի եւ պէտք էր որոշ աշխատանք կատարել եւ այստեղ եւ այդտեղ: Մենք գրել էինք ձեզ, որ ամէն պարագային դուք պիտի միանգամայն լոյսը լինէք եւ ոչինչով չարտայայտէք ձեր համակրանքն ու հակակրանքը: Այդ էր այստեղի կարծիքը բոլոր շրջաններում: Միւս կողմից, պարզ էր, որ մեր խմբերի մասնակցութիւնը կուուին, պարսկական հողի վրայ, երբ կարող էր պատահել ընդհարումներ պարսիկների հետ, մեզ համար բնաւ ցանկալի չէր, քանի որ պարսիկների կողմից դա պիտի նկատուէր կուր իրենց դէմ եւս: Այդ նկատումներով մենք այստեղ ամէն ջանք գործ դրինք, որ մեր խմբերը դուրս բերուին այդ ֆրոնտի կուուից: Մեր պատճառաբանութիւնները ազդեցին եւ որոշուեց խմբերը հանել այդ շրջանների կուուից: Սակայն մինչ այդ երկու խումբը (Քեռու եւ Իշխանի) ուղարկուած էին Սօուջբուլղի ուղղութեամբ, եւ քանի որ մինչեւ հիմա մենակ էին այդ առաջաւոր դիրքերում եւ նրանց յետքաշելը կը նշանակէր նահանջ, ուստի եւ նոքա մնում են այստեղ մինչեւ յետեւից ռուսական զօրքերը հասնեն: Այսօր լուր ստացանք, որ ռուսաց զօրքերը արդէն գնացել են այն ուղղութեամբ (10.000-15.000) եւ ուրեմն յոյս կայ, որ մերոնք շուտով յետ կանչուեն եւ ուղարկուեն դէպի Վան: Սկզբում, երբ մենք դեռ վստահ չէինք որ մեր խնդիրը կը յարգուի եւ խմբերը յետ կը կանչուեն, մենք այնուամենայնիւ դիմեցինք նախագգուչական միջոցների: Ռ[ոստոմ]ը գնաց բանակը եւ ամէն ջանք գործ դրեց, որ խմբերի առաջխաղացութեան ընթացքում պարսիկներին ոչ միայն չդիպչէին, այլեւ ամէն կերպ նրան[ց] համոզում էր, որ մենք իրենց դէմ ոչինչ չունենք եւ բարեկամ ենք նոցա: Այնքան յաջող գնաց գործը այդ ուղղութեամբ, որ պարսիկները մեր խմբերի մօտ էին գտնուում ապաստան ու հովանաւորութիւն ա-

մէն տեսակի ներքին ու արտաքին ճնշումներից, մինչդեռ քրդերը՝ խմբերը երեւալուն պէս փախչում էին: Այնպէս որ այդ շրջանում, եթէ նոյնիսկ խմբերը մնան էլ, մեր խմբերի մասնակցութիւնը կուուին վտանգաւոր հետեւանքներ չի ունենալ, թէեւ հեռաւոր շրջաններում, գիտակցում ենք, որ կարող է անդրադառնալ:

Այստեղ կուսակցական շրջաններում, ինչպէս եւ հայկական որոշ շրջաններում, պէտք է ասած, լուրջ յուզում է առաջ բերել առհասարակ թատերաբեմը մահմետական աշխարհի խորքերը մտնելը: Ենթադրուում է, որ թուրք-գերմանական ագիտացիան մի կողմից կարող է մտքեր պղտորել եւ շարժում առաջացնել ամբողջ մահմետական աշխարհում (Տաճկաստանից սկսած – Պարսկաստան – Ադրբայջան – Հնդկաստան): միւս կողմից էլ Գերմանիան ջանքեր կը թափի կազմակերպել մահմետականներին ու իր օֆիցերներով եւ ռազմական միջոցներով ուժեղ բանակներ առաջ բերել կովկասեան եւ առհասարակ Տաճկաստանին կից ֆրոնտներում: Այդ պարագաներում հասկանալի է, որ հէնց կովկասն էլ մեծ վտանգի մէջ է գտնուում, եւ քանի որ այդ վտանգը ոչ միայն չէ անցած, այլ օրաւոր ուժեղանում է, ուստի եւ յուզումը (դեռեւս թաքնուած, բայց բոլորի կողմից գիտակցուող) եւս ուժեղանում է: Սկսում են մտածել միջոցների մասին կովկասահայութիւնն էլ պարպելու մասին: Սակայն այս ամէնը միայն գիտակցում է, եւ որովհետեւ վտանգը ապագային է վերաբերում, անմիջական չէ, այլ միայն համարում է որոշ պայմաններում միայն հնարաւոր, ուստի եւ դրական ոչ մի քայլ չի արւում: Այս գրում եմ ոչ թէ ձեզ մէջ էլ խլրտում առաջ բերելու ցանկութեամբ, այլ միայն տեղեակ պահելու այստեղի տրամադրութիւններին:

Մեր խմբերից, ինչպէս գրեցի երկուսը Սօուջբուլղի ուղղութեամբ են գործում: Անդրանիկը իր բանակով Արճէշն է պահում: Համագասպի խումբը Ոստան է (ինքը Համագասպը տիֆոյով հիւանդ է եւ գտնուում է Վանում): Դրոն գործում է Մանազկերտի գծի վրայ: Վարդանի նորակազմ խումբը դեռ Երեւանումն է եւ սպասում է հրացաններ ստանալուն: Բացի այդ բանակներից Երեւանում ունենք նաեւ պահեստի գունդ: Պէտք է ասած, որ խմբերը քանի գնում այնքան աւելի կանոնաւորում են եւ նրանց գործերն էլ գնահատութեան արժանանում: Եւ ցաւալին հէնց այն է, որ հիմա կառավարական շրջաններում հարց է բարձրացած խմբապետներին սպանելով փոխարինելու, եւ պատճառաբանում է

7.- Դուկտորը Ստեփանեան Յարութիւնն է, անդամ Թեհրանի Կեդր. կոմիտէին: «Որը պիտի բացէիք»ը պէտք է հասկնալ այն իմաստով, որ նամակը գրուած էր գաղտնի թանաքով:

այդ նրանով, որ մեր խմբերը արդէն այնպիսի զօրամասեր են, որ կատարում են կանոնաւոր զօրամասերի պարտականութիւնները, իսկ այդ պայմաններում, նոր փոխարքայի կարծիքով, չի կարելի թոյլ տալ, որ կանոնաւոր զօրամասերը ոչ զինուորականների ենթարկւելին: Այս նոր ծրագրի դէմ մենք ամէն կերպ կուռում ենք եւ հասկնալի է, ոչ այն պատճառով, որ ուզում ենք որ մեր խմբապետները լինեն, այլ նաեւ այն, որ վախենում ենք, որ դրանով կարող է խմբերը քայքայուեն: Յոյս ունինք, որ կը կարողանանք բաւարար լուծում տալ այդ խնդրին:

Տաճկահայերի, մասնաւորապէս Պոլսոյ հայութեան մասին ոչ մի լուր չունինք, բոլորովին կտրուած ենք: Յայտնի է միայն (եւրոպական աղբիւրներից) որ Բաղդադի գծի վերայ կուտակուած կէս միլիոնից աւելի հայութիւնը ծայրայեղ չքաւորութեան եւ տանջանքների է մատնուած. աշխատում ենք ամէն կերպ թէ Եւրոպայում եւ թէ Ամերիկայում նոցա օգնութեան գործը կազմակերպել: Որոշ աշխատանք կատարուած է արդէն եւ կատարուած է: Եւրոպայից եւս քիչ տեղեկութիւններ ունենք, միայն պատահական եկողների միջոցով: Վերադարձել է արդէն Ահարոնեանը, սակայն դեռ տեղս չի ժամանել, Բագու է, այնպէս որ նրա բերած լուրերը չեմ կարող հաղորդել:

Ռուսները աւստրիական Ֆրոնտում իսկապէս լաւ յաջողութիւններ ունին: Ռումինական սահմանին կից հսկայական քանակութեամբ ռուսական զօրք է կենտրոնացրած: Որոշ համաձայնութեամբ ռուսները այդ կողմից, դաշնակիցները Սալոնիկի կողմից պիտի առաջանան եւ աշխատին ամէն կերպ կտրել Գերմանիային մահմեդական աշխարհից: Եթէ այդ յաջողուի, գուցէ դա վճռական նշանակութիւն ունենայ պատերազմի վախճանի վերայ. դրանով արդէն Աւստրիային հարաւից կը սպառնայ եւ կենտրոնական պետութիւններին վերջնականապէս կը կղզիացնեն:

Առհասարակ պիտի ասեմ, որ պատերազմի վախճանի վերաբերմամբ կառավարական շրջաններում յոռետեսութիւն չի տիրում. վերջնական յաղթութեան հաւատը մնում է պինդ:

Միւս կողմից ռէակցիան պետական կեանքում քանի գնում ուժեղանում է. մի տեսակ կռիւ է յայտարարուած հասարակական կազմակերպութիւնների դէմ. ամէն կերպ սահմանափակում է նրանց գործունէութիւնը. նոյնիսկ այնպիսի մարմինների, որոնք աշխատում են պատերազմական կարիքների համար: Հասկնալի է, որ ռէակցիայի հոսանքը կենտրոնից անցնում է եւ կովկաս. մեզ մօտ էլ սկսել են խորթ աչքով նայել հասարակական ուժերին ու գործիչներին:

Հայ-վրացական յարաբերութիւնները, որ մի ժամանակ խիստ լարուածութեան հասան, թէեւ չեն կանոնաւորուել, բայց իրենց սրութիւնը կորցրել են. կարծես սկսում ենք իրար հասկանալ, եւ որ ամէնից ուրախալի է, իրենց, վրացիների մէջ ուժեղ հոսանքներ սկսուեց հայակեր արշաւի դէմ եւ սանձեց վրաց շօվէնների ախորժակները:

Նոր փոխարքայի քաղաքականութիւնը վատ չէ մեր վերաբերմամբ, թէեւ խիստ սանձուած: Եթէ չի կարելի անուանել բարեացակամ, հիմք չկայ նաեւ հակառակը պնդելու. իսկ ամէնից ճիշտը կը լինի, եթէ ասենք դեռ եւս պարզուած [չ]է եւ ինքը իշխանութիւնը դեռ լաւ չի որոշել իր բռնելիք դիրքը: Մի բան պարզ է, որ ամէն կերպ աշխատում են ոչ մի ազգութեան չվիրաւորել, բոլորին էլ գոհացնել, ուստի եւ չեն կարողացել ոչ մէկին գոհացնել:

Ընկերական բարեւանքով
[Ստորագրութիւնը անընթեռնելի]

Նամակներ գրէք (մելանով) այս հասցեով (Հորիզոն)
Սիմէոն Յակոբեանին:



Ս. Վ. 6-15

Ա 7.– ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆԷՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

1916, Երևան, Յունուար 20

Բաւական ժամանակ է կտրուած եմ Թիֆլիսի եռու- գեռից: Հիմա Երեւանն է դարձել, մասամբ, կեդրոն մեր կամաւորական շարժման եւ գաղթականների նպաստի կազմակերպման գործի: Երեւանը, իբրեւ գաւառական քաղաք, բնականաբար հեռու է քաղաքական ընդհա- նուր խնդիրներից, ազգային լայն հարցերից: Այդ է պատճառը, որ երկար ժամանակ է ես չեմ գրել ձեզ այդ կարգի նիւթերի մասին:

Ասենք վերջերս այդ աշխարհում շատ բան էլ չի կա- տարուել: Այն, ինչ որ տեղի ունենում է վարագոյրի ետեւ, լայն հասարակութեան աչքից հեռու, ի հարկէ, լրագրութեան նիւթ չի կարող ծառայել: Իսկ հանրային ուշադրութեան յանձնելիք կարեւոր բաներ գրեթէ չեն պատահած մեր շրջապատում, եթէ չհաշուենք կառա- վարութեան վերջին կարգադրութիւնները մեր կամա-ւոր գնդերի լուծման եւ նոր զորամասեր կազմելու մա- սին:

Այս կարգադրութեան առթիւ ես արդէն գրել եմ ձեզ: Մինչեւ այսօր այդ ուղղութեամբ նոր բան չէ պա- տահած: Կառավարութեան հրամանը եկաւ: Երեւան հասաւ նաեւ մի յատուկ պաշտօնեայ, քննեց իրերի վի- ճակը, հարցրեց կամաւորներին եւ պարզուեց, որ տե-ղումս գտնուող հինգերորդ գնդից միայն ... 4 հոգի տրամադիր են մնալու նոր պայմաններով: Մնացած բո-լորն էլ՝ հրամանատար ու կամաւոր՝ հրաժարուում են:

Ստեղծուեց մի շատ յիմար կացութիւն: Կառավա-րութիւնը, ըստ երեւոյթին, չի ուզում վճռական քայլեր անել, եւ զրկուել մի կարեւոր ուժից եւ հայերին վշտաց-նել: Միւս կողմից բարձրագոյն հրամանը տրուած է եւ պէտք է գործադրել: Եւ ահա սկսում է երերումների ու ձգձգումների շրջանը: Տեղի են ունենում հեռագրական փոխանակութիւններ Երեւանի եւ Թիֆլիսի կենտրոնա-կան սպայակոյտի միջեւ: Ինչպէս երեւում է, հայ կա-մաւորութեան հակառակորդները սխալ կերպով են հասկացրել կառավարութեան եւ ստեղծուած կացու-թիւնը նրա համար բոլորովին անակնկալ էր: Հայ գնդե-րի ներքին եւ արտաքին թշնամիները, երեւի, վստահաց-րել են, որ մի կտրուկ հրամանով ամէն բան կարելի է իրագործել, որ նոյնիսկ հայ ժողովրդի փափաքն էլ այն է, որ մեր գնդերը լուծուին եւ վերածուին ռուսական զորամասերի: Եւ, յանկարծ, կամաւորները մերժում են հրամանին ենթարկուել, հայ ժողովրդի գանազան խա-ւերից հասնում են դժգոհութիւններ, եւ եթէ հրամանը անպատճառ կատարելու լինեն, գնդերի քայքայումը

անխուսափելի է, մինչդեռ նրանք ահագին դեր են կա- տարում Կովկասեան ռազմաճակատում...:

Կենտրոնական սպայակոյտը դիմեց գանազան կողմ- նակի միջոցների: Օրինակ, նա առաջարկեց հայ գնդերի հրամանատարներին կազմել խուզարկու խմբեր եւ նրանց գլուխն անցնել, սակայն, հասկնալի կերպով մեր- ժում ստացաւ: Փորձեր եղան հրամանատարներին պա- հելու նոր կազմուելիք զորամասերի սպայական կազմի մէջ, բայց այդ էլ անհետեւանք անցաւ: Այժմ ահա՝ հրա- մանի հրատարակութիւնից յետոյ մի քանի շաբաթ ան- ցած՝ դրութիւնը մնում է նոյնքան անորոշ ու տար- տամ, որքան եւ առաջին օրերին:

Իսկ որ կառավարութեան արածը սխալ է եւ անհաս- կընալի, այդ խոստովանում են բոլոր ռուս զինուորա- կանները, որոնք առիթ են ունեցել տեսնելու մեր գնդե-րը կռուի մէջ: Հակառակ տիրող մի շարք անպատաս պայմանների եւ կազմակերպական եւ կարգապահա- կան թերութիւնների, մեր կամաւորները, իբրեւ կըռ-ւող, անգնահատելի են: Ռուս հրամանատարները բազ- մաթիւ անգամներ՝ գրաւոր ու բերանացի՝ յայտնել են իրենց հիացումը մեր գնդերի այն խիզախ ու անվեհեր գործունէութեան համար, որ նրանք մինչեւ այսօր էլ շարունակում են ունենալ:

Մինչ այստեղ՝ թիկունքում տեղի են ունենում գա- նազան անհեթեթ կարգադրութիւններ, լարում են սեւ դաւեր, այնտեղ՝ առաջաւոր դիրքերում՝ Խնուսից սկսած մինչեւ Մուշ, Բուլանըղ, մեր կամաւորները՝ կողք կողքի ռուս զինուորի հետ՝ շարունակում են իրենց տաժանելի կռիւր թէ՛ բնութեան արհաւիրքների եւ թէ՛ քիւրտ ու տաճիկ խուժանի յարձակումների դէմ: Դեռ նոր ստացանք լուրը եօթներորդ գնդի առաջին վաշտի մէկ ընդհարման, որ տեղի է ունեցել Ուրմիայի հարաւակողմը քրտական մեծ հրոսակների հետ: Ծանր ու տաք է եղել մենամարտը: Թշնամին բազմաթիւ զո- հեր է տուել: Զոհեր են տուել եւ մերոնք եւ հակառա- կորդի զօրեղ գրոհի տակ, ամրացել անմատչելի դիրքե-րում:

Երկրորդ գնդի ձիաւորների Կոփի վրայ ունեցած խիզախ յարձակման մասին արդէն գրել եմ ձեզ: Դեկտ. 31ին նոյն գունդը ռուս զօրքերի հետ արշաւում է դէպի Արճէշ: Նոյն ժամին Արճէշից շարժում է Անդրանիկը ռուսական ուժեղ զորամասի հետ: Մօտ 50 քիլոմետր տարածութիւնը կտրում են երկու զորամասերը եւ հան- դիպում իրար: Առաջին գունդը ճանապարհին կռիւններ



է ունենում քրտերի հետ: Արճէշ-Պատնոս գիծը մաքրելուց յետոյ՝ առաջին գուռը յետ է դառնում դէպի Արճէշ, երկրորդը՝ իր նախկին տեղը: Ճանապարհին Ձեմլեակի¹³ ձիաւորները յարձակուում են քրտական գիւղերի վրայ: Քրտերը կռուով լեռներն են փախչում, իսկ մերոնք ազատում են քրտերի մօտ ապաստանած հայերին:

Նոյն երկրորդ գուռը՝ Դրոյի եւ Եգորի հրամանատարութեան տակ՝ մասնակցում է ռուս բանակի վերջին ընդհանուր առաջխաղացմանը եւ առաջինն է լինում, որ մի հարիւրեակ կողակների հետ գրաւում է Խնուս քաղաքը:

Գործող բանակի ռուս հրամանատարները գովեստով են խօսում նրանց մասին, գնահատում ու մէկ մէկի ձեռքից խլում հայ գնդերը, վարձատրում նրանց մետալներով ու խաչերով: Ռուս զինուորն ու կողակը եղբայրական վերաբերմունք է ցոյց տալիս դէպի մեր կամաւորները, սիրում նրանց, որովհետեւ նրանք համարձակ կռուողներ են, իսկ այստեղ՝ թիկունքում՝ մանր ու գձուձ կիրքերի, բամբասանքների ու դաւերի ճահճում՝ յիմար-յիմար ծրագիրներ են կազմում եւ մի կենդանի ու կարեւոր ոյժը ուզում են մէջտեղից վերցընել: Եւ որ ցաւալին է, այս դաւադրութեանը մասնակից են եւ հայեր, վատ, այլասերուած, ազգային արժանապատուութեան գիտակցութիւնը կորցրած հայեր...:

Ժամանակը չէ այս վերջին խնդրով զբաղուելու: Իմ նախորդ թղթակցութեան մէջ արդէն յիշել եմ մի խմբա-

կի դաւաճանական արարքը: Ուրիշներն էլ թող ապագային մնան: Պատմութիւնը կը գայ այդպիսիներին հրապարակային նշաւակութեան յանձնելու, իսկ այսօր լինենք աւելի պաղարիւն եւ արհամարհանքով ու գանկելով անցնենք այդպիսիների կողքից:

Ինչ որ ուրախալի է եւ արժանի յիշատակութեան, այն համատարած վիշտն ու վրդովումն էր, որ տիրեց հայ ժողովրդի բոլոր գանգուածներին, որոնց ականջին հասաւ հայ գնդերի կազմալուծման հրամանի լուրը: Այս կարգադրութիւնը, իրաւացիօրէն հայ ժողովրդի կողմից ընդունուեց իբրեւ անվստահութեան եւ անբարեացակամութեան մի արտայայտութիւն ռուս կառավարութեան կողմից, մի վերաբերում, որին բնաւ չէր արժանացել հայը, որ իր ամբողջ ունեցած չունեցածը դրեց ի սպաս ռուս պետութեան:

Հակառակ իմ ընդհանրապէս կասկածոտ եւ վերապահ հայեացքի դէպի «Քեռու»¹⁴ քաղաքականութիւնը, ես այս անգամ ուզում եմ հաւատալ, որ արձակուած հրամանը յետ կ'առնուի, եւ մենք կը շարունակենք մեր գործը, որ ահա 15 ամիսներէ ի վեր, լաւ թէ վատ, բարձել ենք մեր ուսերին եւ շնչասպառ առաջ ենք տանում: Չէ՞ որ վերջապէս, բանականութիւն կայ աշխարհիս երեսին, եւ ռուս կառավարութիւնն էլ պէտք է հասկընայ, թէ ի՞նչ վնասակար բան է ուզում անել ամէն տեսակէտով...:

Մի քիչ համբերութիւն, եւ այս խնդիրն էլ կը պարզուի...:

13.- Չեմլեակ – Նամունեան Յարութիւն, Արտեմ (+1918):
14.- Իմա՝ Ռուսիոյ:

Ս. ՎՐԱՅԵԱՆ

Փաստ. 25-6

Ա 8.- ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՍԵՐ[ԻԿԱՅԻ] Կ. Կ.ԻՆ¹⁵

(Թերթերու եզրները գրուածներուն պատճէնը)

Թիֆլիս, 6-III-1916

Ընկերներ,

Կը հաստատենք մեր վերջին նամակը, որով էրգրուած մի մասին ձեզի կը հաղորդէինք էրգրուած մասին Պարոն Խուսնունցի¹⁶ տեղեկագիրը: Այժմ արդէն Արեւելեան բիւրոն միջոցներ է ձեռք առել կանոնաւոր դարձրնելու արտաքին փոխ յարաբերութիւնը: Այսօր ձեզ կը տանք կամաւորական գործին շուրջ վերջերս տեղի ունեցած նորութիւնները:

Կամաւորական գործ

Մեր իրականութեան մէջ ներկայումս դեռ կամաւորական գործն է կազմում գործունէութեան կեդրոնը: Կամաւորական շարժման խոշոր քաղաքական նշանակութիւնը գնալով ոչ միայն չի նուաստանում, այլեւ աւելի է ակնյայտնի դառնում: Այժմ արդէն սկսում են գիտակցել նաեւ այն խաւերը, որոնք վերապահութեամբ էին վերաբերում այդ շարժման, ինչպէս Ռուսաստան, այնպէս էլ արտասահման: Աւելի յաճախ է լսում ձայներ՝ պահելով խմբերը: Իսկ միւս կողմից ռուս կառավարութիւնն էլ սկսել է պարզ գիտակցել, որ մեր խմբերը քաղաքական որոշ դեր ունին կատարելիք եւ գուցէ ապագային արգելառիթ լինին իր ծրագրերէն: Կարող էր դա մէկ կողմից խիստ յուզել հայերին, որ այնքան էլ ցանկալի չէր կարող նկատուել, իսկ միւս կողմից աղմուկ կը հանէր արտաքին քաղաքական աշխարհին [մէջ]: այդ պատճառով էլ սկսեցին մտածել նոցա բոլորովին ձուլել ռուսական բանակին մէջ վերացնելով նոցա ուրոյն ազգային բնաւորութիւնը: Իսկ այդ կը յաջողուի՞. դա հէնց առիթ կը լինի որ խմբերը իրենք ցրուեն բնական եղանակով:

Դեռ Դեկտ. 13ին այստեղի բարձր իշխանութեան կողմէ ներկայացուել է որոշ գեկուցում բարձրագոյն հրամանատարութեան եւ նրա շտապէն արձակուել է

հրաման՝ վերակազմել հայ կամաւորական խմբերը, վերածելով նոցա հայկական հրացանաձիգ պաթալիոններին հետեւեալ հիմքերով:— Խմբերի հրամանատար կազմը ամբողջովին լինելու է ռուսական բանակի հայ սպաներից, որոնց նշանակում է զինուորական իշխանութիւնը: Հայ խմբերի մէջ մտցում են ինչպէս ռուսական բանակում գտնուած հայազգի զինուորներ, այնպէս էլ կամաւորները: Վերջինները պարտաւոր են երդում ընել թագաւորին եւ պետութեան հաւատարիմ լինելու, իսկ մեկնելուց յետոյ նոքա այլեւս հեռանալու իրաւունք չունեն մինչեւ պատերազմի վերջանալը: Այդ ձեռով արդէն հրաման արձակուել է զօրաբանակում, այնպէս որ պաշտօնապէս արդէն երկու ամիս է, որ մեր խմբերը պիտի վերակազմուեն: Մեզ համար պարզ էր այդ հրամանի շարժառիթները, ինչպէս եւ վերակազմութեան հետեւանքները: Այդ պարզապէս կը նշանակէր խմբերը ցրուել, քանի որ հրամանատար կազմի հեռանալուց յետոյ, երդումի ու միւս պահանջներ շնորհիւ շատ քիչ կամաւորներ կը ցանկանային մտնել այդ նոր պաթալիոններին մէջ: Սկսուեցին մի շարք բանակցութիւններ այդ խնդրին շուրջը, որ տեւում է մինչեւ այժմ ալ եւ որը հապէս եւ ոչ մէկ հետեւանք չունեցաւ: Մենք պարզ հասկացրինք կառավարութեան, որ այդ կը նշանակէ խմբերը ցրել: Եթէ կառավարութիւնը վճռել է այդ անել, թող մի անգամէն ցրէ, որովհետեւ չէինք ուզեր զօրով փաթաթել մեզ իրենց վզին: Առարկեցինք որ վերակազմութեան վերաբերմամբ բերուած պատճառաբանութիւնները — տիսիսիսիսիս պակասութիւն, խմբապետների սիվիլ լինելու անյարմարութիւնը, — քննադատութեան չեն դիմանում, որ՝ տիսիսիսիսիս մեզանում աւելի չէ պակասում¹⁷ քան զօրքի մէջ, որ՝ խմբապետներին սպանների աստիճան տալ եւ դրանով վերացնել անյարմարութիւնը: Ըստ էութեան ոչ մի զիջում չարին համաձայնեցին միայն խմբապետներից ոմանց սպայական աստիճան տալ, սակայն նոքա չպիտի մնային խմբապետներ, այլ միայն ուրիշ ցած աստիճանով, իսկ միւս հիմքերը պիտի մնան անխախտ: Միւս կողմից թէեւ հրամանը արդէն արձակուած էր, սակայն եւ մենք եւս չէինք կարող մի անգամէն իրագործել այդ: Բոլոր խմբերը, բացի Վարդանի նորակազմ խումբը, գտնուում էին առաջաւոր դիրքերուն, եւ պահում էին բաւական երկար եւ պատասխանատու գիծ: Հեռացնել նոցա այնտեղէն եւ քայքայել՝ ձեռնտու չէր, ուստի զօրքի հրա-

15.- Արտագրութիւն է գաղտնի թանաքով գրուած նամակի մը, ինչպէս նշուած է՝ «թերթերու եզրներին գրուած»:
16.- Յովսէփ Խունունց, փոխ նախագահ Հայ Ազգ. բիւրոյի, Թիֆլիս: Յովսէփ Խունունցի տեղեկագրին նախին տեսնել «ՆԻՒԹԵՐ»ու ԺԲ. հատոր, էջ 188-89:
17.- Արտագրութեան մէջ կապում:

մանատարը հրամայեց կռուի վայրերում գտնուող խմբերի վերակազմութիւնը յետաձգել մինչեւ նոցա կռուից դուրս գալը: Այդպիսով նոցա վերաբերմամբ խնդիրը ձգձգուեց: Կամեցան անմիջապէս ձեռնարկել Վարդանի խմբի վերակազմութեան, մինչեւ անգամ յատուկ սպայ ուղարկուեց այդ մտքով: Պաշտօնապէս յայտնեցին Վարդանին, պահանջեցին ցուցակագրել եւ տեղեկացնել ԷՆՎԱՆՊԵՐԻ¹⁸, բանակի եւ այն կամաւոր- [ներ]ի, որոնք կը ցանկանան մտնել նոր կազմելիք պա- թալիոնի մէջ: միաժամանակ հարցրին Վարդանին, թէ կը ցանկանայ արդեօ՞ք մտնել ուստի այլ պաշտօնով կազմուելիք գնդին մէջ: Վարդանը ցուցակը յանձնեց եւ յայտնեց, որ դիմումին՝ կամաւորներից միայն չորս հոգի համաձայնեցին մտնել, իսկ իր հարցը նա համարում է ընդհանուր հարց եւ վճռելը իրենից չէ կախուած, այլ այն մարմնից, որ իրեն նշանակել է, իսկ եթէ իրեն թողնուէր, նա երբեք չէր համաձայնի մնալ ուստի պաշտօնով: Գնացած սպան տեղնուտեղը ուսումնասի- րեց այս խնդիրը եւ մի շարք գեկուցումներով յայտնեց շտապին վերակազմութեան դժուարութիւնների մա- սին, որոնց թւում հրամանատար [ական] կազմի եւ գին- ուորացուների բացակայութիւնը: Եւ քանի որ առ այժմ չունին ոչ անհրաժեշտ քանակութեամբ գինուորացու- ներ եւ սպաներ, ուստի այդ գործն էլ դեռ մնում է առ- կախ: Գործնականապէս ոչինչ չփոխուեց, Վարդանը իր խմբով մնում է դեռ Երեւանում եւ սպասում է գէնք ստանալուն որ կռուի դուրս գայ: Սակայն այս դրու- թիւնը երկար տեւել չի կարող, պիտի լուծուի այս կամ այն ձեւով: Մեզ համար ամենավտանգաւոր ձեւը այն կը

լինի, որ կառավարութիւնը խմբերին այն դրութեան մէջ կը դնի, որ նոքա սկսեն քայքայուել եւ փաստօրէն լուծուեն: Այդ կարող է նախ այն տպաւորութիւնը թող- նել, որ մենք թողինք պատերազմի դաշտը կռուի կէ- սում եւ մեր մէկուկէս տարուայ արածների արժէքը ոչինչի հաւասարեցնել, եւ երկրորդ՝ քանդուած խմբե- րից դուրս եկած հինգ հազար հոգու տեղաւորելը: Այս, ինքնին գործի լիկվիդացիան, չափազանց ծանր պայ- մանների մէջ կը դրուի: Մենք ամէն կերպ աշխատում ենք խուսափել գործը այդ դրութեան հասցնելու, սա- կայն այդպիսի սիւրփրիզից խուսափելու ոչ մի երաշխիք չունենք: Հէնց մի քանի օր առաջ տեղեկացրին մեզ, որ հրաման է արձակուած մեր խմբերին, որ նոքա ուղար- կեն գինուորական իշխանութիւններին իրենց մէջ գտնուած բոլոր գինուորակոչութեան ենթակայ ուու- սահայերին: Դրա իրականացումով, որոչ խմբեր, որ- տեղ ուուսահատակների տոկոսը մեծ է, կարող են բո- լորովին քայքայուել, իսկ միւս խմբերը եւս կը հասնեն քայքայման աստիճանի, քանի որ թէ հրամանատար կազմի մէջ եւ թէ կամաւորների մէջ կան մեծ թուով ուուսա- հատակներ, որոնց հեռանալով դժուար կը լինի պահել խմբերը:

Կը լինի արդեօ՞ք դա վերջաւորութեան սկիզբը, թէ կը յաջողուի բաւարար կերպով լուծել, ցոյց կու տայ մօտիկ ապագան: Այդ մասին կը յայտնենք շուտով:

Վերջին պահուն իմացանք որ այդ հրամանը — ուու- սահայերին խմբերից հանելու վերաբերմամբ — դադա- րեցուած է:

Առ այժմ այսքան: Գրեցէք յաճախ:

18.- Յուցակագրութեան սպասարկութիւն:
19.- Գաղտնագիր նամակի արտագրութեան ձեռագիրը կը պատկանի Յովի. Ամատուճի:

Ձերմ բարեկենդիկ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻԻՐՕ¹⁹

Ս.Վ. 6-17

Ա 9.– Ս. ՎՐԱՑԵԱՆԷՆ Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵՆՏ. ԿՈՍ.ԻՆ

1916, Ապրիլ 2, Սոչի

Սիրելիք,

Մի ամիս կը լինի, որ ձեզ նամակ չեմ գրել, շատ էի գբաղուած: Միւս կողմից էլ դրուժինն անկայուն էր, սպասում էի, որ պարզուրի: Ամէն օր կամ ամէն շաբաթ գրելու, ի հարկէ՝ ես հնարաւորութիւն չունեմ, որքան էլ դա ցանկալի լինի ձեզ համար: Դրա փոխարէն շուտ-շուտ նամակներ է գրում քարտուղարը եւ թղթակցութիւններ՝ Goodman²⁰, որոնք, ընդհանուր առմամբ, իրազեկ կը պահեն ձեզ այստեղի կացութեան մասին:

Ինչպէս տեսնում էք, գրում եմ Սոչիից՝ Սեւ ծովի ափերից, ուր եկել եմ մի քանի օր հանգստանալու: 18 ամսուայ անընդհատ լարուած աշխատանքը բաւական գգգգել է նեարդներս, որոնք այլեւս հրաժարուեցին իրենց պաշտօնը կատարելուց: պէտք եղաւ մի կարծ ժամանակով քաշուել անդորր մի անկիւն 1-2 շաբաթից նորից նոյն աշխատանքի մէջ խրուելու համար: Ամսիս վերջին դարձեալ կը լինեմ Երեւան, ապա Վան, ու, թերեւս, Մուշի շրջանները: Ամերիկա գալը դժբախտաբար, դեռ անկարելի է, գուցէ կարողանամ աշնան սկիզբները մեկնել: Գուցէ եմ ասում, որովհետեւ միայն իմ ցանկութիւնից չի կախուած գալս: Հէնց Թիֆլիսից մեկնելուց մի քանի օր առաջ՝ հիմնուելով ձեր նամակները ու հեռագիրները վրայ՝ ես կրկին գործիչի պահանջը դրի Ա. Բիւրոյին, որ երկարօրէն գբաղուեցաւ այդ հարցով, շատ կարեւոր գտաւ, բայց յարմար մարդ չէր գտնում: Ի նկատի առնելով ձեր պահանջը, քննութեան դրուեց իմ թեկնածութիւնը եւ երկրի մարդկանց բողոքի վրայ՝ քուէարկութեամբ՝ փառաւորապէս տապալուեց: Առաջարկուեց նաեւ Արարատեանի թեկնածութիւնը եւ նոյնպէս մերժուեց: այստեղի գործերը թոյլ չեն տալիս կարեւոր ուժերի հեռացումը: Ոչ ձերմակի²¹, ոչ էլ Լեւոնեանի գալը նպատակաւորմար չհամարուեց: առաջինը բոլորովին նոր մարդ է, մեր շարքերին անվարժ ու անծանօթ, իբրեւ գործիչ՝ անյարմար երկրորդը՝ չափազանց ծանրաշարժ, ջղայնապէս քայքայուած եւ իբրեւ գործիչ՝ բոլորովին անյարմար, խօսելու շնորհքը չունի եւ ոչ էլ ղեկավարելու կարողութիւն: Անկարելի եղաւ ուղարկել եւ առաջները որոշուած երկու հոգին:

Ինչպէս տեսնում էք, ուղղակի անելանելի դրուժինն ստեղծուեց: մարդու պահանջը ընդունուած է, բայց յարմար մարդ չի ճարուում: Կանգ առինք Տիգրան Արգումանեանի²² վրայ — «Հայաստան»ի խմբագիր —, որը այս օրերս սպասուում է Բալկաններից: Նա ժամանակին խօսք էր տուել ինձ եւ կարծում եմ, կը համաձայնուրի գալու: Որոշեցինք եւ մէկ ուրիշի, որի անունը դեռ չեմ տայ, դիմեցինք իրեն, եթէ համաձայնուրի, լաւ կը լինի: Ուրիշ մարդ չենք կարողանում ճարել: Լաւ-վատ եոյս պիտի տանէք տեղական ուժերով, մինչեւ տեսնենք, ինչ դուրս կը գայ մեր գործից:

Մեր գործը հիմա չափազանց տարտամ ու անհամ շրջան է մտել: Հարցի քաղաքական կողմի մէջ նորութիւններ գրեթէ չկան, եթէ, ի հարկէ, հաշուի չառնենք Դումայի մէջ Միլուկովի արտասանած ճառը, որը արդէն լրագիրներից իմացած կը լինէք: Այդ ճառով ոռւս ազատական մտաւորականութեան ամենակարկառուն դէմքերից մէկը աշխարհի առաջ խոստովանում է մեր հարցի հրատապութիւնը եւ պնդում ինքնավարութիւն տալու անհրաժեշտութեան վրայ: Նման ոգով արտայայտուեց եւ ոռւս մամուլի մեծ մասը: Այս խօսքերն, ի հարկէ, գործնական մեծ արժէք չունեն, բայց կարեւոր են տիրող մտայնութիւնը որոշելու տեսակէտից: Պէտք է, սակայն, այն էլ ի նկատի ունենալ, որ այդ մտայնութիւնը պաշտօնական շրջաններում, գոնէ Կովկասում, բոլորովին հակառակն է եւ միտիթարական ոչինչ չի պարունակում: Այդ աչքի է ընկնում ամէնից առաջ դէպի կամաւորական գնդերն ունեցած վերաբերումից, որը որակելու համար դժուար է յարմար արտայայտութիւն գտնել:

Ես արդէն գրել եմ ձեզ ժամանակին որ կառավարութիւնը որոշել է լուծել հայկական գնդերը: Դրա համար տրուեց կայսերահաստատ հրաման, Դեկտեմբերի կէսերին, որով հայկական բոլոր եօթը գնդերը լուծուում են: Այս հրամանը անմիջապէս չգործադրուեց, տեղի ունեցան երկարատեւ բանակցութիւններ, կատարուեցին մի քանի զիջումներ եւ գնդերի գոյութիւնը քաջքուեց մինչեւ Մարտի վերջերը: Թէ կառավարութիւնը ինչի՞ էր ձգտում գնդերը լուծելու հրամանը տալիս, այդ, ի հարկէ, հասկնալի է ձեզ, բայց իբրեւ պաշտօնական պատճառ ցոյց են տալիս այն, որ հայ գնդերում բացակայում է կարգապահութիւնը: Իբրեւ կռուող անփոխարինելի են, բայց տիպիկալիս չեն ենթարկուում, ասում էին նրանք: Այս բանին առատ նիւթ էր տալիս ճրդ գունդը — Չանպոլադեանի —, որի մէջ իրօք խռո-

20.- Վարդանեան Ռուբէն (Ռէն):
21.- Բոզիեան Յովհաննէս:
22.- Իսկական անունը՝ Խաչիկեան Տիգրան: «Հայաստան»ը Պալքանի Կ. կոմիտէի պաշտօնաթերթն էր, դադարած 1915 թ. Մեպտեմբերին:

վուծիչներն անպակաս էին եւ մեր շարժման վարկաբեկման տեսակէտից ահագին նշանակութիւն ունեցան: Ներքին պառակտումներն ու կռիւները այն արդիւնքն ունեցան, որ կողակների ուժով մօտ 150 կամաւոր զնդից ձերբակալուեցին, մօտ 120 հոգին թողնուեցին, իսկ մնացեալները մինչեւ այժմ էլ բանտում են: Հիմա էլ Պանդուխտը²³ ըմբոստացել է իրենց վարիչ մարմնի դէմ, եւ ահա թերթերում իրար դէմ ազդեր են հրատարակում: Անժամանակ եմ համարում մտնել այդ խայտառակութիւնների ներքին կողմի մէջ — թողնենք այդ ներփակում եմ միայն թերթերի մէջ հրատարակած ազդերը եւ աւելացնում, որ այդ մարդիկ՝ կուսակցական կիրքից կուրացած՝ շատ վնասեցին հայ ազատագրական գործին²⁴:

Այսպէս, ուրեմն, ամիսներ շարունակ ձգձգուեց մեր զնդերի լուծման գործը. կառավարութիւնը, կարծես, ըրիսկ չէր անում վճռական կերպով իրագործելու իր հրամանը: Վերջի վերջոյ, երկուստեք մղուած երկար ու տաղտկալի բանակցութիւններից յետոյ, գտնուեց մի միջին ձեւ — ոչ շիշը այրուի, ոչ քէբապը — եւ այդ միջին ձեւով հիմա, կարծես, ուզում են բաւականանալ: Այդ ձեւը հետեւեալն է. հայ զնդերը ոչ թէ պիտի լուծուին, այլ՝ վերակազմուեն հրացանակիր զնդերի, որոնց գլուխը դրուելու են ուսու բանակի հայազգի զինուորականներ. հրամանատար կազմը լինելու է սպաներից եւ պատեհութիւն է տրուելու ներկայ կազմին թեթեւ քննութեամբ սպայ դառնալու. զնդերը լցուելու են ներկայ զնդերում եղող կամաւորներով, իսկ պակասը լրացուելու է ուսու բանակի հայ զինուորներով: Այսպիսով, ուրեմն կազմուելու են հայ զինուորներով եւ հրամանատարներով գուտ հայ զնդեր, իբրեւ անբաժան մաս ուսու բանակի. դրանք լինելու են ուսու զօրքեր ընդհանուր հիմունքներով եւ իրենց իրաւունքներով ու պարտականութիւններով ոչնչով չեն տարբերուելու զօրքից: Այժմ ուսու կամաւորներին ազատութիւն է տրուում մնալու կամ չմնալու նոր պայմաններով, բայց մի անգամ որ մնացին, այլեւս մինչեւ պատերազմի վերջ չեն կարող հեռանալ: «Վերակազմութեան» առաջին քայլը լինելու է վեցերորդ — Զանպոլատեանի — զնդից, որի համար արդէն ուղարկուած է յատուկ զինուորական: Նշանակուած են եւ միւս զնդերի համար — գնդապետներ Բէժ-ժանբէգ, Յովսէփեան եւ Տէր-Նիկողոսեան: Առաջին — Անդրանիկի — եւ երկրորդ — Դրոյի — զնդերի վերակազմութիւնը որոշ ժամանակով յետաձգուած է: Ներկայ հրամանատարներին, եթէ նրանք չուզենան մնալ նոր զնդերում, պատեհութիւն է տրուելու ձիւղոր խուզարկու խմբեր կազմելու:

Այսպէս, ուրեմն, կամաւորական «ճգնաժամը» որոշ ձեւ ստացաւ, թէեւ, «վերակազմութեան» գործը կարող է դեռ ձգձգուել զանազան պատճառներով: Մերոնցից

ոմանց կարծիքով, դա երկու չարեաց փոքրագոյնն է, եւ այն կարծիքի եմ, որ դա չարեաց մեծագոյնն է: Այսպէս թէ այնպէս, փաստօրէն հայ կամաւորական շարժումը վերջացած պէտք է համարել: Այդ շարժումը այլեւս պատմութեան սեփականութիւնն է, եւ նրա գնահատութեան ժամանակը դեռ չի եկել: Նրա ձեւի ու նպատակի որոշ կէտերի մասին, սակայն, կարող է կարծիքների տարբերութիւն լինել: Մի բանի մասին միայն բոլորն էլ անխտիր համաձայն են, այդ այն է, որ հայ ազգը հրապարակ հանեց ահագին մարտական ուժ ու կարողութիւն: Այս պատերազմի ընթացքին հայ ժողովուրդը իբրեւ լացող ու աղերսող չներկայացաւ, այլ իբրեւ կռուող ու պահանջող: Եւ զարմանալի չէ, որ մեր մասին աշխարհում այժմ բոլորովին այլ կարծիք է ստեղծուած: Ապագան ցոյց կու տայ, թէ այս ամէնը ինչով կը պսակուի:

Հիմա մեր առաջ մի խոշոր գործ է դրուած — լիկւտացիայի ենթարկել զնդերը, տեղաւորել, գործ ճարել, ճանապարհածախս հայթայթել այն կամաւորներին, որոնք նոր զնդերում չեն մնայ եւ որոնց թիւը, ըստ իս, շատ մեծ կը լինի: Դժուար կը լինի, մանաւանդ ամերիկահայերի դրութիւնը, որոնցից շատերը, երեւի կը կամեանան վերադառնալ: Թէ մեծ ժամանակ, թէ պատկառելի գումար կը խլէ մեզանից այդ գործը:

Կամաւորական շարժման վերջանալով Ազգ. Բիւրոյի դերը, ի հարկէ, չի նսեմանայ, այս կամ այն ձեւով նրա առջեւ դրուած կը լինին մի շարք չափազանց կարեւոր խնդիրներ. եթէ նրա գոյութիւնը բռնի կերպով չվերացուի, նա կը շարունակէ մնալ մեր իրականութեան մէջ քաղաքական ամենահեղինակաւոր մարմինը, որ, ի միջի այլոց, պէտք է զբաղուի եւ նուաճուած երկրի վերաշինութեան գործով: Այդ նպատակի համար հսկայական գումարներ են հարկաւոր, ու այսուհետեւ մեր ջանքերը պէտք է ուղղենք այդ գծով — երկիրը ժողովրդով լեցնել, երկրում կարգ հաստատել, երկրի կեանքը վերահաստատել, երկրի ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը ապահովել: Այս կետերից ամէն մէկը անսահման ուժ ու զոհողութիւն է պահանջելու եւ հիմա ատի թան երբեմից, զգալի է լինելու գործիչների եւ դրամի կարիքը: Ենթադրում եմ, որ այդ բոլոր գործառնութիւնները կատարուելու են Ազգ. Բ.ի միջոցով եւ կամ նրա աջակցութեամբ, հակառակ պարագային մեր կազմակերպութիւնն է աշխատելու այդ ուղղութեամբ, այդ պատճառով հանգանակութիւնների գործն այնպէս պէտք է դնել, որ կապուած չլինէք միշտ այս կամ այն մարմնի հետ եւ միշտ հնարաւորութիւն ունենաք հաւաքած գումարները տրամադրելի անել կազմակերպութեան: Այս կէտի վրայ եմ դարձնում ձեր յատուկ ուշադրութիւնը:

Այդտեղից եկած տեղեկութիւններից երեւում է որ այս տարի ձեր հանգանակութեան գործը շատ յաջող է գնում: Ուրեմն, պէտք է ենթադրել, որ արդէն բաւական խոշոր գումար ունէք ձեզ մօտ հաւաքած: Ժամանակին դրել եմ, որ առայժմ դրամ մի ուղարկէք, երեւի

23.- Մեֆերեան Միքիան (1884-1920):
24.- Ակնարկութիւն հնչակեաններուն:



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

այդ է պատճառը, որ այս տարի Ազգ. Բ[իւրոն] ձեզանից դրամ չի ստացել: Սակայն, վերջի վերջոյ պարտաւորուած պիտի լինէք ուղարկելու, քանի որ ապագայում սպասուում են խոշոր ձեռնարկներ. անհրաժեշտ է, որ այդ գումարները անցնին մեր կազմակերպութեան, ուստի պէտք է խորհիք այնպիսի միջոց, որ առանց որեւէ դժգոհութեան հասարակութեան կողմից, դրամները հետզհետէ ուղարկուեն մեզ: Եթէ այդ անկարելի է, շատ ցաւալի է. այն ժամանակ պէտք է ուղարկել գոնէ անդամավճարներից եւ կազմակերպական միջոցներով հաւաքուածներից. — այս տեսակէտից, շատ ցաւալի է, որ որոշել էք տուրքը յատկացնել ըստ հնոյն. շատ անխորհուրդ մի որոշում է այդ —: Եթէ այդ էլ անկարելի է, այն ժամանակ պէտք է դրամը ուղարկէք Ազգ. Բ.ին, կանխորոշելով նպատակը — երկրի վերաշինութիւնը: Շուտով գուցէ երկրում յատուկ մարմին կազմուի, եւ այն ժամանակ կարելի է վերաշինութեան գործը նրա միջոցով վարել: Եւ առհասարակ, մի շտապէք, դրամներ փոխադրել մինչեւ յատուկ պահանջներ չլինեն: Միշտ յիշեցէք, որ գալու են աւելի ծանր օրեր եւ նիւթական միջոցների աւելի մեծ կարիք է լինելու, իսկ մեր աղբիւրները, դժբախտաբար, բոլորովին ցամքել են: Այդտեղ եկող մէկի հետ կ'աշխատենք աւելի որոշ տեղեկութիւններ հաղորդել եւ աւելի պարզ թելադրութիւններ անել. հիմա աւելին անկարելի է անել, թէեւ ասելիքներ շատ կան:

Այս բոլորից երեւում է, որ հանգանակութեան գործը աւելի եռանդով պէտք է շարունակէք, եւ միայն դրամի ծախսումը պէտք է այնպէս տարուի, որ գործադրուի այն նպատակների համար, որոնք բխում են մեր տեսակէտներից եւ մեր որոշումներից: Առայժմ Ազգ. Բ. հանդիսանում է նպատակայարմար մարմինը, բայց ո՞վ է երաշխաւոր, որ վաղը միւս օր նա չի լուծուի, ինչպէս ահա լուծուում են մեր գնդերը:

Գարնան մօտենալով՝ մեր ուշադրութեան մեծ մասը դառնում է դէպի Երկիր, ուր սկսում են հետզհետէ վերադառնալ գաղթականները, չափազանց աննպաստ պայմաններում: Երկիրը աւերուած է, ժողովուրդը՝ գուրկ միջոցներից, լծկանից, սերմացուից: Պէտք է ասել, որ ռուս կառավարութիւնը հայ գաղթականներին օգնելու գործում ըստ ամենայնի ընդ առաջ գնաց օրուայ պահանջին: Մեր ազգային մարմիններն են, որոնք հազար ու մի թերութիւններ ունեն, եւ ամենամեծ թերութիւն այն է, որ իրար հետ մրցում են, համերաշխ չեն գործում: Անհամերաշխութիւնը մեզ չափազանց վնասեց: Վերջերս մերոնց ջանքերով նորից համերաշխական քայլեր առնուեցին թէ՛ գաղթականական մարմինների միջեւ եւ թէ՛ Ազգ. Բ.ի շուրջ: Եղան մի շարք խորհրդակցութիւններ, որոնց մասնակցում էին բոլոր հոսանքների ներկայացուցիչները: Բոլորիս ցանկութիւնն էլ այն է, որ համագումար գումարուի, բայց քաղաքական ներկայ պայմաններում բոլորն էլ այդ գտնում են անհնարին: Թերեւս անցնի այն առաջարկը,

որ Ազգ. Բ. մեծացուի նոր անդամներով, զանազան հոսանքներից: Մենք դէթ համաձայն ենք, բայց թէ ինչ արդիւնք կը ստացուի, ճիշդն ասած՝ ես շատ էլ հաւատացող չեմ, որովհետեւ որեւէ բանով չի կարելի գոհացնել, մանաւանդ որ գործ անող էլ չեն: Այ, գեղեցիկ օրինակ Վանը, ուր կատարեալ հնարաւորութիւն տուինք «վերաշինութեան» գործ անելու, բայց ինչ եղաւ հետեւանքը — շատ ողորմելի, ուրիշին քննադատողներն իրենք աւելի մեծ խայտառակութիւններ գործեցին:

Կրքերը հանդարտեցնելու եւ որոշ համերաշխութիւն առաջ բերելու տեսակէտից կարող է նշանակութիւն ունենալ այն համագումարը, որ լինելու է Պետրոգրատում, Մայիսի մէջ: Ես գրել էի, հեռագրել էլ եմ ձեզ Ապրիլի մէջ, այդպէս էր որոշուած, բայց յետոյ յետաձգուեց: Շատ անհրաժեշտ է, որ դուք էլ ունենաք ձեր մարդը այդտեղ, եւ լաւ կը լինի, որ հեռագրով պահանջէք եւ նշանակէք մէկին. պէտք է դիմէք պետական Դոմա, Պապաջանեանին կամ Պետրոգրատ, հայկական կոմիտէին — Petrograd, Eglise Arménienne, Comité Arménien — կամ Ազգ. Բ. աւելի լաւ է, երեք տեղն էլ հեռագրուէք: Այս համագումարն անպայման կարեւոր նշանակութիւն կարող է ունենալ:

Ժողովրդի վերադարձի հետ երկիր են գնում եւ գործիչները. Ռուբէն Մուշի շրջանն է արդէն, Ռոստոմը՝ Կարին, Կոմսը կ'անցնի Վասպուրական. զանազան տեղեր են գտնուում եւ ուրիշներ: Արամը Թիֆլիսում հիւանդ պառկած է, սաստիկ ռումաթիզմով է տառապում եւ չի կարողանում քայլել, շատ վատ է խեղճի դրութիւնը, Խարկով գնաց որ աչքը բժշկէ, հիմա էլ աւելի վատ ցաւի բռնուեց: Անդրանիկը հեռագրել էր Բիթլիսից, որ հիւանդ է եւ մի առօրեային հանգաւոր պէտք ունի, թերեւս այս օրերս Թիֆլիս լինի:

Ստացուած մասնաւոր տեղեկութիւններից երեւում է, որ Կարին հետզհետէ զանազան կողմերից հաւաքուում են բաւականաչափ հայեր. ասում են, Քղիում շատ հայեր են ազատուել, Դերսիմի քրտերն, իբր թէ, շատ հայեր են պահել: Առհասարակ, զանազան կողմերում քրտերի մօտ բաւականաչափ հայեր են մնացել: Տրապիզոնի գրաւումով էլ յոյս ունինք բաւական թուով հայեր ազատել: Հիմա մեր մեծ մտահոգութիւններից մէկն էլ այն է, որ փրկենք մնացած բեկորները: Բուքրէշից լուր եկաւ, թէ Ակնունիի եւ միւսների ազատման մասին տարածախոսուած լուրը ճիշդ չէ:

Գնդերում մնացած ամերիկահայ կամաւորները արժանի են ամենայն գովասանքի. իրենց կարգապահութեամբ, անձնագոհութեամբ եւ քաջութեամբ հիացրել են բոլորին: Բիթլիսի մօտ՝ մանաւանդ, նրանք հրաշքներ են գործել, կան բաւական հերոսական մահեր, որոնց մէջ եւ երկու Ոսկերիչեանները, միւսների անունները դեռ չունենմ:

Դէ, առայժմ այսքան:
Կարօտով, համբոյրներով՝
Ս. ՎՐԱՅԵԱՆ

Փաստ. 1404-115

Ա 10.– ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԾԱԾԿԱԳՐԻ ՊԱՏՃԵՆԸ²⁵

[Թիֆլիս, 14 Ապրիլ 1916]

Վերջին երկու շաբաթուան ընթացքում նորէն եւ ամենայուզիչ խնդիրը կամաւորական խմբերի խնդիրն էր: Այլեւս պարզ էր բոլորի համար, որ կառավարութիւնը անդառնալի կերպով որոշել է վերակազմութեան հարցը եւ անմիջապէս ձեռնամուխ է լինելու վերակազմութեան:

Արդէն կեդրոնէն տեղեկացանք, որ գործը սկսելու համար համապատասխան հրամանը արդէն արձակուած է: Բացի այդ, հայագրի մի շարք սպաներ արդէն զանազան մասերից հանուած եւ ուղարկուած են համապատասխան վայրերը՝ ստանձնելու կազմուելիք հայկական բաժանումներում զանազան պաշտօններ: Թիւրքի մի քանի վայրերում հայ գինուորները հրաման են սպասում գնալու այդ բաժանումների պակասը լրացնելու, եթէ մտնել ցանկացող կամաւորների թիւը չբաւարարի: Այս պայմաններում անհրաժեշտ էր մի կտրուկ որոշում ունենալ դէպի վերակազմութեան խնդիրը, որով պարզուած լինէր բռնելիք դիրքը դէպի այդ ձեռնարկը եւ որով ղեկավարուէին ինչպէս ղեկավար մարմինները նոյնպէս էլ խմբապետներն ու իրենց կամաւորները: Հրամայական պահանջն ու ժամանակի սղուծիւնը աչքի առաջ ունենալով չկարողացանք հրաւիրել ռայոնական ժողովը: Հրաւիրուեց Ազգ. բիւրոյի ուժեղացրած կազմը, որը Կարգադրիչ մարմնի հետ միասին, խմբապետների մի քանիսի (Գրոյի, Վարդանի) մասնակցութեամբ, երկար քննութիւնից յետոյ հանուեց մի կտրուկ որոշում — այն է՝ ամէն կերպ պիտի աջակցել նոր կազմուելիք բաժանումներին, հրաւիրել մեր հրամանատարներին իրենց հրամանատար կազմով եւ բոլոր կամաւորներով մտնել նոր բաժանումների շարքերը եւ առանձնապէս այս կէտի վրայ հրաւիրեն խմբապետների ուղարկութիւնը, որոնց օրինակը կարող է մեծ նշանակութիւն ունենալ, եւ առաջարկել նոցա չքաշուել պաշտօնից, նոյնիսկ իբրեւ սոսկ կամաւորներ իրենք համաձայն են մտնել բաժանումները:

Սակայն, ի նկատի ունենալով, որ այնուամենայնիւ խմբերում կան եւ կը լինին որոշ տարրեր, որոնք իրենց անցեալով [եւ] ունեցած հայդուկային շքույլի շնորհիւ չեն կարող հաշտուել նոր պայմաններին եւ որ այդպիսիները թուով բաւականին ստուար են եւ չեն մտնիլ այդ բաժանումները եւ եթէ մտնեն էլ նոցա ներկայութիւնը նոր բաժանումներում կարող է նոյնիսկ պատճառ դառնալ վերջիններին միապաղաղ գոյնի ու կարգի խախտման, որոշուեց դիմում անել գինուորական իշ-

խանութեան եւ վերոյիշեալ պատճառաբանութիւնը դնելով եւ միաժամանակ յայտնելով, որ իբրեւ մարտիկ ուժեր այդ տարրերը շատ օգտակար կարող են լինել, խնդրել իւրաքանչիւր նոր բաժանումնի հետ կազմել նաեւ երկու հարիւր ձիաւորներից խուզարկու խմբեր, որոնք կը կրեն մեր ներկայ խմբերի բնոյթը ու կը կազմուեն այդ տարրերից:

Վերոյիշեալ որոշումները անմիջապէս յայտնուեցին մեր խմբերին, իսկ երկրորդ որոշման հիման վրայ դիմում կատարուեց կառավարութեան: Այդ դիմումը դեռ եւս քննութեան նիւթ է գինուորական իշխանութեան մօտ. դեռ պատասխան չէ ստացուել:

Անհրաժեշտ է յայտնել, որ Ազգ. բիւրոյի տեսակէտին վրայ էր կանգնած նաեւ կուսակցական Բիւրոն:

Գործնական կեանքում խմբերը դեռ մնում են իրենց նախկին դրութեան մէջ: Թէեւ վերակազմութեան համար բոլոր նախապատրաստական աշխատանքը արդէն կատարել է գինուորական իշխանութիւնը, սակայն դեռ ոչ մի խմբի ձեռնամուխ չեն եղել: Խմբերը մնում են ֆորոսում իրենց նախկին վայրերում:

Կառավարութեան վերաբերմունքի մասին անհրաժեշտ է յայտնել հետեւեալը: Պետական Դումայում Միւլիքովի եւ Պապաջանեանի յարձակումները, ինչպէս երեւում է, որոշ ազդեցութիւն գործել են գեն[երալ] Շանուշքեւիչի վրայ: Պէտք է ասել որ պետական Դումայում ճառախօսների տրամադրութեան տակ դրուած էին մեծ քանակութեամբ նիւթ ու փաստեր, որոնցով անվիճելիօրէն եւ պարզ կերպով բնորոշուած էին ներկայ անօրինակ քաղաքականութիւնը դէպի հայերը: Ենթադրում ենք, որ այդ փաստերի հետ ծանօթացել է եւ Կեդր. իշխանութիւնը: Ուստի կարծում ենք, որ Եանուշքեւիչի վրայ ազդել են ոչ միայն Դումայի ճառերը, այլեւ կենտրոնական կառավարութեան ազդեցիկ պետական անձանց ցուցումները: Այսպէս թէ այնպէս, գեներալ Շանուշքեւիչը ցանկացել է արդարանալ հայերի առաջ: Կանչել է իր մօտ մեր հայ գնդապետին. նախ զանգատուել է, որ իրեն դարձրել են քաւութեան նոխազ. ասել է, որ ինքը համարեա իշխանութիւնից գուրկ մի անձնաւորութիւն է, որ հայերին վերաբերեալ որոշումներն ու հրամանները անում են իրանից անկախ եւ ինքն ոչ մի մասնակցութիւն չի ունեցել դոցա մէջ:

25.- Մատիտով արտագրուած, դժուարընթեռնելի փաստաթուղթ):

ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Խնդրել է այդ մասին յայտնել հայկական ղեկավար շրջաններում:

Ինչպէս գիտէք այս վերաբերմունքներին մէջ որ հասցրեցին մեզ որոշ տեղերի գրաւում[ները], էրզրումում կուտակուած տեղացի հայերի գոյքերի ու ապրանքների գրաւումներ եւայլն: Այժմ, ինչպէս թւում է, այդ խնդրում որոշ գիշումներ են արել: Թոյլ են տուել որ կազմուած քոմիսիան տնային գոյքերը վերադարձնէ իրենց տէրերին, իսկ բացակաների գոյքերը պահուեն մինչեւ իրենց տէրերի վերադառնալը: Սակայն այդ վերաբերում է միայն տնային իրերին եւ ապրանքներին, որոնք դեռ համարում են գրաւուած: Էրզրումացիների վերադարձի խնդիրը դեռ մինչեւ այժմ էլ չէ լուծուել դրական մտքով:

Ներկայումս բոլոր հիմնարկութիւններին եւ հաստատութիւններին ամէնից շատ զբաղեցնում է փախըտականների վերադարձի եւ տեղաւորման խնդիրը: Այդ խնդրում աշխատում ենք որքան հնարաւոր է ակտիւ եւ դրական մասնակցութիւն ունենալ: Քաղաքների Միութեան կողմից լիազօրներ են ուղարկուած, Վանի շրջանի համար Կոստան Համբարձումեան, մեր ընկերը, եւ Մուշի համար Ռուբէնը²⁶, էրզրումի համար Սարգիս Օհանջանեանը: Իւրաքանչիւրը նոցանից իր հետ տարել է խմբեր, գործակիցներ, մեր ընկերներից շատերը: Ունին տրամադրելի խոշոր միջոցներ: Նոքա հոգալու են ինչպէս նպաստի գործը, այնպէս էլ վերադարձող ու

տեղում եղած ժողովրդի տեղաւորման, վարչական կարգերի, ապահովման եւ այլ նման խնդիրներ: Սակայն կարեւոր խնդիրներից է վերադարձողներին ժամանակին սերմացու ու անասուն տալը: Կառավարութիւնը շատ խոշոր միջոցներ է բաց թողել: Սկսուել է այդ գործի կազմակերպումը: Յոյս կայ յաջող տանելու: Մուշի շրջանից վերջին տեղեկութիւնները բաւականին մխիթարական են: Միջին թուով այնտեղ հաւաքուածների թիւը հաշուում է երեսուն հազարի. ցորենի եւ անասունի պակասութիւն զգացուել է սկիզբներում. այժմ կարելի է լինում մեծ քանակութեամբ ցորեն եւ անասուն գտնել եւ հասցնել Խնուսի եւ մերձակայ շրջաններին:

Գումարում է Կովկասի գեմատովոյլ²⁷ վերաբերեալ խորհրդակցութիւնը: Բարեբախտաբար հայկական բոլոր շրջաններն էլ կանգնած են մեր տեսակէտի վրայ, որը արտայայտուեց «Հորիզոնում», սակայն այն հայազգի պատգամաւորները, որոնք իբրեւ զանազան հաստատութիւնների ներկայացուցիչներ պիտի ներկայ լինին խորհրդակցութեան, եւ որոնք յաճախ հայութեան շահերի հետ շատ քչով են կապուած, կարող են վտանգաւոր դեր խաղալ: Մենք աշխատում ենք ի հարկէ որ մեր տեսակէտները արտայայտուի խորհրդակցութեան մէջ իբրեւ հայութեան տեսակէտը եւ որի վերաբերմամբ զգալ տրուի որ կոմպրոմիսը²⁸ ոչ մի կերպ չի բաւարարի:

26.- Տէր Մինասեան Ռուբէն:
27.- Քաղաքային ինքնավարութեան մարմին:
28.- Փոխ-գիջումնային համաձայնութիւնը:

**Առ այժմ այսքան. Ձերմ բարեւներով
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻԻՐՕ**

Փաստ. 25-8

Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԾԱԾԿԱԳԻՐ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Ա 11.- Նամակ թիւ 4

Թիֆլիս, Մայիս 10/23, 1916

Սիրելիք,

Երրորդ նամակէն յետոյ, երկար ժամանակ հնարաւորութիւն չեղաւ ձեզ տեղեակ պահել անցողւորս:

Կամաւորական խմբերի վերակազմութեան գործը դեռ ոչ մի քայլ առաջ չէ գնացել: Այս անորոշութիւնը, որ ամիսներ է տեւում, ազդում է խմբերի վրայ ամենավատ կերպով: Կամաւորները մնալով այդ դրութեան մէջ, նրանք որ մնում են խմբերում մատնուած են կատարեալ լքման: Ոգեւորիչ այժմ ոչինչ չէ մնացել մէջնեւորը: Մեծ քանակութեամբ ուզում են գէնքը դնել եւ հեռանալ, չկամենալով մնալ խմբերի մէջ: Սակայն միւս կողմից գինուորական իշխանութիւնը ստիպում է խմբերին անընդհատ գործի մէջ մնալ եւ մասնակցել յարատեւ կռիւներին: Եւ դա հասկանալի է: Ներկայումս Փրոնտի դրութիւնը այնպէս է, որ իշխանութիւնը չի կարող խմբերը կռուի վայրից հեռացնել, իսկ կռուի վայրերում վերակազմել անհնար է: Եթէ ի նկատի ունենանք, որ մի քանի խմբեր արդէն վեցէն ութը ամիս անընդհատ կռուի մէջ են, սաստիկ քայքայուել են եւ հանգիստի պէտք ունեն, հասկանալի կը լինի թէ որքան անտանելի դրութիւն է ստեղծուել: Կամաւորները մեծ դժուարութեամբ են առաջ գնում, առարկելով, որ եթէ պիտի արձակեն վերակազմութեան չենթարկուողներին՝ թող այլեւս խորերը՝ դէպի Մուսուլ եւ Տիարպեքիր չտանեն, որ առանց այն էլ նոքա այն աստիճան տանջուել ու յոգնել են, որ առանց հանգստի շարժուել չեն կարող: Իսկ հրամանատար[ական] կազմը ստիպուած է իշխանութեան հրամանները կատարել եւ առաջ տանել խմբերը: Հետեւանք այն է լինում, որ դասալիքների մեծ հոսանք է ստեղծուում: փախչում են առանց գէնքի եւ գէնքով: Փախչում են անհաստ, եւ խմբերով: Շատ տեղերում փախածները փոքրիկ խմբակներով քրդեր ոչընչացնելով են զբաղուել:

Խմբապետների անվերջ հեռագիրներին խմբերը յետքաշելու, հանգիստ տալու եւ ապա վերակազմելու պահանջին՝ գինուորական իշխանութիւնը պատասխանում է որ դրութիւնը թող չի տալիս Փրոնտից ոչ մի գինուոր վերցնել: Եւ այսպէս շարունակուում է այս անտանելի

դրութիւնը եւ մենք անզոր ենք որեւէ բան անելու:

Պետրոգրադի համագումարին շուրջ մղուած պայքարում եւ վէճերում մենք մեզ ձեռնպահ պահեցինք: Ինչպէս գիտէք, Մոսկուան ու Պետրոգրադը պահանջում էին համագումարը ժամանակին կայացնել: Կովկասեան գաղթականական կազմակերպութիւնները (գիւղատնտեսական, կենտրոնական, Նպաստամատոյց, Եղբայրական օգնութիւն) եւ միւս կեղը-վայրերի նման կազմակերպութիւնները պահանջում էին յետաձգել պատճառաբանելով, որ նախ պատրաստուած չեն եւ երկրորդը՝ գլխաւոր գործիչները զբաղուած են: Մոսկուան եւ Պետրոգրադը պնդեցին ու համագումար կայացրին:

Մեզ հասած տեղեկութիւնների հիման վրայ այդ համագումարը թէեւ պաշտօնապէս պիտի զբաղուէր գաղթականական գործերով, սակայն անպաշտօն կերպով իր փակ նիստերում պիտի քննութեան առնէր եւ կարեւոր քաղաքական խնդիրներ: Ի նկատի ունենալով որ իբրեւ առաջին թոյլատրուած համագումար, նա կարող էր թէեւ անպաշտօն կերպով որոշ ռեզոլուցիաներ հանել եւ փաթաթել ազգին վզին, մենք որոշեցինք որ մեզնից որոշ անձեր պիտի մասնակցեն այդ համագումարին իբրեւ զանազան հաստատութիւնների ներկայացուցիչներ: Երկու նպատակով, նախ որ ամէն կերպ արգելել համագումարին որոշ ձեւով քննութեան առնելու եւ որոշումներ հանելու քաղաքական խնդիրներու շուրջ: Պէտք էր պատճառաբանուէր որ նման խնդիրներ կարող են եւ պէտք է քննութեան առնուին ոչ այդ ձեւով եւ այդ կազմով հրաւիրուած համագումարում: Նման համագումար կարող է հրաւիրել միայն Ազգային բիւրոն, եւ երկրորդ՝ եթէ այնուամենայնիւ համագումարը յամառի եւ զբաղուի այդ խնդիրներով, նոքա պիտի աշխատին կամ անցկացնել մեր տեսակէտները եւ կամ բողոքել եւ հեռանալ, յայտարարելով, որ այդպիսի համագումարի որոշումները մեզ համար երբեք ընդունելի չեն կարող լինել: Այս նպատակներով արդէն մի քանի կարող ընկերներ մեկնեցին համագումարին: Միաժամանակ Ազգ. բիւրոն որոշում կայացրեց, որ ինքը չի մասնակցում պատճառաբանելով, որ ոչ մի հաստատութիւն, նամանաւանդ իր ճիւղերը, չեն կարող համագումար կազմել եւ Բիւրոյին հրաւիրուողի դերին մէջ դնել, քանի որ ինքը Բիւրոն է այն միակ հաստատութիւնը, որը ընտրուած է Ազգի համագումարի կողմից եւ որը կարող է ուրիշներին համագումար հրաւիրել: Այդպի-

ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

սով եթէ համագումարում ընդունելու էլ լինեն ոեւէ որոշում քաղաքական բնոյթ կրող, դա չի կարող համապատասխան վարկ ու կշիռ ունենալ, եւ միաժամանակ Բիւրոն իրեն վերապահած կը լինի այդպիսի համագումար կազմելու իրաւունքը:

*
**

Կովկասում զեմսուօ մտցնելու համար հրաւիրուած խորհրդակցութիւնները վերջացան: Այդ խորհրդակցութիւնների վերաբերեալ մեր բռնած դիրքին մասամբ դուք արդէն ծանօթացած կը լինիք «Հորիզոն»ի յօդաւածներէր, որոնք ունէին մեր կողմից պաշտօնական բնոյթ, այնպէս որ այդ խնդրի առթիւ աւելացնելու ոչինչ չունենք: Պէտք է աւելացնել, նախ որ գործնական

հետեւանքներ այդ խորհրդակցութիւնները դժուար թէ տան: Աւելի հաւանական է, որ նախկին փոխարքայի օրով մշակուած օրինագիծը անցնի, որը մեզ համար համեմատաբար ընդունելի է. երկրորդ, այդ խորհրդակցութիւններից յետոյ լաւ պարզուեց վրաց թրքամէտ բլոկի իսկական պատկերը, ինչպէս ժողովրդական խաւերի առաջ, այնպէս էլ հէնց կառավարութեան, իսկ որ գլխաւորն է՝ ռուսական առաջաւոր դեմոկրատիկ մամուլի եւ հասարակութեան համար առիթ ներկայացաւ իր վերաբերմունքը ցոյց տալու դէպի այդ բլոկը:

Ընկերական ջերմ բարեկներով
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈ

Վաղը նորէն կը գրենք:

Ա 12.- Նամակ քի 5

Մայիս 12/25, 1916

Ընկերներ,

Կը հաստատենք մեր տասը թուակիր չորրորդ նամակը:

Երկրի դրութիւնը շատ տեղերում վատ մտածմունք է պատճառում: Նախ Վանի շրջանի համար անհնար չի համարուում ռուսական նահանջը, թէեւ պէտք է աւելացնել, որ մեր ունեցած տեղեկութիւնների հիման վրայ ռուսները մեծ պատրաստութիւններ ունեն տեսած այդ շրջանն իրենց ձեռքում պահելու համար: Սակայն տաճկական ոյժերը Բիթլիսի ուղղութեամբ շատ են ուժեղացած, իսկ ռուսների ունեցած զօրքը հաւասար չափով չի ուժեղանում, այնպէս որ մի անգամ էլ յետ քաշուելու վտանգը հնարաւոր է համարուում այդ շրջանում, եւ քանի որ գաղթականութիւնը արդէն բաւական խոշոր թւով սկսել է վերադառնալ դէպի Վան, ռուսի նահանջի դէպքում կարող են կրկնուել նոյն դժուարութիւնները գաղթող ժողովրդի համար ինչ որ առաջին անգամները: Իսկ եթէ ի նկատի ունենանք որ այս անգամ թափառելով ճանապարհ չի լինելու (այդ գծում էտապներ չունեն եւ գիծը գտնուում է քրդերի ձեռքը), եւ ժողովուրդը պիտի գաղթի Պարսկաստան, հասկնալի կը լինի թէ ինչպիսի ծանր կացութիւն կարող է ստեղծուել: Նախ որ՝ Պարսկաստանի եւ Տաճկաստանի սահմանագլխում ներկայումս գտնուում է մեծ քանակութեամբ

զինուած քրդութիւն, որը նահանջի դէպքում անխնայ կոտորելու է անպաշտպան հայերին, եւ երկրորդը՝ գաղթականական տարերային հոսանքը Պարսկաստանի վրայով դէպի Կովկաս ուղղելը խիստ դժուար պիտի լինի կազմակերպել. այս մտածումներով է, որ կազմակերպութիւնը նախ աշխատում է, որքան հնարաւոր է, արգելք հանդիսանալ ընտանիքներին Վան վերադառնալու եւ երկրորդ՝ աշխատում է տեղում եղած ժողովրդի համար ինքնապաշտպանութիւն կազմակերպել, որպէսզի նահանջի ճանապարհը կարելի լինի որոշ չափով ապահովել: Այս ուղղութեամբ որոշ միջոցներ ձեռնարկուած են. կարեւոր ընկերներից այնտեղ է Կոստիան, գնալու է Փափագեան եւ մի շարք զինուորական ոյժեր: Անկախ նկատումներով մենք ստիպուած էինք ոյժեր կենտրոնացնել այդ շրջանում, մի քանի այլ պատճառներով եւս: Ինչպէս գիտէք ռամկավարների կազմած միլիցիան ցրուեց. նա արդէն այն աստիճան կազմալուծուած ու վարկաբեկուած էր, որ ռամկավարները իրենք առաջարկեր էին, որ Դաշնակցութիւնը նորէն ձեռք առնէ տեղական գործերը վարելը. սակայն մենք պաշտօնապէս յանձն չառանք, բայց եւ այնպէս կացութիւնը այնքան լուրջ էր, որ ստիպուած էինք անհրաժեշտ ուժեր ուղարկելու Վասպուրական, որ կարողանային ազդել դրութեան վրայ: Բացի այդ, ստեղծուել էր մի մեծ շարիք էլ: Ռուսական կողմից եւ տեղական ոստիկաններից մի շարք մարդիկ իրենց արհեստ էին դարձրել կողոպուտն ու թալանը: Այդ հողի վրայ մի շարք սպանութիւններ տեղի ունեցան թէ քաղաքում եւ թէ շրջաններում: Ոչ ոք իրեն ապահով զգալ չէր կա-

րող: Այդ ուղղութեամբ ստիպուած էինք միջոցներ ձեռք առնել:

*
**

Մուշի շրջանում դրուժինը համեմատաբար տանելի է:

Առանձին խնդիրներ չեն ծագել: Սասունից հարաւ ինկած Հագոյի շրջանում քրդերը պահել են մօտ 10.000 հայեր: Վերջերս այդ շրջանի հայերի կողմից մի նամակով գաղտնի կերպով ուղարկուել է հայերին հովանաւորող քիւրդ բէկերից մէկը մի հայի հետ մեր գնդի հրամանատարի մօտ: Նամակում ասուած է, որ այդ բէկը իր մարդկանցով ութ հարիւր տուն հայեր է պահել իրենց հացով եւ իրենց միջոցներով: Պահել հասցրել են մինչեւ այս օրերը, սակայն հացն էլ սպառուել է: Խնդրում են դրամական օգնութիւն հասցնել եւ որքան կարելի է շուտ յառաջ խաղալ եւ հնարաւորութիւն տալ անցնելու ռուսական կողմը: Մեր խմբապետը լաւ ընդունել է բէկին, դրամ տուել է, խոստացել լաւ վարձատրել ապագայում: Դժբախտաբար ռուսերի յառաջխաղացութիւնը կանգ է առել եւ այդ խեղճերի դրուժինը շատ պիտի վատանայ:

*
**

Էրզրումի շրջանում մեծ դժգոհութիւն է յարուցել գինուորական իշխանութեան բռնած դիրքը դէպի գաղթական տղամարդիկ: Մամախաթունէն եւ այլ վայրերէն վերադառնում են անընդհատ ազատած հայեր, իրենց ընտանիքներով: Զինուորական իշխանութիւնը, ընդհանուր հրամանի հիման վրայ, զատում է այդ գաղթականներից տղամարդկանց 17-45 տարեկան հասակը եւ ստիպողաբար աշխատանքի դնում ճանապարհների եւ այլ գինուորական ձեռնարկներ շինելու համար: Խեղճ փախստականների կանայք եւ երեխաները մնում

են անտէր եւ անօգնական: Դիմելու է ուր որ հարկն է հայերի վերաբերմամբ բացառութիւն անելու: Էրզրում վերադառնալու դժուարութիւնները մեղմացած են, թէեւ պաշտօնապէս մուտքը մնում է արգիլուած, բայց կարելի է: Սարղամիշի կոմանդանտի տրուած հրամանի հիման վրայ բոլոր դիմող անհատներին թոյլ են տալիս գնալ: Եկել[եց]ում ամբարուած ապրանքները առ այժմ մնում են փակ կողպէքի տակ: Այդ գործը յանձնուած է գինուորական մի յանձնաժողովի, որը որոշում է կայացրել փակ պահել ապրանքները եւ սպասել, որ կաթողիկոսի ներկայացուցիչը գնայ եւ ստանայ: Սակայն մինչեւ այժմ չյաջողուեց կաթողիկոսին կողմէ պաշտօնապէս ներկայացուցիչ ուղարկել: Էրզրումի շրջանում առ այժմ կան երկու հազարի մօտ վերադարձած հայեր: Տերսիմում քրդերը պահում են մօտ տասը հազար (10.000) հայ: Նոքա ամբողջ տասն ամիս ոչ միայն կերակրել են, այլեւ գէնքով պաշտպանել են տաճիկ զօրքի դէմ: Սակայն վերջերս վատ լուրեր են ստացուած:

Հնչակեան ճրգ գնդի կամաւորները, որոնք կազմաւորուեցին եւ, խմբերով սկսել են մտնել այդ շրջանի մօտ քրդերի գիւղերը, թալաններ եւ սպանութիւններ կատարել: Ռուսաց զօրքն էլ իր կողմից ետ չմնաց: Այդ բանը սաստիկ վատ ազդեց քրդերի տրամադրութեան վրայ, որոնք բոլորովին այլ տեսակի հատուցում էին սպասում: Եւ ահա վերջին օրերի լուրերի համաձայն շատ վայրերում Տերսիմի քրդերը սկսել են հայերը յանձնել տաճիկ զօրքին, որը, ի դէպ է ասել, շատ ուժեղացել է այդ շրջանում:

Տրապիզոնի շրջանում գինուորական իշխանութեան հրամանով հայերի բոլոր շարժական ու անշարժ կալուածները յանձնուել է կազմակերպուած հայկական կոմիտէին, որ պահէ ու շահագործէ այդ հաստատութիւնները եւ վերադարձնէ տէրերին:

Առ այժմ այսքան: Շուտով նորէն կը գրենք:

Ընկ[երական] ջերմ բարեկներով
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻԻՐՕ

ՄՎ 144-13

Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԱԶԳ. ԲԻՒՐՕ

Բ 1.- ՀԱՅ ԿԱՄԱԽՈՐԱԿԱՆ Բ. ԳՈՒՆԴԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

3 Մարտ 1916, Թիֆլիս

ԱԼԱՏԱՂԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ.— Նահանջէն յետոյ Հայ կամաւորական Բ. գունդը Օգոստոս 1-ին [1915 թ.] մտաւ Իգտիր, ուրկէ տեղափոխուեցաւ Երեւան ու մնաց հոն մէկ ու կէս ամիս հանգստանալու համար:

Այդ միջոցին Ռուսական չորրորդ զօրաբանակէն հրաման ստացաւ անցնիլ Դիատին, ուր կազմուեցաւ պատժախումբ մը երկու հարիւրեակ ռուսաց հեծելազօրքերէ եւ երկու հարիւրեակ Բ. գունդ ձիաւորներէ բաղկացած:

Այդ պատժախումբին նպատակն էր մաքրել Դիատինէն դէպի հարաւ մինչեւ Արճէշ Ալատաղ կոչուած լեռնաշղթային քիւրտերը եւ Դիատինէ դէպի հարաւ արեւելք մինչեւ Թուլթաքի քիւրտերը որոնք յարձակած էին Արճէշէն Թափարէզ Աբաղայի դաշտին մէջ նահանջող ռուս զինուորներուն վրայ եւ իրենց մէջ պահած էին թուրք խուզարկու խումբեր:

Սեպտեմբեր 6-ին առաւօտեան հայկական Բ. գունդը հասաւ Դիատին եւ միանալով ռուսական հեծելազօրաց երկու հարիւրեակին, 7-ին գիշերը անցաւ Չերմուկները: Պատժախումբը բաժնուեցաւ երկու զօրասիւնի որուն իւրաքանչիւրը կազմուած էր մէկ հարիւրեակ հայ կամաւորներէ եւ մէկ հարիւրեակ ռուս զինուորներէ, եւ անցան Թուճի եւ Կոճպաչը — Ալատաղի ամենաբարձր գագաթներէն մէկը — որոնք կ'իշխեն Զիլանաձորի եւ Թուճու արեւմտեան բարձրութիւններու վրայ: Բոլոր շարժումը կատարուեցաւ գիշերը, լուսաբացին սկսան յարձակումի երկու կողմէ, մէկ սիւնը արեւելքէն եւ միւսը արեւմուտքէն:

Այդ ժամանակ Բերկրի Գալայի ռուսական բանակատեղիէն ուղարկուած էր 180 կազաքներ, որոնք բռնած էին Բերկրի ձորին հիւսիս գտնուող բարձունքները:

Որոշեցին նախ պատժել Թուճին ուրտեղ կը գտնուէին Սէիտ բէկի, Համզօ բէկի, Շէյխ Սալա բէկի ցեղերը: Յարձակումի միջոցին ձիաւորներու մէկ մասը իջաւ եւ միւս մասը մնաց ձիերու վրայ: Արեւմտեան զօրասիւնէն յիսնեակ մը բաժնուելով իջաւ հարաւի կողմէն. մինչեւ անոնց կռիւի բռնուիլը, երկու զօրասիւները զգուշութեամբ կը մօտենային վրաններուն. ժամի 11-ին քիւրտերը նկատեցին զիրենք եւ սկսան անկանոն հրաձանաձգութեան եւ մէկ ժամու հափ կանոնաւոր

դիմադրութիւն ցոյց տուին: Բայց երբ տեսան արեւելեան կողմէն եկող զինուորները եւ այն երկու յիսնեակները որոնք ուշացած էին եւ այդ պահուն սկսած էին ձիաւոր յարձակում գործել, քիւրտերը շուարեցան եւ փորձեցին փախչիլ: Այն ժամանակ ձգելով դիրքի կռիւը երկու զօրասիւները իրենց ձիաւորներով սկսան յարձակիլ: Քիւրտերը շատ մեծ կորուստներ ունենալով գէնքերը թափեցին եւ խելակորոյս վիճակի մէջ խումբերով անձնատուր եղան. 300 քիւրտ դիակներ ինկած էին գետին, կիները եւ երախաները զրկուեցան Ատիլճէվազ մերոնք գրաւեցին 10,000 ոչխար, 1000 տաւար, 50 ձի եւ մնացեալ իրեղէնները, իսկ վրանները այրեցին: Մեր կորուստներն էին 2 կամաւոր, մէկ կազակ վիրաւոր եւ 6 ձի սպանուած:

Ժամը 5-ին զօրասիւները անցան դէպի արեւմուտք Կոճպաչ եւ այդ բարձրութիւններուն վրայ գիշերեցին: Կոճպաչէն դէպի հարաւ կը գտնուէին Շէյխ Մարուֆի եւ Մուստաֆա բէկի ցեղերը: Այդ ցեղերը շատ մեծ գագաթներու վրայ ցոյց տուած էին նախորդ օրը կոտորուած Ալի բէկի հետ Բերկրի դաշտին մէջ գաղթող հայերու դէմ:

Կռուի վայրը ձորերով կազմուած եւ մացառուտ ըլլալուն, քիւրտերը չնկատեցին մեր զինուորները: Վերջիններս մօտեցան քիւրտերուն, բայց դժբախտաբար հանդիպեցան նրանց հովիւներուն, որոնք փախան եւ լուր տուին: Տեղի դժուարութեան պատճառաւ մինչեւ ժամը 3-ին հազիւ մերոնք կարողացան դիրքերէն դուրս հանել քիւրտերը: Ժամը 3-էն ետքը սկսան հալածել քիւրտերը բայց մեծ ջարդ չկրցան տալ, սպանուեցան հազիւ 30-40 քիւրտեր. գրաւեցին 5000 ոչխար, 2000 տաւար եւ մէկ քանի ձի:

Շատ յոգնած ըլլալով մերոնք օր մը հանգիստ ըրին նոյն վայրին մէջ եւ հետախուզելու համար զրկեցին զինուորներ Ալատաղի մի քանի կէտերը, որոնցմէ իմացան որ Ալատաղի հիւսիսային եւ հարաւային կողմերէ քիւրտերը հաւաքուած են Զիլանա ձորի կից ձորի մը մէջ. որոշեցին վերջին հարուածը տալ:

Սեպտեմբերի 13-ի լուսաբացին մօտեցան այդ ձորին: Քիւրտերը ունէին փախուստի երկու ճամբայ, մէկը դէպի Զիլանա ձոր եւ միւսը դէպի Բերկրի: Այդ երկրորդ

ճամբան մերիներուն անմիջական գնդակներուն ներքեւ էր, իսկ հարիւրեակ մը գնաց բռնեց Ջիլանա ձորի ճամբան: Քիւրտերը յուսահատելով եւ զգալով իրենց անել կացութիւնը, բանակցութեան մտան: Մերոնք պահանջեցին որ բոլոր այրերը անձնատուր ըլլան, յանձնեն գէնքերը ու տաւարները: Մասնաւորապէս խիստ կերպով պահանջեցին Շէյխ Մարուֆի եղբայրները ու տղաքը, Մուստաֆա բէկի որդիները եւ եղբօր որդիները: Քիւրտերը չհամաձայնեցան եւ կռիւր շարունակեցին. նկատի առնելով որ մերոնք կանանց եւ երեխայոց կը խնայեն, իրենց կիները ու երախաները դիզեցին մեր գնդակներուն հասողութեան ներքեւ, եւ այրերը՝ ձորին հանդիպակաց կողմը քարերու, կենդանիներու, կանանց մէջ, գանազան տեղեր դիրք բռնեցին. կռիւր տեւեց մինչեւ ժամը 5: Նոյն միջոցին սաստիկ կերպով սկսաւ անձրեւ եւ կարկուտ տեղալ. մեր տղաքը թրջուեցան. խիստ մթութեանն օգտուելով քիւրտերը Բերկրիի ճանապարհով փախան դէպի առաջ: Այդ ժամանակ 40 ձիաւորներէ ուս եւ հայ խառն խումբ մը զրկուեցաւ դէպի Ջիլանա ձոր՝ Բերկրիի ուղղութեամբ արեւմտեան ճանապարհը կտրելու համար: Ամբողջ օրուան ընթացքին մերոնք մէկ թեթեւ վիրաւոր ունեցան:

Քանի մը ժամ հանգստանալէ ետքը ամբողջ զինուորական խումբը գնաց Ջիլանաձորի ճամբով դէպի Բերկրիի արեւմտեան կողմը՝ քիւրտերը մղելու համար դէպի Բերկրի ուր ուսաց բանակը կը գտնուէր: Էջէք Պաթանի կողմէ մեզ օգնութեան զրկուած կազաքները երեւացին եւ մէկ կողմէ զարկին փախչող քիւրտերը որոնք չուարած էին. տեղը յարմար էր եւ մեր ձիաւորները շղթայով յարձակելով զանոնք մղեցին դէպի կազաքները:

Երկրորդ օրը մերոնք անցան դէպի հիւսիս եւ համաձայն իրենց պայմանին պահանջեցին որ քիւրտերը յանձնեն գէնքերը: Մերոնք չուզեցին վնաս հասցնել այդ տեղի քիւրտերուն որովհետեւ ասոնք չէին մասնակցած հայերու կոտորածին: Մաս մը յանձնեցին իրենց գէնքերը իսկ միւսները ցիր ու ցան եղան եւ փչացան Ալատաղի կողերուն վրայ:

Այդ տեղէն լուր առին նաեւ որ Ալատաղի հիւսիսային մասի եւ Դիաատինի քիւրտերը, որոնք շատ բարբարոս եղած էին, անցեր են Թուրքի կողմը եւ պատուարուեր են Թանտուրաքի աղբիւրը (եաղլաղ): Բ. գունդը իր հետ գտնուող ուս զինուորներուն հետ շրջապատեց մեծ Թուրքաքը. այդ միջոցին գիւղին դուրսը բռնեցին մէկ քանի ձիեր բարձած հացով եւ ուտեստեղէններով, որով հասկցուեցաւ թէ ապաստանածներ կան մօտերը: Մերոնք պատեցին մեծ Թուրքաքի աչքի ընկնող մարդիկը, մնացածին ձեռք չտուին: Միւս կողմանէ հաց տանող քիւրտերը հարցաքննեցին, որոնք եւ առաջնորդեցին դէպի թշնամին: Քիւրտերը բաժնուած էին երկու մասի, մէկ մասը, որ կարելի եղաւ գտնել,

պատուարուած էր քարաժայռի մը մէջ ձորին բերանը: Մերոնք մօտենալով եւ գանազան բաներ վառելով ծուխ յառաջ բերին, մէկ մասը խեղդուեցաւ եւ միւս մասը անձնատուր եղաւ:

Հիւսէին աղա եւ Ալի աղա քիւրտերը, որոնք անցեալին մէջ ծառայութիւններ մատուցած էին հայերու, իրենց ընտանիքներով ազատուեցան: Անոնք փոխադրուեցան Իգտիր:

Ամբողջ արշաւանքի միջոցին մեր կորուստները եղան 6 հայ եւ 4 ուս վիրաւոր, որոնցմէ մէկը մեռաւ, ինչպէս նաեւ 25 ձի սպանուած: Թշնամուց գրաւեցին 21,000 ոչխար, 4000 տաւար եւ 40 ձի: Քիւրտերը ունեցան 800 սպանուած:

ՀԵՏԱԶՉՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՏՆՈՍԻ ՄԷՋ.— Պատնոսի մէջ Բ. գունդին վրայ պարտք դրուած էր պաշտպանել Մանճանի գորամասի ձախ թեւը եւ հետախուզութիւններ կատարել Նորչէնի, Ատիլճէվազի, Արճէչի եւ Մանազկերտի ուղղութեամբ: Այս նպատակով հայկական ձիաւոր խումբը ուժեղացուցած էին 100 կազակով եւ 200 հետեւակ ուս զինուորներով:

Մինչեւ դեկտեմբեր 15, մէկ ամսուան ընթացքին հետախուզութեան միջոցին բռնեցին 3 թուրք ասքէր եւ սպաննեցին 100 քիւրտ, եւ մանրամասնութիւններ իմացան թրքական բանակի մասին: Հետախուզութիւնները պարզեցին որ թրքական կառավարութիւնը կը կազմակերպէր կոփէն դէպի Ախլաթ մինչեւ Սիփան գտնուած քիւրտերը, որոնց բաժնած էր 1500 հրացան: Հետախուզութիւնը ուժեղացուցին եւ յիսնապետ Յակոբին հետ յիսնեակ մը զրկեցին Սիփանի ուղղութեամբ:

Թուրքերը մէկ վաշտով եւ 300 քիւրտերով մօտեցած էին Պատնոսէն 15 վերստ դէպի արեւմուտք Քիրամարի: Թուրքերը եւ քիւրտերը խիստ կերպով ծածկուեցան եւ առանց ձայն հանելու թոյլ տուին որ յառաջապահ 5 դիտողները անցնին: Յակոբը տեսնելով որ ծուխ կը բարձրանայ, կը հասկնայ որ մարդ կայ այնտեղ եւ ուրիշ 5 հոգինոց խումբ մը կը զրկէ որ բարձրանալով բլրակը դիտեն, եւ ինքը կը մօտենայ 150 քայլ գիւղին. բլուրը բարձրացող 5 ձիաւորները կը նկատեն թուրքերը, կ'ուզեն ետ դառնալ բայց ահա կը սկսի թուրքերու համազարկը. թուրքերը իրենց կրակը կ'ուղղէին յիսնեակի ուղղութեամբ, միեւնոյն ատեն հետապնդելով անցնող 5 ձիաւորները: Յակոբ տեսնելով որ տղաքը կը վտանգուէր՝ 15 ձիաւորներով անմիջապէս կը նետուէր դէպի թշնամին եւ մնացեալ ձիաւորներուն կը հրահանգէ ետ գնալ դէպի որոշեալ բլուր մը եւ սպասել, միեւնոյն ատեն կացութեան մասին տեղեկութիւն կը զրկէ հրամանատարին: Յակոբը այս խիզախ վարմունքով կ'ազատէ 5 ձիաւորները, բայց իրենց ձիերէն երեքը կը զարնուին եւ կամաւորներէն մէկը ոտքէն կը վիրաւորուի: Մինչ ինքը զբաղած էր առանց ձիու մնացած եւ վիրա-

և որ կամաւորը տեղաւորել ընկերներու ձեռքուն քամակներուն վրայ, թրքական ձիաւորները կը մօտենան մերիններուն: «Տղերք ջան կրակեցէք, զարնելու ժամանակ է» կը գոչէ Յակոբ, կը ցատկէ իր ձիուն վրայ, ատրճանակը կ'ուղղէ դէպի թշնամին բայց այդ միջոցին իսկ կը զարնուի ու կը մեռնի: Մեր տղաքը կ'ամրանան Կաշվանի բլուրը եւ կռիւրը կը շարունակեն: Թրքական զօրքը կը մօտենայ եւ կը քշէ մերինները: Ժամը 10-ին Պատնոսի դիտող պահակները հրաձանաձգութեան մասին լուր տուին: Անմիջապէս հերթապահ յիսնեակը Խոսրովի դեկավարութեամբ կ'ուղղուի կռուավայր, անոր ետեւէն կ'երթայ Մարտիրոսի հետեւակ վաշտը: յիսնեակը միանալով նահանջող տղոց կ'ամրանան Կաշվանէն Քուչակ տանող բլրակները եւ կ'աշխտին կասեցնել թրքական եւ քրտական զօրքերու յառաջխաղացութիւնը: Այս խումբերու ճամբայ ելլելէն կէս ժամ ետքը հրամանատարը կը ստանայ Յակոբին նամակը: Անմիջապէս ուղարկուեցաւ օգնական խումբեր կազմակերպել եւ կամաւորներէ բաղկացած: Թուրքերու առաջը առած էին արդէն այդ օրը:

Միւս օրը լուսաբացին մերոնք սկսան յառաջ խաղալ: Կաշվանի մէջ փոքր դիմադրութենէ մը ետքը թշնամին ձիաւորն ալ նահանջեց դէպի Կէլէրաչ: Ժամը 10-ին սկսուեցաւ ընդհանուր յարձակումը Կէլէրաչի վրայ: Գեներալը տեղեկանալով դրութեան, անմիջապէս ղըրկեց 4 գնդացի, երկու թնդանօթ եւ մէկ գումարտակ, որոնք հագիւ հասան ժամը 4-ին երբ արդէն ջարդուած թշնամին կը հալածուէր:

Այս կռուին մէջ մեր կորուստները եղան 3 կազակ եւ երկու հայ սպաննուած, 8 կամաւոր վիրաւորուած եւ 10 ձի սպաննուած: Թշնամին դիրքերը ամուր ըլլալուն շատ կորուստ չտուին, ունեցան 30 սպաննուած եւ 8 գերի:

Բ. գունդը եւ կազակները այս կռիւներուն ստացան 15 Գէորգեան խաչ եւ 20 մետալ Գէորգեան ժապակէնով:

Հրահանգ ստացան պատժել այդ վայրերու քիւրտերը, ինչ որ կատարուեցաւ: Մերոնք քշեցին թշնամին դէպի Սիփան:

Յաջողեցան նաեւ բերել Յակոբի դիակը Ալեքսանդրապոլ, ուր գինուորական մեծ պատիւներով թաղեցին գինքը հայ կամաւորներու եւ ռուս զօրքերու մասնակցութեամբ:

ՁԻԱՒՈՐ ԽՄԲԻ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ԿՈՓԻ ՎՐԱՅ.— Բ. գունդը հրահանգ ստացած էր միանալ Լաբինսքի 4 հարիւրակին Պոսթանկայա գիւղին մէջ (Մանազկերտի շրջան) հետախուզութիւն կատարելու Կոփի մասին եւ ի հարկին յարձակմամբ պարզելու թշնամին ուժը: Դեկտեմբերի 16-ի գիշերը ժամը 2-ին շարժուեցան դէպի Մանազկերտ: 24 աստիճան ցուրտ կը տիրէր: Բ. գունդի ետեւէն կու գային ռուսական երկու գումարտակ հե-

տեւակներ, որոնք պիտի ամրանային Մանազկերտի մէջ եւ հակառակ պարագային պիտի պաշտպանէին մերոնք:

Դեկտեմբերի 11-ի ցորեկը Մանազկերտի մէջ հանգըստացան եւ սկսան հետախուզութեանց թեթեւ կռիւներ քիւրտերու հետ: Գիշերը ժամը 10-ին Բ. գունդը եւ կազակները շարժուեցան դէպի Կոփ՝ յոյս ունենալով որ 10 վերստ ասդին կայան կ'ունենան քիւրտական գիւղերու մէջ: Բայց ձիւնը ծածկած ըլլալով բոլոր ճամբաները ուղղութիւնին կորսնցուցին եւ իրենց ճամբան գտան լոյսը բացուելէն ետքը: Որոշուեցաւ որ մեր հեծելազօրքը 1 հարիւրեակ կազակներու հետ միասին յարձակի Կոփի վրայ: Գործողութիւնը պէտք էր որ տեւէր միայն 15 վայրկեան: Ժամը 10-ին մօտեցան աննկատելի կերպով, Կոփին մառախուղը պատած էր ամէն կողմ: Ժամը 11-ին անցան Կոփ չայը, շղթայ կազմելով եւ ռուս կոչելով յարձակեցան: Թշնամին ահաբեկած պահակները առանց հրացան արձակելու սպաննուեցան: Ասոնք Համիտիէ գունդերուն կը պատկանէին: Կոփի մէջ տեղի ունեցաւ սուրի կռիւ: Համիտիէ գունդերը գլուխնին կորսնցուցած տուներու լուսամուտներէն ասդիէն անդիէն անկանոն հրաձգութիւն կը կատարէին: Անմիջապէս Կոփայ վանքէն, որ կէս ժամ հեռու կը գտնուի Կոփէն, դուրս եկաւ թրքական գումարտակը հեռուէն կրակներով: Մերինները անմիջապէս ետ դարձան եւ միացան իրենց սպասող մնացած ձիաւորներուն: Թուրքերը երկու թնդանօթ բարձրացնելով դիրքերը՝ կրակ բացին բայց աննպատակ մնաց:

Մեր կորուստները եղան այս ձեռնարկին մէջ 1 վիրաւոր, 3 հայր եւ 2 կազակի ձի սպաննուած: Յուրտէն սառեցան 25 հայ եւ 100 կազակ ու ռուս զինուորներ: Հետախուզութիւնը տեւեց 48 ժամ անընդհատ: Մերոնք ստացան 3 խաչ եւ մետալ Գէորգեան:

ՊԱՏՆՈՍԷՆ ԱՐՇԱՒԱՆՔ ԴԵՊԻ ԽՆՈՒՄ – ԳԱԼԷ.— Յունուար 5-ին Բ. գունդը հրահանգ ստացաւ աշալուրը ըլլալ իր շրջանին մէջ եւ գումարտակը պատրաստ պահել:

Յունուար 9-ի գիշերը ռուսական 4րդ զօրաբանակէն հրահանգ ստացուեց որ հետեւեալ օրը անմիջապէս շարժուին դէպի Մանազկերտ, Սուլթանը Շէրվանշէյխ եւ այնտեղ միանան ձիաւոր գումարտակին որը չէ կրցել անցնիլ թշնամին ուժեղ ըլլալուն պատճառաւ:

Բ. գունդին կ'առաջարկուէր անմիջապէս անցնիլ Քարաքէօբըիլ թրքական Ֆրըքային ետեւը, որու դիմաց կը կռուէին արդէն ռուսական հետեւակ զօրքերը: 10-ի առաւօտը Բ. գունդը շարժուեցաւ 40 վերստ ճամբայ կտրելով եւ իրիկունը իջեւանեցաւ Մանազկերտ: Ամսի 11-ին Սուլթանըի վրայով դիմեցին դէպի Շիրվան շէյխ, ճամբան կռուելով քիւրտերու հետ, որոնք ահաբեկած կը փախչէին թողնելով ամէն ինչ: Երեկոյեան

հասան Շիրվանշէյխ եւ միացան ռուսական բանակին, նոյն օրն ալ կտրելով 40 վերստ ճամբայ: Շիրվանշէյխէն բարձրացան Ջարակէտիւկը եւ նկատեցին որ Լիտր-Կոփի կողմերէն մեր ետեւէն կու գային թուրք զօրքերը: Իսկ իրենց դիմացէն արդէն կը լսուէին թնդանօթի գնդացիքի — հրացաններու որոտումները:

Բ. գունդը ամբողջապէս, 1 հարիւրեակ կազակներու հետ շարժուեցան. շատ դժուարին ճամբաներու պատճառաւ հետեւակը յոգնած եւ սպառած էր: Ժամը 3-ին 200 առաջապահներէն լուր ստացանք որ թշնամին յետ կը նահանջէ ռուսական գրոհին ներքեւ, իսկ իրենց ուժը քիչ է նահանջողներուն քամակը անցնելու համար:

Ժամը 5-ին մերոնք եւ կազակները մօտեցան թշնամիին, որը նկատելով մերոնց շարժումը աւելի անհանգստացաւ: Թշնամին մնալով դէմէն եղած ռուսական յարձակումին եւ մերիններուն միջեւ, սկսաւ անկանոն նահանջել, թողլով կէս վաշտ որպէսզի մեր ձիաւորները զբաղեցնեն մինչեւ իրենք հեռանան Քարաքէօբրիւէն: Մեր ձիաւորները մօտենալով անմիջապէս կը յարձակին այդ կէս վաշտին վրայ, իսկ ռուսական հարիւրեակը կը դիմէ դէպի Քարաքէօփրիւ: Մեր ձիաւորները ցրուելով կէս վաշտը անմիջապէս 50 հոգի կը դրկեն դէպի Քարաքէօփրիւ, մինչ մնացեալ 50-ը կը հալածէ նահանջող վաշտը: Ժամը 6-ին մեր հետեւակը մօտեցաւ Քարաքէօբրիւին: Մուկթը տիրած էր արդէն եւ թշնամին անկանոն կերպով կը փախչէր: Դիմացի ռուսական զօրքը, որ կռիւին ամենամեծ ծանրութիւնը տարած էր, տակաւին չէր մտած Քարաքէօփրիւ: Մերինները մտնելով հոն եւ ետեւէն երեւալով՝ անհանգիստ թշնամիին կէս վաշտը հալածեց մեծ մասը սպաննելով իսկ մեր միւս յիսնեակը օգնեց գերիներ վերցնելու: Թշնամին թողած էր Քարաքէօբրիւի մէջ 100 ասկեար սպաննուած: Իսկ գերի թողած էր 300 զինուոր, 9 սպայ: Իսկ ռուսական ճակատին վրայ թողած էր 500 դիակ:

Այդ օրը մեր զինուորները սարերէ եւ ձորերէ անցնելով 30 վերստ ճամբայ ըրած էին:

Գիշերը մերոնք հանգստացան Քարաքէօբրիւ, առաւօտը հրահանգ ստացան հալածել թշնամին եւ ժամանակ չտալ անոր վերստին հաստատուելու Խնուսի մէջ: Ամսի 15-ին առաւօտեան կամաւորները շարժուեցան դէպի Խնուս:

Ամբողջ ճանապարհին մինչեւ Չամուրլու, կռիւներ ունեցան թրքական յետսապահներու հետ, որոնք շատ չնչին դիմադրութիւն մը ցոյց կու տային եւ ահաբեկած էին: Չամուրլուի դէմ մէկ ժամ դիմադրելէ ետքը թշնամին թողուց դիրքերը եւ այլեւս կատարեալ փախուստով կը դիմէր դէպի Խնուս: Մեր աջ եւ ձախ թեւերը լի-

ներով գոռա ձիաւոր երկու կողմէն աքցանի պէս կը սեղմէր ահաբեկած թշնամին, որ կեդրոնէն ալ հետապնդուած ողորմելիօրէն կը ջանար խուսափիլ թողլով ճանապարհին վրայ հիւանդներ, գէնքեր, ձիեր, ջորիներ եւայլն:

Ժամը 5-ին մեր աջ եւ ձախ թեւերը կը մտնեն Խնուս ուրտեղ ուժեղ պայթումներ յառաջ կու գան, որովհետեւ յուսահատած թշնամին կը փճացնէր իր ռազմամթերքը: Չօրքի կեդրոնը Խնուս մտաւ ժամը 6-ին:

Որովհետեւ քաղաքին մէջ պայթումներ տեղի կ'ունենային եւ փախուստի մատնուած թշնամին անկանոն հրացանաձգութիւն կ'ընէր, անհրաժեշտ էր զգուշութեամբ վարուիլ: Մինչեւ լոյս մաքրեցին Խնուսը, բայց սաստիկ յոգնած ըլլալուն պատճառաւ չկրցան հետապնդել թշնամին Խնուսէն անդին:

Չորս օրուայ ընթացքին Բ. գունդը կատարած էր 150 վերստ ճամբայ սոսկալի ցուրտով: Հետեւակը մասնաւոր կերպով գնահատութեան արժանի էր, որովհետեւ հակառակ անյաղթելի դժուարութիւններու ետ չմնաց եւ ձիաւորներու հետ համընթաց եղաւ:

Մեր կորուստները եղան հայերէն 2 սպաննուած եւ 12 վիրաւոր եւ կազակներէն 6 սպաննուած եւ 3 վիրաւոր եւ 20 ձի սպաննուած:

Կազակները աւելի քան եղբայրական վերաբերմունք ցոյց կու տային: Մեր հետեւակները ջուրի հոսանքներէն կ'անցունէին իրենց ձիերով եւ ամէն կարգի սրտակցութիւն ցոյց կու տային մերիններուն:

Թշնամին թողած էր 600 դիակ առանց հաշուելու ձորերու, ճամբաներու եւ ասդին անդին մնացած դիակները:

Երկու օր Խնուսի մէջ ունեցան առատ ուտեստ եւ հանգիստ բնակարան: Յաղթական զօրքերը լաւ հանգրստացան: Խնուսի մէջ է որ երեւան եկան 1000-ի չափ հայեր, որոնք պահուած էին գլխաւորապէս Ջազաքրտերու մէջ:

Քաղաքին թուրք բնակչութիւնը փախած էր: Նկատի առնելով տիրող սոսկալի ցուրտը, մեծ տոկոսով կոտորուած ըլլալու են կլիմայական խստութեանէն:

Հայերէն սառած էին 18 հոգի, ռուսերէն եւս բաւական մեծ թիւ:

Մեր Բ. կամաւորական գունդը իր անվեհեր եւ տուրուր զինուորական գործողութեանց համար ստացաւ ջերմ շնորհակալութիւններ: Գեներալը իր խօսքը սկսաւ «Քաջ հայեր» կոչելով: Գեներալ Պ.—ի կողմէն հայկական գունդին եւ անոր հետ գործող կազաքներու համար նշանակուած է 20 Գէորգեան խաչ եւ 20 մետալ Գէորգեան ժապաւէնով:

ՄՎ 144-16

Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԱԶԳ. ԲԻՒՐՕ

Տեղեկաբեր No 5

Բ 2.– ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ Ա. ԳՈՒՆԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

3 Մարտ 1916, Թիֆլիս

Հոկտեմբեր 6-ին [1915 թ.] հայկական Ա. գունդը մեկնեցաւ Իգտիրէն եւ հասաւ Վան Հոկտ. 14-ին, ուր գայն դիմաւորեցին Իշխանը իր գնդով եւ գեներալ Զ. գեներալը յոյս յայտնեց որ Ա. գունդը առաջիկային եւս պիտի ունենայ փառաւոր գործունէութիւնը ինչ որ անցեալին մէջ, եւ խոստացաւ գնդի պիտոյքներուն ամէն ջանք ի գործ դնել: Բոլոր կամաւորներուն տրամադրութիւնը շատ լաւ էր եւ անհամբեր կը սպասէին առաջ գնալու հրամանին: Գունդը երկու օր Վանի մէջ մնալէ ետքը փոխադրուեցաւ Աջկիա գիւղը:

Տխուր վիճակ կը ներկայացնէր Վանը իր շրջակայքով: Աւերակ դարձած քաղաք եւ գիւղեր, դիակներու անվերջ շարան ամէն տեղ: Բայց այդ աւերակներու ներքեւէն նոր կը սկսի վերածնիլ հայ տարրը: Հայկական գունդերու հետ բաւական թիւով գաղթականներ վերադարձան Վան: Այնուհետեւ թէ Պարսկաստանէն թէ Իգտիրէն վերադարձը ուժեղացաւ: Բնականաբար թէ քաղաքին եւ թէ գիւղերուն մէջ մեծ թշուառութիւն կը տիրէ:

Այդ միջոցին կարգ մը մարդիկ Պիթլիսէն գալով հաղորդեցին թէ 1500-ի չափ — տղամարդիկ եւ կին — հայեր կան Պիթլիսի մէջ, որոնք կառավարութեան արտօնութեամբ կ'ապրին հոն: Բացի ասոնցմէ կան նաեւ 400 արհեստաւորներ:

Նոյեմբեր 7-ին Ա. գունդը մեկնեցաւ դէպի Արճէշ եւ Նոյեմբեր 12-ին արշաւանք մը կատարեց Զիլանցի քիւրտերու վրայ: Քիւրտերը որոնք 3000-ի չափ էին կը գտնուէին Զիլանա ձորահովիտներուն մէջի գիւղերը: Վանի նահանջէն ետքը կարողացեր էին իրենց համար բաւականաչափ պաշար ամբարել: Մեր խուզարկուներու եւ վերջերս գերի ինկած քիւրտերու վկայութեան համեմատ, այդ Զիլանցի քիւրտերուն ձեռքը կը գտնուէին Մոյլ եւ շրջանի հայութեան ոչխարի եւ տաւարի հօտերը: Թուրք կառավարութիւնը կ'օժանդակէ այդ քիւրտերուն տալով գէնք եւ ռազմամթերք: Թէպէտ քիւրտերու եւ թուրք կառավարութեան միջեւ խլրտուումներ կան, սակայն ատոնք կը զսպուին գերմանացի յատուկ պրոպագանդիստներու կողմէ, որոնցմէ մէկը՝ գերմանացի սպայ՝ սպաննուեցաւ մեր գնդակէն:

Արշաւանքը յաջող անցաւ. քիւրտերը 25-30 զոհ տալով փախան, սակայն մեր զինուորները վերադարձան փոքր ինչ լքուած, որովհետեւ դէպքերու բերմամբ հնարաւորութիւն չունեցան կատարելապէս ոչնչացնելու ծուղակը ինկած թշնամին:

Արճէշի մօտ քիւրտերը բաւական կը նեղէին տեղական պահակազօրքը: Գեներալը անթել հեռագրով հաղորդեց իր Ա. գունդին որ թուրքերը առաջ շարժուելով լեցուեր են Մանազկերտ: Բացի ասոնցմէ մերոնք թշնամու ուժի մասին տեղեկութիւն էին առեր հայ կնոջ մը կողմէ: Այդ կինը քիւրտերէն լսելով որ մեր կամաւորական գունդը Արճէշ կը գտնուի, իր 15 տարեկան որդուոյն հետ կը յաջողի գիշերով փախչիլ Բանոն գիւղէն եւ գալ դէպի Արճէշ: Քիւրտերը գիրենք կը տանին իբր գերի մինչեւ Մուշ, բայց չկրնալով ապրուստի միջոցներ գտնալ կը վերադառնան դէպի այս կողմերը: Այդ կինը կը յայտնէ թէ Մուշի եւ Դուրանի մէջ տղամարդ չկայ. տեղեկութիւններ տալով կ'ըսէ թէ Արճէշի մերձակայ գիւղերու մէջ 800 քիւրտեր կան ընտանիքաւոր. ասոնց հետ առնելով Զիլանա ձորի քիւրտերը, 2500 պատրաստ կռուողներ կան որոնք կը սպասեն Քէօր-Հիւսէյինին, որը պիտի գայ Խնուսէն յարձակում գործելու մերոնց վրայ: Կնոջ ըսածին նայելով թուրք կառավարութիւնը կը հաւաքէ քիւրտերու հրացանները պատրուակելով թէ անոնց տեղ կառավարական գէնք պիտի տայ եւ ամէն տեսակ ճնշում կը բանեցնէ քիւրտերու վրայ, թալլելով իրենց ոչխարները եւ պաշարները զօրքին համար:

Մօտալուտ պայթումը յայտնի էր զրկուած քանի մը քիւրտերու լրտեսութիւններէն, որոնք ձեռքաւարուեցան, եւ այն պարագայէն, որ Արճէշի մօտակայ գիւղերէն սկսեալ Զիլանաձորի աջ եւ ձախ թեւերու ուղղութեամբ մինչեւ Արճէշվազ եւ Արնիստի մօտերը քրտական տարածուած շղթաներ բռնած էին, որոնց հետ մեր հետախոյզները ամէն օր բախում կ'ունենային: Բայց հակառակ մեծ դժուարութիւններու, մերոնք նախապէս աջ թեւի կողմէն մինչեւ Արնիստի կամուրջը լուրջ ուշադրութեան առարկայ դարձուցեր էին, տարածուած լեռնաշղթային վրայ, մի քանի վերստ հեռաւորութեամբ պահպանութիւններ կ'ընէին եւ պէտք եղած նա-

խապատրաստութիւնները տեսնուած էին:

Նոյեմբեր 30-ի գիշերը ժամը 4-ին Ա. գունդը միանալով կազակներու երկու հարիւրակներու հետ շարժուեցաւ Ակբաշ-Սէուկ. թնդանօթի մէկ քանի հարուածով գիւղէն դուրս եկան քրդական մէկ հեծեալ եւ հետեակ խուճիկ եւ ուղղուեցան դէպի աջ թեւի վրայ գտնուող Ալի-Կէտէլի լեռները: Թնդանօթի հարուածներու տակէն Ա. եւ Բ. վաշտերը շղթայով յառաջացան դէպի թշնամու դիրքերը, ուր արդէն նոյն թեւի վրայ հաստատուած ըլլալով մեր ձիաւոր խմբի երկու տասնեակները կը կռուէին թշնամու դէմ: Ետեւ թողնուած քիւրտ գիւղերը այրուեցան եւ աւերուեցան: Թշնամի քիւրտերը երթալով բարձրացան դէպի անառիկ դիրքերը եւ մեր զինուորները վրէժխնդրութեան զգացումով լեցուած բարձրացան դէպի զառիվեր հսկայ լեռը թշնամու անդադար կրակներու մէջէն: Քիւրտերը լքեցին իրենց առաջին դիրքերը եւ մերոնք հաստատուեցան այդ դիրքերու մէջ. աջ ու ձախէն թշնամին մնաց մեր տեղատարափ գնդակներու ներքեւ: Ոգեւորուած հայ կամաւորները ուռուանքով ալ աւելի յառաջացան եւ խլեցին թշնամու երկրորդ դիրքերը: Թշնամին վերջին անառիկ դիրքերու մէջ ամրացած եւ իր գլխաւոր ուժերը նոյն դիրքերու մէջ կեդրոնացուցած էր: Թնդանօթը տարբեր ուղղութեամբ Զիլանաձորի խորքերը կը գործէր իսկ թշնամին վերջին յուսահատական ճիգը կ'ընէր խուսափելու: Գնդացիների մի քանի հարուածներով եւ մեր խանդավառ ուռուանքով թշնամին բոլորովին լքեց իր վերջին դիրքերը եւ ենթարկուեցաւ մեր հարուածներուն: Թշնամին անհետացաւ տալով 60-է աւելի սպաննուած:

Մեղօրիս հայ գիւղէն մերոնք ազատեցին մէկ հայ կին, 3 տղայ եւ մէկ փոքր աղջիկ:

Կռիւր տեւեց առաւօտեան ժամը 6-էն մինչեւ ժամը 3-ը: Զոկատի ընդհանուր ուռու հրամանատարը կէսօրուայ ժամը 1-ին ատենները հրամայեց ետ նահանջել: Նոյն միջոցին թշնամին հաւաքեց իր ուժերը եւ երբ մենք դիրքերը թողուցինք, յարձակեցաւ մեր վրայ հրացանաձգութեամբ: Մեր տղոցմէն մէկը վիրաւորուեցաւ եւ տուէնք մէկ սպաննուած: Հրամանատարը ոգեւորիչ խօսքերով դրուատեց կամաւորներու անվեհեր խիզախութիւնը գանոնք կոչելով «Իմ քաջեր»: Խանդավառուած մեր զինուորներու քաջութենէն կ'ըսէր շատերուն պիտի գրեմ ձեր մասին:

Զիլանի ձորի քիւրտերուն հետ եղած այս երկու կռիւներու մէջ թշնամին ունեցաւ 200-ի չափ սպաննուած եւ 15 գիւղ աւերուած: Իսկ մեր կորուստները շատ թեթեւ էին, ընդամէնը չորս սպաննուած եւ ութը վիրաւոր, ասոնց անուններն են

Ա. վաշտէն սպաննուած.— Հմայեակ Ներսիսեանց, Զաքար Իբէկեան, Արամ Նէպոյեան, Սաֆար Էկէեանը (ձիաւորներու տասնապետ):

Ա. վաշտէն վիրաւոր.— Վահան Անանեանց (թեթեւ), Սահակ Թովմաեան, Մուշեղ Մանուչակեան, Խաչատուր Յարութիւնեան, Սուքիաս Տէնոյեան, Միսաք Պետրոսեան, Յարութիւն Բագրատեան, իսկ Գ. վաշտէն թեթեւ վիրաւորուած է Նշան Թղթիկեանը: վիրաւորուած է նաեւ ձիաւորների հրամանատարի օգնական Արշակը:

Գեներալ Զ... Արշակին տուած է խաչ, իսկ միւս վիրաւորներուն՝ մետալներ: Գեներալը հայկական Ա. գրնդին հեռագիր մը ուղղելով խորին շնորհակալութիւն յայտնեց այս վերջին կռիւին մէջ մերիններուն ցոյց տուած քաջութեան համար:

Երկու կռիւներուն ալ հակառակորդ կողմը եղած են քրտերը եւ նախայարձակը եղած են միշտ մեր կամաւորները:

Ըստ հրամանի կը կարծուէր թէ Ա. գունդը ձմեռը պիտի անցընէ Արճէշի մէջ: Ատոր համար դիրքեր կը փորէին թշնամիէն պաշտպանուելու համար: Մինչեւ Ախլաթ, ուրտեղ 200-300 զօրք կը գտնուէր, ուրիշ կառավարական զօրք չկայ: Արճիվազի մէջ կային 200 թրքական զօրք 2 թնդանօթով եւ 2 գնդացիներով: Իսկ անոնց կողքին ալ 1000 համիտիյէներ: Ախլաթի կամուրջին մօտ կային 4-500 կանոնաւոր զօրք: Բռնուած մէկ քանի գերիններուն յայտնութեանց համեմատ թշնամին յառաջանալու ոչ մէկ միտում ցոյց չէր տար:

Ա. գունդի դրութիւնը Արճէշի մէջ շատ գոհացուցիչ չէր: Թէեւ բնակութեան համար շէնքեր կային, սակայն ձմեռը այդ ամայացած տեղը անցընելու համար կը պակասէր անհրաժեշտ պաշարեղէն: Թէեւ տակաւին ձմրան սկիզբն էր, բայց Արճէշի մէջ արդէն իսկ ձիւն ձմեռ էր: Զիւնները դաշտերէն ու կանանչներէն գրկուած, իսկ ձեռք բերուած գարին բոլորովին անբաւական էր ձիւնը համար քանի որ խոտ ու դարման կը պակասէր բոլորովին:

Բայց բարեբախտաբար Դեկտեմբեր 29-ին վերջապէս սպասողական դրութենէն ելնելով Ա. գունդը կռիւ ունեցաւ, որուն նպատակն էր մաքրել Արճէշի թիկունքը, դէպի հիւսիս-արեւելք գտնուած քրտական գիւղերը: Սոսիտուն, Ղրզըլ-Քիլիսէ Քիւրտեղ եւայլն: Քիւրտերը չդիմանալով կռիւին նահանջեցին դէպի Աբաղայի դաշտը: Այդ շրջանին մէջ աւերուեց վեց քրտական գիւղ:

Մեր կորուստները եղան երկու վիրաւոր որուն մէկը մեռաւ Վանի հիւանդանոցին մէջ, իսկ կօզակներէն սպաննուած է մէկ հոգի:

Յաջորդ կռիւր որ սկսաւ Դեկտեմբեր 29-ին եւ տեւեց մինչեւ Դեկտեմբեր 31 եղաւ աւելի յաջող շնորհիւ մերիններուն անվեհեր քաջութեան: Կռիւին երկրորդ օրը Պատնոսէն օգնութեան հասան Դրոյի խումբը, կօզակները, հրացանաձիգներ ու լեռնային թնդանօթներ:

Երկու զօրասիւնները, մէկը Արճէշէն շարժուելով եւ միւսը Պատնոսէն, իրարու հանդիպեցին Աղի-Գեատու-

ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

121

կի մօտ: Այս անգամ ալ քիւրտերու մէկ մասը փախաւ դէպի Բերկրի-Աբաղա, իսկ մեծ մասը նահանջեց դէպի Ալճաւազ, վաղօրօք իր հետ տանելով ամբողջ ունեցածը: Այս շրջանում ալ աւերուած են 11 քրդական գիւղ: Այդ վերջին կռիւին մէջ մենք ունեցանք միայն 3 վիրաւոր: Այսպիսով 5 օրուայ կռիւներու ընթացքին մեր զոհերը եղած են ընդամենը 5 վիրաւոր: Բացի ասոնցմէ մենք կորցրինք 12 ձի:

Ընդհանուր գինուորական դրուժիւնը Դեկտեմբերի վերջին հետեւեալն էր.— Ատրպատականի զօրամասի գլխաւոր ուժերը կը գտնուէին Պարսկաստան, իսկ Վանի շրջանի զօրաբանակը պաշտպանողական դիրք բռնած էր թշնամու հանդէպ որ այդ միջոցին ալ մի շարժում չէր ընել մեր ճակատի դէմ: Մեր ամբողջ թիկունքը բռնուած էր քրտական աշիրէթներով: Աբաղայի դաշտի եւ Բերկրիի 11 գիւղերու մէջ տեղաւորուած են հասպատանցի քիւրտերը 250 տուն: Ասոնց աղան է Ալի Խանը որ ամառուայ նահանջի ժամանակ յարձակեցաւ

եւ կոտորեց Բերկրիի ձորին մէջ հայ գաղթականները: Իսկ Արճէշի շրջանի վեց գիւղերուն մէջ կ'ապրին 200-250 տուն քիւրտեր որոնց աղաներն Հիւսէին բէկ, Նազիֆ բէկ, Օսման բէկ եւ Սատուն բէկ: Այս բէկերը անձնատուր եղած են անցեալ տարի Անդրանիկին, բայց յետոյ անհասկանալի պատճառներով ազատուած են:

Ասոնցմէ քիչ մը աւելի հարաւ կ'ապրին Խօջաբի քիւրտերը, որոնց աղան է Բահրի բէկ: Այս բոլորի հետ կան նաեւ Զիլանի ձորի քիւրտերը (անմիջապէս Արճէշի դիմաց, Պատնոսի եւ Արճէշի մէջտեղ) որոնց միջոցաւ Արճակի, Աբաղայի եւ Խօջաբի վերոյիշեալ քիւրտերը մշտական յարաբերութեան մէջ են թրքական բանակին հետ: Ճիշդ այդ Արճակի գիւղերուն մէջ կը գտնուին բազմաթիւ հայ գերիներ, կին եւ երախայ: Դեկտեմբեր 30-ին այդ գիւղերէն Վան հասան ազատուած երկու երախայ եւ մի կին:

Առաջին գնդի ունեցած յետագայ կռիւների մասին տեղեկութիւն կը տրուի հետեւեալ զեկուցագրով:

ՄՎ 144-18

Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԱԶԳ. ԲԻՒՐՕ

Տեղեկաբեր No 6

Բ 3.- ՀԱՅ ԿԱՄԱԽՈՐԱԿԱՆ Է. ԳՈՒՆԴԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

20 Մարտ 1916, Թիֆլիս

Է. գունդը կազմակերպուել սկսեց Մալխի կէսերին իբրեւ պահեստի գունդ: Յուլիսի 11-ին հրաման ստացւեցաւ Զ.-է. միացեալ խումբերը վերածել գործող գունդի: Գունդը ամբողջովին պատրաստ եղաւ Սեպտեմբերին, որովհետեւ Վանի նահանջը բաւական աննպաստ կերպով ազդեց գնդի կազմութեան վրայ: Ակնկալուած գէնքերը ժամանակին չստանալով՝ հարկադրուած եղան մաս մաս գէնքեր ստանալ միւս հայկական գնդերէն եւ միւս կողմանէ Ը. գունդի կամաւորներու մէկ մասը բաժնելով միւս հայկական գունդերու մէջ մնացեալով միայն կազմուեցաւ Է. գունդը:

Սեպտեմբեր 20-ին Է. գունդը Երեւանէն շարժուեցաւ, ունէր սեփական հեռախօս, նուագախումբ եւ ներքին լաւ կազմակերպութիւն ժամանակակից զինուորական պահանջներուն համաձայն: Գունդն անցաւ Աբաղայի վրայով դէպի Վան, ուրտեղ միացաւ Գեներալ Ն.ի զօրամասին եւ շարժուեց դէպի Վանայ լիճի հարաւային կողմը: Առաջին ընդհարումը պատահեցաւ Արտասի մօտերը: Է. գունդը աչքի ընկաւ մասնաւորապէս զինուորական կարգ ու կանոնով, եւ ռուս զօրավարներու գնահատման արժանացաւ իր շղթայ կազմելով կռուելու եղանակը:

Գունդի հետեւակը շղթայ կազմած անվեհեր կերպով յառաջացաւ ձիւնոտ սարալանջով եւ ստիպեց որ թշամին նահանջէ: Այնուհետեւ երբ սկսեց ռուսաց յառաջխաղացութիւնը դէպի Պիթլիս, Ը. գունդը հրաման ստացաւ անցնիլ Շատախի եւ Մոկսի կողմէն թշնամուն ձախ թեւը: Կռիւր սկսաւ Նոյեմբեր 14-ին եւ տեւեց մինչեւ 16-ի երեկոն. ամբողջ ձախ թեւի դեկավարութիւնը յանձնուած էր Է. գնդին: Զինուորական իշխանութիւնը Է. գնդի տրամադրութեան ներքեւ դրած էր երկու թնդանօթ: Հայկական գունդը կը կռուէր պատերազմական կատարեալ տաքտիքայով: Թուրքերը ունէին 4-5 թապուր կանոնաւոր զօրք, 4 թնդանօթ եւ 6-7 գնդացիք: Կռիւր երրորդ օրը, երբ որ թշնամին արդէն հալածուած էր սոսկալի կորուստ տալով՝ մերոնք վերադարձան՝ իրենց հետ բերելով թրքական դրօշակներ:

ռուսները մեծ խանդավառութեամբ դիմաւորեցին մեր զինուորները եւ ջերմապէս շնորհաւորեցին:

Մերոնց կորուստները եղան մի միայն մէկ սպանուած եւ մէկ վիրաւոր:

Կռիւն անմիջապէս յետոյ Ը. գունդը հրաման ստացաւ անցնիլ Պարսկաստան մասնակցելու համար դէպի Ուրմիա կազմակերպելիք արշաւանքին, եւ Նոյեմբեր 25-ին մեկնեցաւ Վանէն: Անցաւ Խոյի, Սալմաստի, Ուրմիոյ վրայով առանց հանգստանալու մինչեւ Ուրմիոյ լիճի հարաւային մասերը, եւ գտնուելով Ուրմիայէն մօտ 70 վերստ հեռաւորութեան վրայ, սկսեց խուզարկութիւն կատարել դէպի Տաճկական սահմանները: Դ. գունդը ուրիշ ճակատէ մը կը գնար նոյն ուղղութեամբ: Երկու հայկական գնդերն ալ միշտ կազմեր են Ռուսական զօրամասի առաջապահ խմբերը եւ իրենց վրայ առեր էին թշնամիի դէմ առաջին յարձակումները: Երկու գնդերն ալ մասնաւոր ուշադրութիւն են դարձուցեր, որ պարսիկ ժողովրդի դժգոհութիւնը չյարուցանեն հայերու դէմ, եւ այս վերաբերմունքը լաւ արդիւնք ունեցած է, որովհետեւ ամբողջ արշաւանքի ընթացքին պարսիկները փոխադարձ լաւ վերաբերմունք ցոյց տուած են դէպի մեր գունդերը:

Ուրեմն Է. գունդը սկսաւ խուզարկութիւններ կատարել թրքական սահմանագլխին վրայ, երբ ռուսաց զօրքը ժամանակաւորապէս թողեր էր Սօււճ-Պոլլաղը ու յետ քաշուել էր դէպի Միանտապ: Այդ խուզարկութեան շնորհիւ պարզուեց թուրքաց զօրքերու յառաջխաղացութիւնը դէպի Ուրմիոյ լիճի հարաւային մասերը: Այդ խուզարկութեանց համար գունդը ստացաւ բազմաթիւ շնորհակալութիւններ ռուսաց զինուորական իշխանութեանց կողմէ:

Մօտաւորապէս հասկնալու համար թշնամիին ուժը, հրաման ստացուեցաւ ուղարկել վաշտ մը եւ 50 ձիաւոր դէպի թշնամիին դիրքերը: Այդ ժամանակ թրքական զօրքերը կեղերոնացեր էին Ուշնու քաղաքին եւ Սօււճ-Պոլլաղի մէջ ու մէկ քանի թրքական ջոկատներ 2 թնդանօթով կու գային դէպի Սուլտուզ: Բացի այդ ու-

ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

ժերէն Սուլտուզ կը գտնուէին յայտնի քրտական ցեղապետները՝ Կարէին եւ Պայիզ աղաները իրենց մօտ 3000 ձիաւորներով:

Վաշտը ունեցաւ տաք ընդհարում այդ ուժերի հետ Դեկտեմբեր 25-ին Դէրպէնտ գիւղի շրջակայքում, ոչ հեռու Ուշնիէն: Չնայած թուական անհամեմատ առաւելութեան՝ վաշտը երկու օրուայ կռիւի ընթացքին պահեց իր դիրքը տալով զոհ 28 սպաննուած եւ 4 վիրաւոր, իսկ այդ կռիւին մէջ քիւրտերն ունեցան 65 սպաննուած եւ 12 վիրաւոր: Քիւրտերը շատ լաւ զինուած էին, ունէին հրաշարի ձիեր եւ կը կռուէին կատաղաբար: Այդ կռիւը որպէս խուզարկութիւն ահագին հեղինակութիւն ունեցաւ ռուս զօրքերու ապագայ յառաջխաղացութեան համար եւ, բացի զինուորական մարմիններու շնորհաւորութիւններէն, հրատարակուեցաւ այդ մասին պաշտօնական գեկոյցներու մէջ:

Ռուսական յառաջխաղացութիւնը Ուրմիոյ լիճի հարաւային կողմերը թրքական բանակներու դէմ սկսեց Յունուար 6-ին: Է. գունդը կը կազմէր այդ յառաջխաղացութեան ձախ թեւը, եւ նրա տրամադրութեան տակ դրուած էր երկու ռուսական դաշտային թնդանօթ: Այդ յառաջխաղացութեան ընթացքին վաղուայ անտաք [?] գիւղերու մօտ հայկական խումբը ունեցաւ իր առաջին ընդհարումները թուրքաց զօրքերու յառաջապահ մասերու հետ, որոնք կը կազմէին քիւրտերը: Ասոնք մեծ

մասամբ բնաջինջ ըլլալով, մնացեալները փախան դէպի թուրքաց գլխաւոր զօրամասերը:

Երբ Յունուար 11-ին ռուսական մեծ զօրամասերը յարձակում գործեցին Ուշնի, կարեւոր քաղաքը գրաւելու համար, Է. գունդը յիշած ուժերով հրաման ստացաւ անցնիլ Սուլտուզ եւ գրաւել թշնամու աջ թեւի կարեւոր կեդրոնը, այն է Սուլտուզի կեդրոնական Նակատա գիւղը: Առաւօտեան թնդանօթաձուլութենէն ետքը հետեակ վաշտերը յառաջխաղացին եւ 5 ժամուայ կռիւէ ետքը գրաւեցին այդ կարեւոր գիւղը, որտեղ կեդրոնացած քրտական 2000-է աւելի հետեակ եւ ձիաւոր ուժերը մեծ կորուստներով փախան դէպի հարաւ, Լահիճանի վրայով անցան թուրքիոյ սահմանը:

Այդ վերջին կռիւներու ընթացքին գունդը ունեցաւ մէկ սպաննուած եւ մէկ վիրաւոր:

Երբ թրքական զօրամասերը քիւրտերու հետ միասին ամբողջովին յետ մղուեցան Պարսկաստանէն եւ անցան թուրքիա, Ռուսական զօրքերու յառաջխաղացութիւնը ժամանակաւորապէս կանգ առաւ, եւ Է. գունդը կրկին հրաման ստացաւ վերադառնալ Վան, մասնակցելու դէպի Պիթլիս կատարուելիք կռիւներին, սակայն ճանապարհին ստացած նոր կարգադրութեան համաձայն կանգ առաւ Սալմաստ:

Սրանով կը սահմանափակուի Է. գնդին մինչեւ Յունուարի վերջը ունեցած գործունէութիւնը:

ՄՎ 6-19

Բ 4.- Ս. ՎՐԱՑԵԱՆԵՆ Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՆՏ. ԿՈՄ.ԻՆ

1916, Մայիս 20, Նոր-Նախիջուան

Սիրելիք,

Պետրոգրադից ստիպուած եղայ շուտ հեռանալ եւ չկարողացայ անմիջապէս ձեզ տեղեկութիւններ հաղորդել համագումարի մասին, որին մասնակցեցի իբրեւ ձեր ներկայացուցիչը: Շտապում եմ այստեղից լրացնել թերին:

Համագումարը տեղի ունեցաւ Մայիս 10-13, Պետրոգրատի մէջ: Նախաձեռնողը Կազմակերպիչ Մարմինն էր՝ Մոսկուայի եւ Պետրոգրատի հայ կոմիտէներից բաղկացած: Համագումարին մասնակցեցին 142 պատգամաւորներ՝ Ռուսաստանի գրեթէ բոլոր հայաբնակ վայրերից: Ներկայացուցիչ չէին ուղարկել «Եղբայրական Օգնութեան» կեդրոնական մարմինը, Կովկ. հայոց Բարեգործական ընկերութիւնը, Նպաստամատոյցը, գիւղատնտեսական եւ հայ գրողների ընկերութիւնները: Սրանք պահանջում էին՝ որ համագումարը յետաձգուի, որ իրենք հնարաւորութիւն ունենան պատրաստուելու, սակայն չյետաձգուեց: Կարծում եմ, որ համագումարի որոշումները նրանք էլ ստիպուած կը լինեն ընդունել: Հայ մամուլի մէջ էլ թեր ու դէմ կարծիքներ յայտնուեցին, բայց վերջ ի վերջոյ համագումարն իր արժէքը պէտք է որ ունենայ: Արտասահմանի գաղութներից միայն ես էի, ուրիշ ներկայացուցիչներ չկային:

Համագումարի օրակարգը թերթերից գիտէք արդէն. բոլոր հարցերն էլ պտըտում էին գաղթականական խնդրի շուրջ, եւ համագումարն ամբողջապէս դրանցով էլ զբաղուեց: Նա տուեց մի շարք որոշումներ, որոնց մասին կը գրեմ շուտով մանրամասնօրէն առանձին թղթակցութեամբ: Համագումարի որոշումները մօտ 80 միլիոն ռուբլու բիւտձէ կը պահանջեն, որ պէտք է հոգայ հայ հասարակութիւնն ու կառավարութիւնը: Համագումարը որոշեց հիմնել Կովկասում գաղթականական հարցով զբաղուող կենտրոնական մի մարմին 60 հոգուց բաղկացած, որին պիտի մասնակցեն աչքի ընկնող հայ կազմակերպութիւնների ու վայրերի ներկայացուցիչները. ներկայացուցիչներ պիտի հրաւիրուեն եւ արտասահմանի հայ գաղութներից, հետեւաբար եւ ձեզանից: Այդ 60 հոգին լինելու է Խորհուրդը, որը իր միջից ընտրելու է 7 հոգինոց գործադիր մարմին, որը Պետրոգրատում էլ ունենալու է իր հատուածը: Այդ

կենտրոնական մարմինը միացնելու է իր մէջ գաղթական հարցով զբաղուող բոլոր հայ կազմակերպութիւնները եւ աշխատանքի մէջ մտցնելու է կանոն եւ համաչափութիւն: Իբրեւ կորիզ կենտրոնական մարմնի, համագումարում ընտրուեցին հետեւեալ անձինք — Պետրոգրատից՝ Ասրիբէզեան, Մոսկուայից՝ Մամիկոնեան, Նոր-Նախիջուանից՝ Չալխուչեան, Բագուից՝ Տէր-Միքայէլեան, Կովկասի Բարեգործական ընկերութիւնից՝ Ս. Յարութիւնեան, Նպաստամատոյցից՝ Հ. Առաքելեան, Գիւղատնտեսականից՝ Ա. Սահակեան, Էջմիածնի Եղբայրական Օգնութիւնից՝ Գարեգին վարդապետ եւ Տաճկահայերից՝ նկարիչ Փ. Թերլէմէզեան:

Այս 9 հոգին՝ Դումայի անդամներ Պապաջանեանի եւ Աճէմեանի հետ պիտի կազմեն կենտրոնական մարմնի կորիզը, իսկ մնացեալ մօտ 50 հոգին ընտրուելու են գանազան քաղաքների եւ հաստատութիւնների կողմից, որոնց ցուցակը կազմեց համագումարը: Այս 9 հոգին անմիջապէս անցնելու են գործի եւ աշխատելու են իրականացնել միութիւնը: Առհասարակ համագումարի մէջ համերաշխական ոգին բարձր էր, մեր կողմից ամէնից աւելի եղան համերաշխական կոչեր, այդ իմաստով խօսեցան թէ՛ Ռոստոմը, թէ՛ Արամը, թէ՛ Կոմսը²⁹, թէ՛ Ադբալեանը, թէ՛ ես եւ թէ՛ ուրիշներ: Համագումարին կար եւ մի հնչակեան՝ Ղազարեան, որ նոյնպէս արտայայտուեց համերաշխական ոգով:

Համագումարի պարապմունքների մասին մօտ մի շաբաթ երկարօրէն խօսեց եւ ռուս մայրաքաղաքի եւ գաւառի մամուլը, որ ջերմ տողեր նուիրեց: Այսպիսով համագումարը մի տեսակ հայկական ցոյցի բնաւորութիւն ստացաւ մայրաքաղաքում:

Համագումարից յետոյ տեղի ունեցաւ բոլոր պատգամաւորների խնջոյք եւ ապա մի շարք մասնաւոր խորհրդակցութիւններ օրուայ հրատապ հարցերի մասին: Պարապմունքներից յետոյ պատգամաւորներն այցելեցին պետական Դուման: Պատգամաւորներն ցրուեցին այն յոյսով, որ այս հաւաքոյթն ունենալու է իր բարոյական ազդեցութիւնը:

Համագումարի բացման օրը հեռագիրներ տրուեցին Յարին, Կաթողիկոսին, Երրեակ Համաձայնութեան պետութիւնների արտաքին գործոց նախարարներին եւ Ռուսաստանի մի շարք հաստատութեանց ներկայացուցիչներին: Կաթողիկոսը հեռագրով օրհնեց համագումարի պարապմունքները: Ստացուեցին եւ ուրիշներից՝ Սազոնովից, փոխարքայից եւայլն հեռագիրներ:

29.- Արամ Մանուկեան եւ Վահան Փափագեան:

Բացման օրը պատգամաւորները նկարուել են: Ես, Արամը, Ռոստոմը եւ ուրիշները, երկրորդ օրը հասանք եւ մէջը չմտանք: Պատկերից մի օրինակ կ'ուղարկեմ: Շուտով կը ստանաք եւ մանրամասն թղթակցութիւններ համագումարի աշխատանքների, բանաձեւերի, նրա արժէքի եւ յարակից պարագաների մասին: Ամերիկայի մեր մամուլը, անշուշտ, արժանաւոր վերաբերում ցոյց կը տայ դէպի համագումարը, որը, ի նկատի ունեցէք, բացառապէս գաղթականական հարցերի համար գումարուած էր եւ քաղաքական հանգամանք չուներ: Եւ մենք այս պարագան յատկապէս շեշտում էինք այն յոյսով, որ հնարաւոր կը լինի քաղաքական հարցերի համար էլ աւելի ձեռնհաս մի համագումար կազմակերպել:

Օգտուելով ճամբորդութիւնից դէպի Պետրոգրատ, մի քանի օրով էլ հանդիպեցի հայրենիք³⁰: Ձեմ իմանում, ի՞նչ նորութիւններ են պատահում Կովկասում: Գիտեմ միայն, որ մեր կամաւորական գնդերը բոլորն էլ գործի վրայ են եւ մասնակցում են վերջին կռիւներին. Քեռիի եւ Իշխանի³¹ գնդերը Ուրմիայից դէպի հարաւ եւ Ռէվանտուզում այժմ մղուող ճակատամարտներին են մասնակցում շատ յաջող կերպով: Վերակազմութեան գործը դեռ մնում է, միայն ճրգ — Ձանփուլադեա-

նի — գունդը³² արդէն յայտարարուած է լուծուած եւ սկսած է վերակազմուել իբրեւ հրացանակիր գումարտակ ուսական բանակի գնդապետի հրամանատարութեան տակ: Միւսների մասին ճշգրիտ մանրամասնութիւններ կը գրեմ Թիֆլիսից:

Պետրոգրատում եղած ժամանակ խմբագրեցի հայ կամաւորների այբովի երկրորդ հրատարակութիւնը, որ արդէն սկսուած է տպագրուել, առաջինը բոլորովին սպառուել է: Ծախուել է մօտ 2000 օրինակ եւ տուել է շատ արդիւնք՝ 35000 ռուբլի: Երկրորդ հրատարակութիւնը լինելու է շատ աւելի ճոխ եւ տպուելու է 5000 օրինակ: Ընդառաջ երթալով համերաշխական ոգիին՝ երկրորդ հրատարակութեան մէջ մտցրի եւ ճրգ գնդից մի շարք պատկերներ:

Պետրոգրատից ուղարկեցի ձեզ մի հաստ տետրակ Շատախի կռիւների մասին: Թիֆլիսից ձեզ կ'ուղարկեմ մի յառաջաբան եւ լուսանկարներ: Խնդրում եմ առանց թերթում տպելու հրատարակեցէք առանձին գրքով, լաւ թղթի վրայ, ճոխ հրատարակութեամբ, պատկերներով՝ լաւ մի գործ: Կարծում եմ շատ կը տարածուի:

Երկրից առանձին նորութիւններ չկան՝ բացի թերթերում հրատարակուածներից: Թիֆլիսից կը հաղորդեմ վերջին նորութիւնների մասին: Ձեր ուղարկած տետրակները ստացել ենք:

30.- Իմա՝ ծննդավայրը՝ Նոր Նախիջեւանն է:
 31.- Քեռի — Գաւաֆեան Արշակ. Իշխան՝ Արդուքեան Յովսէփ:
 32.- Հնչակեաններու գունդ:

Կարօտով բարեկներս բոլորիդ՝
 Ս. ՎՐԱՅԵԱՆ

ԳԼՈՒԽ III**ԿՈՎԿԱՍԸ՝ 1917–1918 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ**

Հատորի ընդհանուր Յառաջաբանին մեջ խօսուեցաւ արդէն 1917 թ. ռուսական առաջին յեղափոխութեան առթիւ Կովկասի ազգային եւ հասարակական կեանքի աշխուժացման, ինքնակառավարման տեղական մարմիններու գոյանման, ազգային հիմունքով ռազմական միաւորներու առաջացման, ինչպէս նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան ազատ գործունէութեան համար ստեղծուած նպաստաւոր պայմաններուն մասին:

Անդրադառնալով վերջին խնդրին, ծանօթ ենք որ 1917-18 տարիներուն, թէ՛ Կովկասի եւ թէ՛ Արեւմտահայաստանի զանազան շրջաններուն մէջ գումարուած են դաշնակցական մարմիններու եւ յարակից կազմակերպութեանց (գիւղացիական, բանուորական, արհեստակցական, ուսանողական եւայլն) բազմաթիւ ժողովներ, ռայոնական եւ շրջանային, որոնց ընթացքին հարցեր են քննուած, որոշումներ կայացուած: Այս բոլորէն, ատենագրութեան, տեղեկագրի կամ հրահանգի ձեւին տակ, ոչ մէկ գրութիւն հասած է մեզի: Հաւանաբար, ընդհանուր պատերազմին եւ յաջորդող տարիներուն Կովկասի մէջ տիրող խառնաշփոթ կացութիւնը, այլեւ թրջատարական սպասարկութեանց անկանոնութիւնը պատճառ եղած են անոնց կորուստին, իսկ Պոսթընի Հ.Յ.Դ. կեդր. արխիւին մէջ պահպանուած՝ յարաբերաբար սակաւաթիւ՝ փաստաթուղթերը մեծ մասամբ արտագրութիւն են յաճախ թերթերու լուսանցքներուն վրայ գաղտնի թանաքով գրուած նամակներու:

Արխիւային փաստաթուղթերու այս բացը լրացնելու համար դիմած ենք օրւան կովկասեան մամուլին եւ, ինչ կը վերաբերի գուտ կուսակցական համագումարներուն, օգտուած ենք անոր հաղորդումներէն:

Օգտագործուած գլխաւոր աղբիւրներն են «Հորիզոն» եւ «Աշխատանք» դաշնակցական պաշտօնաթերթերը, ուր լոյս տեսած թղթակցութիւնները մանրամասնօրէն կը տեղեկագրեն կայացած ժողովներու օրակարգին, մասնակցողներուն, արծարծուած հարցերուն եւ կայացուած որոշումներուն մասին:

Փաստ. 26-1

Ա 1.– Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԹԻՒ 1 ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ
ՈՌՄԻՈՅ 1917 Թ. ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ընկերներ,

Կատարուեց անսպասելին եւ աներեւակայելին: Ռուս բռնապետութիւնը այլեւս չկայ: Կազմակերպուած է ժամանակակաւոր կառավարութիւն՝ ժողովրդական հիմքերով, որ արդէն իսկ ձեռք է գարկել նոր իրաւակարգի հաստատման եւ խաղաղութեան ապահովութեան գործին:

Այստեղ պէտք չենք զգուժ կատարուող դէպքերի պատկերը տալ, քանի որ ամէն ինչ արդէն ազատ կերպով գրուած է թերթերում: Հարկաւոր ենք համարում, սակայն ասել, թէ ի՞նչ պէտք է անի մեր Դաշնակցութիւնը – մի հարց, որ այս ընկալիս ամէնից աւելի մտահոգութիւն պէտք է պատճառէ մեզ:

Պարզ է որ այս մեծ յեղաշրջումը այնպիսի մի խոշոր քայլ է մեր պետական կեանքին ռամկավարացման տեսակէտով, այնպիսի մեծ պատեհութիւն իրագործելու բոլոր ճնշուած ազգերի հաւասարութիւնն ու ազատութիւնը, որ մենք բոլոր միւս աշխատաւորական կազմակերպութիւններին հետ պէտք է ունենանք մէկ հոգս միայն – ամէն հնարաւոր միջոցներով պահել եւ ամրապնդել նոր կարգը եւ վերջնականապէս վերացնել հնի մնացորդները:

Նկատի առնելով, որ ժամանակակաւոր կառավարութեան յենարանը կազմակերպուած աշխատաւորութիւնն է եւ բանակը, քաղաքական դէպքերի վրայ մեր ուժերի ամբողջութեամբ ազդելու միակ միջոցը մեր կազմակերպուած լինելն է:

Այս նպատակով մենք հարկաւոր ենք համարում անյապաղ գործադրել հետեւեալ կէտերը.

1. Առանց յետաձգելու ամբողջ եռանդով սկսել դաշնակցական մարմինների վերակազմութեան, ուժեղացման եւ հայ դեռ չկազմակերպուած աշխատաւորութեան կազմակերպման:
2. Փութով առաջ բերել ամէնուրեք գիւղացիական, արհեստակցական եւ բանուորական միութիւններ:
3. Ուժ տալ քաղաքներում բանուորական եւ գիւնուորական խորհուրդների, կարգադրիչ կոմիտէների եւ պարենաւորման մարմինների հաստատման:
4. Ամէն տեղ մասնակցել ժամանակակաւոր կառավարութիւնների եւ քաղաքային ինքնավարութիւններին կից առաջ եկող մարմիններին:
5. Օրը օրին իրագրել պահել մեզ տեղական դէպքերի եւ պէտքերի մասին, իսկ առանձնապէս կարեւոր կարիքների մասին հեռագրել նաեւ կենտրոնական կառավարութեան:

Ընկերներ,

Հաղորդելով մեզ այս ամէնը՝ Հ. Յ. Դաշնակցութեան Արեւելեան բիւրոն դիմում է ձեզ սրտագին հրաւերով՝ ցոյց տալ առանձին եռանդ եւ անձնագոհութիւն պատմական այս բացառիկ մոմէնտում: Մենք վստահ ենք, որ դուք բոլորդ հաւատարիմ հայ աշխատաւոր ժողովրդի շահերին՝ կը կատարէք ձեր կուսակցական պարտքը ընկալի վայել լիութեամբ:

Պէտք է արագացնել կազմակերպութեան գործը եւ նրա համար, որ մօտիկ ապագայում պէտք է հրաւիրուի կուսակցութեան ռայոնական ժողովը, որի առթիւ դեռ կը գրենք ձեզ:

Բարեկներով՝
Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈ

1917 թ. մարտ 5

Ս.Վ. 158-12

Ա 2.– Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԹԻՒ 2 ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Ընկերներ,

Հարկ ենք համարում մի շարք հրահանգներ եւս հազորդել ձեզ՝ անմիջապէս գործադրելու համար. անհրաժեշտ է առանց ուշացնելու գործի սկսել:

1. Անմիջապէս հրաւիրել ժողով կուսակցական մարմնի եւ գործօն ընկերների, որը պէտք է կազմակերպէ քաղաքում հրապարակային միտինգ եւ բացատրէ մոմենտի նշանակութիւնը:

2. Տեղական ոյժերի մի զօրեղ մոբիլիզացիայով (թողնելով ժամանակաւորապէս անձնական զանազան գործեր) անմիջապէս ժողովներ գումարել քաղաքի բանուորութեան, արհեստաւորութեան եւ այլ հաստատութիւնների մէջ աշխատող անձանց առանձին-առանձին: Որոշ նորմայով ներկայացուցչութիւն ընտրել նրանցից: Այդ ներկայացուցչական ժողովը իր վարչութիւնով (որի մէջ կարող են ընտրուել եւ ինտելիգենտ անձինք) պիտի անմիջապէս յարաբերութեան մէջ մտնի քաղաքային ինքնավարութեան հետ եւ նրա ներկայացուցիչների հետ (հաւասար թւով) խառը մարմին կազմի քաղաքային գործադիր կոմիտե¹ քաղաքի բոլոր գործերի ղեկավարութիւնը իրեն վրայ վերցնելով: Այդ միացեալ մարմնի մէջ պիտի մտնեն նաեւ կուսակցութիւնների եւ խոշոր ընկերութիւնների ներկայացուցիչները:

3. Այդ մարմինը եւ նրան առաջ բերող բանուորական ներկայացուցչական ժողովը Աշխատանքային երեսփոխանների խորհուրդն² եւ քաղաքային Դոման տէր եւ տնօրէն են քաղաքի: Նրանք են կարգադրում այն բոլոր գործերը, որ պահանջում է քաղաքի խաղաղութիւնը եւ հին կարգերի մնացորդների լիկւիդացիան:

4. Անմիջապէս մտերիմ հայ սպանների եւ զինւորների միջոցով գլուխ բերել կազմակերպութիւն գործերի մէջ թէ՛ հայ եւ թէ՛ ընդհանուր, կամ առնւազը հայ զօրքերի: Սրանց ներկայացուցիչներից մտցնել քաղաքի գործադիր մարմնի մէջ կամ կապ պահպանել զօրքի հետ, եթէ նրա մէջ կը նկատէք նպաստաւոր տրամադրութիւն:

5. Սպանների եւ մեր ոյժերով, եթէ հնարաւոր է, ձերբակալել կասկածելի պաշտօնեանների (գաւառապետ, ոստիկանապետ, ատլաճ եւ խուլիգան պրիստաւներ³ եւ այլն): Նրանց տեղը գործադիր մարմնի միջոցով նշանակել քաղաքում յարգւած մարդկանցից:

6. Եթէ տեղական իշխանութիւնը ինքը իրեն անգործութեան է մատնում եւ հեռանում, քաղաքի ամբողջ

ոստիկանութիւնը եւ պաշտպանութիւնը անցնում է քաղաքին՝ յանձին գործադիր մարմնի:

7. Ամէն միջոցներով կուսակցութիւնը նպաստում է, որ գործադիր մարմինը լինի ձեռնհաս նրա վերայ ընդհանուր պարտականութիւնների մէջ, մանաւանդ ներքին ապահովութեան եւ պարենաւորման գործում:

8. Բանուորական ներկայացուցչական ժողովը առանձին պիտի ունենայ իր նիստերը եւ անընդհատ յարաբերութեան մէջ լինի այն խառը ժողովի հետ, որին մտնում են իր ներկայացուցիչները:

9. Բանուորական այդ կազմակերպութիւնը, որի միջոցով բնականաբար պիտի արտայայտուի կուսակցութեան ծածկւած, բայց յարգանք ներշնչող խորհրդաւոր ոյժը պիտի լինի ընտրւած անկուսակցական հողի վրայ, ի հարկէ պարզ է որ մերը կը լինի փաստօրէն, որքան որ մենք ոյժ ունենք, սակայն չգրկելով միւսներին, եթէ կան, յարաբերական ներկայացուցչութիւնից:

10. Ամէն կերպ աշխատել, որ երկաթուղու բանուորները եւ փոստ-հեռագրական ծառայողները լինին այդ բանուորական ներկայացուցչութեան մէջ եւ մեզ համակիր լինին:

11. Յաճախ ոստիկաններին փոխել, եթէ անվստահելի են, տեղական կամ զինւորական համակիր ոյժերով:

12. Այս բոլորը վերաբերում են այն քաղաքներին եւ գաւառական կենտրոն գիւղերին, որոնք զերազանցապէս հայկական են (Ալեքսանդրապոլ, Կարս, Ախալքալաք, Ախալցխա, Նոր-Բայազէդ, Էջմիածին, Կաղզւան, Գորիս, կարծում ենք նաեւ Երեւան եւ Շուշի). իսկ այն կենտրոնները, որտեղ թուրքական մեծամասնութիւն կայ, աշխատել իշխանութիւնը զցել երկու ազգերից էլ յարգւած ուսու կամ այլազգի անձանց ձեռքը, եթէ վստահելի թուրք չկայ:

13. Դժուար է ամէն ինչ նախատեսնող խորհուրդներ տալ, արէք ամէն ինչ, որ կը ստեղծի տեղում ապահովութիւն, նոր կարգի կողմնակիցների ուժեղացում եւ կուսակցութեան լայն կազմակերպում:

14. Ոչ մի պայմանով չմտցնելով դրսի բուրժուական տարրերին կուսակցական կազմակերպութիւնների մէջ, պահպանել համերաշխութիւն այս յեղափոխութիւնը գլուխ բերող երեք ոյժերի — բանուորութեան, բուրժուազիայի եւ զօրքի մէջ:

II Գաւառներում

1) Ամէն տեղ կազմակերպել գիւղացիական միտինգներ եւ բացատրել իրողութիւնը եւ մեր անելիքը:

1.- Բնագրին մէջ ռուսատառ:
2.- Բնագրին մէջ ռուսատառ:
3.- Գաւառական ոստիկանապետեր:

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

2) Որտեղ որ ազդեցություն ունենք՝ գիւղական իշխանութիւնները խզել անվստահելի անձանց ձեռքերից եւ տալ ժողովրդի բարեկամ ոյժերին:

3) Ըստ կարելոյն շուտով կազմակերպել գիւղացիական միութիւններ, որոնց ձեռքն է անցնելու, համաձայն կառավարութեան յայտարարութեան, վայրերի պարենաւորման գործը:

4) Ունենալ գիւղերում ընկերներ, որ ղեկավարեն այն ժողովները եւ գիւղացիական մարմինները, որոնք ձեռնհաս չեն այդ գործի համար:

5) Զարկ տալ կոօպերատիւներին եւ նրանց միութիւններ առաջ բերել:

6) Գիւղական միութիւնների ներկայացուցչութիւն ունենալ կենտրոններում, քաղաքների եւ այլ իշխանութիւնների հետ յարաբերութեան մէջ լինելու համար:

7) Մեր մարտական ոյժերի եւ համակիր զինւորականութեան միջոցով ոյժ հաղորդել այդ միութիւններին:

8) Հեռացնել գաւառի վատ պաշտօնեաներին եւ տեղը դնել եւ ճանաչել տալ նահանգապետների կողմից, եթէ վերջիններս կը մնան իրենց տեղերում:

9) Այն գաւառներում, որոնք գերազանցապէս հայկական են, իշխանութիւնը պիտի լինի հայերի ձեռքին (Ախալքալաք, Ալեքսանդրապոլ, Էջմիածին, Նոր-Բայազէդ):

10) Այն գաւառներում, որտեղ հայերը եւ մուսուլմանները տարբեր մասեր են բռնում (Ղազախ, Գան-

ձակ, Զիւանչիւր, Շուչի, Շարուր-Դարալագեազ, Բորչալու), կամ այն գաւառներում, որտեղ կան գերազանցապէս հայկական գաւառակներ, ուշաստկի⁴ Ղամարլու, Քանաքեռ, Սիսիան, Զանգեզուր) այնտեղ գլուխ բերել այս բոլորը ինչ որ հայկական մասերում:

11) Առհասարակ ջանալ յաջողացնել, որ հայկական մասերը հայկական իշխանութիւն ունենան, եւ հնարաւոր լինի ապագայում օրինական ճանապարհով ստեղծել հայկական առանձին գաւառներ:

12) Լարած պրոպագանդ մղել ընդհանուր քաղաքական իմաստով եւ արագօրէն կազմակերպել համապատասխան տարրեր կառավարութիւնը ուժեղացնելու համար: Սկզբում — խմբական ձեւով (ստւար խմբեր, որքան որ հաւաքոյթների տեխնիկան թոյլ է տալիս): Մի քիչ նորմալ կեանք ստեղծելուց յետոյ, դիմել արհեստակցական միութիւնների կազմակերպման:

13) Անընդհատ նամակներով եւ այլ միջոցներով մեզ հետ կապ պահպանել:

Այս բոլորը հաղորդում ենք ձեզ ոչ բառացի կերպով, այլ ըստ յարմարութեան տեղական պայմանների՝ գործադրելու համար:

Այնպէս շրջահայեաց, լուրջ եւ վճռական եղէք, որ յարգանք վայելէք լայն հասարակութեան կողմից:

Բարեւներով՝
Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

4.- Բնագրին մէջ ուսաստան՝ շրջաններ:

Փաստ. 26-2

Ա 3.- Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԹԵՀՐԱՆ

Մարտ 21 1917 թ.

Սիրելի ընկերներ,

Ազատութեան օրեր է ապրում Ռուսաստանը: Մեր կուսակցութիւնն էլ վերակազմութեան բուռն շրջան է ապրում: Գաւառը կենդանանում է եւ կուսակցական մարմիններն ու խմբերը արագօրէն աճում եւ ամրանում են:

Բացի զուտ կուսակցական աշխատանքից՝ մեր կազմակերպութիւնը մօտիկից մասնակցում է կառավարական մարմիններին՝ աշխատելով նոր ուժերի ամրացման: Թիֆլիս, Երեւան, Բագու եւ ուրիշ քաղաքներ, գործադիր կոմիտէներում մենք ունենք մեր ներկայացուցիչները: Ներկայացուցիչներ ունենք նաեւ բանուորական ու զինուորական խորհուրդներին մէջ: Լուրջ պատրաստութիւններ ենք տեսնում եւ Սահմանադիր ժողովի ընտրութիւններին մասնակցելու:

Ստեղծած կացութեան հանդէպ մեր դիրքը որոշելու, այլեւ կուսակցական բազմաթիւ անյետաձգելի հարցեր որոշելու համար որոշել ենք Զատիկի շաբաթվայ Հինգշաբթի հրաւիրել ուսյունական ժողով: Այդ մասին հեռագրով կ'իմացնենք եւ ձեզ. ցանկալի է, որ դուք էլ կարողանաք ձեր պատգամաւորը հասցնել, եթէ, ի հարկէ ժամանակ ունենաք: Ստիպւած ենք շատ շտապել. դրա համար այնքա՛ն շուտ է նշանակւում Ռայ[ոնական] ժողովը:

Նոր Ռուսաստանից շատ սպասելիքներ կան թէ՛ ներ-

քին եւ թէ՛ արտաքին քաղաքականութեան տեսակէտից: Ռուսաստանը ներքնապէս նոր ուղիի վրայ է կանգնում, եւ ազգային հարցն էլ, յոյս ունինք, կը լուծուի ամենացանկալի եղանակով:

Հետզհետէ ուղարկում ենք ձեզ մեր շրջաբերականները, իսկ շուտով պիտի կարողանանք աւելի շուտու գրել եւ պարբերաբար տեղեկութիւններ հաղորդել մեր իրականութիւնից: Մէկ-երկու օրից «Հորիզոն»ն էլ կը դրւի կուսակցութեան տրամադրութեան տակ եւ կը հրատարակւի խմբագրական նոր՝ կուսակցական կազմով. հետեւաբար շատ խնդիրներ թերթից էլ կ'իմանաք: Խնդրում ենք միայն դուք էլ աւելի յաճախ գրել, աւելի կենդանի կապ պահպանել եւ իրազեկ պահել մեզ ձեր կացութեան մասին: Նմանապէս խնդրում ենք կազմակերպել թերթին Պարսկաստանի մեր կուսակցական շրջաններից լուրեր հաղորդելու գործը:

Մի հարց եւս. այս օրերս մեր ընկերներից մի քանիսին դիմել է ընկ. Արշալոյսի⁵ սպանիչ Մատթէոսը: Ըստ երեւոյթին, նա ստացել է ուղեղի խանգարում: Անկապ եւ կցկտուր խօսքերով յայտնել է, որ մոռացութեան տրւի իր յանցանքը եւ թոյլ տրւի իրեն Թեհրան վերադառնալ: Կը խնդրենք իմացնել մեզ այս մասին ձեր կարծիքը:

Դեռ կը գրենք: Կը սպասենք ձեզանից ընդարձակ տեղեկութիւններ:

Ընկերական բարեկներով՝
Ի դ[իմաց] Արեւելեան բիւրոյի՝
Ս. ՎՐԱՅԵԱՆ

5.- Մալինցեան Նորայր (1885-1913), պարսկահայ դաշնակցական գործիչ, ծանօթ Արշալոյս Սեիկեան ծածկանունով:

**Ա 4.– Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ
(1917 Թ. ԱՊՐԻԼ 6)**

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԲԱՅՈՒՄԸ

Ապրիլի 6-ին կէսօրին Երաժշտական դպրոցի դահլիճում առանձին հանդիսութեամբ բացուեց Դաշնացութեան Ռայոնական ժողովը: Պատգամաւորներ էին եկել Անդրկովկասի բոլոր հայաբնակ շրջաններից: Ներկայ էին նաեւ անհատ ընկերներ:

Արեւելեան բերրոյի կողմից բացման ճառ է արտասանում ընկ. Ռոստոմ: Նա դիմեց ներկաներին հետեւեալ խօսքերով.

«Ընկերներ, բաց են անում Դաշնակցութեան առաջին ազատ Ռայոնական ժողովը ազատ Ռուսաստանում: Մենք ունեցել ենք շատ ազատ միջավայրեր, ուր գործել է մեր կուսակցութիւնը – Ամերիկա, Եգիպտոս, Բալկաններ, Պարսկաստան եւ Տաճկաստան: Եւ եթէ մենք այսօր աւելի զուսպ ենք ու չենք խանդավառում ուրիշների պէս, պատճառն այն է, որ մենք տեսել ենք Տաճկաստանի «ազատութիւնը», որ այնքան աղէտատր եղաւ մեզ համար: Տաճկաստանի եւ Պարսկաստանի ազատութիւններն անկայուն եղան, որովհետեւ նրանց կողքին ապրում էր բռնապետական Ռուսաստանը, որ խանգարում էր նրանց: Հիմա այդ բռնապետութիւնն այլեւս չկայ, եւ ռուսական ազատութիւնը ազատութիւն է բերում ո՛չ միայն Ռուսաստանի ներքին ժողովուրդներին, այլեւ բոլոր տեղերի համար: Ռուսական յեղափոխութիւնը սկիզբն է սոցիալիստական յեղափոխութեան, որ մօտալուտ է եւ որ ծայր տեղ համաշխարհային պատերազմի առաջին իսկ օրում:

Պատերազմի սկզբին ամէն տեղ սոցիալիստական կուսակցութիւնները զենքեր առած դիմեցին հայրենիքի պաշտպանութեան: Հայրենիքը վտանգւած էր, պէտք էր նրան պաշտպանել, եւ մի պահ վերացան բոլոր դասակարգային շերտաւորումները, եւ բոլոր դասերն անխտիր նետուեցին պատերազմի զիրկը: Թուում էր, թէ սոցիալիստական շարժումը քայքայում է, թուում էր, թէ աշխատատեղերի վերջն է հասել, եւ Ինտերնացիոնալը այլեւս կորցրել է իր հմայքը: Իրականութեան մէջ, սակայն, այդպէս չեղաւ. պատերազմի ընթացքին սոցիալիստների ազդեցութիւնն աւելի մեծացաւ. նրանք մտան կառավարութեան մէջ եւ ազդեցիկ գործօն դարձան, այնքան ազդեցիկ, որ այլեւս

վճռական դեր են խաղում քաղաքական դէպքերի վրայ:

Նոյնը պատահեց եւ Ռուսաստանում: Պատերազմի սկզբին ամէն բան իրար խառնուեց. սոցիալիստն ու բուրժուան միացան միեւնոյն բանակի մէջ դիմադրելու համար գերմանական զրոհին: Բայց շուտով դեմոկրատիայի նշանակութիւնն այնչափ աճեց, որ այլեւս պատերազմի յաջողութիւնն ամբողջապէս նրանից կախուեց: Յարական կառավարութիւնը, որ առաջ էր բերել պատերազմը, յանկարծակիի եկաւ եւ ստիպւած էր ընտրութիւն անել երկու կարելիութիւնների մէջ, կամ ետ քաշուել եւ անպատիւ հաշտութիւն կնքել թշնամու հետ եւ կամ ընդունել աշխատատեղերի ազդեցութիւնը: Նա ընտրեց առաջինը եւ փորձեց վերջացնել պատերազմը, բայց այլեւս ուշ էր: Ժողովրդի ցասումը հասել էր իր գագաթնակէտին, եւ յեղափոխութեան փոթորիկը սրբեց տարաւ բռնապետութեան ամենավերջին հետքերը: Ռուս միապետութիւնը ինքը իրեն տապալեց:

Ի՞նչ եղաւ հայ ժողովրդի դերը այս իրադարձութիւնների մէջ: Նա առանց տատանումի իր համակրանքն ու յոյսերը կապեց դեմոկրատական սկզբունքների պաշտպան դաշնակիցների հետ: Հայ յեղափոխական տարրերը զգում էին այն աննորմալ դրութիւնը, որ իրենք ստիպւած են ռուս բռնապետութեան հետ միասին գործել յանուն դեմոկրատիայի ոտնակոխ եղած իրաւունքների: Բռնապետութիւնը տապալուեց, եւ հայ ժողովուրդը նորից գտաւ իր դէմքը:

Այս պատերազմի ընթացքին առանձնապէս ծանր եղաւ տաճկահայերի վիճակը, բայց նա էլ ամենապատուաւոր կերպով բռնեց դժուար քննութիւնը: Նա հրապարակ դուրս եկաւ որպէս դեմոկրատիկ գաղափարներով տոգորւած եւ ազատատենչ մի տարր, որ զոհաբերուեց քաղաքակրթութեան սեղանի վրայ: Աշխարհաւեր պատերազմը սարսափելի եղաւ մեր ժողովրդի համար, բայց եւ այնպէս, այսօր էլ, ինչպէս երէկ, մեր առաջին գործը պէտք է լինի նպաստել պատերազմի յաջողութեան, որովհետեւ դրա մէջ է ազատութեան ապահովութեան գրաւականը:

Պատերազմի ընթացքին հայ ժողովուրդը ցոյց տուեց մարտական բարձր ընդունակութիւններ, եւ նրա ներկայացուցիչները մեր մէջ են – Արամը, Ռուբէնը, Վահանը – ողջոյն նրանց: (Դահլիճը թնդում է ծափերից):

Ողջոյն նաեւ մեր հերոս կամաւորներին եւ նրանց խմբապետներին, որոնցից մի քանիսը նոյնպէս հիմա մեր մէջ են (ծափեր): Չմոռանանք եւ այն ծանր կորուստը, որ մենք ունեցանք այս երկու ու կէս տարւայ ընթացքին – Քեռին, Խէչոն, Աւոն, Կորիւնը, Մճոն, Արտաշէսը, Իշխանը եւ ուրիշ շատ շատերը, որոնք ընկան կռիւի դաշտում (Ժողովը յոտնկայս յարգանք է մատուցանում):

Ես յիշում եմ այն հիացումի խօսքերը, որ մեզ էր ուղղում 1903 թին յայտնի սոցիալիստ – յեղափոխական Մինորը, ի տես այն աննման անձնագոհութեան, որ ցոյց էր տալիս հայ երիտասարդութիւնը, որ անվանելի մի գորութեամբ դէպի երկիր էր վազում՝ մեռնելու համար ազատութեան ճանապարհին: Մինորը բացազանցում էր. – «Ի՞նչ է սրա պատճառը, ո՞րն է այն ուժը, որ այդքան հերոսներ է ստեղծում ձեր մէջ: Մենք այնքան ուժ ու եռանդ ենք վատնում եւ հազիւ մի քանի հերոսներ պատրաստում, ինչպէ՞ս է, որ ձեր կէս գրագէտ, հասարակ երիտասարդները այդպիսի անձնագոհութիւն են ցոյց տալիս»:

Այն ժամանակ մի բացատրութիւն էինք տալիս Մինորին, բայց այժմ ինձ համար էլ անհասկանալի է. ո՞րտեղից են այս հերոսները, ո՞րն է այն գորութիւնը, որ առաջ է բերում Քեռիի եւ Խէչոյի պէս բարոյական տիտաններ:

Ընկերներ, մեր նահատակներին յիշելիս ես ուզում եմ մի հին նահատակի յիշատակն էլ յարգել – Քրիստափորի, որը առաջին անգամ՝ 1884 թին թռուցիկ հրատարակեց ռուս կառավարութեան դէմ (ժողովը լուռ ոտքի է կանգնում):

Ես յիշում եմ նաեւ առաջին բանուր յեղափոխականին – ընկեր Միքայէլ Խոջայեանին – մեր բանուր Մեխակին, որը ցուեց Քրիստափորի տպած թռուցիկները (որոտընդոտ ծափեր):

Ընկերներ, ութսունական թականներից հայ ինտելիգենցիայի տրամադրութիւնն այն էր, թէ ոչինչ պէտք չէ խօսել ու գրել ռուս կառավարութեան դէմ: Եւ 1892-ին Միմոն Չաւարեանը եղաւ, որ կարողացաւ յաջողացնել «Դրօշակ»-ի մէջ յօդուած տպելու ռուս կառավարութեան դէմ: Յարգանք նրա յիշատակին (բոլորը ոտքի են կանգնում):

Այնքան շատ են մեր հերոսներն ու նահատակները, որ հնար չկայ բոլորին թելու: Ես կ'ուզեմայի, որ նրանց ոգին մեր մէջ լինէր. այս օրերին մենք չկորցնենք մեզ: Ես կ'ուզեմայի, որ Դաշնակցութիւնը, ինչպէս Միմոն Չաւարեանն էր սիրում ասելու, «հայ ժողովրդի բովանդակ շահերի պաշտպանը լինի»:

Մեր կուսակցութիւնն իր վրայ ունի այնպիսի պարտականութիւններ, որոնցից ազատ են ուրիշ կուսակ-

ցութիւնները: Մենք ունինք ազգովին վտանգելու հոգսը, եւ մենք չենք կարող անտես առնել այդ հանգամանքը: Ամէն անգամ, երբ Դաշնակցութիւնը ստիպւած է եղել դուրս գալու ազգովին գործելու, նրան մեղադրել են, թէ նա բուրժուական էր, կղերական: Իսկ այսօր, երբ ընդհանուր հայրենիքի վտանգելու վախը կայ, մեզ մեղադրողները իրենք են դուրս եկել ազգովին գործելու: Ես կը կամենայի, որ Դաշնակցութիւնը ապագային էլ նոյնը լինէր եւ պէտք եղած ժամանակ պաշտպանէր ազգի շահը, ինչպէս այդ անում են այսօր անգլիացի ու ֆրանսիացի սոցիալիստները:

Չեռք տանք միւս յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւններին եւ առաջ գնանք: Եւ յոտնկայս յարգենք յիշատակը այն մարտիկների, որոնք ընկան Ռուսաստանի ընդհանուր ազատութեան համար»:

Ժողովականները ոտքի են կանգնում: Ընկեր Ռոստոմի խօսքերը խորը տպաւորութիւն են թողնում ներկաների վրայ:

Այնուհետեւ իրար ետեւից խօսում են մի շարք ընկերներ: Ընկեր Շահաթունեան պարզում է, թէ ինչ ծանր պայմաններումն է ապրել ու գործել մեր կուսակցութիւնը եւ մաղթում է, որ ստեղծեն այնպիսի կարգեր, որպէսզի Դաշնակցութիւնը կարողանայ կատարել իր սոցիալիստական առաքելութիւնը:

Ընկեր Գառնիկ Շահինեան Թիֆլիսի Կենտրոնական կոմիտէի կողմից ողջունում է Ռայոնական ժողովը եւ ցանկութիւն յայտնում, որ կուսակցութիւնը հնար ունենայ աւելի լայն աշխատանք կատարելու գործաւորութեան ու գիւղացիութեան մէջ:

Ընկեր Ս[ահակ] Թորոսեան ողջոյնի խօսք է բերում Արարատեան աշխարհի աշխատաւորութեան կողմից եւ պարզում է դասակարգային շարժման էվոլյուցիան մեր մէջ:

Ընկեր Ա[րշակ] Ջամալեան առաջարկում է շնորհաւորական հեռագիրներ ուղղել Ռուսաստանի սոցիալիստական կուսակցութիւններին եւ բանւորական խորհուրդներին:

Ընկ. Արամ [Մանուկեան] խօսում է պայքարած, բայց մասամբ պարտուած մարտիկների կողմից: Նրանք մի մասը Վասպուրականում են՝ ժողովրդի հետ, եւ միւս մասը՝ Պոլսից մինչեւ Միջագետք՝ զնդաններում եւ արգելարաններում: Նրանք անշուշտ առին մեր ազատութեան լուրը: Եւ վաղը նրանք ճերմակ մագերով եւ արի հոգիներով մեզ մօտ կը լինին:

Ընկ. Արամի այս ու յաջորդ խօսքերը ընդունում են ոգեւորւած ու երկարատեւ ծափերով:



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Այնուհետև խօսում է ընկ. Կորիւն [Ղազարյան], որ շեշտում է աշխատաւորական գործունէութիւնը լայնացնելու անհրաժեշտութիւնը:

Ապա զգացած ճառ է արասանում «Աշխատանք»-ի խմբագիր ընկ. Հ[մայեակ] Մանուկեանը:

Վերջը կարդացում են զանազան տեղերից եկած շնորհաւորական հեռագիրները եւ որոշում է ողջոյնի հեռագիրները ուղարկել Ռուսաստանի սոցիալիստական կուսակցութիւններին եւ Թիֆլիսի ու Պետրոգրադի բանւորական, զինւորական ու գիւղացիական միութիւններին:

Հինգ ընդմիջումից յետոյ տեղի է ունենում դիւանի ընտրութիւնը. ընտրւում են 3 նախագահ եւ 3 քարտուղար, մանղատներ ստուգող յանձնախումբ եւ մամուլի բիւրօ:

Ժողովին պատւաւոր նախագահ է ընտրւում ընկ. Ռոստոմը, որին ժողովականները օվացիաներ են սարքում երկարատեւ ու խանդավառ ծափերով եւ «կեցցէ»ներով:

Նիստը փակւում է ժամը 3-ին, բարձր տրամադրութեան տակ:

«Հորիզոն», 9 Ապրիլ 1917, թիւ 71

*
**

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍ

Հ. Յ. Դաշնակցութեան ռայոնական ժողովի երկրորդ նիստը բացւեց հինգշաբթի, երեկոյեան ժամը 7-ին, Երաժշտական դպրոցի դահլիճում: Ներկայ էին 54 պատգամաւորներ: Ժողովը քննութեան առաւ Արեւ. բիւրոյի կատարած ձայների բաշխման կարգը եւ հաստատեց: Որոշեց նաեւ, որ խորհրդակցական ձայնով ժողովին կարող են մասնակցել այն դաշնակցական ընկերները, որոնք անդամ են կուսակցական որեւէ մարմնի, կազմակերպութիւնների եւ օրգանների:

Ժողովը հաստատեց հետեւեալ ռեզլամենտը.

Նիստերը տեւում են առաւօտեան 10-2-ը, երեկոյեան 7-11-ը:

Իւրաքանչիւր զեկուցող խօսելու է 15 րոպէ:

Խօսողներին ձայն է տրւում երկու անգամ, որից առաջին անգամ 10 րոպէ, երկրորդ՝ 5 ր.: Քւէարկւում են այն բանաձեւերը, որոնք ներկայացւում են գրաւոր: Ժողովին իրաւունք է վերապահւում կրճատել խօսողների ցանկը: Բանաձեւերի վերջնական խմբագրութեան

համար ընտրւեց մի յատուկ խմբագրական մարմին եւրեզ հոգուց:

5 րոպէ ընդմիջումից յետոյ ժողովը անցնում է օրակարգի խնդիրներին եւ լսում է զեկուցումներ տեղերից:

Ալեքսանդրապոլ.— Զեկուցողը այդ շրջանի գործունէութիւնը բաժանում է երկու մասի. նախայեղափոխական եւ յեղափոխական շրջանների: Յայտնում է որ չնայած հասարակական, քաղաքական եւ տնտեսական աննպաստ հանգամանքներին՝ Ալեքսանդրապոլում միշտ էլ գոյութիւն են ունեցել կուսակցական ընկերների խմբակներ, որոնք ունեցել են իրենց գաղտնի գործունէութիւնը եւ մասնակցել են հասարակական, կուլտուրական ձեռնարկներում, կատարել են իրենց գործօն դերը՝ կանգնած լինելով միշտ էլ աշխատաւորական շահերի տեսակէտի վրայ: Փորձեր են եղել նաեւ շրջանի իւրաքանչիւր վայրում էլ առաջ բերել յեղափոխական կորիզներ, որոնք մեծ մասով յաջողութեամբ են պսակւել:

Յեղաշրջումից յետոյ բոլոր կուսակցական ընկերները գործի են անցնում եւ խոշոր մասնակցութիւն են ունենում այն բոլոր երեւոյթների մէջ, որոնք տեղի են ունենում վարչական-քաղաքական եւ զուտ գիւղական հասարակական շրջանակներում: Կառավարական ժամանակաւոր օրգաններում Դաշնակցութիւնն ունի իր պատգամաւորները, իսկ քաղաքի եւ շրջանի ամբողջ աշխատաւորութիւնը կազմակերպւում է եւ գործի դրւում Դաշնակցութեան ղեկավարութեամբ:

Կազմակերպւել եւ կազմակերպւում են գիւղացիական միութիւններ, անկուսակցական արհեստակցական միութիւններ եւ այլն: Կուսակցութիւնը բաց է արել իր ակումբը, լոյս է տեսնում արդէն կուսակցութեան օրգանը «Ժայռ» անունով:

Կարլ.— Յեղաշրջումից առաջ գոյութիւն են ունեցել մտաւորական խմբակ եւ արհեստաւորների կուսակցական խմբակներ: Ընկերները աշխատել են հասարակական-կուլտուրական հիմնարկութիւնների մէջ՝ աշխատելով նրանց մէջ մտցնել դեմոկրատիկ ոգի:

Յեղաշրջումից յետոյ, նախկին կուսակցական կորիզներից ընտրւում է մի մարմին, որը եւ վարում է կուսակցական կազմակերպական գործը: Այդ մարմինն է, որ կազմակերպւում է միտինգներ, դասախօսութիւններ, արհեստակցական, գիւղացիական միութիւններ, որոնք տարւում են անկուսակցական հողի վրայ: Ստեղծւած ժամանակաւոր օրգանների մէջ կուսակցութիւնն ունի իր համեմատական ներկայացուցչութիւնը: Գործը շարունակւում է, կազմակերպւում են զուտ աշխատաւորական տարրերը:



Բագու.— Ձեկուցողը Բագուի դաշնակցական բանուրուկթեան ողջոյնն է հաղորդում ընկերներին եւ ողջուրում է ազատ Ռուսաստանում Դաշնակցութեան ազատ ռազմական ժողովի բացումը: Ողջոյնն ընդունուում է բուռն ծափահարութեամբ. նախապէղաշրջման ժամանակ էլ գոյութիւն է ունեցել կուսակց. մարմին. բանուրական շրջաններում միշտ էլ առաջ է տարել կուսակց. պրոպագանդ եւ կազմակերպած աշխատանք:

Յեղաշրջումից յետոյ առանձին կեանք է ստանում կուսակցութիւնը եւ մեծ թափով առաջ է տարուում կուսակցական երեք տեսակի աշխատանք: Կազմակերպուում են երեք մարմին քաղաքում, Բալախանում եւ Սպիտակ քաղաքում. կազմակերպուում են ա) բանուրական միութիւններ գործարանային սիստեմով. բ) արհեստակցական միութիւններ անկուսակցական եւ գ) մտաւորականների խմբակներ, որոնք անցնում են անմիջապէս գործի:

Քաղաքական յեղափոխութիւնից առաջ եղած խմբերի թիւը բարձրանում է մէկ շաբաթուայ ընթացքում 20-ի՝ 200 անդամով: Բիբի-Հէյբաթում խմբերի թիւը 3-ից 15-ի է բարձրանում. Բալախանում առաջ եղել է 30 խումբ 500 անդամով, հիմա կայ 108 խումբ 1150 անդամով: Միւս կուսակցութիւններից գործում են եւ մասսա ունին ռուս սոց.-դեմոկրատները եւ սոց. յեղափոխականները: Բանուրական աչքի ընկնող կազմակերպութիւններ ունին միայն ռուս սոց.-դեմոկրատները եւ Դաշնակցութիւնը:

Դաշնակցութիւնը կազմակերպել է միտինգներ քաղաքի զանազան մասերում, բաց է թողել թուղցիկներ: Կայացել են դաշնակցականների ընդհանուր ժողովներ օրուայ եւ ծրագրային կարեւոր հարցերի շուրջը:

Կազմակերպել են կոոպերատիւ ընկերութիւններ. կուսակցութիւնն ունի իր օրգանը: Կազմակերպութիւնը շարունակում է բանուրական եւ մտաւորական շրջաններում մեծ յաջողութեամբ:

Երկրորդ գեկուցողը — բանուր ընկերը — իր բանուր ընկերների կողմից ողջոյնի խօսք է ասում, որը ընդունուում է ծափահարութեամբ: Ողջոյնի խօսք է ասում նաեւ մի ուրիշ բանուր ներկայացուցիչ: Ձեկուցուում է նաեւ որ բանուրական խորհրդի եւ բանուրական կազմակերպութիւնների կողմից որոշուած է ճանաչել երեք կուսակցութիւն. ա) Հ.Յ.Դաշնակցութեան, բ) Սոց. Յեղափոխականներին եւ գ) Սոց. Դեմոկրատներին: Միւս կուսակցութիւններ չեն ճանաչուում սոցիալիստական եւ մուսթ չունեն բանուրական շրջանները:

Կարգացում են ուղարկելիք հեռագիրները բանուրական խորհրդին, Պետրոգրադի եւ ալպիսի սոցիալիստական կուսակցութիւններին: Քննութիւնը յետաձգուում է առաւօտեան նիստին:

Նիստը փակուում է 11½-ին. հետեւեալ նիստը ուրբաթ, առաւօտեան ժամը 10-ին, նոյն տեղում:

ԳԱՌՆԻԿ

«Հորիզոն», 11 Ապրիլ 1917, թիւ 72

*
**

ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏում ապր. 7-ին, առաւօտեան ժողովը զբաղուում է մոմենտի բնորոշումով: Շեշտելով բանուրական եւ զինուորական խորհուրդների նշանակութիւնը՝ անհրաժեշտ է նկատուում նաեւ զիւղացիական խորհուրդների կազմակերպումը: Ընդունուած բանաձեւը յանձնուում է խմբագրական մարմնին:

Նոյն նիստում քննութեան է առնուում նաեւ կուսակցութեան վերաբերմունքը դէպի պատերազմը: Պատգամաւոր ընկերները բոլորն էլ պնդում են այն կէտի վրայ, որ Ռուսաստանի պարտութիւնը մահն է ազատութեան, ուստի եւ անհրաժեշտ է ուժ տալ այն ձեռնարկներին, որոնց նպատակն է նպաստել բանակին եւ օգնել կառավարութեանը պատերազմը յաջողութեամբ վերջացնելու համար:

*
**

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏում շարունակուում են վիճաբանութիւնները պատերազմի եւ յարակից խնդիրների մասին, ինչպէս են «պատերազմ առանց գրաւումի» կամ «պատերազմ առանց տուգանքի» լուզնագները:

*
**

ՀԻՆԳԵՐՈՐԴ եւ **ՎԵՅԵՐՈՐԴ ՆԻՍՏ**ում լուսնին գեկուցումներ Երեւանի, Բաթումի, Թիֆլիսի, Գանձակի, Ատրպատականի եւ ուսանողների կենտր. եւ զանազան քաղաքների մարմիններից, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Արեւելեան բիւրոների կողմից:

Առաջ բերենք Թիֆլիսի Կենտ. կոմիտէի գեկուցման ամփոփումը:

Թիֆլիս.— Ձինուրութիւնը եւ կամաւորական շար-

ժուժը բաւական թուլացրեց կազմակերպութիւնը, բայց եւ այնպէս հին ռեժիմի օրով էլ կուսակցական կեանքը կանգ չառաւ: 1916 թւի ընթացքին, գոյութիւն ունէին 22 քաղաքական խմբեր եւ արհեստակցական միութիւններ, աշակերտական խմբեր եւ այլն: Առաջ էր տարւում կուսակցական պրոպագանդը: Բանւորների գործադուլներին կուսակցութիւնը իր ազդեցութիւնն էր ունենում:

Յեղափոխութիւնից յետոյ կեանքը կերպարանափոխեց եւ մեր կազմակերպութիւնն էլ ընդարձակ գործունէութիւն սկսեց: Իրար ետեւից առաջ եկան արհեստակցական միութիւններ: Թիֆլիսի բանւորութեան մեծ մասը մենք ենք կազմակերպել. նրանց կողմից բանւորական խորհրդին ուղարկեց 21 դաշնակցական: Այդ թիւը դեռ կը բարձրանայ: Քաղաքի գործադիր կոմիտէում կայ 4 դաշնակցական, գործադիր բիւրոյում 1-ը:

Կովկասեան կոմիտարները, զինւորական խորհրդի, քաղաքի միլիցիայի մէջ կան դաշնակցականներ: Ձեռք է զարնւած թաղերի կազմակերպման: Կայ պրոպագանդի խմբակ: Շրջանը կազմակերպելու համար ուղարկել են ընկերներ — Ախալքալաք, Ախալցխա, Շուլաւէր, Ղարաքիլիսա եւ այլն:

Թիֆլիսում հրատարակել են թուոցիկներ, հասարակութեան եւ զօրքին ուղղւած, հայերէն եւ ռուսերէն լեզուներով. կազմակերպել են միտինգներ: Դաշնակցութեան առաջին միտինգին աներեւակայելի բազմութիւն է եկել քաղաքային դումա: Կուսակցութիւնը մասնակցութիւն է ունեցել եւ ընդհանուր միտինգներին՝ ունենալով իր ամբիոնն ու հռետորները:

«Հորիզոն», 13 Ապրիլ 1917, թիւ 74

Հ.Յ.Դ. ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՄՈՍԵՆՏԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Ա. ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Վերլուծելով յեղափոխական վերջին անցուղարձը, Հ.Յ.Դ. Ռայ. ժողովը գալիս է այն եզրակացություններին, որ

I- Ռուսաստանի մեծ յեղափոխությունը հետեւանք է:

- 1.- Այն խոշոր քաղաքական եւ սոցիալ-տնտեսական պահանջներին, որ 1905 թ[ւին] գոհացում չստացան:
- 2.- Այն խելակորոյս քաղաքականութեան, որ հին կառավարությունը վարեց յատկապէս վերջին տասնամեակի ընթացքում:
- 3.- Այն գուտ դինաստիական եւ դաւաճան քաղաքականութեան, որ նկատուեց այս մեծ պատերազմի ընթացքում:
- 4.- Իշխանութեան եւ ժողովրդական տնտեսութեան քայքայման:
- 5.- Այն երկարամեայ յեղափոխական դաստիարակութեան, որ ստացել էր աշխատաւորութիւնը:

II- Յեղափոխութեան մասնակցեցին.

- 1.- Զինուած գիւղացիութիւնը, որ նոյնն է թէ՛ զօրքը. մի զօրք, որ մեծ մորիլիզացիաների շնորհիւ՝ կորցնելով իր կաստայական⁶ բնոյթը՝ դարձել էր ժողովրդական բանակ եւ ապրում էր նոյն տրամադրութիւնները, ինչ որ ժողովրդի մեծամասնութիւնը:
- 2.- Բանւորութիւնը, որ 1905 թ-ի շարժումներից ի վեր աւելի փորձառութիւն էր ձեռք բերել եւ պատերազմի սկզբից մասնակցելով երկրի պաշտպանութեան գործին՝ քաղաքական շատ կարեւոր ազդակ էր դարձել:
- 3.- Առաջադիմական եւ չափաւոր տարրերը, որ հասան այն վերջնական համոզման, թէ՛ հին ռեժիմը լիովին անընդունակ է հասցնելու պատերազմը նպաստաւոր վախճանի:

III- Հսկայական թուիչքը ցարիզմից մինչեւ ռամկավար հանրապետութիւն՝ պէտք է բացատրել.

- 1.- Այն կատարեալ վարկաբեկումով, որին հասան միապետական գաղափարները վերջին շրջանում:
- 2.- Այն յարաբերական թուլութեամբ, որ ունէին չա-

6.- Կաստա – առանձնաշնորհեալ փակ դասակարգ:

փաւոր սահմանադրական տարրերը Ռուսաստանում եւ այն զօրութեամբ, որ ունէին սոցիալ-քաղաքական արմատական գաղափարները:

3.- Եւրոպական երկրների քաղաքական դանդաղ անցեալը եւ փորձը չկրկնելու ցանկութեամբ:

4.- Այն դասակարգային կապով եւ հոգեբանական մերձեցմամբ, որ ստեղծուեց բանւորութեան եւ զօրքի միջեւ:

IV- Զգտելով բնորոշել պետութեան քաղաքական կացութիւնը ներկայ մոմենտում, ռայոնական ժողովը նկատում է, որ ուժերի գերակշռութիւնն այսօր անցած է բանւորութեան եւ զօրքի ներկայացուցիչներին, որոնք գտնուում են առաւելապէս սոցիալիստական, քան թէ բուրժուայական կուսակցութեան ազդեցութեան տակ:

Յառաջադիմական տարրերը ստիպուած են հեւ ի հեւ հետեւել աշխատաւորութեան ուղիին: Չի կարելի ուրանալ այն վճառականութիւնը, որով լիբերալ (կադէտ եւ այլն) տարրերը, յանուն պատերազմի յաջողութեան, ընդառաջում են գերիշխող աշխատաւորութեան պահանջներին:

Զմոռանալով ամէն տեղ գոյութիւն ունեցող դասակարգային հակոտնեայ շահերը՝ պէտք է ասել, որ հասարակական խաւերի գործակցութիւնը ընդհանրապէս բաւարար է համերաշխութեան տեսակէտից:

Ներքին դժգոհութիւններն ու քննադատութիւնները գրեթէ հակամարտ գործողութիւններ առաջ չեն բերում: Նկատելով բանւորական եւ զինւորական խորհրդների ազդեցութիւնը պետական կեանքի ընթացքի վրայ՝ կարելի է ընդունել, որ կառավարութիւնն ներկայացնում է համարեա բոլոր հոսանքներն ու խաւերը եւ չնայած իր այլատարր կազմութեան՝ նա մինչեւ այժմ ընթանում է դեմոկրատիկ ճամբով: Պէտք է նկատել սակայն, որ բանւորական եւ զինւորական խորհուրդներին կից՝ անհրաժեշտ է կազմել գիւղացիական խորհուրդներ, որոնք իբրեւ աշխատաւորական ուժալ ոյժ ի վիճակի են երկրի բախտի տնօրինութեան մէջ իրենց մասն ունենալու, որովհետեւ մեծ է գիւղացիութեան դերը Ռուսաստանի ապագայ սոցիալական յեղաշրջումների ժամանակ:

Գալով ամբողջ Ռուսաստանի կենտրոնական եւ գաւառական կառավարութեան վերակազմութեանը, եւ հաշի առնելով հասարակութեան անփորձութիւնը քաղաքական-վարչական գործերում՝ ուրախութեամբ պէտք է արձանագրել ինքնագործունէութեան այն թափը, որ երեւան հանց հասարակութիւնը, թոյլ չտալով անիշխանութիւն՝ հին կառավարութեան եւ վարչութիւնների կործանման շրջանում: Ազգերն ու դասակարգերը առանց մոռանալու իրենց ուրոյն շահերը՝ ընդհանուր առմամբ ներշնչուած են այն գիտակցու-

Թեամբ, թէ ժողովրդի ազատութիւնը կարելի է ապահովել միմիայն միահամուռ գործակցութեամբ: Քաղաքական կուսակցութիւնները փոխադարձ վերաբերումը համեմատած 1905 թւի շրջանի հետ՝ շատ աւելի միմիայնական է, իսկ գործելակերպը՝ շրջահայեաց:

Այս բոլորը նկատի առնելով՝ Հ. Յ. Դաշնակցութեան ռազմական ժողովը գտնում է, որ

1) Մինչեւ Սահմանադիր ժողովը պէտք է ընթանալ նոյն ճամբով եւ պահպանել նոյն փոխադարձ վերաբերումն ու տրամադրութիւնները:

2) Պէտք է պահպանել այն գորութիւնը, որ ձեռք է բերել բանւորական եւ գինւորական խորհուրդը, համանման կշիռ տալով ապագայում կազմելիք գիւղացիական խորհուրդներին եւ ջանալով հակադրութեան մէջ չդնել նրանց թէ դէպի կենտրոնական կառավարութիւնը եւ թէ դէպի երկրի յառաջադիմական տարրերը, որովհետեւ այդ աշխատաւորական կազմակերպութիւնների վերացումով, ինչպէս եւ հակամարտութեամբ կը վտանգուի ազատութիւնը եւ կը ստեղծուի երկրում անիշխանութիւն:

3) Պէտք է շարունակել աշակցել ժամանակաւոր կառավարութեանը, քանի նրա գործունէութիւնը համապատասխան կը լինի դեմոկրատիայի շահերին:

4) Պէտք է հրապարակ հանել երկրի թագնւած կենսական ուժերը վարչական նոր կազմակերպութիւնը ապահովելու համար:

Բ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Քննելով իրերի դրութիւնը Անդրկովկասում՝ ռազմական ժողովը նկատում է, որ այդ այլատարր ու բռնակալ կառավարութեան պրոպոկացիոն գործունէութեան ասպարէզ դարձած երկրում եւս ազատութեան օրերին երեւան եկաւ շատ աւելի համերաշխ եւ խելացի գործունէութիւն, քան կարելի էր սպասել:

Մի երկրում, ուր դասակարգային եւ դասային հակամարտութիւններ բարդանում են ցեղամիջեան յարաբերութիւններով, չգտնւեց որեւէ խոշոր հասարակական տարր, որ թէկուզ ներքուստ՝ ամոսսար հին կարգերի անկումը: Ազատ, իրենց կամքին թողնուած ազգերը չգնացին փոխարքաների պատրաստած ճամբով, այլ կարողացան համախմբել ընդհանուր գործի շուրջ եւ ըմբռնել օրւայ հրամայականները: Չնայած կուլտուրական խոշոր տարբերութիւններին, չնայած դասակարգային եւ ազգային հարցերի խառնակ դրութեան՝ հնարաւոր է եղել առժամանակ ստեղծել կենսաձեւ (modus vivendi) մինչեւ սահմանադիր ժողովը, որը մեր

երկրի համար եւս պիտի լուծի մի շարք ստիպողական եւ ազգային հարցեր:

Մեկնելով այս միմիայնական փաստերից եւ մեր իրականութեան ռէալ պայմանների ճշգրիտ ըմբռնումից՝ Հ. Յ. Դաշնակցութեան ռազմական ժողովը հրահանգում է կուսակցութեան բոլոր մարմիններին եւ ընկերներին կատարեալ համերաշխութիւն պահպանել կովկասում ցեղամիջեան յարաբերութիւնների ժամանակ եւ միջապահարգային ու ազգամիջեան խնդիրները լուծելիս միշտ աչքի առաջ ունենալ կուսակցութեան օրւայ լոզունգները*:

«Հորիզոն», 1917 թ. ապրիլ 14, N° 75

*
**

ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԴԷՊԻ ՊԱՏԵՐԱԶՍԸ

Հ. Յ. Դաշնակցութեան կովկասեան ռազմական ժողովը սրտի կսկիծով արձանագրում է այն փաստը, որ ազատագրւած ժողովուրդը ստիպւած է իր ազատութիւնը եւ ապագայ նորմալ զարգացումը ապահովելու համար հսկայական պայքար մղել ոչ միայն հին կարգի մնացորդների, այլեւ Եւրոպայի կենտրոնական պետութիւնների ահարկու գորութեան դէմ:

1) Կասկածից դուրս է, որ անհաւասար պայմաններում հաշտութիւն կապելը ծանրապէս կը վնասի երիտասարդ Ռուսաստանին, կը խափանի նրա սոցիալ-տնտեսական զարգացումը եւ կը զրկէ մեր ռամկավար պետութիւնը ժողովրդի անհամար կարիքներին գոհացում տալու հնարաւորութիւնից եւ այսպիսով կը վարկաբեկէ նրան լայն մասսաների առաջ իր գոյութեան սկզբի օրերից:

2) Կասկածից դուրս է նոյնպէս, որ գերման կայսրութեան յաղթութեան դէպքում՝ Ռուսաստանի քաղաքական կարգերը չեն կարող արագութեամբ ընթանալ ռամկավարացման այն ճամբով, որով գնում են այսօր: Յաղթական Գերմանիայի թէ՛ արքայական տունը, թէ՛ պահպանողական հոգեբանութեան տէր տիրող դասակարգերը չեն կարող իրենց սահմանին կից մի մեծ ռամկավար հանրապետութիւն հանդուրժել եւ հնար եղածին չափ ոյժ կը տան ռուս յետագէմ տարրերին եւ տապալւած արքայական տան վերականգնումի գործին, որի իրականացումը կաշկանդելով Ռուսաստանի զարգացումը՝ կը հասցնի նրան նախկին կախեալ վիճակին:

*) Քաղաքական մոմենտի բնորոշման մասին խօսելով Ս. Վրացեան կը գրէ. «Այս բանաձեւի հեղինակն էր Ա. Շահխաթունեան, որ զեկուցանողն էր քաղաքական մոմենտի մասին» (Տես Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն» Բ. տիպ, յաւելուածական քաժին, էջ 592-595, Պէյրութ, 1958):

3) Ռուս դեմոկրատիայի առաջադրած սոցիալ-տրնտեսական մեծ ծրագրերը (օր[ինակ] հողային) նոյնպէս թշնամական վերաբերում առաջ կը բերեն կենտրոնական միապետութիւնների կողմից, որովհետեւ այդ ռեֆորմները այնքան արմատական են, որ ստանում են համաշխարհային բնոյթ եւ կարող են մեծ սոցիալական շարժումներ առաջ բերել եւրոպական մասսաների, յատկապէս գիւղացիութեան մէջ. այդ պատճառով Գերմանիան եւ նրա դաշնակիցները յաղթելու դէպքում կ'օգտուեն իրենց բռնի ուժից՝ ռուս դեմոկրատիայի վերանորոգչական եռանդը զսպելու համար:

Այս ծանրակշիռ հանգամանքները նկատի առնելով՝ ռայոնական ժողովը գտնում է, թէ որեւէ հաշտութիւն Գերմանիայի եւ ազատ Ռուսաստանի միջեւ վերջինիս համար աննպաստ եւ անհաւասար պայմաններում անընդունելի է դեմոկրատիայի տեսակէտից:

Եւ նկատելով, որ հաշտութեան նպաստաւոր պայմաններ ստեղծել, ինչպէս եւ ազատ եւ ռամկավար կարգերն ապահովել, հնարաւոր է միմիայն ստւար, կարգապահ եւ լաւ պարենաւորւած բանակներով՝ ռայ. ժողովը կոչ է անում բոլոր զինուորներին կրկնապատիկ եռանդով կատարել իրենց պարտքը դասայիքներին — անմիջապէս վերադառնալ իրենց զօրամասերը եւ թիկունքի բոլոր գործօն ուժերին — աջակցել զօրքի պարենաւորման գործին:

Գալով հաշտութեան հիմնական պայմաններին՝ ռայոնական ժողովը յայտարարում է, որ անընդունելի են թէ անէկսիտիստական եւ թէ հակաանէկսիտիստական լոզունգները, եթէ նրանք չունին կոնկրէտ բովանդակութիւն: Մեր կարծիքով հակադեմոկրատական է ոչ միայն գրաւած երկրների բռնի միացումը, այլեւ նրանց բռնի վերադարձը հին տէրերին: Այն հարցերը, որ նախքան պատերազմը միջազգային բնոյթ ունէին (ինչպէս օր. հայոց հարցը), ինչպէս նաեւ այն ազգային հարցերը, որ ծագեցին պատերազմի ընթացքում, պէտք է լուծեն ազատագրւող ազգերը ինքնորոշման իրաւունքով:

«Հորիզոն», 15 Ապրիլ 1917, թիւ 76

*
**

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

I

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Նկատելով, որ աշխատաւոր դասակարգի յեղափոխականացումը գնալով ծաւալւում է, որ պետական կազմը պէտք է ենթարկւի հիմնական փոփոխութեան եւ որ աշխատաւորութիւնը սոցիալիստական կուսակցութիւնների ղեկավարութեամբ վճռական դեր ունի խաղալու Սահմանադիր ժողովում՝ ռայոնական ժողովը միանգամայն հնարաւոր է համարում՝ Սահմանադիր ժողովում առաջարկել կուսակցութեան նուազագոյն ծրագիրը Ռուսաստանի եւ Անդրկովկասի վերաբերմամբ իր բովանդակ ծաւալով՝ թէ՛ քաղաքական, թէ՛ հողային եւ թէ՛ բանւորական:

Ռայոնական ժողովը հրահանգում է Արեւելեան բիւրոյին եւ կուսակցական մամուլին մշակել մեր ծրագրի մանրամասները եւ պատրաստել օրէնսդրական նախագծեր Սահմանադիր ժողովի համար եւ այդ աշխատանքի ընթացքում ջանայ համաձայնութեան գալու Անդրկովկասի միւս ազգերի եւ կուսակցութիւնների հետ:

II

ՕՐԻԱՅ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՄԻՆՉԵՒ ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԸ

Որոշելով Սահմանադիր ժողովում առաջ մղել կուսակցութեան նազագոյն ծրագիրն ամբողջովին՝ ռայոնական ժողովը հրահանգում է ծրագրային բոլոր հարցերը դարձնել գրաւոր եւ բանաւոր պրոպագանդի առարկայ: Իսկ մինչեւ Սահմանադիր ժողովը, իրականացնել այն պահանջները, որ չեն կարող սուր պայքար յարուցանել ազգերի եւ հասարակութեան տարբեր խւերի միջեւ: Այդպիսի պահանջներ ռայոնական ժողովը ճանաչում է:

1) Անդրկովկասի վարչական բաժանումների փոփոխութիւնը, որն իրականացնելու համար Արեւելեան բիւրոն եւ կենտր. կոմիտէները ոչ մի ջանք չպիտի խնայեն:

2) Բաները դասակարգի դրույթները բարուքելու համար, ուր հնարաւոր է, ստեղծել հաշտարար կամերաներ, իսկ ուր հնարաւոր չէ, դիմել մասնակի բանակցութիւններ:

3) Գիւղացիների դրույթները բարուքել նման միջնորդ մարմինների օգնութեամբ՝ իջեցնելով կալածատիրական հողերի կապալագինը եւ ստեղծելով գիւղացիների համար ուրիշ նպաստաւոր պայմաններ (անտառներից, արօտներից, ջրերից եւ այլն օգտուելու համար):

4) Ընդունելով, որ հայկական շրջաններում ամենամեծ կալածատէրը եղած է պետութիւնը՝ ռայոնական ժողովը հրահանգում է կուսակցական մարմիններին եւ ընկերներին՝ միջոցներ ձեռք առնել, որ այսուհետեւ պետական հողերը (օրբոչի ստատիստները) տրեւն ոչ թէ մասնաւոր անձանց, այլ միմիայն տեղական գիւղական համայնքներին, որոնք եւ պիտի որոշեն այդ կարգի հողերից օգտուելու եղանակը:

5) Դպրոցները մնալով պետական՝ պիտի ազգայնաւան վարչութեան եւ դասաւանդութեան տեսակէտով: Կուսակցական մարմինները եւ մամուլը պէտք է կոչանեն բոլոր ուսուցիչներին եւ վարժուհիներին, որ հին ռեփորմի հետեւանքով ցրւած են Ռուսաստանում, վերադառնալ հայրենիք:

6) Բոլոր վարչական եւ դատական հիմնարկութիւնների մէջ պէտք է գործածական դարձնել տեղական լեզուները:

Իրաւաբան ընկերները եւ այս սկզբունքին համակրողները պէտք է աշխատեն հայրենիք կանչել Անդրկովկասից դուրս ցրւած հայ իրաւաբաններին եւ պիտի պատրաստեն ամենակարեւոր օրէնսգրքերի եւ կանոնադրքերի թարգմանութիւնը հայերէն:

III

ՄԵՐ ԵՆԹԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱԶՄԻԵԼԻՔ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Քանի որ անյայտ է թէ ժամանակաւոր կառավարութիւնը ինչ ձեւով է կիրարկելու ընդհանուր ընտրական օրէնքն Անդրկովկասում՝ ռայոնական ժողովը հրահանգում է Արեւելեան բիւրոյին միջոցներ ձեռք առնել, որ հայ ժողովուրդը վարչական բաժանումների, պատերազմի ստեղծած պայմանների եւ այլ հանգամանքների շնորհիւ չզրկւի իր թւին համապատասխան ներկայացուցչութիւնից: Գործի անյաջող ընթացքի դէպքում Բիւրոն պիտի հրաւիրէ արտակարգ ռայոնական ժողով, որ եւ կ'որոշէ կուսակցութեան բռնելիք դիրքը:

IV

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ռայոնական ժողովը որոշեց, այս հարցի քննութիւնն ու լուծումը յետաձգել յետագայ ռայոնական ժողովին, որ պիտի գումարուի Սահմանադիր ժողովի հետ կապւած այլ հարցեր վճռելու համար:

V

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ, ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ, ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐ, ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ռայոնական ժողովը լսելով շրջաններից տեղեկութիւններ ժամանակաւոր վարչական օրգանների կազմութեան եւ գործունէութեան մասին՝ հրահանգում է Արեւելեան բիւրոյին եւ Կ. կոմիտէներին, միջոցներ ձեռք առնել, որ ընտրութիւնները կատարւեն այն դեմոկրատիկ հիմքերով, որ ընդունել է գործադիր կոմիտէների կողմից համապատասխան ռուղղել անկանոն ընտրութիւնները եւ ամէն տեղ ապահովել մեր կուսակցութեանը համաչափ մասնակցութիւն տեղական վարչութիւնների մէջ:

VI

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ (ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ) ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քանի որ արհեստակցական միութիւնները ներկայումս կարող են բոլորովին լեզալ լինել եւ քանի որ միջկուսակցական յարաբերութիւնները բանւորական շարքերում հետզհետէ մեղմանում են՝ ռայոնական ժողովը կողմնակից է, որ արհեստակցական միութիւնները լինին անկուսակցական: Փոքրամասնութեան իրաւունքներն ապահովելու համար ամէն տեղ պէտք է ընդունել տալ համեմատական (պրոպորցիոնալ) ընտրութիւնների սկզբունքը: Կուսակցական մարմինները պնդելու են այդ սկզբունքի վրայ բոլոր միջկուսակցական յարաբերութիւնների ժամանակ: Նոյն սկզբունքով պէտք է առաջնորդել եւ գիւղացիական միութիւններ կազմելիս:

«Հորիզոն», 16 Ապրիլ 1917, թիւ 77

VII

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԽՆԴԻՐ

Ռուսաստանում յեղափոխութեան շնորհիւ վերացած տեսներով Դաշնակցութեան կազմակերպական հին սիստեմի անհրաժեշտութիւնը՝ ռայոնական ժողովը որոշում է կուսակցութիւնը վերակազմել Կովկասում հետեւեալ հիմունքներով.

1) Կուսակցութեան անդամ նկատել նրանց, որ համաձայն Դաշնակցութեան ընդհանուր ժողովների որոշման՝ ընդունում են կուսակցութեան ծրագիրը, կանոնադրութիւնը, տակտիկը եւ իրենց կեանքում ենթարկւում են կուսակցութեան որոշումներին. նոր անդամներ ընդունել 3-10 դաշնակցական ընկերների երաշխաւորութեամբ եւ տեղական մարմնի հաւանութեամբ:

Ման.- Բանւորական շրջանից անդամ ընդունել նրանք, ովքեր չեն մեղադրուում հակաբանւորական շարժման մէջ եւ ներկայացնում են երկու ընկերոջ երաշխաւորութիւն: Կապիտալիստական ձեռնարկների մէջ վարչական բարձր պաշտօն վարողները (կառավարիչ, ղիւրեկտոր, ինքը դրամատէրը եւ այլն) անդամ դառնալու համար պէտք է գոհացում տան ոչ միայն վերը յիշած պահանջներին, այլեւ պիտի ընդունւին տեղական շրջանային ժողովի կողմից:

2) Առաջին կուսակցական միաւորը համարել ամէն վայրի բոլոր դաշնակցական ընկերների ընդհանուր ժողովը, որ ընտրում է մի գործադիր մարմին քառանդամ ընտրական կարգով:

3) Մեր կանոնադրութեան, ապակենտրոն սիստեմը զարգացնել այնպէս, որ իւրաքանչիւր մարմին՝ ծրագրի սահմաններում, տեղական գործերում դառնայ միանգամայն ինքնավար:

4) Մեր կազմակերպութիւնը առժամապէս յարմարեցնել Կովկասի վարչական բաժանումներին այնպէս, որ շրջանային ժողովները տեղի ունենան իւրաքանչիւր պետական գործադիր կոմիտէի ժողովի վայրում, իսկ կոմիտէները գտնւեն իւրաքանչիւր կոմիտարիատի վայրում:

5) Յանձնարարել Արեւելեան բիւրոյին վերը յիշած սկզբունքների հիման վրայ ըստ կարելոյն շուտով մշակել ժամանակաւոր կազմական կանոններ եւ ուղարկել շրջաններն ի գործադրութիւն:

6) Արեւելեան բիւրոն բացառապէս զբաղւում է կուսակցութեան Կովկասեան գործերի ղեկավարութեամբ: Հայաստանի բիւրոն վարում է կուսակցութեան թիւրքահայ հատուածի կուսակցական կեանքը: Թիւրքահայ հատուածի ռայոնական ժողովին է թողնւում Հայաստանի բիւրոյի կազմի լրացումը:

Ընդհանուր բնոյթ ունեցող ստիպողական եւ բացա-

ռիկ խնդիրները (օր. հայոց հարցի վերաբերեալ) կարգադրում է երկու բիւրոների խառը ժողովը, եթէ անհնարին է ընդհանուր ժողով գումարել:

VIII

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Քննելով գրաւոր պրոպագանդի խնդիրը, ռայոնական ժողովը որոշեց.

1) Ունենալ թիֆլիսում մի կենտրոնական կուսակցական օրաթերթ:

2) Վերսկսել «Յառաջ» հանրամատչելի մատենաշարի հրատարակութիւնը: Յանձնարարւում է Արեւելեան բիւրոյին այդ նպատակով կազմել մի յատուկ խմբագրական հրատարակչական մարմին:

3) Հրատարակել մի ամսագիր, տեսական հարցերի քննութեան նւիրւած:

4) Հրատարակել մի շաբաթաթերթ կուսակցութեան տեսական հայեացքները եւ ծրագրային կէտերը ժողովրդականացնելու նպատակով:

Այնուհետեւ ռայոնական ժողովը ցանկութիւն յայտնեց.

1) Հրատարակել կուսակցական մի թերթ բացառապէս նւիրւած թիւրքահայ դատին եւ Հայաստանի կարիքների պարզաբանութեան:

2) Հրատարակել մի կենտրոնական հանրամատչելի կուսակցական թերթ, բացառապէս բանւորութեան, գիւղացիութեան — ընդհանրապէս աշխատաւորութեան համար, թերթի նախաձեռնութիւնն ու հրատարակութիւնը յանձնելով մի խումբ կուսակցական ընկերների:

3) Քաջալերել գաւառական կուսակցական թերթերի հրատարակութիւնը:

IX

ՊԱՐԵՆԱՒՈՐՄԱՆ ԳՈՐԾ

Ռայոնական ժողովը յիշեցնելով բոլոր կուսակցական մարմիններին եւ ընկերներին մեր գիւղացիների տնտեսական տագնապալի դրութիւնը՝ հրահանգում է ամենաեռանդուն մասնակցութիւն ունենալ պարենաւորման բոլոր մարմիններում եւ ձեռնարկներում. ստոյգ տեղեկութիւններ հաղորդել եւ առաջարկներ ուղղել Արեւելեան բիւրոյին, որպէսզի նա հնարաւորութիւն ունենայ կենտրոնական պարենաւորման մարմնի գործունէութեան վրայ ազդելու:

X

ՁԵՄՍՏԻՈՅԻՒՆԻՆԻ ԽՆԴԻՐ

Կովկասի ժամանակաւոր կոմիտէի (կոմիսարիատի) ապրիլի 12-ին յայտարարութիւնից տեղեկանալով, որ միջոցներ են ձեռք առնւում շուտափոյթ գեմատւո մտցնելու Անդրկովկասում՝ ռալոնական ժողովը միաձայն որոշեց, մասնակցել գեմատւոյական ընտրութիւններին այն դէպքում միայն, երբ նախօրօք հիմնովին փոփոխւին Անդրկովկասի արդի վարչական բաժանումները, հակառակ պարագային՝ ռալոնական ժողովը լիազօրում է Արեւելեան բիւրօյին բոյկոտի ենթարկել գեմատւոյական ընտրութիւնները:

Համագումարում մի մնայուն գործադիր մարմին կազմելու խնդիրը յանձնարարւում է որոշել Համագումարի դաշնակցական պատգամաւորներին եւ Արեւելեան բիւրօյին:

XII

ՎԻՐԱԽՕՍ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐ

Լսելով վիրախօս շրջանների պատգամաւորի գեկուցումը՝ ռալոնական ժողովը յանձնարարւում է Թիֆլիսի Կ. կոմիտէին կազմակերպութիւններ առաջ բերել այդ շրջաններում, ուղարկելով վիրախօս պրոպագանդիստներ:

XI

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԽՆԴԻՐ

Քննելով Ազգային բիւրօյի հրաւիրելիք Համագումարին մասնակցելու մասնակցելու խնդիրը՝ ռալոնական ժողովը որոշեց մասնակցել այն դէպքում միայն, եթէ այդ Համագումարը հրաւիրւի քառանդամ ընտրական կարգով. բլոկ չկազմել ոչ մի կուսակցութեան հետ, բայց թեկնածուների ցանկի մէջ կարելի է մտցնել ոչ դաշնակցական թեկնածուների անուններ: Ազգային

XIII

ՈՒԺԵՐԻ ՄՈՒԻԼԻԶԱՑԻԱ

Ռալոնական ժողովը կոչ է անում աշխատաւոր ինտելիգենցիային եւ ուսանողութեան համախմբել, դիմել դէպի ժողովուրդը եւ նւիրել նրա կազմակերպման գործին: Յանձնարարւում է Արեւելեան բիւրօյին հրաւիրել բոլոր տրամադրելի ուժերին Թիֆլիս եւ Բագու, ծանօթացնել աշխատանքների եղանակին եւ ուղղել համապատասխան վայրերը:

7.- Չեմսուօ – Տերական (գաւառական) ինքնավարութեան վարչութիւն:

«Հորիզոն», 18 Ապրիլ 1917, թիւ 78

ՈԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԵՐԵՒԱՆ.— Ողջունում եմ ռայոնական ժողովը: Հա-
լատում եմ, որ դուրս գալով բաց եւ անշեղ քաղաքա-
կան պայքարի ճանապարհը՝ անցեալում կոփւած Դաշ-
նակցութիւնը՝ կը հասնի ժողովուրդների բաղձանքների
իրագործմանը: Ցաւում եմ, որ չեմ կարող ներկայ լի-
նել:

ԴՐՕ

«Հորիզոն», 13 Ապրիլ 1917, թիւ 74

ԿԱՐԻՆ.— Կուսակցութեան տեղական կոմիտէի կող-
մից շնորհաւորում են կովկասեան ռայոնական ժողո-
վը: Ուղարկեցէք որոշումներն ու բանաձեւերը: Այսօր
մասնակցութեամբ զօրքի, քաղաքական կուսակցու-
թիւնների եւ հասարակական հաստատութիւնների՝ տե-
ղի ունեցաւ սգահանդէս ազատութեան համար ընկած
հերոսների եւ զինուորների համար:

ՂԱՄԱՐԵԱՆ

ՌՈՍՏՈՎ.— Սրտի խորքից ողջունում ենք ռայոնա-
կան ժողովը: Յայտնում ենք կատարեալ համերաշխու-
թիւն բոլոր հարցերի վճռին:

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՄԻՏԷ

ԲԱԳՈՒ.— Հ. Յ. Դաշնակցութեան աշակերտական
կոմիտէն ջերմապէս ողջունում է կուսակցութեան ա-
ռաջին ազատ ռայոնական ժողովը:

ԵՐԵՒԱՆ.— Հ. Յ. Դաշնակցութեան շրջանային ժո-
ղովը միաձայնութեամբ որոշեց խնդրել վճիռ անցկաց-
նել, որ կուսակցութեան յաջորդ ռայոնական ժողովը
հրաւիրւի Երեւանում:

ԿԻԵՒ.— Հ. Յ. Դաշնակցութեան Կիեւի ուսանողա-
կան կազմակերպութիւնը ի սրտէ ողջունում է իր սիրե-

լի ընկերներին, որոնք հաւաքել են առաջին ազատ ռա-
յոնական ժողովի այն կուսակցութեան, որ միշտ պաշտ-
պան է հանդիսացել հայրենի ժողովրդի շահերին: Թող
տենչանքի լուսով լուսաւորւի յօշոտած Հայաստանը,
որ ցողել է իր լաւագոյն զաւակների արիւնով:

ԲԱԼԱԽԱՆԻ.— Պատգամաւորների խորհրդի կազմի
մէջ մտնող Դաշնակցութեան պատգամաւորները ող-
ջունում են կուսակցութեան համագումարը եւ վստա-
հուութիւն են յայտնում, որ համագումարը որոշումներ
կը կայացնէ աշխատաւոր գիւղացիութեան եւ բանւոր-
ների շահերը պաշտպանելու ոգով: Մենք համոզւած
ենք, որ մեր կուսակցութիւնը բարձր կը պահի յեղափո-
խութեան դրօշակը, յիշելով, որ ազգային իղէալների
իրագործման լաւագոյն միջոցը մեծ յեղափոխութեան
լիակատար յաղթանակն է նրա ազատութեան, հաւա-
սարութեան եւ եղբայրութեան լօզունգներով:

ԿԻԵՒ.— Դաշնակցութեան ուսանողական կազմա-
կերպութիւնը ի սրտէ ողջունում է հայրենի ժողովրդի
շահերի պաշտպան կուսակցութեան առաջին ազատ
համագումարին հաւաքած թանկագին ընկերներին:
Թող երկար սպասւած լուսով լուսաւորւի իր լաւագոյն
զաւակների, ցարիզմի եւ սուլթանիզմի դէմ մարտնչող-
ների, մարդկութեան մեծ իղէալների ազատութեան,
հաւասարութեան եւ եղբայրութեան ախոյեանների ա-
րիւնով ներկւած Հայաստանը: Թող չքանան անիրաւու-
թեան եւ հալածանքի ծանր, մռայլ տարիները: Կեցցէ՛
յեղափոխական Ռուսաստանը, կեցցէ՛ ազատ Հայաս-
տանը, կեցցէ՛ Դաշնակցութիւնը:

«Հորիզոն», 14 Ապրիլ 1917, թիւ 75

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՀՈՐԻՉՈՆ»Ի

Հ.Յ.Դ. ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՑ ՅԵՏՈՅ

Թիֆլիս, 12 ապրիլի

Երկվերջացաւ Հ. Յ. Դաշնակցութեան ռայոնական ժողովը: Հինգ օր շարունակ քառասունից աւելի պատգամատորներ եւ մի քանի տասնեակ հրաւիրուած գործօն ընկերներ զբաղեցին օրակարգի խնդիրներով եւ ընդունեցին մի շարք բանաձեւեր, որոնց ի կատար ածելը պէտք է լինի մեր կուսակցութեան ընթացիկ գործունէութեան առարկան:

Բանաձեւերը խմբագրական մարմնի աշխատանքը վերջանալուց յետոյ կը տրուեն հրատարակութեան: Դաշնակցութիւնը այսուհետեւ որպէս լեզու՝ օրինական քաղաքական կուսակցութիւն՝ պէտք է աշխատել լայնօրէն տարածել ու ժողովրդականացնել իր որոշումներն ու սկզբունքները: Եւ հրատարակուած բանաձեւերից ընթերցողը կը տեսնի, թէ որքան կարեւոր վճիռներ են արձակուած եւ թէ ինչքան մեծ ջանք ու եռանդ պէտք է թափել նրանց իրագործման համար:

Դրուած հարցերը սուր էին եւ խիստ այժմէական: Եւ, բնականաբար, նրանց շուրջ տեղի ունեցան բուռն վեճեր ու կարծիքների բախումներ: Քաղաքական անպաստ պայմանների պատճառով հնարաւոր չէր եղել այդ հարցերը նախնական լայն քննութեան նիւթ դարձնել, ուստի եւ ռայոնական ժողովի նիստերը որոշուած ժամանակից աւելի տեւեցին: Սակայն ընդունուած բանաձեւերի շուրջ համախմբեցին գրեթէ բոլոր ձայները, եւ այն որոշումները, որոնք դրուած են ընկերների առջեւ, արդիւնք են բազմակողմանի քննադատութիւնների:

Ժողովում առանձնապէս շեշտուած էր այն հանգամանքը, որ իրերի բերումով կուսակցութիւնը իր ուժերի մեծագոյն մասը յատկացրել էր սահմանի միւս կողմի գործունէութեան: Դաշնակցական գործօն ուժերի խոշոր մասը զբաղուած էր տաճկահայկական դատով, եւ Կովկասը թողնուել էր երեսի վրայ: Դրանով է բացատրուում այն երեւոյթը, որ յեղափոխութեան առաջին եւ յաջորդ օրերին մեր կուսակցութիւնը չկարողացաւ ամէն տեղ եւ բոլոր գործերի մէջ իր դիրքն ունենալ: Դիշտ է, այս թերութիւնը շուտով ուղղուեց, մեր ընկերները արտակարգ եռանդով գործի կ'սկսէին, արագօրէն կազմակերպեցին հայ աշխատատեղերը եւ կուսակցութիւնը ամէն տեղ դրին իրեն վայել դիրքի վրայ: Բայց

փաստը մնում է փաստ. մեր կուսակցութիւնը հնարաւորութիւն չի ունեցել բաւարար չափով տեղական գործերով զբաղուելու:

Ռայոնական ժողովը աշխատանքի նոր բաժանում կատարեց եւ մի շարք կարեւոր վճիռներ արձակեց Կովկասի գործունէութեան համար: Կովկասեան աշխատատեղերի կազմակերպութիւնը եւ սոցիալիստական աշխատանքը մեր առաջին եւ հրամայական պարտականութիւնն է լինելու այսուհետեւ: Սոցիալիստական գաղափարների պրոպագանդը ժողովրդի մէջ եւ դասակարգային պայքարը – ահա մեր գործօն ընկերների զբաղմունքի գլխաւոր առարկան:

Ռայոնական ժողովին պատգամատորներ կային Անդրկովկասի բոլոր տեղերից: Եւ այսօր նրանք կը վերադառնան իրենց շրջանները՝ զինուած նոր որոշումներով, լեցուած նոր ուժով ու ոգեւորութեամբ: Կուսակցութեան առջեւ դրուած բոլոր այրող խնդիրները նրանց համար պարզ են այլեւս եւ գործունէութեան ուղին՝ յայտնի: Եւ կը մտնեն նրանք ժողովրդի մէջ, գիւղացիութեան ու բանտարանի առջեւ կը պարզեն այն գաղափարները, որոնք գրուած են մեր դրօշի վրայ, կը կազմակերպեն ամէն տեղ հայ աշխատատեղերը, որ ձեռք-ձեռքի տուած Ռուսաստանի աշխատատեղական քոյր տարրերի հետ՝ առաջ կը քայլեն դէպի քաղաքական ու տնտեսական ազատութեան լուսաւոր հորիզոնները:

Ներկայ ռայոնական ժողովը աւելի եւս ամրապնդեց Դաշնակցական մեծ ընտանիքը: Նրա անդամները աւելի մտերմական եւ ամուր կապերով կապեցին իրար հետ: Եւ յաջորդ անգամ, երբ նորից կը գան ժողովի, Դաշնակցութեան գործունէութիւնը աւելի փայլուն պատկեր կ'ունենայ եւ սոցիալիստական գաղափարները աւելի լայն ու խոր արմատացած կը լինին հայ աշխատատեղերի մէջ:

Մենք վառ հաւատքով ենք նայում լուսապայծառ ապագային եւ նոյն հաւատն ենք մաղթում իրենց վայրերը դարձող պատգամատոր ընկերներին:

«Հորիզոն», 12 Ապրիլ 1917, թիւ 73

Ա 5.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐ*

[23-24 Ապրիլ 1917]

1915 թ. Ապրիլ-Մայիս ամիսներու Վանի հայութեան հերոսական կռիւներու արդիւնքով ձեռք բերուած ինքնավարութեան կարճատեւ շրջանէ մը ետք, մինչեւ 1918 թ. Վասպուրականի հայութիւնը մէկէ աւելի անգամներ հարկադրուեցաւ հեռանալ եւ ապա վերադառնալ հայրենի բնօրրան, անշուշտ հետզհետէ նուազած թուաքանակով: 1917 թ. Փետրուարի ռուսական յեղաշրջումը անգամ մը եւս առիթ ընծայեց ինչպէս ընդհանուր հայութեան, նոյնպէս Վասպուրականի ժողովուրդին զգալի մէկ մասին, վերադառնալու ազատագրուած հայրենիք, զայն անգամ մը եւս շէնացնելու նպատակով: Այս առիթով, Վանի մէջ Ապրիլ 23-24ին գումարուեցաւ Հ.Յ.Դ. Վասպուրականի Շրջանային ժողովը: Երկօրեայ այդ ժողովին մանրամասն տեղեկատուութիւնը քաղուած է Երեւանի մէջ լոյս տեսնող «Աշխատանք» թերթի 1917 թ. Յունիս-Յուլիս թիւ 11, 12, 14, 16, 17 եւ 23 համարներէն:

Հ.Յ.Դ. Վասպուրականի Կ. կոմիտէի հրաւերով ապրիլ 23-24-ին տեղի ունեցաւ Վասպուրականի շրջանային ժողովը: Շրջաններու մէջ առհասարակ հարկ եղած կազմակերպութիւն չըլլալուն պատճառով՝ շրջանային ժողովը խորհրդակցական բնոյթ կը կրէր:

Ժողովին կը մասնակցէին՝
Վասպուրականի Կ. կոմիտէին 5 հոգի, Այգեստանի ենթակոմիտէին 5, Այգեստանի ընկերներէն 25, Քաղ[աքային] Միութեան եւ Բարեգործականի ընկեր ծառայողներէն 13, հրամանատար Համազասպ⁸ եւ իր 3 օգնականներ, հայկ. Ե. բանակի ընկերներէն 5:

Արուարձաններ՝
Աւանց, Լէսկ, Շահպաղի, Սղգա, Զրուանդանց, Դարմանգիւղ եւ Շուշանց 2-ական հոգի, Կողպանց, Տառուղ, Տօնի, Կոռուպաշ, Կենդանանց, Ծվստան եւ Արտամետ 1-ական հոգի:

Թիմար՝
Ալիւր 4 հոգի, Խաւենց, Տրլաշէն, Ատնականց, Պայրակ, Ամենաշատ, Քէօշանի, Սոսրաթ, Արտավէզ եւ Աղջավէրան 2-ական հոգի: Կէօլիւ, Շահգեալտի, Ծակտար, Անավանք, Եկմալ, Կիրաշէն, Էրէրին, Ամկուբերդ, Ճանիկ, Փիրկարիպ, Գոմս, Կիւսնենց եւ Կոճ 1-ական հոգի:

Բերկրի՝
Գործօթ 2 հոգի, Քէօշկ 1 հոգի:
Արճակ՝
Խառակոնիս, Քապապիկ եւ Սեւան 2-ական հոգի:

Արճակ, Նապաթ, Զարանց, Մանդան, Բողազքեասան եւ Հաշփշատ 1-ական հոգի:

Հայոց-Ձոր՝
Խարականց 2 հոգի, Աթանանց, Մարքս, Միւլք, Կզլտաշ, Կեմ, Քէօշկ, Խորգոմ, Կղզի, Անկշտանց, Խէք, Արատենց, Էրէմէրի, Աստուածաշէն, Նորգեղ եւ Հնդրստան 1-ական հոգի:

Խօշապ՝
Քոնէլ եւ Հիւրթիւկ 1-ական հոգի:
Շատարի՝

Թաղ 4 հոգի, Սեւտկին եւ Ծիծանց 2-ական հոգի, Անուսիկ, Բէօլս, Աշկանց, Կէօրանդաշտ, Կայնամէրան, Կաղազիզ, Կօռվանք-Կաղպի, Կաճեա եւ Արմշատ 1-ական հոգի:

Սոկացիներէն 2 հոգի, Կարկառցիներէն, Գաւաշցիներէն, Խիզանցիներէն, Բարվարցիներէն, Պիթիլիսցիներէն, Սպարկերտցիներէն եւ Ոզմեցիներէն 1-ական հոգի:

Ընդամէնը 160 հոգի:
Ա. նիստը սկսաւ ապրիլ 23-ի առաւօտեան. ընկեր Բարունակ⁹ ժողովը բանալով, ի միջի այլոց, ըսաւ հետեւեալը.—

«Հայ իրականութեան մէջ, ինչպէս վերջին քառորդ դարուն շարունակ, այնպէս ալ հիմա Հ. Յ. Դաշնակցութիւնն է, որ գլխաւոր յենարան եղած է մեր ցեղի գոյութեան. այդ կուսակցութեան բովէն անցած են գրեթէ ամէն կարգի համազգային բնաւորութիւն ունեցող հարցերն ու խնդիրները:

«Վասպուրականի իրականութեան մէջ մասնաւորապէս մեր կուսակցութիւնը կատարած է եզակի դեր եւ գրեթէ ամբողջ 27 տարի շարունակ երեք կանգ չէ առած:

*) Ծ. Խ.— Նիւթերու առատութեան պատճառով, այժմ միայն հնարաւորութիւն ունինք Վասպուրականի Հ. Յ. Դաշնակցութեան շրջանային ժողովներու արձանագրութեանց ամփոփումը տալ:

8.- Համազասպ Սրուանձտեանց (1873-1921):
9.- Բարունակ Կապուտիկեան (1888-1918):

«Անցեալ տարի, ինչպէս գիտէք, դարձեալ ունեցանք այսպիսի շրջանային ժողով մը, բայց գաղտնի, որովհետեւ այն ատեն շրջապատուած էինք ներքին եւ արտաքին թշնամիներով: այժմ չկան այդ թշնամիները: ուղևորական մեծ յեղաշրջման ալիքները մեզի ալ հասան եւ այսօր Վասպուրականի Դաշնակցութեան ղեկավար մարմինը հնարաւորութիւն ունի ազատ կերպով գումարել այս ժողովը, որ պիտի զբաղուի ոչ թէ զանազան տեսական եւ սկզբունքային հարցերով, այլ միմիայն մեր առօրեայ հրամայողական պահանջներու քննութեամբ:

«Մի մոռնաք ընկերներ, որ մենք կոչուած ենք յառաջ տանելու սերունդէ սերունդ կտակուած սրբազան գործ մը, որու համար տուած ենք անթիւ եւ անսահման զոհեր: Ի՞նչպէս կարող ենք ըրոյ՞ք մը իսկ մտահան ընել, որ երբեմն շրջանային մեր այս ժողովին՝ պատգամաւորներ կու գային Շատախէն Յովսէփ Չոլոյեան, Միհրան Տ. Մարգարեան եւ Գիւլամիր՝ Հայոց-Չորէն՝ Յովսէփ Խլղաթեան, Գաւաշէն՝ Ռաֆայէլ, Միհրան Չաթոյեան եւ Աբրոն, իսկ Լեւոնապարի միւս շրջաններէն Ոգմեցի Լաթոն, Յովսէփ, Գալուստ եւ Կարճկանցի Վարդան, Թիմարէն Աբիսողոմ եւ Սարգիս, Արճակէն Տուրան եւ ուրիշներ: Ի՞նչպէս կրնանք չզգալ հոս ներկայութիւնը մեր մեծ ուսուցիչներուն — Վուսմեան, Իշխան, Սարգիս, Միհրան Թերլէմէզեան — որոնք միշտ գրաւած կ'ըլլային նախագահական աթոռները: Այժմ չկան անոնք, յոտնկայս յարգենք անոնց անմեռ յիշատակը (ժողովականները ոտքի կը կանգնին): Մենք թէեւ գաճաճ յաջորդներն ենք անոնց, անկարող ամբողջ հատուածի մը եւ մեր շրջանի կուսակցութեան պատասխանատուութիւնը մեր վրայ առնելու, բայց դարձեալ այնքան մեծ է մեր ժողովրդի տառապանքը եւ այնքան քիչ են մեր շրջանին մէջ որակով եւ քանակով հասարակական գործիչները, որ համարձակութիւն ունեցած ենք ասպարէզ գալու եւ թոյլ չտալու, որ անոնց քարոզած սկզբունքները եւ գաղափարական սերմերը ապառաժներու վրայ մնան անպտուղ»:

Ժողովը ապա անցաւ օրակարգերուն.—
1) Դիւանի ընտրութիւն:
2) Պարապմունքներ եւ նիստեր,
3) Զեկուցումներ շրջաններէն

1) Քուէարկութեամբ նախագահներ ընտրուեցան ընկերներ Գրիգոր Պուլկարացի¹⁰ եւ Արմենակ Մաքսապետեան, իսկ քարտուղարներ Բարունակ Կապուտիկեան եւ Մարգար Սոսոյեան:

2) Որոշուեցաւ ունենալ չորս նիստ, իւրաքանչիւր նիստի տեւողութիւնը չորս ժամ: Օրակարգի նիւթերը բաշխուեցան ընկերներու վրայ, որպէսզի հարցերու քննութենէն առաջ լսուեն ատոնց շուրջ լուսաբանութեան համար զեկուցումներ:

3) Այնուհետեւ ժողովը անցաւ շրջաններու զեկուցումները լսելու, որու հակիրճ ամփոփումը հետեւեալն է.—

Ա. Ընկեր Ա. Մաքսապետեան պատկերացուց Ապաղա-Բերկրիի արդի կացութիւնը: Զեկուցողի կարծիքով այդ շրջանները բացի անկէ որ մէկ մասով հայաբնակ են եւ հայերուն կը պատկանին իրաւաբանօրէն, աշխարհագրական տեսակէտով ալ մեծ դեր ունին կատարելու Վասպուրականը Կովկասին կապելու ձեռնարկին մէջ: Այս տարի հոն կ'ապրին 42 ընտանիքներու ներկայացուցիչներ, իսկ Բերկրիի հովիտը այժմ ունի 400 անձ, բացառապէս տղամարդիկ: Բերկրի-Ապաղան երեք կողմերով շրջապատուած են քիւրդերէն: Կոպ-Մէհմէդի որդին Պէտրի-պէկը բազմաթիւ քիւրդեր բերել տուած է Պարսկաստանէն եւ բնակեցուցած է Տէրոյ, Սընտ, Զիբուխի, Եկմալ գիւղերու շրջանին մէջ, իսկ դէպի Նազարվա եղած տարածութեան վրայ աւելի խիտ կ'ապրին թէ տեղացի եւ թէ զանազան շրջաններէն եկող փախըստական քիւրդեր:

Անցեալ տարի, մասնաւորաբար Բերկրիի շրջանին մէջ, բաւական չքաղուած արտեր կային, որոնցմով կ'ապրէր ազգաբնակչութիւնը, բայց այս տարի, մասնաւորապէս Ապաղան, բոլորովին սոված վիճակի մէջ մնացած է, բաշխուած է իրենց 3000 ր. դրամ, որով անոնք իրենց համար սերմացու պէտք էր գնէին եւ ցանէին: Զօրքի ներկայութիւնը Ապաղայի դաշտի երկու գիւղերու եւ Բերկրիի հովտի, Բերկրիի Պատիկ գիւղի եւ Գործօթ գիւղերուն մէջ՝ պատճառ դարձած է, որ անխնայ տուները ոչնչացուին եւ փայտերը վառելիքի ծառայեցուին: Գործօթի մէջ պահուած ցորենի հորերը թալանուած են, զինուորականութեան եղած դիմումները ոչ մէկ հետեւանք ունեցած են»:

Զեկուցողի կարծիքով Ապաղայի եւ Բերկրիի հայերը տեղւոյն վրայ հաստատ պահելու համար հարկաւոր են 1) ինքնապաշտպանութեան միջոցներ հայթայթել, 2) լայն օժանդակութիւն ցուցնել վարուցանքսի եւ ուստեստի համար, 3) զանազան շրջաններու հայերը՝ թէկուզ ժամանակաւորապէս, բերել եւ հաստատել այդ շրջաններու մէջ:

Բ. Արճակի շրջանի մասին տեղեկութիւններ տուին ընկերներ Պողոզքասանցի Աւագ, Սերոբ Տ. Յարութիւնեան, Խառակոնիսցի Անդրան եւ ի վերջոյ Գիւղատնտեսականի հրահանգիչ ընկեր Պարգեւ Պանիրեանը:

Աչնան ցանքսը առհասարակ ապարդիւն մնացած է, որովհետեւ սերմացու ցորենը փճացած է եղեր. եղած ցանքսն ալ շատ տեղեր զինուորներ կը կերցնեն. քիւրդական մշտական վտանգի տակ են Հասպատան, Պողոզքասան, Ազարէն եւ Առտնիկ, ինչպէս նաեւ Սեւան,

10.- Կեօզեան Գրիգոր (1878-1922):

Լիմ եւ Զարանց գիւղերը:

Ընկերութիւններէն այս գարնան համար թէեւ սերմացու գնուած է, բայց քանակը շատ չնչին է:

Գ. Թիմարի կացութեան մասին զեկուցում տուին ընկերներ Սիրուն, Գալուստ Մարվէլեան, Գամէր, Արշակ, Վարդգէս եւ Դաւիթ (Կոճա):

Գիւղերէն մաս մը նպաստ ստացած են եւ մաս մը ոչ, շատերը մասնաւորաբար նոր վերադարձողները՝ լրծկաններ չունին, հողի պակասութիւնը զգալի է Ալիւր եւ Խաւենց գիւղերու մէջ, իսկ ջուրի անհրաժեշտ կարիք ունին Խփիչկ, Քէօջանի եւ Էրէրին:

Ալիւր գիւղի Բարեգործականի պահեստէն, հեռաւորութեան պատճառով Կիւսնենց գիւղէն դէպի արեւելք գտնուող գիւղերը չեն կրնար օգտուիլ:

Գիւղերու մէջ պահանջի համեմատութեամբ, երկաթեայ գուլթաններ շատ քիչ կան. մէկ գուլթան տրուած է 6-7 ընտանիքի եւ այդ պատճառով ալ կռուածադիկի պատճառ դարձած է, իսկ շատերը այդ գուլթաններէն ալ օգտուելու իրաւունք չունին:

Ճամբու վրայ գտնուած գիւղերու տուները բոլորովին քարուքանդ եղած են, ինչպէս Շահ-գեալդի, Կէօլիւայս երկու գիւղերէն բացի առանձնապէս օգնութեան կարօտ են Ատնականց, Մարմետ եւ Պայրակ գիւղերը:

Նախապէս հաստատուածները բաւական ցանքս կատարած են, որով առաջիկայ հունձքին սպասածէն աւելի կարող է արդիւնաւոր ըլլալ:

Դ. Արուարձաններու վիճակի մասին խօսեցին ընկերներ Սենքերիմ, Մարտիրոս Կեմիչեան, Տէր Ստեփան, Նշան Ղազարեան, Սամուէլ Պուրուզեան, Սահակ Տ. Մարտիրոսեան եւ Կուռուպաչցի Բաղդոն:

Բոլորն ալ իրենց զեկուցումներով կը շեշտէին գինւորներու պատճառած աւերներու մասին, տուներու քանդում (Աւանց, Շուշանց, Կուռուպաչ, Արտամետ), ծառերու կտրտումը – Աւանց, Արտամետ, խոտերու յափշտակութիւն, ցանքսերը կերցնել եւ այդպիսի փճացնել – Շահպաղի, Սղգայ, Կուռուպաչ:

Դպրոցներու նորոգութեան եւ լինութեան պէտքը ցուցուցին Լէսկ, Շահպաղի եւ Սղգայ գիւղերուն մէջ:

Ցանքսը՝ բացի հարաւային կողմ գտնուած արուարձաններէն, բաւական կատարուած է թէ աշնան եւ թէ գարնան, բայց մատնանշուեցաւ դարձեալ լծկանի եւ գուլթանի պակասը:

Ե. Վարի Հայոց-Ձորի մասին զեկուցում տուաւ ընկեր Փանոս Շաղոյեան, որմէ վերջ քանի մը լրացումներ ըրաւ ընկեր Օհաննէս Քէօշկեցին: Պարբերաբար նահանջներուն ինչպէս գիտէք, ամէնէն աւելի ենթակայ եղաւ Հայոց-Ձորը եւ մեր շրջանը մեծապէս տուժեց: Այժմ քանի մը գիւղերէն զատ, մնացեալները քիչ քանակութեամբ տղամարդ բնակիչներ ունին. աշնան ցանքսը շատ անբաւարար է. գարնան ալ շատ քիչ սերմացու

ստացանք: Լծկանները առհասարակ ծախուեցան եւ սատկեցան, ոմանք ալ ետ տուին Կովկաս անցնելու եւ պահել չկրնալու պատճառով: Ոստան գտնուող բանակի ձիերը կը փճացնեն ցանքսեր եւ խոհանոցներ:

Շամիրամի առուն թէեւ հանուեցաւ, բայց անոր կից փոքրիկ առուններ կան գետի հիւսիսային կողմ, առանց ատոնց մաքրութեան Շամիրամի ջուրէն օգտուիլ դժուար է, իսկ այժմեայ խիստ սակաւաթիւ բնակիչները հասկնալի է, որ իրենց միջոցներով մաքրել չեն կարող:

Զ. Ընկեր Թադէոս եւ Մարտիրոս խօսեցին վերի Հայոց-Ձորի մասին, շեշտեցին շրջակայքի մէջ բնակուող քիւրդերու պատճառով ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը: Ընտանիքներ գրեթէ չկան. կատարուած ցանքսը շատ չնչին է. լծկան բոլորովին չունինք. չգիտենք նոյնիսկ թէ ինչպէս պիտի կրնանք ցորենը դաշտէն կալատեղ փոխադրել: Ամէն գիւղը առաւել կամ նուազ չափով առուններու մաքրութեան պէտք ունի, առանց որուն ցանքսերը պիտի չորնան:

Հայոց-Ձորի գիւղատնտեսականի հրահանգիչ ընկեր Տիգրան Մելքոնեանը տուաւ քանի մը լրացուցիչ բացատրութիւններ Հայոց-Ձորի մասին: Հայոց-Ձորի գիւղերէն 37-ը բնակիչներ ունին, որոնց թիւը ներկայիս կը հասնի 934 անձի. այս թիւի մէկ մասը ինչպէս յայտնի է ոչ բնիկներ են. շատախցի, մոկալցի, նորատուգցի եւ դաւաչցի. կան նաեւ բնիկ 20-35 տուն ասորիներ. փոխ-յարաբերութիւնները բնիկներու եւ եկուորներու միջեւ լաւ չէ, Յեղափոխութենէն ետք գինուորները դարձած են աւելի անկարգապահ: Վերին Հայոց-Ձորի եւ Տօնի մէջ տեղացիներու բարեկամեցողութեամբ քիւրդեր հաստատուած են, իբր թէ իրենց գիւղատնտեսական աշխատանքներուն օժանդակելու համար:

Է. Խոշապի Քուէլ գիւղացի Մարգար խօսեցաւ նոյն շրջանի հայաբնակ գիւղերու մասին (Ակրակ, Հիւրթիւկ, Քուէլ եւն.), եւ յայտնեց որ շինութիւնները քարուքանդ եղած են, աշնան ցանքս չէ կատարուած, գարնանը նմանապէս, ապահովութիւնը բոլորովին չկայ. ինչպէս գիտէք քիւրդերէն շրջապատուած ենք. քիւրդերը ոչ թէ մեզ, այլ սկսած են գիրար թալնել. եթէ մեզ ինքնապաշտպանութեան միջոցներ եւ ապրուստի տարրական դիւրութիւններ չտրուին՝ պարտաւորուած կը թողունք կու գանք:

Ը. Սեւակնցի ընկեր Յակոբը տեղեկութիւններ տուաւ Շատախցիներու վիճակի մասին: Անցեալ գարնան Շատախցիները հաստատուած էին Քերծ, Հիրծ, Խոսպ, Վերի եւ Վարի Բժնկերտ ու Քալբալասան գիւղերուն մէջ: Աշնան հնարաւոր եղաւ կատարուած ցանքսը հաւաքել, իսկ Փեսանդաշտի մէջ կատարուած ցանքսը ինչպէս յայտնի է ամառուայ նահանջի հետեւանքով քիւրդերը վերցուցին:

Մինչեւ նոյեմբերի նահանջը, շատախցիներու վիճա-

կը տանելի էր, իսկ նահանջի հետեւանքով գիւղերը անխնայ թալանուեցան, ժողովուրդը ցիրուցան եղաւ, մաս մը տեղաւորուեցան քաղաքի, մաս մըն ալ Լէսկի եւ Թիմարի գիւղերուն մէջ անկէ ետք Շատախցիները հարկադրուեցան ուսեստի չգոյութեան պատճառով, իրենց անասունները ծախել, ոմանց անասուններն ալ գինուորներէն գողցուեցաւ: Ձմեռուայ մէկ երկու ամիսներուն Քաղաք Միութեան տուած ամէնօրեայ ճաշը բազմաթիւ ընտանիքները սովամահուածութենէ փրկեց:

Վերջերս թէեւ թոյլատրուած է երթալ բնակիլ Հայոց-Ձոր, բայց դեռ քչերը գացած են: Գարնան շատ քիչ կարելի եղաւ ցանել:

Թ. Դանիէլ վարդապետը տեղեկութիւններ տուաւ Գաւաչի ժողովրդեան մասին որով թիւը 300-էն չ'անցնիր, կ'ապրին Հայկավանք, Աւանց եւ Խըտրը: Վերջերս մաս մըն ալ տեղակայուած է Հայոց-Ձորի Քէօշկ եւ Խորգոմ գիւղերը: նորեկները 100 հոգի կ'ըլլան անհրաժեշտ պէտք ունին սերմի եւ լծկանի:

Այս առթիւ խօսեցաւ նաեւ Խիզանցիներու, Մոկացիներու եւ Կարկառցիներու մասին, որոնց ոչ հող է տրուած եւ ոչ ալ սերմացու կամ լծկան:

Ժ. Ընկեր Լեւոն Կոստյեանը պատկերացնելով Քաղաքամէջի կացութիւնը՝ յայտնեց որ շատ յուսահատական տեսք ունի այժմ քաղաքը, տունները անխնայ քանդուած են, բնիկները 15 տուն կը կազմեն, մնացեալները զանազան վայրերէն եկած գիւղացիներ են:

ԺԱ. Ի վերջոյ ընկեր Բարունակը Այգեստանի մասին ըսաւ հետեւեալը.— Ինչ որ տուններու քանդման եւ այգիներու փճացման մասին է, ես խօսուածներու վրայ միայն այն կ'աւելցնեմ, որ Այգեստանի վերաբերմամբ ատոնք կատարուած են ահռելի չափերով եւ անխնայ, որովհետեւ զօրքի ստուար մեծամասնութիւնը իր ձիերով հոս տեղաւորուած է. ինչ որ այժմ հեռացուած կարողաւորներու սանձարձակութեան կը վերաբերի, այդ մասին ալ նոր բան չեմ կրնար ըսել ձեզ: Այգեստանի մէջ այժմ կ'ապրին 700-ի մօտ բնիկներ, մեծ մասը տղամարդիկ են, որոնք գրեթէ իրենց անհատական նախաձեռնութեամբ կը պարապին առեւտուրով եւ արհեստներով. սկզբէն ի վեր հոս ունեցած ենք կազմակերպուած ընկերներ, որոնց թիւը նահանջներու ընթացքին, ինչպէս նաեւ ասկէ առաջ եւ յետոյ բարձրացած իջած է անդադար: Վերջերս կազմակերպուողներու թիւը օրը օրին կը շատնայ: Խոլմբեր ունինք նաեւ Սղգայի, Լէսկի, Շահբաղիի եւ Աւանուց մէջ, որոնք բոլորն ալ գրեթէ սկսած են տալ կանոնաւորապէս իրենց անդամավճարները: Վերջերս վերաբացուած «Ազատութեան լոյս» գրադարան-ընթերցարանի համար կազմուեցաւ առանձին վարչութիւն մը, որ զանազան միջոցներով հաւաքեց մօտ 1200 ռ[ուբլի]: Աշխատած ենք նաեւ «Աշխատանք»ի տարածման, բացի իր բաժանորդներէն, 900

ր-ի մօտ ալ դրամ է հաւաքուած Ֆոնդի օգտին: Սիպերիա գտնուած գերիներուն ալ օգնելու համար 1100-ի մօտ դրամ հանգանակուած եւ ղրկուած է «Աշխատանք»ին՝ նպատակին գործադրելու համար:

Իսկ քաղաքի դպրոցը, որ բացաւ «Կ. Բարեգործ Ընկերութիւն»ը, ձմեռուայ ընթացքին, ունեցաւ 229 աշակերտ, մեծագոյն մասը ոչ տեղացիներէ. այժմ այդ թիւը իջած է 125-ի:

Քաղաքի մէջ գործող ընկերութիւններու մասին իր հերթին պիտի խօսուի արդէն:

Բ. ՆԻՍ

Օրակարգ

- 1.- Ձեկուցում Կեդր. կոմիտէի,
- 2.- Ձեկուցում Վանի շրջանային վարչութեան,
- 3.- «Աշխատանք» թերթ. դիտողութիւններ եւ առաջարկներ:

Երկրորդ նիստը սկսաւ նոյն օր երեկոյեան ժամը 4-1/2ին: Ընկեր Բարունակը տուաւ խիստ ամփոփ համարատուութիւն մը Վասպուրականի Կ. կոմիտէի տարի ու կէսուայ գործունէութեան մասին:

— «Կ. կոմիտէի գործունէութիւնը այս տարի ու կէսուայ ընթացքին եղած է շատ բազմակողմանի. տարբեր ալ չէր կրնար ըլլալ, քանի որ մեր իրականութեան մէջ,¹¹ կուսակցութեան ղեկավար մարմինը ձեռնարկած էր յաճախ ամէն տեսակի գործունէութեան ձեռնամուկ ըլլալ:

Ամէնէն առաջ ժողովրդական ինքնապաշտպանութեան խնդիրը մեր շրջանի համար ունէր բացառիկ նշանակութիւն: Ուստի ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին մեծ գարկ տուած ենք՝ յատկապէս Ապաղայի, Արճակի շրջանների մասի, խոշապցի հայերու, նաեւ՝ Հայոց-Ձորի բնակիչներու գինման:

Անցեալ աշնան Հայոց-Ձորի մէջ ունէինք երեք խումբեր, որոնց պաշտպանութեամբ եւ թալանջի Քիւրտերու յարձակումները սանձահարելով միայն կարելի եղաւ կատարել դաշտային աշխատանքները: Այդ խումբերն եղան, որ տեղացի միւս ընկերներու հետ մէկտեղ, նոյեմբերեան նահանջին, երկու կէս օրուայ հերոսական կռիւներէն ետք, բնակչութիւնը իր անասուններով կրցան քաղաք տեղափոխել անվնաս:

Երկու պարբերական նահանջներու ընթացքին մենք խրատուած անցեալի դառն փորձերէն, նպատակ ունեցած ենք, ի գին ամէն գոհողութեան, երկիրը մնալ, չափուի անգամ մը թշնամի ուժին հետ, յետոյ միայն նահանջի ճամբան բռնել, եթէ այդ անխուսափելի դառնար:

11.- Անրճիւնի երկու բառ:

երկու նահանջներու պարագային ալ մեր դիրքը շատ արդիւնաւէտ եղաւ: Ամառուայ նահանջին երկիր մնալով հասկցանք Վորոնովի հայասպան խաղի նշանակութիւնը եւ կեղծիքը երեւան հանելէն ետք, ժողովուրդը կրկին երկիրը բերինք: Իսկ Բ. նահանջին, կողք կողքի կռուելով ռուսական բանակին հետ, կեցուցինք ժողովրդական խուճապը, մինչեւ որ թշնամին Այգեստանի պատերու առջեւէն նահանջեց Հայոց-Ձոր:

Ունեցած ենք կարեւոր մասնակցութիւն ռազմականներու մէջ, թէ անցեալ ամռայ նահանջէն առաջ՝ հետախուզելով Մոկսն ու Շատախը եւ թէ առաւելապէս նոյեմբերեան նահանջէն ետք, որ ընդ մէջ Վերին եւ Վարի Հայոց-Ձորերը: Ոստանի վերագրաւման ատեն մեր ընկերները ուղեցոյցի եւ օժանդակի դեր կը կատարէին, իսկ դէպի Սոչապ եղած արշաւանքներուն մասնակցելով, թէեւ տուինք 6 զոհ, բայց ատոր հետեւանքը այն եղաւ, որ զգալի հարուած ստացան բարեկամի քողին տակ ամուր ծածկուած քիւրդերը:

Ռազմականներուն¹² մասնակցած են մեր ընկերները կռուակցութեան միջոցներով, կառավարութիւնը ռեւէ օժանդակութիւն չէ ցուցուցած. ատկէ զատ յաճախ գտնուած ենք վատ դրութեան մէջ, շատ անգամ ռուս ղեկավարներու բռնած ընթացքին պատճառով: Շրջանապետ Տերմէնի ժամանակը քաղաքացիական իշխանութեան վերաբերմունքը բարեհաճ էր դէպի հայերը, իսկ զինուորականութեանը յանձին գեներալ Վորոնովի, ուղղակի թշնամական. անկէ ետք զինուորականները դարձան շատ բարեացակամ, մինչդեռ ատոր հակառակ քաղաքացիական իշխանութիւնը, երեւի հին կառավարութեան վերի հրահանգով, սկսաւ վերին աստիճանի հակահայ ընթացք ցուցնել. պատահած են դէպքեր, երբ կռիւէն վերադարձող հայ զինուորը զինաթափ եղած է չինովիկներէն: Երկու նահանջներու ընթացքին ալ, թէ չինովիկները ու կարաղաւոններ եւ թէ կամենդանները հարիւրաւոր գէնքեր խլած են հայերու ձեռքէն:

Ռազմականային մասնակցելու կարեւոր եւ հիմնական պատճառներէն էին նաեւ հետեւեալները. 1) Մենք պարտաւոր էինք մեր ունեցած ուժեր տրամադրել, երբ այս կամ այն զինուորական ղեկավարը պէտք կը տեսնար տեղացիներու օժանդակութեանը, 2) Յստակ գաղափար կարելի էր կազմել թշնամի քիւրդ ուժերու մասին, որոնք չըջապատած են մեզ եւ միշտ կը սպառնան մեր գոյութեանը, 3) Կը բանայինք ռուսներու աչքերը ճանչցնելու համար թէ ո՞վ է բարեկամ իրենց այս երկրին մէջ եւ ո՞վ թշնամին:

Կ. կոմիտէն ունեցած է նաեւ իր գործօն մասնակցութիւնը Վասպի չըջանի մէջ գործող ընկերութիւններու վերաշինական աշխատանքներուն: Ընկերութիւններու լիազօրները թէ Քաղ. Մ[իութեան], թէ Գիւղատնտեսականի, թէ Տատեանեան կոմիտէի եւ թէ Բարեգործակա-

նի, երկրի մէջ ուրիշ համապատասխան տարրեր չգտնելով, մեզ հետ միայն խորհրդակցած են այս կամ այն ձեռնարկի առթիւ. ինչպէս նաեւ յաճախ մեր ցուցմունքներով առաջնորդուած են: Նպաստի, հագուստի, սերմացուի եւ գործիքներու բաշխման եւ թէ կարգ մը ջրանցքերու մաքրութեան գործերուն մէջ նշանակովի դեր ունեցած են մեր ընկերները:

Մշտական եւ կանոնաւոր յարաբերութեան մէջ եղած ենք Երեւանի եւ Թիֆլիսի ընկերներու հետ. տուած ենք մանրամասն եւ լիակատար տեղեկութիւններ երկրի կացութեան մասին, ստացած ենք անոնցմէ նիւթական օժանդակութիւն եւ հարկ եղած ցուցմունքներ մեր ընկերներու վերաբերեալ:

Մինչ այժմեայ գործունէութիւնը, եղած է անուղղակի եւ քողի տակ, տիրող հայահալած քաղաքականութեան պատճառով, իսկ ասկէ ետք տեղիս ժամանակաւոր վարչութեան մէջն ալ պատասխանատու դեր ստանձնելով՝ բնականաբար աւելի պիտի կարելի ըլլայ ծառայել մեր ժողովրդին ու հայրենիքին»:

Ընկեր Գրիգոր Պուլղարացին գեկուցումէն ետք տուաւ քանի մը լրացուցիչ բացատրութիւններ:

— «Առաջի երկրաքանդ նահանջէն ետք, պարզ եղաւ որ ռուս կառավարութիւնը նպատակ ունէր չթողուլ, որ հայը մնայ իր բնիկ երկրին մէջ, այդ նպատակին հասնելու համար անիկա ամէն ներքի եւ աններքի միջոցներու դիմեց: Երբ մեր ընկեր Արամը Վանի Բ. նահանջէն ետք հրաման ուղեց Գ. անգամ Վան գալու՝ մերժուեցաւ, որովհետեւ ռուս կառավարութիւնը առաջին քայլին եթէ պարտաւորուած էր անպատճառ հայերու մասնակցութիւնը ընդունել մեր հայրենիքը կառավարելու գործին մէջ, ապա հարկաւոր էր որակով եւ քանակով թոյլ հոսանք մը գտնել իր յենարանը շինելու համար. եւ չըջանապէս Տէրմէն միլիցիայի մը ուղեկցութեամբ երկիրը մտաւ. քանի մը ամիս ետք մենք ալ փոքր խմբով մը երկիրը եկանք: Շատ չանցած այդ միլիցիան երեւան հանեց իր բովանդակ անընդունակութիւնը այդպիսի գործ մը վարելու համար: Տէրմէնը ըմբռնելով այդ, միլիցիայի գոյութիւնը աւելորդ համարեց: Եկաւ յուլիսեան, բոլորովին շինծու եւ հայասպան նահանջը. այն ատեն այս հարցը առաջ եկաւ մեր մէջ, — եթէ իրական նահանջ է, ետքը կ'երթանք, իսկ եթէ քանի մը քիւրդեր են մեզ վրայ եկողները, պէտք է մնալ եւ պաշտպանուիլ. դիմեցինք գեներալ Վորոնովին գէնք ստանալու, որմէ բացարձակապէս մերժուեցանք. անկէ զատ անիկա յայտարարեց որ հայերու մօտ գտնուած գէնքերն ալ պիտի գրաւուին. չըջանապէս Տէրմէնը սակայն ընդունեց հայերու դիմումը, գէնք տուաւ եւ մենք յաջողեցանք կազմել 150 հոգիէ բաղկացեալ երկրապահ

12.- Ռազմական – թշնամիին զինուորական շարժումները լրրտեսելու հետախուզական միաւոր:



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

խումբ մը, որոնք մէկ կարեւոր մասը Բերկրի ղրկեցինք նահանջի գիծը անվտանգ պահելու համար: Վորոնովը սակայն հրամայեց որ բնակչութիւնը անպատճառ դուրս գայ քաղաքէն: Հարկադրուեցանք մեր խումբի մեծ մասը ուղարկել Ճանիկ, մնացածներս դեռ սպասեցինք քաղաք, տեսանք որ ժողովուրդը նահանջի ճամբան բռնած է արդէն, որովհետեւ շատերը, նոյնիսկ մեր ընկերներէն, ունեցան այն տեսակէտը, թէ ժողովուրդը երկիր պահել այսպիսի պայմաններու մէջ, նպատակաշարժար չէ, պէտք է անցնիլ Կովկաս, մինչեւ դրութիւնը ճշգրտուի, բայց Կ. կոմիտէն պնդեց եւ յայտարարեց, որ եթէ հայ մը իսկ մնայ, պէտք է թողուլ, որ այս երկիրը, թէկուզ ժամանակաւորապէս դատարկուի, այդպէս անկասկած մնացինք մեր որոշումին վրայ: Վորոնովեան նահանջախաղի դիմակը պատուեցաւ, զինուորական վերին հրամանատարութենէն ազդարարուեցաւ ազգաբնակչութիւնը երկիր վերադարձնել եւ մենք ալ ձեռնարկեցինք մաս առ մաս ժողովուրդը ետ բերել դէպի իր հայրենիքը:

«Նահանջէն ետք Հայոց-Ձորը բնակչութեամբ լեցնելը, նոյնիսկ բանակի գծէն դուրս, այն համոզում յառաջ բերաւ ռուսներուն մէջ, որ եթէ լուրջ թշնամական ուժ չըլլայ, հայերը ռեւէ գնով այս երկիրը թողնելու կողմնակից չեն. ոչ մէկ արգելք մեզ չվատեցուց եւ մենք՝ այս երկիր մնալու, տնտեսութիւնը վերստեղծելու, եւ տասնեակ հազարաւոր ժողովուրդը իր մայր հողին հետ կապած պահելու նպատակին մէջ, յաջողեցանք:

«Ռազմի տեղանքներուն մասնակցելով, մենք ի միջի այլոց հասկցուցինք ռուսներուն թէ առանց տեղացի ժողովուրդին անոնք ոչինչ պիտի կրնան ընել. մեր գլխաւոր նպատակն էր, որ ռուսները դադրէին արհամարհելէ տեղացիներու մարտական արժանիքները. անոնք ուղեցին զինաթափ ընել մեզ, եւ քիւրդերը թողուլ զինուած. Կ. կոմիտէն կը մտածէր հակազդել այդ մտայնութեանը եւ ատոր միջոցներէն մէկը գտանք ռազմի տեղանքներուն մասնակցելը:

«Վերջին նահանջին եթէ ժողովուրդը ճանիկէն անդին չանցաւ եւ կրկին եկաւ վերահաստատուելու իր տան ու տեղին վրայ, այդ՝ շնորհիւ մեր կանխարգել միջոցներուն էր եւ մեր գործօն մասնակցութեանը՝ Վանի շուրջ տեղի ունեցած կռիւներուն մէջ»:

2) Զեկուցում Վանի շրջանային վարչութեան:

Վանի նորակազմ շրջանային վարչութեան նախագահ՝ ընկ. Կաստեա Համբարձումեանը տուաւ հետեւեալ զեկուցումը.—

«Ռուսաստանի ներքին կեանքի մէջ յառաջ եկած փոփոխութիւնը ամէնքիդ էլ յայտնի է: Այս երկրումն էլ հին կառավարութիւնը իր հին եւ փտած մեթոդն էր կիրառել, վերելի մատն էր որ կը տիրապետէր. յեղափոխութիւնը այդ կառավարութիւնը լուծեց, այստեղ էլ

զինուորները մի ներկայացուցչական մարմին կազմուեց, միաժամանակ կազմուեց եւ մի տեղական մարմին՝ տեղումս գործող ընկերութիւնների ներկայացուցիչներից ու քաղաքի եւ գաւառի ընտրեալներից. տեղս հասնող կամիսարները սանկցիա տուին այդ մարմիններին, որոնց միացումից — զինուորական կոմիտէից չորս ներկայացուցիչներ մասնակցել սկսեցին քաղաքացիական կազմին — ձեւակերպուեց Վանի շրջանի առժամանակեայ գործադիր մարմինը:

«Այդ կոմիտէն իսկոյն ձեռնարկեց հին պաշտօնեաների գործերը լիկվիտացիայի ենթարկելու. գործի կէսը արդէն կատարել է իսկ մնացեալը մի քանի օրից վերջացնում ենք: Ստացուած գումարների մէջ կան նպաստի յատկացուելիք փողեր, նոյնպէս եւ սերմացուի յատկացուելիք մի գումար: Ժողովուրդը ցայժմ հեռու էր պահուած այդ գործերից, հայ ոչ մի պաշտօնեայ, ոչ իսկ թարգման, չընդունուեց կառավարչական կազմին մէջ, այսպէս էր հրահանգուել իրենց:

«Լիկվիտացիայից յետոյ շրջանային վարչութեան գործը եղել է միլիցիայի կազմութեան ձեռնարկը, որոշուել է զինուոր գտնուած վայրերում 1/4-ը զինուորներից առնել, իսկ 3/4-ը-ը ազգաբնակչութիւնից:

«Երրորդ հարցը պիտի լինի երկրում ստեղծել մի կառավարութիւն, գործը սկզբից սխալ հիմքերի վրայ չդրնելու համար՝ հարկ է գողոյ լինել պաշտօնեաների ընտրութեան մէջ. գաւառներում պէտք է լինին գաւառական վարչութիւնները, իսկ այստեղ շրջանային վարչութեան կից պէտք է կազմել տնտեսական, փախստական եւ դատական մարմիններ. նորստեղծ կառավարութեան հիմքը պէտք է սկսել վարից, ոչ թէ վերելից, ժողովրդից վերցնելու է ձեռնհաս մարդիկ, որոնք ընկերանալով ոչ տեղացի համապատասխան կարող մարդոց հետ գործը պէտք է վարեն»:

Ընկեր զեկուցողը յետոյ խօսեց ջրանցքներու նորոգման համար գործ դրուած աշխատանքներու, ինչպէս նաեւ տուներու քանդման, այգիներու փճացման եւ խոտերու գրաւման պատճառով ազգաբնակչութեան եղած մէկ միլիոնի հասնող ահռելի կորուստի մասին, ցոյց տուաւ նոյնպէս որ երկիրը պատերազմական վայր ըլլալով՝ այդ աղէտները մասամբ անխուսափելի են, միաժամանակ շեշտեց որ ժողովուրդը պարտական է օգնելու կռուող բանակին: Կարեւոր համարեց շատ մեծ թրուով բանուորներ տալ երկաթուղիի գծի շինութեան համար: Մատնանչեց ոգելից խմիչքներ ծախելու զգուշի մոլութեան, ինչպէս նաեւ երկաթ, պղինձ եւ կաշի արտահանելու երկրաքանդ ձեռնարկութիւններու վնասակար հետեւանքներու մասին:

Ի վերջոյ ժողովականները քանի մը հարցեր տուին, որոնց մէկ առ մէկ պատասխանեց զեկուցողը:

3) «Աշխատանք» թերթ, ղիտողութիւններ եւ առաջարկներ:



Խօսեց նախ ընկեր Արմենակ Մաքսապետեան եւ բաւական երկար կանգ առաւ թերթի թերուլթիւններու վրայ: Ընկեր Բարունակը «Աշխատանք»ի թերուլթիւնները վերագրեց թերթի փոքրագիր ծաւալին եւ նիւթական ու թեկնիքական դժուարահարթերի պայմաններուն:

Խօսեցին նաեւ Դանիէլ վրդ-ը եւ ուրիշ ընկերները ու ապա միաձայն ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը.—

- 1) Տարածել «Աշխատանք»ը այժմեայ քանակի կրկինը. ամէն մէկ դաշնակցական ընկեր եւ ամէն մէկ գիւղ պարտաւոր համարելու է ինքզինքը մէկ մէկ օրինակ թերթ ստանալու:
- 2) Պարբերական նուիրատուութիւններով եւ այլ կարգի ձեռնարկներով բարձրացնել թերթի պիւտձէն:
- 3) Վճարել կանոնաւորաբար խմբագրին եւ վարչական գործերը կառավարողին:
- 4) Ամէն կերպ ուժ տալ «Աշխատանքի Ֆոնդ»ին, մինչեւ քանի մը ամիս անպատճառ սեփական մամուլ ունենալու համար:

Գ. ՆԻՍ

Օրակարգ՝

- 1) Գործող կազմակերպութիւնները Վասպուրականի մէջ:
- 2) Մեր վերաբերմունքը քիւրդերու հանդէպ:

Որոշումներ՝

Կը նախագահէ ընկեր Ա. Մաքսապետեան:

1) Վասպուրականի մէջ գործող կազմակերպութիւններու մասին ընկեր Սամուէլ Մեսրոպեանը տուաւ ընդարձակ զեկուցում մը, յայտնելով այդ առթիւ հետեւեալ դիտողութիւնները.—

ա) Քաղաքներու միութիւն.—

1) Ճանապարհի վրայ գտնուած սննդատու կայանները առհասարակ նպատակին ծառայած չեն, յաճախ կայաններու ծառայողներն անգամ ուտեստ ունեցած չեն:

2) 7-8 ամիս շարունակ Ք. Մ.եան թրանսփորթը չէ գործած եւ բոլոր ծառայողները ծանրացած են Բարեգործականի պահեստին վրայ, սպառելով տեղացիներուն տրուելիք կենսամթերքները:

3) Եղած են աւելորդ թուով պաշտօնեաներ, որոնք թէ հոս եւ թէ Իգդիր շարունակած են ռոճիկ ստանալ եւ կերակրուիլ առանց ոեւէ անհրաժեշտ դեր մը կատարելու:

բ) Գիւղատնտեսական.—

Անցեալ աշնան թէեւ միջոցները սուղ էին, բայց նորէն բաւական լաւ գործ կատարուեցաւ, իսկ երբ պ.

Սահակեանը իր կազմով հեռացաւ, Վասպուրականն ալ մոռացութեան մատնուեցաւ: Վերջին նահանջի առթիւ երբ Հայոց-Ձորէն տեղափոխուող ժողովրդի անասունները պահել չկրնալուն համար դիմումներ եղան Թիֆլիս, ոչ մէկ հետեւանք ունեցան, որով գիւղացիներու կարեւոր տոկոսը հարկադրուեցաւ իր անասունները ծախել:

Գարնան մեծ ակնկալութիւններով հազարաւոր գիւղացիներ երկիր թափուեցան գիւղատնտեսական օժանդակութիւն ստանալու ակնկալութեամբ, բայց չարաչար հրասթափուեցան, որովհետեւ սերմացուի քանակը ողորմելի էր, իսկ լծկաններու եւ գութաններու համար ցայժմ ոեւէ կարգադրութիւն չէ եղած»:

Ընկեր զեկուցողը խօսելով «Բարեգործական»ի ազգաբնակչութեան պարենաւորման եւ կրթական գործունէութեան մասին՝ համեմատաբար բաւարար գտաւ զայն:

Ընկեր Կոստեա Համբարձումեանը տուաւ երկար բացատրութիւններ Քաղ. Միութեան եւ Գիւղատնտեսականի մասին:

Բացատրեց որ Քաղ. Միութիւնը նոր կազմակերպութիւն է, յառաջ եկած է պատերազմի ընթացքին եւ նիւթապէս կախուած եղեր է պետութեան տալիք նպաստին. այդ նպաստը ամիսներ շարունակ չէր գանձուեր եւ բազմաթիւ դիմումները անհետեւանք կ'անցնէին: Հին կառավարութիւնը անխնայ կը հալածէր Քաղ. Միութիւնը իբրեւ հայկական կազմակերպութեան. այդ պայմաններու մէջ ոչ թէ գործը ընդարձակելու, այլ եղածն ալ պահելու հնարաւորութիւն չկար:

«Վան-Իգդիր ճամբու վրայ բացուած սննդատու կայանները, երկուքէն զատ, միւսներու գոյութիւնը պաշտօնապէս մտած չէ նախահաշուի մէջ. արհեստանոցի համար ոեւէ կանխահաշիւ մտած չէ Քաղ. Միութեան նախագծի մէջ. այդ պայմաններու մէջ աւելին ընել անկարելի էր:

Գիւղատնտեսականի համար ըսաւ որ եթէ քննադատելի բաներ կան, այդ ուղղելու ենք Բարեգործական եւ Նպաստամատոյց Միացեալի երկու անդամներուն, որոնց բաղդատմամբ Վասպուրականի մէջ գործ տեսնողը եղած է նորէն Գիւղատնտեսականը: Մինչեւ հիմա ալ միջոցներ տրուած չեն լծկաններ գնելու, եւ հակառակ իրենց դիմումներուն, գութանները Իգդիրէն փոխադրելու համար հոգ տարած չեն: Այդտեղ յանցանքը կ'իյնայ վերի մարմիններուն վրայ:

Ասոնցմէ զատ բացատրեց նոյնպէս Պարսկաստանի մէջ սերմացու ձեռք ձգելու դժուարութիւնները եւ ձեռք բերուած 3000 փութ սերմացուի ինչպէս բաշխուելու մասին:

Բարեգործականի լիազօրի օգնական Բ. Իւզբաշեան տուաւ քանի մը տեղեկութիւններ Ընկերութեան գործ.



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՄԻ

ծունկնութեան մասին, բացատրեց աշնան տեղին վրայ գտնուած ցորենները ամբարելու օգտակարութիւնը, թրանսփորթի անկանոնութիւնը, Վանի եւ Այլւրի պահեստներէն զատ ուրիշ վայրերու մէջ պահեստներ բանալ չկրնալու պատճառները, դպրոցական գործի ընդհ. վիճակը եւն.:

Ապա իրար ետեւէ խօսք առին ընկերներ Գ. Պուլկարացին, Ա. Մաքսապետեան, Դանիէլ վրդ. եւն: Ի վերջոյ միաձայն անցաւ հետեւեալ բանաձեւը.—

1) Շրջանային վարչութեան անունէն հեռագիրներ տալ Թիֆլիս, որպէսզի լծկանի եւ կիթանի համար գումարներ տրամադրուին:

2) Աշնանացանքսի համար սերմացուի դրամը այժմէն փութացնել:

3) Իգդիր գտնուած գութանները երկաթուղով փոխադրել տալ մինչեւ Սավալի, անկէ ասդին բերելու համար ուրիշ միջոցներ ձեռք առնել:

4) Աշխատիլ կազմակերպութիւններու գործունէութիւնը բերել եւ կեդրոնացնել շրջանային վարչութեան մէջ:

Մեր վերաբերմունքը քիւրդերու հանդէպ.—

Զեկուցեց ընկեր Գ. Խլղաթեանը:

— Հ.Յ.Դ.ը Վասպուրականի մէջ բազմաթիւ միջոցներու դիմած է քիւրդերու հետ բարուք յարաբերութիւններ ստեղծելու համար, բայց միշտ ալ ապարդիւն: Մեզ համար խիստ կենսական նշանակութիւն ունեցող այս հարցը՝ անցեալ տարուայ շրջանային ժողովին ալ դրուեցաւ եւ եկանք այն եզրակացութեան, որ պատերազմական այս աննորմալ պայմաններու մէջ ոեւէ մերձեցում քիւրդերու հետ թէ անհնարին է եւ թէ անցանկալի, որովհետեւ տարիներ շարունակ քիւրդը չէ կրցած ոեւէ քաղաքական կամ ազգային հասունութիւն երեւան բերել, եւ միշտ ալ գործիք դարձած է երբեմն թուրք եւ երբեմն ալ ռուս բռնակալութեան ձեռքին:

«Այսօր մենք շրջապատուած ենք, ինչպէս միշտ, քրդական սպառնալից օղակով մը. յեղափոխական Ռուսիան տակաւին, գրեթէ իր վերաբերմունքը չէ ճշդորոշած քիւրդերու հանդէպ. միմիայն Շախովսկին ձերբակալուեցաւ եւ Չերնոզուբովը քննութեան տակ առնուեցաւ եւ խնդիրը ատով ալ փակուած է հիմա: Չափազանց շատ է խօսուած եւ գրուած քիւրդերու լրտեսական եւ հակառուս գործողութիւններու մասին, աւելի քան բացայայտ է նոյնիսկ իրենց ռուսներուն համար ալ, որ թիկունքը պատսպարուած քիւրդերը մնալուն սպառնալիք են իրենց՝ թէ ռազմագիտական շարժումներու ատեն եւ առաւելապէս նահանջի մը պարագային»:

Զեկուցողը առաջարկեց հետեւեալ բանաձեւը.—

1) Շրջանային վարչութիւնը պէտք է պահանջէ զինուորական իշխանութենէն, որ բոլոր քիւրդերը զինա-

թափ ընեն, թէեւ այնքան ալ հաւատք չունիմ որ այդ զինաթափութիւնը գործնականին մէջ իրագործելը կարելի ըլլայ:

2) 20-45 տարեկան եղողները իբրեւ թուրքական զինուոր պատերազմական գերի վերցնել եւ աքսորել մինչեւ պատերազմի վերջը:

3) Մնացած ազգաբնակչութեան վրայ նշանակել ուժեղ հսկողութիւն որպէսզի չկրնան անոնք իրենց դերերը շարունակել դարձեալ:

4) Հոգալ մեր ինքնապաշտպանութեան կազմակերպական մասին եւ կտրել ամէն կարգի յարաբերութիւններ քիւրդերու հետ»:

Ընկեր Գրիգոր Պուլկարացին ցոյց տուաւ որ քիւրդերը ինչքան ալ իբրեւ ազգ կամ ցեղ թոյլ են եւ իբրեւ այդպիսին՝ այնքան ալ խոշոր վտանգ մը չեն ներկայացներ, բայց անհրաժեշտ է որ այս պարագային մեր գիւղացիները կտրեն իրենց ամէն կարգի յարաբերութիւնները անոնց հետ:

Թեր ու դէմ վիճաբանութիւններէ ետք նոյնութեամբ ընդունուեցաւ վերոյիշեալ բանաձեւը:

Դ. ՆԻՍ

Օրակարգ՝

- 1) Ներաղթը թոյլատրել եւ ինչ չափով:
- 2) Միլիցիա եւ ինքնապաշտպանութիւն:
- 3) Արեւմտահայ համագումարի եւ թուրքահայ դաշնակցական ռազմական ժողովի պատգամաւորներու ընտրութիւնը:
- 4) Փակում շրջանային ժողովի:

Կը նախագահէ ընկեր Արմենակ Մաքսապետեան:

1) Ներգաղթի մասին զեկուցեց ընկեր Արմենակ Մաքսապետեանը:

— «Արդի պայմաններու մէջ երբ երկրի դրութիւնը կայուն չէ, երբ նահանջի կասկածները միշտ կան ու կան, երբ հնարաւորութիւն չկայ ազգաբնակչութեան՝ գիւղատնտեսական նուազագոյն օժանդակութիւն իսկ ցուցնել, ներգաղթին լայն ծաւալ տալը երբեք նպատակայարմար չէ, բոլորովին ներգաղթը արգիլել ալ հնարաւոր չէ, այլ չափ մը պիտի որոշել: Պէտք է բացատրել Վասպուրականի իրական կացութիւնը Կովկաս գտնուող մեր հայրենակիցներուն եւ յայտնել իրենց թէ երկիրը կարող են գալ միմիայն անոնք, որոնք ի վիճակի են առանց հասարակական օժանդակութեան՝ սեփական միջոցներով տնտեսութիւն ստեղծել. միւս կողմէն պէտք է հասկցնել, որ միմիայն տղամարդիկ զան առաջով, գոնէ մինչեւ հունձքը, երբ հացը կ'առատանայ երկրին մէջ եւ միւս կողմէն պատերազմական վիճակը աւելի կը ճշտորոշուի»:

Բ. Իւզբաշեանը կարեւոր համարեց որ դիմում կատարուի Քաղ. Միութեան՝ սննդատու կայարանները կանոնաւորելու եւ Բարեգ. ընկերութեան՝ քանի մը վայրերու մէջ եւս պահեստներ բանալու համար:

Ընկեր Տաճատ Թերլէմէզեանը յայտնեց որ ներգաղթը արհեստական միջոցներով արգելել կարելի չէ, պէտք է լեցուին երկիրը եւ ամէն գնով տնտեսութիւն ստեղծեն իրենց համար:

Ընկեր Բարունակը կը գտնէր որ երկու տարուայ ընթացքին երկրի վերաշինութիւնը, ընկերութիւններէն աւելի կատարած է ինք ժողովուրդը, իր անհատական ձեռներէցութեամբ: Երկիր եկողը ամէնէն աւելի յոյսը իր վրայ դնելու է: Փաստօրէն երկու տարի շարունակ կը տեսնանք, որ ընկերութիւնները չեն կարող նուազագոյն չափով իսկ օժանդակութիւն հասցնել եւ այսօր միմիայն այն գիւղացին տնտեսութիւն ունի, որ փոխանակ օրերով եւ շաբաթներով հոս — գրասենեակներու շուրջ թափառելու, կերպ մը պարտքով-խարջով, փոխառութեամբ գործի է ձեռնարկած:

Խօսեցին նաեւ ուրիշ ընկերներ, որմէ ետք անցաւ հետեւեալ բանաձեւը.

- 1) Երկիր պէտք է գան առայժմ միայն տղամարդիկ:
- 2) Դիմում-հեռագիրներով հարկադրել ընկերութիւններու կեդր. մարմիններուն, որ դրամ հասցնեն սերմացու, լծկան եւ կթան գներու համար, որքան կարելի է շուտ:
- 3) Բարեգործականը իր կեդրոնական պահեստը կենսամթերքներ լեցնելէ ետք, պահեստներ բանայ Արճակի, Հայոց-Ձորի եւ Բերկրիի մէջ:
- 4) Իրենց հայրենիքէն զրկուած փախստականները տեղաւորել քաղաքապատկան ազատ մնացած հողերուն վրայ:

Բ. Միլիցիա եւ ինքնապաշտպանութիւն.

Կը զեկուցանէ ընկեր Գրիգոր Պուլկարացին.

— «Դաշնակցութեան գլխաւոր գործունէութիւնը եղած է սկզբէն ի վեր հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան հարցը: Այսօր երբ համեմատական ազատութիւն է տրուած մեզի, պէտք է լայն ծաւալով կազմակերպուենք:

«Քանի մը օրէն պիտի ձեռնարկենք միլիցիայի կազմութեան: Կազմած ենք արդէն առանձին կանոնադիր մը միլիցիայի եւ ժողովրդական ինքնապաշտպանութեան գործը ամուր հիմքերու վրայ դնելու համար: Միլիցիային կ'անդամակցին գործօն անդամներ եւ պահեստիներ. գործօն կը համարուին անոնք, որոնք իրենց ստանձնած պարտականութենէն զատ, ուրիշ ոեւէ գործով չեն զբաղուիր, որու համար եւ կը ստանան ռոճիկ, իսկ պահեստի միլիսիոնները կը պարապի իր սեփական

գործով թէեւ, բայց նախապէս կը ցուցակագրուէ եւ կը մտնէ համապատասխան տասնեակի մէջ, վտանգի պարագային միայն զէնքի տակ անցնելով:

«Միլիցիայի կազմակերպութիւնը պէտք է կրէ խիստ զինուորական-կարգապահական բնաւորութիւն. այդտեղ այլեւս գոյութիւն չունի ընկեր կամ ընկերական վերաբերմունք, այլ կայ գինուոր, տասնապետ, քսանհինգապետ, շրջանային խմբապետ եւ ընդհ. ղեկավար:

«Եթէ մենք յաջողեցանք հոս ուժեղ երկրապահական գունդ մը ունենալ եւ հարկ եղած քանակութեամբ զէնք, ռազմամթերք ու դրամ՝ ներգաղթը սահմանափակելու եւ նահանջներու պարագային փախուստի ճամբան բռնելու խնդիրը այլեւս վերջացած կ'ըլլայ մեզի համար»:

Ժողովը առանց տարակարծութեան, ընդունեց ընկեր Գ. Պուլկարացիի յայտնած տեսակէտները:

Գ. Պատգամաւորներու ընտրութիւնը:

Օրակարգերու սպառումէն ետք ժողովը անցաւ պատգամաւորներու ընտրութեան, թէ թուրքահայ դաշնակցականներու ռայոն. ժողովին (մէկ պատգամաւոր) եւ թէ արեւմտահայ համագումարին համար (երկու պատգամաւոր):

Դ. Փակման խօսքը ըսաւ ընկեր Արմենակ Մաքսապետեանը, որու ամփոփումն է.

— «Ընկերներ, դուք փորձով գիտէք որ առանց կազմակերպութեան, ոչ մէկ լաւ բան աշխարհիս երեսին չէ կարելի ընել: Երկարատեւ թափառումներէ ետք, այսօր ժողովրդեան մէկ մասը երկիր վերադարձած է եւ եթէ հայու Աստուածը կրկին փորձանք մը չբերէ մեր գլխին, շատ չանցած մենք կ'ունենանք վերածնունդ վասպուրական:

Յիշեցէք թէ 915-էն առաջ ի՞նչ էր մեր երկիրը եւ ինչ կը ներկայացնէր այդ երկրի պաշտպան կուսակցութիւնը — Դաշնակցութիւնը. մեր բոլորիս յարատեւ եւ յամառ տենչն է որ մեր երկիրը նախկին վիճակը վերստանար եւ Դաշնակցութիւնն ալ նախկինն ըլլար, իսկ այդ վիճակին կարելի է հասնել գործելով եւ աշխատելով:

«Սեղմենք մեր շարքերը, կազմակերպութիւններ ստեղծենք ամէն տեղ, սերտ յարաբերութեան մէջ դնենք այդ կազմակերպութիւնները իրարու հետ եւ անվկանդ անտեղիտայի կամքով յառաջ տանենք հայրենիքի փրկութեան սրբազան գործը» (ծափեր):

Վան

«Աշխատանք», Բ. տարի, 1917, թիւ 11, 12, 14, 16, 17, 23


Փաստ. 1427q-10

Ա 6.- ՌՈՍՏՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՍԻՏԷԻՆ

Թիֆլիս, Ապրիլ 28, 1917

FORM 66
C.I.A.

CABLEGRAM



TELEPHONE MAIN 180
 RECEIVED AT 112 STATE ST. BOSTON 7 23 M. SUBJECT TO TERMS AND CONDITIONS AT BACK HEREOF, WHICH ARE RATIFIED AND AGREED TO

CSW 18 TIFLIS 55

SAIRENIK PRESS BOSTON.

BUREAU NATIONAL RECU DEUX CHEQUES DISMILLE DOLLARS STOP CONGRES
 PARTI REGIONAL CAUCASE CONVOQUE 6 AVRIL CONTINUE TRAVAUX AVED
 SUCCESS STOP DANS TROIS SEMANINES AURONS ASSEMBLEE CAMMARADES
 RECEIONS CONQUISES AUTRE ASSAMBLE GENERALE SANS DISTINCTION
 PARTIS POUR SORT REFUGES STOP TROUVONS UTILE PARTICIPATION
 VOS DELEQUES PRIERA DESIGNER POUVONS NOUS INVITER AMATOUNI
 VOTRE PART

ZORIAN

No inquiry respecting this message can be attended to without the production of this paper. Repetitions of doubtful words should be obtained through the Company's offices, and not by applying directly to the sender.

ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՈՆ ՍՏԱՑԱԻ ՏԱՍԸ ՀԱԶԱՐԻ ԵՐԿՈՒ ԶԷՔԵՐԸ – ԱՊՐԻԼ 6-ԻՆ ԳՈՒՄԱՐՈՒԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ – ԵՐԵՔ ՇԱՐԱԹ ԵՏՔ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆՔ ՆՈՒԱՃՈՒԱԾ ԵՐԿՐԱՄԱՍԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԱՆԽՏԻՐ ԲՈԼՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՆՆԵՐՈՒ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ – ՕԳՏԱԿԱՐ ԿԸ ՀԱՄԱՐԵՆՔ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՆԸ ԶԵՐ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐՈՒՆ – ԿԱՐՈՂ ԵՆՔ ԶԵՐ ԿՈՂՄԷՆ ՀՐԱԻՐԵԼ ԱՄԱՏՈՒՆԻՆ:

ԶՕՐԵԱՆ

Փաստ. 26-3

Ա 7.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Ընկերներ,

Ռայոնական ժողովի պարապմունքների մանրամասնությունները ձեր ներկայացուցիչները հաղորդած կը լինեն ձեզ: Որոշումներն արդեն տպագրված են «Հորիզոն»ում, առանձին գրքոյկով հրատարակելը ուշանում է տեխնիկական անյարմարությունների պատճառով:

Ռայոնական ժողովից յետոյ այնպիսի խոշոր երեւոյթներ տեղի չեն ունեցել կուսակցական ներքին կեանքում, որ մասնաւորապէս արձանագրւած չլինի: Ամէնուրեք ընկերները զբաղւած են կազմակերպական աշխատանքներով. մեր ստացած տեղեկութիւններից երեւում է, որ հայաբնակ բոլոր վայրերում ստեղծւել են մարմիններ, որոնք իրենց շուրջն են համախմբել հայ աշխատատեղիների գործօն մասը: Բազում տեղի ունեցաւ դաշնակցական ուսանողութեան համագումարը: Երեւանում հրաւիրւած է Դաշնակցութեան տաճկահայկական հատուածի ռայոնական ժողովը: Երեւանի եւ Թիֆլիսի կենտ. կոմիտէների նախաձեռնութեամբ հրաւիրւում են գիւղացիական նահանգական համագումարներ: Տեղի են ունենում անհաշիւ ժողովներ, դասախօսութիւններ, բացում են պրոպագանդիստների դպրոցներ, լոյս են տեսնում կուսակցական նոր թերթեր, հրատարակւում են թուրքիկներ – այս բոլորը ապացոյց է այն տենդային ստեղծագործական աշխատանքին, որ կուսակցութեան ներսը կատարւում է:

Համաձայն ռայոնական ժողովի որոշման, Բիւրոն մասնակցում է նաեւ գումարուելիք հայկական համագումարի նախապատրաստական աշխատանքներին: Այս նպատակով՝ Ազգ. բիւրոյի նախաձեռնութեամբ կազմւում է միջկուսակցական յատուկ մի մարմին՝ ամէն կուսակցութիւնից 3-ական ներկայացուցիչներով, որ եւ մշակել է ընտրութեան սկզբունքները: Ընտրութեան եղանակի մանրամասնությունները կը հրատարակուեն թերթերում, իսկ մինչ այդ պէտք է գիտենալ, որ ընտրութիւնները լինելու են քառանդամ սիստեմով, եւ ամէն մի 10 հազարը պիտի տայ մէկ պատգամաւոր:

Կուսակցութեան ռայոնական ժողովի որոշմամբ մենք մասնակցելու ենք ընտրութիւններին, առանց որեւէ կուսակցութեան հետ բլոկ կապելու: Եւ ուստի անմիջապէս պէտք է դիմել աշխատանքի: Պէտք է քննել ձեր գաւառների պայմանները, վայրերը, բաժանմունքները, ստուգել տեղական ոյժերի քանակը, որոշել մասնաւորապէս ամէն վայրի համար թեկնածուներ, ուժեղացնել կապերը շրջանների հետ եւ պատրաստ լինել ժամանակին սկսելու նախընտրական պայքարի:

Ռայոնական ժողովի որոշմամբ մենք իրաւունք ունենք մեր թեկնածուների ցանկի մէջ մտցնել նաեւ ոչ դաշնակցականներ, եթէ նրանք կ'ընդունեն մեր կուսակցութեան այն պահանջները, որոնք պիտի կազմեն նախընտրական պայքարի պատճառով: Սակայն առ այժմս դուք աչքի առաջ ունեցէք նախ եւ առաջ դաշնակցական ընկերների թեկնածութիւնը ապահովել: Միւսներին ձայն տալու խնդիրը կախուած է մի շարք այլ հանգամանքներից: Յետոյ ձեզ կը յայտնենք թէ որտեղ եւ որքան մարդկանց կարելի է մեր ցանկերի մէջ մտցնել: Դուք առայժմս տեղեկագրէք մեզ կազմակերպութեան ոյժի մասին, որպէսզի իմանանք թէ որտեղ մեր ձայները կատարելապէս ապահովւած են: Ըստ կարելոյն շուտով հաղորդեցէք այդ մասին, որպէսզի մենք մի նոր շրջաբերականով մեր առաջարկները անենք ձեզ:

Պետրոգրադի գիւղացիական համագումարին գնացին եւ մեր շրջանների ներկայացուցիչները: Կուսակցական ընկերներ են:

Տեղեկութիւններ չունենք կազմուելիք գիւղացիական միութիւնների մասին: Հերթական խնդիր է սա: Չպէտք է սպասել, որ ամէն տեղ կազմուեն միութիւններ: Եթէ մի քանի հատ կան, պիտի գաւառական եւ նահանգական միութիւնների միութիւն կազմել: Մրանց անելիքի մասին «Հորիզոնում» գրեց:

Շատ լուրջ պիտի վերաբերուել այս գործին: Խնդրում ենք անպայման պարբերաբար հաղորդէք թերթին տեղեկութիւններ մինչեւ այժմ կազմուած [եւ] հետզհետէ կազմուելիք միութիւնների մասին:

Տեղեկութիւններ շատ քիչ ենք ստանում նաեւ գաւառների եւ գիւղերի վարչութիւնների վերակազմութեան մասին: Ամէն մի նոր կազմուած գիւղական, գաւառակային եւ գաւառական վարչութիւնների մասին անմիջապէս

ՆԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

155

պետք է հաղորդել «Հորիզոն»-ին կամ Բիւրոյին: Մենք պետք է երկրի ընդհանուր պատկերը եւ վիճակը տեսնենք որ ըստ այնմ ընթացք տանք կենտրոնի գործերին:

Չէք գրում ոչինչ գաւառակային սահմանների փոփոխման մասին, որը ձեր լուրջ մտահոգութեան առարկան պիտի լինի:

Անդրկովկասեան Գիւղացիական միութեան կազմակերպիչ բիւրոն որոշել է հրաւիրել գիւղացիական պատգամաւորների առաջին համագումարը, որ պիտի բացուի Թիֆլիսում սոյն մայիսի 25-ին: Հրաւիրում են երկ-երկու պատգամաւոր իւրաքանչիւր գիւղական հասարակութիւնից (-----)¹³:

Ընտրում են պատգամաւորներին 18 տարեկանից ոչ պակաս հասակ ունեցող բոլոր գիւղացիները՝ տղամարդիկ եւ կանայք, առանց ազգութեան խտրութեան:

Ընտրած կարող է համարուիլ ամէն ոք, թէ տղամարդ եւ թէ կին, որին գիւղացիք հաւատում են եւ յանձնում իրենց շահերի պաշտպանութիւնը:

Ընտրութիւնները վաղօրօք կազմակերպում են գիւղական գործադիր կոմիտէները (-----)¹⁴, որոնք եւ տալիս են ընտրուած պատգամաւորներին վաւերագրեր:

Պատգամաւորներին Թիֆլիսում կը տրուի բնակարան:

Համաժողովը կը տեսէ 4 օր:

Ի նկատի ունենալով Համագումարի արտակարգ նշանակութիւնը գիւղական աշխատատեղիների համար, նաեւ այն, որ Համագումարից ընտրուելիք գիւղացիական պատգամաւորների Անդրկովկասեան խորհուրդին վերապահուած է եզակի դեր մեր երկրի քաղաքական-սոցիալական հարցերում, ջերմագինս յանձնարարում եւ խնդրում ենք ձեզ, որ ոչ մի եռանդ չխնայէք՝

ա) Լայն արոպագանդ մղել այդ առիթով գիւղական մասսաների մէջ.

բ) Ամէն կերպ հսկել եւ հետեւել ընտրութիւնների կանոնաւորութեան վրայ եւ

գ) Աշխատել ամէն կերպ, որ գիւղական հասարակութիւններից ընտրող պատգամաւորները լինեն աշխատատեղիների շահերի հարազատ արտայայտիչ Հ.Յ.Դ-աշնակցութեան պատկանող եւ համակիր անհատներ:

Միեւնոյն ժամանակ պետք է ի նկատի ունենալ, որ ըստ -----¹⁵-ների ընտրութիւնը անարդարացի է հայաբնակ շրջանների նկատմամբ, որովհետեւ մեր շրջաններում-----¹⁶-ները խոշոր միութիւններ են, մինչդեռ ուրիշ շրջաններում՝ մանր: Այս դէպքում պետք է ղեկավարել այն սկզբունքներով, ինչ որ արտայայտուած են «Հորիզոն»-ի No 90-ում, այսինքն ընտրել ներկայացուցիչներ, մեծ գիւղերում երկսից աւելի:

Ցանկալի է անպայման, որ համագումարին զան գիւղացի ընկերները, բայց անհրաժեշտ է համագումարում ունենալ եւ մի քանի ձեռնհաս մտաւորական ընկերներ, որոնք համագումարում արծարծեն ու պաշտպանեն կուսակցութեան տեսակէտները: Պետք է ի նկատի ունենալ, որ պատգամաւոր կարելի է ընտրել եւ գիւղից դուրս գտնող անհատներ:

Ընկերներ, դէպի գիւղացիական համագումարները՝ նահանգական թէ կենտրոնական՝ պետք է վերաբերել առանձին լրջութեամբ, որովհետեւ այստեղ է, որ Դ-աշնակցութիւնը երեսան է գալու իր ամբողջ հասակով: Մենք համոզուած ենք, որ մեր բոլոր ընկերներն իրենց ամբողջ ոյժը կը լարեն կազմակերպելիք համագումարներին ցանկալի չափով մասնակցելու համար:

Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈ

Մայիսի 5-ին 1917

13.- Բնագրին մէջ ռուսատառ՝ գիւղական հասարակութիւնից:

14.- Բնագրին մէջ ռուսատառ՝ գիւղական գործադիր կոմիտէները:

15.- Բնագրին մէջ ռուսատառ՝ գիւղական գործադիր կոմիտէների:

16.- Բնագրին մէջ ռուսատառ՝ գիւղական հասարակութիւնները:

Ա 8.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԹՈՒՐՔԱՀԱՅ ՀԱՏՈՒԱԾԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Երևան, 12 Մայիսի

«Հ.Յ.Դ. քուրքահայ հատուածի ռայոնական ժողով»ի քղթակցութիւնները քաղած ենք՝ բացման նիստը Թիֆլիսի «Հորիզոն»էն. հեղինակն է Հր. Բագրուհի, բուն անունով Հրանտ Կարինեան. յաջորդ նիստերը անունած են Երևան հրատարակչուող վասպուրականցիներու «Աշխատանք» եօթեայէն: Յամենայն դէպս, քղթակցութիւններու շարունակութիւնը անհնար եղաւ գտնել:

[ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏ]

Երէկ իրիկուն թեմական՝ դպրանոցի դահլիճին մէջ ընկ. Ռոստոմ բացաւ Հ. Յ. Դաշնակցութեան թիւրքահայ հատուածի ռայոնական ժողովը: 25-է աւելի ձայնի իրաւունքով պատգամաւորներ եւ 20-է աւելի խորհրդակցական ձայնով հրաւիրուածներ եւ առանձին տոմսերով ընտրուած ունկնդիրներու ներկայութեան ընկ. Ռոստոմ ըսաւ.

«Բանալով թիւրքահայ կուսակցական մարմիններու ներկայացուցիչներու եւ Հայաստանի բերրոյի սահմաններու մէջ գործող ընկերներու պատգամաւորական այս ժողովը՝ ես ճշտած տրամադրութեան տակ կը գտնւիմ: Հին ժամանակ մեր ամենամեծ երազը այն էր, թէ ե՞րբ կ'ըլլայ, որ այս կարգի ժողովները տեղափոխուեն երկիր. Կովկասի, Պոլսի, էրզրումի ժողովները շատ ուսանելի էին: Ատկէ առաջ մեր ձգտումն էր ունենալ ընդհանուր ժողով Ս. Կարապետի վանքին մէջ Նաւասարդեան տօներուն, սակայն ատիկա կարելի չեղաւ:

Եկաւ աղէտը. դաշնակցական մարմինները եւ հայ ժողովուրդը տեղահան եղած՝ կը պտտի եւ կը դեգերէ Կովկասի սահմաններուն մէջ: Տխուր ժողով է այսօրւան մեր ժողովը:

Ուրախ սրտով չեմ բանար այս ժողովը: 40 տարւան ընթացքին մեր ժողովուրդը արտակարգ ճնշումներու ենթարկուեցաւ, սակայն անոր ոգին ամրապինդ եղած է. շուտով ան ցոյց կու տայ որ նորէն նոյն բարձր ձգտում ունեցող ժողովուրդն է: Ան պէտք է համախմբել իր դատին շուրջ: Եւ հետզհետէ եթէ մեր բաղձանքները իրականանան, այդ կ'ըլլայ բացառիկ երեւոյթ մը: Ես կ'ուզէի, որ միութեան ոգին բարձր ըլլար բոլորիս մէջ: Տխուր սրտով կը բանամ այս ժողովը, որովհետեւ ես այսօր չեմ տեսնար մեր այն թանկագին ընկերներին իմ առջեւ, որոնցմով ապրել է մեր կազմակերպութիւնը: Ես կ'ուզէի, որ նոր եկող մատաղ սերունդը այդ հին եւ լաւագոյն ընկերներու աւանդութիւնները լաւ պահէին սրտերուն մէջ, եւ այդ կ'ըլլար ամենալաւ յաւերժացումը մեր նահատակներու եւ մեր գործին»: Մտախոհ մէջ վերջացուց Դաշնակցութեան վետերանը իր խօսքերը եւ հրաւիրեց ուրիշներն իրենց խօսքերը ըսելու ժողովին:

ԱՐԱՄ [ՄԱՆՈՒԿԵԱՆ].— Ռուսական յեղափոխութիւնից յետոյ մեր կուսակցական ուժերը մոբիլիզացիայի ենթարկեցինք, գործի սկսեցինք: Շնորհիւ այն մեծ փոթորիկի, որ պայթեց մեր ժողովուրդի եւ մեր կազմակերպութեան գլխուն, դուք նկատեցիք, որ այդ փոթորիկը ծուէն-ծուէն ըրաւ եւ կոտորեց մեր ժողովուրդը եւ կազմակերպութիւնը, որովհետեւ թիւրքական գարշահարածը ամէնէն առաջ իջաւ մեր կազմակերպական գործիչներու գլխուն: Ձեզմէ շատերը թերեւս ըսեն, որ կայ հաւատացեալ ժողովուրդ, չկան դեկավարներ, սակայն կան գեներալներ առանց բանակի, չկայ ընդհանուր ուղղութիւն, ձգտում, որու շուրջ կրնանք համախմբել: Եթէ կար ուժ մը, որ ստեղծագործ աշխատանք կատարելու եկած էր, որ առաջարկներ բերած էր, ծրագիրներ մշակած էր, դա դաշնակցական ընկերներու հաւաքական ուժն էր, որ միշտ կրցաւ որոշումներ տալ եւ կանգնել այդ որոշումներուն վրայ: Ես այն կարծիքին չեմ, որ մենք մենաշնորհ դարձուենք հասարակական կեանքի ղեկավարութիւնը, սակայն երբ կը տեսնանք, որ բացարձակ անապատի մէջ կը գտնւինք, այն ժամանակ ստիպուած հրապարակ պիտի գանք աշխատելու: Ես կ'ուզէի, որ ռայոնական ժողովը վերցունէր մեր մէջէն բոլոր թիւրիմացութիւններ եւ վերականգնէր մեր կուսակցական բարձրութիւնն ու կարգապահական ոգին եւ ստեղծէր փոխադարձ ամուր կապ եւ վստահութիւն, որովհետեւ առանց այդ կապի ոչ մի օրինական աշխատանք չի կարելի սպասել (ծափեր):

ԱՐՏ. ՎԱՆՑԵԱՆ.— Դառն կսկիծով կ'ողջունեմ տաճկահայ եղբայրներու առաջին ազատ ռայոնական ժողովը Երեւանի Հ.Յ.Դ. Կենտրոնական կոմիտէի կողմէն: Կորուստը, որուն ենթարկուեցաւ տաճկահայ ժողովուրդը, անպատմելի է, եւ մենք այն կարծիքի էինք, որ այդ բզկտած ժողովուրդը չպիտի կրնար նորէն համախմբել իր ուժերը, իր մտաւորականութիւնը. սակայն այսօր կը տեսնենք, որ ջլատուած ժողովուրդէն այստեղ ունինք այն տարրը, որը պէտք է տաճկահայերու ապագայ հիմքը, կորիզը կազմէ: Եւ Երեւանի Հ. Յ. Դաշնակ-

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԻ

ցուցեան կեդրոնական կոմիտէն կը մաղթէ, որ ձեր աշխատանքը եւ գործունէութիւնը շարունակէր հանգիստ, որովհետեւ վաղւան հաւատքն է, որ գօտեպնդած է բոլորիս (ծափեր):

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ.— Ընկերներ, Արամի քանի մը խօսքերը ստիպեցին ինձ թիւրքահայ համագումարի տասն օրւան յոգնութիւններէ յետոյ իմ խօսքերը ըսել: Սփոփանքի օր է այսօր ինձ համար. մենք այստեղ ընկերներ ենք, ընտանիք մը կը կազմենք: Երբ նոր կ'երթայի Կովկաս, մեր հին ընկերներու հետն էի, բոլորի հայեացքը ուղղւած էր այստեղ, այս ժողովին, թէ ինչ պիտի ըսէ, ինչ պիտի ընէ կուսակցութիւնը. երբ կը տեսնամ մեր սիրտբաց աշխատանքը, ես շատ խօսքեր ունիմ տանելիք անոնց, միտիւարանքի եւ քաջալերանքի խօսքեր, որովհետեւ հաստատապէս համոզւած եմ, որ մեր կազմակերպութիւնը կայ եւ պիտի ուռճանայ (ծափեր):

ԻՇԽԱՆ [ԱՐՂՈՒԹԵԱՆ ՅՈՎՍԷՓ].— Իմ կողմէն ողջոյնի քանի մը խօսք ունիմ ըսելու. ես համոզւած եմ, որ այս ժողովն իր ուշադրութեան մեծ մասը պիտի դարձնի հայկական տառապանքի եւ հայ տարրի շուրջը, որը եղած է տասնեակ տարիներու ընթացքին մեր սրտին մօտիկ: Այդ հայ արիւնի հարցն է այս պատերազմի ընթացքին, երբ ժողովուրդներ կուլ կ'երթան եւ ժողովուրդներ կը վերածնին: Մենք յոյս ունինք, որ այդ վերածնունդներէն կ'ըլլանք: Եթէ մեծ ժողովուրդներ ունին մեծ կարողութիւններ, մենք ալ պիտի ըսենք մեր ժողովուրդը կ'ապրի, եւ ով որ չի մօտենար այդ հարցի լուծման, ան չի կրնար կոչել իրեն քաղաքացի. այստեղ կուսակցական նկատումներ այլեւս տեղ չեն կրնար ունենալ: Ողջունելով այս ժողովը՝ ես յոյս ունիմ, որ այդ գերագոյն շահը կ'առաջնորդէ ձեզ: Այն խօսքերը, որ ես լսեցի թիւրքահայ համագումարի ամբիոնէն, շատ ծանր եղան ինձ համար. ես չէի ուզեր հաւատալ, որովհետեւ ձեզի շատ մօտ էի. ես կը կարծեմ, որ հայ ժողովուրդը չի մոռնար իր նախկին գոհաբերութիւնը, որը եղած է տարիներու ընթացքին իր գերազանց առաքինութիւնը:

ՎԱՀ[ԱՆ] ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ.— 1912 թւին էր, որ Սիմոն Զաւարեանի մօտ հաւաքւած թէյ կը խմէինք: Սիմոնը լաւ լուրեր բերած էր երկրէն. ան կ'ըսէր, որ երկրի ժողովուրդը կ'աճի, տնտեսութիւնը հետզհետէ կը բարելաււի, եւ ուրախ էր: Մենք ալ ուրախ էինք, որովհետեւ թրքահայութիւնը այնքան արիւններէ ետք հանգիստ էր պահ մը եւ իր սիրելի հրեշտակներով հպարտ-Կովկասի մէջ Դաշնակցութիւնը ծնունդ առաւ, Սիմոնի նման ծիծեռնակներ եկան ձեզ մօտ երկիր, ձեր կուրծքին վրայ մեծցան, հպարտացան եւ եկան մեր ժողովուրդի հպարտութիւնը դառնալու: Երբ այսօր ես կը լսեմ կասկածանքի ձայներ, կը հաւատամ, որ այդ կ'ըլ-

լայ մեր հպարտութեան գրաւականը, ինչու որ այդ ուժ պիտի տայ մեր ապագայ գործունէութեան: Միայն բան մը չմոռնանք, մեր սիրելի ծիծեռնակները եկան ձեզ մօտ երեք նպատակներով: Ազատ Երկիր, ազատ հող, ազատ ժողովուրդ, ազատ ազգ, ազատ աշխատաւոր, ազատ հայրենիք վերականգնելու: Ես կը զարմանամ, թէ ինչքան ճշտօրէն ըմբռնած է մեր կուսակցութիւնը այդ ժողովուրդի հոգեբանութիւնը եւ մեր ամենամեծ ուժը ասոր մէջն է, որուն վրայ յենած՝ մենք պիտի կուենք ամէն տեսակ բռնութիւններու դէմ (ծափեր):

ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼԵԱՆ.— Ես ձեր ուշադրութիւնը կը դարձունեմ մէկ հանգամանքի վրայ: Ռուսաստանի առաջին յեղափոխութենէն յետոյ, երբ մեծ հայածանք սկսեցաւ բոլոր յեղափոխական կազմակերպութիւններու դէմ, Կովկասի մէջ մնացին դաշնակցականներ, բայց կորաւ առժամանակ Դաշնակցութիւնը: Եթէ մեր պատմական վիճակը ի նկատի ունենանք, պէտք է զարմանանք թէ ինչպէս եղած է, որ չենք ոչնչացեր, մնացեր ենք: Այժմ նորէն ծաւալեր է մեր կազմակերպութիւնը եւ երբեք չէ դադարած, որովհետեւ եթէ անոր արմատներէն մէկը չորնայ, միւսը անպատճառ սնունդ կը ստանայ. այդպէս է մեր Դաշնակցութիւնը (ծափեր):

ՄԻՀՐԱՆ.— Կարսի պատգամաւոր ընկերը ողջունելով համագումարը՝ ցանկութիւն յայտնեց, որ Դաշնակցութիւնը նորէն իր աւանդականութեանը կառչած գոյացնէ այն մեծ հաւաքականութիւնը, որ ունէր աղէտէն առաջ:

Ծափերու մէջ խօսք կ'առնէ ընկ.
ԼԵՒՈՆ ՇԱՆԹ.— Թէեւ սաստիկ յոգնած եմ, բայց կ'ուզէի երկու խօսք ընել: Վերջին 5-600 տարիներու ծանր եւ սեւ պատմութեան մէջ ամէնէն պայծառ գործը, ամէնէն պայծառ գիծը այս ընկերակցութիւնն է, որ այս վայրկեանիս կը ներկայացնենք մենք՝ Դաշնակցութիւնը: Անթիւ ժողովուրդներու սուրի եւ տիրապետութեան տակ անցնող ժողովուրդ մը՝ հայ ժողովուրդը սկսաւ վերականգնիլ. այդ ճիգը, այդ գիտակցութիւնը ամէնէն մեծ գործն է: Հայ ժողովուրդը եւ Դաշնակցութիւնը այնքան սերտօրէն ձուլւած են իրար հետ, որ ես չեմ կրնար զանազանել, որովհետեւ մեր կուսակցութիւնը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը եղած է հայ ժողովուրդի ձգտումներու, զգացումներու արտայայտութիւնը: Դաշնակցութիւնը հայ ժողովուրդի ջիղն է, եւ ես թեթեւցած հոգիով կ'ողջունեմ այս ժողովը (բուռն եւ ջերմ ծափեր):

Ռայոնական ժողովի կարգադրիչ մարմնի կողմէն ընկ. Արմենակ Փոխանեան ժողովի ցանկութեամբ ճառախօսներու ցանկը փակեց եւ ժողովի ցանկութեամբ

խանդավառ ծափերու մէջ պատուաւոր նախագահ հռչակեց մեր ամէնքիս վարպետ Ռոստոմը: Այնուհետեւ միաձայնութեամբ նախագահ ընտրուեցան Արամ, Վահան Փափազեան եւ Շանթ եւ ժողովն անցաւ օրակարգի խնդիրներուն:

ՀՐ. ԲԱԳՐՈՒՆԻ

«Հորիզոն», 24 Մայիս 1917, թիւ 107

Ա. ՆԻՍՏ

Ռայոնական ժողովը ընտրեց իր դիւանը:

Ընդհանուրի հաւանութեամբ եւ ջերմ ծափահարութեան մէջ ժողովի պատուաւոր նախագահ ընտրուեցաւ ընկեր Ռոստոմ: Միաձայնութեամբ նախագահներ ընտրուեցան ընկ. Արամ [Մանուկեան], Վահան Փափազեան եւ Լեւոն Շանթ, իսկ քարտուղարներ՝ Յովհ. Մխիթարեան, Ար. Փոխանեան եւ Ա. Հացագործեան: Խմբագրական յանձնաժողովի համար՝ Տ[իկին] Զապէլ Եսայեան, Հմ. Մանուկեան եւ Վանփուշ: Մանտատներու ստուգումը յանձնուեցաւ դիւանին:

Ընկեր նախագահը ժողովը բանալով կը յայտնէ, որ ներկայ բացառիկ աննպաստ պայմանները թոյլ չտուին բաւարար կանոնաւոր ընտրութեամբ ռայոն. ժողովը գումարելու, որով ժողովի կազմակերպիչ մարմին ստիպուած է եղեր վճռական եւ խորհրդակցական ձայնի իրաւունքով հրաւիրել նոյնպէս շարք մը գործիչ ընկերներ, մասնաւորաբար չեռ չկազմակերպուած վայրերէ:

Ռայոնական ժողովին կը մասնակցէին պատգամաւորներ՝ Անդրկովկասի կազմակերպուած շրջաններէն՝ Թիֆլիս, Պաքու, Մեծ-Ղարաքիլիսէ, Կարս, Սուխում, Երեւան, Աշտարակ, Օշական, Իգդիր, Ղամարուլ, Սարղարապատ, Ալափարս, Նոր Պայագիտ, էջմիածին. Երկրէն՝ Վան, Հին Պայագիտ, Ալաշկերտ, Մուշ, Խնուս, Բասեն, Տիատին, Տրապիզոն.— ինչպէս նաեւ ներկայացուցիչներ «Արեւելեան բիւրօ»էն, «Հայաստանի բիւրօ»էն, «Աշխատանք»ի խմբագրութենէն, Երեւանի Վասպ.ի Կեդր. կոմիտէի կից ժամանաւոր մարմնէն: Երեւանի տեղական Կ. կոմիտէին եւ Վասպ.ի Կեդր. կոմիտէին: Բացի այդ՝ վճռական ձայնի իրաւունքով 9 գործիչ ընկեր-ընկերուհիներ եւ խորհրդակցական ձայնի իրաւունքով 25 ընկերներ: Ժողովին մասնակցողներու ընդհանուր թիւն էր վճռական ձայնով՝ 37 եւ խորհրդակցական ձայնով՝ 35:

Ընկեր Արամի նախագահութեամբ կարգացուեցաւ Ռայոնական ժողովի օրակարգը եւ քանի մը լրացումներով վաւերացուեցաւ:

Զեկուցանողը յայտնեց որ «Ազգ. բիւրօ»ի եւ անոր գործունէութեան գլխաւոր դրդապատճառը եղած է

Թուրքահայաստանի ռեֆորմներու խնդիրը: «Հորիզոն» եւ «Մշակ» թերթերու հրաւիրած լայն խորհրդակցական ժողովներուն իբրեւ արդիւնք կազմուած է «Ազգ. բիւրօ» երկուստեք ընտրուած անդամներով, որոնց մէջ թէեւ դաշնակցականները փոքրամասնութիւն էին, որոնց վրայ սակայն ծանրացած է եղած գործի ամբողջ ծանրութիւնը, որը առիթ տուած է հասարակութեան որոշ տարրերուն Դաշնակցութեան վրայ բարդելու գործի ամբողջ պատասխանատուութիւնը:

Բիւրոյի որոշումով եւ Կաթողիկոսի հաստատութեամբ կազմուած է Նուպար փաշայի պատուիրակութիւնը, ռեֆորմներու առթիւ եւրոպական պետութիւններու հետ բանակցելու համար:

Ապա ռուս-թուրքական պատերազմի առիթով, Ազգ. բիւրօն ստանձնած է կամաւորական գունդերու կազմութեան գործը: Այդ առթիւ կազմուած է կարգադիր մարմին մը, որուն մասնակցող դաշնակցական ընկերները անմիջական յարաբերութիւն ունեցած չեն կառավարութեան հետ:

Կամաւորական գունդերը ազգային միջոցներով գինելու առաջարկին ընդառաջ չեն դառնաւ տէրները, միւս կողմէ թէ ազգային քաղաքականութիւնը հասուն չէ եղած եւ թէ մանաւանդ բազմաթիւ աննպաստ արգելափակիչ պայմաններ եղած են (ռուս հին ռեֆիմի ծանօթ արգելքները) որով կամաւորական շարժումը ըստ ամենայնի տուած չէ սպասուած արդիւնքը:

Եւ չնայած կամաւորական գունդերը անգնահատելի օժանդակութիւն ցոյց տուին ռուս գէնքի յաջողութեան, ռուս հին ռեֆիմը աւելորդ համարեց կամաւորական գունդերու գոյութիւնը եւ վերակազմութեան պատրուակով լուծեց զանոնք:

«Հայաստանի բիւրօ»ի գեկուցումին մէջ, ընկեր Ռոստոմ բազմաթիւ փաստերով եւ անձնական վերջիչումներով ընդգծեց երկրի մեր նախանցեալը, եւ իթիթի-հատական քաղաքականութիւնը, երբ անիկա ամէն կերպ կը ձգտէր ոչնչացնել հայկ. ռեֆորմներու ծրագիրը:

Ապա թիւերով եւ փաստերով գեկուցեց դէպքերը, ինչպէս հրդեհումներ, տնտեսական պոյքոթ, գինուորական գրաւումներու ձեւին տակ ապօրէն կողոպուտներ, թալան, իսլամ տարրերու գինումը եւ հայ ժողովուրդի գինաթափութիւնը, բռնի խտրութիւն եւ կամայական խուզարկութիւններ, հայ պաշտօնեաներու անարդար արտաքսում, հայ գինուորներու գինաթափումը եւ անոնց մասնակի ու խմբական կոտորածները, իսլամ ոճրագործներուն ազատ արձակումը, անոնց սանձարձակ աւագակութիւնն ու բռնութիւնները եւ չէթայական խումբերու կազմութիւնը, հայ հասարակական դիրք ունեցող գործիչներու եւ յայտնի անձերու սպանութիւնները, ինչպէս նաեւ որոշ վայրերու հայ բնակչութեան տեղահանութիւնը եւ այլն: Այսպիսով ըն-

կերը եզրակացուց, որ առաջուրն է իսկ դատապարտելով հայ ժողովուրդը բնաջնջումի եւ հետապնդելով այդ քաղաքականութիւնը՝ թուրք կառավարութիւնը, շնորհիւ պատմական դէպքերուն մեզ համար դժբախտ դասաւորումին, բացառիկ եւ նպաստաւոր պահը գտաւ անարգել իրագործելու երկիրը առանց հայերու պատմական եւ դարաւոր ծրագիրը:—

Ընկեր Ռոստոմի փաստացի տեղեկութիւններուն յաւելումներ ըրին զանազան շրջաններու իրագրել պատգամաւորները:

Կամաւորական գունդերու ցրումով կը վերջանայ համարեա «Ազգ. բիւրօ»ի գլխաւոր գործունէութիւնը:

Զեկուցումէն ետք տրուեցան հարցեր, որոնց պատասխանուեցաւ: Ապա տեղի ունեցան երկար եւ տաք վիճաբանութիւններ, այնպէս որ հարկ եղաւ լսել նաեւ «Հայաստանի բիւրօ»ի գեկուցումը, որը տուաւ ընկեր Ռոստոմ, երկրորդ նիստին:

«Հայաստանի բիւրօ»ի գեկուցէն ետք, նորէն տեղի ունեցան թեր ու դէմ վիճաբանութիւններ եւ առաջարկուեցան քանի մը բանաձեւեր, որոնք ապա իրար միացուելով կազմուեցաւ եւ միաձայն ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը:—

(Շար.)

«Աշխատանք», 17 Մայիս 1917, Բ. տարի, թիւ 5

* * *

Բանաձեւը հայ կամաւորական շարժման եւ երկրի ինքնապաշտպանութեան մէջ Դաշնակցութեան մասնակցութեան մասին:—

«Լսելով «Արեւելեան բիւրօյի ներկայացուցիչի գեկուցումը «Ազգ. բիւրօ»ի մէջ դաշնացական ընկերներու մասնակցութեան եւ կամաւորական շարժման մասին, նաեւ «Հայաստանի բիւրօ»ի ներկայացուցիչի գեկուցումը՝ երկրի վիճակին եւ իթիհատի քաղաքականութեան մասին, պատերազմէ առաջ եւ պատերազմի ընթացքին, Հ.Յ.Դ. Թուրքահայ Ռայոն. ժողովը կը գտնէ:—

«Որ հայկական կոտորածները տեղի ունեցած են անկախ բոլոր կողմնակի առիթներէ եւ պատրուակներէ, որ՝ հրդեհումներ, անտեսական պոչքոթ, գինուորական զրաւումներու ձեւին տակ ապօրինի վերաբերմունք, թալան, հայ ժողովուրդի գինաթափումը եւ իսլամ տարրերու գինումը, կամայական եւ խիստ խուզարկութիւնները, հայ պաշտօնեաներու արտաքսումը, հայ գինուորներու գինաթափումը, իսլամ ոճրագործներու ազատ արձակումը, չէթայական խումբերու կազմութիւնը, գինաթափ եղած հայ գինուորներու մասնակի եւ խմբական կոտորածները եւ յայտնի անձնաւորու-

թեանց սպանութիւնները եւ որոշ վայրերու հայ բնակչութեան տեղահանութիւնը՝ փաստեր են, որ թուրք կառավարութիւնը առաջուց դատապարտած էր հայ ժողովուրդը բնաջնջման, եւ թէ թուրք կառավարութեան հայաջինջ քաղաքականութիւնը, շնորհիւ պատմական դէպքերու մեզ համար դժբախտ դասաւորումին, բացառիկ եւ նպաստաւոր պահը գտաւ անարգել իրագործելու երկիրը առանց հայերու պատմական եւ դարաւոր ծրագիրը:

«Որ կամաւորական շարժումը իր սկզբնական շրջանին ստացած տարերային թափով եւ պատերազմի ստեղծած յարափոփոխ եւ մեզմէ անկախ պայմաններու հետեւանքով, եւ գլխաւորաբար օրը օրին երկրի պատկանեալ մարմիններու հրահանգները ստանալու եւ առհասարակ յարաբերութիւն պահելու չափազանց մեծ դժուարութիւններուն պատճառով, իր ընթացքով համապատասխան չեղաւ դաշնակցական մարմիններու որոշած գիծերուն:

«Հ.Յ.Դ. Թուրքահայ Ռայոնական ժողովը կը գտնէ, որ հակառակ բոլոր ներքին թէ արտաքին աննպաստ պայմաններուն, կամաւորական շարժումը ունեցեր է հերոսական դրուագներ:

«Որ կամաւորական շարժումը եւ երկրի ինքնապաշտպանութեան դրուագները զրաւական ըլլալով մեր ժողովուրդի կորովին եւ հասունութեան, հիմք պիտի կազմեն մեր քաղաքական իրաւունքներուն:

«Որ կամաւորական շարժումը դրական աջակցութիւն ընձեռելով Թուրհայաստանի սահմանամերձ վայրերու հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան, նպաստեր է անոր յաջող ելքին եւ միւս կողմէ մեծ դեր ունեցեր է խոշոր զանգուածներով հայ ժողովուրդի ազատագրութեան գործին մէջ:

«Այս առթիւ, Հ.Յ.Դ. Թուրքահայ Ռայոնական ժողովը իր ողջոյնները կը դրկէ ու իր յարգանքը կ'արտայայտէ բոլոր այն ընկերներուն, որոնք իրենց պարտականութեանց զուխը կանգնեցան եւ ինկան գիտակցելով: Հայ ժողովուրդին եւ անոնց, որ կարողացան դիմադրել թշնամիին եւ փրկել իրենց գոյութիւնը, եւ անոնց, որ հակառակ աննպաստ պայմաններուն, մինչեւ վերջը չընկճուեցան եւ մեծ մասամբ ինկան հերոսաբար, եւ անոնց, որ բացարձակ յուսահատական կացութեան մէջ, նախամեծար համարեցին գէնքը ձեռքին պատիւով մեռնիլ, եւ այն քաջերուն, որ անհաւասար եւ ճգնաժամային կռիւով փրկեցին պատիւն ու ազատութիւնը, եւ անոնց, որ հակառակ փոքրիկ խումբեր ըլլալուն, եւ շրջապատուած թշնամի տարրէ, այնուամենայնիւ կուրծք տուին եւ ինկան կամ փրկուեցան, եւ անոնց, որ հնարաւորութիւն ունենալով կռուելու, դժբախտաբար կամովին հրաժարեցան գէնքի դիմելէ եւ զոհուեցան ի զուր յուսալով փրկել մնացել հայ ժողովուրդը: Եւ մեծարանք ու հիացում նաեւ այն հայ կիներ-

րուն եւ օրիորդներուն, որոնք տոգորուած իրենց ցեղային եւ աւանդական առաքինութիւններով, նախամեծար սեպեցին ամէնէն սոսկալի մահերով մեռնիլ, քան թէ անձնատուր ըլլալ թշնամիին»:

Սոյն բանաձեւը քուէի դրուելով, միաձայն ընդունուեցաւ:

Գ. ՆԻՍՍ(*)

Ընկեր Փոխանեանը զեկոյց Անդրկովկասի թուրքահայ դաշնակցական կազմակերպութիւններու մասին, նկատել տալով, որ իր զեկուցումը չի կրնար բաւարար ստոյգ եւ լիակատար ըլլալ, որովհետեւ պատգամաւորներէն շատերը իրենց շրջաններէն հնարաւորութիւն ունեցած չեն հարկ եղած թիւերն ու տեղեկութիւնները բերելու:

Զեկուցանողը առանձնապէս կանգ առաւ Երեւանի կազմակերպութեան վրայ: Յուլիսեան մեծ նահանջէն ետք, Երեւան համախմբուած ընկերները դժուարին պայմաններու մէջ կը ձեռնարկէն դաշնակցական քանի մը խումբերու կազմութեան, կապ կը վերահաստատեն կազմակերպութեան բարձրագոյն մարմիններուն հետ, ինչպէս նաեւ ի վերջոյ, առաւել չափով երկրի հետ: Երեւանաբնակ Վասպուրականցի Դաշնակց. ընկերները իրենց նախաձեռնութեամբ եւ ամենալայն չափերով կը մասնակցին փախստական հանրաբնոյթ գործերու, մարմիններու եւ ընկերութիւններու:

Ծանր ու բազմաթիւ արգելառիթ պայմաններու մէջ կը ձեռնարկեն «Աշխատանք» թերթի վերահրատարակման որ իր յայտնի կշիռն ու դերը կ'ունենայ փախստական ինդիւիդներու արծարծման ու բաւարարման մէջ: Ապա ընկերները կը վերակազմեն «Ազատութեան-Լոյս» գրադարանը, որ ներկայիս ունի մօտ 1300 կտոր գիրքեր եւ 800 ր. դրամ: Մոկացի ընկերներն ալ կը վերակազմեն «Ախպէր» գրադարանը:

Ի վերջոյ, երկրի մէջ բաւարար նպաստաւոր պայմաններ ստեղծուած ըլլալուն, կը վերակազմուի նաեւ Վասպ.ի Կեդր. կոմիտէն եւ որովհետեւ այդ մարմնի ընկերներու մեծամասնութիւնը, կուսակցութեան անմիջական հոգսերու բերումով, երկիր կը գտնուի, հարկ կը համարուի Երեւանի եւ շրջանի կուսակցութեան գործերու ղեկավարութեան համար ստեղծել Վասպ.ի Կեդր. կոմիտէին կից Ժամանակաւոր Մարմին:

Երեւանի Ժամանակաւոր Մարմինը ամենամօտ կապ կը պահպանէ Երկրի եւ Թիֆլիսի բարձրագոյն մարմին-

ներու հետ: Կը մասնակցի ու ընթացք կու տայ փախստական գործերու, ինչպէս նաեւ ապրիլ 7-ին կը նախաձեռնէ ու փախստական այլ տարրերու հետ կը կազմակերպէ մեծ միթիւնկ մը եւ հանգանակութիւն, ի յիշատակ Վասպ.ի ապրիլեան կռիւներու եւ նահատակներու: Ամէնէն կարեւորը, Ժամանակաւոր Մարմինը կը ձեռնարկէ Երեւանի շրջանի կազմակերպութեան եւ իր շրջիկ ընկերներու միջոցով, ամենակարճ Ժամանակի ընթացքին կը կազմակերպէ բազմաթիւ շրջաններու խումբեր ու մարմիններ:

Անդրկովկասեան թուրքահայ դաշնակցական կազմակերպութիւնը, չոր թիւերով, ներկայիս մօտաւորապէս հետեւեալ պատկերը կը ներկայացնէ:

Երեւան՝ վասպուրականցիները ունին 23 խումբ՝ 150 անդամով եւ առանձին ենթակոմիտէ, իսկ ալաշկերտցիները ունին 12 խումբ՝ 50 ընկերներով, առանձին ենթակոմիտէ, որ կապ ու յարաբերութիւն ունի Երեւանի Ժամանակաւոր Մարմնի հետ. վերջինս կը հսկէ ու կը ղեկավարէ ամբողջ Երեւանեան շրջանը: Ղամարու¹⁷ կայ 32 խումբ, 260 անդամով, Վաղարշապատ՝ 45 խումբ՝ 360 անդամ, Աշտարակ՝ 34 խումբ, 300 անդամ, Օշական՝ 25 խումբ, 300 անդամ, Ապարան՝ 12 խումբ, 100 անդամ, Իգդիր՝ 72 խումբ, 600 անդամ, Ներքին Ախտա-Ալափարս, 11 խումբ, 70 անդամ, Ղուրտուղուլի¹⁸ 25 խումբ, 276 անդամ, խառն տեղացիներու հետը. Նոր-Պայազիտ¹⁹՝ 500 անդամ՝ առանց խմբական բաժանումի: Գըրք-Պուլաղ²⁰ եւ Դիլիճան կան միայն անհատ դաշնակցական ընկերներ, Մեծ-Ղարաքիլիս²¹՝ 7 խումբ, 50 անդամ, Պաքու՝ 7 խումբ, 70 անդամ. կազմակերպութիւն կայ նաեւ Գրոզնի²¹, Թիֆլիս՝ 12 խումբ, 172 անդամ. Ալէքսանդրապոլի, Շիրակի եւ Կարսի մէջ կան խառն խումբեր՝ տեղացիներու հետ: Կազմակերպութիւններ կան Պաթում եւ Սուխում: Այսպէս մօտաւոր ընդհանուր թիւը կ'ըլլայ Անդրկովկասի մէջ՝ 300 խումբ՝ 3500 ընկերներով:

Զեկուցումէն ետք զանազան շրջաններէ տրուեցան լրացուցիչ տեղեկութիւններ, Անդրկովկասեան կազմակերպութիւնը աւելի հիմնաւոր դարձնելու համար եղան առաջարկութիւններ, որոնց շուրջ ծագեց վիճաբանութիւնը եւ բանաձեւի քուէարկումը թողուեցաւ յաջորդ նիստին:

(Շար.)

«Աշխատանք», 20 Մայիս 1917, Բ. տարի, թիւ 6

Մ. Խ.— Երկրորդ նիստը զբաղեցաւ Ազգ. եւ Հայաստանի Բիւրոններու զեկուցումներով եւ վիճաբանութիւններով:

17.- Այժմ Արտաշատ:
18.- Այժմ Արմաշի:
19.- Այժմ Գաւառ:
20.- Այժմ Ալուրնք (Վարդենիսի շրջան):
21.- Քաղաք Հիւս. Կովկասի մէջ (Չեչենիա):

Դ. ՆԻՍՏ

Երկրի նախկին վարչական կազմի մասին ընդհանուր գիծերով զեկուցում տուաւ ընկեր Ռոստոմ, վերհանելով ռուս նախկին ռեժիմի ծանօթ հակահայ քաղաքականութիւնը եւ անոր ծանր հետեւանքները երկրի հայ ժողովրդի վրայ: Ուրիշ լրացուցիչ տեղեկութիւններ եւ փաստեր տուին Մուշի, Վանի, Խնուսի եւ այլ գրաւուած վայրերու գործիչ ընկերները:

Զեկույցներէն ետք եղան առաջարկութիւններ նոր վարչակազմ հաստատելու եւ հոն Դաշնակցութեան մասնակցութիւնը բերելու մասին:

Թուրքահայաստանի գրաւուած երկիրներու նախկին վարչակազմի եւ ըլլալիք վերակազմութեան մասին զեկույցներէ, առաջարկութիւններէ եւ թեր ու դէմ վիճաբանութիւններէ ետք, քուէարկութեան տրուեցաւ եւ միաձայն ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը.—

«Լսելով զեկուցումը պատերազմի իրաւունքով Թուրքահայաստանի գրաւուած վայրերու նախկին ժամանակաւոր վարչակազմի մասին, Հ.Յ.Դ. Թուրքահայ Ռայոնական ժողովը կը գտնէ, որ Թուրքահայաստանի գրաւուած վայրերուն մէջ ռուս նախկին կառավարութիւնը թէեւ նախ տեղական ուժերով վարչութիւններ ստեղծեց, որոնք ըստ ամենայնի համապատասխան էին տեղական ժողովրդի շահերուն, ձգտումներուն եւ սո-

վորութիւններուն, սակայն ժամանակ մը վերջ կրկին խափանեց զանոնք եւ գործը յանձնեց Ռուսիոյ ներքին գաւառներէն բերուած եւ իրենց բռնութիւններով յայտնի պաշտօնեաներուն, այնպէս որ ռուս նախկին կառավարութեան բիւրոկրատիկ քաղաքականութեան օրկաններու օրով, ոտնահարուեցան հայ ժողովրդի, ինչպէս եւ ռուս պետական շահերը:

«Նկատելով սակայն որ ներկայիս նախկին կարգերու վերացումովը, Թուրքահայաստանի գրաւուած վայրերու ժամանակաւոր վարչութիւնները կազմալուծուած ըլլալով, փոխարէն ստեղծուած են տեղական ազգաբնակչութեան եւ զինուորական խորհուրդներու խառն գործադիր մարմիններ՝

«Ռայոնական ժողովը շեշտելով որ պատերազմի տեւողութեան ամբողջ ընթացքին անհրաժեշտ ըլլալով գործակցութիւնը զինուորական տարրերու հետ, կը հրահանգէ երկրի դաշնակցական մարմիններուն եւ ընկերներուն, ամէն կերպ ջանալ, որ ստեղծուին տեղական ժողովրդի կողմէ ընտրուած վստահելի տարրերէ վարչութիւններ, որոնք նպատակ ունենան աջակցելու պատերազմական գործողութեանց յաջողութեան եւ երկրի վերաշինութեան գործին»:

(Շար.)²²

22.- Թէեւ նշուած է շարունակելի, սակայն «Աշխատանք»-ի յաջորդ թիւերուն մէջ կարելի չեղաւ գտնել թղթակցութեան վերջին մասը:

«Աշխատանք», 31 Մայիս 1917, Բ. տարի, թիւ 9

Ա 9.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԹՈՒՐՔԵՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Տաշկենտի կոմիտէի նախաձեռնութեամբ յունիսի 5-ին [1917] կայացաւ Հ. Յ. Դաշնակցութեան Թուրքեստանի շրջանային ժողովը Տաշկենտում: Նախ մի նախապատրաստական ժողով տեղի ունեցաւ, ապա երեք հանդիսաւոր նիստ՝ «Ազատութեան Տան» շէնքում տեղիս հայ գաղութի երկսեռ հասարակութեան ներկայութեամբ: Մի քանի պաշտօնական նիստեր էլ կայացան դպրոցի շէնքում:

Շրջանային ժողովին հրաւիրուած էին Թուրքեստանի շրջանների 20 պատգամաւորներ: Վճռական ձայնով մասնակցում էին 14 պատգամաւոր եւ Բագրի Կենտկոմիտէի ներկայացուցիչը:

Պատգամաւոր եկել էին Անդրիջանից, Ուկանդից, Սամարղանդից, Տաշկենտից, Սկոբեւից, Չարջուից, Հին եւ Նոր Բուխարից, Քերքից եւ Ղզլ Արդաշից, Ուրսատինսկայա կայարանից, Սիբ-Դարիայից եւ Գալոդնի Ստեպից:

Ժողովը բաց արաւ տեղիս կոմիտէի պատուաւոր նախագահ ընկ. Ս. Ա. Եսայեանը մի հակիրճ խրատուիչ ճառով: Նախագահ ընտրուեց ընկ. Ջաւահիցին²³, փոխնախագահ ընկ. Ե. Յարութիւնեան եւ քարտուղար՝ ընկ. Ա. Սիրունեան: Ընկ. Ջաւահիցին մի փայլուն ճառ արտասանեց ազատութեան մեծ ճանապարհին ընկած Դաշնակցութեան հիմնադիրներին՝ Քրիստափորի եւ Սիւմոնի, Դաշնակցութեան Կամքի եւ Սրտի, այդ երկու մեծ ընկերների յիշատակին: Յարգանքի խօսք ասաց մեր ընկերներից տիկ. Գոհար Նարինեանը, Քրիստափորի աշակերտուհիներից: Ողջոյնի խօսք ասին նաեւ սոցիալիստ-յեղափոխականների գիւղացիական միութեան եւ սարթ սոցիալիստ յեղափոխականների ներկայացուցիչները: Երեքն էլ շեշտեցին, որ տեղական եւ պետական նշանակութիւն ունեցող հարցերում եւ ընտրութիւններում պէտք է իրար ձեռք ձեռքի տւած առաջ գնան: Դաշնակցութիւնը արդէն տեղիս սոցիալիստ-յեղափոխականների հետ բլոկ է կազմել յառաջիկայ գործունէութեան համար:

Յարգանքի եւ ողջոյնի ճառեր արտասանելուց յետոյ՝ ընկ. նախագահի առաջարկութեամբ ողջոյնի հեռագիր է ուղարկուում Թիֆլիս Արեւելեան Բիւրոյին: Բագրի Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Շաւարշը ողջոյնի ճառ ուղղեց շրջանի ընկերներին, որ ընդունեց բոլոր ծափահարութիւններով:

Ընկ. նախագահի առաջարկութեամբ ողջոյնի հեռագիր ուղարկեց Բագրի Կենտրոնական կոմիտէին:

Այնուհետեւ ժողովն անցաւ օրակարգի հարցին: Տե-

ղական մարմինների գեկուցումներից երեւում է, որ Դաշնակցութիւնը բոլոր շրջաններում հին ռեժիմի օրերում էլ ունեցել է իր մարմինները, որով վերակազմւելով ազատութեան օրերից սկսած, խտացրել են իրենց շարքերը եւ գաղութների հայ ժողովրդի ազգային-քաղաքական եւ սոցիալ-տնտեսական կեանքին ուղղութիւն տւել ըստ Դաշնակցութեան աշխարհայեացքի:

Քննելով մեր վերաբերմունքը դէպի ժամանակաւոր կառավարութիւնը, շրջանային ժողովն ընդունեց հետեւեալ բանաձեւը. «Ի նկատի առնելով, որ ներկայ կոալիցիոն ժամանակաւոր կառավարութեան դեկլարացիան, որի կէտերից մէկն է կազմում մանր ազգերի ազատ ինքնորոշումը եւ սոցիալական խնդիրներում նւագագոյն պահանջները. ի նկատի առնելով, որ միմիայն ուժեղ ու անպայման վստահութիւն վայելող կառավարութիւնը կարող է ապահովել ձեռք բերած ազատութիւնը, ժողովս իր լիակատար վստահութիւնը յայտնելով ժամանակաւոր կառավարութեան, ոչ մի ազգային-քաղաքական եւ սոցիալ-տնտեսական պահանջ չի դնում մինչեւ սահմանադիր ժողովի գումարումը»: Այս բանաձեւը հեռագրով ուղարկեց մինիստրների խորհրդի նախագահ Լևովին:

Մեր վերաբերմունքը դէպի պատերազմ: Այս հարցի առիթով ընդունեց հետեւեալ բանաձեւը. «Պատերազմը պէտք է շարունակել մինչեւ որ կռուող կողմերը ստիպւած լինին ընդունել անխտիր բոլոր ազգերի ազատ ինքնավարութեան իրաւունքն առանց մէկը միւսի վրայ բռնանալու հողերի գրաւմամբ կամ տուգանքի պահանջով, պարտաւորեցնելով սակայն, որ գրաւած երկրները վերականգնեն աւերողի հաշտով, եւ լիակատար ազատութիւն տալ ամէն ազգին իրեն որոշելու իր քաղաքական բախտը»:

Պատերազմի մինիստր Կերենսկուն ուղարկեց հետեւեալ հեռագիրը. «Հ. Յ. Դաշնակցութեան Թուրքեստանի առաջին շրջանային ժողովը Տաշկենտում, ոգեւորւած հպարտութեան զգացմունքով, ողջունում է առաջին սոցիալիստ գիւնտրական մինիստրին, Թուրքեստանի զաւակին, Դաշնակցութեան վաղեմի բարեկամին, միանգամայն համոզւած լինելով, որ նա միայն կարող է ստեղծել հզօր յեղափոխական բանակ, պատերազմը շարունակելու համար, կոալիցիոն մինիստրութեան ընդգծած սկզբունքների հիման վրայ, ինչպէս կարողացաւ արժանապէս բարձր պահել ազատութեան եւ յեղափոխական դրօշը»:

Ա. ՄԵԼԻՔ ՓԱՐՍԱԴԱՆԵԱՆ
«Հորիզոն», 4 Յուլիս 1917, թիւ 138, Թիֆլիս

23.- Ջաւահիցի – ծածկանուն Ղազարոս քհն. Տէր Գրիգորեանի:



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Մեր վերաբերմունքը դէպի ազատութեան փոխառութիւնը — ժողովն սկզբունքով ընդունեց, որ դաշնակցական ընկերներն ըմբռնելով ազատութեան փոխառութեան նշանակութիւնը պատերազմի յաջող ելքի եւ ձեռք բերած ազատութեան պահպանման համար, ամէն կերպ պէտք է աշխատեն պարզերես դուրս գալու մեր իրականութեան մէջ:

Այդ խնդրում սոց. յեղափոխ. հետ միախորհուրդ գործունէութեան մասին, շրջանային ժողովը սկզբունքով որոշում է, որ Դաշնակցութեան եւ սոցիալիստ-յեղափոխականների իդէալի եւ տակտիկի մէջ տարբերութիւն չկայ, ուրեմն ամէն տեղ մեր ընկերները պրոկ կազմեն նրանց հետ՝ պետական եւ համապետական նշանակութիւն ունեցող գործունէութեան մէջ: Նախապատրաստական քայլեր Սահմանադիր ժողովի համարայն կէտի վերաբերմամբ որոշում է, վերոյիշեալ կուսակցութեան հետ ձեռք ձեռքի գործել, իսկ որոշ դէպքում նաեւ սոցիալ դեմոկրատների հետ, միշտ Դաշնակցութեան շարքերը մարզելով ձախակողմեան կուսակցութիւնների հետ միասին ընդդէմ պահպանողական բուրժուական կուսակցութիւնների:

Տեղական մարմինների միախորհուրդ միաօրինակ գործունէութիւն: Այս հարցի առիթով, որոշեց կազմել ներքին կանոնադրութիւն եւ այդ գործը յանձնեց ընտրելիք Կենտր. կոմիտէին:

Պետրոգրադի զինւորական եւ բանւորական խորհրդի յայտարարած անկետայի մասին շրջանային ժողովը ընդունեց հետեւեալ բանաձեւը:

«Պետրոգրադի բանւորական եւ զինւորական խորհրդի հրատարակած անկետի 4-րդ եւ 6-րդ հարցերում ի մէջ այլ ազգերի ամէնէն աւելի ռուսական մեծ ազգութեան հետ ներկայ պատերազմում արիւն թափած եւ գիտակցաբար իր արեւելեան եւ արեւմտեան հատուածներով ի նպաստ Ռուսիոյ պատերազմի դաշտը նետուած հայութիւնը եւ Հայաստանը մոռացուած է, շրջանային ժողովը Պետրոգրադի զինւորական եւ բանւորական խորհրդի ուշադրութիւնը հրաւիրելով այս ցաւալի մոռացութեան վրայ՝ անցնում է հերթական հարցերին»: Այս բանաձեւը հեռագրով ուղարկել է վերոյիշեալ խորհրդին:

Դպրոցական խնդիրների վերաբերեալ որոշեց, որ ծխական դպրոցները լինին առաջիկայ ուսումնական տարւանից սկսած միդասեան եւ երկդասեան 6-ամեայ: Միջնակարգ դպրոց ունենալը թուրքեստանում դեռ վաղաժամ համարուեց, նախ հայութիւնը չի կարող այնքան աշակերտութիւն տալ, որ հնարաւոր լինի ունենալ մի միջնակարգ դպրոց. երկրորդ՝ քանի որ պետական դպրոցներում մտցւելու է մայրենի լեզուի պարտադիր

ուսում եւ երրորդ՝ հնարաւոր է, որ ծնողներն իրենց որդոց հայկական միջնակարգ կրթութիւն տալու համար ուղարկեն Կովկաս, մեր հայրենիքը:— Էջմիածնի ճեմարանի եւ Մոսկուայի Լազարեան ճեմարանի վերաբերեալ անհրաժեշտ համարուեց առաջինը աշխարհիկ դարձնել եւ տեղափոխել Երեւան, երկրորդը՝ ազգայնացնել եւ տեղափոխել ուրիշ հայկական կենտրոն: Յանկայի համարուեց բանալ մանկապարտէզներ եւ երեկոյեան դասընթացներ հասակաւորների համար:

Որոշեց սեպտեմբերին հրաւիրել Սամարղանդում երկրորդ շրջանային ժողով: Կենտրոնական Կոմիտէ ունենալու հարցի մասին ընդունեց հետեւեալ բանաձեւը. «Ի նկատի ունենալով, որ թուրքեստանի հայ ժողովուրդը կազմում է հայութեան մի պատկառելի գանգլաձը, որ թուրքեստանը հեռու է Բագրի Կենտրոնական Կոմիտէի անմիջական հսկողութիւնից՝ ժողովը միաձայն որոշում է թուրքեստանում, Տաշկենտ քաղաքում ունենալ Հ. Յ. Դաշնակցութեան Կենտր. կոմիտէ», որն եւ ընդունեց հինգ հոգուց եւ երկու անձնափոխանորդից բաղկացած:

Շրջանային ժողովը կարգալով «Հորիզոն»ում Միջկուսակցական Բիւրոյի յայտարարութիւնը, ռուսահայ հատուածի ազգային համագումարի ընտրութիւնների մասին՝ բողոքում է եւ յայտարարում, որ բացի Անդրկասպեան երկրից միմիայն Ֆերգանը իր հարեւան շրջաններով կը լինի ոչ պակաս քան 20-25 հազար հայ ժողովուրդ, մինչդեռ Միջկուսակց. Բիւրոն Անդրկասպեան երկիրն էլ հետը հաշուում է 21,000 հոգի: Այս հարցի առիթով հեռագիր է ուղարկւելու ըստ պատկանելոյն»:

ՀԵՌԱԳԻՐ «ՀՈՐԻԶՈՆ»ԻՆ

Տաշկենտից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Թուրքեստանի Դաշնակցականների Շրջանային առաջին համագումարը իր բացման օրը ջերմ բարեմաղթութիւններ է ուղարկում յանձին բիւրոյի բոլոր ընկերներին, որոնք երկար տարիների ընթացքում յամառ կուռով արցունքի եւ արեան միջով ճանապարհ էին բացում դէպի ազատութիւնը: Համագումարը խոստանում է արժանավայել կերպով տանել կուսակցութեան բարձր դրոշակը յոգուտ բազմատանջ եւ արիւնով ողողուած հայրենիքի: Շրջանային համագումարի նախագահ՝ Ջաւահիր»:

Ա. ՄԵԼԻՔ ՓԱՐՍԱԴԱՆԵԱՆ
«Հորիզոն», 5 Յուլիս 1917, թիւ 139



Փաստ. 26-4

Ա 10.- Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ (ԹԻԻ 8) ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Թիֆլիզ, 7 Յունիս 1917

Ներկայ քաղաքական մոմենտում, երբ մեր առաջ դրած են ամբողջ Ռուսաստանի եւ մասնաւորապէս հայ ժողովրդի կեանքին վերաբերող հիմնական խնդիրները, Հ. Յ. Դաշնակցութեան վարիչ մարմինները, զանազան վայրերում աւելի քան երբեւիցէ, պիտի աշխատեն ամենասերտ յարաբերութիւնն պահել միմեանց հետ եւ փոխադարձաբար իրազեկ պահել իւրաքանչիւր շրջանի կարեւորագոյն ընթացիկ գործերի եւ տրամադրութիւնների մասին:

Արեւելեան բիւրոն պարբերաբար շրջաբերականների միջոցաւ տեղեկացնում է կուսակցութեան բոլոր մարմիններին ամենուրեք թէ ընդհանրապէս օրայ նշանաւոր երեւոյթների մասին հայութեան կեանքում եւ թէ մասնաւորապէս կուսակցութեան եւ Արեւելեան բիւրոյի ձեռնարկած քայլերի մասին: Դրա հետ միաժամանակ Բիւրոն առաջարկում է ձեզ եւս պարբերաբար մանրամասն նամակներով մեզ հաղորդել աչքի ընկնող երեւոյթները, ձեր շրջանի անց ու դարձից եւ մասնաւորապէս կուսակցական կեանքից:

1.- Արդէն ստացած կը լինէք մեր նախորդ շրջաբերականը, որ վերաբերում էր առաջիկայ հրաւիրելիք ռուսահայկական համագումարին եւ նրա ընտրութիւնների նախապատրաստական աշխատանքներին կուսակցական մարմինների կողմից: Իբրեւ լրացուցիչ տեղեկութիւն կարող ենք հաղորդել ձեզ, որ համագումարի օրը այժմ փոխուած է եւ նշանակուած է Օգոստոսի 20-ին, իսկ տեղը որոշուած է Թիֆլիզ:

2.- Հրաւերը ստանալով ներկայացուցիչ ուղարկել Պետրոգրատ Սահմանադիր ժողովի օրինագիծը մշակող առանձին խորհրդակցութեան աշխատանքներին, Արեւելեան բիւրոն անմիջապէս նշանակեց երկու ընկեր, որոնք արդէն ճանապարհուել են Պետրոգրատ համապատասխան հրահանգներով: Այդ ընկերները միաժամանակ վերցրին իրենց հետ այն բոլոր մշակած նիւթերը, որ վերաբերում են Անդրկովկասեան նահանգների վարչական բաժանումների սահմանները փոփոխելու խնդրին եւ պիտի աշխատեն ամէն ջանք գործ դնել յաջողացնելու համար այդ փոփոխութիւնները, որ պահանջում են հայ ժողովրդի շահերը եւ որոնց մասին առանձնապէս շեշտել է վերջին ռալոնական ժողովը:

3.- Արեւելեան բիւրոն մոմենտին հրամայական պահանջ ընդունելով բոլոր յեղափոխական կուսակցութիւնների համերաշխ գործակցութիւնը ներկայումս՝ շարունակ աշխատում էր գործել այդ նշանաբանով: Սակայն, չնայած Հ.Յ.Դաշնակցութեան բոլոր մարմինների կորրեկտ գործ[ու]նութեան եղանակին, վերջին ժամանակները բողոքներ էին հասնում Արեւելեան բիւրոյին սոցիալ դեմոկրատական կուսակցութեան մի շարք անթոյլատրելի արարքների վերաբերմամբ, որոնցով նրա ներկայացուցիչները աշխատում էին յանուն իրենց յաղթանակի ամէն տեսակ միջոցներով չեզոքացնել միւս կուսակցութիւնները, այդ թում մանաւանդ Դաշնակցութիւնը:

Արեւելեան բիւրոն՝ համարելով սոց-դեմոկրատների նման գործելակերպը հակայեղափոխական, որոշեց ամէն առիթով կուսակցութեան կողմէն բողոքել դրա դէմ հրապարակաւ եւ մամուլի մէջ արձանագրելով նրանց բոլոր ապօրինի գործողութիւնները եւ փաստերը: Միաժամանակ որոշեց յանձնարարել կուսակցական մարմիններին նոյն եղանակով վարուել իրենց վայրերում:

4.- Ներկայ յեղափոխական շրջանում առանձին խոշոր դեր Ռուսաստանում վիճակուած է կատարել գիւղացիական պատգամաւորների համառուսական խորհրդին: Կուսակցութիւնը յաջողացրել է մի քանի ընկերներ ուղարկել Պետրոգրատ գիւղացիական համառուսական համագումարին եւ նրանք արդէն կարողացել են մտնել գիւղացիական պատգամաւորների խորհրդի մէջ: Բայց աւելի մեծ գործ դեռ մնում է մեր առաջ կատարելու: Պէտք է ամէն ջանք գործ դնել կազմակերպելու մեր գիւղացիութիւնը, ստեղծել գիւղացիական միութիւնների ամբողջ ցանց, որպէսզի դրանց միջոցով մենք կարողանանք շուտով հրապարակ գալ կուսակցական կազմակերպած ոյժով Սահմանադիր ժողովի առաջ: Գիւղացիական միութիւններն կազմակերպելու համար, Արեւելեան բիւրոն թէ կուսակցական եւ թէ կողմնակի միջոցներով արդէն մի շարք ընկերներ է ուղարկել զանազան շրջաններ եւ էլի շարունակում է ուղարկել: Չեր ուշադրութիւնը հրաւիրում ենք այն հանգամանքի վրայ, որ ներկայ Յունիսի 19-ին Թիֆլիսում նշանակուած է Անդրկովկասեան գիւղացիական համագումար, որի մասնակցելու համար ներկայացուցիչներ պիտի ուղարկեն բոլոր գիւղական հասարակութիւնները: Այդ մասին դուք արդէն ստացած կը լինէք հեռագրական հրահանգներ Արեւելեան բիւրոյից, եւ աշխատելու էք շուտով ընտրութիւններ կատարել ամէն տեղ եւ ներկայացուցիչներ ուղարկել ժամանակին:

ՆԻԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՐ

165

5.- Մի քանի շրջաններից Արեւելեան բիրոն ուրախութեամբ տեղեկացել է, որ յարաբերութիւնները հարեւան թուրք ժողովրդի գիւղացիական խաւերի հետ ներկայումս միանգամայն կորրեկտ եւ բարեկամական են, եւ դրան նպաստում են մանաւանդ թուրքերի մէջ առաջ եկած ձախակողմեան-դեմոկրատական հոսանքները: Պէտք է աշխատել աւելի եւ աւելի սերտ կապեր ստեղծել թուրքերի այդ ձախակողմեան տարրերի հետ, եւ թուրք ժողովրդի լայն խաւերի վրայ ազդելու համար յարմար առիթներից օգտուել պարբերաբար գիւղական եւ շրջանային ընդհանուր համագումարներ հրաւիրել թուրքերի հետ միասին:

Միեւնոյն ժամանակ ի նկատի առնելով, որ հայ զինուորների կողմից մի քանի մասնաւոր դէպքերում թուրքերի վերաբերմամբ թոյլ են տրուել անցանկալի գործողութիւններ, պէտք է ջանալ ամէն կերպ ազդել նման դէպքերի առաջն առնելու համար, եւ առհասարակ կազմակերպուած աշխատանք սկսել հայ զինուորների շրջանում:

6.- Ձեզ յայտնի կը լինի արդի լրագիրներից որ Պետրոգրատի բանուորական եւ զինուորական խորհրդի նախաձեռնութեամբ եւ հրաւերով շուտով Ստոկհոլմում կայանալու է սոցիալիստական կուսակցութիւնների ներկայացուցիչների Խաղաղութեան համագումար: Ընդունելով որ այդ համագումարը մեծ դեր կարող է խաղալ պատերազմող կողմերի ներկայացուցիչների համաժողովի համար եւ թերեւս այնտեղ նախորոշուեն ժամանակակից բոլոր կարեւորագոյն հարցերը, Արեւելեան բիրոն նպատակաշարմար գտաւ, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը եւս պիտի մասնակցութիւն ունենայ այդ համագումարին, որոշեց ուղարկել Ստոկհոլմ կուսակցութեան ներկայացուցիչներ, տալով նրանց բոլոր անհրաժեշտ նիւթերը հայկական հարցին վերաբերմամբ եւ համապատասխան հրահանգները²⁴:

24.- Նշուած ներկայացուցիչներէն միայն Ռոստոմն էր, որ պիտի կարողանար մասնակցիլ Ստոկհոլմի խաղաղութեան համագումարին: Տեսնել այս մասին «ՆԻԻԹԵՐ»ու ԺԲ. հատոր, էջ 269-308:

Փաստ. 26-6

Հայ Յեղ. Դաշնակցութեան
Հայաստանի Բիւրո

Ա 11.– ԹԱԻՐԻԶԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

14 Յուլիսի 1917 թ.
No 44

Ներկայ փաստաթուղթը կը կրէ «Հայաստանի բիւրոյի կողմէ Ռուբէն» (Տէր Մինասեան) ստորագրութիւնը: Եւ որովհետեւ յաջորդող շարք մը փաստաթուղթեր միեւնոյն «Հայաստանի բիւրո» անունով են, հարկ կը դառնայ համառօտ բացատրութիւն տալ այդ մասին: Առաջին անգամ 1913 թ.ի Հ.Յ.Դ. Եօթներորդ Ընդհ. ժողովն է, որ կեանքի կոչած էր Հայաստանի բիւրոն, անոր իրաւասութիւնը տարածելով Արեւմտեան Հայաստանի 6 վիլայէթներուն եւ Տրապիզոնի նահանգին վրայ: 1914 թ. Յուլիսին Կարնոյ մէջ գումարուած Հ.Յ.Դ. Ութերորդ Ընդհ. ժողովը դիմած էր աւելի արմատական փոփոխութեան: Պահելով հանդերձ Արեւելեան բիւրոն այնպէս ինչպէս կար մինչ այդ (Կովկաս, Ռուսիոյ մնացեալ շրջանները եւ Պարսկաստան), ջնջած էր բոլորովին Արեւմտեան բիւրոն, վերջինիս կապուած Թուրքիոյ, Պալքաններու, Եգիպտոսի, Երուպայի ու Ամերիկայի կուսակցական շրջանները դնելով Հայաստանի բիւրոյի իրաւասութեան ներքեւ: Ընտրուած էր 10 անդամներէ բաղկացեալ Բիւրո – 6ը՝ Հայաստան, 3ը՝ Պոլիս, 1 ժընտ: Սակայն, վրայ հասնող Ընդհ. պատերազմը եւ Թուրքիոյ հայութեան վիճակուած ողբերգութիւնը, անկարելի դարձուցին նորընտիր Բիւրոյի անդամներուն մէկտեղումն ու միասնական գործունէութիւնը: Այլապէս նաեւ, անոնց մէկ մասը (Ակնունի, Վռամեան, Բարսեղեան, Չարդարեան) Մեծ Եղեռնի նահատակներու շարքին էին արդէն, միւսները (Ռոստոմ, Արամ Մանուկեան, Ս. Վրացեան, Ռուբէն Տէր Մինասեան, Վարանդեան) ցրուած էին զանազան վայրեր: Այժմ, երբ Արեւմտեան Հայաստանի նահանգները գրաւուած էին ռուսական բանակի եւ հայ կամաւորներու կողմէ, երբ Կովկաս ապաստանած զաղթականութեան մէկ կարեւոր մասը վերադարձած հայրենի բնօրրանը վերաշինելու, երբ մանաւանդ Փետրուարեան յեղափոխութեամբ ստեղծուած նպաստաւոր մթնոլորտը ապագայ ազատ Հայաստանի մը հեռանկարը կը շողացնէր հայութեան աչքին, – այս բոլորի լոյսին տակ անհրաժեշտ նկատուած էր կազմը ամբողջացնելով՝ վերստին կեանքի կոչել Հայաստանի բիւրոն, վերջինիս վստահելով Հայաստանի վերաբնակեցման եւ վերաշինութեան գործին կազմակերպումը:

Ընկերներ,

Ստացանք շնորհակալութեամբ ձեր շնորհաւորական հեռագիրը²⁵. կը հաւատանք ձեզ հետ, որ այսքան արիւնն ու աշխատանքը չպիտի կորսուին եւ պիտի ազատագրուի Հայաստանը: Որքան որ յուսոյ նշոյլներ կ'երեւան բայց դեռ մեր երկրի վրայից չեն անցած փոթորիկները. կարծես աղէտներն ու վտանգները շարունակուում են եւ սպառնում են կործանել մնացորդ հայութիւնն եւս, ո՛չ միայն Հայաստանի, այլեւ Կովկասի: Այստեղի թուրք ինտելիգենցիան ամէն կերպ խոչընդոտներ է առաջ բերում Հայաստանի ինքնավարութեան իրազորման դէմ: Միւս կողմից վրացի եւ թուրք ղեկավարող տարրերը սերտ ներդաշնակութեամբ կը ջանան Անդրկովկասում գերիշխան դիրք ձեռք բերել եւ ճնշել մեր իրաւունքները: Օր աւուր պրովակացիաներ շարունակուում են, եւ ներկայ անարխիայի մէջ կը վախցուի որ գնանք ոտքի տակ: Արագ կերպով գիւնուում են թուրքերը, գուցէ դա մասամբ առաջ է եկած նրանց այն մտավախութիւնից, որ կարող են զօրքերի նահանջման կամ անկարգութեանց պարագային վտանգի ենթարկուել, բայց շատ հնարաւոր է, որ այդ ոյժը դառնայ է՛լ մեր դէմը, մանաւանդ որ մոլթ ուժեր չեն պակասում այդ ուղղութեամբ աշխատելու: Այդ բոլորը ի նկատի առնելով հերթական հարց պիտի դարձնել հայութեան ինքնապաշտպանութեան, նրա ֆիզիքականի ամրապնդման հարցը:

Կը խնդրուի իմանալ ձեզնից շուտափոյթ կերպով. դուք ի՞նչ էք ձեռնարկած այդ խնդրի վերաբերմամբ եւ արդեօք հնարաւորութիւն չունիք որեւէ կերպ օժանդակելու մեզ ոյժերի հայթայթումով:

*Ընկ. բարեկենդրով
Հայաստանի Բիւրոյի կողմէ
ՌՈՒԲԷՆ*

25.- Շնորհաւորական հեռագիրը կը վերաբերէր ռուսական յեղափոխութեան յաղթանակին:

Փաստ. 26-7

Հայ Յեղ. Դաշնակցութեան
Հայաստանի Բիւրօ

Ա 12.– ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵՂԻ. ԿՈՍԻՏԵԻՆ

22 Յուլիսի 1917 թ.
No 64

Ընկերներ,

Ստացուեց Յուլիս 12 թուով N N 63, 69 Ձեր երկու հե-
ռագիրները: Դեռ չեն ստացուած Ձեր ուղարկած նա-
մակները եւ գումարները՝ 18,691+20,197+21,505 ուրբլի-
ները: յոյս ունինք որ շուտով պիտի ստանանք: Ստիպո-
ղաբար դրամ պահանջներու պատճառը դրամի մեծ
կարիքն էր, որ ունին թէ՛ Արեւելեան եւ թէ՛ մանաւանդ
Հայաստանի բիւրօն, որ այժմ համարեա՛ գրկուած է
հական աղբիւրներից: Երկիրը թէեւ աւերակ, ժողո-
վուրդը թէեւ փշուրած, բայց նորից մեծ կարիք կայ
կուռ կազմակերպութիւն առաջ բերելու երկրի վերա-
նորոգուած վայրերում, դիմագրաւելու համար լեռնե-
րում մնացած քիւրդերին, երկրի մէջ կազմած գործա-
դիր իշխանութիւնների մէջ ձայն ունենալու եւ որ գըլ-
խաւորն է երկրի վերաշինութեանը ուղղութիւն տալու
նպատակով, ստեղծելու միապաղաղ հայկական տերրի-
տորիա: Այս բոլոր գործերը պահանջում են մեծաքա-
նակ ծախսեր: Յարդ այդ նպատակները իրագործելու
համար բիւրօյի անդամներից շատերը եւ գործիչ ընկեր-
ները զանազան հասարակական հիմնարկութեանց ծա-
ռայողի անուան տակ եւ նրանց միջոցներով մտած էին
երկիր այդ նպատակներն իրագործելու. այժմ աւելի
լայն ասպարէզ բացուելով, այդ միջոցներն էլ չեն կա-
րող բաւարարել մեր կարիքները: դրա համար սպասում
ենք եւ հարկաւոր է լայն օժանդակութիւն, որ հնար լի-
նի արագօրէն իրագործելու առաջադրուած խնդիրնե-
րը:

Մի քանի խօսք երկրի դրութեան եւ այնտեղ մեր կա-
տարած աշխատանքների մասին: Ինչպէս վերեւ յիշեցի,
Հայաստանի բիւրօյի նպատակներից է ստեղծել տերրի-
տորիա: Ծանօթ է Ձեզ Հայաստանի նախկին ազգագրա-
կան դասաւորումը, երբ հայ տարրը ընկած էր կղզիներ
ով իսլամական ծովում: Այս պատերազմին կարելի է
ասել երկիրը մաքրուեց թէ իսլամից եւ թէ քրիստոնեա-
ներից: Հազարաւոր գիւղեր բոլորովին անմարդաբնակ
են: Հայ տարրը երկրի մէջ հողային տարածութիւն
գրաւելու տեսակէտից աշխատում ենք օգտուել հան-
գամանքից եւ ստեղծել այդ անմարդաբնակ երկրում
միապաղաղ հայութիւն: Քիչ է մնացել հայութիւնը,
բայց նրա մէջ վառ է քաղաքական այն դրդումը, որով
կը ձգտի ստեղծելու Հայաստան: Ամէնուրեք վերաշին-

ւում են գիւղեր: Բասենում, ուր առաջ կար հայու 30-40
գիւղ, այժմս արդէն այդ թիւը հասած է 90-ի: Այն-
թափ²⁶, ուր կար 5 գիւղ, այժմս 48-ից անց է, նոյն համե-
մատութեամբ շէնանում են միւս շրջաններն եւս: Թէեւ
այդ ուրախալի երեւոյթը նկատելի է եւ քիչ քիչ ժողո-
վուրդը արմատ կը գցէ աւերակների մէջ, բայց երկիրը
կայ, որ ներկայումս տիրած անարխիան նահանջ առա-
ջացնէ եւ մեր Փրոնտում եւ քանդէ սկսած շինարարա-
կան աշխատանքը:

Ձեզ արդէն յայտնի է, որ մեր ընկերների ջանքերով
Արտաքին գործերի նախարարութեան մօտ, յաջողուեց
Հայաստանը բաժանել կովկասեան իշխանութիւնից եւ
ուղղակի կապել Պետրոգրադի հետ, եւ միեւնոյն ժամա-
նակ հայկական գրաւուած վայրերը հայ կոմիսար
Ձաւրեանի ղեկավարութեամբ համարեա իրաւունք
ստացաւ ինքնավար կառավարուելու. մանրամասնու-
թիւնները կը պատմէ Գարոն²⁷: Այդ որոշման դէմ ելաւ
տեղիս կոմիսարութիւնը, որ իր իրաւասութիւնների
սահմանափակում կը նկատէր Հայաստանի եւ Տրապի-
զոնի բաժանումը Կովկասից: Սրան ոյժ կը տան եւ
թուրքերը եւ մասամբ վրացիք, որոնք դէմ են հայկա-
կան ինքնորոշման, եւ աշխատելով Հայաստանը են-
թարկել կովկասեան կոմիսարիատութեան, ոչնչացրած
կը լինեն հայկական հարցը եւ կը կաշկանդեն այն քա-
ղաքականութիւնը, որով կը ջանացուի Հայաստանը
բռնել հայերով: Միւս կողմից դժուարութիւններ կը յա-
րուցանեն երկրի շրջանային կոմիսարութիւններից
ոմանք, որոնք թուրք կամ վրացի օրինատացիա ունին:
Այս դժուարութիւնների առաջ է կանգնած վերաշին-
ւող Հայաստանը, եւ կարելի է ասել ցարդ խանգարելու
ջանքերը հետեւանք չեն ունեցած: Պետրոգրադի կենտր-
կառավարութեան վրայ յենուած, Հայկական նահանգ-
ների կոմիսարութեան գործերը չեն կասեցուրի այդ
արգելքներից:

Տեղիս թուրքերը ուժեղ թափով կը գինուեն. նրանց
մէջ կը գործէ պանիսլամական եւ պանօսմանական քա-

26.- Չշփոթել Կիլիկիոյ Այնթապ քաղաքին հետ: Այս մէկը Էրզ-
րում նահանգի հին Պալապիտի մէկ գաւառակն է համանուն աւա-
նով:

27.- Արմէն Գարօ – Փաստրմաճեան Գարեգին, որ այդ օրե-
րուն իբրեւ Ամենայն հայոց կաթողիկոսի պատուիրակ կը գտնուէր
Սիւսցեալ Նահանգներ:

դաքականությունը. դրա հետեւանքն է հայկական հարցի դէմ կանգնելը: Կը վախցուի, որ յարմար առիթին, երբ այս անարխիան զօրեղանայ, նրանք պիտի հարուածեն յետեւից. ի հարկէ այդ պարագային Կովկասի հայերն եւս նոյն բախտին պիտի արժանանան, ինչ տաճկահայերը:

Դժբախտաբար վրացիք աւելի հակուած են դէպի թուրքերը, քան հայերը կամ ռուսերը. լաւ հասկանալի չէ վրաց դրդապատճառները բայց ակներեւ է նրանց միութիւնը, եւ արդէն չեն թագցնում:

Կարելի է ասել Անդրկովկասում հայերը կղզիացած վիճակումն են, եւ մեր միակ յենարանը ռուս տարրն է եւ զօրքը, որի տրամադրութիւնը դէպի մեզ կարելի է ասել լաւ է: Վերջապէս այժմ սկսել են տեսնել որ պետական տեսակէտից միակ յենարանը կարող են լինել հայերը եւ այդ տեսակէտը քանի գնում խորանում է, թէեւ պրովոկացիան դեռ շատ կայ մեր հանդէպ:

Յայտնի է որ ռուս ժողովուրդը շատ քիչ է Անդրկովկասում, եւ նա զգալով, որ վտանգը մեծ է, արդէն սկսել է գաղթել Բազուի եւ այլ շրջաններից դէպի Ռուսաստան, նրանք հաւատացած են, որ պիտի կոտորուեն:

[Գրաքննութեան կողմէ մաս սը կտրուած]

... մարտական բնոյթը: Շատ երկիւղալի է որ նա չդիմանայ ուժեղ հարուածների եւ նոյն վիճակին ենթարկուի, ինչ աւստրիական սահմանում: Այդ պարագային հասկանալի է, որ մենք առանց յենարանի, մենակ ընկած իսլամական ծովի մէջ, գուցէ ոչնչանանք. տայ Աստուած որ սխալ լինի, չկատարուի այդ սոսկալի նախագագացումը, բայց Ձեզ պարզ պէտք է լինի, որ այդ մղձաւանջի մէջ կ'ապրինք:

Նկատելի է, որ վերջերս բոլշեւիկները թուլանում են, եւ կառավարութեան ձեռք առած ազդու միջոցներով, մահուան պատիժով եւ այլն, քիչ վերականգնուած է դրութիւնը, յոյս կայ որ աւելի ուժեղանայ եւ թուրքական ճակատը չպատռուի. եթէ այդ չլինի բոլորովին ապահով ենք, որ գերմանական-թուրքական մեքենայութիւնները ի դերեւ պիտի ելնեն:

Կազմակերպութեան վիճակը լաւ է, ժողովրդի հա-

մակրութիւնը ամբողջովին համարեա մեր կողմն է: Գիւղացիական համագումարին 300-ից աւելի պատգամաւորների մէջ միայն 10-ի չափ էին ոչ-դաշնակցական, որոնք պատկանում էին սոց. դեմ, սոց. յեղափ.: Համագումարից ընտրուած 100 պատգամաւորները բոլորը Դաշն[ակցականներ]ից ընտրուած են: Կարելի է ասել Անդրկովկասում միակ կուսակցութիւնը, որը բարոյական ոյժ է ներկայացնում, Դաշնակցութիւնն է: Մենք գնում ենք սոց. յեղափոխականների հետ շատ կէտերում:

Երկրի մէջ եւս շատ վայրերում յաջողութիւններ ունինք: Երկիրը բաժանուած է շրջանների, ամէնուրեք կան մարմիններ, որոնք կամաց-կամաց պետական դեկրաւում են իրենց ձեռքը:

Երկար պիտի լինէր մանրամասն բացատրել երկրի եւ Անդրկովկասի դրութիւնը, այդ կը թողնենք ուրիշ անգամուայ:

Որքան ցանկալի պիտի լինէր, եթէ անգլիական-ամերիկեան զօրքը Կիլիկիոյ ծովափը դեսանտ²⁸ հանէր: Մեզ համար այժմս խիստ զգալի է Բաղդադի գրաւումը. կարծուում է որ եթէ անգլիացիք առաջ գնացած չլինէին հարաւից, գուցէ այժմ Անդրկովկաս լցուած լինէին թուրքերը: Եթէ հարաւից մի ուժեղ հարուած լինէր, թուրքերը չպիտի կեդրոնացնէին իրենց ոյժերը այս Փրոնտում եւ այս բարոյապէս լքուած զօրքերը պիտի դիմանային սահմաններում եւ գուցէ առաջ գնային Միջագետք-Միջերկրական:

Ցանկալի է, որ դուք հայկական հարցի մասին եղած թուրքական գրականութիւնը հաւաքէիք եւ ուղարկէիք: Այստեղ ձեռնարկուած է կարմիր գրքի հրատարակութեան աշխատանքներին: Կը պակսին նիւթեր եւ բացատրութիւններ թուրք եւ գերման գրականութիւնից եւ դոկումենտներից. կը խնդրուի այդ աշխատանքը առնել Ձեր վրայ եւ ուղարկել ամէն կարգի, դրական թէ բարոյական փաստերն ու հրատարակութիւնները մեր խնդրի առթիւ:

Կը խոստանանք պարբերաբար գրել Ձեզ: Կը սպասենք սերտ կապ հաստատէք մեզ հետ եւ լուր տաք տեղիդ դրութեան մասին:

Ընկերական բարեկներով
Հայաստանի բիւրոյի կողմից՝
ՌՈՒԲԷՆ²⁹

28.- Յամաքահանում իմաստով:
29.- Ռուբէն Տէր Սիմասեանն է:



Փաստ. 26-8

Հայ Յեղ. Դաշնակցութեան
Հայաստանի Բիւրո

Ա 13.– ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՍԻՏԷԻՆ

11 Օգոստոս 1917 թ.
No 82

Ընկերներ,

Յոռնիս 4 թվով ձեր նամակը ստացանք այսքան ուշ:
Աւելի շուտ ենք ստացել Յոռնիս 12 N 63-69 ձեր երկու հե-
ռագիրները, բայց մինչեւ այսօր ձեր ուղարկած եւ ո՛չ
մի գումար եւ ո՛չ մի կոպէկ դեռ ստացած չէ:

Որպէսզի ուշացումներ եւ դժարութիւններ չպա-
տահեն, մեզ ուղարկելիք բոլոր գումարները դրէք
National City Bank of New York, ալբտեղ, Երւանդ Տէր
Մինասեանի անւան, եւ ձեր նամակն առնելուց անմիջա-
պէս յետոյ մենք գումարը կը ստանանք Եր. Տէր Միաս-
եանից, այստեղ:

Զեզ ուղարկած է մանրամասն նամակ 22 Յոռնիս
No 64, բայց չգիտենք հասած է կամ կը հասնի՞ ձեր ձեռ-
քը թէ ոչ: Սոռացանք ասելու որ բանկ դրւած գումարի
մասին թէ բանկի եւ թէ ձեր կողմէն հեռագրւելու է Ե-
Տէր Մինասեանին, որ այստեղ իսկոյն կարգադրւի:

Մեզ մօտ անորոշութիւնն ու տարտամութիւնը հե-
տըզհետէ կը վերանան: Մեր մշտական երկիւղը միայն
մեր հարեւանների արագ գինւելն է ու նախապատրաս-
տութիւնները, միւս կողմից քրդերը օրից օր աւելի յան-
դուզն ու սանձարձակ չարագործութիւնների եւ աւա-
զակութեան մէջ են: Թուրքերի գինման, քրդական կազ-
մակերպւած ասպատակութիւնների, գերման գաղտնի
լրտեսների եւ թուրք բանակի մէջ ինչ որ կապ կայ, եւ
այս՝ մղձաւանջի պէս ծանրացել է մեզ վրայ:

Վստահելի աղբիւրից այսքանն իմացանք թուրքիայի
հայերի մասին. Միջագետքից, Տիգրիս-Եփրատի ափե-
րից ո՛չ մի լուր չկայ, ամենայն հաւանութեամբ սովից
ազատւածները սրախողխող են եղել:

Տարագիրները մնում են հիմա Սիւրիայում — Հայէ-

պից Դամասկոս: Հայէպում կան 45,000 հայեր. Հայէ-
պից մինչեւ Հիջաս՝ 60,000, որոնց կէսը մինչեւ հիմա մե-
ռել են. Դամասկոսում կան մօտ 10,000 անձ. Հոմս եւ
ուրիշ տեղեր՝ 30,000 հայ: Բէյրութում կան իսլամաց-
րած 240 ընտանիք եւ 67 հայ լուսաւորչական ընտանիք:
Ուրֆայում 2400 որբեր կան՝ Սիւրիայի քրիստոնեանե-
րի մօտ պահ տւած: Մեզիրէ, Մարաշ եւ Հարունիէ կան
1320 որբեր: Հայէպում կան 800 երեխաներ, որոնց բախ-
տը հիմա անյայտ է: Այս շրջանում այսպէս 50,000ից ա-
ւելի կարօտեալներ կան, որոնց օգնելու համար օրական
պէտք է 50,000 ոսկի դրամ-մարկ, ուրեմն թղթադրամ՝
200,000:

Այս կարօտեալներին օգնութիւն կը հասնի միայն Ա-
մերիկա[յից], այն էլ անբաւարար չափով: Միտիթարա-
կան է փոքր ինչ որ տարագրեալներին օգնող ամերիկա-
ցիներին չի արգելում Թուրքիան առ այժմ: Հայերին
օգնութիւն հասցել է մեծ մասամբ սակայն գերման
կոնսիւլների եւ միսիոնէրների միջոցով. ամերիկացի
միսիոնէրներ քիչ են եղել:

Իսկ այստեղի մեր գաղթականները, թէեւ տնտեսա-
կան տագնապի մէջ են անօրինակ թանգութեան եւ կեն-
սամթերքների չգոյութեան պատճառով, բայց համեմա-
տած ապրում են: Իսկ երկիր հաստատւածները փոքրիկ
տնտեսութիւններ են հիմնել, եւ եթէ անակնկալներ
չպատահեն, կարող են ամրապնդւել:

Գրեցէ՛ք եւ կապ պահեցէ՛ք մեզ հետ: Կը գրենք աւելի
մանրամասն, երբ վստահինք թէ մեր նամակները կը
հասնին ձեզ:

Հ.Յ.Դ. Հայաստանի բիւրոյի կողմէ
ՌՈՒԲԷՆ



Փաստ. 1568-1

**Ա 14.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆ. ԵՐԿՈՒ ԲԻՒՐՈՆԵՐԻ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԿՈՎԿԱՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ**

917 Օգոստ. 25
No 273

Նիստ III 1917 թ. 16 Օգոստոսի (երեկոյեան)

Նախագահում է ընկ. Աղբալեան, քարտուղար՝ Պ. Տէր Պողոսեան:

Նախագահը բաց անելով նիստը, յայտարարում է, որ նախորդ երկու նիստերի ընթացքում շրջաններից արևած գեկուցումների հիման վրայ ժողովականները հանեն իրենց եզրակացութիւնները:

Ընկ. Կարճիկեան պնդում է, որ աւագակութիւնները գլխաւոր պատճառը Կովկասի անիշխանական դրութիւնն է, իսկ պանիսլամիզմը, ազգային, հողային եւ այլ շարժումները լոկ օժանդակիչ պայմաններ են:

Ընկ. Ռուբէն ընդհակառակը ենթադրում է, որ թէ քրդական շարժումները եւ թէ աւագակութիւնները հետեւանք են տաճկական կառավարութեան առողջ, հետեւողական սիստեմատիկ ու տեւողական քաղաքականութեան, որ տւեալ դէպքում նպատակ ունի թուլացնելու ռուսական թիկունքը:

Ընկ. Համագասպի³⁰ հաստատութիւն ընկ. Ռուբէնի ասածի, յիշում է այն փաստը, որ դեռ հին ութիմի ժամանակ յայտնաբերւած է գաղտնի մի կազմակերպութիւն, որ սերտ կապ էր պահպանում Տաճկաստանի, Պարսկաստանի եւ Կովկասեան թուրքերի հետ: Ընկերոջ կարծիքով թիկունքը հարւածելով է, որ ճակատը պիտի պատուեն:

Ընկ. Վ. Նաւասարդեան կարծում է, որ աւագակութիւնները կազմակերպւած բնոյթ չունին, սակայն դրանով հերքւած չէ համարում այն հնարաւորութիւնը, որ տաճիկ կառավարութիւնն ու ժողովուրդը ձգտեն իրագործել այն քաղաքականութիւնը որ շէշտեցին ընկերներ Ռուբէն եւ Համագասպ:

Ընկ. Կարճիկեան չի կասկածում, որ թուրք տարրը, մանաւանդ նրա ղեկավար շրջանները պանիսլամական իդիոլոգիայով խմորւած են, որ տաճիկ կառավարութիւնը աշխատելու է ռուսական թիկունքում իր սարանքներն առաջ տանել, սակայն դրանից չի հետեւեցնում, որ կատարուող աւագակութիւնները դրա հետեւանքն են: Աւագակութիւնները, ինչպէս մէկ անգամ էլ շէշտեց, գլխաւորապէս հետեւանք են ստեղծւած անիշխանական դրութեան: Թուրք բէգերը՝ պանիսլամիզմի իդիոլոգները բնականաբար աշխատում են այդ աւագակութիւններից օգտւել ուստի նրանց ոտքի տակից հողը իւրելու համար, պէտք է վերջ տալ աւագակութիւններին, որը հնարաւոր է անիշխանութեան վերջ տալու եւ կարգ ու կանոն հաստատելու դէպքում:

Ընկերոջ կարծիքով՝ բռնելով ընկեր Ռուբէնի գծած ուղին, առաջինը կը լինենք որ կը հարւածենք ուժեղ կառավարութիւն ստեղծելու գործին: Որպէս նոր պետութեան բաղկացուցիչ մի տարրը, պէտք է ստեղծենք ուժեղ կառավարութիւն Կովկասում եւ բարձրացնենք հայ ժողովրդի զինական կարողութիւնը: Պէտք է ամէն դէպքում գործենք իբրեւ կառավարչական օրգաններ: Քրդական շարժումները ընկերն էլ ընդունում է տաճիկ կառավարութեան գործը:

Յիշում է մի շարք փաստեր, որից երեւում է, որ Կարսի շրջանում էլ գոյութիւն ունէր ընկ. Ռուբէնի յիշած թուրքական կազմակերպութիւնը: Գտնում է, որ միլիցիա կազմակերպելով ուժեղացնում է նաեւ թուրքերի զինական կարողութիւնը: Ընկերոջ կարծիքով կուսակցութիւնը իր վրայ պիտի առնի հայ ժողովրդի պաշտպանութեան գործը, եթէ չի ցանկանում մահաւանդ անդունդը գլորել նրան:

Ընկ. Աբրաք³¹.— քրդական ու թուրքական շարժումները տաճիկ կառավարութեան քաղաքականութեան տարբեր արտայայտութիւններն է համարում: Գտնում է որ Հ.Յ.Դ. պետական իշխանութիւն կազմակերպելու հնարաւորութիւն չի ունենալ, որովհետեւ մեծամասնութիւն կազմող թուրքերը կը քանդեն նրա բոլոր շինածները:

30.- Համագասպ Օհանջանեան: Ռուբէնը՝ Տէր Միսասեանն է:
31.- Միրական Գրիգորեան (1878-1937):
32.- Կորիւն Ղազազեան (1892-1937)



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Ընկ. Կորիւն³² ընդունելով ընկ. Կարճիկեանի տեսակէտները, գտնում է, որ փոխանակ մեկուսացման պէտք է ընդհանուր պետական միջոցներով առնենք չարիքի առաջը: Նա շեշտում է մի կարեւոր հանգամանք, որ չպիտի մոռանալ, այդ այն է, որ երկու հարեւան ժողովուրդների յարաբերութիւնը լարող հին բռնակալութիւնը չէ ռուսական պետութեան գլուխը, որ՝ այլևս «բաժանիր, որ տիրես»-ի քաղաքականութիւնը չի կիրառում:

Ընկ. Արշ. Ղազարեան գտնում է, որ մեր գինումը ոչ թէ հակապետական մի ազատ է, այլ գերազանցապէս պետական, որովհետեւ մենք ենք, որ ամէնից աւելի շահագրգռւած ենք պետական իշխանութեան ուժեղացման մէջ: Կոստակցութիւնը առանց տատանելու իր ձեռքը պիտի առնի հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը:

Ընկ. Կարօ Սասունի գտնում է, որ դէպքերը գլխապատոյտ արագութեամբ են յաջորդում իրար եւ անհրաժեշտ է անմիջապէս ստեղծել ինքնապաշտպանութեան մի գործը մարմին: Ժողովրդի ինքնապաշտպանութիւնը քաղաքական նպատակների հետամուտ կոստակցութեան կարողութիւնից դուրս համարելով, ընկեր Սասունին առաջարկում է Դաշնակցութիւնը բաժանել՝ ա. քաղաքական կոստակցութիւն, բ. ինքնապաշտպանական մարմին:

Ընկ. Շահմազեան վտանգը բաժանում է երկու մասի 1) ընդհանուր, Ֆրոնտից սպառնացող եւ 2) մասնակի՝ ներսը կատարուող աւազակութիւններ: Վերջին վտանգը դիմադրակէ հեշտ է, առաջինն է, որին կոստակցութիւնն իր սեփական միջոցներով դիմադրել չի կարող. դրա դէմ պէտք է գրակել ընդհանուր պետական միջոցներով, իսկ մեր ընդհանրապէս հայ ժողովրդի մասնակցութիւնը պիտի արտայայտուի գինւորական մարմնի միջոցով:

Ընկ. Նժդէհ³³ գտնում է, որ Ֆրոնտի խախտումը հնարաւոր է թիկունքը խառնելուց յետոյ, որին հետամուտ է թշնամին, ուստի անհրաժեշտ է կազմակերպել եւ ամրապնդել թիկունքը եւ դա պէտք է անի Դաշնակցութիւնը, որովհետեւ նրա ձայնն է, որ արձագանգ է գտնում հայութեան մէջ: Ժամանակը կարճ է եւ լեզու աշխատանքով հնարաւոր չէ ցանկալի ուժը ստեղծել:

Նիստ V 17 Օգոստոսի (երեկոյեան)

Ձայնի իրաւունքով մասնակցում են՝ Արեւելեան բիւրոյի երկու ներկայացուցիչ, Արեւմտեանից՝ երկու, Թիֆլիսի Կ. Կ.-ից՝ երկու, Բագուից՝ մէկ, Ալեքսանդրա-

պոլից՝ երկու, Գանձակից՝ մէկ, Կարսից՝ երկու, Մուշից՝ մէկ, Դաշգենտից՝ մէկ, Շուշուց՝ մէկ, Երեւանից՝ մէկ:

Նախագահ՝ ընկ. Կարճիկեան, քարտուղար՝ Պ. Տ. Պօղոսեանց:

Ժողովին բանաձեւեր ներկայացրել են՝ ընկ. Ռուբէն եւ ընկեր Կարճիկեան: Ժողովը որոշում է իւրաքանչիւր բանաձեւը կարգաւ եւ առանց թեր ու դէմ կարծիքներ յայտնելու, կէտ առ կէտ քուէարկութեան ենթարկել: Կարգացում է նախ ընկ. Ռուբէնի առաջարկած բանաձեւի նկատմամբ մասը, որտեղ ձայների մեծամասնութեամբ ընդունւում է չորս կէտ, ապա ընդունւում է ընկ. Կարճիկեանի ամբողջ համապատասխան մասը: Ապա յանձնարարում է ընկ. Ռուբէնին եւ ընկ. Կարճիկեանին միացնել բանաձեւերից ընդունւած մասերը եւ կազմել այդպիսով ընդունւելիք բանաձեւի նկատառումների մասը, իսկ բանաձեւի առաջարկների բաժինը կազմելու համար ընտրւեց մի կոմիտեա հետեւեալ ընկերներից կազմւած՝ Ռուբէն, Կարճիկեան, Գիւլիսանդանեան եւ Նժդէհ:

Ժողովը դեռ վաղ լինելու պատճառով՝ անցաւ օրակարգի երկրորդ կէտին, այն է առաջիկայ Ռայոնական ժողով գումարելու հարցին:

Նախքան առաջադրւած խնդրին անցնելը ընկեր Գ. Ղազարեան առաջարկութիւն մտցրեց խորհել ընդհ. ժողով գումարելու մասին: Թեր ու դէմ կարծիքներից յետոյ ժողովը որոշեց ընդհ. ժողով գումարել յաջորդ տարի յունւարին: Ապա անցնելով Ռայոն. ժողովի գումարման հարցին, ժողովը որոշեց հրաւիրել այն հոկտ. 10-ին: Ռայոն. ժողովի հետ կապւած միւս հարցերը յետաձգւեցին յաջորդ նիստին:

Նիստ VI 18 Օգոստոսի (առաւօտեան)

Նախագահ՝ ընկ. Կարճիկեան, քարտուղար՝ Պ. Տ. Պօղոսեանց

Ընկ. Կարճիկեան կարդում է օրակարգի Ա. կէտի վերաբերեալ հետեւեալ բանաձեւը.

Ի նկատի ունենալով

1) Որ վերջին ամիսների աւազակային շարժումները, աւարառութիւններն ու սպանութիւնները կովկասեան նահանգներում հետեւանք են երկրի անիշխանական դրութեան.

2) Որ գրաւած վայրերում ու երեւանեան սահմանակից գաւառներում տեղի ունեցող քրդական արշաւանքները ու ասպատակութիւնները պարզապէս պատերազմական գործողութեամբ են՝ կազմակերպւած ռուսական բանակի թիկունքում տաճիկ կառավարու-

33.- Տէր Յարութիւնեան Գարեգին (1886-1955):



թեան թելադրանքով.

3) Որ բանակի կազմալուծումը ու լքած դրուժիւնը ընդունել է ընդհանրապէս սպառնալից չափեր.

4) Որ անիշխանութեան յարատեւութեան ու մեր Ֆրոնտի քայքայման դէպքում թիկունքի աւազակային շարժումները ու քրդական ասպատակութիւնները կարող են լայնանալով ու խորանալով խախտել ճակատի կայունութիւնը: Եւ ճակատի խախտմամբ անհնար կը դառնայ ոչ միայն գրաւած վայրերի այլեւ Կովկասի պաշտպանութիւնը, իսկ Կովկասի կորուստը անպայման պետական կատաստրոֆի նշանակութիւն կ'ունենայ.

5) Որ տաճկական բանակի Կովկաս մտնելու դէպքում տեղական ազգաբնակչութիւնը անդառնալի կորուստներ է կրելու, իսկ հայութիւնը մասնաւորապէս դատապարտած կը լինի գլխովին ոչնչացման. եւ

6) Որ Հ. Յ. Դաշնակցութիւնը, իբրեւ կովկասեան յեղափոխական գործօններից մէկը եւ իբրեւ հայ ժողովրդի ամենախոշոր մասի, աշխատաւորութեան, կորովը եւ ուժերը կոփող մի կազմակերպութիւն, կարող է ու կոչւած է կուելու թիկունքի անիշխանութեան ու ճակատի կազմալուծման դէմ:

Կոնֆերանսը որոշեց.

I ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ.—

Ա. Հրահանգել կուսակցութեան բոլոր մարմիններին ու ընկերներին վճռականապէս ձեռնամուխ լինել հաստատելու ու ամրապնդելու գաւառներում վարչական, միլիցիական, տարրական եւ միւս պետական ու հասարակական հաստատութիւններ:

Բ. Աչալուրջ կերպով հետապնդել, որ յիշեալ հաստատութիւնները լինեն յեղափոխական դեմոկրատիկ վստահելի տարրերի ձեռքին:

Գ. Մերկացնել վնասակար գործողութիւնները այն հակաօրհակափոխական ու հակապետական տարրերի, որոնք կը սպրտնեն պետական ու հասարակական հաստատութիւնների մէջ, ջանալով բոլոր օրինական ճանապարհներով ազատել վերոյիշեալ հաստատութիւնները այդպիսի տարրերից:

II ՌԱԶՄԱՐԵՄ.—

Ա. Կովկասեան ճակատին աւելի կայունութիւն եւ հաստատութիւն տալու համար ձգտել, որպէսզի կովկասեան ճակատը բերեան տեղացի զօրքերը, որոնք աւելի շահագրգռած ու օգտաւէտ կը լինեն այս ճակատում:

Բ. Որպէսզի այդ զօրքերը զինւորական տեսակէտով լաւագոյն կերպով օգտագործեն, առաջարկել կազմել

դրանցից նոր առանձին միատարր զօրամասեր:

Գ. Վերոյիշեալ նպատակները իրագործելու համար դիմել Պետրոգրատի եւ կովկասեան զինւորական-իշխանութեան յիշեալ առաջարկութիւններով:

Դ. Ոյժ տալ ու աջակցել զինւորականութիւնը կազմակերպող ու կազմալուծման դէմ կուող հաստատութիւններին, մասնաւորապէս՝ Հայկական զինւորական միութեան:

Ե. Բանաւոր ու գրաւոր պրոպագանդով եւ տրամադրելի բոլոր միջոցներով կուել դասալքութեան դէմ. լուսաբանել ճակատի եւ թիկունքի զօրքերին կովկասեան ճակատի կարեւորութիւնը ամէն տեսակէտից եւ սպառնացող վտանգի ճակատագրական նշանակութիւնը:

Զ. Դիտելով քրտական ասպատակութիւնները, իբրեւ պատերազմական գործողութիւններ՝ միջոցներ ձեռք առնել որ զինւորական իշխանութիւնը վճռականապէս վերացնի թիկունքի քրտական վտանգը, որպէսզի ճակատում գործող բանակը ապահով լինի թիկունքից. միաժամանակ աջակցել զինւորական իշխանութեան հասարակական ու ժողովրդական դիմադրական ուժի կազմակերպութեամբ:

III ԱԻԱԶԱԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԴԻՄ ՄԻՋՈՑՆԵՐ.—

Ա. Աւազակային գործողութիւնների դէմ անմիջապէս կուելու համար անյապաղ ձեռնարկել ժողովրդական միլիցիայի կազմակերպութեան ու զարկ տալ ժողովրդական-դիմադրական ուժերի զօրացման ու կազմակերպման, որ կը ծառայի նեցուկ միլիցիայի գործունէութեան համար:

IV ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ.—

Վերոյիշեալ ուղղութեամբ գործելու համար կուսակցութիւնը գործակցութեան է հրաւիրում միւս յեղափոխական կուսակցութիւններին ու դեմոկրատիկ հասարակական հաստատութիւններին, աշխատելով ստեղծել համապատասխան միջնորոտ համագործակցութեան համար:

Այս բանաձեւը ընդունում է նոյնութեամբ: Յանձնարարւում է Բիւրոյին ոչ ուշ քան տասն օրից ուղարկել Պետրոգրատի եւ Կովկասի բոլոր կառավարչական մարմիններին, եւ հրատարակութեան տալ մայրաքաղաքի ու տեղի թերթերին: Յանձնարարւում է նոյնպէս բանաձեւի հիման վրայ կազմել կուսակցական գործունէութեան մանրամասն մի ծրագիր եւ ուղարկել մարմիններին նոյնպէս ոչ ուշ քան 10 օրից եւ իրաւունք վերապահել իւրաքանչիւր մարմնի մշակուած ծրագիրը տեղական պայմանների համաձայն որոշ փոփոխու-



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Թիւնների ենթարկել բանաձեւի ընդհանուր ոգուն համապատասխանող:

Ժողովը սպառելով օրակարգի առաջին հարցը՝ անցավ Ռայոնական ժողովը գումարելու պայմաններին ու որոշեց հրահանգել Արեւելեան բիւրոյին հրաւիրելու ժողովը հետեւեալ կազմով.՝

Մէկ ներկայացուցիչ իւրաքանչիւր կենտրոնական կոմիտէից: Մէկը՝ Կենտր. կոմիտէի շրջանային ժողովից: Մէկը՝ իւրաք[անչիւր] կոմիտ[էից], որ ճանաչած է Կենտր. կոմիտէից որպէս այդպիսին եւ ունի կնիք: Երկուսը՝ իւրաք. կոմիտէի շրջանային ժողովի կողմից: Մէկական ներկայացուցիչ բոլոր կենտ. եւ գաւառական կուսակցական պաշտօնական ու կիսապաշտօնական թերթերի կողմից: Մէկը՝ բանւոր[ական], գինւ[որական] եւ գիւղաց[իական] կենտ. դաշն. ֆրակցիայի կողմից, մէկական՝ բանւոր[ական], գինւոր[ական] եւ գիւղաց[իական] պատգամաւորների խորհուրդների դաշնակցական միացեալ ֆրակցիաների կողմից: Մէկը՝ քաղաքային դումաների եւ գործադիր մարմնի դաշն[ակցական] ֆրակցիաների կողմից: Մէկը՝ բազալիոններում գտնւած իւրաքանչիւր կուսակցական մարմնի կողմից:

Վերոյիշեալ հիմունքներով ու կարգով հրաւիրուում են նաեւ Երկրի կազմակերպութիւնների ներկայացուցիչները: Որոշեց Ռայոնական ժողովը այս անգամ կայացնել Երեւանում:

Օգոստոսի 18 նիստ (երեկոյ)

Նախագահ՝ Աղբալեան,
Քարտուղար՝ Տէր Պօղոսեան

Ընկ. Կարճիկեանը Արեւելեան բիւրոյի կողմից առաջարկում է ընդունել Ռայոնական ժողովի համար հետեւեալ օրակարգը, որը կարծիքների փոխանակութիւններից յետոյ ընդունուում է հետեւեալը.

- 1.- **Ձեկուցումներ**
 - ա) Արեւելեան եւ Հայաստանի բիւրոներին
 - բ) Կենտրոնական կոմիտէներին:

Ծանօթ.՝ Կ. կոմիտէների գեկուցումները անհրաժեշտօրէն պիտի պարունակեն հետեւեալ կէտերը եւ պիտի ներկայացնեն գրաւոր, կազմած այն ձեւով որ տպագրութեան յարմար լինին, փաստացի թւական տւեալներ կազմակերպութեան մասին, կուսակցութեան ֆինանսական դրութիւնը, պետական հաստատութիւնների կազմակերպման վիճակը եւ կուսակցու-

թեան կատարած դերը, այդ գործում, շրջանի դպրոցների ազգայնացման վիճակը եւ դրամական հաշւետւութիւն:

- 2.- Վերաբերմունք դէպի ներկայ քաղաքական մոմէնտը:
- 3.- Սահմանադիր ժողովի ընտրութիւնների կազմակերպման խնդիրը եւ կուսակցական ցուցակի կազմումը:
- 4.- Սահմանադիր ժողով մտցնելու օրինագծեր՝
 - ա) Կովկասեան քաղաքական կազմի մասին, բ) Կովկ. հողային եւ ջրային հարցի մասին:
- 5.- Վտանգւած վայրերի ապահովութեան խնդիր:
- 6.- Կազմակերպչական նոր կանոնադրութեան հաստատումը:
- 7.- Կուսակցական մամուլի եւ գրականութեան խընդիրը:
- 8.- Միջկուսակցական յարաբերութիւնների ու գործակցութեան խնդիրը:
- 9.- Ազգային համագումարի խնդիրը:
- 10.- Կուսակցական մարմինների դրամական հաշւետւութիւն:
- 11.- Ընտրութիւններ:

Հողային ու ջրային խնդրի համար օրինագիծ մշակելու եւ կազմելու համար՝ ընկ. Ռուբէնի աջակցութեամբ կայացրուում է հետեւեալ որոշումը.՝

Յանձնարարել Արեւելեան բիւրոյին, Կ. կոմիտէների եւ շրջաններում գտնւած տեղեակ անձնաւորութիւնների միջոցաւ, ժողովել հողային եւ այլ հաստատութիւններից անհրաժեշտ նիւթեր եւ տւեալներ եւ դրանց հիման վրայ կազմել համապատասխան օրինագիծ Ռայոն. ժողովին ներկայացնելու համար:

Ընկ. Նժդեհի առաջարկութեամբ կոնֆէրանսը որոշեց յանձնարարել Արեւելեան բիւրոյին. աշխատել, որ հակական պօլիերը³⁴ ուղարկուող կոմիտարները լինեն դաշնակցական ընկերներից:

Ընկ. Շարաֆեանը առաջարկեց կոնֆէրանսին միակտով արձագանք տալ Սոց. Դեմ. շրջանային կոմիտէի այն կոչին, որտեղ Դաշ[նակցութիւնը] մեղադրուում է հայ-թուրքական կոտորածներին նպաստող: Կոնֆէրանսը կարծիքների փոխանակումից յետոյ որոշեց անուշադրութեան մատնել վերոյիշեալ կոչը եւ ոչ մի արձագանք չտալ:

Որոշեց յանձնարարել Արեւելեան բիւրոյին ամենակարճ ժամանակով հրատարակել Թիֆլիսում ռուսերէն կուսակցական օրգան-օրաթերթ, որի ծախքերը հոգալու համար դիմել Կ. կոմիտէներին, նիւթական աջակցութիւն անելու:

Կոնֆէրանսը փակւեց 18-ի երեկոյեան նիստի վերջին:

34.- Գումդերը:



Փաստ. 1281-7

Ա 15.- ԱՐՏԱԻԱԶԴ ՀԱՆԸՄԵԱՆԷՆ Հ.Յ.Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԵԻՆ

Փարիզ, 7 սեպտ. 1917

Սիրելի ընկերներ,

Ինչպէս հաւանականաբար «Հայրենիք»էն տեղեկացած էք, Ռոստոմը հեռագրած էր ասկից առաջ Ամերիկայի Կեդր. կոմիտէին, որ ռուսական առժամանակեայ կառավարութիւնը Հայաստանի կառավարիչ նշանակած է Աւերիանովը եւ օգնական կառավարիչ մեր ընկեր բժիշկ Զաւրիեւը:

Ընկեր Բաստրմաճեանէն տեղեկացանք որ Աւերիանով յայտնի հայասէր գինուորական մըն է եւ իբրեւ օգնական տրուած է բժիշկ Զաւրիեւը քաղաքական գործերու համար: Ինչ որ շատ աւելի բարեպատեհ է մեզ համար, դարձեալ ընկեր Բաստրմաճեանէն տեղեկացանք որ Աւերիանով անձնական բարեկամն է Զաւրիեւի եւ մեծ յարգանք ունի անոր հանդէպ: Առժամանակեայ կառավարութիւնը ընդունած էր դարձեալ որ գրաւուած նահանգներու վարչութիւնը այսուհետեւ ոեւէ կախում չպիտի ունենայ կովկասեան վարչութեանէն (ինչ որ ծնունդ տուած էր բոլոր չարիքներուն), այլ ուղղակի պիտի կապուի ռուսական կառավարութեան:

Երէկ դարձեալ մեր ընկեր Ռոստոմէն (որ Սթոքհոլմ կը գտնուի), 29 Օգոստոս թուակիր հետեւեալ հեռագիրը ստացանք, ռուսական դեսպանատան միջոցաւ: Այդ հեռագիրը հոս կը դնեմ տառացիորէն.

Décisions mois juillet gouvernement provisoire. Administration régions conquises séparée Caucase, Avérianoff désigné gouverneur, Zavrieff adjoint pour provinces Van, Bitlis, Erzeroum reconnues arméniennes. Défense retour musulmans parti avec troupes turques. Milice nationale. Bataillons arméniens déployés (?) régiments, intention créer division arménienne – Zorian³⁵.

Այս գեղեցիկ լուրերուն վրայ կ'ուզեմ ուրիշ մըն ալ աւելցնել, ամէնէն կարեւորը թերեւս:

Ընկեր Բաստրմաճեանէն տեղեկացած էինք որ Կով-

կասի հայերը խնդիրք ներկայացուցած էին առժամանակեայ կառավարութեան, ռուսական բանակներու մէջ գտնուած բոլոր հայ գինուորներն ու սպաները ի մի բերելով հայկական առանձին մեծ բանակ մը կազմելու եւ այդ բանակը կովկասեան ճակատ ղրկելու համար:

Ընկեր Բաստրմաճեան մեզ տեղեկութիւն տուած էր դարձեալ, որ այդ խնդիրը լաւ ընդունելութիւն գտած էր կառավարութեան կողմէ:

Նախորդ օր Echo de Paris-ի մէջ կարդացինք Հաւաստի³⁶ հեռագիր մը Ռոսաստանէն՝ որ Տփղիսի «Հորիզոն»էն առնելով կ'աւետէր մեծ լուրը:

Առժամեայ կառավարութիւնը ընդունեւ է հայոց խնդիրքը. ռուս բանակի բոլոր տայ գինուորներն ու սպաները ի մի բերուելով պիտի կազմեն հայկական բանակ մը (այո՛, հայկական բանակ մը, ճիշդ այսպէս է գրուած) գործելու համար կովկասեան ճակատին վրայ: Նախապատրաստական գործողութիւններու կեդրոն ընտրուել է Տփղիսը: Շնորհակալութեան հեռագիրներ ղրկուել են Կովկասէն Kerensky-ին³⁷ եւ այլն: Օտեսայի մէջ հայ սպաներու առաջին խորհրդակցական ժողով մը գումարուել է արդէն իսկ:

Հետեւանքները դուք ինքներդ հանեցէք, այնքան պերճախօս են փաստերը, որ տող մը իսկ չեմ ուզեր աւելցնել:

Աչուրնիս լոյս:

Այսքան աղէտէ ու արիւնէ ետք արժանի՛ էինք այս օրուան:

Ընկերական ջերմ բարեկներով
ԱՐՏԱԻԱԶԴ ՀԱՆԸՄԵԱՆ

Յ. Գ.- Մինչեւ այսօր Ֆրանսայէն անցնողներու թիւը 700³⁸:

35.- Ժամանակաւոր կառավարութեան Յուլիս ամսուան որոշումներէն – նուաճուած շրջաններու վարչութիւնը կ'անջատուի Կովկասէն – Աւերիանով նշանակուած է կառավարիչ, Զաւրիեւը կառավարիչին օգնական Վանի, Պիթլիսի, Էրզրումի նահանգներուն համար՝ ճանչցուած իբր հայկական – Արգիլուած է թրքական զօրքերու հետ մեկնած մահմետականներուն վերադարձը – հայկական զօրագունները կը տեղադրուին հայկական զօրաբաժին ստեղծելու նպատակով:
36.- Հաւաստի – լրատու գործակալութիւն: Echo de Paris – ֆրանսական օրաթերթ:
37.- Ալեքսանդր Կերենսկի – Ռուսիոյ Ժամանակաւոր կառավարութեան վարչապետ:
38.- Ակնարկութիւն Ֆրանսայէն Արեւելք մեկնող հայ կամաւորներուն:

Փաստ. 26-9

Ա 16.– Հ.Յ.Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ

22 Սեպտեմբեր 1917

Ընկերներ,

Մինչեւ այժմ ձեզնից ստացել ենք երկու հեռագիր 917 Յուլիս 12 թուակիր եւ երեք նամակ Յունիս 4, 14 եւ 21 թուակիրներ: Կը հաստատենք մեր 22 Յուլիս N° 64 եւ 11 Օգոստոս N° 82 երկու նամակները:

Ստացել ենք 18,691 ռ., եւ 21,505 ռուբլիի չէկերը:

Գանգատուում էք, որ ձեզ մոռացել ենք եւ չենք գրում: Ինչպէս տեսնում էք այս երրորդ նամակն է որ գրում ենք, միշտ ընդարձակօրէն հաղորդելով ձեզ կուսակցական, հասարակական եւ ազգային կեանքի ներքին նորութիւնները:

Արդէն ձեզ գրել ենք երկրի մէջ մեր բռնած դիրքի եւ քաղաքականութեան մասին, ստեղծելով միապաղաղ եւ ազգային տերրիտորիաներ. այդ գործը յաջողութեամբ առաջ է գնում: Միստեմատիկաբար ամէն ջանք թափուում է, որ ո՛չ հայ տարրերը չվերադառնան եւ աւագակային տարրերը ճնշուեն ու քշուեն: Քրդական աւագակային օջախները մէկ-մէկ մաքրուում են: Ամենավերջին գործն է Վան-Խոշաբի աւագակային խաների պատժիչ արշաւախմբի գործը: Խոշաբից Կոտող Գարահիսարի վրայով ամբողջ գիծը մաքրուել է: Քրդերը փախել են դէպի հարաւ Նորդուզի վրայով, մալ ու տաւարը գրաւուած է: ունեցած հացերը, արտերը, խոտերը եւ գիւղերը վառել են: Նոյն կերպ շուտով կը մաքրուի եւ Զիլանայ ձորը:

Դուք առանձին կարեւորութիւն մի տաք լրագրական հարայ հրոցներին, քրդական ալան-թալանների մասին: Իմացէք որ նրանք էլ սխտեմատիկօրէն ջնջուում են. լրագրներից իմացաք անշուշտ Երեւանի դաշտի, Ալազեագի վրայ գնացող արշաւախմբի գործունէութեան արդիւնքը: Եայլաբար ճարտարացած աւագակ քրդութեան շարժական ստացուածքը կողոպտել, թալանել եւ ցրուել են. 30,000-ից աւելի միայն ոչխարներ են բերել, նոյն չափով տաւար եւ ուրիշ ապրանքներ:

Երկրի կազմակերպութիւնները այս երկու ամսում բաւական ուժեղացել են: Վանում ունենք ուժեղ կազմակերպութիւն Կ. կոմիտէով, Ալազկերտ ունինք 5 կոմիտէներ, որոնք շուտով կը կազմեն Կ. կոմիտէ. Խնուս եւ Մանազկերտ ունին Կ. Կ.: Բասենում ուժեղ կազմ եւ գործ ունենք, նոյնը եւ Կարին, Մամախաթուն, Երզնկա եւ Բաբերդ:

Այս տարի բերքը լաւ էր Վան, Ալազկերտ. բացի Դուլթաղի մասից, բաւարար էր Խնուս եւ Մանազկերտ. Բասեն էլ լաւ էր. նոյնը եւ Դերջան ու Երզնկա. Կարինը թոյլ էր: Առհասարակ երկրի ներսը եղած ժողովուրդը կը կերակրուի այս տարուայ ունեցած բերքով. առատ վայրերից գնելով միւս տեղերը կարող են բաւարարուել:

Աշնանացանքը եղել է շատ մեծ չափերով, նոր լծկան կենդանիներ են ձեռք բերած թէ երկրին մէջ տեղին վրայ եւ թէ այստեղից գնուած ճամբուած են: Սերմը գոյանալու է տեղում. այս տարի բարեբախտաբար դրսից սերմ չենք տանելու:

Կովկասում եղած փախստականների վիճակը մի քիչ գուցէ վատանայ, շնորհիւ մթերքներ չվճարուելուն. առհասարակ պէտք է գիտենալ որ արհեստաւորների, փոքր ի շատէ դրամագլուխ ունեցողների դրութիւնը շատ լաւ է: գիւղացիներից նրանք, որոնք ունեցել են սայլ, եզներ եւ աշխատաւոր ձեռքեր, գործերը շատ լաւ են: Վատ է կանանց եւ մանաւանդ երեխաների վիճակը, որոնք որբանոցներ դեռ չեն հաւաքուած:

Պէտք է նկատել որ աշխատանքը լաւ վարձատրուում է. սեւ աշխատանքը օրական 5-7 ռուբլի վարձատրութիւն արժէ, լաւ գործ կայ եւ երկրի ներսը. բազմաթիւ խճուղիներ են շինուում, սահմաններից Բասենի վրայով մինչեւ Խնուս, Ալազկերտից, Ղարաքիլիսայից մինչեւ Մանազկերտ եւ Ախլաթ: Ինչպէս եւ դէպի Վան լաւ շօսէներ են շինուած աւտոմոբիլների համար: Երկաթուղին հասնում է Ղարաքիլիսէ, էրզրում. Վանի գիծը մինչեւ լճի ափը պատրաստ է համարեա, աշնան երեւի մինչեւ Աբաղա-Բայագիղաղա կը հասնի:

Հայաստանի կոմիսարիատի մասին գրել ենք, նա կամաց կամաց կը կազմակերպուի:

Ամենադրական գործը այն է, որ արդէն միլիցիան գործի սկսեց. ընկեր Համազասպ նշանակուած է Բայագիղ-Ալազկերտ-Մանազկերտ շրջանի միլիցիապետ. 1000 զէնք արդէն ստացուել է եւ ճամբուել: Վանի շրջանի համար նոյնպէս ստացուել է 1000 զէնք. այնտեղ էլ միլիցիայի պետը մերոնցից կը լինի՝ կամ Ոստանի Լեւոնը, կամ Շատախցի Տիգրանը³⁹: Միլիցիայի ծախսերի մի մասը հոգում ենք ազգային միջոցներով, որովհետեւ պետական միջոցները շատ սուղ են. (օր. ամէն մի միլիցիոնների համար ամսական 33 ռուբլի ռոճիկ): Վարչական մասն էլ կամաց կամաց կը շտկուի: Վանի կառու-

39.- Լեւոն Շաղոյեան եւ Տիգրան Բաղդասարեան: Համագաւապը՝ Սրտանձոտեանցն է:

վարիչ է նշանակուած մեր ընկեր Կոստիա Համաբարձումեան, Խնուս՝ Տիգրան Զօրեան, Մանազկերտ՝ Աշոտ Իսրայէլեան, եւն:

Վերաշինութեան համար մեծ նախապատրաստութիւններ են տեսնուած թէ կոմիտարիատի կողմից եւ թէ միւս ընկերութիւններին:

Հետաքրքրուել էիք Անդրանիկի, «Հայաստան»ի եւ իր շրջանակի մասին. արդէն ընկեր Ռոստոմ ժամանակին հեռագրել էր ձեզ, որ լուրջ բան չկայ. Գարոն⁴⁰ պատմած կը լինի նախկին դրութեան մասին: Ժամանակաւոր ունեւորի առաջ բերած լքումից օգտուելով մութ ուժերը շոյեցին նրա անձնական թուրութիւնները եւ ոտի հանեցին. գաղթականական գործերի անկերպարան վիճակը աւելի ազդեց այդ բանին. նա իրեն կոչուած համարեց իր իսկ անձնական հեղինակութեան եւ իր միջոցներով ամէն բան տակնուվրայ անել. այդ քայլերը յանգեցին թուրքահայ համագումարի տեղի արդիւնքին, ուր նա իրեն յայտարարեց ո՛չ դաշնակցական, չփոթութիւն առաջացրեց ժողովին մասնակցող մեր միամիտ ընկերներին ոմանց մէջ. մենք մեր ամբողջականութիւնը եւ մեծամասնութիւնը խախտեցինք, ընտրուեց հազար ու մի դժուարութեամբ ու խաղերով մի մարմին, որի մեծամասնութիւնը մեր հակառակորդներն են, իսկ մերոնցից միայն Կոմսն⁴¹ է, որ հեղինակաւոր միջամտութիւն եւ ազդեցութիւն ունի, այն էլ չգիտենք թէ այդ միջամտութիւնը մինչեւ երբ կը տեւէ:

Թուրքահայ ռայոնական ժողովը դատական մարմին ընտրեց հակակարգապահական քայլեր քննելու համար. տարաբախտաբար մինչեւ հիմա բան չի արել: Մի երկու ամիս առաջ ընկեր Ռուբէն⁴² Անդրանիկին կանչել է պաշտօնապէս բացատրուելու իր բռնած եւ բռնելիք դիրքի մասին, հետեւեալ խօսակցութիւնն է տեղի ունեցել մօտաւորապէս:

Ռուբէն.— «Մշակ»-ում գրուած է եղել որ դու Դաշնակցութիւնից հրաժարուել ես, ճի՞շտ է:

Անդրանիկ.— Ես չեմ կարգացել ատանկ բաներ:

Ռուբէն.— Երեւի լսած կը լինէք. չէ՞ որ ընկերներն

ասում են թէ դու թուրքահայ համագումարում յայտարարել ես որ դադարում ես դաշնակցական լինելուց:

Անդրանիկ.— Զայրացած ժամանակս կրքի եկած բան մը ըսի, դուք ալ մատի փաթթան շինելով զիս կուսակցութենէն վռնդել կ'ուզէք: Լսեր եմ որ զիս դատի պիտի տաք:

Ռուբէն.— Այո՛, դատի հարց կայ, բայց մենք կ'ուզենք նախ քո վերաբերմունքը որոշուէր:

Եւ նա դառնացած պատմել է, որ կուսակցութիւնը իրեն լքել է, ընկերները կարեւորութիւն չեն տուել եւն: Այս բոլորից տեսնում էք, որ տակը իրօք լուրջ բան չկայ, սովորական ջղային բաներ են: «Հայաստան»ը⁴³ դադարելու վիճակի մէջ է, ընթերցողներ շատ քիչ ունի, եւ որեւէ՛ ազդեցութիւն ու նշանակութիւն չունի. արդէն նկատած կը լինէք որ հակառակ նրանց բոլոր ճիգերին մենք մեզ հեռու պահեցինք վէճերից եւ նրանց մասին խօսելուց: Խմբագրութեան մէջ իրարանցում կայ, նախ Պոնաբարթեանին էին չէզոքացրել, հիմա կը լսենք որ հեռացրել են Թոթովենցին եւ Դշտոյեանին⁴⁴:

Դրամի մասին գրել ենք, դուք հասկանում էք որ երկրի մեր գործունէութեան ժամանակ ինչ մեծ արժէք է դրամը. աշխատեցէք մեզ դրամ հասցնել. ինչպէս ասել ենք դրամը այդտեղ դրէք, «National city Bank of New York» բանկը, Երուսաղէմի Տէր Մինասեանի անուան եւ հեռագրով հաղորդեցէք թէ մեզ եւ թէ՛ Տէր Մինասեանին:

Կառավարութեան վերաբերմունքը դէպի հայ ազգ եւ դէպի Դաշնակցութիւն շատ լաւ է: Արդէն կազմուած են հայկական պոլիքերը⁴⁵, շուտով կ'ունենանք եւ կորպուս. հայ գեներալներին կորպուսներ են տալիս, Նազարէկեանին եւ Ալլահաճարեանին:

Ամսիս 25-ին բացուած է Ռայոնական ժողովը, արտոս որ դուք ներկայացուցիչ չունէք. մեծ ու բազմամարդ ժողով է լինելու: Օրակարգերը թերթերի մէջ տեսել էք, մանրամասն կը գրենք իր ժամանակին:

Գարոն ինչո՞ւ է լուել, ինչո՞ւ նամակ չի գրում. նրանից բան չենք ստացել: Մինչեւ հիմա ինչո՞ւ չհրատարակեցիք Տիգրան Բաղդասարեանի աշխատութիւնը Շատախի կռիւների մասին, որ Վրացեանը ճամբել էր ձեզ եւ ժամանակին ստացել էիք:

Բարեւներով
Հայաստանի բիւրոյի կողմէ
ՌՈՒԲԷՆ

40.- Արմէն Գարո – Փաստրմաճեան Գարեգին, որ այդ օրերուն իբրեւ Ամենայն հայոց կաթողիկոսի պատուիրակ կը գտնուէր Սրացեայ Նահանգներ:
41.- Վահան Փափազեան:
42.- Ռուբէն Տէր Մինասեան:
43.- Անդրանիկի նախածեռնութեամբ Թիֆլիս հրատարակուող լրագիր (1917 թ. Ապրիլ 16 – 1918 թ. Փետր. 15):
44.- «Հայաստան»ի խմբագրութիւնը վարող դէմքեր:
45.- Պոլի՛ գունդ. կորպուս՝ զօրաբանակ:

Ա 17.– Հ.Յ.Դ. ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՏՈՒԱԾԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Թիֆլիս, 25 Սեպտեմբեր 1917

Սեպտեմբ. 25-ին Թիֆլիսում տեղի է ունենալու Հ.Յ.Դ. Կովկասեան հատուածի ռայոնական ժողովը: Օրակարգի հարցերն են.

1. Ձեկուցումներ ա) Արեւելեան եւ Հայաստանի բիրոնների. բ) Կենտրոնական կոմիտեների:

Ծանօթ.– Կ. կոմիտեների զեկուցումները անհրաժեշտօրէն պիտի պարունակեն հետեւեալ կէտերը եւ պիտի ներկայացուն գրաւոր, կազմած այն ձեւով որ տպագրութեան յարմար լինեն.– փաստացի թական տւեալներ կազմակերպութեան մասին, կուսակցութեան ֆինանսական դրութիւնը, պետական հաստատութիւնների կազմակերպման վիճակը եւ կուսակցութեան կատարած դերը այդ գործում, շրջանի դպրոցների ազգայնական վիճակը եւ դրամական հաշւետւութիւն:

2. Վերաբերմունքը դէպի ներկայ քաղաքական մոմենտը:

3. Սահմանադիր ժողովի ընտրութիւնների կազմակերպման խնդիրը եւ կուսակցական ցուցակի կազմումը:

4. Սահմանադիր ժողով մտցնելու օրինակներ՝ ա) Կովկասեան քաղաքական կազմի մասին, բ) Կովկ.

հողային եւ ջրային հարցի մասին:

5. Վտանգած վայրերի ապահովութեան հարցը:

6. Կազմակերպչական նոր կանոնադրութեան հաստատումը:

7. Կուսակցական մամուլ եւ գրականութիւն:

8. Միջկուսակցական յարաբերութիւնների ու գործակցութեան խնդիր:

9. Ազգային համագումար:

10. Կուսակցութեան մարմինների դրամական հաշւետւութիւն:

11. Ընտրութիւններ:

Կուսակցական բոլոր մարմիններն ու ընկերները պէտք է շտապեն նախապատրաստուել, որպէսզի ճիշտ ժամանակին պատգամատրները լինեն ժողովավայրերում:

«Հորիզոն», 21 Սեպտեմբեր 1917, թիւ 201

Սեպտեմբերի 23-ին, երկուշաբթի, ժամը 12-ին տեղի ունեցաւ Հ.Յ.Դ. ռայոնական ժողովի խորհրդակցական նիստը: Նոյն օրը երեկոյեան կատարուեց պաշտօնական բացումը: Նիստը բաց առաւ ընկ. Հ. Օհանջանեանը՝ ողջոյնի խօսք ուղղելով ներկայ եղողներին: Նա ասաց, որ այս ռայոնական ժողովը կազմուած է ամենալայն ձեւով եւ ամէնից մօտ կերպով է արտայայտուում Դաշնակցութեան կամքն ու տրամադրութիւնը: Յեղափոխութիւնը, առհասարակ, քանդելու պրոցես է, սակայն նա պարունակուած է իր մէջ նաեւ խոշոր չափով ստեղծագործութիւն: Յեղաշրջումից յետոյ դեմոկրատիայի մի մասը յանձին բոլշեւիկների՝ շարունակուած է քան-

դումն ու ոչնչացումը, սակայն դեմոկրատիայի խոշորագոյն մասը ձգտում է շինարար աշխատանքի: Հ.Յ.Դ. շնորհիւ հայ կեանքի բացառիկ պայմանների, չէ կարողացել լիակատար թափով մասնակցել յեղափոխական գործին:

Ծանր է դեռ մեզ համար, բայց մենք հաւատում ենք, որ արգելառիթ պայմանները կ'անցնեն եւ մենք մեր ամբողջ ոյժերը կը տրամադրենք յեղափոխութեան ծաղկմանն ու բարգաւաճմանը: Ապա դառնալով ժողովի օրակարգին, ընկերը մաղթում է յաջող ու բեղմնաւոր աշխատանք եւ անցնում է հարցերին:

Բացի մանդատ ունեցողներից՝ որոշուած է ձայնի իրաւունքով հրաւիրել ներկայումս Թիֆլիսում գտնուող ընկ. Վ. Լուկեւիչին⁴⁶ (Արարատսկի), կամաւորական զնդերի դաշնակցական խմբապետների մէկ ներկայա-

46.- Վալերիան Լուկեւիչ (1866-1941) – Սոցիալ յեղափոխական, ազգութեամբ ռուս՝ Երեւան ծնած, Հ. Յ. Դաշնակցութեան հին գործակիցներէն:

ցուցիչին ձայնի իրաւունքով, միւսներին՝ խորհրդակցական ձայնով: Ուսանողութեան Կ. մարմնի անդամ ընկ. Շահբերունին ձայնի իրաւունքով, մինչեւ ընտրւած ներկայացուցչի գալը, Հ.Յ.Դ. Պետրոգրադի ուսանողական կոմիտէի ներկայացուցչին: Հրաւիրուած են խորհրդակցական ձայնով Թիֆլիսում գտնուող բոլոր Կ. կոմիտէները եւ կոմիտէների դաշնակցական Ֆրակցիաների, նախկին բիւրոների եւ պատասխանատու մարմինների, հայ գինւորական միութեան դաշնակցական անդամները եւ կուսակցական թերթերի խմբագրական կազմը:

Բացի այդ կարող են ներկայ լինել ագիտացիոն բիւրոյի անդամները, Թիֆլիսի դաշնակցական բանւորութեան ներկայացուցիչները եւ թաղային կոմիտէների անդամները: Ընտրուում է դիւանը, բաղկացած մէկ նախագահից, երկու փոխ-նախագահներից եւ 3 քարտուղարներից: Նախագահ ընտրուում է ընկ. Հ. Օհանջանեանը. փոխ-նախագահներ՝ Ս. Արարատեան եւ Վ. Փափագեան, քարտուղարներ՝ Յ. Տէր-Յակովբեան, Բարունակ եւ Ա. Աղաջանեան:

Ընդունուում է ժողովը վարելու հետեւեալ հրահանգը:

1. Նախագահութիւնը լինելու է մշտական, մինչեւ ժողովի վերջը:
2. Նախագահութիւնը որոշում է նիստերի տեղն ու ժամանակը, մշակում եւ ձեւակերպում է նիստեր մտցրւող հարցերը եւ վարում է նիստերի արձանագրութիւնները:
3. Ընդհանուր նիստերը տեղի են ունենալու երեկոյեան ժամը 5-10-ը, իսկ սեկցիաների նիստերը՝ առաւօտեան:
4. Ռայոնական ժողովը բաժանւած է սեկցիաների՝ համաձայն կարեւոր հարցերի:
5. Կազմակերպում են 3 յանձնաժողովներ՝ մանդատների ստուգման, հաշւական եւ խմբագրական:
6. Նիստերը համարուում են օրինական, եթէ ներկայ է ձայնի իրաւունք ունեցող պատգամաւորների կէսից աւելին:
7. Բանաձեւերը կարող են քննարկուել միայն այն դէպքում, երբ տրուում են գրաւոր:
8. Ձայն կարելի է խնդրել միմիայն գրաւոր յայտարարութեամբ՝ տոմսակով:
9. Միեւնոյն հարցի մասին նոյն անձնաւորութիւնը կարող է խօսել երկու անգամ. առաջին անգամը 10 ր.,

երկրորդ անգամ՝ 5 րոպէ: Ըստ կարգի առաջարկութիւնների վերաբերմամբ տրուում է երկու ձայն՝ մէկը՝ թեր, միւսը՝ դէմ:

10. Վիճաբանութիւնները դադարեցնելու եւ ցանկը փակելու համար կարելի է ձայն տալ միմիայն երկու հոգու, մէկին՝ թեր, միւսին՝ դէմ:

Ընտրուում է 4 հոգուց բաղկացած մանդատներ ստուգող մարմին. ընկ. Հ. Չոլախեան, Մարուքեան, Յովհաննիսեան եւ Ս. Շահրիկեան:

Որոշուում է օրակարգի հարցերը դասաւորելիս առաջին հերթին դնել Ազգային խորհրդակցութեան մէջ քննելիք հարցերը:

Որոշուում է, որ սեկցիաներին կարող են մասնակցել ձայնի իրաւունքով նաեւ միւս պատգամաւորները, եթէ ցանկանան:

Ընտրուում է երեք սեկցիա:

Ապա Ազգային խորհրդակցութեան⁴⁷ առթիւ գեկուցում է տալիս ընկ. Ա. Բաբախեանը, որ անելով համագումար հրաւիրելու պատմութիւնը եւ միջկուսակցական մարմնի գործունէութիւնը, առաջարկում է ներկայ խորհրդակցութիւնը՝ հակառակ եղած թերութիւնների՝ նկատել համագումար եւ մասնակցել նրան՝ ընտրելով մի մարմին ազգային գործերը վարելու համար:

Կուսակցութեան վերաբերմունքը դէպի Ազգային խորհրդակցութիւնը պարզելու համար տեղի են ունենում երկար վիճաբանութիւններ:

Արտայայտուում են ընկ. Արամ, Վ. Նաւասարդեան, Յովհաննիսեան, Արարատեան, Խատիսեան, Արդութեան, Վրացեան, Չոլախեան, Շահինեան եւ ուրիշներ:

Ընկերների մի մասը պնդում է, որ այդ խորհրդակցութիւնը չէ կարող հայ դեմոկրատիայի կամքի արտայայտիչ լինել, որովհետեւ նա չէ ընտրուած քառանդամ սիստեմով. միւսները առարկում են, որ աչքի առաջ ունենալով հարցերի հրատապութիւնը՝ պէտք է հաշտել կացութեան հետ եւ համագումարի հրաւիրելը անհրաժեշտ համարելով հանդերձ, ներկայ խորհրդակցութեան մասնակցել եւ ընտրել մարմին: Բանաձեւերի քննարկութիւնը յետաձգուում է հետեւեալ նիստին:

Յ. ՏԵՐ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

«Հորիզոն», 27 Սեպտեմբեր, 1917, թիւ 206

47.- Այդ օրերուն, Սեպտ. 29 – Նոյ. 13, Թիֆլիսի մէջ պիտի գումարուէին Ազգ. Համախորհրդակցութեան նիստերը՝ մասնակցութեամբ հայ քաղաքական եւ հասարակական կազմակերպութեանց, ներառեալ արեւմտահայ Ազգ. Խորհուրդի պատգամաւորները, ընդամենը 228 հոգի (121 դաշնակցականներ): Համախորհրդակցութիւնը ստեղծեց նաեւ գործադիր մարմին՝ Ազգ. Խորհուրդը, որ փաստօրէն պիտի ստանձնէր նախկին Ազգ. բիւրոյի պաշտօնը եւ որուն աւելի ուշ, 1918 թ. Մայիսի վերջերուն, վիճակուած պիտի ըլլար հռչակելու Հայաստանի անկախութիւնը: Ազգ. Խորհուրդի ընդլայնումով նաեւ պիտի առաջացուէր Հայաստանի Հանրապետութեան առաջին խորհրդարանը:

ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

* * *

Սեպտեմբերի 26-ին առաջարկեցին ժամը 10-ից մինչև 2 աշխատում էին սեկցիաները: Ընդհանուր նիստը բաց-
ւեց ընկ. Ս. Արարատեանի նախագահութեամբ ժամը
7-ին: Ընտրուեցին խմբագրական եւ հաշվական յանձնա-
ժողովներ:

Ապա դրուում են քւէարկութեան բանաձեւերն ազ-
գային խորհրդակցութեան մասին: Ձեկուցանող Ա. Բա-
բայեան պատասխանելով նախորդ նիստի ճառախօսնե-
րին՝ պնդում է, որ պէտք է ամենալայն մասնակցու-
թիւն ցոյց տալ խորհրդակցութեան եւ որովհետեւ
դժար է համագումարներ հրաւիրելը՝ պէտք է խորհրդ-
ակցութիւնը համագումար համարել եւ նրա որոշում-
ները դարձնել պարտադիր:

Յետագայ խօսողները հակաճառում են զեկուցանո-
ղին եւ շեշտում են, որ ազգի կամքի միակ արտայայտի-
չը կարող է համարել քառանդամ սկզբունքով ընտրու-
ած համագումարը: Ընկերներից ոմանք առաջարկում
են խորհրդակցութեան չմասնակցել. մեծ մասը հակա-
ռակ կարծիքի է: Դրուում է քւէարկութեան չորս բանա-
ձեւ եւ ընդունում է հետեւեալը.

Լսելով զեկուցումը սեպտ. 27-ին միջկուսակցական
մարմնի կողմից գումարուող ազգային համախորհրդ-
ակցութեան մասին՝

Հ. Յ. Դաշն. ռայոնական ժողովը որոշեց.

1) Որ Թիֆլիսում գումարուող վերոյիշեալ ժողովը
հրաւիրւած է խորհրդակցական նպատակով.

2) Որ այդ ժողովը ընտրւած է ոչ կատարեալ ընտրա-
կան ձեւով եւ ուրեմն չէ կարող հանդիսանալ հայու-
թեան բոլոր խաւերի ու դասակարգերի իսկական ներ-
կայացուցչութիւն, իսկ միւս կողմից՝

3) Որ յեղափոխութեան այս շրջանում, երբ երկիրը
մնացել է առանց իշխանութեան, իսկ հրապարակի վրայ
են դրւած ու լուծման են սպասում կարեւորագոյն սո-
ցիալական, քաղաքական եւ ազգային հարցեր, որոնց
մէջ մեծապէս շահագրգռւած է հայ աշխատաւոր մաս-
սան.

4) Որ ներկայ քաղաքական կեանքի սրընթաց արշա-
ւի օրով կարելի է մոմենտի յեղեղուկ դրութեան ժամա-
նակ ամէն մի րոպէ առաջադրում են կարեւոր հարցեր
ու խնդիրներ, որոնց կասեցնելը կամ յետաձգելը կամ
անկարելի է եւ կամ կորստաբեր.

5) Որ այդպիսի դրութիւնը հրամայականօրէն պա-
հանջում է յեղափոխութեան յաղթանակով շահա-
գրգռւած դեմոկրատիկ տարրերի բոլոր ոյժերի գոր-
ծակցութիւնը (եւ ոչ ներքին պայքար, որը ոչ միայն ջլա-
տում է ոյժերը, այլ եւ կասեցնում է գործունէութիւնը):

6) Որ Դաշնակցութիւնն է հայ աշխատաւորութեան
միակ խոշորագոյն կուսակցութիւնը եւ որ առանց նրա
ակտիւ գործունէութեան ու ջանքերի հնարաւոր չէ իշ-
խանութեան հաստատումն ու պահպանումը հայկական

գաւառներում եւ ո՛չ հայութեան վերաբերեալ սոցիալ-
քաղաքական եւ ազգային խնդիրների լուծումն.

7) Եւ որ այդ իսկ պատճառով Դաշնակցութեան
վրայ է ծանրանում պատասխանատուութիւնը եւ պար-
տականութիւնը գործակցութեան բերելու բոլոր կեն-
սական ոյժերը:

Ի նկատի ունենալով վերոյիշեալները՝ ռայոնական
ժողովը որոշեց.

1. Թիֆլիսում գումարուող ազգային ժողովը համա-
րել հայկական զանազան խմբակցութիւնների եւ հո-
սանքների խորհրդակցական ժողով, որ չէ կարող ոչ մի
կերպ փոխարինել եւ ոչ էլ վերածւել ազգային համագու-
մարի սահմանադիր կամ պարտադիր ֆունկցիաներով.

2. Հայութեան քաղաքական, սոցիալական եւ ազգային
պահանջների ձեւակերպումն ու հրապարակումը հնարա-
ւոր է տալ ընդհանուր ազգային, այսինքն բոլոր հոսանք-
ների պահանջների ձեւակերպման բնոյթ միայն այն դէպ-
քում, եթէ դա կարելի ազգային համագումարի միջոցով,
որ ընտրւած լինի քառանդամ ընտրական սիստեմով.

3. Հրաւիրւած համախորհրդակցութիւնը պէտք է
օգտագործել լայն չափով համաձայնութեան բերելու
մասնակցող խմբերին ու հոսանքներին եւ առաջադրած
հարցերի շուրջը մշակելու մի ընդհանուր գործելա-
կերպ՝ ընդունելի բոլորի կողմից.

4. Նոյն նկատումներով այդ խորհրդակցութիւնից
ընտրում է մէկ ժամանակաւոր կոալիցիոն մարմին,
որը պարտականութիւն ստանձնէ մէկ կողմից շտապեց-
նել ազգային համագումար հրաւիրելու գործը, եւ միւս
կողմից՝ փոխադարձ համաձայնութեան հիմքերի վրայ,
վարէ այն ընթացիկ խնդիրները, որ ստիպողաբար ան-
հրաժեշտ կը լինի հրապարակ հանել եւ որոնք չեն կա-
րող սպասել համագումարին:

Բանաձեւը անցնում է 56 ձայնով, 34-ի դէմ 9-ի ձեռն-
պահութեամբ:

Քւէարկութիւնը յետոյ ընկ. Հ. Օհանջանեանն առա-
ջարկում է բանաձեւի մէջ մտցնել, որ կոալիցիոն մարմի-
նը պէտք է լինի գործունակ: Առաջարկը ընդունում է:

Ընկ. Արարատեանն առաջարկում է կոալիցիա կազ-
մելու խնդիրը թողնել խորհրդակցութեան Դաշնակցա-
կան ֆրակցիային եւ Արեւելեան բիւրոյին, իսկ մեր
պատգամաւորները պէտք է մշակեն գործունէութեան
ընդհանուր պլատֆորմ եւ առաջարկեն խորհրդակցու-
թեանը: Առաջարկն անցնում է: Այնուհետեւ առաջարկ-
ւում է բանաձեւի մէջ մտցնել մի շարք ուղղումներ եւ
լրացումներ, որոնցից ոչ մէկը չէ անցնում:

Յայտարարւում է 15 րոպէ ընդմիջում, որից յետոյ
ընկ. Ա. Շահխաթունեան տալիս է զեկուցում Սահմ. ժո-
ղովի սեկցիայի կողմից:

Յ. ՏԵՐ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

* * *

Սեպտեմբեր 27-ին սեկցիաների պարապմունքները տեւեցին Ժ. 10-ից մինչեւ Յ-ը, ընդհանուր նիստը սկսեց երեկոյեան ժամը 6-ից՝ ընկ. Ս. Արարատեանի նախագահութեամբ: Օրակարգի հարցն էր վտանգւած վայրերի ապահովութեան խնդիրը: Զեկուցանում է ընկ. Ռուբէնը:

Ընկերը յայտնում է որ ներկայ մոմենտի ամենախաղաղ եւ պատասխանատու գործն է վտանգւած վայրերի ապահովութիւնը, սակայն մինչեւ այժմ այդ ուղղութեամբ, դժբախտաբար, քիչ բան է արւել:

Ապահովութեան խնդիրը պէտք է լայն ըմբռնել եւ դրա տակ հասկանալ ամէնից առաջ Ֆրոնտի ապահովումը, յեղափոխութեան նւաճումների պահպանումը եւ առհասարակ պետութեան քայքայման առաջն առնելը: Զորքի ներկայ բարոյալքման ժամանակ, երբ բանակից բացակայում է կարգապահութիւնը եւ զորքի մի մասը ենթարկւած է զանազան հոսանքների ազդեցութեան ու տրամադիր չէ պատերազմը շարունակելու, ռազմական ոգու այս անկման շրջանում Ֆրոնտը եւ մօտակայ թիկունքը մեծապէս վտանգի են ենթարկւած եւ զարմանալի է, թէ ինչո՞ւ մինչեւ այժմ Կովկասեան ռազմաճակատում թշնամին ակտիւ քայլերի չէ դիմում: Դա բացատրւում է նրանով, որ տաճիկ զորքը եւս գտնւում է բարոյալքման մէջ: 10 տարւայ անընդհատ պատերազմները, քաղցը եւ ընտանիքի կարօտը միանգամայն քայքայել են տաճիկական բանակները եւ յարձակման անընդունակ դարձրել: Դասալքութիւնը այնտեղ էլ հսկայական չափերի է հասել: Տաճիկ զորքը որակով ցածր լինելով՝ թուով էլ աւելի բարձր չէ: Կովկասեան ռազմաբեմում հազիւ 100-150 հազարի է հասնում: Սակայն հարց է ծագում, թէ արդեօք մենք կարող ենք դիմադրել նոյնիսկ այդ քայքայւած բանակին, եւ եթէ ռուս զորքերը չկարողանալով դիմագրաւել տաճիկական յարձակումներին՝ նահանջի ճամբան բռնի, մեծ վտանգ է սպառնում տաճիկ մերկ, քաղցած զորքի կողմից կովկասեան բոլոր ժողովուրդներին եւ մասնաւորապէս հայերին:

Ֆրոնտի վտանգւելու սպառնալիքը պէտք է գործունէութեան հրաւիրէ կովկասեան բոլոր կենսունակ ոյժերին այդ Ֆրոնտը ապահովելու: Բայց ինչպէ՞ս ամրացնել Ֆրոնտը գէթ առժամանակ, մինչեւ ընդհանուր դրութեան պարզւելը եւ ռուս բանակի վերակազմութիւնը, որին անպայման հաւատում ենք: Ոչ մէկի համար գաղտնիք չէ, որ այն զորքը, որը ծանօթ է տեղական պայմաններին, որն անմիջապէս վտանգւած է տեսնում իր ընտանիքն ու օջախը, աւելի եռանդուն ու անձնագոհաբար կը կռւի, որովհետեւ շատ լաւ է գի-

տակցում, որ իր նահանջով վտանգի է ենթարկում պետութեան հետ միասին նաեւ իր ընտանիքը: Ուստի անհրաժեշտ է զորքը ազգայնացնել եւ կովկասեան Ֆրոնտը պաշտպանել կովկասեան ազգերից կազմւած զորքերով: Այդ ուղղութեամբ եղած քայլերը պէտք է խրախուսել եւ նպաստել ամէն կերպ: Հայ, ռուս եւ վրացի զորքերը ձեռք ձեռքի տւած կարող են ամրացնել Ֆրոնտը եւ պետութիւնը պաշտպանել կորստաբեր հարւածից:

Ֆրոնտից յետոյ գալիս է անմիջական թիկունքը, որը աւերակի է վերածւած եւ որտեղ բուն են դրել աւազակաբարոյ տարրերը, որոնք երկաթէ բռունցքով սպառնում են զորքերի թիկունքի եւ խաղաղ, իր աշխատանքին անձնատուր եղած ազգաբնակչութեանը՝ հայերին, թուրքերին, ասորիներին, եգիպտերին եւ հայաստանաբնակ քրդերի մի մասին: Շնորհիւ երկրի աւերակ դրութեան այդ հրոսակները հնարաւորութիւն ունին յարձակւելու, աւերելու եւ կողոպտելու, իսկ հարկը պահանջած դէպքում փախչելու եւ թաքնւելու: Պատերազմող զորքերի ամենախաղաղ պահանջներից մէկն է թիկունքի ապահովումը, որպէսզի պարենաւորումը կանոնաւորւի, ռուսի գինւորական իշխանութիւնն ամէն հնարաւոր միջոց պէտք է ձեռք առնի չէզոքացնելու մօտաւոր թիկունքի աւազակները եւ ճակատը ազատէ թիկունքից կտրւելու սպառնալիքից:

Երկրի ներսում իշխանութեան բացակայութեան պատճառով մութ ոյժերը սանձարձակ են դարձել իրենց աւազակային բնազդներով. աւազակութիւնը հասել է հսկայական չափերի, որից Անդրկովկասում գլխաւորապէս տուժում են թուրք եւ հայ խաղաղ ժողովուրդը: Անհրաժեշտ է շուտափոյթ միջոցների ձեռնարկել ալան-թալան վերջացնելու եւ կարգը վերահաստատելու համար: Դաշնակցութիւնը իբրեւ յեղափոխական գործօններից մէկը իր բոլոր ոյժերով պէտք է մաքառէ աւազակութեան դէմ. իսկ աւազակութիւնը կը վերանայ միայն այն ժամանակ, երբ կազմի ուժեղ իշխանութիւն, որի կազմակերպւելուն եւ ուժեղանալուն Դաշնակցութիւնը պէտք է նպաստէ բոլոր հնարաւոր միջոցներով: Իշխանութեան ամրապնդումը պէտք է լինի Դաշնակցութեան ամենամօտաւոր նպատակը եւ այդ միջոցով է, որ աւազակութիւնը կ'ոչնչանայ: Ժողովրդական միլիցիան պէտք է կազմակերպւի շուտափոյթ եւ Կովկասում գործող բոլոր յեղափոխական ու սոցիալիստական կուսակցութիւնները պէտք է աջակցեն նրա կազմակերպման:

Որոշակի պարզաբանելով Ֆրոնտի, մօտակայ թիկունքի ու թիկունքի դրութիւնը եւ մատնանշելով այն միջոցները, որոնցով կարելի է ապահովել այդ երեք շրջանները՝ ընկ. զեկուցանողը կարողում է իր բանաձեւը, որի շուրջը ծագում է վիճաբանութիւն: Խօսում են ընկերներ՝ Նաւասարդեան, Լեւնեան⁴⁸, Դրօ, Խատիսեան,

48.- Լեւնեան – ծածկանուն Նազարեանց Լիպարիտի:



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Վրացեան, Աղբալեան, Շահխաթունի, Վ. Բաբայեան, Յովհաննիսեան, Արամ եւ ուրիշներ: Բոլոր ճառախօսները պնդում են, որ Դաշնակցութիւնը ձեռք ձեռքի տւած կովկասեան եւ Ռուսաստանի դեմոկրատիայի հետ, պէտք է յեղափոխութեան նաւը հասցնէ ցանկալի նաւահանգստին, որով համայն Ռուսաստանի դեմոկրատիայի հետ միասին ապահովուած կը լինեն նաեւ հայ դեմոկրատիայի մարդկային իրաւունքները: Բանաձեւը ենթարկուած է մասնակի փոփոխութիւնների եւ յաւելումների, որից յետոյ ընդունուած է ձայների ճնշող մեծամասնութեամբ:

Յ. ՏԵՐ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

«Հորիզոն», 29 Սեպտեմբեր, 1917, թիւ 208

* * *

Սեպտ. 26-ի նիստի երկրորդ մասում ընկ. Ա. Շահխաթունեան զեկուցում տւեց Սահմանադիր ժողովի սեկցիայի կողմից:

Նախ ընկերը ընդհանուր ակնարկ է գցում սեկցիայի պարապմունքների վրայ, ապա ծանրանում է Կովկասում մտցելիք զեմստուոյի հարցերի անցեալ եւ ներկայ պատմութեան վրայ: Նա ասում է, որ հին ռեժիմի օրով Անդրկովկասում մտցելիք զեմստուոյի օրինադիժը այնքան անընդունելի էր, որ հայկական զանազան հիմնարկութիւնների կողմից տեղացին բողոքներ: Հէնց այդ ժամանակ տեղի ունեցաւ յեղափոխութիւնը եւ Անդրկովկասեան դեմոկրատիան հնարաւորութիւն ստացաւ իր բախտն ինքը տնօրինելու: Գարնանը նորից հրապարակի վրայ դրեց Անդրկովկասում զեմստու մտցնելու խնդիրը: Յեղափոխութիւնից յետոյ Պետրոգրադում կազմեց մի յանձնաժողով, որ պէտք է զբաղէր Սահմանադիր ժողովի նախապատրաստական աշխատանքներով: Ռուսաստանի բոլոր ազգութիւնները մասնակցում էին այդ յանձնաժողովին: Հայ Միջկուսակց. մարմինը ուղարկել էր ընկ. Գ. Խատիսեանին: Պետրոգրադում էր եւ ընկ. Շահխաթունեան: Անդրկովկասի գործիչների ներկայութիւնից օգտւելով ներքին գործերի մինիստրութեան կից գործող տեղական ինքնավարութիւնների յանձնախումբը՝ Բ. Վեսելովսկու նախագահութեամբ հրաւիրում է նրանց մասնակցելու յանձնախմբի պարապմունքներին: Այդտեղ պարզուած է, որ Անդրկովկասի ներկայ վարչական բաժանումներով անհնար է զեմստու մտցնել, ուստի հարկաւոր է նկատուած նոր բաժանում: Դաշնակցութեան ներկայացուցիչներն առաջարկում են բաժանման մի նախագիծ, որը քննում է յանձնախումբը. մինիստրութեան կողմից ընդունւելով իբրեւ նիւթ՝ կազմուած է նախագիծ եւ ու-

ղարկուած Անդրկովկասեան Առանձին Կոմիտէին նրա կարծիքն ու եզրակացութիւնները առնելու: Այդ աշխատանքը Անդրկովկասում պէտք է կատարւէր մէկ ամսուայ ընթացքում, սակայն մինչեւ հիմա ձգձգուած է եւ դեռ չէ վերջացած: Համաձայն այդ նախագծի՝ Արեւելեան Անդրկովկասը բաժանւելու է երկու շրջանի՝ թաթարական եւ հայկական: Գանձակի նահանգը կազմւելու են Ղազախ, Գանձակ, Ջիւանշիր, Շուշի գաւառների լեռնային հայաբնակ մասերը, Զանգեզուրի գաւառը ամբողջապէս, ի բաց առեալ Բարգուշատի հովտի մի քանի թուրքական գիւղական հասարակութիւններ, որոնք միացւելու են Կարեազին թաթարական գաւառին: Կարեազինի հայկական մասը միացւելու է Շուշուայ գաւառին: Գանձակ քաղաքը բաժանւելու է երկու մասերի՝ հայկական եւ թուրքական: Երեւանի նահանգից հանւում է Ալեքսանդրապոլի գաւառը, որի հետ միացւելու է Լոռին, Ախալքալաքի գաւառը, Ծալկայի հայ գիւղերը, Ղարսը եւ Կաղզւանը, որոնցից կազմւելու է առանձին նահանգ: Երեւանի գաւառների մէջ եւս մտցւելու են որոշ ներքին փոփոխութիւններ:

Ապա զեկուցանողը մի շարք դիտողութիւններ անելուց յետոյ, կարդում է սեկցիայի բանաձեւը, որն ընդունուած է միաձայնութեամբ:

Յ. ՏԵՐ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

«Հորիզոն», 30 Սեպտեմբեր, 1917, թիւ 209

* * *

Սեպտեմբերի 28-ին, առաւօտեան ժամը 10-ին տեղի ունեցաւ ռայոնական ժողովի 4-րդ նիստը ընկ. Հ. Օհանջանեանի նախագահութեամբ: Հերթի էր դրւած գրաւած վայրերի կոմիսարիատի խնդիրը, որի մասին զեկուցումն է տալիս ընկ. Արամը: Ընկերը մանրամասն նկարագրում է կոմիսարիատից առաջ եղած գրաւած վայրերի գեներալ նահանգապետութիւնը, շեշտում է նրա պակասաւոր կողմերը, ապա անցնելով կոմիսարիատին՝ տալիս է նրա ծագման ու զարգացման պատմութիւնը: Պատկերացնելով կոմիսարիատի մեխանիզմը՝ տալիս է տեղեկութիւններ ծառայողների մասին եւ առհասարակ կոնկրէտ կերպով ուրւագծում է նրա կատարած եւ կատարելիք դերը գրաւած վայրերում:

Ընկերը քննադատում եւ գնահատում է կոմիսարիատի գործունէութեան լաւ ու վատ կողմերը եւ ցանկութիւն յայտնում, որ ռայոնական ժողովը միջոցներ ձեռնարկէ եղած պակասները լրացնելու համար: Կոմիսարիատի ամենապակասաւոր կողմն է համարուած այն, որ այդ հիմնարկութեան մէջ տեղական ժողովուրդներն իրենց արժանի տեղը չեն գրաւում, որով

այդ հիմնարկութիւնը կտրուած է ու խորթ է մնում տեղական կեանքին: Զեկուցումից յետոյ ընկերն առաջարկում է մի բանաձեւ, որի շուրջը տեղի է ունենում վիճաբանութիւն: Խօսողները ստուար մեծամասնութեամբ շեշտում են, որ տեղական բոլոր տարրերը լայն մասնակցութիւն պէտք է ունենան կոմիսարիատի հաստատութիւնների մէջ: Ուշ լինելու պատճառով բանաձեւի քննարկութիւնը թողնուում է հետեւեալ նիստին:

Յ. ՏԷՐ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

«Հորիզոն», 1 Հոկտեմբեր, 1917, թիւ 210

* * *

Ռայոնական ժողովի V նիստը տեղի ունեցաւ սեպտեմբերի 29-ին, երեկոյեան ժամը 6-ին ընկ. Հ. Օհանջանեանի նախագահութեամբ: Հերթի է դրուած քաղաքական մոմենտը եւ մեր վերաբերմունքը: Զեկուցանում է ընկ. Ս. Վրացեանը, որ հանգամանօրէն պատկերացնում է Ռուսաստանի քաղաքական, տնտեսական, ֆինանսական քայքայումը, երկրում անիշխանութեան աճելը, պարենաւորման սուր տագնապը, յուզումները քաղաքներում ու գիւղերում եւ ծանր կացութիւնը ռազմաճակատում: Ռուսաստանի կշիռն ընկնում է միջազգային յարաբերութիւնների մէջ եւ ռուս դեմոկրատիայի բոլոր ջանքերը մինչեւ այսօր մի ելք գտնելու՝ կորչում են ապարդիւն: Ապա ընկ. Վրացեանը թւում է այն պայմանները, որոնք կարող են նպաստել ձգնաժամի մեղմացման — կենտրոնում ու երկրում — հեղինակաւոր իշխանութեան կազմակերպումը՝ առանց կոալիցիայի սկզբունքը մերժելու, սոցիալիստական մի շարք բարեփոխութիւններ, աշխատանքի ու կապիտալի յարաբերութիւնների բարելաւում, պարենաւորման գործի կազմակերպում, Սահմ. ժողովի շուտափոյթ գումարում եւ պատերազմի լիկւիդացիա դաշնակիցների հետ կամ նրանց համաձայնութեամբ, իսկ մինչ այդ զօրքի վերակազմում ու ռազմաճակատի ամրապնդում: Հաշտութեան նպաստող պայմաններից մէկը կարող է լինել միջազգային դեմոկրատիայի համաժողով:

Վերջացնելով իր զեկուցումը՝ ընկ. Վրացեան առաջարկում է իր բանաձեւը, որի շուրջը տեղի են ունենում բոլոր վիճաբանութիւնները: Խօսում են ընկ. Արսէն Շահմազեան, Աղբալեան, Տէրտէրեան, Չիլինգարեան, Ս. Արարատեան, Ա. Յովհաննիսեան, Նժդէհ, Վ. Նաւասարդեան, Ա. Ահարոնեան, Ա. Մալխասեան, Վ. Տէր-Գէորգեան, Ա. Շահխաթունեան, Կ. Ղազարեան եւ Ռուբէն Տէր Մինասեան: Վէճի գլխաւոր առարկան պատերազմի խնդիրն է: Խօսողների մի մասը պնդում է, որ պէտք է պատերազմը շարունակել մինչեւ ցանկալի հաշ-

տութիւն, միւս մասը պնդում է, որ անկարելի է այլեւս յաջողութեան յոյս ունենալ, պէտք է որոնել հաշտութեան միջոց եւ միեւնոյն ժամանակ անցնել ինքնապաշտպանութեան: Բոլոր խօսողները հակառակ են անշատ հաշտութեան:

Վերջին խօսքը տրւում է ընկ. Վրացեանին, որը քննադատելով ճառախօսների կարծիքները՝ դարձեալ դալիս է իր նախկին եզրակացութեան: Նա ասում է, որ ժամանակաւոր կառավարութիւնը ոչ մի միջոց չպէտք է խնայէ բարձրացնելու բանակի ոգին եւ տրամադրութիւնը: պէտք է պաշտպանէ ռուսական սահմանը, սակայն միաժամանակ պէտք է ձգտէ շուտափոյթ հաշտութեան, նրա քաղաքականութեան գիծը պէտք է լինի հաշտութեան գիծ: Բանաձեւի քննարկութիւնը թողնուում է յաջորդ նիստին: Բանաձեւը յանձնուում է խմբազրական յանձնաժողովին եւ դիւանին վերջնականապէս խմբազրութեան:

Յ. ՏԷՐ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

«Հորիզոն», 3 Հոկտեմբեր, 1917, թիւ 211

* * *

Վեցերորդ նիստը կայացաւ սեպտեմբերի 30-ին, երեկոյեան քաղաքային ժողովարանի ամառային շէնքում ընկ. Հ. Օհանջանեանի նախագահութեամբ: Ընկերը յայտնեց, որ մեր մէջ է գտնուում սոց.-յեղափոխականների կենտրոնական կոմիտէի անդամ եւ նրանց պաշտօնաթերթի խմբագիր մեր վաղեմի բարեկամ ընկ. Վ. Լուկեւիչը (Արարատսկի):

Բոլորն ծափերի տակ ընկ. Լուկեւիչը ողջունեց բոլորին եւ բարձրացաւ բեմ:

Ընկ. Օհանջանեանը շարունակելով իր խօսքը՝ ասաց թէ մեր առաջ է կանգնած Ռուսաստանի յառաջադէմ դեմոկրատիայի լաւագոյն վեպերաններից մէկը, որը իր կեանքի ամբողջ ընթացքում անշեղ կերպով առաջնորդել է բռնակալութեան հարւածների տակ, ռուս դեմոկրատիան դէպի մարդկութեան լաւագոյն իդէալների իրագործումը՝ «Հողը եւ ազատութիւնը», որ նշանաբանն են եղել նրա գործունէութեան: Սակայն միայն ռուս կեանքը չէ որ հետաքրքրել է ընկ. Լուկեւիչին: Հայ ազատագրական շարժման մէջ եւս նա բռնում է իր պատւաւոր եւ անփոխարինելի տեղը: Սկսած 90-ական թվականներից նա գործակցել է Հայ Յեղափ. Դաշնակցութեան անգլոգական ռազմիկներին՝ Քրիստափոր Միքայէլեանին, Սիմոն Զաւարեանին եւ այդ շրջանի բոլոր գործիչներին: Նա երբեք չէ խնայել իր գործակցութիւնը եւ խորհուրդները Դաշնակցութեան եւ աշխատակցել է «Դրօշակ»ին, որ Արարատսկի ստորագրու-

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՄԻՐ

Թեամբ պարզաբանել է մեր ծրագրային խնդիրները: Մի խօսքով նա մարմնացումն է եղել այն տեսակետի, որ դաշնակցական գործիչները ռուսական կեանքում լինեն ս.-յեղափոխական, եւ հայ իրականութեան մէջ՝ դաշնակցական: Այս է բնական վիճակը, որովհետեւ երկու կուսակցութիւնների ծրագրիների հիմնական կէտերը համապատասխանում են իրար: Ընկ. Լուսինե-ւիչը լաւ է ըմբռնել այդ եւ իր գործունէութեան ամբողջ ընթացքում կիրառել է կեանքի մէջ: Հայ ազատագրական շարժումը մեծ երախտիք ունի Լուսինեւիչի հանդէպ եւ նրան իր լաւագոյն ուսուցիչների դասն է դասում:

Փոթորկոտ ու խելագար ծափերի տակ ընկ. Լուսինե-ւիչը ոտքի է կանգնում եւ ողջոյնի խօսք է ուղղում հանդիսականներին:

Յայտնելով իր խորին շնորհակալութիւնը ցոյց տրուած համակրանքի եւ ռայոնական ժողովին հրաւիրելու համար՝ ասում է հետեւեալը.

Ընկ. Համոն, որը իմ հին ընկերներից մէկն է, չափազանցեց իմ կատարած ծառայութիւնները: Մի բան սակայն ճիշտ է, որ ես Դաշնակցութեան գոյութեան ամբողջ շրջանում սերտ կապերով կապւած եմ եղել այդ կուսակցութեան հետ: Ես պարզ կերպով յիշում եմ, թէ ինչպէս 28 տարի առաջ Թիֆլիսի խուլ փողոցներից մէկում մի համեստ տան սենեակներից մէկում, ուշ գիշերին հաւաքւել էին 8-9 հայ երիտասարդներ, որոնց մէջ էին Ք. Միքայէլեան, Ս. Զաւարեան, Մատինեան, Խաչատուր Մալումեան եւ ուրիշները: Նրանցից մէկը մտաւ կողքի սենեակը ինձ հետ եւ ասաց. «Վալիա, գնանք մեզ մօտ ու մենք նոր գործ ենք սկսում, ... գուցէ մեզ մի խորհուրդ տաս»: Եւ ես գնացի: Այդ գիշեր ես բառացի կերպով ոչ մի խօսք չարտասանեցի, բայց նրանց ոգեւորւած ճառերի ամէն մի խօսքը խոր կերպով տպաւորւեց իմ սրտում, եւ ես երբեք չեմ մոռանում այդ եռանդուն երիտասարդներին, որոնք մոռացած ամէն ինչ՝ հալածւած հայ ժողովրդի ազատագրութիւնն էին երազում: Եւ այդ երիտասարդների ոգեւորութիւնն ու եռանդը անջնջելի մնացին իմ սրտում եւ անխզելի կապերով կապեցին ինձ հայ ժողովրդի հետ, որին ես արեւակցական կապերով եւս կապւած եմ:

Անցան ժամանակներ: 1909 թիւն Լիւցերն քաղաքում հաւաքւել էին դարձեալ դաշնակցական գործիչներ — Խաչատուր Մալումեանը, Միքայէլ Յովհաննիսեանը, նրանք ինձ էլ հրաւիրեցին մասնակցելու Դաշնակցութեան ծրագրի վերակազմութեանը: Եւ այս երկու մոմենտները ինձ կապել են անքակտելի կերպով հայ իրականութեան հետ Դաշնակցութեան միջոցով: Կապւած են եղել նաեւ իրար հետ երկու կուսակցութիւնները՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ սոց.-յեղափոխականները, որոնց նշանաբանն է եղել միշտ «Հող եւ Ազատութիւն»:

Թիֆլիս գալով՝ ես ցաւով տեսայ այլ պատկեր, ես այլեւս չեմ նկատում նախկին բարեկամական տաք վե-

րաբերմունքը, այլ ընդհակառակը բաւականին սառն յարաբերութիւններ: Ես ցաւում եմ, որ երկար չեմ կարող մնալ, որովհետեւ գնում եմ սոց.-յեղափոխականների կոնֆերանսը բանալու, բայց յոյս ունեմ, որ երկու կուսակցութիւնների մէջ նկատուող սառնութիւնը շուտով կը վերջանայ ու կը սկսին նախկին վերաբերմունքը եւ ռուս ու հայ աշխատաւորութիւնը առաջ կ'ընթանան դէպի մարդկութեան լաւագոյն իդէալը՝ սոցիալիզմի իրականացումը» (բուռն ծափեր):

Ընկ. Արարատեանը դիմելով ընկ. Լուսինեւիչին՝ ասում է հետեւեալը. «Յարգելի ընկեր, գիտեմ քեզ մեծ ցաւ է պատճառում, որ գալով այստեղ՝ չէք գտնում ձեր հին ընկերներից շատերին, որոնց հետ կապւած էք սրտագին կապերով, բայց դրա փոխարէն դուք պէտք է ուրախ լինէք, որ այստեղ ձեր առաջ հաւաքւել է մի նոր սերունդ, որը պատրաստ է խիզախօրէն իրականացնելու այն լոզունգները, որ ռուս կեանքում հնչեցնում է մեր մեծ եղբայր՝ սոց.-յեղափոխականների կուսակցութիւնը, որ ձեր սրտին ցաւ է պատճառում, աւելի եւս ցաւ է պատճառում Դաշնակցութեան նոր սերունդին, որովհետեւ մենք միշտ դաստիարակւել ենք այն ոգով, որ հայ իրականութեան մէջ Հ. Յ. Դաշ.ը կատարում է ճիշտ այն աշխատանքը, ինչ սոց.-յեղափոխական կուսակց.ը ռուս կեանքի մէջ: Նոր սերունդի ներկայացուցիչները, այժմ նստած ձեր առաջ, նորէն առաջնորդւած են այն լոզունգներով, որի իրականացման համար «Չեմիլա ի Վոլեա»-ի կուսակցութիւնը այնքան մեծ գոհեր է տւել եւ պատրաստ է տալու: Պարտք եմ համարում յայտնելու որ, հայ աշխատաւորութեան ներկայացուցիչների գերագոյն իդէալն է՝ համերաշխութեան ձեռք մեկնելով մեր հարեւան ազգերին, ռուսական յեղափոխական դեմոկրատիայի հետ միասին պիտի շարունակի իր դասակարգային-ազգային պայքարը, ձգտելով իրականացնել մարդկութեան երջանիկ ապագան — միջազգային սոցիալիզմի թագաւորութիւնը:

Արարատեանից յետոյ առաջ է գալիս ընկ. Շահխաթունեան եւ ասում է. «Շուտով կը բաժանւէք մեզանից, բայց լաւ հաւատացած եղէք եւ յայտնեցէք Կ. կոմիտէին, որ ինչ յարաբերութիւն էլ լինի երկու կուսակցութիւնների մէջ, այստեղ՝ Կովկասում հայ աշխատաւոր գիւղացիութեան ներկայացուցչութիւնը Սահմանադիր ժողովում պէտք է պաշտպանէ եւ նպաստէ իրականացմանը այն բոլոր լոզունգների, որը առաջադրել է մեր աւագ եղբայրը՝ ռուս գիւղացիութիւնը»:

Ընկ. Լուսինեւիչը հեռանում է բուռն ծափերի տարափի տակ. նրա հեռանալուց յետոյ ընկ. Արամը կարգում է գրաւած վայրերի կոմիտարիատի վերաբերեալ բանաձեւը այն բոլոր ուղղումներով, որ մտցւել էին նախորդ նիստերում: Բանաձեւը ընդունւում է միաձայն»:

48ա.- Բնագրին մէջ ուսաստա՝ «Հող եւ կայք»:

Այնուհետև ընկ. Ն. Աղբալեանը գեկուցանում է Անդրկովկասեան Առանձին կոմիտէի մասին: Նա յայտնում է որ Անդրկովկասեան կառավարութիւնը կազմուած է ազգային սկզբունքով, շուրջը համախմբել են համապատասխան ազգերի ներկայացուցիչները, որոնք շատ դէպքերում լարում են ազգերի յարաբերութիւնները, որովհետև թուրք ներկայացուցիչը իր շրջապատողներով աշխատում է թրքական շահերը պաշտպանել, հայը՝ հայերի եւ վրացին՝ վրացիներին: Փոխանակ համերաշխութեան՝ թագաւորում է անհամերաշխութիւն: Իշխանութեան մէջ հայ տարրը չափազանց թույլ է, որովհետև նա չէ յենւում սխալ ոյժերի վրայ եւ իր յետեւը չունի հայ ազգի մեծամասնութեան վստահութիւնը: Իշխանութիւնը կազմուած ազգային նկատառումներով՝ փոխանակ մօտցնելու հարեւան ազգերին մի օջախի շուրջը՝ աւելի եւս բաժանում է նրանց եւ անհամերաշխութեան սերմեր ցանում, ուստի անհրաժեշտ է Անդրկովկասեան բարձր իշխանութիւնը կազմել չէզոք տարրերից, որոնք չահագրգռուած չլինեն տեղական ինդիւիդներով, կարողանան պետականութեան սկզբունքը պահել. նոր կառավարութիւնը յարմար է կազմել երեք հոգուց, բացառապէս ռուսներից կոլալիցիոն սկզբունքով, իսկ տեղական դեմոկրատիայի ներկայացուցիչներից կը կազմւի մի խորհուրդ այդ իշխանութեան մօտ:

Սկսւում է վիճաբանութիւն. խօսում են Շահխաթունեան, Ա. Խատիսեան, Արամ, Բարունակ, Դ., Խատիսեան, Կորիւն եւ այլն, որոնք մեծամասնութեամբ պնդում են, որ տեղացիներն եւս պէտք է մասն ունենան կառավարութեան մէջ, սակայն չէզոք տարրը պէտք է գերակշռող հանդիսանայ Անդրկովկ. Առանձին կոմիտէի մէջ: Առաջարկւում է կառավարութիւն կազմել 7 հոգուց, 4 ռուս եւ մի մի ներկայացուցիչ Անդրկովկասեան երեք մեծ ազգերից: Այդ ձեւով կազմուած կառավարութիւնը կարող կը լինի բարձրանալ պետականութեան բարձրութեան վրայ եւ երկիրը կը կառավարէ առանց կրքերը յուզելու: Անդրկովկասեան Առանձին կոմիտէի այս ձեւի կազմակերպումը ընդունւում է ռայոնական ժողովի կողմից միաձայն:

Յ. ՏԷՐ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

«Հորիզոն», 4 Հոկտեմբեր, 1917, թիւ 212

* * *

Հոկտեմբերի 1-ին երեկոյեան տեղի ունեցաւ ռայոնական ժողովի VI նիստը ընկ. Հ. Օհանջանեանի նախագահութեամբ: Հերթի էր դրւած Անդրկովկասի ապագայ քաղաքական կազմը: Զեկուցանում է ընկ. Շահխաթունեան:

Անդրկովկասի հայութեան մէջ հայրենիքի գաղափարը այնպէս չէ շեշտուած ինչպէս ուրիշ ազգերի մէջ: Այդ երեւոյթը իր պատճառներն ունի, նախ՝ հայերը խառն են ապրում ուրիշ ազգերի մէջ եւ չեն կազմում միաձուլ կոմպակտ մասսա, որը զգար իրեն իր բնական երկրի տէրն ու տնօրէնը: Երկրորդ՝ այն տարրը, որ առհասարակ ստեղծում է հայրենիքի գաղափարը, բուրժուազիան եւ ինտելիգենցիան, հայկական միջավայրից դուրս են գտնւում եւ չեն կարողանում հաշտել այն մտքի հետ, թէ կարող է հայրենիք լինել առանց իրենց: Երկրորդ եւ ամենագլխաւոր պատճառը այն է, որ Անդրկովկասի նւաճումը կատարւել է մաս մաս եւ որեւէ երկիր միանգամից չէ մտել ռուսական պետութեան մէջ: Օրինակ, Գանձակը իր շրջակայքով մի անգամ է նւաճւել: Երեւանը ուրիշ անգամ, Ալեքսանդրապոլը, Ղարսը նոյնպէս գատ գատ են նւաճուած, այնպէս որ այդ բոլոր երկրամասերի բնակիչները չեն կարող ունենալ մի ամբողջական հայրենիքի գաղափար: Այդպիսով այն բոլոր երկրները, որ գտնւում են Կովկասեան լեռների այս կողմը, նւաճւելով ստացել են մի ընդհանուր անուն՝ Անդրկովկաս, բայց թէ որոնք են այդ երկրամասի սահմանները, ոչ ոք չէ կարող ասել: Չնայած, որ Կովկասից այս կողմը գտնւող երկիրները միացւել են մի ընդհանուր անւան տակ, բայց այնուամենայնիւ այդ երկրամասը կազմուած է մի քանի մասերից, որոնցից ամէն մէկը տնտեսական-սոցիալական յարաբերութեամբ բաժանւում է միւսներից եւ չէ կարող կառավարել միատեսակ օրէնքներով: Ամէն մի երկրամաս ունի իր ուրոյն ինդիւիդները, որոնց լուծումը պէտք է ստանան տեղական օրէնսդրութեամբ: Ուրեմն, ապակենտրոնացումը պէտք է վերջ ի վերջոյ տիրապետէ Անդրկովկասում եւ իրաւունք տայ ամէն մի երկրամասի բնակիչներին տնօրինելու իրենց ներքին գործերը: Երկրից դուրսը կամ ներսը մնացած փոքրամասնութիւնը արգելք չի կարող հանդիսանալ, մանաւանդ եթէ հողային հարցը լուծումն ստանայ այն մասշտաբով, ինչպէս ենթադրւում է այժմ:

Շատ պարզ է, որ ամէն մի գիւղ չէ կարող իր կողքից հող ստանալ, ուստի նրան պէտք է տրւեն հողեր ուրիշ շրջաններում եւ հասկանալի է, որ փոքրամասնութիւնները կը ցանկանան իրենց բաժին հողը ստանալ իրենց մեծամասնութեան մօտ, որը որոշ չափով կը նպաստէ միաձուլ տարր ստանալուն: Այս ամէնը աչքի առաջ ունենալով՝ մենք ընդունում ենք ապակենտրոնացման սկզբունքը, եւ կարծում ենք որ մեր երկրի ապակենտրոնացումը երեք աստիճան է լինելու.— տեղական, Անդրկովկ. եւ համայն ռուսական:

Վերջին աստիճանը՝ Ռուսաստանը գոյութիւն ունի արդէն եւ դրա մասին խօսք լինել չէ կարող: Առաջին աստիճանը՝ տեղական ուրոյն, մարմիններն ստեղծւելու են համաձայն ազգերի ինքնորոշման իրաւունքի,

սակայն միջին աստիճանը՝ Անդրկովկասը մենք ստեղծել չենք կարող, որովհետեւ այդպիսի մի աստիճան պէտք է կազմւի այդ երկրում ապրող ժողովուրդների փոխադարձ համաձայնութեամբ: Պարզ է, որ որքան էլ Անդրկովկասը տնտեսապէս եւ սոցիալապէս բաժանւած լինի մասերի, այնուամենայնիւ կան այնպիսի խնդիրներ, որոնք միացնում են այդ երկրամասը եւ որոնք լուծումն պէտք է ստանան Անդրկովկասում սէյ-մի կամ այլ օրէնսդրական հիմնարկութեան միջոցով: Բացի տեղական միայն Անդրկովկասին վերաբերող խնդիրներից, կան շատ համապետական խնդիրներ, որոնք պէտք է լուծումն ստանան Ռուսաստանի կենտրոնում՝ կանտոնների ներկայացուցիչներից կազմւած խորհրդի մէջ: Եւ կանտոնների կապը կենտրոնական կառավարութեան հետ աւելի սերտ պէտք է լինի, քան Անդրկովկասը միացնող մարմնի: Որքան էլ սերտօրէն կապւած լինենք Ռուսաստանի կենտրոնի հետ, այնուամենայնիւ Անդրկովկասում կան այնպիսի խնդիրներ, որոնք իրենց լուծումը պէտք է ստանան այստեղ, ուստի Անդրկովկասեան երեք կանտոնների միացումը անհրաժեշտ է:

Յեղափոխական կուսակցութիւնները երկրի կազմակերպութեան խնդրում բաժանւած են եղել երկու մասի. մի մասը ապակենտրոնացման կողմնակիցներ,

միւս մասը՝ կենտրոնացման: Հ. Յ. Դաշնակցութիւնը ապակենտրոնացումն է ընդունել իբրեւ պետութեան կազմակերպութեան հիմնաքար, որի համար ենթարկւել է ամենախիստ քննադատութեան, նամանաւանդ ս.-դեմոկրատների կողմից: Վերջիններս դեռ 1905 թիւն ոչ մի կերպ չէին ցանկանում լսել ապակենտրոնացման մասին, սակայն կեանքը ցոյց տւեց ապակենտրոնացման անհրաժեշտութիւնը, եւ Ռուսաստանում գործող բոլոր կուսակցութիւնները՝ թէ՛ ապակենտրոնացման կողմնակիցները, թէ՛ հակառակորդները լռելեայն համաձայնեցին այդ գաղափարին եւ այժմս չկայ ոչ մէկը, որը հակառակ խօսի ապակենտրոնացման:

Եթէ ամբողջ Ռուսաստանի համար ընդունուում է Ֆեդերատիւ հանրապետութեան գաղափարը, ապա ուրեմն ժամանակ է, որ մենք էլ առաջադրենք Սահմանադիր ժողովի առաջ մեր ծրագրի հիմնական կէտերից մէկը՝ աւտոնոմիայի գաղափարը:

Ձեկուցանողից յետոյ խօսում են ընկ. Կ. Ղազազեան, Յ. Քաջազնունի, Պետրոս եւ Ա. Ահարոնեան: Վերջնական եզրակացութիւնը թողնուում է հետեւեալ նիստին:

Յ. ՏԷՐ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

«Հորիզոն», 5 Հոկտեմբեր, 1917, թիւ 213

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դաշնակցութեան ռայոնական ժողովը լսելով գեկուցում Անդրկովկասում գեմատու մտցնելու եւ վարչական սահմանների փոփոխութեան վերաբերմամբ Արեւելեան բիւրոյի կատարած աշխատանքների մասին՝ որոշեց.

1. Հաւանութիւն տալ Ա. բիւրոյի այդ գործի համար կատարած աշխատանքներին.

2. Պահանջել անյապաղ մինչեւ Սահմանադիր ժողովը՝ մտցնել անաստիճան[?] գեմատուային ինքնավարութիւն:

3. Զեմատու մտցնելու նախնական պայմանն է վարչական սահմանների փոփոխութիւնը, որով պիտի ստեղծւեն հայկական, թաթարական եւ վրացական մեծամասնութեան գեմատուային տերիտորիաները:

4. Համաձայն նախագծի՝ հայկական մեծամասնութեան վայրը կազմում է գեմատուային մէկ նահանգ, որը ընդգրկում է ա) Երեւանի նահանգը, բ) Գանձակի նահանգի հարաւ-արեւմտեան մասը — Ղազախ եւ Գանձակ գաւառների հարաւային մասերը, Զիւլանչիլի եւ Շոլչի գաւառների արեւմտեան մասերը, Կարեագին (Զիբրայի) գաւառի հիւսիսային մասը եւ Զանգեզուր գաւառը, առանց մի քանի թաթար գիւղական հասարակութիւնների, որոնք միացւում են հին նահանգի թաթարական մասին. գ) Ախալքալաքի գաւառը, որին միացւում են Մալկայի հայկական մասը եւ Գորի գաւառի երկու դրկից գիւղերը՝ Ղըզլ-Քիլիսա եւ Մոլիթ. դ) Բորչալու գաւառի Լոռի, Ալլահվերդի գաւառակներից եւ Բորչալուի գաւառակի հայկական մասը. ե) Ղարսի շրջանի երկու գաւառները — Կարսի եւ Կաղզուանի: Կարսի շրջանի երկու միւս գաւառները՝ Օլթիի եւ Արդահանի, ինչպէս Թիֆլիսի նահանգի, Ախալցխայի գաւառի եւ նրա մասերի, այլ եւ Մալկայի յունական բաժնի ապագան որոշելու է միմիայն այն շրջանների բնակչութիւնը:

Ռայոնական ժողովը հաւանութիւն է տալիս նաեւ նախագծում ցոյց տրւած հայկական գեմատուային նահանգի ներքին գաւառական բաժանմունքներին: Եթէ սկզբներում տեխնիքական դժարութիւնների հանդիպի մէկ նահանգի կազմակերպումը, ռայոնական ժողովը իրաւունք է տալիս Ար. Բիւրօին համաձայնել ժամանակաւորապէս մէկ նահանգի փոխարէն երեք նահանգ կազմելու — Գանձակի, Երեւանի եւ Ալեքսանդրապոլի — ներկայացւած քարտէզի սահմաններում:

ՎԱՅՐԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

Ի նկատի ունենալով,

1) Որ գրաւած վայրերում եւ Երեւանի շրջանում տեղի ունեցող քրդական արշաւանքները եւ ասպատակութիւնները պարզապէս պատերազմական գործողութիւններ են՝ կազմակերպւած ռուսական բանակի թիկունքում՝ Թիւրքիայի թելադրանքով.

2) Որ վերջին ամիսներն աւագակային շարժումները, աւարառութիւններն ու սպանութիւնները Անդրկովկասեան միւս նահանգներում հետեւանք են երկրի անիշխանական դրութեան.

3) Որ բանակի կազմալուծումը եւ բարոյալքումը ընդունել է ընդհանրապէս սպառնալից չափեր.

4) Որ անիշխանութեան յարատեւութեան եւ մեր Ֆրոնտի քայքայման դէպքում թիկունքի աւագակային շարժումները եւ քրդական ասպատակութիւնները կարող են լայնանալով՝ խախտել ճակատի կայունութիւնը եւ ճակատի խախտումով անհնար կը դառնայ ոչ միայն գրաւած վայրերի, այլ եւ Անդրկովկասի պաշտպանութիւնը, իսկ վերջինին կորուստը անպայման պետական կատաստրոֆի նշանակութիւն կ'ունենայ:

5) Որ թիւրքական բանակի Անդրկովկաս մտնելու դէպքում տեղական ազգաբնակչութիւնը մեծ վտանգի կ'ենթարկուի, իսկ հայ ժողովուրդը մասնաւորապէս անդառնալի կորուստներ կը կրէ:

6) Որ Հ. Յ. Դաշնակցութիւնը, իբրեւ Կովկասի յեղափոխական կարեւոր գործօններից մէկը եւ որպէս հայ ժողովրդի ամենախոշոր մասի — աշխատաւորութեան կորովը եւ ոյժերը կոփող մի կազմակերպութիւն՝ կարող է եւ կոչւած է կուլելու թիկունքի անիշխանութեան եւ ճակատի կազմալուծման դէմ: Ռայոն. ժողովը որոշեց.

Ի ԽՇ ԽԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Ա.- Հրահանգել կուսակցութեան բոլոր մարմիններին ու ընկերներին վճռականապէս ձեռնամուխ լինել հաստատելու եւ ամրապնդելու գաւառներում վարչական, միլիցիական, դատական եւ միւս պետական հասարակական հաստատութիւնները:

Բ.- Աշալուրջ կերպով հետապնդել, որ յիշեալ հաստատութիւնները լինեն յեղափոխական եւ դեմոկրատիկ վստահելի տարրերի ձեռքին:

Գ.- Մերկացնել վնասակար գործողութիւնները այն հակայեղափոխական ու հակապետական տարրերի, որոնք կը սպրդեն պետական եւ հասարակական հաստատութիւնների մէջ՝ ջանալով ազատել վերոյիշեալ հաստատութիւնները այդպիսի տարրերից:



II ՌԱԶՄԱԲԵՄ

Ա.- Կովկասեան ճակատին աւելի կայունութիւն եւ հաւաստութիւն տալու նպատակով ձգտել որպէսզի կովկասեան ճակատը փոխադրուեն տեղացի զօրքեր:

Բ.- Որպէսզի այդ զօրքերը զինւորական տեսակէտից լաւագոյն կերպով օգտագործուեն, առաջարկել կազմել դրանցից նոր՝ առանձին, միատարր զօրամասեր:

Գ.- Ոյժ տալ եւ աջակցել զինւորականութիւնը կազմակերպող եւ կազմալուծման դէմ կռուող հաստատութիւններին:

Դ.- Բանաւոր եւ գրաւոր պրոպագանդով եւ տրամադրելի բոլոր միջոցներով կռուել դասալքութեան դէմ, լուսաբանել ճակատի եւ թիկունքի զօրքերին կովկասեան ճակատի կարեւորութիւնը ամէն տեսակէտից եւ սպառնացող վտանգի ճակատագրական նշանակութիւնը:

Ե.- Համարելով քրդական ասպատակութիւններն իբրեւ պատերազմական գործողութիւններ՝ միջոցներ ձեռք առնել, որ զինւորական իշխանութիւնը վճռականապէս վերացնի թիկունքի քրդական վտանգը, որպէսզի ճակատում գործող բանակը ապահով լինի թիկունքից: միաժամանակ աջակցել զինւորական իշխանութեան՝ հասարակական եւ ժողովրդական դիմադրական ուժերի կազմակերպութեամբ:

III ԱԻԱԶԱԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԴԷՄ ՄԻՋՈՑՆԵՐ

Աւագակային գործողութիւնների դէմ անմիջապէս կռուելու համար անյապաղ ձեռնարկել ժողովրդական միլիցիայի կազմակերպութեան, միաժամանակ ուժեղացնել եւ զարկ տալ ժողովրդական ուժերի զօրացման ու կազմակերպման:

IV ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Վերոյիշեալ ուղղութեամբ գործելու համար Դաշնակցութիւնը համագործակցութեան է հրաւիրում միւս յեղափոխական կուսակցութիւններին ու դեմոկրատիկ հասարակական հաստատութիւններին՝ աշխատելով ստեղծել համապատասխան միջոցառում համագործակցութեան համար:

Վերի կէտերը մի առ մի գործնականացնելու համար, որոշեց կազմել առանձին մի մարմին Բիւրոների կազմից եւ իրենց ենթակայ:

«Հորիզոն», 25 Հոկտեմբեր, 1917, թիւ 227

ԹԻՒՐԲԱՀԱՅ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ

1.- Հիմնուելով այն փաստի վրայ, որ Թիւրքահայաստանի հարցը իր ծագման սկզբից եղել է միջազգային հարց, որ պատերազմով գրաւած վայրերի ինքնուրոյն դրութիւնը եւ վարչական առանձնութիւնը երաշխաւորած է Հաագայի կոնվենցիայի լրգունգներով եւ որ ռուսական դեմոկրատիան իր ապրիլ 26-ի դեկլարացիայով ընդունել է այդ եւ որի վրայ կանգնել է նոյնպէս ժամանակաւոր կառավարութիւնը իր յուլիս 2-ի դեկլարացիայով, Հ.Յ.Դ. ռայոնական ժողովը միանգամայն բնական է գտնում Թիւրքահայաստանի կոմիսարիատի առանձնութիւնը եւ անմիջական կապը կենտրոնական կառավարութեան հետ, եւ վճռականապէս պայքարելու է Թիւրքահայաստանը վարչապէս Կովկասին միացնելու դիտաւորութիւնների դէմ, որ նկատուում է Կովկասեան զանազան շրջաններում,

2.- Ընդունելով հանդերձ որ կոմիսարիատը ցարդ անվճռականօրէն է տարել իր գործերը, ունենալով յարգի եւ անյարգի պատճառներ, բայց եւ նկատի առնելով կոմիսարիատի կենսական անհրաժեշտութիւնը Հայաստանի համար՝ անհրաժեշտ է գտնում պաշտպանել նրա իրաւական անկախութիւնը,

3.- Կոմիսարիատի պաշտօնեաները կամ նրանց օգնականները հայերից պիտի կազմուեն, առանց հպատակութեան խնդիր յարուցանելու,

4.- Հայերէնն եւս համարելու է պաշտօնական լեզու՝ ռուսերէնին կից,

5.- Դատարանը պէտք է ժողովրդին մօտիկ կանգնած մի հաստատութիւն լինի եւ լեզուն հայերէն,

6.- Միլիցիան պէտք է կազմւի տեղացի վստահելի տարրերից,

7.- Շրջանային կոմիսարներին կից նշանակել խորհուրդներ տեղական հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչներից եւ հասարակական գործիչներից՝ շրջանի ընթացիկ խնդիրները ձեւակերպելու եւ կոմիսարների գործունէութեան վրայ հսկելու համար:

8.- Երկրի վերաշինութեան գործը կենտրոնացնել եւ վարել երկրում գտնուող հայ հասարակական կազմակերպութիւնների եւ տեղական ազգաբնակչութեան միջոցով: Պահանջել կառավարութիւնից, որ երկրի վերաշինութեան, պարենաւորման եւ փոխանակութեան վերաբերեալ բոլոր գումարները տրուեն ուղղակի գէներալ-կոմիսարիատին, որը պէտք է կազմակերպէ երկրի մէջ բժշկա-սանիտարական գործը:

9.- Գէներալ կոմիսարիատի վարչական վերակազմութիւնը կանոնաւորելու համար անհրաժեշտ է որ նախկին գէներալ-նահանգապետութեան պաշտօնեաներն ամբողջապէս մաքրուեն, որովհետեւ նրանք կազմուած լինելով մեծ մասամբ ռէակցիոն տարրերից եւ



չատերը նույնիսկ հին ռեժիմի օրով արատաւորւած լինելով ներքին Ռուսաստանում, փոխադրւած են մեր երկիրը:

10.- Պահանջել, որ էրզրումի վիլայէթի մասը կազմող Տրապիզոնին ենթարկւած Ճորոխի հովիտը, Բաբերդ, Սպեր, Խոտորջուր եւն նորից կցւի էրզրումի շրջանին:

11.- Մշակել մօտիկ ազատագրւած երկրամասերի համար գործունէութեան համապատասխան մի պլատֆորմ, որի համար էլ հրաւիրել Բիւրոնների եւ Կ. կոմիտէների խորհուրդներին:

12.- Ռայոնական ժողովը բարձր գնահատելով Հայաստանի վերաշինութեան եւ վերակազմութեան գործը, որ իրագործելու է կոչւած Հայաստանի գեներալ-կոմիսարիատը՝ կոչ է անում իր երիտասարդ եւ ձեռնհաս ընկերներին, որ սիրայօժար մտնեն յիշեալ կոմիսարիատի մէջ, որպէսզի գործը կարելի լինի կազմակերպել ցանկալի եղանակով:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Համաձայն նախորդ ռայոնական ժողովի որոշման՝ Դաշնակցութիւնը պաշտպանելու է որպէս պլատֆորմ Համառուսական Սահմանադիր ժողովում իր ամբողջ Նւազագոյն ծրագիրը: Ծրագրի քաղաքական մասը պէտք է մշակւի համաձայն հետեւեալ սկզբունքների.

1.- Ռուսաստանը վերածուած է Ֆեդերատիւ (դաշնակցական) ռամկավար հանրապետութեան Սահմանադիր ժողովի օրէնսդրութեամբ:

2.- Այդ Ֆեդերատիւ (դաշնակցական) ռամկավար հանրապետութեան մէջ են մտնում Անդրկովկասի երեք կանտոնները՝ հայկական, վրացական եւ թաթարական:

3.- Անդրկովկասեան ռամկավար դաշնակցութիւնը հիմնւում է երեք կանտոնների փոխադարձ համաձայնութեամբ:

Համառուսական Ֆեդերատիւ հանրապետութեանն են վերապահւում պետական ինքնապաշտպանութեան արտաքին քաղաքականութիւնը, դրամական եւ մաքսային սխտեմին վերաբերեալ օրէնսդրական իրաւունքը: Ռուս. Սահմ. ժողովը լուծում է հողային հարցը, յայտարարում է մարդու եւ քաղաքացու իրաւունքները, ինչպէս եւ հանրապետութեան սահմաններում ապրող փոքրամասնութիւնների իրաւունքների ապահովութիւնը:

Անդրկովկասի Ֆեդերացիայի կազմելու դէպքում, նրան են վերապահւում այն խնդիրները միայն, որոնք բացառապէս համաանդրկովկասեան բնոյթ ունին եւ չեն լուծուում ոչ համառուսական եւ ոչ կանտոնային օրէնսդրութեամբ:

Կանտոնները օրէնսդիր են եւ ինքնուրոյն բոլոր

մնացած խնդիրներում: Գաւառակները եւ համայնքները վայելում են լայն յեղ. ինքնավարութիւն:

4.- Մինչեւ կանտոնների համաձայնութեամբ Անդրկովկասեան Ֆեդերացիայի կազմելը, սրա ֆունկցիաները թողնում են կամ Ռուսաստանի պարլամենտին կամ շահագրգռւած կանտոնների պատւիրակութիւններին (դելեգացիա):

5.- Թէ Համառուսական, թէ Անդրկովկասեան եւ թէ կանտոնային օրէնսդիր մարմինները ընտրւում են ընդհանուր, հաւասար, գաղտնի, ուղղակի եւ համեմատական ընտրողական եղանակով առանց սեռի, ուղղութեան եւ կրօնի խտրութեան:

6.- Կանտոնները ուղարկում են Ռուսաստանի համապետական պարլամենտը ներկայացուցիչներ ընտրւած քւէարկութեան նոյն եղանակով:

7.- Կանտոնների (եւ գաւառների) սահմանները որոշելիս պէտք է ի նկատի ունենալ ազգագրական, տնտեսական եւ տեղագրական գործօնները ըստ կարելոյն միաձայն համախմբումներ ստեղծելու համար:

Հայկական կանտոնը պէտք է ընդգրկէ իր մէջ հայկական բարձրաւանդակը, ա) Երեւանի նահանգը, բ) Գանձակի նահանգի լեռնային հայկական մասը, գ) Թիֆլիսի նահանգից Ախալքալաքի գաւառը, Բորչալուի գաւառի հայկական մասը, դ) Կարսի շրջանից Կարսի եւ Կաղզւանի գաւառները:

Հայկական եւ վրացական կանտոնների մէջ տեղը ընկած երկրամասերը ապրող ազգաբնակիչները ինքն է որոշում իրենց քաղաքական վիճակը:

8.- Եթէ համառուսական ապագայ հողային օրէնսդրութեան իրագործումը պահանջէ, ինչպէս շատ տեղերում, այնպէս էլ Անդրկովկասում երկրագործ ազգաբնակիչութեան մասնակի տեղափոխութիւն եւ ցրում, կանտոնների եւ շրջանների սահմանները կարող են փոփոխել:

Յեղափոխութիւնը նւաճել է զօրքի ձեռքով եւ նրա ձեռքով էլ կարող է խորտակւիլ, եթէ շարունակւի ճակատի եւ թիկունքի մէջ այս սառը, համարեա թշնամական յարաբերութիւնը: Արդէն ճակատի գինւորական մասսայի մէջ ծայր է տալիս դժգոհութիւն ընդդէմ դեմոկրատիկ թիկունքի:

Պէտք է թիկունքի եւ ճակատի մէջ ամենասերտ կապ հաստատել: Պէտք է բոլոր ոյժերը լարել, իրական շօշափելի օգնութիւն հասցնել բանակին, նւէրներով, բժշկական օգնութեամբ եւ այն ամէնով, ինչի որ կարիք ունի զօրքը եւ ինչ որ ֆիզիքական հնարաւորութիւն ունի հասցնելու յեղափոխական թիկունքը:

Այս են պահանջում յեղափոխութեան ու մօտալուս խաղաղութեան շահերը, այս է սոցալիստական եղբայրութեան եւ ընկերականութեան խղճի հրամայականը:

«Հորիզոն», 26 Հոկտեմբեր 1917, թիւ 228

Ա 18.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՐԵՒԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԹՈՒՐՔԱՀԱՅ Ա. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ԱՄՓՈՓՈՒՄԸ*

Հ. Յ. Դաշնակցութեան Երեւանի թուրքահայ «Ժամանակաւոր Կեդրոնական Մարմին» հրաւէրով, սեպտ. 26-ին եւ 27-ին Երեւանի մէջ գումարուեցաւ թուրքահայ Դաշնակցականներու Ա. շրջանային ժողովը, որուն կը մասնակցէին 15 պատգամաւորներ ձայնի իրաւունքով եւ 12 հրաւիրուած ընկերներ խորհրդակցական ձայնով:

Ձայնի իրաւունքով մասնակցողներն էին.

Երեւանի «Ժամանակաւոր Կեդրոնական Մարմին»էն 1 պատգամաւոր, «Աշխատանք»ի խմբագրութենէն 1, Երեւանի «Տարագիր» ենթակոմիտէն 1, Քանաքեռի շրջանէն 2, Էյլարի շրջանէն 2, Աշտարակի շրջանէն 1, Օշականի շրջանէն 1, Էլմիածնի շրջանէն 2, Ղամարուի շրջանէն 1, Իգդիրի շրջանէն 2, Երեւանաբնակ Ալաշկերտցի ընկերներէն 1:

1.- Երեւանի եւ շրջաններու կազմակերպական կեանքի մասին զեկուցում տուաւ «Ժամանակաւոր Կեդր. Մարմին»ի կողմէն Ա. Փոխանեանը.

– Կեդրոնական մարմինը կազմուած է ներկայ տարւալ փետր.ի վերջերը. սկզբին կազմը կը բաղկանար 9 ընկերներէն, բայց այս եօթ ամսուայ ընթացքին ընկերներէն շատերը պարբերաբար, բացակայած են թէ անհատական եւ թէ կազմակերպական գործերով, բայց բացակայողներու փոխարէն ուրիշ կարեւոր ընկերներ միշտ կանչուած են մարմնի նիստերուն:

«Շրջաններու կազմակերպական գործը այնքան ալ նախանձեղի վիճակ մը ունեցած չէ: Մեր միջոցով ցարդ կազմակերպուած են Սուրմալուի, Ղամարուի, Էլմիածնի, Օշականի, Աշտարակի եւ Գրրգ-Բուլաղի շրջանները: Ղուրտուղուլիի մէջ մեր թուրքահայ դաշնակցականները կազմակերպուած են տեղացի ընկերներու հետ, Նոր-Քայազիտի, Կարանլուի եւ Մեծ Ղարաքիլիսի⁴⁹ հետ՝ հեռաւորութեան պատճառով կարելի եղած չէ մօտիկ յարաբերութիւն պահպանել, սակայն թէ յիշեալ վայրերու, թէ Թիֆլիսի եւ թէ Ռուսաստանի ներքին կարգ մը քաղաքներու (Ռոստով, Խարկով, Մակիեւկա եւն.) հետ, նամակային յարաբերութիւններ պահպանած ենք:

Շրջաններու կազմակերպութեան թուրուլութիւնը հե-

տեւեալ պատճառներ ունեցած է:

ա) Ընկերներու մնայուն երթեկուցութիւն դէպի երկիր կամ այլ վայրեր:

բ) Միեւնոյն տեղին մէջ կազմակերպուած ընկերները զանազան տեղերէ եւ տարբեր խառնուածքի ու հոգեբանութեան տէր ըլլալով, ներքին անհամաձայնութիւնները անպակաս են եղեր եւ սերտ ընկերական կապ բացակայած է իրենց մէջ, Յ) Նպաստի եւ փախստական այլ կարգի գործերը պատճառ դարձած են որ ընկերներէն շատերու ուշադրութիւնը կազմակերպական կեանքի վրայ չկեդրոնանայ»:

Այս ընկեր զեկուցողը տուաւ կարգ մը թուեր թէ իւրաքանչիւր շրջանի մէջ ինչքան կազմակերպուած ընկերներ կան եւ իւրաքանչիւր կոմիտէն ինչքան մուտք ունեցած է: Յոյց տուաւ նոյնպէս ժամանակ. Կեդր. մարմնի կատարած դերը «Աշխատանք» թերթի տարածման, տեղական քոյր Կեդր. կոմիտէի հետ ունեցած յարաբերութիւններու, փախստականական գործերու կանոնաւորման համար ունեցած մասնակցութեան եւ ուրիշ կարգ մը գործերու մէջ:

Չեկուցումէն յետոյ եղան զանազան նկատողութիւններ եւ առաջարկներ. ի վերջոյ քուէարկուեցաւ հետեւեալ բանաձեւը:

«Լսելով Երեւանի ժամանակ. Կեդր. մարմնի զեկուցումը եւ պատգամաւոր ընկերներու նկատողութիւնները, ժողովը կը գտնէ որ Մարմինը տուեալ պայմաններու մէջ, յաղթահարելով բազմաթիւ խոչընդոտներ, կրցած է բաւարար գործունէութիւն մը ունենալ»:

2.- Կեդր. կոմիտէի ընտրութիւնը.— Ժողովը տեսնալով որ «Ժամանակ. Կեդր. Մարմին»ը ընտրովի եղած չէ, միաժամանակ նկատի ունենալով որ Երեւանի եւ շրջաններու կազմակերպութիւնը դեռ կանոնաւոր հիմքերու վրայ դրուած չէ, որոչեց Երեւանի թուրքահայ Կեդր. կոմիտէի ընտրութիւնը յետաձգել յառաջիկայ յունուարին, մինչ այդ՝ ընկերներու վրայ պարտականութիւն դրուեցաւ որ այս քանի մը ամսուայ մէջ աշ-

49.- Յիշատակուած բնակավայրերը իրենց այժմու անուններով.
Էյլար – Արովեան
Ղամարու – Արտաշատ
Գրրգ-Բուլաղ – Ակունք
Ղուրտուղի – Արմալիք
Նոր Քայազիտ – Գաւառ
Կարանլուի – Լուսազիղ
Մեծ Ղարաքիլիսի – Վանաձոր

*) Մ. Խ.— Կարգ մը պատճառներով այդ որոշումներու հրատարակութիւնը ուշացաւ:

խատին եղած անդամական եւ դրամական ցենզը լրացնել:

Որոշուեցաւ իբր տարեվճար՝ պարտադիր ընդունել Երեւանի ընկերներու համար նուազագոյն 5 ր., իսկ գաւառի ընկերներու համար 3 ր.:

3.- Կազմակերպչական սիստեմ.— Նկատելով մեր կեանքի անորմալ պայմանները եւ ընկերներու զանազան քաղաքներու մէջ ցրուած ըլլալը, որոշուեցաւ խմբական սիստեմին զուգընթաց ընդունել նաեւ անհատապէս կազմակերպութիւն, պայմանով որ անհատ ընկերները իրենց իրաւունքի եւ պարտականութեան մէջ վարուին կազմակերպուած խումբերու նման»:

4.- Թուրքահայ Դաշնակցականներու Ռայոն. ժողով.— Նկատի ունենալով որ Դաշնակցութեան ընդհ. ժողովը աննպաստ հանգամանքներու պատճառով կարող է դեռ ուշանալ, ժողովը կարեւոր գտաւ մօտիկ ապագային, ամենաուշ յունուարի մէջ, հրաւիրել տալ թուրքահայ դաշնակցական մարմիններու ռայոն. ժողով, զբաղուելու համար մասնաւորաբար թուրքահայ հատուածին վերաբերեալ խնդիրներով: Այս որոշումը պէտք է հաղորդուի «Հայաստանի Բիւրօ»ին:

5.- Կուսակցական մամուլն եւ գրականութիւնը.— Ժողովը նկատի առնելով թէ կեդրոնական քաղաքներու եւ թէ գաւառներու մէջ օր օրին բազմացող կուսակցական թերթերն ու անոնց բովանդակութիւնը, գտաւ որ անոնք տարուած են մեծ մասով ընթացիկ հարցերով եւ տեղական խնդիրներով, եւ անոնցմէ ոչ մէկը չէ կրցած «Դրօշակ»ի եւ «Ազատամարտ»ի դերը խաղալ շողկապ մը հանդիսանալով դաշնակցական ընկերներու եւ մարմիններու մէջ: Կուսակցական մամուլի եւ գրականութեան մէջ կը պակսին մանաւանդ Դաշնակցութեան 27 տարուայ գործունէութեան դրուագները, երկրի տնտեսական, քաղաքական, պատմական եւ կուլտուրական կեանքի ուսումնասիրութիւնները եւ յօդուածները, որոնք պիտի կրնային մեծ չափով լոյս սփռել մեր անցեալի եւ ներկայի վրայ եւ կրթել արդի Դաշնակցական սերունդը՝ համապատասխան ոգով:

Վերի նկատումներով որոշուեցաւ առաջարկել,

ա) «Դրօշակ»ը վերահրատարակել աւելի ստուար ծաւալով, որովհետեւ այդ թերթը իր կեդրոնական օրգանի հանգամանքով, պիտի կարողանայ՝ ի շարս այլ օգուտներու, ըլլալ նաեւ գլխաւոր] դեկավարը Կովկաս, Պարսկաստան, Եգիպտոս եւ Ամերիկա հրատարակուած կուսակցական թերթերու:

բ) Շարունակել «Յառաջ»ի գրադարանի հրատարակութիւնները, նկատելով որ առօրեայ մամուլը երբեք չի կարող հարկ եղած սնունդը տալ ընթերցողին: Այդ հրատարակութիւններու շարքին տեղ տալ նաեւ երկրի

վերաբերեալ ուսումնասիրութիւններու եւ Դաշնակցութեան պատմութիւնը ներկայացնող նիւթերու:

6.- «Հայաստանի Բիւրօ»ի կազմի լրացումը.— Նկատի ունենալով որ ՅԱԻ Կարնոյ Ը. Ընդհ. ժողովէն ընտրուած «Հայաստանի Բիւրօ»ի կազմը իր ընկերներէն կարեւոր մաս մը կորսնցուցած է, եւ վերջերս ալ քանի մը ուրիշ ընկերներ նոյնպէս արտասահման մեկնած են կուսակցական կարեւոր գործերով, որոշուեցաւ այս անգամուայ Ռայոն. ժողովի մէջ բերույի կազմը լրացնել համապատասխան ընկերներով:

7.- «Ազատամարտ»ի հրատարակութիւնը.— Նկատելով որ ցայժմ կուսակցական թերթերը չեն կրցած հարկ եղածին պէս արձագանգել թուրքահայ կեանքը, եւ նկատելով որ օրէ օր աւելի եւ աւելի կարիք կը զգացուի կեդրոնական օրգանի մը գոյութեանը ընդհանուր թուրքահայ դաշնակցականները շողկապելու եւ մէկ ոգով եւ ուղղութեամբ առաջնորդելու համար, ժողովը նախորդ երկու ռայոն. (ուսահայ եւ թուրքահայ) ժողովներու որոշման համաձայն՝ անյետաձգելի անհրաժեշտութիւն կը գտնէ «Ազատամարտ»ի հրատարակութիւնը:

Միաժամանակ ժողովը կարեւոր գտաւ որ թերթի դեկավարութեանը մէջ գործօն մասնակցութիւն ունենան թուրքահայ դաշնակցական մտաւորականները:

8.- «Աշխատանք»ի հրատարակութիւնը.— Խմբագիր ընկեր Բարունակի⁵⁰ ամփոփ գեկուցումէն յետոյ, թերթի բովանդակութեան եւ ծաւալի մասին եղան կարծիքներու փոխանակութիւններ: Ընկերները միասնաբար գտան, որ «Աշխատանք»ը չնայած նիւթական իր խիստ անձուկ կացութեան եւ փոքրաթիւ ծաւալին եղած է Կովկաս ապաստանած փախստականներու եւ երկրի ժողովրդի կեանքի իրական արտայայտիչը. ապա որոշուեցաւ.

– Շարունակել ամէն գնով «Աշխատանք»ը, որովհետեւ «Ազատամարտ»ի հրատարակութեամբ ալ անիկա պիտի շարունակէ իր դերը, զբաղուելով աւելի տեղական նշանակութիւն ունեցող հարցերով:

Թերթի թէ նիւթական ու թէ բարոյականը աւելի լաւ հիմքերու վրայ դնելու համար՝ տրուեցան հետեւեալ որոշումներ.

Ա) Չանալ նորանոր հանգանակութիւններով «Փոնդ»ի քանակը բարձրացնել՝ սեփական մամուլ ձեռք բերելու համար:

Բ) Աշխատիլ կամ թերթի ծաւալը մեծցնել եւ կամ գոնէ շաբաթ երեք անգամ հրատարակել:

Գ) Պարտականութիւն դնել բոլոր թուրքահայ մտա-

50.- Բարունակ Կապուտիկեան:

ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՐ

ւորական ընկերներու վրայ որ աշխատակցին թերթին.

Դ) Ունենալ յատուկ թղթակիցներ երկրի բոլոր մասերուն մէջ:

Ե) Կանոնաւորել վարչական մասը, հրաւիրելով կարող գործավար մը, բաւարար ռոճիկով:

Ասոնցմէ զատ՝ թերթի նիւթական արդի վիճակը նկատի ունենալով, որոշուեցաւ, որ իւրաքանչիւր կոմիտէ ջանայ իր նախաձեռնութեամբ հանգանակութեան դիմել եւ յառաջիկային թերթին հասցնել կարեւոր գումարներ հետեւեալ սահմաններուն մէջ:

	ըուբլի
Ժամ. Կեդր. Մարմին*	3000
Երեւան քաղաք	1000
Վաղարշապատի շրջան	500
Սուրմալիի »	400
Աշտարակի »	300
Ղամարլուի »	200
Էյլարի »	100
Քանաքեռի »	50
Օշականի »	50
Նորք »	50
Գումար	5650

9.- Թուրքահայ եւ տեղական դաշնակցական մարմիններու փոխ-յարաբերութիւնները.— Նկատելով որ մեր եւ կովկասահայ դաշն. մարմիններու բնոյթը եւ հետապնդած գործելակերպը կը տարբերին իրարմէ, որոշուեցաւ թուրքահայ ընկերներու կազմակերպութիւնները պահել առանձին, պայմանով որ կարգ մը ընդհ. հարցերու եւ տեղական նշանակութիւն ունեցող խնդիրներու մէջ սերտօրէն համագործակցին տեղական մարմիններու հետ. իսկ այն վայրեր, ուր թուրքահայ դաշնակցականները քիչ թիւ կը կազմեն, ասոնք կրնան մտնել տեղական կազմակերպութիւններու մէջ:

Ժողովը ի վերջոյ անցաւ Երեւանի նահանգային փախստ. մարմնի թեկնածուներու որոշման, ապա գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցան երկու ընկերներ** Թիֆլիսի Ռայոն. ժողովին մասնակցելու համար:

(Վերջ)

«Աշխատանք» 18 եւ 21 Հոկտ. 1917, թիւ 47 եւ 48

*Վերջինս իր միջոցներով հանգանակութեան պիտի ձեռնարկէ Թիֆլիսի, Բագուի, Ռոստովի եւ ուրիշ վայրերու մէջ:

** Յիշեալ ժողովին՝ բացի այդ երկու ընկերներէն, մասնակցեցան նաեւ Ժաման. Կեդր. Մարմնի եւ «Աշխատանք»ի խմբ[ագրութեան կազմէն մէկական ներկայացուցիչներ:

Փաստ. 26-11

**Ա 19.- ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՆԱՍԱԿԸ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ**

No 388

[Թիֆլիս], 20 նոյեմբ. 1917 թ.

Ընկերներ!

Ի նկատի ունենալով Անդրկովկասեան նոր կառավարութեան կազմելը եւ մօտակայ ժամանակներում զեմստոյի⁵¹ մտցուելը Կովկասում, նաեւ մեր երկրի հիմնարկութիւնների ռամկավարացումը եւ ազգայնացումը, հարկատր է սպասել, որ շուտով մեծ կարիք կը զգացուի հայ ինտելիգենտ պատրաստուած ոյժերի՝ մանաւանդ զեմստոյի համար: Հին ռեժիմի ժամանակ հայերից շատերը հնարատրութիւն չունենալով պաշտօն ստանալ Կովկասում, մնացել են Ռուսաստան: Կան նաեւ երիտասարդ ուսանողական ոյժեր, որոնք ցրուած են Ռուսաստանում:

Խնդրում ենք Ձեզ, այս տեսակ ընկերների, կամ Դաշնակցութեան համակրող ոյժերի մասին տեղեկութիւններ հաւաքել եւ հաղորդել մեզ, տալով նաեւ տեղեկութիւններ նրանց մասնագիտութեան, անցեալ գործունէութեան, տարիքի, անձնական յատկութիւնների եւ Կովկաս գալու տրամադրութեան ու պայմանների մասին:

Բիւրոն խնդրում է բոլոր տեղեկութիւնները շուտավոյթ կերպով հաղորդել հետեւեալ հասցեով՝

*Иркутск Теория Шевцова
Камусовы Вознесенская 16.
Гулагары Камусовы Вознесенская 16
Камусовы
Գուլաղարա Կամուսով
Վրեխա Քիւրս*

Ընկերական բարեկեցութեամբ՝
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈ

51.- Չեմստո – քաղաքային, տեղական ինքնավարութեան խորհուրդ:

Փաստ. 26-12

Ա 20.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ՝⁵²

[Թիֆլիս], 21 նոյեմբ. 1917 թ.

Ընկերներ!

Բոլշևիկեան յեղաշրջումից յետոյ փաստօրէն կտրուց կապը կենտրոնական կառավարութեան եւ Անդրկովկասի միջեւ: Որպէսզի կարելի լինի Անդրկովկասը ազատել անարխիայի ճանկերից եւ թոյլ չտալ, որ այստեղ էլ առաջ գան այն երեւոյթները, որ տեղի ունեցան Ռուսաստանի շատ վայրերում, յեղափոխական կենտրոններն ու կուսակցութիւնները խորհրդակցութիւն կատարեցին եւ նոյեմբեր 11-ին որոշեցին Անդրկովկասում հաստատել տեղական բարձր իշխանութիւն որ յենուած լինի յեղափոխական դեմոկրատիայի ոյժի վրայ: Իշխանութեան կազմակերպումը յանձնուց հանրային Ապահովութեան կոմիտէին, որ կազմուած է յեղափոխական կենտրոնների եւ կուսակցութիւնների ներկայացուցիչներից: Հանր. Ապահովութեան] մէջ մենք ունենք երկու ընկեր. Արեւելեան բիրոյի կողմից ընկ. Խ. Կարճիկեան, գիւղացիական կենտրոնից ընկ. Ս. Վրացեան:

Թէ Նոյեմբեր 11-ի խորհրդաժողովում եւ թէ Հանր. Ապահովութեան] կոմիտէում մենք պաշտպանել ենք որ կազմելիք իշխանութիւնը նախ բաղկացած լինի երկրի ընդամենը եւ ապա ամուր կերպով կապուած լինի Ռուսաստանին, որ սեպարատիզմի⁵³ հարց չդրի: Այս երկու սկզբունքն էլ ընդունուած է բոլորի կողմից:

Ընկերներ, յայտնօրէն գիտէք կառավարութեան կազմութեան եղանակն ու կազմը: Նրա մէջ մենք ունենք երկու տեղ. երկու պաշտօնն էլ առել ենք մեր համաձայնութեամբ: Հանրային խնամատարութեան պորտֆելի⁵⁴ մենք առանձին կարեւորութիւն ենք տուել, որովհետեւ նա վարելու է եւ գաղթական[ութեան] գործը:

Նոր կառավարութիւնը մնալու է մինչեւ Սահմանադիր] ժողովի պատգամաւորների ընտրութեան վերջը: Եթէ պարզեց որ Սահմ. ժողովը յետաձգելու է, այն ժամանակ ընտրուած պատգամաւորները կը հաւաքուեն եւ կ'որոշեն Անդրկովկասի կառավարութեան եղանակը:

Ընկերներ, Անդրկովկասի կոմիսարիատին մենք տալիս ենք խոշոր կարեւորութիւն. նա լուծելու է մի շարք կարեւոր հարցեր, ինչպէս զեմստույի⁵⁴, հողային եւ այլ խնդիրներ: Նա բարեկարգելու է գաւառական իշխանութիւնը: Ամէն կերպ պէտք է աշխատել աջակցել նրան եւ հետեւել, որ նրա կարգադրութիւնները անշեղ գործադրուեն ամէն տեղ:

Ունենալով կոմիսարիատի մէջ մեր ներկայացուցիչը՝ մենք որոշ պատասխանատւութիւն ենք վերցնում մեր վրայ նրա գործունէութեան համար. միեւնոյն ժամանակ նրա միջոցով մենք կարող կը լինենք անցկացնել այն հարցերը, որոնք մինչեւ այժմ այս կամ այն պատճառով անկարող ենք եղել յաջողեցնել:

Ընկերներ, նորից շեշտում ենք, ամէն գնով պէտք է օժանդակել Անդրկովկասեան կոմիսարիատին եւ հեշտացնել նրա գործունէութիւնը գաւառներում:

Հ.Յ.ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

52.- Ձեռագիր, խմորատիպ, մասամբ գունաթափ:

53.- Անջատողականութիւն:

54.- Նախարարական պաշտօնին:

Փաստ. 308ա-3

Ա 21.– ԵՐԵՒԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

27 Նոյեմբեր 1917 թ.

Ընկերներ,

Կոմիտէս ստացաւ Ձեր N 45 գրութիւնը եւ որոշեց սերտ կապ պահպանել Ձեզ հետ եւ հաղորդել կուսակցական անհրաժեշտ լուրեր, իսկ ինչ վերաբերում է Բիւրոյի անփոյթ վերաբերմունքին, յայտնել Ձեր գրութեան մասին եւ իր կողմից էլ բողոքել:

Առ այժմ հետաքրքրական չըջան է եւ բոլոր ընկերները զբաղւած են Սահ[մանադիր] ժողովի ընտրութեան գործերով:

Հայ ժողովուրդը մի անգամ եւս եկաւ ապացուցելու որ Հ. Յ. Դաշն[ակցութիւնն է], որին վստահանում է իր շահերի պաշտպանութիւնը: Հայ դեմոկրատիան ամբողջապէս ընթանում է Դաշնակցութեան դրօշակի հետ եւ ի նշան դրա, տուեց ընտրողների 90%-ը:

Եւ այժմ յայտնի է միայն որ Դաշն. կ'ունենայ ոչ պակաս 7 հոգի, բայց կարող է պատահել որ ունենայ 8-9 ներկայացուցիչ Սահ. ժողովում:

Պետեղելի խնդիրը առ այժմ անորոշ է եւ «Հորիզոն»ի միջոցաւ կը տեղեկանաք, որ մի ամսից յետոյ կ'որոշուի [?]:

Ղարսի, Ալէք-Պոլի եւ մի շարք վայրերի քուրդ եզդիները, ռուսները եւ թուրքերը իրենց ձայնը տուել են մեզ:

Մեծամասնականները⁵⁵ խանգարում են ազգայնացւելիք զօրքերի գործը:

Առ այժմ կազմուած է 6 գունդ, մնում է 2 գունդ որ դառնայ կորպուս:

Այստեղ մեծամասնականները քաշւում են Դաշնակցութիւնից եւ դրական քայլերի չեն դիմում, եթէ ոչ մինչեւ օրս դուրս եկած կը լինէին:

Թիֆլիսում ամսոյս 25-ին կայանալու է կենտրոնական կոմիտէների, ներկայացուցիչների ժողով խորհրդակցելու հաշտութեան պայմանների մասին, ուր պիտի վճռուի երկրի դրութիւնը:

Եզրակացութեան մասին կը շտապենք հաղորդել Ձեզ:

Մեր շրջանի 110 գիւղերը բոլոր կազմակերպւած են եւ ունին իրենց գիւղական կոմիտէները եւ 4 շրջանային կոմիտէ՝ ա) Մեծ Ղարաքիլիսայի, Թորոս գիւղի, Մոլլա Գեորջայի եւ Քաւթաուլուի⁵⁶:

Մեր շրջանում քիչ բացառութեամբ բոլորը դաշնակցականներն են:

Կողք գիւղի վրայ յարձակուել են քիւրդերը, այստեղից Նժդեհի առաջնորդութեամբ 250 զինուոր ուղարկեցինք օգնութեան. օգնութեան են գնացել էջմիածնից 2 պոլիմիրոս⁵⁷ եւ Երեւանից: Հետեւանքները առ այժմ յայտնի չեն:

Քաղաքային դուման, որի 60 անդամից 26-ը դաշնակ. եւ գործում է շատ յաջող:

Ալէք. Խատիսեանի նման քաղաքագլուխը շուտով Ալէք-պոլը կը դարձնի մի գեղեցիկ քաղաք, որը պիտի դառնայ եւ կուսակցական եւ թէ աւտոնոմիայի հարագատ կենտրոն:

Տեղիս ռուս զինուորների մեծամասնութիւնը մեծամասնականներն են:

Դասայիքները չափից անցել են, ոչ թիւ կայ ոչ համար:

Կռիւ շարունակել առ այժմ թւում է անիրականալի:

Մի շարք պատերազմական լուրեր եւս կը տեղեկանաք «Հորիզոն»ից:

Ընկերական բարեկներով
Նախագահ կոմիտէի՝
Քարտուղար՝

[Անընթեռնելի ստորագրութիւններ]

55.- Բոլշեւիկները:

56.- Մեծ Ղարաքիլիսա – այժմ Վանաձոր, Թորոս – այժմ Թորոս գիւղ, Մոլլա Գեորջայ – այժմ Մարալիկ, Քաւթաուլու – այժմ Փանիկ:

57.- Գնդացիք:

Փաստ. 1569-1

Ա 22.– ԿՈՆՖԵՐԱՆՍ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ 27-ԷՆ 1917 – ԴԵԿՏԵՄԲԵՐ 3, 1917

Խիստ անորակ վիճակի մէջ հասած երեք մեծադիր էջերէ բաղկացած փաստաթուղթ. շրջաբերականի բնոյթ ունի, խմորատիպ է եւ ընդհանրապէս դժուարընթեմնելի՝ մանաւանդ առաջին էջին: Որոշ բաժիններ բոլորովին անվերծանելի ըլլալով՝ նշանակած ենք բազմակէտներով: Յաջորդ փաստաթուղթը (26-13), որ Հ.Յ.Դ.Հայաստանի բիրոյի շրջաբերական է, կ'անդրադառնայ այս «Կոնֆերանս»ի որոշումներուն, տալով անկէ բխող հրահանգներ: Պէտք է նշել, որ Հայաստանի բիրոյի շրջաբերականին մէջ փոխանակ «Կոնֆերանսի»ի կը գործածուի Հ.Յ.Դ. Խորհուրդ:

Կոնֆերանսին ներկայ էին ձայնի իրաւունքով Արեւելեան եւ Հայաստանի բիւրոյների անդամները եւ խորհրդակցական հրահարած մի քանի ընկերներ: Կ. կոմիտէներից մասնակցում էին.— Երեւանից մէկ, Ալեքսանդրից մէկ, Թիֆլիսից երկու, Շուշուց մէկ, Գանձակից մէկ, Բազւից երկու, Բասենից մէկ, Սարիղամիշից մէկ, Կարսից մէկ, Կարինից մէկ եւ Երեւանի թրքահայերից մէկ. ընդամենը 14 ներկայացուցիչներ:

Որոշումներ

Զինադադար.— Կոնֆերանսին ընկ..... գեկուցում տւաւ ռուս-թրքական զինադադարի մասին, յայտնելով զինադադարի պայմաններն հետեւեալներն են

ա.- Զինադադար կը յայտարարուի ամբողջ ռազմաճակատի վրայ, նրա մէջ հաշտած պարսկական ճակատը

.....

Քրտական մեծ խմբերի շարժումը կը նկատուի զինադադարի խախտում, նման փոքր շարժումները կը համարուեն ապակայուն

Հայ Ազգ. մարմին.— Նկատի ունենալով որ ռուսահայ խորհուրդը արդէն ձեռնարկած է հայ զինւորական ուժի կազմակերպմանը, ինչպէս նաեւ հայ ազգային ներկայ ընթացիկ [?] եւ կարեւոր հարցերի լուծմանը, եւ գտնելով որ թէ ռուսահայ եւ թէ թրքահայ քաղաքացիական եւ ընթացիկ խնդիրները սերտօրէն կապւած են իրար, եւ միւս կողմից՝ նկատելով որ թրքահայ խորհուրդը ներկայումս միակ ներկայացուցչական մարմինն է թրքահայ ժողովրդի, կոնֆերանսը որոշեց թրքահայ բիւրոյի երկու անդամները ձայնի իրաւունքով մասնակցեն Ազգ. խորհուրդին:

Կովկասեան իշխանութիւն.— Կովկասեան իշխանութեան կազմակերպման առթիւ կոնֆերանսը որոշեց եթէ համառուսական Սահմանադիր ժողովի գումարումը կովկասեան 42 պատգամաւորներին, նկատի ունենալով որ առաջիկայ դեկտ. 10ին գումարուելու է բանւորական եւ զինւորական պատգամաւորների ժողով, ուր կը դրուի Կով. իշխանութեան անելիքը [?]. կոնֆերանսը որոշեց մեր տեսակէտը ներկայացնելով աշխատել ամէն կերպ ընդունել տալ:

Ա- Առանց յապաղման կազմակերպել թուրքահայերից կանոնաւոր զօրք, զինւորական տարիք ունեցողներից:

Բ- Թուրքահայ զօրքը լինելու է առանձին, եւ պաշտպանելու է հայրենիքը:

Գ- Թուրքահայ զօրքը ենթարկուելու է հայկ. ընդհանուր հրամանատարութեան:

Ե- Թուրքահայ զօրքի կազմակերպման եւ նրա զինւորական պէտքերի հայթայթման համար պիտի ստեղծուի առանձին յանձնաժողով:

Զ- Զօրքը պիտի կազմակերպուի երկրի եւ այլ չէզոք վայրի մէջ, եւ հնարաւորութեան դէպքում նաեւ Անդրկովկասի մէջ:

Է- Ամէն կերպ աջակցել եւ ոյժ տալ հայկ. զօրաբանակի (կորպուս) շուտափոյթ կազմակերպման:

Ը- Պարտադրել մեր մտաւորական տարրերին, որ իրենց անմիջական ներկայութեամբ զօրքի մէջ, գործօն աջակցութիւն ցոյց տան հայ զինւորական ոյժի կազմակերպման:

Թ- Զօրքի կազմակերպման մէջ օգտուել մեր յեղափոխական խմբապետներից:

Ճ- Զինւորական պէտքերին եւ ֆինանսական միջոցներու հայթայթման համար դիմել

Հողային գեկրես.— Կոնֆերանսը ծանօթացաւ Անդրկովկասեան կոմիսարիատի յառաջիկային հրա-

տարակելիք դեկրետի նախագծի հետ: Գտաւ որ անհրաժեշտ է այդ դեկրետի հրատարակութիւնը, պայմանաւ՝

Ա- Գաւառական եւ նահանգական հողային կոմիտէները կազմէին միայն վարչական սահմանափոխութիւնից յետոյ եւ

Բ- Հողային կոմիտէների մէջ կառավարութեան կողմից նշանակւին Ձեմստուոյից[?] լաւատեղեակ ներկայացուցիչներ:

Մեծամասնական շարժում.— Ինչպէս բովանդակ Ռուսաստանը նոյնպէս նաեւ ներկայիս Կովկասի մէջ բռնկւող մեծամասնական շարժման մասին կոնֆերանսն որոշեց.—

Ա- Ամէն ջանք ու միջոցներ գործ դնել որպէսզի քաղաքացիական կռիւ եւ գինական ընդհարումներ տեղի չունենան

Բ- Իսկ եթէ այնուամենայնիւ մեր ցանկութիւններից անկախ քաղաքի (Թիֆլիզ) մէջ գինւած ընդհարումներ սկսին, մեր գինւած ոյժերը հրապարակ կը գան խաղաղութիւնը հաստատելու եւ ժողովուրդը պաշտպանելու համար:

Միեւնոյն ժամանակ կոնֆերանսը որոշեց, որ պէտք է աշխատել ամէն կերպ հայկական զօրամասերը շուտափոյթ կերպով ուղարկել ռազմաճակատ, ծառայելու

մղելով իրենց ուղղակի կոչումին:

Գ- Գաւառների վերաբերմամբ կոնֆերանսն որոշեց՝ հաղորդելով մեծամասնական շարժման մասին կոնֆերանսի ընդունած բանաձեւը, հրահանգել որ հաշւի առնեն տեղական ուժերի յարաբերութիւնը եւ ըստ այնմ վարեն համաձայն բանաձեւի:

Փակում

Վերջացնելով իր աշխատանքները՝ կոնֆերանսը որոշեց՝ քանի որ տակաւին ներկայ քաղաքական ճգնաժամը կը շարունակւի, Թիֆլիս պէտք է մնան մէկ-մէկ ներկայացուցիչներ Երեւանի, Բագւի եւ Շուշիի Կ. կոմիտէներից:

Ժողովը փակւեց Դեկտեմբեր 3-ին:

Նախագահ կոնֆերանսի՝
ՍԱՐ[ՏԻՐՈՍ] ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (Երեւան)

Փոխ նախագահ՝
Յ[ՈՎՀԱՆՆԷՍ] ԱՄԱՏՈՒՆԻ (Հայաստանի բիւրօ)

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

10-XII-1917

Թիֆլիս

Փաստ. 26-13

**Ա 23.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ
ԹԻՒ 166 ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ**

6 դեկտ. 1917

Ընկերներ,

Ձինադադարի եւ անոր հետ կապուած մէկ քանի կենսական նշանակութիւն ունեցող խնդիրները ստիպեցին «Հայաստան»ի եւ «Արեւելեան» բիրոները անմիջապէս հրաւիրել Հ. Յ. Դաշնակցութեան Խորհուրդը:

Խորհուրդը գումարուեցաւ Նոյ. 27-ին եւ տեսեց մինչեւ Դեկտ. 3: Եկած էին Կովկասեան բոլոր Կ. կոմիտէներու ներկայացուցիչները ինչպէս նաեւ Կարինի եւ Երեւանի Արեւմտահայ կոմիտէներու պատգամատուները. ստորեւ Ձեզ կը հաղորդենք Խորհուրդի որոշումներու եւ բիրոներու վերջին առած քայլերու մասին:

Նկատի ունենալով որ մեր միջամտութենէն դուրս եւ մեր կամքէն ու ցանկութիւններէն անկախ զինադադարը պիտի իրագործուի ռազմաճակատի անիշխան եւ քայքայուած զօրամասերու ձեռքով եւ այդ պարագային կարող են պայմանները անելի աղէտաբեր ըլլալ հայ ժողովրդի համար, Խորհուրդը եկաւ այն եզրակացութեան որ Կովկասեան իշխանութեան պատրաստած զինադադարի պայմանները ընդունելի են:

Ձինադադարի գլխաւոր պայմանն այն է որ գրաւուած վայրերը մնան անփոփոխ եւ զինուորներու տեղափոխութիւնը տեղի չունենայ: Մեր ընկերներէն մէկը գիտացիական խորհուրդի կողմէ զինադադարի բանագնաց յանձնաժողովին կը մասնակցի որպէսզի հսկէ պայմաններու մեր ժողովրդին նպաստաւոր եղանակով դասաւորումին:

Մեծամասնական շարժումներու առթիւ երկար խորհրդակցութիւններէ ետք, Խորհուրդը եկաւ այն եզրակացութեան, որ պէտք է ամէն կերպ կազմակերպութիւնը աշխատի իր ուժերով կարգ ու խաղաղութիւն պահպանել որպէսզի ժողովուրդը չառուժէ այդ շարժումներէն: Հայկական գումերը պէտք է հնար եղած չափերով գերծ պահել քաղաքացիական կռիւտ եւ դրկել զանոնք Երկիր, ճակատը պաշտպանելու համար:

Խորհուրդը երկարօրէն ծանրացաւ մեր զինական ուժերու կեղքոնացման ու կազմակերպման մասին: Որոշուեցաւ ա.- Բոլոր կովկասահայ զինուորները կեղքոնացնել հայկական զօրաբանակի մէջ: բ.- Ամէն խիստ միջոց ձեռք առնել բոլոր դասալիքները հաւաքելու: գ.- Ձինուորական տարիքին մէջ գտնուող թրքահայերը ենթարկել պարտադիր զինուորութեան: Թուրքահայ պարտադիր զօրք եւ միլիցիա կազմակերպելու առթիւ Վասպուրականի, Ալաշկերտի, Պուլանըք-Մանազկերտի եւ Դուրան-Բարձաւանդակի Կ. կոմիտէները գրաւոր առաջարկութիւններ ըրած էին: Երկրի մէջ հասունցած այդ պահանջին Խորհուրդը ջերմօրէն առաջ գնաց:

Արդէն Խնուսի մէջ կը կազմակերպուի Ա. գումըր Ս. Կարապետսկիի անունով: Պիտի կազմուին նոյնպէս Վասպուրականի եւ Կարինի գումերը: Թուրքահայ զօրամասերը կ'ըլլան առանձին, որոնք ընդհանուր հրամանատարութեան տեսակետով կ'ենթարկուին Հայկական Ա. զօրաբանակի հրամանատարութեան: Բանակցութիւնները կը վարուին բարեկամ պետութեան ներկայացուցիչներու հետ նիւթական եւ բարոյական օժանդակութիւն ստանալու համար: Այդ բանակցութիւնները առայժմ յաջող կ'ընթանան:

Ընկերներ! Յայտնեցէք բոլոր շրջաններուն պարտադիր զօրակոչի մասին: Համախմբեցէք մեր բոլոր ընկերներն ու համակիրները եւ կազմակերպութիւնն ու ժողովուրդը վերածեցէք զինուած գումերու: Կարգադրուած է որ կարեւոր վայրեր մեկնին անմիջապէս մեր պատասխանատու ընկերները տեղական մարմիններու հետ զլուխ բերելու մեր ծրագրած զինական ուժերը եւ այդպիսով պատրաստուիլ մեծ ու վճռական հաւանականութիւնները դիմագրաւելու:

Օրը օրին Ձեր շարժումներու եւ ընելիքներու մասին հաղորդեցէք մեզ:

Ընկերական բարեւանքով,
Հ.Յ.Դ. Հայաստանի բիրոյի կողմէ
ԿԱՐՕ [ՄԱՍՈՒՆԻ]

Ծանօթ.- Մոյն շրջաբերականը ուղղուած է Կովկասի եւ շրջանի դաշնակցական մարմիններուն:

ՄՎ 6-28

Ա 24.– Ս. ՎՐԱՑԵԱՆԷՆ Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵՆՏ. ԿՈՄ.ԻՆ

1917, Դեկտ. 7, Թիֆլիս

Սիրելիք,

Ձեզ վաղուց է նամակ չեմ գրել, թէեւ պաշտօնական գրութիւններ միշտ ուղարկուում են եւ այդ գրութիւններից ու թերթերից ընդհանուր առմամբ, իրազեկ կը լինէք այստեղի գործերի մասին: Իմ չգրելուս գլխաւոր պատճառը ժամանակ չունենալս է. «Հորիզոն»-ի խմբագրական աշխատանքները, մասնակցութիւնը կուսակցական, ազգային եւ ընդհանուր յեղափոխական մարմինների գործունէութեան, ահագին ժամանակ է խլում, եւ ես հակառակ կամքիս, անկարող եմ լինում կապ պահպանել Ամերիկայի ընկերների եւ մարմինների հետ: Կայ եւ մի ուրիշ հանգամանք, որ, յաճախ, թուլացնում է գրելու տրամադրութիւնը — չեմ կարող վստահ լինել, որ գրածդ տեղ կը հասնի: Փորձեմ սակայն, լռութիւնս խզել եւ ամփոփ տեղեկութիւն տալ այստեղի անցուղարձերի մասին:

Ռուսաստանի յեղափոխութիւնը սկսում է հետզհետէ մտահոգիչ կերպարանք ստանալ: Յարիզմի գործած ապականութիւնը բարձրի ու գաղափարների՝ ուժգնապէս երեւան եկաւ, երբ կառավարական բռնի ոյժը մէջտեղից վերացւեց: Յեղափոխական դեմոկրատիան, որ այնքան խանդավառութեամբ լեցրեց բոլորիս սրտերը, հետզհետէ շեղւեց ուղիղ ճանապարհից, պառակտւեց ինքն իր մէջ, բաժանւեց հակադիր հոսանքների եւ փոխանակ միացած ուժերով կուելու արտաքին եւ ներքին թշնամու դէմ եւ աշխատելու յօգուտ պետական վերաշինութեան, թուլացրեց յեղափոխութեան դրսի ու ներսի ճակատը, տարւեց ցնորական գաղափարներով, խուժանավարական հողմավարութեամբ: Եւ ահա արդիւնքը ամէնքիս առջեւ է, դեմոկրատիայի փոքրամասնութիւնը միայն մնաց առողջ ճանապարհի վրայ՝ անզօր առ այժմ պետական ղեկն իր ձեռքը առնելու, իսկ ժողովուրդի մեծ մասը, մանաւանդ զօրքը, հետեւեց բողջեւիկների կործանարար գործելակերպին, երկիրը հասցրեց քայքայման ծայրը: Այսօր արդէն, ըստ իս, Ռուսաստանը կանգնած է անխուսափելի սնանկութեան առաջ եւ ոչ մի ոյժ նրան չի փրկի ներքին կործանումից եւ գերմանական բռունցքից: Ռուսաստանը կամ պիտի ընկնի Տաճկաստանի վիճակին՝ գերի գերմանական իմպերիալիզմին, կամ ի սպառ պիտի քանդուի, բաժան-բաժան դառնայ մանր մասերի եւ ապա, թերեւս, այդ մասերի կամաւոր միութիւնից ստեղծւի դաշնակցական Ռուսաստանը, իբրեւ ազգերի միութիւն:

Անկարելի չէ եւ բռնապետութեան վերադարձը: Այսպէս թէ այնպէս մենք կանգնած ենք խոչոր, ահարկու անակնկալների առջեւ եւ չգիտենք, թէ ուր է տանելու մեզ այս ուղին: Սահմանադիր ժողովի վրայ էր բոլորի յոյսը, այն էլ ցրեցին, այժմ խորհուում ենք միջոցներ Սահմ. ժողովը ապահով մի վայրում գումարելու եւ անարգել աշխատանքներ տանելու համար: Այդ ուղղութեամբ գործօն քայլեր են առնում յատկապէս կոզակների շրջանում:

Անդրկովկասը Ռուսաստանից փաստօրէն կտրւած է: Այստեղ ստեղծուած է տեղական կառավարութիւն՝ Անդրկովկասեան կոմիսարիան, որ երկրի բարձրագոյն իշխանութիւնն է՝ նման այն կառավարութիւններին, որոնք կազմւած են Ուկրայնայում, Դոնում, Կուբանի եւ Թէրէքի կազակների շրջանում, Սիբիրի եւայլն: Անդր. Կոմիսարիատը վարելու է տեղական գործերը մինչեւ որ հաւաքւեն Անդրկովկասի կողմից Սահմ. ժողովի համար ընտրւած պատգամաւորները, որոնք կազմելու են Անդրկովկասի համար նոր իշխանութիւն, որն եւ վարելու է տեղական գործերը մինչեւ Կենտրոնական համառուսական իշխանութեան կազմակերպումը: Այսօր վաղը այդ պատգամաւորները կը հաւաքւեն, մենք յոյս ունենք, որ աչքի ընկնող թուով մարդ կ'ունենանք ընտրւած, որովհետեւ աննախընթաց յաջողութիւն ունեցանք. հայ ժողովրդի 95%, շատ քրդեր, եգիպտիներ, ռուսներ, յոյներ, թուրքեր եւս մեզ ձայն տւին՝ այսպիսով հաւանութիւն տալով այն քաղաքականութեան որ վարում է Դաշնակցութիւնը: Անդրկով. Կոմիսարների օգնականներն էլ մեր ընկերներն են: Անդրկովկասեան ներկայ իշխանութեան եւ կառավարական գործերի մէջ մենք ունենք աչքի ընկնող մասնակցութիւն եւ մեր շիտակ քաղաքականութիւնը ամէն կողմից համակրանքով է ընդունւում:

Անդր. Կոմիսարիատի մէկ կարեւոր քայլը եղաւ գինադադար կնքելը թուրքերի հետ: Հայ յետադիմական մամուլն սկսել է յարձակւել դաշնակցական կոմիսարների վրայ, որ նրանք էլ մասնակցել են գինադադարի կնքման: Սակայն ողորմելիները չեն ըմբռնում, թէ ինչ քայլ է այդ: Կոմիսարիատը, ուզէր-չուզէր, գինադադարը պիտի կայանար, որովհետեւ նա ընդհանուր բնոյթ ունէր եւ միայն Կովկասեան ճակատը բացառութիւն չէր կարող կազմել: Որքան էլ ցաւալի պայմանների մէջ տեղի ունեցած լինի գինադադարը, մի բան պարզ է, որ մենք ոչ մի ոյժ չունէինք նրա առաջը առնելու, որովհետեւ

ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

տեւ ռուս զօրքը բացէ ի բաց մերժում էր շարունակել կռիւը: Մեր ընկերների հակառակութիւնը կամ չէզոքութիւնը կոմիսարիատի մէջ, հաւասար կը լինէր մեր մեկուսացման եւ կասկածաւոր դիրքի՝ յաչս յեղափոխական օրգանների, որոնք բոլորն ալ առանց բացառութեան մասնակցեցին գինադադարի խնդրին: Միւս կողմից մեկուսանալով՝ մենք որեւէ ազդեցութիւն չէինք ունենայ գինադադարի պայմանների վրայ, մինչդեռ մասնակցելով՝ մենք ի վիճակի կը լինէինք մեր ցանկացած հարցերն անցկացնել: Այդպէս էլ եղաւ մենք նախ ապահովեցինք մեր մէկ ընկերոջ մասնակցութիւնը (Արշակ Զամալեան) տաճիկների հետ գինադադարի բանակցութիւնները վարող յանձնախմբում: Մենք կարողացանք ընդունել տալ, որ գինադադարի ժամանակ արգելի Հայաստան վերադառնալ Տաճկաստանից քրտերի եւ թիւրքերի, իսկ թիկունքի գինաձ քրտերը նկատել որպէս աւազակ եւ կռուել նրանց դէմ: Մենք ընդունել տւինք, որ դեմարկասիոն գիծը⁵⁸ ռուս եւ տաճիկ զօրքերի միջեւ մնայ ամառայ ռազմաճակատի գիծը, ինչ որ շատ ձեռնտու էր մեզ համար: Եւ այլ այս կարգի հարցեր. մենք կարողացանք յաջողեցնել միայն մեր մասնակցութեամբ, իսկ ձեռնպահ կամ հակառակ մտաւրով ոչ միայն այս ամէնը չէինք յաջողել, այլեւ շատ ուրիշ խնդիրներում պարտութիւն կը կրէինք: Այս չեն ուզում տեսնել Դաշնակցութեան դէմ խօսողները: Իսկ ինչ կը վերաբերի Դաշնակցներին, միթէ՞ նրանք չեն կարող հասկանալ, թէ ինչ բաներով է պայմանաւորուած հայ ժողովրդի վարմունքը: Նրանք կը հասկանան, որ հայ ժողովրդի դրութիւնն այնքան բացառիկ ու փափուկ է, որ նա չի կարող ռիսկ անել եւ մեկուսանալ բոլոր այն ուժերից, որոնք, այսպէս թէ այնպէս Ռուսաստանի ղեկավարներն են հանդիսանում: Դաշնակցների թիֆլիսի հիւպատոսները այդ շատ լաւ են հասկանում եւ ըստ այնմ էլ գնահատում են մեր վարելակերպը:

Զինադադարը մեր առջեւ դրել է մի շարք հրատապ խնդիրներ: Ամէնից աւելի մեզ մտահոգում է Ֆրոնտը ամրացնելու հարցը: Ռուս զօրքը չի մնում ու հեռանում է. պէտք է տեղական ոյժ ստեղծել, թէ ճակատը պահելու եւ թէ թիկունքի աւազակների դէմ կռուելու համար: Ֆրոնտի հարցը մտահոգում է ոչ միայն հայերին, այլեւ վրացիներին, որոնք հետ մեր յարաբերութիւնները երթալով լաւանում են եւ, յոյս ունեւմ, շուտով կը դառնան բարեկամական: Երկու ազգերն էլ փութով կազմակերպում են ազգային զօրամասեր — հայ եւ վրացական կորպուսներ: Հայկական կորպուսը կազմակերպման շրջանումն է. կազմուած են արդէն եօթը գնդեր — ՊՕԼԿ —, կազմուած են նորերը: Կորպուսի հրամանատար է նշանակուած Տիլմանի հերոս յայտնի գեներալ Նազարբէգովը, մէկ տիպիզիայի պետ նշանակուած է նոյնպէս շատ յայտնի գեներալ Արէշով, միւսի՝ գնդապետ Սիլիկով: Երեքն էլ համբաւաւոր հայ գինուորականներ:

Նրանք իրենց շուրջն են համախմբել բոլոր աչքի ընկած հայ գինուորականներին: Կազմուած են հետեւակ, ճիւղոր եւ թնդանօթածիզ զօրամասեր: Դաշնակցները հեւ ի հեւ հետեւում են հայ եւ վրացի զօրամասերի կազմակերպման եւ պատրաստ են ամէն աջակցութիւն ցոյց տալ եւ յոյս ունենք, որ հարկ եղած դէպքում հայ, վրացի եւ ռուս զօրամասերով կարելի կը լինի պահել Ֆրոնտը եւ թոյլ չտալ, որ թուրքերը ներխուժեն: Մոռացայ ասել, որ ռուսական ազգային զօրամասեր էլ կազմուած են՝ առողջ, դեռ չբարոյալքուած գինուորներից:

Միեւնոյն ժամանակ բուռն ջանքեր են գործ դրուում, որ գրաւուած վայրերում էլ զօրամասեր կազմուեն տաճկահայերից: Որովհետեւ միջազգային օրէնքով կարելի չէ ըէկուել⁵⁹ մասեր կազմել, այնտեղ ստեղծուած են միլիցիական զօրագնդեր: Առաջին գունդը — ՊՕԼԿ — արդէն կազմուած է եւ դիրքերն է անցել, գնդապետ Սամարցեանի հրամանատարութեան տակ: Նման գնդեր կազմուելու են եւ այլ շրջաններում: Այդ նպատակով հաւաքուած են կամաւորներ: Նաւաւած վայրերում, ինչպէս եւ ամբողջ Կովկասում, յայտարարուելու է յատուկ զօրակոչ: Միլիցիական գնդերը կազմուելու են մի ամբողջ տիպիզիա եւ ունենալու են զօրամասային բոլոր մասերը, որոնք ենթարկուելու են Կորպուսի պետ գեներալ Նազարբէգեանին: Թէ կորպուսը եւ թէ միլիցիական գնդերը կազմուում ու պահուում են պետական միջոցներով, պակասը լրացնում է Ազգային Խորհուրդը:

Ազգային Խորհուրդը վերջերս բաւական գործօն դեր է կատարում, բոլորը 15 անդամ են, որից 6 հոգի դաշնակցական, 2 սոց.-դեմ., 2 սոց.-յեղ., 2 ժող. կուս. եւ 3 չէզոք: Նախագահն ու քարտուղարը մեր ընկերներն են — Ահարոնեան եւ Աղբալեան: Առհասարակ մենք ակտիւ մասնակցութիւն ունենք Խորհուրդի գործերում: Առաջին եւ գլխաւոր գործը Խորհուրդի՝ զօրամասի կազմակերպութիւնն է:

Այդ նպատակով կազմուած է յատուկ գինուորական մարմին, լիազօր իրաւունքներով, 3 հոգուց — կորպուսի պետը՝ գեն. Նազարբէգեան, ընկ. Ռուբէն եւ ընկ. Արսէն Շահմազեան — սպայ—: Իսկ երկրի միլիցիական գնդերի կազմակերպման համար կազմուած է մեր յատուկ մարմինը — Ռուբէն, Արամ, Շահմազեան, Դրօ —: Դրօ-ն նշանակուած է ընդհանուր կոմիսար բոլոր հայկական զօրամասերի:

Ազգային Խորհուրդը յատուկ ջանքեր է թափում պատկառելի մի դրամագրուի ստեղծելու. առ այժմ կազմուած է 10 միլիոն ռուբլու նախահաշիւ, որ բաժանուած է քաղաքների վրայ: Թիֆլիսն արդէն հաւաքել է 2 միլիոն ռուբլի: Եթէ պէտք լինի, մտադիր են այդ գումարը կրկնապատկել ու եռապատկել: Ազգային Խոր-

58.- Մահմաճազմային:

59.- Կանոնաւոր:

հոլորդը եւրոպական պատւիրակութեան հետ սերտ յարաբերութեան մէջ է եւ գործում է համերաշխ: Արեւմուտահայ խորհուրդը, որ խայտաբղէտ ու պատահական կազմ ունի, անցեալ օր գրաւոր պահանջ էր ներկայացրել, որ իրենցից էլ ձայնի իրաւունքով անդամներ կանչուին Ազգային Խորհուրդին: Վերջինս այդ մասին հրահանգ չունէր խորհրդաժողովից եւ քանի որ Դեկտ. 15-ին գումարելու էր Ազգ. ժողով — ոչ համագումար —, որոշեց առ այժմ Արեւմ. խորհուրդից 2 հոգի հրաւիրել խորհրդակցական ձայնով՝ հարցի վերջնական կարգադրութիւնը թողնելով Ազգ. ժողովին: Արեւմ. խորհուրդը, սակայն, դժգոհ մնաց եւ պահանջեց, որ 5 հոգի ընդունեն: Խնդիրն այդ վիճակի մէջ է, բայց թւում է, թէ Արեւմ. խորհուրդի շուրջը հաւաքած մարդիկ առիթներ են փնտռում կոնֆլիկտներ ստեղծելու: Սակայն այդ չի յաջողւի, որովհետեւ ժողովրդական խաւերի տրամադրութիւնը բոլորովին այլ է: Ընդհակառակը, բոլորն էլ հասկանում են ընդհանուր լրջութիւնը եւ խուսափում են բարդութիւններից:

Զինադադարը եւ ապա հաշտութեան բանակցութիւնները հրապարակ կը դնեն Տաճկահայաստանի քաղաքական ճակատագրի խնդիրը: Ի՞նչ կը լինի նա, բոլորս սրտատրոփ սպասում ենք: Միեւնոյն ժամանակ անում ենք այնպիսի քայլեր, որ գրաւած վայրերում փաստօրէն Հայաստան ստեղծւած լինի եւ վերաշինութիւն կատարւի: Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու կարող եմ ասել, որ այս ուղղութեամբ ահագին գործ է կատարւած: Տաճկահայաստանի կոմիտարիատը ընկ. Զաւրիեւի ջանքերով, մեծ աշխատանք է կատարում: Մտադրութիւն կայ շուտով երկրում, օրինակ, Արաչկերտում կազմել տաճկահայկական համագումարի պէս բան մը եւ ընտրել երկրի համար կենտրոնական ազգային մի մարմին, որ երեւան գայ ամէն անգամ, երբ պէտք լինի տաճկահայութեան ձայնը լսելի դարձրնել: Ծրագրւած է նաեւ Փետրոսարի վերջերին գումարել թրքահայոց ընդհ. համագումար՝ բոլոր գաղութներից ներկայացուցիչներով: Զեզ էլ հեռագրւած է: Մենք էլ ուզում ենք օգտուել առիթից եւ ունենալ Ընդհ. ժողով: Զեզ կը հեռագրւի այս մասին: Գրւած էլ պէտք է լինի: Աշխատեցէք՝ Ազգ. համագումարի համար շատ մը ընկերներ ընտրել տալ եւ նրանց նշանակել նաեւ մեր Ընդհ. ժողովի պատգամաւոր: Այս ընդհանուր ժողովն, ի հարկէ, մեծ դեր ունի կատարելիք մեր կեանքում: Մոռացայ յիշել, որ կովկասեան իսլամների մէջ նկատուում է ուժեղ հակառակութիւն տաճկահայոց ինքնավարութեան. նրանք ամէն միջոց ձեռք են առնում տաճկահայկական հարցը վիժեցնելու համար: Մեր յոյսերը մինչեւ վերջերը շատ մեծ էին, հիմա էլ յուսաբեկ չենք, բայց բոլջեւիկական հաշտութիւնը մեր սիրտը լեցնում է անհանգստութեամբ:

Երկրի ժողովրդի վիճակը թերթերում ցոյց տրւածի

չափ վատ չէ. ընդհանուր առմամբ ձմեռը կարող են առանց դժարութիւնների անցկացնել, հաց ունեն: Աւելի ծանր է Անդրկովկաս ապաստանած գաղթականների դրութիւնը, որից աւելի լաւ չէ եւ կովկասահայ գիւղացու վիճակը: Հացի պակասը, սաստկացող աւազակութիւնները շատ սուր վիճակ են ստեղծել: Իշխանութիւն բառիս բուն նշանակութեամբ գոյութիւն չունի: Որոշել ենք ստեղծել Կովկասեան միլիցիական զօրագունդեր՝ աւազակութիւնների դէմ կռուելու եւ կարգը պահպանելու համար: Այդ նպատակով 33-40 տարեկանների զօրակոչ կը յայտարարւի այս օրերս: Կորպուսի մէջ մտնում են միայն 19-32 տարեկանները: Հայկական նահանգներում ամբողջ իշխանութիւնը գտնուում է հայերի ձեռքը, իսկ հայ-թաթար խառն մասերում, հայերի եւ թաթարների ձեռքին:

1918 թ. Յունուար 6

Համարեա մի ամիս անկարող եղայ սկսած նամակս աւարտել: Լրացնեմ եւ շտապեմ պոստը ձգել: Յոգնեցնող աշխատանքներն անկարելի են դարձնում նամակ գրելը: Հակառակ ցանկութեանս չեմ կարողանում: Տամ ամիտի կերպով լրացուցիչ տեղեկութիւններ:—

Ռուս զօրքը կովկասեան ճակատից թողեց հեռացաւ: Ամբողջ ճակատի պաշտպանութիւնը մնաց միայն հայերին: Կարինը, Սարղամիշը, Ղարսը, Ալեքսանդրապոլը հազարաւոր թնդանօթներով ու բազմահազար ռազմամթերքով յանձնեցին հայ զօրամասերին: Ամբողջ գրաւած վայրերի եւ Անդրկովկասի հայաբնակ մասերի զինւորական նշանակութիւն ունեցող կէտերը, պարէնը, ռազմամթերքը, հեռախօսն ու հեռագիրը, երկաթուղին, Վանայ լճի նաւատորմիղը, ձիերը, պարէնակիր սայլեր, հիւանդանոցները, աւտոմոբիլները, պահեստները — ամէն ինչ յանձնեց հայերին: Մարդ չենք հասցրնում ամէն բան մեր ձեռքը առնելու: Մոբիլիզէ ենք արել մեր բոլոր ոյժերը: Յայտարարեց 19-32 տարեկանների ընդհանուր զօրակոչ, հաւաքուում են կամաւորներ. ուսուցիչներ, ուսանողներ, աշակերտներ շտապում են արձանագրել: Խումբ-խումբ ուղարկում ենք երկիր: Կազմուում են բազմաթիւ հայ զօրամասեր: Տաճկահայերից կազմուում է յատուկ տիպիգիա: Հրամանատար նշանակեցինք Անդրանիկին, որպէսզի օգտուենք նրա վայելած հեղինակութիւնից: Նա անցել է Ալեքսանդրապոլի կողմերը կամաւոր հաւաքելու: Մեր միջնորդութեամբ նրան տւին գեներալ մայորի աստիճանն ու պատանշաններ: Տաճկահայ տիպիգիայի կազմակերպութեան համար կազմւած է մի մարմին — «Հայաստանի ապահովութեան խորհուրդ», որի ղեկավարն է ընկ. Վահան Փափագեանը: Ռուս-հայկական գնդերն էլ կազմուում են արագօրէն, ոգեւորութիւն կայ, բայց պայմանները շատ ծանր են: Պարէն, հագուստ դժար



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

րուլթեամբ է ճարուում, դրամի էլ նեղութիւն կայ: Ազգ-
Խորհուրդը միայն թիֆլիսում հաւաքեց 4 միլիոն ռուբ-
լի: Միջոցներ են ձեռք առնւած միւս վայրերում էլ հա-
ւաքելու:

Ֆրոնտը դեռ կայուն է: Թուրքերը մեզանից աւելի են
քայքայած: Մինչեւ գարուն մեր գլխաւոր դերը քրտե-
րին սանձահարեցը պէտք է լինի: Թուրքերը պաշտօնա-
պէս դիմեցին Անդրկովկասի կառավարութեան՝ հաշ-
տուութեան բանակցութիւնների առաջարկով, բայց մեր
եւ սոց.-յեղափոխականների ջանքերով որոշեց պա-
տասխանել, որ Կովկասն անկախ պետութիւն չէ եւ, հե-
տեւաբար, չի կարող անջատ բանակցութիւնների մէջ
մտնել, որ հաշտութիւն կնքելու միակ իրաւատէրը
Սահմանադիր ժողովն է: Սահմ. ժողովը երէկ բացւեց,
բայց չեմ կարծում որ տեւական լինի: Հաւանաբար բոլ-
շեւիկները հետ կոնֆլիկտի մէջ մտնի⁶⁰ եւ բռնի կերպով
ցրւի: Սահմ. ժողովի ընտրութիւնների մէջ մենք ան-
սպասելի յաջողութիւն ունեցանք, կէս միլիոնից աւելի
ձայն ենք ստացել եւ մօտ 10 պատգամաւոր կ'ունենանք,
մինչդեռ մենք 6-7 հոգի հազիւ կը սպասէինք: Մեզ ձայն
են տւել ոչ միայն հայերը, այլեւ շատ տեղեր քրտերը,
թուրքերը եւ ռուսները:

Անդրկովկասում վերջերս թաթարական շարժում-
ներ տեղի ունեցան: Թերթերից անշուշտ իմացաք Գան-
ձակի, Ախլցխայի եւ այլ դէպքերի մասին: Պէտք է ասել,
որ առ այժմ այդ շարժումները հակահայ բնոյթ չեն
կրում: Գանձակում ուղղւած էին ռուսների դէմ: 15-ից
աւելի ռուս զիւղեր թալանւած ու փչացւած են, ռուս
զիւղացիք փախել են եւ այժմ գաղթում են: Ախլցխա-
յում շարժումը վրացիների դէմ էր, որոնք ուզում են
Ախլցխան միացնել Վրաստանին, մինչդեռ թուրքերը
կամենում են Ախլցխա, Օլթի, Արտասան Բաթումից
առանձին թրքական մի նահանգ ստեղծել. այսու ամե-
նայնիւ մենք աշխատում ենք, որ Կովկասը ինքնա-
պաշտպանութեան պատրաստ լինի ու այդ բանի հա-
մար պահանջւածը արւած է լիովին: Կազմակերպում է
տեղական իշխանութիւն եւ միլիցիա: Կարծում ենք, որ
այս տեսակէտից կարող ենք բաւական հանգիստ լինել:

Հաշտութեան բանակցութիւնները Բրեստլիտովը-
կում յուզում են բոլորիս: Հարկաւոր քայլերն ու մար-
դիկ ուղարկւած են ուր պէտք էր, որ հայկական
խնդրին ոյժ տրւի: Ռոստոմը Պետրոգրատ է եւ աշխա-
տում է այդ ուղղութեամբ: Մի քանի օր առաջ էլ մեկնեց
բժ. Համօ Օհանջանեանը իբրեւ Սահմ. ժողովի անդամ:
Առ այժմ որոշ բան դժւար է ասել, բայց բոլորս յուսով
ենք նայում ապագային: Մինչեւ այս նամակը ձեզ հաս-

նելը, երեւի ամէն բան պարզւած կը լինի արդէն:

Կովկասում վիճակն այսպէս է. ռուս զօրքը արագ
կերպով հեռանում է Ռուսաստան, ճանապարհին աւե-
րելով ամէն բան: Ռուսական ազգային կորպուսի կազ-
մակերպումը դեռ սաղմային վիճակի մէջ է. լեհ-ուկրա-
յիւնացի կազակ զօրամասերը հեռանում են Կովկասից:
Վրացիներն ասում են, թէ իրենք անկարող են Ֆրոնտը
պաշտպանել: Թուրքերն, ինքն ըստ ինքեան հասկանալի
է, որ չեն կուրի տաճիկների դէմ: Այսպիսով, փաստօ-
րէն մենք ենք մնացել մեր ոյժերով տաճիկների դէմ:
Մինչեւ գարուն կը դիմանանք, բայց եթէ տաճիկները
կարողանան մեծ ոյժ հաւաքել ու գրոհ տալ մեր վրայ,
մեր բանը շատ ծանր կը լինի: Իսկ եթէ մինչ այդ հաշ-
տութիւն եղաւ եւ հայկական հարցն էլ ցանկալի ձեւա-
կերպութիւնն ստացաւ, ահագին նիւթական, մարտա-
կան ու բարոյական ոյժ կը մնայ մեր ձեռքին եւ արագօ-
րէն կը վերաշինենք մեր երկիրը:

Դէհ, առ այժմ այսքանը հերիք է: Եթէ դուք սրա
կէսն էլ հաղորդէիք, շատ շնորհակալ կը լինէի: Ամերի-
կայից ամիսներից ի վեր է, որ նամակ չունինք. թերթե-
րը գալիս են, երէկ ստացւեցին «Հայրենիք»-ի Հոկտեմ-
բերի համարները: Եթէ նամակ գրած լինէիք, երեւի
ստացած կը լինէինք:

Երկու տող էլ իմ մասին: Դեռ, «Հորիզոն»-ի խմբա-
գիր եմ, եւ ի հարկէ, ազատ ժամանակս նւիրում եմ ու-
րիշ գործերի. ընկերները ստիպում են, որ մի առ ժամա-
նակ թողնեմ թերթը եւ ամբողջ ոյժերս տրամադրեմ
կազմակերպական գործերին, բայց դժւարանում եմ,
որովհետեւ յարմար մէկը չկայ, որ թերթը յանձնեմ.
Հասկնալի է որ հնարաւորութիւն չունեմ «Հայրենի-
ք»-ին գրելու: Խնդրել եմ, որ Օ. Մխիթարեանը գրէ.
Հաբթէ Հաբաթ ուղարկում է ձեզ թղթակցութիւններ.
ասել եմ, որ ամէն թղթակցութեան պիտի վճարէք երեք
տոլար, արդէն 200 ռուբլի էլ կանխավճար եմ տւել իմ
կողմից: Յուսամ՝ թղթակցութիւնները ստանում էք:

Դէ, ցը:

Համբոյրներով՝ Ս. ՎՐԱՅՆԱՆ

Արմէն Գարոյից միայն մի նամակ ենք ստացել,
Օգոստոսին գրած, Նիւ-Եորքից, ստացանք եւ երկրոր-
դը՝ նոյն նամակի պատճէնը: Ուրիշ ոչ մի լուր: Խընդ-
րում ենք ասել նրան, որ գրէ մանրամասնութիւններ:
Գրաքննական շատ խստութիւններ չկան մեր սահմա-
նում:

Ձեզ հեռագրել եմ, որ 1000 ռուբլի փոխադրէք Ժը-
նեւ, «Դրօշակ»ին՝ ընկ. Յովնանին՝ ի հաշիւ Արեւելեան
բիւրոյին: Այդ դրամը նրան ուղարկում է ընկ. Վարդա-
նը⁶¹, որ համապատասխան հազար ռուբլին մտցրել է Ա-
ր[եւելեան] բիւրոյի դրամարկղը:

ՆՈՅՆ

60.- Հակադրութեան, բախումի:

61.- Հաւանաբար Խանասարայ Վարդանն է, բուն անունով
Մեհրաբեան Սարգիս:





Փաստ. 258-4

Ա 25.- «ՀՈՐԻՉՈՆ»Ի ԿՈՉԸ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

Դեկտեմբերի 15, 1917 թ.

1909 – 1918 թուականներուն Թիֆլիս հրատարակուող «Հորիզոն»ը Դաշնակցութեան պաշտօնաթերթն էր Կովկասի մէջ. ցարական իշխանութեանց կողմէ Դաշնակցութեան դէմ ծառայած հալածանքի տարիներուն ան կը շարունակէր լոյս տեսնել արտօնատիրութեամբ կուսակցութեան բարեկամ մեծահարուստ Համբարձում Մելիքեանի, որ դարձած էր անոր սեփականատէրը: 1917 թ. փետրուարեան յեղափոխութենէն ետք գումարուած Հ.Յ.Դ. Կովկասեան ռայոնական ժողովի որոշումով թերթը վերադարձաւ կուսակցութեան տնօրինութեան: Ստորեւ տրուած յայտարարութիւնը ընկերներուն դիմում է սատար կանգնելու թերթի տարածման եւ այդ ճամբով անոր տնտեսութեան բաժնի ապահովման:

Ընկերներ,

Վերջին Ռայոնական ժողովի որոշումով «Հորիզոն»-ը դարձել է Հ. Յ. Դաշնակցութեան կենտրոնական օրգան: Ինչպէս զիտք, թերթի տնտեսական մասն էլ արդէն անցել է կուսակցութեան: Ընդհին արտակարգ թանկութեան շատ դժար է դարձել թերթի հրատարակութիւնը առանց կողմնակի նպաստի, իսկ այդպիսի նպաստ մենք չունինք: «Հորիզոն»ը ապրելու է միայն իր բաժանորդագրութեան եւ յայտարարութեան տուած միջոցներով:

Որպէսզի կարելի լինի «Հորիզոն»ը ոչ միայն պահպանել, այլեւ հետզհետէ ճոխացնել, հարկաւոր է առնուազն 10,000-ի սպառում ունենալ: Որպէսզի կարելի լինի ժամանակին, տարւայ սկզբին պատրաստութիւն տեսնել թղթի եւ տպագրական նիւթերի, անհրաժեշտ է անմիջապէս ունենալ բաւական խոշոր գումար, որ կարելի է ստանալ միայն բաժանորդագրութիւնից: Եթէ հիմա թղթի պատրաստութիւն չտեսնենք, կարող է պատահել, որ յետոյ ստիպուած լինենք դադարեցնել թերթը:

Մրանով շտապում ենք դիմել բոլոր դաշնակցական մարմիններին եւ ընկերներին՝ խնդրելով անյապաղ եռանդուն միջոցներ ձեռք առնել «Հորիզոն»-ի տարածման: Մենք կարծում ենք, որ իւրաքանչիւր ընկեր եւ մարմին պարտական է ստանալ կուսակցութեան կենտրոնական օրգանը: Մենք խնդրում ենք «Հորիզոն»-ի տարածումը համարել կուսակցական գործ եւ առանց ժամանակ կորցնելու հաւաքել բաժանորդներ եւ ուղարկել մեզ:

Յիշեցնում ենք նաեւ, որ թէ նոր եւ թէ հին բաժանորդները, թէ ընկերները եւ թէ մարմինները թերթ ստանալու համար պէտք է նախօրօք ուղարկեն բաժանորդագինը: Ապառիկ բաժանորդագրութիւնը կուսակցական որոշումով արգելուած է:

Յուսալով, որ մեր այս դիմումը ընկերներն ու մարմինները չեն թողնի անհետեւանք եւ կը նպաստեն, որ «Հորիզոն»-ի բաժանորդների թիւը փութով կրկնապատկի ու եռապատկի, մնում ենք ընկերական բարեւներով:

Խմբագիր՝ [Սիմոն Վրացեան]

Գրասենեակի կառավարիչ՝ [Անընթեռնելի ստորագրութիւն]

Յ. Գ.– Կենտր. կոմիտէներին խնդրում ենք արտատպել այս նամակը եւ ուղարկել իրենց շրջանի մարմիններին եւ գործօն ընկերներին:

Ա 26.- ԹԻՖԼԻՍԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀՐԱԽԵՐ

Հ.Յ.Դ. Թիֆլիսի Կենտրոնական կոմիտեն յայտնում է ի գիտութիւն շրջանի բոլոր կոմիտէներին, որ դեկտեմբեր 28-ին Թիֆլիսում գումարակերու է շրջանային ժողով՝ հետեւեալ օրակարգով:

1.- Զեկուցում Կ. Կ.ի եւ շրջաններից, 2.- Վարչական բաժանում եւ գեմաստօ, 3.- Վերաբերմունք դէպի մոմենտը, 4.- Հողային հարց, 5.- Տեղական միջոցի, 6.- Տեղական շրջանային ժողովներ, 7.- Ընթացիկ հարցեր, 8.- Ընտրութիւններ:

Ներկայացուցիչներ են ուղարկելու հետեւեալ կոմիտէները-

- 1.- Ախալցխա – 3 ներկ. (մէկը՝ կոմիտ., երկու՝ շրջանից),
- 2.- Ախալքալաք – 3 ներկ. (մէկը՝ կոմիտ., երկու՝ շրջանից),
- 3.- Լոռի – 2 ներկ. (մէկը՝ շրջանից, մէկը՝ կոմիտէից),
- 4.- Ղազախ – 2 ներկ. (մէկը՝ շրջանից, մէկը՝ կոմիտէից),
- 5.- Բելիյ-կլիւճ⁶² – 2 ներկ. (մէկը՝ շրջանից, մէկը՝ կոմիտէից),
- 6.- Դիլիջան – 1 ներկ.,
- 7.- Մեծ Ղարաքիլիսա⁶³ – 1 ներկ.,
- 8.- Ջալալ-Օղլի⁶⁴ – 1 ներկ.,
- 9.- Շուշա – 3,
- 10.- Թելաւ – 1,
- 11.- Սղնախ – 1,
- 12.- Գոքի[?] – 3,
- 13.- Դուշէթ – 1,
- 14.- Սուրամ-Միխայիլովօ – 1,
- 15.- Լոգոդէիս[?] – 1,
- 16.- Թիֆլիս – 3,
- 17.- Ալլավերդի հանքերը – 1:

Հ.Յ.Դ. ԹԻՖԼԻՍԻ Կ. ԿՈՄԻՏԷ

«Հորիզոն», 17 Դեկտ. 1917, թիւ 265

62.- Բորչալուի շրջան, այժմ Շահումեան (Վրաստան):

63.- Այժմ Վանաձոր:

64.- Այժմ Ստեփանաւան:

Ա 27.– ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ Հ.Յ.Դ. ՇՐՁԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Դեկտ. 28-ի երեկ[ոյեան] փակուց Թիֆլիսի նահանգի Հ. Յ. Դաշնակցութեան շրջանային ժողովը: Ժողովի պարամունքները տեւեցին երեք օր, նիստերը լինում էին առաւօտեան 10-5-ը եւ երեկոյեան 5-10-ը: Չեկուցումներ տեւցին.— Մամենտի մասին՝ ընկ. Կ. Ղազազեան, Վարչական բաժանումներ՝ ընկ. Ա. Շահխաթունեան, Կուսակցական մամուլ՝ ընկ. Լ. Չոլախեան, Բանտրական կենտրոն՝ ընկ. Տ. Աւետիսեան, Յատուկ կոմիտէ՝ ընկ. Վ. Բաբայեան, Գիւղացիական կենտրոն՝ ընկ. Գ. Քեալաչեան, Ցեղական միլիցիա՝ ընկ. Ս. Մանասեան, Հայկական զօրամասեր՝ ընկ. Գ. Քեալաչեան: Բոլոր հարցերի մասին ընդունուած են գործնական որոշումներ՝ համապատասխան բանաձեւերով: Եղան զեկուցումներ տեղեցից եւ Թիֆլիսի Կ. կոմիտէից: Որոշուց, ի միջի ալրոց, «Աշխատաւոր» թերթը դարձնել Թիֆլիսի Կ. կոմիտէի պաշտօնական օրգան, հրահանգելով, որ տեղական կոմիտէները եւ Կ. կոմիտէն իրենց ծախսերի համար ունեցած դրամի 10 տոկոսը յատկացնեն այդ թերթին: Ապա գաղտնի քուէարկութեամբ կատարուց Կ. կոմիտէի ընտրութիւնը: Ընտրուեցին ընկերներ՝ Վ. Տէր-Գէորգեան, Ս. Մանասեան, Վ. Բաբայեան, Տ. Աւետիսեան, Գ. Քեալաչեան, Յ. Էլիբէգեան եւ Մ. Լոռեցեան:

Ընդունուած բանաձեւերը կը տանք առանձին:

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ

«Հորիզոն», 30 Դեկտ. 1917, թիւ 276

Փաստ. 26ա-1

Բ 1.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ

8-1-1918

Ընկերներ!

Ներկայ քաղաքական մոմենտն եւ դրան հետ կապ-
ւած ժողովրդի եւ յատկապէս թիւրքաց Հայաստանի
վիճակը իւրաքանչիւր օր առաջ է բերում նորանոր ու
անյետաձգելի պահանջներ, որոնց բաւարարութիւն
տալու համար Հ.Յ.Դաշնակցութիւնը պարտաւոր է լա-
րել իր բոլոր ոյժերը: Կուսակցութեան Արեւելեան եւ
Հայաստանի բիւրոները այդ նպատակով անում են այն
ամէնը, ինչ որ կարող են, աշխատելով ամէն կերպ որ
Ազգային Խորհրդի եւ նրա յատուկ մարմնի քայլերը
միանգամայն համաձայնութեամբ ընթանան կուսակ-
ցութեան տեսակէտի հետ:

1.- Իր գործունէութիւնը աւելի արդիւնաւէտ դար-
ձնելու համար Ազգային Խորհուրդը վերջերումս նախ՝
ստեղծեց մի առանձին մարմին, Յատուկ Կոմիտէ անու-
նով, ամենայն լիազօրութիւններով Ֆրոնտի պաշտ-
պանութեան վերաբերեալ խնդիրներում, եւ ապա որո-
շեց մտցնել իր գործունէութեան մէջ աշխատանքի բա-
ժանում համապատասխան հայկական կեանքի ներկայ
մոմենտի առաջադրած պահանջներին: Իւրաքանչիւր
բաժինը ունի իր առանձին վարիչը Խորհրդի անդամնե-
րից: Թէ Յատուկ Կոմիտէի կազմի մեծամասնութիւնը
եւ թէ պատասխանատու բաժինների վարիչների եւ օգ-
նականների մեծամասնութիւնը կազմում են մեր կու-
սակցական ընկերները:

2.- Մոմենտի կարեւորագոյն պահանջը ներկայումս
Ֆրոնտի պաշտպանութիւնն է եւ դրա հետ կապւած
հայկական ընդհանուր զինակոչի խնդիրը, որի յայտա-
րարութեան մասին արդէն կայացած է Անդրկովկաս-
եան կոմիսարիատի որոշումը եւ այս օրերս կը յայտա-
րարուի: Դրա վերաբերեալ բոլոր հրահանգները կը ստա-
նան համապատասխան մարմինները: Կուսակցութեան
վրայ մնում է՝ իր ձեռքի տակ եղած միջոցներով ամէն
կերպ դիւրացնել այդ զինակոչի իրագործումը եւ հարկ
պահանջւած դէպքում դիմել ստիպողական միջոցների
եւ պատիժների:

3.- Թէ այդ խնդրի ու թէ օրւայ առաջադրած ուրիշ
կարեւոր խնդիրներին նպատակայարմար ընթացքը
տալու համար պէտք է աշխատէք բոլոր կենտրոնական
վայրերում ստեղծել առանձին մարմիններ, Ազգային
Խորհրդի եւ Զինւորական միութեան Յատուկ Կոմի-
տէի անունով, եւ այդ մասին իբրեւ կատարւած փաստ
հաղորդել Ազգային Խորհրդին: Այդ մարմինները կը
համարեն Ազգային Խորհրդի Թիֆլիզում կազմւած

Յատուկ Կոմիտէի ճիւղեր եւ կը գործեն վերջինիս հետ՝
համերաշխութեամբ, հարկաւ պահելով իրենց ներքին
գործերում միանգամայն ինքնավար բնոյթը: Այդպիսի
մարմին արդէն ստեղծել է Երեւանում, այն օրինակով
ցանկալի է որ ստեղծեն եւ ուրիշ վայրերում:

4.- Ինչ վերաբերում է կուսակցութեան բռնելիք
դիրքին, Հայաստանի եւ Արեւելեան բիւրոները գտնում
են, որ այդ բոլոր դէպքերում, երբ զինւորական միու-
թեան Յատուկ Կոմիտէի եւ այլ ազգային հաստատու-
թիւնների կողմից ձեռնարկւում եւ հրապարակւում են
որոշ քայլեր, գուհահեռաբար դրա հետ պէտք է Դաշ-
նակցութիւնը եւս իր անուսից հրապարակ գայ եւ իր հե-
ղինակութեամբ կշիռ տայ վերոյիշեալ քայլերին: Ի հար-
կէ ենթադրւում է որ վերոյիշեալ մարմինների քայլերը
չեն հակասելու կուսակցութեան տեսակէտներին քանի
որ պիտի ձգտել բոլոր այդ հաստատութիւնների մէջ
ապահովել կուսակցութեան մեծամասնութիւնը:

5.- Ձեզ արդէն յայտնի է լրագրներից թիւրք գերա-
գոյն հրամանատարութեան առաջարկի մասին հաշ-
տուութեան բանակցութիւնների վերաբերեալ, որ արւած
է Անդրկովկասեան կոմիսարիատին: Կուսակցութեան
վարիչ մարմինները քննութեան առնելով այդ խնդիրը
գտան, որ Անդրկովկասեան անկախ կառավարութիւնը
գոյութիւն չունի եւ տեղական կառավարութիւնը չի
կարող որեւէ անջատ քայլեր անել հաշտութեան խնդրի
շուրջը, որ համառուսական Սահմանադիր ժողովը
միակ իրաւասու մարմինն է ամբողջ Ռուսաստանի ա-
նունից հաշտութեան վերաբերմամբ այս կամ այն որո-
շումը տալու: Մենք պէտք է ամէն կերպ դէմ լինենք
թիւրք պատգամաւորութեան Թիֆլիզ գալուն եւ այդ
ուղղութեամբ պէտք է կոմիսարիատում աշխատեն մեր
ընկերները, որոշակի եւ կտրուկ կերպով յայտարարե-
լով որ երբեք չեն կարող մնալ այդպիսի կառավարու-
թեան մէջ, իսկ եթէ չնայած նրանց բոլոր ջանքերի այն
հարցը դուրի եւ մեծամասնութեամբ որոշուի ընդունել
առաջարկը եւ սկսել բանակցութիւններ, այդ դէպքում
մեր ներկայացուցիչները հեռանում են կառավարու-
թիւնից:

6.- Սահմանադիր ժողովի բացումը նշանակւած լինե-
լով յունւարի 5-ին՝ բիւրոները որոշեցին որ Դաշնակ-
ցութեան ցուցակով ընտրւածներից երեք հոգի անհրա-
ժեշտաբար ներկայ լինեն ժողովի բացման հէնց առաջին
օրերից: Քանի որ ընկեր Ռոստոմը արդէն Պետրոգրադ
է, որոշեց որ այնտեղ անմիջապէս ճանապարհուեն
Թիֆլիզից, նաեւ բժ. Հ. Օհանջանեանը եւ Ա. Շահխա-

թունին. առաջինը արդէն գնացել է, միւսը կ'երթայ օրերս, իսկ մնացած մեր ընտրւած ընկերները (ընտրւած են 9-11 հոգի) պիտի գնան կարճ ժամանակից յետոյ:

Բացի դրանից որոշւեց որ դաշնակցական պատգամաւորները Սահմանադիր ժողովում կազմելու են առանձին Փրակցիա, պահելով միեւնոյն ժամանակ սերտ կապ սոց-յեղափոխական Փրակցիայի հետ: Անկախ դրանից, մեր ընկերները միւս կուսակցութիւնների հայ պատգամաւորների հետ միասին պիտի աշխատեն կազմել առանձին հայկական խմբակ:

7.- Ինչպէս յայտնի է ձեզ, անցեալ դեկտեմբեր 28-ին լրացաւ մի ամիս ժամանակամիջոցը, որի ընթացքում Անդրկովկասեան կոմիսարիատը պէտք է վերջացնէր գաւառների սահմանաբաժանման խնդիրը եւ հրատարակէր համապատասխան դեկրետը: Սակայն մինչեւ

օրս դեռ այդ խնդիրը չի լուծւել: Թողնելով կոմիսարիատի մեր ընկերներին ամէն կերպ աշխատել ամենակարճ ժամանակամիջոցում յաջողեցնել այդ դեկրետի հրատարակութիւնը, Արեւելեան բիւրոն միեւնոյն ժամանակ առջարկում է Կ. կոմիտէներին յայտնել բիւրոյին վճռական կարծիքները այդ մասին, թէ պէ՞տք է արդեօք ներկայումս իրականացնել այդ սահմանաբաժանումը փաստօրէն առանց սպասելու համապատասխան օրինագծի հրատարակութեան. ի տեղեկութիւն հաղորդում է ձեզ, որ Ալեք-պոլի նահանգի վերաբերմամբ բիւրոների կողմից արդէն հրահանգւած է նահանգի սահմաններում անմիջապէս քայլեր անել գործնականապէս իրականացնելու համար:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈ

Փաստ. 119-1

Բ 2.– ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ

Ընկերներ!

Մեր նախորդ շրջաբերականով տրուած էին բացատրութիւններ Հայաստանի երկրապահ զօրքի կազմակերպութեան մասին, թելադրելով կատարել գործնական աշխատանքներ: Թիրիմացութիւններու տեղի չտալու համար կը յայտնենք որ մեր մարմիններու եւ ընկերներու կատարած աշխատանքները պիտի ներդաշնակուին ուրիշներու հետ, որպէսզի անյարմարութիւն յառաջ չգայ, գործը արագօրէն առաջ տարուի եւ ստանայ համազգային բնոյթ: Ձինտորներու ընտանիքներու ապահովման խնդիրը կարգադրուած է. ստեղծուած է նիւթական որոշ աղբիւր եւ այդ առթիւ կազմուած է յատուկ Բիւրօ: Յունուարէն սկսեալ զինուորական շարքերու մէջ գտնուողներու ընտանիքներուն նպաստ պիտի տրուի թէ երկրի եւ թէ արտասահմանի մէջ: Առայժմ որոշուած է իւրաքանչիւրին տալ ամսական 20 ռուբլի անձ զլուխ: Աշխատանքներ կը թափուին աւելցնել գումարը, եթէ սակայն դրամական նոր աղբիւրներ գտնուին: Հայաստանի ապահովութեան խորհուրդը յատուկ հեռագիր շրջաբերականներ կ'ուղարկէ բոլոր շրջանները: Գործերը թէւ քիչ մը դանդաղ, բայց հաստատապէս առաջ կը տարւին կանոնաւորելու յոյսով: Պէտք է աշխատիլ որ դուրսէն որքան հնարաւոր է շատ օգնական ուժեր երթան Երկիր, որպէսզի երկրի զինուորներուն վիատութիւն չտիրէ: Առ այժմ զօրակոչին ենթակայ են առաջին հերթին 19-32 տարեկանները. շուտով պիտի կանչուին մինչեւ 40 տարեկանները:

Ընկերներ! Տարին լրացած է, բոլոր մարմինները պէտք է ուղարկեն իրենց հաշիւները եւ անդամներու ամբողջ ցանկերը եւ նորոգեն անդամատետրերը:

Հարկ կը համարենք կրկին շեշտել որ «Ազատամարտ»⁶⁵ գոյութիւնը ներկայիս կենսապէս անհրաժեշտ է Հայաստանի շահերուն եւ արեւմտահայ Դաշնակցութեան պրոպագանդային համար: Յարդ հարկ եղած աջակցութիւնը չէ տրուած ձեր կողմէ թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս: Այդ առթիւ անգամ մը ես կը հրաւիրենք ձեր ուշադրութիւնը:

Օրը օրին հաղորդեցէք մեզ՝ շրջանները պատահած դէպքերուն եւ անցքերու մասին. հնարաւորութիւններ տուէք մեզ լիովին եւ մանրամասն ծանօթանալու երկրի բոլոր պայմաններուն, անցքերուն եւ պահանջներուն:

Հ.Յ. Դաշնակցութեան
Հայաստանի Բիւրոյի կողմէ՝
ԱՄՍՏՈՒՆԻ

12 Յուն[ուար] 1918

65.- 1917-18 բուականներուն, Նիկոլ Աղբալեանի խմբագրութեամբ Թիֆլիս լոյս տեսնող դաշնակցական օրաթերք:

Բ 3.- Հ.Յ.Դ. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Վաճ, 28 յունի[սար 1918]

Հ. Յ.Դ. Վասպուրականի Կեդր. Կոմիտէն նկատի ունենալով ներկայ ճգնաժամային ծանր օրերը՝ գոր կ'ապրի ամբողջ հայրենիքը եւ մասնաւորապէս գրաւուած վայրերու թիւրքահայրենիքը, ինչպէս նաեւ այն խիստ կենսական հարցերը, որոնք օր-օրի սպառնալից կը դառնան, ամսոյ 18-ին գումարեց Վասպուրականի շրջանի շրջանային ժողովը, որուն մասնակցեցան 24 պատգամաւորներ՝ ձայնի իրաւունքով, որոնք ղրկուած էին դաշնակցական ընկերներէ (50 հոգին մէկ պատգամաւոր) եւ մարմիններէ:

Ժողովը տեւեց 2 օր (18-19): Բացման նիստը տեղի ունեցաւ Ամերիկեան միսիոնարութեան ժողովասրահին մէջ, իսկ յաջորդ նիստերը՝ «Ազատութեան լոյս» ընթերցարանին մէջ:

Ժողովին կը մասնակցէին նոյնպէս 28-ի չափ խորհրդակցական ձայնով ընկերներ:

- Օրակարգի հարցերն էին.
 - 1) Զեկուցումներ Կ. Կոմիտէի եւ ենթակոմիտէներու
 - 2) Զեկուցում Կոմիտէի արհեստի
 - 3) Գրաւուած վայրերու կոմիտէի արհեստը, մեր դիրքը դէպի նա եւ մեր ընկերներու մասնակցութիւնը
 - 4) Զինադադարի եւ հաշտութեան հարցերը, մեր դիրքը եւ Հայաստանի վիճակը
 - 5) Ծակատի պաշտպանութեան եւ տեղական զինուորական ուժի կազմակերպութեան հարցերը (միլիցիա, պարտադիր զինուորութիւնը եւլն)
 - 6) Հայ քրդական յարաբերութիւնը
 - 7) Հայկ. կուսակցութեանց փոխյարաբերութեան եւ համագործակցութեան խնդիրը
 - 8) Շրջանային եւ գիւղական վարչութիւնները
 - 9) Հացի ճգնաժամը եւ երկրի պարենաւորումը
 - 10) Կուսակցութեան շարքերու կազմակերպութիւնը եւ միջոցները
 - 11) «Աշխատանք» թերթը եւ երկրի պրոպագանդի անհրաժեշտութիւնը
 - 12) Արեւմտահայ Խորհուրդը եւ իր վերջին կոնֆերանսը
 - 13) Կեդր. Կոմիտէի ընտրութիւնը:

Ժողովը բացաւ Կ. Կոմիտէի կողմէ ընկ. Հմ. Մանուկեանը, որը շեշտելով բոլորի լրջութիւնը եւ այս բացառիկ Ռայոն. ժողովի վրայ ծանրացած բացառիկ պարտականութիւնները՝ մատնանշեց, ի միջի այլոց, Վասպուրականի մենակութիւնը մեր թշնամիներուն առաջ, գտնելով «որ այդ մենակութիւնն է մեր հպարտութիւնն ու մեծութիւնը, որովհետեւ մենք այժմ է միայն, որ կրնանք լարել մեր գերագոյն ճիւղերը վեր հանելով ժողովրդի ստեղծագործ կարողութիւնը՝ հաւատ յայտնեց որ մերը պիտի լինի յաղթանակը»: Ապա ընկերը ողջունելով Ռայոն. ժողովի բացումը՝ առաջարկեց յոտնկայս յարգել մեր դատի եւ հայրենիքի ազատութեան համար մարտնչող եւ ինկող բոլոր հերոսներու յիշատակը:

Ժողովը անցաւ դիւանի ընտրութեան: Միաձայն եւ ծափահարութեամբ պատուաւոր նախագահ ընտրուեցաւ Գրիգոր Բուրաբաբեկ, իսկ նախագահներ՝ Վարդան Առաքելեան եւ Սամուէլ Մեսրոպեան: Քարտուղար ընտրուեցան՝ Մարգար Սոսոյեան, Մանուէլ Օվիկեան եւ Արտաւ. Կոմիտէի անդամներ: Վասպ. Կ. Կոմիտէի գործունէութեան մասին զեկուցում տուաւ ընկ. Գրիգոր Բուրաբաբեկ: Նա մի առ մի եւ ոգեւորութեամբ պարզեց այն պայմանները, որոնց մէջ գտնուած է եղել Վասպ. Կ. Կոմիտէն ու չնայած այդ պայմաններու ծանրութեան՝ հազար ու մի խոչընդոտներուն, գոր յարուցեր է Կ. Կոմիտէի առաջ ցարական ռեֆորմը, ինչպէս նաեւ նոր կարգերու բերումով ստեղծուած՝ մեծ գործերու հանդէպ՝ Վասպուրականի ունեցած թոյլ ուժերուն, այնուամենայնիւ Կ. Կոմիտէն կրցեր է խոշոր ջանքերով կատարել իր պարտականութիւնը՝ ընդառաջ երթալով երկրի ու ժողովրդի կարիքներուն, կազմակերպելով երկրի ինքնապաշտպանութիւնը եւ խոշոր բաժին մը ունենալով կոմիտէի արհեստի աշխատանքներու մէջ՝ իր միջոցներով կազմուած Շրջ. եւ Գաւառ. վարչութիւններու միջոցով: Կ. Կոմիտէն, սակայն, կլանուած ըլլալով վերոյիշեալ գործերով, որոնք բոլորի հրամայականներն էին, չկրցաւ հարկ եղած ուշադրութիւնը դարձնել կուսակցական կազմակերպչական ու պրոպագանդի գործերուն, թողնելով զանոնք ենթակոմիտէներու խնամքին:

Ժողովը թեր ու դէմ կարծիքներէ յետոյ, գնահատեց Կ. Կոմիտէի գործունէութիւնը՝ գտնելով միայն, ընկեր զեկուցողի նման որ Կ. Կոմիտէն հարկ եղած աչալրջութեամբ չէ հետեւած կուսակցութեան ներքին կեանքին ու անոր բարգաւաճման, կլանուած ըլլալով հասարակական այլ եւ այլ խնդիրներով:

Ենթակոմիտէներու զեկուցումը.— Տրուած զեկուցումներէն երեւաց, որ ամենայաջող գործունէութիւնն ունեցած են Դաշտավայրի, Թիմարի եւ Սարայի ենթակոմիտէները: Բայց, առհասարակ, Վասպուրականի բոլոր դաշնակցական խմբերը մասնակցած են կուսակցա-



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

կան հանգանակութիւններուն, կանգ չեն առած գոհաբերութեան առաջ եւ հնարաւոր չափով զինուելով՝ պաշտպանած են իրենց բնակավայրը: Շրջաններու մէջ թոյլ է եղած կուսակցական պրոպագանդը, որու հետեւանքով եւ կա[ղա]ցած է կուսակցութեան գործը: Պարբերական նահանջներն ոչ պակաս ազդած են կուսակցական շարքերու քայքայման: Վերջին կազմակերպութիւնները արդէն գլխաւորապէս սեպտ.-հոկտ. ամիսներուն են եղած: Միայն Դաշտավայրն ունի 90 խումբ՝ 900 անդամներով:

«Հորիզոն», 4 Մարտ 1918, թիւ 46

Կոմիսարիատի գեկուցում.— Կը գեկուցէ կոմիսար ընկ. Կոստի Համբարձումեանը.— Հին կառավարութիւնը գաղտնի համաձայնութեամբ որոշած էր այս երկիրը կցել Ռուսաստանին, սակայն Կերենսկու կառավարութիւնն ստեղծեց Կոմիսարիատը՝ խոստանալով Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի նահանգները հայերուն տալ: Հետեւապէս քանի կոմիսարութիւնը կայ՝ այդ յանձնառութիւնն ալ ի գորտ է: Պէտք է ջանայ այս նահանգները բնակեցնել հայերով եւ աստիճանաբար հայացնել կոմիսարութիւնն ալ: Երբ հասնի այդ ցանկալի օրը, այն ատեն կոմիսարութիւնը իր դերը վերջացած կը համարէ՝ գործը յանձնելով Հայաստանի սահմանադիր ժողովին: Իսկ մինչ այդ՝ այս հիմնարկութիւնը անհրաժեշտ է մեր երկրի համար, ինչքան ալ որ մենք սկզբունքով հակառակ ըլլանք անոր կազմութեան ձեւին (որովհետեւ կոմիսարիատը ընտրովի չէ, այլ վերէն նշանակովի): Մեզ կը պակասեն դեռ հարկաւոր չափով ուժեր, պատրաստած մարդիկ ու դրամ: Սակայն Վասպուրականի կոմիսարութիւնը խորթ չէ եղած ժողովրդին: Շրջ. վարչութիւնը մի տեսակ սահմանադիր ժողով է եղած անոր կողքին եւ արդէն վերջերս, ռուսերու հեռացմամբ պաշտօնեաները գրեթէ ամբողջապէս հայացած էին, մինչդեռ միւս նահանգներու մէջ դեռ հին ռեժիմի մարդիկ են գործի գլուխներ:

Կոմիսարութեան դէմ գացին Կովկասի մէջ մեր հարեւանները, առանձնապէս թուրքերը, սակայն մենք յաջողեցանք յաղթել ամէն արգելքի եւ կոմիսարութիւնը ազատել անոնց ազդեցութենէն՝ կապելով զայն ուղղակի Պետրոգրադի իշխանութեան հետ: Իսկ այժմ, երբ այդ հեղինակաւոր իշխանութիւնն ալ չկայ, մեր թիֆլիսի կոմիսարիատը ինքն է տէր իր գործերուն: Կոմիսարիատը հնարաւոր չափով աշխատած է երկրի ինքնապաշտպանութեան՝ կառավարութենէն ստանալով գէնք եւ կազմակերպելով միլիցիա: Հոգ տարած է նոյնպէս ժողովրդի պարենաւորման՝ Կովկասէն բերել տալով ալիւր, քարիւղ եւն, եւ ցանքսերու համար յատկաց-

նելով սերմացու կամ դրամ: Պէտք է կազմակերպել տեղական ուժերը եւ գործի ղեկավարութիւնը տակաւ անոնց յանձնել, այդպիսով կոմիսարիատը իր դերը կատարած, վերջացած կ'ըլլայ:

Ջանազան հարց պատասխաններէ ետք, ժողովը քննարկեց կոմիսարիատի մասին եղած բանաձեւը, որ եւ անցաւ միաձայն:

Չինադադարի եւ հաշտութեան մասին գեկուցեց դարձեալ ընկ. Կոստիան. ներկայացնելով ռուսական պետութեան ներկայ վիճակը, բուլղարական կառավարութեան թուլութիւնը եւ անոր հանդէպ Գերմանիոյ ամբարտաւան յոխորտանքը, ընկեր գեկուցողը եզրակացուց, որ այս չինադադարի ընթացքին մենք պէտք է ջանանք ստեղծել համապատասխան ուժ, որպէսզի իրաւունք ունենանք կանգնելու մեր թշնամիներու դէմ եւ ըսելու, թէ մենք ինչ կ'ուզենք: Բնաւ մեր ցանկութիւնը չէ նոր նւաճումներ ընել. մենք գէթ պահպանելու ենք ներկան, մեր ձեռքի տակ եղած հողամասը, որու պահպանութեան համար ամէն ինչ թողած՝ պէտք է գէնքի տակ մտնենք:

Ճակատի պաշտպանութեան եւ տեղական զինուորական ուժի կազմակերպութեան մասին գեկուցեց ընկ. Գր. Բուլղարացին: Նա ծանրանալով Արեւմտահայ Խորհուրդի ձախող կարգադրութեան վրայ՝ զինուորական մարմնի ընտրութեան մէջ՝ մատնանշեց, որ դարձեալ երկիրն է, որ պիտի ղեկավարէ իր գործերը ամենախելացի կերպով, որովհետեւ հոն, Կովկասի մէջ նստած մարմինները անընդունակ են վարելու երկրի ճակատագիրը՝ իրենց հրապարակ քաշած ուժերով, որոնք երկրի արտայայտիչները չեն:

Չեկուցումէն վերջ եղան երկար վիճաբանութիւններ, ապա ընդունեցաւ զինուորագրութեան եւ միլիցիայի մասին առաջարկած բանաձեւը:

Հայ քրդական յարաբերութեան մասին գեկուցեց ընկ. Հմ. Մանուկեանը: «Հայ ժողովուրդը այժմ կանգնած է անդունդի մը ստորոտը եւ պիտի իր առջեւ ցցւած բարձր ու սեպ ապառաժէն մագլցելով վեր բարձրանայ: Նա ստիպւած է այս մագլցումի ընթացքին ոտներու եւ ձեռներու յենարաններ, ճեղքեր ու ցցւածներ հնարել այդ ժայռին վրայ, ապա քայլ առ քայլ դիմել դէպի յաջողութեան գագաթը: Ահա այդ յենարաններէն մէկն է քրդը, որ շնորհիւ իր տգիտութեան, կոյր գործիք է եղած մեր թշնամիներուն ձեռքին: Մենք պէտք է մօտենանք աշխատաւոր քրդութեան — ինչպէս անցեալի մէջ ենք ցոյց տուել — եւ բարեկամական յարաբերութիւններ պահելով անոր հետ՝ հակազդենք թշնամիներու սադրանքներուն: Ապագայ Հայաստանի մէջ մենք քրդութիւնն է, որ պիտի ունենանք դարձեալ մեզ հարեւան:



աւելի շուտ քիւրդը կրնայ մեզ բարեկամ ըլլալ՝ քան թուրքը, որ մեր գոյութեան ռիսկերիմ թշնամին է եղած միշտ, մինչդեռ քիւրդը մեզ համար յաճախ անձնւիրութեան ապացոյցներ ալ տւած է:

Այս առթիւ եղան թեր ու դէմ բաւական երկար վիճաբանութիւններ: Ապա առաջարկեցան երկու բանաձեւեր, մէկը թեր, մէկը դէմ: Առաջինի անցաւ 5 ձայնի ընդդէմ:

Հայկական կուսակցութեանց փոխյարաբերութեան եւ համագործակցութեան խնդրի մասին զեկուցեց ընկ. Զաւէնը: Թէ զեկուցողը եւ թէ ժողովականները գտան որ պէտք է համագործակցել հայ միւս կուսակցութեանց հետ, երբ անհրաժեշտ ըլլայ, պայմանով, որ այդ համագործակցութիւնը հիմնուի կուսակցութեանց համեմատական ուժի փոխյարաբերութեան վրայ:

Շրջանային եւ գիւղական, գաւառ. վարչութիւններու մասին զեկուցեց ընկ. Ա. Մաքսապետեանը: Անցեալ փետրուարեան յեղափոխութենէն ետք, երբ պէտք էր հին իշխանութեան տեղ նորը ստեղծել եւ երկիրը ներկայացնել ի՛ր իշխանութեամբ, վանի մէջ ընտրուեցաւ Վասպուրականի Շրջ. վարչութիւնը, որը մի տեսակ ներկայացուցչական օրէնսդիր մարմին էր պետական իշխանութեան կողքին: Սակայն զանազան աննպաստ պայմաններու շնորհիւ, այդ ընտրութեան մասնակցեցան 106 ընտրողներ... Այնուամենայնիւ Շրջ. վարչութիւնը գործի անցաւ, հրաւիրելով ձայնի իրաւունքով ժամանակի քաղաքագլուխ Թէրզիպաշեանը եւ Դանիէլ վարդապետը, իբր հոգեւորական: Խորհրդակցական ձայնով ժողովին մասնակցած են եւ հոսանքներու ներկայացուցիչները, որպէսզի համագործակցութեան սկզբունքը պահած ըլլար: Գիւղերու մէջ եւս ընտրուեցան գիւղական վարչութիւններ, սակայն գաւառական վարչութիւններու կազմութիւնը յետաձգուեցաւ, զանազան արգելափակ պատճառներով: Գիւղական վարչութիւններու մեծ մասն այժմ կազմալուծուած է: Շրջ. վարչութիւնն ալ կարելի չէ ըսել, որ ժողովրդի ներկայացուցչութիւնն է, քանի որ այժմ Վասպուրականի մէջ 27,000 բնակչութիւն կայ, այնինչ 106 քուէով միայն է ընտրուած այդ վարչութիւնը: Հետեւապէս պէտք է ջանալ ժողովրդականացնել այդ վարչութիւնները եւ հնգանդամ ընտրական սիստեմով անմիջապէս ձեռնարկել նոր ընտրութիւններու: Յետ այսու, գաւառական մարմինները պէտք է ընտրեն իրենց կոմիսարները՝ հսկելով անոնց գործունէութեան: Շրջ. վարչութիւնն ալ պէտք է գոյութիւն ունենայ նահանգ. կոմիսարի կողքին՝ իբր ժողովրդական իշխանութիւն, մինչեւ գումարւի մեր Սահմանադիր ժողովը — Հայաստանի բարձրագոյն ներկայացուցչական մարմինը:

Զեկուցումէն ետք եղան երկար վիճաբանութիւն-

ներ, ապա քէտարկուեցաւ եւ ընդունուեցաւ Շրջ. 5 գաւառական] մարմիններու մասին ընկեր զեկուցողի առաջարկած բանաձեւը:

Հացի ճգնաժամի եւ երկրի պարենաւորման մասին զեկուցեց դարձեալ ընկ. Մաքսապետեանը: Նա Վասպուրականի պարենաւորումը երկու շրջանի բաժանեց. ա) Բարեգործականի օրով եղած պարենաւորումը եւ բ) Շրջ. վարչութեան միջով կատարուած պարենաւորումը (վերջին շրջան): Ընկերը չուզելով ծանրանալ առաջին շրջանի վրայ, որու մասին նախորդ Ռայոն. ժողովի մէջ խօսուած էր, անցաւ երկրորդ շրջանին: Նոյեմբեր ամսին Վասպուրականի պարենաւորման գործը անցեր է Շրջ. վարչութեան ձեռքը, ամենադժուար պայմաններու մէջ: Ցանքսը լաւ չէր եղած, ցորեն շատ քիչ կար: Բարեգործականի գնած 10,000 փ. ցորենը չստացուեցաւ հոս: Շրջ. վարչութիւնը չունէր դրամագլուխ եւ փոխադրութեան միջոց՝ դուրսէն հաց ու մթերք ներմուծելու: Ստիպուած՝ Շրջ. վարչութիւնը երկրի մէջ գտնուած հացի յարմար դասաւորութեան եւ բաշխման մասին մտածեց: Նա 59 [?] գիւղերի 6183 [?] չափ ցորեան հաւաքելու որոշումը տուաւ Վասպուրականի հացակարօտ բնակչութիւնը կերակրելու համար: Այդ հացը պէտք էր կենտրոնացուէր պարենաւորման առանձին յանձնախմբի տրամադրութեան տակ եւ հաւասար նորմայով բաշխուէր ժողովրդեան՝ նշանակուած մատչելի գնով: Քաղաքի պարենաւորման գործը յանձնուեցաւ տեղական կոօպերատիւ ընկերութեան: Սակայն բաշխուած քանակութիւնը դեռ չէ հաւաքուած ամբողջապէս: Ասկէ զատ՝ վիճակագրութիւնը լաւ չէ կատարուած: Սակայն ինչ ալ ըլլայ, հացի ներկայ քանակը չի բաւեր Վասպուրականին: Այժմ պարենաւորման յանձնախմբի քովը կայ 2050 չափ ցորեան, շատ-շատ այդ թիւը կարելի է 4000-ի բարձրացնել, որը 6 ամիս չի կրնար գոհացնել Վասպուրականին: Պէտք է Սաւալու եւ այլ տեղեր ամբարած ալիւրները բերել եւ ուժ տալ գարնանացանքսին: Ամէնէն առաջ ներկայիս հաւաքուած հացահատիկը պէտք է փրկել սերմացւի համար, անոր փոխարէն երկիր ներմուծելով Ռուսաստանէն ու Պարսկաստանէն ալիւր կամ հացահատիկ: Միայն վան քաղաքի մէջ օրը 15 չափ հաց կը սպառուի:

Գարնան հողային աշխատանքները չկաղալու համար, ընկեր զեկուցողը կ'առաջարկէր որոշ տարիքի մարդիկ գերծ համարել գինւորութենէ կամ այլ միջոց խորհիլ, որպէսզի յառաջիկայ տարին գէթ Վասպուրականը կարողանայ ինքզինքը պահել, մանաւանդ որ գարնան հաւանաբար նոր-նոր վերադարձողներ պիտի ըլլան Երկիր:

Զեկուցումէն վերջ եղան շատ երկար վիճաբանութիւններ, որովհետեւ հացի խնդիրը կը շահագրգռէր ամէնքը: Խօսեցին շատ գաւառացի պատգամաւորներ:

Քննադատեցին Վանի Կոսպերատիվի փուռը՝ իր հացովն ու 26 կ[ոպէկ] փուռնտի արժէքովը: Գանգատեցին, որ այսինչ գիւղէն հաց շատ է վերցւեր, մինչ այլ գիւղէն քիչ են: Բայց ի պատիւ Վասպուրականի կազմակերպութեան, պէտք է խոստովանել, որ եթէ այս հացահատաւոր եւ հասարակական ամբարը չըլլար, Վասպուրականը կանգնած կ'ըլլար իրական սովի մը առաջ: Առաջիկայի ցանքսը բաւական խոստմնայից է. եթէ դարնանացանքսն ալ նոյն թափով կատարելի, գայիք տարւան Վասպուրականի հացը ապահովւած է:

Վիճաբանութիւններէ ետք՝ անցաւ ընկեր գեկուցողի առաջարկած բանաձեւը:

Կուսակցական շարքերու կազմակերպութեան մասին գեկուցեց ընկեր Ջաւէն Կորկոտեան.— Ժողովը առհասարակ գտաւ, որ Կ. Կոմիտէն զբաղւած եւ կլանւած ըլլալով կառավարական գործերով եւ ինքնապաշտպանութեան կազմակերպութեամբ՝ շատ քիչ ժամանակ է կրցած տալ կուսակցական պրոպագանդին: Եւ որպէս զի այդ թերութիւնը վերջանայ, առաջարկեցաւ եւ ընդունուեցաւ աշխատանքի բաժանում մը ընել նորընտիր Կ. Կոմիտէի անդամներու միջեւ ու կազմի մէկ կամ երկու ընկերները ամբողջապէս զբաղեցնել կուսակցական կազմակերպչական գործերով:

Երեւանի մէջ հրատարակուող «Աշխատանք» թերթի մասին գեկուցեց ընկեր Հմ. Մանուկեանը.— Իբր նախկին խմբագիրը «Աշխատանք»-ի, պատմականն ըրաւ այդ թերթի վերհրատարակման, բացատրեց անոր կարեւոր դերը Կովկասի մէջ, ապա առաջարկեց թերթը փոխադրել Թիֆլիս եւ դարձնել զայն օրգանը գրաւուած Հայաստանի:

Այս առաջարկի դէմ խօսեցան շատ շատերը՝ գտնելով, որ այդպիսի օրգան մը ունի Դաշնակցութիւնը՝ յանձին «Ազատամարտ»ի, զոր պէտք է ուժեղացնել, իսկ «Աշխատանք»-ը պէտք է պահել առայժմ Երեւանի մէջ, ապա հնարաւորութիւն ստեղծել մօտիկ ապագայում զայն փոխադրել Վան, որպէսզի նա կարողանայ Երկրի իսկական արտայայտիչն ըլլալ:

Արեւմտահայ Խորհրդի եւ իր վերջին կոնֆերանսի մասին գեկուցեց ընկեր Սամուէլ Մեսրոպեանը, որ Վասպուրականի Շրջ. Վարչութեան կողմէ պատգամաւոր էր գացած Թիֆլիս, մասնակցելու կոնֆերանսին: Ընկերը մի առ մի բացատրելով կոնֆերանսի մէջ անցած դարձածները, անոր առած որոշումները եւ անկէ բխած մարմիններու գործերը, նիւթ տուաւ երկար եւ բուռն վիճաբանութեան կամ աւելի ճիշտ՝ քննադատութեան: Ընկեր-պատգամաւորը Թիֆլիս կանչւած էր առանց գիտենալու, թէ ինչպիսի խնդիրներու մասին խորհրդակցութիւն պիտի ըլլայ հոն, այնպէս որ Վաս-

պուրականի Շրջ. Վարչութեան կարծիքը չէր, որ նա տարած էր կոնֆերանսին: Քննադատեցաւ Արեւմտ. Խորհուրդը, որ իր դերէն դուրս է ելած, քննադատուեցաւ նա, որ շուտով, ըստ համագումարի որոշման՝ Բ. համագումարը չէ գումարած, քննադատուեցաւ մանաւանդ՝ իր ընտրած Զինուորական Մարմնի համար, ուր սպրդած են գործին անընդունակ ու անհամապատասխան մարդիկ, որոնք այս ճգնաժամի օրերուն, իրենց դանդաղութեամբ կը փայլին՝ թողնելով երկիրը իր ճակատագրին: Մինչեւ օրս դեռ այս Զինուորական Մարմինը չկրցաւ Վանի գիծը ապահովել մինչեւ Սաւալու-Բերկրի, այնպէս որ Վանէն դրկւած միլիցիոններն են այդ գծին հսկողները եւ մինչեւ Սաւալու պահակութեան գացողները:

Այս քննադատութիւններէն ետք, Ռ. Ժողովը տաւ իր յանդուգն ու կտրուկ որոշումը.— Չճանչնալ ներկայիս Արեւմտահայ Խորհուրդն ու իրմէ բխած մարմինները ու չենթարկել անոնց հրամաններուն, մինչեւ գումարելի նոր համագումարը եւ ընտրելի նոր Խորհուրդ:

Վերջին երկու նիստերը նւիրուեցան Կ. Կոմիտէի ընտրութեան: Առաջարկեցան ընտրել 3-9 անդամներ. ընդունուեցաւ եօթ անդամի ընտրութիւնը: Առաջարկուեցաւ նոյնպէս, որ Կ. Կոմիտէի անդամները բնաւ չմասնակցեն կառավարական պատասխանատու գործերուն, այսինքն պաշտօնեայ չըլլան: Սակայն ժողովի մեծամասնութիւնը դէմ գնաց սոյն առաջարկին՝ գտնելով, որ այժմ կառավարութիւնը հայկական է եւ դեմոկրատիկ. հաւանաբար եւ մեր կուսակցութիւնը պիտի ջանայ գործօն մասնակցութիւն ունենալ անոր մէջ՝ ի շահ Երկրին ու ժողովրդին: Սակայն, որպէսզի կուսակցական գործեր երեսի վրայ չմնան, Կ. Կոմիտէն կը կատարէ աշխատանքի բաժանում եւ անդամներէն մէկերկուքը համեմատաբար ազատ կը թողու՝ այդ գործերը վարելու համար:

Ապա առաջարկեցան թեկնածուներ, որոնց շուրջ եղան թեր ու դէմ կարծիքներու փոխանակութիւններ: Ի վերջոյ, գաղտնի քւէարկութեամբ ընտրուեցան՝

- 1) Գրիգոր Բուլղարացի — միաձայն
- 2) Սամուէլ Մեսրոպեան
- 3) Բարունակ Կապուտիկեան (այժմ Երեւան)
- 4) Հմ[այեակ] Մանուկեան
- 5) Լեւոն Շաղոյեան
- 6) Տիգրան Բաղդասարեան
- 7) Ջաւէն Կորկոտեան

Ընկեր Գրիգորը ոգեւորիչ խօսքերով փակեց ժողովը եւ պատգամաւորները բարձր տրամադրութեամբ հեռացան:

Այս վերջին նիստի ատեն, վարժութեան գացող հայ

միլիցիական հարիւրակ մը ժողովատեղիի առջեւէն անցած ատեն (Մեծ-Քէնարչիի հրապարակ) ողջոյնի կանգնեցան փողոցին մէջ եւ ի պատիւ ժողովի՝ «ուռա» աղաղակեցին: Ամբողջ ժողովականները յուզուած դուրս ելան եւ փոխադարձ «ուռա»-ներով ողջունեցին զօրքը: Ընկեր Գր. Բուլղարացին, միլիցիապետ Մուրադ եւ Դանիէլ վարդապետը քաջալերական խօսքերով ոգեւորեցին զօրքը եւ ժողովի անունէն ողջոյններ ուղարկեցին Վասպուրականի մէջ գործող անոնց բոլոր զէնքի ընկերներուն: Ապա «Մեր հայրենիքը» երգելով իրարմէ բաժանեցան:

Ահա ազատ հայրենիք, պաշտպանուած «իւր քաջ որդոց սուրբ արիւնով» եւ ահա այդ հայրենիքի բախտը կռող ազատ շրջանային ժողովը, որը կապուած է այսքան սերտօրէն Երկրի ժողովրդի հետ, ինչպէս հայրը իր որդու: Բախտաւոր ու հպարտ կը զգայի զիս, այդ նւիրական պահուն, որ առիթ կ'ունենայի ականատես լինելու մեր ժողովրդի կորովին ու անձնագոհութեան: Պատիւ Դաշնակցութեան, որ կրցեր է այս աւերակ երկրի մէջ կեանք ու ոգի ստեղծել եւ երէկուան յուսալքուած ու անկազմակերպ ժողովուրդը այսօր կուռ բանակի վերածել ու թշնամու դէմ ճակատեցնել մեն-մենակ:

Ժողովի որոշումները կու տանք յաջորդիւ:

Ա. ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ

«Հորիզոն», 8 Մարտ 1918, թիւ 49

Հ.Յ.Դ. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՆԱՁԵԻՆԵՐԸ

Գիւղական, գաւառ. եւ Շրջանային վարչութիւնները

Շրջ. ժողովը վերահասու լինելով՝
1) Որ գիւղական վարչութիւնները կազմալուծուած վիճակի մէջ են ներկայ զօրակոչի հետեւանքով.
2) Որ գաւառներու համար կոմիսարիատի կողմէ նշանակուած են կոմիսարներ՝ որոնց գործերու մէջ անմիջական մասնակցութիւն չունի տեղական ժողովուրդը.
3) Որ անցեալ մարտ ամսին ընտրուած Վանի Շրջ. վարչութիւնը գործի անցած է ժողովուրդի սահմանափակ քուէարկութեամբ եւ թէ ներկայ Շրջ. վարչութիւնը ի վիճակի չէ ներկայացնելու ամբողջ Վասպուրականը, քանի որ նախապէս ընտրուած անդամները ցրուած ու ծանրաբեռնուած են զանազան պաշտօններով եւ թէ Շրջ. վարչութեան մէջ մտած են

ժողովրդի վստահութիւնը չվայելող անձնաւորութիւններ,

Շրջ. ժողովը կ'որոշէ՝

Ընտրուելիք Կ. Կոմիտէի միջոցով պահանջ դնել, որ հինգանդամեան սիստեմով քուէարկութիւն կատարուի գիւղական, գաւառ. եւ շրջ. վարչութիւններու համար՝ ամենակարճ ժամանակի մէջ,

Վանի Շրջ. վարչութիւնը ներկայացնելով ամբողջ Վասպուրականը, անոր իրաւասութիւն ըլլալու է երկրի բոլոր քաղաքական, հասարակական ու կրթական գործերու բարձրագոյն ղեկավարութիւնը եւ անոր ենթարկուելու են Վասպուրականի մէջ գործող ամէն տեսակի ընկերութիւններ, միութիւններ ու հաստատութիւններ,

Նոյն հիմունքներով կազմուած ըլլալու են նաեւ գաւառ. եւ գիւղական վարչութիւնները՝ իրենց գործունէութեան սահմաններու մէջ:

Կոմիսարիատ

Լսելով Կոմիսարիատի մասին եղած զեկուցումները եւ ընկերներու թեր ու դէմ կարծիքները,

Շրջ. ժողովը կը գտնէ՝

1) Որ Ռուսաստանի ներկայ պայմաններու մէջ անհրաժեշտութիւն լինելով Կոմիսարիատը, ոյժ տալու է անոր՝ ձգտելով քիչ-քիչ ցանկալի ձեւակերպութեան ենթարկել զայն՝ ժամանակի պահանջման համաձայն:

2) Ներկայիս համար պարտադրել Կոմիսարիատը՝ պաշտօններու թիւը սահմանափակել եւ անհրաժեշտ պարագային միայն պաշտօնեայ անուանել՝ ձգտելով օգտուել տեղացի ընդունակ ոյժերէն՝ ըստ պաշտօնի:

Միւս կողմէ Շրջ. Ժ. անհրաժեշտ կը համարէ

1) Իւրաքանչիւր շրջանի կոմիսարի կողքին ունենալ ժողովրդական ներկայացուցչական խորհուրդ, որու գծած ուղղութիւնը գործադրող լինելու է Կոմիսարիատը՝ իր ստորադաս պաշտօնեաներով:

2) Վասպուրականի Կեդր. Կոմիսարիատի կողքին ունենալ Վանի Շրջ. վարչութիւնը՝ նոյն իրաւունքներով, ինչպէս նաեւ Շրջ. վարչութիւնը իրաւունք ունենալու է շրջաններու կոմիսարներ եւ զանազան յանձնախումբեր (section) նշանակելու:

3) Շրջ. ժողովը կը պարտադրէ ընտրուելիք Կ. Կոմիտէին, որ իր կազմը ամբողջութեամբ կամ մէկ մասով անկախ լինի կոմիսարիատի գործերէն:

Կուսակցութիւններու փոխ-յարաբերութիւն

Շրջ. Ժ.-ը նկատի ունենալով, որ հայ իրականութեան մէջ գործող կուսակցութիւնը եղած է Հ. Յ. Դաշնակցութիւնը, մինչ միւս կուսակցութիւնները եղած են



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

միայն հակադաշնակցական հոսանքներ,

Միևս կողմէն՝ նկատի ունենալով, որ մեր կուսակցութիւնը ամէն կերպով կը ջանայ միասնական աշխատութեան, ինչ որ հաստատուած է անցեալի դրական փաստերով,

Շրջ. Ժ.-ը կ'որոշէ՝

Շարունակել իր այդ համագործակցական քաղաքականութիւնը այն չափով, որքան այդ անհրաժեշտ է մեր ընդհանուր գործին համար:

«Կոնտր-ուսուցիչ»-ի* ներկայ գործունէութիւնը

Վասպուրականի գինուորական, հայկական եւ քրդական միջավայրի մէջ գործող «Կոնտր-ուսուցիչ» գործունէութեան մասին տրուած գեկուցումը լսելով եւ նկատելով,

1) Որ «Կոնտր-ուսուցիչ»-ն կասկածելի անհատներով շրջապատուած՝ չափազանց կասկածելի եւ մութ գործունէութիւն մըն է ունեցած ցարդ, յաճախ դէմ երթալով վստահելի անհատներու եւ մարմիններու առաջարկութիւններուն,

2) Որ այդ գործը վարող պատասխանատու անձնաւորութիւնը միապետական եւ լրտեսական յոռի վարչութեան ներկայացուցիչն է,

Ժողովը որոշեց՝

1) Կտրուկ միջոցներ ձեռք առնել այդ հիմնարկութիւնը բարեփոխելու:

2) Ազգայնացնել այդ հաստատութիւնը՝ գործը յանձնելով տեղական Շրջ. վարչութեան՝ կոմիսարիատի միջոցով:

Պարենաւորումը

Լսելով Վասպուրականի պարենաւորման մասին տրուած գեկուցումը եւ նկատի ունենալով գլխաւորապէս այն պարագան, որ Ռուսաստանի ներկայ քայքայուած վիճակի հետեւանքով չի կարելի հաց ներմուծել երկրի մէջ, իսկ միևս կողմէ՝ Վանի պարենաւորման յանձնախումբի տրամադրութեան տակ եղած հացահատիկը խիստ անբաւարար է, Շրջ. Ժողովը կ'որոշէ՝

1) Շարունակել հացի հաւաքումը եւ լրացնել նախապէս իւրաքանչիւր գիւղի բաժին ինկած հացի քանակը:

2) Վասպ. Շրջ. վարչութեան կից կազմուած վիճակագրական

*) Ծ. Խ.— Այս հաստատութիւնը նպատակ ունեցած է որպէս թէ թշնամիի շարժումները լրտեսելու, բայց փաստօրէն ապացուցուած է եղեր, որ հայոց մասին թուրքերուն տեղեկութիւններ տալով էր զբաղուած: Մերոնց սպառնալիքին տակ կոնտր-ուսուցիչական գլխաւորը իր մարդկանցով կը փախչի Վանէն անցեալ փետրուարի սկիզբները:

կագրական բիւրոյի վերջերս կազմած վիճակագրութիւնը համարել անբաւարար եւ գաւառներու կոմիսարներու, գիւղական վարչութիւններու եւ պարենաւորման յանձնախումբի ներկայացուցչի հետ միասին՝ նոր վիճակագրութիւն կազմել՝ հաց չունեցողներու համար, անոնց հաց բաց թողնելով, արդէն որոշած քանակով, այսինքն իւրաքանչիւր անձին՝ ամսական կէս փութ:

3) Խիստ ուշադրութիւն դարձնել գլխաւորապէս քաղաքի բնակչութեան վրայ եւ սահմանափակել հացի սպառման քանակը:

Միևս կողմէն Շրջ. Ժողովը, մտահոգուած յառաջիկայ դարնան դաշտային աշխատանքներու նախապատրաստութեան համար, եւ նկատի ունենալով վերջին տարիներու ընթացքին եղած երկրագործական օժանդակութեան սխալ սխտեմը, ինչպէս նաեւ ներկայ գորակոչի հետեւանքով գիւղական տնտեսութեան քայքայումը՝ կ'որոշէ՝

1) Պարենաւորման յանձնախումբի ունեցած հացահատիկը պահել՝ դարնան սերմացուի համար, առաջարկելով Կոմիսարիատին ու Գիւղատնտեսական Ընկերութեան՝ այդ հացահատիկը փոխարինել Կովկասէն կամ Պարսկաստանէն ներմուծելի հացահատիկով, առանց ուշադրութիւն դարձնելու արժէքին վրայ:

2) Ընտրուելիք Կ. Կոմիտէի միջոցով առաջարկել Զինուորական Մարմին, որ վերջինս Գիւղատնտեսական Ընկերութեան հետ համախորհուրդ՝ կազմակերպեն դարնան վար ու ցանքը, խոտահարքը եւ աշնան հունձքը:

Հայ-քրդական յարաբերութիւն

Լսելով հայ-քրդական յարաբերութեան մասին տրուած գեկուցումը եւ երկարօրէն քննելով երկու տարրերու բարեկամական յարաբերութեանց իրական հիմքերը, Շրջ. Ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեան.

1) Նկատի ունենալով, որ քիւրդերը զուրկ ըլլալով պետական եւ ազգային-կուլտուրական հակումներէ, իբրեւ յետամնաց եւ աշխրջթական տարրեր՝ տարիներ շարունակ կոյր գործիք են դարձած թուրք եւ ապա ռուս բռնապետական կառավարութեանց ձեռքը հանդէպ հայ ժողովուրդի:

2) Որ մենք, իբրեւ յեղափոխական եւ ընկերավարական կուսակցութիւն, մեր ծրագրով եւ անցեալ գործունէութեամբ բնաւ հակառակ եւ թշնամի չենք եղած ինչպէս ուրիշ ժողովուրդներու, նոյնպէս ալ քիւրդի գոյութեան.

3) Որ հայ եւ քիւրդ ժողովուրդները իրենց ընկերային, տնտեսական եւ քաղաքական շահերով շատ մօտ կանգնած են իրարու, ըլլալով հաւասարապէս ենթակայ տիրապետող կառավարութեանց հարստահարութիւն-



ներուն եւ էնթրիկներուն.

Վասպ. Հայ Յեղ. Դաշնակց. Շրջ. Ժողովը կը յանձնարարէ Կ. Կոմիտէին՝ ձեռք առնել բոլոր նպատակաշարմար միջոցներ՝ վերցնելու երկու տարրերու միջեւ գոյացուած արհեստական թշնամութիւնները եւ վարելու շիտակ քաղաքականութիւն մը՝ թոյլ չտալով որ քիւրդ խաղաղ եւ աշխատաւոր ժողովուրդը դառնայ ենթակայ արտաքին թշնամական ձեռնարկներու, ի վնաս ընդհանրապէս գրաւուած Հայաստանի իրաւունքներուն եւ մասնաւորապէս հայ ժողովրդի ազատական տենչանքներուն:

Միլիցիայի կազմութիւնը եւ զինուորագրութիւնը

Վասպուրականի Հ.Յ.Դ. Շրջանային ժողովը լսելով միլիցիայի վարչութեան զեկուցումը եւ ծանօթանալով ընդհանուր գործին, ժողովականներու կարծիքներուն ու տրամադրութեան՝ որոշեց.

1) Ողջունել յայտարարուած զօրակոչը: Շարունակել ուժեղ թափով պարտադիր զինուորագրութիւնը եւ կտրուկ միջոցներ ձեռք առնել՝ զօրակոչի պարտաւորութեան մէջ գտնուողներու վերաբերմամբ անմիջապէս զէնքի տակ առնելով բոլորն անխտիր:

2) Միլիցիական կազմը ենթարկել զինուորական կարգապահութեան եւ ստեղծել զինուորական իշխանութիւն մը՝ պահանջուած իրաւունքներով եւ օրէնքներով: Գործի յաջողութեան համար արգիլել միաժամանակ զանազան հոսանքներու եւ խմբակցութեանց ոտնձգութիւնները:

3) Դիմել Կովկասեան Ազգ. իշխանութեան եւ պահանջել՝ անմիջապէս կազմել այնտեղ զինուորական ընդհանուր գործերը վարող եւ ճակատի պաշտպանութեան պատասխանատուութիւնը ստանձնող բարոյապէս ուժեղ եւ ձեռնհաս մարմին մը՝ կովկասահայ զին-

ուորական ղեկավար ուժերու վստահութիւնը վայելող փորձ զինուորականներէ, առանց արհեստական սահմանային արգելքներու եւ փրկել գոյամարտի կարեւոր եւ պատասխանատու գործը՝ զանազան անձեռնհաս տարրերէ, մերժելով Արեւմտահայ Խորհուրդի առաջարկած անդամներու մասնակցութիւնը, ուր սպրդած են զինուորական արհեստին անտեղեակ եւ նոյն ժողովուրդին վստահութիւնը չվայելող անձնաւորութիւններ:

4) Շրջ. Ժողովը այս պատասխանատու եւ այժմէական գործի առաջ կանգնած՝ կը պարտադրէ բոլոր ընկերները եւ նորընտիր Կ. Կոմիտէն, առաջնութիւն տալ զինուորական գործի կազմակերպման կեանքի մէջ իրականացնել այն որոշումները թէ Վանի եւ թէ արտասահմանի մէջ կանգ չառնելով ոչ մէկ դժուարութեան եւ զոհաբերութեան առաջ:

Շրջ. Ժողովը նոյնը կը հրահանգէ բոլոր անհատներուն եւ մարմիններուն անխտիր, որու յաջողութենէն է կախուած մեր ժողովրդի լինել չլինելու խնդիրը:

Արեւմտահայ Խորհուրդը

Շրջ. Ժողովը լսելով ընկ. Սամուէլի զեկուցումը Արեւմտահայ Խորհուրդի գործունէութեան եւ վերջին կոնֆերանսին կատարած ձեռնարկներու մասին, ինչպէս նաեւ մանրամասնօրէն իրազեկ ըլլալով թրքահայ զինուորական կարգադրութիւններուն, իր անվստահութիւնը կը յայտնէ Արեւմտահայ եւ Հայաստանի Ապահովութեան Խորհուրդներու գործունէութեան:

«Հորիզոն», 10 Մարտ 1918, թիւ 51
«Աշխատանք», 21, 24 Մարտ 1918, թիւ 88 եւ 89

Փաստ. 339-2

Բ 4.– ՅՈՎԱԷՓ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ⁶⁶ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԲԱԳՈՒԻ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ

Բազու, 13 Փետր. 1918

Յարգելի յանձնախմբին,

Երեք օր առաջ հասայ Բազու:

Հասնելուս օրը երեկոյեան զեկուցում տուի Կ. կոմիտէին իսկ յաջորդ օրը Ազգ. Խորհրդին: Տուածս տեղեկութիւնները, Պարսկաստանի արդի վիճակը, հայերի դրութիւնը, յանձախմբի փոխ-յարաբերութիւններն եւ այլն բուռն հետաքրքրութիւն զարթեցրին երկու մարմինների մէջ էլ, մինչ այն աստիճան, որ Ազգ. Խորհուրդը անհրաժեշտ համարեց հեռագրով հարց տալ Թիֆլիսին թէ ինչ հրահանգներ ունեն մեզ համար: Բանն այն է, որ հեռագիրը չի գործում, միայն մի ինչ որ միջոցով հազիւ երբեմն կարեւոր հարցեր են փոխադարձ առաջարկուում: Հրահանգը պիտի տրուի Յ. Քաջազնունու տուած տեղեկութիւններն ի նկատի ունենալով: Վերջինս ներկայ էր իմ զեկուցման ժամանակ եւ յատուկ զննարկով թուրք պատգամաւորների հետ Թիֆլիս գնաց իբրեւ Սէյմի պատգամաւոր:

Ոչ մի մարմնում դեռ դրածս հարցերիս պատասխանը չի տրուել, որովհետեւ ինչպէս երեւում է, ամէն հարց ոչ թէ անմիջապէս է վճռուում եթէ անմիջական չէ, այլ օրակարգի մէջ է մտնում ու իր հերթին վճռուում: Երեւի Ազգ. Խորհուրդում այսօր կը զբաղուեն մեր հարցով:

Ինձ իրաւունք է տրուած մասնակցելու Ազգ. Խորհրդի ժողովներին դրութեան հետ մօտիկից ծանօթանալու: Թէ Խորհրդից եւ թէ իրազեկ անձնաւորութիւններից Կովկասի եւ ժամանակի վիճակի մասին հետեւեալ տեղեկութիւններն եմ ստացել, որոնք շտապում եմ հարորդելու:

Ազգերի փոխ-յարաբերութիւնները Կովկասում, լաւ վիճակի մէջ չէ: Ըստ երեւոյթին համերաշխ գործունէութիւնը ներքուստ հակամարտ գործունէութիւն է ծածկում: Թուրքերը իրենց ճնշող մեծամասնութեամբ Թուրքիայի կողմն են եւ ամէն կերպ աշխատում են նրան Կովկաս բերել: Այդ նպատակով էլ նրանք առաջ բերին Գանձակի եւ այլ վայրերի խուճկութիւնները, ձգտելով մի կողմից կարելիին չափ լաւ զինուել, միւս կողմից խանգարել հայերի կազմակերպութեան: Նրանք շատ լուրջ կերպով կազմակերպուած են թէ զինական, թէ զրամական եւ թէ ֆիզիկական: Էպպէս Կովկասի տէրերը նրանք են, որովհետեւ դեռ շատ վաղուց է, որ

զաղտնի կազմակերպում են, ունեն թնդանօթներ, հարուստ ռազմամթերք, հաց եւ փող: Կազմակերպել են կորպուսներ, սակայն ոչ թէ հայերի պէս հրապարակալին ձեւով, այլ գաղտնի:

Թուրքերի մէջ, համիլաւական լինելով հանդերձ, տաճիկների Կովկաս մտնելուն հակառակ են բուրժուա տարրերը միայն, որոնք երկիւղ են կրում իրենց հարստութիւնը կորցնելուց: Այդ խնդրում անորոշ դիրքի մէջ են ձախ թեւերը, որոնք բաժանուած սոցիալիստական բոլոր կուսակցութիւնների մէջ, ուժեղ պայքար են մղում իրար եւ բուրժուա ու կալուածատէր տարրերի դէմ: Այդ պայքարի հետեւանք է եղել նրանց Բազուի Ազգ. Խորհրդի վերընտրութիւնը, ուր անցան սոց. յեղ. եւ սոցիալիստ անդամներ: Համիլաւական եւ բուռն հակահայ տրամադրութիւն ունեցող կովկասեան թուրք Ազգ. Խորհուրդը դեռ մնում է իր տիրապետութեան մէջ եւ առ այժմ գոնէ յեղափոխութեան հաւանականութիւն չի երեւում:

Բազում — թուրքերի այս կեդրոնում — յարաբերութիւնները հայերի եւ թուրքերի մէջ լուրջ է, բայց փոխադարձ դիպլոմատիկ: Հայերն անկեղծօրէն ցանկանում են համերաշխ ապրել եւ որեւէ ընդհարման առիթ չտալ, իսկ թուրքերը զգուշանում են այստեղ կեդրոնացած հայկական ոյժերից: Կան 3000 զինուոր, մօտ 2000 կամաւոր Համոյի եւ Վարդանի⁶⁷ ղեկավարութեամբ, որեւէ ղէպքի ժամանակ մի քանի հազար էլ ինքնապաշտպաններ դուրս կը տան:

Զինուորակ. սեկցիայից ասեցին, որ հայերի համար շատ հեշտ է Բազու-Թիֆլիս ուղին բաց անել, բայց զգուշանում են ընդհարման առիթ տալուց:

Հայ-վրացական յարաբերութիւնները մասին հետեւեալ բնորոշումը տուին. «Ամենալաւ ղէպքում նրանք հայերի դէմ դուրս չեն գայ»: Այդ նշանակում է, որ նրանք հակուած են աւելի ղէպքի թուրքերը քան հայերը: Հայ-ռուսական յարաբերութիւնները վերջերս աւելի մտերմանում են: Դաշնակց[ութիւնը] մօտենում է բուր-

66.- Յովսէփ Յովհաննիսեան (1881-1975) – պարսկահայ կուս. գործիչ, հիմնադիր պարսկահայ շարք մը թերթերու, խմբագիր Թեհրանի «Ալիք»ին:

67.- Համագասպ Սրուանձտեանցի եւ Խանասորի Վարդանի (Մեհրաբեան Սարգիս):

չեւիկներին եւ համագործակցութեան քայլեր է անում: Մի ամսից աւելի ժամանակով կտրուած լինելով Թիֆլիսի հետ, մանրամասն տեղեկութիւններ չունին այնտեղից եւ հայկական վայրերից, ինչպէս եւ ճակատից: Այսօր քանր միայն պարզ է որ հայերն ուշացան կազմակերպւելու մէջ, կամ աւելի ճիշտն ասած թուրքերը խանգարեցին եւ հասան իրենց նպատակին: Երկաթուղային յարաբերութիւնների խզումը մի կողմից, աւազակային շարժումները միւս կողմից թոյլ չտուին ծրագրուած երկու կորպուսը կազմելու. մէկը հազիւ է կազմուել, որովհետեւ հայ զօրքի մեծամասնութիւնը ցանկանում է իր հայրենիքում, իր ծննդավայրում լինել, քան ճակատում, եւ պաշտպանել իր ընտանիքը: Յետոյ ոյժերը կտրուած են իրարից: Օր[ինակ] հիւսիսային Կովկասում, ռուսական Ֆրոնտում շատ ոյժեր կան, բայց միջոց ճանապարհ չունին Կովկաս գալու: Այժմ որոշուած է Արմաւիր, Թուրքապէ-Բաթում գծով բերել: Այստեղից էլ այդ գծով են գնում: Մոսկովայից, Պետրոգրադից այստեղ են հասել ուսանողների, բժիշկների խմբեր, 450 տաճկահայ գերիներ, բայց ստիպւած են մնալ:

Այդ բոլոր հանգամանքները թոյլ չտուին ցանկալի չափով եւ անհրաժեշտ արագութեամբ կազմակերպել ճակատը: Հազիւ 10-15 հազար զինուորներ են հասել ճակատ, որովհետեւ ճակատն ու թիկունքը անսպասելի կերպով փոխել են իրենց դիրքերը եւ այսպէս ասած Ֆրոնտը՝ թիկունք է համարուել եւ ընդհակառակը: Այդ է պատճառը երեւի որ 3 օր առաջ ստացուած լուրերի համաձայն, դատարկել են Երզնկան եւ Բայբուրթը: Երէկ լուր ստացուեց Թիֆլիսից, որ թուրք զօրքն սկսել է արշաւել եւ գրաւել է Մամախաթունը. վտանգ է սպառնում էրզրումին, որը պաշտպանելու համար Ազգ. Խորհուրդը գերմարդկային ճիգեր է գործադրում: Խորհրդի աչքի ընկնող անդամները Կարս, Երեւան, Ալեքսանդրապոլ են գնացել պաշտպան ոյժեր հասցնելու էրզրում, Վան եւն:

Այդ լուրերը տրամադրութիւնը խիստ ընձկել են, կասկածում են, որ կարելի կը լինի պաշտպանուել: Աւելի ապահով է համարուում Վանը, իբրեւ հայկական հոծ բազմութեան շարունակութիւն: Տեղեկութիւն ստացած կը լինէք անշուշտ, որ Լենինը համաձայնել է գերմանական բոլոր առաջարկներին հաշտութեան, բայց եւ այնպէս գերմանական զօրքերը առաջ են շարժուում: Կասկածում են, որ այս քանի օրս, Պետրոգրադն էլ կ'անցնի նրանց ձեռքը:

Հաւատարիմ իր դաշնակցի քաղաքականութեան, թուրքիան եւս առաջ է շարժում իր զօրքերը եւ միաժամանակ հաշտութեան առաջարկ անում: Կովկասի կոմիսարիատը համաձայնել է եւ որոշուած է ամսիս 17-ից հաշտութեան բանակցութիւններ սկսել Տրապիզոնում: Հայերը ոչ մի յոյս չունեն դրա վրայ: Ամենալաւ դէպքում հայերը համաձայն կը լինեն տալ Տաճկահայաստանը:

տանը: Դրութիւնն այնքան ահաւոր է, որ մտածում են եթէ Կովկասի հայութիւնը փրկենք մեծ բան է եւ այդ պատճառով ստիպուած են հնարաւոր զիջումներն անել գոնէ այդ նպատակին հասնելու: Մոռացայ խօսելու քրդերի մասին: Ճիշտ է նրանք եւս շատ վնասներ են կրել, բայց այդ կորուստները նրանց համար մի պիւս են եղել — այն որ առաջ են բերել բացարձակ ազատ զինուած ոյժեր: Ոչ ընտանիք ունին, ոչ կապեր, միայն աւագակութեան համար են պատրաստ: Նրանք կապուած են տաճիկների եւ թուրքերի հետ...

Հայերի զինական ոյժերն այնքան էլ լաւ չէ: Ճակատից հեռացող զօրքերը⁶⁸ իրենց հետ տանում են զէնքն ու ռազմամթերքը, նոյնիսկ թնդանօթները, եւ ճանապարհին թուրքերի յարձակման ենթարկւելով զինաթափ են լինում: Մանրամասն տեղեկութիւն չկայ թէ հայերի ձեռքը որքան զէնք եւ պարենաւորում է ընկել: Յամենայն դէպս բաւարար չի համարուում:

Այստեղի վերաբերմամբ պարենաւորումը լաւ է, հայ զօրքը եւ կամաւորները 4 ամսով ապահովուած են: Զէնքը պակաս է: Գրուել է Բարեթովին, բայց նա յայտնել է, որ ոչինչ չունի: Կարո՞ղ էք արդեօք որոշ չափով աջակցել: Այդ մասին լուրջ պիտի մտածել:

Դրամականի խնդիրը նոյնպէս ծանր է: Կառավարութիւնը միջոցներ չունի. հայ զօրքերն ու կամաւորները մի կերպ ետրա են գնում թէ կառավարութիւնից ստանալով, թէ հանգանակութիւնից եւ թէ կողմնակի միջոցներից: Բայց բանն այն է, որ փող չկայ. գործը կատարուում է չէքերով, որ յամենայն դէպս փող չէ: Առաջարկում են մեզ չէքերը տանել եւ պատրաստի փող հասցնել: Կարո՞ղ ենք արդեօք այդ աջակցութիւնը ցոյց տալ:

Բոլուն հետաքրքրութիւն է զարթեցնում պարսկ. Ֆրոնտի պահպանութեան խնդիրը, բայց ի հարկէ ոչ մեր ոյժերով: Այդ մասին դեռ որոշ չեն արտայայտուել:

Գաւառների դրութիւնը այնքան էլ վատ չէ: Ալեքսանդրապոլ, Երեւան, Կարս, Թիֆլիս լաւ են: Շուշին բաժանուած է հայ եւ թրքական մասերի եւ փոխադարձ հսկում են իրար: Մօտիկ քոչուորների շարժումը որոշ երկիւղ է ներշնչում: Հայերը ցանկութիւն ունին առաջարկել, որ զինաթափ լինեն եւ ապա լեռները բարձրանան: Ասկերանը հայերը պահում են:

Գանձակի նահանգից շատ հակասական տեղեկութիւններ են գալիս, բայց դեռ որոշ բան չկայ. յոյս ունեն, որ այնտեղ եւս ոչինչ չի լինի, եթէ միայն թուրք զօրքը շատ առաջ չգայ: Ռուս էշէլոնները⁶⁹ սկսել են դիմադրել աւազակախմբերին եւ ըստ լուրերի վերջին ընդհարման ժամանակ 1500 թուրք են ջարդել: Մէյր բացւելու է Թիֆլիսում կարծեմ այսօր: Իւրաքանչիւր կու-

68.- Խօսքը ուս զօրքերու մասին է:
69.- Զօրաշարերը:

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

սակցութեան տրուած է իրաւունք նշանակելու 3 անգամ աւելի անդամներ: Դաշնակց[ութիւնից] ընտրուած են 9. տալու է 27 հոգի: Մերոնք բողոքում են դրա դէմ եւ պահանջելու են կրկնակին, ոչ եռակին:

Զմոռանամ յիշել, որ հաշտութեան (անջատ) առաջարկը ընդունուել է եւ ընդունուում է երեք ազգերի կողմից եւս համակրանքով: Այդ մի առանձին ազգեցութիւն չի գործել եւ չի գործում: Բոլորը կողմնակից են խաղաղութեան: Ահա մեր այն բոլոր հարցերի պատասխանը, որ յայտնեցին ինձ Ազգ. Խորհրդում եւ ուրիշ

աղբիւրներ: Կիսատ եւ ոչ լրիւ, բայց դրանից աւելին չկայ: Մտադիր եմ անցնել Թիֆլիս, թէեւ վտանգաւոր է: Եթէ ընկերներից գնացող լինի կ'ընկերակցեմ. այնտեղ շատ աւելի լրիւ տեղեկութիւններ կարելի էր ստանալ, մանաւանդ դիպլ. յարաբերութիւնների մասին, որից այստեղ շատ քիչ բան գիտեն: Աւելի մանրամասն կը գրեմ կամ յաջորդ փոստով եւ կամ անձամբ, եթէ անհնար լինի Թիֆլիս անցնել:

Բարեկներով՝ ՅՈՎՍԷՓ

Բ 5.- ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՎԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

Վանի ընկերներին,

Սիրելիք!

Ձեզնից բազմաթիւ նամակներ եմ ստացել եւ ոչ մէկին կարծեմ հնարաւոր չեղաւ պատասխանել: Լրագիրներից կ'իմանաք վերջին անցուդարձը: Ես ուզում եմ միայն ստեղծւած կացութեան մասին մի քանի գործնական թելադրութիւններ անել ձեզ:

I- Լրագիրներից եւ նամակներից կը տեսնէք, որ Կովկասը ահաբեկւած եւ խուճապի է մատնւած, սրա պատճառը փնտռելու էք ոչ թէ թշնամու գերագանց ուժերի մէջ, այլ մեր ներքին կացութեան մէջ. զօրքը անբարոյականացել է. տուն փախչելու Ֆիզիխօզը⁷⁰ հասել է ծայրայեղութեան. սրա դէմ վերջերս միջոցների դիմեցինք, կիրարկելով մահաւան պատիժը, եւ աջ-ձախ սկսել ենք զարգել, առաջին տպաւորութիւնները լաւ է: Այս լքածութիւնը մեծապէս ազդեց ֆրոնտների վրայ. հրաման են տւել ետ քաշել. երեւի, նոյնը կ'անեն եւ ձեզ:

Քաջ ծանօթ լինելով թուրքերի վիճակին՝ կարծում եմ, որ դուք այժմ ինձանից լաւ գիտէք այդ. պէտք է տեղի չտալ, գէթ պաշտպանել Ալաշկերտ-Վան հողամասը, թիկունքը լաւ ամրացնելու պայմանով:

Այժմ, մեղաւորներ որոնելու ետեւից չընկնենք. այսօր միայն իմացէք, որ այստեղ մի չնչին փոքրամասնութիւն, դարձեալ հերոսական ճիգեր է անում, որ ոեւէ կերպով նոր ուժեր հասցնենք ճակատ: Ես անձամբ հաւատացած եմ, որ այդ մեզ կը յաջողի, միայն թէ դուք դիմացէք:

II- Վանի պրիզադային ձեր հրահանգի համաձայն թոյլ չտւի, որ շատ մարդ վերցնի. մօտ 1500 գէնք եւ 4000 կոմպլէկտ հագուստ ունենք պատրաստ ձեզ համար: Ես կարող եմ հասցնել մինչեւ Իգդիր. աշխատեցէք այնտեղ բեռներով եւ ոեւէ կերպ ներս քաշել:

Ալաշկերտի Ղարաքիլիսէն փամփուշտ կայ մոսինի. աշխատեցէք այնտեղից էլ օգտուել:

Այնտեղ մօտ մէկ միլիոն պատրաստի փամփուշտ կայ ձեզ համար:

Խիստ եղէք դասալիքների եւ դաւաճանների վերաբերմամբ:

Վանի պրիզադայի պետը մի լաւ մարդ եւ հրաշալի ու փորձառու պոլկովնիկ⁷¹ է, ներկայացրւած է գեներալութեան, կամ դէպքերի պատճառով չի ստացել. շատ պիտի սիրէք, հոգով հայ է եւ տղամարդ. ինքն էլ դարաբաղցի է իսկական տիպով: Շուտով կը պատրաստենք եւ թնդանօթածիզներ. արդէն հեռագիրներ ունենք, որ սպաներ են գալիս, այնպէս որ դրանց հետ ուսաստանայեր

կը դնենք եւ կ'ուղարկենք անմիջապէս ձեզ:

III- Իմ կարծիքով V պոլկի⁷² աւերորդ գէնքեր եւ ինչքեր ձեզ թողնելով, վերցնելով եւ լաւ սպաներին՝ միւսներին պիտի թողնել, որ ռազ լինեն⁷³. այդպէս էլ ես պիտի աշխատեմ այստեղ:

IV- Դրամի համար ամէն կերպ աշխատեցինք, որ մի գումար հասցնենք. այդտեղից փոխեցա՞ք՝ քաշեցէք՝ հոս վճարենք ընտանիքներին:

V- Շուտով ներկայացրէք ձեր գինւորների ընտանիքների անդամների թիւը, գինւորների իրենց անունների հետ, որ ամսականներ կապենք. երեւի գիտէք, որ տուն մնացող մարդագլուխ, մեծ ու փոքր, աղքատ կամ հարուստ ստանալու է ամսական 20 ռուբլի:

VI- Սուրհանդակներ հանեցէք մինչեւ Երեւան. ուրիշ կերպ լուր առնել կամ տալ անհնարին է:

VII- Կովկասը մեծ ճգնաժամ է ապրում. հայ-թիւրքական ո՛չ թէ ընդհարում, այլ պատերազմ է սկսւել. Վրաստանը մեզ էլ, իրեն էլ խայտառակեց. սկզբից հակառակելով մոբիլիզացիային⁷⁵, հիմա խուճապով սկսել են գինւոր հաւաքել:

Նահանգ նահանգ[ի] հետ կապ չունի. մի ամիս է թիֆլիսից լրագիր կամ փոստա չենք ստանում:

Բազում եւ Շուշու կողմերը դրութիւնը ծանր է. դեռ ընդհարումներ չկան, բայց օրէ օր սպասում է. մերոնք լաւ կազմակերպւած են:

Պօլկեր կան Շուշի, Գանձակ, Նուխի, Բազու եւ այլն: Եւրոպական բեմից լուր չունենք: Անգլիացիք, ըստ երեւոյթին, Երուսաղէմի կողմերը յաղթանակներ են տարել:

Գերմանիացին, ըստ լուրեր[ի], գրաւել է Օդեսա, Կիւեւ, Խարկով, Մոսկուա, Պետրոգրադ եւ այլն⁷⁶:

Հիւսիսային Կովկասից հաց չենք ստանում. զօրքը պահում ենք ազգային միջոցներով: Երեւան քաղաք տւել է մէկ միլիոն ռուբլի: Հացի գինը խալվարը (30 փուլթ) 1500 ռուբլի է. սկսել են բրինձի եւ ցորենի[ի] խառն հաց թխել զօրքի եւ ժողովրդի համար:

Թալան, գողութիւն եւ սպանութիւններ աջ ու ձախ լեցւած է:

Եկողները աւելի լաւ են պատմում ձեր շրջանի մասին, այնպէս որ մենք նախանձում ենք ձեզ:

Լեւոնին⁷⁷ ասացէք, որ 500 ռուբլին ուղարկել եմ...

Շատ եւ շատ բարեկենդրով
ԱՐԱՄ

6 մարտ 1918, Երեւան
(Բնագիր օրինակը Հ.Յ.Գ. Փարիզի թանգարան (այժմ՝ Երեւան):

70.- Հոգեբեկում, յաճախանք:
71.- Գնդապետ. նկատի ունի Պաւել Բէկ Փիլոմեանը:
72.- Գունդ:
73.- Հեռանամ:
74.- Վճարագիր, դրամատոմային ապահովագիր:

75.- Զօրահաւաքին:
76.- Շրջան ընող տարածայնութիւնները չէին համապատասխաներ, անշուշտ, իրականութեան:
77.- Լեւոն Շաղոյեան (1887-1974):

Փաստ. 339-3

Բ 6.- ՌՈՍՏՈՍԷՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԵԻՆ

3-IV-1918, Բագու

Սիրելի ընկերներ,
Վաղուց է կտրւած ենք իրարից: Տիկին Ջապէլը⁷⁸ ձեզ կը պատմէ մեր վիճակի մասին: Թէեւ դա մինչեւ տիկնոջ Եգիպտոս հասնելը պատմական դառած կը լինի:
Տիկինը իր հետ բերում է «Վշտապատում»ի⁷⁹ նիւթերը: Պէտք է օգտւել լայն պրոպագանդի համար: Տիկինը ինքը կ'աշխատի: Յոյս ունեմ որ հարկ եղած դիւրութիւնները չէք զլանալ:

Ձերմ ողջոյններով՝
ՌՈՍՏՈՍ

Փաստ. 339-4

Բ 7.- ՌՈՍՏՈՍԷՆ ԹԵՀՐԱՆԻ Կ. Կ.ԻՆ

3-IV-1918, Բագու

Սիրելի ընկերներ,
Թեհրան է գալիս Եւրոպա անցնելու նպատակով տիկ. Ջապէլ Եսայեանը:
Նա կը պատմէ ձեզ այստեղի վիճակի մասին: Շատ պիտի խնդրէի չզլանալ նրան ձեր ձեռքից գալիք աջակցութիւնը:

Ձեր՝ ՌՈՍՏՈՍ

78.- Հանրաձայնօք գրագիտուի Ջապէլ Եսայեան (1878-1943):
79.- Պաքուի Հ.Յ.Դ. կազմակերպութիւնը 1916 թուականէն սկսեալ ձեռնարկած էր՝ Անդրկովկասի տարբեր շրջաններուն մէջ ապաստան գտած արեւմտահայ գաղթականներէն վկայութիւններ հաւաքել հայկական կոտորածներուն մասին: Գրագիտուի Ջապէլ Եսայեանի միջոցաւ ուղարկուած հաւաքածոյի նիւթերը սահմանուած էին «Վշտապատում» անունով հատորի մը հրատարակութեան (Տես «Վշտապատում» – Հայոց Մեծ Եղեռնը ականատեսների աչքերով», կազմողներ՝ Ա. Վիրաբեան, Գ. Աւագեան, Երեւան, 2005: Տես նաեւ նոյնի ամբողջական հրատարակութիւնը երեք հատորներով. «1915 – Հայոց Յեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում – Վերապրողների վկայութիւններ, փաստերի ժողովածու», Երեւան 2012, Հայաստանի Ազգային արխիւի հրատարակութիւն):

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Ատրպատականի շրջանին մասին խօսել է առաջ, հարկ է համառօտ կերպով անդրադառնալ պատերազմի տարիներուն Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական ընդհանուր կացութեան:

Ծանօթ է որ հայասպանութեան հետեւանքով Օսմ. կայսրութեան ամբողջ տարածքին չկար այլևս նախապատերազմին գոյութիւն ունեցող կուսակցական-կազմակերպական կուռ ցանցը:

1915 թ. Սեպտեմբերի վերջերուն, երբ Պուլկարիա՝ Գերմանիա-Աւստրիա-Թուրքիա զինակցութեան միանալով՝ պատերազմ յայտարարեց դաշնակից երկիրներուն դէմ, կասեցուց նոյնպէս Պալքանեան Կեդր. կոմիտեութեան (Պուլկարիա եւ Ռումանիա) գործունէութիւնը:

Երբեմնի 12 Կեդր. կոմիտեութիւններ հաշուող Կովկասի կազմակերպութիւնը թէւ կը մնար գործօն վիճակի մէջ, սակայն կլանուած էր ամբողջովին պատերազմով եւ մանաւանդ կամաւորական շարժումով: 1917 թ. փետրուարեան յեղափոխութիւնը միայն առիթ պիտի տար զբաղելու կազմակերպական գործերով, որոնց մասին, ինչպէս տեսանք, շատ քիչ փաստաթուղթեր հասած են Դաշնակցութեան կեդրոնական արխիւին:

Հետեւաբար, կազմակերպական շրջաններուն յատկացուած այս բաժինը պիտի ընդգրկէ սակաւաթիւ երկիրներ միայն,՝ Պարսկաստան (Ատրպատական եւ Թեհրան), Եգիպտոս եւ Միացեալ Նահանգներ:

ԳԼՈՒԽ IV

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի հիւսիսը գտնուող Ատրպատական նահանգը (պարսկերէն Ազրայճան) ուներ խառն բնակչութիւն. կողք կողքի կ'ապրէին պարսիկներ, թուրքեր, քիւրտեր, ասորիներ եւ հայեր. վերջինները, որ այդ օրերուն կը կազմէին պարսկահայութեան մէկ կարեւոր հատուածը, բնիկ էին եւ հաստատուած Ուրմիոյ լճին շրջակայ գաւառներուն եւ Թարիզի մէջ: Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան առաջին տարիներէն արդէն, շրջանը օժտուած էր կուսակցական կուռ կազմակերպութեամբ: Թարիզ քաղաքը կեդրոն ունենալով՝ նահանգին մէջ կը գործէր Վրէժի կամ Վրէժատանի Կեդր. կոմիտեութիւնը, որուն գլխաւոր առաքելութիւնը կը կայանար դէպի Երկիր զէնք-զինամթերք եւ մարտական ուժեր հասցնելու մէջ: Ան տիրական ներկայութիւն էր միաժամանակ շրջանի ազգային, կրթական եւ հասարակական կեանքին մէջ: Ատրպատական գործօն մասնակցութիւն ունեցած էր Պարսկաստանի սահմանադրական շարժումներուն մէջ: 1911-ին, սակայն, շրջանի բնակչութեան կեանքը խռովուեցաւ, երբ ռուսական զօրքը ներխուժեց եւ գրաւեց Թարիզը: Ռուսերը խիստ բռնակալութիւն հաստատեցին՝ հալածանքի ենթարկելով պարսիկ ազատական ղեկավարները, անոնց կարգին դաշնակցականները, որոնցմէ շատեր ստիպուեցան ժամանակաւորապէս հեռանալ երկրէն:

Ընդհ. պատերազմի բռնկումէն ետք, Ատրպատական եւս դարձաւ ռուս-թրքական բախումներու քառերկուս. թուրք զօրքի ներխուժումը Ուրմիոյ շրջանին մէջ, անոր հետեւող քիւրտերու ասպատակութիւնները հայ ու ասորի զիւղերու վրայ՝ վերստին սարսափի մթնոլորտ առաջացուցին շրջանին մէջ, տեղույն քրիստոնէայ ազգաբնակչութիւնը մղելով դէպի արտագաղթ: Տազնապալի այս կացութիւնը ժամանակի մը համար որոշ բարելաւում պիտի ճանչնար շնորհիւ Ռուսիոյ մէջ տեղի ունեցած փետրուարեան յեղափոխութեան, ինչ որ առիթ պիտի ընծայէր հայերուն վերականգնելու իրենց կուսակցական եւ ազգային-հասարակական կեանքը: Կարճատեւ եղաւ, սակայն, այդ դադարը. Հոկտեմբերին վրայ հասնող բոլշեւիկեան յեղաշրջումը, պատերազմը դադրեցնելու որոշումը եւ զինուորներուն ուղղուած տուն-դարձի կոչը՝ առաջ պիտի բերէին ռազմաճակատին քայքայումը եւ զանգուածային նոր գաղթեր:



Փաստ. 479-56

Ա 1.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԱՆՑՔԵՐԸ 1906-1918 ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Տեղեկագիրը ընդհանուր ակնարկ կը նետէ վերոյիշեալ թուականներուն տեղոյն թրքացեղ ժողովուրդին եւ քիւրտներուն կողմէ հայերուն եւ ասորիներուն դէմ գործուած բռնարարքներուն վրայ: Փաստաթուղթը ստորագրութիւն եւ թուական չի կրեր. միայն անոր կցուած ծանօթագրութիւն մը կը յայտնէ «խապանական հիւպատոսի կողմից յանձնախմբին ուղղուած նամակի պատճէնն է, որի տակ ստորագրել է ընկեր Գ. Չ.ը»:

Յիշեցնենք որ պէտք է զանազանել թուրքն ու տաճիկը, որոնցմէ առաջինը հիւս. Իրանի Ատրպատականի ընկի թրքացեղներն են, իսկ երկրորդը բուն Թուրքիոյ, այլ խօսքով Տաճկաստանի թուրքերը:

Քրիստոնէայ եւ մահմեդական ժողովուրդներին փոխադարձ յարաբերութիւնները Ատրպատականում եւ ամբողջ Պարսկաստանում մինչեւ եւրոպական պատերազմը կարելի է բաժանել երկու շրջանների

- ա) Նախայեղափոխական
- բ) Յեղափոխութիւնից յետոյ:

Մինչեւ 1906 թուականը հայ եւ ասորի ազգերը ենթակայ էին այն բոլոր հարստահարութիւններին ինչ որ յատուկ էր Պարսկաստանի ամբողջ ազգաբնակչութեան առանց կրօնի խտրութեան. սակայն քրիստոնէաները հովաւորուած լինելով զանազան եւրոպական միսսիաների կողմից մի առաւելութիւն ունէին, այն որ ծայրայեղութիւնների չէր դիմուած հարստահարութիւնների ընթացքում պետական անձանց եւ վարչութիւնների միջոցով, եւ մի րոպէ այն տպաւորութիւնն էր ստացուած, որ կարծես քրիստոնէայ տարրը աւելի արտօնութիւններ ունի քան թուրք գիւղացիութիւնը: Բուն թուրք ժողովուրդը կրօնական ատելութիւնից դուրս ոչ մի այլ տեսակի հակակրօնութիւն ցոյց չի տուել դէպի քրիստոնէայ տարրը եւ նրանք ապրում էին կողք կողքի Մակուից սկսած մինչեւ Երրագ, Համատանից սկսած մինչեւ Մեշէդ, խաղաղ եւ առանց որեւէ թշնամական զգացումների: 120 հազար հայ եւ ասորի ժողովուրդները ցրուած էին ամբողջ Պարսկաստանում եւ ամէն վայրերում էլ կազմել են չնչին փոքրամասնութիւն 10 միլիոն մահմեդականութեան մէջ, սակայն ոչ մի թշնամական դէպք յայտնի չէ մեզ մինչեւ վերոյիշեալ թուականը:

Չարիքը այդ ժամանակաշրջանում համարուած էին քրդական աւազակախմբերը, խանական ճնշումները եւ կառավարական պաշտօնեաների հարստահարութիւնները. իսկ այդ երեքից էլ հաւասարապէս տուժում էր եւ քրիստոնէայ եւ մահմեդական խաղաղ գիւղացիութիւնը, քաղաքների արհեստաւորութիւնն ու վաճառականութիւնը: Արդար լինելու համար պէտք է խոստովանել, որ շատ անգամ հայերը աւելի քիչ էին տուժում, շնորհիւ իրենց ինքնապաշտպանութեան, կուլտուրական ու գիտական միջոցների, ասորիները՝ շնորհիւ Ֆր-

րանսիական եւ ամերիկեան միսսիաների ցոյց տուած բարոյական պաշտպանութեան, իսկ անպաշտպան ու յետամնաց մահմեդական ժողովուրդը ոչ մի պաշտպանութեան միջոց եւ հնարաւորութիւն չունէր:

Այսպէս էր դրութիւնը մինչեւ 1906 թիւը, մինչեւ պարսկական յեղափոխութիւնը: Այդ յեղափոխութիւնը պարսիկ փոքրաթիւ մտաւորականութեան արթնացման եւ տիրող կարգերի դէմ բողոքելու ցանկութեան մի ակտ էր: Ժողովուրդը միայն արձագանգում էր առանց խորին գիտակցութեան: Բոլորն էլ զգում էին, որ պէտք է փոփոխել եղած վիճակը, բարեխաւք դրութիւնը. այդ պատճառով էլ այդ շարժումը արձագանգ էր գտնում ժողովրդի բոլոր խաւերում: Սակայն յեղափոխութեան յետագայ ընթացքը ցոյց տուեց, որ այնքան փոքրաթիւ է գիտակից անհատների թիւը Պարսկաստանում, որ ստիպուած էին հին ռեժիմի բոլոր գործիչներին նոր անուան տակ թողնել պետական գործերում:

Յեղափոխական կռիւներում բոլորի ուշքը գրաւում էին քաղաքական հարցերը եւ կրօնական Փանատիզմը թուլացել էր, ուստի եւ հնարաւոր դարձաւ աւելի սերտ յարաբերութեան մէջ լինել: Մասնաւորապէս հայերը շատ մեծ օգնութիւն ցոյց տուին յեղափոխութեան ընթացքում Թաւրիզում, Սալմաստում, Խոյում, Ուրմիում, Ռաշտում, Ղազուինում, Թեհրանում եւ բոլոր այն վայրերում, ուր կռիւ գոյութիւն ունէր հակայեղափոխութեան դէմ:

Հայերի ցոյց տուած ուժը համոզում է մահմեդական ազգաբնակչութեան, որ թուով փոքրաթիւ, բայց ուժով բաւական պատկառելի հպատակներ են ունեցած եղել իրենք յանձին հայերի: Այդպիսի ուժը արհամարհել չէր կարելի. մասնաւոր նրանք համոզուեցին, որ պէտք եղած դէպքում թէ ուսահայ, թէ պարսկահայ եւ թէ տաճկահայ իրար օգնութեան են հասնում: Սկզբի շրջանում շնորհակալութիւն եւ ոգեւորութիւն կար հայերի հանդէպ, որը ինչպէս երեւում է հետզհետէ պիտի փոխւէր նախանձի, կասկածի կամ առնուազն զգուշաւոր քաղաքականութեան: Սակայն բուն ժողովրդի հետ յարաբերութիւնը ոչ միայն բարեկամական այլեւ շատ



գաւառներում՝ մտերմական էր, որովհետեւ հայկական ուժերը պաշտպանում էին ամբողջ ժողովրդին թէ քրդական եւ թէ հակայեղափոխական թալանչիներինց. այդպէս էր օրինակ Ուրմիում, Խոյում եւ Սալմաստում:

Յայտնի է թէ ինչպիսի տիուր վախճան ունեցաւ յեղափոխական կռիւր Ատրպատականում շնորհիւ տիրող դեմոկրատ առաջնորդների այն անմիտ կռուի, որը ինքնագլուխ կերպով, առանց հայերի համաձայնութեան, մղեցին ռուսների դէմ եւ առիթ տուին 1911 թուին ռուսական զօրքերի մտնելուն երկիրը եւ փաստապէս գրաւելուն այն: Հայկական ղեկավար շրջանները դեմոկրատները այդ կռիւր անմիտ եւ վնասակար էին գտնում, որպէսզի առիթ չտան օտար միջամտութեան, որը սակայն մինչեւ վերջն էլ չկարողացան ըմբռնել դեմոկրատները եւ գնահատել հայերի առողջ հայրենասիրութիւնը, իսկ իրենց գործունէութեան վնասակարութիւնը:

Պէտք է ենթադրել, որ հէնց այստեղից սկսւում է համարտութիւնը պարսիկ դեմ[ուկրատ] լիդերների եւ հայկական ղեկավար մարմինների մէջ, սակայն ժողովուրդների յարաբերութիւնները մնում են նախկին բարեկամական: Ռուսական տիրապետութեան մի քանի տարին ստեղծում է մասնեղական ղեկավար շրջաններում հակաքրիստոնէական մի ընդհանուր տրամադրութիւն, որը փոքր առ փոքր ազդում է ժողովրդի վրայ ի վնաս տեղացի քրիստոնէայ եւ մասնեղական ժողովրդների սերտ բարեկամութեան: Սակայն այդ ժամանակի ընթացքում էլ ոչ մի թշնամական դէպք տեղի չի ունենում դրանց մէջ, որովհետեւ ոչ մի շօշափելի հիմք չկար որեւէ թշնամութեան:

Վրայ է հասնում համաեւրոպական պատերազմի շրջանը, որի ընթացքում դէպքերի ու մտքերի շատ փոփոխութիւններ են լինում:

Երկու խոշոր քրիստոնէայ պետութիւններ, Ռուսաստան եւ Անգլիա, պատերազմի մէջ են մասնեղական Տաճկաստանի հետ. միեւնոյն ժամանակ այդ երկու պետութիւնները տնտեսապէս, իսկ Ռուսաստանը մինչեւ իսկ ռազմական տեսակէտով գրաւած ունէին Պարսկաստանը: Հետեւանքը ստացւում է այն, որ պարսիկ մտաւորականութիւնը դառնում է կենտրոնական պետութեանց կողմնակից՝ դաշնակիցներին դէմ, իսկ քրիստոնէաները, որ գիտէին ի՞նչ է նշանակում տաճկական յաղթանակ մեր սահմաններում, իրենց ամբողջ համակրութիւնը տածում էին դաշնակիցներին: Մինչդեռ թուրքերը չեն քաշուում իրենց ամբողջ համակրութիւնը ցոյց տալ հրապարակաւ (պառլամենտը պառակտւում է երկու մասի, մի մասը փոխադրւում է Ղում, միւս մասը, որ աւելի հեռատես էր, գերադասում է հրապարակով ոչ մի համակրական վերաբերմունք ցոյց չտալ, իսկ դեմոկրատները լիդերները մեծ քանակութեամբ պարսիկ կամաւորներով մտնում են տաճ-

կական բանակը). քրիստոնէայ հայերն եւ ասորիները ակտիւ ոչ մի կերպ չեն արտայայտում իրենց կողմնակցութիւնը, բայց դա գաղտնիք չէր թուրքերի համար հէնց այն համակրական արտայայտութիւնների եւ ուրախութիւնների համար որ երբեմն ցոյց էին տալիս հայերը դաշնակիցների մասնաւոր յաղթանակների ազդեցութեանց տակ:

Դաշնակիցների դանդաղ ընթացքը արեւելեան Ֆրոնտում, ռուսական զօրքերի յետ ու առաջ գնալը պարարտ հող են ստեղծում հակադաշնակից պրոպագանդի, որին պարսիկ յետամնաց ժողովուրդը կրօնական գոյն է տալիս եւ սկսւում է մի ընդհանուր հակակրօնք դէպի Պարսկաստանի քրիստոնէայ տարրերը:

1914 թուի դեկտեմբերեան գաղթին, երբ դեռ թուրքերի մտքերը լաւ չէին խմորուած, դարձեալ թշնամական ցաւալի դէպքեր են տեղի ունենում Ուրմիում, Սալմաստում մնացած քրիստոնէաների նկատմամբ տեղական թուրքերի կողմից, — կողոպուտ, սպանութիւններ, բռնաբարութիւններ, տների եւ այգիների աւերածութեան դէպքեր, — այնպէս որ մինչեւ իսկ տաճկական զօրքերը ստիպուած են լինում դադարեցնել եւ արգիլել իսկ Ղարադաղում Ղահրաման խանը կարմիր թէ կանաչ դրօշակներով ջհաթ¹ է յայտարարում եւ կոտորածի սպառնալիքներ տալիս, եւ եթէ այդտեղի հայերը չեն կոտորուում, դրա պատճառը այն էր որ ոչ մի խան չի համաձայնուում իր կթան կովից, հայ գիւղացուց, զրկուել:

ՁԵԼՈՆԵՐԸ² ԵՐԲ ԵՆ ԳԱՂԹԵԼ

Տաճիկների տիրապետութիւնը կարճ է լինում: Գաղթած քրիստոնէաները վերադառնում եւ տեսնում են բոլոր վայրագութիւնները որ կատարուել էր այդ մի քանի շաբթուայ ընթացքում իրենց ունեցուածքի եւ ազգակիցների նկատմամբ: Բարեկամական զգացմունքների մասին այլեւս ոչ մի խօսք լինել չէր կարող. դրա փոխարէն մի խուլ ատելութիւն է ստեղծւում ժողովուրդների հոգում, որը սակայն ոչ մի թշնամական ձեւի տակ չի դրուում շնորհիւ ռուսական զօրքի ներկայութեան եւ Դաշնակցութեան աչալուրջ ընթացքի:

Ինչքան երկարատեւ է դառնում պատերազմը, նոյնքան աւելի հակաքրիստոնէական մտքերը խմորւում են պարսիկների մէջ շնորհիւ տաճիկների եւ պարսիկ դեմոկրատների վարած ֆանատիք եւ շովէն պրոպագանդի: Մինչդեռ քրիստոնէայ տարրերի մէջ բոլորովին հակառակն էր արւում: Դաշնակցութիւնը, որ պարսկահայ հատուածի ղեկավար կուսակցութիւնն է, թէ գրա-

1.- Սրբազան պատերազմ:
2.- Ձեյօ կամ Ձիօ – Ուրմիոյ շրջանին մէջ թուրքերու եւ քիւրտերու դէմ կռուող ասորական Ձեյօ ցեղախումբին պատկանող մարտական գունդեր:



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

և որ եւ թէ բանաւոր շատ փաստեր ունի հայերի խաղաղասիրական, մոլուտուման ժողովուրդի հետ եղբայրորէն ապրելու համար վարած իր պրոպագանդայի՝ «Այգ»³ էջերում, առանձին թուղթիկներով եւ շրջանային ժողովների որոշումներով: Անգամ հայ մի քանի աւագակների դէմ կռիւ է մղուած, որպէսզի ոչ մի հայ հակաժողովրդական, հակամահաճեղական ընթացքի մէջ չլինի: Մինչդեռ այդօրինակ ոչ մի փաստ չկայ թուրք դեմոկրատների կողմից արուած. դրանց լուրջութիւնը կարծես նպատակ ունէր չվրդովել պարսիկների մէջ բուն դրած անմիտ ատելութիւնը դէպի հայն ու ասորին: Ընդհակառակը նրանց թերթերում յաճախ կը գտնէիք փոքր աւագակային դէպքերին հակամոլուտմանական բնոյթ տուած՝ առաւել բորբոքել ներքին ատելութիւնը դէպի քրիստոնեաները:

Դրութիւնը այսպէս շարունակուում է մինչեւ ուսական յեղափոխութիւնը: Այդ ժամանակ պարսիկ յեղափոխականները իրենց աւելի ազատ են զգում. նոյնքան ազատ են զգում իրենց նաեւ պարսիկները: Քրիստոնեաները ոչինչ չունէին վախենալու ներքին յարաբերութիւններից, սակայն երբ Ֆրոնտը դատարկուում է, առաջ է գալիս արտաքին վտանգը, որից առաւելապէս պիտի տուժէին քրիստոնեաները: Միւս կողմից ոչ ոքի համար գաղտնիք չէր պարսիկ կառավարութեան անկարողութիւնը աւագակ քրդերին գսպելու եւ իր երկրի սահմանները պաշտպանելու գործում: Բնագրաբար բոլորը մտածում են ինքնապաշտպանութեան մասին սեպհական ժողովրդական ուժերով: Ասորիներն ու ջեղոնները բատալիոններ են կազմում, հայերը, թուրքերը շտապ գինուում են: Մի բոպէ այն տպաւորութիւնն է գործում որ թէ մահաճեղական եւ թէ քրիստոնեայ այս ընդհանուր նպատակի շուրջը հեշտութեամբ պիտի համախմբուեն, որովհետեւ երկիրը օտարներից պաշտպանելու եւ ժողովուրդը թալանելուց ազատելու գաղափարը բոլորի սրտին մօտ կը լինի: Թաւրիզի դեմոկրատ լիդերները հաւաստիացնում էին հայերին, որ իրենք մինչեւ ուժերի վերջին ծայրը պիտի կռուեն ընդհանուր արտաքին վտանգի դէմ:

1918-ի յունուարին Դաշնակցութեան շրջանային ժողովը ընդունում է մի բանաձեւ, ըստ որի պիտի համախմբել թուրք, ասորի, ջեղո եւ հայ ուժերը երկիրը պաշտպանելու քրդական թալանից եւ տաճիկների ներխուժումից: Դրա համար ոչ գէնք, ոչ մարդ եւ ոչ էլ ղեկավարներ էին պակասում, միայն հարկաւոր էր թուրքերի կամեցողութիւնը: Առաջին իսկ օրերում Սալմաստեցի հայերը ապացուցեցին որ հաւատարիմ են այդ սկզբբունքին, երբ թուրքական զիւղերը պաշտպանեցին Սմկո-ի⁴ յարձակումներից հակառակ Սմկո-ի գրաւոր դիմումի, որով յայտնում է Դաշնակցութեան, որ խոստանում է հայկական զիւղերին ոչ մի վնաս չի տայ եւ խնդրում է չհառնուել կռուին երբ թալանում է թուրքական զիւղը:

Չի անցնում մի քանի ամիս եւ իրերը նոր կերպարանք են ընդունում:

Ջեղո-ասորական բատալիոնները իրենց կազմակերպութեամբ լուրջ երկիրը են առաջ բերում թէ կառավարական եւ թէ թուրք կուսակցական շրջաններում: Այդ բատալիոնները, դեռ եւս գինուորական դիպլոմատիայի բոլորովին անսովոր, թոյլ են տալիս մի քանի չնչին դէպքեր, որոնք ըստ էութեան սովորական են այդ գաւառներում, բայց որոնք այժմ այլ կերպ են բացատրուում մոլուտուման ղեկավարների կողմից: Կառավարութիւնը անընդունակ գտնուելով յօգուտ երկրի պաշտպանութեան ծառայեցնելու այդ ուժերը՝ որոշում է գինաթափել դրանց, որով միաժամանակ թէ մեծ քանակութեամբ ռազմամթերքի տէր կը դառնար եւ թէ կարող կը լինէր իր ուզած ձեւով վարուել քրիստոնեայ ժողովուրդի հետ: Դեմոկրատ կուսակցութիւնը նոյնպէս այդ կարծիքի էր: Կողակների մի գունդ եւ դարադաղցի ճիւղերներից մի քանի հարիւրեակ ուղարկուում է Ուրմիա, որտեղ նրանք առանց հաշուի առնելու ուժերի փոխյարաբերութիւնը անմիջապէս գինաթափման գործին են դիմում:

Այստեղ հետաքրքիր է այն որ գինաթափման են կոչուում ոչ թէ ամբողջ ժողովուրդը, այլ միայն քրիստոնեայ ժողովուրդը, չնայելով որ թուրքերն էլ զինուած էին ուսական գէնքերով: Կառավարութեան առաջին փորձը՝ գրաւել ջեղոների բատալիոնի գէնքերը փոխադրութեան ժամանակ, անցնում է անյաջող եւ ջեղոների ու թուրքերի մէջ առաջանում է կռիւ: Ամբողջ Ուրմիան իրար է անցնում: Վերջապէս թուրք կողակները անձնատուր են լինում, ճիւղերները փախչում են թողնելով քաղաքը կռուի սարսափների մէջ: Ջեղոները վրէժխնդիր էին լինում նաեւ մինչ այդ կողակների եւ ճիւղերների՝ ասորիներին հասցրած վիրաւորանքների եւ մինչեւ իսկ սպանութիւնների համար: Հայերը, հաւատարիմ իրենց նախկին որոշման, չէզոք դիրք են բռնում եւ աշխատում են հաշտութիւն առաջ բերել եւ պաշտպանել խաղաղ ազգաբնակիչները. այս մասին իրենք թուրքերն էլ շատ մանրամասնութիւններ են պատմում շնորհակալութեամբ:

Կառավարութեան այս պարտութիւնը Ուրմիայում այն հետեւանքն է ունենում, որ գինաթափութեան են ենթարկում մոլուտուման տարրը եւ ակնյայտնի թշնամութիւն է ստեղծում երկու ժողովուրդների մէջ: Հայերի գործ դրած հաշտարար եւ խաղաղարար ջանքերը ի դերեւ են ելնում շնորհիւ այն հանգամանքի, որ փոքրամասնութիւն էին եւ որ գլխաւորն է կառավարութիւնը եւ դեմոկրատները ոչ մի ցանկութիւն չեն ունե-

3.- Թաւրիզ հրատարակուող դաշնակցական շաբաթաթերթ (1912-1922):

4.- Սմկո – հայեր եւ ասորիներ պատուաստող քիւրտ ցեղապետ:

նում այդ ուղղութեամբ:

Դաշնակցութիւնը Թաւրիզում ձգտում է ցոյց տալ դեմոկրատներին եղբայրասպան կռուի ամբողջ վնասակարութիւնը թէ՛ ժողովրդական մասսաների եւ թէ՛ երկրի ընդհ. շահերի տեսակէտից, որին ըստ երեւոյթին համաձայնում էին, իսկ միւս կողմից մուշահիդներին էին ցուցակագրում օրը ցերեկով եւ զինելով ուղարկում Շարաֆխանէ, որտեղ հաւաքուում էին նաեւ Արշաղ-Հումայունի ձիւտները, որոնք փախել էին Ուրմիից: Կարճ ժամանակում այդտեղ են հասնում մուշահիդ անլան տակ բախտախնդիր թալանչիների մի մեծ խումբ հայրենիքը ջելոյական վտանգից փրկելու պատրուակով, բայց իրապէս Շարաֆխանէի ռուսական մթերքը թալանելու եւ հարստութիւն դիզելու: Միաժամանակ կռիւ են սկսում նաեւ Սալմաստի դէմ, որտեղ ջելոյների մի քանի վաշտեր կային: Սալմաստում նոյնպէս հայերը սկսում են Դաշնակցութեան որոշման համաձայն ձեռնպահ մնալ եւ մի կերպ խաղաղ միջոցներով խնդիրը հարթել: Դեմոկրատները սկսում են խուսափել Դաշնակցութեան ներկայացուցիչների հետ տեսակցելուց եւ այդ մասին խօսելուց: Հայերի առաջարկած խաղաղարար միջոցներին ոչ մի ընթացք չի տալիս ոչ կառավարութիւնը եւ ոչ էլ դեմոկրատական կուսակցութիւնը: Կարճ միջոցում փակուում են բոլոր ճանապարհները եւ տեղի են ունենում այս ու այն ճամբին անմեղ հայերի սպանութիւններ՝ մուշահիդների եւ դարադաղցի ձիւտների կողմից:

Թաւրիզի եւ գաւառների հաղորդակցութիւնը կրտրելով, կառավարութիւնն ու դեմոկրատները անհնարին են դարձնում հայոց ազգային թեմական իշխանութեան եւ Դաշնակցութեան) Կենտ. մարմնի համար կապ պահպանել եւ տոն տալ գաւառական գործերին:

Դեմոկրատների, շատ կարելի է նաեւ կառավարութեան հաւանութեամբ Սմիկոն դաւաճանօրէն սպանում է Սալմաստում Մար-Շիմոնին: Մի անհեռատես եւ անօգուտ քայլ, որը պատճառ է դառնում այն բոլոր անմեղ արիւնահեղութիւնների, որոնք տեղի ունեցան ասորիների եւ թուրքերի մէջ Սալմաստում, Խոյում, Ուրմիում, մինչեւ տաճիկ գործերի ներս խուժելը: Այս առթիւ եղած կռիւների ընթացքում հայերի պահանջմամբ թուրքերից երկու անգամ պատգամաւորութիւն է ուղարկուում Արշաղ-Հումայունի մօտ հայերի եւ թուրքերի կողմից խնդրելու, որ վերջ տրուի կռիւներին. նոյն տոնով դիմումներ են արւում նաեւ ջելոյներին: Այս բոլոր դիմումները ոչ մի հետեւանք չեն ունենում: Խոյում սրի են քաշում անգէն ջելօ գաղթականներին մօտ 500 տան, Սալմաստում փոխարէնը սրի է քաշում Դիւմանը: Դաշնակցութեան հազիւ յաջողում է 3-4 հազար Դիւմանում հաւաքուած թուրքերից ազատել եւ հաւաքել Հալթոնան, որտեղ մի քանի օր հազար ու մի դժուարութիւններով պահելուց, կերակրելուց յետոյ ուղար-

կում են դէպի Գունէյի գիւղերը: Նոյնպիսի պաշտպանութեան բազմաթիւ դէպքեր կան նաեւ Ուրմիում եղած կռիւների ընթացքում հայերի կողմից թէ՛ մասսայօրէն եւ թէ՛ անհատական ձեւով:

Վերջապէս կառավարութիւնը, դեմոկրատները համոզուում են, որ անկարող են զինու զօրութեամբ ճնշել ջելոյներին եւ սկսում են հաշտութեան լուրջ առաջարկներ թէ՛ գաւառի թուրք ժողովրդից եւ թէ՛ տեղական կառավարութիւնից ու դիմոկրատներից: Ինչպէս երեւում է, Թաւրիզը դժուարանում էր խաղաղ միջոցների դիմելու, որովհետեւ Ուրմի մի քանի անգամ այդ առաջարկութիւնը անելուց յետոյ միայն յաջողում է խաղաղարար կոմիսիոն ուղարկել, որտեղ կային հայոց առաջնորդը, Դաշնակցութեան) եւ Ս[ոցիալ] Դ[եմոկրատ] ներկայացուցիչները: Վերջիններիս հրահանգ էր տրուած ամենակտրուկ միջոցների դիմել այդ անմիտ կռիւը վերջացնելու, դրան խոչընդոտ հանդիսացողներին նոյնիսկ մահուան պատժի ենթարկել եւ բոլոր ուժերը համախմբել, արտաքին թշնամու եւ քրդական հորդանների դէմ պաշտպանել երկիրն ու ժողովուրդը: Այս ուղղութեամբ խօսուում է նաեւ տեղիս դեմոկրատ շէֆերի հետ (հայերի) եւ նրանց համաձայնութիւնն էլ է ստացուում:

Իրօք կռիւները դադարում են, սակայն արեան թշնամութեան սերմերը ցանուած էին, որոնցից առատ պտուղ արդէն ստացուած էր. Ուրմի ու Սալմաստը ենթարկուած էին պատերազմական վիճակի ամբողջ դժբախտութեան:

Շատ չի տեւում, երկիր են խուժում տաճիկական գործերը Բլուրու եւ ընկերութեան առաջնորդութեամբ: Մահմեդական զինուած ուժերի ներխուժումը վրէժ-խնդրական զգացումը նորից բորբոքում է մահմեդական ժողովրդի մէջ. դրա վրայ աւելանում է նաեւ Կովկասից ու Տաճկաստանից քաղաքացիական պրոպագանդիստներ, որոնք համիլայական, իսլամի վերածնութեան գաղափարների տակ հակաքրիստոնէական ջարդարար պրոպագանդ են մղում եւ բորբոքում կրքերը: Անկեղծ օտարների հակառակորդները փախչում են, իսկ դեմոկրատների շէֆերի մեծագոյն մասը (որոնց մէջ Չոբարին, որ դեկավարում էր թուրք-ասորական կռիւը) մնում եւ ձուլուում են ջարդարար խմբակի հետ:

Ասորի եւ հայ ազգաբնակիւնը այդ դրութեան հանդէպ հերոսական կռուի դիմեցին ներս խուժող տաճիկների դէմ, որը վերջանում է մի դժբախտ գաղթով: Կռուի ընթացքում անօրինակ բարբարոսութեամբ կոտորում են Խոյի, Մակուի հայ ազգաբնակիւնը, իսկ գաղթից յետոյ թէ՛ ինչպիսի գազանութեանց են ենթարկուել Ուրմիում եւ Սալմաստում մնացած քրիստոնէութիւնը, հեշտ է ենթադրել, որովհետեւ բազմահազար մնացողներից այժմ հազիւ մի քանի հարիւր քաղցած, մերկ ու հիւանդ կանայք ու երեխաներ են մնացել:

Փաստ. 484-15

Բ 1.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Հ. Յ. Դաշնակցության Վրէժի ժամանակաւոր մարմինը յայտարարում է Ատրպատականի շրջանի մարմիններին եւ ընկերներին, որ յունիս 20-ին, Թաւրիզում կայանալու է Ատրպատականի Դաշնակց. Շրջանային ժողովը:

Օրակարգի խնդիրներն են՝

1. Ձեկուցումներ շրջաններից

- ա) Տնտեսական վիճակը.
- բ) Ազգային եւ ընդհ. կուլտուրական կեանքը
- գ) Քաղաքական կացութիւնը
- դ) Հարեւան ժողովրդի հետ յարաբերութիւնը
- ե) Կազմակերպութեան վիճակը

2. Մեր երկրի ներկայ քաղաքական կացութեան բնորոշումը

3. Միջկուսակցական յարաբերութիւնները

- ա) Հայկական քաղաքական կուսակցութիւնների հետ
- բ) Պարսիկ եւ օտար քաղաք. կուսակցութիւնների հետ
- գ) Տեղական ռուսական Գործադիր կոմիտէի հետ

4. Կազմակերպչական հարցեր

- ա) Գիւղացիական միութիւններ
- բ) Արհեստակցական միութիւններ
- գ) Քաղաքական խմբեր
- դ) Մարմիններ եւ նրանց փոխյարաբերութիւնները

5. Մեջիսի բնորոշութիւնները եւ մեր վերաբերմունքը

6. Բանաւոր եւ գրաւոր պրոպագանդը
(«Այգը»ի կամ ընդհանրապէս Պարսկաստանի Դաշն. օրգանի խնդիրը):

7. Առաջարկներ մարմինների կողմից

8. Պարսկաստանի Ռայոնական ժողովը
(Նրա օրակարգի խնդիրները, տեղը եւ ժամանակը):

9. Ընտրութիւններ զանազան մարմինների:

1917 թ. 25 մայիսի
Թաւրիզ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԺԱՄԱՆ. ՄԱՐՄԻՆ

Փաստ. 484-26

Բ 2.- ՁԵԿՈՒՑՈՒՄ ՎՐԷԺԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՍԱՐՄՆԻՑ Հ.Յ.Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ (Յունիս 20, 1917)

Ընկերներ,

Վերջին Շրջանային Ժողովից (1909 թ. Սալմաստում) անցել են վեց երկարաձիգ տարիներ, բայց այդ ժամանակամիջոցը, ինչպես ամէն տեղ, նոյնպէս եւ մեր շրջանում կուսակցական կեանքը ներկայացնում է ամլու-թիւն:

Ռուսական վերջին տարիների ռէակցիան, նրա բռնակալ ռեժիմի ճնշիչ թաթիւ խիստ կործանարար ազդեցութիւն ունեցաւ մեր երկրի ազատագրական շարժումների, հետեւապէս եւ տեղիս կազմակերպական կեանքի վրայ: 1911 թուի միջազգային ժամատարմի պատրաստած քաղաքիս կախադանները եկան վերջնականապէս ջլատելու իւրաքանչիւր մի յեղափոխական շարժում եւ կազմակերպութիւն: Ահա այդ թուից արդէն միանգամայն կազմալուծուեցին տեղիս բոլոր (15ից աւելի) քաղաքական խմբերն ու արհեստակցական միութիւնները: Դրութիւնը չափազանց վտանգաւոր էր մեր աչքի ընկնող ընկերների համար, բայց եւ այնպէս Կ. կոմիտէն շարունակած էր գոյութիւնը, թէեւ ի հարկէ այդ իրադարձութիւնից յետոյ լուրջ անուանապէս: Մօտ երկու տարի տեւում է այդ թմրութիւնը — 1913 թուին երեւում են արդէն արթնացման նշաններ, ընկերները սկսում են համախմբուել եւ կազմել խմբեր:

Բայց ի հարկէ շատ սակաւաթիւ, այնպէս որ կոմիտէի ընտրութեան հարց նոյնիսկ չի առաջանում: Յաջորդ տարին — 1914-ի աշնանից արդէն լուրջ փորձեր են արւում կանոնաւոր վերակազմութեան: Կ. կոմիտէն դեռ եւս անուանապէս գոյութիւն ունէր. նրա անդամների ջանքերով կազմւում են մի քանի խմբեր (մօտ 5), որոնք հէնց այդ աշնանը ընտրում են քաղաքիս համար կոմիտէ, որը գործի գլուխ է անցնում քաղաքական խիստ աննպաստ հանգամանքներում: Համաշխարհային պատերազմի առաջին տարին էր, Տաճկաստանի մասնակցութեամբ. վտանգ էր սպառնում եւ մեր շրջաններին. այնպէս որ այդ կոմիտէին վիճակուած չէր երկար գործունէութիւն: Վրայ է հասնում Թաւրիզի գաղթը եւ ահա նորածիլ կազմակերպական կեանքը նորից ենթարկւում է քայքայման: Կոմիտէն մասամբ իր վրայ էր վերցրել տեղական ինքնապաշտպանութեան գործը, այդ ուղղութեամբ որոշ նախապատրաստական աշխատանքներ կատարել էր, բայց հէնց որ գաղթի ծայ-

րը սկիզբ է առնում, դրա հետ միասին քայքայւում է նաեւ ինքնապաշտպանութեան գործը, որովհետեւ քաղաքից հեռանում են համարեա բոլոր ընկերները: Կազմակերպական գէնքերը, որ ինքնապաշտպանութեան նպատակով դրուած էր ընկերների մէջ, յետ են ստացւում. մի քանի ընկերներ իրանց վրայ են վերցնում գէնքերի հաւաքելը եւ ապահով պահեստում թաքցնելը: Գաղթից մի քանի ամիս յետոյ Արեւելեան բիւրոյի կարգադրութեամբ ընկեր Պիոնեանը Թաւրիզ է անցնում եւ պահեստում գտնուած բոլոր գէնքերն ու զինական մթերքները փոխադրում շրջանիցս դուրս: Այնպէս որ քաղաքումս այժմ կազմակերպչական ոչ մի գէնք գոյութիւն չունի: Այստեղ միջանկեալ յիշեցնենք, որ գաղթից առաջ ռուսական կոնսուլատից առաջնորդարանի միջոցով բերդաններ էր տրուած քաղաքիս հայութեան ինքնապաշտպանութեան համար: Այդ բերդաններից 50 հատ ուղարկուել է Մուսամբար եւ մինչեւ այժմ էլ այնտեղ է գտնւում. այդ գէնքերի հսկողութիւնը եւ պահպանութիւնը այժմ մարմինս իր վրայ է վերցրել:

Կազմակերպչական կեանքի մի տարուայ դադարից յետոյ, 1915 թուի աշնանը ընկերների կողմից նորից վերակազմութեան փորձեր են արւում. վերակազմում է միայն երկու խումբ՝ «Դուման» եւ «Ուսանող», բայց դարձեալ շատ կարճատեւ. հազիւ միայն մի քանի ամիս են յարատեւում:

Ինչպէս տեսնում ենք, վերջին երեք տարիների վերակազմութեան փորձերը կուսակցական կեանքում միշտ էլ անցել են անյաջող եւ այդ գուցէ կարելի կը լինի բացատրել նրանով, որ հրապարակի վրայ կենդանի եւ ոգեւորող գործ չի ներկայացուել: Այդ ժամանակաշրջանի կուսակցական միակ գործը կարելի է համարել «Այգի» հրատարակութիւնը, որի շուրջը համախմբուած են եղել շատ սակաւաթիւ ընկերներ, որոնք ամէն դժուարութեան յաղթահարելով պահպանել են նրա գոյութիւնը: Ընկերներին միակ կապող օղակը այս վերջին երեք տարիներում եղել է թերթը, որից հեռու մնացածները այլեւս ոչնչով կապուած չեն եղել կազմակերպութեան հետ:

Կազմակերպական կեանքը այդ լքեալ վիճակից դուրս բերելու համար, անշուշտ, անհրաժեշտ էր մի ուժեղ ցնցում կուսակցական աշխատանքները դարձեալ իր նախկին հունի մէջ մտցնելու համար: Եւ ահա միան-

ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԻ

գամայն անսպասելիորէն վրայ է հասնում փետրուարեան ռուսական մեծ յեղափոխութիւնը, որ հիմնովին տապալում է բռնապետական հին ռեժիմը եւ երկրի իշխանութիւնը յանձնում նոր ժամանակաւոր յեղափոխական կառավարութեան: Յեղափոխական կուսակցութիւնները երեւան են գալիս ազատօրէն եւ դիմում վերակազմութեան: Ռուսական յեղափոխութեան կենդանարար յորձանքները հասնում են եւ մեզ. վերանում է բիրտ ուժի ճնշումը, որ կապարի պէս ծանրացել էր մեր երկրի վրայ ու խեղդել նրա ազատագրական շարժումները եւ սպառնում էր նոյնիսկ մեր երկրի անկախութեան: Բայց ինչպէս ասացինք, շնորհիւ ռուսական յեղափոխութեան, տեղիս քաղաքական կացութիւնը հիմնովին փոփոխութեան է ենթարկւում, մեր երկիրը ազատ շունչ է քաշում եւ դուրս է գալիս ռուսական հին ռեժիմի կապանքներից: Կուսակցական կեանքի վերակազմութիւնը անմիջապէս արձագանք է գտնում եւ մեզ մօտ: Մարտի կէսերին թերթին մօտ կանգնած ընկերները հրաւիրում են տեղական դաշնակցականների ընդհանուր ժողով. հաւաքւում են մօտ 35 ընկեր-ուհիներ, լինում են բանախօսութիւններ ռուսական յեղափոխութեան մասին, որից յետոյ դուրս է վերակազմութեան խնդիրը: Հէնց այդ ժողովում ընտրւում է 5 հոգուց կազմուած ժամանակաւոր մարմին: Ինչ ինչ պատճառներով ընտրուածներից մէկը մարմնից դուրս է մնում. կազմը ուժեղացնելու համար հրաւիրւում են երեք ուրիշ ընկերներ եւս: Ժամանակաւոր մարմինը հէնց անմիջապէս ձեռնարկած է ընդհանուր ժողովների գումարման, որոնցում զբաղմունքի նիւթ են դառնում կազմակերպութեան վերակազմութեան խնդիրը, ռուսական յեղափոխութեան նշանակութիւնը. մեր երկրի քաղաքական կացութիւնը եւ այլն հարցեր:

Կովկասի ռայոնական ժողովին ժամ[անակաւոր] մարմինը մեր շրջանից ուղարկել է երկու պատգամաւոր, թէեւ մեզ պաշտօնական գրաւոր դիմում չի եղել, բայց բանաւոր յայտնել էին եւ պահանջել յայտեղից եւս պատգամաւոր: Ժամանակի սղութեան պատճառով մարմինը հնարաւորութիւն չի ունենում այդ հարցը ընդ. ժողովի առաջ դնելու, ուղարկում է պատգամաւորներ, որի մասին յետոյ ի գիտութիւն յայտնում է ընկերներին: Այստեղ պէտք է յիշել, որ ընկեր պատգամաւորները կազմակերպութիւնից նիւթական աջակցութիւն չեն ստացել, այլ գնացել են իրենց սեփական միջոցներով:

Ժամանակաւոր մարմինը ունեցել է 16 նիստ եւ զբաղուել է տեղական կազմակերպական խնդիրներով, շրջանի վերակազմութեան հարցով, պարսիկ կուսակցութիւնների եւ յառաջադէմ տարրերի հետ յարաբերութեան մէջ լինելու խնդրով եւ այլ ընթացիկ հարցերով: Կազմակերպական խնդիրներից ամէնից շատ մարմնիս եւ ընդհանուր ժողովին զբաղեցրել է արհես-

տակցական միութիւնների հարցը. թէ արդեօք այդ միութիւնները կազմակերպել կուսակցական թէ անկուսակցական հողի վրայ, բայց մինչեւ այժմ էլ խնդիրը մնացել է առկախ. այդ հարցի մասին աւելորդ եմ համարում մանրամասնութիւնների մէջ մտնել, որովհետեւ քաղաքիս պատգամաւորները այդ մասին աւելի հանգամանօրէն պիտի զեկուցանեն յարգելի ժողովիդ: Օգտուելով քաղաքական ներկայ ազատութիւնից քաղաքական խմբերի նախկին ձեւը վերածել ենք ներկայիս ընդհանուր ժողովին, որին մասնակցում են քաղաքիս բոլոր դաշնակցական ընկեր-ուհիները. իւրաքանչիւր արձանագրողի տրւում է անդամակցութեան քարտ: Մինչեւ այժմ արձանագրուել են 79 հոգի, անդամակցական վճարը կամաւոր է. վճարում են ամսական 1 դր. — 20 դրան:

Գաւառի վերակազմութեան խնդրով ճիշտ է մարմինս տեսականապէս զբաղուել է, բայց գործնականապէս ոչինչ չի կարողացել անել: Կարիք է զգացուել շրջիկ պրոպագանդիստներ ուղարկել գաւառը վերակազմելու նպատակով, բայց այդ ցանկութիւնը չի իրագործուել նիւթականի պակասութեան եւ տրամադրելի ընկեր չլինելու պատճառով: Սակայն շրջանի կազմակերպման խնդիրը մեծ անհրաժեշտութիւն էր ներկայացնում, օրուայ հրամայական պահանջ էր եւ յետաձգել չէր կարելի, ահա հէնց այդ տեսակէտից մարմինս չափազանց կարեւոր համարեց եւ նախաձեռնեց ներկայ Շրջանային ժողովը, որը մի շարք հրատապ հարցերի վերաբերեալ վճիռներ տալու հետ միատեղ պէտք է ուղղութիւն եւ ընթացք տայ նաեւ գաւառի կազմակերպման խնդրին:

Տեղական պրոպագանդայի գործը յաջողութեամբ վարելու համար մարմնիս նախաձեռնութեամբ կազմուել է պրոպագանդիստների մի խմբակ, որը ծրագրել է մի շարք դասախօսութիւններ կազմակերպել մեր ծրագրի եւ աշխարհահայեացքի լուսաբանութեան շուրջը: Այդ խումբը իր վրայ է վերցրել նաեւ դաշնակցական գրադարանի կանոնաւորման եւ վերաբացման գործը:

Մայիս 1-ի աշխատաւորական տօնը քաղաքումս ռուսական գարնիզոնների⁵ մէջ տօնուեց նոր տոմարով. մեր կուսակցութիւնը եւս այդ օրը իր ակտիւ մասնակցութիւնն ունեցաւ եւ երեւան եկաւ յաւուր պատշաճի կազմակերպութեամբ:

Ռուսական յեղափոխութիւնը սթափեցուցիչ ազդեցութիւն ունեցաւ նաեւ մեր հարեւան ժողովրդի՝ պարսիկների վրայ: Դեմոկրատիկ տարրերը իրենց ազատ զգալով արտաքին ճնշումից՝ ասպարէզ իջան եւ վերակազմութեան ձեռնարկեցին: Քաղաքումս անմիջապէս երեւան եկան դեմոկրատ կուսակցութեան երկու հոսանքներ. այժմ նկատելի է նաեւ սոց. դեմոկրատների

5.- Ջօրամասերու, կայազօրերու:

եւ սոց. յեղափոխական կուսակցութիւնների նախնական սաղմեր: Բայց ի հարկէ այդ կուսակցութիւնները բառիս բուն իմաստով կազմակերպութիւններ չեն ներկայացնում դեռ եւս, այնուամենայնիւ դրանք ներկայացնում են մի հիմք, որի վրայ ապագայում կարող են բարձրանալ եւ առաջանալ իսկական կազմակերպութիւններ: Մարմինս անհրաժեշտ է գտել դեմոկրատ համարուած այդ տարրերի հետ յարաբերութեան մէջ մըտնել, ծանօթանալու համար նրանց ծրագրի եւ գործելակերպի հետ ու փոխադարձաբար նրանց եւս ծանօթացնել մեր ծրագրի ու միւսիմում պահանջների հետ: Յարմար է նկատուել նման յարաբերութիւնները առայժմ պահպանել ոչ պաշտօնապէս, այլ անհատ ընկերների միջոցով, որը ապագայում հետզհետէ կարելի է ընդլայնել եւ դարձնել պաշտօնական, եթէ միայն կը նկատուի այդ կազմակերպութիւնների մէջ յեղափոխական մաքուր ձգտումներ եւ կուսակցական դիսցիպլինա ու բարոյական բարձրութիւն:

Մի քանի խօսք եւս տեղիս ազգային կուլտուրական կրթական հաստատութիւնների մասին: 1914 թուի գաղթի պատճառով 7 ամսով կանգ առաւ տեղիս ազգային կրթական-կուլտուրական կեանքը: 1915-ի աշնան նորից

վերաբացուում են դպրոցները (բացառութեամբ Թեմականի) եւ կարճ ժամանակում կուլտուրական կեանքը կրկին իր նորմալ ընթացքն է ստանում: Թէեւ վերջին 3-4 տարիների կուլտուրական եւ հասարակական հաստատութիւնների մարմինների ընտրութեան ժամանակ կուսակցութիւնը ոչ մի անգամ պաշտօնապէս մասնակցութիւն չի ունեցել, բայց եւ այնպէս անհատ դաշնակցականների մասնաւոր ջանքերով ընտրութիւնների ժամանակ միշտ էլ յաջողութիւնը մեր կողմն է եղել եւ մարմինները ընտրուել են գրեթէ բոլորն էլ մեր ընկերներից եւ կամ համակիրներից: Բացառութիւն կազմում է Ղալալի դպրոցի հոգաբարձական կազմը, որի մէջ, դարձեալ աւանդական սովորութեան համաձայն խմբուած են հակադաշնակցական անհատներ:

Քաղաքիս կազմակերպութեան տնտեսական հաշիւների մասին կը զեկուցանէ ընկեր Եր. Աֆթանդիլեանը:

Հ. Յ. Դաշնակցութեան Վրէժի Ժամ[անակաւոր]
մարմնի դիմաց
ՄԻՔԱՅԷԼ ՍՏԵՓԱՆԵԱՆ

1917 թ. Յունիս 20

Փաստ. 484-27

Բ 3.- ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՇՐՁԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ [20-24 Յմնիս1917]

Յոունիս 20-ին, առաջադրանքի 11-ին, «Այգ»-ի խմբագրատունը տեղի է ունենում Շրջանային ժողովի նախապատրաստական նիստը, որին մասնակցում էին շրջանից եկած երեք պատգամաւորներ – Ուրմիայից ընկերներ՝ Թովմաս Ալեքսանեան, Արտաշէս Յարութիւնեան, Զուլֆայից՝ Արմենակ Ալլազիբեան, քաղաքիս երկու պատգամաւորները՝ ընկերներ Վաղինակ Տէր Յակովբեան, Տիգրան Եգանեան եւ Ժամանակ[աւոր] Մարմնի ներկայացուցիչ՝ Միքայէլ Ստեփանեանը. ժողովին ներկայ էին նաեւ մարմնի միւս անդամները խորհրդակցական ձայնի իրաւունքով: Ժողովը զբաղւում է Շրջանային ժողովի կազմի եւ նրա օրինակարգի (րեգլամենտ) մշակման հարցերով եւ կայացնում է հետեւեալ որոշումները:

1) Այն շրջաններից, որ մինչեւ այժմ պատգամաւոր չի ուղարկուել, այդ վայրին ծանօթ տեղական ընկերներից հրաւիրել ներկայացուցիչ վճռական ձայնի իրաւունքով – Մարաղայից՝ Տիգրան Ոսկանեան, Ղարաղաղի կողմից՝ Խաչատուր Գրիգորեան, Մուսթաֆայից՝ Յովակիմ Մելիքեան:

2) Վճռական ձայնի իրաւունքով հրաւիրուում են նաեւ «Այգի» խմբագրութիւնից՝ Գասպար Յակովբեան, քաղաքի ընկերներից՝ Ալեքսան Տէր Յակովբեան, Հայրապետ Պանիրեան, Ալեքսան Յովհաննիսեան: Վճռական ձայնի իրաւունք է տրուում եւ Թեհրանի Կ. կոմիտէի ներկայացուցիչ՝ ընկ. Զ. Սազինեանին:

3) Հրաւիրուում են ժողովին մասնակցելու խորհրդակցական ձայնով 10 հոգի, կուսակցական զանազան աշխատակողմերից եւ Ժամանակ. մարմնի մնացած անդամներից հետեւեալները – ընկերներ 1) Կարապետ Աբեան, 2) Մկրտում Սահակեան, 3) Երևանդ Աֆթանդիլեան, 4) Խաչատուր Յովհաննիսեան, 5) Գրիգոր Յարութիւնեան, 6) Մատթէոս Արամեան, 7) Արշակիր Գասպարեան, 8) Խաչատուր Մելիք Վարդանեան, 9) Արամ Ապրեսեան, 10) Աշխէն Սահակեան:

Ընկ. Գասպար Յակովբեանը Խոյի ընկերների կողմից նշանակուած լինելով պատգամաւոր, թերթի կողմից անցնում է նրա փոխարէն ընկ. Երուանդ Աֆթանդիլեանը:

4) Շրջանային ժողովի նիստերը լինելու են դռնբաց դաշնակց. ընկեր-ուհիների համար, բացառութեամբ

վերջին նիստի: Ժողովը տեւելու է 5 օր, ունենալու է օրական մէկ նիստ, որ սկսուելու է երեկոյեան ժամը 7-ից:

Ապա մշակուում է հետեւեալ րեգլամենտը (օրինակարգը):

Կազմակերպական հարցեր.–

Այս վերնագրի տակ ինչպէս տեսնում էք օրակարգի խնդիրներից դրուած են հետեւեալ հարցերը.– ա) Գիւղացիական միութիւններ, բ) Արհեստակցական միութիւններ, գ) Քաղաքական խմբեր եւ դ) Մարմիններ եւ նրանց փոխարարներութիւնները:

Կազմակերպական մեր անցեալ մինչեւ վերջին օրերու ունեցած ձեւը ծանօթ է բոլոր ընկերներին. իսկ պատգամաւոր թէ ի՞նչ ձեւով պիտի մօտենանք այդ հարցերին, այդ նորութիւն է ինչպէս ամէնքի, նոյնպէս եւ ինձ համար: Բայց օգտուելով այն որոշումից, որ իւրաքանչիւր ընկերով թոյլ է տրուած եղած հարցերի շուրջը միմի գեկուցում տալու՝ իր ուրոյն կարծիքը արտայայտելու ազատութեամբ, ես վստահացայ ոյժերս ներածին չափ մօտենալ այդ հարցերին եւ ընկերների ուշադրութիւնը հրաւիրել նրանց շուրջը:

Քանի դեռ կանգնած էր Նիկոլայ II-ի ամօթով ծածկուած գահը, որի շուրջը վխտում էին մեծ ու փոքր գաղտնի ոստիկանները եւ ժանտարմերիան, Հ. Յ. Դաշնակցութիւնը, ինչպէս եւ այլ յեղափոխական բոլոր կուսակցութիւնները ստիպուած էին ընտրել գործունէութեան մի այնպիսի ձեւ, որպիսին հիմնուած էր խիստ գաղտնապահութեան եւ մեծ զգուշութեան վրայ, եւ որը մի խօսքով կոչում էին յատակի տակի գործունէութիւն:

Այդ ձեւի գործունէութեան սկզբունքով է կազմուած մեր ընդհանուր ներքին կանոնադրութիւնը, որը դժբախտաբար ձեռքիս տակ չունիմ, բայց անշուշտ ծանօթ է բոլոր ընկերներին եւ այդ կանոնադրութիւնից էլ բխում է Վրէժի ներքին կանոնադրութիւնը, որը աւել կամ պակաս չափով յարմարեցրուած է մեր շրջանին ու կեանքին:

Մեր այստեղի ընկերները պատրաստ էին ունենալ այն գաղտնի-յատակային գործունէութիւնը, ինչպէս մեր ռուսահայ եւ միւս ընկերները, որովհետեւ պարզ է ամէնքին, որ ռուս բռնակալութիւնը անպայման ունէր

իր ուժեղ ազդեցությունը մեր թույլ կառավարությունների վրայ, որը գուրկ ուրեւ օրէնքից միշտ ենթակայ էր բռնակալ հարեւանի ցուցմունքներին եւ իրենց ցանկացած մարդուն պատժելու համար ունէր ամէն բան, բացի դատից:

Ահա թէ ինչո՞ւ այդ սեւ օրերին մենք ստիպուած էինք դաշնակցական ընկերներից կազմել ջոզ-ջոզ քաղաքական խմբեր, 7, 10 կամ 15 հոգուց ոչ աւելի, ժողովներ գումարել ծածուկ, խմբերի որոշումները իրարից գաղտնի, անգամ դաշնակցական ընկերները իրար անծանօթ: Ապա առաջ էր գալիս խմբապետական ժողովներ, ենթակոմիտէներ եւն.:

Այդպէս էր տարւում կազմակերպական գործը մեզ մօտ եւ ամէնուրեք մինչեւ ռուսական մեծ յեղափոխութիւնը:

Ռուսական նորակոչ երիտասարդ զօրքը, որ ամբողջովին կազմուած էր ժողովրդից, գիւղաց[ուց] եւ բանւորից, տապալեց արիւն-արցունքի վրայ կառուցուած միապետութիւնը եւ յեղափոխական ժամանակաւոր մարմինը փետրուարի վերջերին իր ձեռքն առաւ երկրի կառավարութիւնը: Ահա այդ պանծալի օրից մեր յեղափոխական կուսակցութիւնները, որոնց թւում եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, դուրս բարձրացան յատակի տակից եւ այդ օրերից էլ սկսում է գործունէութեան նոր եւ ազատ ասպարէզ, ինչպէս եւ անհրաժեշտօրէն առաջ է գալիս նոր-նոր խնդիրներ կազմակերպչական հարցերի շուրջը:

Այժմ մօտենանք այդ հարցերին մէկ-մէկ:

Գիւղացիական միութիւններ. —

Որ գիւղացիութիւնը պիտի կազմակերպել, դրա մասին երկու կարծիք չի կարող լինել մեր մէջ: Գիւղացիական միութիւններ կազմակերպելու կանոնադրութեան նախագիծեր կարծում եմ, որ այն օրակարգից դուրս է եւ այդ պէտք է մշակի մի յատուկ մարմին այն ներկայացնելու ներկայ կամ մօտիկ ապագայում կայանալիք ռայոնական ժողովին. ես կարիք եմ գգում ընկերների ուղադրութիւնը հրաւիրել գիւղացիական միութիւնների կուսակցական հողի վրայ կազմակերպելու անհրաժեշտութեան վրայ:

Մեր գիւղացիութիւնը բացարձակ անկազմակերպ վիճակի մէջ է. եթէ զանազան գիւղերում կան անհատներ, որ գաղափար ունին յեղափոխական կուսակցութեան մասին, ապա ուրեմն այդպիսիները չեն ճանաչում այլ կուսակցութիւն, եթէ ոչ միայն Դաշնակցութիւնը: Այդ ընդունելով պէտք է ուրեմն ազատ լինենք այն մտահոգութիւնից, որ գիւղացիութեան շահերը կը տուժեն յանուն կուսակցական անուան, որ բախում առաջ պիտի բերէր անհատ զանազան կուսակցականների մէջ, եթէ այդպիսիք լինէին:

Բացի այդ, ուղադրութեան պէտք է առնել եւ ուրիշ

հանգամանքներ — առաջին, մեր գիւղացիութիւնը, եթէ անշուշտ չեմ սխալւում նրա հոգեբանութեան մասին ունեցած իմ կարծիքով, ոչ մի հաւատ չի կարող տածել դէպի մի որեւէ ձեռնարկութիւն, եթէ այն չի արւում մի կուսակցութեան կողմից, որ հայ ժողովրդի մէջ ճանաչուած է իբրեւ նրա աշխատաւորական մասի բովանդակ շահերի պաշտպան եւ վայելում է որոշ հեղինակութիւն. իսկ այդպիսին ներկայացնում է միմիայն Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Երկրորդ, բոլորովին խակ, տնտեսապէս քայքայուած, մտաւորապէս չափազանց աննախանձեղի վիճակում դեռեւս կազմակերպման առաջին քայլերում գտնուող գիւղացիութիւնը չսայթաքելու համար կարիք ունի մի ամուր յենարանի, որին կոթնելու վստահացած նա պիտի սկսի իր գործը: Կազմակերպել գիւղացիութեան այդ նշանակում է նրան պատրաստել կուռի իր քրտինքով պարարտացողների դէմ, իսկ նա չի համարձակուի սկսել կուռը, մինչեւ վստահացած չլինի, որ իր նեղ օրերին իրեն բարոյական մեծ աջակցութեամբ օգնութեան պիտի հասնի մի ուժեղ կուսակցութիւն յանձին Դաշնակցութեան:

Արհեստակցական միութիւններ. — Հակառակ կովկասի ընկերների վերջին որոշման, պիտի ասեմ, որ ես եւս բաժանում եմ այն ընկերների կարծիքը, որ կողմնակից են կուսակցական արհեստակցական միութիւններ կազմակերպելուն: Դժբախտաբար ինձ յայտնի չեն այն պատճառները, որ դրդել են մեր ռուսահայ ընկերներին միանգամայն փոխել նախկին ռայոնական ժողովներում առաջ բերած եւ լայն կերպով արծարծուած այդ հարցի որոշումը, մի որոշում որ հիմնաւորուած է եղել բաւական յարգելի եւ խիստ ուշագրաւ պատճառաբանութիւններով: Ասում եմ, այդ փոփոխութեան մասին ես իրագեղ չեմ, բայց դրանից աւելի ես ուզում եմ մեր ընկերները իրենց ուշագրաւութեան արժանացնեն մեր տեղական ուրոյն պայմանները:

Թէ տեղական ընդհանուր ժողովներից եւ թէ երէկւան «միջկուսակցական յարաբերութիւնների» շիկացումից, թէ ուրիշ ընկերների կարծիքներից եւ թէ նամանաւանդ իրական կեանքից ես եզրակացրել եմ մի բան, որ մեր միջավայրում կայ միայն երկու հոսանք. մէկը, որ պատկանում է Հ. Յ. Դաշնակցութեան, միւսը, որ պատկանում է հակա Հ. Յ. Դաշնակցութեան. այս վերջին հոսանքն է, որ զանազան կուսակցական եարլիկների⁶ տակ ճանաչւում են մեզ մօտ: Եթէ ընկերներն էլ նոյն համոզման են յանգել, ապա ուրեմն պարզ պիտի լինի, որ մեր երդուեալ հակառակորդներից եւ ոչ մէկը չպիտի համաձայնի մեր ընկերների հետ համերաշխ որեւէ գործ կատարել, որքան էլ այդ միութիւնը կրէ

6.- Պիտակներու:



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

անկուսակցական անունը իր վրայ:

Ընդունելով նաեւ, որ այն բոլորը, որոնք գիտակցում են իրենց շահերը, բայց չեն պատկանում երկու հոսանքներից եւ ոչ մէկին, լինի նա արհեստաւոր թէ գործակատար, հազիւ թէ խոյս տայ Դաշնակցութեան անւան տակ կազմակերպուելուց: Այդպիսով ուրեմն, մենք տեսնում ենք որ կուսակցական հողի վրայ կազմակերպելու ոչ մի արգելառիթ չկայ, այլ ընդհակառակը այդպիսով աւելի հաւատ պիտի ներշնչենք եւ աւելի կուսակազմակերպութիւն պիտի ունենանք կուսակցական հողի վրայ:

Ես անցեալից օրինակ կամ աւելի ճիշտ անցեալի պատմութիւնը չարի, թւում է թէ անցեալը մեր տեղական ընկերներին ինձնից աւելի ծանօթ է:

Քաղաքական խմբեր.— Թւում է թէ այդ մասին երկար խօսելու պէտք չկայ. բաւական է ընդունել այն ուրախ փաստը որ այժմ հանգամանքները այնպիսի փոփոխութեան են ենթարկուել, որ այլեւս կուսակցական ընկերը չի ծածկուի իր ընկերից, որ հաւաքումները ստիպուած չենք լինի 8-10 հոգուց կայացնել, որ այդպիսի մի խղճուկ հաւաքումների համար տեղ գտնելու մտահոգութիւնից ազատ ենք եւն եւն. ապա ուրեմն ինքնըստինքեան պէտք է եզրակացնել, որ այսուհետեւ փոխանակ քաղաքական խմբերի, մենք պիտի ունենանք անջատ ընդհանուր ժողովներ եւ փոխանակ կեղծ անունների պիտի կոչենք այսինչ վայրի Դաշնակցութեան տեղական ընդհ. ժողով կամ դաշնակցական միութիւն:

Մարմիններ եւ նրանց փոխյարաբերութիւնները.—

Վերացնելով քաղաքական խմբերը, ընդունելով տեղական ընդհանուր ժողովների սկզբունքը, ինքնըստինքեան վերանում է խմբապետի եւ խմբապետական ժողովների հարցը: Խմբապետներն էին, որ յարաբերութիւն էին պահպանում խմբերի եւ ենթակոմիտէների կամ կոմիտէների միջեւ: Իւրաքանչիւր վայր ունենում էր ենթակոմիտէ կամ կոմիտէ համապատասխան իր կուսակցական ցենզին եւ դրանց ներկայացուցիչներն էին, որ մի մարմնից միւս մարմնին մատչելի էին լինում ու յարաբերութիւններ պահպանում: Կարծում եմ, որ այժմ կուսակցական մեխանիզմը աւելի պարզ պէտք է դարձնել եւ կուսակցական ցենզը ոչ այնքան խիստ:

Տեղական ընդհ. ժողովը գաղտնի քուէարկութեամբ ընտրում է 5-7 հոգի, որին տալիս է կոմիտէ կամ գործադիր մարմին անունը: Այդ գործադիր մարմինը չի ունենում նախկին կոմիտէների ինքնուրոյն եւ ազատ գործելակերպը. նա կամ գործադրում է ընդհանուր ժողովի որոշումները եւ կամ ընդհանուր ժողովի առաջ

բերում իր որոշումները: Ըստ իս գործադիր մարմինը միայն երկու պարտականութիւն պիտի ունենայ — առաջին գործադրել բոլոր այն որոշումները, որ կ'ընդունուին ընդհանուր ժողովից, եւ ի կատար ածել այն բոլորը ինչ որ կ'առաջարկի նրան Կենտ. կոմիտէն: Կոմիտէն կամ գործադիր մարմինը իր կողմից որեւէ գաղտնիք չի ունենում ընդհանուր ժողովից, նրա մէջ ծագած իւրաքանչիւր միտք դրւում է ընդհանուր ժողովին եւ նրա կողմից սանկցիա ստանալուց յետոյ գործադրւում: Սակայն ընդունելով, որ մենք մի յեղափոխական կուսակցութիւն ենք, եւ որքան էլ ազատ կարգերում ապրենք, էլի պիտի ունենանք մեր կուսակցական այնպիսի գաղտնի գործերը, որ պիտի գործադրւին նախքան ընդհանուր ընկերների սեպակականութիւն դառնալը. այդ գաղտնի գործը թողնենք Կ. կոմիտէին եւ նրա հետ որոշուելուց յետոյ՝ տեղական կոմիտէին: Ինձ թւում է այս ձեւը ընդունելով պիտի բաւարարուին եւ այն ընկերները, որ պնդում էին մեր ընդհ. ժողովներում, որ յամենայն դէպս մի բաց դուռ պէտք է թողնել կոմիտէին անկախ գործելու համար:

Ընդունելով, որ մեր գիւղացիութիւնը կազմակերպական տեսակէտից գտնւում է տակաւին առաջին շրջանում, որ նա հասունացած չէ ինքնուրոյն կուսակցութիւն իր շահագործողների դէմ, որ գիւղացիութիւնը կարիք ունի մեր ոյժին եւ վստահելի յենարանի՝ իր տնտեսական շահերը պաշտպանելու համար, որ անկուսակցական կազմակերպութիւնները ոչ մի հաւատ չեն կարող ներշնչել մեր գիւղացիութեան, ընդունում ենք գիւղացիական միութիւնները կազմակերպել կուսակցական հողի վրայ:

Նկատի ունենալով, որ մեր շրջանում չկան կազմակերպուած ուրիշ կուսակցութիւններ, այլ կան հակադաշնակցականներ, որ ոչ մի պայմանով չեն կարող օրկանական աշխատանք կատարել մեր ընկերների ու համակիրների հետ, ընդունելով, որ երկու հոսանքներից — Դաշնակցութիւնից եւ հակադաշնակցականներից դուրս մնացած, բայց իրենց շահերը գիտակցող աշխատաւորը չի խոյս տալ մեր դրօշի տակ կազմակերպուելուց, ընդունելով, որ եթէ գտնուին անհատներ այդպիսիներից, որ չուզենան մեր դրօշի տակ մտնել, այդպիսիների թիւը շատ սակաւաթիւ պիտի լինի եւ ընդհակառակը կուսակցական անունը պիտի հաւատ ներշնչէ աւելի ստուար մասին, ընդունելով նաեւ, որ անկուսակցական միութիւնները լինելով տակաւին շատ անպատրաստ, կարող են սայթաքումներ անել, որոշում է արհեստակցական միութիւնները կազմակերպել կուսակցական հողի վրայ:



Փաստ. 484-33

Բ 4.- ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ Հ.Յ.Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՏՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ի նիստ

Հ. Յ. Դաշնակցութեան Ատրպատականի Ծրջ Շրջանային ժողովը, համաձայն Թաւրիզի Ժամանակաւոր մարմնի հրահրի, տեղի ունեցաւ յունիս 21ին 1917ին երեկոյեան ժամը 7,5ին հայկական ակումբի դահլիճում:

Ժողովը բաց արեց ընկ. Գասպար Յակովբեանը, որը իւր ճառի մէջ ողջունելով Հ.Յ.Դ. Ատրպ. Ծրջ Շրջ. ժողովի գումարումը ներկայ ազատ կարգերում, առաջարկեց յարգել ռուսական յեղափոխութեան համար ընկած մարտիկներին, Հ. Յ. Դաշնակց. նահատակ ընկերներին եւ տաճկահայ զոհուած եղբայրներին յիշատակները յոտնկայս... Դորանից յետոյ ողջոյնի խօսքեր ասացին ընկերներ Ջօրա Սագինեան, Ալեքսան Տէր Յակովբեան, Ալեքսան Յովհաննիսեան, Արմենակ Ալլահվէրտեան, Թովմաս Ալեքսանեան եւ Մկրտում Սահակեան, որոնք բոլորն էլ իրենց ճառերում ընդգծեցին ներկայ մոմենտի առանձնայատուկ նշանակութիւնը եւ Ատրպատականի շրջանային ժողովի կատարելիք դերը:

Ապա ընկերներին կողմից առաջարկուած է ողջոյնի հեռագրեր ուղարկել Հ.Յ.Դ. վետերան ընկ. Ռոստոմին, Հայաստանի եւ Արեւելեան բերրոններին, ռուսական զինուորական եւ ծովային միւստր Կէրէնսկուն, եւ պարսիկ դեմոկրատիային (Թեհրանի եւ Թաւրիզի թերթերի միջոցաւ):

Ապա թէ ընկ. Գասպարը կարդում է նախապատրաստական, խորհրդակցական ժողովում մշակուած ռէկլամները, որ եւ վաւերացում է ժողովից որի համաձայն տեղի է ունենում եւ Դիւանի ընտրութիւնը. նախագահներ են ընտրուում ընկեր Գասպար Յակովբեան, ընկեր Հայրապետ Պանիրեան: Իսկ քարտուղարներ՝ ընկեր Արտաշէս Յարութիւնեան, ընկեր Վաղինակ Տէր Յակովբեան:

Սրանից յետոյ յայտարարուում է ընդմիջում, որի ընթացքում դիւանը ստուգում է պատգամաւորներին մանդատները:

- Ընտրուած պատգամաւորներն են՝
- Խոյից՝ ընկ. Գասպար Յակովբեան
- Ջուլֆայից՝ » Արմենակ Ալլահվէրտեան
- Թաւրիզից՝ » Վաղինակ Տէր Յակովբեան եւ » Տիգրան Եգանեան
- Ուրմիայից՝ » Արտաշէս Յարութիւնեան եւ » Թովմաս Ալեքսանեան
- Ժամկ. մարմնի կողմից ընկ. Միքայէլ Ստեփանեան
- Այգի խմբ. » Երուանդ Աֆթանդիլեան

Թեհրանից
Ղարադաղից
Մուսամբարից

ընկ. Ջօրա Սագինեան
» Խաչատուր Գրիգորեան
» Յովակիմ Մելիքեան

Նախապատրաստական ժողովի կողմից ձայնի վճռական իրաւունքով հրահրուած են
Ընկերներ՝ Ալեքսան Տէր Յակովբեան, Ալեքսան Յովհաննիսեան, Հայրապետ Պանիրեան:

Իսկ խորհրդակցական ձայնով հրահրուած են
Տիկին Աշխէն Սահակեան
ընկերներ Կարապետ Աբեան
Արամ Ապրէսեան
Մատթէոս Արամեան
Արշաւիր Գասպարեան
Խաչատուր Մելիք Վարդանեան
Խաչատուր Յովհաննիսեան
Գրիգոր Յարութիւնեան
Մկրտում Սահակեան

Ընդմիջումից յետոյ նիստը շարունակուում է ընկ. Հ. Պանիրեանի նախագահութեամբ:

Օրակարգի խնդիրներն են՝ ա) Ձեկուցումներ շրջաններից, բ) Պարսկաստանի ռայոնական ժողովը:

Թաւրիզ. — Ձեկուցում է կարդում ընկ. Մ. Ստեփանեանը: Նախ ամփոփ տեղեկութիւն է տալիս կազմակերպութեան վիճակի մասին մինչեւ ռուսական մեծ յեղափոխութիւնը, ապա նկարագրում է թէ ինչպէս ռուսական յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ ընկերները կազմակերպուում են. ընտրում է ժամ[անակաւոր] մարմին եւ գործի է անցնում. Ժամանակ. մարմինը յաջողութեամբ տարել է տեղական պրոպագանդայի գործը, աշխատել է յարաբերութեան մէջ մտնել հարեւան պարսիկ դեմոկրատ կուսակցութիւնների հետ եւ նախաձեռնել է հրահրելու ներկայ շրջանային ժողովը:

Տնտեսականի մասին զեկուցում է կարդում ընկեր Երուանդ Աֆթանդիլեանը, որից տեղեկանում ենք որ Ապրիլ 7ի մինչեւ Յունիս 20ը ունեցել է
Մուտք 56 ըուբլ. 134 դրան
Ելք 48 » 75 դրան 80 սանտ.
Մնում է 8 ըուբլ. 58 դրան 20 սանտ.

Ուրմիա. — Ձեկուցում է ընկ. Թովմաս Ալեքսանեանը. նախ շրջանի տնտեսական վիճակը ներկայացնում է բաւականին անմիտար դրութիւն, սակայն համեմա-



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

տաբար տնտեսապէս լաւ են նախ ասորիները, ապա հայերը եւ այնուհետեւ պարսիկները:

բ) Ազգային կուլտուրական կեանքը անմխիթար է սակայն համեմատաբար հայերը առաջի տեղն են գրաւում:

գ) Քաղաքական կացութիւնը նոյնպէս անմխիթար վիճակի մէջ է շնորհիւ պատերազմից յառաջացած անապահովութեան:

դ) Հարեւան ժողովրդի հետ եղած յարաբերութիւնները, շնորհիւ վերջին քաղաքական անցքերի, թալանի եւ աւերածութեան, լաւ չեն:

ե) Կազմակերպչական վիճակը ռուսական ռէակցիայի ազդեցութեան տակ անգործութեան էր դատապարտուած. սակայն ռուսկ. յեղափոխութիւնից յետոյ մխիթարական դրուժին է ներկայացնում:

Չուլֆայից գեկուցում է կարդում ընկ. Ա. Ալլահ-վէրդեանը.

ա) Աննախանձելի դրուժեան մէջ. շրջանի բնակչութեան ճնշող տոկոսը կազմում են բանուորները:

բ) Համեմատաբար բարձր աստիճանի վրայ է կուլտուրականը. ունեցել են կուլտուրական միութիւն, որ գործել է յաջողութեամբ:

գ) Քաղաքական կացութիւնը յեղեղուկ վիճակ է ունեցել ռուս-պարսկական անցուղարձի պատճառով:

դ) Յարաբերութիւնները տեղական ուրիշ ժողովուրդների հետ լաւ հիմքերի վրայ է դրուած:

ե) Նոր է կազմակերպւում. երկաթուղու հայ բանուորութիւնից եւ տեղական հայ համայնքից ունի 100 անդամներ:

Ալլայից գեկուցում է կարդում ընկ. Գ. Յակովբեանը.

ա) Տնտեսական վիճակը ոչ այնքան լաւ

բ) Կուլտուրական կեանքը ցանկալի վիճակում չէ. ժողովուրդը սառն է վերաբերւում:

գ) Քաղաքին կացութիւնը կապ ունի հարեւան թուրք ժողովրդի կացութեան հետ, որը եւ համակերպւում է տիրող դրութեան հետ:

դ) Յարաբերութիւնը թուրք հարեւանների հետ լաւ է:

ե) Կազմակերպական վիճակը վերջերումս մխիթարական է:

Ղարազաղից գեկուցում է ընկ. Խ. Գրիգորեանը:

ա) Տնտեսական վիճակը միանգամայն աննախանձելի:

բ) Կուլտուրական կեանքը աւելի քան անմխիթար է. ամբողջ Ղարազաղում կայ միայն 2 դպրոց:

գ) Քաղաքական դրութիւնը յեղեղուկ է. գոյութիւն ունի խաների անվերջ շահատակութիւն:

դ) Յարաբերութիւնները հարեւան ժողովրդի հետ լաւ, ունենալով դասակարգային համանման վիճակ:

ե) Կազմակերպութիւն գոյութիւն չունի:

Մուժամբաբից բանաւոր գեկուցում է Յ. Մելիքեանը:

ա) Տնտեսական դրութիւնը լաւ չէ. պանդխտութիւնը զարգացած է:

բ) Կուլտուրական կեանքը համեմատաբար մխիթարական է. ունի դպրոց, գրադարան:

գ) Քաղաքական կացութիւնը նոյնն է ինչ որ Թաւրիզում:

դ) Յարաբերութիւնները պարսիկ հարեւանների հետ մինչեւ 1908 թ. լարուած է եղել. այժմ համերաշխ են եղել իրարու հետ:

ե) Մշտական կազմակերպութիւն չկայ շնորհիւ նախաձեռնութեան բացակայութեան. սակայն տրամադրութիւնը կայ կազմակերպուելու:

Մարաղայի եւ Սալմաստի շրջանների մասին գեկուցումներ չեն կարդացւում պատգամաւորների բացակայ լինելու պատճառով:

Ձեկուցումներից յետոյ տեղի ունեցած մտքերի փոխանակութեան ընդհանուր տպաւորութիւնը հետեւեալն է, որ դրութիւնը շրջաններում բոլոր յիշեալ տեսակէտներից մխիթարական չէ: Սակայն ամէն տեղ էլ կազմակերպուելու մեծ ձգտում է նկատուում, միայն հարկաւոր են ցուցումներ ու հրահանգներ մի աւելի բարձր մարմնից, որի պատճառով եւ շրջանային ժողովի վրայ պարտք է ընկնում այդ մասին անմիջապէս հոգ տանել:

Ապա ժողովն անցնում է օրակարգի երկրորդ կէտին՝ Ռայոնական ժողովի խնդրին:

Այդ մասին գեկուցում է կարդում ընկ. Ա. Յովհաննիսեանը, իւր բանաձեւում առաջարկելով գումարել Պարսկաստանի Ռայոնական ժողով եւ կազմել պարսկահայ հատուածի համար առանձին բւրօ:

Սակայն մտքերի փոխանակութիւնից յետոյ ժողովը անհրաժեշտ գտաւ, Թեհրանի պատգամաւորի առաջարկութեան հիման վրայ, մօտիկ ապագայում ունենալ միայն Թաւրիզի եւ Թեհրանի կոմիտէների մի միացեալ խորհրդակցական ժողով, լուծելու մի շարք հրատապ խնդիրներ. պարսկահայերիս վերաբերող ժողովի տեղը որոշուում է Թեհրանը:

Թաւրիզի կողմից պատգամաւոր է ընտրուում ընկ. Զօրա Սաբինեանը:

Նիստը փակուում է երեկոյեան ժամի 12ին:

Յաջորդ ժողովի օրակարգի խնդիրներ են.

1) Մեր երկրի ներկայ քաղաքական կացութեան բնորոշումը:

2) Միջկուսակցական յարաբերութիւնները:

II նիստ

Հ.Յ.Դ. Ատրպատականի շրջանային ժողովի Բ. նիստը տեղի ունեցավ երեք. ժամի 7½-ին «Հայկական ակումբում»: Նախագահում է ընկ. Գ. Յակովբեանը: Օրակարգի խնդիրներն են.

ա) Մեր երկրի ներկայ քաղաքական կացութեան բնորոշումը:

բ) Միջկուսակցական յարաբերությունները:

Կարգացում է Ա. նիստի արձանագրությունը: Ժողովի կողմից արևում են հետեւեալ դիտողությունները:

Արձանագրության մէջ Թաւրիզի եւ Թեհրանի Կենտ. կոմիտէները միացեալ խորհրդակցական ժողովի ժամանակի մասին չէ յիշուած. պէտք է աւելացուի՝ «Յիշեալ ժողովը պէտք է գումարուի ամենակարճ միջոցում»: Նոյնպէս եւ չէ յիշուած յիշեալ ժողովի պատգամաւորների թուի մասին. պէտք է աւելացուի ուրեմն՝ «Յիշեալ խորհրդակցական ժողովում երկու Կենտ. կոմիտէներն էլ հաւասար թուով պատգամաւորներ պէտք է ունենան»:

Արձանագրութեան ընթերցումից յետոյ օրակարգի առաջին խնդրի մասին զեկուցում է կարգում ընկ. Ալեքսան Տէր Յակովբեանը. զեկուցողը մանրամասն վերլուծում է Պարսկաստանի այժմեան քաղաքական հասարակական կազմը, դասակարգերը, ապա կանգ է առնում ռուսական յեղափոխութիւնից յետոյ Պարսկաստանում նկատուող շարժումների վրայ եւ անուանում այդ շարժումները բեֆորմիստական շարժումներ, որոնց կրողը հանդիսանում է բուրժուազիան:

Վերջում շօշափելով Հայ Յ. Դաշնակցութեան դերը, զեկուցողը այն կարծիքն է յայտնում, որ Հ.Յ.Դ-ը անպայման պիտի սերտ գործակցութիւն ունենայ պարսիկ դեմոկրատ տարրերի հետ: Զեկուցումից յետոյ կարգացում են պատգամաւորների բերած ռեզոլուցիաները օրուայ խնդիրների մասին, որից յետոյ տեղի է ունենում մտքերի փոխանակութիւն:

Ընկերներից մի քանիսը իրենց բնորոշման մէջ, յենւելով անցեալ Պարսկաստանի յեղափոխութեան փորձի վրայ, դիտել է տալիս ժողովին, որ Պարսկաստանի ներկայ շարժումներին մասնակցելով հանդերձ, փոքր ինչ վերապահ եւ շրջանկատ տաքտիք պէտք է ունենայ մօտենայով խնդրին, ոչ թէ տեսականապէս այլ գործնականապէս: Ընկերներից ոմանք էլ շեշտում էին որ Հ.Յ.Դ-ը Պարսկաստանում լինելով միակ պատրաստուած ու գիտակից կուսակցութիւնը, պէտք է աշխատի ուսուցչի ու դեկավարի դեր ստանձնել, ազդելով պարսիկ դեմոկրատ կուսակցութիւնների վրայ եւ նրանց մղելով աշխատաւորական գործելակերպի:

Մտքերի փոխանակութիւնից յետոյ վերջ ի վերջոյ անցնում է Թաւրիզի մշակած բանաձեւը, առանց նրա վերջին մասի ուր խօսուում է «Ազգային կուլտ. ակտոնոմիայի» պահանջի մասին. որոշում է ազգային կուլտուրական ակտոնոմիայի հարցով առանձին ժողովում զբաղուել:

Զեկուցանող ընկ. Ա. Տէր Յակովբեանը միանում է Թաւրիզի բանաձեւին որ հետեւեալն է.

«Ի նկատի ունենալով, որ Հ.Յ.Դ-ը լինելով քաղաքական եւ սոցիալիստական կուսակցութիւն, չի կարող լուր աշխատեսի դերում մնալ մեր երկրի քաղաքական կացութեան մէջ տեղի ունեցող անցուդարձերի եւ պարսիկ դեմոկրատ տարրերի քաղաքական շարժումների հանդէպ. շարժումներ, որոնք կարող են ստեղծել մեր երկրում դեմոկրատական կարգեր, ուր միայն կարող են գոյութիւն ունենալ եւ պաշտպանութիւն գտնել հայ եւ պարսիկ դեմոկրատ տարրերի մինչեւ այժմ ոտնահարուած իրաւունքները եւ ուր միայն հնարաւոր կը լինի աշխատաւորութեան տնտեսական պայքարը իրեն շահագործողների դէմ»:

Ատրպատականի շրջ. ժողովը որոշեց մասնակցութիւն ունենալ ինչպէս անցեալները բոլոր այն շարժումներին, որոնք ձգտում են դեմոկրատիկ հասարակարգ ստեղծել համայն Պարսկաստանում:

Ընդմիջումից յետոյ ժողովն անցնում է օրակարգի երկրորդ խնդրին, որի մասին զեկուցում է ընկեր Հ. Պանիրեանը:

Զեկուցողը մանրամասն կանգ է առնում պարսիկ կուսակցութիւնների վրայ տալով նրանց յառաջանալու պատմութիւնը, ծրագիրն ու տաքտիքը, ապա մեր իրականութեան մէջ եղող հայ եւ օտարագրի կուսացութիւններին. եւ վերջն էլ ռուսական գործադիր կոմիտէներին:

Զեկուցողը այն կարծիքին է որ մանաւանդ պարսիկ դեմոկրատ կուսակցութիւնների հետ Հ.Յ.Դ-ը անպայման պէտք է գործակցի Պարսկաստանի դեմոկրատիայի շահի շուրջը:

Զեկուցումից յետոյ կարգացում են պատգամաւորների բերած ռեզոլուցիաները, որոնք ընդհանրապէս նման բովանդակութիւն ունին:

Ապա տեղի է ունենում մտքերի փոխանակութիւն. արտայայտուողները գրեթէ պաշտպանում են նոյն կարծիքը, այսինքն՝ զեկուցողի եւ Թաւրիզի բանաձեւին մէջ առաջադրուած մտքերը. այդ բանաձեւը բաղկացած է երեք մասից եւ առանձին-առանձին է դրուում քուէարկութեան.—

ա) Մեր միջկուսակցական յարաբերությունները հայ կուսակցութիւնների հետ պիտի լինի ձեռնպահ, որովհետեւ առայժմ չկան կազմուած մեզանում հայ կուսակցութիւններ. եղածներն էլ հակադաշնակցական բնոյթ ունին: Հայ կուսակցութիւնների հետ մեր համագործակցութիւնը կարող է լինել միայն այն դէպքում, երբ այդ համագործակցութեան ժամանակ ի նկատի կ'առնուին մեր նուազագոյն պահանջներն ամբողջովին:

բ) Մեր գործակցութիւնը կը լինի պարսիկ դեմոկրատ կուսակցութիւնների հետ այնչափով, ինչ չափով որ այդ ուղղուած կը լինի պաշտպանելու Պարսկաստա-



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

նի դեմոկրատիայի շահերը:

գ) Գործադիր կոմիտեիները ներկայանալով ռուսական ժամանակաշրջանը կառավարութեան արտադրարժեքները Պարսկաստանում, մեր վերաբերմունքն ու յարաբերությունները այսուհետև պէտք է լինին նրանց հետ առկա սերտ ու բարեացակամ այնքան ժամանակ քանի գործադիր կոմիտեիների կողմից ի նկատի կ'առնուի Պարսկաստանի դեմոկրատիայի շահերը:

Այս բանաձևի ա. եւ բ. մասը անցնում է միաձայն, իսկ երկրորդը մի ձայնի բացառութեամբ:

Ընկ. Ա. Տէր Յակովբեանի առաջարկութեամբ, ժողովը համաձայնում է խմբագրական յանձնաժողով կազմել բանաձևերը առկա մշակուած հանդէս բերելու եւ հրատարակելու համար:

Նիստը փակուում է երեկ. ժամի 12ին:

Յաջորդ ժողովի օրակարգի խնդիրներն են

ա.- Կազմակերպչական հարցեր

բ.- Բանաւոր եւ գրաւոր պրոպագանդը:

Նիստին բացակայում էր Մուսթաֆայի պատգամաւորը (Թաւրիզում գտնուած) եւ Սալմաստինը (դեռեւս չեկած):

III Նիստ

Հ.Յ.Դ.-ն Ատրպատ. Շրջ. ժողովի Գ. նիստը տեղի ունեցաւ յունիս 23ին երեկոյեան ժամի 7 1/2ին «Հայկական ակումբում», նախագահութեամբ ընկ. Հ. Պանիրեանի: Կարգաւորեց նախորդ նիստի արձանագրութիւնը եւ վաւերացրուեց:

Ժողովի օրակարգի խնդիրներն են.

ա.- Կազմակերպչական հարցեր

բ.- Բանաւոր եւ գրաւոր պրոպագանդան:

Օրակարգի ա. կէտի մասին զեկուցում է ընկ. Մ. Սահակեանը: Զեկուցողը նախ կանգ է առնում կազմակերպութիւնների վիճակի վրայ մինչեւ ռուսական յեղափոխութիւնը երբ տիրող կարգերի պատճառով դրանց գործունէութիւնը ստորերկրեայ բնոյթ էր կրում. սակայն ռուսական յեղափոխութիւնից յետոյ դրութիւնը փոխուած լինելով, ընկերը առաջարկում է ուրեմն նախկին կազմակերպական ձեւերը որոշ փոփոխութեան ենթարկել. անցնելով գիւղացիական եւ արհեստակցական միութիւնների խնդրին, ընկերը այն կարծիքն է յայտնում, որ պէտք է դրանք կուսակցական հողի վրայ կազմակերպել:

Քաղաքական խմբերի գոյութիւնը նա այժմ նպատակայարմար չէ իմանում, առաջարկելով դրա փոխարէն կազմել մի այլ միաւոր՝ ընդհանուր ժողով կամ Դաշնակցական միութիւն անուան տակ:

Մարմինների մասին հետեւեալն է ասում՝ պէտք է

ունենալ կոմիտէ եւ Կենտր. կոմիտէ:

Կոմիտէն հանդիսանում է գործադիր մարմին ընդհանուր ժողովի եւ մեծապէս կախուած նրանից, սակայն Կենտր. կոմիտէի նկատմամբ նա առաջուայ չափ կախուածութիւն չպէտք է ունենայ:

Զեկուցումից յետոյ պատգամաւորները կարդում են իրենց բերած ռեզոլուցիաները, որից յետոյ տեղի է ունենում մտքերի փոխանակութիւն: Արտադրարժեքները բաժանում են երկու հոսանքի. մի մասը համամիտ է գիւղացիական եւ արհեստակցական միութիւնները կազմակերպել կուսակցական հողի վրայ, իսկ միւս մասը՝ անկուսակցական հողի վրայ:

Առաջին կարծիքի կողմնակիցները հիմնաւորում են իրենց տեսակէտն այսպէս.

«Մեր իրականութեան մէջ դեռեւս գոյութիւն չունին տնտեսական այնպիսի հիմունքներ, որոնց ստիպմամբ հնարաւոր լինէր բոլոր աշխատաւորների համախմբումն յօգուտ իրենց շահերի:

բ) Որ կազմակերպութիւնը որպէս աշխատաւորական կուսակցութիւն հանդէս կը գայ եւ զօրավիզ կը լինի նրանց պահանջների իրականացման:

գ) Որ տեղական արհեստաւորութիւնը եւ գիւղացիութիւնը դեռեւս չունին այդ պատրաստակամութիւնը, որ ինքնուրոյն կերպով կարողանան տնօրինել իրենց ներքին կեանքի կազմակերպումն եւ ընթացք տան նրանց. ապա այդ կարծիքի կողմնակիցները փաստ են բերում եւրոպական երկրների աշխատաւորութեան կազմակերպութեան պատմութիւնից օրինակներ, որոնցով ապացուցում են թէ որքան մեծ դեր են խաղացել կուսակցական կազմակերպութիւնները աշխատաւորութեան պայքարում:

Անկուսակցական միութիւնների կողմնակիցներն էլ իրենց տեսակէտը հիմնաւորում են հետեւեալ կերպով.—

ա) Որ եթէ կուսակցական հողի վրայ կազմակերպուելու լինին աշխատ. եւ գիւղ. միութիւնները, աշխատաւորութեան մի զգալի մաս այդ միութիւններից դուրս կը մնայ, որի պատճառով եւ դաշնակցական աշխատաւորների առաջադրուելիք պահանջները կը մնան անիրագործելի:

բ) Որ տեղական աշխատաւորութեան մեծագոյն մասը կազմում է թուրք տարրը, հետեւապէս նա պէտք է հեռու մնայ եթէ արհեստակցական եւ գիւղացիական միութիւնները կազմակերպուեն կուսակց. հողի վրայ, եւ

գ) Որ (կուսակցութիւնը) Հ.Յ.Դ.-նը հետապնդելով նաեւ քաղաքական մեծ պահանջներ ու նպատակներ, որոնց գործադրման համար անհրաժեշտ է ամբողջ էներգիայով աշխատիլ. այնինչ այն դէպքում երբ այդ միութիւնները կուսակցական հողի վրայ դրուած լինին, Հ.Յ.Դ.-ն պիտի ստիպուած լինի որոշ աշխատանք եւ ուժ սպառելու նաեւ այդ ուղղութեամբ. ապա այդ կարծիքի կողմնակիցները դիտել են տալիս, որ յիշեալ

միութիւնները անկուսակցական հողի վրայ կազմակերպելով, Հ.Յ.Դ. ն առիթ կ'ունենայ այդ միութեան մէջ մտնող իր կուսակցական ընկերների միջոցով պրոպագանդա անել նոյն միութիւնների անկուսակցական աշխատակողմերի մէջ, այդպիսով ստուարացնելով իւր կուսակցական շարքերը նոր ընկերներով: Ապա միութիւնները կազմակերպելով անկուսակցական հողի վրայ, կարելի է որոշ չափով համերաշխութիւն մտցնել մեր իրականութեան մէջ նկատուող միջկուսակցական կրքոտ եւ անհաշտ յարաբերութիւնների մէջ:

Ստեբերի փոխանակութիւնից յետոյ, խնդիրը բաւական պարզուած լինելով, դրոււմ է քուէարկութեան կուսակցական հողի վրայ կազմակերպելու կողմնակիցների տեսակէտը անցնում է ձայների մեծամասնութեամբ՝ 11 ձայն ընդդէմ 4ի եւ մէկ ձեռնպահի:

Իսկ քաղաքական խմբերի մասին կայանում է հետեւեալ որոշումը.— Ընդհանրապէս աշխատել թողնել նախկին խմբական ձեւը, ունենալով դրանց փոխարէն մի ընդհանուր ժողով: Իսկ այն վայրերում ուր տեխնիքական անյարմարութիւնների պատճառով հնարաւոր չի լինի այդ իրագործել, պահպանել նախկին ձեւը: Մարմինների փոխյարաբերութիւնը ընդունոււմ է այն ձեւով, ինչ ձեւով որ առաջարկոււմ է գեկուցողը:

Ընդամիջումից յետոյ ժողովն անցնում է բանաւոր եւ գրաւոր պրոպագանդայի խնդրին, որի մասին գեկուցում է կարգում ընկեր Գ. Յակովբեանը:

Զեկուցողը նախ կանգ է առնում մինչ այժմեան պրոպագանդի անբաւարար լինելու եւ նրա պատճառների վրայ, շեշտում է որ ներկայ օրերում երբ շինարար գործի շրջան է, անկարելի է այլեւս առանց լուրջ պրոպագանդի կառավարուել եւ առաջարկում է լուրջ հիմքերի վրայ դրուած բանաւոր եւ գրաւոր պրոպագանդա նախ մեր մասսայի մէջ եւ ապա հարեւան ժողովուրդների մէջ: Ընկերը վերջը շեշտում է նաեւ սեպհական օրգանի կարիքը նաեւ գրաւոր պրոպագանդայի տեսակէտից:

Ընկերը ապա տալիս է իւր բանաձեւը, որը պատգամաւորների ռեզոլուցիաների ընթերցումից եւ մտքերի փոխանակութիւններից յետոյ ընդունոււմ է բոլորից բացառութեամբ մէկի:

Այդ բանաձեւը հետեւեալն է:
«Շրջանային ժողովը լսելով բանաւոր եւ գրաւոր պրոպագանդայի մասին եղած կարծիքները, գտաւ որ անհրաժեշտ է աւելի լաւ ու ամուր հիմքերի վրայ դնել այդ կարեւոր գործը թէ քաղաքում եւ թէ գաւառներում, որի համար անհրաժեշտ է բացի այն ընկերներից, որոնք իրենց ազատ ժամերը տրամադրելի են դարձնում այդ գործին, ունենալ եւ յատուկ այդ գործով զբաղուող պրոպագանդիստներ. գրաւոր պրոպագանդի գործում անհրաժեշտ է ունենալ սեպհական օրգան, այդ նպատակին ծառայեցնելով «Այգը», իսկ աշխատակողմերի հանրամատչելի գրականութեան համար օգտուել կովկասի Դաշնակցութեան ձեռնարկած հրատարակութիւններից:

բ) Հարեւան պարսիկ ժողովրդի յեղափոխական տարրերի մեր մասին ունեցած անծանօթութիւնը վերացնելու եւ պարսիկ աշխատակողմութեանը մեր սկզբունքների հետ ծանօթացնելու համար, անհրաժեշտ է ունենալ «Այգին» կից պարբերաբար հրատարակուող պարսկերէն լեզուով բաժին եւ ընդհանրապէս ամէն առիթից օգտուել բանաւոր եւ գրաւոր պրոպագանդ մղելու պարսիկ ժողովրդի մէջ եւ ապահովելու երկու ժողովուրդների աշխատակողմութեան դրացիական կապերն ու դասակարգային համագործակցութիւնը:

գ) Անհրաժեշտ է ուրեմն ստեղծել այդ նպատակների իրագործման համար պրոպագանդայի Փոնդ կազմակերպչական եւ այլ միջոցներից:

Ներկայ ժողովին մասնակցում էին նաեւ Շարաբխանէի պատգամ[աւոր] ընկեր Թարվէրդեանը եւ Սալմաստի պատգ. Ս. Մանգասարեանը, իսկ Մարաղայից պատգամաւոր եկած չլինելու պատճառով ժողովը ընկ. Հ. Աղաբէգեանին հրաւիրում է որպէս Մարաղայի ներկայացուցիչ վճռական ձայնի իրաւունքով:

Նիստը փակոււմ է երեկ. ժամի 12ին:

Յաջորդ ժողովի օրակարգերն են՝

ա.- Շրջանային մնացած գեկուցումների ընթերցումը

բ.- Մէջլիսի ընտրութիւնները եւ մեր վերաբերմունքը

գ.- Ազգային կուլտ. աւտոնոմիայի հարցը

դ.- Պարսկաստանի ռայոնական ժողովը

ե.- Առաջարկներ մարմինների կողմից

զ.- Ընտրութիւններ:

IV Նիստ

Հ.Յ.Դ.-ն Ատրպատականի Շրջ. ժողովի 4րդ նիստը տեղի ունեցաւ յունիս 24ին, երեկ. ժամի 7ին «Հայկ. ակումբում», ընկ. Գ. Յակովբեանի նախագահութեամբ:

Կարգացուեց նախորդ նիստի արձանագրութիւնը, որի նկատմամբ ընկերներից հետեւեալ դիտողութիւնները արուեցին.

ա.- Արձանագրութեան մէջ գրուած էր թէ գեկուցողը «Քաղաք. խմբերի գոյութիւնը նա այժմ նպատակաւոր մար չէ իմանում», պէտք է լինի՝ «Զեկուցողը — քաղաքական խմբերի նախկին խմբակային ձեւը նպատակաւոր չէ իմանում»:

բ.- Արձանագրութեան մէջ գրուած է, որ Գ. Յակովբեանի բանաձեւն անցնում է ձայների մեծամասնութեամբ՝ ընդդէմ մէկ ձայնի, պէտք է լինի՝ «Բանաձեւն անցնում է միաձայն»:



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

- Այսօրուայ ժողովի օրակարգի խնդիրներն են.
- ա.- Մնացած շրջ[անների] զեկուցումների ընթերցումը
- բ.- Մէջլիսի ընտրութիւնները եւ մեր վերաբերմունքը
- գ.- Ազգ. կուլտ. ակտոնումիայի հարցը
- դ.- Պարսկ. ռայոնական ժողովը
- ե.- Առաջարկներ մարմինների կողմից
- զ.- Ընտրութիւններ զանազան մարմիններին:

Որովհետեւ Ա. նիստին Սալմաստի եւ Շարաբխանէի պատգամաւորները բացակայում էին եւ այդ շրջանների մասին տեղեկագրեր ժողովում չկարդացուեցին, ուստի նախագահը հրահրում է յիշեալ վայրերի պատգամաւորներին տալ իրենց շրջանի մասին զեկուցում:

Սալմաստի պատգամաւորի զեկուցումից տեղեկանում ենք որ տնտեսական դրութիւնը գաղթից յետոյ չափազանց անմխիթար է — կրթական վիճակը նոյնպէս. քաղաքական կացութիւնը նոյնպէս լուրջ է եւ սպառնական Սմիւհ-ի ասպատականութիւնների պատճառաւ:

Կազմակերպական վիճակը համեմատաբար լաւ է, կան կազմակերպուած մօտ 24 գիւղեր, 26 խմբով, մօտ 200-250 անդամներով:

Շարաբխանէի պատգամաւորը բանաւոր զեկուցում է, որ այնտեղի հայ աշխատաւորութիւնը, բաղկացած մօտ 100 բանուորներից, դեռեւս լաւ կազմակերպուած չեն եւ յաճախ շահագործուած են միւս կուսակցութիւններից. ընկերը Շրջ. ժողովի ուշադրութիւնն է հրահրում այն հանգամանքի վրայ, որ պէտք է այնտեղ մի փորձուած պրոպագանդիստ-կազմակերպիչ ընկեր ուղարկել:

Ապա ժողովն անցնում է օրակարգի Բ. կէտին, որի մասին զեկուցում է ընկ. Շ. Աֆթանդիլեանը:

Զեկուցողը մանրամասն տալիս է պարսկական յեղափոխութեան ծագման պատմութիւնը, Մէջլիսի առաջ գալը, առաջին, երկրորդ եւ երրորդ մէջլիսների գործունէութիւնը, պատգամաւորների կազմը, եւ միառժամանակ կանգ առնելով հայ պատգամաւորի կատարած դերի վրայ: Անցնելով յառաջիկայ չորրորդ մէջլիսի ընտրութիւններին, զեկուցողը այն կարծիքն է յայտնում որ Հ.Յ.Դ.-նը պէտք է անպայման մասնակցէ, ունենալով իւր կոչման բարձրութեան վրայ կանգնած պատգամաւոր:

Զեկուցումից յետոյ կարդացուած է շրջաններից բերած ռեզոլուցիաները. ապա տեղի է ունենում մտքերի երկար փոխանակութիւն, որից յետոյ 14 ձայնով ընդդէմ 2-սի անցնում է հետեւեալ բանաձեւը.

— Հ.Յ.Դ.-եան Ատրպտ. Շրջ. ժողովը լսելով Մէջլիսի ընտրութիւնների շուրջը եղած կարծիքները, եկաւ այն եզրակացութեան, որ Հ.Յ.Դ.-ն ընկերները պէտք է մասնակցեն Մէջլիսի յառաջիկայ ընտրութիւններին, որովհետեւ թէ որպէս քաղաքացի եւ թէ որպէս պարսկահայ

նրանք պարտաւոր են երկրի միակ դեմոկրատիկ հիմնարկութեան գործունէութեան մէջ իրենց բաժինն ունենալ եւ բ) որովհետեւ մանաւանդ յառաջիկայ Մէջլիսը կարեւոր անելիքներ ունի եւ շատ հաւանական է [որ] դառնայ Սահմանադիր ժողով:

Ապա ժողովն անցնում է օրակարգի 3րդ կէտին՝ Ազգ. կուլտ. ակտոնումիայի խնդրին: Այս առթիւ տեղի է ունենում մտքերի երկար փոխանակութիւն, որից յետոյ միաձայն ընդունուած է հետեւեալ բանաձեւը.

— Աչքի առաջ ունենալով ա) պարսկահայերի փոքրամասնութիւն [յիսելը] ուրիշ ազգերի հանդէպ, բ) պարսկահայ աշխատաւորութեան շահերը, գ) Քաղաքակրթութիւնների տարբերութիւնը հայ եւ պարսիկ ազգութիւնների, Ատրպ[ատականի] Շրջ. ժողովը գլխունում է որ պարսկահայ հատուածի համար անհրաժեշտութիւն է ազգ. կուլտ. ինքնուրոյնութեան պահանջը:

Ապա ժողովը անցնում է օրակարգի 4րդ կէտին՝ Պարսկաստանի ռայոնական ժողովի խնդրին: Այս հարցը առաջին նիստում արծարծուած լինելով, մտքերի կարճ փոխանակութիւններից յետոյ ժողովը ընդունում է հետեւեալ բանաձեւը.

— Անհրաժեշտ է մօտիկ ապագայում գումարել Պարսկաստանի ռայոնական ժողովը եւ միեւնոյն ժամանակ անհրաժեշտ է որ պարսկահայ Դաշնակցութիւնը առանձին հատուած կազմի ունենալով համապատասխան մարմին:

Ապա ժողովն անցնում է օրակարգի 5րդ կէտին, այն է՝

Առաջարկներ մարմինների կողմից: Նախագահը նիստը յայտարարում է դռնփակ: Բացի վճռական եւ խորհրդակցական ձայնի իրաւունք ունեցողներից, միւսները հեռանում են դահլիճից: Ընկերների կողմից արւում է հետեւեալ առաջարկները.

- ա.- Ինքնապաշտպանութեան խնդիր
- բ.- Ռուսական հայ գիւղուորների մէջ (Պարսկաստանում գտնուող) պրոպագանդա
- գ.- Խանասորի արշաւանքի 20ամեակի տօնումը
- դ.- Հ.Յ.Դ. ծրագրի թարգմանումը ասորերէն եւ թուրքերէն լեզուներով:
- ե.- Ատր[պատականի] շրջանի բաժանումները
- զ.- Յեղափոխական գրադարան Թաւրիզում:

Ինքնապաշտպանութեան խնդրի մասին հարց է բարձրացնում Ուրմիայի պատգամաւորը. նկարագրելով խառն եւ վտանգաւոր դրութիւնը, որ տիրում է Ուրմիայում եւ Արտպտ. միւս վայրերում, ընկերն առաջարկում է որ կուսակցութիւնը լուրջ կերպով մտածի եւ զբաղուի հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան խնդրով. այս մասին մտքերի երկար փոխանակութիւնից յետոյ անցնում է հետեւեալ բանաձեւը.

ա.— Աչքի առաջ ունենալով անցեալի դառն փորձերը

երբ ինքնապաշտ. գործով զբաղուելը նսեմացրել եւ խանգարել է կուսակցութեան գործունէութիւնը աշխատաւորութեան դասակարգային կռիւը մղելու մէջ: Երկրորդ, որ ինքնապաշտպանութեան գործը ամէն ժամանակ խանգարել է եւ կը խանգարի կուսակցական գործունէութիւնը:

Երրորդ, որ կուսակցութիւնը ոչ մի տեխնիքական եւ դրամական հնարաւորութիւն չունի կազմակերպել այդպիսի ինքնապաշտպանութիւն:

Չորրորդ, որ կուսակցութիւնը ոչ մի բարոյական իրաւունք չունի վերցնել այդպիսի մի մեծ պատասխանատուութիւն, Ատրպտ. Շրջ. ժողովը որոշում է իր վրայ չվերցնել ինքնապաշտպանութեան գործը եւ երկրորդ այդ գործը թողնել ժողովուրդին (իր կողմից չինսայելով ամէն հնարաւոր աջակցութիւնը ցոյց տալու):

Երկրորդ առաջարկը այն է՝ «Պարսկաստանում գտնուած ոռւս. զօրքի հայ զինուորների մէջ դաշնակցական պրոպագանդա անել»:

Ընդունուում է ժողովից եւ յանձնարարուում է այդ մասին հոգ տանելու Կենտ. կոմիտէին:

Երրորդ առաջարկն այն է՝ «Խանասորի 20ամեակը տօնելը»: Ընդունուում է ժողովից միաձայն:

Սալմաստի պատգամաւորը յայտնում է ժողովին, որ Սալմաստի կոմիտէն որոշել է այդ առթիւ Խանասորի դաշտում յուլիս 25ին մեծ հանդէս կազմակերպել, առաջարկուում է նաեւ «Այգի» այդ օրուայ համարն ամբողջովին նուիրել Խանասորի արշաւանքի յիշատակին:

Չորրորդ առաջարկն այն է՝ «Հ.Յ.Դ.-ն ծրագիրը թարգմանել ասորերէն եւ թուրքերէն»։ Ընդունուում է միաձայն եւ յանձնարարուում է Կենտ. կոմիտէին այդ իրագործել:

Հինգերորդ առաջարկն է՝ Թաւրիզում մի մեծ յեղափոխական գրադարան ունենալ. Ընդունուում է եւ յանձնարարուում է այդ մասին հոգ տանել Կենտր. կոմիտէին:

Վեցերորդ առաջարկն է՝ «Ատրպտկ. շրջ. բաժանումը»:

Ժողովը կատարում է հետեւեալ բաժանումները.

- 1) Սալմաստ առանձին կոմիտէութիւն
- 2) Խոյ, Մակու, Սէյդապար, Շորաւ
- 3) Ուրմիա, Սուլդուզ
- 4) Մարաղա, Սովուզբուլաղ, Միանդաբ
- 5) Ղարաղաղ
- 6) Թաւրիզ, Արտաբէլ, Մուսթամբար, Շարաբխանէ եւ Զուլֆա:

Ապա տեղի է ունենում գաղտնի քուէարկութեամբ կենտրոնական կոմիտէի 7ն անդամների ընտրութիւնը՝

մէկը Սալմաստից, մէկը Ուրմիայից եւ հինգը Թաւրիզից:

Ընտրուում են

Սալմաստից՝ Սամսոն	12 ձայն
Ուրմիայից Ա. Յարութիւն[եան]	9 ձայն
Թաւրիզից Գ. Յակովբեան	17 »
Հ. Պանիրեան	16 »
Ա. Յովհաննիսեան	15 »
Ա. Տէր Յակովբեան	16 »
Մ. Սահակեանց	12 »

Կենտրոնական կոմիտէի վրայ պարտականութիւն է դրուում խմբագրել բանաձեւերը եւ մշակուած կերպով հրատարակել. բ) ներքին կանոնադրութիւնը կազմել եւ «Այգի» համար խմբագրական մարմին ընտրել:

Հ.Յ.Դ.-եան Ատրպտկ. Շրջ. ժողովի վերջին նիստը տեղի ունեցաւ յուլիս 25ին առաւօտ, ժամի 11ին, Հայկ. ակումբում. կարդացուեց եւ վաւերացուեց նախորդ նիստի արձանագրութիւնը:

Ընկերների կողմից յարուցուել են հետեւեալ հարցերը

ա) Ժամանակաւոր մարմինները անմիջապէս փոխարինուեն համաձայն Շրջ. ժողովի հրահանգների՝ մնայուն կոմիտէների՝ թէ ոչ:

Ժողովը որոշում է աշխատել մինչեւ սեպտեմբեր ժամանակաւոր մարմինները փոխարինել մնայուն մարմիններով՝ կոմիտէներով:

բ) Յաջորդ Շրջ. ժողովի տեղն ու ժամանակը:

Ժողովը որոշում է յաջորդ Շրջ. ժողովը գումարել մի տարի յետոյ ոչ Թաւրիզում այլ գաւառներից մէկն ու մէկուում:

Ապա ընկ. Գասպար Յակովբեանը փակման ճառ է արտասանում հրաւիրելով ընկերներին Շրջ. ժողովում արուած որոշումները կեանքի մէջ տոկոսնութեամբ եւ եռանդով իրագործել, որից յետոյ բուռն ծափահարութեամբ փակուում է ժողովը:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
ՅՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԴԻԻԱՆ

Նախագահներ՝ Գ. ՅԱԿՈՎԲԵԱՆ
Քարտուղարներ՝ Վ. ՏԷՐ ՅԱԿՈՒԲԵԱՆ
Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Փաստ. 484-19

**Բ 5.- ՁԵԿՈՒՑՈՒՄ Հ.Յ.Դ. «ՄԻՆԱՐԷԹ» ԿՈՄԻՏԵԻ
1917 ԹՈՒԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ**

1917 թ-ի գաղթից յետոյ, Մինարէթում⁷ յաջողուում է միայն կազմել ժամանակակերպ կոմիտէի 1916 թուից:

Վեց ամիս տեւող ժամանակակերպ կոմիտէն, լուծուելով 1917 թիւ Օգոստոսին, վերակազմուած խմբերի ներկայացուցչական ժողովը ընտրում է մշտական կոմիտէ: Նորընտիր կոմիտէն՝ վերակազմելու գործի յաջողութեան տեսակէտից՝ շրջանը բաժանուում է երկու մասի: Երկու ամսից յետոյ համարեա թէ խմբերի ու ենթակոմիտէների թիւը համապատասխանում է [19]14 թուականին: Կազմած խմբերի կամ ենթակոմիտէների շրջաններում եղել են դասախօսութիւններ, ծրագրային բացատրութեան շուրջը եւ այլ սոցիալական բնոյթ ունեցող դասախօսութիւններ: Գիւղական ծխական խորհուրդներն լայն աջակցութիւն է ցոյց տուել դպրոցներ պահելու:

Դրամական մասը եղել է անհամեմատ թոյլ համեմատութեամբ 14 թուականի եւ նրանից առաջ: Գլխաւոր պատճառը այն էր, որ գիւղացիութիւնը հազիւ կարողանում էր թալանուած դրութիւնը վերականգնելու, հազիւ կարողանալով քաշ տալ եւ հեռու մնալ նպաստ ստանալուց. եւ այդ էր պատճառը, որ հնարաւորութիւն չէր տալիս ընկերներից գանձել անդամավճարը, իսկ ներկայում երեկոյթ, եւայլն եւայլն միանգամայն անհնարին էր տալ յօգուտ կազմակերպութեանը, որ կ'ազդէր դպրոցների պիւտճէին: Մինչեւ 1918 թ. Յունւար 15-ը գանձապահի մօտ գուտ անդամավճար եղել է 900 դուան, որը պարբերաբար բաժանուել է Շարաֆխանա եկող գին. խմբերին ծախսելու:

Չնայած գանձարանի դատարկութեանը, գինուորական ծախսերը զնալով կրկնապատկուում է եւ մինչեւ Փետրուար ամիսը պարտք է ունեցել 4050 դուան: Դրամական պակասութիւնը միշտ մեծ ժամանակ է խլել ընկերներից եւ կանգնեցրել շատ կարեւոր հարցերի դէմ առ դէմ եւ տուժել է տուել:

Ինքնապաշտպանութեան

Ռուս զօրքերի արագ դիրքեր թողնելը՝ գաւառները եւ մեր ժողովուրդը դրել է սարսափելի դրութեան մէջ: Կազմակերպական համարեա թէ ոչ մի դրամ՝ ուղղելի գէնքի, չենք առել, չենք ունեցել: Տարիների անդուլ եւ մեծ դժուարութեամբ ձեռք բերած՝ թէ կազմակերպական եւ թէ ժողովրդական գէնքերը 14 թուականի գաղթից Ջուլֆայից արդէն մաշուել էին: Ուրեմն ամէն ընկեր մենք դատարկաձեռն եւ վզներս ճկած, սպասում էինք քրդական արագ բազմացող շակալների[?] առաջ,

ի բաց առեալ պարսիկ ժողովրդի որոշ մասի պատրաստութիւնները, դարձեալ մեր խեղճ ժողովրդի հանդէպ:

Ուրեմն գնալով կոմիտէի գործերը բարդանում են. պէտք էր արագ կերպով կազմակերպել ինքնապաշտպանողական խմբերը եւ նրանց գինելը: Մի ամսուայ ընթացքում կազմուում է համարեա բոլոր գիւղերում ինք. խմբեր, եւ ժողովրդի միջոցով գնուում է 60 հատ արագածիգ հրացաններ: Կոմիտէն, ի նկատի ունենալով որ սպառնացող մեծ վտանգը ժողովրդի անմիջական միջոցներով անհնարին է դէմ դնել, որոշում է դիմել Շարաֆխանա ռազմամթերք ձեռք բերելու, որին ընթացք էր տուել Մինարէթում գումարուած Ատրպ[ատականի] Շրջանային ժողովը:

Յարաբերութիւններ պարսիկ քաղաքական կոմիտէների եւ ժողովրդի ներկայացուցիչների հետ

Ռուս բոլշեւիկեան զօրքը իր հեռանալու ընկալին, ուր որ հանդիպում էր՝ թալանում, այրում եւ կործանում էր: Մեծ սարսափի մէջ էր պարսիկ ժողովուրդը: Կոմիտէն՝ համաձայն Շրջ. ժողովի որոշման, ունեցել է մի քանի անգամ խառն ժողովներ, եւ ամէն անգամ իր բարոյական օգնութիւնը ու զգուշացումները արել է պարսիկ ներկայացուցիչներին: Ազգերի խաղաղ յարաբերութեան աշխատանքին միշտ հակընդդէմ են եղել հայ, վրացի եւ գանազան արտուղները[?] ու տեղական տականքների կողմից, որոնք միշտ սրել են մեր յարաբերութիւնները պարսիկների հետ, իրենց թալան սպանութիւնների հետ: Կոմիտէն խուսափելով ներքին վտանգաւոր կռիւներից, արել է բերանացի եւ գրաւոր յորդորներ, թէ ժողովրդին եւ թէ դեզերտերներին⁸:

Կոմիտէի գործունէութեան դադարումը

Պարսիկ կառավարութեան անտեղի պահանջը — ջեւոնների գինաթափման պատճառով — հայ ժողովրդին դրել էր անել դրութեան մէջ: Կռիւր անխուսափելի էր, եւ պատասխանատուութիւնը ծանր: Այդ պատճառով կոմիտէն հրաւիրում է ընդհանուր ժողով, կազմելով գին. խորհուրդ ժողովրդական բոլոր խաւերի մասնակցութեամբ, յանձնելով պատասխանատուութիւնը վերջինիս:

**Հ.Յ.Դ. «Մինարէթի» կոմիտէի
Ընկերներ՝ ԱՆԴՐԷԱՍ, ՊՕՂՈՍ,
ԲԺ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ**

Ծանօթ.- Կոմիտէիս 4050 դուան բացը ծածկեց Ուրմիոյ հայկական բաւալիոնի դրամարկը:

1917 թ. Յունիս 10, Թաւրիզ

7.- Մինարէթ — ծածկանուն Սալմաստ քաղաքի:
8.- Դասալիքներուն:

Փաստ. 484-20

Բ 6.- ԱՒԱՐԱՅՐ-ԽՈՅ ԶԱՂԱՔԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պարսկահայրու, Կապուտան լճի հիւսիս արեւմտեան ծայրում գտնւում է Խոյ գաւառը, համանուն քաղաքով, որը պատմական Հեր քաղաքն է: Այստեղ է գտնւում ըստ պատմագրաց Աւարայրի դաշտը եւ Վարդանայ անուամբ շինուած մատուռը Տղմուտ գետի ափին մի բլրակի վրայ:

Խոյը մի տափարակ հովտի վրայ է գտնւում շրջապատուած բարձր լեռներով, որոնք ամառ ժամանակ սարսափելի տօթեր են առաջացնում:

Ամբողջ գաւառի բնակչութիւնը 47-50 հազար է հաշուում, որից 1200ի չափ հայեր են, իսկ մնացածը պարսիկներ:

Հայերը բնակուում են հետեւեալ մասերում. քաղաքին կից երեք հայ արուարձաններում՝ 110 տուն, Սէյ-դավար գիւղում 80 տուն, Շօրաւում 30 տուն, Դիգա-յում 20 տուն:

Քաղաքի հայերը գլխաւորապէս պարապում են արհեստով — պայտառ, ատաղձագործ. նոցա խոշոր մասը վերջին տարիներում տնտեսապէս ծանր վիճակի մէջ են, որովհետեւ իրերի խառն դրուժեան պատճառով արհեստի վերաբերեալ գործը միանգամայն պակաս է:

Գիւղացիք պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ եւ սայլապանութեամբ. նոցա դրուժիւնը եւս նախանձելի չէ:

Քաղաքի արուարձաններում գտնւում է «Ս. Վարդանեան» երկսեռ դպրոցը, որը մօտ 15 տարուայ չէնք է. դպրոցը ծառայում է միաժամանակ թատրոնական բեմի. կայ եւ «Ս. Նազարեան» անունով գրադարան, որը թէեւ 914 թ. դեկտեմբերեան գաղթից յետոյ միանգամայն կողոպտուել էր, սակայն վերջերս նորից վերածուեց եւ կանոնաւորուեց. նա ունի մօտ 400 գրքեր մանկական եւ ժողովրդական բաժիններով. ստացւում է գրադարանի անունով մի քանի պարբերական թերթեր եւս:

Օրերս կազմուած է նորընտիր վարչութիւն եւս, որին յանձնուած է գրադարան-ընթերցարանի բարգաւաճման գործը: Դպրոցում 916/17 տարում յաճախում էին 110ի չափ աշակերտ-ուհիներ, ուր դասախօսում էին երեք ուսուցիչներ: Բիւջէն լրացւում է թոշակներից եւ նուէրներից:

Այստեղի ժողովուրդը ընդհանրապէս շատ սառն է վերաբերւում դէպի կրթական գործը, որի պատճառով էլ կրթապէս շատ ցածր մակերեւոյթի վրայ է կանգնած. նա ունի մի քանի հնուց ժառանգած բացասական կողմեր, որի պատճառով էլ չի կարողանում յառաջադիմել: Բացի քաղաքից՝ հայոց դպրոց կայ եւ Սէյդավարում,

ուր սովորում են 80ի չափ աշակերտներ, իսկ Շօրաւը եւ Դիգան չունին դպրոցներ:

Քաղաքական կացութիւնը կապ ունի հարեւան թուրք ժողովրդի կացութեան հետ. նոքա համակերպում են տիրող դրուժեանը եւ յարաբերութիւնը թուրք հարեւանների հետ առհասարակ լաւ է:

Վերջին մի քանի տարուայ ընթացքում կազմակերպութեան խմբերը հետզհետէ լուծուած էին եւ գործը լիկիտացիայի էր ենթարկուել. սակայն ներկայ Մայիսից սկսած կազմակերպման խնդիրը ձեռք առնուեց եւ Հ. Յ. Դաշնակցութեան անունով կազմուեցին չորս օժանդակ խմբեր ամբողջ շրջանում 130ի չափ անդամով եւ ընտրուեց ժամ[անակաւոր] մարմին մինչեւ Ատրպատականի յառաջիկայ շրջանային ժողովը:

Այստեղ առաջ գոյութիւն ունէր հայկական եւ ուրիշ կուսակցութիւն, սակայն այժմ միայն Հ.Յ.Դ. կուսակցութիւնն է գործում:

Տեղական ժամ[անակաւոր] մարմինը առայժմ յարաբերութիւն չունի պարսիկ եւ օտար կուսակցութիւնների ինչպէս նաեւ ուսական գործադիր կոմիտէի հետ, այդ բանը թողնւում է շրջանային ժողովի տալիք որոշումներին:

Գիւղացիական եւ արհեստակցական միութիւններ մինչեւ այժմ գոյութիւն չեն ունեցել, այդ առթիւ կանոնադրութիւն եւ հրահանգներ բացակայելու պատճառով:

Մէջլիսի ընտրութիւնների համար Հ.Յ.Դ.-եան մասնակցութիւնը անհրաժեշտ ենք համարում:

Պրոպականտի գործը մեր շրջանում յետամնաց դրուժեան մէջ է գտնւում. կարող ուժեր են հարկաւոր խմբերում եւ խմբերից դուրս դասախօսելու եւ որ գլխաւորն է Հ.Յ.Դ.-եան գործելակերպը բացատրելու, որին խիստ մեծ կարիք ունին խմբերը. այդ հանգամանքի վրայ հրաւիրւում է շրջանային ժողովի ուշադրութիւնը:

Շրջանումս պրոպականտի գործը առաջ տանելու գործին մեծ օժանդակութիւն կարող է ցոյց տալ «Այգը» եւ ցանկալի է որ նա դառնայ Պարսկաստանի Դ[աշնակցութիւն]եան օրգանը:

Եւ որովհետեւ շրջանիս կազմակերպչական եւ հասարակական ուրիշ ձեռնարկութիւնների յառաջդիմութեան գործը միշտ կապ ունի կրթական գործի հետ, այդ պատճառով էլ անհրաժեշտ համարուեց շրջանային ժողովի ուշադրութիւնը հրաւիրել գաւառիս դպրոցական խնդրի վրայ, նպաստել բարոյապէս որ պատրաստուած ուսուցիչներ ունենանք յառաջիկայ դպրոցական շրջա-



նի համար. դպրոցներ հարկաւոր են քաղաքի հայոց մասում, Սէյդավարում եւ Շօրաւում. վերջինում ձեռնարկած է դպրոցական նոր շէնքի կառուցումը:
Մի շարք պատճառների հիման վրայ առանձին պատգամաւոր չուղարկելու պատճառով մեր կողմից

որպէս լիազօր պատգամաւոր ընտրում ենք շրջանային ժողովում պ. Գասպար Յակոբեանին:
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՒԱՐԱՅՐԻ ԺԱՄ[ԱՆԱԿԱՒՈՐ] ՄԱՐՄԻՆ
16 Յունիս 1917

Փաստ. 484-34

Բ 7.- ԳԱՍՊԱՐ ՅԱԿՈԲԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Սալմաստ, 27 յունիս 1917

Ընկերներ!

24-ին հասայ Սալմաստ: Ինձ տեղեկացրին, որ տեղական մարմինը որոշել է այլեւս 20ամեակը ոչ թէ Խանասորում տօնել, այլ այստեղի Մահլամ գիւղում, որի գերեզմանատանը թաղուած կան 98-ի յայտնի 9-ը նահատակները: Խանասոր չգնալու պատճառը այն էր, որ այստեղ, ինչպէս ամէնուրեք այժմ մեր երկրում ինչ որ գաղտնի երկիւղ գոյութիւն ունի, ըստ որի բոլոր ազգերն էլ մէկը միւսից զգուշանում եւ միջոցներ են ձեռք առնում, որպէսզի անակնկալի դէպքում արթուն լինեն եւ իրենց գլխի ճարը տեսնեն: Տեղումս երկու վտանգ գոյութիւն ունի՝ մէկը քրտական, իսկ միւսը ռուսական, երկուսն էլ հաւանական եւ հիմնաւոր:

Մովոն առաջուկայ նման շարունակում է իր դիրքում մնալ, հակառակ անցեալներում տարածուած այն լուրի, որ իբր թէ ռուսները ցրել են նրանց եւ վերացրել այդ վտանգը այս գաւառին եւ ռուսական թիկունքին սպառնացող:

Ռուսական զօրքը, շնորհիւ վերջին անդիսցիպլին վիճակի, այժմ այստեղ աւելի մեծ երկիւղ է ներշնչում ողջ ազգաբնակչութեան եւ առանձնապէս պարսիկներին, որոնք ինչպէս այդտեղ, դատարկել են խանութները եւ ամէն ինչ աչքից հեռացրել եւ թանգացրել: Ինձ թւում է, որ այտեղի խաթինիտէլնի[?] կոմիտէտէտը աւելի եւս թոյլ է եւ անզօր որեւէ անախորժութեան առաջն առնելու: Նոյն տպաւորութիւնը թողեց ինձ վրայ նաեւ Շարաֆխանէն:

Թուրքերի եւ հայերի յարաբերութիւնները կարելի էր բաւարար համարել եթէ չլինէին այս անպիտան աւազակները, որոնք ընդհանուր սարսափ են տարածել շրջանում: 10-15 օր է, որ դրանց գործունէութիւնը կարծես թուլացել է եւ եթէ այսպէս շարունակուելու լինի սրանից յետոյ էլ կարելի է յուսալ, որ այլեւս ոչ մեք եւ ոչ էլ որեւէ մէկը առիթ ունենան դժգոհելու:

Տեղույս կազմակերպական վիճակը ոչնչով աւելի ոգեւորիչ չէ քաղաքից, նոյն ապաթեան⁹, նոյն լքումն ու թուլութիւնը ինչ որ այդտեղ, այն տարբերութեամբ միայն, որ այդտեղ գործիչ ընկերները աւելի շատ են քան այստեղ: Ամէն գիւղերում կազմուած են խմբեր, որոնց ընդհանուր թիւը 25-ից աւելի է, սակայն այդ խմբերում նախկին ոգեւորութիւնը չկայ: Այսօր հինգ-չաբթի է եւ երրորդ օրն է, որ այստեղ եմ բաց դեռ ինձ չի յաջողուել ընդհանուր ժողով գումարել մի քանի անհրաժեշտ խնդիրների մասին խօսելու: Այն էլ կայ որ այժմ կալերի ժամանակն է եւ անհնարին է գիւղացոց ոչ ցերեկով եւ ոչ էլ գիշերով (վերջինս վտանգաւոր դրութեան պատճառով) հաւաքել ընդհ. ժողովի: Անգամ գիւղական ժողովները անհնարին են: Վստահ եմ որ պրոպագանդի տեսակէտից դժուար թէ կարողանամ որեւէ օգտակարութիւն ցոյց տալ այս շրջանում: Վաղը մարմնի ժողով է նշանակուած տեղական խնդիրների շուրջը. շատ բան կարող ենք խօսել, որոնց մասին անձամբ կը զեկուցեմ, ինչպէս նաեւ մի շարք այլ խնդիրների, որոնց մասին գրելու հնարաւորութիւն չունիմ:

Անցնինք Խանասորի արշաւանքի 20ամեայ տօնակատարութեան:

Ամսոյս 25-ին առաւօտեան բոլոր հայաբնակ գիւղերից դաշնակցական երիտասարդութիւնը արդէն հաւաքուել էլ Մահլամ:

Եկել էին նաեւ տեղույս դատաւորը եւ քարտուղարը իրենց մարդկանցով: Գիւղի քարաշէն եկեղեցում պատարագ էր մատուցւում, որից յետոյ թափօրը կարմիր դրօշակներով շարժուում է դէպի գերեզմանատուն: Արեւը այրում է, բայց բոլորը շարժուում են դէպի առաջ բաց դաշտով առանց ուշադրութիւն դարձնելու դրան: Մօտենում ենք գերեզմանատանը: Մի բաց դաշտ է դա՝ ընկած լեռների ստորոտում: Առաջ ենք գնում եւ մեր

9.- Անգալալոսիւնը, անհոգոսիւնը:



առաջ պատկերանում են մի շարքի վրայ 9 գերեզմաններ, որոնց վրայ միատեսակ 9-ը սեւ քարերը իրենց տակ ամփոփում են մեր իննը զինուորային, որոնք Մահլա-մում գոհուել են գիւղը չվտանգելու եւ թուրք սարքագների վրէժիմը չթիւնը չարթնացնելու համար:

Թարմ ճիւղերի եւ ծաղիկների պսակները զարդարում են գերեզմանները: Կատարում է հոգեհանգիստ, որից յետոյ նախ ընկ. Գասպարը մի հակիրճ բանախօսութեամբ [վեր է առնում] մեր մարտիկների կատարած դերը վերջին երեսնամեակի ընթացքում, Խանասորի արշաւանքի նշանակութիւնը, հայ-քրդական յարաբերութիւնները եւ Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի այդ հարեւան կիսաբարբարոս թափառական ցեղը: Դրանից յետոյ ընկ. Սամսոն¹⁰ իր արտասանած ճառի մէջ նկարագրում է այն ծանր աշխատանքը, որ կատարել է Դաշնակցութիւնը 1895-ից մինչեւ Խանասորի արշաւանքը, պարզում է այդ արշաւանքի նպատակը եւ տալիս է նրա պատմութիւնն ու հետեւանքները:

Թափօրը լուսանկարելուց յետոյ ժողովրդի մի մասը ցրւում է, իսկ օտարագրի հիւրերը (թուրքեր, ասորիներ եւայլն) հրաւիրւում են ճաշի: Մար-Շիմոն¹¹ ուղարկել էր իր ներկայացուցիչը ներկայ լինելու այդ հանդէսին:

Ճաշի վրայ առաջարկում են մի շարք բաժակաճառեր, ներկայ գտնուող հայ, թուրք եւ ասորի ընկերների կողմից: Բոլորն էլ իրենց ճառերում շեշտում են այս երեք հարեւան ժողովուրդների յեղափոխական ու ազատական տարրերի համերաշխութեան, համագործակցութեան եւ ժողովուրդների եղբայրութեան գաղափարների իրագործման անհրաժեշտութիւնը:

Ժամի երկուս եւ կէսին բոլորը ցրւում են, իրենց հետ տանելով օրուայ գեղեցիկ տպաւորութիւնները:

Շրջում եմ Մահլամը, անցնում եմ մնացած հայ գիւղերով: Պէտք է լինել այս գիւղերը զգալու համար թէ

որպիսի մեծ վնասների են ենթարկուել սրանք այս պատերազմին: Աւերակ տների տխուր պատերն են կանգուն կամ կիսակործան, որոնք վկայում են, այն բոլոր բարբարոսութիւնները, որ կատարուել է տաճիկ զինուորի, քրդի եւ թուրքի ձեռքով: Ակամայից յուզուում է սիրտդ, մի հասկանալի թախիծ տիրում է հոգիդ եւ կարիք ես զգում մի կերպ ցրելու այդ ծանր տաղտուկը որ համակել է հոգիդ: Կարծես մի անբացատրելի հակադրութիւն է ներկայացնում գիւղից դուրս գտնուող հայ գիւղացու կալը իր ծեծած ցրենի եւ դեռեւս չծեծուած խուրձերի շեղջակոյտերով: Մի վայրկեան մոռանում ես եւ աւերակները եւ նրանց պատերի տակ ցնցոտիներում գտնուող երեխաները, մաշուած ու մտախոհ գիւղացի կիներ, հոգսերի ծանրութեան տակ կորացած տղամարդկանց:

Առաջիկայ կիրակին Աղբակում եւ Խանասորում նոյնպէս պիտի տեղի ունենայ հոգեհանգիստ Խանասորի արշաւանքի առթիւ: Ես որոշել եմ գնալ այնտեղ եւս, այնպէս որ հագիւ երեքշաբթի վերադառնամ Սալմաստ եւ չորեքշաբթի անցնիմ Խոյ: Խոյում ինչ որ յիմար բան է պատահել. նամակ են գրել այստեղ եւ մարդ խնդրել, որ գնայ եւ բորբոքած կրքերը խաղաղացնի: Իմ այնտեղ գնալս շատ ի դէպ է լինում: Այնտեղից էլ կը գրեմ, յետոյ կ'անցնիմ Ջուլֆա, այնտեղից էլ կամ Կովկաս կամ դէպի ձեզ: Ինձ նամակ մի գրէք, ոչ այստեղ եւ ոչ էլ որեւէ տեղ:

Վաղը այստեղ Ս. Տիգրանեանի պատուին բանկէտ պիտի լինի, մի լաւ քէֆ կ'անենք:

Խնդրում եմ յայտնեցէք մեր տնեցոց իմ ողջ եւ առողջ լինելու մասին: Յայտնեցէք նրանց նաեւ, որ Մելքոնի մասին ինչ տեղեկութիւններ որ ունին մի բացիկով յայտնեն ինձ գրելով նամակը Խոյ Մկրտիչ Կարապետեանի հասցէով ինձ յանձնելի: Եթէ Մելքոնը այդտեղ է թող հէնց ինքը գրէ:

Բարեկներով
ԳԱՍՊԱՐ

10.- Սամսոն – ծածկանուն Թադէոսեան Ստեփանի, կուսակցական յայտնի գործիչ Ատրպատականի մէջ:

11.- Ասորիներու կրօնական առաջնորդ – կաթողիկոս Ատրպատականի:

Փաստ. 484-30

Բ 8.- ՁԵԿՈՅՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԾԵՐՈՎ ԴԱՐԱԴԱԴԻ

(Կազմուած Ատրպատականի Շրջանային ժողովի համար 21-6-1917)

Ղարաղաղը Ատրպատականի ընդարձակ եւ հայաշատ գաւառներէջ երկրորդն է: Ղարաղաղի հայութիւնը տեղաւորուած է 30-ից աւելի գիւղերում եւ բաժանուած 5 գաւառակների՝ Քէյվան, Տղմուտ, Մեշափարա, Մնջուան եւ Հասանով: Ազգաբնակութեան թիւը համեմատաբար աւելի է Քէյվան գաւառակում, ապա Տղմուտում. միւսները՝ բացառութեամբ Հասանովինը, որը մօտ 650-700 բնակիչ ունի, բռնում են միջին տեղը:

Ղարաղաղի հայութիւնը մօտ 8000 է:

Ղարաղաղի գիւղերը մեծ մասամբ պատկանում են թուրք խաներին, 7-8 գիւղ թումանեաններին¹² եւ 2½ գիւղ «Արամեան» դպրոցին:

Տնտեսական վիճակը

Ղարաղաղի հայութիւնը տնտեսական տեսակէտից կարելի է բաժանել երեք կատեգորիայի՝ բարեկեցիկ, չքաւոր եւ աղքատ: Բարեկեցիկների ձեռքերումն է գտնուում հողի նշանաւոր մասը, որը կանոնաւոր կերպով մշակելով կարողանում են լաւ արդիւնքներ ստանալ, որով իրենց տնտեսական վիճակի ընդհանուր պատկերը կարողանում են այսպէս թէ այնպէս բարձրացնել: Այս կատեգորիային պատկանող գիւղացիները կարողանում են ոչ միայն իրենց տնային պէտքերը հոգալ սեպհական միջոցներով, այլեւ՝ տարեկան որոշ գումար տնտեսելով. գիւղային բանկերի կամ փոխատու հիմնարկութիւնների բացակայութեան պատճառով, կարողանում են իրենց հասոյթի մի մասը հնչուն դրամի վերածել եւ զբաղուել վաշխառութեամբ: Շնորհիւ այդ տեղի գիւղացիների, բարդ տոկոսի ձեւերը անմահացել են Ղարաղաղում. տոկոսի սակագինը՝ թումանին չորս շահի ամսական կամ տարեկան 2 դռան 8 շահի, վաղուց է որ օրինականութեան սահմանն է անցել: Երկրորդ կարգի վաշխառութիւն՝ նրանք անում են հացահատիկների միջոցով. այսպէս ամբարելով հացահատիկները, զարնան վերջերին երբ միւս գիւղացիների պաշարն արդէն սպառուած է լինում, ահա այդ ժամանակ նա բանում է ամբարի դուռը եւ ցրում գիւղացիների վրայ՝ դարձեալ պարզորոշ եւ ընդունուած օրինականութեան սահմանում վերցնելով 1 լիտրին ½ լիտր շահ. եւ եթէ ի նկատի առնենք այն հանգամանքը, որ նրանց ցորենը կամ այլ հացահատիկը միայն 2 կամ 3 ամիս ժամանակով է տեւում, այդ ժամանակ կը տեսնենք, որ այս ձեւի շահագործումը աւելի խոշոր է եւ

ազդու. եւ շնորհիւ այս կատեգորիայի տնտեսական վիճակի բարեկեցութեան, նա իր ձեռքն է առնում համայնքի կամ գիւղի հասարակական գործերի ղեկը եւ եթէ քաղաքական ճախորդ պատահարներ էլ պատահին, ահա այդ ժամանակ այդ կարգի գիւղացիները իրենց իրաւունքների սահմաններն աւելի են ընդարձակում եւ դառնում համայնքի տէր ու տնօրէններ:

Բոլորովին հակառակ պատկեր են ներկայացնում չքաւոր դասին պատկանող գիւղացիները: Գտնուելով տնտեսական անձուկ պայմանների մէջ, նրանք չնայած օր ի բուն չարչարում են, տքնում, բայց եւ այնպէս միշտ էլ ենթակայ են սովածութեան եւ չքաւորութեան: Դրա պատճառները շատ են, բայց մենք այստեղ կը մատնանշենք միայն երկու գլխաւոր պատճառներ. առաջինն է, որ հողերի միայն անպէտք մասն է սրանց բաժին ընկել. խոտատեղերի աննշան տարածութիւն ունին եւ երկրորդ՝ սրանք հեռու լինելով համայնքի կամ գիւղի գործերուն մասնակցելուց, գիւղի ղեկավարները կառավարական եւ խանական վճարների մեծ մասը բարդում են դրանց վրայ, որոնց ուժից բարձր լինելով եւ պատրաստի դրամ չունենալով՝ բախում են նոյն գիւղացի վաշխառուների դռները եւ ծանր պայմաններով մոլորհակներ տալիս, մի բան որ հետզհետէ ամբողջապէս ընկնում են պատրաստուած սարդեան ոստայնների մէջ, որից յետոյ էլ պրծում չկայ... Դրանք, բռնուած արիւնարբու սարդերից, անզգայ կերպով արիւնաքամ են լինում եւ ուժասպառ ընկնում: Բաւական է որ մէկի ոտքը սայթաքեց, այնուհետեւ անդունդն է նրա բնակավայրը: Միւս կողմից էլ պէտք է նկատել որ այսպիսի գիւղացիներին, որոնք կատարում են կալուածատէրերի համար ձրի աշխատանք՝ դիցուկ այն ժամանակ, երբ իր արտը պիտի մշակի, երբ իր արտը պիտի հնձի... եւայլն. բազմաթիւ այսպիսի յար եւ նման պատճառներ, որոնց մասին ձեզնից շատ շատերը ականատես են եղել եւ գիտեն թէ ինչպիսի սոսկալի պայմանների մէջ են գտնուում եւ ապրում:

Երրորդ տիպի գիւղացիներ, որոնց աղքատ անունը տուրինք, դրանք նրանք են, որոնք բատրակ են անուանում. այդպիսիները շատ քիչ տոկոս են կազմում եւ մեծ մասամբ ապրուստի միջոցներ գտնելու համար դիմում են դէպի քաղաքները՝ գլխաւորապէս Թաւրիզ:

12.- Առեւտրական մեծ տուն Կովկասի եւ Պարսկաստանի մէջ:

Քաղաքական կացութիւնը

Պարսկաստանը, չնայելով ներկայ համաեւրոպական պատերազմում պահպանեց իր չէզոքութիւնը, բայց եւ այնպէս այս պատերազմի ընթացքում, նամանականդ նրա ծայրագաւառները ենթարկուեցին ծանր վնասներին:

Ղարաղաղն էլ ներկայացնելով մի ծայրագաւառ, կտրուած կենտրոնից եւ հաղորդակցութեան միջոցներէ՝ 1914 թուի դեկտեմբերի պանիկայից¹³ յետոյ ենթարկուեց նիւթական եւ բարոյական վնասներին: Տեղական խաները քաղաքական փոթորկոտ ելեւէջներէն օգտուելով սկսեցին մի չտեսնուած շահատակութիւն-իրենց ձեռքն առնելով գինական ոյժը, սոսկալի տանջանքների եւ տուգանքների ենթարկեցին Ղարաղաղի թէ՛ հայ եւ թէ՛ թուրք աշխատաւոր գիւղացիութեանը: Չնայելով կառավարութիւնը մի քանի անգամներ փորձեց հանգստացնել այդ շրջանը եւ վնասները յետ ստանալ, բայց ամէն անգամին էլ դժուարութեան հանդիպեցին եւ վերջ ի վերջոյ կարծես բեզարած յետ քաշուեցին թողնելով մի ամբողջ ժողովուրդ այդ բարբարոս խաների ձեռքին, որոնք կողոպուտի գործում ոչ մի չափ ու սահման չէին ճանաչում. այստեղ մէջբերենք միայն մի փաստ՝ այն, որ 30 տնից բաղկացած մի գիւղից տարել են 24703 զուանի հնչուն դրամ, ջորի եւ այլ անասուններ: Քաղաքական այս յեղեղուկ վիճակը շարունակուում է դեռ, երբեմն ուժեղ կերպով եւ երբեմն թոյլ:

Ազգային եւ ընդհ. կուլտ[ուրական] կեանքը

Ղարաղաղը լինելով յետամնաց մի գաւառ, ազգային կուլտուրայի տեսակէտից ներկայացնում է մի չափազանց տխուր պատկեր: Դպրոցների թիւը աննշան է, այն էլ եթէ կարելի է դպրոց անուանել: Դպրոցներ կան Վիւնայում, Ողանում (Թումանեանների գիւղերում) եւ Աղաջանում: Միւս գիւղերի մի քանիսում միայն կան դպրոցներ, որտեղ միայն գրաճանաչութիւն են սովորեցնում:

Աւելի աննախանձելի է թուրք գիւղացիութեան կրթական վիճակը: Դրանք միանգամայն հեռու են կուլտուրականութիւնից: Ընդհանրապէս ասած՝ թէ ազգային եւ թէ ընդհանուր կուլտուրական կեանքը — վերցրած ընդարձակ մտքով — տխուր, մուսլ պատկերը աւելի ամբողջացած, աւելի լրիւ կը լինի:

Հարեւան ժողովրդի հետ յարաբերութիւնը

Պէտք է նկատել, որ երկու տարբեր ազգութեան պատկանող աշխատաւոր գիւղացիութիւնը երկար ու ձիգ տարիներից ի վեր ապրել է կողք-կողքի բոլորովին համերաշխ եւ սերտ յարաբերութեան մէջ. հակազգային

փոխադարձ ատելութիւն կամ թշնամութիւն երկրի այդ խաղաղ բնակչութեան կողմից երբեքից տեղի չէ ունեցել: Չի ունեցել հէնց այն պարզ պատճառով, որ երկուսն էլ ենթակայ են եղել նոյն պայմաններին, շահագործման համանման եղանակին: Երկու ազգի աշխատաւորութիւնը, չնայած կալուածատէր խաների հրահրումներին, թէեւ մտաւորապէս անգիտակ, բայց գալիք սեւ օրերի հետեւանքը գիտակցած՝ միշտ էլ հեռու են մնացել բարեկամական կապը խզելու տգեղ երեւոյթներից: Դա ինքնին մի ուրախալի երեւոյթ է Ղարաղաղի նման խուլ եւ յետամնաց մի վայրի համար:

Կազմակերպութեան վիճակը

Կազմակերպական աշխատանք Ղարաղաղում կարելի է ասել չի եղել: Չնայած Դաշնակցութիւնը Պարսկաստանում երկար կեանք է ունեցել եւ այժմ էլ ունի, սակայն նա հեռու է եղել Ղարաղաղի նման յետ ընկած վայրերում գործունէութիւն ունենալուց: Այդ հանգամանքը եւ բացատրում եմ նրանով, որ Դաշնակցութեան այս հատուածն էլ իր ուշքն ու միտքը ուղղել էր դէպի տաճկահայ Դատը եւ ամբողջապէս կլանուելով նրանով՝ տեղական աշխատաւորութեան դատը նա աչքաթող էր արել: Գուցէ բացառութիւն կազմի Սալմաստը, որը մի կամուրջ էր հանդիսանում Դաշնակցութեան համար: Սակայն ասենք, որ Պարսկաստանի յեղափոխութեան յաղթանակի օրերին, Դաշնակցութեան Վրէժի կ-կոմիտէն մտածում է նաեւ Ղարաղաղի համար եւ ուղարկում է այնտեղ պրոպագանդիստների մի խումբ, տեղական ինքնապաշտպանութեան գործը կազմակերպելու: Բայց պէտք է նկատել եւ այն, որ ընկեր պրոպագանդիստները ի չարն են գործ ղնում իրենց վրայ դրուած վստահութիւնը եւ բացի այն որ ոչինչ չեն կարողանում անել այդ ուղղութեամբ, եւ ընդհանրապէս այլ տեսակէտից, հիասթափեցնում են նաեւ աշխատաւոր գիւղացիութեան, մի բան որ երբեք ներելի չէ մի յեղափոխական եւ աշխատաւոր կուսակցութեան անդամի: Դրանից հետեւցնենք այն, որ պրոպագանդիստների այդ խմբակը ունեցել է ապարդիւն աշխատանք եւ ի զուր ծանրացել կուսակցութեան ու գիւղացիութեան վրայ:

Բոլորովին այլ վերաբերմունք են ցոյց տուել անհատ դաշնակցականները, որոնք պատահաբար այդ շրջանն են գնացել եւ որոնց բռնած տակտիկի եւ լուռ յեղափոխականին պատշաճ գործունէութեամբ կարողացել են օգտակար լինել եւ կուսակցութեան պրեստիժը բարձր ու անարատ պահել:

Դաշնակցական խմբեր Ղարաղաղում առ այժմ չկան. կան միայն ցիր ու ցան ընկերներ, որոնք իրենց

13.- Խուճապ, սհաքեկում:

մտաւոր կարողութեան սահմաններում գործում են գիւղացիութեան մէջ, աշխատում են նրանց գիտակցութիւնը լայնացնել եւ պատրաստել գիտակից դաշնակցականների խմբեր: Թւում է այդ մեր ընկերները կ'իրականացնեն, որովհետեւ մի կողմից Պարսկաստանի դեմոկրատիկ յեղափոխութիւնն է շարժում եւ միւս կողմից մեր կուսակցութիւնը, ազատուած ունակցիայի ճիւղաններից, ազատ ու համարձակ պէտք է մտնէ իւրաքանչիւր մի յետամնաց գաւառ, իւրաքանչիւր մի աշ-

խատաւոր մասսայի մէջ քարոզելու, իւրացնել տալու յեղափոխական եւ սոցիալիստական լոզունգները եւ ապա բուն յեղափոխութեան, աշխատաւորութեան յեղափոխութեան դրօշը պարզելու, խորտակելով այն գլուխները, որոնք այնքան անգթօրէն եւ անյագօրէն ծծել են աշխատաւորութեան կենսատու արիւնը:

Ղարաղաղի պատգամաւոր
ԽԱՉ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Փաստ. 484-86

Բ 9.- Հ.Յ.Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. Կ.Ի ԴԻՍՈՒՄԸ

- 1) Հ. Յ. Դաշնակցութեան Արեւելեան բիրոյից
- 2) Հայ Զինուորական միութեան կենտրոնական խորհուրդին, Թիֆլիսում
- 3) Հայ Ազգային խորհուրդին, Թիֆլիս

Զինադադարը բերեց իւր հետ գինուորների ընդհանուր փախուստ: Ֆրոնտը դատարկւում է: Ատրպատականի Հայ ժողովուրդը, գլխաւորապէս Սալմաստի, Ուրմիի եւ Խոյի գիւղերը ինչպէս եւ այդ գիւղերում ապրող տաճկահայ գաղթականութիւնը մեծ վտանգի մէջ են: Այնտեղից արդէն մեզ գալիս են յուսահատական օգնութեան կոչեր: Սիմկոն նորից գլուխ է բարձրացրել եւ մեծ կազմակերպման մէջ է: Նրան կամաց կամաց միանում են միւս քրդական ցեղերը, թէ պարսկական եւ թէ տաճկական: Դոցա դէպի Պարսկաստան մղում է եւ այնտեղի սովը: Կարեւոր է այդտեղի ժողովրդի Ֆիզիկական գոյութեան մասին լուրջ կերպով հոգալ, մտածել եւ կազմակերպել ինքնապաշտպանութեան գործը: Այնտեղի Հայ ժողովուրդը եւ գաղթականները՝ մեր հաշուով կարող են տալ մինչեւ 200 մարտական ոյժ: Հարկաւոր է եւ անհրաժեշտ աստրական բատալիոններին կից կազմակերպել 2-3 հայկական բատալիոններ գուտ ինքնապաշտպանման նպատակով: Այդ մեծ եւ պատասխանատու գործը ի հարկէ տեղական միջոցներով եւ ոյժերով անկարելի է գլուխ բերել: Դրանով պիտի զբաղուի Ազգային խորհուրդը եւ Հայ Զինուորական միութիւնը: Այդ բատալիոնների կազմակերպումով մի քանի նպատակների կը հասնենք

- 1) Հայ ժողովուրդի պարսկական հատուածի ինքնապաշտպանութեան հարցը դրական հիմքերի վրայ կը դնենք
- 2) Որոշ չափով դոցա միջոցաւ կ'ապահովենք այդ Ֆրոնտը
- 3) Թոյլ չենք տալ գաղթը, որը ներկայ պայմաններում սարսափելի կը լինի:

Այդ բոլորի համար ամէնից առաջ պիտի պարզել զէնքի հարցը: Այստեղի ժողովրդի տրամադրութեան տակ դնել հարկաւոր քանակութեամբ զէնք, պուլեմենտներով¹⁴, գուցէ եւ թնդանօթներով: Միաժամանակ ուղարկել կազմակերպիչ ոյժեր, Սեպուհի, Մուրատի նման մէկին: Կարծում ենք որ դա յաջողութիւն կ'ունենայ: Միայն պէտք է շտապել, ամէն մէկ օրը թանգ է: Ժողովուրդը կոչ է անում եւ պահանջում զէնք: Վտանգը մեծ է: Խնդրում ենք լուրջ ուշադրութեան առարկայ դարձնէք այդ հարցը եւ մեզ պատասխանէք: Մենք մեր կողմից ամէն կերպ կ'աջակցենք այդ մեծ պատասխանատու եւ անյետաճգելի գործին:

Հ. Յ. ԴԱՇՆ[ԱԿՑՈՒԹԵԱՆ] Ա[ՏՐՊԱՏԱԿԱՆԻ]
Կ[ԵՆՏՐՈՆԱԿԱՆ] Կ[ՈՄԻՏԷ]

Թաւրիզ
1917 թիւ Դեկտ. 20ին

Փաստ. 485-3

Գ 1.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿ[ՅՈՒԹԵԱՆ] ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹԻՒՆ

Գումարում Սալմաստում (Ղալասար), 6-9 Յունուար 1918 թ.

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆԻՍՏ 6ն ՅՈՒՆՈՒՆԱՐԻ

Հայույթեան համար ստեղծուած ծանր կացութեան առթիւ Հ.Յ.Դ. Ատրպատականի Կ. կոմիտէի նախաձեռնութեամբ Սալմաստում հրաւիրուած է արտակարգ Շրջ. խորհրդակցութիւն: Ներկայ են Կ. Կ.էի ընկ. ընկ. Գասպար Յակոբեան, Հ. Պանիրեան, Միք. Ստեփանեան, Ալ. Յովհաննիսեան եւ Սամսոն, Թաւրիզի կոմիտէից Գր. Յարութիւնեան, Ուրմիի կոմիտէից ընկ. ընկ. Միք. Զարգարեան եւ Ալէքսան Մանասէրեան (որոնք լիազօրուած չէին Շրջ. խորհրդակցութեան մասնակցելու, որովհետեւ դեռ հրաւէր չէին ստացել): Սալմաստի կոմիտէից՝ Ար. Աղաբէգեան, Առ. Յարութիւնեան, Յ. Բաբոյեան, Անդր. Պօղոսեան, Խոյից հրաւիրուեցին հինգ ընկեր. Շարաֆխանէից ներկայ է ընկեր Ռուբէն Դաւթեան: Գործիչ ընկերներ՝ ներկայ են վճռական ձայնով՝ Թաւրիզից Բաղ[ղասար] Մել[իք]-Բաղդասարեան, Սալմաստից Սարգ. Սարուխանեան, խորհրդակցական ձայնով Աղբակից՝ Աւետիս Վարդանեան:

Ի նկատի ունենալով, որ մի քանի շրջան ժողովին մասնակցելու հրաւէր չէին ստացել, ուստի որոշուած է ժողովն անուանել շրջանային խորհրդակցութիւն, որի վճիռները սակայն լինելու են պարտադիր: Նիստերը լինելու են դռնփակ:

Այնուհետեւ, ժողովն ընտրեց պրեզիդիում. նախագահներ ընտրուեցին՝ Գ. Յակոբեան եւ Սամսոն, քարտուղար՝ Միք. Ստեփանեան եւ Բ. Մել. Բաղդասարեան:

Մշակուեց եւ հաստատուեց հետեւեալ օրակարգը.

1. Զեկուցումներ
 - ա. Սալմաստի
 - բ. Ուրմիայի
 - գ. Թաւրիզի
 - դ. Շարաֆխանէի
 - ե. Խոյի կոմիտէներից
 - եւ
 - զ. Կ. կոմիտէից:

2. Ներկայ մոմենտը եւ մեր վերաբերմունքը. Պարսկահայ բատալիոնների կազմը. մեր բատալիոնները ու պարսիկները. Ատրպ. Ազգային խորհուրդը եւ մեր վերաբերմունքը:

3. Մեր յարաբերութիւնները պարսիկների, ասորիների եւ քրդերի հետ:
4. Մեր յարաբ. զանազան կուսակց. հետ:
5. Բանաւոր եւ գրաւոր պրոպագանդ:
6. Մէջլիսի հարցը:
7. Ներքին կազմակերպ. խնդիրներ:
8. Աղբակի եւ Սալմաստի յարաբերութիւնները:
9. Կալուածատիրական յարաբերութիւնները:
10. Պարսկահայ արտագաղթի խնդիրը:
11. Ոյժերի բաշխումը:

Որոշուեց ունենալ օրական երկու նիստ (առ. 9-1 եւ երեկոյեան 4-7) եւ օրակարգն սպառել երեք օրում:

ՆԻՍՏ I

7ն ՅՈՒՆՈՒՆԱՐ, 1918 թ.

Շրջանային խորհրդակցութեան առաջին նիստը կայացաւ Յունուար 7-ին, ներկայ էին ժողովին մասնակցող բոլոր ընկերները: Ժողովը բացում է ընկեր Գասպար Յակոբեանը եւ մի քանի խօսքով բացատրում է մոմենտի մեծ ու կարեւոր նշանակութիւնը եւ ապա շեշտում է, որ մեր այս ժողովի վճիռները օգտակար կը դառնային նաեւ պարսկահայ միւս հատուածների համար: Նախագահը բարեմաղթերով ժողովին յաջողութիւն անցնում է օրակարգի առաջին կէտին, որն է. —

ա) Զեկուցումներ մարմինների կողմից

Նախ քան օրակարգին անցնելը առաջարկ է լինում Մինարէթի ընկերներից Թադէոս Զոհրաբեանին եւ Վազգէնին հրաւիրել մասնակցելու ժողովին խորհրդակցական ձայնով. առաջարկը ընդունում է եւ երկու ընկերները հրաւիրում են հէնց սոյն ժողովին:

Կենտ. կոմիտէի գործունէութեան մասին զեկուցում է ընկեր Հայրապետը. —

1.- Շրջանների կազմակերպումը. կազմակերպուած վիճակ են ներկայացնում՝ Սալմաստ, Ուրմիա, Զուլֆա, Արտավիլ, Խոյ, Շարաֆխանէ, Մարաղա, որոնցից վերջին երեքը շատ անմխիթար վիճակ են ներկայացնում եւ



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

համարեա կազմալուծուած են ու ոչ մի յարաբերութիւն չեն պահպանում կենտրոնի հետ: Միւս վայրերն էլ սկզբում կանոնաւոր յարաբերութեան մէջ չեն եղել, Կ. կոմիտէի նամակները մնում են անպատասխան, միայն վերջերս է, որ Սալմաստը եւ Ուրմիան սկսել են հետաքրքրութիւն ցոյց տալ եւ նամակազրուութիւն պահպանել Կ. կոմիտէի հետ:

2.- Խօսում է Արեւելեան բիւրոյի անտարբեր վերաբերմունքի մասին, որ միանգամայն աչքաթող է արել մեր շրջանը. այդ առթիւ քանիցս անգամ Կ. կոմիտէն դիմումներ է արել, բայց հետեւանք չի ունեցել. վերջին ռայոնական ժողովի մասին նոյնպէս մեր շրջանին տեղեկութիւն չի տրուել, որի համար Կ. կոմիտէն հեռագրով բողոքել է Բիւրոյի այդ աստիճան անփոյթ վերաբերմունքի դէմ: Ընկեր Սամսոնը յայտնում է, որ այդ հեռագիրը ունեցել է իր նշանակութիւնը, եւ որ Բիւրոյի ընկերները ցաւ են յայտնել տեղի ունեցած թիւրիմացութեան առթիւ:

3.- Յարաբերութիւններ պարսկ. դեմոկրատ կուսակցութեան հետ: Նախ ընդհանուր գծերով ներկայացնում է գոյութիւն ունեցող պարսիկ կուսակցութիւնների ծրագրերի եւ գործելակերպի մասին, ապա յայտնում է, որ Կ. կոմիտէն գտնելով որ այդ կուսակցութիւններից աւելի իրական ուժ է կազմակերպուած վիճակ ներկայացնում է դեմոկրատ կուսակցութիւնը, յարաբերութեան մէջ է մտել եւ համագործակցութիւն սկսել այդ կուսակցութեան հետ եւ կարճ ժամանակուայ մէջ կարողացել է որոշ պահանջներ իրականացնել, այն է՝ պատերազմի արհաւիրքին ենթարկուած գիւղերից տուրքի գանձումը յետաձգել, մինչեւ որ Կենտրոնից կարգադրութիւն կը լինի բնաւ չգանձելու մասին եւ այդ ուղղութեամբ էլ աշխատանք տարուած է ձեռք առնել միջոցներ բարեկամական յարաբերութիւն առաջ բերելու համար պարսիկների ու հայերի մէջ թէ քաղաքում եւ թէ գաւառում, խորհրդակցուել է կազմակերպելու միջոցաւ սպասուելիք անարխիայի առաջն առնելու համար: Խորհրդակցել են նաեւ մէջլիսի գումարումը փութացնելու եւ այլն նման խնդիրների մասին:

4.- Ատրպատականի պատգամաւորական ժողովում մեր ընկերների գործունէութիւնը: Այդ ժողովում մեր ընկերներից մասնակցում են մօտ 10 հոգի, որոնք վերջերս ժողովներին երեւան են գալիս կազմակերպուած եւ առաջադրում ու տանում որոշ հարցեր: Այդպիսով մեր ընկերների Ֆրակցիան կարողացել է յաջողացնել թեմական կանոնադրութեան փոփոխման խնդիրը: Պարսկահայ համագումարի գումարման անհրաժեշտութիւնը, Թիֆլիսի Ազգային Խորհրդում պարսկահայ ներկայացուցիչ ունենալու անհրաժեշտութիւնը եւ վեր-

ջերս էլ ընդառաջ է գնացել Ատրպատականի Ազգային խորհրդի կազմութեանը:

5.- Բանաւոր եւ գրաւոր պրոպագանդան ցանկալի չափով չի կարողացել բաւարար կերպով առաջ տանելու շնորհիւ տնտեսական սուղ միջոցների: Գրաւոր պրոպագանդայի համար ծառայեցրել է միայն «Այգը», որը դարձեալ նիւթական սուղ միջոցների պատճառով ցանկալի արդիւնք չի տուել: Շրջանները դրամական հաշիւներից ոչինչ չեն ներկայացրել, միայն Թաւրիզի կոմիտէն է որ հոգացել է Կ. Կ.ի բոլոր ծախսերը: Ընկերների ուշադրութիւնն է հրաւիրում Կ. կոմիտէի Փինանսական սուղ միջոցների վրայ, որը խիստ կարեւոր է բեղմնաւոր գործունէութիւն ցոյց տալու համար, եւ որի չգոյութեան պատճառով Կ. կոմիտէն բաւարար կերպով չի տարել շրջանի պրոպագանդայի գործը:

Վերջում ընկերը աւելացնում է, որ պատգամաւորական ժողովի կողմից ընտրուած Ատրպ. Ազգային խորհրդի մէջ, հակառակ ընկերների ցանկութեան, ինքնաբերաբար, ընդունուած են մեծ մասամբ դաշնակցականներ. ընկերները հարթելու համար այդ անյարմարութիւնը աշխատել են լրացնել խորհրդի կազմը ժողովրդի բոլոր խաւերի եւ կուսակցութիւնների կողմից ընտրուած ներկայացուցիչներով:

Չեկուցումը վերջանալուց յետոյ, ժողովը որոշում է, նախ քան միւս գեկուցումներին անցնելը, քննութեան առնել տրուած գեկուցումը: Այդ ուղղութեամբ արտայայտուած է կոմիտէի ընկ. Մկրտիչը եւ գտնում է որ «Այգը» իրեւ կուսակցական օրգան պէտք եղած չափով չէ ծառայել իր նպատակին, որ նրա մէջ կուսակցական կեանքի եւ ծրագրի վերաբերեալ պարզաբանութիւնները շատ քիչ տեղ են գտել: Կ. կոմիտէի շրջաբերական նամակները եղել են անբովանդակ եւ ոչ մի թարմութիւն չեն առաջադրել իրենց շրջանի ընկերների մէջ:

Մինարէթի կոմիտէի գեկուցումը: Կոմիտէի կողմից գեկուցում է ընկեր Արամը, որ նախ պատկերացնում է շրջանի կազմակերպական վիճակը նախ քան ռուսական յեղափոխութիւնը, եւ ապա տալիս է վերակազմութեան մանրամասնութիւնը՝ եւ մարմինների ու ենթակոմիտէների ընտրութիւնների մասին: Ունեցել են մի շարք շրջանային ժողովներ, ուր քննութեան են առել կազմակերպական մի շարք խնդիրներ եւ գլխաւորապէս կանգ են առել ժողովրդի գինման եւ ինքնապաշտպանութեան գործին վրայ, որի շնորհիւ ստացուել է բաւարար արդիւնք, այն որ մօտ 250 հոգի գինուել են սեփական միջոցներով: Նկատելով, որ հայ դասալիքների շահատակութիւնները հետզհետէ լայն ծաւալ են ստանում եւ խախտում հարեւան ժողովրդների հետ ունեցած բարեկամական յարաբերութիւնները, կոմիտէն բարոյական միջոցներ է ձեռք առել դէմ դնելու նրանց ոտնձգու-



Թիւններին, իսկ վերջերս էլ ստիպուած է եղել աւելի կտրական միջոցների դիմելով չէզոքացնել նրանց գործունէութիւնը եւ այդ մասամբ յաջողուել է եւ այժմ աւազակութիւնները այդ շրջանում զգալի չափով պակասել են: Կոմիտէն աչքաթող չի արել նաեւ բարեկարգ վիճակի մէջ դնելու շրջանի կուլտուրական հաստատութիւնները: Մեծ ջանք է թափել բոլոր գիւղերում դպրոցների վերաբացման համար: Պարսիկ կուսակցութիւնների հետ յարաբերութիւն չի պահպանուել, որովհետեւ ճշգրիտ տեղեկութիւններ չեն ունեցել նրանց ծրագրի եւ գործելակերպի մասին, միայն աշխատել են այդ բացը ծածկել յարաբերութեան մէջ մտնելով պարսիկ ժողովրդի հետ: Նոյնպիսի յարաբերութիւն ունեցել են եւ ասորիների հետ. պահանջ է դրուել մեր ծրագիրը թարգմանել ասորերէն լեզուով, որի համար դիմուել է Կ. կոմիտէին: Յարաբերութեան մէջ են եղել նաեւ գործադիր կոմիտէի հետ, ունեցել են իրենց ներկայացուցիչը, որ գանազան ինտրիզների պատճառով ստիպուած է եղել դադարեցնել իր մասնակցութիւնը այդ ժողովին: Կապեր են ունեցել գանազան նպաստամատոյց հաստատութիւնների հետ տաճկահայ գաղթականութեան դրութիւնը բարեք վիճակի մէջ դնելու համար: Վերջերս կոմիտէն զբաղուել է շրջանի հայկական բատալիոնի կազմակերպման խնդրով. ցուցակագրուել է կամաւորների քանակը, դիմելով Ուրմիա կորպուսի հրամանատարին պէտք եղած միջոցները տրամադրելու: Ապա ընկերը յայտնում է, որ Կ. կոմիտէն հարկ եղածին չափով աջակցութիւն եւ խրախուսանք ցոյց չի տուել եւ որ շրջաբերական նամակները ոչ մի թարմութիւն չեն մտցրել շրջանը:

Ուրմիայի կոմիտէի գեկուցումը.— Կոմիտէի կողմից գեկուցում է ընկեր Մկրտիչ Զարգարեանը, տալիս է կազմակերպական վիճակի մասին տեղեկութիւններ. իւրաքանչիւր գիւղ կազմում է մի կազմակերպական միութիւն, որը ըստ իր թուի ունի իր վարչութիւնը, այդպիսով ամբողջ շրջանը ունի 300-400 դաշնակցական ընկերներ, որոնք տալիս են 33 ներկայացուցիչ, որը ընտրում է կոմիտէ: Ապա տալիս է տեղեկութիւն դրամականի մասին. անդամավճարները գանձուում է ամսական մօտ 25-30 թուման. կոմիտէն դեռեւս շրջաններից գոյացած անդամավճարները չի գանձել. այդ մասին հրահանգել է. դրամը վարչութիւնների մօտ պատրաստ է, մնում է որ ստացուի եւ փոխադրուի Կ. կոմիտէին: Երկու ամիս առաջ է, որ ընտրուել է կոմիտէ. մինչ այդ ժամ[անակաւոր] մարմինն էր, որ այնքան էլ բեղմնաւոր գործունէութիւն չի ունեցել եւ իր յարաբերութիւնների մէջ դէպի կուսակցութիւններն ու հարեւան ժողովուրդը եղել է թույլ: Նորընտիր կոմիտէն գործի անցնելով ամէնից առաջ յաջողեցրել է Միջազգային Մէջլիսի գումարումը, որին մասնակցում են երկուքա-

կան ներկայացուցիչ իւրաքանչիւր կուսակցութիւնից եւ ազգութիւնից: Սերտ յարաբերութեան մէջ են եղել պարսիկ դեմոկրատների եւ կառավարութեան հետ: Միջոցներ են ձեռք առել եւ մաքառել դեգերտիրների եւ աւազակների դէմ, սկզբում թուուցիկներով եւ կոչերով իսկ վերջերս աւելի կտրուկ միջոցների են դիմել. այդպիսով յաջողուել է դեգերտիրների սանձարձակութիւնների առաջն առնել եւ նրանց ենթարկել կոմիտէին: Ասորական կուսակցութիւնների հետ առանձնապէս կապ չեն ունեցել: Բաւական մօտ յարաբերութեան մէջ են եղել ամերիկական միսիսյի ներկայացուցիչին հետ: Շատ աւելի սերտ յարաբերութիւն են ունեցել Կորպուսնոյ կոմիտէների հետ. ունեցել են Դաշնակցութեան կողմից ներկայացուցիչ ստեղծուած կոմիտէի մէջ, որի միջոցով բաւական օգտակար գործունէութիւն են ունեցել: Ապա ընկերը կանգ է առնում հայկական բատալիոնի կազմակերպման վրայ. գործնական քայլեր են արել. բատալիոնը արդէն պատրաստ է. ցուցակագրել են բոլոր գէնքի ընդունակ հայ ժողովրդին, որոնց թիւը հասնում է մօտ 1000-ի: Կազմել են զինուորական խորհուրդ, որ բանակցութեան մէջ է մտել կորպուսի հրամանատարի հետ եւ ստացել բատալիոնի համար կարեւոր քանակութեամբ գէնք. մարդիկ է ուղարկուած շրջանները, Հէյտարապատ, Շարաֆխանէ, Գորմախանէ ստանալու պահեստները: Որոշուած է առայժմ կամաւորներից 500 հոգի պահել կազարմական կենցաղով, իսկ միւս ցուցակագրութիւնները լինելու են իրենց գիւղերում՝ պատրաստ առաջին պահանջին իսկ դուրս գալու կարիք եղած վայրերը գնալու: Ընդգծել են նաեւ իրենց ինքնապաշտպանութեան գործունէութեան սահմանները:

Ի նկատի ունենալով օրակարգի երկրորդ կէտի՝ բատալիոնների կազմակերպման խնդիրը, շտապողականութիւնը եւ կարեւորութիւնը, ժողովը որոշում է այդ հարցը առաջ գցել միւս մարմինների գեկուցումից:

բ) Հայկական բատալիոնների կազմակերպման խնդիրը.—

Ընկեր Սամսոնը գեկուցում է ժողովին կովկասեան ընկերների հետ իր ունեցած խօսակցութիւնը այդ մասին, որ՝ նրանք անհրաժեշտ են համարում այս ճակատում եւս ունենալ հայկական բատալիոններ, ի հարկէ տեղական ուժերից կազմուած, ինքնապաշտպանական հողի վրայ միայն, այն ձեւով, որ այդ շարժումը չզբաղէ պարսիկ ժողովրդին: Կովկասեան ընկերները խոստացել են ամէն տեսակի աջակցութիւն ցոյց տալ, բատալիոնների կազմակերպման համար յանձնարարել են դիմել Ուրմիայի Փրանսիական գեներալին եւ նրանից ստանալ պէտք եղած ռազմական միջոցները: Ընկեր Սամսոնը Զաւրիեւի հետ խօսակցել է պարսկերէն թերթի



անհրաժեշտութեան մասին, որ պիտի հրատարակուի մեր կուսակցութեան կողմից: Ընկ. Զաւրիեւր պարսկերէն թերթի համար տրամադրել է 20,000 ռուբլի, որ խոստացել է անմիջապէս փոխադրել, երբ խմբագրական մարմինը կազմուած կը լինի:

Սկզբունքային տեսակէտից մտքերի փոխանակութիւն է տեղի ունենում բատալիոնների կազմութեան մասին: Կ. կոմիտէի կողմից գեկուցուած է, որ նա արդէն որոշել է կազմակերպել հայկական բատալիոններ մեր շրջանում ինքնապաշտպանութեան գործը վարելու համար: Այդ ուղղութեամբ խորհրդակցութիւն են ունեցել Թաւրիզի պարսիկ դեմոկրատների հետ եւ նրանք դէմ չեն արտայայտուել այդ կազմակերպութեան: Խօսուել է նաեւ այն ուղղութեամբ, որ եթէ պարսիկներից էլ կազմուի կամաւորական խմբեր, նրանք էլ կարող են աջակցել մեզ՝ դէմ դնելու քրտական յարձակումներին: Ատորական բատալիոնների կազմակերպումը գրգռիչ է պարսիկների համար, այն տեսակէտից, որ նրանք առաջ են քաշում ազգային տերիտորիալ իտէալներ եւ միւս կողմից էլ իրենց ընթացքով դէմ են պարսիկ գիւղացիութեանը:

Բատալիոնների կազմակերպման առթիւ արտայայտուած են ընկերներից շատերը եւ բոլորն էլ գտնում են, որ դա մի անխուսափելի անհրաժեշտութիւն է ներկայ հանգամանքում ապահովելու Ատրպատականի հայութեան Ֆիզիքական գոյութիւնը եւ միւս կողմից էլ ընդառաջ զնացած լինելու համար՝ դէմ դնելու ընդհանուր հայութեան ներկայ տագնապին: Մտքերի երկար փոխանակութիւնից յետոյ առաջարկուած են հինգ բանաձեւեր, որոնք բոլորն էլ համարեա նոյն բովանդակութեամբ: Այդ բանաձեւերից ժողովը ընդունում է ընկ. Ալեքսան Յովհաննիսեանի բանաձեւը շատ քիչ յաւելումով որ է հետեւեալը.

«Ի նկատի ունենալով, որ պատերազմի վերջին իրադարձութեանց շնորհիւ վտանգուած է հայութեան գոյութիւնը, որ պարսկահայութիւնը զերծ չէ այդ վտանգից, որ պարսկական կառավարութիւնը ի վիճակի չէ դէմ դնելու սպառնացող վտանգին, եւ որ պարսկահայութիւնն էլ պարտաւոր է իր ուժերն ի սպաս բերել համազգային գործին, որ կովկասեան կոմիսարիատն ու դաշնակից կառավարութիւնները մեր շրջանում վարում են յատուկ քաղաքականութիւն,— որոշում է զինել պարսկահայութիւնը հասկացնելով պարսիկ կառավարութեան եւ պարսիկ ժողովրդին, որ այդ զինմամբ չի հետապնդում ոչ մի ազդեալի քաղաքականութիւն, այլ լոկ ինքնապաշտպանութիւնը հայ ժողովրդի»:

ՆԻՍ II

7 Յունուար երեկոյեան

Ժողովը սկսում է երեկոյեան ժամը 4-ին. նախագահում է ընկ. Գ. Յակովբեան. ներկայ էին նաեւ խորհրդակցական ձայնով հրաւիրուած երեք ընկերները:

Օրակարգ՝

Բատալիոնների կազմակերպման տեխնիկական աշխատանքները

Բատալիոնների կազմակերպման անհրաժեշտութիւնը սկզբունքով ընդունած լինելով, այժմ ժողովը զբաղւում է այն խնդրով՝ թէ ինչպէս պիտի կազմակերպել այն, ի՞նչ միջոցներով գինել եւ ի՞նչ եղանակով վարել տեխնիկական աշխատանքները: Մտքերի փոխանակութիւնից յետոյ պարզուած է, որ գործի սկզբնաւորութեան ամէնից առաջ անհրաժեշտ է դրամ եւ ապա՝ գործի կազմակերպումը կանոնաւոր հիմքերի վրայ դրած լինելու համար՝ պէտք են հայ սպաներ: Շեշտուած է նաեւ ժամանակաւոր շտաբի՝ զինուորական խորհրդի անհրաժեշտութեան մասին, որը պիտի հոգա վերոյիշեալ առաջադրուած խնդիրները, մինչեւ որ Թաւրիզում կազմուելիք շտաբը կը տեղափոխուի Սալմաստ, որից յետոյ բատալիոնը լինելու է կենտրոնացուած շտաբի եւ կազմուելիք բատալիոնների համար: Այս բոլորի համար, որոշուած է դիմել Թաւրիզ Կ. կոմիտէի այնտեղ մնացած անդամներին եւ Ատրպատականի Ազգային խորհրդին, որպէսզի հոգա դրամի, հայ սպաների եւ շտաբի մասին: Դրուած պահանջները վերին աստիճանի կարեւոր եւ անյետաձգելի լինելով, որոշուած է Կ. կոմիտէի անդամներից մէկին անյապաղ ուղարկել ի կատար ածելու այդ կարիքները: Այդ պարտականութիւնը յանձն է առնում ընկ. Հ. Պանիրեանը, որին հրահանգըւում է նաեւ դնել Ատրպ. Ազգային խորհրդի առաջ, որ Թաւրիզը դրամական մեծ օժանդակութիւն պիտի ցոյց տայ՝ առնուազը 50,000 թուման:

Ապա ժողովը զբաղւում է զօրակոչ կատարելու եղանակի վերաբերեալ: Ընկերներից ոմանք գտնում են, որ անպայման պիտի ընդհանուր եւ պարտադիր մոբիլիզացիա կատարել, իսկ ոմանք դէմ են դրան, նախ՝ այն պատճառով, որ դա կարող է տեղիք տալ մի շարք դժգոհութիւնների եւ երկրորդ՝ ի նկատի ունենալով այն փափուկ դրութիւնը, ուր մենք գտնուած ենք մի օտար եւ չէզոք պետութեան մէջ, որ կարող է բարեացակամ չվերաբերուել մեր գործունէութեան ընթացքին, եւ առաջարկում են առայժմ կամաւոր անել զօրակոչը: Մտքերի փոխանակութիւնից յետոյ ժողովը սկզբունքով որոշում է ընդհանուր պարտադիր մոբիլիզացիա, որը գաւառներում գլխաւորապէս՝ Սալմաստում, Ուրմիայում



եւ Խոյուն հէնց սկզբից եւեթ գործադրութեան է դրուում, իսկ Թաւրիզում եւ միւս վայրերում յայտարարուում է նոյնպէս պարտադիր բայց գործադրուում է հետզհետէ պահանջած հարկին:

Թաւրիզի կոմիտէի գեկուցումը:—

Զեկուցանում է ընկ. Գրիգոր Յարութիւնեանը. Թաւրիզի կոմիտէն գտնուելով Կ. կոմիտէի հետ նոյն վայրում, չի ունեցել գործունէութեան այնպիսի լայն շրջան, որպիսին ունեցել են միւս կոմիտէութիւնները: Նա զբաղուել է գլխաւորապէս ներքին կազմակերպական խնդիրներով: Ընկերների համար, որոնց թիւը հասնում է 100-ի, կազմակերպել է պարբերական դասախօսութիւններ, թէորիակական հարցերի եւ առօրեայ քաղաքական ընթացիկ խնդիրների շուրջը: Դասախօսութիւններ եւ գրոյցներ է կազմակերպուել քաղաքում գտնուած հայ գինուորների համար աշխատելով տարածել Դաշնակցութեան սկզբունքներն ու գաղափարները: Սահմանադիր ժողովի ընտրութիւնների ժամանակ պրոպագանդա մղել նրանց (հայ գինուորների) մէջ, որպէսզի ձայն տան հսերներին: Կազմել է գործակատարաց միութիւն, սկզբում անկուսակցական, իսկ Շրջանային ժողովի որոշումից յետոյ կուսակցական հողի վրայ. գործակատարաց միութիւնը յարաբերութեան մէջ է մտել թուրք գործակատարաց միութեան հետ եւ աշխատել է համագործակցութիւն ստեղծել. այդ ցանկութեանը նրանք ընդառաջել են, բայց տեւողական չի եղել: Կոմիտէն աշխատել է կազմակերպել կօշկակարների եւ դերձակների արհեստակցական միութիւններ, բայց այդ չի իրականացել: Բերետիէյի հայ անդամի ընտրութեան ժամանակ կոմիտէի ջանքերով ընտրուել է մեր ընկեր Մատթէոսը: Ընկեր գեկուցանողը մի քանի խօսք էլ ասում է դրամական հաշիւների մասին կազրային սիստեմը գործադրել են:

Անդամավճարները գանձուել են համարեա կանոնաւոր. գոյացած գումարը գրեթէ ամբողջութեամբ տրամադրել է Կ. կոմիտէին, որովհետեւ վերջինս ունեցել է մեծ ծախսեր, իսկ արդիւնք ոչ մի շրջանից չի ստացել:

ՆԻՍՍ III

8 Յունուար, առաւօտեան

Նախագահում է ընկեր Սամսոնը. ներկայ են նաեւ Խոյի եւ Սէյդավարի երեք ընկերները:—

Շարաֆխանէի մարմնի գեկուցումը:—

Զեկուցանում է ընկեր Ռուբէն Դաւթեանը. ընկերը հաստատուելով Շարաֆխանէում չի գտել կազմակերպուած մարմին: Ընկեր Սամսոնի հետ տեսակցելով բանաւոր յանձնարարութիւն է ստացել Շարաֆխանէ-

ում դաշնակցական կազմակերպութիւն առաջացնելու: Ընկեր Ռուբէնը այդ յանձնարարութիւնից անմիջապէս վերջ գործի է անցել եւ Նոյեմբեր 26-ին իր շուրջն է համախմբել Շարաֆխանէում գտնուած Դաշնակցութեան համակիր գինուորներին եւ Քաղաքային միութեան ծառայողներին մօտ 80 հոգի եւ կազմել է նրանցից մի Դաշնակց. միութիւն: Ընկերներին յաջողուել է իրենցից գործադիր կոմիտէի մէջ ներկայացուցիչ անցկացնել: Ճիշտ է խումբը կանոնաւոր չէ կազմակերպուած, անդամավճարներ չէ նշանակուած եւ ոչ մի կոպէկ չէ գանձուած. մտադիր են այդ բացը ծածկել կամաւոր նուէրներով: Ապա ընկերը աւելացնում է, որ դաշնակց. կնիքի անհրաժեշտութիւն զգալով, առանց Ատրպ. Կ. կոմիտէի գիտութեան եւ թոյլտուութեան դիմել է Թիֆլիսի Կ. կոմիտէութեան, որ իրենց շրջանի համար մի կնիք ուղարկեն:

Ընկեր Գասպարը որոշ լրացումներ է անում Շարաֆխանէի գեկուցման, այն որ նախքան այս վերջին կազմակերպումը այդտեղ եղել է Կ. կոմիտէ, որ նոյնիսկ ներկայացուցիչ էր ուղարկել նախորդ շրջանային ժողովին. ունեցել են բաւականաչափ անդամներ, գանձել են անդամավճարներ, որը ընկերներից մէկի (Դերվիշի) միջոցով ուղարկել են Արեւելեան բերդոյին, որը չի ընդունել եւ հասկացրել է, որ այդ գումարը պիտի յանձնուի Ատրպ. Կ. կոմիտէին: Վերջինս այդ գումարը չի ստացել եւ ոչ մի տեղեկութիւն էլ չունի: Շարաֆխանէի ներկայացուցչին յանձնարարուում է ամէն կերպ աշխատել այդ դրամը ձեռք բերելու եւ ստանալ նախկին կոմիտէի հաշիւներն ու արձանագրութիւնները եթէ կան:

Ժողովը լուրջ ուշադրութեան է առնում Շարաֆխանէի կազմակերպական կեանքի ներկայ վիճակը. գտնում է այն խիստ անմխիթար: Բայց ի նկատի ունենալով նրա տեղի կարեւոր նշանակութիւնը, նամանաւանդ ներկայ հանգամանքներում, անհրաժեշտ է համարում միջոցներ ձեռք առնել կազմակերպական կեանքը հաստատուն հիմունքների վրայ դնելու եւ որքան հնարաւոր է մարմինը կազմել տեղական մնացած ուժերից:

Խոյի մարմնի գեկուցումը:—

Զեկուցանում է ընկ. Մարգար Խոյամիրեանը:— Յայտնում, որ հին կազմը եղել է լոկ անուանապէս. չի ունեցել ոչ մի գործունէութիւն, հետեւապէս ոչինչ չի կարող գեկուցանել նրա գործունէութեան մասին: Դեկտեմբեր ամսին, ընկերները ի նկատի ունենալով մոմենտի լրջութիւնը, կազմալուծում են հին կոմիտէն եւ նոր ընտրութիւն կայացնում: Ինքնապաշտպանութեան գործը վարելու համար նշանակել են երկու ընկեր: Վերջին անցուղարձը եւ վերահաս վտանգը սթափեցրել են այդ շրջանը եւ այժմ շատերը հետաքրքրուում են ինքնա-



պաշտպանութեան գործով: Քաղաքացիք, որ շատ խորթ աչքով են նայել կուսակցական գործունէութեան, այժմ նրան էլ են հետաքրքրութիւն ցոյց տալիս: Երեք գիւղերից եւ Խոյի հարեւան թաղից գէնքի ընդունակ մարդ կարելի է դուրս հանել 250 հոգի: Ինքնապաշտպանութեան տեսակէտից, ի նկատի առնելով դիրքը, յարմարութիւն ներկայացնում են գիւղերից երկուսը՝ Սէյդավարը եւ Շորաւը, իսկ Թաղը եւ Երրորդ գիւղը գուրկ են այդ յարմարութիւնից:

Ընկերը վերջացնելով իր գեկուցումը, ժողովի ուշադրութիւնն է հրաւիրում այն հանգամանքի վրայ, որ Խոյը կարեւոր կենտրոն է այն տեսակէտից, որ նա ծառայում է թիկունք Վանի եւ Սալմաստի համար, հետեւապէս աչկաթող չպէտք է անել: Կազմակերպութեան գործը ցանկալի հիմունքների վրայ դնելու համար առաջարկում է այդ շրջանը ուղարկել մի պատրաստուած ընկեր:

Ի լրումն Խոյի գեկուցման, մի քանի խօսք էլ ասում է Սէյդավարի ներկայացուցիչ ընկ. Աւետիսը: Սէյդավարում ընտրուած է նոր կոմիտէ, կազմակերպւում է ինքնապաշտպանութեան գործը, դաշնակցականների թիւը հասնում է 60-ի:

Կ. կոմիտէի կողմից գեկուցում է, որ Խոյի եւ Սէյդավարի նորընտիր կոմիտէների մասին ինքը տեղեկութիւն չի ունեցել: Միայն վերջերս այդ կոմիտէներից ստացել է գրութիւն, որով խնդրում են օժանդակութիւն ցոյց տալ ներկայ ծանր կացութիւնից դուրս գալու համար:

Ժողովի կողմից նկատողութեան է առնում այն հանգամանքը, որ շրջանը իր կազմակերպական անցողարձի տեղեակ չի պահում կենտրոնը եւ հակադիսցիպլին գործեր է անում:

Դաշնակցութիւնը եւ Ատաբայ. Ազգային խորհուրդը: Կ. կոմիտէի կողմից ժողովին տեղեկութիւն է տրւում Ատաբայ. Ազգային խորհրդի կազմի մասին — ընտրուած է Ատաբայ. թեմական խորհրդի կողմից 7 հոգի, որոնցից երեքը մեր ընկերներով. կազմը ուժեղացնելու համար իւրաքանչիւր կուսակցութիւնից եւ հասարակական խաւերից հրաւիրուած են երկուական ներկայացուցիչ: Խորհրդի գլխաւոր նպատակն է դրամական օժանդակութիւն հասցնել կազմուելիք հայկական բաժնակիցներին եւ վարել պէտք եղած յարաբերութիւնները ճակատի հետ ու բաւարարել արուած պահանջներին ու դիմումներին:

Ժողովը ծանօթանալով խորհրդի կազմին, եկաւ այն եզրակացութեան, որ խորհուրդը իր վրայ ստանձնած պարտականութիւնը չի կարող յաջող կերպով առաջ տանել ներկայ կազմով. ումանց կողմից առաջարկ է լինում բեկանել այդ կազմը եւ նոր ընտրութիւն կայացնել: Ժողովը վերջնական որոշման չի յանգում, այդ

գործը յանձնարարում է Թաւրիզի ընկերներին, եթէ նրանք կը կարծեն, որ իսկապէս խորհուրդը իր կազմի պատճառով թերանում է իր պարտականութիւնների մէջ, լուծել տալ այդ կազմը եւ նոր ընտրութիւն կայացնել, աշխատելով անցկացնել մեր ընկերներից եւ հասարակական այլ խաւերից այնպիսիներին, որոնք օգտակար կը լինեն, ու որոնց հետ հնարաւոր կը լինի միասին գործ կատարել:

Մեր յարաբերութիւնները պարսիկներին, ասորիներին եւ քրդերին հետ

Սալմաստի եւ Ուրմիայի հայութիւնը հարեւան լինելով այդ երեք ազգութիւններին, ժողովը նախ եւ առաջ ցանկանում է իմանալ թէ այդ երկու շրջանի մեր կազմակերպութիւնը եւ առհասարակ հայութիւնը ինչպիսի յարաբերութեան մէջ է եղել իր հարեւանների հետ: Ուրմիայ շրջանից տեղեկութիւններ է հաղորդում ընկ. Մկրտիչը. ծանօթացնում է ասորական երկու թայֆաների՝ Մար Շիմոնականներին եւ Աղա Պետրոսականների մասին, որոնք իրար նկատմամբ թշնամական յարաբերութեան մէջ են: Հայութեան նկատմամբ առերես բարեկամական յարաբերութիւն են ցոյց տալիս եւ այդ բնական է, որովհետեւ իրարից կողոպուտի եւ թալանի առիթ չեն ունեցել: Մեր կուսակցութիւնը նրանց հետ ժողովներ ունենալու եւ առհասարակ աւելի սերտ յարաբերութիւն ստեղծելու ցանկութիւն է ունեցել, բայց առայժմ չի կարողացել իրականացնել: Այդ շրջանում քրդութիւնը ենթակայ է հալածանքի եւ բաւական ճնշուած վիճակ է ներկայացնում: Այս պատերազմի ընթացքում այդ շրջանի խաղաղ քիւրդ գիւղացիութիւնը ամբողջապէս ենթարկուել է ալան թալանի:

Ընկերը կարծիքով այդ խաղաղ քրդութեան վրայ կարելի է վստահանալ, նամանաւանդ Մարգաւարի շրջանի քրդութիւնը, որի հետ կարելի է շատ աւելի սերտ լինել եւ հարկ եղած դէպքում կարելի է գէնք տալ ու զինակից դարձնել: Ուշնիի քրդութիւնը, հակառակ դրան, շատ անվստահելի տարր է ներկայանում:

Խօսք է տրւում ընկ. Արամին, իբր Մինարէթի կոմիտէի ներկայացուցչի, ներկայացնելու իրենց շրջանի յարաբերութիւնները ասորիներին եւ քրդերին հետ: Ասորիների հետ բարեկամական յարաբերութեան մէջ են. վիճակներին նմանութիւնը վստահութեան հաւատք է ներշնչում դէպի իրար եւ այն կարծիքին է, որ պիտի աշխատել աւելի սերտ յարաբերութիւն ստեղծել, ու ձեռք ձեռքի տուած կռուել ազգային իրաւունքները ոտնահարտայալուում, ոչ մի հաւատք ու վստահութիւն չունի դէպի այդ տարրերը եւ այդ տեսակէտից ժխտում է նրանց հետ որեւէ բարեկամական կապ պահպանել: Հարեւան թուրքերի հետ ունեցած յարաբերութեան նկատ-



մամբ արդէն ընդհանուր գեկուցման մէջ յայտնել են:

Դրուած խնդրի մասին խօսում են ընկերներից շատերը: Երկար քննութեան նիւթ է դառնում այն խնդիրը թէ առհասարակ ասորիների, քրդերի եւ թուրքերի հետ ինչպիսի յարաբերութիւն պիտի պահպանուի, որ մեր ազգային շահերը չվտանգուեն: Մտքերի փոխանակութիւնից յետոյ ընկերներ՝ Գասպարի եւ Հայրապետի կողմից առաջարկուած է բանաձեւեր: Անցնում է 10 ձայնով ընկեր Գասպարի առաջարկը, որ է հետեւեալը.— Երջանային խորհրդակցութիւնը ելակէտ ունենալով պարսկահայ հատուածի ներկայ վիճակը, կռուող մեծ պետութիւնների բռնած քաղաքականութիւնը եւ շրջապատող բախտակից ժողովուրդների յարաբերութիւնները, որոշեց ամենաուժեղ կերպով առաջ տանելով մեր ժողովրդի զինման գործը միաժամանակ ամենախիստ համաձայնութիւն կայացնել ինքնապաշտպանութեան գործում ասորիների, քրդերի եւ միւս հարեւան ժողովուրդների հետ:

Զինուորական խորհրդի կազմութիւնը.—

Բատալիոնների կազմակերպման համար անհրաժեշտ պահանջ է զգացում մի մարմնի. որոշում է Սալմաստից ընտրել 7 հոգինոց կազմած ժամանակաւոր Զինուորական խորհուրդ, որ կը վարէ գործերը մինչեւ Շտաբի հաստատուելը: Գաղտնի քուէարկութեամբ ընտրուած են.—

- 1. Ընկ. Սամսոն 20 ձայնով
- 2. » Առաքել 20 »
- 3. » Արամ 19 »
- 4. » Գեղամ 15 »
- 5. » Սարգիս 14 »
- 6. » Զիբօ 11 »
- 7. » Վազգէն 10 »

Առաջարկուած է Երջանային խորհրդակցութիւնը ծանօթանայ Ուրմիայի Զինուորական խորհրդի կազմի անդամների հետ եւ վաւերացուի այն ընտրութիւնն եւս: Առաջարկը ընդունուած է, ժողովը վաւերացնում է այդ կազմը, որ կազմուած է հետեւեալ ընկերներից.— Արտաշէս [անընթեռնելի ազգանուն] (սպայ), Արտաշէս Յարութիւնեան, Գարեգին Հեքիմեան, Ալեքսան Մանասէրեան, Սիսակ Մալխասեան, Սերգէյ Սուրէնեան (զինուոր), Մկրտիչ Զաքարեան:

ՆԻՍ IV
Տն Յունուար երեկոյեան

Նախագահում է ընկ. Սամսոնը:

Բանաւոր եւ գրաւոր պրոպագանդա.— Այս մասին գեկուցանում է ընկ. Գասպարը:

Բանաւոր պրոպագանդան քաղաքում առաջ է տարւել բաւարար չափով՝ կուսակցական եւ քաղաքական հարցերի շուրջը պարբերաբար կազմակերպուել են դասախօսութիւններ, իսկ գաւառում, ինչպէս գեկուցումներից երեւաց, բանաւոր պրոպագանդան շատ անբաւարար վիճակ է ներկայացնում. սպասել են կենտրոնից պրոպագանդիստ ընկերի, իսկ կենտրոնը այդ հնարաւորութիւնը չի ունեցել: Գրաւոր պրոպագանդայի համար ծառայել է միայն «Այգը», որը շնորհիւ նիւթական սուղ միջոցների չի իրականացրել իր վրայ դրուած յոյսերը. թերթի բարոյական կողմը նոյնպէս տուժել է ընկերների բազմակողմանի աշխատանքներով ծանրաբեռնուած լինելու պատճառով: Ամբողջ հոգացողութիւնը մնացել է քաղաքի ընկերների վրայ. գաւառներից ընկերները ոչ մի աշխատանք ցոյց չեն տուել: Այսպիսի հանգամանքներում, ի հարկէ, Կ. կոմիտէն հնարաւորութիւն չէր ունենալ ի կատար ածելու շրջանային ժողովի որոշումը՝ պարսկերէն թերթի հրատարակութեան վերաբերեալ. միայն աշխատել է օգտուել քաղաքում եղած պարսկերէն թերթին տալով երբեմն յօդուածներ եւ «Այգ»ից թարգմանութիւններ: Թերթի նիւթական միջոցները հոգացել է մեծ չափով պրոպագանդային ֆոնդի վարչութիւնը, որը իր եկամուտի մեծագոյն մասը յատկացրել է թերթին:

Ժողովը լսելով այդ գեկուցումը քննութեան է առնում այն խնդիրը թէ ինչ միջոցներով կարելի է բարելաւել թերթի նիւթական եւ բարոյական վիճակը: Ժողովը յանգում է այն եզրակացութեան, որ գաւառի մարմինները պիտի պարտադիր կերպով որոշ գումար յատկացնեն թերթին եւ ունենան պաշտօնական յատուկ թղթակից մարմնի կողմից նշանակուած: Յանկուութիւն է յայտնուում, որ թերթը շատ աւելի մօտ կանգնած լինի պարսկական կեանքին, որ նրա մէջ պիտի արձագանք գտնեն Պարսկ. քաղաք. եւ հասարակական կեանքի վերաբերեալ բոլոր երեւոյթները: Թերթը հետաքրքիր դարձնելու համար անհրաժեշտ է համարուում անպայման ունենալ հեռագիր, որի համար ընկեր Ալեքսան Մանասէրեանը յատկացնում է 120 թուման: Գաւառի մարմինների վրայ թերթի հրատարակութեան համար պարտաւորեցուցիչ տուրք է նշանակուում՝ Սալմաստից 100 թուման, Ուրմիայից 100 թուման, Խոյից 30 թուման, դրանց մէջ հաշուած, ի հարկէ, թերթի բարեկամները: Եթէ այս բոլորից յետոյ թերթը կանգնած լինի կրկին անգամ բացի առաջ, ընկ. Ալեքսան Մանասէրեանը խոստանում է հոգալ այդ բացը:

Գաւառական մարմինների վրայ պարտականութիւն է դրուում կարեւոր դէպքերի մասին հեռագրեր տալ թերթին:

Պարսկերէն թերթի հրատարակութիւնը յառաջիկայում արդէն հնարաւոր է համարուում, որովհետեւ նիւթական տրամադրելի միջոցներ կան, մնում է կազմա-



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

կերպել աշխատանքը: Հրահանգում է Կ. կոմիտէին կազմել խմբագրական մարմին, նշանակել պարսկերէնի խմբագիր: Թերթի գլխաւոր դերը պիտի լինի մօտեցնել մեր հարեւան թուրքերը հայութեան հետ եւ տարածել նրանց մէջ մեր գաղափարները կուսակցական տեսակէտից:

Որոշում է մեր ծրագիրը թարգմանել ասորերէն. այս առթիւ պիտի բանակցել թիֆլիս, ընկեր Վրացեանին հետ:

Մէջլիսի խնդիրը.— Խնդիրը պարզ լինելով, աւելորդ է համարուում նորից զբաղուել: Ժողովը հաստատում է նախկին Շրջանային ժողովի որոշումը:

ՆԻՍՏ V-րդ
9 Յունուար 1918 թ.
Առաւօտեան նիստ

Ժողովին նախագահում է ընկ. Գասպարը

Օրակարգ VII
Ներքին կազմակերպչական խնդիրներ

Ժողովի քննութեան նիւթ է դառնում ներքին կանոնադրութեան մի շարք խնդիրներ: Ընկեր նախագահը առաջարկում է շրջանի ընկերներին իրենց կարծիքը յայտնել կանոնադրութեան կէտերի մասին ունեցած իրենց կարծիքները:

Խմբերի եւ ենթակոմիտէների վերացման որոշումը, տրուած նախորդ Շրջանային ժողովի կողմից, նիւթ է դառնում ընկերների խորհրդակցութեան: Այդ առթիւ արտայայտուում են Մինարէթի ընկերները: Նրանք այն կարծիքն են յայտնում, որ այդ որոշումը անհամապատասխան է իրենց շրջանի տեղական պայմաններին: Նրանք ի նկատի ունենալով իրենց շրջանի ինքնայատուկ պայմանները, թողել են խմբային եւ ենթակոմիտէական նախկին ձեւը, միայն ենթակոմիտէները ընտրուում են ոչ թէ խմբապետների ժողովում, այլ գիւղի դաշնակցական համայնքի ժողովում: Նոյն շրջանում լայն չափով չէ գործադրուած նաեւ կարտերի սխտեմը, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ երբեմն կարող է շահագործուել կուսակցութեան կարտերը այս կամ այն բախտախնդիր անհատների ձեռքում:

Կապուտանի¹⁵ ընկերների գեկուցումից յայտնուում է, որ ենթակոմիտէական ձեւը կարեւոր [է] նաեւ նրանց շրջանում եւ այդ ձեւն էլ գործադրուած է, միայն փոխանակ ենթակոմիտէների ընտրուած են գիւղական վարչութիւններ, գիւղի դաշնակցական համայնքի կողմից: Կարտային սխտեմը այդ շրջանում գործադրուած է միայն քաղաքում, իսկ գիւղերում ոչ:

Մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշուում է թողնել ենթակոմիտէները շրջանում, բայց աշխատել վերացնել խմբային սխտեմը: Յանձնարարուում է շրջանի ընկերներին աշխատել հետզհետէ գործադրութեան մէջ մտցնել կարտային սխտեմը:

Ժողովը յարմար է գտնում մարկաների սխտեմը անդամավճարների վերաբերմամբ եւ յանձնարարում է Կ. կոմիտէին տպագրութեան յանձնել տետրակներ եւ մարկաներ:

Կնիքների հարցը.—

Մի քանի շրջաններ այն է՝ Ուրմիան, Սալմաստը, Խոյը, Ջուլֆան կարիք են զգում կնիքների, մանաւանդ երբ յարաբերութեան մէջ են մտնում օտար կուսակցութիւնների եւ զանազան հաստատութիւնների հետ:

Ընկեր Սամսոնը յայտնում է, որ ի նկատի ունենալով այդ շրջանների առաջարկութիւնները, օգտուելով առիթից թիֆլիս եղած ժամանակ Բիւրոյից թոյլտուութիւն է ստանում եւ պատրաստել է տալիս կնիքները, նպատակով, որպէսզի նրանց բաշխուում լինեալ շրջաններում թողնուի Կ. կոմիտէի հայեցողութեան:

Ժողովը քննելով այդ հարցը, սկզբունքով ընդունում է կոմիտէները կնիքներ ունենալու հարցը, միայն թողնում է Կ. կոմիտէի իրաւասութեան յանձնելու կոմիտէներին ըստ անհրաժեշտութեան, միայն որոշել նրանց իրաւասութեան սահմանները գործադրութեան դէպքում:

Աղբակի եւ Սալմաստի կոմիտէի յարաբերութեանց խնդիրը.—

Աղբակի դրութեան մասին գեկուցում է ընկեր Աւետիսը, ներկայացնելով այդ շրջանի դրութիւնը ինքնապաշտպանութեան տեսակէտից եւ վարչական դրութեան մասին տալիս է մի շարք տեղեկութիւններ, որից երեւում է, որ համերաշխ համագործակցութիւն գոյութիւն չունի Վանից ուղարկուած կոմիտարի եւ տեղական գաւառական խորհրդի ու Դաշնակցութեան մարմնի միջեւ: Վերջին երկու մարմինները գործում են համերաշխութեամբ: Առաջարկում է ընկերներին բարոյական եւ գինական աջակցութեան ցոյց տալ այդ շրջանի հայերին: Անմխիթար վիճակի մէջ է մանաւանդ այդ շրջանի պարենաւորման գործը:

Ընկեր Արամը նկատում է, որ թէեւ [Աղբակը] վարչական կարգով կապուած է Վանի շրջանի հետ, բայց աշխարհագրական դիրքով շատ աւելի հակում ունի Սալմաստի շրջանից, մանաւանդ պարենաւորման տե-

15.- Կապուտան – ծածկանուն Ուրմիա աւանի: Միւսերթը՝ Սալմաստ քաղաքն է:



սակէտից. շնորհիւ ճանապարհների դժուարութեան, վերջինը չի կարող բաւարարել Աղբակի պահանջներին: Առաջարկում է բանակցել Վանի ընկերների հետ, որ եթէ նրանք հնարաւորութիւն չունին կանոնաւոր կապ պահելու Աղբակի հետ, այդ աշխատանքի որոշ մասը յանձնուի Սալմաստի ընկերներին: Ընկեր Սամսոնը յայտնում է որ Աղբակը անպայման պիտի կապուած լինի Վանի շրջանի հետ. որքան հնարաւոր է ունենալ այնտեղ կազմակերպուած գինուորական ուժ, ապահովել Չուխ Գեաղուկը եւ հնարաւոր եղածին չափով անցանելի դարձնել այդ ճանապարհը հաղորդակցութեան տեսակէտից:

Սալմաստը պիտի շարունակէ բարոյական աջակցութիւն ցոյց տալ այդ շրջանին: Ժողովը ընդունելով ընկ. Սամսոնի առաջարկը, յանձնարարում է Մինարէթի կոմիտէին բանակցել Վանի ընկերների հետ եւ նրանց ուղարկութիւնը հրաւիրել Աղբակի ներկայ վիճակի վրայ եւ առաջարկել ուղարկութեան առնելու այն բարեկարգելու:

Տրտունջներ Ուրմիայի շրջանում հարկերի դէմ:—

Ընկեր Մարգարեանը գեկուցում է, որ Ուրմիայի շրջանում գիւղացիութիւնը չի կամենում վճարել կալուածատէրերին հասանելիք տուրքերը. այդ առթիւ դիմում են արել շրջանի կոմիտէին նրա տրամադրութիւնը իմանալու: Կոմիտէն դրական ոչ մի պատասխան չի տուել, բայց գիւղացիք շարունակում են իրենց աջակցել այդ խնդրում: Այժմ ընկերը այդ հարցը դնում է ժողովի առաջ նրա կարծիքը իմանալու, թէ ինչ ընթացք պիտի բռնէ կոմիտէն այդ պահանջի դէմ:

Մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշուում է այդ խնդիրը թողնել վճուելու գիւղացիներին իրենց. այդպիսի դէպքեր շատ յաճախ է առաջանում գիւղացիների եւ կալուածատէրերի մէջ, որ վերջանում է խաղաղ ճանապարհով: Ընկերներից, ինչպէս Ալ. Մանասերեանը, խոստանում է անհատապէս միջամտել այդ խնդրին եւ գործը վերջացնել յօգուտ գիւղացիներին:

ՆԻՍՏ Վլրդ
9 Յունուար երեկոյեան

Նախագահում է ընկեր Գասպարը. բացակայում են ընկերներից շատերը:

Օրակարգն է

Պարսկահայ արտագաղթի խնդիրը

Ընկեր Սամսոնը յայտնում է, որ Թիֆլիսում ընկեր-

ների հետ տեսակցելիս այն կարծիքն են յայտնել որ Պարսկաստանի այն վայրերում, ուր հայութիւնը շատ փոքրաթիւ համայնք է կազմում, պիտի աշխատել տեղափոխելու Հայաստան. կայ առանձնապէս մարմին, որ կը հոգայ այդ ծախսերը: Ընկերները խորհուրդ են տուել աշխատել այդ ուղղութեամբ եւ աշխատել իրականացնել:

Ժողովը լսելով այդ տեղեկութիւնը ցանկութիւն է յայտնում իրականացած տեսնել այդ իղձը: Այդ նպատակը իրագործելու համար որոշուում է պրոպագանդա մղել Պարսկաստանի փոքրաթիւ համայնքների մէջ: Ժողովը յանձնարարում է Կ. կոմիտէին այդ ուղղութեամբ ակտիւ գործունէութեան դիմելու:

Ուժերի կարիքը եւ բաշխումը:— Քննութեան է առնուում թէ շրջանը ինչպիսի ուժերի կարիք ունի կազմակերպական գործերը վարելու համար: Ուրմիայում կարիք է զգացւում ուսուցիչ գիտցող ինտելիգենտ ընկերների գինուորական գործերը վարելու համար եւ նոյնպէս ազատ, վստահելի ընկերներ, զուտ կազմակերպական գործերի համար:

Գործիչ ընկերների մեծ կարիք է զգացւում նաեւ Խոյում, Շարաֆխանէում: Սալմաստը առայժմ կարող է բաւականանալ տեղական ուժերով:

Տրամադրելի ընկեր՝ Կ. կոմիտէն ներկայացնում է ընկ. Բաղդասար Մելիք Բաղդասարեանին: Ժողովը ի նկատի ունենալով կարիքի չափը կազմակերպական գործի տեսակէտից, յարմար է գտնում ընկեր Բաղդասարին ուղարկել Ուրմիայի շրջանը:

Շրջանային խորհրդ[ակցական] ժողովը սպառած լինելով օրակարգի խնդիրները, ընկեր Գասպարը փակում է ժողովը մաղթելով մարմիններին եւ ընկերներին եռանդ եւ ոգեւորութիւն յաջողութեամբ եւ ամբողջութեամբ կատարելու իրենց վրայ ստանձնած պարտականութիւնները:

ՎԵՐՋ

[Ստորագրութիւններ]

Փաստ. 485-2

**Գ 2.- ԱԻԱՐԱՅՐ (ԽՈՅ) ԿՈՄԻՏԵԷՆ
Հ.Յ.Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ, Թարիզ**

Աւարայր, Յունուար 5, 1918

Ընկերներ,

Ստացուած են վերջին երկու շրջաբերականները: Քաղաքիս դրուժիկները առայժմ լաւ է եւ մեր յարաբերութիւնը թուրքերի հետ բաւարար է, բայց այնուամենայնիւ անխտիր զինուում են մեծից սկսած մինչեւ փոքրը: Տեղումս կայ 400-ի չափ զինուած մակուցիներ, Շահսովաններ եւ Չարդախցիներ, որոնք բացարձակ զէնք են կրում: Իսկ մեր հայութեան զինման գործի խնդիրը համեմատած թուրքերին շատ թոյլ է. մօտաւորապէս 250-300 զէնքի ընդունակ մարդիկ կան իսկ պատրաստի զէնք կայ 80 հատ, այն էլ մեծ մասը բեր[դ]ան եւ այնալու: Ասորիներից կան 400-500 հոգի առանց զէնքի:

Ասորիների հետ խորհրդակցելով նպատակայարմար գտանք առաջարկելու որպէսզի տեղս մի բատալիոն կազմեն, հակառակ դէպքում հաւաքել ասորիներին գիւղերից. զօրքի թողած կազարմաններում՝ նոցա զինավարժութիւն սովորեցնել եւ թուրքերին ցոյց տալ որ բատալիոնի համար են կազմում: Հայերից ով ցանկա-

նում է կարող է մտնել բատալիոնը:

Ուստի խնդրում ենք ձեզ անմիջապէս միջոցներ ձեռք առնել կամ տեղս խառն բատալիոն կազմել կամ էլ զէնք բաց թողնել հայերի եւ ասորիների համար, 650-700 զէնք երկու երեք սպայով:

Մենք հաւատացած ենք այդ միջոցը կը փրկէ տեղական հայութեանը վտանգից:

Խնդրում ենք որքան հնարաւոր է շուտ բաւարարութիւն տրուի որովհետեւ վտանգը օր օրի վրայ սպասուում է: Ռուսական զօրքի մնացորդը ամսոյս 12-ին կը թողնէ Խոյը:

Ընկերական բարեկներով
ԱԻԱՐԱՅՐԻ ԿՈՄԻՏԵ

Յ. Գ.— Պլանկով թղթերը ձեռքի տակ չգտնելու պատճառով ստիպուած եղանք հասարակ թղթի վրայ գրել:

ՆՈՅՆ

Փաստ. 485-22

Ք 3.– Հ.Յ.Դ. ՈՒՐՄԻՈՅ ՄԱՐՄՆԻՆ, ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Ընկերներ,

Հ. Յ. Դաշնակցութեան Ատրպատականի Կ. Կ. էն քննութեան առնելով Ուրմիոյ ընկերների գեկուցումները, ներկայ քաղաքական կացութիւնը թէ Կովկասում եւ թէ Ատրպատականում, հայերիս դրուութիւնը նոյն տեղերում, միաձայն որոշեց չկազմակերպել առանձին հայկական բատալիոններ, արձակել Ուրմիոյի դրուութիւնան եւ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը դնել մինչեւ այժմ եղած հիմքերի վրայ, անլեզալ խմբական սիստեմով:

Այդ որոշումը տալու ժամանակ Կ. Կ. էն աչքի առաջ ունեցաւ հետեւեալ հանգամանքները.

1) Բատալիոնների եւ առհասարակ կազարմային դրուութիւնների կազմակերպումը կապ ունէր ընդհանուր Ֆրոնտի պաշտպանման հետ, որի մէջ մեզնից բացի շահագրգռուած էին ռուսները, Կովկասը եւ անգլիացիք, որոնք գլխաւորապէս իրենց վրայ պիտի վերցնէին այդ գնդերի կազմակերպումը եւ ամէն կերպ աջակցէին դրան, մինչդեռ մինչեւ այժմ եղածը խօսքերից դէն չէ անցել: Հայ զինուորական միութիւնը եւ Կովկասի ազգային խորհուրդը կտրականապէս մերժեցին օգնել մեզ, խնդրելով ամէն բան անել մեր սեփական տեղիս ոյժերով, որը մեզ համար անհնարին է: Նոյնպիսի վերաբերմունք տեսանք եւ անգլիացիների կողմից, որոնց ընթացքը մինչեւ այժմ մեզ համար պարզ չէ: Կովկասի կոմիսսարիատը նոյնպէս ոչ մի քայլ չէ անում եւ երեւի չի էլ անելու շնորհիւ ստեղծուած պայմանների: Մինչդեռ թողնուած միայնակ մենք ի հարկէ մեր սեփական ոյժերով ոչ մի բան չենք կարողանալու անել: Չպէտք է հաշուել այն չնչին օգնութիւնը, որ մեզ հասցրել է Ուրմիոյում ռուսական շտաբը, որը ինքը շուտով հեռանալու է եւ որի դրուութիւնն էլ դեռ ոչ ոքի համար պարզ չէ: Սալմաստի եւ Խոյի շրջաններում այդ էլ չկայ:

2) Այդպիսի կազմակերպուած կազարմային գնդեր պահելու համար հարկաւոր են մեծ գումարներ, դրամական լայն միջոցներ, որից մենք գուրկ ենք, եւ ոչ մի յոյս էլ չկայ որ որեւէ տեղից ստացուի:

3) Չներկայացնելով ոչ մի ոյժ, եւ ոչինչ արած չլինելով, այդ բատալիոնների գաղափարով մենք ստեղծել ենք պարսիկների մէջ սարսափելի ատելութիւն դէպի հայերս եւ ուժեղ հակահայկական պրոպագանդ: Այդ հարցով շատ հմուտ կերպով կարողանում են օգտուել

մութ ոյժերը: Մինչդեռ մեր այդ գաղափարից հրաժարուելը եւ Ուրմիոյի դրուութիւնայի ցրելը լաւ տպաւորութիւն կը թողնի պարսիկների վրայ եւ կը հարթի մեր լարուած յարաբերութիւնները:

4) Մերժելով բատալիոնների եւ դրուութիւնայի կազմակերպումը, մենք ոչ մի դէպքում չենք թուլացնում ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը: Այդ գործը մենք դնում ենք ուրիշ հողի վրայ, որը տարիների ընթացքում մեր մէջ եղել է, խմբական եւ որոշ չափով գաղտնի գիւղական ինքնապաշտպանութեան սիստեմը մտցնելով:

Կազարմային սիստեմը անծանօթ լինելով մեր գիւղացուն հագիւ թէ յաջողութիւն ունենայ նամանաւանդ շուտով մօտենում է գարնանային դաշտային աշխատանքները, երբ շատ դժուար կը լինի գիւղացիներին պահել քաղաքում:

5) Ունենալով բաւականաչափ ռազմամթերք, մենք հնարաւորութիւն ունենք գիւղերում ինքնապաշտպանութեան գործը լաւ հիմքերի վրայ դնել, իսկ եթէ հանգամանքները փոխուեցին, մենք այդ ինքնապաշտպանական խմբերից անմիջապէս եւ աւելի շուտ կարելի կը լինի կազմել աւելի մեծ գնդեր եւ դրուութիւններ:

Ահա այս բոլորը աչքի առաջ ունենալով առաջարկուում է ձեզ անմիջապէս ցրել դրուութիւնան եւ խմբական գիւղական ինքնապաշտպանութեան գործի անցնել, որի համար հարկաւոր է

1) Ցուցակագրել բոլոր գէնքերը եւ պահեստի եւ [եթէ] գիւղերում եղածը:

2) Զէնքը բաժանել գիւղերը որոշ սիստեմով եւ անպայման միայն կռուող ոյժերին:

3) Որոշ քանակութեամբ գէնք պահել կենտրոնական պահեստում:

4) Բոլոր հայաբնակ վայրերում ստեղծել ինքնապաշտպանական մարմիններ եւ տալ նրանց համապատասխան ինստրուկցիաներ: Բացի տեղական մարմիններից ստեղծել կենտրոնական ինքնապաշտպանութեան մարմին Ուրմիոյում:

5) Զեր ձեռքում եղած իրերը եւ գոյքը, նոյպէս եւ ուտեստը բաժանել գիւղական մարմիններին, թողնելով որոշ չափ եւ կենտրոնական պահեստում:

6) Անմիջապէս պատրաստել եւ մեզ ուղարկել բոլոր հաշիւները, թէ գոյքի եւ թէ գէնքի եւ թէ դրամի, որ անցել է ձեր ձեռքով մինչեւ այժմ:

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

7) Ամենախիստ կոնսորիի ենթարկել թէ անցեալի եւ թէ ապագայի հաշիւները:

8) Ինքնապաշտպանութեան մարմինների մէջ մտցընել եւ ոչ կուսակցական մարդկանց դարձնելով այդ գործը համաժողովրդական:

9) Ընդհանուր կոնսորիը բոլոր գործերի մնում է նոր ընտրուելիք կուսակցութեան մարմինն, որը միաժամա-

նակ լինելու է եւ ուղեցոյց ինքնապաշտպանութեան գործում:

10) Կուսակցական որոշումների չենթարկուողներին խիստ պատժի ենթարկել:

*Ընկերական բարեւաներով
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ.Կ.*

13-II-1918, Դաւրէժ

Փաստ. 485-23

Գ 4.- Հ.Յ.Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ.Կ.Ի ԱՆԴԱՄ ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻՆ

Յանձնարարում է ձեզ համաձայն առանձին տրուած հրահանգի լուծել Ուրմիայի դրուժինան եւ կազմակերպել գիւղական ինքնապաշտպանութեան գործը: Միաժամանակ չեղած համարել Ուրմիոյ մարմինը եւ անմիջապէս նոր մարմնի ընտրուելուն կայացնել: Այդ նոր մարմնին յանձնել բոլոր գործերը եւ գոյքը: Մինչեւ այժմ ստացուած դրամների, ռազմամթերքի եւ առհասարակ մթերքի համար հաշիւ պատրաստել եւ ուղարկել Կ.Կ.ին:

Շաբաթական երկու անգամ տեղեկութիւններ տալ անցուղարձի մասին:
Կուսակցական որոշումներին չենթարկուողներին խիստ պատժի ենթարկել:

Ա[ՏՐՊԱՏԱԿԱՆԻ] Կ. Կ.

13/II/18, Թաւրիզ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԳԼՈՒԽ V**ՇԱՀՍՏԱՆ-ԹԵՀՐԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**

Մինչև 1912 թուականը Պարսկաստանի դաշնակցական կազմակերպությունը կը դեկավարուէր միակ Կեդր. կոմիտէութեամբ, որուն կեդրոնը Ատրպատական նահանգի Թարիզ քաղաքն էր: Սահմանադրական ուժերու կողմէ Թեհրանի գրաւումով, մայրաքաղաքին քաղաքական կարեւորութիւնը անելի շեշտուած ըլլալով, անհրաժեշտ համարուեցաւ Պարսկաստանը օժտել երկրորդ Կ. կոմիտէութեամբ մը՝ Շահստան անունով: Հետըզհետէ այս վերջինին իրաւասութեան տակ առնուեցան երկրի մնացեալ շրջանները – Գիլան, Ղարաբաղ, Նոր Ջուղա-Սպահան, Համատան, Եւայլն – ի բաց առեալ բուն Ատրպատական նահանգէն, որ պահեց առանձին Կ. կոմիտէութեան իր հանգամանքը (Վրէժստան):

Առաջին աշխարհամարտի տարիներուն, Պարսկաստան բռնած էր չէզոք դիրք եւ, իր բնուչ-պատերազմող կողմ, կը ճգնէր պահպանել իր անկախութիւնն ու երկրին ամբողջականութիւնը: Յիրաւի, 1911էն ի վեր երկրին հիւսիսը ռուսական գրաւման տակ էր, իսկ ընդհ. պատերազմին դարձած էր քատերաբեմ ռուս-թրքական զինեալ բախումներու: Հետեւապէս Ատրպատական կը գտնուէր մէկուն կամ միւսին կողմէ բռնակցումի վտանգին տակ: Երկրին հարաւային շերտին վրայ ուժեղ էր ազդեցութիւնը Մեծն Բրիտանիոյ, որ դէպի իր հարուստ գաղթավայրի՝ Հնդկաստանի ճանապարհը ապահով պահելու անուան տակ՝ կը ջանար իր ներկայութիւնը յատկացնել շրջանին մէջ: Ռուս-թրիտանական այս մրցակցութիւնը, որ պատմական խոր արմատ ունէր Միջին Արեւելքի վրայ տիրապետութիւն հաստատելու իմաստով, դադրեցաւ պահ մը եւ երկու երկիրները, որպէս պատերազմական դաշնակիցներ, մերձեցան իրարու՝ միացեալ ճակատ յարդարելու համար գերմանո-թրքական զինակցութեան դէմ:

Երկրին ապրած բարդ ու տագնապալի այս կացութենէն զերծ չէր կրնար մնալ անշուշտ պարսկահայութիւնը, որ պատերազմի ամբողջ տետողութեան պիտի դիմագրաւէր մէկէ անելի ճգնաժամային պահեր: Հայկական համայնքները, ցրուած լայնատարած երկրի մը տարբեր շրջաններուն մէջ, ենթակայ էին միշտ զոհ երթալու խուժանային յարձակումներու, մանաւանդ որ Թուրքիա՝ իր լրտեսներուն եւ գործիչներուն միջոցով՝ ճիգ չէր խնայեր մահմետական զանգուածները լարելու հայերուն դէմ, զանոնք ներկայացնելով որպէս ռուսական գործակալներ: Հարկ էր ուրեմն զգաստ մնալ եւ յարատեւօրէն լուսաբանել պարսից կառավարական ու հասարակական շրջանակները հայոց բռնած օրինապահ դիրքին մասին: Յարաբերական այս աշխատանքներուն զուգընթաց, դաշնակցական միատրոններուն վրայ պարտականութիւն կ'իյնար ժողովուրդն ու ազգային-կրթական հաստատութիւնները պաշտպանելու գործը: Հետեւաբար զինեալ խումբեր միշտ պատրաստ վիճակի մէջ կը պահուէին ազգամիջեան որեւէ բախումի առաջըն առնելու նպատակով:

Վերջապէս հարկ է յիշել որ պատերազմի այս դժուարին տարիներուն, պարսկահայութեան բաժին պիտի իյնար ընդունիլ հայ գաղթականներու ստուար զանգուած մը: Արդարեւ, 1915 թ. երկրորդ կիսուն, Վասպուրականի եւ Ալաշկերտի շրջանէն ռուսական զօրքի նահանջին հետեւանքով տեղույն հայութեան զգալի մէկ մասը փախստական դառնալով ապաստանած էր Պարսկաստանի սահմաններէն ներս, ուր հայկական համայնքները պիտի ստանձնէին անոնց պատսպարութեան եւ հոգատարութեան գործը:

Փաստ. 598-36

1.– ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ՇԱՀՍՏԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻ

1914 Յունիսից – 1918 թ. Մայիս

Ներկայ Կ. Կ-ին ընտրուել է 1914 թ. Յունիսի 2 Շրր-ջ[անային] ժողովից: Հակառակ իր ցանկութեան, պաշտօնավարութիւնը շարունակել է մինչեւ այժմ: Կազմը մի երկու փոփոխութեան է ենթարկուել. անդամներից մէկը քաղաքից բացակայել է, միւսը (Դ. Արշակ) զոհուել է պարտականութեան ճանապարհին: Նրանց փոխարէն հրաւիրուել են նոր ընկերներ:

Այն պայմանները, որում գործել է Կ. կոմիտէն եղել են շատ աննպաստ եւ բացարձակապէս առանձնաշատուկ, որոնց շնորհիւ մարմինը չի կարողացել ունենալ այնպիսի մի գործունէութիւն, որպիսին կ'ունենար գուցէ մի այլ շրջանում: Մեծ մասամբ զբաղուած աննախընթաց պայմանների եւ նրանց առաջադրած երեւոյթների լուսաբանութեամբ եւ իր գործունէութիւնը նրանց հետ համապատասխանելու դժուար աշխատանքով՝ Կ. կոմիտէն շատ քիչ հնարաւորութիւն է ունեցել ներքին կազմակերպական խնդիրներով զբաղուելու:

Համաշխարհային պատերազմն է եղել ստեղծողը այդ պայմանների: Հազիւ էր ընտրուած մարմինը եւ VIII Ընդհ. ժողով ուղարկած իր պատգամաւորից նոր հրահանգների էր սպասուում՝ իր գործունէութիւնը նոր որոշումների հիմքերի վրայ դնելու, պայթում է եւրոպ[ական] արիւնահեղութիւնը, հրատարակուում ուս-թուրքական պատերազմը եւ ընդհ. հայութեան հետ միասին պարսկահայութեան էլ մի խիստ աննորմալ կացութեան մէջ դնում: Երկրորդական տեղն են անցնում կազմակերպ[ական] գործերը, մի կողմ թողնուում կուսակցական աշխատանքները՝ հայի փրկութեան գերագոյն հարցի հանդէպ: Իւրաքանչիւր կուսակցական, մանաւանդ կուսակցական մարմին հրամայականօրէն լծուում է այդ գործին: Դրա հետ միաժամանակ, կարեւոր նշանակութիւն է ստանում նաեւ ինքնապաշտպանութեան հարցը:

Հարկ չկայ մանրամասն ծանրանալու պարսկական միջավայրի վրայ պատերազմի թողած խոր ազդեցութեան մասին: Աւելորդ է խօսել պարսկական օրիանտացիայի, ժողովրդի եւ կառ[ավարութեան] մտահոգութեան, համակրանքի եւ դէպի հայութիւնն ունեցած վերաբերմունքի մասին: Այսքանն անհրաժեշտ է շեշտել, որ թրքօ-գերման ազդեցութեան ենթարկուած եւ նոյնիսկ յօգուտ այդ միութեան՝ Ռուս-Անգլիոյ դէմ ակտիւ գործունէութիւն կատարած «չէզոք» Պարսկաստանում ապրող հայութեան գոյութիւնը պաշտպանելու մտահոգութիւնը ստիպել է մարմինն շատ աւելի զբաղուել այդ խնդրով քան այլ հարցով:

Առաջին կամաւորական շարժմանը, մարմինն նա-

խաձեռնութեամբ, մօտ 30 հոգինոց մի մարտական խումբ է ուղարկուում Կովկաս յատուկ մի ընկերով դեկավարութեան տակ: Խմբի անդամները լինում են Թեհրանից, Ջուղայից, Համադանից, Սուլթանաբադից, Ղարադանից եւ այլն: Դրանից բացի մարմինը իր բարոյական օգնութիւնն է ցոյց տալիս բոլոր այն ընկերներին, որոնք ցանկացել են մասնակցել կամաւորական շարժման:

Խումբը լաւ գործունէութիւն է ունեցել եւ նրա գանազան անդամները գոհունակութեան եւ գովասանքի թղթեր են ստացել:

Ինքնապաշտպան[ութեան] խնդրի շուրջը մարմինը մի քանի տեսակց[ական] քայլերի է դիմել, նախ յայտնելով այն տեսակէտը, որ ինքնապաշտպ[անութեան] գործը ժողովրդական է եւ նրա բոլոր խաւերը պիտի մասնակցութիւն ունենան այդ գործում: Կենտրոնում հրաւիրել է աչքի ընկնող անհատներից մի խառն խորհրդակցական ժողով. նոյն հարցը բազմակողմանի քննութեան առնելուց յետ, ընտրել է իր միջից մի քանի սեկցիաներ – գինական (յանձնուել է կուսակցութեան), բիւզնէսային, պրոպագանդի եւ յարաբերական, որը կապ պիտի պահպանէր եւ կառավարութեան հետ: Ընդհանրապէս այդ բոլոր սեկցիաները ունեցել են դրական գործունէութիւն:

Առանձնապէս գինականի մասին խօսելով, պիտի ասել որ մարմինը հիմնուած վերոյիշեալ տեսակէտի վրայ, իրան վերապահելով ընդհ. հսկողութիւնը, առաջարկել է կազմել ինքնապաշտպանութեան Կ. մարմին, որտեղ մասնակցել է իր ներկայացուցիչով:

Միւս անդամները եղել են գործի ձեռնհաս խմբապետներ եւ համայնականի մէկ ներկայացուցիչը: Կ. կոմիտէն թէ կուսակց. ճանապարհով եւ թէ ինքնապաշտպանի միջոցով նման մարմիններ կազմելու եւ ինքնապաշտպանութեան շուրջ ուշադրութիւն դարձնելու [համար] շարունակական ուղղութիւններ եւ հրահանգներ է տուել, ինչպէս եւ նիւթական ու ռազմական աջակցութիւն էլ չի զլացել իրեն ենթակայ մարմիններին: Բնորոշ է այստեղ յիշել մի առաջարկ, որ արուել է կոմիտէնից մէկի կողմից: Այդ կայանում էր նրանում, որ առաջադրուում էր տեղական գինախանութիւնը գաղտնի կողոպտելու մասին: Մարմինն ի հարկէ արգելում է այդ եւ կրկին շեշտում իր քաղաքականութիւնը, այն է՝ իբրեւ չէզոք երկրի բնակիչներ կարելիին չափ բարեկամ լինել տեղական ժողովրդի եւ կառավարութեան հետ ու ամէն ջանք չխնայել որ հայը փափուկ ու ելեկտրականացած միջոցառում ոչ մի առիթ չտայ

անակնկալ դէպքերի, հրահանգելով միաժամանակ մի ընդհանուր աչքաթող չանել ինքնապաշտպանութեան] գործը՝ տանելով այդ սեպհական եւ ժողովրդական միջոցներով:

Ինքնապաշտպանութեան Կ. մարմինը իր սահմաններում ուղղակի յարաբերութեան մէջ է դրուում կազմակերպական մարմինների հետ միօրինակ գործունէութիւն ունենալու եւ փոխադարձ իրազեկ լինելու համար:

Այդ մարմնի հետ գուզընթաց առաջ է տարուում քաղաքական բանակցութիւնների գործը նոյն հողի վրայ:

Քաղաքական դէպքերի այլ կերպ դասակարգելուց յետոյ, ինքնապաշտպանութեան մարմինը ինքնաբերաբար լուծուում է եւ գործը կրկին մնում է կուսակց-մարմիններին: Դժբախտաբար իրականութիւնը դեռ ներկայումս էլ ստիպում է վերջիններին կրկին լուրջ վերաբերմունքը չդադարեցնել այդ գործի վրայ:

Փոխյարաբերութեան հարցը պարսիկ դեմոկրատների հետ

Տեղական դեմոկրատ տարրերի հետ փոխյարաբերութիւն ունենալու հարցը պակաս չի գրադեցրել մարմնին: Իր ընտրութեան օրից մինչեւ այսօր նա հազար ու մի միջոցների է դիմել այդ ուղղութեամբ, բայց ոչ մի յաջողութիւն չի ունեցել, թերեւս ներկայումս գոյութիւն ունեցող քաղաքական դրութեան պատճառով: Դէպի հայրենիքը ընդհանրապէս եւ դէպի մեր կազմակերպութիւնը ունեցած անվստահ վերաբերմունքը պարսիկ դեմոկրատ տարրերի կողմից շարունակուում է մինչեւ այժմ, հակառակ մեր անկեղծութիւնից բխած համերաշխ ոգիին. սակայն այդ չի յուսահատեցնում մարմնին. նա շարունակուում է այդ ուղղութեամբ գործել: Այդ առթիւ գրուել է շրջանները, ինչպէս եւ տրուել է խմբերում քննութեան:

Մէջլիս¹

Մեր վերաբերմունքը մէջլիսի III-րդ ընտրութեան եղել է բացասական եւ բոյկոտի ենթ ենթարկել, իսկ դէպի IV-րդ մէջլիսի ընտրութիւնը եղել է դրական եւ ակտիւ մասնակցութեան կողմնակից: Վերաբերմունքի այդ տարբերութիւնը բխում է մեր դէպի Իրան ունեցած դիրքից: Մինչդեռ III-րդ մէջլիսը հրաւիրուում էր զանազան դրսի ազդեցութեան տակ՝ սրբագործելու մինչ այդ երկրի համար եղած նուաստացուցիչ պայմանագրերի վերահաստատումը, IV-րդ մէջլիսը հրաւիրուում էր ժողովրդի բուռն պահանջների ազդեցութեան եւ երկրի անկախութիւնը շեշտելու նպատակով:

Այդ հողի վրայ էր որ Կ. կոմիտէս մասնակցեց վերջերս հակա-անգլիական ժողովրդական ցոյցին՝ Թեհրանում տալով ներկայացուցիչը, որ մասնակցել էր ցոյց եւ ժողովներին:

Պարզ եւ բնական էր ուրեմն բոյկոտը III-րդի, եւ ակտիւ մասնակցութիւնը IV-րդի վերաբերմամբ: Սակայն, այդ խնդիրը դեռ սպառած չէ եւ Շրջանային ժողովին է մնում վերջնական որոշումը, ինչպէս եւ մատնանշելու իր պատգամաւորը:

Վերակազմութիւն

Կազմակերպական մասի վերաբերմամբ յիշեցինք որ քաղաքական աննպաստ դէպքերի դժբախտ դասակարգութիւնը մարմնից խլել են ամենամեծ ժամանակը եւ թոյլ չեն տուել նրան զբաղելու ներքին կազմակերպական խնդիրներով: Մասամբ այդ, բայց աւելի շատ ընդհանուր կացութեան հետեւանքով, շրջանները շատ էին թուլացել կուսակցական աշխատանքի տեսակէտից: Կովկասի լքումն ու քայքայուած դրութիւնը վերջին հարուածն են տալիս:

1916-ի վերջին, կարելի է ասել որ միայն մի երկու մարմիններ էին մնում անուանապէս, իսկ խմբեր, միութիւններ եւայլն բոլորովին քայքայուել էին: Ինչ խօսք որ այդ հանգամանքը չի յուսահատեցնում մարմնին, որ երբեք աչքաթող չի անում կազմակերպական գործը վերակազմութեան տեսակէտից: Կուսակցութեան ամենախիստ ուժակցիայի ժամանակ, երբ թուում էր թէ Դաշնակցութիւնը] արդէն դադարել է գոյութիւն ունենալուց, եւ անգամ մարմնին հրաւիրած խորհրդակցական ժողովում գիտակից ճանաչուած ու ինտելիգենտ բերաններն անգամ այդ ժողովում արտայայտուում են այդ ոգով ու ուղղութեամբ, որ՝ այլեւս Դաշնակցութիւն գոյութիւն չունի, որ՝ միայն անհատ ընկերների մէջ է ապրում կազմակերպութիւնը եւ այդ կարծիքը որ աւելի շատ Կովկասից ու արտասահմանից (Տաճկահայաստանի համար խօսք լինել չի կարող) էր անցնում մեզ մօտ: Կ. կոմիտէս, վստահ իր համոզմունքին, շարունակական հրահանգներ էր տալիս գոյութիւնը պահպանող մի երկու կոմիտէներին՝ վերակազմելու շարքերը, միշտ բարձր պահելով Դաշնակցութեան դաւանած գաղափարը: Կ. կոմիտէի այդ աչալրջութեան պիտի վերագրել ապրումը այն կորիզների, որոնք ուղեւորացան եւ մեծացան ուսական յեղափոխութիւնից վերջ: Վերակազմութեան նոյն աշխատանքը կատարուում է եւ տեղի վրայ: Հակառակ որոշ դիմադրութեան եւ նոյնիսկ հակառակ պայքարի — նոյնիսկ մեր ինտելիգենտ ընկեր ճանաչուածների կողմից — մարմինս յաջողուում է այնտեղ եւս ստեղծել մի փոքրիկ կորիզ, որը յետոյ նոյնպէս տարածուում է:

Որոշ յարմարութիւնների ինչպէս եւ կարեւորութեան տեսակէտից, մարմինը իր լուրջ ուշադրութիւնն է դարձնում «Գիլան»ի² շրջանի վերակազմութեան վրայ: Մարմինս անդամներից 2-ը զանազան ժամանակ-

1.- Մէջլիս — խորհրդարան, Պարսկաստանի Ազգ. ժողով:



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

ներում եղել են այնտեղ, վերահասու են եղել գործերին, մարմինների նոր ընտրություն կատարել եւ աշխատել են հարթել այն թիրամացությունները, որոնք ինչ-ինչ հարցերի շուրջ գոյություն են ունեցել ընկերների մէջ:

Այդ մասին աւելի մանրամասնություններ թողնելով «Գիրան»ի պատգամաւորին, այսօր պիտի շեշտել, որ մեր շրջանում Կ. կոմիտէի հետ միասին ունեցող ժամանակ միայն «Գիրան»ն է իր գոյությունը պահպանել:

Ինչպէս յիշեցինք, ռուսական յեղափոխությունը մեծ գարկ է տալիս վերակազմութեան խնդրին: Բացի շրջաբերական նամակներից, մարմինս որոշ յանձնարարություններ է անում զանազան շրջանների ձեռնհաս ընկերներին խմբերը վերակազմելու, կուսակցական կեանքը վերսկսելու եւ նախապատրաստելու այն երեւոյթների ու դէպքերի համար, որոնք անխուսափելիորէն պիտի առաջ գային Պարսկաստանում իբրեւ արձագանք մեծ յեղափոխութեան: Ի դէպ, յիշենք որ մարմինս ռուսական յեղափոխութեան բերած ազատությունը մի հեռագրով շնորհակտել է յանձին Միլիոկովի նոր կառավարութեան, յոյս յայտնելով որ ռուսական ազատությունը փրկություն կը բերի նաեւ բազմաչարչար հայութեան: Այսպէս, ռուս. յեղափոխութեան ազդեցութեամբ կուսակց. կորիզները ուռճանում, շրջանները կազմակերպում եւ աւելի ուժեղ կերպով փարում են մեր կուսակցութեան դրօշին: Կազմւում են մարմիններ Ղազուին, Սուլթանաբադ, Գիրանը ոգեւորւում է, Թեհրանը նոյնպէս: Զուղան³ է միայն անտարբեր մնում հակառակ մեր բազում խրախուսանքների եւ հրահանգների:

Ղազուինում կազմւում է դաշ[նակցական] զինուորական միություն, բացւում է ակումբ, ընթերցարան. լինում են դասախօսություններ, ծրագրւում է ունենալ գրադարան, սեպհական գրատուն եւ այլն: Մեր զինուորական ներկայացուցիչը մասնակցում է կոմիտէին: Սակայն ամենուր որ այդ ամբողջը միայն ոգեւորություններ շրջանով է սահմանափակւում: Անցնում են ոգեւորություններ օրերը եւ քիչ-քիչ ամէն բան մեռնում է եւ նախկին անտարբերությունն է վերապրում: Այդ երեւոյթը շատ է զբաղեցրել մարմինս, որ ամէն կերպ աշխատել է իսկական գործի գիտակցությունը ներշնչել Ղազուինին, բայց անյաջող: Տեղական առանձնայատուկ պայմանների հետեւանք է այդ երեւոյթը եւ մարմինս թէեւ առանձին ընկեր է ուղարկել Ղազուին, ընկերները անցնելիս աշխատել են վերակազմել իսկական հիմունքներով, բայց չի յաջողուել: Այժմ այդ շրջանը կազմալուծւած է եւ հակառակ բազմաթիւ դիմումների նա չի կարողացել իր ներկայացուցիչը ունենալ այս ժողովին:

Գիրանը, զբաղւած ներքին խնդիրներով, առանձին աչքի ընկնող գործունէություն ցոյց չի տալիս: 1916ին, մարմինս ներկայացուցչի միջոցով կատարած նորընտիր կոմիտէն սկզբում եռանդուն գործի է անցնում, բայց շուտով ներքին գոտությունը պատճառ է դառնում շրջա-

նի համարեա թէ քայքայման: Նոյն տարի ուղարկուած մարմինս ներկայացուցիչը գումարում է Գիրանի Շրջանային ժողով, հարթում է խնդիրները եւ կոմիտէությունը փոխանցելով Էնգելուն՝ Ռեշտը մնում է ենթակոմիտէ:

Համատանի շրջանի վերակազմությունը, մարմինս նոյնպէս կատարում է յատուկ ընկերող միջոցով: Կատարւում է ենթակոմիտէի ընտրություն, բայց այդ վայրում եւս աւելի եռանդուն գործունէություն չի նկատուում: Այդ կողմից բաւական աչքի ընկնող գործունէություն է ցոյց տալիս Սուլթանաբադի մարմինը: Բացի քաղաքի խմբերից, գիւղերում առաջ է բերել գիւղացիական միություններ: Կ. կոմիտէն լուրջ ուշադրություն է դարձրել այդ միությունների վրայ եւ անհրաժեշտ հրահանգներ տուել, որպէսզի աշխատեն խորացնել այդ գաղափարը եւ դնեն միջազգային հողի վրայ⁴:

Դառնալով Թեհրանի կազմակերպություն մասին, պէտք է ասել որ գտնւում է բարեյաջող հանգամանքների մէջ. օրէցօր մեծացող խմբերը վերջը բաժանուել են 5 խմբերի, որոնք վերջին հասարակական ընտրությունների ժամանակ կատարած պայքարով ցոյց տուին թէ որքան ուժեղ եւ կուռ կազմակերպուած են:

Կարմիր խաչ

Քաղաքական դէպքերի պահանջի հետեւանքով, կանանց խմբերը Կարմիր խաչի միություններ վերածուեցին. այդ հողի վրայ նրանք իրենց հերթին դրական գործ կատարեցին, մասնաւորապէս կամաւորներին հագուստ մատակարարելու, գաղթականների համար զգեստներ հաւաքելու եւ ուղարկելու եւ, վերջապէս, որբացած ընտանիքների անուշով ֆոնդ կազմելու մէջ:

Կարմիր խաչի Կեդր. վարչությունն հետ մարմինս ամէն կերպ աշխատեց նման միություններ առաջ բերել նաեւ գաւառներում, սակայն ցաւելով պիտի ասել, որ բացի Զուղայի կարծ կեանք ունեցող Կարմիր խաչից, ուրիշ վայրեր արձագանք չտուին:

Միությունը, ընդհանուր կացություն համեմատ որոշ տատանումներ ունենալով հանդերձ, տուրուն կերպով պահեց իր գոյությունը եւ ներկայումս շարունակում է իր գործունէությունը աւելի եռանդուն, աշխատելով միշտ խտացնելու իր շարքերը:

Քաղաքական գործունէություն

Քաղաքական գործունէություն մէջ պէտք է յիշել հետեւեալը:

1915/16ին Թեհրանում գերմանական դեսպանատան կողմից մի հոգի իբրեւ միջնորդ դիմում է անում մարմ-

2.- Պարսկաստանի հիւսիսը՝ Էնգելիի, Ղազուինի եւ Ռաշտի շրջանը:
3.- Խօսքը Նոր Զուղայի Սպահանի մասին է:
4.- Իմա՝ հայ-պարսկական յարաբերութիւններու հողի վրայ:



նիս եւ որոշ առաջարկներ անուամբ Կովկասի վերաբերմամբ, այն է, Կովկասահայր չէգոք մնայ, որին իբր հատուցում խոստանում էր Կովկասահայ եւ տաճկահայ գաւառներին միացած ինքնավարութիւն տալ: Խոստանում էր այդ որոշումը բերել տալ պաշտօնապէս Բերլինին: Կարիք չկայ ասելու, որ մարմինս իրաւասութիւն չունէր այդ հարցի վճռի մէջ: Կովկասը պիտի ընդառաջ գնար: Մարմինս մտածում էր այդ խնդրի առթիւ յատուկ մարդ ուղարկել Կովկաս: Այդ չյաջողուեց, ուստի եւ այդ մասին մանրամասն գրուեց եւ ապահով միջոցով ուղարկուեց Կովկասի մեր մարմիններին:

Թուում է թէ volte-face⁵ խիստ անյարմար եւ վտանգաւոր գտնելով, Կովկասը ընդառաջ չգնաց, եւ այդ խնդրի մասին մենք ոչ մի պատասխան չստացանք: Տեղին է յիշել եւ պէտք է ասել որ մարմինս շատ քիչ տեղեկութիւններ է ստացել Կովկասից՝ հակառակ իր բազմիցս դիմումներին. եւ լաւ իրագրել լինելու համար երբեմն ստիպւած է եղել յատուկ ընկերներ ուղարկել. այդ միջոցով նա իր որոշ առաջարկներն է արել: Դրանից է եղել նաեւ յատուկ ընկերներ ուղարկել Հնդկաստան հանգանակութեան համար. այդ գործի համար հրաւիրած մեր ընկերը հիւանդութեան պատճառով չի կարողացել թիֆլիսից շարժուել. դրա փոխարէն մարմինս զանազան ընկերների միջոցով պրոպագանդ մղել է հնդկահայ շրջաններում եւ պիտի ասել որ լաւ արդիւնք է ունեցել:

Ինչպէս ասացինք, Կովկասի մեր մարմիններն ընդհանրապէս յարաբերութիւն չէին պահպանում մեր մարմնի հետ հակառակ մեր կողմից եղած բազմիցս դիմումներին եւ բողոքներին. եւ այսպէս, լաւատեղեակ չլինելով հայ քաղաքական գործունէութեան տակտիկային, մարմինս յաճախ վերապահութեամբ է մօտեցել այդ խնդրին:

Ի պատասխան մեր բողոքներին, Կովկասը պատճառաբանել է որ խիստ զբաղուած են, որ՝ գործունէութիւնը արդէն հրապարակի վրայ է եւ տեղեկութիւններ կարելի է քաղել պաշտօնական թերթերից եւայլն: Մարմինս բողոքել է նաեւ Կովկասի ռազմական ժողովին մասնակցելու հրաւեր չստանալու պատճառով: Կովկասի ընկերների արտայայտութեամբ՝ պարսկահայ դաշ[նակցական] հատուածը պէտք է առանձին քաղաքականութիւնը ընդգծէ եւ մեծ մասամբ անկախ Կովկասից մշակի իր գործունէութիւնը: Այդ շեշտուել է նաեւ վերջերս մարմնիս կողմից ուղարկուած ներկայացուցչին, որը ուղարկուած էր իմանալու եւ բնորոշելու մեր բռնելիք դիրքը ռուս[ական] յեղ[ափոխութեան] եւ բոլշեւիկեան կառավարութեան օրօք, երբ սկսել էին զօրքերը յետ կանչել եւ Ֆրոնտը ամայանում էր ու հայերը մնացել էին ճակատագրի բախտին:

Այժմ Շրջ. ժողովին են առաջադրում Կովկասի վերաբերեալ տեսակէտը:

Պրոպագանդ

Մարմնիս լուրջ մտահոգութիւններից մէկը եղել է եւ պրոպագանդի գործը, սակայն արժանի չափով չի կարողացել զբաղուել դրանով, ազատ ընկեր չունենալու պատճառով: Յաճախ է անհրաժեշտութիւն նկատուել որոշ շրջաններ պրոպագանդիստ կամ ներկայացուցիչ ուղարկել, սակայն վերոյիշեալ պատճառով ստիպուած բաւականացել է խնդիրները նամակով կարգադրելու:

Մարմնիս յաջողուել է 2 պրոպագանդիստներ ուղարկել Սեւ-Արիւն⁶, բայց նրանք էլ շատ քիչ ժամանակ են մնացել եւ աչքի ընկնող գործ չեն կատարել:

Պրոպագանդի վրայ պիտի հաշուել մինչեւ ռուս. յեղ[ափոխութիւն] եղած մի քանի թուուցիկներ, որոնք պարզում էին մարմնիս ղեկավարող սկզբունքները, գործելակերպը, դէպի Մէջլիսը ունեցած վերաբերմունքը: Ռուս. յեղ[ափոխութեան] առթիւ հրատարակել է թուուցիկ, ինչպէս եւ Մայիս 1ի առթիւ:

Ճակատի հայ գինուորներին գրականութիւն հասցրելու համար, մարմինս որոշ ձեռնարկ է արել եւ մի քանի ամիս թերթեր ու բրոշյուրներ է հասցրել ճակատ, մեծ մասամբ բաւարարութիւն տուել հայ գինուորի ընթերցանութեան ծարաւին:

Մարմինս իր սկզբնական շրջանում մտածում էր մի ընդարձակ տեղեկագիր ներկայացնել Բրիւսէլի սոց. բիւրոյին, պարսկահայ դաշ[նակցական] հատուածի սոցիալիստական գործունէութեան մասին եւ Բիւրոյում ապահովել մի պատգամաւորի տեղ: Պատերազմը եկաւ խանգարելու այդ ծրագիրը, ինչպէս եւ շատ ուրիշ ծրագիրներ:

Մասնակցութիւն կուլտուրական գործերում

Ընդհանրապէս պիտի ասել որ մարմինս, յենուած VIII Ընդհ. ժողովի⁷ որոշումներին, պաշտօնապէս եւ ակտիւ մասնակցութիւն, որպէս կազմակերպութիւն, չի ունեցել հասարակական գործունէութեան մէջ, բայց ի հարկէ դա չի արգելել, որ ընկերները անհատապէս մասնակցին ընտրութիւններին եւ մեր սկզբունքների համապատասխան գործունէութիւն ունենան Համայնական վարչութեան, հոգաբարձութեան եւայլն հիմնարկութիւններում:

Իբրեւ եզրակացութիւն պարտք ենք համարում ասել, որ մարմինս ինքն էլ զգում է, որ շատ դէպքերում թերի է գտնուել իւր պարտականութեան հանդէպ, սակայն, կրկնում ենք, այդ եղել է անկախ, հակառակ իր կամքին ու ցանկութեան, եղել է իբրեւ հետեւանք պատերազմի առաջացրած աննախընթաց պայմանների:

5.- Դիմաշրջուիւնը:
6.- Սեւ-Արիւն – ծածկանուն Դարադանի, Լագուիմի շրջանի մէջ:
7.- Խօսքը կը վերաբերի 1914 թ. Յուլիսի Կարիս գումարտած Հ.Յ.Դ. Ընդհ. ժողովին:

Փաստ. 595-61

2.- ԳԻԼԱՆ ԿՈՍԻՏԵԷՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

1915 թ. Սեպտեմբ. 2-ին

Ընկերներ!

Կարեւոր ենք համարում հաղորդել հետեւեալը եւ խնդրել, որ խորհրդակցութեան նիւթ դարձնելուց յետոյ մեզ յայտնէք Ձեր կարծիքը:

Վասպուրականի եւ Ալաշկերտի վերջի նահանջը եւ դրան հետեւող հայկական սարսափները ու գաղթականութիւնը ամենասարսափելի ճնշող տպաւորութիւն են թողել ամէն հայի վրայ: Մեզ անյայտ են պատճառները եւ նոյնիսկ գարմանալի՝ ռուս զօրքի նահանջը, դրա հետ եւ մեր կամաւորներինը. մենք գտնում ենք որոշ քաղաքականութեան արդիւնք կամ ռուս կառավարութեան կամ նրա գործակալների կողմից, Հայաստանը առանց հայերի թողնելու...

Ինչ որ է, թողնենք քննադատութիւնը, թէեւ այնքան կարեւոր է այդ, յոյս ունենալով, որ մեր Կովկասի ընկերները եւ հայութեան ղեկավար շրջանը միջոցներ ձեռք կ'առնեն [որպէսզի] նմանօրինակ դէպքեր չկրկնուեն, եւ անցնենք բուն խնդրին:

Տաճիկ կառավարութեան հայաջինջ քաղաքականութիւնը օրէցօր լայն ծաւալ է ստանում եւ եթէ այսպէս շարունակուի, շուտով կ'իրագործուի «Հայաստանը առանց հայերի» լոզունգը, մանաւանդ ռուս զօրքն էլ իր գործերակերպով աջակցում է տաճիկին: Կովկասեան մամուլի թէեւ զսպուած արտայայտութիւնից երեւում է թէ որքան խորն է դժգոհութիւնը դէպի Կովկասի ռուս ղեկավարները, զօրքի երկդիմի քայլերը եւ գարմանալի չէր լինել, եթէ Պարսկաստանի հայն էլ իր դժգոհութիւնը յայտնէր: Դէպքերի եւ լուրերի թարմ տպաւորութեան տակ մի հայ տաճկաց հիւպատոսի հետ խօսելուց արտայայտում է իր դժգոհութիւնը եւ ռուս կառավարութիւնից: Տաճիկ հիւպատոսը այդ յայտնում է Թեհրանի դեսպանին (Ասրմ բէյ, երիտասարդ թուրք եւ նախկին մինիստր), որին ի պատասխան դեսպանը յայտնում է հիւպատոսին, որ եթէ ճիշտ է հայերի դժգոհութիւնը ռուս կառավարութիւնից, մասնաւորապէս Դաշնակցութիւնը, եւ եթէ նրանք կը ցանկանան բանակցել մեր կառավարութեան հետ, մենք կարող ենք համաձայնութեան գալ եւ ինքը դեսպանը այդ մասին բանակցութեան մէջ կը մտնի Բ. Դրան հետ եւ հայահալած քաղաքականութեան վերջ կը դրուի: Տաճիկ հիւ-

պատոսը այդ յայտնում է նոյն հային եւ խնդրում խօսել տեղւոյս Դաշնակցական մարմնի հետ: Երէկ մեզ յայտնել են այդ բոլորը, որին պատասխանել ենք, որ պատրաստ ենք միջնորդութիւնը վերցնել մեզ վրայ կովկասեան ընկերների առաջ, միայն թէ թող դեսպանն անմիջապէս դիմի Բ. Դրան, որ դադարեցնեն հայկական ջարդերը եւ դրանով ցոյց տան, որ իսկապէս ցանկանում են բանակցել մեզ հետ:

Մենք գիտենք, որ Տաճիկ կառավարութեան խոստումներին հաւատ ընծայելը յիմարութիւն է, բայց չի կարելի արդեօք բանակցութիւնները ձգձգել եւ այդպիսով հայկական ջարդերի առաջը առնել գոնէ մի քանի ամսով, մինչեւ հնարաւորութիւն կ'ունենանք աւելի մեծ ոյժ հրապարակ բերել եւ ստիպել, որ ջարդերը դադարին կամ թէ ռուս զօրքերը գուցէ առաջ գնան եւ գրաւեն Հայաստանը:

Տաճիկ կառավարութիւնը ցանկանում է օգտագործել հայկական դժգոհութիւնը, ինչո՞ւ մենք էլ չօգտագործենք այդ տրամադրութիւնը գոնէ ժամանակ շահելու համար:

Գուցէ առարկողներ լինեն որ ռուս կառավարութիւնը մեզ հետ կը թշնամանայ, բայց քանի շահի արժէ այդ թշնամութիւնը, երբ նա հէնց ինքն է իր գործերակերպով մեր դժգոհութեան առիթ տալիս: Հայաստանի ինքնավարութեան գուցէ խոչընդոտներ լինեն, բայց ինչ ենք անում այդ ինքնավարութիւնը առանց հայ ժողովրդի: Բացի այդ չէ որ մեր բանակցութիւններն լինելու են ժամանակ շահելու համար: Պատերազմը ամենայն հաւանականութեամբ երկար կը տեւի, մի հանգամանք որ նպաստելու է հայերու բնաջինջ լինելուն:

Երբ մեր առաջարկը Կովկասի ընկերներու եւ այլ ղեկավար շրջանում համակրութիւն գտնի եւ կարիք բացատրութիւնների, մի պատամաւոր կ'ուղարկենք ձեզ մօտ թէ բացատրութիւններ տալու եւ թէ դիրեկտիւներ ստանալու, խորհրդակցելու բանակցութեան ձեւերի մասին: Եթէ պատգամաւորի կարիքը զգաք հեռագրէք մեզ. դիմել Թերզախանեանին, լուծելու հարցը⁸:

Անշուշտ այս բոլորը կը մնան խորը գաղտնիք, որ դեռ ոչինչ չեղած չսկսուեն ռուսական հալածանքները, իսկ եթէ լուրը դուրս գայ Տաճիկի կողմից, Կովկասը միշտ էլ կարող է հերքել, անգիտակ ձեւանալ Պարսկաստանի բանակցութիւններից:

Ընկերական բարեւաններով՝
ՊԵՏՐՈՍ⁹

8.- Բնագրին մէջ բուսերէն:
9.- Պետրոս – ծածկանուն Տէր Յովհաննիսեան Բագրատի (1877-1937):

Փաստ. 595-62

3.- ԳԵՏԱՓԻ (ՆՈՐ ԶՈՒՂԱ) ԵՆԹԱԿՈՄԻՏԵԷՆ ՇԱՀՍՏԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ

Գետափի ենթակոմիտե, 5 Սեպտ. 1915

Ընկերներ,

Վաղուց է ինչ մեր յարաբերութիւնները դադարել են: Այսպիսի մի ժամանակ, երբ ամէն մի օր կարող ենք զանազան անակնկալների առջեւ գտնուել, երբ ամէն մի փոքրիկ դէպք կարող է պարսկահայութեանը վտանգաւոր կացութեան մէջ դնել, մենք անցուղարձերից միմեանց տեղեակ պահելու փոխարէն՝ ոչ մի կապ չենք պահպանում: Յոյս ունենք որ գոնէ այսուհետեւ սովորականի պէս մոռացութեան եւ անուշադրութեան չենք մատնուել:

Սպահանի այժմեան դրութիւնը ծանօթ պէտք է լինի ձեզ: Անգլիացոց հիւպատոսի դէմ մահափորձ կատարելուց յետոյ, անգլիական եւ ռուսական հիւպատոսները իրենց բոլոր առեւտրական եւ այլ հիմնարկութիւնները փակելով հեռացան Սպահանից: Շէյխ Նասրուլլահ յայտնի մոշահահդը՝ որ ամիսներից ի վեր դեմոկրատներին հետ ձեռք ձեռքի տուած մի ուժեղ հակառուս-անգլիական գործունէութիւն էր սկսել այս շրջանում, սրանց հեռանալով աւելի ոգեւորուեց: Մզկիթների հաւաքումները եւ գրգռիչ քարոզները շարունակուեցին աւելի մեծ թափով: Շիրազի եւ Բաշիրի մօջահահդների օգտին բացուել է հանգանակութիւն, իսկ շրջակայ գիւղերում էլ կամաւորներ են ցուցակագրուում եւ զինավարժութիւն է տեղի ունենում:

Վերջին մի քանի ամիսների ընթացքում, մութ ուժերը, թէ թերթերի միջոցով եւ թէ ժողովրդի մէջ զանազան սուտ ու շինծու լուրեր տարածելով աշխատում են պարսիկ ամբոխին գրգռել հայերի դէմ: Մինչ այժմ եղած հնարաւոր միջոցովներով հերքել ենք այդ զրպարտութիւնները եւ լաւ յարաբերութիւններ պահպանելուն աշխատել: Այժմ երբ գործի են անցել, ուղղակի եւ անուղղակի միջոցներով առաջարկում եւ երբեմն նոյնիսկ պահանջում են հայերից պարգել թէ ներկայիս եւ թէ պատերազմ ծագելու դէպքում հայերի բռնելիք դիրքը:

Առ այժմ առաջարկում են մասնակցել կամաւորների օգտին բացուած հանգանակութեանը, որպէսզի գործով ցոյց արած լինենք որ իրենց հետ ենք եւ եղած զրպարտութիւնները անհիմն են:

Դրութիւնն իս իստ փափուկ եւ լուրջ է: Ամենամեծ հաւանականութեամբ պատերազմի նախօրեակին ենք գտնուում: Ատրպատականի, Գիլանի եւ Թեհրանի հայութեան բռնելիք դիրքը, որոշուել է թէ ոչ, մեզ յայտնի չէ: Քանի դեռ ուշ չէ, քանի դեռ զանազան առիթներ չեն ներկայացել հայատեաց տարրերին պարսկահայութեանն էլ կոտորածի գոհ դարձնելու, կարծում ենք Կ. կոմիտէի պէտք է ներկայ եւ գալիք դրութիւնը լուրջ խորհրդակցութեան նիւթ դարձնէ եւ որոշէ բռնելիք դիրքը: Որոշում կայացնելիս անհրաժեշտ է նկատի առնել թէ ինչպիսի պայմաններում ենք գտնուում:

Ջուղան իր շրջակայ հայաշատ գիւղերով գրեթէ գուրկ է դիմադրական միջոցներից: Իսկ գաղթելու կամ փախչելու ոչ մի հնարաւորութիւն չունէ: Քանի որ ժողովուրդը պաշտպանուելու միջոցներ չունէ կոտորածից ազատուելու եւ քանի որ Պարսկաստանում հակառակ դիրք բռնելով առանձին շահեր նկատի չունենք, մեզ մնում է միայն պարսիկ կառավարութեան եւ ժողովրդի հետ բարեկամական լաւ յարաբերութիւններ պահպանել, գուցէ այդ միջոցով հայութեան այս հատածին վտանգից ազատել կարողանանք:

Այս է մեր կարծիքը, այս ուղղութեամբ էլ արդէն գործի ենք անցել: Անհամբեր սպասում ենք լսել Կ. կոմիտէի հայեացքները եւ եթէ կարելի է նաեւ ուրիշ շրջանների կարծիքները, որպէսզի բռնելիք դիրքերն իս որոշել կարողանանք:

Խնդրում ենք յայտնէք նաեւ ձեր հասցէն:

Ընկերական բարեւաններով
Ի դիմաց Գետափի ենթակոմիտէի
ՎԱՀԷ

Փաստ. 595-63

4.- ԳԻԼԱՆԻ ԿՈՄԻՏԵԷՆ ՇԱՀՍՏԱՆԻ ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԵԻՆ

1915 թ. Սեպտեմբ. 6-ին

Ընկերներ!

Դրուժիկներ Պարսկաստանում գնալով բարդանում է. այդ ձեզ աւելի լաւ յայտնի պէտք է լինի. հայ ժողովրդի գոյութեան խնդիրն է դրուած այստեղ էլ: Մեզ դեռ անյայտ է Սպահանի եւ շրջանի դրուժիկներ: Պէտք է ամէն ջանք գործադրել, գոնէ Պարսկաստանում պատուաւոր դուրս գալու: Միայն Թեհրանի մասին մտածելով չպէտք է բաւականանաք, մտածեցէք եւ միւս վայրերի համար: Գիլանն էլ ապրում է խառնակութիւնների նախօրեակին. Ռաշտի շրջակայ գիւղերում կազմակերպուել է եւ շարունակում են կազմակերպել մուջահիտների խմբեր, որոնց մէջ կան Բազուկից փախած 8-10 տաճիկ գերի օֆիցերներ: Դրանց նպատակն է յարձակուել քաղաքի վրայ թէ ռուսներին եւ թէ հայերին կոտորել: Ռաշտում կան մօտ 300 կազակ ռուսական, որը եթէ յարձակոււմը լաւ կազմակերպուած լինի եւ ուժեղ, դժուար թէ երկար կարողանայ դիմադրել, ստիպուած կը լինի նահանջել. այն ժամանակ վա՛յը եկել է հայերին տարել: Թէեւ մենք կազմակերպել ենք ինքնապաշտպանութիւն, բայց թոյլ է գէնքի պակասու-

թեան պատճառով. գոնէ բաւարար չափով փամփուշտ պէտք է ունենանք, որը այստեղ հնարաւոր չէ ձեռք բերել: Ռուս հիւպատոսն էլ թոյլ մարդ է, կտրուկ միջոցների չի ձեռնարկում եւ մեր դիմումներին պատասխանում է հանգստացուցիչ «ոչինչ չի լինել» խօսքերով: Ուստի խնդրում ենք, ընկերներ, անմիջապէս մեզ համար ուղարկէք 4-5 հազար մատուցերի փամփուշտ, որից այդտեղ, ինչպէս գիտենք, շատ կան եւ ձեռք բերելը շատ հեշտ է: Ռաշտի վրայ յարձակման սպասում ենք 15-20 օրից, գուցէ եւ աւելի շուտ, ո՛վ գիտէ: Եթէ դուք այս անգամ էլ մեր դիմումը անհետեւանք թողնէք եւ փամփուշտ չհասցնէք ամենակարճ միջոցում, ինքնապաշտպանութեան թուլութիւնը եւ դրանից առաջացող տխուր հետեւանքի պատասխանատուութիւնը Ձեզ վրայ պէտք է ծանրանայ:

Ընկերական բարեկներով՝
ՊԵՏՐՈՍ

Յ. Գ.— Այսօր, 9-ին, ժամը 12-ին Տաճկաց հիւպատոսին ռուսները ձերբակալեցին եւ ուղարկեցին Կովկաս:

Փաստ. 596-1

5.- Հ.Յ.Դ. ՇԱՀ ԶԱՂԱՔԻ (ԹԵՀՐԱՆ) ԿՈՄԻՏԵԻ 1914 Թ. ՍԵՊՏ. 6-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1916 Թ. ՅՈՒՆՈՒԱՐ 1-Ի ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

I ԿԱԶՄ

Շահաստանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցչի հրաւերով, ներկայ կոմիտէական կազմն ունեցել է իր առաջին նիստը, ուր յայտնել է որ Պատգամաւորական ժողովում, քուէների հետեւանքով, մարմնի անդամներ են ընտրուել՝ ընկեր Ասպետունի 10 ձայնով, ընկեր Բարբա 11 ձայնով, ընկեր Արմիկ 12 ձայնով, ընկեր Կայծ 9 ձայնով եւ ընկեր Նժդեհ 8 ձայնով:

Ընկերները վարել են հետեւեալ պաշտօնները. ընկ. Ասպետունի նախագահ ժողովների ամբողջ տարեշրջանի ընթացքում, ընկ. Կայծ՝ ներկայացուցիչ ամբողջ տարեշրջանում, ընկ. Բարբա՝ միջերապահ, ընկեր Արմիկ՝ քարտուղար մինչեւ Փետրուար 11-ը, ընկեր Նժդեհ՝ նախ գանձապահ, յետոյ Փետրուար 16-ից քարտուղար, քանի որ ընկ. Արմիկը հնարաւորութիւն չունէր քարտուղարութիւնը կանոնաւոր տանելու: Այդ փոփոխութեան պատճառով գանձապահութիւնը յանձն առաւ ընկ. Կայծը:

Ամբողջ տարեշրջանում մարմինս ունեցել է ընդամէնը 31 նիստ:

Ամառուայ ամիսների ընթացքում մարմնիս ժողովները կանոնաւոր չեն տարուել, ընկերներից մի երկուսի քաղաքից բացակայելու պատճառով:

Օգոստոս 10-ից ընկեր Արմիկը այլեւս չի մասնակցել Մարմնիս ժողովներին, քաղաքից բացակայելու պատճառով, եւ այդ ժամանակից Մարմնիս անդամների թիւն եղել է 4 հոգի:

Ամբողջ տարեշրջանում Մարմնիս հրատարակել է միայն մի շրջաբերական ուղղուած Շահ կոմիտէի շրջանի ընկերներին: Թղթակցութիւնների թիւը, գրուած Մարմնիս կողմից եղել է 21:

Ամբողջ տարեշրջանում Մարմնիս անդամների մէջ չի եղել ոչ մի տարաձայնութիւն:

II ՇՐՋԱՊԱՏՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մեր Մարմինը գործերի դեկն իր ձեռքն առաւ հէնց այն ժամանակ երբ արդէն բռնկել էր Համաեւրոպական ասեղ պատերազմը, երբ մեզ պէս շատ մանր ազգեր դրա հետ կապել են իրենց դարաւոր յոյսերը եւ իղէալների իրագործումը. մենք էլ դրանց շարքում, այսօր տարիներ շարունակ մեր ներքին կեանքը յուզող իղէալների փառաւոր պսակման յոյսերն ունէինք, եւ հայկական միւս հատուածները ոգեւորուած այդ մեծ գաղա-

փարի իրագործման յոյսերով, աշխատեցինք խտացնել մեր շարքերը, զգալով որ կանգնած ենք մեծ եւ ճակատագրական ռոպէի առջեւ: Սակայն չնայելով մեր թափած ջանքերի եւ ամբողջ էութեամբ եւ էներգիայով ասպարէզ իջնելուն, այնուամենայնիւ մենք ունեցանք հիասթափութեան ռոպէներ, ի տես մի քանի հարիւր հազարաւոր զոհերի, որոնք զոհաբերուում էին ազատութեան խորանի առջեւ: Ամբողջ Տաճկահայաստանը ողողուեց մեր ազգակիցների արեան հեղեղով եւ գաղթականների սոսկալի հոսանքը դէպ Կովկասի հայաբնակ վայրերը, պատկերացրին մեզ սոսկալի դրութիւնը իր ամբողջ մերկութեամբ, եւ մի ռոպէ կասկածեցինք որ հայկական հարցը Թալէաթ-էնլերները խեղդեցին արիւնով, բայց էլի մեր կամաւորական խմբերը, չնայելով իրենց տուած թանկագին ու անփոխարինելի զոհերի եւ նահանջից առաջացած ընդհանուր լքման, կրկին դուրս են եկել, այս անգամ աւելի պատրաստուած, խիելու դարաւոր թշնամուն, Տաճիկ բռնապետութեան դէմ, որի ներկայացուցիչներն են այսօր մեր երէկուայ դաշնակից Միութեան եւ Առաջադիմութեան դեկավար անդամները: Այսպէս էր հայութեան վիճակը բուն հայրենիքում:

Գալով Պարսկաստանի իրականութեան, պէտք է ասել որ յեղափոխական շարժումներից յետոյ, երկիրը ամբողջովին ընկղմել էր ընկալիչալի գրկի մէջ. չկային գոտ յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւններ երկրում, որոնց հետ կարողանայինք ձեռք ձեռքի տուած գործել: Միակ ընդդիմադիր կուսակցութիւնը՝ դեմոկրատ կոչուած խառնիճաղանձ խմբակցութիւնը, ոչ այլ ինչ էր եթէ ոչ համիւլամութիւն տարածող մի տգործ, որի դեկավարները շրջաւոր գերմանական ոսկիներից, երկիրը մատնեցին անարխիստի եւ այդպիսով Պարսկաստանը մղեցին դէպի կատարեալ քայքայում թէ տնտեսական եւ թէ բարոյական տեսանկիւնից: Այդպիսի մի ժամանակաշրջանում իսիստ պարզ է որ պրովոկատորները առիթից օգտուելով ամէն կերպ աշխատում էին հայ-պարսկական յարաբերութիւնները խզել եւ ստեղծել այնպիսի մի վիճակ ինչպիսին արդէն ստեղծուել է արդէն Տաճկաստանում: Մի այդպիսի մոմենտում լրտեսները պակաս եռանդ չէին թափում մեր կուսակցութիւնը կասկածելի դարձնելու կառավարութեան առջեւ, բայց ուրախ ենք նկատել որ բացի մի երկու աննշան խուզարկութիւններից, մեր դէմ առանձին հալածանք չի եղել կառավարութեան կողմից, բայց պակաս եռանդ չի թափուել մեր ընկերների կողմից փարա-

տելու մեր պարսիկ հայրենակիցների մէջ պրոֆոկատորների տարածած միտումնաւոր սուտ լուրերը, իբր թէ հայերը թշնամի են Պարսկաստանին եւ որ նրանք պատրաստուած են յարձակել պարսիկների վրայ եւ այդպիսով ուսանելին բերել մայրաքաղաք: Միւս կողմից էլ պարսիկների կողմից մեզ ասուած էին որ պարսիկները պատրաստուած են հայկական կոտորած սարքել: Այդպիսի պրոֆոկագրիաների շնորհիւ ինչ խօսք որ հայերն ու պարսիկները մի որոշ ժամանակ սկսեցին կասկածանքով եւ նոյնիսկ թշնամական հայեացքով նայել միմեանց վրայ, մինչեւ որ մեր ընկերների ջանքերի շնորհիւ փոքր ինչ մեղմեցինք թշնամական դրուժիւնը, ցրելով կասկածները եւ հասկացնելով պարսիկներին որ հայերը Պարսկաստանում ոչ մի քաղաքական ակնկալութիւն չունին, որ գործիք դառնան օտար պետութիւնների ձեռքում, եւ որ մեր սկզբունքների եւ նոյնիսկ պարսկահայութեան շահերի տեսակէտից մեզ համար աւելի նպաստաւոր է անկախ Պարսկաստանի գոյութիւնը:

Պարզ է որ քաղաքական այդպիսի աննպաստ պայմանների շնորհիւ մենք կաշկանդուած էինք եւ զուրկ ազատ գործելու հնարաւորութիւնից: Բայց մենք հնարաւոր եղածին չափ աշխատեցինք, թէեւ պէտք է խոստովանած որ չունեցանք այնպիսի գործունէութիւն որ տարուայ սկզբին մեզ նպատակ էինք դրել: Մեր ցանկալի չափով գործունէութիւն չունենալը մասամբ կապուած է եղել այն հանգամանքից, որ շատ գործեր որոնք իրաւամբ մեր Մարմնի հետ կապ ունէին, իր ձեռքն է առել Շահաստանի Կենտրոնական կոմիտէն, միեւնոյն վայրում գտնուելու պատճառով: Այս մասին էլ ի առիթ կ'ունենանք խօսելու «Մեր եւ Կ. Կ. ի յարաբերութիւնները» մասի մէջ:

III ՄԵՐ ԵՒ ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Համաձայն Կենտրոնական կոմիտէի որոշման, կոմիտէի յարաբերութիւնները Կ. Կ. ի հետ եղել են ընդհանրապէս բանաւոր Կ. Կ. ի ներկայացուցչի միջոցով, որը յաճախ ներկայ է եղել մեր ժողովներին ուր տուել է Կ. Կ. ի հրահանգները եւ պատասխանել է մեր հարցապնդումներին:

Ամբողջ տարեշրջանում Մարմնիս եւ Կ. Կ. ի յարաբերութիւնները եղել են լաւ դրութեան մէջ, բացառութեամբ մի երկու դէպքերի, օր[ինակ] Կարմիր խաչի միութեան առթիւ, Կ. Կ. ի ներկայացուցչի ընկեր Արմանի եւ այլն, որոնք շատ շուտով հարթուել են: Մարմնիս մի քանի անգամ իր ներկայացուցչին ուղարկել է Կ. Կ. ի նիստերին, հարցապնդումներ անելու Պ. Մելիք Սարգսեանի, Եզնիկ վարդապետի եւ լրտեսների վերաբերմամբ: Բացի այդ Մարմնիս առաջարկութեամբ Կ. Կ. ն ունեցել է Մարմնիս հետ մի քանի խառն նիստեր,

ուր քննուել են մի քանի կարեւոր եւ վիճելի կէտեր, օր. մարմինների իրաւասութեան սահմանները, կամաւորներ ուղարկելու խնդիրը եւ այլն, ուր եւ կարծիքների փոխանակութիւնից յետոյ յանգել են որոշ համաձայնութեան: Սակայն պէտք ենք համարում նկատել որ Կ. Կ. ն նոյն վայրում գտնուելով ինչպէս եւ Շահ կոմիտէն, իր ձեռքն է առել ինքնապաշտպանութեան, կամաւորներ պատրաստելու գործը եւ այլն, եւ Մարմնիս մնացել է միայն զբաղուելու տեղական խմբերի գործերով, որ կարող է անել նաեւ մի ենթակոմիտէ կամ խմբապետական ժողով:

Վերջացնելով մեր եւ Կ. Կ. ի յարաբերութիւնների մասին խօսել, մենք բողոքում ենք Կ. Կ. ի դէմ մեր կազմի ընկեր Արմիկին, որը գնում էր Կովկաս, յանձնարարական չտալու դէմ, որի առթիւ յիշեալ ընկերը գրաւոր բողոք էր ուղարկել մեզ:

IV ԽԱՌՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Ի նկատի ունենալով Պարսկաստանի խառնակ վիճակը եւ խռովութիւններ ծագելու հաւանականութիւնները, ինքնապաշտպանութեան կենտրոնական մարմնի հրահանգով, տեղի են ունեցել մի քանի խորհրդակցական ժողովներ, ուր մեր մարմինը ներկայ է եղել իր ամբողջ կազմով: Ժողովին ներկայ են եղել մի քանի հոգի մեր ընկերներից եւ մի քանի հոգի էլ համակրողներից ու տեղիս աչքի ընկնող հասարակական գործիչներից: Խորհրդակցական ժողովների նպատակն եղել է որոշել պարսկահայութեան բռնելիք դիրքը Պարսկաստանի համաշխարհային պատերազմին խառնուելու դէպքում, եւ մասնաւորապէս միջոցներ ձեռք առնել ինքնապաշտպանութեան գործն ամուր հիմքերու վրայ դնելու, որպէսզի խռովութիւնների եւ կոտորածի դէպքում կարողանանք մեզ պաշտպանել:

V ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ԿԱՄԱԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Հէնց տաճկական պատերազմի յայտարարումից անմիջապէս յետոյ, կամաւորական շարժումն սկսեց մեծ ոգեւորութիւն առաջ բերել նաեւ այստեղ, բայց Կ. Կ. որոշ նկատումներով սկզբներում յետ կացաւ կամաւորական խմբեր ուղարկելու, քանի որ Պարսկաստանում էլ սպասուած էին խառնակութիւններ եւ խիստ հաւանական էին նկատուած ընդհարումներ, որոնք ուղղուած կը լինէին ընդհանրապէս քրիստոնեաների եւ մասնաւորապէս հայերի դէմ: Բայց Կ. Կ. ն ի նկատի ունենալով որ մեր շարքերում եւ դրսի համակրողների մէջ խիստ մեծ ցանկութիւն [կայ] մասնակցելու կամաւորական շարժման, որի համար բազմաթիւ դիմումներ արուել էին թէ կոմիտէիս եւ թէ Կենտրոնական կոմիտէին, վերջապէս անցեալ տարուայ Յուլիսին որոշեց մի

25 հոգանոց խումբ ուղարկելու Կովկաս, ղեկավարութեամբ խմբապետ Ս-ի: Խմբի կազմակերպումը եւ ուղարկելը թողնուեց մեր Մարմնին, բայց այնքան ձգձգումների հանդիպեց նրանց ուղարկելը, որ ուշանալու պատճառով մի մասը վերադարձաւ Ղազուխից, մի քանիսն էլ Կովկասից, այնպէս որ յիշեալ 25 հոգուց միայն մի քանի հոգի միայն մտան կամաւորական շարքերը:

VI ՊՐՈՊԱԳԱՆԴ

Աւելորդ ենք համարում կրկին անգամ շեշտելու պրոպագանդայի անհրաժեշտութիւնը. տեսնենք ինչ է արուել այս տարեշրջանում այդ ուղղութեամբ եւ ինչեր են պակսում պրոպագանդայի գործն աւելի արդիւնաւէտ դարձնելու համար:

1. Բանաւոր

Ամբողջ տարեշրջանում հագիւ կարողացել ենք 2 ընդհանուր հասարակական դասախօսութիւններ տալու եւ հասարակութեան լայն շրջանում մեր գաղափարները տարածելու: Հասարակական բազմաթիւ դասախօսութիւններ տալու գլխաւոր պատճառ եղել է այն որ մեր տարեշրջանում մեզ պակսել է ձեռնհաս եւ պատրաստուած դասախօս ընկերներ, եղածներով նոյնիսկ չենք կարողացել խմբերի պահանջները բաւարարել: Խմբերը միշտ պահանջել են դասախօս ընկերներ, բայց մեր մի-երկու դասախօս ընկերները կուսակցական եւ անձնական գործերով ծանրաբեռնուած լինելու պատճառով չեն կարողացել բոլոր խմբերին հասնել: Խմբերից մի քանիսին ուղարկուել են ղեկավարներ բայց նրանք էլ լինելով Մարմնի ընկերներից եւ ծանրաբեռնուած լինելով կազմակերպութեան այլ գործերով, դժբախտաբար չեն կարողացել ցանկալի չափով զբաղւել պրոպագանդայի գործով: Բարեբախտաբար նոր ընտրուելիք մարմինը աւելի նպաստաւոր պայմանների մէջ է գտնուելու այս տեսակէտից, քանի որ այս տարի տեղումս կան ձեռնհաս ընկերներ ընդհանուր եւ խմբական դասախօսութիւնների համար: Յոյս ունինք որ նորընտիր մարմինը օգտուելով կարող ընկերների ներկայութիւնից կ'աշխատէ առաջիկայ տարեշրջանում տեղիս կուսակցական եւ հասարակական կեանքը հետաքրքիր եւ օգտաւէտ դարձնել կազմակերպելով յաճախակի դասախօսութիւններ:

Թէեւ տարուայ վերջերին մի խմբի անդամների մէջ մտադրութիւն ծագեց կազմելու դասախօսների մի խմբակ, բայց այդ միտքը ցարդ չիրականացաւ դարձեալ ձեռնհաս ընկերների սակաւութեան պատճառով: Նոր ընտրուելիք մարմնին ենք թողնում գլուխ բերելու այդ անհրաժեշտ գործը, որով թէ գարկ տուած կը լինենք պրոպագանդայի գործին, եւ թէ մեր կուսակցու-

թեան համար պատրաստած կը լինենք դասախօսներ, որի պակասով մեր խմբերի նիստերն անցնում են յաճախ անհետաքրքիր:

Բացի հասարակական դասախօսութիւններից մեր խմբերը տուել են մի քանի ընտանեկան երեկոյթներ, որոնց նպատակն եղել է գլխաւորապէս կուսակցական պրոպագանդան:

2. Յեղափոխական գրադարան

Նախորդ մարմնից ստացանք յեղափոխական գրադարանը, որի չի կարելի գրադարան անուանել տալ: Մի քանի տասնեակ բրոշուրներ հայերէն, ֆրանսերէն եւ ռուսերէն, ահա թէ ինչն է կազմում յեղափոխական գրադարանը: Անցեալ մարմնի տեղեկագրից յայտնուեց որ Յեղ. Գրադ.ին յատկացրուած կայ մի որոշ գումար, որը գտնուում է Կ.Կ.ի մօտ: Չնայելով որ անգամներ պահանջել ենք Կ.Կ.ից, իրենց ներկայացուցչի միջոցով, այդ գումարը յանձնելու Մարմնիս, իր նպատակին յատկացնելու, բայց մեր պահանջները այդ մասին միշտ էլ անհետեւանք է մնացել:

Յիշեալ գրադարանը նախ գտնուում էր Արշալոյս խմբի ձեռքին, որը ոչ մի խնամք չէր տանում եւ չէր աշխատում նրան ճոխացնելու: Յետոյ յանձնուեց ընկեր Փնոյին, բայց դարձեալ այդ վիճակում մնաց: Վերջապէս տարւայ կէսերին յանձնուեց Դոման խմբին, որի կազմալուծման հետեւանքով պարզ է որ գրադարանն աւելի անխնամ վիճակի մէջ է գտնուում:

Մարմինս նկատի ունենալով որ Յեղ. գրադարանը խիստ անհրաժեշտ է մեր տեղին թէ դասախօս եւ թէ միւս ինտելիգենտ ընկերների ինքնագրագացման եւ դասախօսութիւնների աղբիւրների համար, եւ մասնաւորապէս մեր գաղափարները տարածելու գործի մէջ, հրաւիրում է նորընտիր մարմնի ուշադրութիւնը այս կարեւոր խնդրի վրայ, եւ թողնում է նրան Կ. Կ.ից պահանջելու այդ նպատակին յատկացրուած գումարը, եւ հաւաքելով գրադարանի բոլոր գրքերը, յանձնել ձեռնհաս ընկերների կազմել մի ցանկ յեղափոխական-սոցիալիստական բնոյթ ունեցող գրքերի եւ յանձնել այդ մարմնին բերել տալու: Ըստ մեզ աւելի նպատակաւոր մար է գրադարանի ղեկավարութիւնը յանձնել խմբապետական ժողովին:

3. Կիսապաշտօնական օրգան

Թէեւ Մարմինս զգացել է տեղումս մի կիսապաշտօնական օրգան ունենալու անհրաժեշտութիւնը, պրոպագանդայի գործի համար, բայց դարձեալ ձեռնհաս ընկերների սակաւութեան պատճառով, այդ խնդիրը թողնուել է աւելի նպաստաւոր ժամանակի: Տարուայ կէսերին մեր համակրող ընկերներից մէկը յայտնում է մեր ներկայացուցչին թերթ հրատարակելու մտքի մա-



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

սին, որին պատասխանում է որ նախ ինքը պէտք է մտնի մեր խմբերից մէկի մէջ եւ ապա կազմակերպական ճանապարհով արծարծէ այդ խնդիրը: Թէեւ յիշեալ ընկերը մտնում է մեր խմբերից մէկի մէջ, բայց ցարդ թերթ հրատարակելու մասին ոչ մի խօսք այլեւս չի լինում:

4. Քաղաքական տեսութիւններ

Ի նկատի ունենալով որ խմբերը անդադար պահանջում էին քաղաքական տեսութիւններ, Մարմինս դիմումներ արաւ Կ. Կ.ին, որը տարւայ կէսերին սկսեց տալ շաբաթական տեսութիւններ, որոնք գլխաւորապէս վերաբերում էին Պարսկաստանի քաղաքական անցուղարձեքին:

VII ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Ի նկատի ունենալով Երկրի բացառիկ վիճակը եւ ինքնապաշտպանութեան երկաթէ անհրաժեշտութիւնը, Կենտրոնական կոմիտէն իր ձեռքն առաւ թէ տեղիս եւ թէ Շահաստանի շրջանների ինքնապաշտպանութեան գործը, կազմելով Հ.Յ.Դ. ինքնապաշտպանութեան կենտրոնական մարմին, եւ այսպիսով Մարմինս զրկուել է այդ գործին իր լայն մասնակցութիւնն ունենալուց: Բայց չնայելով այդ հանգամանքին, Մարմինս ունեցել է ինք. Կենտ. մարմնի մէջ իր ներկայացուցիչը եւ միշտ էլ ջերմ մասնակցութիւն է ունեցել ինքնապաշտպանութեան գործի մէջ, մարզելով ընկերներ այդ գործի համար:

Պարզ է ինքնապաշտպանութեան գործն առնելով մեզնից, կ[ազմակերպական] գէնքերի հաշիւն էլ բնականաբար յանձնելու էր Կենտ. կոմիտէին: Ուստի կազմ. գէնքերի մասին զեկուցում տալ անկարող ենք, գէնքերի մեզ մօտ չգտնուելու պատճառով:

VIII ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս արդէն Շրջանային ժողովում որոշուել է, մեր ընկերները ոչ մի մասնակցութիւն չեն ունեցել Մէջլիսի ընտրութիւններին: Համայնական վարչութիւնը, ասպարէզ իջնելով հասարակական ժողովում կրկին բարձրացնում է Մէջլիսին հայ պատգամաւոր տալու հարցը եւ ահա այդ ժամանակ մեր ընկերներից 811¹⁰, հակառակ կուսակցութեան արած բոյկոտին, մասնակցելով ժողովներին կողմնակից է լինում Մէջլիսին պատգամաւոր տալուն: Թէեւ կուսակցութեան կողմից նրան ազդարարում է որ բոյկոտը մնում է իր ոյժի մէջ, բայց հակառակ զգուշացումներին նա յամառում է եւ էլ աւելի եռանդով մասնակցում է ընտրութիւններին:

րին: Մարմինը՝ խմբապետական ժողովի միջոցով նախ բացատրութիւն է պահանջում պատկանած խմբի խմբապետից, որպէսզի նրանից բացատրութիւն ստանայ որից յետոյ Մարմինս որոշել էր խմբերին ազդարարել նրա արտաքսումը, բայց նա կանխելով դրան ուղարկում է իւր հրաժարականը իր պատկանած խմբին, որից յետոյ Մարմինս աւելորդ է համարում յայտարարել խմբերին նրա արտաքսումը:

IX ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

Մարմինս ի նկատի ունենալով Կարմիր խաչի միութեան անհրաժեշտութիւնը ներկայ համաշխարհային ահեղ պատերազմի ընթացքում եւ նրա մատուցանելիք օգնութիւնը ընդհանրապէս տաճկահայ դատի համար կռուող կամաւորներին եւ տաճկահայ զաղթականներին, եւ մասնաւորապէս նրա կատարելիք դերը Պարսկաստանում ընդհարումներ տեղի ունենալու դէպքում, իր Նոյեմբեր 6-ի նիստում որոշեց կանանց Ալիք խումբը վերածել Կարմիր խաչի միութեան, եւ խմբապետական ժողովի միջոցով յայտնելով յիշեալ խմբին այդ որոշման մասին, հրահանգեց նրանց աշխատել անդամուհիների թիւն աւելացնել:

Կարմիր խաչի վերաբերմամբ Մարմինս քուէարկեց երկու բանաձեւ, եւ ընդդէմ մի ձայնի անցաւ հետեւեալ բանաձեւը՝ «Առաջարկել խմբերին, որ ցանկացողները կարող են մտնել Կարմիր խաչի միութեան մէջ, նոյն ժամանակ մնալով նաեւ քաղաքական խմբերի մէջ: Կարմիր խաչին կարող են մասնակցել նաեւ տղամարդիկ»:

Մարմինս կազմելով Կարմիր խաչի միութիւնը, մեր ընկեր ներկայացուցիչը մասնակցում է նրանց մի երկու նիստերին, բայց Կ. Կ.ի ներկայացուցիչը յայտնում է մեզ որ Կ. Կ.ն տեղիս Կարմիր խաչի միութիւնը կազմում է Վրէժստանի¹¹ ներքին կանոնադրութեան համաձայն, որից յետոյ կազմում է Կարմիր խաչի Կենտրոնական վարչութիւն, որը ղեկավարելու է Շահաստանի Կեդրոնական կոմիտէի շրջանների համապատասխան միութիւնները, եւ որ Կարմիր խաչը այնուհետեւ անմիջապէս կապուում է Կ.Կ.ի հետ: Այս որոշման յայտարարումից յետոյ մեր ներկայացուցիչը չի մասնակցում այլեւս Կարմիր խաչի նիստերին:

X ՍԵՒ ԱՐԵԱՆ ՇՐՋԱՆ¹²

Ի նկատի ունենալով որ Սեւ Արեան շրջանում կուսակցական գործունէութիւն ունենալու համար Մարմ-

10.- 811 – պայմանական թուանշան՝ ընկերոջ անուան փոխարէն:
11.- Վրէժստան – ծածկանուն Հ.Յ.Դ. Ատրպատականի Կ. կոմիտեի մասին:
12.- Սեւ-Արիւն – ծածկանուն Ղարաղանի, Ղազուիցի շրջանին մէջ:



նիս հարկաւոր էր այնտեղ ունենալ մի մշտական շրջիկ ընկեր, այդ շրջանի խմբերը ղեկավարելու եւ կազմակերպական գործով զբաղուելու համար, եւ որ այդպիսի մի մշտական շրջիկ ունենալը Մարմինս բիւդժէն թոյլ չի տալիս, այդ պակասը լրացնելու համար անցեալ Պատգամաւորական ժողովում որոշուել է որ աւելի լաւ է այդ շրջանի կեդրոնական գիւղերից մէկում բացել մի դպրոց, ուր պաշտօնավարելու էր մեր ընկեր ուսուցիչները մէկը, բայց նկատելով որ Մարմինս չի կարող ուսուցիչի ծախքը ամբողջովին վճարել, որը հասնելու էր առնուազը 300 թումանի, Մարմինս բանակցութեան մէջ մտաւ տեղիս բարեգործական մի ընկերութեան հետ, որը համաձայնեց յիշեալ դպրոցի բիւդժէի կէսը վճարել, որի միւս կէսը վճարուելու էր կուսակցական կասսայից: Բայց երբ հասաւ նպատակն իրագործելու ժամանակը, յիշեալ ընկերութիւնը միջոցների սղութեան պատճառով անկարող եղաւ իր խոստումը կատարելու, եւ այդպիսով այդտեղ դպրոց բացելու ծրագիրը ժամանակաւորապէս ջուրն ընկաւ: Մարմինս իր ձեռնհաս ընկերների պակասութեան պատճառով եւ ժամանակաւոր շրջիկ ուղարկելուն դէմ լինելով, այս տարի ուղղակի կապ չի պահպանել այդ շրջանի հետ, բայց տեղիս գիւղացիական Սերեմճեան խմբի միջոցով կապ է հաստատել, եւ որի միջոցով պրոպագանդ է մղել յօգուտ կամաւորների եւ մի որոշ գումար հանգանակելով այդ նպատակի համար եւ ընկեր Արմենակի¹³ միջոցով յանձնել է Կեդր. կոմիտէին:

Այս տարի բողոքներ հասել են Մարմինս այդ շրջանից մի քանի հարստահարիչների դէմ, բայց Մարմինս ձեռնհասութիւն չի ունեցել այդ շրջանը քննիչ ուղարկելու եւ մօտիկից տեղեկանալու թէ որքան հիմնաւոր են այդ բողոքները: Յանկալի է որ նորընտիր Մարմինս աշխատի գլուխ բերել դպրոց բացելու հարցը:

XI ԳԱՂԱՁԱՆ ԵՆԹԱԿՈՄԻՏԵ¹⁴

Սոյն տարեշրջանում Գաղազան ենթակոմիտէի շրջանը, չնայելով որ այնտեղ գտնուում են մի քանի ձեռնհաս ընկերներ կազմակերպական գործին տուն տալու համար, եղել է քանդուած ու գրեթէ կազմալուծուած դրութեան մէջ, շնորհիւ այնտեղի ընկերների մէջ եղած տարաձայնութեան, որի գլխաւոր պատճառը համարում են ընկեր Մուշեղին թէ այնտեղի ընկերներից շատերը եւ թէ մեր այնտեղ ուղարկած քննիչը:

Սոյն տարեշրջանում Շահ կոմիտէն նախ ուղարկել է այդ շրջանը մի քննիչ, ընկեր Կայծին, քննելու այդտեղի ենթակոմիտէի արխիւը եւ բերելու կոմիտէիս իր կատարած քննութեան արդիւնքը, որից իմացել է որ ընկեր Մուշեղը կազմակերպական գործերն իր ձեռքն առնելով, ասպարէզ չի տուել մեր այնտեղի միւս ընկերներին եւս գործելու, հետեւապէս նրա փառասիրութեան պատճառով տուժել է այնտեղի կուսակցական գործը:

Չատկական տօներին մարմինս այդ շրջանն է ուղարկել ընկերներ Բարբային եւ Արմիկին, առաջին կազմակերպելու տեղական ինքնապաշտպանութեան գործը եւ երկրորդին՝ դասախօսութիւններ տալու: Բայց տեղական մարմինը փոխանակ դիւրութիւններ տալու յիշեալ ընկերներին եւ մասամբ էլ խոչընդոտներ է յարուցել, օր[ինակ] ընդ. դասախօսութիւններ տալու խնդրում, եւ այդպիսով ուղարկուած ընկերներին հնարաւոր չի եղել նրանց վրայ դրուած պարտականութիւնը լիապէս կատարելու:

Այդ շրջանում եղել են նաեւ գէնքերի փոխանակութիւններ, առանց այդ մասին նախապէս զեկուցելու Շահ կոմիտէին, որի մէջ տեղական մարմինը դարձեալ մեղադրում է նոյն ընկեր Մուշեղին:

Ներկայ մարմնի պաշտօնավարութեան վերջին ամսում թէ Գաղազան ենթակոմիտէն եւ թէ մեղադրեալ ընկերը, պահանջել էին Շահ կոմիտէից ուղարկել այնտեղ քննիչ, այդ մասին քննութիւն կատարելու, բայց մարմինս նկատի ունենալով որ վաղուց արդէն լրացել է Շահ կոմիտէի ներկայ կազմի ժամանակաշրջանը, յայտնեց կազմերին որ աւելի լաւ է այդ խնդիրը դրուի պատգամաւորական ժողովի առաջ: Ահա այդ պատճառով կցում ենք մեր տեղեկագրին Գաղազանի մասին ունեցած մեր փաստաթղթերը, որոնք կարող են օգտակար լինել պատգամաւորական ժողովին:

Սոյն տարեշրջանում այդ շրջանին գրուել է ընդամէնը 10 նամակ: Սկզբներում կապ պահպանուել է բաւական կանոնաւոր, իսկ վերջերում մեր նամակները մնացել են համարեա թէ անպատասխան:

Մի խօսքով այդ շրջանի գործը եղել է անմխիթար:

XII ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Սոյն տարեշրջանում խմբապետական ժողովն ունեցել է ընդամէնը 37 նիստ, ուր ներկայ են եղել գոյութիւն ունեցող խմբերի խմբապետները: Մարմնի կողմից խմբապետական ժողովին յաճախ ներկայ է եղել ընկեր Կայծը, որպէս Շահ կոմիտէի ներկայացուցիչ:

Սկզբներում խմբապետական ժողովի նիստերը կանոնաւոր են եղել, բայց տարեշրջանի վերջերում, ժողովները կանոնաւոր չեն տարուել:

Տարեշրջանի ընթացքում խմբապետական ժողովը [զբաղուել է] հետեւեալ հարցերով.

- I Խմբերի վիճակ
- II Պրոպագանդիստների կարիք
- III Կարմիր խաչի միութիւն
- IV Երեկոյթներ, ներկայացումներ, Սգահանդէս եւ վիճակախաղ կազմակերպելու հարցով

13.- Արմենակ – Ժամկանուն Կ. կոմիտէի անդամ Տոքթ. Յարութիւն Ստեփանեանի (1870-1953):
 14.- Գաղազան – Ժամկանուն՝ Ղազարիցի շրջանի Ղարաղան գիւղի ենթակոմիտէի:

- V Կոմիտէի բիւրօ
- VI Կամաւորական հարցով
- VII Յեղափոխական գրադարան
- VIII Շրջանային եւ պատգամաւորական ժողովների որոշումները հրատարակելու եւ խմբերին ցրելու հարցով
- IX Մէջլիսի հայ պատգամաւորի առթիւ
- X Երեք արտաքսուած ընկերների (կամաւոր) եւ 811-ի հարցով:
- XI Հրապարակական դասախօսութիւնների առթիւ
- XII Հաշիւների կանոնաւորման խնդրով:

Հարկ ենք համարում նկատել որ այս տարի խմբապետական ժողովը մարմին չի ստել իր գործունէութեան տեղեկագիրը եւ նրա գործունէութիւնից մենք տեղեկացել ենք նոյն ժողովի արձանագրութեան տետրակից:

XIII ԽՄԲԵՐ

1914 թ. Պատգամաւորական ժողովից յետոյ, նախորդ մարմնից ժառանգած լինելով ընդամէնը 6 քաղաքական խմբեր, այն է՝ Արշալոյս, Ասուպ, Զաւարեան, Ալիք, Քրիստափոր եւ Սերեմձեան, Մարմինս ջանքեր թափելով յաջողեցաւ խմբերի թիւը հասցնել 13-ի, որոնցից 7 քաղաքական խմբեր, 1 գիւղացիական միութիւն, 4 աշակերտական միութիւններ եւ 1 կանանց խումբ, որը վերածուեց Կարմիր խաչի միութեան:

Դժբախտաբար տարեշրջանի վերջերում մի քանի խմբեր կազմալուծուեցին, մասամբ անդամների ցրուելու պատճառով եւ մասամբ էլ ղեկավար ընկերներ չունենալու պատճառով. այնպէս որ այժմ ունինք 7 կանոնաւոր խմբեր, այն է՝ Ասուպ, Որոտ, Քեազագ, Միքայէլեան, Ալոյեան, Քրիստափոր, Զաւարեան եւ 5 կազմալուծուած խմբեր, որոնք են՝ Դուման, Ալիք, Հրոսակ, Արշալոյս, Սերեմձեան: Կանանց Ալիք խումբը վերածուել է Կարմիր խաչի միութեան:

Խմբերը կանոնաւոր ունեցել են իրանց հերթական նիստերը, զբաղուել են կազմակերպական հարցերով, բայց տարուայ վերջերում մի քանի խմբեր սկսել են կաղնիկաղ առաջ գնալ, մինչեւ որ 5 վերոյիշեալ խմբերը բոլորովին դադարեցրել են իրանց նիստերը:

Աշակերտական խմբեր կազմելու մեր նպատակն եղել է այն որ իրենց դպրոցական շրջանը վերջացնելուց յետոյ, նրանք կազմակերպուեն եւ հասարակութեան համար պիտանի անդամներ լինեն:

Ծանօթութիւն.— Աշակերտական եւ պատանեկան խմբերը բաղկացած են եղել շրջանաւարտներից եւ դպրոցների բարձրագոյն դասարանների աշակերտներից:

Գիւղացիական խմբերի նպատակն է եղել նրանց միջոցով կապ հաստատել գիւղերի հետ եւ աշխատել գիւղերում մասսա ձեռք բերել:

Ասուպ խումբ.— Խումբը մեզ յանձնուել է նախորդ կոմիտէից: Ունեցել է կանոնաւորապէս իր ժողովները, զբաղուել է խմբական ներքին գործերով եւ կուսակցական գրականութեամբ:

Մարմնի կասսային յանձնել է ընդամէնը 374 դրան:

Զաւարեան խումբ.— Այս խումբն էլ մենք մենք ժառանգել ենք նախորդ մարմնից: Ունեցել է իր կանոնաւոր նիստերը, զբաղուել է խմբական ներքին գործերով, կուսակցական գրականութեամբ, դասախօսութիւններով եւ ընդհանրապէս կազմակերպութեան հետ կապ ունեցող հարցերով:

Մարմնի կասսային յանձնել է ընդամէնը 364 դրան:

Քրիստափոր խումբ.— Այս խումբն էլ մարմինս ժառանգել է նախորդ կոմիտէից: Ունեցել է իր կանոնաւոր նիստերը, զբաղուել կուսակցական կեանքին վերաբերեալ հարցերով, խմբական ներքին հարցերով դասախօսութիւններով եւ քաղաքական հարցերով:

Կուսակցութեան կասսային յանձնել է ընդամէնը 3196 դր. 50 սանտիմ:

Ալոյեան խումբ.— Խումբը կազմուել է 1915 թ. Յունւարին: Զբաղուել է խմբական ներքին գործերով, եղել են դասախօսութիւններ, քաղաքական հարցերով եւ այլն:

Կազմակերպութեան կասսային յանձնել է ընդամէնը 200 դրան:

Միքայէլեան խումբ.— Խումբը կազմուել է 1915 թ. Մայիսին: Զբաղուել է ծրագրի լուսաբանութեամբ եւ խմբական ներքին գործերով:

Կոմիտէի կասսային յանձնել է ընդամէնը 22 դրան:

Քեազագ խումբ.— Այս խումբը կազմուել է այս տարեշրջանում: Զբաղուել է ծրագրի լուսաբանութեամբ եւ խմբական ներքին գործերով:

Մարմնի կասսային յանձնել է ընդամէնը 86 դրան:

Որոտ խումբ.— Խումբը կազմուել է 1915 թ. Մայիս 1-ին: Զբաղուել է խմբական ներքին գործերով եւ քաղաքական տեսութիւններով:

Մարմնի կասսային յանձնել է ընդամէնը 48 դրան:

Դուման խումբ.— Խումբը կազմուել է այս տարեշրջանում, եւ բաղկացած է եղել ընթացաւարտներից եւ դպրոցական աշակերտներից: Զբաղել է կուսակցական գրականութեամբ եւ խմբական ներքին գործերով: Ունեցել է իր կանոնաւոր ժողովները մինչեւ անցեալ տարուայ Յունիս վերջերը, որից յետոյ կանոնաւոր ժողովներ չի ունեցել, իսկ այժմ կազմալուծուած դրութեան մէջ է գտնուում:

Կուսակցութեան կասսային յանձնել է ընդամէնը 239 ղուան:

Ալեք խումբ.— Խումբը կազմուել է 1915 թ. Փետրուարին: Սկզբներում ունեցել է իր կանոնաւոր նիստերն, ուր զբաղուել է խմբական ներքին գործերով եւ կուսակցական բնոյթ ունեցող հարցերով, իսկ ամառուայ ամիսներին յետոյ ոչ մի նիստ չի ունեցել եւ այժմ կազմալուծուած դրութեան մէջ է:

Մարմնի կասսային յանձնել է ընդամէնը 53 ղուան:

Հրոսակ խումբ.— Խումբը կազմուել է 1914 թ. Դեկտեմբերին, ունեցել է իր կանոնաւոր նիստերը մինչեւ 1915 թ. Օգոստոս ամիսը, որից յետոյ նիստ չի ունեցել եւ կազմալուծուած դրութեան մէջ է գտնուում:

Մարմնի կասսային յանձնել է ընդամէնը 45 ղուան:

Արշալոյս խումբ.— Խումբը ժառանգել ենք նախորդ Մարմնից: Ունեցել է իր կանոնաւոր նիստերը մինչեւ Յունիս, զբաղուել են դասախօսութեամբ, խմբական ներքին հարցերով եւ կուսակցական գրականութեամբ:

Խումբը առել է մի երեկոյթ, որի հաշիւը ցարդ չի յանձնուել Մարմնիս:

Մարմնի կասսային ոչինչ չի յանձնել:

Սերեմճեան խումբ.— Ս[երեմճեան] գիւղացիական խումբը նոյնպէս մենք ժառանգել ենք նախորդ մարմնից: Սկզբներում ունեցել է իր կանոնաւոր նիստերը, բայց տարեշրջանի վերջում արդէն կազմալուծուած դրութեան մէջ է գտնուում: Կազմալուծման գլխաւոր պատճառն եղել է նրա խմբապետի անպարտաճանաչութիւնը, որի հետեւանքով տարածայնութիւն է ծագել խմբի անդամների մէջ եւ այսպիսով ցրուել են: Մարմնի կասսային նոյնպէս ոչինչ չի յանձնել. խմբի անդամները բողոքել են, խմբական դրամները մնացել են խմբապետի մօտ եւ նա չի յանձնել Մարմնին:

Ալեք կանանց խումբ.— Խումբը մենք ժառանգել ենք նախորդ մարմնից: Կոմիտէս նկատի ունենալով Կարմիր խաչի միութեան անհրաժեշտութիւնը տեղումս, յիշեալ խումբը վերածեց Կարմիր խաչի միութեան, որը Կ. Կ. Նրահանգի համաձայն կապուեց Կ. Կ. Ն հետ ըստ Վրէժտանի ներքին կանոնադրութեան:

Խումբը ոչինչ չի յանձնել Մարմնիս:

XIV ՀԱՆԴԷՄՆԵՐ

Սոյն տարեշրջանում մեր խմբերի նախաձեռնութեամբ արուել են սգահանդէսներ եւ երեկոյթներ Դու-

15.- Յաջորդաբար՝ Նիկոլ Դուման, Քրիստափոր Միքայէլեան, Արշալոյս Մեիկեան. վերջինիս իսկական անունն էր Մալինցեան Նորայր (1885-1913), լրագրող, սպաննուած 1913ին:

մանի, Քրիստափորի եւ Արաշալոյսի յիշատակին¹⁵: Բացի այդ արուել են նաեւ մի քանի երեկոյթներ յօգուտ կազմակերպական կառոյցի եւ կամաւորների:

XV ԱՐՏԱՔՍՈՒՄ

Ի նկատի ունենալով որ մեր շրջանի պատանեկան խմբերից մէկի Յ անդամները, չնայելով որ Մարմնիս ներկայացուցիչը վաղօրօք պատկերացրել էր նրանց կամաւորական կեանքի բոլոր դժուարին ու չարքաշ կողմերը, ջերմ ցանկութիւն էին յայտնել կամաւոր գնալու եւ այդ նպատակով էլ արդէն ճանապարհուել էին Ղազուին՝ Կովկաս անցնելու համար, բայց մեզ բոլորովին անյայտ պատճառով վերադարձել էին. Մարմնիս նրանց այդ քայլը նկատելով հակադիսցիպլինական, որոշեց յիշեալ Յ ընկերներին արտաքսել մեր շրջանի խմբերից մինչեւ առաջիկայ պատգամաւորական ժողովը: Արտաքսման մասին մի պաշտօնական նամակով յայտնուեց խմբապետական ժողովին, բոլոր խմբերում յայտարարելու այդ մասին:

Ընկեր 811-ի մասին արդէն խօսել ենք «Մեր վերաբերմունքը դէպի պարլամենտական ընտրութիւնները» մասին մէջ:

XVI ԴԱՏԱԿԱՆ

Ամբողջ տարեշրջանում Մարմնիս ուզել է մասնակցել միայն մի դատական խնդրի, խմբապետ Ս-ի եւ Գ-ի եւ Տի-կին Ա-ի մէջ, բայց որովհետեւ կողմերից մէկը չի համաձայնել դատը յանձնել Մարմնիս, ուստի Մարմնիս էլ յետ է կանգնել դրա մէջ մասնակցութիւն ունենալուց:

XVII ԲԻԻԴՉԷ

Համաձայն Հ.Յ.Դ. VIII Ընդհանուր ժողովի, Շահստանի Կեդրոնական կոմիտէն ունենալու էր որոշ բիւդՉէ, որից շուրջ 500 թուման իր վրայ է վերցրել Շահ կոմիտէն: Մարմնիս նկատի ունենալով որ միայն անդամավճարներից չի կարելի այդ բիւդՉէն լրացնել, որոշեց խմբապետական ժողովի միջոցով ուղարկել բիւդՉէն խմբերին, որպէսզի նրանք միջոցներ մտածեն բիւդՉէն լրացնելու համար: Խմբերում այդ մասին մտքերի փոխանակութիւն ունենալուց յետոյ, խմբապետական ժողովում ձայների մեծամասնութեամբ անցաւ հետեւեալ բանաձեւը.

«Խմբերի բոլոր ձեռնարկներից գոյացած զուտ արդիւնքը յանձնուելու է Շահ կոմիտէին, որպէսզի բիւդՉէն լրացնելուց յետոյ մնացեալը յատկացնի կամաւորական շարժման»:

Մարմնիս էլ իր մի նիստում ընդունեց խմբապետական ժողովի այդ բանաձեւը:

Պատճեններու մատեան N° 640-1
Թիւ 30 Գամակ

6.- ԹԵՂՐԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Շահասան, Ապրիլ 6, 1917

Սիրելի ընկերներ!

Ստացանք N° 32 Մարտ 32 թուակիր ձեր նամակը:

Անհուն ցնծութեամբ մեր բուռն շնորհաւորութիւններն ենք յայտնում բռնակալութեան սիմվոլ ցարիզմի տապալման առթիւ:

Շնորհաւորում ենք ձեզ Ազատ կարգերը վայելելու եւ նոր բեթիմի ամրապնդման մէջ ունեցած ձեր եւ մեր կուսակցութեան մարմինների ջերմ մասնակցութեան համար:

Հաւատացած ենք որ նոր Ռուսիայից ազատութեան ուժեղ հոսանքը պիտի տարածուի եւ ընդգրկի հարեւան բոլոր երկրները եւ իր ուղիի մէջ դնի հարեւան ազգերն ու ճնշուած ժողովուրդներին:

Գիտակցում ենք, որ Ազատ Ռուսիայից շատ սպասելիքներ կան եւ մասնաւորապէս մեր ժողովուրդի համար որքան նշանակութիւն ունին այդ սպասելիքները:

Ինչպէս երեւի բոլոր հայկական շրջաններում, նոյնը մեզ մօտ՝ բուռն համակրութիւն է տիրում դէպի նոր Ռուսիան: Մենք աշխատում ենք այդ վերաբերմունքն աւելի գործնական հողի վրայ դնել, որքան մենք հնարաւորութիւն կ'ունենանք հեռուից հեռու աջակցել նոր կարգերի խորանալուն եւ նրանց ազդեցութեան տարածմանը սահմանից այս կողմ:

Այդ առթիւ մենք աւելի ընդարձակ կերպով արտայայտուել ենք մեր առաջին թռուցիկով, որը ժամանակին արդէն ուղարկուել է ձեզ Հորիզոնի միջոցով: Մենք, միեւնոյն ժամանակ մի շնորհաւորական հեռագիր ենք տուել յանձին պ. Միլիոկովի նոր կառավարութեան, յոյս յայտնելով, որ Ազատ Ռուսաստանը հայկական հարցը կը վճռի մեր արիւնքամ ազգի դարաւոր իղձերի համաձայն:

Իբրեւ հայկական իրականութեան մի մասնիկը, մեր շրջանումն էլ կազմակերպութիւնը խիստ թուլացած վիճակի մէջ էր: Դեռ նախ քան ռուսական յեղաշրջումը, մենք վերակազմութեան աշխատանքների էինք ձեռնարկել ինչպէս այստեղ Թեհրանում, նոյնպէս եւ Գիլան, Նոր Զուղա եւ այլն: Ներկայումս, ի հարկէ, աւելի մեծ թափով ենք աշխատում եւ յոյս ունենք, որ շուտով

մի կուռ կազմակերպութիւն կ'ունենանք:

Միջոցներ ենք ձեռնարկել աւելի մօտիկ եւ սերտ յարաբերութիւններ հաստատելու մեր շրջանում գտնուող ռուսական բանակի հայ զինուորների հետ, իրազեկ պահել նրանց Ռուսաստանի եւ Հայաստանի դէպքերին: Ափսոս միայն որ այդ բանաւոր կերպով անել չենք կարող ոյժերի սակաւութեան պատճառով: Որոշել ենք առայժմ բաւականանալ գրաւորով:

Այդ եւ ուրիշ ուղղութեամբ եղած աշխատանքների, ինչպէս եւ մեր կուսակց. շրջանների տեղեկութիւնները հաղորդելու համար կուսակց. օրգանին — Հորիզոն թէ ուրիշ — կազմակերպուած է: Միաժամանակ մենք էլ աւելի յաճախ կը գրենք խնդրելով որ նոյն կերպ վարէք եւ դուք, ի նկատի ունենալով, որ այստեղ ուղղակի ծարաւի են ժողովուրդի ապագայ վիճակի վերաբերմամբ նոր լուրերի:

Ռայոնական ժողովի համար հեռագիր չստացանք: Ասենք գուցէ եւ դժուար էլ լինէր մեր ներկայացուցիչն ուղարկել այդքան կարճ ժամանակում: Խնդրում ենք Ռայ. ժողովի որոշումները կարելիին չափ շուտ մեզ հասցնել:

Չենք ստացել նաեւ ձեր շրջաբերականները: Զանազան թիւրիմացութիւններից զերծ մնալու համար, խնդրում ենք լուրջ ուշադրութիւն դարձնէք, որ ամէն տեսակի առաքումներ, թղթակցութիւններ, հեռագրական յարաբերութիւն եւ այլն, լինի միմիայն մեր միակ ապահով հասցէով, որը ներփակում ենք: Յաճախ է պատահել որ Կովկասի մեր մարմինները իրենց յարաբերութիւնները մեզ հետ են պահում այնպիսիների միջոցով, որոնք երբեմնի ընկերներ լինելով, ներկայումս ամենակատարի հակադաշնակցականներ են եւ մեր ու ձեր հակառակորդները:

Գալով Արշալոյսին¹⁶ սպանող Մաթէոսի դիմումներին, այսքանը կ'ասենք, որ մարմինս, մի քանի նկատումներով որոշել է, որ նա ժամանակաւորապէս Թեհրանից հեռու մնայ: Այդ որոշումն է դեռ իր ոյժի մէջ է: Ի նկատի պէտք է ունենալ, որ նրա վերադարձը կարող է անհաճոյ բարդութիւններ առաջացնել, որոնցից խուսափելն, մանաւանդ ներկայումս, խիստ անհրաժեշտ է:

Ընկերական ջերմ բարեկներով
ՇԱՀՍԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

16.- Տես նախորդ՝ թիւ 15 ծանօթագրութիւնը:

Փաստ. 597-65

7.- ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ. ՍՈՒԼԹԱՆԱԲԱԴԻ ՄԱՐՄՆԻ

Սուրբանարաղ, 28 Օգոստոս 1917

Համաձայն թեհրանից ստացած Կ. կոմիտէի Յունիս 14-ի նամակի, տեղիս մարմինը խորհրդակցութեան նիւթ ունենալով ռազմական ժողովի օրակարգի հարցերը, մտքերի փոխանակութիւնից յետոյ, հետեւեալ կարծիքներն են երեւան գալիս մեծամասնութեան կողմից:

Օրակարգ Ռազմական ժողովի

1) Զեկուցումներ եւ հաշուետուութիւն

Մարմինս իւր գոյութեան այս կարճ ժամանակամիջոցում աշխատել է ընդլայնացնել իր շրջանը, ընկերների միջոցով մշտական յարաբերութիւններ է հաստատել գիւղերի հետ, որի հետեւանքը եղել է այն որ Աղնայում կազմուել է 30 հոգուց եւ Փալաւայում 18 հոգուց բաղկացած գիւղացիական միութիւններ որոնց մասին ժամանակին տեղեկացուել է Շահաստանին. բացի այդ ի նկատի ունենալով որ գիւղերում անհրաժեշտ է պրոպագանդան եւ որ մարմինս հնարաւորութիւն չունի յաճախակի գիւղերը անցնել, ուստի մտածեց գործի յառաջդիմութեան համար բացել Աղնայի դպրոցը, ուր դասաւանդի մեր հրաւիրած ուսուցիչը, եւ ստանալով նոյն գիւղի հոգաբարձութիւնից համաձայնութիւն պատրաստուել է ուսուցիչ հրաւիրել, միեւնոյն ժամանակ աշխատելով յաջողեցնել միւս գիւղերի համար էլ եթէ հնարաւոր լինի:

Հաշուետուութեան մասին, քանի որ մարմինս նոր է կազմուել, առ այժմ հաշիւ տալու ոչինչ չի կարող ունենալ:

2) Մոմենտի գնահատումը

ա) Ռուսաստան, բ) Կովկաս, գ) Պարսկաստան:

ա) Ռուսաստան

Որովհետեւ բաւական հեռու ենք գտնուում Ռուսաստանից եւ լաւ ծանօթ չենք այնտեղի ներքին իրադարձութիւններին, ուստի շատ որոշակի բան չենք կարող ասել, բայց հետեւելով Հ.Յ.Դ. ներկայի գործելակերպին, պէտք է ջերմ աջակցել ռուսական մեծ յեղափոխութեան ամրապնդման եւ ոյժ տալ այժմեան ժամա-

նակաւոր կառավարութեան դիկտատորային գործունէութեան, սակայն պիտի զգուշանալ որ այդ դիկտատորան ապագայում չծնի Ֆրանսական Բոնապարտներ:

բ) Կովկաս

Կովկասում պէտք է հանդէս գալ որքան հնարաւոր է կուռ կազմակերպութեամբ, համերաշխ գործել միւս մանր ազգութիւնների հետ, ստեղծել մի կովկասեան միջազգային բիւրօ, միջազգային վէճեր եւ անխորժութիւնները հարթելու, որպէսզի չստեղծուի 1905 թուականների ողբալի դրութիւնը:

գ) Պարսկաստան

Հետեւել պարսից կառավարութեան քաղաքականութեան, աշխատել հակակրական ցոյցեր երեւան չհանել, չհզոք հանդիսանալ մինչ այն ըստէն երբ Պարսկաստանը ակտիւ եւ պաշտօնապէս չի անցել հակառաջնակից պետութեանց կողմը եւ չի հետեւել նրանց քաղաքականութեան հայկական խնդրում:

3) Մեր վերաբերմունքը դէպի մէջլիսը

Աշխատել ձայնի առաւելութիւն ստանալ. չյաջողւած դէպքում բաւարարուել մեզ տրուած յոյսերով. մասնակցել ընտրութիւններին եթէ այդ տեղի կ'ունենայ ըստ սահմանադրական օրէնքի, հակառակ դէպքում եթէ ընտրութիւնները կատարուեն ըստ Շարիաթի, աշխատել բլոկ կազմել օտար կուսակցութիւնների հետ, բողոքել այդպիսի ընտրութեան դէմ, այլապէս չմասնակցել:

4) Մեր քաղ. յարաբերութիւնները

դէպի այլ կուսակցութիւններ

ա) Դէպի հայ կուսակցութիւնը¹⁷. բ) Պարսից կուսակցութիւնները եւ մեր քաղ. յարաբերութիւնները

ա) Դէպի հայ կուսակցութիւնը

Պէտք է համերաշխ կապ պահպանել հայ կուսակցութեան հետ, համագործակցել նրանց հետ այնքան երբ չի նկատուել հակառաջնակցական պրոպագանդ. հակառակ դէպքում բլոկ կազմել ապակեղրոն ֆեդերատիւ կուսակցութիւնների հետ:

բ) Պարսից կուսակցութիւնները.— պարսից դեմոկ-

17.- Ակնարկութիւնը Ս. Դ. Հնչակեան կուսակցութեանն է:

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

րատ եւ այլ կուսակցութիւնների հետ համագործել մինչ այն չափով երբ չի վնասել մեր քաղաքական եւ տնտեսական պահանջներին եւ բացի այդ երբ մեր եւ նրանց մէջ ծրագրային հակադիր կէտեր չեն յառաջանալ:

5) Մեր յարաբերութիւնները Պարսկաստանի ուսական գործադիր կոմիտէներին հետ

Ծանօթ չլինելով այդ կոմիտէների ծրագրի եւ գործելակերպին, միայն կարող ենք ասել որ եթէ մեր համերաշխ յարաբերութիւնները կարող են մի որեւէ կերպով օգտակար լինել, ցանկալի է այդ ուղղութեամբ յարաբերութիւն պահպանել:

6) Մեր դերը Հայաստանի վերակազմութեան գործում

Աշխատել եւրոպական դաշնակից պետութիւնների երկրներում պրոպագանդայի միջոցաւ եւրոպական ժողովրդներին ծանօթացնել, մեր ազգի, անցեալի, մեր արդար դատի եւ մեր քաղաքական ձգտումների վերաբերմամբ: Զեռք բերել այդ պետութիւնների եւ ժողովուրդների բարեացակամ վերաբերմունքը ապագայում մեր նպատակները իրագործելու խնդրին օգտակէտ լինելու համար:

7) Մեր վերաբերմունքը դէպի հասարակական կուլտուրական գործերը

Մասնակցել անխտիր հասարակական կուլտուրական գործերին, աշխատել նման գործերի դեկր անցկացնել կուսակցականների ձեռքում, սակայն դպրոցի վերաբերմամբ մասնակցել այն չափով որ կուսակցական պայքարի պատճառով դպրոցը փակման վտանգին չենթարկուի եւ հասարակութիւնն ու մատաղ սերունդը չտուժի:

8) Գրաւոր եւ բանաւոր պրոպագանդա
ա) կիսապաշտօնական օրգանի հարցը,
բ) պրոպագանդիստներ ունենալու հարցը:

ա) կիսապաշտօնական օրգանի հարցը.— Անհրաժեշտ է ունենալ թեհրանում մի կիսապաշտօնական օրգան, ժողովրդի մէջ վառ պահելու յեղափոխութեան ոգին, մանաւանդ այն շրջանների համար, որոնք կարիք ունեն

պրոպագանդայի եւ կուսակցական գրադարանների:

բ) Պրոպագանդիստներ ունենալու խնդիրը.— Անհրաժեշտ է ունենալ պրոպագանդիստներ բոլոր շրջաններում, մանաւանդ մեր շրջանը, ուր գոյութիւն ունին բազմաթիւ հայ գիւղեր (մօտաւորապէս 2000 տուն), որոնք կրթական հասարակութիւնից զուրկ լինելով կանգնած են մտաւոր եւ դեկապար դէմքերի — պրոպագանդիստներ ունենալու կարիքի հանդէպ:

9) Մեր կազմակերպութեան ձեւը
ա) Շրջանների բաժանում
բ) Կոմիտէներ
գ) Ենթակոմիտէներ
դ) Խմբեր
ե) Խմբապետական ժողով
զ) Գիւղացիական

եւ արհեստակցական միութիւններ

է) Կարմիր խաչի միութիւն

Մինչ այժմ եղած բաժանումների ծանօթ չլինելով, միայն կարող ենք ասել որ կոմիտէներ, ենթակոմիտէներ, խմբեր, խմբապետական ժողով անհրաժեշտ է ունենալ ինչպէս նաեւ գիւղացիական միութիւններ, բայց քանի որ Պարսկաստանի արհեստաւորները մի մեծ թիւ չեն կազմում, ուստի արհեստակցական միութիւնների գոյութիւնը այնքան էլ օգտակար չի կարող համարուել: Յանկալի է անպայման ունենալ Կարմիր խաչի միութիւն:

10) Նոր առաջարկներ

Անհրաժեշտ գտնելով այս շրջանի կազմակերպութեան կարեւորութիւնը, մարմինն առաջարկում է եթէ հնարաւոր է գէթ մի ժամանակաւոր պրոպագանդիստ ուղարկել այդ նպատակի իրագործման:

11) Ընտրութիւններու հարցը մեզ համար մութ լինելով, այսինքն չըմբռնելով թէ ինչ ընտրութիւնների մասին է խօսքը, ուստի ոչինչ չենք կարող ասել:

Ի դիմաց Հ.Յ.Դ. Սուլթանաբազի մարմնի՝

Նախագահ՝ Ս. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Քարտուղար՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՅ

Փաստ. 598-3

8.- ԳԵՏԱՓ-ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵՆԹԱԿՈՍԻՏԷՆ Հ.Յ.Դ. ՇԱՀՍԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

Գետափի ենթակոմիտ, 1 Յունուարի 1918

Ընկերներ,

Ստանալով Շահստանի Կ. կոմիտէի 28 Նոյեմբեր թուակիր նամակը, հրաւիրուեց տեղիս կուսակցական ընկերներից խորհրդակցական ժողով, ուր քննութեան առնուեց նամակի մէջ յիշուած տեղիս կազմակերպական գործերի անմխիթար դրուածքները եւ Շրջանային ժողովի գրաւման օրակարգը:

Ինչպէս ուրիշ շատ անգամներ, նոյնպէս էլ այս անգամ, ժողովն երկար կանգ առաւ տեղիս կուսակցական աննախանձելի վիճակի վրայ: Գործի անյաջողութեան գլխաւոր արգելառիթմերը կայանում են հետեւեալ հանգամանքներում.—

- 1.- Մտաւոր ուժերի սակաւութիւնը.
- 2.- Պատրաստուած պրոպագանդիստների բացակայութիւնը.
- 3.- Շրջանիս մեկուսացած դրուածքները կենտրոնից եւ ուրիշ հայկական վայրերից, որի հետեւանքն է տեղական կեանքի բոլորովին լծացած դրուածքները, զուրկ որեւէ թարմ հոսանքից:
- 4.- Երիտասարդութեան գրեթէ ի սպառ բացակայութիւնը, որը հետեւանք է մանաւանդ վերջին մի քանի տարիների արտակարգ գաղթի.
- 5.- Տեղական առանձնայատուկ կղերա-վանական միջնորդութ. կղերը իր ձեռին է կեդրոնացրել Ջուղայի բոլոր հասարակական-կուլտուրական գործերը. նպաստաբաշխ ընկերութիւնների միջոցով իր հետ է կապել ու կաշկանդել տնտեսական շահերով՝ Ջուղայի գրեթէ կէսից աւելի չքաւոր դասակարգը իր տուած հնդկահայերի կտակած զանազան նպաստներով. իր այսպիսի արտօնեալ վիճակի շնորհիւ նա իր ազդեցութեան տակ գտնուող հաստատութիւնները ծառայեցնում է իր նպատակներին, դարձնելով մանաւանդ դպրոցները տիրացուական հաստատութիւններ. բնական է որ այս ուղղութեամբ դաստիարակուած անհատներից կուսակցական սպասելիքներ չպէտք է ունենալ:

Գտնուելով հանդերձ այսպիսի աննպաստ հանգամանքների մէջ, այնուամենայնիւ պէտք է յիշել որ տեղիս կազմակերպութիւնը այնքան էլ իներտ¹⁸ վիճակի մէջ չի եղել. եւ վերջին վտանգաւոր տարիներում ուժերը ներածին չափ կազմակերպել է տեղական ինքնապաշտպանութեան գործը:

Կարմիր խաչի միութիւնը ամենայն եռանդով գործել է եւ կատարել դրական աշխատանք. խտացրել է իր շարքերը նոր անդամուհիներով եւ ունեցել է կանոնաւոր ժողովներ, տարածելով իրենց շրջանում կուսակցական գրականութեան ընթերցանութիւնը: Նա կազմակերպել է հանդէսներ եւ սարքել վիճակախաղեր, որոնցից գոյացած արդիւնքը փոխադրել է թէ կովկաս գանազան նպատակներով եւ թէ որոշ չափով գործադրել է տեղական կարիքներին:

Ի դէպ, աւելորդ չենք համարում յայտնելու որ Կարմիր խաչի կենտրոնական վարչութիւնը ոչ մի կապ չի պահպանել տեղիս միութեան հետ:

Բաւական յաջող գործունէութիւն է ունեցել կուսակցական «Երկունք» գրադարանը, որի վարչութիւնը նոյն եռանդով տարածել է կուսակցական գրականութեան ընթերցանութիւնը Ջուղայում եւ նրա թափած ջանքերի շնորհիւ այժմ գրադարանն ունի 600-ից աւելի յեղափոխական, հասարակագիտական եւ այլ ուղղութեամբ գրքեր:

Շրջանային ժողովի օրակարգը.— Ժողովը քննութեան ենթարկեց Շրջանային ժողովի օրակարգը եւ որոշ կէտեր, ինչպէս Ռուսաստանի մոմենտի գնահատումը, մեր յարաբերութիւնները Պարսկաստանի ուսական գործադիր կոմիտէների հետ, որոնց մասին շրջանս չունենալով անմիջական յարաբերութիւն եւ մոմենտի վերաբերեալ ստոյգ տեղեկութիւններ, գլացաւ տալ իր գնահատումները, թողնելով այն աւելի տեղեկ մարմիններին. իսկ ինչ վերաբերում է կովկասին, ժողովը համամիտ գտնուելով կովկասեան ռայոնական ժողովի որոշումներին, կարեւոր է համարում շեշտել հետեւեալ հանգամանքները.—

- 1.- Գործել համերաշխ սոցիալիստական կուսակցութիւնների հետ եւ միացեալ ուժերով ամէն կերպ պահպանել ռամկավար կարգերն երկրում.
- 2.- Ինչքան կարելի է խոյս տալ ազգամիջեան ընդհարումներից եւ հաստատուն հիմքերի վրայ դնել ազգային փոխադարձ բարեկամական յարաբերութիւնները, որոնք իրենց հերթին անդրադառնալու են պարսկահայութեան վիճակի վրայ:

Պարսկաստանի մոմենտի գնահատումը.— Չնայելով

18.- Անկեմդան, անգործօն:

որ ներկայ պատերազմի ընթացքում Պարսկաստանի քաղաքականությունը յաճախ կրել է բոլորովին աւանտիւրիստական բնույթ եւ գրեթէ շարունակ խաղալիկ դարձել մի կամ միւս օտար պետութեան ձեռքին, եւ միեւնոյն ժամանակ անբարեացակամ վերաբերմունք ունեցել դէպի հպատակ ազգութիւններն ընդհանրապէս իսկ դէպի հայերը մասնաւորապէս, բայց եւ այնպէս ի նկատի ունենալով որ Ռուսաստանի հին ռեժիմի տապալումով մեծ չափով վերանում է օտար միջամտութեան խնդիրը, եւ հայատեաց տրամադրութիւնը հետագահետեւ տեղի տալով ստեղծուում է աւելի բարեացակամ վերաբերմունք, հետեւաբար ցանկալի է որ հնարաւորութեան սահմաններում Դաշնակցութիւնը, պարսիկ առաջադէմ տարրերի հետ միասին, ամէն կերպ աշխատէ որ Պարսկաստանը վերստանայ իր անկախութիւնը եւ երկրում հաստատուեն ազատ սահմանադրական կարգեր:

Մեր վերաբերմունքը դէպի Մէջլիսը.— Թէեւ Մէջլիսը զանազան աննպաստ հանգամանքների պատճառով ցարդ չյաջողեցաւ արդարացնել իր վրայ դրուած յոյսերը, բայց եւ այնպէս ի նկատի ունենալով որ ներկայ բարեպատեհ հանգամանքներում Պարսկաստանը հնարաւորութիւն ունի աւելի ազատօրէն տնօրինելու իր բախտը, ուստի, պէտք է երկրի առաջադէմ տարրերի հետ միացած աշխատել փութացնել Մէջլիսի վերաբացումը:

Նաեւ ի նկատի ունենալով որ Դաշնակցութեան Մէջլիսի ընտրութիւններին ձեռնպահ մնալն կարող է զանազան թիւրիմացութիւնների առիթ տալ եւ առաջ բերել թշնամական վերաբերմունք դէպի հայերը, հետեւաբար ցանկալի է համարում մասնակցել ընտրութիւններին եւ միեւնոյն ժամանակ շարունակել երկու պատգամաւոր ունենալու պահանջը:

Մեր փոխարարներութիւնները
դէպի պարսիկ կուսակցութիւնները.—

Թէեւ մինչեւ այժմ, մանաւանդ ներկայ պատերազմի ընթացքում, պարսիկ զանազան կուսակցութիւններ կրել են բոլորովին նեղ ազգայնական բնույթ եւ ամէն կերպ աշխատել են չհզոքացնել հայերին պետական գործերից, բայց եւ այնպէս ի նկատի ունենալով որ այդ կուսակցութիւնները այժմ աւելի բարեացակամ վերաբերմունք են ցոյց տալիս եւ որ Դ[աշնակցութեան] մեկուսացած մնալը տեղիք է տալիս թիւր հասկացողութեան պարսիկների մէջ, հետեւաբար իբրեւ յեղափոխական մի կուսակցութիւն, պէտք է յարաբերութեան մէջ մտնել իսկական առաջադէմ եւ երկրի շահերին նուիրուած կուսակցութիւնների հետ:

Հայ կուսակցութիւնները.— Գալով հայ կուսակցութիւններին, ժողովն ի նկատի ունենալով հայ ազգի բացառիկ դրութիւնը եւ մի շարք հրատապ ազգային բնոյ-

թի հարցերի լուծումը, աշխատել հնարաւորութեան սահմաններում համերաշխութեամբ գործել դրանց հետ:

Հայաստանի վերակազմութիւնը.— Ի նկատի ունենալով որ ներկայ ռուսական ընդհանուր զինադադարի եւ ապա կնքուելիք պայմաններից է կախուած ապագայ Թրքահայաստանի բախտը, եւ որի վճռման մէջ մեծ կշիռ ունի նաեւ Կովկասի Կոմիսարիատի ձայնը, հետեւաբար մեծ պարտք է ընկնում Դ[աշնակցութեան] վրայ, յանձին Կոմիսարիատի մէջ գտնուող իր ներկայացուցիչ կոմիսարների, որ ամէն կերպ աշխատեն իրականացնել թուրքահայերի, հետեւաբար եւ ընդհանուր հայութեան իղձերը: Իսկ մինչեւ որ ապահով եւ տանելի վիճակ չստեղծուի Երկրում եւ չորոշուի նրա քաղաքական բախտը, չխրախուսել ներգաղթը դէպի Երկիր: Երկրի ներսում ուժեղացնել տեղական միլիցիան եւ ընդհանրապէս զարկ տալ հայ ազգային գնդերի ուժեղացմանը:

Մեր վերաբերմունքը
դէպի հասարակական-կուլտուրական գործերը.—

Ի նկատի ունենալով որ մեր հասարակական-կուլտուրական գործերը պէտք է ժողովրդականացնել, իսկ այդ հնարաւոր չէ քանի որ դրանց վարիչները հանդիսանում են յետադէմ հոսանքները, ուստի անհրաժեշտ է որ կուսակցութիւնը անմիջական մասնակցութիւն ունենայ մեր բոլոր հասարակական-կուլտուրական գործերում:

Կիսապաշտօնական օրգան.— Շրջանս անհրաժեշտ է գտնում որ Շահաստանն էլ ունենայ իր օրգանը, որ մեծ զարկ է տալու կուսակցական պրոպագանդայի գործին եւ դիւրութիւն կ'ընձեռնէ գաւառներին յայտնելու իրենց կարծիքները, որոնք տեղ չեն գտնում կովկասեան թերթերում:

Անհրաժեշտ ենք գտնում որ թերթն ինչքան կարելի է լայն տեղ տայ գաւառներին, դառնալով Պարսկաստանի աշխատաւորութեան բերանը: Շրջանս պատրաստ է աջակցել բարոյապէս եւ նիւթապէս:

Պրոպագանդիստները.— Ինչպէս արդէն վերը յիշել ենք, շրջանս խիստ կարիքն ունի պատրաստուած մի մշտական պրոպագանդիստի, բայց եւ այնպէս երեւի այդ հնարաւոր չէ նիւթական միջոցների պատճառով, անհրաժեշտ է որ գոնէ տարուայ մէջ մի քանի ամիս շրջանս ուղարկուի մի կամ մի քանի պատրաստուած պրոպագանդիստներ, թէ հրապարակային դասախոսութիւններ տալու եւ թէ մեր ընկերներին պատրաստելու:

Ընկերական բարեկենդրով
Ի դիմաց Գետափի ենթակոմիտէի
ՎԱՀԷ

Փաստ. 598-28

9.- ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԳԻԼԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
1918 թ. Փետրուար 28-ից – Մարտ 4-ը

Ա. ՆԻՍՏ

Օրակարգ՝

- 1) Ժողովի կազմը
- 2) » բացումը
- 3) Վերստուգիչ յանձնախումբի ընտրութիւն
- 4) Պորթ-Արտուր ենթակոմիտէի¹⁹ գործունէութեան տեղեկագիրը

1918 թիւ Փետրուար 28-ին էնգէլիում տեղի ունեցաւ Գիլանի վեցերորդ շրջանային ժողովի Ա. նիստը, ուր ներկայ էին Շահատանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ՝ ընկ. Յովսէփը, Ռ[աշտ]ի կոմիտէի կողմից ընկ. Խաչատուրը, նոյն վայրի խմբերի կողմից ուղարկուած չորս ներկայացուցիչներից երեք հոգի՝ Անդրէաս, Համբարձում, Յովհաննէս, Պորթ-Արտուրի ենթակոմիտէի կողմից իբրեւ ներկայացուցիչ ընկեր Գրիգորը, էնգէլում խմբերի կողմից չորս ներկայացուցիչներ՝ ընկ. Կոստի, Զումալու, Յովսէփ եւ Սիմէոն: Շրջանային ժողովի հրահանգով խորհրդակցական ներկայ էին նաեւ ընկերներ տիկին Նանէ, Խաչատուր, Գէորգ, Մուսիկ եւ Բագրատ էնգէլուց, եւ Մկրտիչ, Ալեքսան եւ Խէչօ (Ռաշտից):

Կենտրոնականի ներկայացուցիչը բացելով ժողովը համառօտ կերպով ընդգծեց ներկայ քաղաքական դրութիւնն առհասարակ եւ հայ ժողովրդի տագնապալից կացութիւնը ներկայ քաղաքական խոշոր ակտերի ու վայրուկերումների դիմաց, եւ ընկերների ուշադրութիւնը հրահանգեց Գիլանի ներկայ առանձնայատուկ քաղաքական պայմանների վրայ, որոնք ճակատագրական նշանակութիւն կարող են ունենալ տեղական հայ ազգաբնակչութեան նկատմամբ, ուստի եւ պահանջուում է ընկերների միահամուռ, լուրջ եւ լայն գործունէութեան կարիքը: յուսով եմ, աւելցուց ընկերը, որ մի կողմ թողնելով մանր-մունր ներկայ հաշիւներն ու վէճերը, ընկերները ի նկատի ունենալով մոմենտի լրջութիւնը, կարող կը լինեն իրանց գործնական եւ ճիշդ վճիռները կայացնել կուսակցական գործերի եւ ներկայ մոմենտի վերաբերմամբ:

Այնուհետեւ տեղի ունեցաւ դիւանի ընտրութիւն. ընտրուեցին ընկեր Յովսէփ (Կենտրոնականի ներկայա-

ցուցիչ) նախագահ եւ երկու քարտուղար՝ Անդրէաս եւ Յովհաննէս:

Ապա ժողովը անցաւ իր հերթական հարցերին, նախագահը կարգաց Շրջանային ժողովի օրակարգը:

- 1) Տեղեկագիր եւ հաշուետւութիւն մարմինների
- 2) Մոմենտի գնահատում
- 3) Ինքնապաշտպանութեան հարցը
- 4) Շրջանների կազմակերպումը
- 5) Պրոպագանդա
(բանաւոր-գրաւոր, շրջիկ պրոպագանդիստ)
- 6) Նոր առաջարկներ

Նախքան օրակարգի հարցերի քննութեան անցնելը, առաջարկեց ընտրել մի դատական եւ մի վերստուգիչ յանձնախումբ. սակայն առաջինի ընտրութիւնը համարեց աննպատակ, քանի որ մարմինները դեռեւս չեն ներկայացրել իրանց տեղեկագիրն ու հաշիւները, որոնց հետ անշուշտ կապ պիտի ունենան կազմակերպական գործերը: Իսկ վերստուգիչ մարմնի կամ յանձնախումբի ընտրութիւնը ժողովը նպատակայարմար դատեց, որովհետեւ նրան էր յանձնելու քննել կոմիտէի եւ ենթակոմիտէի գիւնական եւ դրամական հաշիւները եւ իր հերթին զեկուցում ժողովին, մանաւանդ որ յիշեալ քննութիւնն ու ստուգումը այսպիսի մի բազմամարդ ժողովում նպատակայարմար չնկատուեց եւ երկար ժամանակ կը խլէր ժողովից: Յիշեալ գործը յանձնարարեց կատարել շրջանային ժողովի դիւանը աւելացնելով նաեւ ընկ. Յ. Ղազարեանին:

Այնուհետեւ Պորթ-Արտուր ենթակոմիտէի ներկայացուցիչը կարգաց մարմնի երկամեայ տեղեկագիրը, մատնանշելով այն ծանր ու դժուարին պայմանները որոնց մէջ ընտրուեց Պորթ-Արտուր ենթակոմիտէն եւ այն աշխատանքները որ նա կատարել է իր գործունէութեան ընթացքում:

Տեղեկագրի ընթերցումից պարզուեց, որ դասախօսներ չլինելու պատճառով եւ այլ հանգամանքի շնորհիւ խմբերը չեն ունեցել պարբերական դասախօսութիւններ ու հաւաքումներ, սակայն ամսավճարները կանոնաւոր հաւաքուեւ են եւ վերջերս կազմակերպուել են

19.- Պորտ-Արտուր՝ ծածկանուն Էնգելի քաղաքի:

ինքնապաշտպանութեան երկու հատ թուղթիկ մարտական [խումբ] միայն այդ առթիւ առանց կոմիտէի գիտութեան եղել է պահանջուած տոկոսից աւելի ծախսեր ժողովը նկատեց որ նման շեղումներ չպէտք է լինեն, մանաւանդ որ կոմիտէն պարտաւոր է հարկ եղած դէպքում ընդառաջ զնալ կարիք ունեցող մարմինների ցանկութեան:

Շրջանային ժողովը լսելով տեղեկագրի ընթերցումն ու նրա շուրջ եղած լրացումներն ու բացատրութիւնները, գտաւ որ չնայելով այն աննպաստ պայմաններին որոնց մէջ եղել է ենթակոմիտէն, այնուամենայնիւ, տրուած տեղեկագրի համաձայն, նրա գործունէութիւնը միանգամայն բաւարար եւ գոհացուցիչ է:

Հետեւեալ ժողովը Հինգշաբթի, երեկոյեան ժամը 5-ին, նոյն տեղում:

Նախագահ՝ ՅՈՎՍԷՓ
Քարտուղար՝ ՅՈՎ. ՄՈՎՍԷՍԵԱՆ

Բնագրի հետ ճիշտ է.
Նախագահ Գիլան կոմիտէի՝ ՀԱՅ-ՄԱՐԴ

Բ. ՆԻՍՏ

Օրակարգ՝

- 1) Վերստուգիչ յանձնախմբի գեկուցումը
- 2) Շահաստանի Կ. կոմիտէի նամակը Գիլան կոմիտէին
- 3) Գիլան կոմիտէի տեղեկագիրը

1918 Մարտ 1-ին տեղի ունեցաւ շրջանային ժողովի երկրորդ նիստ. ներկայ էին առաջին նիստին մասնակցող բոլոր ընկերները եւ անցեալ անգամաւայ բացակայողները՝ ընկ. Արմենակ եւ ընկ. Հայկ:

Ընկեր նախագահը բացելով ժողովը բացատրեց, որ վերստուգիչ յանձնախումբը ստուգելով Պորտ-Արտուր ենթակոմիտէի Զինական-դրամական հաշիւները գտաւ ճիշտ ու միանգամայն համապատասխան դոկումենտներին: Ապա կարգաց Կենտրոնական կոմիտէի նամակը ուղղուած Գիլան կոմիտէին, որով յայտնուած է որ ընկեր Յովսէփը նշանակուած է իւր կողմից որպէս ներկայացուցիչ շրջանային ժողովին մասնակցելու համար:

Յետոյ ընկ. նախագահը յայտնեց, որ ինքը որպէս Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ, որոշ բացատրութիւններ պիտի տայ Կենտրոնականի եւ Գիլան կոմիտէի յարաբերութիւնների մասին եւ որ կան որոշ թիւրիմացութիւններ, որ նախ քան նրանց բացատրութիւնն ու պարզաբանումն ինքը չէ կարող նախագահել, երբ քննուած է Գիլան կոմիտէի գործունէութիւնն եւ նրա հետ կապուած մի քանի թիւրիմացութիւններ. ուստի առաջարկուած է այդ առթիւ մի ուրիշ նախագահ

ընտրել. ձայների մեծամասնութեամբ ընտրուած է ընկ. Գրիգորը. ապա Գիլան կոմիտէի ներկայացուցիչ ընկեր Հայկը կարգուած է տեղեկագիրը. ժողովը լսելով յիշեալի ընթերցումը, նպատակայարմար դատեց կոմիտէի գործունէութիւնը զատել այն մի շարք թիւրիմացութեանց նկարագրութիւնից, որոնք տեղ էին բռնել տեղեկագրի մէջ եւ առանձին-առանձին քննութեան առնել. այդպիսով նախ քննեց կոմիտէի գործունէութիւնը. սրա շուրջը եղած թեր եւ դէմ կարծիքներից յետոյ ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեան եւ տուեց իր գնահատականը. այն է՝ շրջանային ժողովը լսելով Գիլան կոմիտէի տեղեկագիրն ու ներկայացուցչի բացատրութիւնները, գտնուած է որ կոմիտէն չէ եղել իր կոչման բարձրութեան վրայ, որ նա եղել է անփոյթ, անգործունեայ եւ կարողութիւն չի ունեցել հականը երկրորդականից տարբերելու, հետեւապէս նրա գործունէութիւնը անմխիթար եւ միանգամայն անբաւարար է:

Տեղեկագրի մէջ եղած թիւրիմացութիւնների խնդիրը թողնուեց չորրորդ նիստին քննելու, ներկայացուցչի յարգելի պատճառով երրորդ ժողովից բացակայելու համար. միայն առաջարկուեց այդ առթիւ եղած փաստաթղթերն ու նամակները կարգաւորուեն եւ միւս ժողովին առաջ բերուեն, որ դիւրին լինի խնդիրը պարզորոշ քննելու եւ վճիռ տալու:

Հետեւեալ ժողովը ուրբաթ առաւօտեան ժամը 9-ին:

Նախագահ՝ Գ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ
Քարտուղար՝ ՅՈՎ. ՄՈՎՍԷՍԵԱՆ

Բնագրի հետ ճիշտ է.
Նախագահ Գիլան կոմիտէի՝ ՀԱՅ-ՄԱՐԴ²⁰

Գ. ՆԻՍՏ

1918 թիւ Մարտ 2-ին

Օրակարգ՝

- 1) Մոմենտի գնահատումը
- 2) Մեր վերաբերմունքը դէպի Գիլանի շարժումները:

Ուշադրութեան առնելով Գիլանում տեղի ունեցող իրադարձութիւնները, այս առթիւ մտքերի բաւականաչափ փոխանակութիւնից յետոյ ժողովը եկաւ եզրակացութեան — առանց նկատի առնելու թէ ի՞նչ դրդապատճառների արդիւնք է անտառական խմբակցութեան երեւան գալը, պարզապէս հաստատուած է որ նա ներկայումս տիրապետում է ամբողջ Գիլանի վրայ եւ ենթադրուած է թէ վայելում է Թեհրանի կառավարու-

20.- Հայ-Մարդ – ծածկանուն Հայկ Աճեմեանի (1898-1965):

Թեան համակրանքը, որի հետ յարաբերութեան մէջ լինելով, ձգտում է տարածել իր ազդեցութիւնը նաեւ Գիւլանից դուրս եւ չնայելով, որ այդ խմբակցութեան մէջ գոյութիւն ունեն մի քանի հոսանքներ՝ մասամբ իրանց բացասական հայեացքներով, այնուամենայնիւ նրանց նպատակներին ամենազլխաւորը թուում է թէ պիտի լինի յետ մղել արտաքին ազդեցութիւնները Պարսկաստանից եւ աշխատել Պարսկաստանը հասցնել քաղաքական կատարեալ անկախութեան:

Սկզբում նրանց գործունէութիւնը ուղղուած էր ռուսական ազդեցութեան դէմ, բայց հանգամանքների բերմամբ, ռուսական ուժերը Պարսկաստանից հեռանալով, յիշեալ խմբակցութիւնը իր գործունէութիւնը ուղղում է դէպի անգլիացիք, որոնք աշխատում [են] իրանց ազդեցութիւնը տարածել Պարսկաստանի վրայ. հետեւաբար, այդ հոսանքը հաշտ աչքով չի նայելու Պարսկաստանում գտնուող այն տարրերի վրայ, որոնք իրանց համակրութեամբ հակուած են դէպի անգլիացիները եւ նկատելով որ այս հանգամանքը կարող է թիւր ըմբռնումների շնորհիւ պարսկահայերի նկատմամբ տխուր հետեւանքներ ունենալ, ժողովը անհրաժեշտ գտաւ նման անակնկալներից խոյս տալու եւ առիթ չտալու համար մօտենալ անտառականներին եւ յարաբերութեան մէջ մտնել նրանց հետ կապ պահպանելու միջոցներ մշակել:

Սակայն որովհետեւ պարզ չէ, թէ համաձայնութեան դէպքում նրանք ինչ պահանջներով են դիմած հայ հատուածին, ուստի ժողովը նպատակաւորմար գտաւ բանակցութիւններ վարել նրանց հետ ժողովրդական կամ հասարակական ներկայացուցչութեան միջոցով ու մօտից ծանօթանալ նրանց ձգտումների ու գործելակերպի հետ եւ այնուհետեւ որոշել այդ շարժման ակտիւ կամ պասիւ մասնակցութիւն ունենալու հարցը: Այսպիսով ժողովը որոշեց, եթէ նրանք վստահելի երաշխիքներ կը տան, որ նրանց շարժումը նպատակ ունի վերականգնել երկրի անկախութիւնն ու ամբողջութիւնը, այս դէպքում ցոյց տալ նրանց համագործակցութիւն:

Միւս ժողովը երեկոյեան ժամը 6-ին նոյն տեղում:

Նախագահ՝ ՅՈՎՍԷՓ Քարտուղար՝ ԱՆԴՐԷԱՍ

Բնագրի հետ ճիշտ է. Նախագահ Գիւլան կոմիտէի՝ ՀԱՅ-ՄԱՐԴ

Դ. ՆԻՍ

1918 թիւ Մարտ 2-ին երեկոյեան ժամը 6-ին:

Օրակարգ՝

- 1) Ինքնապաշտպանութեան հարցը
- 2) Զեկուցումներ այդ մասին
- 3) Շրջանի կազմակերպումը
- 4) Պրոպագանդայի խնդիրը (չրջիկ պրոպ.) (գրաւոր բանաւոր)

Պորտ-Արտուր ենթակոմիտէի ներկայացուցիչը մանրամասն զեկուցեց շրջանի ինքնապաշտպանութեան առթիւ ձեռք առած միջոցների եւ դրանց արդիւնքի մասին: Ժողովը լսելով ընկերոջ տուած տեղեկութիւնները, իր գոհունակութիւնը յայտնեց Պորտ-Արտուր ենթակոմիտէին այդ ուղղութեամբ նրա կատարած աշխատանքների համար, ցանկանալով ապագայում աւելի եւս ճոխացած ու կատարեալ դարձնել այդ անհրաժեշտ գործը:

Այս մասին զեկուցում տուեց նաեւ Գիւլան կոմիտէի ներկայացուցիչը, յայտնելով որ ինքնապաշտպանութեան նկատմամբ դրական քայլեր չեն արուած. իսկ վերջերս, ինչպէս յայտնեց ընկերներից մէկը, Ռաշտի նորընտիր ենթակոմիտէին այդ ուղղութեամբ որոշ քայլեր արած է եւ յուսադրեց որ հետզհետէ կարելի է փոքր ի շատէ միխիթարական վիճակի մէջ դնել: Ժողովը յայտնեց իր դժգոհութիւնը Գիւլան կոմիտէին, նրա դէպ ինքնապաշտպանութիւնը ունեցած իներտ վերաբերմունքի համար, խրախուսելով նորընտիր ենթակոմիտէին ձեռնարկութիւնների մէջ, ցանկալի համարեց, որ Գիւլանն էլ պիտի աշխատէ հաւասարուել Պորտ-Արտուրին:

Նկատի ունենալով ինքնապաշտպանութեան գերազանց անհրաժեշտութիւնը, շրջանային ժողովը հրահանգում է ապագայ մարմիններին, տեղական պայմանների համաձայն աշխատել ու աւելի կայուն հիմքերի վրայ դնել յիշեալ գործը եւ որքան կարելի է չծանրանալ կազմակերպական դրամականի վրայ:

II — Մեր վերաբերմունքը դէպի տեղական դեմոկրատ կուսակցութիւնները

Չնայելով, որ ներկայումս պարսիկների մէջ դեմոկրատ կուսակցութիւններ բառիս իսկական առումով չկան, բայց նկատելով, որ դեմոկրատական ձգտումներ ունեցող խմբակցութիւններ գոյութիւն ունեն, ժողովը ցանկալի համարեց, ըստ հնարաւորութեան մօտենալ նրանց եւ կազմակերպել, աշխատել խորացնել իսկական դեմոկրատական սկզբունքները դրանց մէջ:

III — Ժողովը նպատակաւորմար գտաւ Մագանդա-



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

րանի, Շահրաթի եւ Աստարայի շրջանները կցել Շահստանի շրջանին, թողնելով Գիլանին Ռաշտ, Էնգէլի եւ Աստարան:

IV — Ի նկատի ունենալով բանաւոր պրոպագանտայի հրամայական պահանջը, ժողովը անհրաժեշտ համարեց, Շահստանի կեդրոնական կոմիտէի կողմէն շրջանում ունենալ մէկ կամ երկու շրջիկ պրոպագանդիստ:

Գրաւոր պրոպագանդայի համար, ժողովը ցանկալի է համարում որ Շահստանի կեդրոնական կոմիտէն ունենայ իր օրգանը եւ հրահանգում է մարմիններին, հարկ եղած դէպքում եթէ կարելի լինի բաց թողնել երկու լեզուով թուղցիկներ եւ նպաստել Կովկասում հրատարակուող կուսակցական թերթերին ու տարածել ընկերների շրջանում գուտ կազմակերպական գրականութիւն:

V — Ժողովականներից առաջարկող եղաւ, որ առաջիկայում ընտրուելիք կոմիտէն լինի Էնգէլիում եթէ շրջանային ժողովը նպատակայարմար կը գտնէ:

Այս մասին մտքերի երկար փոխանակութեան ընթացքում ուշադրութեան առնուեց Էնգէլու դիրքը, այնտեղի ենթակոմիտէի գործունէութիւնը եւ ընկերների թուական քանակը: Վերջին երկուսը բացատրում են այստեղի ընկերների կուսակցութեան ձեռներէցութեամբ: սակայն եղան ընկերներ, որոնք Ռաշտը աւելի նպատակայարմար էին գտնում կոմիտէի համար որպէս կեդրոն եւ հայաշատ վայր: այս հարցը քուէարկելիս ժողովականներից 8 հոգի ձայն տուին Էնգէլուն, ոչ մի ձայն Ռաշտին, 8 հոգի էլ ձեռնպահ: այդպիսով յարմար նկատուեց քուէարկութիւնը յետաձգել մինչեւ թիւրիմացութիւնները պարզուեն եւ ապա վճիռ կայացնել:

Նախագահ՝ ՅՈՎՍԷՓ Քարտուղար՝ ԱՆԴՐԷԱՍ

Բնագրի հետ ճիշտ է. Նախագահ Գիլան կոմիտէի՝ ՀԱՅ-ՄԱՐԴ

Ե. ՆԻՍ

3-ին Մարտի 1918 թիւ

- 1) Գիլան կոմիտէի հաշւետուութիւնը
- 2) Գիլան կոմիտէի հին կազմի հաշիւների վերաքննութիւնը
- 3) Կոմիտէի կողմէն վայրի որոշումը եւ կազմի ընտրութիւնը

Նկատի ունենալով, որ մի շարք պատճառներից Գիլան կոմիտէն ունեցել էր հաշւետուութեան երկու շրջան — որոնցից մէկը վերջանում էր հին կազմի ժամանակաշրջանով, որը փակուած եւ յանձնուած էր Շահստանի կեդրոնական կոմիտէի ներկայացուցչին իսկ միւսը նոր կազմի ժամանակաշրջանի համար:

Վերաքննիչ յանձնախումբը յայտնեց որ ստուգելով նոր կազմի հաշիւները գտել էին դուրսմեծանքներ համապատասխան ըստ որում կազմը ունի 488 դուան բացիսկ հաշիւները փակելուց յետոյ ստացուել է 400 դուան մուտք որը եւ գրուած է տետրակում:

Հին կազմի հաշիւները.— Հիմնուելով Գիլան կոմիտէի կազմի նոր անդամների ներկայացրած մի շարք տուեաների վրայ ժողովը անհրաժեշտ գտաւ 1914-1916 թուի ժամանակաշրջանի հաշիւների մէջ նկատուած թերութիւնները լուրջ զբաղմունքի առարկայ դարձնելով դրանց մասին վճռական որոշում կայացնել:

.....²¹

Նորընտիր կոմիտէի կողմէն վայրը որոշելու համար IV նիստով յետաձգուած քուէարկութիւնը տեղի ունեցաւ այսօր, որը եւ 14 ձայնով ընդգէմ 5-ի որոշեց կոմիտէի կողմէն վայրը նշանակել Էնգէլին, ապա ժողովն անցաւ կոմիտէի կազմի ընտրութեան որի գաղտնի քուէարկութեան ստացուած արդիւնքը կցուում է նոյն արձանագրութեան:

Նորընտիր կոմիտէի քուէարկութիւնը տուել է հետեւեալ արդիւնքը:

Մտրակ	18	ձայն
Հայ-Մարդ	18	»
Սուրէն	16	»
Մշակ	12	»
Դէհօճ	12	»
Յով.	10	»
Գեւ	8	»
Սիմ.	1	»

Նախագահներ՝ ՅՈՎՍԷՓ, ՀԱՅ-ՄԱՐԴ Քարտուղար՝ ՅՈՎ. ՄՈՎՍԷՍԵԱՆ

Բնագրի հետ ճիշտ է. Նախագահ Գիլան կոմիտէի՝ ՀԱՅ-ՄԱՐԴ

21.- Հաշուական մանրամասնութիւններու զեղչուած բաժին:



ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ VI

Հ.Յ.Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ

Եգիպտոս, ուր գոյութիւն ունէր պատմական հին անցեալի տէր հայկական գաղութ, մինչեւ 1914 թ. ձեւականօրէն կը համարուէր Օսմանեան կայսրութեան մէկ գաղթաւայրը. իրողապէս սակայն թրքական իշխանութիւնը անուանական էր. վարչական գործերու մէջ երկիրը որոշ իմաստով ինքնավար էր, սակայն ընդհանուր քաղաքականութեան մարզին մէջ տիրապետող ազդեցութիւն ունէր Մեծն Բրիտանիան:

Համեմատական ազատութիւններ վայելող Եգիպտոսի մէջ հայ ազգային, քաղաքական ու հասարակական կազմակերպութիւններ եւս կը գտնուէին անկաշկանդ գործելու պայմաններուն մէջ:

Հ. Յ. Դաշնակցութիւնը եւս, արդէն ԺԹ. դարու 90ական թուականներուն, հաստատած էր Աղեքսանդրիա եւ Գահիրէ քաղաքներուն մէջ եւ իր առաքած գործիչներով կը ղեկավարէր ոչ միայն տեղւոյն, այլեւ մօտակայ Կիլիկիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի կուսակցական աշխատանքները: Տեղական մարմինը, «Նեղոս»ի կոմիտէ անուան տակ, կը ղեկավարէր Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ենթակոմիտէները:

Ընդհ. պատերազմի ընթացքին, թրքական կոտորածներէն ճողոպրած նոր գաղթականութիւն անելցաւ Եգիպտոսի հայ համայնքին. ռոճացան նաեւ Դաշնակցութեան շարքերը: Նոր գաղթականութեան շարքին էին Սուէտիոյ հայերը, անելի քան 4000 հոգի, որոնք Մուսա Լեւան վրայ քառասունէ անելի օրեր թուրք զօրքին դէմ անօրինակ հերոսամարտ մը մղելէ ետք, ֆրանսական ռազմաւաճակով փոխադրուած էին Եգիպտոս եւ վրաններու տակ պատասպարութիւն գտած Սուէտի ջրանցքին ափին՝ Փորթ-Սայիտ քաղաքի աւազուտքին վրայ: Այստեղ սուէտահայերը կազմակերպեցին իրենց առօրեայ կեանքը, ունեցան Կարմիր խաչի միութիւն, եւ վերակազմեցին հայրենի բնօրրանին Մուսա Լեւ ենթակոմիտէութիւնը: Յայտնենք որ Փորթ-Սայիտի մէջ մուսալեռցի երիտասարդները ֆրանսացի սպաներու կողմէ ենթարկուեցան զինուորական մարզումներու: Անելի ուշ անոնք պիտի փոխադրուէին Կիպրոս, ուր միանալով տարբեր երկիրներէ, յատկապէս Ամերիկայէն ժամանած հայ կամաւորներուն՝ պիտի կազմէին կորիզը ֆրանսական բանակի Արեւելեան լեզէոնին, բարկացած մեծ մասամբ հայ մարտիկներէ: 1918ին, այդ լեզէոնը մեկնեցաւ ռազմաճակատ եւ Պաղեստինի ու Սուրիոյ մէջ թրքական զօրքերը պարտութեան մատնելով յաղթական մուտք գործեց Կիլիկիա:

Վերադառնալով Հ.Յ.Դ. Եգիպտոսի կոմիտէութեան, հարկ է արձանագրել որ 1915-16էն սկսեալ զգալի կերպով ընդլայնեցաւ անոր գործունէութեան շրջագիծը: Եգիպտոսի իրաւասութեան տակ մտաւ Կիպրոսի նորակազմ մասնաճիւղը, կուսակցութեան հովանաւորութեան տակ առնուեցաւ «Յուսարեր»ի խմբագրութիւնը, յարաբերական կապեր հաստատուեցան հարեւան Սուտանի, Հապէշխտանի եւ այլ երկիրներու դաշնակցական միաւորներուն հետ: Կազմակերպուեցաւ Կովկասի կամաւորներուն դրամական օժանդակութիւն հասցնելու գործը եւայլն:

Իբրեւ կարեւորագոյն իրագործում եգիպտահայութեան, պէտք է յիշատակել այն համերաշխութիւնը, որ գոյացաւ երեք կուսակցութեանց (հնչակեան, դաշնակցական, ռամկավար) միջեւ՝ Ազգ. Միութիւն կազմելու նպատակով: Եգիպտահայութեան տարբեր հատուածներու միջեւ գոյացած համախոհութիւնը ոչ միայն վերջ մը պիտի դներ, գէթ ժամանակաւորապէս, համայնքը պառակտող անվերջանալի պայքարներուն, այլեւ ծառայէր օրինակ միւս գաղութներուն համար (այս մասին տես նաեւ էջ 381-82):



Փաստ. 1049-98

Ա 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ
Հ.Յ.Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԵԻ ԸՆԴՀ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ
 (1915 Յունիսիս – 1916 Յուլիս)
 (Ներկայացուած Եգիպտոսի VI Շրջ. ժողովին)

Կազմութիւն.— Համաձայն 1914ի Կարնոյ պատգամաւորական ժողովի¹ որոշման՝ որը կայացած էր Եգիպտոսի շրջանի պատգամաւորին պատճառաբանւած առաջարկին վրայ՝ Եգիպտոսը ընդունուած էր իբրեւ կոմիտէական բացառիկ շրջան՝ պայմանաւ որ տարեկան 10,000 ֆրանքի մինիմում ջէնզ մը ապահովէ:

Այդ որոշման հիման վրայ 1914 թուականի դեկտեմբերի վերջին գումարուած շրջանային ժողովը, ընտրած է Եգիպտոսի կոմիտէին, 7 անդամներէ՝ որոնց 4ը Գահիրէն եւ 3ը Ադեքսանդրիայէն:

Կոմիտէն պաշտօնի ձեռնարկած է 1915 Յունուարի սկիզբը:

Կազմակերպական աշխատանք.— Կոմիտէն կազմակերպած է Թանթայի եւ Կիպրոսի շրջանները, Եգիպտոսի կազմին մէջ մտցուցած է մեր Սուէտիոյ ընկերները եւ առանձին կապ ու յարաբերութիւն պահած է Յունաստանի, Կրետէի, Սուտանի եւ Հապէշիստանի մեր անհատ ընկերներուն հետ՝ այս վայրերը ինչպէս Եգիպտոսի կոմիտէութեան իրաւասութեան շրջանակին մէջ: Այդ յարաբերութիւնները տուած են արդէն իրենց արդիւնքները եւ աւելի եւս կարող են արդիւնաւորուիլ եւ հաստատուն հիմքեր վրայ դրուիլ շարունակուելով նոյն ուղղութեամբ:

Տեղեկատուական գործունէութիւն.— Պատերազմի պատճառով, ինչպէս յայտնի է, Արտասահմանի հայութիւնը բոլորովին կտրուած էր Երկրի հետ իր ունեցած յարաբերութիւններէն: Դաշնակցութեան Պալքանեան կոմիտէն եւ Պոլսոյ մեր ընկերները միջոց ստեղծած ըլլալով յատուկ սուրհանդակի միջոցաւ ամէն տեղեկութիւն դուրս բերել՝ Եգիպտոսի կոմիտէին՝ իր շրջանը տեղեկ պահելու համար երկրի իրադարձութեանց՝ Պալքաններէն իր ստացած նամակներուն տեղեկատուական մասը ամբողջ արտագրելով՝ առանձին օրինակներով ուղարկած է կանոնաւոր կերպով Եգիպտոսէ դուրս եւս, Յունաստան, Կրետէ, Սուտան եւ Հապէշիստան:

Կամաւորանպաստ հանգանակութիւնները.— Մեծ պատերազմին ստեղծած տագնապայից դրութեան առջեւ, շուարումի եւ շփոթութեան օրերուն իսկ՝ Եգիպտոսի կոմիտէին, իր քայլերը ձեւելով հերոսական կողմ

կասի քայլերուն վրայ՝ առաջիններէն եղաւ Արտասահմանի մէջ իր կոչումն զգացող, գծեց մարտական կուսակցութեան վայել իր ճամբան, կամաւորական ձեռնարկը առանցքը շինեց իր գործունէութեան՝ եւ անսայթաք քայլեց այդ ճամբուն վրայէն՝ հակառակ յարուցուած բոլոր դժուարութիւններուն եւ խոչընդոտներուն, հակառակ ամէն սպառնալիքի, հակառակ իր դէմ պայքարելու համար ստեղծուած հսկայ նիզակ[ակցութեան՝ որ իր մէջ ունէր ամբողջ աղայականութիւնն ու հարուստ դասակարգը, Բարեգործական միութիւնը իր շարքերով, ազգային վերին իշխանութիւնները, Ռամկավար եւ Հնչակեան կուսակցութիւնները եւ նոյնիսկ մաս մը հսնաֆ դասակարգէն (ուսկերիչներու արհեստակցութիւն եւլն.):

Արդիւնքը՝ մէկ տարի եւ չորս ամսուայ ընթացքին 55,000 ըուպլի՝ փոխադրուած Ազգային բիւրոյին:

Այդ արդիւնքը անշուշտ փոքր է, համեմատելով մեծ ձեռնարկին պահանջներուն՝ բայց անհաւատալի է անիկա, նկատի ունենալով մեր տեղական փոքր ուժերը, եւ այն աննախընթաց ու կատաղի հակառակութիւնը՝ որուն կուրծք տուին անոնք: Պէտք է մոռնալ որ մեր մէջ ամէնէն լաւատեսները՝ այդ արդիւնքին կէսը, կէսին կէսն իսկ չէին յուսար ձեռք բերել:

«Յուսաբեր»ի կատարած դերը.— Կոմիտէն բարեբախտութիւնը ունեցած է իր ջանքերը երկրորդելու համար իր տրամադրութեան տակ ունենալու լաւագոյն եւ ամէնքէն նպատակայարմար գործիքը՝ «Յուսաբեր»ը, գոր Պ. Աւետիք Լալայեանց այդ նպատակին գործակելու համար գնելով՝ դրած էր կոմիտէի Գահիրէի ընկերներուն տրամադրութեան տակ:

Ձինուորական նպաստի յանձնախումբեր.— Հետեւելով միշտ Կովկասի օրինակին, եւ չուզելով զուտ կազմակերպական ձեռնարկ դարձնել կամաւորական նպաստի գործը, կոմիտէին՝ նկատի ունենալով այն դժուարութիւնները որ կային Ազգային բիւրոյի միջոցաւ Եգիպտոսի մէջ մարմիններ կազմելու մէջ՝ իր նախա-

1.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. Տրդ Ընդի. ժողովին՝ կայացած Կարնոյ մէջ, ուր Եգիպտոսի պատգամատուն էր Արտասազգ Հանրման:



ձեռնութեամբ ստեղծած է Եգիպտոսի մէջ յանձնախումբեր՝ Հ[այ] Կ[ամաւորական] Գ[ուհիներ] Ձին. նը-պաստի յանձնախումբ անունին տակ:

Այդ յանձնախումբերը, պէտք չունինք ըսել, լաւագոյն արդիւնքները տուած են, եւ ուրախ ենք այսօր յայտարարելու որ անոնք յարաբերութեան մէջ են Տփղիսի Հայկ. Կեդր. Ազգային բիւրոյին հետ եւ ճանչցուած են այդ մարմնէն իբրեւ իր պաշտօնական մասնաճիւղերը՝ Եգիպտոսի հայկական կոմիտէ անուան տակ:

Արտաքին յարաբերութիւն.— Կոմիտէն արտաքին յարաբերութիւն մշակած է, Կովկասի մեր մարմիններուն, Պալքանեան Կեդր. կոմիտէին, «Դրօշակ»ի խմբագրութեան եւ Ամերիկայի Կեդր. կոմիտէին հետ՝ տեղեակ պահելով զանոնք շրջանիս բոլոր կարեւոր անցուղարձերուն:

Լեռնավայր².— Կոմիտէն թէեւ միշտ աչքի առջեւ ունեցած է Լեռնավայրի համար ձեռնարկի մը պատրաստութեան հարցը՝ բայց դժբախտաբար եւ դժբախտ պարագաներու բերումով՝ արդիւնքի մը չէ կրցած յանգիլ:

Համերաշխութիւն.— Համերաշխութեան հարցը նոյնպէս, եղած է կոմիտէի ամէնքէն աւելի սրտին մօտիկ հարցերէն մէկը եւ միշտ եւ սիրալոյսով ընդ առաջ դացած է ամէն այն առաջարկներուն եւ հրաւերներուն՝ որոնք եղած են Առաջնորդ Սրբազան հօր կամ չէզոքներուն կողմէ՝ համերաշխութիւն մը յառաջ բերելու նպատակով:

Եգիպտոսայ կամաւորներ.— Կոմիտէն իր գործունէութեան առաջին օրերուն մէջ իսկ թէեւ ուզած է ձեռք առնել այդ գործը՝ բայց Կովկասէն եւ Պոլսէն ստացուած հրահանգները ցոյց տալով որ նոր կամաւորներ պէտք չէ ղրկել — քանի որ անկարելի է զանոնք տեղաւորել — ստիպուած մէկ կողմ ձգած է այդ գործը:

Եգիպտոսի կոմիտէն յաջողած է միայն 5 ընկեր կամաւորներ ղրկել Կովկաս՝ 3ը ընկերներու ծախսով եւ 2ը իրենց անձնական ծախսով:

Հաշուական.— 1915 Յունուարէն Մայիս: Կոմիտէի Գահիրէի ընկերները, միեւնոյն ժամանակ տեղւոյն ենթակոմիտէին անդամներ ըլլալով՝ իր ծախսերը ըրած է Գահիրէի ենթակոմիտէին անտուկէն: 1915 Յունիսէն մինչեւ 1916 Յունիս, մէկ տարի եւ մէկ ամսուայ շրջանի մէջ, կոմիտէն ունեցած է 800 ոսկիի մուտք՝ այսինքն Պատգամաւորական ժողովի պարտադրած գումարին կրկինը՝ ինչ որ Կեդրոնական կոմիտէի [մը] պարտադրած ցէնզը կը ներկայացնէ: Կոմիտէն եթէ իր վերջին ութ (8) ամիսներու ընթացքին բացառիկ աշխատութիւններու բեռան տակ կքած չըլլար (թերթի խմբագրութեան եւլն.) տարակոյս չկայ որ այդ գումարը կարող էր շատ աւելի ըլլալ: Յոյս ունինք որ այս շրջանային ժողովը, ամէնքէն բազմանդամը Եգիպտոսի մէջ գումարուած շրջանային ժողովներուն՝ միջոցներ պիտի մտածէ աւելցնելու համար կազմակերպական հասոյթի աղբիւրները՝ տրուած ըլլալով որ մեր յաջորդները խաղաղած միջավայր մը, յաղթահարուած հակառակութիւններ, գրաւուած դիրքեր՝ մէկ խօսքով լաւագոյն պայմաններ պիտի ունենան՝ իրականացնելու եւ արդիւնաւորելու համար ժողովից որոշումներն ու ակնկալութիւնները:

2.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ: «Լեռնավայրի համար ձեռնարկը» ակնարկութիւն է դաշնակիցներու չիրականացած մէկ ձեռնարկին՝ Կիլիկիա գօրք ցամաքահանելու:

3.- Տեղեկագրի ձեռագիրը կը պատկանի Մովսէս Տէր Գալուստեանի գրչին:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԵԳԻՊՏՈՍԻ ՆԱԽՈՐԴ ԿՈՄԻՏԵՒԻ ԱՆԴԱՄՆԵՐ³

Փաստ. 1049-97

Ա 2.- ԱՄՓՈՓՈՒՄ
Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԻՆ
ՎԵՑԵՐՈՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ

Հ. 3. Դաշնակցութեան Եգիպտոսի շրջանին VI Շրջա-
նային ժողովը գումարուեցաւ Աղեքսանդրիոյ մէջ
1916 Յուլիս 16էն մինչեւ նոյն ամսուան 27 եւ ընդամենը
տասնեկինը նիստերու մէջ աւարտեց իր աշխատութիւն-
ները հետեւեալ կերպով.

Առաջին նիստ.—

Բացում ժողովին Եգիպտոսի կոմիտէին պատգամա-
ւոր ընկերին կողմէ. ժողովին ատենապետ ընտրուեցաւ
երիցագոյն ընկերը եւ ատենադպիր՝ կրտսերագոյն ըն-
կերը, որմէ յետոյ կատարուեցաւ պատգամաւորներու
օրինական ճշդումը կարգացուելով՝ Գահիրէի, Աղեք-
սանդրիոյ, Թանթայի, Բոր-Սայիտի եւ Կիպրոսի ընկե-
րական ընդհ. ժողովներուն եւ ենթակոմիտէներու
պատգամաւորներու պաշտօնը ճշդող վաւերացութեամբ:

Գահիրէն տուած էր երեք պատգամաւոր ընդհ. ժո-
ղովի եւ մէկ պատգամաւոր ենթակոմիտէի կողմէն:

Աղեքսանդրիան տուած էր երեք պատգամաւոր
ընդհ. ժողովի եւ մէկ պատգամաւոր ենթակոմիտէի
կողմէն:

Թանթան տուած էր ընդհ. ժողովի եւ ենթակոմիտէի
կողմէ միայն մէկ պատգամաւոր:

Բոր-Սայիտը տուած էր երկու պատգամաւոր ընդհ.
ժողովի եւ մէկ պատգամաւոր ենթակոմիտէի կողմէն:

Կիպրոսը տուած էր ընդհ. ժողովի եւ ենթակոմիտէի
կողմէ մէկ պատգամաւոր:

Ընդամենը 13 պատգամաւորներ շրջաններէն կոմի-
տէի պատգամաւորին հետ կը ներկայացնէին 14 ձայն,
իսկ Աղեքսանդրիոյ ենթակոմիտէի ընկերները եւս ներ-
կայ էին խորհրդակցական ձայնով:

Դիւանական գործողութիւնները կատարուելէ յե-
տոյ ժողովը որոշեց ցաւակցական հեռագիր մ'ուղղել
Ազգային բիւրոյին եւ դաշնակցական մարմնոյն, Քե-
ռի մահուան առթիւ⁴, եւ իբր սգոյ նշան՝ այդ օրուան
համար դադրեցուց իր նիստը:

Երկրորդ նիստ.—

Պատգամաւոր ընկերներու ոմանց կողմէ օրակարգի
նախատեսած խնդիրներէն դուրս նոր առաջարկներ
բերուեցան որոնց վրայ զատ զատ կարծիքներու փոխա-

նակութիւն կատարուելէ վերջ, ընդունուածները աւել-
ցան օրակարգին վրայ՝ որով վերջնական օրակարգը
կազմուեցաւ հետեւեալ կերպով.—

1. Բացում Շրջանային ժողովի՝
կոմիտէի պատգամաւորին կողմէ.
2. Ընտրութիւն առժամեայ դիւանի
3. Ծշղում եւ վաւերացում
պատգամաւոր ընկերներու մանտաթներուն
4. Ընտրութիւն [մնայուն] դիւանի
5. Տեղեկագիր կոմիտէի ընդհ. գործունէութեան
6. Տեղեկագիր ենթակոմիտէներու
7. Զեկուցումներ կոմիտէի կողմանէ
ա) Զին. նպաստի հանգանակութեան մասին
բ) Զեկուցում համերաշխութեան հարցի մասին
գ) Զեկուցում Լեռնավայրի հարցի մասին
դ) Զեկուցում Եգիպտահայ կամաւորներու մասին
ե) Զեկուցում «Յոսաբեր»ի մասին
8. Նոր գործունէութեան ուղեգիծ
ա) Կամաւորանպաստ հանգանակութեան մասին
բ) Լեռնավայրի հարցի մասին
գ) Եգիպտահայ կամաւորներու մասին
դ) Համերաշխութեան մասին
9. Եգիպտահայ Կարմիր-խաչի հարց
10. Զաւարեան ֆոնտ
11. Հաշուետուութիւն կոմիտէի
դրամական գործառնութեանց
12. Նոր շրջանի պիւտճէն եւ անոր բաշխումը
շրջանի մարմիններուն վրայ
13. Մշակում եւ վաւերացում Եգիպտոսի շրջանի
ներքին կանոնագրին
14. Ընտրութիւն նոր կոմիտէի

Կոմիտէի պատգամաւոր ընկերը կարգաց կոմիտէի
ընդհ. գործունէութեան տեղեկագիրը (որ կցուած է
ներկային): Սոյն տեղեկագրի ընթերցումէն վերջ, տար-
ւան ընթացքին կոմիտէի երկու անդամներու հրաժար-
ման պարագաներու մասին ժողովը կարգ մը բացատ-

4. Կամաւորական Չորրորդ գունդի հրամանատար Արշակ
Գաւաթեան (Քեռի), նահատակուած Ռեանդուզի ճակատամար-
տին, 1916, 15 Մայիսին:

րուծիչներն ուզեց լսել եւ գանոնք բաւականաչափ համարելով փակեց խնդիրը:

Երրորդ նիստ.—

Կարդացուեցաւ Աղեքսանդրիոյ ենթակոմիտէի մէկ տարուայ գործունէութեան տեղեկագիրը: Շնորհակալութիւն յայտնուեցաւ Աղեքսանդրիոյ ներկայ եւ նախորդ ենթակոմիտէներու արդիւնաւոր եւ խղճամիտ գործունէութեան համար:

Չորրորդ նիստ.—

Կարդացուեցաւ Գահիրէի ենթակոմիտէին տեղեկագիրը. սոյն տեղեկագրին մէջ շօշափուած մէկ քանի խնդիրներու վրայ ժողովը բաւական աղմկալից վիճաբանութիւն մը ունեցաւ, եւ ի վերջոյ որոշուեցաւ տեղեկագիրը ետ դրկել Գահիրէի Ընդհ. ժողովէն վաւերացուելու համար եւ վաւերացուելէ վերջ յանձնել ընտրելի կոմիտէին, կցելու համար Շրջանային ժողովի ատենագրութիւններուն:

Հինգերորդ նիստ.—

Կարդացուեցաւ Թանթայի ենթակոմիտէին վեցամսեայ գործունէութեան տեղեկագիրը: Շնորհակալութիւն յայտնուեցաւ Թանթայի ենթակոմիտէին գործունէութեան համար:

Կարդացուեցաւ Կիպրոսի ենթակոմիտէին իննամսեայ գործունէութեան տեղեկագիրը: Սոյն տեղեկագրին մէջ ակնարկուած ներքին անհամաձայնութիւններու մասին, կոմիտէի պատգամաւոր ընկերը իբրեւ իրագրեկ բացատրութիւններ տուաւ յայտնելով թէ ինչպէս կարգադրուած են անոնք եւ ժողովը իր գոհունակութիւնը յայտնեց Կիպրոսի ենթակոմիտէին ունեցած արդիւնաւոր գործունէութեան համար, իսկ ներքին խնդիրներու համար որոշեց թեյադրել որ վերջ տրուին անոնց, մանաւանդ ներկայ տագնապալի օրերուն:

Կարդացուեցաւ Բոր-Սայիտի ենթակոմիտէին տեղեկագիրը: Ժողովը յոտնկայս իր յարգանքը յայտնեց Մուսա լերան կռիւներուն մասնակցող դաշնակցական ընկերներուն եւ բոլոր սուէտացիներուն, ինչպէս նաեւ նոյն կռիւներու մէջ նահատակուած հերոսներու յիշատակին:

Վեցերորդ նիստ.—

Կարդացուեցաւ կոմիտէի զեկուցումը կամաւորական հանգանակութեան մասին (կցուած ներկային): Որոշուեցաւ գրաւորապէս շնորհակալութիւն յայտնել Ձինուորական յանձնախումբի անդամներէն Պ. Ա. Լա-

լայեանցի եւ Յ. Ազնաւորեանի, որոնք Դաշնակցութեան կազմին մէջ չըլլալով հանդերձ ամէն կերպ աջակցած են մեզ կամաւորական հանգանակութեան գործին առթիւ: Այլեւայլ բացատրութիւններ եւ տեղեկութիւններ պահանջուեցան կոմիտէէն կամաւորական հանգանակութեան շուրջ ստեղծուած դժուարութիւններու եւ յարակից գանազան խնդիրներու մասին, որոնց ի պատասխան տրուած բացատրութիւնները բաւարար համարուեցան:

Եօթներորդ նիստ.—

Ամբողջ նիստի շրջանին ժողովը վիճաբանութիւններ ունեցաւ կամաւորական հանգանակութեան ներկայ տարուան տուած արդիւնքին նախորդ տարիէն պակաս ըլլալուն մասին. պարագաներու եւ պատճառներու շուրջ բացատրութիւններ եւ նկատողութիւններ եղան:

Ութերորդ նիստ.—

Ընտրուեցան երկու յանձնախումբեր. մին՝ Յ անդամէ բաղկացած, քննելու համար կոմիտէին հաշիւները եւ նոր շրջանին համար պիւտճէ մը որոշելու: Միւսը Տ անդամներէ բաղկացած՝ քննելու համար ներքին կանոնագիրը: Այս նիստին մէջ ժողովը զբաղեցաւ դարձեալ կամաւորական հանգանակութեան հարցով, բայց նպատակաւորաբար տեսնելով այդ խնդրոյն շուրջ վիճաբանութիւններ կատարել Ձինուորական նպաստի յանձնախումբի անդամներու ներկայութեան, որոշուեցաւ հրաւիրել այդ յանձնախումբի անդամները, եւ անոնց ներկայութեամբ զբաղուիլ այդ հարցով:

Իններորդ նիստ.—

Լեռնավայրի հարց. ժողովը այս մասին հարկ եղած զեկուցումները իմանալէ եւ խնդիրը նկատողութեան առնուելէ վերջ⁵, որոշուեցաւ յանձնել ընտրելի կոմիտէին, որպէսզի ի հարկին կարեւոր տնօրինութիւնները ընէ կարելիութեան սահմանին մէջ: Այս խնդիրը զբաղեցուց իններորդ, ինչպէս նաեւ **Տասներորդ նիստը:**

Տասնեմէկերորդ նիստ.—

Այս նիստին ներկայ ըլլալով նաեւ Ձինուորական նպաստի յանձնախումբին Աղեքսանդրիոյ անդամները, ժողովը զբաղեցաւ դարձեալ կամաւորանպաստ հանգանակութեան հարցով: Յարդ ձեռք առնուած միջոց-

5.- 1915 թ. առաջին ամիսներուն Դաշնակցից պետութիւնները կը ծրագրէին Կիլիկիոյ բացերը զինուորական ցամաքահանում կատարել. այս առթիւ կը նախատեսուէր նաեւ գաղութներու մէջ կազմուած հայ կամաւորներու մասնակցութիւնը:



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

ներու թուումը ըլլալէ վերջ, նոր միջոցներ ստեղծելու մասին խորհրդակցութիւն տեղի ունենալով, որոշուեցաւ թելադրել Զին. նպաստի յանձնախումբին որ իր կազմին վրայ նոր անդամներ աւելցնելով դիմում կատարէ այն անձերու մօտ, որոնց մինչեւ այժմ չէ դիմուած: Որոշուեցաւ նաեւ տարին երկու կամ զոնէ մէկ մեծ վիճակահանութիւն սարքել Եգիպտոսի մէջ. վիճակահանութեան կազմակերպման պարագաները եւս ձգուեցան ընտրելի կոմիտէին: Որոշուեցաւ նաեւ պարտադրել բոլոր մարմինները որ տարին մէկ կամ երկու անգամ կամաւորանպաստ ձեռնարկներ ընեն իրենց շրջանին մէջ. որոշուեցաւ նաեւ թելադրել կոմիտէին, որպէսզի ջանայ թղթակից մը ապահովել Կովկասի մէջ, ի վիճակի ըլլալու համար՝ կամաւորական շարժումներու մասին որոշ տեղեկութիւններ հաղորդելու ժողովուրդին, որ իր նպաստները տալով հանդերձ լուրեր ալ ունենալ կը փափաքի եւ կ'ակնկալէ. որոշուեցաւ նաեւ թելադրել կոմիտէին որ ջանայ հայկական տեղեկատու խառն դիւան մը (հայերէ եւ եւրոպացիներէ բաղկացած) կազմել՝ մեր դատին շուրջ օտարներուն ուշադրութիւնը հրաւիրելով, կամաւորանպաստ հանգանակութեան այդ օտարներու մասնակցութիւնը դիւրացնելու [նպատակով]:

Տասներկուերորդ եւ տասներեքերորդ նիստեր.—

Այս նիստերուն մէջ ժողովը վերստին զբաղեցաւ Լեռնավայրի խնդրով եւ իր որոշումները կայացուց: Այս խնդրին շուրջ տեղեկատուութիւն ընել անյարմար նկատուեցաւ:

Տասնեւչորրորդ եւ տասնեւհինգերորդ նիստեր.—

Կոմիտէի պատգամաւոր ընկերը կարգաց գեկուցում մը (կցուած ներկային) միւս կուսակցութիւններու հետ առաջ տարուած համերաշխական խորհրդակցութիւններու մասին, որմէ վերջ կատարուած վիճաբանութիւններու իբր հետեւանք ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը:— Ժողովս սկզբունքով կ'ընդունի միջկուսակցային համերաշխութիւն բոլոր հարցերու շուրջ այնպիսի եղանակաւ մը որ ազգային շահերու համաձայն ըլլայ այն՝ եւ պատուաբեր՝ Դաշնակցութեան վարկին:

Կոմիտէի կողմէ կարգացուեցաւ նաեւ «Յուսաբեր» թերթի մասին բերուած գեկուցումը (կցուած ներկային): Որոշուեցաւ գրաւոր շնորհակալութիւն յայտնել Պ. Լալայեանցի որ բարեհաճած է սիրայօժար իր թերթը տրամադրել մեզ, իսկ գոհունակութիւն արձանագրել թերթին հետ գործ ունեցող գործադիր եւ խմբագիր մարմնի արդիւնաւոր եւ խղճամիտ աշխատանքին համար: Թերթին շուրջ գանազան խնդիրներու մասին

դիտողութիւններ եղան, որոնց ամէնքին մասին կոմիտէի ընկերներու կողմէ բացատրութիւններ տրուեցան, որմէ յետոյ յարմար տեսնուեցաւ աւելցնել՝ Պ. Լալայեանցի ուղղուելիք շնորհակալութեան նամակին մէջ թէ՛ «վստահ ենք որ ինչպէս անցելոյն, նոյնպէս եւ յառաջիկային, սիրայօժար պիտի բարեհաճիք «Յուսաբեր»ը տրամադրել մեզ»: Որոշուեցաւ նաեւ ընտրելի կոմիտէին նկատառման յանձնել թերթին ծաւալը մեծցնելու կամ Կիրակի օրերը վեց էջով հրատարակելու կարելիութեան մասին խորհելու կարիքը:

Որոշուեցաւ նաեւ թելադրել ընտրելի կոմիտէին որ աչքի առջեւ ունենայ թէ գործիչ ընկեր մը կրնայ իր օգտակարութիւնը ունենալ Եգիպտոսի շրջանին համար եւ աշխատի իրականացնել գործիչի մը ներկայութիւնը երբ տրամադրելի մէկը գտնուի:

Տասնեւվեցերորդ նիստ.—

Վիճաբանութեան նիւթ եղաւ Կարմիր խաչի գործունէութիւնը (Եգիպտահայ Կարմիր-խաչ) եւ որոշուեցաւ հետեւեալը.— «Նկատելով որ եգիպտահայ Կարմիր խաչը, որ կազմուած էր հայ կամաւորական գունդերու բժշկական օգնութիւն հասցնելու նպատակով սանիտարական միտին մը դրկելու համար դէպի Կովկաս, նկատելով որ այդ մարմինը տարիէ մ'ի վեր շեղած է իր պարտականութեան ճամբէն եւ չէ իրագործած իր ծրագրին էական մասը, նկատելով որ տարիէ մ'ի վեր հանրութեան վստահութիւնը չարաչար գործածող այդ Կարմիր խաչը մինչեւ օրս տակաւին ցոյց չի տար շարժելու որեւէ տրամադրութիւն,— ժողովս՝ «Գործելու իր ազատութիւնը ձեռք բերելու եւ ճշդելու համար իր դիրքը հանդէպ այդ մարմնին, կ'որոշէ ետ կանչել այդ մարմնէն իր այն ընկերը՝ որ ընտրուած է իբրեւ դաշնակցական ներկայացուցիչ Կարմիր խաչի վարչութեան մօտ» — ընդունուեցաւ ընկերներու կողմէ բերուած հետեւեալ առաջարկը, «նկատի ունենալով որ կազմակերպութեան նախաձեռնութեամբ կազմուած Կարմիր խաչ մը կրնայ բախումներ եւ անպատեհութիւններ առաջ բերել, նկատի ունենալով որ եգիպտահայ չի կըրնար չվերցնել հայկական տառապանքներու ամոքման գործին մէջ իր պատշաճ դերը, Շրջանային ժողովը կ'որոշէ բժշկա-սանիտարական խումբ մը ուղարկել Կովկաս եւ անոր համար պէտք եղած անհրաժեշտ ճամբու ծախսերը հայթայթելու մէջ. իսկ հրապարակային շարժում չստեղծելու համար, գրել Ազգային բիւրոյին եւ խնդրել որ արտօնէ Եգիպտոսի իր մասնաճիւղին տրամադրել այս մասին հարկ եղած գումարը:

Չաւարեան Փոնտի պատրաստ գումարի մասին բացատրութիւններ լսուելէ վերջ, ժողովը որոշեց հետեւեալը.— «Լսելով Չաւարեանի Փոնտի մասին տրուած բացատրութիւնները, Շրջ. ժողովս բարոյական պարտա-



կանութիւն կը զգայ թելադրել ընտրելի կոմիտէին որ զբաղուի այս խնդրով եւ միջոցներ ձեռք առնէ որպէսզի Ֆոնտի յանձնախումբերը հաշուեկշիռ ներկայացնեն հանրութեան»:

Տասնեւեօթներորդ նիստ.—

Կարդացուեցաւ կոմիտէի հաշուետուութիւնը, ինչպէս նաեւ հաշուեքննիչ յանձնախումբին տեղեկագիրը, կոմիտէի հաշուետուութեան մասին: Շնորհակալութիւն յայտնուեցաւ կոմիտէին գնահատելի գործունէութեան համար:

Յառաջիկայ շրջանին համար կազմուեցաւ պիւտճէն հետեւեալ կերպով.— Գահիրէ՝ 205 ոսկի, Աղեքսանդրիա՝ 150 ոսկի, Թանթա՝ 20 ոսկի, Կիպրոս՝ 20 ոսկի, եւ Բոր-Սայիտ՝ 5 ոսկի. համագումար՝ 400 ոսկի: Իւրաքանչիւր մարմին իր միջոցները կը ստեղծէ իրեն բաժին ինկած պիւտճէի գումարը լեցնելու համար:

Տասնեւութներորդ նիստ.—

Ներքին կանոնագրի քննիչ յանձնախումբը, աչքէ անցնելէ վերջ զանազան ընդհ. ժողովներէ եկած ներքին կանոնագիրներուն տրամադրութիւնները, ամփոփած եւ բերած էր ժողովին, որ այս նիստին մէջ քննութենէ անցնելէ վերջ վճռական ձեւը տուաւ անոր, եւ որոշուեցաւ հրահանգել ընտրելի կոմիտէին որ իսկոյն տպագրել տալով բաւականաչափ օրինակներ՝ ցրուէ մարմիններուն:

Տասնեւիններորդ նիստ.—

Գահիրէի պատգամաւոր ընկերները մատնանիչ կ'ընէին, թէ Գահիրէի կազմին մէջ ընկերներու միջեւ անհամերաշխութիւն գոյութիւն ունի, որմէ կը տուժէ գործը, իսկ Շրջանային ժողովի ուրիշ պատգամաւորներ կ'ըսէին թէ տեղական հարց ըլլալով այդ, պէտք է տեղւոյն մարմինը կամ ընդհ. ժողովը կարգադրէ այդ խնդիրը. այս մասին թեր ու դէմ կարծիքներ փոխանակուելէ վերջ, մեծամասնութիւնը հետեւեալ եզրակացութիւնը ընդունեց.— «Շրջանային ժողովը շրջաբերական մը կը զրկէ բոլոր մարմիններուն թելադրելով որ՝ նկատի ունենալով ազգային ներկայ ճգնաժամը, համերաշխ վերաբերում ունենան իրարու հանդէպ եւ մոռնալով անձնական համակրութիւններն ու հակակրութիւնները լծուին կազմակերպական գործին:

Կէս ժամ դադարէ յետոյ, կազմուած երկպատիկ ցանկի մը վրայէն կատարուեցաւ կոմիտէի ընտրութիւնը (գաղտնի քուէարկութեամբ) որու համեմատ կոմիտէի կազմը հռչակուեցաւ հետեւեալ եօթը ընկերներով՝

Ընկերներ Ա. Հանրմեան, Տոքթ. Նէվրուզ, Ս. Եսայեան եւ Մ. Տէր Սահակեան (Գահիրէի ընկերներէն) եւ Մինաս Խաչատուրեան, Մ. Նորատունկեան եւ Սեդրակ Գաբրիէլեան (Աղեքսանդրիոյ ընկերներէն):

Ժողովը լրացուցած ըլլալով իր աշխատութիւնները փակուած յայտարարուեցաւ:

(Արձանագրութիւնները ստորագրուեցան բոլոր պատգամաւորներէն):



Փաստ. 1049-100

Ա 3.- ՁԵԿՈՒՑՈՒՄ «ՅՈՒՍԱԲԵՐ»Ի ՄԱՍԻՆ

Եգիպտոսի մէջ դաշնակցական մամուլ ունենալու ցանկութիւնն այնքան հին է որչափ ինքը կազմակերպութիւնը այս երկրին մէջ: Եկող գացող մարմիններ եւ ժողովներ կամ անհատ ընկերներ, Գահիրէ թէ Աղեքսանդրիա, շարունակ զբաղուած են այդ հարցով, վիճած վիճաբանած են, ծրագիրներ եւ առաջարկներ մշակած եւ սակայն, ամէն անգամ ալ գլխաւորաբար նիւթական միջոցներու չգոյութեան պատճառաւ կարելի չէ եղած մարմին տալ գաղափարին, եւ ցանկութիւնն մնացած է ցանկութիւն:

Միայն 1904ին էր որ ինչպէս կը յիշեն ձեռն շատերը, ընկերներու եւ համակիրներու նիւթական եւ բարոյական աջակցութեան շնորհիւ հրատարակուեցաւ Գահիրէի մէջ «Հորիզոն» շաբաթաթերթը. սակայն տրուած ըլլալով անոր գոյութեան համար անհրաժեշտ պայմաններու անբաւականութիւնը, թերթը տարի մըն ալ չբոլորած կը ստիպուէր դադարեցնել իր հրատարակութիւնը՝ բաւական փայլուն չըջան մը ապրելէ յետոյ: Աւելորդ պիտի ըլլար ծանրանալ անոր կատարած դերին դրական եւ բացասական կողմերուն վրայ:

Սեփական մամուլի հարցը, սակայն, աւելի հրամայական, աւելի հրատապ կերպարանք ստացաւ ներկայ պատերազմի սկիզբին, մանաւանդ այն ատեն, երբ թուրքիոյ միջամտութիւնը նոր հետապնդումներ, նոր խնդիրներ կը դնէր Կովկասի եւ արտասահմանի մեր մարմիններուն առջեւ, եւ որոնցմէ չէր կրնար հեռու մնալ կամ խուսափիլ Եգիպտոսի շրջանը: Կովկասը կու տար շարժման ազդանշանը եւ իր եղբայրական ուսերուն վրայ կ'առնէր գլխաւոր ծանրութիւնը, անգամ մ'ալ ի սպաս դնելով իր նիւթական եւ մտաւորական ոյժերը, լաւագոյն եւ նպատակայարմար եզրակացութեան առաջնորդելու համար թրքահայաստանի ազատագրութեան այնքան խոշտանգուած դատը ու պէտք էր, կենսական պահանջ էր որ արտասահմանի ամբողջ հայութիւնը մէկ մարդու պէս կանգնէր Կովկասի կողքին, իր ամբողջ տրամադրելի եւ կարելի ոյժերով լրծւէր անոր հսկայ եւ հրաշագործ ձեռնարկին, հանուր աշխարհի առջեւ ապացուցանելու համար թէ հայ ժողովուրդն ալ հասած է այն հասունութեան ու հաւաքական պարտաճանաչութեան եւ գիտակցութեան, որոնք ազատութեան արժանի կը կացուցանեն ժողովուրդը:

Պատեհ վայրկեանին ձգելով դէպի Կովկաս կամաւորներ փութացնելու հարցը, Ձեր մարմինը առանց ժամանակ կորսնցնելու մշակեց եւ անցեալ տարուոյ սկզբին հրապարակ հանեց Ձինուորական նպաստի հանգանակութեան ծրագիրը, նպատակ ընտրելով այս երկրին

նիւթական աջակցութեան առաւելագոյն չափը ապահովել հայրենի ազատագրութեան աշխատանքին, եւ այս՝ տեւական կերպով, մինչեւ պատերազմին վախճանը, մինչեւ առաջագրուած իտէալին պսակումը:

Բայց դժբախտաբար միջավայրը ուր պիտի գործէր կազմակերպութիւնը, կը ներկայացնէր անմշակ գետին մը, ուր սանձարձակ տիրապետած էին մինչեւ այն օր մեր ժողովուրդին ամէնէն բացասական, կարելի է ըսել ամէնէն վտանգաւոր հոսանքները, որոնք աւանդական դիրքեր ունէին շինած եւ տարակոյս չկար որ խէթիւ պիտի նայէին իրենցմէ դուրս ամէն գործունէութեան. եւ միջոցներ ունէին յաջողութեան՝ պայքարելու եւ կոտորելու՝ մանաւանդ ժողովրդական ազատական գոյն ունեցող ամէն խոյանք: Անհրաժեշտ էր որ կազմակերպութիւնն ալ իր կողմէն ունենար պահանջուած գէնքը, մէկ կողմէն չքացնելու համար հակաժողովրդային վնասակար ազդեցութիւններն ու հակազդելու անոնց սադրանքներուն եւ միւս կողմէն՝ լոյս աշխարհ քաշելու համար հայ ցեղին բոլոր կորովներն ու արժէքները, որոնց պէտք ունէր հայրենիքը եւ որոնց գոյութիւնը հայ հոգիին մէջ՝ մեր հաւատքին ամուր հիմն է կազմած քառորդ դարէ ի վեր: Մէկ խօսքով, պէտք էր պայքարիլ ստրկամտութեան ամէն արտայայտութեան դէմ եւ գործի լծել բոլոր մաքուր հոգիները:

Ճիշդ է, Եգիպտոսի այն ատենուան միակ հայ թերթը հակառակ չէր մեր ձեռնարկին եւ մեր ուղղութեան, բայց այդչափ չէր բաւեր: Անիկա անվերապահ համակրութիւն ալ չէր ցուցնէր մեզի, երբ տակաւին մեզի դէմ նիւթուող դաւերը մոլորին մէջ միայն կ'երկնուէին եւ բաց ճակատով ասպարէզ ալ չէին իջած: Կար պարագայ մը, որով թերեւս կարելի ըլլայ բացատրել թերթին դիրքը, այն՝ թէ այդ միջոցին զանազան անհատներ կամ մարմիններ թերթին արտօնատիրոջ առաջարկներ տարած էին թերթը գնելու համար, եւ յայտնի է որ աւելի վճարողը ձեռք պիտի անցնընէր «Յուսաբեր»ը: Եթէ այս վերջին պարագան իրականանար, կասկած չկայ որ մեր դէմը պիտի ունենայինք թերթը, քանի որ առաջարկ տանողները գրեթէ ամբողջութեամբ հակառակորդներ էին մեզի եւ մեր ձեռնարկին:

Ահա այս պայմաններու մէջ էր, որ Գահիրէի մեր ընկերներէն Պ. Աւետիք Լալայեանց լուսաւոր միտքը կը յղանայ ինքը գնել «Յուսաբեր»ը, ծառայեցնելու համար զայն գաղափարներուն ամէնէն նուիրականին, հայրենիքի ազատագրութեան գաղափարին, ու այսպիսով ընդմիջտ կը ջնջէ հաւանականութիւնը՝ թէ Եգիպտոսի միակ հայերէն թերթը կրնար մօտիկ օր մը անցնիլ մեր



հակառակորդներու ձեռքը. եւ մտածումը գործի վերածելով անցեալ տարուայ ապրիլի սկիզբներուն Պ. Ա. Լաւրայեանց կը գնէր թերթը եւ Պ. Սուրէն Պարթեւեանին կը յանձնէ անոր խմբագրութեան հոգը, ու Ձեր կոմիտէին Գահիրէի ընկերները, որոնք մինչեւ այժմ գորավիզ եւ քաջալեր հանդիսացած էին Պ. Լաւրայեանցին՝ անոր մտադրութիւններուն մէջ, կը յաջողին ձեռք բերել նաեւ իրաւունքը հսկելու թերթին ուղղութեան վրայ, եւ այսպէսով «Յուսաբեր»ը կը դառնայ դաշնակցական գաղափարներու արտայայտիչ բերանը՝ Եգիպտոսի մէջ:

Եգիպտոսի կոմիտէն, տեղեկանալէ յետոյ ձեռք բերած արդիւնքին, լրակատար նիստի մը մէջ կ'որոշէ թերթին ուղղութեան վերին հսկողութիւնը վերապահել իրեն եւ Գահիրէի ընկերներուն կը յանձնէ միշտ Պ. Լաւրայեանցի բարեհաճ հաւանութեամբ, անոր անմիջական հոգն ու պատասխանատուութիւնը: Այս կերպով կազմուած կ'ըլլար «Յուսաբեր»ի խմբագրական մարմին մը, կազմուած դաշնակցական պատասխանատու ընկերներէ, իսկ խմբագրապետը կը մնար Պ. Ս. Պարթեւեանը, որը, ըսենք անցողակի, թէեւ ոչ դաշնակցական, բայց այն ատեն մեզի չափ խանդավառուած էր Կովկասէն ծայր տուող ազատագրական շարժումներով:

Ասկէ յետոյ մնացածը, ծանօթ է Ձեզ ընկերներ, թէ ի՞նչ փուլերէ անցաւ «Յուսաբեր»ը: Դուք գիտէք թէ որչափ հակառակութիւններ ու ատելութիւններ ծառայող իրեն դէմ, թէ ի՞նչ գիտակից եւ անգիտակից տգեղութիւններու դէմ կուրծք տալ ստիպուեցաւ, ի՞նչ դեր կատարեց եւ ի՞նչ չափով կրցաւ արդարացնել իր վրայ դրուած ակնկալութիւնները: Դուք այս բոլորը գիտէք արդէն իրենց բոլոր գնահատելի կամ քննադատելի կողմերով, ու աւելորդ պիտի ըլլար ծանրանալ այստեղ անոնց վրայ: Իսկ ինչ որ մեծ մասով անծանօթ կը մնան Ձեզ ընկերներ, այն ստոր ու դաւաճան միջոցներն են, զորս ընտրեցին մեր անարժան հակառակորդները՝ քանդելու համար ազգին ամէնէն կենսական շարժումին նեցուկը. անկարող՝ մաքուր գէնքերով պայքարելու ճշմարտութեան ձայնին դէմ, անոնք դիմեցին ստորերկրեայ եղբայրադաւ աշխատանքին ու ջանացին ոստիկանական եւ խաֆէական միջոցներով խափանել մեր ձայնը. ասոնց մասին մենք վճռած ենք լուռ մնալ առ այժմ, աւանդելու համար գայն օր մը հանրային դատաստանին: Այդ օրը հեռու չէ, մենք կը հաւատանք, երբ հայ ժողովուրդը, իր տառապանքին երկունքէն վերածնած, անարգութեան սիւնին պիտի գամէ բոլոր դաւաճանները, բոլոր ուրացողները՝ իր հերոսական պայքարին: Թերթին վարչութիւնը՝ գիտակից իր պաշտպանած դատին արդարութեանը, արհամարհելով բոլոր այդ խոչընդոտները, մինչեւ այսօր տարաւ իրեն վիճակուած դերը գործին հաւատքէն եւ ժողովրդական խաւերու անվերապահ համակրութենէն քաղելով իր ոյժերը:

Գործին սկզբնական կազմակերպութիւնը տեւեց մինչեւ անցեալ տարուայ Նոյեմբերի սկիզբները, որ ատեն Պ. Ս. Պարթեւեան քաշուեցաւ խմբագրապետութեան պաշտօնէն: Աւելորդ պիտի չըլլար անշուշտ Ձեզ բացատրել այն պատճառները որոնք առիթ տուած էին Պ. Պարթեւեանին՝ հրաժարական ներկայացնելու: Պ. Պարթեւեան, որը ինչպէս ըսինք, շարժման սկիզբը չափազանց խանդավառուած էր հայ կամաւորական շարժումներով, Վանի մեծ նահանջէն եւ Հայաստանի սարսափներէն յետոյ, բարոյալքումի եւ յուսախաբուութեան տրամադրութիւններ կը ցուցնէր, երեւոյթ մը որ այն ժամանակ գրեթէ ընդհանուր էր, եւ որուն սպաննիչ ազդեցութեան դէմ պէտք էր հակազդել, վառ պահելու համար ժողովրդին հաւատքը իր դատին արդարութեան, թափուած եւ թափուելիք ճիգերուն արգասաւորման եւ վերջնական յաղթանակին վրայ: Ոչ աւաղանքի վայրկեան էր եւ ոչ ալ զինադադարի. անդուլ աշխատանք պէտք էր հասարակութեան խաւերը գերծ պահելու համար անբարոյացումի եւ ապականութեան մահացնող հոսանքներէն: Ուստի վարչութեան մեր անդամները հարկ համարեցին աւելի մօտէն հսկել թերթին ուղղութեան եւ յաճախ դիտողութիւններ ուղղել պատահած թերացումներուն համար: Եւ եղաւ որ թերթին մամուլին տակ դրուելէն յետոյ իսկ, անոնք ստիպուած եղան դադրեցնել աշխատութիւնը եւ շարուած տողեր վերցնել, ինչ որ նուազ անպատեհութիւններ չէր ներկայացնէր գրաքննութեան տակ հրատարակուող թերթի մը համար. անկէ յետոյ անպակաս եղան տարակարծութիւններ խմբագրապետին եւ վարչութեան միջեւ, գաղափարի շուրջ եւ գաղափարի համար, մինչեւ որ վերջապէս Պ. Պարթեւեան, որ արդէն նուազ խանդավառ դարձած էր հանդէպ մեր գաղափարներուն, նմանօրինակ առիթ մը բռնելով, իր անդառնալի հրաժարականը ներկայացուց հագիւ ամիս մը եւս շարունակել խոստանալով իր պաշտօնը՝ վարչութեան խնդրանքին վրայ:

Մէկ ամսուան պայմանաժամը գոր խնդրած էինք Պ. Պարթեւեանէն, իսկապէս շատ քիչ էր, իրեն յաջորդ մը գտնալու համար՝ տրուած պայմաններու տակ: Սակայն վարչութիւնը, թերթին արտօնատիրոջ հետ համախորհուրդ անմիջապէս հեռագրով եւ նամակով դիմեց քանի մը տեղեր միաժամանակ, յուսալով որ անոնցմէ գէթ մէկը տրամադրելի պիտի ըլլար: Դիմում եղաւ ժընեւ Պ. Լեւոն Սեղբոսեանին եւ «Դրօշակ»ի խմբագրութեան միջոցաւ ընկ. Ռ. Դարբինեանին եւ Ռ. Լեւնեանին⁶: Առաջինը հեռագրով մերժեց, ցաւ յայտնելով թէ անցագիրը առած եւ արդէն Կովկաս մեկնելու վրայ ըլլալով իրեն համար անկարելի էր Եգիպտոս գալ: Ընկ. Ռ.

6.- Յաջորդաբար՝ Լեւոն Շանթին, Չիլիմգարեան Արտաշէսին եւ Նազարեանց Լիպարիտին:



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Դարբինեան արդէն անցած էր Կովկաս եւ կը վարէր Բագուի «Արեւ» թերթին խմբագրապետութիւնը: Իսկ ընկեր Ռ. Լեոնեանին մասին «Դրօշակ»ի խմբագրութեան ըրած դիմումները Ռուսմանիա, մնացին անհետեւանք. նոյնիսկ հակառակ ընկ. Տքթ. Զաւրիեւի խոստումներուն, որ այն ժամանակ կը գտնուէր Ռուսմանիա, կարելի չեղաւ ոեւէ պատասխան առնել. միայն վերջերս, ինքը ընկ. Լեոնեան ընկեր թղթակից մը կը յանձնարարէր մեզի՝ թերթին աշխատակիցելու համար, առանց նամակին մէջ խօսք ընելու իր գալու կամ չգալու մասին:

Եւ ահա այսպիսով վերջին դեկտեմբերի սկիզբէն ի վեր, Գահիրէի ընկերները ստիպուած եղան շարունակել նաեւ թերթին խմբագրական աշխատութիւնը՝ զոր առժամեայ կերպով ստանձնած էին:

Յուսաբերի 13 ամսեայ կեանքին վրայ այս հակիրճ գեկուցումը փակելէ առաջ հարկ կը համարենք նաեւ քանի մը խօսք ընել անոր այսօրուայ դիրքին մասին՝ որպէս արտասահմանի հայկական շարժումներուն ներքին ազդակներէն մէկը: Զանազան վայրերէն մեզի հասած տեղեկութիւններու վրայ հիմնուելով կարող ենք ըսել թէ համակրութեան ջերմ զգացումներ կան հանդէպ «Յուսաբեր»ի, Եգիպտոսէ դուրս Սուտանի, Հայէշիստանի, Յունաստանի, Կրետէի, Կիպրոսի եւ նոյնիսկ հեռաւոր Հնդկաստանի հայկական գաղութներու մէջ: Ամերիկան, որ թերեւս բացատրելի պատճառներով անտարբեր վերաբերում մը ցոյց տուած էր թերթին, վերջին ամիսներու ընթացքին հոն ալ սկսաւ առաջ գալ գուրգուրոտ զգացումներ եւ ապահով ենք որ պիտի շարունակուի: Արտասահմանեան հայկական շարժումներուն մէջ «Յուսաբեր»ի գրաւած դիրքը չափելու համար, պէտք է վեր առնել այն պարագան՝ թէ անցած տարի երբ անիկա մեր ձեռքը անցաւ, բաժանորդներու

եւ ընթերցողներու խոշոր թիւ մը հեռացաւ, թերթին թիրաժը ինկաւ 1000էն 800ի. իսկ այսօր անիկա ոչ միայն իր թիրաժը բարձրացուցած է 1100ի, այլեւ բազմաթիւ փաստերով գիտենք թէ մեր հակառակորդ շրջաններու մէջ իսկ կը փնտռուի, որպէս հայ ցաւերու եւ հայ յոյսերու արտայայտիչ բերանը:

Ահաւասիկ «Յուսաբեր»ի կեանքն ու գործունէութիւնը իր ընդհ. գիծերուն մէջ: Կը յուսանք որ անիկա պատուաւոր կերպով պիտի տանի արտասահմանի մէջ իրեն վիճակուած դերը, մնալով համեստ բայց աննկուն ախոյեաններէն մէկը՝ հայրենի ազատագրութեան նուիրական դատին, վայելելով կազմակերպական մարմիններու եւ ընկերներու ինչպէս նաեւ համակիր հասարակութեան սէրն ու աջակցութիւնը. անշուշտ որ անիկա պիտի իրագործէ նոր նուաճումներ, պիտի հարթէ նոր դժուարութիւններ ժողովրդական աւելի հոծ զանգուածներ բոլորելու համար իր եւ մեր դատին շուրջը:

Թէ ինչ չափով կրնայինք հետապնդել մեր ձեռնարկներն ու նպատակները առանց «Յուսաբեր»ի, չենք ուզեր անդրադառնալ: Մենք անկեղծ եւ ջերմ շնորհակալութիւն միայն կը պարտինք Պ. Լալայեանցին. շնորհակալութիւն, զոր մարմինս չէ դադրած զանազան առիթներով արտայայտելէ եւ այսօր ալ այս հանդիսաւոր ժողովին մէջ կը կրկնէ՝ Պ. Լալայեանցին այնքան սրտոտ որքան հայրենասէր ժեսթին համար:

Շնորհակալութիւն կը պարտինք նաեւ մեր բոլոր մարմիններուն եւ ընկերներուն Եգիպտոս թէ արտասահման, որոնք իրենց աշխատութեամբ եւ նիւթական աղբիւրներ ստեղծելու ջանքերով դիւրացուցին եւ աւելի օգտակար դարձուցին «Յուսաբեր»ի աշխատութիւնը:

Հ.Յ.Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԷ



Փաստ. 1047-21

Ա 4.- Մ Ի Մ Ո Ռ Ա Ն Ա Ք Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ը ԿՈՉ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Հայրենակիցներ,

Օրուայ դաժան իրականություններու անըմբռնելի մոռացումով մը, Թաղականութեան, Տէրտէր-տիրացուի պայքարներ ծայր կու տան եզիպտահայ ազգային հորիզոններուն վրայ: Այդ բանը դուք պէտք չէ՛ որ թոյլ տաք: Բուռ մը խաթարուած խղճմտանքներու, թաղականութեան թեկնածուներու եւ անպաշտօն ուսուցիչներու ստեղծել նկրտած անհարկի եւ մեղապարտ շարժումներուն հանդէպ մենք պարտք կը համարինք հնչեցնել ահազանգը, ձեր ուշքը դարձնել դէպի Երկիր եւ ըսել:

Հայեր, մի՛ մոռանաք Հայրենիքը...

Մնայլ գոյժեր կու գան այդ դժբախտ Հայրենիքէն: Ամբողջ կովկասեան սահմանագլխին երկայնքը արիւնի ծով է դարձեր: Բասենէն մինչեւ Ատրպատական՝ անցնելով Ալաշկերտէն, Արաղայէն, Աղբակէն, քաղաք եւ գիւղ, տուն եւ հիւղակ հողի հաւասար են դարձուած: Այդ շրջաններու մինակ նիւթական կորուստը 15 միլիոն բուրլի կը հանեն Կովկասէն ստացուած տեղեկագրութիւնները. իսկ մարդկային կորուստը եւ գործուած վայրագութիւնները անթուելի են ու քստմնեցնող: Ատրպատականի եւ Աղբակի շրջաններէն՝ Հերխումանի, Բագի, Արագի, Մարգաւէնի, Խարատունի, Փիսի եւ Բաշկալայի բնակիչներէն հարիւրին հազիւ թէ 5-6ը կրցեր են ազատուիլ, մնացածները ամբողջ կոտորուեր են. իսկ Ախտիկի, Հասանթաքանի եւ Ագարիկի բնակիչներէն ազատուեր են միայն կիներն ու երախաները. տղամարդիկը ամբողջ ջարդուեր են: Այդ շրջաններէն առեւանգուած եւ գերի տարուած են 230 հարսներ ու աղջիկներ:

Ալաշկերտի գաւառին մէջ, Ալաշկերտի, Զիտկանի եւ Սօլլա-Միւլէյմանի բնակիչներէն ամբողջ տղամարդիկը ջարդուած են՝ առանց խնայելու նոյնիսկ 8-10 տարեկան տղաներուն: Բռնաբարութիւնները զարհուրելի չափերու են հասեր այդ շրջանին մէջ. առեւանգուած եւ գերի տարուած հարսներու եւ աղջիկներու թիւն է 470:

Կովկասի մէջ, Օթիի, Արդուիսի, Արտահանի եւ Արտանուշի շրջաններէն սպաննուած են 1270 հոգի եւ գերի տարուած են 250 կիներ ու օրիորդներ: Բացի այդ, Արտանուշի եւ Տանձուտի բնակիչներէն գրեթէ բոլոր տղամարդիկը, 10 տարեկանէն վեր, մորթուած են. ազատուեր են միայն կիներն ու մանուկները: Միայն Տանձուտի մէջ 24 կիներ եւ ջահիլ աղջիկներ թունաւորեր են ինքզինքին՝ բռնաբարութեան չենթարկուելու համար: Շուշէթի 4 հայկական գիւղերու այդ մարդիկը ամբողջ կոտորուեր են եւ կիներն ու աղջիկները գերի վարուեր:

Մալմաստի մօտ թուրք զինուորական իշխանութիւնները հաւաքեր են ամբողջ մնացած տղամարդիկը, թուով մօտ 7-800 հոգի, հաց բաժնելու խոստումով, եւ ամէնքը մէկանց գազանօրէն հրացանի են բռներ:

Իսկ Հայաստանի ներքին գաւառներէն մեր ստացած տեղեկութիւնները անելի՛ յուսահատական են եւ նոյնքան աղեխարշ: Բաբերդէն մինչեւ Տիգրանակերտ եւ Կարինէն մինչեւ Խարբերդ՝ անցնելով Երզնկայէն, Մուշէն, Բաղէշէն եւ Վանէն, սարսափն ու ոճիրն է որ կը տիրապետեն անսանձ: Ամէն կողմ ծեծ ու բռնութիւն, ամէն կողմ ծեծ ու բռնաբարում, ամէն կողմ արան ու թալան...

Ժողովուրդը տնտեսապէս բոլորովին քայքայուած է. աշնանացանք չէր եղած արդէն, հիմա գարնան ցանքն ալ չպիտի ըլլայ եւ սուրէն ազատուողը սովի ճարակ պիտի դառնայ: Միւս կողմէն համաճարակները կը ծաւալին ամէն կողմ. Կարնոյ շրջանին մէջ թիֆիսը զարհուրելի համեմատութիւններու հասած է եւ ամէն օր հարիւրաւոր զոհեր կը տանի:

Դրութիւնը օրէ օր կը ծանրանայ. կառավարական պաշտօնեաները գազան են դարձեր. ժանտարմներու կեղեքումներուն չափ չկայ. թուրք կամաւորներու գործած վայրագութիւնները լէնկթիմուրեան սարսափները կը յիշեցնեն...

Ընդհանուր կոտորածի եւ բնաջնջման սպառնալիքը կախուած է հայութեան գլխուն վերէն:

Վասպուրականը, Սասունն ու Զէյթունը, չկրնալով այլեւս դիմանալ այդ կեղեքումներուն՝ բարձրացուցած են ապստամբութեան դրօշակը. իսկ Մուշը կիսապստամբութեան դրօշեան մէջ է եւ շուտով կը միանայ շարժումին: Ընդհարումները սկսած են արդէն հայ ապստամբներու եւ թուրք ժանտարմըրիի ու միլիսի միջեւ ներքին Կար-

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

կառի մէջ (Պիթիսի նահանգ): Առաջին ընդհարումներու ընթացքին սպաննուած են 60է աւելի ժանտարմներ եւ հայերը կրակի տուած են 11 գիւղ: Գեավաշի հայ գիւղացիները օգնութեան կը փութան Կարկառի: Կը սպասուի որ հայ կամաւորական զունդերը ճեղքելով թուրք բանակը ներս խուժեն՝ օգնութեան փութալու ապստամբող շրջաններուն եւ միասին տանելու հայ ազատագրումին գերագոյն կռիւր:

Ահաւասիկ այն լուրերը, որոնք կու գան յալիտենական զուլումի աշխարհէն, փոթորկելու մեր սրտերը: Ամէն կողմէն օգնութեան աղիտողորմ կոչեր կը հասնին. բժշկական օգնութիւն, նիւթական օգնութիւն, զէնքի՝ օգնութիւն. այլապէս աւերակներու կոյտ մը միայն պիտի մնայ Հայաստանէն:

Հայրենակիցներ, վայրկեանը ծանր է ու պատասխանատուութիւնով լեցուն, ամէնքի՛ս համար: Ազգային գոյութեան հարցն է որ կը վճռուի կրակի եւ արհուի մէջ: Ամօ՛թ է ու ոճի՛ր միանգամայն այս գերագոյն բոպէներուն տէրտէր-տիրացուի սին խնդիրներով զբաղուիլ:

Մենք մեր մասին հրապարակով ու բարձրաձայն կը յայտարարենք թէ բացարձակապէս հեռու պիտի մնանք տեղական ամէն ճղճիմ պայքարէ՝ նոյնիսկ եթէ այդ պայքարները ուղղուած ըլլան մեր լաւագոյն ընկերներուն դէմ: Ամբողջ այդ ցոյցի եւ հանրագրութեան բացասական գործունէութենէն բիրտ անգամ նախադաս կը համարինք մենք պուտ մը ջուր հասցնել հայրենիքի զինուորին պապակած շրթունքներուն ու սրբել արցունքի շիթ մը թշուառ որբուկի մը աչուրներէն:

Հայրենակիցներ
ՄԻ՛ ՄՈՌՆԱՔ ՀԱՅՐԵՆԻՔԸ:
ՕԳՆԵՑԷՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ:

**ՀԱՅ. ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԷ**

Եգիպտոս, 27 Ապրիլ, 1915



Փաստ. 63-100
N° 196

Ա 5.— «ԳՐՕՇԱԿ»Ի ԽՍԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ Հ.Յ.Գ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԵԻՆ

Ժընև, 12 Սեպտեմբեր 1915

Ընկերներ!

Ինչպէս արդէն յայտնել ենք մեր 1 Օգոստոս N° 180 գրուած թիւնով, ձեր նամակն ստանալով ուղարկել էինք ընկ. Զաւրիեւին, որը այդ օրերում գտնուում էր Փարիզ: Ընկերը արդէն պատրաստուում էր ճանապարհուելու Ռուսաստան, որովհետեւ Կովկասի մեր ընկերները հեռագրով պահանջել էին վերադառնալ Պետրոգրադ: Ընկերը վարժ չլինելով հայերէն ընթերցանութեան մէջ եւ ժամանակի սղութեան պատճառով, օգտուել է միայն մեր իրեն գրած հապճեպ ու հակիրճ, բայց բաւական խիստ ոճով ուղևերէն նամակից եւ ունեցել է [Նուբար] փաշայի հետ երկար եւ սուր խօսակցութիւն:

Փաշայի օրգան համարուած թերթում գետեղուած հակադաշնակցական յօդուածի առթիւ խօսելիս, Փաշայն յայտնել է, որ այդ յօդուածը հրատարակուած է եղել Մայիս 25-ին. կը նշանակի նա չի կարող Եգիպտոսից ուղարկուած լինել աւելի ո՛ւշ, քան Ապրիլի վերջը. իսկ այդ ժամանակ ինքը դեռ [Ազգ.] պատուիրակութեան անդամ չէր: Թէեւ հակառակ դրան նա սկսել էր ստանալ բազմաթիւ սպառնական նամակներ, որի հետեւանքով էլ յօդուածագիրը ուզել է հրապարակով պաշտպանել իրեն, իսկ երբ պատուիրակութեան պաշտօնին է հրաւիրուել եւ ունեցել իր առաջին տեսակցութիւնը ընկերոջ հետ, կարգադրել է անմիջապէս որ այդ ուղղութեամբ եւ ո՛չ մի յօդուած լոյս չտեսնէ իւրայինների կողմից որեւէ թերթում:

Փաշայի եւ իւրայինների կողմից հակադաշնակցական վերաբերմունքի հարցի շուրջ խօսելիս, ընկ. Զաւրիեւը յայտնել է դրականապէս Փաշային, որ եթէ շարունակուելու լինի այդ ու նման վերաբերմունք նրանց կողմից, դա մենք կ'ընդունենք իրեւ մի կռիւ մեր դէմ եւ կը տանք մեր հակահարուածը. այնուհետեւ թող ոչ ոք չմեղադրէ մեզ նրա ունենալիք կործանիչ հետեւանքների համար: Ընկերն աւելացրել է որ այդ բոլորի մեղաւորը մենք չենք, քանի որ կռուի պատճառը, ինքը Փաշայն է իր ոչ խելօք բարեկամներով:

Այդ խօսակցութիւնից յետոյ Փաշայն յայտնած է մեր ընկերոջ որ այդ դէպքում աւելի լաւ է որ ինքը հրաժարուի իր պատուիրակութեան պաշտօնից, սակայն մեր ընկերոջ վիճաբանութիւնից ու տուած երկար բացատրութիւններից յետոյ, Փաշայն համոզուում է որ եկած սպառ-

նալիքները չեն եղել Դաշնակցութեան կողմից, յետ կանգնում իր հրաժարուելու մտքից եւ խոստանում իր կողմից ամէն միջոց ձեռք առնել որպէսզի այդպիսի յօդուածներ երեւան չգան:

Մեր ընկերն աւելացնում է իր կողմից որ եթէ այնպիսի պայմաններ ստեղծուեն որ Փաշայն ստիպուէ հրաժարուել, մեր գործը մշտապէս կը տուժէ, եւ այդ պարզապէս այն պատճառով որ չկայ եւ ո՛չ մէկը հայութեան մէջ որ ունենայ այն կապերը Ֆրանսայում եւ Անգլիայում որ ունի Փաշայն եւ որի մի մասը ժառանգել է իր հօրից: Ուստի, նա խնդրում է — այդ է եւ մեր տեսակէտը — Պօղոս Փաշայի դէմ յարձակումներ չգործել, որովհետեւ նա բարոյապէս յաղթուած է արդէն. բացի այս, ինչպէս որ ձեզ էլ ենք գրել, նա մեր ընկերոջ հետ վարուել է շատ սիրալիկ կերպով եւ գործել մեծ յարգանքով:

Մի կողմ թողնելով նրա արեւելեան տիպի բացասական կողմերը, որոնք յատուկ են փաշայական միջավայրին եւ որոնք այս դէպքում մեզ չպիտի զբաղեցնեն, ուրախալի է ասել, որ այժմ նա համոզուած է որ հայութեան բոլոր ճիշդ պիտի կեդրոնացած լինի կամաւորների թիւը շատացնելու մէջ, որովհետեւ միայն այդ միջոցով իրապէս ազդել կարելի է մեր հարցի լուծման. ուստի եւ նա որոշել է իր բոլոր հաւաքած գումարը ուղարկել կամաւորների օգտին: Ընկերներ, ի՛նչ գնով էլ որ լինի, — ինչպէս առիթ ենք ունեցել մի քանի անգամ գրելու — պիտի ամէն ճիշդ թափենք մեր ազգային համերաշխութիւնը պաշտպանելու, որովհետեւ մենք ապրում ենք մեր պատմութեան ամենամեծ ճգնաժամը եւ ամէն ինչ պէտք է գոհաբերենք յօգուտ մեր տանջուած դատի:

Սկզբնական շրջանի մեր համերաշխութիւնը, գրում է մեր ընկերը, ինչպէս Ռուսաստանում, նոյնպէս էլ Ֆրանսա եւ Անգլիայում, հիացմունք եւ զարմանք է առաջ բերել եւ ասել են որ այդպիսի մի ժողովուրդ կարելի է համարել հասունացած քաղաքական անկախութեան համար, բայց նա աւելացնում է եւ այս, որ Արեւելքում եղած անգլիական հիւպատոսներից ոմանք գրաւոր գեկուցումներ են տուել իրենց կեդրոնական կառավարութեան, որ «հայկական քաղաքական անկախութիւն անհնարին է, որովհետեւ դարերի ստրկութիւնը մեռցրել է նրանց մէջ պետական մտածողութեան ընդունակութիւնը»: Բացի այս, նրանք ներքնապէս անհաշտ են եւ փոխադարձ ատելութեամբ լեցուած, եւ

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

աւելի շուտ իրենք են իրենց կորստի պատճառը քան ուրիշները:

Անգլիական — եգիպտական վարչութիւնը շատ ուշադրութեամբ հետեւում է հայկական մամուլի պայքարին, որը երբեմն իր հերթին տեղեկագրում է կեդրոնական կառավարութեան, եւ ի հարկէ այդ պայքարն ունի իր բացասական նշանակութիւնը:

Լոնդոնի մի քանի միլիոնատէր հայեր աշխատում են նսեմացնել Փաշայի միսսիան յայտարարելով՝ որ նա չի ներկայացնում հայ ժողովրդի ցանկութիւնների հարազատ արտայայտիչ եւ նրա կողմից իրաւասու չէ, որ հայերը չեն ցանկանում աւտոնոմիա ունենալ, այլ կցուել Ռուսաստանին եւ որ աւտոնոմիայի ցանկութիւնը սե-

փականութիւն է միայն կովկասահայ մտածելակերպի եւ ոչ ընդհանուր հայութեան:

Ինչպէս անցեալում առիթ ենք ունեցել գրելու, այժմ էլ կրկնում եւ յատկապէս յանձնարարում ենք, որ այն բոլոր կէտերը, որոնք վերաբերում են մեր ընկերոջ եւ Փաշայի մէջ եղած յարաբերութեան եւ բանակցութիւններին համարելու էք կուսակցական խիստ դադտնիք եւ ոչ մի պարագայում դուրս թողնելու էք կուսակցական պատասխանատու մարմինների սահմանափակ շրջանից:

Ընկերական բարեկներով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

Փաստ. 1048-161

Ա 6.- Հ.Յ.Դ. ԿԻՊՐՈՍԻ ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Ազգային ներկայ ճգնաժամին, երբ մեր արենակիցներուն արիւնը գետերով կը հասնի մէկ ծայրէն միւսը, ու երբ ներքին յետադիմական խուլ պայքար մը ծայր է տուած հայկական բոլոր գաղթավայրերու մէջ – հայրենիքէն բեկորները գէնքի ուժով թրքական բռնապետական ուժիմէն ազատելու համար կազմակերպուած կամաւորական շարժման դէմ ու երբ ներկայ աղէտներուն պատճառաւ նոր սերունդին յեղափոխական, բարոյական եւ մտաւորական դաստիարակութիւնը կը խաթարուի, դասակարգային պայքարներու մէջ թոտի գուեհիկ ըմբռնումներով, մենք՝ Պէյրութի ուսանողական շրջանի դաշնակցականներս, թոյտուութեամբ «Դրօշակ»ի խմբագրութեան թիւ 169, 23/9/15 թուակիր նամակով, Կիպրոսի մէջ, Նիքոսիա կեդրոն ընտրելով, շրջանի կազմակերպութեան կը ձեռնարկենք՝ նպատակ ունենալով՝

- 1.- Հ.Յ.Դ.ի ծրագրին որդեգրումը իւր ընդհանուր գծերով:
- 2.- Կամաւորական շարժման եւ Ազգ. բիւրոյին փրփակմանտը:
- 3.- Նոր սերունդին յեղափոխական դաստիարակութիւնը:
- 4.- Կիպրոսի մէջ ազգային հարցերու միջամտութիւնը Հ.Յ.Դ.ի ծրագրին տեսակէտով:
- 5.- Հ.Յ.Դ. գրականութեան ծաւալումը:

Մեր անդրանիկ քայլերուն մէջ իսկ կը զգանք մեր ձեռնարկած գործին լրջութիւնը ու պայքարին դառնութիւնը, սակայն վստահ մեր գաղափարներուն յաղթանակին անխուսափելիութեան, ու տողորուած Հ.Յ.Դ.ի քառորդ դարու ստեղծագործ պայքարով, գիտակցօրէն ասպարէզ կու գանք գործելու:

- Կեցցէ՛ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը:
- Կեցցէ՛ հայ կամաւորական շարժումը:
- Կեցցէ՛ նոր սերունդը:

ՌՈՒԲԷՆ ԹԱԳԻՈՐԵԱՆ
(ԵՓՐԱՏԻ-ԱՐԵՒ)
Կ. ԹԷՐԶԵԱՆ
(ՖԱՐ ՀԱՏ)

28/9/15, Նիքոսիա (Կիպրոս)

Փաստ. 1048-160

Ա 7.- ՊԱՏՃԷՆ Հ.Յ.Դ.Ի ՆԻԿՈՍԻՈՅ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ Ա. ՆԻՍՏԻՆ

Հ.Յ.Դ.Ի Նիկոսիոյ ընկերներու կազմակերպական Ա. նիստը տեղի ունեցաւ Սեպտեմբեր 28, 1915, Երեքշաբթի գիշեր ժամը 9:30-ին, ընկեր Եփրատի-Արեւի օֆիսը եւ տեւեց ժամ մը:

Օրակարգն էր

- 1.- Երկու խօսք Հ.Յ.Դ.Ի նպատակին մասին.
- 2.- Դիւանի կազմութիւն.
- 3.- Անդամակցողներու անուանացուցակը եւ երդու-մը.
- 4.- Կազմակերպութեան ներկայ կացութիւնը.
- 5.- Երեք հոգինոց տեղական մարմնի մը ընտրու-թիւնը.
- 6.- Մուտքի դրամ եւ անդամավճար.
- 7.- Ընդհանուր հարցեր — գաղտնապահութիւն, կարգապահութիւն եւ կուսակցական փրոփականտ.
- 8.- Ձէնք ունենալու հարցը.
- 9.- Եգիպտոսի կոմիտէին ղրկուած տեղեկատուա-կան նամակի ընթերցում:
- 10.- Նիկոսիոյ ընթերցատան ներկայ տաճնապը:

Հ.Յ.Դ.Ի Կիպրոսի շրջանի պատմական սոյն առաջին նիստը, ութ ընկերներու ներկայութեան տեղի ունեցաւ: Ընկեր Եփրատի-Արեւի [կողմէ] կուսակցութեան նպատակին, տակտիկին եւ կանոնադրին ինչպէս նաեւ անցեալի գործունէութեան մասին ժողովի բացման առթիւ մի քանի խօսք լսելէ վերջ դիւանի կազմութեան ձեռնարկուեցաւ: Ընկեր Եփրատի-Արեւ ընտրուեցաւ ատենապետ, եւ ընկ. Ֆարհատ ատենադպիր:

Անդամակցող ընկերներու անուանացուցակը պատ-րաստելէ վերջ տեղի ունեցաւ երդումը, որ ամենայու-զիչ ու տպաւորիչ ֆազը դարձաւ մեր անդրանիկ ժողո-վին: Հայաստանի քարտէզը դրուեցաւ սեղանի մը վրայ, որուն վրայ դրուեցաւ մերկացած սուր մը եւ Հ.Յ.Դ.Ի Եգիպտոսի շրջանին 1913 տարուան ներքին կանոնադ-րը: Ութ ընկերներ առանձին առանձին ներկայացան սեղանին եւ ձեռքերնին խորհրդանշանին վրայ դնելով պատուոյ խօսք տուին:

1.- Ամէն տեղ եւ ամէն ժամանակ Հ.Յ.Դ.Ի նպատակը գործադրել:

2.- Կուսակցութեան գաղտնիքները դուրս չտալ:

3.- Կարգապահ ըլլալ:

4.- Եթէ երբեք դաշնակցական շարքերէն հրաժարին կամ հրաժարեցունին, իրենց վստահուած գաղտնիքները երբեք հրապարակ չպիտի հանեն:

Երդումէն վերջ որոշուեցաւ Կիպրոսի մէջ ենթակո-միտէի մը ստեղծուիլը, վարչական գործը յանձնել ըն-կեր Եփրատի-Արեւի եւ ընկեր Ֆարհատի, բայց երրորդ ընկերոջ մը պէտքը նկատի ունենալով, ընկեր Ուուկան ընտրուեցաւ գաղտնի քուէարկութեամբ:

Որոշուեցաւ իւրաքանչիւր անդամի մուտքի փոքր վճար մը գանձել փրոփականտի եւ այլն ծախսերուն յատկացնելու նպատակաւ: Ամսավճարները եւս արձա-նագրուեցան:

Ապա գաղտնապահութիւն, կարգապահութիւն եւ կուսակցական փրոփականտի մասին ամէնուն կողմէ կարծիքներ եւ գաղափարներ յայտնելէ վերջ, թելադրու-եցաւ, որ ամէն անոնք որ Կիպրոսի կառավարութեան օրինաց համեմատ կրնան զէնք ունենալ եւ զինավար-ժութիւն սորվիլ, առիթէն օգտուին միշտ: Միջանկեալ կերպով կամաւորական հարցին մասին եւս գաղափար-ներ յայտնուեցան եւ փափաք յայտնուեցաւ յառաջիկա-յին եթէ տեղական պայմանները նպաստաւոր ըլլան կուսակցութիւնը այս ինքիւրը լրջօրէն նկատի առնէ:

Ժամանակը ուշ ըլլալուն, ընթերցատան հարցը յա-ջորդ նիստին ձգուեցաւ:

Տոքթ. Ռ. ԹԱԳԻՈՐԵԱՆ
(ԵՓՐԱՏԻ-ԱՐԵՒ)
Ատենապետ

Ե. Կ.ԹԷՐՁԵԱՆ
(ՖԱՐՀԱՏ)
Ատենադպիր

28/9/1915
Նիկոսիա

Փաստ. 1047-68

Ա 8.- ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԷԷՆ Հ.Յ.Դ. «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ, ԺՂԱՆԱ

1915 Նոյ. 18 (ն. տ.)

Ընկերներ,

Ստացանք Ձեր 23 Հոկտ. թուակիրը: Ներփակ Ձեզ կ'ուղարկենք տեղեկագիր մը Սուէտիոյ հայոց ապրատամբուլթեան մասին, որը հետաքրքիր կրնայ ըլլալ Ձեզ համար⁷:

Կարելոր տեղեկութիւններ դժբախտաբար չունինք Ձեզ հաղորդելիք մեր շրջանէն: Լեռնավայրի⁸ մէջ շարժում մը յառաջ բերելու համար Ֆրանսական կառավարութեան եղած դիմում մը վերջերս ջուրը ինկաւ՝ Պալքանեան դէպքերու հետեւանքով⁹: Հիմա քանի մը օր առաջ, իրենք առաջարկ բերին որպէսզի հայերը 50-60 յարմար անձեր նշանակեն՝ Ֆրանսական սպաներու ձեռամբ մարզուելու եւ իբր սպայ պատրաստուելու համար: Այդ սպաները պիտի գործուղուին ապագային՝ եթէ այդ վայրերուն մէջ ձեռնարկ մը կատարուի: Դեռ որոշ պատասխան մը չենք տուած: Ձեզ կը տեղեկացնենք, եթէ յաջողուի:

Պուրբէջէն ընկեր Յ. Ամատունիէ նամակ ստացանք: Տեղեկութիւններ կու տայ Պալքանեան Կ. կոմիտէի մասին: Մեր կարծիքով Ռուսներու կամ այլուր անհրաժեշտ է Արտասահմանի համար կարելոր կեդրոնական մարմին մը ստեղծել:

Մեր աշխատութիւնները իրենց բնականոն ընթացքովը առաջ կ'երթան (թէեւ մենք պիտի ուզէինք, նկատի առած Երկրի բացառիկ դրութիւնը՝ որ անոնք անսովոր

թափով մը առաջ տարուին): Կամաւորներու համար 5000 ռուպլիի հինգերորդ առաքում մը ըրինք, որով մեր ղրկած գումարները ընդամէնը հասան 25000 ռուպլիի: Յոյս ունինք մօտերս ճորդ 5000 մը եւս ղրկել:

Սուէտիոյ (Բօր-Սայիտ) մեր ընկերներէն կազմեցինք շատ կանոնաւոր մարմին մը, Կարմիր լեբան ենթակոմիտէ անունին տակ: Կազմեցինք նոյնպէս ենթակոմիտէ մը Թանթայի մէջ՝ տեղացի ուժերով եւ համակիրներով, այնպէս որ Եգիպտոսի շրջանը այսօր կը ներկայացնէ հինգ կանոնաւոր ենթակոմիտէ (Գահիրէ, Աղեքսանդրիա, Թանթա, Բօր Սայիտ, Կիպրոս), որոնց հետ կը պահենք խիստ մօտ յարաբերութիւն:

Եգիպտոսի «Նպաստամատոյց»ին հետ համաձայնութեան մը չկրցանք գալ, որովհետեւ մարդիկը, ընդունելով հանդերձ որ առանց մեզի բան մը չեն կրնար ընել, չեն ուզեր սակայն նոյնիսկ փոքր զիջողութիւններ մը անգամ յանձն առնել:

Երկու ամիս ամբողջ նոյնիսկ ժողով մը չգումարելէ յետոյ, այս վերջին օրերս Աղեքսանդրիոյ մէջ հանգանակութեան ելած են, հակառակ իրենց ամբողջ ջանքերուն հազիւ կրցած են 225 ոսկիի ողորմելի գումար մը հանգանակել:

Մեր կարծիքով «Նպաստամատոյց»ը «Հիմնադրամ»ին չափ անգամ յաջողութիւն չպիտի կրնայ ունենալ:

Կովկասէն եթէ տեղեկութիւններ ստանաք, հոգ չէ թէ ըլլան անոնք մասնաւոր աղբիւրներէ, բարի եղէք մեզի հաղորդելու զանոնք, որովհետեւ բացարձակապէս անտեղեակ ենք հոն անցած դարձածներէն:

7.- Սուէտիոյ, այլ խօսքով Մուսա Լերան ապստամբութեան մասին յիշուած տեղեկագիրը տեսնել «ՆԻԻԹԵՐ»ու ԺԲ. հատոր, էջ 243-248:

8.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ: Տես նաեւ ծանօթագրութիւն թիւ 2:

9.- Պալքանեան դէպքեր – ակնարկութիւն՝ Գերմանիոյ, Աւստրիոյ եւ Թուրքիոյ կողմին՝ Պուլկարիոյ մասնակցութեան ընդի. պատերազմին (1915 թ. Մեպտ.):

Ընկերական բարեկներով
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԷՏԷ

Փաստ. 1049-76

Բ 1.- ՎԵՑԱՍՍԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՆԹԱԿՈՄԻՏԵԻՆ

(Ներկայացրած 3 Հոկտ. 1916ի Ընկերական Ընդհ. Ժողովին)

Ընկերներ,

նինք 66 գործօն եւ 13 օժանդակ ընկերներ:

Ենթակոմիտէս պաշտօնի անցած է 29 Յունուար 1916ին. հետեւաբար 31 Յունիս 1916 վեցամսեայ կեանքի իր տեղեկագիրն է որ կը ներկայացնենք այսու՝ ընկերական ընդհանուր ժողովի:

Ընկերական ընդհ. ժողովներ.— Մինչեւ 31 Յունիս ունեցանք 9 ընկերական ընդհանուր ժողով:

Ենթակոմիտէի նիստեր.— Մինչ 31 Յունիս 1916 մենք ունեցանք ենթակոմիտէի 28 ժողովներ:

Վիճակահանութիւն.— Մեր առաջին նիստին մէջ իսկ որոշեցինք նպաստի վիճակահանութիւն մը սարքել յանուն Երկրի կռուողներուն. այս մտօք արդէն նախորդ մարմինէն մեզ փոխանցուած էին շահող թիւերու յատկացուելիք ձեռագործներ եւայլն 10 փառնտի արժէքով. 2000 տոմսեր հրապարակ հանեցինք, որոնք գրեթէ ամբողջապէս սպառեցան. վիճակահանութիւնը կատարուեցաւ Յունիս 16ին, որմէ զուտ հասոյթ գոյացաւ 185,79 փառնտ:

Խորհրդակցական ժողովներ.— Նոյնքան ժամանակամիջոցի մէջ հրաւիրեցինք վեց խորհրդակցական ժողովներ զանազան ձեռնարկներու եւ խնդրոյ առթիւ:

Զինուորական նպաստի հանգանակութիւն.— Հակառակ տնտեսական տագնապին, Զինուորական նրպաստի հանգանակութիւնը, որուն արդիւնաւորման նոյնքան աչալուրջ աշխատութեան բաժին մը բերին մեր մանաւանդ կարգ մը ընկերները, բաւականաչափօրէն յաջողած կրնանք սեպել, երբ ի նկատի ունենանք այն պարագան որ մինչ 31 Յունիս ստորագրուած գումարը կը յանգի 800.00 փառնտի որ տակաւ գանձուելու վրայ է:

Խառն ժողով.— Կազմեցինք Ազգ. Առաջնորդարանի սրահին մէջ չէզոք եւ դաշնակցական ազգայնոց մասնակցութեամբ արդիւնաւորելու համար 1916 տարուոյ Զինուորական յանձնախումբի հանգանակութիւնը:

Ենթակոմիտէի, խորհրդակցական ժողովներու, ինչպէս նաեւ յիշուած խառն ժողովին մէջ, ուրախ ենք յայտնելու, գրեթէ միշտ կարծեաց եւ գաղափարներու բացարձակ համերաշխութիւն պահեցինք, բան մը որ ամէն կերպով նպաստեց մեզ խաղաղ վեցամսեակ մը բոլորելու:

Շրջանային ժողով.— Ձեզ ամէնուրեք արդէն ծանօթ է որ Յունիսի մէջ տեղի ունեցաւ քաղաքիս մէջ ընկերներու կողմէ ջերմօրէն բաղձացուած Եգիպտոսի Շրջանային ժողովը:

Խորհրդակցից ընկերներ.— Սատարելու համար մեր աշխատանաց՝ Ապրիլ 13ի նիստին մէջ՝ մեզ խորհրդակցից ընկեր առինք ընկերներ Մ. Եփրեմեան եւ Մ. Աւետիսեանը, յարմար դատուած ատեն խորհրդակցական ձայնով մեր ժողովներուն մասնակցելու համար:

Հաշուեկշիռ.— Մեր տեղեկագրին հետ ձեզ կը ներկայացնենք 1916 Յունուար 1 — Յունիս 1916 յանգող մեր դրամական գործողութեանց հաշուեկշիռը:

Դաշնակցական կանանց խումբ.— Մեր պաշտօնի կանչուած առջի մէկ օրէն իսկ, աշխատեցանք Դաշնակցութեան համակիր եւ օժանդակող հայուհիներէ խումբ մը կազմել, սակայն կը ցաւինք յայտնել որ մեր ջանքերը գուր անցան. այսուհանդերձ մենք պիտի չխնայենք մեր կարելին յաջողցնելու համար նմանօրինակ խումբի մը կազմութիւնը:

Մեր մոտաքի գումարները կը կազմեն.

Գործող եւ Օժանդակ ընկերներ.— Երբ Յունուար 29ին գործի կանչուեցանք, ունէինք 69 գործօն եւ 12 օժանդակ ընկերներ. ասոնցմէ 1 հրաժարած եւ 10 հոգի քաղաքէս մեկնած են. աւելցան 8 ընկերներ. հիմա ու-

Նախորդ ենթակոմիտէէն ստացուած	1627	փառնտ	
Գործօն ընկերներէ գանձուած			
մինչեւ 31 Յունիս	2544	»	
Օժանդակ	»	»	645
»	»	»	»
Յետեւալ անդամավճարներէ	»	»	379
»	»	»	»
«Քեռի»ի քառթերու վաճառքէն	»	»	513

<i>Ի նպաստ երկրի կռուողներու սարքուած վիճակահանութենէն</i>	17879	— 23587
<i>Մեր ելքի գումարներն են</i>		
<i>Նամակադրոշմ եւ տետր</i>	21.50	փ[առնտ]
<i>Ընկերական ընդհ. ժողովներու համար բեթրոլի ծախք</i>	90	
<i>Հաւաքելի հինգուկէս ամսական «Քեռի»ի սգահանդէսին առթիւ փոխան պսակի</i>	200	
<i>Կոմիտէին փոխանցուած Զինուորական նպաստի յանձ. գանձապահին</i>	17900	— 22546
<i>Գանձապետ ընկերոջ մօտ պատրաստ դրամ</i>	1041	

նեն, որովհետեւ նախորդ ենթակոմիտէն իր հաշուեփակը կատարած է 1915 Դեկտեմբեր 31ին, սակայն իր աշխատութիւնը շարունակած է մինչեւ 29 Յունուար 1916, շուրջ ամիս մը աւելի, որով Յունուար ամսուան գործողութիւնները մեզ փոխանցած են:

Դաշնակցական հրատարակութեանց բրոքականտա.— Յարդ կը շարունակենք ստանալ 30 օրինակ «Հայրենիք»¹⁰, զոր կը ցրուենք ընկերներու եւ համակիրներու միջեւ յաջողապէս:

Ի վերջոյ, պարտք կը սեպենք մեզ ուրախութեամբ յատնելու որ մեր ընկերները մեր ջանքերուն եւ ձեռնարկներուն աջակցեցան ամենասրտիւ: Կը սիրենք յուսալ որ իրենց սատարը անպակաս պիտի ընեն, ինչ որ միակ պայման է ամէն գործի յաջողութեան:

**Ա. ՄԱԼՃԵԱՆ, Յ. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ,
Լ. ԱԶՆԱԿՈՐԵԱՆ, Հ. ԱՄԻՐԵԱՆ**

Մանօթ.— Մեր տեղեկագիրը վեցամսեայ է, սակայն մեր հաշիւները եօթնամսեայ վիճակ մը կը ներկայաց-

10.- Միացեալ Նահանգներու Պոսթըն քաղաքին մէջ հրատարակուող դաշնակցական պաշտօնաթերթ:

*Աղեքսանդրիա
31 Յուլիս 1916*

Փաստ. 1049-50

Բ 2.- ՏԵՂԵԿԱԳԻՐ N° Ա. Հ.Յ.Դ. ԿԻՊՐՈՍԻ ԵՆԹԱԿՈՍԻՏԷԻ
(1915 Մեպտ. 28 – 1916 Յունիս 30)

Հ.Յ.Դ. Եզրպտոսի կոմիտէին, Գահիրէ

Նիկոսիա, 18 Յունիս, 1916

Յարգելի ընկերներ,

Կը հաստատենք մեր Մայիս 22 թուակիր նամակը եւ պատասխանին կը սպասենք:

Ստացած ենք Շրջանային ժողովին մատուցելիք ներքին կանոնադրին մէկ ձեռագիր օրինակը:

Յունիս 12ի (1916) սուրհանդակով կոմիտէի կողմէն մեզի ուղղուած շրջաբերականի մը խնդրանքին համաձայն, պատիւ ունինք ձեր առջին դնելու շրջանիս իննամսեայ գործունէութեան եւ ելեմուտքի ընդհանուր ամփոփ տեղեկագիրը:

Հ.Յ.Դ. Կիպրոսի Շրջանին կազմակերպութիւնը:

1915ի Փետրուարին, հայկական բարձրաւանդակի գուլումներուն դեռ թոյլ արձագանգները հեռագրական ու լրագրական միջոցներով հազիւ հասած էին Կիպրոս, երբ պէտքը զգալի եղաւ կազմակերպուած ուժերով խթանելու տեղիս անտարբեր գաղութը եւ մասնաւորաբար երիտասարդութիւնը, որպէսզի քչիկ մը բարոյական եւ նիւթական օգնութիւն ալ այս կղզիէն հոսէր ցեղին ծով ցաւերուն կաթիլ մը դարման ըլլալու:

Ընկեր Ռ. Թազուրեան գաղափարը յղացած էր Դաշնակցութեան դրօշակին տակ համախմբելու տեղիս երիտասարդութեան լաւագոյն ուժերը եւ անմիջապէս գործի ձեռնակել. ընկերը իր ծրագիրը պարզած էր ընկեր Ե. Թերզեանի, որուն հետ միասին Նիկոսիոյ լսարան-ընթերցատան վարչութեան անդամ էին: Սոյն երկու ընկերները «Դրօշակ»ի խմբագրութեան եւ կոմիտէիդ հետ պաշտօնական բանակցութիւնները վերջացնելէ յետոյ – որոնց մանրամասնութիւնները ձեզի ծանօթ են – հետեւեալ որոշումները կ'արձանագրեն միասին:

«... Մենք՝ Պէյրութի ուսանողական շրջանի դաշնակցականներս, թոյլտուութեամբ «Դրօշակ»ի խմբագրութեան թիւ 169, Յունիս 23 թուակիր նամակով, Կիպրոսի մէջ, Նիքոսիան կեդրոն ընտրելով, շրջանի կազմակերպութեան կը ձեռնարկենք նպատակ ունենալով:

1) Հ.Յ.Դ. ծրագրին որդեգրումը իր ընդհանուր գիծերով

2) Կամաւորական շարժման եւ «Ազգ. բիւրօ»ի փրփականտը

3) Նոր սերունդին յեղափոխական դաստիարակութիւնը

4) Կիպրոսի մէջ ազգային հարցերու միջամտութիւնը Հ.Յ.Դ. ծրագրի տեսակէտով

5) Հ.Յ.Դ. գրականութեան տարածումը:

Սեպտ. 28ին (1915) տեղի ունեցաւ կազմակերպական անդրանիկ ժողովը, ուր ութ ընկերներ եւ համակիրներ ընդունեցին կուսակցութեան ծրագիրը եւ տակտիկը եւ հաւատարիմ մնալու խոստմնագիրեր ստորագրեցին: Մի քանի ամիս յետոյ երկու ընկեր ունեցանք Լիմասոլ եւ մէկ ընկեր Լառնաքա:

Անդամացուցակ. –

Նիկոսիա. – Բիւզանդ Նիզիպլեան, Եզնիկ Թերզեան, Երուանդ Յովհաննէսեան, Հայկ Արմաղանեան, Մարտիրոս Ուզունեան, Յակոբ Ուզունեան, Յովակիմ Հաճիյակոբեան (մեռած 12 Մայիս 1916), Տոբթ. Ռ. Թազուրեան, Վահրամ Լեւոնեան:

Լիմասոլ. – Գառնիկ Փէշտիմալճեան, Կարապետ Փէշտիմալճեան

Լառնաքա. – Արամ Պատիկեան

Իննամսեայ ելեմուտք –
Հոկտ. 1, 1915 – Յունիս 30, 1916

Մուտք

Մուտքի վճարներէ	£ 2	2	0 փ.
Ամսավճարներէ	4	14	0
Անդրանիկի պատկերներէ	1	7	4½
	£ 8	3	4½

Ելք

Կոմիտէին ղրկուած	2	4	4½
Անդրանիկի պատկ.	1	5	0
Պէճի փորագր. մասն.	1	0	0
Թղթակցութիւններ	0	6	2
Այլ եւ այլ պիտոյքներ	0	11	7½
Զվճարուած եւ չգանձուած ⁽¹⁾	1	0	0
Մնտուկէն վճարուած*	0	3	0
Պատրաստ դրամ [փառնետ]	1	12	8½
	£ 8	3	4½

Ծանոթ.- Ելեմուտքի հաշիւներուն մանրամասնութիւնը տես գանձապահին՝ ընկեր Լեւոնեանի՝ պատրաստած տախտակը:

(1): 0. 4. 4½ դրշ.ի գումար մը ոչ միկոսիաբնակ ընկերներէ՝ դեռ պիտի գանձուի:

0.15.4.5ի ընդհ. գումարը՝ հակառակող ընկերներ մերժած են վճարել առանց որեւէ օրինական բանաւոր հիմքի: Այս մասին ձեր ուշադրութիւնը կը հրաւիրենք: Ընկեր Յովհաննէսեան, օրինակի համար Նոյեմբերէն աստիճան ոչ մէկ ամսավճար չէ վճարած:

*) Ա. եռամսեայի հաշուեցուցակը փակելու համար գանձապահը իր կողմէն 3 շրջից վճարած է:

Յ. Գ.— Զին. նպաստի յանձնախմբին հաշիւները չենք ստացած դեռ:

Կուսակցական ներքին գործունէութիւն

Ժողովներ.— Ունեցած ենք

- 6 կազմակերպական ժողովներ
- 5 դասախօսական ժողովներ, եւ
- 17 ենթակոմիտէի նիստեր:

Կազմակերպական ժողովներու մէջ շօշափած ենք Նիկոսիոյ լսարան-ընթերցատան, կրթական տուրքի, կամաւորանպաստ հանգանակութեան եւ այլ խնդիրներու վերաբերեալ հարցեր եւ որոշումներ անցուցած ենք: Դասախօսութիւնները եղած են հետեւեալ նիւթերու վրայ.—

- ա) Մտաւորական զարգացում, բ) Դաշնակցութեան տեղը հայ իրականութեան մէջ, գ) Յեղափոխական ոգի (հոգեբանական վերլուծում), դ) Ընկերվարական գաղափարը եւ շարժումը — դասախօս՝ ընկեր Ռ. Թազուրեան, ե) Ընկեր Մ. Վ[արանդեան]ի «Վերածնունդ հայրենիք»-ի մի քանի գլուխներուն ամփոփումը — դասախօս՝ ընկեր Ե. Թերզեան:

Ենթակոմիտէի նիստերուն մէջ (Մարտ 25էն աստիճան ընկեր Թերզեան բացակայած է հակառակ իրեն ուղղուած գրաւոր հրակէրներուն, որով ընկերներ Վ. Լեւոնեան եւ Ռ. Թազուրեան միասին եւ համախոհ քայլերով շարունակած են ենթակոմիտէի գործերը). կուսակցութեան ընդհանուր եւ ընթացիկ գործերը մեր լուրջ եւ անկողմնակալ ուշադրութեան առարկան եղած են:

Գերքեր.— Կոմիտէին մեզի դրկած 15-20 կտոր պրոչիւրներէն զատ, ընկերներու ինքնագարգացման ստարելու նպատակաւ ժընեւէն ապսպրած ենք՝ «Բողոքը նորագոյն պատմութեան մէջ» (1 հատոր) եւ «Վերածնունդ հայրենիքը եւ մեր դիրքը»: Գիրքերը ձեռքէ ձեռք կը դառնան:

Թերթեր.— Գրեթէ առանց բացառութեան բոլոր ընկերները, առանձինն կամ միասին, կը ստանան «Յու-

սաբեր»: Մի քանի ամիսներ առաջ «Հայրենիք»-ի եւ «Հորիզոն»-ի խմբագրութիւններուն դիմելով մէկ մէկ օրինակ ձրի «Հայրենիք» եւ «Հորիզոն» կը ստանանք (ենթակոմիտէն): Գրած ենք նաեւ Բագուի «Արեւ»ին:

Պէճ.— Դաշնակցութեան պէճը փորագրել տուած ենք թուրքի մը, սակայն դեռ չենք պատրաստած:

Կուսակցութեան արտաքին գործունէութիւն

Թղթակցութիւններ.— Տեւական կանոնաւոր թղթակցութիւններ ունեցած ենք կոմիտէին հետ. օրը օրին պատասխանած ենք մեզի եկած նամակներուն: Մի քանի նամակները գրած ենք «Հայրենիք»-ի եւ «Հորիզոն»-ի եւ «Արեւ»-ի խմբագրութիւններուն:

Հանգանակութիւններ.— Կամաւորանպաստ հանգանակութեան հարցը մեր ուշադրութեան եւ սրտին ամենամօտիկ խնդիրը եղած է աւելի քան տարիէ մը ի վեր: Դեռ չկազմակերպուած, մի քանի ընկերներու անխոնջ ջանքերուն շնորհիւ, կղզիին մէջ բացուած ընդհանուր հանգանակութեան 25%ը ապահովուեցաւ «Ազգային բիւրօ»-ի կամաւորներուն: 50 փառնատ դրկուեցաւ կաթողիկոսին՝ Բիւրոյին յանձնուելու: Եղածովը չբաւականանալով, մեր ընկերներէն կազմեցինք «Զինուորական նպաստի յանձնախումբ» մը որպէսզի մասնաւոր հանգանակութիւն մը ունենանք եւ արդիւնքը ամբողջապէս կամաւորներուն յատկացնենք: Մենք մեր մէջ արձանագրեցինք 20-30 ոսկիի մօտ գումար մը եւ յոյս ունինք որ ժողովուրդէն եւս կարելի է այդքան եւ գուցէ աւելի արձանագրել եթէ ներքին տագնապնիս վերջ մը գտնէ...

«Զինուորական նպաստի յանձնախումբ»ը մեր իր վրայ դրած յոյսերը բնաւ չարդարացնելէ զատ, կուսակցութեան ներքին ցաւալի երկպառակութեան միակ պատճառը կը մնայ, մանաւանդ յանձին իր մէկ երկու անդամներուն: Եթէր ամիսներէ ի վեր գործ մը չտեսնելէ անդին, պատճառած վնասնին է որ կը քաշենք եւ պիտի քաշենք եթէ կոմիտէն եւս վարանոտ ընթացք մը բռնէ...: Հասկըցողներ եւ չհասկցողներ, շարժողներ եւ չշարժողներ միշտ կը գտնուին նոյնիսկ ամենաարմատական կուսակցութիւններու մէջ: Արդեօ՞ք օրէնք ու բարեացակամութիւն որքան կրնան ստեղծուած դժուարութիւնները հարթել եթէ «police force»¹¹ գոյութիւն չունենայ «arbitration»-ներու¹² կողքին...

Կը խնդրենք ամէն պարագայի տակ, որ ձեր վճռական կարգադրութիւնը այս մասին չուշանայ այլեւս:

Յիշատակներ.— Կոմիտէի բաղձանքին համաձայն՝ ինչ որ մեր ալ բաղձանքն էր՝ ջանք ըրինք որ «Յիշատակներ»ը տարածուի կղզիին մէջ: Առաջմ 20ի մօտ բաժանորդ ունի «Յիշատակներ»ը (Ղազիկեանին եւս):

11. - Ոստիկանական ոյժ:
12. - Իրաւարարութիւններու:

«Կիրառահայ քրոնիկ».— Կոմիտէի թելադրութեամբ եւ ընկեր Ա. Հանրմեանի¹³ պնդումովը, ընկեր Ռ. Թադևորեան սկսաւ գրել կիրառահայ քրոնիկներու շարք մը, որ խորունկ հետաքրքրութեամբ մը սկսաւ կարդացուել Կիրարոսի ամէն կողմը: Կը կարծենք թէ այդ քրոնիկները վնասակար չեղան:

Մախու առարկաներ.— Անդրանիկի պատկերներէն 25 օրինակ զրկուեցաւ մեզի. մեծ մասը ծախեցինք եւ ժամանակին 25 շիլին փոխադրեցինք կոմիտէին: Ձեռքերնու տակ ունինք (կամաւորական յանձնախումբէն փոխանցուած) Հայրենի թանգարանէն եւն. մի քանի կտոր գիրքեր: Չեն ծախուած դեռ:

Կուսակցութեան ներքին տագնապը.—

Այս մասին չենք ուզեր ծանրանալ այլեւս, քանի որ խնդրոյն մանրամասնութիւնները մէկէ աւելի անգամներ, պաշտօնական եւ անպաշտօն գրութիւններով ձեր առջեւ դրուեցան եւ ձեր տալիք վերջնական վճիռներուն եւ կարգադրութիւններուն կը սպասեն անոնք: Այսքանը ըսենք միայն, թէ կիրքն ու կարծատեսութիւնը կուրցուցած ըլլալ կը թուին մէկ երկու ընկերներու յատակ տեսողութիւնը, եւ այն աստիճանի, որ անոնք երբեմն կը փորձուին՝ նախապէս օգտուելով խնամիական կապերէ՝ շրջանի ներքին կանոնադրի տրամադրութիւնները մէկզի թողուլ, ենթակոմիտէի իրաւասութիւնները չճանչնալ եւ նոյնիսկ կոմիտէի հեղինակութիւնը challenge ընել¹⁴...

Անշուշտ, երբ այդ պարոնները վերջի վերջոյ համոզւին, թէ մենք անյողողող պիտի մնանք ծուռ ու մուռ քայլերուն առջեւ, եւ ամէն տեսակ դժուարութիւններու կուրծք տալով բարձր պիտի պահենք Դաշնակցութեան գաղափարական, մաքուր դրօշակը, երկզիմի ընթացքը մէկզի դնելով, անոնք կամ տեղի պիտի տան կուսակցութեան քորէթ¹⁵ կարգապահութեան, եւ կամ սխալներ սխալներու վրայ բարդելով անմիտ ու անիմաստ գահավիթումներու գոհ պիտի երթան, իրենք ըլլալով պատասխանատուները իրենց անբաղձալի եւ ցաւալի անկումներուն:

Կարգապահութիւն.— Առհասարակ գէշ չէր սկիզբները քանի «Ձինուորական նպաստի յանձնախումբ» մը գոյութիւն չունէր: Այդ յանձնախումբը, եթէր ամիսներէ ի վեր, փոխանակ դրամ հաւաքելու պարապ տեղը ջուր ծեծեց եւ պահ մը փորձեց ներքին «coup d'état»¹⁶ մը առաջ բերել յերկրածոյ, փերուն բայց ուռուցիկ ամբաստանութիւններով, թէ ենթակոմիտէի ատենապետը կուսակցութիւնը կը շահագործէր, եւն. եւն.:

Անկողմնակալ ըլլալու համար ըսենք, սակայն, թէ միջավայրի գոհակ, աղտոտ հոգեբանութիւնը անուղ-

ղակիօրէն աստիճան մը ազդած է մեր ընկերներէն ու մանց ուղղութեան: Միւս կողմէն գործին նորութիւնը կար, եւ շատերուն անվարժ ըլլալը կարգի կանոնի հնազանդելու:

Մարտ 25ի մեր ընդհ. ժողովի անսպասելի վերջաւորութենէն յետոյ, մէկ երկու ընկերներ, կուսակցական ներքին կարգ մը պարզ գաղտնիքներ դուրս տուին վնասելով ամէնուն փրէսթիթիւն¹⁷:

Մեր ազդեցութիւնը շրջանին մէջ.— Պզտիկ, սահմանափակ ուժ մըն ենք այստեղ, եւ չենք ուզեր չափազանցել մեր ազդեցութիւնը կիրառահայ գաղութին մէջ, բայց եւ այնպէս ուժ մըն ենք — բարոյական, մտաւորական, երիտասարդական ուժ մը — որ ունինք մեր ազդեցութիւնը ժողովուրդի բոլոր խաւերուն վրայ. իտէպլին ու հաւատքին ուժը վեր կը մնայ միշտ նիւթէն ու շօշափելիէն, թիւէն ու քանակէն: Ներքին ու արտաքին ճնշումները, արգելքներն ու խոչընդոտները չեն կրնար յուսահատեցնել մեզ: Ու որքա՛ն պիտի աճէր մեր ուժը եթէ ընկերներէն ոմանք տեղական պայմաններուն ամէն գնով յարմարելու վտանգաւոր տակտիկան որդեգրելու մարմաջ մը չցուցաբերէին: Վտանգաւոր կ'ըսենք, քանզի անտարբերութիւնը, այլասերումը եւ տափակութիւնը միջավայրի գլխաւոր յատկանիշներն են: Անշուշտ կոմիտէն կրնայ հակակռուել — եւ կը խնդրենք որ այդպէս ընէ — Դաշնակցութեան իտէպլներուն եւ ոգիին ներհակ որդեգրուած ուղղութիւններ: Մաքուր, սկզբունքային պայքարը, միակ գէնքն է յառաջդիմութեան, յաղթանակի: Ի՛նչ պատճառներ ունինք վախնալու երբ գիտական ճշմարտութիւններու ետեւէ ենք, եւ անձնական շահեր չենք հետապնդեր:

Կը յուսանք ընկերներ, թէ տարի մը վերջ աւելի բեղմնաւոր գործունէութեան տեղեկագիրը կու տայ ձեզ Հ.Յ.Դ. Կիրարոսի շրջանը:

Ընկերական ջերմագին բարեկներով
Հ.Յ.Դ. ԿԻՊՐՈՍԻ ԵՆԹԱԿՈՍԻՏԷ

Յ.Գ.— Սոյն տեղեկագիրը պատրաստուած էր, երբ ստացանք ձեր Յունիս 9 թուակիր յոյժ քաջալերական նամակը, որուն պիտի պատասխանենք եկող շաբաթ անպատճառ:

Կը խնդրենք որ, անմիջապէս, այդտեղէն մեկնող շաբթուան սուրհանդակով մեզի 4-5 պլոք Գահիրէի Ձինուորական նպաստի յանձնախումբին ընկալագիրներէն զրկէք: Մեր հակառակորդ ընկերները չեն ուզեր կամաւորներուն ի նպաստ ցարդ հանգանակուած դրամներուն հաշիւները ենթակոմիտէին յանձնել: Կը խորհինք, որ հեռագրէք իրենց որպէսզի դրամ, հաշիւ եւն. ընկեր Լեւոնեանին՝ ենթակոմիտէի գանձապահին յանձնեն:

13.- Արտատպող Հանրմեան, Գերկայացուցիչ Հ.Յ.Դ. Գահիրէի կոմիտէին:
14.- Մարտահրաւեր կարդալ:

15.- Շիտակ, ուղիղ:
16.- Պետական հարուած:
17.- Վարկին, համբալին:

Փաստ. 1049-66

**Բ 3.- ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ԹՈՐԳՈՄ ԵՊՍ. ԳՈՒՇԱԿԵԱՆԻ
ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ
ՔԵՌԻԻ (ԱՐՇԱԿ ԳԱԲԱՑԵԱՆ) ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ**

ՔԵՌԻԻ ղիցագնորէն «իմացեալ» մահը
անմահութիւն է իր Ազգին:

Պէտք չէ ողբալ զայն,
այլ հպարտ ըլլալ իր յիշատակին առջեւ:

Հայրենիքի Յեղափոխութեան արիւնագանգ հողին վրայ ինկած
Աւետարանի ցորենահատիկն է այն, որուն մահը կեանք կու տայ
բազմաթիւ ուրիշ ցորենահասկերու:

Իր սրտին աճիւններէն Արդարութիւնը վրէժի նոր շանթեր
պիտի դարբնէ բազմաթիւ ուրիշներու սրտին մէջ:

Հայկական Ազատագրութեան կռիւի պատմութեան մէջ, իր հողակոյտը
պիտի ընդ միշտ մնայ մին «Ազգային Յոյս»ի
անառիկ մարտկոցներէն, որոնց բարձունքէն կարելի է տեսնել
եւ ողջունել Ազատութեան արշալոյսը:

Անդո՛րր իր անմահութեան քունը,
անհատուցանելի երախտագիտութեան համբոյրներուն տակ, զորս Ազգն
համօրէն կ'մատուցանէ իր փառաւորուած անունին:

Եւ փա՛ռք յաւիտենական՝ այն հրաշալի եւ վեհապանծ ոգւոյն, որ
Քեռիի եւ Ժիրայրի եւ իրենց նմաններու միջոցաւ կ'թի հասկցնել մեզի
թէ արդարեւ կ'ապրի տակաւին հին հայկազուն քաջերու հոգին,
ապրեցնելու համար այն ազգը, որ անոնց անունն ունի եւ արիւնը:

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

12 Յուլիս 916

Փաստ. 1049-62

Բ 4.– ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ.ԵԱՆ ԹԱՆԹԱՅԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԵԻ

26 Յունիս 1916

Հ. Յ. Դաշնակցութեան տեղւոյս մարմինը վերա-
կազմուեցաւ 11 Հոկտ. 1915ին եւ մինչեւ թուականս
գումարած է եօթ ընդ. ժողովներ եւ ութը ենթակոմի-
տէի ժողովներ:

Ենթակոմիտէս առանձնապէս եւ ընկերները ընդ-
հանրապէս միակ գլխաւոր մտահոգութիւնը ունեցան
Ձին. «Նպաստի գործը» եւ ուրախալի է որ հակառակ
տիրող աննպաստ արգելքներուն յաջողեցանք 915ի հա-
մար միայն երկու ամսավճարով մօտաւորապէս 800 հա-
րիւն դճկ. (800) ողջ ապահովել, իսկ 916ին մօտաւորա-
պէս վեց հարիւր դճկ. (600) ողջ ամսավճար, ինչ որ
առանձին եւ պերճախօս փաստ է տեղական կազմին
լուրջ եւ անվհատ աշխատութեանց եւ միեւնոյն պարա-
զային ժողովրդեան ունեցած համակրութիւնը դէպի
գործը եւ դէպի այն կուսակցութիւնը, որ գործի ամ-
բողջ ծանրութիւնը առած է իւր լայն ուսերուն վրայ...

Շնորհիւ աղտոտ հակառակորդներու թէպէտեւ տե-
ղական կազմը ունեցաւ իւր անախորժ վայրկեանները,

բայց շնորհիւ ընկերներու հաստատակամ կեցուածքին
միշտ յաղթական եւ միշտ պատուով դուրս եկաւ:

Յաւով կ'արձանագրենք որ այս կարճ ժամանակի
ընթացքին տեղական կազմէն պակսեցան 5 ընկերներ,
անշուշտ անձնական գործերով փոխադրուելով զանա-
զան քաղաքներ, եւ տեղւոյս նեղ շրջանին պատճառաւ
կարելի չեղաւ մինչեւ ցարդ անոնց պակասը լրացնել:
Բայց ենթակոմիտէս լիայոյս է որ տակաւ առ տակաւ
կարելի պիտի ըլլայ կազմը նորոգնոր զօրացնել եւ աշխա-
տութիւնը աւելի արդիւնաւորել:

Կազմակերպութեան ուղղակի հասոյթը եղած է ամ-
սավճ. մօտաւորապէս հարիւր տասը դճկ. ողջ. (110),
գինուորական նպաստը 915ին ամսավճար չորս հարիւր
(400), իսկ 916ին մօտաւորապէս վեց հարիւր (600), բա-
ցառիկ ըլլալով նուէրներ եւայլն:

Հ.Յ.Դ. ԹԱՆԹԱՅԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ
[Ստորագրութիւններ]

ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒ Հ.Յ.Դ.ԵԱՆ ԹԱՆԹԱՅԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԵԻ

Սկսեալ 1 նոյեմ. 915էն մինչեւ 31 մայիս 916

ՍՈՒՏՔ	դիկ. ողջ.	ԵԼՔ	դիկ. ողջ.
915 նոյ. ամսի ամսավճար	100	1916 փետր. 15 կոմիտէին փոխադր.	205
» դեկտ. » »	105	թուրք, տետրակ, նամակադրոշմ	25
916 յուն. » »	105	պատրաստ դրամ	505
» փետր. » »	105		735
» մարտ » »	110		
» ապրիլ » »	110		
» մայիս » »	100		
	735		
Գումար	735	Գումար	735

Հաւաքիչ Ա. ԱՐԵՒԵԱՆ Գանձապահ ՍԵԼԻՔ Խ. ՍԵԼԷՔԵԱՆ

Փաստ. 64-36

Բ 5.- «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԵՆ Հ.Յ.Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍՄՏԵԻՆ

Ընկերներ,

Ստացել ենք Յունիս 23-ի ձեռնարկը:

Կը հաստատենք մեր No 25 գրուած յոյս ունենալու մասին 2 Յունիս թուականը – որը յոյս ունենալու ստացելու և փոխադրելու է:

Մեր No 218 գրուած յոյս ունենալու և վերաբերումը, ինչպէս թիւրիմացութեամբ գրել էք ձեռնարկում, այլ Ղարիբիին¹⁸: Տալիս ենք նրա ամփոփումը յոյս ունենալով որ այս անգամ կը ստանաք:

...Ընկ. Ղարիբը Կովկաս մեկնելիս ունեցել է տեսակցութիւն Փարիզ և Լոնդրա, մեր դատին համակիր և հեղինակաւոր այլ անձնաւորութիւնների հետ: Ներկայացրել է մանրամասնօրէն մեր հարցի ներկայ վիճակը և ունեցել բաւական միտմտարական արդիւնք: Զեզ ուղարկած «Հիւմանիթէ»ի համարներից տեղեկացած կը լինիք անշուշտ, որ Փարիզ կազմուել է Ֆրանսիայի հեղինակաւոր դէմքերից հայաստանեւոր մի կոմիտէ որի նպատակն է գրադուել հայկական դատով և մասնաւորապէս նիւթական օժանդակութիւն ցոյց տալ հայ գաղթականներին. ընկ. Ղ[արիբ]ը ընդունուել է նաեւ Ֆր. Արտ. գործոց կոմիտէից որին նոյնպէս ներկայացրել է մեր վիճակը. խոստացել են իրենց օժանդակութիւնը և որոշ յոյս տուել: Նամակի մնացորդ մասը վերաբերում էր ձեզանից դրամ խնդրելու առթիւ, որը չենք կրկնում:

Հայկական պատգամաւորութեան հարցի շուրջ ձեռք գրածները տեղեկացանք և կատարելապէս համաձայն ենք ձեզ հետ: մենք էլ միշտ նոյն կարծիքին ենք եղել և շարունակ այդ ուղղութեամբ գրել Կովկաս որ այդ անձնաւորութիւնը¹⁹ որքան էլ յարմար լինի իր ստանձնած դերի համար, այսուհանդերձ նրան մենակ ձեզը ցանկալի է որովհետեւ նա չի ապրում այդ հարցով և ունի իր տեսակէտները, որոնք այնքան էլ չեն համապատասխանում մերիններին: Կովկասն էլ նոյն կարծիքին

էր և խոստացել էր ամէն կերպ աշխատել 2 հոգի ևս ուղարկել տալու նրան համագործակցելու համար: Սօս մի ամիս է ինչ կաթողիկոսը նշանակել է որպէս անդամ հայ պատուիրակութեան, դոկտ. Զաւրիեւին, Նորատունկեանին և Մասեհեան-Պանին, բայց Դոկտորը հրաժարուել է: Միւսների մասին դրական ոչինչ գիտենք: Վերջերս Ֆրանսական «Temps»ը շվեյցարական թերթից արտատուել էր մի հաղորդագրութիւն, որով Լօզանի հայերը այնտեղ նոր ժամանած Ահմէդ-Րիզային²⁰ բանկետ են տուել. լուրը անհիմն էր. ստոյգ տեղեկութիւններ ստանալով հերքումներ ուղարկուեց թերթերին և բանից պարզուեց որ նրան մասնաւոր ճաշի հրաւիրողը եղել է Նորատունկեանը²¹ իր մի քանի հարուստ բարեկամների հետ. այդ կարող էք այս առթից օգտուել, Յոսաբերի էջերում քննադատելու Նորատունկեանը և զգոյշ ակնարկներ անէք էջմիածնին որ նա այսպիսի ծանր ու պատասխանատու օրերում այդպիսի ճակատագրական խնդրի համար ընտրութիւններ է անում առանց իրազեկ մարդկանց հետ խորհրդակցելու: Ժամանակն է որ էջմիածինը դուրս գայ կասկածելի ազդեցութիւններից և պատասխանատու քայլերում խորհրդակցել իրազեկ և խնդրին ծանօթ մարդանց հետ, լսի ժողովրդի ձայնը և այլն. անշուշտ դուք կը ձեւակերպէք, մենք տալիս ենք կմախքը:

Ուղարկում ենք մի օր[ինա]կ « Լա Գազէթ տը Լօզան», ուր կը գտնէք «Պաղեստինը հրէական հանրապետութիւն» վերտառութեամբ յօդուածը, ուր պարզուած է Մորգընիթաուի իսկական դիմակը, թերեւս Յոսաբերը կ'ուզէ օգտուել:

Լաւ էք մտածել ձեռք գործունէութեան սահմանները ճշտելով, այդպիսով ձեռք և նպաստամատոյցի մէջ գործունէութեան եղանակը պարզ կը լինի:

Ողջունում ենք Շրջանային ժողովի բացումը և ցանկանում նրա աշխատանքներին կատարեալ յաջողութիւն:

Ներփակ նամակը խնդրում ենք ուղարկէք Ամերիկա:

Ընկերական բարեկներով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԴՐՕՇԱԿԻ

22 Յուլիս 1916
Ժընև

18.- Վիգէնը ծածկանունն է դոկտ. Յակոբ Զարիեւի, Ղարիբը՝ Ա. Ահարոնեանի:
19.- Խօսքը կը վերաբերի Պօղոս փաշայի:
20.- Ահմէդ-Րիզա – Գալիպոլի Օսմ. Թուրքիոյ Ազգ. ժողովի:
21.- Նորատունկեան Գաբրիէլ (1852-1936) – Օսմ. Թուրքիոյ արտաքին գործոց նախկին նախարարի:

Փաստ. 1050-327

Բ 6.– Հ.Յ.Գ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԵԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

Գահիրե, 6 Նոյ. 1916

Ընկերներ,

Հինգշաբթի օր տեղի ունեցաւ ձեզ ծանօթ տեսակ-
ցութիւնը, եւ յիշատակագիրը յանձնուեցաւ Գոմանտա-
նին²², որ իր գոհունակութիւնը յայտնեց անոր մասին
եւ խոստացաւ անմիջապէս իսկ մասնաւոր տեղեկագ-
րով մը զրկել զայն Պրն. Պրիանին²³: Մեր կողմէ նոյն-
պէս կամաւորներու ալպոմ մը նուիրուեցաւ իրեն, ինչ
որ մեծ գոհունակութիւն պատճառեց:

Գոմանտանին հետ համաձայնութեամբ կարգադրու-
եցաւ որ մեր ընկերներէն Եգիպտոսի այլեւայլ քաղաք-
ներուն մէջ գտնուող սուէտիացիները²⁴ անմիջապէս
իսկ մեկնին դէպի Բ. Սայիտ, ոգեւորութիւն յառաջ բե-
րելու համար տեղւոյն վրայ եւ օգնելու համար գինուոր-
ագրութեան գործին: Իսկ միւս սուէտիացիները առ
այժմ դեռ կանուխ համարուեցաւ եւ անօգուտ Բ. Սա-
յիտ վերադարձնել:

Մուրատի²⁵ մասին Գոմանտանը համամիտ գտնուե-
ցաւ եւ պիտի տեղեկանայ դեսպանատունէն, թէ ար-
դեօք կարելիութիւն կա՞յ իրենց միջոցով եւ շիֆոն հե-
ռագրով յարաբերութեան մէջ մտնելու Թիֆլիսի հետ,
յաջողցնելու համար մեր գին. դեկավար ոյժերէն մէ-
կուն այստեղ գալը:

Ինչ կը վերաբերի Փրանս[ական] ճակատին վրայ
գտնուող մեր հայ կամաւորներուն եւ սպաններուն,
անձնապէս այդ մասին եւս ինք համամտութիւն յայտ-
նեց եւ խնդրեց մեզմէ անոնց լիակատար մէկ ցուցակը,
որպէսզի զայն ներկայացնէ Ձօր. Ժօֆրի²⁶ համաձայ-
նութեան:

Այս տեսակցութեան էական կէտերը ասոնք են, իսկ
մանրամասնութիւնները ձեզ կը հաղորդենք մեր յա-
ջորդ լիակատարին, որուն մասին յառաջիկայով կը
գրենք ձեզ:

Աւելորդ չ'ըլլար թերեւս ըսել, ընկերներ, որ Գոման-
տանը մեզմէ կը պահանջէ կատարեալ ու բացարձակ
զաղտնապահութիւն բոլոր այս խնդիրներու շուրջ:
Մենք այստեղ նոր ենթակոմիտէն, տակաւին ընտրուած

չըլլալով, պիտի խօսինք միայն մեր մէկ քանի ձեռնհաս
ընկերներուն, յատուկ խորհրդակցական ժողովի հրա-
ւիրելով զանոնք. դուք ալ նոյնը ըրէք ենթակոմիտէին
այդտեղ:

Որոշուած տեսակցութիւնները թէքէեանի եւ Տա-
մատեանի²⁷ հետ տեղի ունեցան: Թէքէեան բաւականին
տաք ընդունելութիւն ըրած է մեր առաջարկներուն,
իսկ Տամատեան գտնուած է աւելի վերապահ, կոտո-
րածներու եւ փոխվրէժի մղձաւանջէն հալածուած, եւ
միեւնոյն ժամանակ զուտ կուսակցական համաձայնու-
թիւն մը այս խնդրոյն շուրջ անբաւական նկատելով եւ
ուզելով աղա ու փաշա կոխել դարձեալ նոր ստեղծուե-
լիք մարմնին մէջ: Այս մէկ երկու օրս ռամկավարները
ժողով պիտի գումարեն իրենց մարդոց հետ եւ արդիւն-
քը պիտի հաղորդեն, որքան կարելի է շուտով, մեզի:

Մեր այստեղի ընկերներէն Ծ հոգի իրենց փասերը²⁸
ստանալու համար մեր միջոցով դիմած են արդէն կա-
ռավարութեան եւ հաւանականաբար վաղը միւս օր կը
մեկնին: Դուք այդտեղէն մեկնողներու ցանկը տակա-
ւին շուղարկեցիք. իրենց ընկերներու կարծիքով Պուր-
սայեանի մեկնումը անհրաժեշտ է, ինչպէս նաեւ Հա-
պէշեանինը, շուտով համոզեցէք զիրենք, խնդրենք, եւ
զրկեցէք մեզի անուն, տարիք եւ լուսանկար փասին
վրայ փակցուելու համար:

Աղեք[սանդրի]ոյ թատերական յանձնախումբի
կողմէ ընկ. Կարապետեան, տեղւոյն ենթակոմիտէի
կազմակերպած ներկայացման մասին պզտիկ յայտա-
րարութիւն մը զրկած է թերթին կողմանէ հրատարակ-
ւելու համար, որուն մէջ կ'ըսուի թէ ներկայացումը պի-
տի տրուի «Ի յարգանս Երկրի կոռուղներուն». այս մասին
կը խնդրենք որ մեր վերջին լիակատարի որոշումը հա-
ղորդէք կամ թելադրէք իրենց. նոյնպէս այդ յայտարա-
րութեամբ Օր. Շաղոյեանի մասնակցութիւնը ապահով-
ւած ցոյց կը տրուի, մինչդեռ Օրիորդը ինք մեզի յայտա-
րարեց որ ինքը որեւէ խոստում չէ տուած եւ նախքան
այդ կը փափաքի զիտնալ թէ ովքեր դեր պիտի վերցնեն
այդ խաղին մէջ:

22.- Իմա՝ Եգիպտոսի մէջ տեղակայուած ֆրանս. զօրքի հրա-
մանատարին:
23.- Արիսթիտ Պրիան (1862-1932), Ֆրանսայի վարչապետ:
24.- Խօսքը կը վերաբերի Եգիպտոս փոխադրուած մուսալեռ-
ցիներուն:
25.- Խօսքը կը վերաբերի անուանի մարտիկ Սեբաստացի Մու-

րատի, զոր կը խորհէին Եգիպտոս հրախիթել կամաւորական շարժ-
ման (Արեւելեան լեգէոն) մղում տալու համար:
26.- Ժոզէֆ Ժոֆֆրը (1852-1932) – ֆրանսական բանակի ան-
ուանի զօրավար, ապա մարաշախտ:
27.- Վահան Թէքէեան (բանաստեղծ) եւ Միհրան Տամատեան:
28.- Արսոնագիի (ճամբորդելու):

Հայրենիք թերթի հատավաճառութեան համար ձեր ենթակումիտէն, տպուելու ինդրանօք, պզտիկ ազդ մը ղրկած էր «Յուսաբեր»ին՝ Գահիրէի մէջ հատավաճառութեան համար ներկայացուցիչ ցոյց տալով ընկ. Մարլեանը: Ընկերը ինք մեզ յայտարարած է թէ չի կրնար ընդունիլ այդ գործը, եւ այդ է պատճառ վերեւ յիշուած ազդին չհրատարակուելուն:

Խնդրենք այս մասին բերանացի բացատրութիւն տայիք տեղւոյդ ենթակումիտէին:

Ներփակ՝ Դրօշակի իմբագրութենէն նամակ մը, եւ նամակ մ'ալ կարմիր լերան ենթակումիտէն²⁹:

*Ընկերական բարեւներով
Հ.Յ.Դ. Եգիպտոսի կումիտէի
Գահիրէի ընկերներ
ԲՃ. ՆԵՒՐՈՒԶ, , Ա. Տ., Մ. Տ.*

Յ. Գ.— Բացարձակ անհրաժեշտութեան պարագային մենք համաձայն ենք որ կուսակցական սնտուկէն, մեր ընկերներուն եւ ոչ-ընկերներուն համար՝ առանց խտրութեան ճամբու ծախս յատկացուի Բոր Սայիտ երթալու համար: Եթէ դուք եւս համաձայն էք այս մասին, կրնաք իրենց պահանջին գոհացում տալ:

29.- Կարմիր Լեռ – Հ.Յ.Դ. ենթակումիտէ Փորթ-Սայիտ հաստատուած մուսալեոցիներու:

Փաստ. 1051-3

Բ 7.- Հ.Յ.Գ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԵԷՆ ԿԻՊՐՈՍԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԵԻՆ (Նիկոսիա)

Յուլիուս 10/23, 1917

Ընկերներ,

Ստացած ենք իրենց ժամանակին կոմիտէիս ուղղած ձեր բոլոր նամակները, ինչպէս նաեւ ներփակ գումարները, կազմակերպական հասոյթներէ 1.30,0 անգլ. ոսկի, եւ կամաւորական հանգանակութեան հաշուոյն՝ տասը եւ տասնեւհինգ անգլ. ոսկուոյ գումարները: Տասը ոսկուոյ մասին Զին[ւորական] նպաստի Գահիրէի յանձնարարութեամբ ժամանակին ձեզ գրած է եղեր արդէն:

Դժբախտաբար կոմիտէս կարող չէր զարգ. պատասխանել ձեր նամակներուն. եւ շատ երկար ու միանգամայն աւելորդ պիտի ըլլար թուել այժմ ձեզ՝ պատճառներն այդ ակամայ զանցառութեան. ըսենք միայն որ ոչ թերացումի եւ ոչ ալ մոռացումի արդիւնք եղած է կոմիտէիս լուրերը, այլ գլխաւորաբար կոմիտէիս չափազանց ծանրաբեռնուած ըլլալը նորանոր եւ նորատեսակ գործերով՝ պատճառ դարձած են ատոր: Կը կարծենք թէ յետ այսու մեր թղթակցութիւնները աւելի կանոնաւոր պիտի ըլլան եւ աւելի յաճախակի ձեզ հետ, տրուած ըլլալով որ վերին աստիճանի կարեւոր դեր է վերապահուած ներկայիս Կիպրոսի մեր ենթակոմիտէին այս պատմական օրերուն, ու վստահ ըլլալով որ Կիպրոսի մեր ընկերները լիովին պիտի պսակեն իրենց վրայ դրուած յոյսերը:

Խօսելէ առաջ ձեզ շահագրգռող համերաշխութեան հարցին մասին, հարկ կը համարենք համառօտակի ծանօթացնել ձեզ այն փոփոխութիւն հետ, որոնցմէ անցած ձեր կոմիտէին գործունէութիւնը վերջին Շրջանային ժողովէն մինչեւ միջ-կուսակցական, կամ աւելի ճիշդը՝ համագլխային համերաշխութեան իրականացումը: Կոմիտէս, պաշտօնի ձեռնարկած օրն իսկ, իր գործունէութեան գլխաւոր նպատակ կ'առաջադրէր հայ կամաւորական շարժման ուժեղացումը, ամէն կարելի ջանք թափելով Եգիպտոսի շրջանին բոլոր բարոյական թէ նիւթական աջակցութիւնը թելու Կովկասի Ազգ. բիւրոյին ձեռնարկած հսկայ շարժումին: Այդ ուղղութեամբ քալած էր նաեւ մեր նախորդ մարմինը, պէտք է ըսել շատ արդիւնաւոր կերպով, եւ այդ ուղղութիւնն ալ որդեգրած է Շրջ. ժողովը ինքը: Կոմիտէս կը մտածէր նաեւ, թէ Կովկասի շարժման աջակցելով հանդերձ, պէտք էր ու թերեւս ոչ անկարելի՝ հայ կուիւին համար ուրիշ ճակատներ ալ ստեղծել, արտասահմանի հայութեան ֆիզիքական կարողութիւնն ալ ի սպաս դնելու

համար հայրենիքի ազատագրութեան սուրբ պայքարին: Այս մտածումը, որ կը բխէր նոյնպէս Շրջանային ժողովին առած մէկ որոշումէն, աւելի հրամայական, աւելի այժմէական կը դառնար մասնաւորաբար այդ ժամանակ, երբ մեր կովկասեան շարժումը, յանկարծ բոլորովին անակնկալ կերպով, սեղմումներու կ'ենթարկուէր ռուս. իշխանութիւններու կողմէ: Կովկասեան ճակատին վրայ գործող հայկական գունդերը, որ մօտ երկու տարուայ անգնահատելի գործունէութիւն մը ունեցան եւ թանկագին ծառայութիւններ մատուցին ռուսական բանակին՝ կը պատիկնային եւ կը դառնային ռուս հրացանակիր գունդեր, այն ալ չափազանց սահմանափակ թիւով, ռուս սպաներու ղեկավարութեամբ եւ իբրեւ միութիւններ ռուս բանակին: Մէկ խօսքով, անոնց հայկական բնոյթն ու գործունէութիւնը կը ջնջուէին եւ կ'ըլլային պարզ կամաւորներ ռուսական բանակին մէջ: Յուսախաբութիւնը ծանր էր արդարեւ, բայց վհատումն ու յուսահատութիւնը չէին կրնար ըլլալ յեղ[ափոխական] կազմակերպութեան բաժինը. ընդհակառակն, պէտք էր աւելի եռանդով գործել, հայ կորովներուն հայ պայքարի նոր ասպարէզներ բանալ, որովհետեւ մեր անխախտ համոզումն այդ է եղած քառորդ դարէ ի վեր, թէ «առանց կուուի չիք փրկութիւն»:

Ուստի կոմիտէն այդ ուղղութեամբ գործի ձեռնարկեց, մէկ կողմէն Կովկասի շարժումը շարունակելով ուրիշ կէտի վրայ՝ անոր ազդեցութիւնը տեւական պահելու համար, միւս կողմէն, ինչպէս ըսինք, նոր ճակատներ բանալու ազատագրութեան պայքարին: Կատարուած դիմումներու մանրամասնութիւնները այնքան չեն հետաքրքրեր ձեզ անշուշտ, այլ արդիւնքը, որը նպաստաւոր եղաւ, աւելի նպաստաւոր քան ինչ որ մենք չէինք կրնար սպասել եւ այդ՝ շնորհիւ նոր եւ մեզմէ անկախ իրադարձութեանց, դաշնակից պետութեանց միջեւ առաջացած նոր գործակցութիւններու եւ նաեւ քաղաքական պայմաններու նոր դասաւորութեանց:

Այն ժամանակ, երբ մարմինը գրաւոր յարաբերութեան մէջ էր տեղւոյս անգլ[իական] եւ Փրանս[ական] իշխանութիւններու հետ, անդին Փարիզի եւ Լոնտոնի կառավարութեանց միջեւ համաձայնութիւն կը գոյանար հայկական կամաւորական գունդի կազմութեանը համար, որուն հոգը կը յանձնուէր Փրանսական գին. իշխանութիւններու: Նպատակը գլուխ հանելու մտքով մասնաւոր mission մը կու գար հոս, եւ մէկ երկու տե-



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

սակցութիւններ եւ խորհրդակցութիւններ բաւական կ'ըլլային արդէն պատրաստ հողին վրայ ձգելու համար այս մեծ գործին հիմերը: Իսկապէս մեծ էր գործը, ոչ միայն իր դժուարութիւններով, կամ ներկայացուած պատեհհոլութիւններով, այլեւ մանաւանդ քաղաքական տարողութեամբ: Հետեւաբար պէտք էր որ արտասահմանի ամբողջ հայութիւնը բոլորուէր անոր շուրջ, ուժերու մաքսիմումը տրամադրելու անոր եւ լաւագոյն արդիւնքը ապահովելու համար: Ու այդ նպատակին հասնելու համար, կոմիտէին առաջին մտահոգութիւնը եղաւ նախապէս հայ քաղաքական] կուսակցութիւնները բերել քով քովի, Եգիպտոսի ինչպէս ամբողջ արտասահմանի մէջ: Ուրախ ենք յայտնելու ձեզ ընկերներ, որ առաջին դիմումներն իսկ նպաստաւոր ընդունելութեան արժանացան եւ առանց մեծ դժուարութեան իրականացաւ այնքան տարիներէ ի վեր բաղձացուած համերաշխութիւնը: Նոյնը կը յուսանք ողջունել շուտով նաեւ Ամերիկայի մէջ եւ Կովկաս, ուր այդ ուղղութեամբ շարժումներ ծայր տուած են արդէն: Այս մասին այսչափը առաջով բաւական կը համարենք: Թերեւս մօտիկ ապագայի մէջ դուք պատեհհոլութիւնը ունենաք աւելի ընդարձակ ծանօթութիւններ ստանալ «Ազգ. միութեան» Եգիպտոսի մարմինն մէկ պատգամաւորին միջոցաւ, որը հաւանօրէն կ'ըլլայ մեր ընկերներէն մէկը: Միայն այսչափ աւելցնենք այժմէն, որ մեր գինուորները ամէն կերպով հաւասար պիտի նկատուին Փրանսացի գինուորին՝ կրելով անոնց համազգեստը, ունենալով Փրանսացի սպաներ եւայլն եւայլն:

Կը մնայ ձեզ ընկերներ, հողը պատրաստել նաեւ Կիպրոսի մէջ, հոն ալ իրականացնելու համար ազգային միութիւնը: Առանց սպասելու որ ուրիշներ քայլեր առնեն, եւ առանց անդրադառնալու անցեալի վէճերուն եւ պառակտումներուն վրայ, դուք պիտի ըլլաք նախաձեռնողը, իբրեւ աւելի գիտակից, աւելի զոհաբերող եւ աւելի ընդունակ ըմբռնելու վայրկեանին պահանջներն ու պարտաւորութիւնները: Կը յուսանք որ շուտով կը ստանանք ձեր առաջին քայլերուն յաջողութեան լուրերը:

Հարկ կը համարենք ձեր ուշադրութեան յանձնել, թէ մեր վերի գրածները, իրենց ամբողջութեամբը գաղտնի պէտք է պահուիմ, եւ իբրեւ կազմակերպական գաղտնիք ընկերներու սեղմ շրջանի մէջ միայն կարելի է խօսիլ անոնց մասին: Գաղտնապահութիւնը առաջին պայմանն է նման գործերու յաջողութեան եւ մենք չէ որ ձեզ յորդորականներ պիտի տայինք անոր անհրաժեշտութեան մասին: Աւելցնենք նաեւ թէ «Ազգ. միութեան» Եգիպտոսի մարմինը շուտով շրջաբերական նա-

մակ կը գրէ Կիպրոսի բոլոր խաւերուն ուղղուած. մինչեւ այդ, պէտք էք գետինը հարթել, հասարակութեան մէջ ձեզ սկզբունք առնելով Եգիպտոսի համագործակցութիւնը, առանց մտնելու զայն առաջացնող գործին կամ պատճառներուն մէջ: Լաւագոյն պիտի ըլլար անշուշտ ձեր գործունէութիւնը սկսիլ քաղաքական կուսակցութիւններու տեղույզ մարմիններուն հետ, եթէ կան. այդ աւելի պիտի դիւրացնէր ձեր աշխատութիւնները ու աւելի արդիւնաւոր պիտի ընծայէր զանոնք: Յամենայն դէպս, ձեր խոհականութեանն ու յեղափոխական կամքին եւ կորովին կը վստահինք գործը:

– Տոքթ. Թաթարեանի մասին կրկին գրեցէք մեզ, թէ ինքը միշտ կը մնա՞յ նոյն տրամադրութեան մէջ, որպէսզի նկատի ունենանք. բժիշկներու պէտքը պիտի ըլլայ կը կարծենք մօտիկ ապագային:

– Ներքին կանոնադրներու տպագրութիւնը արդէն աւարտած է. Աղեքսանդրիոյ մեր ընկերները պիտի ուղարկեն ձեզ 8-10 օրինակ:

– Գալով գին. նպաստի գործին, կարող էք շարունակել զայն ըստ առաջնոյն եւ դրամը փոխադրել մեզ, մինչեւ որ այս մասին նոր հրահանգ ստանաք կոմիտէէն:

– Նոյնպէս կազմակերպական դրամական հաշիւներն ու պատրաստի գումարը փոխադրեցէք Աղեքսանդրիա, ընկեր Մինաս Խաչատուրեանի անունով:

Ընկերական բարեկեանքով
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
 ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԷ

Յ. Գ.— Ընկեր Հանրմեանի բացակայութեան պատճառով, առ այժմ ձեր նամակները կարող էք ուղարկել Աղեքսանդրիա, ընկ. Մեսրոպ Նորատունկեանի հասցեով (Bourse – Alexandrie):

ՆՈՅՆ

Յ. Գ.— 8/21 Փետրուար – Ընկերներ, Յուսաբերի հասցէով ուղարկած ձեր հեռագրէն տեղեկանալով, որ մեր նամակը չէ հասած ձեր ձեռքը, ստիպուած եղանք կրկին արտագրել զայն մեր գոփիի մատեանէն եւ ուղարկել ձեզ նորէն նոյն միջոցաւ. կը յուսանք թէ այս անգամ պիտի ստանաք: Կը զարմանանք թէ ինչու կորսուեցաւ մեր նախորդը: Յամենայն դէպս, շուտով տեղեկագրեցէք մեզ երբ ներկայս ստանաք, որպէսզի միամիտ ըլլանք:

ՆՈՅՆ

Փաստ. 1051-36

Բ 8.- ԿԻՊՐՈՍԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ N° Բ.*
(1 Յուլիս, 1916 – 30 Յունիս, 1917)

Հ.Յ.Դ. Եզրիպտոսի կոմիտէին, Գահիրէ

Յարգելի ընկերներ,
Մարմինս պատիւ ունի Ձեզի ներկայացնելու իր տա-
րեկան գործունէութեան ամփոփ տեղեկագիրը:

Նախորդ շրջանի մեր գործունէութեան Ա. տեղեկա-
գիրը (28 Սեպ. 1915 – 30 Յունիս 1916) Ձեզի ղրկած էինք
անցեալ ամսուն, եւ Շրջանային ժողովին ներկայացու-
ցած էր զայն մեր պատգամաւորը ընկեր Մովսէս Տէր
Գալուստեան:

Անցեալ տարի, մեր բուռ մը ընկերներուն միջեւ ան-
համաձայնութիւն ծագած ըլլալով, կուսակցական
կեանքի [վրայ] տաղտուկն ու տաժանքը կը ծանրանար:
Մի քանի ընկերներ, տարի մը շարունակ, կուրծք տուին
ամէն տեսակ խոչընդոտներու եւ յաջող կերպով յառաջ
տարին կամաւորանպաստ հանգանակութիւնը, ու այս-
պիսով Դաշնակցութեան բրեւթիթին նպաստեցին:

Կամաւորանպաստ հանգանակութիւն.—

Ոչինչ կ'ոգեւորէր մեզ այնքան, որքան այն պատե-
հութիւնը որ կը տրուէր մեզի, Կովկասի անձնագոհ կա-
մաւորներուն ի նպաստ մի քանի լուծայ փութացնել
Կիպրոսէն: 1915ին, դաշնակցական ընկերներու եւ հա-
մակիրներու ջանքերուն շնորհիւ, Կիպրոսի մէջ բաց-
ւած ընդհանուր հանգանակութենէն 50 ոսկի (25%)
ապահոված էինք Ազգային բերրոյին: Այդ գումարը ժա-
մանակին իր տեղը ղրկուեցաւ, Նիկոսիոյ Ազգ. Շահ[ե-
րու] Պաշտպ. մարմնին կողմէ եւ ընկալագիրը ստաց-
ւեցաւ:

Երբ ընդհանուր հանգանակութիւնները դադրեցան,
առիթը յարմար նկատեցինք մասնակի հանգանակու-
թիւն մը եւս ընել ուղղակի կամաւորներու անունով եւ
կուսակցական «քոնթրոլ»ի տակ:

Յամառօրէն հետապնդելով մեր նպատակը յաջողե-
ցանք 63 անգլիական ոսկիի մօտ գումար մը արձանագ-
րել, եւ 6-7 ցուցակներ ղրկեցինք «Յուսաբեր»ին: Ան-
շուշտ մեր համեստ ցուցակներն ալ իրենց օգուտները
ունեցան արտասահմանի մէջ: Աւելորդ է ըսել թէ մեր
այս ձեռնարկը հաճելի չէր թուեր մեր հակառակորդնե-
րուն:

Հանգանակուած դրամէն՝ £ 25ին Գահիրէի Զինուո-

րական նպաստի յանձնախումբին ղրկեցինք Ձեր միջո-
ցաւ եւ £ 12ի նուէրներ (ծխախոտ) տարինք կամաւոր-
ներուն: Մնացած գանձուած եւ ապառիկ դրամներուն
հաշիւները Ձեզի ղրկած ենք արդէն: Պատրաստի դրամը
կամաւորներուն հիւրասիրութեան եւ իրենց վերաբեր-
եալ ծախքերու պիտի յատկացնենք, ըստ Ձեր հաւանու-
թեան:

Այսպէս, ի նպաստ հայ ազատագրութեան £ 100է ա-
ւելի գումար մը ապահոված եղաւ ենթակոմիտէն մեր
փոքրաթիւ եւ աղքատիկ գաղութէն եւ միեւնոյն ժամա-
նակ փրկարար կռիւի փրոփականտը մղած եղանք:

Կամաւորները Կիպրոսի մէջ.—

1916ի Նոյեմբեր ամսուն, դիտած էինք որ Եզրիպտոսի
մէջ կուսակցական պայքարները բոլորովին կը դադ-
րէին, եւ փոքր թիւով կամաւորներ Կիպրոս կու գային.
սակայն երկար ժամանակ կոմիտէէն լուր առած չըլլալ-
նուս, չէինք կրնար հասկնալ, թէ ինչ կը դառնար շուր-
ջերնիս: Բայց կէտ մը որոշ կ'երեւէր մեզի — համերաշ-
խութիւնը: Եւ բաւական էր որ եթէ Եզրիպտոսի մէջ հա-
մերաշխութիւն գոյանար, մենք պատճառ պիտի չունե-
նայինք մեկուսացած մնալ այստեղի հակառակորդ
մարմիններէն:

1917ին, մեր գործունէութեան կեդրոնական նպա-
տակը եւ առանցքը կիպրահայ համերաշխութիւնը պի-
տի կազմէր անշուշտ: Եւ այդքան կենսական եւ փա-
փուկ խնդրի մը կարգադրութիւնը մեր ափ մը ընկերնե-
րուն բոլորանուէր ջանքերովը միայն պիտի կրնար գո-
հացուցիչ արդիւնք տալ. որով՝ երկուստեք ջանք թափե-
ցինք նախ կուսակցական ներքին անհամաձայնութիւնը
մէջտեղէն վերցնել: Եւ 1917, Մարտ 25ին, յաջողեցանք
(ընկերական ժողովի մէջ) ձեռք ձեռքի տալ նորէն ու
պատրաստուիլ «ընդհանուր համերաշխութեան»:

Զինուորական նպաստի մարմինը 5 կամաւորներ
արձանագրած էր Մարտ 20ին եւ կը պատրաստուէր զի-
րենք քէմբ տանիլ Չատիկին: Այդ առթիւ £ 12.11.5 ղրչի
ալ նուէրներ պիտի տանէր: Բարեգործականի Նիկոսիոյ
մասնաճիւղն ալ, իր կարգին, կը պատրաստուէր նուէր-
ներ տանիլ: Երկուստեք միացուցինք մեր նուէրները, եւ
այդ քայլերնիս պատճառ մը եղաւ որ համերաշխական
«առժամանակեայ» մարմին մը կազմենք:

Կամաւորները եւ նուէրները տարինք քէմբ, մեծ ո-

* Ներկայ տեղեկագիրը նախորդ ենթակոմիտէի գործունէութիւնը կը ներկայացնէ մինչեւ կուսակցական ներ-
քին իրարհակացողութեան թուականը (25 Մարտ, 1917): Այդ թուականէն վերջ, կուսակցական աշխատանքը
առաջ տարուած է բոլոր ընկերներու համագործակցութեամբը:



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

գեւորութիւնն ստեղծելով տեղիս մէջ: Աւելորդ է ըսել, թէ քէմբի տղաքը որքա՛ն գոհ մնացին մեր այցելութեանէն:

Զատիկէն առաջ, արդէն մի քանի անգամ, ընկերներէն ոմանք մասնաւոր այցելութիւններ տուած էին իրենց եւ երկու անգամ ատենախօսութիւն ըրած կարգապահութեան եւ եղբայրասիրութեան մասին:

Պարբերական այցելութիւններու շնորհիւ Նիկոսիոյ գաղութը սկսաւ հետզհետէ աւելի հետաքրքրուիլ կամաւորներով:

Համերաշխական մարմինը:— Ազգային Միութեան Կիպրոսի մասնաճիւղը.—

Ազգային միութեան Կիպրոսի մասնաճիւղը վերջնականապէս կազմուած է հետեւեալ մարմիններէն.—

Հ.Յ.Դ. Կիպրոսի ենթակոմիտէ 2 ներկայացուցիչ
Զին. նպաստի Կիպրոսի յանձնախումբ 1 ներկայացուցիչ

Հնչակեան ընկերներ 2 ներկայացուցիչ
Բարեգործականի Նիկոսիոյ մասնաճիւղ 2 ներկայացուցիչ

Ազգ. Շահ. Պաշտ. յանձնախումբ } դեռ չեն տուած
1 ներկայացուցիչ }
Թաղական խորհուրդ 1 ներկ.

Կիպրոսի Ազգային միութեան մասնաճիւղը տեղիս կարեւորութեան պատճառաւ մասնաւոր նշանակութիւն մը ստացած է: Իր գլխաւոր գործը կը նկատենք անշո՛ւշտ կամաւորներու հանդէպ եղբայրական ու ընտանեկան հիւրասիրութիւն եւ գուրգուրանք ցոյց տալ ու իրենց տրամադրութիւնները բարձր ու վառ պահել միշտ: Սոյն մարմինը իր կազմութեան նախաքայլերուն աւելի վարանոտ գտնուած է եւ դեռ կազմակերպուած, կանոնաւոր գործերու չէ ձեռնարկած: Լաւ կ'ըլլայ եթէ Եգիպտոսի Ազգային միութիւնը տեւականօրէն խթանէ գիրենք ու հրահանգէ բեղմնաւոր գործունէութեան:

Արդէն իսկ, մէկէ աւելի անգամներ, քէմբէն քաղաք (Նիկոսիա) այցելող կամաւորներուն պէտք եղած հիւրասիրութիւնը ցոյց տրուած է: Թէյասեղաններ, հացկերոյթներ, «փիզնիզ»ներ եւ ընտանեկան երեկոյթներ տրուած են իրենց ու կը շարունակուին տրուիլ: Գրող ընկերներ եւ կամաւորներ ժամանակին այս մասին արձագանգած են թերթերուն մէջ:

Ներկայիս, մասնաւոր կարգադրութիւն մը եղած է, որ ամէն շաբաթ, հինգ կամաւորներ այցելեն Նիկոսիա (Հինգշաբթիէն Երկուշաբթի), որոնց հիւրասիրութեան համար եղած բոլոր ծախքերը Ազգային Միութիւնը պիտի հոգայ:

Քէմբը.—
Բարեբախտութիւնը ունինք մեր մօտը ունենայու

քաջարի կամաւորներուն քէմբը: Մարմինս առաջին մէկ վայրկեանէն մասնաւոր հետաքրքրութեամբ եւ նախանձախնդրութեամբ հետեւած է քէմբի անցուղարձեւուն եւ ընկերական գուրգուրանք ցոյց տուած է կամաւորներուն: Անմիջական մէկ քանի այցելութիւններ տրուած եւ բանախօսութիւններ եղած են, ուր շեշտուած է մասնաւորապէս կարգապահութեան պէտքը եւ եղբայրասիրութեան օգուտները ռազմի դաշտին մէջ, առանց կուսակցական եւ դաւանանքի խտրութեան:

Կը յուսանք թէ կոմիտէն եւ Ազգային միութիւնը լրջօրէն նկատի կ'առնեն կարգ մը գանգատներ (որոնք ժամանակէն Ձեզի տեղեկագրած ենք) եւ պատշաճը կը տնօրինեն:

Բողոքներ ու դժգոհանքներ կը լսենք շատերէ եւ դիտակից ընկերներէ ու երիտասարդներէ: Յարմար չենք նկատեր այս մասին երկար գրել եւ պարագաներ մատնանշել ու օրինակներ թուել:

Պրն. Վահան Թէքէեանի այցելութիւնը.—

Ինչպէս ժամանակին Ձեզի տեղեկացուցած էինք, Եգիպտոսի Ազգային միութեան լիազօր պատուիրակ՝ Պրն. Վահան Թէքէեան՝ Յունիս 19ին Նիկոսիա ժամանեց: Զբաղեցաւ տեղիս Ազգային միութեան կազմի ամբողջացման գործով եւ քէմբ այցելեց: Շնորհիւ իր ջանքերուն Զինուորական նպաստի մարմինը, Ազգ. Շահերու պաշտ. յանձնախումբը եւ Թաղական խորհուրդը (այս վերջին երկուքը դեռ ներկայացուցիչ չեն տուած) մէյմէկ ներկայացուցիչներով կը մասնակցին Հայ Ազգային միութեան Կիպրոսի մասնաճիւղին:

Մարմինս պատշաճ ընդունելութիւնը ըրաւ իրեն եւ ընկերական հիւրասիրութիւն ցոյց տուաւ, պէտք եղած բարոյական օժանդակութիւնը ընձեռեց իրեն եւ դիւրացուց իր առաքելութիւնը: Աւելորդ է ըսել թէ ազգային եւ կուսակցական տեսակէտով շատ աւելի օգտակար կ'ըլլային այդպիսի առաքելութեան մը հետեւանքները, եթէ մեր ընկերներէն մէկը գար:

Կը յուսանք թէ մօտիկ ապագային, գէթ մեր ընկերներէն մէկը այս կողմը կ'այցելէ:

Կուսակցական ներքին կեանքը.—

Ժամանակին, արդէն, հաճուքով աւետած էինք Ձեզի մեր ներքին միութիւնը, որ տեղի ունեցաւ Մարտ 25ին, տարուայ մը բաժանումէ վերջ: Այդ բաժանման պատճառներուն մանրամասնութիւնները Ձեզի ծանօթ են: Ուրախալի է անշուշտ, որ երէկի անհամաձայնութեան հիմնական պատճառներուն առաջին վարագոյր քաշած ենք, ու ափ մը ընկերներ նորէն միասին լծուած ենք սուրբ գործին:

Կազմիս պատկանող 11 ընկերներէն 7ը միայն կ'անդամակցին այժմ: Դժբախտութիւնը ունեցանք կորսնցրնելու մեր ընկերներէն երկուքը, որոնց մէկը անցեալ տարի Յունիսին մեռաւ իսկ միւսը ներկայ տարուայ Օգոստոսին: Միւս երկու ընկերները՝ Կարապետ եւ



Գառնիկ Փէշտիմարճեան (Աիմասոր) մեր ներքին անհամաձայնութիւնը պատրուակ բռնելով, Մարտ 17ին հրաժարեցան կազմէն, բան մը որ միայն կը նշանակէ յուսալքում եւ պարտականութենէ խուսափում:

Կուսակցական փրոփականտ.—

Կուսակցական փրոփականտը ուղղակի անկարելի եղած է, սկիզբները մեր դէմ կուտակուած հակառակութիւններու եւ վերջերը ընդհանուր համերաշխութեան միջնորդութիւն պարտադրած ուղղութեան պատճառաւ:

Առանց ասոնց ալ, արդէն իսկ հաւանական անդամակցողներու թիւը շատ քիչ է: Կը յուսանք սակայն որ, այս տարի 2-3 նոր ընկերներ կ'ունենանք. այդ ուղղութեամբ ջանքեր ընելու վրայ ենք:

Մարմնիս պիւտճէն.—

Թէեւ կոմիտէդ 20 անգլիական ոսկիի պիւտճէ մը սահմանած էր մարմնիս, բայց մեզի համար կարելի չէ եղած այդ գումարը լեցնել. սահմանափակ թուով են ընկերները եւ ոմանք, ներկայ պարագաներու տակ, անդամավճար անգամ չեն վճարեր: Բայց եւ այնպէս բացառիկ կուսակցական ծախքեր լեցնելու համար ընկերներէն մէկ քանին անդամավճարներէ գատ կամաւոր նուիրատուութիւններ ըրած են: Ինչպէս հաշուեցուցակի առանձին տախտակէն պիտի տեսնուի, ենթակոմիտէի տարեկան մոտաւ եղած է 7 ոսկի 67³/₄ դրոշ, ելքը՝ 5 ոսկի 92¹/₂ դրշ: Նախապէս՝ Մարտ 26ին՝ Ձեզի փոխադրած ենք 2 ոսկի. ներկայ հաշուեկշիռի պատրաստի դրամը 1 ոսկի 17.0 դրշ. ներփակ «money order»ով կը ստանաք [N^o 4531], (ընկեր Մեսրոպ Նորատունկեանի հասցէով):

Տարուան ընթացքին — Ձատկին — մտադրած էինք վիճակահանութիւն մը սարքել եւ 18-20 շիլինի գրքեր գնած էինք: Այդ միջոցաւ, կը յուսայինք, 6-7 ոսկիի եկամուտ մը ունենայ եւ մեզի սահմանուած պիւտճէն լեցնել: Ձատկին կարելի չեղաւ վիճակահանութիւնը սարքել, եւ վերջերը, համերաշխութեան պատճառաւ, դո՛ւք եւս մեզի թելադրեցիք առանձին գործունէութիւն ցոյց չտալ: Գրքերը դեռ կը մնան. հաւանականաբար օր մը կարելի ըլլայ նպատակնիս գործադրել:

Ժողովներ.—

Ենթակոմիտէն ունեցած է 8ի չափ ժողովներ, ուր գանազան կուսակցական եւ Ազգային խնդիրներ խորհրդածութեան նիւթ եղած են:

Մէկէ աւելի անգամներ ընկերական ժողովներ, հաւաքոյթներ եւ երեկոյթներ ունեցած ենք մեր կամաւոր ընկերներուն քաղաք ժամանումին առթիւ: Աշխատած ենք այդ ժողովները ամէն կերպով հաճելի եւ օգտակար դարձնելու:

Նոր ենթակոմիտէն.—

Նախորդ ենթակոմիտէի պաշտօնավարութեան շրջանը աւարտած ըլլալով, նոր ընտրութիւն տեղի ունեցաւ եւ ընկերներ Տ.թ. Ռ. Թագլորեան, Վ. Լեւոնեան եւ Ե. Յովհաննէսեան ենթակոմիտէի անդամ ընտրուեցան:

Այս մասին ընդհանուր ժողովի դիւանը Ձեզի ժամանակին տեղեկագրեց եւ Ձեր վաւերացումը ստացաւ:

Հաշուեցուցակներ.—

Կուսակցական վճարումներու, երեւմուտքի ցուցակները, ստորագրուած ենթակոմիտէի գանձապահին եւ ընդ. ժողովի դիւանի կողմէ, Ձեզի կը ղրկենք տեղեկագրին հետ:

Կամաւորանպաստ հանգանակութեան հաշուեցուցակները ընկ. Մ. Նորատունկեանի հասցէին ղրկած ենք երկու շաբաթ առաջ:

Մեր ազդեցութիւնը շրջանին մէջ.—

Աւելորդ չենք նկատեր մի քանի խօսք ըսել կիպրահայ գաղութին մէջ ունեցած մեր ազդեցութեան մասին: Հակառակ մեր քիչուոր ըլլալուն, այս երկու տարիներուն ընթացքին չէ եղած ազգային հասարակական որեւէ խնդիր, որ մեզ հետաքրքրած չըլլայ եւ մենք ուղղամտօրէն մեր դերը խաղցած չըլլանք գաղութին մէջ: Քիչուոր, բայց խորապէս գիտակից մեր հասարակական պարտականութիւններուն, շարժումներ ստեղծած ենք, ազգօգուտ շարժումներուն ուժ տուած ենք եւ վնասակար ուղղութիւններ քննադատած ենք ամէն կողմէ:

Մեր շահած ազդեցութեան պատճառաւ, տգէտ եւ անձնական կիրքերով առաջնորդուող պարոններ ու աղաներ, յաճախ ուղղակի թէ անուղղակի հարուածներ ուղղած են մեզի:

Փոքրաթիւ մեր գաղութին մէջ, երիտասարդութիւնը սակաւաթիւ է, ու գործող գաղափարական երիտասարդութիւնը մատի վրայ կը հաշուրէի. այդ պատճառաւ կուսակցական-գաղափարական փրոփականտը չէր կրնար աչքառու արդիւնք տալ. սակայն՝ մեր բոլոր ընկերները իրենց խօսակցութեամբ, ընկերական եւ բարեկամական շփումներու ընթացքին յեղափոխական-ազատական ազդեցութիւն մը ներգործած են իրենց վրայ, մղելով անկախ մտածումի եւ քննադատական մտքի գործածութեան՝ իրենց շուրջը յայտնուած ազգային գանազան երեւոյթներու հանդէպ:

Հակառակորդներ՝ սկիզբները կը հակառակէին Դաշնակցութեան ոեւէ ձեռնարկի եւ հակադաշնակցական թունոտ արտայայտութիւններ կ'արձակէին նոյնիսկ իրենց անդամական ժողովներու մէջ: Այսօր սակայն, բաւական յեղաշրջում տեղի ունեցած է անոնց մէջ եւ թէպէտ խոր անկեղծութեամբ չեն վերաբերիր մեզ հետ, բայց կը պատկառին Դաշնակցութենէն:

Ընկերական բարեւներով
Հ.Յ.Դ. ԿԻՊՐՈՍԻ ԵՆԹԱԿՈՍԻՏԷ

Փաստ. 1051-55

Գ 1.- ՎԵՑԱՍՍԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՆԹԱԿՈՍԻՏԵԻՆ

(1916 1 Օգոստ. – Փետր. 15, 1917)

Ընկերներ,

Այսօր, 15 Փետրուար 1917, կը ներկայացնենք Ընկերական ընդհ. ժողովի մեր երկրորդ վեցամսեայ գործունէութեան համարատուութիւնը եւ հաշուեկշիռը, որուն հաշուեկազմը կատարած ենք այսօր:

Ենթակոմիտէի նիստեր.— Սոյն երկրորդ շրջանին մենք ունեցանք 15 նիստեր, որոնց ընթացքին եւս մեր կարեաց սահմանին մէջ զբաղեցանք գլխաւորաբար կազմակերպութեան օգտին սատարող ձեռնարկներով:

Խորհրդակցական ժողովներ.— Հրահրեցինք 7 խորհրդակցական ժողովներ ալ այնպիսի առիթներու մէջ, երբ մեր առջեւ ունեցանք հարցեր, որոնց լուծումին համար, ինչպէս միշտ, յարմար դատեցինք դիմել մեր ընկերներու խորհրդին եւ աջակցութեան: Պարտք կը համարենք հոս ըսել, որ շատ կը պարտինք ատոնց եւ եթէ երբեք աշխատած եւ չափով մը արդիւնաւոր երկրորդ վեցամսէ մը բոլորած ըլլալու միտքով ընկերներու մէջ այս րոպէիս, այդ պարտական ենք մեծ մասամբ, մեր խորհրդակց ընկերներու կողմէ եւ շինիչ թելադրանքներուն:

Ենթակոմիտէի կազմը.— Ինչպէս ձեզ ամէնուրեք ծանօթ է վերջացող երկրորդ վեցամսէի ընթացքին ենթակոմիտէի գրկուեցաւ իր երկու անդամներու գործակցութեան. ասոնցմէ մին՝ ընկեր Ս. Գաբրիէլեան հեռացաւ մենէ Եգիպտոսի կոմիտէին անդամ ընտրուելով, իսկ ընկեր Հ. Ամիրեան վերջնապէս Գահրիէ հաստատուեցաւ: Ընկեր Ս. Գաբրիէլեանի փոխան ժողովը մեզ տուաւ ընկեր Մ. Եփրեմեանը, իսկ կրկին ժողովի հաւանութեամբ ընկեր Հ. Ամիրեանի մեկնումէն ետք մենք գործը տարինք չորս հոգիով: Հարկ է ըսել, որ ենթակոմիտէի անդամներուն գործակցութիւնը՝ այս անգամ եւս, քանի որ գիրար հասկցող եւ լրացնող ուժեր էինք, շատ օրինակելի եղաւ:

Կարծիքները եւ տեսակէտները երբեք պատճառ մը չեղան որ ոեւէ վրդովիչ հանգամանք յառաջ դար մեր միջեւ եւ փոքր անհամաձայնութիւն մ'իսկ ամպ ձգէր մեր համեստ աշխատութեանց վրայ:

Գործօն եւ օժանդակ ընկերներ.— Նախորդ տեղեկա-

գիրներու մէջ ըսած էինք թէ 67 գործօն եւ 13 օժանդակ ընկերներ ունինք: Ներկայ վեցամսէին հրատարեցան 2, իսկ քաղաքէս մեկնեցան 8 ընկերներ, աւելցան 3 նոր գործօն ընկերներ, որով այսօր ունինք 60 գործօն եւ 13 օժանդակ ընկերներ: Կրնանք ըսել, որ գործօն ընկերներ աւելցնելու մասին մեր ընկերները ջանադիր չեն գտնուած. այս պարագան ձեր ամէնուրեք մասնաւոր ուշադրութեանը կը յանձնենք:

Ընկերներու յարաբերութիւնները ըլլա՛յ կազմիս, ըլլա՛յ իրարու հետ առհասարակ գոհացուցիչ էին ամէն կերպով եւ ուրախ ենք յայտնելու որ առ այդ յայտնելիք դժգոհութիւն մը չունինք մեր կողմէն:

Ընկերական Ընդհանուր ժողովներ.— Յուլիս 31 1916ին ասդին ունեցանք 11 Ընկ. ընդհ. ժողովներ, որոնք արդիւնաւորուեցան ընկերներու մեծամասնութեամբ: Ըստ ներքին կանոնագրի շիտակ պիտի ըլլար որ մեր ընկերները, ըմբռնելով Ընկ. Ընդհ. ժողովներու աւագ կարեւորութիւնը, երբեք չբացակայէին նիստերէն, զի պէտք է գիտնան անոնք որ ընկերական ընդհանուր ժողովները մեր տեղական կազմին ջիղն ու հոգին կը կազմեն, որմէ կախում ունի ենթակոմիտէն, հետեւաբար տեղւոյն գործունէութիւնը իր ամէն փուլերուն մէջ:

Վիճակահանութիւն.— Զինուորական նպաստի յանձնախումբի անունով մեր սարքած վիճակահանութիւնը որ անցեալ Յուլիսի 16ին տեղի ունեցաւ, ուրախ ենք յայտնելու յաջողութեամբ պսակուեցաւ եւ արտադրեց եզ. ողջ 18,544 դահեկան: Սոյն գումարը ամբողջապէս յանձնեցինք արդէն յիշեալ մարմինին:

Թատերական ներկայացում.— Ինչպէս ծանօթ է Ձեզ Դեկտեմբեր 27ին, Հ.Յ.Դ. Աղեքսանդրիոյ թատերական յանձնախումբին յոյժ գովելի ջանքի շնորհիւ յաջողեցանք իրականացնել «Ռուզան»ի ներկայացումը, որմէ գոլտ հասոյթ գոյացաւ եզ. ողջ 9002½ դահեկան: Կից է թատերական յանձնախումբի հաշուեկշիռը:

Չին. նպաստի յանձնախումբի հանգանակութիւն.— Սոյն հանգանակութեան արձանագրութիւնը ցորս յանգած է 50 դ. 800 եզ. ոսկոյ, որ տակաւ գանձուելու վրայ է: Շատ ցանկալի պիտի ըլլար, եթէ ամէն արձա-

նագրող, մասնավորաբար մեր դաշնակցական ընկեր-
ները փոյթ տանելին իրենց վճարումները կանոնավորա-
պես ընելու մէջ:

Կամավորական շարժում.— Ամէնուրեւ յայտնի է ար-
դէն որ Եգիպտոսի կոմիտէին լուրջ նախաձեռնու-
թեամբ հիմը դրուեցաւ եգիպտահայ կամավորական
շարժումի մը. այս առթիւ համերաշխութեան եւ համա-
գործակցութեան տարիներէ հետէ երազուած փափաքը,
այս բերումով, հայ քաղաքական քոյր կուսակցութիւն-
ները մէկ սեղանի շուրջ բոլորելու եւ կամավորական
շարժումին նուիրուելու վսեմ իտէալը մարմին առաւ:
Աղեքսանդրիան այսօր, ամէն տարրերէ մօտ 110 կամա-
ւոր տուած է, թիւ մը, որ յոյս ունինք պիտի աճի տա-
կաւ:

Մեր հաշիւները.— Կից է մեր հաշուեկշիռը:

Մուտք

Նախորդ վեցամսէին պատրաստ դրամ	1041
1 Օգ./1916 — Փետր. 15/1917	
Օժանդակներէն գանձում	575
Գործօն ընկերներէ	2358
Քեռիի եւ Խէչոյի քառթերու վճարում	65
Ծախուած գոյքեր ըստ յարակից ցուցակի	598
Վիճակահանութեան ապառիկի գանձում	665
«Թուզան»ի ներկայացման հասոյթ	9002.50
	13263.50
	14304.50

Ելք

Արձանագրութեան տետր.	11
Ընդհանուր ժողովներու ծախք	60
Հաւաքիչ ընկերոջ	195
Փոստարկղի 1917ի տարեվճար	90
Ձին. նպաստի գանձապահին	644
Եգ. կոմիտէին փոխանցուած	3500
Ներկայացման ապառիկ	200
Պատրաստ դրամ	9604.50
	14304.50

Եթէ իրարու մօտ բերենք մեր Յուլիս 31 տեղեկագիր-
հաշուեկշիռը եւ ներկայս, մեր մուտքի գումարը կ'ըլլայ
35,223½ իսկ ծախքերնիս 842½, այսինքն % 2 3/8 մօ-
տավորապէս: Սոյն 35,223½-ի ոսկիի արդիւնավորումը
կը պարտինք առհասարակ մեր ամբողջ ընկերներու
սրտոտ ջանքերուն եւ ճիգերուն, որուն համար ենթա-
կոմիտէս պարտական կը զգայ ինքզինքը:

Մեր թղթակցութիւնները.— Գրած ենք 68 նամակ եւ
ստացած ենք 41 նամակ եւ շրջաբերական:

Ընկերական յետամնաց վճարումներ.— Մեր գործօն
ընկերներէն յետամնաց գումար կը մնայ մէկ տարուան
շրջանի մէջ եգ. ողջ 500 դահեկան:

Արդիւնավորեցի քառթեր.— Քեռիի եւ Խէչոյի քառթե-
րէն 578 եգ. ողջ. դահեկան գոյացաւ. անվաճառ ունինք
226 Քեռիի եւ 263 Խէչոյի քառթեր, գորս գալիք ենթա-
կոմիտէն կրնայ արդիւնավորել:

Մեր յարաբերութիւնները.— Մեր յարաբերութիւն-
ները ըլլայ Եգիպտոսի կոմիտէին, ըլլայ ընկերներու
հետ լաւ անցան. սոսկ վերջացող տարուայ ետքեր, մեր
խնդրանքին Եգիպտոսի կոմիտէին չընդունուիլը պատ-
ճառ եղաւ, որ մեր հրաժարականը մատուցանենք ձեզ,
գոր դուք մերժեցիք: Ուրախ ենք որ Եգիպտոսի կոմի-
տէն լրջօրէն ի նկատի առնելով մեր հրաժարականի
պատճառները, ուզեց անգամ մը եւս խնդիրը քննել եւ
յարմար լուծումը տալ անոր:

Մեր հրաժարականը.— Ի վերջոյ կը մատուցանենք
ձեզ մեր հրաժարականը, լրացուցած ըլլալով մեր շրջա-
նը, որ 14 օր ուշացաւ, շնորհակալութիւն յայտնելով
ձեր մեզ վերաբերմամբ ցոյց տուած աջակցութիւննե-
րուն եւ վստահութեան համար:

**ՄԿՐՏԻՉ ԵՓՐԵՄԵԱՆ
Յ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ
Լ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ
Ա. ՄԱԼՃԵԱՆ**

Աղեքսանդրիա
15 փետր. 917

Գ 2.- ԵՌԱՄՍԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՂԵՔՄԱՆԴՐԻՈՅ ԵՆԹԱԿՈՄԻՏԵԻՆ

Ներկայացուած Ընկերական Ընդհ. Ժողովի 1917 թ. Օգ 16-ի նիստին

Ընկերներ!

Մեր ներկայ տեղեկագիրը կ'ընդգրկէ 1917 Փետրուար 16-15 Մայիս 1917, մեր առաջին եռամսէն:

Մեր կազմի մասին.— Հինգ հոգիէ ընտրուած են թակոմիտէս՝ Փետրուարի մէջ իսկ զրկուեցաւ իր անդամներէն մէկէն, ընկեր Մ. Եփրեմեանէն, որ ինչպէս ծանօթ է ձեզ հրաժարեցաւ անձնական պատճառներով. անոր տեղ ժողովը տուաւ մեզ ընկ. Տ. Եաղուպեանը:

Ենթակոմիտէի նիստեր.— Փետրուար 16էն ցայսօր Մարմինս ունեցած է 15 նիստեր:

Ընկերական Ընդհ., խմբական ընդհ. եւ խորհրդակցական ժողովներ.— Ներկայով հրաւիրած կ'ըլլանք երկու Ընկերական Ընդհ. ժողով:— Ունեցանք նաեւ երկու խմբական ընդհ. ժողովներ, ասոնցմէ առաջինին մէջ խօսուեցաւ «կարգապահութեան եւ զաղտնապահութեան», իսկ երկրորդին մէջ բացատրութիւններ տրուեցան «Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի» առաջին մէկ մասին վրայ. խօսուեցաւ երկրորդ ընկերոջ մը կողմէն՝ «Հ. Յ. Դաշնակցութեան 1890-1900 ունեցած գործունէութեան» վերաբերմամբ: — Կազմեցինք նաեւ երկու խորհրդակցական ժողովներ:

Այս առթիւ հարկ կը դատենք ընել երեք տեսակի թելադրութիւններ:

ա.- Պարտք կը դնենք իւրաքանչիւր ընկերոջ վրայ որպէսզի ջանայ գործօն կամ օժանդակ ընկերներ բերել՝ ստուարացնելու համար մեր շարքերը:

բ.- Ո՛չ մի ընկեր թոյլ տալու չէ իրեն բացակայիլ Ընկ. ընդհ. եւ խմբական ընդհ. ժողովի նիստերէն, որովհետեւ մեր ամէնուս ներկայութեամբ է որ պիտի բեղմնաւորին անոնք: — «Ենթակոմիտէս» նախորդ շրջանի Ընկերական Ընդհ. ժողովներէ բացակայող ընկերներու մօտ դիմումներ ըրած է, այս շրջանին մէջ իրենց ներկայացութիւնը պարտադրելու համար: Որոշած ենք, առանց բացառութեան օրէնքի տրամադրութիւնն ի գործ դնել բացակայ եւ իրենց բաժնեգիրները չվճարող ընկերներու նկատմամբ:

գ.- Գալով խմբական ընդհ. ժողովներուն, անկաս-

կած է, որ պարտականութիւնը կ'իյնայ իւրաքանչիւր ընկերի վրայ նիւթեր պատրաստել, խօսիլ, զարգացնելու համար մեր ընկերները՝ միաժամանակ մշակելու համար հրապարակախօսութիւնը:— Աւելորդ է ըսել, [որ] խօսուելիք նիւթերու մասին նախօրօք տեղեկութիւն հաղորդել կարեւոր է ենթակոմիտէիս:

Կամաւորական շարժում.— Սկիզբէն ցարդ քաղաքէս արձանագրուած կամաւորներու թիւը կը յանդի 122 հոգիի: — Պատեհ առիթն է ըսելու որ քաղաքիս կամաւորական յանձնախումբի մեր ներկայացուցիչները ձեռնհասօրէն տանելու վրայ են իրենց յանձնուած պաշտօնը:

Նպաստի ձեռնարկներ.— Լրացնելու համար մեր պիւտճէն, հիմակուց իսկ նախատեսած ենք նպաստի ձեռնարկներ. ասոնց առաջինը, վիճակահանութիւն մը. մօտերս հրապարակ պիտի հանենք մեր ընկերական շրջանակի մէջ: Վստահ ենք որ մենէ ամէն ոք իր աջակցութեան բաժինը պիտի բերէ անոր եւ անկից ետք մեր ընելիք ձեռնարկներուն:

Գործօն եւ օժանդակ ընկերներ.— Փետրուար 15ին ունէինք 60 գործօն եւ 11 օժանդակ ընկերներ: Օժանդակներէն 1 ընկեր հրաժարեցաւ եւ 1 ընկեր եւս գործօն դարձաւ: Աւելցան 15 գործօն եւ 17 օժանդակ ընկերներ: Հիմա ունինք 75 գործօն եւ 27 օժանդակ ընկերներ:

Մեր հաշիւները.— Կից է մեր եռամսեայ հաշուեկշիւը

Մուտք

Նախորդ ենթակոմիտէէն պատրաստ դրամ մեզ փոխանցուած	9604 1/2
Յետնեալ ամսավճարներէ գանձուած	125
1917 Փետ. 16 — 15 Մայիս 1917	
անդամավճարներէ	1168
» » օժանդակներէ	360
1916ի «Ռուզան» ներկայացման ապառիկէն	135
	1788
	11392 1/2

Եւք	
Ճգիպտոսի կոմիտէին փոխանցուած Ընկ. Ընդհ. եւ Խմբ. Ընդհ. ժողովներու բեթրոյի ծախք	9604 1/2 30
Արձանագրութեան տետր	10 1/2
Հաւաքիչ ընկերոջ 3 ամսական	90
	9735
Պատրաստ դրամ գանձապետին մօտ	1657.50
	11392 1/2

Յետեալ անդամավճարներէ
գանձելի կը մնայ եզ. ոսկի 272

Մեր թղթակցութիւնները.— Ստացած ենք 15, իսկ
գրած ենք 34 նամակներ:

Վերջացնելէ առաջ մեր տեղեկագիրը.

Ենթակոմիտէս ընտրուած ըլլալով Ընկերական ընդ-
հանուր ժողովիդ կողմէն, պէտք է լիովին վայելէ բոլոր
ընկերներու անվերապահ աջակցութիւնը, երբ առիթը
կը ներկայանայ որ մենք այդ պահանջներ մէն մի ընկե-
րէ, զի քաջ գիտնալու ենք, որ ընկերներու դրական
օժանդակութեամբ է որ մենք բաւականութիւն կրնանք
տալ մենէ ըլլալիք ակնկալութիւններուն:

**Հ.Յ.Դ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՂԵՔ. ԵՆԹԱԿՈՄԻՏԷ**

[Ստորագրութիւններ]

Սոյն տեղեկագիրը կարդացուած է Մայիս 17ի ժողո-
վոյ մէջ եւ վաւերացուած Օգոստոս 16ին 1917:

Նախագահ
[Ստորագրութիւն]

Աղեքսանդրիա, 17 Մայիս 1917

ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻՆ

1917 Մայիս 16 – 15 Օգ. 1917 (Բ. Եռամսկ)

Ընկերներ,

Ներկայ տեղեկագիրն իսկ կ'ընդգրկէ մեր շրջանի երկ-
րորդ եռամսէն, այսինքն՝ 1917 Մայիս 16 – 15 Օգ. 1917:

Ենթակոմիտէի նիստեր, խորհրդակցական ժողով-
ներ, Ընկերական Ընդհ., խմբական ընդհանուր, խառն
ժողովներ.—

Սոյն երկրորդ եռամսէի ընթացքին ենթակոմիտէս
գումարեց 17 նիստեր: Հրաւիրեցինք երկու խորհրդակ-
ցական ժողովներ. նոյնպէս երկու բացառիկ ընկերա-
կան ընդհ. ժողովներ. մեր ընկերներու պահանջներ
վրայ կազմեցինք չորս խմբական ընդհանուր ժողով-
ներ. ունեցանք երեք խառն ժողովներ տեղոյս՝ Միաց-
եալ մարմնի հետ, մարմնի մեր պատգամաւոր ընկերոջ
եւ Ճգիպտոսի կոմիտէին անդամոց հետ:

Մեր թեղադրութիւնները.— Մարմինս նկատի առնե-
լով կամաւորական շարժումի եւ Կիլիկեան ափանց
վրայ տեղի ունենալիք զօրահանումի պարագաները
պատշաճ դատեց յարմար առիթը թեղադրութիւններ
ընել Միացեալի տեղիս ենթամարմնի ընկերց եւ Ճգիպ-
տոսի կոմիտէին:— Միացեալի ենթամարմնի մեր ընկերց
թեղադրեցինք նախ.

1.- Գաղթականներու պարենաւորման, զգեստաւոր-
ման եւ բժշկական կարիքներու համար այսօրու ընէ իսկ
պատրաստութիւններ տեսնել եւ յանձնախումբ մը
կազմել պատրաստ գտնուելու համար ամէն անակնկա-
լի, ինչ որ պատահեցաւ Պաղտատի նոր իրողութեան
առթիւ:

2.- Գաղթականական յանձնախումբերու երկրի մէջ
գործող կամաւորները՝ (Ազգային Միութեանէն բխած)
նուազագոյն վճարումներով ուղարկել, չարաչահու-
թեանց տեղի չտալու համար:

3.- Արտասահմանի գաղութներէն հաւաքաբար դի-
մել Ազգային Միութեան մարմիններու միջոցաւ Ազգա-
յին պատուիրակութեան որպէսզի դաշնակից պետու-
թեանց մօտ դիմում կատարուի, յառաջիկայ մեծ կա-
րիքներու համար քանի մը միլիոնի փոխառութիւն
կնքելու, որը պէտք է գործածուի միմիայն Ազգային
միութեան խողովակով: Սոյն փոխառութիւնը կնքել
ապագայ Հայաստանի անունով: Առարկութեանց պա-
հուն հաշուեյարդարութեան ատեն ըլլալիք տուգանքե-
րուն հաշուել:

4.- Յանձնախումբերու լուրջ նկատառութեան

յանձնել սա կէտը թէ գաղթականական շեղումներ երեւան գայու պարագային, անոնց ամբողջական տնտեսութիւնը կարելի եղածին չափ աշխատիլ անկախաբար վարել:

Եգիպտոսի կոմիտէին թելադրեցինք

1.- Արտասահմանի ամբողջ հայութեան վրայ պարտաւորիչ տուրքի դրուածին մը հաստատել:

2.- Տրուած ըլլալով որ Ազգային միութիւնը օրուան կառավարութիւնը կը ներկայացնէ, ազգային բոլոր զանազան հաստատութիւնները անիրաւասու են ոեւէ անջատ գործունէութիւն ունենալու. իրենց գործերու մասին պարտական են գիտակից պահել Ազգային միութիւնը եւ պարտաւոր են այդ խողովակով ի պահանջել հարկին իրենց բարոյական եւ նիւթական միջոցները տրամադրել անոր եւ գործին:

3.- Կոմիտէի նկատառութեան յանձնել «Արեւ»ի թ. 11 խմբագրականը:

Ըլլա՛յ ենթամարմնի, ըլլա՛յ կոմիտէի մեր ընկերներէն՝ խնդրեցինք որ մեր սոյն թելադրանքները տանին Միացեալ մարմնին, իրենց յարմար տեսած եղանակով: — Պէտք է ըսենք, որ մեր սոյն թելադրութիւններուն հետեւանք չտրուեցաւ սակայն մինչ օրս:

Կամաւորական շարժում.— Մեր խնդրանք ու պահանջքն վրայ ստացանք Միացեալի տեղիս ենթամարմնի մեր ներկայացուցիչ ընկերներու 15 Օգ. 1917 թուակիր մէկ տեղեկագիրը որմէ կը քաղենք հետեւեալները.

Ազգային միութեան վերջնական կազմութիւնը տեղի ունեցած է 1916 Դեկտեմբերի վերջերը.— Գահիրէի եւ Ադեքսանդրիոյ օժանդակ յանձնախումբերը նշանակած են նոյն ամսոյ մէջ իսկ: Տեղիս օժանդակ յանձնախումբը 9 ամիս է գոյութիւն ունի: Իր գործը եղած է.

- 1) Զարկ տալ կամաւորական հարցին,
- 2) Կամաւորներ արձանագրել եւ ներկայացնել Փրանս[ական] իշխանութեան.

3) Զբաղուիլ կամաւորներու քոմիտիոնի ընտանեաց նպաստի գործով որ յանձնախումբի զբաղման առատ նիւթ կը հայթայթէ: — Յանձնախումբը սեղմումներու հետեւանօք իբր բրոքաւանտի միջոց ծառայեցուցած է ցարդ՝ եգիպտահայ եւ ամերիկահայ կամաւորներու հիւրասիրումը տեղւոյս երկու հայ ակումբներուն մէջ: Յարդ արձանագրուած կամաւորներու թիւը կը յանգի 105ի Ադեքսանդրիա: Ասոնցմէ 20ը վերադարձած են Փիլիքական տկարութեան եւ կամ անկարգապահ գտնուած ըլլալուն պատճառաւ: 47-50 եգ. ոսկի, նպաստ կը տրուի հայ կամաւորներու կարօտ ընտանեաց: Արձակուրդով եկած կամաւորի մը օրական կը տրուի եգ. ողջ 12, իր ընտանիքին՝ կիններուն 5 ողջ, պատանի եւ աղջկանց 3 ողջ, մանուկներուն 2 ողջ օրական: Սղութեան պատճառաւ սոյն վճարմանց վրայ 20% յաւելում եղաւ:

Հոս կը վերջանան Տեղեկագրէն ըրած մեր քաղուածքները: Այս առթիւ պէտք է յիշել, որ Միացեալ մարմնի Ադեքսանդրիոյ ենթամարմնի մեր ընկերները կը շարունակեն պէտք եղած կերպով Դաշնակցութիւնը ներկայացնել յիշեալ մարմնին մէջ:

Մեր պիւտձէի մասին.— Ենթակոմիտէի ցենզերնիս լրացնելու համար, հարկ անհրաժեշտ է որ, մինչեւ 30 Դեկտեմբեր 1917 գոյացնենք 150 եգ. ոսկի. ըստ նախահաշույ գործօն եւ օժանդակ ընկերներէ պիտի արտադրուի շուրջ 60 եգ. ոսկի. կը մնայ 90 ոսկի: Նկատելով որ կուսակցութեանց մէջ կնքուած համերաշխութեան եւ համագործակցութեան հետեւանօք անթոյլատրելի է մեզ ներկայացում եւայլն եւ կամ հրապարակային վիճակահանութիւն սարքել, նկատելով միեւնոյն ատեն, որ մեր ամէնուն վրայ բարոյական պարտականութիւն կ'իյնայ լրացնել մեր ցենզի 150 ոսկին, պարտք զգացինք Օգ. 1 — 1 Նոյ. 1917 չորս բաժիններով վճարելու պայմանով ներքին հանգանակութեան մը ձեռնարկել. ուրախութեամբ կը յայտատարենք որ մեր ընկերները լաւ ընդունելութիւն ըրին մեր ձեռնարկին. ցարդ արձանագրուած գումարը կը հասնի եգ. ողջ. 4370ի: Առայժմ 40 ոսկուց բաց մը կ'ենթադրենք, զոր պիտի ջանանք գոցել, լրացնելու համար մեզ պարտադրուած գումարը:

Մեր հաշիւները.

Տեղեկագիրնուս կը կցենք մեր շրջանի սոյն երկրորդ եռամսէի հաշուեկշիւը Մայիս 16 — 15 Օգ. 1917, ըստ որում ունեցած ենք

Մուտք	
Մայիս 15ի հաշուեկշիւի համեմատ պատրաստ դրամ	1657
Ռուզանի ապառիկէն գանձում	65
Օժանդակ ընկերներէն »	726
Գործօն » »	1280
Ս. Թաշճեանի տիկնոջ յուղկ. փոխ. ծաղկեպսակի	300
Ընկեր Բ. Մինասեանի նշանախօսութեան առթիւ հանգ.	460
Ներքին հանգանակութենէ գանձում	528
	5016
Ելք	
Հաւաքիչ ընկերոջ երեք ամսական	90
Ընկերական եւ խմբ. ընդհ. ժողովներու բեթրոլ եւ լամպայով շիշ մը	76
Եգ. կոմիտէին պարբերաբար փոխանցում	4850
	5016

Վիճակագրութիւն.— Սոյն երկրորդ եռամսէն կազմեցինք մեր գործօն ընկերաց վիճակագրութիւնը մանրամասն:

Գործօն եւ օժանդակ ընկերներ.— Մայիս 16ին ունէինք 75 գործօն եւ 28 օժանդակ ընկերներ: Գործօններէն մէկը կամաւոր արձանագրուեցաւ, 3 օժանդակ ընկերներ հրաժարեցան. աւելցան 1 գործօն եւ 8 օժանդակ ընկերներ: Հիմա ունինք 75 գործօն եւ 33 օժանդակ ընկերներ:

Ընկերներու մասին.— Ցաւով նկատել կու տանք որ մօտ կէսը մեր ընկերներուն կը բացակայի յաճախ ընկերական եւ խմբական ընդհանուր ժողովներու նիստերէն. արդէն առաջին քայլը առած ենք երեք անգամ յաջորդական բացակայողներու նկատմամբ. պիտի շարունակենք զգացնել անոնց իրենց պարտքը եւ ի պահանջել հարկին ի գործ պիտի դնենք նոյնիսկ օրէնքի տրամադրութիւնը:— Որքան փափաքելի պիտի ըլլայ որ իւրաքանչիւր ընկեր իր պարտականութեան գիտակից անպակաս ըլլայ մեր ընդհանուր ժողովներէն:

Յետամնաց ամսավճարներ.— Այս եռամսէի վերջը յետամնաց ամսավճարներու գումարը կ'ըլլար եգ. ողջ. 520:

«Հայրենիք» թերթի կարեւորութիւնը.— «Հայրենիք» թերթի ծաւալման համար այս անգամ ընդունեցինք բաժանորդագրութեան ձեւը. գտանք 14 բաժանորդներ:

փափաքողները կրնան դիմել Մարմնիս արձանագրուելու համար:

Մեր թղթակցութիւնները.— Գրեցինք 39 եւ ստացանք 12 նամակներ սոյն եռամսէին:

Մեր յարաբերութիւնները.— Մեր յարաբերութիւնները Եգիպտոսի կոմիտէին եւ ընկերներու հետ յոյժ լաւ էին առհասարակ. սոյն եռամսէին կարգապահական երկու հարցեր ունեցանք միայն, որոնց մին մեր միջեւ կարգադրեցինք, իսկ երկրորդի լուծումին համար կազմեցինք ընկերական ատեան:

Վերջացնելով մեր երկրորդ եռամսէի տեղեկագիրը շնորհակալութիւն կը յայտնենք մեր բոլոր ընկերներուն իրենց աջակցութիւններուն համար:

Հ.Յ.Դ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՂԵՔ. ԵՆԹԱԿՈՄԻՏԷ
[Ստորագրութիւններ]

Աղեքսանդրիա
16 Օգ. 1917

Սոյն տեղեկագիրը կարգացուած է ամսոյս 6ին. ընկերական ընդհանուր ժողովոյ մէջ վաւերացուած է:

Նախագահ՝
[Ստորագրութիւն]

ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻՆ

1917 Օգոստոս 16 – 15 Նոյեմբեր 1917

Ընկերներ!

Մեր գործունէութեան երրորդ եռամսէի տեղեկագիրն է որ կը ներկայացնենք ընկերական ընդհանուր ժողովիդ. ան կը սկսի 1917 Օգոստոս 16էն եւ կը յանգի 15 Նոյեմբեր 1917:

Ժողովներ.— Ենթակոմիտէս այս եռամսէին գումարած է 12 ժողովներ. հրաւիրած է երկու ընդհանուր ընկերական, երկու խմբային ընդհանուր, մէկ խորհրդակցական եւ մէկ վիճաբանական ժողով: Մարմինս համոզուած է որ՝ որքան խմբային ընդհանուր, վիճաբանական ժողովներն ալ կոչուած են կարեւոր դեր մը կատարելու, որովհետեւ ատոնց մէջ է որ՝ անձնիւր ընկեր խօսելու եւ իր զգացումները բացատրելու ունակութիւն ձեռք պիտի բերէ:

Գործօն եւ օժանդակ ընկերներ.— Օգոստոս 16ին ունէինք 76 գործօն եւ 37 օժանդակ ընկերներ. գործօններէն 1 հոգի մեկնեցաւ քաղաքէս, օժանդակներէն 1 հոգի մեկնած եւ 1 հոգի հրաժարած ունինք. աւելցաւ 5 գործօն եւ 4 օժանդակ. այս վայրկեանիս ունինք 80 գործօն եւ 39 օժանդակ ընկերներ:

Ներքին հանգանակութիւն.— Ձեզ ծանօթ է որ մեր նիւթական ցնցը լրացնելու համար՝ ներկայ տարւոյ յուլիսին ներքին հանգանակութեան մը ձեռնարկեցինք եւ այս մասին պէտք եղածը տեղեկագրեցինք Օգոստոսի 16ի ընկերական ընդհանուր ժողովին: Ստորագրուած գումարը հասաւ եգ. ողջ 4840-ի: Ցարդ գանձուած է եգիպ. ողջ 3476: Յետամնաց ունինք եգ. ողջ 1364: Հոս հարկ կը սեպենք նկատել որ, նիւթապէս ի վիճակի եղող մեր ընկերներէն ալ կան, որ իրենց վճարումներուն մէջ



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՄԱՐ

կը թերանան: Աս պարագան կը յանձնենք ձեր ամենուղ-
լուրջ ուշադրութեան. մեր օժանդակութեան չափը ար-
դէն շա՛տ համեստ է, ինչ եղած կ'ըլլանք երբ մենք մեր
յանձնառութեան մէջ յամենանք. մէն մի ընկեր, իր կա-
րողութեան սահմանին մէջ, իր քսակը անհրաժեշտ է որ
լա՛յն բանայ մանաւանդ իր կազմակերպութեան հան-
դէպ՝ երբ կը տեսնուի որ պահանջները այնքա՛ն բազ-
մապիսի են:

Նպաստի ներկայացում.— Մեր Սեպտեմբեր 13ի նիս-
տին մէջ որոշեցինք նպաստի ներկայացում մը սարքել
Հ. Յ. Դաշնակցութեան վետերան ընկերներու Փոնտին
համար: Եգիպտոսի կոմիտէին պատշաճ արտօնութիւն
ստանալէ ետք՝ կազմեցինք թատերական յանձնախումբ
մը. պիտի խաղացուի նոր ու անտիպ՝ ընկերոջ մը՝ Ար-
զամի հեղինակած «Սղծի յաղթանակ»ը, երեք արար-
ւած: ներկայացումը պիտի տրուէր յառաջիկայ Դեկ-
տեմբերին. դժբախտաբար կը կարծենք որ պիտի ուշա-
նայ, որովհետեւ խաղը որ վաւերացման համար գրա-
քննութեան դրկուած էր՝ դեռ վերադարձուած չէ:

Մեր թելադրութիւնները.—

1) Հայ Ազգային միութեան Աղեքսանդրիոյ օժան-
դակ յանձնախումբի մեր դաշնակցական ընկերց միջոցաւ
հարցում ուղղել տուինք, յիշեալ յանձնախումբի ժողով-
ներուն մէջ՝ Եգիպտոսի Միացեալ Որբախնամին՝ մինչ
օրս Հ. Ազգային միութեան իր մասնակցութեան բաժի-
նը բերած չըլլալուն համար: — Ասոր փոխարէն ստաց-
ւած պատասխանը գոհացուցիչ չէր:

2) Օգոստոս 31ի նիստերնուս մէջ մեր առած որոշու-
մի համաձայն, գրեցինք Եգիպտոսի կոմիտէին՝ թելադ-
րութիւններ տանիլ Հայ Ազգային միութեան Եգիպտո-
սի ազգային վարչական մարմիններուն մէջ, համեմա-
տական ներկայացուցչական դրութեամբ՝ դաշնակցա-
կան պատգամաւորներու ներկայութիւնը ապահովելու
համար:

3) Գրեցինք նոյնպէս Եգիպտոսի կոմիտէին, տեղւոյս
մէջ գանձուած Զաւարեան Փոնտի 12 ոսկին՝ իր կամ
մարմնիս միջոցաւ ստացուելու մասին:

Ընկերական ատեան.— Նախորդ տեղեկագրով ըսած
էինք թէ՛ ընկերոջ մը կողմէն՝ ենթակոմիտէիս վերագր-
ուած «յետին միտքեր»-ու բերմամբ կազմուած է ընկե-
րական ատեան. յիշեալ ընկերական-դատաստանական
ատեանը՝ գրաւոր կերպով ետ առնել տուաւ իր՝ ընկե-
րոջ մեղադրանքը, որով միջադէպը փակուեցաւ:

«Հայրենիք» թերթի մասին.— Ձեզ գեկուցած ենք ար-
դէն. սոյն թերթի տարածումի մասին մեր պաշտօնի
անցնելէն քիչ ետքն իսկ ընդգրկած ենք բաժանորդագ-
րութեան ձեւը. ցարդ մեր գտած բաժանորդներու թիւը

կը հասնի 18ի: Հասցէի ամէն մանրամասնութիւն ատե-
նին տուած ենք «Հայրենիք»ի վարչութեան եւ սակայն
ո՛չ մի բաժանորդ թերթ չէ ստացած տակաւին. առ այս
բացատրութիւն պահանջած ենք խմբագրութենէն եւ կը
սպասենք պատասխանի: — Ի դէպ, կը լսենք որ ասկից
առաջ բերուած եւ հատով ծախուած «Հայրենիք»ներու
վաճառումէն գոյացած է ընդամէնն եգ. որջ 462½ շահ,
ինչպէս որ կը տեսնուի մեր հառուեկչուին մէջ:

Երկու յանձնախումբեր.— 7 Հոկտեմբերի մեր նիս-
տին մէջ ընտրեցինք.

1) Քննիչ յանձնախումբ մը, ընկերներ Ա. Մովիկեան,
Ս. Դերձակեան եւ Գ. Վարդանեանէ:

2) Աշխատանքի յանձնախումբ մը, ընկերներ Ս. Նո-
րատունկեան, Կ. Աստուածատուրեան եւ Յ. Ազնաւուր-
եանէ:

Քննիչ յանձնախումբի պաշտօնն է, ենթակոմիտէի
մէջ ընկերոջ մասնակցութեամբ, գործօն [անդամ] ար-
ձանագրուելու համար դիմող ընկերներու մասին
քննութիւն կատարել եւ արդիւնքը հաղորդել Մարմնիս,
որմէ ետք է որ յարմար դատուելու պարագային հետե-
ւանք պիտի տրուի դիմումին:

Աշխատանքի յանձնախումբի պաշտօնը պիտի ըլլայ,
միշտ ենթակոմիտէիս անդամներէն մէկին աշխատակ-
ցութեամբ, գործ հայթայթել աշխատանք չունեցող մեր
ընկերներուն եւսյլն:

Կը յուսանք որ սոյն երկու յանձնախումբերն ալ պի-
տի ունենան իրենց որոշ տեսակի օգտակարութիւնը:

**Ընդհ. ժողովներէ բացակայող եւ չվճարող ընկեր-
ներ.**— Այս մասին հարկ եղած զեկոյցը ենթակոմիտէիս
կողմէն բերանացի պիտի ըլլայ քիչ ետքը. մանաւա՛նդ
առանց բանաւոր պատճառի բացակայողներու նկատ-
մամբ չենք գիտեր ինչ մտածել, ինչո՛վ արդարացնել
իրենց ընթացքը որ շիտկէ շիտակ իրենց ընկերական կո-
չումին կը հակասէ:

Տեղեկութիւններ.— Մեր պահանջքի վրայ Հայ Ազ-
գային միութեան Աղեքսանդրիոյ օժանդակ յանձնա-
խումբի մեր ընկերներէն ստացանք 21 Նոյեմբեր թուա-
կիր տեղեկագիր մը ուրկից կը քաղենք հետեւեալները.

**Օժանդակ յանձնախումբի տարեշրջանը լրացած է Նո-
յեմբեր 10ին.**— ան շարունակած է կամաւորական գոր-
ծի ծաւալումը. — այս մտօք զանազան խաւեր ներկա-
յացնող չէզոք ազգայիններ հրաւիրած է իր նիստերուն,
անոնց միջոցաւ հասարակութեան մէջ բորբականա
ընելու համար. — դիտելի է որ կամաւորներու 90%ը նիւ-
թապէս անկարող են որով իրենց ընտանիքները նպաս-
տի կարօտ են. — ամսական 80/100 ոսկի նպաստ կը
տրուի: Ընկերներ Ս. Գաբրիէլեան, Ա. Շահինեան, Հ.



Գրիգորեանէ ընտրուած յանձնախումբ մը կը վարէ նպաստի գործը.— Նոր մարմին մը եւս պիտի ընտրուի, հիւրաբար քաղաքս հասնող կամաւորներու ընդունելութեան գործը տանելու համար.— Յարգ Աղեքսանդրիայէն արձանագրուած են 162 կամաւորներ. ասոնցմէ 20ը բժշկական քննութեամբ անյարմար դատուած, 10ը նկարագրի թերութեանց համար մերժուած են, 3ը իրենց անկարգապահութեան համար արձակուած են.— Գահիրէէն արձանագրուածներու թիւը 200 հոգին չ'անցնիր. կ'արժէ կուսակցութեանց ղեկավար մարմիններու ուշադրութեան ենթարկել որ արձանագրուած կուսակցականներու թիւը դժբախտաբար շատ հեռու է միութարական ըլլալէ:

Եգիպտոսի կոմիտէին քաղաքիս հատուածի ընկերներէն քաղած ենք շարք մը տեղեկութիւններ եւս, գորս պահիկ մը ետքը պիտի հաղորդենք — ըստ պատշաճութեան — ընկերական ընդհանուր ժողովիդ:

Եռամսեայ հաշուեկշիռ.— Մեր ներկայ տեղեկագրին կցած ենք, 1917 Օգոստոս 16 — 15 Նոյեմբեր 1917 մեր եռամսեայ դրամական գործողութեանց հաշուեկշիռը, ըստ որում եղած է՝

Մուտք

Ներքին հանգանակութենէն	2948
Անդամավճարներէ գործօն	1572
Օժանդակներէ	709
Գոյքերու վաճառումէ	362.50
Ձինտորական ֆոնտի հանգ. մնացորդ	1060
Մալխասեան եղբրց. ամուս. առթիւ հանգ.	690
«Հայրենիք»ի վաճառումէն գոյացած	462.50

[եգիպտական ոսկի] 7804

Ելք

Ընդհ. խմբական եւ ընկերական ժողովներ—	
բեթրոլի ծախք	50
Հաւաքիչ ընկերոջ եռամսեայ վարձք	90
Եգիպտոսի կոմիտէին փոխանցուած	7664
[եգիպտական ոսկի] 7804	

Դրոշմաթուղթի նախագիծ.— Դրոշմատետրերու դրուութիւնը փոխելու համար, անցած տարի, Աղեքսանդրիայէն առաջարկ տարուած էր Շրջանային ժողովին, սա ալ իր կարգին Եգիպտոսի կոմիտէին, եւ մեզ Աղեքսանդրիացիներուս յանձնարարուած էր ծրագիր մը ներկայացնել այս մասին: Ենթակոմիտէս իր անդամներէն մէկուն պատրաստել տուաւ նախագիծ մը առ այս եւ որդեգրելով զայն ղրկեց Եգիպտոսի կոմիտէին:

Թղթակցութիւններ.— Սոյն եռամսէին ստացանք 14 նամակ եւ գրեցինք 62 նամակներ:

Մեր յարաբերութիւնները.— Մեր յարաբերութիւնները Եգիպտոսի կոմիտէին եւ առհասարակ ընկերներու հետ, շատ լաւ էին ինչպէս միշտ եւ վերջացող եռամսէի ընթացքին:

Յետամնաց անդամավճարները.— Յայտօր, մեր պաշտօնավարութեան շրջանին — Յետամնաց անդամավճարներու գումարն է եգ. ողջ 512. ցաւալի է որ, հակառակ մեր հաւաքիչ ընկերոջ անխոնջ ջանքերուն, սոյն գումարը անգանձելի մնացած է:

Շրջանային ժողով.— Վերջին պահուն, Եգիպտոսի կոմիտէին մեր ստացած 25 Նոյեմբեր թուակիր նամակէն կը տեղեկանանք որ ան որոշած է յառաջիկայ Յունւարին գումարել Շրջանային ժողով. միեւնոյն նամակով մեզ հաղորդուած են օրակարգի զբաղմանց մաս կազմելիք խնդիրները, գոր ընդհանուր ժողովիդ դիւանը պիտի ծանօթացնէ ձեզ ամէնուղ, անոնց այդ օրակարգի խնդրոյ շուրջ կարծիքի փոխանակութիւններ եւ վիճաբանութիւններ կատարելու համար:

Մեր տեղեկագիրը.— Ըստ Եգիպտոսի շրջանի մեր ներքին կանոնագրի 38րդ յօդուածի տրամադրութեան մեր ներկայ եռամսեայ տեղեկագիրը՝ ինչպէս ասկից առաջ երկու տեղեկագիրները, երկու օրինակ պատրաստած ենք, մէկը Ընկերական ընդհանուր ժողովիդ մատուցուելու, իսկ երկրորդը՝ Եգիպտոսի կոմիտէին ղրկուելու համար:

Շնորհակալութիւն.— Տեղեկագիրիս փակելէ առաջ պէտք կը զգանք շնորհակալութիւն յայտնելու Հայ Ազգային միութեան Աղեքսանդրիոյ օժանդակ մարմնի մեր ընկերներուն, մեր հաւաքիչ ընկերոջ, քննիչ եւ աշխատանքի յանձնախումբերուն, վերջապէս ամէն այն ընկերներուն մասնաւորապէս՝ որ իրենց աշխատութիւններով օգտակար եղան եւ օգնեցին մեզ մեր ջանքերուն մէջ:

Հ.Յ.Դ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՂԵՔ. ԵՆԹԱԿՈՄԻՏԷ
[Ստորագրութիւններ]

Աղեքսանդրիա
27 Նոյեմբեր 1917

Կարդացուած եւ վաւերացուած ընդհանուր ժողովոյ
Նոյեմբեր 27/ Դեկտ. 11 նիստին մէջ:

Դիւան Ընդհանուր ժողովոյ
Քարտուղար՝ Նախագահ՝
Հ. Ն. Գաբրիէլեան Մկրտիչ Եփրեմեան

ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՆԹԱԿՈՍԻՏԵԻՆ

1917 շրջան

I – 1917 Նոյ. 16 – 31 Դեկտ. 1917

II – Ամփոփում 1917 Փետր. 15 – 31 Դեկտ. 1917

Ներկայ տեղեկագիրը երկու մաս է բաղկացած է. առաջինը կը սկսի 1917 Նոյ. 16-էն ու կը յանգի 31 Դեկտ. 1917, 46 օրուան միջոց մը: Ասով ներկայացուցած կ'ըլլանք մենք Ընկ. ընդհ. ժողովիդ՝ 3 հատ եռամսեայ եւ մէկ ալ 46 օրուան, — ընդամէնն 4 տեղեկագիր, որոնք կը բովանդակեն մեր 10½ ամսուան գործունէութիւնը, քանի որ մեր շրջանը կը փակենք Դեկտ. 31ին որ ընդհանրապէս յարմարագոյն թուականն է հաշուետուութեանց:— Մեր տեղեկագրի երկրորդ մասը կը պարունակէ մեր ամբողջ պաշտօնավարութեան ամփոփումը, զոր օգտակար կը համարենք, անգամ մըն ալ, յանձնել Ընկ. ընդհ. ժողովիդ ուշադրութեան, հեղ մը եւս պատկերացուցած ըլլալու համար մեր աշխատութեանց մասնրամասները եւ մեր կեանքը իր ամէն կողմերով:

Վերջացող 46 օրուան մէջ՝ մենք ունեցանք 8 ենթակոմիտէի նիստեր, 4 խորհրդակցական եւ 5 ընկերական ընդհանուր ժողովներ:

Արձանագրուեցան 2 գործօն եւ 2 օժանդակ ընկերներ:

Կարգապահական ըլլալով ունեցանք, Օգոստոս 20ի դատաստանական ատենի անդամներէն՝ ընկեր Յ. Պչաքճեանի պահանջած նոր դատաստանականը, որ տեղի ունեցաւ Դեկտ. 30ին եւ որուն որոշում-վճիռը կը փոխանցենք Եգիպտոսի կոմիտէին:

46 օրուան մէջ ստացած ենք 10 եւ գրած ենք 12 նամակներ:

Ըստ յարակից հաշուեկշռի՝ 1917 Նոյ. 13 — 31 Դեկտ.

Մուտք

Գործօն ընկերներէն եգ. ողջ. դահ.	846
Օժանդակ » » »	486
Ներքին հանգանակութենէն	898
Թուրքեանի հօր մահուան առթիւ հանգ.	240
3 հատ կամաւ[որական] ալպոմի վաճառումէն	300
1916ի յետամնացներէն գանձ.	70
գիրքերու վաճառքէն գոյացած	73.50
Քառթերու » » եւ նուէր	367
Գոյքերու » »	115
	3395.50

Ելք

1917 Նոյ. 16 — 31 Դեկտ. 1917

Ընկ. ընդհ. ժողովներու բեթրոլի ծախք եգ. ողջ դահ.	54.50
Հաւաքիչ ընկերող 2 ամսական եւ ներքին հանգանակութեան գանձմանց	260
Եգիպտոսի կոմիտէին յանձնեցինք	3081
	3395.50

Ամփոփում 10½ ամսուան մեր գործունէութեան

Ենթակոմիտէս 1917 Փետր. 15 պաշտօնի կոչուած է. մեր հինգէն, մարտի մէջ հրաժարեցաւ ընկեր Մ. Եփրեմեան. իրեն յաջորդեց Տ. Եաղուպեան:

Մարմինս ունեցաւ ընդամէնն 53 նիստեր. հրաւիրեց 8 խմբային ընդհանուր, 8 խորհրդակցական, 3 խառն, 1 վիճաբանական եւ 12 ընկերական ընդհանուր ժողովներ:

Ենթակոմիտէի ժողովներուն մէջ զբաղեցանք, որքան մեր ուժերը կը ներէին, առօրէին հարցերով, ջանացինք վառ պահել ընկերական ոգին, յարաբերութիւնները, ծաւալել մեր կազմակերպական սկզբունքները քաղաքիս հայ հասարակութեան մէջ, աշխատեցանք աւելցընել գործօն եւ օժանդակ ընկերներու թիւը եւ մեր կարելին ըրինք լրացնելու համար մեր վրայ դրուած նիւթական ցենզը:

Հոս աւելորդ չենք սեպեր անգամ մը եւս յիշատակութիւնն ընել մեր այն թելադրութեանց զոր ըրինք, ապրիլ ամսոյ մէջն իսկ, Հայ Ազգային միութեան տեղիս օժանդակ մարմնի մեր ընկերց եւ Եգիպտոսի կոմիտէին միջոցաւ, թելադրութիւններ Ազգային միութեան սեղանին վրայ դատուելու համար եւ ապա, ի նկատի առած կամաւորական շարժումի եւ կիրիկեան ափանց վրայ տեղի ունենալիք զօրահանումի պարագան, թելադրութիւններ որոնք այսօր ալ հրատապ այժմէութիւն մը կը ներկայացնեն. ահա՛ թէ ի՞նչ էին ատոնք.

1. Գաղթականներու պարենաւորման, զգեստաւորման եւ բժշկական կարիքներու համար՝ այսօրուընէ իսկ՝ պատրաստութիւններ տեսնել եւ յանձնախուժմը մը

կազմել, պատրաստ գտնուելու համար ամէն անակրն- կալի, ինչ որ պատահեցաւ Պաղտատի ծանօթ իրողու- թեան առթիւ:

2. Գաղթականական յանձնախումբերու երկրի մէջ գործող պատգամաւորները՝ (Ազգային միութենէն բխած) նուազագոյն վճարումներով ուղարկել՝ չարա- շահութեանց տեղի չտալու համար:

3. Ազգային գաղութներէն հաւաքաբար դիմել, Ազ- գային միութեան մարմիններու միջոցաւ, Ազգային պատուիրակութեան, որպէսզի դաշնակից պետու- թեանց մօտ դիմում կատարուի, յառաջիկայ մեծ կա- րիքներու համար քանի մը միլիոնի փոխառութիւն կըն- քելու, որը պէտք է գործածուի միմիայն Ազգային Միութեան խողովակով: Սոյն փոխառութիւնը կ'ընել Ա- պագայ Հայաստանի անունով: Առարկութեանց պա- հուն՝ հաշուեյարդարութեանց ատեն ըլլալիք տուգանք- ներուն հաշուել:

4. Յանձնախումբերու լուրջ նկատառութեան յանձ- նել սա կէտը, թէ գաղթականական շրջաններ երեւան գալու պարագային՝ անոնց ամբողջական տնտեսու- թիւնը՝ կարելի եղածին չափ, աշխատիլ անկախաբար վարել:

Վերոնշեալ սոյն չորսը Ազգային Միութեան Աղեք- սանդրիոյ օժանդակ Մարմնի մեր պատգամաւոր ըն- կերց գործով թելադրեցինք: Հետեւեալներն ալ Եգիպ- տոսի կոմիտէին միջոցաւ.

1.- Արտասահմանի ամբողջ հայութեան վրայ պար- տաւորիչ տուրքի դրութիւն մը հաստատել:

2.- Տրուած ըլլալով որ Ազգային Միութիւնը օրուան կառավարութիւնը կը ներկայացնէ, ազգային զանա- զան ծառայութիւնները անիրաւասու են ո՛րեւէ անջատ գործունէութիւն ունենալու ու իրենց գործերուն մա- սին պարտական են գիտակից պահել Ազգային միու- թիւնը եւ պարտաւոր են այդ խողովակով ի պահանջել հարկին իրենց բարոյական եւ նիւթական միջոցները տրամադրել անոր եւ գործին:

3.- Կոմիտէի նկատառութեան յանձնել «Արեւ»ի թ- 11ի խմբագրականը:

Մեր խմբային ընդհանուր ժողովները սպասուած չափով չարդիւնաւորուեցան, որովհետեւ մեր կարողա- գոյն ընկերները մերժեցին յաճախ խօսիլ անոնց մէջ. ասիկա պատճառ եղաւ որ մեր ընկերներու յեղափոխա- կան եւ մտաւորական զարգացման սատարելու կոչ- ւած սոյն հաւաքումները չա՛տ թերի մնացին:

Մեր խորհրդակցական ժողովները մեծապէս նպաս- տեցին մեր գործունէութեան եւ ձեռնարկներուն:

Ինչպէս քիչ վերը յիշատակեցինք, 12 ընկերական ընդհանուր ժողովներ ունեցանք. ասոնց 11ը արդիւնա- ւորուեցան առաջին հրաւերով իսկ, բայց մէկը միայն, 6 Դեկտեմբերինը, ցրուեցաւ մեծամասնութիւն չզոյանա- լուն պատճառաւ. ըսենք որ հակառակ մեր ճիգերուն,

Ընկ. ընդհ. ժողովներու ներկայ եղող մեր ընկերց թիւը 70-82 գործօններու վրայ, 49ը չանցաւ բնաւ. իրենց շա- հեկանութեան տեսակէտով ուշագրաւ են Յուլիս 7ի, Յուլիս 22ի, Սեպտեմբեր 6ի, Դեկտեմբեր 10, 21, 27իննե- րը: Յուլիս 7ի բացառիկ ժողովին, 27 ընկերներու գրաւոր դիմումով, պահանջեց մենէ՛ Ազգային միու- թեան եւ Նպաստամատոյցի մասին տեղեկութիւններ ու բացատրութիւններ: Յուլիս 22ին, կոմիտէի տեղեկաբեր ընկեր Ստեփան Եսայեան, բացատրութիւններ տուաւ ասոնց մասին: Սեպտեմբեր 6ին կարդացուեցաւ Եգիպ- տոսի կոմիտէին նամակը, որով կը հաղորդուէր Հոկ- տեմբերի վերջերը Շրջանային ժողով գումարելու իր մտադրութիւնը: Դեկտ. 10, 21, 27ին զբաղեցանք Շրջա- նային ժողովի օրակարգի խնդիրներով: Այս վերջին երեքին մէջ մեր եւ ընկերներու կողմէն առաջարկուած նիւթեր.

ա) Ներքին կանոնագրի վերաքննութիւն. բ) Սեփա- կան թերթ մը ունենալու հարց. գ) Գործիչի հարց. դ) Կո- միտէի յարաբերութիւնները՝ տեղական մարմիններու եւ ընկերներու հետ. ե) Կոմիտէն՝ հանդէպ տեղական վարչական եւ կուլտուրական կազմակերպութեանց. զ) Կոմիտէն՝ հանդէպ քաղաքական քոյր կազմակեր- պութեանց. է) Եգիպտոսի Դաշնակցութիւնը՝ Ազգային միութեան մէջ. ը) Կոմիտէն Դաշնակցութեան հանդէպ. թ) Կոմիտէն՝ կազմակերպական տեսակէտով նոր գրաւուած վայրերու մէջ:

Փետրուար 15ին երբ պաշտօնի անցանք ունէինք 60 գործօն եւ 11 օժանդակ ընկերներ: 10½ ամսուան մէջ ա- ւելցան 24 գործօն եւ 32 օժանդակ. հրաժարեցան 2 գոր- ծօն եւ 7 օժանդակ ընկերներ: Հիմա ունինք 82 գործօն եւ 36 օժանդակ ընկերներ:

Կամաւորական շարժումի վերաբերմամբ, մեր վեր- ջին երկու տեղեկագրերով տեղեկութիւններ տուած ենք արդէն՝ քաղելով զանոնք տեղիս օժանդակ մարմնի մեր ընկերց գրաւոր հաղորդագրութիւններէն: Աղեք- սանդրիա տուաւ ընդամէնը 162 իսկ Գահիրէ՛ 200: Քա- դաքիս արձանագրուած դաշնակցականներու թիւը 2ը չ'անցնիր:

Սոյն շրջանին ուղեցինք սարքել վիճակահանութիւն մը, զոր Եգիպտոսի կոմիտէն յարմար չդասեց արտօ- նել: Փորձեցինք ներքին հանգանակութիւն մը. ստո- րագրուած գումարը յանգեցաւ 4850ի. ցարդ արտադ- րեց 4374: Ներքին հանգանակութեան ձեւը կը թելադ- րենք մենէ՛ ետք գալիք մարմիններուն: Որոշեցինք Դեկտեմբերի մէջ նպաստի ներկայացում մը տալ, բայց մինչ օրս ներկայացուելիք խաղը գրաքննիչէն չեկաւ դեռ. յաջորդ ենթակոմիտէին կը մնայ արտօնութիւնը ստացուելուն՝ կազմակերպել ներկայացումը, զոր իրա-

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

գործելու համար արդէն կազմած ենք թատերական յանձնախումբ մը:

Կարգապահական երեք խնդիրներ ունեցանք. ասոնց առաջինը՝ առանց ընկերական ատեանի, իսկ երկուրդը՝ կարգադրուեցան ընկերական ատեանով:

Օգոստոս 16 – 15 Նոյեմբերի տեղեկագիրնու մէջ՝ խօսած ենք մեր ընտրած «քննիչ» եւ «Աշխատանք»ի յանձնախումբերու մասին. ասոնց գործնականութեանը վստահ, կը յանձնարարենք պահել զանոնք:

Եգիպտոսի կոմիտէին ներկայացուցինք դրոշմա-թուղթի նախագիծ մը, որ պիտի ենթարկուի Շրջանա-յին ժողովին:

Կուսակցական գրականութեան բրոքերանտի մի-ջոց ըրինք «Հայրենիք» թերթի ծաւարումը, որուն մին-չեւ հիմա ճարեցինք 19 բաժանորդներ.— Յեղափոխա-կան թանգարանը տրամադրեցինք մեր ընկերոց, սակայն կը ցաւինք ըսել որ շատ աննշան թիւով ընկերներ հե-տաքրքուեցան մեր քով գտնուած պրոչիւրներով. հա-զիւ 10 հոգի ստացան 44 գիրք կարդալու համար:

Պատրաստեցինք մեր ընկերներու մանրամասն վի-ճակագրութիւնը:

10½ ամսուան ընթացքին գրած ենք 124 եւ ստացած ենք 57 նամակ:

Նախորդ ենթակոմիտէին ստացած էինք 9604¼ եգ-ոզը, զոր Յունուարի մէջ նոյնութեամբ յանձնեցինք Եգիպտոսի կոմիտէին:

Մեր 10½ ամսուան գործունէութեան շրջանին

Մուտք

1917 Փետրուար 15 – 15 Մայիս ընդամէնն	1788
» Մայիս 16 – 15 Օգոստոս	» 3359
» Օգոստոս 16 – 15 Նոյեմբեր	» 7804
» Նոյեմբեր 16 – 31 Դեկտեմբեր	» 3395.50
	16346.50

Ելք

1917 Փետրուար 15 – 15 Մայիս ծախս	130
» Մայիս 16 – 15 Օգոստոս	» 166
» Օգոստոս 16 – 15 Նոյեմբեր	» 140
» Նոյեմբեր 16 – 31 Դեկտեմբեր	» 314.50

Մայիս 16 – 15 Օգ. Եգիպտոսի կոմիտէին յանձնուած	4850.50
» Օգոստոս 16 – 15 Նոյ. »	» 7664
» Նոյեմբեր 16 – 31 Դեկտ. »	» 3081– 15595.50
	16346.50

Ուրեմն Փետրուար 15 – 31 Դեկտեմբեր 1917 մեր ընդհանուր հասոյթի գումարը կ'ըլլայ 16346½, որմէ մեր ծախքերուն յատկացուած է 751.— կամ ուրիշ խօսքով ընդհանուր հասոյթի վրայ 4½%, իսկ Եգիպտո-սի կոմիտէին յանձնած կ'ըլլանք 15595½: Նկատելով որ մեզ պարտադրուած նիւթական ցենզը 150 եգիպտական ոսկի է, հասոյթնիս 16346½, ուրեմն լրացուցած կ'ըլ-լանք զայն:

Մեր հասոյթներու մանրամասնութիւնները.

Յետնեալ ամսավճարներէ	195
Գործօն ընկերներէ	4866
Օժանդակ »	2281
«Ռուզան»ի ապառիկէ	200
Փոխան ծաղկեպսակի եւ նշանախօսութեանց	
Հարսանեաց առթիւ հանգանակութիւններէ	1690
Զինուորական ֆոնտի մնացորդէ գանձուած	1060
Ներքին հանգանակութենէ	4374
Գոյքերու վաճառումէն	477.50
«Հայրենիք»ի »	462.50
Քառթերու՝	365
եւ նուէր՝	2367
Գիրքերու վաճառումէն	73.50
3 Ալպոմի »	300
	16346.50

Մեր ծախքերու մանրամասնութիւնները

Հաւաքիչ ընկերոջ 11 ամսական	330
եւ ներքին հանգանակութեան գանձման համար վարձք	200
	530
Բեթրոլի եւ այլ ծախքեր	221.00
Եգիպտոսի կոմիտէին յանձնուած	15395.50
	16346.50

Յետամնաց ունինք 10½ ամսուան մէջ

Ներքին հանգանակութենէ	476
Գործօն անդամավճարներէ	468
	944

Յարակից է մեր գոյքերու մանրամասն ցուցակը:

Ստորեւ կու տանք անունները մեր այն ընկերնե-րուն, որոնք երեք անգամ եւ աւելի յաջորդաբար բացա-կայած են. ընկ. ընդհ. ժողովի նիստերէն

Ընկ. Մկրտիչ Սրմաքէչլեան	
» Արամ Արշակեան	
» Արշակ Ամիրեան	
» Պետրոս Մանուկեան	

- » Երրուանդ Գրաճեան
- » Մովսէս Մանուկեան
- » Լեւոն Գաֆէսճեան
- » Պօղոս Մեհրապեան
- » Պետրոս Պետրոսեան

Ի վերջոյ կը ներկայացնենք Ընկերական ընդհ. ժողովի
վիզ խմբովին մեր հրատարականը:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՂԵՔ. ԵՆԹԱԿՈՄԻՏԷ

Ասոնք կորսնցուցած են իրենց ձայնի իրաւունքը:

[Ստորագրութիւններ]

Պէտք կը զգանք հոս ըսելու, որ մենք չկրցանք մեր
ընկերներու մտաւորական զարգացմամբ լայն չափով
զբաղիլ. այս պարագան կը ձգենք գալիք մարմին: Մեր
կարծեօք ո՛չ նուազ հարկ է մղում տալ վիճաբանական
ժողովներուն:

Աղեքսանդրիա
17 Յունուար 1918

Վերջին անգամ մըն ալ շնորհակալութիւն մեր այն
ամէն ընկերներուն, մասնաւորաբար Ազգային միու-
թեան օժանդակ մարմնի մեր պատգամաւորներուն,
մեր երեք յանձնախումբերուն, հաւաքիչ ընկերոջ, որ
իրենց օժանդակութիւններով դիւրացուցին մեր գործը
եւ օգնեցին մեզ մեր այնքա՛ն համեստ գործունէութեան
ընթացքին:

Կարգացուած եւ վաւերացուած ընկ. Ընդհ. ժողովի
17 Յունուար 1918ի նիստին մէջ:

Դիւան ընդհանուր ժողովոյ
Քարտուղար՝ Նախագահ՝

[Ստորագրութիւններ]

Փաստ. 1053-34

Գ 3.- ԱՄՓՈՓՈՒՄ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ Է՞՞ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ

(Ուղղուած Շրջանի մարմիններուն՝ ընկ[երական] Ընդհ. ժողովի նիստերուն մէջ կարդացուելու համար)

Ընկերներ,

Հ. Յ. Դաշնակցութեան Եգիպտոսի կոմիտէին 20 Մարտ, 1918 թուակիր նամակի համաձայն, Եգիպտոսի Շրջանին էրդ Շրջանային ժողովը տեղի ունեցաւ 1918 Մարտ 23 եւ վերջացաւ Մարտ 28ին, վեց օրուայ ընթացքին մէջ:

Շրջան.— Եգիպտոսի շրջանը կը ներկայացնեն ներկայիս Գահիրէ, Աղեքսանդրիա, Թանթա, Բօրթ-Սաիտ եւ Կիպրոս, ուր կան մէյ մէկ ենթակոմիտէ, ուրեմն ընդհանուր Եգիպտոսի շրջանին մէջ գոյութիւն ունին հինգ ենթակոմիտէներ:

Պատգամաւորներ.— Եգիպտոսի կոմիտէի ցուցմունքով Շրջանային ժողովի աշխատանքներուն մասնակցելու համար հրաւիրուած էին.

Գահիրէի կազմէն՝ 3 պատգամաւոր, 2ը ընկ. Ընդհ. ժողովէն եւ 1ը ենթակոմիտէի կողմէն ընտրուած:

Աղեքսանդրիայէն՝ 5 պատգամաւոր, 4ը ընկ[երական] Ընդհ. ժողովէն եւ 1ը ենթակոմիտէի կողմէն:

- Թանթայէն՝ 1 պատգամաւոր:
- Փօրթ-Սաիտէն՝ 1 պատգամաւոր:
- Կիպրոսէն՝ 1 պատգամաւոր:
- Եգիպտոսի կոմիտէն՝ 1 պատգամաւոր:

Որով ընդհանուր պատգամաւորներու թիւը կը յանգէր 12ի, 12 ձայնով:

Մանօթ.— Բօրթ-Սաիտ երկու պատգամաւոր նշանակած էր, սակայն ասոնցմէ մին՝ Եգիպտոսի կոմիտէին մաս կազմած ըլլալուն՝ ընդունուեցաւ խորհրդակցական ձայնով միայն, նկատելով որ ժամանակի սղութեան պատճառով կարելի չէր նոր պատգամաւորի մը ընտրութեան հրահանգ տալ եւ գործադրել:

Նկատել.— Շրջանային ժողովը ունեցաւ Մարտ 23ին՝ մէկ, 24ին՝ մէկ, 25ին՝ երկու, 26ին՝ երկու, 27ին՝ երկու, 28ին՝ երկու, ընդամենը՝ 10 նիստ: Ստորեւ կու տանք,

իւրաքանչիւր նիստի վիճաբանութեանց եւ առնուած որոշումներու մանրամասնութիւնները:

ՆԻՍՏ Ա.

Բացում.— Շրջանային ժողովի առաջին նիստը տեղի ունեցաւ 23 Մարտ 1918 շաբաթ գիշեր ժամը 10½ին Գահիրէի Հ.Յ.Դ. ընթերցասրահին մէջ 12 պատգամաւորներու ներկայութեան: Եգիպտոսի կոմիտէին պատգամաւորը բացուած հռչակեց ժողովը եւ բարի գալուստ մաղթելով ներկաներուն առաջարկեց առժամեայ դիւան մը կազմել: Երէց պատգամաւորը նախագահ, իսկ կրտսերը քարտուղար նշանակուեցան:

Յանձնարարագրերու (մանդա) ճշդում.— Կատարուեցաւ պատգամաւորներու յանձնարարագրոց ճշդումը: Բօրթ-Սաիտի եւ Կիպրոսի պատգամաւորներու յանձնարարագրերը կոմիտէի մօտ գտնուելով՝ անոնց ճշդումը յաջորդ նիստին յետաձգուեցաւ:

Մնայուն դիւանի ընտրութիւն.— Կատարուեցաւ ընթացակարտ ժողովի մնայուն դիւանի ընտրութիւնը:

Հրաւէր.— Խորհրդակցական ձայնով ժողովին աշխատանքներուն մասնակցելու համար հրաւոր դիմում եղաւ Հ.Յ.Դ. Գահիրէի ենթակոմիտէին եւ ընկեր Մ. Տէր Սահակեան (Բօրթ-Սաիտի ք. պատգամաւոր):

Օրակարգ.—

- Օրակարգը կազմուեցաւ հետեւեալ կերպով.
- Ա.- Բացում Շրջանային ժողովի
- Բ.- Ճշդում պատգամաւորներու յանձնարարագրոց
- Գ.- Դիւանի ընտրութիւն
- Դ.- Ընթերցում ենթակոմիտէներու տեղեկագրերուն
- Ե.- Ընթերցում կոմիտէի տեղեկագրին, հաշուետուութիւն եւ վաւերացում
- Զ.- Ներքին կանոնադրի վերաքննութիւն
- Է.- Դաշնակցական օրգան մը հիմնելու հարց
- Ը.- Մնայուն գործիչ մը ունենալու հարց

- Թ.- Զաւարեան Փոնտի հաշիւները
- ժ.- Զինուորական Փոնտի հաշիւները
- ժԱ.- Գործունէութեան նոր ուղեգիծ
- ժԲ.- Կոմիտէի ընտրութիւն

Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ պատգամաւորները նոյնպէս կարգ մը ուրիշ հարցեր բերած էին, որոնք որոշուեցաւ ի նկատի առնել օրակարգի Զ. հարցի վիճաբանութեանց պահուն:

Յանձնախումբեր.— Դիւրացնելու համար Շրջանային ժողովի աշխատութիւնները, կազմուեցան երկու յանձնախումբեր, հաշիւներու քննութեան եւ ներքին կանոնադրի վերաքննութեան համար:

ՆԻՍ Բ.

Խորհրդակցական ձայնով կը մասնակցէին Բօրթ-Սաիտի երկրորդ պատգամաւորը, ինչպէս նաեւ Գահիրէի ենթակոմիտէի անդամները: Բօրթ-Սաիտի եւ Կիպրոսի պատգամաւորներու մանդաներու ճշգրտմանը կատարուեցան:

Գահիրէի կազմը.— Նկատի ունենալով որ Գահիրէի կազմը իր նիւթական ցենզը չէ լրացուցած, կարծիք յայտնուեցաւ խորհրդակցական ձայնով ընդունել իր պատգամաւորները, սակայն պատգամաւորներու մեծամասնութիւնը ծանրացաւ կարգ մը երեւոյթներու վրայ եւ աչքի առաջ ունենալով անոր վերակազմուածի հանգամանքը, համաձայն գտնուեցան որ իր ներկայացուցիչները պահեն իրենց ձայնը:

Ընթերցում ենթակոմիտէներու տեղեկագրերու.— Կարդացուեցաւ Աղեքսանդրիոյ ենթակոմիտէի տեղեկագիրը 1 Յունիս 1916 — 31 Դեկտ. 1917, ուրկէ յայտնուեցաւ որ Աղեքսանդրիոյ կազմը 19 ամիսներու ընթացքին ունեցեր է կանոնաւոր գործունէութիւն: Հոն կան 82 գործօն եւ 36 օժանդակ ընկերներ:

Ան լրացուցեր է իր նիւթական ցենզը (1916 Յունիս 1 — 1917 Դեկտ. 31 պէտք է վճարէր 237½ եգ. ոսկի, մինչդեռ ինք տուեր է 287 88/100 եգ. ոսկի. ասկից դուրս է 185 ոսկւոյ գումարը արտադրուած կամաւորներու կարօտ ընտանեացի նպաստ սարքուած վիճակահանութենէն եւ յանձնուած Զին. Փոնդի մարմինին):

Շնորհակալութիւն յայտնուեցաւ Աղեքսանդրիոյ կազմին բարձր գործունէութեան համար:

Կարդացուեցաւ Գահիրէի ենթակոմիտէին տեղեկագիրը 9 Նոյեմբեր 1916 — 30 Յունուար 1918: Ան ցաւ կը յայտնէր որ կարգ մը ծանօթ ներքին խնդիրներու բերումով Գահիրէի կազմը շփոթ, թոյլ եւ անկազմակերպ

չըջան մը բոլորեց: Հազիւ անցեալ Հոկտ.ի սկիզբները սկսած է վերակազմութեան գործը: Այսօր ունի 46 ընկերներ գործօն: Գահիրէն 20 ամիսներու ընթացքին կազմակերպութեան տուած է 10 18½/100 եգիպտական ոսկի: Ենթակոմիտէն իր սնտուկէն յատկացուցած է ընթերցարանին ծախուց ամսական մէկ եգիպտական ոսկի:

Պատգամաւորները կարգ մը դիտողութիւններ ըրին Գահիրէի կազմի մասին: Յոյս ու փափաք յայտնուեցաւ որ գալիք շրջանին ան հասցուի բաղձացեալ բարձրութեան, ստուարացուին ընկերական շարքերը եւ լրացուի նիւթական ցենզը:

Կարդացուեցաւ Թանթայի ենթակոմիտէի տեղեկագիրը, 1 Յունիս 1916 — 31 Դեկտ. 1917: Հոն կան 12 գործօն ընկերներ: Հակառակ քանակի քշութեան, անոնք ունեցած են աչքառու գործունէութիւն արդէն իսկ փոքրաթիւ գաղութին մէջ, տալով կամաւորներ եւ ունենալով կենդանի մասնակցութիւն տեղական-ազգային կեանքին: Թանթան անցեալ շրջանին տուած է 19 40½/100 եգ. ոսկի:

Շնորհակալութիւն առաջարկուեցաւ Թանթայի գործունէութեան համար:

Կիպրոսի ենթակոմիտէի տեղեկագիրը կը սկսէր 1 Յունիս 1916ին եւ կը յանգէր 31 Հոկտ. 1917ին: Հոն ունինք 7 գործօն ընկերներ: Անոնք վերջերս համերաշխութեան շրջան մըն են բոլորած. կազմակերպական սնտուկին տուած են 7 72/100 եգ. ոսկի: Կիպրոսի մեր ընկերները շատ հոգածու դեր ունեցած են Արեւելեան լեզէոնի կամաւորներու նկատմամբ: Շնորհակալութիւն յայտնուեցաւ Կիպրոսի համար եւս:

Փօրթ-Սաիտ տեղեկագիրը չէր ներկայացուցած: Եգիպտոսի կոմիտէին մէկ անդամը տեղեկութիւններ տուաւ, ըստ որում Արեւելեան լեզէոնի գլխուորական ծառայութեան անընդունակ մեր կարգ մը վերադարձուած ընկերները վերակազմած են Կարմիր լերան ենթակոմիտէն: Գործօն ընկերներու թիւը կը հասնի 33ի: Կազմը 1916 Յունիս 1էն 1917 31 Դեկտ. ոչ մի նիւթական օժանդակութեան բաժին չէ բերած, այն միակ պատճառով, որ կամաւորական ձեռնարկի վաղորդային իսկ սուկտացիք մեկնած են Կիպրոս իրենց գլխուորական պարտուց հատուցումն ընելու:

Ընթերցում Եգիպտոսի կոմիտէի տեղեկագրին.—

Կոմիտէի պատգամաւոր ընկերը ներկայացուց, գրաւորապէս Եգիպտոսի կոմիտէին՝ 1 Օգոստ. 1916էն 1918 Մարտ տեղեկագիրը եւ հաշուեկշիւը: Տեղեկագրի ամփոփումը հետեւեալն է: Ան կ'ընդգրկէ քսան ամսուան գործունէութեան շրջան մը՝ որուն կորիզը կը կազմեն երկու խոշոր երեւոյթներ. Արտասահմանեան հայ-

կական համերաշխութիւնը եւ կամաւորական շարժումը: — Եթէ անոնք մեծամեծ ակնկալութիւնները չիրականացուցին ալ, այսուհանդերձ մեր ազատագրութեան վերջին երեսնամեայ պատմութեան գեղեցիկ էջերը կը ներկայացնեն:

Կոմիտէն երբ 1916ին պաշտօնի գլուխ անցաւ իր գլխաւոր մտահոգութիւնը եղաւ Կովկասէն դուրս հայկական նոր ճակատ մը ստեղծել, թելադրուած նոյնպէս Ամերիկայի Կեդր. կոմիտէէն: Այդ անհրաժեշտ կը դառնար Կովկասէն հասած լուրերուն հետեւանքով, ուր ցարական կառավարութեան ընթացքը պատճառ կ'ըլլար որ լուծուէին այնտեղի մեր կամաւորական գունդերը: Ամերիկայի մեր ընկերները Միջագետքը յարմար կը դատէին իբր հայկական երկրորդ ճակատ: Կոմիտէն Բալկանեան ճակատը ի նկատի առաւ: — Ճիշդ այդ ատենները անգլիական կառավարութիւնը Սելանիկի գինուորական օժանդակ ծառայութեանց համար Սուէտացի մեր հայրենակիցներէն մաս մը երիտասարդներ գինուորագրել կ'ուզէ եւ չի յաջողիր: Կոմիտէն առիթէն օգտուելով կը միջամտէ դժուարութիւնը հարթելու եւ արտասահմանի հայ մարտական ուժերը կը խոստանայ կեդրոնացնել Սելանիկ: — Իրեն կը պատասխանուի թէ այդ հոգը յանձնուած է Փրանսական կառավարութեան, որուն պէտք էր դիմել: Հոկտ.ի սկիզբը մեր կողմէն պաշտօնապէս կը դիմուի Եգիպտոսի Փրանսական դիւանագիտական գործակալին, ան կը յայտնէ Դաշնակցութեան ներկայացուցիչներուն թէ մեր ծրագրած ձեռնարկով զբաղելու համար Գահիրէ պիտի ժամանէ բարձրաստիճան գինուորական մը: Յիշեալ գինուորականը ամէն աջակցութիւն խոստացաւ մեզի: Փրանսական կառավարութեան ներշնչած յոյսերը մեր ամէն ակնկալութիւնները կը գլխին կ'անցնէին. կը մնար խմբաւորել արտասահմանի ամբողջ հայութիւնը: Կոմիտէն վայրկեան մ'իսկ չվարանեցաւ դիմել քոյր կազմակերպութեանց՝ գալ համերաշխօրէն եւ միասնաբար լծուիլ գործին:— Այսպէսով կազմուեցաւ Հայ Ազգային միութեան Եգիպտոսի մարմինը, որ իր մէջ կը խտացնէր մեր գաղութին գրեթէ բոլոր գործօն տարրերն ու հաստատութիւնները: — Եգիպտոսի Ազգ. միութեան առաջին ջանքն եղաւ կազմուելիք հայկ. բանակին ապահովել Եգիպտոսի երիտասարդութեան առաւելագոյն մասնակցութիւնը: Յաւալի է հաստատել որ Եգիպտոսի հայ կամաւորներու թիւը 300 ալ չեղաւ սակայն: Եգիպտոսի Ազգ. միութեան երկրորդ ջանքը՝ Ամերիկայի մէջ լիակատար յաջողութեամբ պսակուեցաւ: — Հոսկէ ղրկուած պատուիրակներ հոն քիչ ատենի մէջ համերաշխութիւն առաջ բերին նոյնպէս ազգային գանազան հոսանքներու եւ հաստատութիւններու միջեւ: Կազմուեցաւ Ամերիկայի Հայ Ազգ. միութիւնը, որ ամենափայլուն գործունէութիւնը ունեցաւ մասնաւանդ նիւթական տեսակէտով: Ծովային փոխադրութիւններու

դժուարութեանց պատճառաւ սակայն՝ արձանագրուած կամաւորներու հագիւ մէկ քառորդը կըրցան հասնիլ Արեւելեան լեզնոն, ուր ունինք այժմ 3000 գինուոր, որոնք զմայլանք ազդած են հայ բանակատեղին այցելողներուն:

Եգիպտոսի Հայ Ազգ. միութիւնը դառն քննադատութեանց ալ ենթարկուեցաւ, բամբասուեցաւ, մեղադրուեցաւ. շահախնդիր մարդիկ կային: Բնական է որ ան ունեցաւ սխալներ, սակայն այն ամէնը բարեբախտաբար անկարող են արատ ձգելու ամբողջին վրայ: Ազգային միութեան մէջ ստեղծուած է իրական եղբայրական միջնորդութիւն մը. սեւ գիծ մը այսուհանդերձ խանգարեց գայն: Ս. Դ. Հնչակեան պատուիրակները, որոնք սկիզբէն ի վեր այլամերժ ոգի մը կը ցուցադրէին եւ կը հետեւէին խափանարարութեան, Միութեան մէկ բացառիկ նիստի որոշումով, կախակայուեցան: Դիմուած է իրենց կեդրոնին դարմանելու համար իրաց կացութիւնը: — Այս իրողութիւնը սեղանի վրայ բերած է Ազգ. միութեան վերակազմութեան հարցը, որուն պէտք է տրամադրէ մեր մարմինը իր օժանդակութիւնը:

«Յուսաբեր» այս շրջանին ալ շարունակեց բերանը ըլլալ մեր տեսակէտներուն կարեկիտութեան սահմանին մէջ: — Պատերազմին առաջ բերած պատճառներով՝ Պր. Լալայեանցի մեր ընկերներէն մէկին ուզեց ծախել թերթը, սակայն փոխանցման անկարելիութեան հետեւանօք, չյաջողեցաւ: — Այսօր անստոյգ վիճակի մէջ է «Յուսաբեր»ի հրատարակութեան խնդիրը:

Կոմիտէն՝ ներքին վարչական-կազմակերպական տեսակէտով կը խոստովանի որ թոյլ գործունէութիւն ունեցած է. պատճառները երեք են. I Ազգ. միութեան աշխատանքը, II «Յուսաբեր»ի հրատարակութեան խնդիրը, III Ընկերոջ մը հեռացումը Ամերիկա՝ եւ երկուքին հրաժարումը հոս:

Զինուորական Ֆոնտի հաշիւները չկըրցանք հրատարակել. այդ հաշուէն մնացած 400 ոսկին կը մնայ Պր. Լալայեանցի մօտ, զոր որոշած էինք ղրկել Անդրանիկին, քանի որ կրկին ստեղծուեցաւ կամաւորական շարժումը: Դժբախտաբար այստեղէն փոխադրելու միջոցներ կը պակսին: Կը մտածէինք ընկեր Մ. Վարանդեանի հասցնել Պարիզ եթէ ստուգուէր որ Փրանսայէն Կովկաս կարելի է դրամ հանել:

Կոմիտէն կը հրաժարի կոչ ընելով գործի գլուխ հրաւիրել երիտասարդ եւ թարմ ուժեր: Ամենադառն վայրկեաններու մէջ է որ կ'ապրինք. մեզ կը սպասէ կամ ազատութիւն կամ վերջնական բնաջնջում մեր ազնուական ցեղին: Մեր կուսակցութեան կ'իյնայ ուրեմն գլուխ հանել իրեն վիճակուած դերը, պսակելու համար իր քառորդ եւ աւելի դարու գործունէութիւնը:

Ըստ հաշուեկշիռի Եգիպտոսի կոմիտէն՝ նախորդ շրջանի 7137½ եգ. ողջն ալ միասին հաշուելով մուտք

ուսնեցած է եզ. ողջ. 39657 1/10. Ելք՝ եզիպ. ողջ 21657 5/10, սնտուկին մէջ պատրաստ դրամ կայ եզ. ողջ 17999 6/10: Կոմիտէն Շրջանային ժողովին կը ներկայանայ 4 անդամով, քանի որ մնացեալ երկուքը հրաժարած եւ մէկը պաշտօնով մեկնած է Եզիպտոսէն:

Կոմիտէի գործունէութեան մասին երկարատեւ վիճաբանութիւններ եղան: Անոր հրաժարած անդամներէն Մ[խնաս] Խ[աչատուրեան]ի հրաժարման պարագաները քննելու եւ արդիւնքը Շրջանային ժողովին բերելու համար Յ հոգիէ յանձնախումբ մը կազմուեցաւ:

ՆԻՍ Գ.

Շարունակուեցաւ Եզիպտոսի կոմիտէին տեղեկագրի վիճաբանութիւնը: Կոմիտէի պատգամաւորը տեղեկութիւններ տուաւ Ազգ. Միութեան եւ կամաւորական ձեռնարկի մասին:

ՆԻՍ Դ.

Եզիպտոսի կոմիտէին պատգամաւորը շարունակեց իր տեղեկութիւնները. ան բացատրութիւններ տուաւ Ազգ. Միութեան ծոցին մէջ տեղի ունեցած Հնչակեան միջադէպի վերաբերմամբ: Հնչակեան երեք պատգամաւորները կախակայուած են Ազգ. միութեան իրենց ամիսներէ ի վեր հետեւած խափանարար ընթացքին հետեւանօք:

Այս նիստին մէջ օրակարգի կարգ դարձաւ Ղ. Բ.ի խնդիրը:

Եզիպտոսի կոմիտէին գործունէութեան համար առհասարակ շնորհակալութիւն յայտնուեցաւ:

ՆԻՍ Ե.

Կարգացուեցաւ Արեւելեան լեզէոնի կամաւորներէն ընկեր Յ. Մ.ի կոմիտէի մօտ պահ ձգած դրամի առթիւ գրած նամակը:— Պահ ձգուած է 115 տալեր ամերիկեան թղթադրամ, 70 տալեր ոսկեդրամ, 2 Փրանսական ոսկի, 1 անգլ. ոսկի: Սոյն գումարները Եզ[իպտոս]ի կոմիտէին յանձնուած են Աղեքս. ենթակոմիտէին միջնորդութեամբ, յիշեալ ընկեր Յ. Մ.ի կենդանութեան իրեն իսկ մահուան պարագային իր նամակով ցոյց տուած անձանց յանձնուելու համար:

Կարգացուեցաւ հաշուեքննիչ յանձնախումբի տեղեկագիրը, 1916 Օգոստ. 1 — 1918 Մարտ 18, Եզիպտոսի կոմիտէին մուտք ունեցած է, նախորդէն եզ. ողջ 7137 1/2, շրջաններէն 32519 6/10: Ելքը՝ Ազգ. միութեան վճարած է Աղեքս. ենթակոմիտէի սարքած 24 Դեկտ. 1916ի ներկայացման հասոյթի փոխան դրշ. եզ. 9604 1/2, ծախսեր է դրուշ ողջ. 8053, այժմ պատրաստ դրամ կայ սնտուկին մէջ դրշ. ողջ. 17999 6/10:

ՆԻՍ Զ.

Ժողովը զբաղեցաւ ներքին կանոնագրի վերաքննութեամբ: Այս հարցը եկած էր Աղեքսանդրիոյ, Գահիրէի եւ Թանթայի շրջաններէն. բարեփոխումներ առաջարկուած էին 4. 9. 20. 32. 35. 39. 55. 60. 61. 62. 63. 66. 68. 80. 86. 95 յօդուածներու վրայ: Շրջանային ժողովի Ա. նիստին մէջ կազմուած քննիչ յանձնախումբը իր կարծիքները բերած էր ժողովին: Թեր ու դէմ վիճաբանութիւններէ ետք, վերոգրեալ յօդուածներէն ոմանք բարեփոխուեցան, ոմանք նոյնը մնացին:

Դաշնակցական օրգան մը ունենալու հարց.—

Նկատելով որ պատերազմի արդի պայմաններուն մէջ թերթի մը արտօնութիւն ձեռք բերել անկարելի է, ժողովը որոշեց դիմել Պր. Լալայեանցին «Յուսաբեր»ը Եզիպտոսի կոմիտէին տրամադրութեան տակ դնելու համար, մերժումի պարագային, յայտարարել որ Դաշնակցութիւնը Եզիպտոսի մէջ թերթ չունի: Երկու ընկերէ պատգամաւորութիւն մը կազմուեցաւ դիմելու համար «Յուսաբեր»ի արտօնատիրոջ: Իրենց դիմումի արդիւնքը պիտի հաղորդուի յառաջիկայ նիստին:

Շրջուն գործիչ մը ունենալու հարց.—

Որոշուեցաւ տարեկան 15/20 ոսկի յատկացնել, որպէսզի կոմիտէի կողմէն նշանակուած ընկեր մը պարբերաբար այցելէ բոլոր շրջանները:

ՆԻՍ Է.

«Յուսաբեր»ի արտօնատիրոջ մօտ դիմում.—

Ընկեր պատգամաւորներու տեղեկատուութեան տեսնուեցաւ որ «Յուսաբեր»ի արտօնատէր Պր. Լալայեանց, իբր դաշնակցական յայտարարած է թէ իր սեփականութիւն «Յուսաբեր»ը միշտ տրամադրած է կուսակցութեան եւ յետ այսու ալ չպիտի գլանայ նոյնը ընելէ:—

Պաշտօն յանձնուեցաւ նորընտիր կոմիտէին, Շրջանային ժողովի բաղձանաց համաձայն վարել «Յուսաբեր»ի բանակցութիւնները:

Չաւարեան Փոնդ.—

Ընդունուեցաւ առաջարկ մը, ըստ որում Գահիրէ եւ Աղեքսանդրիա հաւաքուած Չաւարեան Փոնդի դրամները, շուրջ 185 ոսկի, Եզիպտոսի կոմիտէին նախաձեռնութեամբ պիտի կեդրոնացուին եւ Կովկաս պիտի դրկուին Չաւարեանի ծննդավայր գիւղին մէջ բացուած Չաւարեան վարժարանի յատկացուելու համար:

Ձինուորական Փոնդի հաշիւ.—

Շրջանային ժողովը 7 հոգիէ բաղկացեալ լիազօր յանձնախումբ մը ընտրեց, մինչեւ երեք ամիս զինուոր

ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

րական ֆոնդի հաշիւները քննելու պաշտօնով: Արդիւնքը պիտի ներկայացուի Եգիպտոսի կոմիտէին որպէսզի հրատարակութեան տայ զայն եւ տանի նոյնպէս յառաջիկայ Շրջանային ժողովին:

Ընկեր Ղ. Բ.ի հարց.— Այս հարցի մասին պատգամաւորները երկարօրէն բացատրուեցան:

ՆԻՍ Ը.

Շարունակութիւն Ղ. Բ.ի վիճաբանութեան.—

Այս հարցի լուծման համար առաջարկուեցան երեք բանաձեւեր. 10 ձայնով ընդունուեցաւ հետեւեալը. (նիստէն բացակայ էր մէկ պատգամաւոր իսկ կոմիտէի պատգամաւորը ձեռնպահ մնաց):

Նկատելով որ Զ.րդ Շրջանային ժողովը իր որոշումը սխալ յայտարարութիւններու վրայ հիմնած է եւ ասոր հետեւանքովն է որ կոմիտէն առած է ընկեր Ղ. Բ.ի հեռացման վճիռը:

Է.րդ Շրջանային ժողովը չեղեալ կը համարէ վերոյիշեալ որոշումը եւ կը հրաւիրէ ընկեր Ղ. Բ.ը մասնակցելու կազմին:

ՆԻՍ Թ.

Ընկեր Մ[ինաս] Խ[աչատուրեան]ի հրաժարման մասին.— Կոմիտէի հրաժարած անդամ ընկեր Մ. Խ.ի հրաժարման պարագաները քննելու պաշտօն ունեցող յանձնախումբը յայտարարեց որ յիշեալ իրեն վերագրուած ընթացքին մէջ գտնուած ըլլալու փաստեր չկան:

Նոր գործունէութեան ուղեգիծ.—

Պիւտճէի բաժանում.— Պիւտճէի բաժանումն եղաւ հետեւեալ կերպով, նկատելով որ Եգիպտոսի կոմիտէին պիւտճէն է 400 եգիպտական ոսկի:

Աղեքսանդրիոյ շրջանը պէտք է վճարէ եգ. ոսկի	200
Գահիրէի	» » » 160
Թանթայի	» » » 20
Կիպրոսի	» » » 10
Բօրթ-Սաիտի	» » » 10
	Եգ. ոսկի 400

Եգիպտոսի կոմիտէն վերոգրեալ գումարին վրայ իրաւունք պիտի ունենայ ծախսելու տարեկան առ առաւելն 40 եգ. ոսկի: Պարտք դրուեցաւ որ նորընտիր կոմիտէն հանդէպ ընկերներու համերաշխ ուղղութեան մը հետեւի:

Պարտք դրուեցաւ նոյնպէս որպէսզի նոր մարմինը միջոցներ ձեռք առնէ նոր գրաւուած վայրերու մէջ կազմակերպութիւն ստեղծելու համար:

Նոր կոմիտէն պէտք է կազմակերպէ միեւնոյն ատեն Սուտանն ու Հապէշիստանը:

ՆԻՍ Ժ.

Եգիպտոսի կոմիտէն Դաշնակցութեան հանդէպ արտասահմանի մէջ

Դաշնակցութեան ընթացքը հանդէպ քոյր կազմակերպութեանց

Դաշնակցութիւնը Հ[այ] Ա[զգային] միութեան մէջ

Սոյն երեք հարցերը խառն վիճաբանութեան դրուեցան:

Ժողովը ցանկութիւն յայտնեց որ հնչակեան պատգամաւորներու հարցը լուծուի կարելի եղածին չափ նպաստաւոր կերպով:

Որոշեց նոյնպէս իրաց արդի վիճակը պահել Ազգ. միութեան մէջ:

Դաշնակցութիւնը Ազգ. կուլտուրական հաստատութեանց մէջ.—

Ըստ հիմնական կանոնագրի 22րդ յօդուածին, ընկերներ իրենց անձնական պատասխանատուութեան տակ կրնան մասնակցիլ վարչական մարմիններու Անոնց անդամակցութիւնը կ'արգիլուի երբ վնասակար դատուի կուսակցական տեղական գործերուն համար:

Դրոշմաթուղթի մասին.— Դրոշմաթուղթի համար պէտք եղած կարգադրութիւնն ընել ձգուեցաւ նորընտիր կոմիտէին:

Կոմիտէի ընտրութիւն.— Կատարուեցաւ Եգիպտոսի կոմիտէի ընտրութիւնը. զաղտնի քուէարկութեամբ՝ ձայնի առաւելութիւն ստացան եւ նոր մարմնի անդամ ընտրուեցան եօթը հոգի:

Տոքթ. Նելրուզ Յ.	} Գահիրէէն
Չրաքեան Մ.	
Տիւրկէրեան Գ.	

Դերձակեան Ս.	} Աղեքսանդրիայէն
Եփրեմեան Մ.	
Խաչատուրեան Մ. Շալճեան Ա.	

Ամէն աշխատանք վերջացած ըլլալով ընկեր նախագահը Հ.Յ.Դ. Եգիպտոսի էրդ Շրջանային ժողովը փակուած յայտարարեց:

Եգիպտոս, 15 Մայիս 1918



Փաստ. 1053-29

Գ 4.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Ընկերներ,

Այս պահուս երբ չորս տարի է վեր ամբողջ աշխարհը հուրի եւ սուրի մատնող ահաւոր պատերազմը իր ամենասուր եւ ամենաճգնաժամային փուլին մէջ մտած է, երբ թնդանօթներու խուլ որոտին մէջ մեծ ու փոքր ազգերու ճակատագրերը կը դարբնուին, երբ վերջապէս գերմանօ-թուրք ամօթալի ու անիծապարտ եղբայրակցութեան դժոխսային դաւերուն իր ամենաթանկագին զաւակները զոհ տուող, արնաքամ հայութիւնը իր գոյութեան ամենատագնապալի վայրկեանը կ'ապրի, մենք կու գանք, Եգիպտոսի Հ.Յ.Գ. Է.րդ Շրջանային ժողովի կողմէն, կոչուիլ պաշտօնի մը, որ մանաւանդ ներկայ ամենափափուկ պայմաններուն մէջ, աւելի քան ծանր կը թուի մեր ուսերուն: Գիտակցելով հանդերձ այս պաշտօնին այնքան ծանր եւ միանգամայն պատասխանատու հանգամանքին, մենք վերցուցինք զայն անվերապահօրէն եւ անվարան վճռողականութեամբ: Այո՛, ստանձնեցինք մենք այդ պաշտօնը, որովհետեւ հայութեան ներկայ աննախընթաց եւ աւելի քան երբեք տխուր իրականութեան առջեւ ոչ մի գիտակից ընկեր չպիտի թոյլ տար իրեն հեռու մնալու գործէն եւ չտրամադրելու իր բոլոր ուժն ու կորովը, իր ամբողջ էութիւնը, եթէ կարելի է, հայրենիքի ազատագրութեան սուրբ գործին եւ ցեղի վերածնունդի վստահութեան վստահութեան: Մենք չվարանեցանք վայրկեան մ'իսկ ընդ առաջ երթալու մեզի վստահուած այս պաշտօնին, որովհետեւ խոր համոզումն ու հաւատքը կը կարծենք ունենալ մեր ընկերներու անվերապահ աջակցութեան, անոնց պատրաստականութեան վրայ, տանելու մեզի հետ այս բեռը, լծուելու գործին ու երկրորդելու միանգամայն մեր ջանքերը:

Շատ վստահ ու անակնկալներով յղի վայրկեաններու մէջ կ'ապրինք ընկերներ: Հայութիւնը իր գոյութեան, իր լինել չլինելու ճակատագրական պայքարն է, որ կը մղէ այս պահուս: Կովկասը որ մեր ցաւոտ ու արիւնոտ իրականութեան մէջ մխիթարութեան միակ ովասիսը կը կազմէր ու տաճկահայութեան գլխին պայթած վերջի աննախընթաց աղէտէն յետոյ, ամբողջ ցեղին յոյսն ու ապաւինը դարձած էր, այսօր իր բոլոր ուժերը լարած ակամայ նետուած է կրկէս մղելու համար, թէկուզ անհաւասար ուժերով, այն վերջին ազատամարտը որուն ելքէն միայն կախուած է բովանդակ հայութեան ներկայն ու ապագան եւ մեր ամէնուս, դարերէ ի վեր ջերմապէս փայփայած երազին մարմնացումը: Երազ, որուն համար ամբողջ 30 տարի անընդհատ պայքար մղեցինք ու այսօր դարձեալ կը շարունակենք զայն աւելի բուռն, աւելի կատաղի եւ յուսահատական թափով մը:

Արդարեւ, երբ ցարիզմը տապալեցաւ, ցարիզմը, որուն բռնապետական արիւնոտ ճիրաններուն մէջ այնքան թանկագին կեանքեր անշնչացած էին, ու անոր յաջորդեցին սոցիալ-յեղափոխական կարգեր, պահ մը կարծեցինք գտնել ինքզինքնիս մեր դարաւոր իտէալի իրականացման նախօրեակին. սակայն աւա՛ղ որ ասիկա պատրական երեւոյթն մըն էր, դժբախտաբար որ չափազանց կարճ կեանք ունեցաւ շնորհիւ բոլշեւիկներու վաղահաս ու օրուայ պահանջներուն անհամապատասխան կարգերու կիրարկութեան ու Բրէստ-Լիտովսկի խաղաղութեան պայմանագրի ստորագրութեան:

Այս պայմաններուն մէջ, Անդրկովկասը ընդունակ եղաւ, բարեբախտաբար, ըմբռնել վայրկեանի վեհութիւնը, ու ի մի գալով իր բոլոր այլացեղ տարրերուն հետ, համախորհուրդ եւ համերաշխ, թօթուեց լուծը օրուայ կառավարութեան, եւ կազմելով առանձին հանրապետութիւն, մերժեց ու չեղեալ համարեց Բրէստ-լիտովսկեան, այսուհետեւ պատմական, դաշնագրին այն մասը, որ կը վերաբերէր բուն իսկ Անդրկովկասին:

Չեզի ամէնուր ծանօթ է այս մերժումին հետեւանք բոլոր դէպքերն ու իրողութիւնները: – Դուք ամէնքդ – լսած ու կարդացած էք այն ամէնուն մասին որ պատահեցաւ Կովկասի մէջ այս վերջի մի քանի ամսուայ ընթացքին եւ հետեւած ըլլալով հոն տեղի ունեցած դէպքերու զանազան փուլերուն, անշուշտ նկատած ըլլալու էք այն խոշոր ու փրկարար դերը զոր ստանձնած է Դաշնակցութիւնը բոլոր խնդիրներու եւ բոլոր մարզերու մէջ:

Միջկուսակցական համերաշխութենէն յետոյ իրականացած է հոն, այսօր, ազգամիջեան համերաշխութիւն. վրացիներու հետ մասնաւորապէս կնքուած է դաշնակցութիւն մը միասին պայքարելու եւ միասին թումք կանգնելու Պանթուրանեան զարհուրելի հեղեղին, որ կը սպառնայ ողողել ամբողջ Անդրկովկասը: Ու այս սրբազան համերաշխութիւններու առաջին սփոփարար եւ ուրախառիթ արդիւնքը անտեսցին մեզ հեռագիրները: Միջցեղային միութեան շնորհիւ ստեղծուեցաւ հայ-վրացական բանակ մը, որ յաջողեցաւ ետ մղել թշնամին ու պիտի կրնայ, լիայոյս ենք մենք, ջախջախել անոր քայքայուած ու բարոյալքուած ուժերը: Իսկ հայկական ներքին միջ-

ՆԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

333

կուսակցային համերաշխությունը, որուն շարժիչ ուժը, հոգին, Հ. Յ. Դաշնակցությունն է, ի մի հաւաքեց բոլոր կամքերն ու կորովները, բոլոր արժէքներն ու արժանիքները հայութեան, կատարելու համար այն վերջին հոյակապ ճիգը որուն ելքէն կախում պիտի ունենայ, ինչպէս ըսինք, մեր ցեղի գոյութեան ամենակենսական հարցը:

Այս ամէնէն յետոյ ու ներկայ ամենակրիտիկական պայմաններուն մէջ, մեզի ուրիշ բան չի մնար ընել, ընկերներ, եթէ ոչ հետեւիլ Կովկասի մեր ընկերներուն ու ցոյց տալ միեւնոյն ուժն ու կորովը, միեւնոյն ջանքն ու աշխատանքը դէպի հայ ազատագրութեան գործը:

Երբ ճակատի վրայ գոյութեան բռն ու օրհասական կռիւն է որ կը մղուի, մենք, թիկունքը գտնուողներս պէտք է յանձնառու ըլլանք վայրկեանի համապատասխան զոհողություններու: Չբաւականանանք միայն խօսքով այլ ջանանք կենդանի եւ շինարար աշխատանքով դրական գործ արտադրել, մէջտեղ դնելով մեր ուժերու առատելագոյն չափը:

Ներկայի այս վսեմ բռայէին մոռնանք ուրեմն ընկերներ, անձնական մեծ ու պզտիկ բոլոր հաշիւները, մէկդի դնենք ամէն քէն ու ատելութիւն, եթէ կան, ու միասին ձեռք ձեռքի եւ միահամուռ ուժերով սեղմենք շարքերը ու փարինք գործին, բերելու համար անոր մեր օժանդակութեան մաքսիմում բաժինը:

8 Ապրիլ 1918

Հ.Յ.Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԷ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ**ԳԼՈՒԽ VII****Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**

Ամերիկայի Կ. կոմիտեինը Դաշնակցության կարեւոր միատրներն մեկն էր. անոր իրաւաստիւնը կը տարածուէր Միացեալ Նահանգներու եւ Քանաւատայի վրայ, ուր 1918ի տունալներով կը գործէին 144 կոմիտեներ*, շուրջ 3500 շարքային ընկերներով. Կարմիր խաչի ուղեկից կազմակերպութիւնը կը հաշուէր 50 մասնաճիւղ եւ 800է աւելի անդամներ: Շրջանը ուներ երկու պաշտօնաթերթեր՝ Պոսթըն հրատարակուող «Հայրենիք»ը եւ Քալիֆորնիա նահանգի Ֆրեզնո քաղաքի «Ասպարեզ»ը: Հասկնալի է հետեւաբար, որ այսքան ընդարձակ տարածութիւններու մէջ ցրուած հայկական համայնքներու ազգային թէ կուսակցական կեանքը գործօն եւ աշխոյժ վիճակի մէջ պահելու համար, իրերայաջորդ Կ. կոմիտեները զգային կարիքը դուրսէն օգնական գործիչներ կամ խմբագիրներ ունենալու: Այսպէս, ժամանակի ընթացքին, այդ նպատակով Ամերիկա եղած են բազմաթիւ ծանօթ դէմքեր, – Միացեալ Նահանգներու մէջ դաշնակցական կազմակերպութեան հիմքերը նետող Յովհ. Իուսուֆեանէն սկսեալ մինչեւ Արշակ Վռամեան, Սիւսանթո, Խաչատուր Մալումեան (Է. Ակնունի), Միսոն Վրացեան, Արսէն Միքայէլեան եւ շատ ուրիշներ, առանց հաշուելու տեղացի գործիչ-ընկերները:

Ամերիկայի յատկացուած այս բաժինը կ'ընդգրկէ կուսակցական գործունէութեան երկար ժամանակաշրջան, 1914-1918 տարիները: Ներկայացուած են այդ տարիներուն գումարուած պատգամատրական ժողովները՝ իրենց ատենագրութիւններով, Կ. կոմիտեներու, խմբագիր եւ գործիչ ընկերներու տեղեկագրերը, այդ ժողովներու կայացուցած որոշումները եւայլն: Տրուած են նաեւ յատկանշական էջեր Կ. կոմիտեի ունեցած թղթակցական փոխադարձ յարաբերութիւններէն՝ «Դրօշակ»ի խմբագրութեան, Հ.Յ.Դ. Արեւելեան եւ Հայաստանի բիրտներուն, այլեւ Ռոստոմի, Միք. Վարանդեանի, Արմէն Գարոյի, Արտաւազդ Հանրմեանի եւ այլոց հետ:

Ամփոփելու համար ընդհ. պատերազմի տարիներուն Ամերիկայի Կ. կոմիտեի գործունէութիւնը, որ ինքնին բազմերես է եւ ծաւալուն, յիշատակենք այդ աշխատանքներէն մէկ քանին միայն. –

– Ամերիկահայութեան մասնակցութիւնը Կովկասի կամաւորական շարժման եւ ամերիկահայ հարիւրաւոր մարտիկներու մասնակցութիւնը կամաւորական գունդերու մղած կռիւներուն:

– Ամերիկեան հասարակութեան հետ յարաբերական աշխատանքները սկզբնական քարոզչական բնոյթ կը կրէին եւ կեդրոնացած էին ամերիկեան մամուլի միջոցով հանրութիւնը իրազեկ պահելու թուրք պետութեան կողմէ հայ ժողովուրդին վրայ գործադրուող ցեղասպանութեան վրայ: 1917էն սկսեալ այդ կապերը վերածուեցան իսկապէս քաղաքականի, մանաւանդ երբ Արմէն Գարո (Փաստրմաճեան), Ամենայն հայոց կաթողիկոսի յատուկ պատուիրակի հանգամանքով, ժամանեց Միացեալ Նահանգներ: Արտաքին գործոց նախարարութեան, պետական ու քաղաքական շրջանակներու մօտ Արմէն Գարոյի թափած եռանդուն ջանքերուն շնորհիւ, պիտի ապահովուէր նաեւ Ամերիկեան կառավարութեան դրամական օժանդակութիւնը կովկասեան ծաւալի վրայ կռուող հայ զօրքերուն:

– Վերջապէս, յիշատակութեան արժանի իրականացում պէտք է համարել 1917 Ապրիլին կեանքի կոչուած ամերիկահայոց Ազգային Միութիւնը: Արդարեւ, երկար տարիներու վրայ երկարող պայքարներէ եւ պառակտումէ ետք կարելի կ'ըլլար հայ քաղաքական կուսակցութիւններու, եկեղեցական յարանուանութեանց եւ մնացեալ կազմակերպութիւններու միջեւ համերաշխութիւն գոյացնել՝ ջանքերը միացնելու համար յօգուտ Հայաստանի եւ հայ դատին:

* Ամերիկայի մէջ կոմիտեի հասկացողութիւնը տարբեր էր. այդ անունը կը տրուէր հաւասարապէս մեծ թէ փոքր քաղաքներու մէջ գտնուող կուսակցական միատրներուն, անկախաբար իրենց ներկայացուցած թիւէն:

Փաստ. 1402-89

**Ա 1.– ՈՐՈՇՈՒՄՆԵՐ Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ ՇՐՁԱՆԻ
21ՐԴ ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻՆ
1914
(ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ)**

<i>Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի շրջանի 21րդ պատգամաւորական ժողովը բացուեցաւ 1914 ղեկսեմբեր 24ին, երեկոյեան ժամը 7ին, Պոսթընի մէջ, 80 կոմիտէներէն ու խմբերէն հետեւեալներու մասնակցութեամբ</i>		<i>Փրովիտէնս</i>	4	
		<i>Պրիճուոթը</i>	1	
		<i>Լորէնս</i>	2	
		<i>Լին</i>	1	
		<i>Քէյպրիճ</i>	1	
<i>Կոմիտէ</i>	<i>Ձայն</i>	<i>Խոր[հրդակցական]</i>	<i>Քիլլինտ</i>	
			<i>էքըն</i> } 2	
<i>Շիքակօ</i>	} 2		<i>Փոնթիաք</i>	
<i>Ուէսթ Փուլմըն</i>		} 2	<i>Ուէսթ Տիթրոթիթ</i>	
<i>Սթիւլըր</i>				
<i>Քնոչա</i>				
<i>Ուօքէկըն</i>				
<i>Րէյսին</i>				
<i>Ունսաքէթ</i>	1		<i>Պրիճփորթ</i>	1
<i>Նիւ Պրիթըն</i>	2		<i>Փալմըր</i>	1
<i>Նիակարա Տոլս</i>	2		<i>Միլֆրա</i>	1
<i>Ուոթըրվիլթ</i>	1		<i>Նաչուէ</i>	1
<i>Թրոյ</i>	1		<i>Միալլաորօ</i>	1
<i>Մանչէսթըր</i>	2		<i>Հըտսըն</i>	1
			<i>Տէրի</i>	1
			<i>Քանքըրտ</i>	1
			<i>Րիչմընս</i>	1
			<i>Ֆիչպուրկ</i>	1
			<i>Հարթֆըրտ</i>	1
			<i>Նիւ Եորք</i>	2
			<i>Ուէսթ Հոպքըն</i>	1
			<i>Ֆիլիատելֆիա</i>	2
			<i>Ֆրէզնօ</i>	1
			<i>Ուստր</i>	1
			<i>Փէթրսըն</i>	1
			<i>Պրաքթըն</i>	1
			<i>Հ.Յ.Դ. Պոսթընի Ուս. Մի.</i>	1
			<i>Գործիչներ</i>	1
			<i>Կեդր. կոմիտէ</i>	1
			<i>Հրաւիրուած էին խորհրդակցական ձայնով նաեւ մէկ քանի ատենախօս ընկերներ, որ[ոնցմէ] միայն մէկ հատ եկած էր</i>	1
<i>Սէնթըրլ Ֆօլս</i>	1		<i>Պատգամաւոր ընկերներու իրաւասութիւնը քննող յանձնախմբի տեղեկագրէն յայտնուեցաւ, որ Ա) Լինի կոմիտէն սահմանուած դրամական սակէն պակաս սակով ներկայացած ըլլալով, իրաւունք չունէր երեք պատգամաւորներով մասնակցիլ ժողովին, հետեւաբար կոմիտէին երեք պատգամաւորներէն մէկն ընդունուեցաւ</i>	
<i>Պինկհէմթըն</i>	1			
<i>Ուոթըրթաուն</i>	1			
<i>Հէվրհիլ</i>	1			
<i>Սիրաքիւզ</i>	2			
<i>Փորթլինս</i>	1			
<i>Լօէլ</i>	2			
<i>Իսթ Ուէյմթ</i>	1			
<i>Պոսթըն</i>	2			

իրեւել իրաւասու, երկրորդը՝ խորհրդակցական ձայնի իրաւունքով, իսկ երրորդը ձայնէ գրկուեցաւ բոլորովին: Սակի պատճառով խորհրդակցական ձայն տրուեցաւ միայն Ֆիչպուրկի պատգամաւորներէն մէկուն:

Լինի պատգամաւորները գրաւոր բողոք ներկայացուցին իրենց մասին անցուած որոշումին նկատմամբ, բայց ներքին կանոնադրին Յարգ յօդուածին տրամադրութեան համաձայն, յայտնուեցաւ որ պատգամաւորական ժողովի անցուցած որոշման մը դէմ եղած բողոքը կը ներկայացուի յաջորդ պատգ. ժողովին:

Մէսինայի եւ Միննէափոյի կոմիտէներու կողմէ պատգամաւոր նշանակուած էին ուրիշ կոմիտէներ ներկայացնող երկու ընկերներ: Պատգամաւորական ժողովը մերժեց ընդունիլ եւ յանձնարարեց վերոյիշեալ կոմիտէներուն, որ զիրենք ներկայացնող պատգամաւորներու հարցը կանուխէն կարգադրելու էին: Ժողովը, սակայն, պարտաւորութիւն դրաւ նոյն երկու ընկերներուն վրայ, որ լիակատար զեկուցումներ ներկայացնեն այդ երկու կոմիտէներուն:

Ժողովը բացուելուն պէս, յանուն պատգամաւորական ժողովին, որոշուեցաւ Կովկասի սահմանադրին վրայ կռուող կամաւորներուն պաշտանքի ու ողջոյնի հեռագիր մը տալ «Հորիզոն»ի խմբագրութեան միջոցով:

Ա) ՔԱՂԱՔԱԿԱՆ ՐՈՊԷ

Նկատի ունենալով, որ ներկայ քաղաքական յարաբերութիւնները մեր ժողովուրդը դրած են շատ աննպաստ պայմաններու մէջ եւ միեւնոյն ժամանակ կը ստեղծեն յարմարագոյն հանգամանքներ, որոնցմէ կարելի է օգտուիլ հայկական հարցը լուծելու:

«Հ.Յ.Դ. Ամերիկայի 21-րդ պատգամաւորական ժողովը բաղձանք կը յայտնէ, որ նախ՝ յարձակողական թաքթիքով հայ ժողովուրդին պաշտպանութեան խնդիրն ապահովել:

Երկրորդ՝ աշխատիլ կռուող ուժի թիւն աւելցնել, որու վրայ յենուած պիտի ըլլայ մեր ապագայ դրութիւնն ու իրաւունքը:

Երրորդ՝ պէտք է աշխատիլ Թուրքիայի գերիշխանութեան տակէն դուրս ելնել եւ աշխատիլ ստեղծել աւելի ազատ եւ ինքնուրոյն պայմաններ, որ մեր ժողովուրդը կարողանայ իր մտաւոր, հոգեկան եւ տնտեսական ընդունակութիւնները զարգացնել»:

Մենք բոլորս պիտի աշխատինք օգնութեան հասնիլ Կովկասի մէջ գործող մեր ընկերներուն թէ՛ նիւթապէս եւ թէ՛ կամաւորներով, եթէ այդ պահանջուի»:

Բ) ԵՐԿՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՍԻԶՈՑՆԵՐ

Նկատի ունենալով, որ ներկայ ըրպէն պատմական է

եւ կուսակցութիւնը նիւթականի խոշոր կարիքը ունի, պատգամաւորական ժողովը կ'որոշէ, որ ընկերները կուսակցական անդամական տուրքերէ դուրս, ամենալայն չափով եւ ուժեղ թափով մասնակցին ներքին հանգանակութեան, յօգուտ երկրի ինքնապաշտպանութեան:

Կ'որոշէ նմանապէս, թելադրել ընկերներու, մարմիններու, դերասանական խմբերու, որ հաւաքական եւ միացեալ ուժերով նպաստեն առաջմ միմիայն ինքնապաշտպանութեան գործին, արդիւնքը Կեդրոնական կոմիտէի միջոցով պարբերաբար ղրկել Կովկաս Դաշնակցութեան մարմին, իսկ հնարաւոր եղած չափով կրճատեն տեղական կուսակցական ներքին ծախսերը:

Գ) ԿԱՄԱԻՈՐՆԵՐՈՒ ՀԱՐՑ

Նկատելով Ամերիկայի ընկերներուն բուռն ցանկութիւնը, մասնակցելու տաճկահայ Ազատագրութեան կռիւներուն, պատգամաւորական ժողովը սկզբունքով կ'ընդունի երկիր կամաւոր ղրկելու օգտակարութիւնը եւ կը յանձնարարէ Կեդրոնական կոմիտէին կազմել առանձին ցանկ եւ մասնաւոր ուսումնասիրութեան վերջ դիմէ Կովկասի զինուորական հայ սպայակոյտին եւ միջոցներ ստեղծէ ղրկելու այնպիսիներ, որոնք կրնան լրացնել պահանջները, պայմաններն եւ կրնան օգտակար ըլլալ: Կամաւորները իրենք կը վճարեն իրենց ծախսերը, եթէ կարող են. անկարողութեան պարագային կուսակցութիւնը պէտք եղածը կը տնօրինէ, նկատի ունենալով թեկնածուի արժանաւորութիւնը:

Դ) ԶԻՆԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՄԲԵՐ

Յանձնարարել Կեդրոնական կոմիտէին, ամենալուրջ գործնական ուշադրութիւն դարձնել զինավարժական խմբերուն, ի նկատի առնելով տեղական պայմանները:

Ե) ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Նկատի ունենալով, նախ, որ ազգը կ'ապրի պատմական ըրպէ, երբ բոլոր խաւերն ու հոսանքները պիտի համագործակցին:

Երկրորդ, որ Հ. Յ. Դաշնակցութիւնն իր բազմամեայ գործունէութեան ընթացքին միշտ եղած է համերաշխութեան կողմնակից,

Բայց՝

Որովհետեւ միջկուսակցական ժողովը իր վճիռները ձգձգած է եւ թէ մասնակցողներուն մէջ չկայ մաքուր վստահութիւն եւ թէ Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը Շիքակոյի շրջանը հանգանակութիւն ըրած, կամաւորներ ղրկած է, երբ իրաւունք ու հիմք չունէր առանձին

այդպիսի քայլ մը առնելու:

Հ.Յ.Դ. Ամերիկայի 21-րդ պատգամաւորական ժողովը որոշեց շարունակել յարաբերութիւնները միւս կուսակցութիւններուն հետ, եթէ ընդունուին հետեւեալ սկզբունքային եւ անհրաժեշտ պայմանները:

- 1.- Շատ կարճ ժամանակի մը մէջ (ոչ աւելի քան մէկ ամիս) համաձայնութեան գալ եւ գործնականի դիմել:
- 2.- Հաւաքուած գումարին 50%ը անմիջապէս ղրկել Կովկաս Ազգային բերրոյին, յատկացնելու միայն կամաւորներուն գործը կազմակերպելուն:
- 3.- Ամէն մի ճանապարհով գացող կամաւորներ, անպայման պիտի կռուին հայ հողին վրայ, հայ ժողովրդի համար եւ Կովկաս գոյութիւն ունեցող հայ սպայակոյտի հրամանատարութեան տակ:
- 4.- Կամաւորներու ծախսը չգոհացուի միջկուսակցական հանգանակուած գումարէն:
- 5.- Մնացած 50%ի գործադրութեան խնդիրը թողնել Կեդրոնական կոմիտէի կարգադրութեան:
- 6.- Որ, այդ բոլորը պիտի կատարուի շուտափոյթ:

2) ՀԱՄԱԳԻՒՂԱՅԻԱԿԱՆ ԽՄԲԵՐ

Նկատի ունենալով տեղացիական ինքնապաշտպանութեան խմբերու դրամներու գործածութենէն առաջ եկած անտեղիութիւններն եւ այն հանգամանքը, որ պատերազմական ներկայ դրութիւնը տեղացիական ինքնապաշտպանական խմբերու դրամներու գործա-

ծութիւնը հող մը չի ներկայացներ, որոշուեցաւ թելադրել, որ կոմիտէներու միջոցով նման խմբերու պատերազմի ընթացքին իրենց գոյացուցած դրամները ղրկեն Կովկաս մեր դաշնակցական մարմիններուն՝ գործաձեւելու հայ կամաւորներու համար:

2) Որ մեր կոմիտէները այդպիսի մարմիններու հետ նախկին դրութեամբ յարաբերութիւններն պահեն: Թելադրել այդ խմբերուն, որ այս տարուայ ընթացքին ջրնջեն Հ.Յ.Դ. սկզբնատուերը: Իրենց հանգանակութիւնները ընեն ներքին կերպով, չհակասելու համար միջկուսակցական համերաշխական մարմնի այդ ուղղութեամբ գործունէութեան:

3) Վերոյիշեալ թելադրանքներն անտեսելու պարագային, մարմինները լուծել եւ յայտարարել որ այդպիսի մարմիններու վերաբերմամբ ոչ մի պատասխանատուութիւն կը վերցնենք մեր վրայ:

Ի) ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ՀԱՐՑ

Յանձնարարուեցաւ Կեդրոնական կոմիտէին, ըստ պատահանջօրէն ու նպատակայարմարօրէն կարգադրել գործիչի խնդիրը:

Ը) «ԴՐՕՇԱԿ»

«Դրօշակ»ի բաժանորդագրութեան եղանակի եւ անոր բովանդակութեան մասին, որոշուեցաւ պահել Ընդհ. Պատգ. ժողովի անցուցած որոշումը:

*) «Հայրենիք»ի հաշուեքննիչ յանձնախմբի տեղեկագիրը հետեւեալն է. —

«Մեր գործունէութիւնն եղաւ քննել հետեւեալ կէտերը.

- 1.- Հաշիւներու ճշդութիւն:
- 2.- Հաշիւներու սխառն:
- 3.- Հաշուետուութեան ձեւ:
- 4.- Մէնեճրի ընդհ. գործունէութիւնը:
- 5.- Մէնեճրի յարաբերութիւնը Կեդր. կոմիտէի հետ:
- 6.- Մէնեճրի յարաբերութիւնը խմբագրութեան հետ:
- 7.- Մէնեճրի յարաբերութիւնը գործատրմերուն հետ:

1.- ՀԱՇԻՒՆՆԵՐՈՒ ԴՇԳՈՒԹԻՒՆ

Հաշիւները մանրամասնաբար քննել վերջ գտանք ճիշդ, բացի հետեւեալ կէտերէն:

- ա) Ընկ. Տէմիրճեանի վճարուած \$93.00ի պարտքի մը, որ մուտքին մէջ անցած է միայն \$61.08: Տարբերութիւնը \$31.92 հակակշռող ուրիշ արձանագրութիւն մը կայ, տոմարին մէջ անցած \$35.27, իբրեւ «զանձին մէջ եղած ատելորդ դրամ»:
- բ) Վճարուած Արիս Մուրատեանի \$76.50 փոխարէն \$23.00ի եւ \$24.00ի պահանջի մը:

2.- ՀԱՇԻՒՆՆԵՐՈՒ ՄԻՍԵՄ

«Յանձնախումբիս կարծիքով «Հայրենիք»ի պէս գործի մը համար պէտք է հաշուի այն տեսակ սխառն մը, որ իրապէս պատկերացնէ անոր երեք գլխատր բաժանմունքներու գործառնութիւնները, եւ ցոյց տայ իրաքանչիւրին եղած շահը կամ վնասը: Կիրարկուած սխառն մը այդ ցոյց չի տար. թէն մուտքի եւ ելքի շիտակ արձանագրութիւնները կ'ըլլան:

Մուտքի քոնթրոլի սխառն մը, որ մտցուած է անցեալ տարուան հաշուեքննիչ յանձնախմբի թելադրութեան համաձայն, միայն եկամուտին մէկ մասն է, որ քոնթրոլի կ'ենթարկէ, մինչդեռ ուրիշ մաս մը իր էութեան մէջ կը մնայ առանց քոնթրոլի: Կը նկատուի, որ ներկայ սխառնով շատ ատելի ժամանակ կը վատնուի հաշիւներ պահելու, վերը յիշուած թերութիւնով, քան, որ հարկատր է:

Թ) «ՀԱՅՐԵՆԻՔ» ա. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Պատգամաւորական ժողովը նկատելով, որ խմբագրական մարմինն իր կարելին փորձած է թերթի փրոֆականտի մասը յաջող կերպով վարելու, իր մասնակի թերութիւններով հանդերձ, կը գտնէ բաւարար:

Ժ) «ՀԱՅՐԵՆԻՔ» Բ. ՎԱՐՉԱԿԱՆ

Ժողովը լսելով «Հայրենիք»ի քարտուղարի հաշուետուութիւնը, յանձնարարեց Կեդրոնական կոմիտէին, որ քննիչ յանձնախումբ մը ընտրէ, տեղին վրայ մանրամասն քննութիւն մը ընելէ վերջ արդիւնքը Կեդր. կոմիտէի միջոցով շրջաբերականով տեղեկացուի կոմիտէներուն: *

ԺԱ) ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ի նկատի առնելով երկրի ընդհանուր անորմալ դրութիւնը (համեմատական պատերազմն ու գործիչներու պակասութիւնը) Պատգամաւորական ժողովը կը գտնէ Կեդր. կոմիտէի գործունէութիւնը ընդհանուր առմամբ բաւարար, իսկ համերաշխական խնդրին մէջ իր առած հապճեպ քայլը կը նկատէ քննադատելի:

ԺԲ) ՏՈՒՐՔ

Որոշուեցաւ անդամական տուրքը պահել միեւնոյնը, այն է \$1.00 (մէկ) ամսական:

3.- ՀԱՇՈՒՄՏՈՒԹԵԱՆ ՁԵՒԸ

Յանձնախումբս ձեռքի տակ ունենալով մէնէճրրի տեղեկագիր-հաշուառութիւնը, կը գտնէ զայն թերի հետեւեալ կէտերուն մէջ:

- ա) Ան ցոյց չի տար տրուած ժամանակամիջոցի մը մէջ տարբեր բաժանմունքներու մէջ եղած գործառնութիւնը:
- բ) Իրաքանչիւր բաժանմունքի շահը կամ վնասը:
- գ) «Հայրենիք»ի ստացուածքներու եւ պարտքերու ներկայ արժէքը: Այդ պակասները լրացնելու համար յանձնախումբս պատրաստած է հաշուեցոյց մը, զոր նկատառութեան կը յանձնէ:

4.- ՄԵՆԵՃԸՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Յանձնախումբս իր քննութեան ընթացքին հանդիպեցաւ որոշ կէտերու, որոնք ցոյց կու տան թէ ներկայ մէնէճրրը գործին պահանջած չափով առեստրական փորձառութիւն չունի:

5.- ՄԵՆԵՃԸՐԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ ՀԵՏ

Կ.Կ.ի ներկայացուցիչը ցուցմունքներ ըրած է որոշ գործերու համար, սակայն, մէնէճրրը չէ գործադրած իր հայեացքներուն համաձայն չըլլալուն համար:

6.- ՄԵՆԵՃԸՐԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Մեր քննութենէն երեսն եկաւ որ մէնէճրրը գործադրներու վրայ հարկ եղած հսկողութիւնը չընելով, ստիպել է, որ խմբագիրները երթան եւ խմբագրութեան չվերաբերած գործերու ընթացք տան տպարանին մէջ:

7.- ՄԵՆԵՃԸՐԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԳՈՐԾԱՌՈՐՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Մէնէճրրի ունեցած ազդեցութիւնը գործադրներուն վրայ, որոշ չափով պակասած է: Մեր կարծիքով անոր համար, որ մէնէճրրը ցանկացած է բարեկամական հողի վրայ դնել իր յարաբերութիւնները: Ուրիշ խօսքով մէնէճրրը ուզած է անադմուկ պաշտօնավարութեան շրջան մը ունենալ:

ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Դրամի քոնքրոլի խնդիր

Մէնէճրր ընդդէմ Կ.Կ.ի քարտուղար

Որպէսզի կարելի ըլլայ օգտուիլ *Քէշ տիւրաւունքներէ*, կը թելադրենք Կ.Կ.ին, որպէսզի երբեմն-երբեմն «Հայրենիք»ի ներքին մնացած ատենները ժամանակաւոր պարտք տալով այդ գեղչերէն օգտուելուն նպաստէ:

- «Հայրենիք»ի ընդհ. մուտք 1914ի 11,698.00
- «Հայրենիք»ի ընդհ. ելք 1914ի 11,573.04
- «Հայրենիք» պատրաստի գումար 124.96

ԺԳ) ՄԻՕՐԻՆԱԿ ՍԻՍՏԷՄ

Որոշուեցաւ ընդունիլ եւ յանձնարարել Կեդր. կոմիտէին, որ արձանագրութիւններու եւ հաշուապահական միօրինակ սխտէմ մը ստեղծէ թէ կազմակերպութեան եւ թէ «Հայրենիք»ի համար:

ԺԴ) ԿԱՆՈՆԱԳԻՐ

Որոշուեցաւ գոյութիւն ունեցած կանոնադիրը պահել եւ գործածել 1915-ի շրջանին համար եւս:

ԺԵ) Կ[ԱՐՄԻՐ] Խ[ԱԶ]Ի ԿԱՆՈՆԱԳԻՐ

Յանձնարարուեցաւ Կեդր. կոմիտէին, որ նոր մշակումներով ամբողջացնէ կարմիր խաչերու կանոնադիրը:

ԺԶ) ՇՐՋ[ԱՆԱՅԻՆ] ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ըստ ներքին կանոնագրի 88 յօդուածի տրամադրութեան, պատգ. ժողովն որոշեց ուղղակի չլսել Շրջ. խորհուրդներու տեղեկագիրը:

ԺԷ) ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Նկատի ունենալով դատական յանձնախմբի բերած գեկուցումները, ժողովն աւելորդ գտաւ վիճաբանութիւններ ընել այդ խնդիրներու մասին: Հետեւեալը յարմար դատուեցաւ իւրաքանչիւր խնդիր ուղղակի իր տեղի մարմնին հաղորդել, քանի որ լոկ տեղական բնոյթ ունեցող խնդիրներ են:

ԺԸ) Կ. Կ.Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Յանձնախմբի պատրաստած եռապատիկ ցանկէն գաղտնի քուէով նորընտիր Կ. կոմիտէի անդամ ընտրուեցան ընկերներ Գ. Տ. Կ., Ա. Ս., Զ. Մ., Խ. Գ., Գ. Ռ., Ն. Փ., Ս. Պ.:

Պատգ. ժողովը վերջացաւ դեկտ. 28ին, երեկոյեան ժամը 9ին: Պատգամաւոր ընկերները մեկնեցան, այն յոյսով, որ պատգ. ժողովի որոշումները նիւթ պիտի մատակարարեն առաջիկայ տարուայ շինարար աշխատանքի, որով սատարած պիտի ըլլան հայ ազատագրութեան գործին:



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Հրատարակում	1
Նաչուկ	1
Ուսուցիչ	3
Ճիշտագրություն	2
Ուսուցիչ	1
Քննադատ	1
Թրոյ	1
Ուսուցիչ	1
Փնտրություն	1
Նիւ-Պրիստին	1
Կեդր. կոմիտե	1
Գործիչներ	1
Պոստինի Շրջ. խորհուրդ	1
Նիւ-Երրբի Շրջ. խորհուրդ	1
Քանադայի Շրջ. խորհուրդ	1

Հրատարակում էին
խորհրդակցական ձայներով 5

Պատգամաւոր ընկերներու իրաւասութիւնը քննող յանձնախմբի տեղեկագրէն յայտնուեցաւ որ,

Ա) Կուէլֆի կոմիտէն ներքին կանոնագրի յօդ. 98ի տրամադրութեան հակառակ քայլ մ'առած էր, տալով իր ձայնը Պոստինի շրջանի կոմիտէներու մէկուն պատգամաւոր ընկերով մը, հակաօրինական ըլլալուն մերժուեցաւ, որով Կուէլֆ առանց պատգամաւորի մնաց:

Միեւնոյն նկատուով մերժուեցաւ Քլիվլէնտի կոմիտէի յանձնարարած ձայնը, որով Քլիվլէնտի կոմիտէն առանց պատգամաւորի մնաց:

Գ) Ռիչմընտի կոմիտէն իր ձայնը տուած էր Նիւ-Երրբի Շրջ. խորհուրդին, մերժուեցաւ, նկատելով հակաօրինական: Ռիչմընտի կոմիտէն մնաց առանց պատգամաւորի:

Դ) Նիւ-Քէսպլի կոմիտէն իր ձայնը տուած էր Պոստինի շրջանի կոմիտէներու մէկուն ոչ-պատգամաւոր ընկերով մը, ընդունուեցաւ:

Ե) Ուինոնուքի կոմիտէն իր ձայնը տուած էր Պոստինի Շրջ. խորհուրդի անդամներէն մէկուն, մերժուեցաւ նկատելով հակաօրինական: Ուինոնուքի կոմիտէն մնաց առանց պատգամաւորի:

Զ) Պինկէյմի կոմիտէն իր ձայնը կու տար Կեդր. կոմիտէին, հակաօրինական ըլլալուն մերժուեցաւ: Պինկէյմի կոմիտէն մնաց առանց պատգամաւորի:

Է) Լորէնսի կոմիտէի վարչութիւնը, իր կոմիտէի պատգամաւորին մէկուն իրաւասութիւնը կասկածի ենթարկելուն համար որոշուեցաւ խիստ նկատողութիւն ընել:

Հետեւեալ կոմիտէներ ալեւայլ պատճառներով մասնակցած չէին.

Պէթթընտորֆ, Պրէֆլօ, Չարլթաուն, Քանքըրտ, Տիթրոնիթ (քաղաք), Իրի, Ֆաուլթըր, Սիթի Փոյնթ, Այ-

լընտ Ֆոլս, Քանսաս Սիթի, Լոս Անճելոս, Միլիս, Նորթ-Տէյթըն, Տընտես, Սանֆրանչիսկո, Սէնթ Փօլ, Փայն Կրաւ, Սէնթ Քէթրինա, Սէնթ ժոզէֆ, Թոլէտո, Սթոն-Հէմ, Մարլպորո, Նիւարք:

Սինսինատի, Ինտիանապոլիս, Փարլիըր Իմբեր ըլլալուն, ըստ ներքին կանոնագրի իրաւասու չէին պատգամաւորներ զրկել:

Ա) ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ

Ընդունելով որ կամաւորական շարժումը վրէժ-ինդրական, ինքնապաշտպանական եւ դիւանագիտական տեսակէտներէ հայուցեան համար առաջնակարգ հրամայական մըն է. բայց հիմք ունենալով Կովկասէն հասած պաշտօնական տեղեկութիւնները, որոնք Ամերիկայէն առաջմ կամաւորներ զրկելու պէտքը չեն շեշտեր, Որոշեց՝

Ա) Հայ ազատագրական ներկայ պայքարի ընթացքին՝ նիւթական ու բարոյական բոլոր միջոցներով ու թափով օժանդակ կանգնել կամաւորական շարժումին.

Բ) Թեւադրեց Կեդր. կոմիտէին Ամերիկայէն կամաւորներ զրկելու նոր պահանջ ներկայանալու ատեն, իր կողմէ պէտք եղած միջոցները ձեռք առնել բաւարարութիւն տալու եղած պահանջին:

Գ) Ամենախիստ ուշադրութիւն դարձնել կամաւորներու ընտրութեան ատեն կուսակցական գանձէն ունեւորամ չյատկացնել զրկուելիք կամաւորներուն, այլ բանակցել Ազգային բիւրոյի հետ մասնաւոր մարտական եւ սանիտարական (բժշկական) ընդունակութիւն ունեցող անհատ կամաւորներու տրամադրել նիւթական աջակցութիւն Ազգային բիւրոյի գանձէն:

Բ) ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Ա) Նկատի ունենալով, որ ներկայ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ իւրաքանչիւր ազգութիւն արտաքին վտանգն ի նկատի ունենալով, իր բոլոր գործող տարրերն միատեղ հաւաքեր է.

Բ) Որ հայ ժողովրդի ներկայ ազգայնապաշտպան զրկութիւնը մեր վրայ ազգային սրբազան պարտք կը դնէ բոլորով ազգային պէտքերու շուրջ.

Գ) Որ, ապագայ քաղաքական եւ դիւանագիտական աշխատանքներու համար, մեծ պետութիւններուն մեր ազգային համագործակցութեամբ ցոյց պիտի տանք քաղաքական հասունութեան ապացոյց:

Դ) Որ, անհրաժեշտ է առնուած քայլերն ու ընդհանուր ազգային կամքը համընթաց ըլլան, որպէսզի գանազան արտաքին մոլթ տարրեր եւ ցեղեր հնարաւորութիւն չունենան մեր ջլատուած զրկութեանն օգտուելու:

Ե) Որ, այդ գործակցութեամբ հայ ժողովրդի հոգեկան հաւասարակշռութիւնն ու նիւթական գոհաբերութիւնը կ'ապահովուի:

Պատգամաւորական ժողովս սկզբունքով համա-



ձայն է համերաշխութեան եւ պատրաստակամ ամէն ընդ ընդ առաջ երթալու իւրաքանչիւր մաքուր եւ անկեղծ վերաբերմունքէ բխած ձեռնարկի, եւ կը թելադրէ Կեդր. կոմիտէին ապագային ընելիք ձեռնարկներու ժամանակ, աչքի առաջ ունենալ ստեղծուած ազգային իրական պայմանները, հայ դատի համար մղուելիք կռուի ընթացքն եւ այդ տեսակէտէն համագործակցութեան մէջ մտնել այն հոսանքներու, կուսակցութիւններու եւ Ազգային կեդրոնական մարմիններու հետ, որոնք հայ ժողովրդի ապագայ ազատութիւնը եւ դիւանագիտական աշխատանքները կը հիմնեն նաեւ մարտական ուժի եւ կազմակերպուած կռուի վրայ:

Միեւնոյն ատեն Ամերիկայի Հ. Յ. Դաշնակցութեան Պատգամաւորական ժողովն իր ընկերական հաստատուն ցանկութիւնը կը յայտնէ Կովկասի դաշնակցական մարմիններու, որ անոնք անգամ մ'եւս կեդրոնացնեն իրենց ուժը համագործակցութիւն ստեղծելու՝ հայկական իրականութեան մէջ գտնուած բոլոր հոսանքներու մէջ եւ կամ ամէն հնարաւոր միջոցներու դիմելու՝ վերջ տալ զանազան անհամաձայն գործունէութեանց:

Գ) ՄԵՐ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՈՅԻՆ ՀԵՏ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՁ ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՈՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆ ՄԸ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Նկատելով, որ արդէն Հ. Յ. Դաշնակցութեան Կեդր. կոմիտէն իբր հայկական Կեդր. կոմիտէ Ազգային բիւրոյի օժանդակ մարմին մըն է Ամերիկայի մէջ, եւ արդէն իր հանգանակային ժողովները սկսած են նախորդին պէս, ընդունելով, որ առանձին օժանդակ մարմին մը ստեղծելն օգտակար է, թելադրել նորընտիր Կեդր. կոմիտէին՝ կարելի եղած միջոցները ձեռք առնել համապատասխան Կեդր. մարմին մը կազմել ապագային, եթէ նոր պայմանները պահանջ դնեն:

Որոշեց՝

Ա) թելադրել Կեդր. կոմիտէին, որ այս ուղղութեամբ բանակցութիւններ կատարէ Ազգային բիւրոյի հետ:

Բ) Հնարաւորութիւն ունեցող կոմիտէներուն թողուլ իրենց տեղույն վրայ չէզոք հասարակութենէն, իրենց օժանդակներ առնելով գործը վարել նախորդ հանգանակային ժողովներու ղրութեամբ:

Դ) ԱԶԳ. ԲԻՒՐՈՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՂՐԿԵԼ

Սկզբունքով ընդունելով հանդերձ, որ արդարացի եւ բազմալի է ներկայացուցիչ մը ունենալ Ազգային բիւրոյին մէջ, քանի որ անոր մեծագոյն ճիւղերէն մէկը կը կազմենք, բայց նկատի ունենալով, որ Բիւրոն ընտրովի կազմուած մարմին մըն է, որ ռուսական կառավարութիւնը կրնայ ղեկարարութիւններ հանել, թելադրել նորընտիր Կեդր. կոմիտէին այդ ուղղութեամբ բանակ-

ցութիւններ վարել Ազգային բիւրոյին հետ եւ եթէ հնարաւոր ըլլայ ներկայացուցիչ մը ասկէ ղրկել եւ կամ անկէ նշանակել:

Ե) ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Ներքին կանոնագրի վերաքննութեան համար, որոշուեցաւ թոյլատրել Կեդրոնական կոմիտէին, որ յաջորդ տարուան համար հրատարակութեան տայ ներքին կանոնագիրն այն յաւելումներով, որոնք որպէս օրակարգի առանձին նիւթ, Պատգամաւորական ժողովի կողմէն իբր որոշումներ անցուեցան:

Ձ) ԱՄԵՐԻԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ամերիկայի Պատգամաւորական ժողովը թեմական խնդիրներու մէջ սկզբունքով մնալով հանդերձ վերջին Ընդհանուր ժողովին որոշման վրայ, որ կ'արգիլէ կազմակերպութեան պաշտօնական մասնակցութիւնը եկեղեցական խնդիրներու մէջ, բայց նկատի ունենալով, որ կ'ապրինք բացառիկ շրջանի մը մէջ, եւ եկեղեցական իշխանութիւնները դուրս գալով գոտս եկեղեցական գործերէ միջամուտի կ'ըլլան քաղաքական գործերու եւ կը հակազդեն ազգային շահերուն, կը հրահանգէ ընկերները հաւաքաբար անպաշտօն կերպով իբրեւ անհատ ազգայիններ մասնակցին թեմական գործերու:

Է) ՆԱՀԱՏԱԿՈՒՈՂ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՈՐԲԵՐՈՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԱԽԱՐԵԱՆ ՖՈՆՏԵՐՈՒ ՀԱՐՑ

Պատգամաւորական ժողովը նկատի ունենալով նահատակուող ընկերներու որբերու կրթութեան եւ Զաւարեան ֆոնտերու գործածութեան հարցերը՝

Որոշեց՝

Առաջինը յատկացնել արդէն գծուած նպատակին, իսկ Զաւարեան ֆոնտով Կովկասի մէջ որբեր պահել իր անունով:

Ը) ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐՈՒ ՀԱՐՑ

Նկատի ունենալով, որ ամբողջ 1915 տարուան ընթացքին, Հ.Յ.Դ. Կեդրոնական կոմիտէն իր կուսակցական գործունէութիւնը գոհեց Ազգային ընդհանուր շարժումին, եւ կուսակցական տարրերը ամբողջապէս տրամադրեց Ազգային բիւրոյին,

Նկատի ունենալով նաեւ, որ հանգանակային երկրորդ շրջանի ժողովները արդէն սկսած են եւ որոշ թափով կոմիտէներն իրենց հանգանակային ժողովները կատարած են.

Որոշեց,

Ա) 1916 տարուան շրջանի հանգանակութիւններն ալ ընել 1915 տարուան սխտեմով, մասնակցիլ տուրքերով միասին.



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Բ) Նկատելով, որ ընկերները չափէն աւելի ծանրաբեռնուած են որոշ գոհողութիւններով ներկայ տարւան ընթացքին՝ սկզբունքով կը մերժէ ընկերներու վրայ յաւելեալ տուրք մը դնելու դրուժիւնը:

Թ) ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ ՄԻԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՆՆԵՐԻՆ

Հ.Յ.Դ. Ամերիկայի 22րդ Պատգամաւորական ժողովը լսելով Կեդրոնական կոմիտէի տեղեկագիրը եւ եղած հարցապնդումներուն պատասխան-բացատրութիւնները, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Ա) Նկատելով, որ անցեալ տարեշրջանն ըլլալով հայկական կեանքի եւ մասնաւորապէս ամերիկահայ գաղութային կեանքին ամենաբեղուն եւ աղմկալից շրջաններէն մէկը.

Բ) Որ, կուսակցական ուժերն անբաւական ըլլալով հանդերձ [պարտաւոր են] լիովին գոհացում տալու եղած կուսակցական պահանջներուն.

Գ) Որ, ամերիկահայ կամաւորներու երկրորդ խմբի առաջման գործին մէջ, չնախատեսնուած դժուարութիւններու բախելով՝ նիւթական եւ բարոյական փրեսթիժին վնաս պատճառած է.

Դ) Որ, պատգամաւորներու ըրած նկատողութիւններն իրենց որոշ մանրամասնութիւններուն մէջ գտնելով իրաւացի եւ կարեւոր, պէտք է յանձնել յաջորդ Կեդր. կոմիտէի նկատողութեան,

Կը յայտարարէ.

Ա) Որ, Կեդրոնական կոմիտէն իր ընդհանուր գործունէութեան մէջ առաջնորդուեր է անցեալ Պատգամաւորական ժողովի որոշումներուն համաձայն.

Բ) Որ, ընդհանրապէս, իր գործունէութեամբ կարողացած է նոյնիսկ լայն չափերով բաւականութիւն տալ կուսակցական եւ ազգային բոլոր այժմէական պահանջներուն:

Պատգամաւորական ժողովն իր գոհունակութիւնը կը յայտնէ Կեդրոնական կոմիտէին՝ նոյնպէս եւ ընկեր գործիչներուն, իրենց միամեայ գործունէութեան համար:

Ժ) «ՀԱՅՐԵՆԻՔ»

Ա) Կեդրոնական կոմիտէն ըլլալով Ամերիկայի Հ.Յ.Դ. Գերագոյն մարմինը պարտաւոր է լուրջ ուշադրութեամբ ընթացք տալ մեր մամուլի զարգացման եւ անոր փրոփականտի ուղղութեան:

Պէտք է նկատի ունենալ,

Ա) Որ, Կեդրոնական կոմիտէն բացարձակ իրաւունք ունի քոնթրոլի ենթարկելու մեր մամուլի («Հայրենիք» եւ «Ասպարէզ») տնտեսականը (Քալիֆորնիայի շրջանի մէջ յանձնելով այդ բացառիկ մարմնի մը՝ բաղկացած կարեւոր ընկերներէ) իր բոլոր ճիւղերով, միեւնոյն

սկզբունքով ընդունիլ աշխատակիցները վարձատրելը՝ երբ խմբագրութիւնը կարեւոր կը նկատէ.

Բ) Որ, Կեդրոնական կոմիտէն իրաւունք ունի սկզբունքի տեսակէտէն անոր ուղղութիւն տալու միշտ, երբ ոեւէ շեղում կը նկատուի, նախապէս ուսումնասիրութեան նիւթ դարձնելով կարեւոր ընկերներու եւ խմբագրական կազմի կողմէ:

Գ) Որ, գրական եւ ակադեմական հարցերու մէջ խմբագրական կազմը կը վայելէ լայն իրաւասութիւններ, սակայն եւ այնպէս կարեւոր փոփոխութիւններու պարագային (որպիսիք են տառադարձութիւն եւ ուղղագրական փոփոխութիւն եւայլն) Կեդրոնական կոմիտէն պարտաւոր է ձեռնհաս ընկերներու եւ խմբագրական կազմի հետ խորհրդակցելով խմբագրութիւնն ենթարկել սահմանափակումներու, եթէ հարկ համարուի, նախապէս մշակուած կանոնագրի մը համաձայն.

Դ) Որ, թերթերն իրենց գրական եւ քաղաքական բարձր մակարդակի վրայ պահելու համար պէտք է աւելցնել կարող արտասահմանեան խմբագիր մը «Հայրենիք»ի (եւ եթէ հնարաւոր է նաեւ «Ասպարէզ»ի) ներկայ կազմին վրայ եւ բարոյական պարտաւորութիւն կը դնէ խմբագրութեան վրայ օգտուելու մեր բոլոր կարող ընկերներու աշխատակցութեան սիրաշահելով զանոնք եւ ընկերական լաւ ու յարգալից յարաբերութեան մէջ մտնելով անոնց հետ:

Այս բոլորի հետ միասին Պատգամաւորական ժողովը գոհունակութիւն կը յայտնէ Կեդրոնական կոմիտէին, խմբագրական կազմին, վարչութեան «Հայրենիք»ի տնտեսական բարեխաւման, անոր գրական, բարոյական ազդեցութեան բարձրացման եւ օրաթերթի վերածուելուն համար:

ԺԱ) «ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՀԱՇՈՒԱԿԱՆ ՔՈՆԹՐՈՒՆԸ

Որոշուեցաւ պարտք դնել նորընտիր Կեդրոնական կոմիտէի վրայ, որ մնայուն յանձնախումբ մը ընտրէ պաշտօն տալով անոր, ամբողջ տարուան ընթացքին քոնթրոլի ենթարկել հաշուական գործառնութիւնն ու տեղեկագիր ներկայացնել Կեդրոնական կոմիտէին եւ Ամերիկայի Պատգամաւորական ժողովին:

ԺԲ) ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Որոշուեցաւ Շրջանային խորհուրդներու տեղեկագրերը չկարդալ, նկատի ունենալով թէ Կեդրոնական կոմիտէն արդէն պատշաճ տեղեկատուութիւնը կ'ընէ անոնց գործունէութեան մասին:

ԺԳ) «ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՏԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Ա) Որոշուեցաւ «Հայրենիք»ը պահել Պոսթոնի մէջ:
Բ) Նկատի առնելով ներկայ ըրպէին անորոշ կացութիւնը, յարմար դատուեցաւ «Հայրենիք»ի սեփական շէնք ունենալու հարցը յետաձգել առայժմ:



ԺԴ) «ԱՍՊԱՐԷՉ»

Պատգամաւորական ժողովը լսելէ ետք Ֆրեզնոյի պատգամաւոր ընկերոջ «Ասպարէզ» թերթի մասին տրւած տեղեկութիւնը,

Նկատի ունենալով, որ «Ասպարէզ»ը շարունակել անհրաժեշտ է փրոփականտի գործին համար.

Որ, թերթն արդէն տնտեսապէս ինքնապահ վիճակի մը մէջ կը գտնուի.

Գոհունակութեամբ իմանալով նաեւ որ թերթին բաժնետէրերը պատրաստ են զայն կազմակերպութեան նուիրելու.

Որոշեց,

Թերթն առնել կազմակերպութեան հովանաւորութեան տակ, եւ կը ձգէ Կեդրոնական կոմիտէին հարկ երաժը տնօրինել այդ մասին:

ԺԵ) ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ԵՒ ԱՏԵՆԱԽՕՄՆԵՐՈՒ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա) Գործիչներն իրաւասու են հետաքրքրուիլ կոմիտէներու հաշիւներով, ներքին գործերով եւ անհամաձայնութիւններով, եւ պարտաւոր են պէտք եղած հրահանգները տալ անոնց կանոնաւոր ընթացքին համար:

Բ) Դատական խնդիրներու մէջ, գործիչները հաշտարարի դերը միայն կը կատարեն:

Գ) Ատենախօս ընկերները ոեւէ իրաւասութիւն չունին կոմիտէներու ներքին գործերու մէջ միջամուխ ըլլալու՝ եթէ այդ մասին մասնաւոր գրաւոր հրահանգ եւ թոյլտուութիւն չունին Կեդրոնական կոմիտէին:

Դ) Պատգամաւորական ժողովը կը հրահանգէ Կեդրոնական կոմիտէին աւելի քոնթրոլ բանեցնել ատենախօս ընկերներու վրայ, որպէսզի անոնք աւելի շրջահայեաց, մաքուր եւ չափաւոր ըլլան իրենց արտայայտութիւններուն մէջ եւ զգուշանան հրապարակով պաշտօնական յայտարարութիւններ ընելէ կազմակերպութեան անունով:

ԺԶ) ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ՀԱՐՑ

Պատգամաւորական ժողովը նկատի ունենալով կազմակերպական գործին վերջին տարուան ստացած ծաւալը.

Որոշեց,

Ունենալ առնուազն չորս գործիչ եւ պարտաւորել Կեդրոնական կոմիտէին՝ կարելի եղած միջոցներով իրագործելու ջանալ այս որոշումը:

ԺԷ) ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ԻՆՔՆԱՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Պատգամաւորական ժողովը կը թելադրէ Կեդրոնա-

կան կոմիտէին, որ գործածէ կարելի եղած ամէն միջոց ընկերներու ինքնազարգացման ստարելու համար:

ԺԸ) ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀՐԱԻՐԵԼՈՒ ՁԵՒ

Նկատողութեան առնելով խորհրդակցական ժողովներու անդամներ նշանակելու ձեւը, Պատգամաւորական ժողովը կը հաստատէ արդէն ընդունուած ձեւը, որով Կեդրոնական կոմիտէն ազատ ձգուած էր իր յարմար դատած ընկերներուն հետ խորհրդակցելու կարելոր հարցերու մասին, միայն թէ այդպիսի ընկերները խորհրդակցութեան հրաւիրելու պահուն այդ պարագան պիտի տեղեկագրուի պատկան կոմիտէին վարչութեան ի գիտութիւն:

ԺԹ) ՕՏԱՐ ԳՐԱԻՈՐ ԵՒ ԲԱՆԱԻՈՐ ՓՐՈՓԱԿԱՆՏ

Հ.Յ.Դ. 22րդ Պատգամաւորական ժողովը այս օրերուն նպատակայարմար կը գտնէ ունենալ անգլիերէն թերթ մը, Հայկական դատին նուիրուած, եւ քանի որ Նիւ Արմէնիա կը ծառայէ այդ նպատակին, կը թելադրէ քաջալերել զայն:

Բացի այդ, Կեդրոնական կոմիտէն պէտք է միջոցներ ձեռք առնէ ամերիկեան կարելոր թերթերու մէջ հայանպաստ յօդուածներ գետեղելու եւ միեւնոյն ատեն հայերու դէմ գրուած ամբաստանութիւններու դէմ հերքումներ հրատարակելու: Ուժ տալ նաեւ արդէն գոյութիւն ունեցող հայանպաստ օտար մարմիններու:

Ի) ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՓՈԽ-ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պատգամաւորական ժողովը գոհացուցիչ գտնելով Պալքանի եւ Եգիպտոսի կազմերուն հետ յարաբերութիւնները, իսկ հնարաւորութիւն չունենալով պաշտօնապէս սերտ կապ պահել թղթակցութիւններով Կովկասի մեր Մարմինն հետ, նպատակայարմար կը գտնէ ղըրկել ժամանակաւորապէս յարմար ընկեր մը ասկէ, որ այստեղի կացութիւնը պարզէ եւ անկէ մանրամասն տեղեկութիւններ բերէ, եթէ սակայն մինչեւ գարուն Կովկասէն սպասուած գործիչը չգայ:

ԻԱ) ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԽՄԲԵՐՈՒ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Պատգամաւորական ժողովը իրաւասութիւն տուաւ Կեդրոնական կոմիտէին կազմելու յանձնախումբ մը, ընկերներէ եւ ընկերուհիներէ, բարեփոխելու ներկայ կանոնագիրը: Կարմիր խաչի խմբերու վերաքննուած եւ Կեդրոնական կոմիտէէ վաւերացուած կանոնագրին գործադրութիւնը յանձնուեցաւ վերջին մարմինն: Անւան փոփոխութեան խնդիրն ալ թողուեցաւ Կեդրոնական կոմիտէին:



ԻԲ) ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒ ԻՐԱԿԱՍՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԸ ՄԵՐ ՈՒՐԻՇ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊ

Պատգամաւորական ժողովը կ'ընդունի տեղական կոմիտէներու քոնթրոլը դերասանական, զինավարժական եւ այլն խմբերու գործունէութիւններուն վրայ եւ իբր այդ կ'որոշէ, որ Կեդրոնական կոմիտէն պատրաստէ այդ ուղղութեամբ մասնաւոր կանոնագիր մը եւ ցրուէ կոմիտէներուն:

ԻԳ) ՄԻՕՐԻՆԱԿ ՀԱՇՈՒԹԵԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Կոմիտէներու միօրինակ հաշուեպահութեան համար նախորդ Պատգամաւորական ժողովին տուած որոշումը, որպէսզի կարելի ըլլայ գործադրել, Պատգամաւորական ժողովը կը պարտադրէ նորընտիր Կեդրոնական կոմիտէն, որ նախատեսնուած հինգ հարիւր տոլար ծախսը տրամադրէ այդ նպատակին:

ԻԴ) ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ԱՇԽԱՐ ՀԱԳՐԱՊԷՍ ՎԵՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

Պատգամաւորական ժողովը նկատի առնելով Շիքալոյի եւ Քանաթայի շրջաններուն հեռաւորութիւնը եւ շրջանային խորհուրդներու յատկացուած պիւտձէին անբաւարարութիւնը, կը յանձնարարէ նորընտիր Կեդրոնական կոմիտէին, որ անմիջապէս նկատի առնէ այս պարագան եւ այդ շրջաններուն բաժանումը կատարէ աւելի լաւ կերպով:

ԻԵ) ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻ ՏԵԻՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Պատգամաւորական ժողովներու տեւողութիւնը չորսի փոխան վեց օր ընելու խնդիրը, Պատգամաւորական ժողովը որոշեց նորընտիր Կեդրոնական կոմիտէի միջոցով հարցնել կոմիտէներուն եւ ըստ այնմ կարգադրել:

ԻԶ) ԳՆԱՀԱՏԱՆՔ, ՊԱՇՏԱՄՈՒՆՔ, ՑԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Որոշուեցաւ փախստականներու ու գոհերու համակրանքի, նահատակուող հերոսներու պաշտամունքի եւ կռուող հերոսներու հիացմունքի հեռագիր մը գարնել Ազգային բիւրոյին ու «Հորիզոն»ին:

Միեւնոյն ատեն գնահատանքի եւ շնորհակալութեան հեռագիր մըն ալ Ազգային բիւրոյին գարնել:

ԻԷ) ՀԱՅԱՆՊԱՍՏ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Սկզբունքով ընդունուեցաւ յանուն Ամերիկայի Հ.Յ.Դ. 22րդ Պատգամաւորական ժողովին շնորհակալութիւն յայտնել ամէն հայանպաստ հաստատութիւններուն եւ հայասէր անձնաւորութիւններուն, որոնք ոեւէ գնահատելի ծառայութիւն մատուցեր են Հայ ազգին ներկայ աղէտին առթիւ:

ԻԸ) ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ՓՈՒԹԱՑՈՒՄ

Պատգամաւորական ժողովը պարտք դրաւ նորընտիր Կեդրոնական կոմիտէին վրայ, որ հեռագրով գործիչներու շուտով գալը խնդրէ:

ԻԹ) ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Նկատի ունենալով դատական յանձնախմբի տուած վճիռները, անոնց գործադրութիւնը յանձնուեցաւ նորընտիր Կեդրոնական կոմիտէին:

Ծանօթ. Կ.Կ.ին.— Յարմար դատուեցաւ իւրաքանչիւր խնդիր ուղղակի իր տեղւոյն մարմինն հաղորդել, քանի որ լոկ տեղական բնոյթ ունեցող խնդիրներ են:

Լ) Կ. Կ.Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Յանձնախմբի պատրաստած եռապատիկ ցանկէն գաղտնի քուէով նորընտիր Կեդրոնական կոմիտէի անդամ ընտրուեցան ընկերներ Գ. Կ., Զ. Մ., Ա. Ս., Խ. Գ., Ն. Թ., Գ. Ռ., Յ. Դ.:

Պատգամաւորական ժողովը վերջացաւ Դեկտեմբեր 26ին, երեկոյեան ժամը 8-ին:

Պատգամաւոր ընկերները մեկնեցան լաւ տրամադրութեան տակ ու ոգեւորուած, այն յոյսով, որ Պատգամաւորական ժողովի որոշումները նիւթ պիտի մատակարարեն յառաջիկայ տարուան շինարար աշխատանքներու, որով նորանոր նուաճումներով սատարած պիտի ըլլան հայ ազատագրութեան դարբնումի վեհ գործին:



Փաստ. 1403ա-30

Բ 2.- ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՈՉ՝ ԱՄԵՐԻԿԱԿԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ

Աշխատաւոր հայրենակիցներ,

Մահամերձ Տաճկաստանը օրհասական կոնի մըն է սկսեր հայ ժողովուրդին դէմ: Բարբարոս հալածանքով մը երիտասարդ թուրքերը կը փափաքին վերջ դնել հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութեան, որպէսզի իրաւունք ունենան յայտարարելու վաղուայ Երոսպային, թէ Հայաստանի մէջ չկայ հայ ժողովուրդ,– ուրեմն չկայ նաեւ Հայկական Հարց:

Ամբողջ տարի մըն է որ հայ ժողովուրդը կ'ապրի եզիպտական տանջանքի տակ: Մեփականութեան յափըշ-տակութիւն, կողոպուտ, «պէտէլ» անուան տակ, տարապարհակ աշխատանք սովորական երեւոյթներ էին հայկական դժբախտ կեանքին մէջ, որուն հայ ժողովուրդը դիմացաւ իր սովորական համբերատարութեամբ: Բայց Էնվերներու եւ Թալէպներու Տաճկաստանը ատոնցմէ գոհ չմնաց: Ան հայահալած քաղաքականութիւնը հասցուց այնպիսի չափերու, որոնց նմանը չէ տեսնուած տաճկական տարեգրութիւններու մէջ եւ որ իր էութեամբ կը գերազանցէ նոյնիսկ համիտեան ոճիրները:

Տաճիկ կառավարութեան հրամանով ամիսներէ ի վեր սկսուած է զանգուածային կոտորած, սարսափելի հալածանք մը: Մեր ժողովուրդի մտաւոր ուժերու աքսոր, հայ զինուորներու նամերտ խողխողում Բասէնի եւ Ալաշկերտի հովիտներուն մէջ, հայ ժողովուրդի բռնի տեղափոխում, Տաճկահայաստանի եւ Կիլիկիայի զանազան վայրերէն դէպի Սիջազտքի հովիտները, սովորական երեւոյթներ են: Սկիզբն է դրուած զինուորական ատենաներու դատավարութեան, որուն որպէս անմիջական արդիւնք ահա կը տեսնենք կախաղաններ Պոլսի մէջ, եւ եթէ իրերու դրութիւնը շարունակուի այսպէս, գուցէ յաջորդեն ուրիշ անթիւ կախաղաններ... Եւ իբրքիստական պարագրուիսները դիւային ժպիտը դէմքերուն վրայ կը յայտարարեն ի լուր աշխարհի որ,– «հայ ժողովուրդը այնպիսի դրութեան մը պիտի հասցենք, որ այլեւս յիսուն տարի ինքնավարութեան մասին չմտածէ...»:

Ա՛խ, մենք գիտէինք, որ մեր ժողովուրդին վիճակուած էր ականատես ըլլալ ներկայ օրերու տաճկական ոճիրներուն: Եւ քսան եւ հինգ տարիներու ընթացքին մենք անընդհատ կոչ ըրինք հայ ժողովուրդին պատրաստուելու այսօրուայ գոյամարտին համար, բայց մեզ չլսեցին: Անտարբեր մնացին մեր կոչին բոլորը, բացի փոքրամասնութենէն, յեղափոխական փոքրամասնութենէն, առանց որոյ մենք պիտի անհետանայինք համաշխարհային ներկայ պատերազմին մէջ: Անտարբերներու զանգուածը նոր կ'ըմբռնէ իր ծանր մեղսակցութիւնը եւ գոջման խօսքեր կ'արտասանէ: Բայց այդ բոլորը արդէն ուշ են...

Ի՞նչ պէտք է ընել:

Տաճկական դարաւոր բռնակալութիւնը, համիտական անլուր ոճիրներ եւ երիտասարդ թուրքերու ներկայ օրերու կոտորածները եւ անասելի բռնութիւնները, այլեւս ոչ մի կերպով չեն կրնար հայ ժողովուրդի ճակատագիրը կապուած պահել թուրք պետութեան ճակատագրին հետ: Անհրաժեշտ է միանգամընդմիջտ ազատել հայ ժողովուրդը տաճիկ բռնապետութեան ձեռքէն եւ ապահովել անոր խաղաղ կուլտուրան. իսկ այդ ձեռք կարելի է բերել կռուով: Եւ կռիւն արդէն յայտարարուած է...

Ցաւի եւ տառապանքի այս դժբախտ օրերուն, որքան ալ անորոշ ըլլայ մեր ժողովուրդի ճակատագիրը, մենք կը մխիթարուինք այն միակ երեւոյթով, որ նշանակելի է հայկական տարեգրութիւններուն մէջ: Հայ ժողովուրդը զիտակից է պատմական վայրկեանի նշանակութեան եւ մէկ մարդու պէս ոտքի կանգներ է Կարբէզի ստորոտներէն մինչեւ Տարօնի դաշտավայրերը, եւ իր որդիներն ու իր հարստութիւնը կը գոհէ աննահանջօրէն, որպէսզի տաճկահայ ժողովուրդի ազատագրութիւնը ձեռք բերէ: Այս գաղափարին շուրջ համերաշխ են բոլորը, եւ Ռուսահայաստանը, եւ Պարսկահայաստանը, եւ զաղութները, ու իրենց բուռն տուեր են Կովկասեան Հայկական Կեդրոնական Ազգային Բիւրոյին եւ անոր միջոցով կ'օգնեն հայկական կամաւոր գումղերուն, որոնք ստրուկ հայու ճակատէն դարերու արատը կը մաքրեն:

Հայկական կեանքը համերաշխ է եւ չկայ անհամերաշխութեան ոչ մի երեւոյթ: Մի հաւատաք հեռաւոր գաղութներու անբարեխիղճ քննադատութիւններուն, որոնք մոռցած վայրկեանի նշանակութիւնը կը կեղծեն ու կ'աշխատին նսեմացնել հայկական քաջարի կամաւոր գումղերու նշանակութիւնը, աշխատաւորներու վստահութիւնը շարաչարօրէն կը շահագործեն եւ իրենց լուծանքներն կը գրկեն այն քաջ կամաւորները, որոնք այսօր կը կռուին Վասպուրականի եւ Տարօնի դաշտավայրերուն մէջ եւ մեր ժողովուրդի միակ յոյսն ու ապաւէնն են:

Կու գայ այն օրը, երբ հայ ժողովուրդը այդպիսիները բարոյական մահուան կը դատապարտէ: Գործն է հրամայականը այս օրերու մէջ, եւ մոռցած ներքին բոլոր անհասկացողութիւնները՝ մենք պէտք է գործենք:

Ամերիկահայ աշխատատեղեր,

20 տարի է որ մենք կը գործենք ձեզ հետ եւ ամէն անգամ ալ ձեր աջակցութեամբ օգնութեան ենք հասեր տառապող հայ ժողովուրդին: Դուք օգնութեան հասաք Սասունին 1904ի ապստամբութեան ժամանակ, Տարօնի եւ Վասպուրականի սովեալներուն, երբ անոնց որդիները կարօտ էին չոր հացի, ձեր ռուսահայ եղբայրներուն, երբ բռնկած էին հայ-թաթարական ընդհարումները, եւ դուք մասնակից եղաք զինելու Վասպուրականը եւ Տարօնը, որպէսզի անոր զաւակները այսօրուայ պատմական ազատագրութիւնը ստեղծագործէին:

Ներկայ օրերուն, երբ բռնկած է ռուս-տաճկական պատերազմը եւ վճռուած մեր դիրքը, մենք նորէն դիմեցինք ամերիկահայերուն՝ օգնութեան հասնելու Մայր հայրենիքին:

Մեզ չպատասխանեցին մեծ հարուստները, որոնք անսիրտ են քարի պէս, բայց սովոր են միշտ ալ ազգի անունով խօսելու:

Մեզ տեղ-տեղ պատասխանեցին փոքրիկ առեւտրականները սահմանափակ թիով միայն, իսկ մեծամասնութիւնը մնաց իր սովորական քար անտարբերութեան մէջ:

Մեզ պատասխանեցին աշխատատեղերը, աշխատանքի կնճիռները իրենց ճակատին, բայց լայն սիրտով, ժպտուն դէմքով եւ իրենց բարոյական, նիւթական եւ զինուորական ուժերով օգնութեան հասան կովկասեան սահմանագլուխէն Հայաստանի ներսերը խուժող հայ կամաւորներուն: Կարճ ժամանակուան ընթացքին դուք ձեր աշխատանքի լումաներէն 100,000 տոլարի գումար մը նուիրեցիք հայկական ազատագրութեան համար: Պէտք է խոստովանիլ որ ռուսահայ հարուստները որոշ չափով կատարեցին իրենց պարտականութիւնները: Իսկ Փարաւոններու աշխարհին եւ Ատլանտեանի այս հեռաւոր ափերու հայ մեծատունները ոչինչ ըրին, ոչինչ չով կատարեցին իրենց քաղաքացիական տարրական պարտականութիւնները:

Եւ արդէն ե՞րբ հայ հարուստները իրենց քաղաքացիական պարտականութիւնները կատարեցին...

Տրանսաքի, անգլիաքի, ռուս եւ գերմանաքի հարուստը, իր որդիները դրկած է պատերազմի դաշտը, եւ հարստութեան մեծ մասը նուիրեց է մայր հայրենիքի ազատութեան սուրբ գործին, իսկ մեր հարուստները ատոնցմէ ոչ մէկը ըրած են: Աշխատատեղերէ բողոքներ ստացած ենք ուղղուած հայ Կրեստներուն հասցէին, բայց մենք անգոր ենք Կրեստներու սիրտը կակուղցնել: Թող հայ ժողովուրդը ինքը, թէ ներկայ օրերու մէջ եւ թէ ապագային, վճռէ զանոնք հասարակաց դատաստանին ենթարկելու ձեւը:

Մենք նորէն ձեզ կը դիմենք, որովհետեւ հայրենիքը կը պատկանի ձեզ՝ աշխատատեղերու:

Կովկասի Ազգային Բիւրոն կոչով մը դիմած է բոլոր գաղութներուն եւ օգնութիւն խնդրած:

Ազգային սպայակոյտը Իշխանի հրամանատարութեան տակ 4000 կամաւորներու նոր խումբ մը եւս շարժման մէջ դրած է դէպի սահմանագլուխը եւ կը պատրաստուի 12,000 նոր կամաւորներ ուղարկել երկիր: Ռազմամթերքի պակասութեան պատճառով հեռագիրով եւ նամակով դիմումներ եղած են: «Պէտք է շտապել, կ'ըսեն անոնք, խուժել երկրի ներսերը՝ ազատելու հայ ժողովուրդը տաճկական կոտորածներէն»:

Ձենք եւ կամաւորներ, - ահա օրուան միակ հրամայական պահանջը: Եւ կանգնած այս պահանջներուն առաջ՝ մենք նորէն կը դիմենք ձեզ, աշխատատեղ հայրենակիցներ, եւ կը յայտարարենք, որ անհրաժեշտ է

1. Դրամ,

2. Մարդ եւ ռազմամթերք:

Անոնք, որոնց սրտին մէջ դեռ չէ մարեր հայրենիքի սէրը, թող դիմեն դէպի հայրենիքի սահմանները, տաճկական բռնակալութիւնը ջախջախելու:

Անոնք, որոնք կարող են շատով, անոնք, որոնք անկարող են քիչով պէտք է մասնակցին, որպէսզի հայկական կամաւորներու օգնութեան հասնինք ամենալայն չափով:

Անհրաժեշտ է յաջորդ երկու ամիսներուն մէջ սարքել դաշտային հանդէներ, պէտք է տալ ներկայացումներ այդ նպատակին համար, պահանջ կայ որ մեր կրթասիրացները եւ ուսումնասիրացները լիառատ բաժին հանեն իրենց պիտոճէներէն այս Մեծ Գործին համար: Մէկ խօսքով նոր շարժում մը կարելու է ամերիկահայ հասարակական կեանքին մէջ, եւ այդ շարժումին պէտք է որ մասնակցին բոլորը անխտիր, եւ տղամարդ, եւ կին, եւ մանուկ: Վա՛յ անոր, որ չի կատարեց իր բաժին պարտականութիւնը պատմական այս օրերուն:

Վասպուրականը եւ Տարօնը գրաւուած են ռուսական բանակի եւ հայ քաջարի կամաւորներու ձեռքով, սակայն գրաւուած Վասպուրականը եւ Տարօնը պէտք է պատրաստել, որպէսզի թշնամին այլեւս ոտք չկոխէ այդ վայրերուն մէջ, պէտք է պատրաստել վաղուայ մեծ կռուին համար, երբ պատրաստ կ'ըլլան խուժելու երկրի ներսերը:

Մէկ կողմ դրէք խոհեմներու եւ իրենց կաշիներէն վախցողներու քարոզները: Այդպիսի քարոզներ մենք շատ ենք լսեր եւ այդպիսի քարոզներու ազդեցութեան շնորհիւն է որ մեր ժողովուրդի հոգին ստրկացեր է դարերու ընթացքին եւ հասեր այսօրուայ դժբախտ օրերուն: Կռիւն արդէն սկսած է եւ եթէ ուզենք իսկ չենք կրնար ետ կանգնիլ: Պէտք է կռուիլ մեր բոլոր ուժով: Հայկական Ազատամարտի վերջին կռիւն է աս: Եթէ դուրս եկանք յաղթական, կ'ապրի հայ ժողովուրդը Ինքնավար Հայաստանի մէջ, իսկ եթէ յաղթուինք այս կռիւին մէջ՝ այլեւս չկայ Հայկական Հարց... Այս պայմաններուն մէջ կա՞յ մէկը, որ հակառակի Հայկական Ազատամարտի այս սրբազան կռուին:

Ամերիկահայ աշխատատիրներ,

Վասպուրականի եւ Տարօնի դաշտերէն հայ ժողովուրդը եւ հայ կամաւորները ձեր օգնութեան կը սպասեն: Օգնենք անոնց, որովհետեւ անոնք են, որ պիտի պաշտպանեն հայ ժողովուրդը տաճկական բռնութիւններու դէմ, անոնց միջոցով է միայն, որ մենք կարող պիտի ըլլանք օգնութեան հասնիլ երկրի խորքերուն մէջ օրհասական կռիւ մղող մեր ժողովուրդին, ինչպէս որ եղաւ Վասպուրականի եւ Տարօնի մէջ, եւ դարձեալ անոնց անունով է որ մենք պիտի խօսինք վաղուայ Երոսպայի հետ Ինքնավար Հայաստանի մասին:

Օգնենք, որ կռուին հայ կամաւորները:

Օգնենք, որ աւերակներէն յարութիւն առնէ մեր Ինքնավար Մանուկ Հայաստանը:

Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԿԵՂՐ. ԿՈՍԻՏԷ

[30 Մայիս 1915]

Փաստ. 63-55

Բ 3.- «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԷԻՆ

Ժընեւ, 20 Յունիս 1915

Ընկերներ!

Կը հաստատենք Մայիս 22-ի մեր No 156 գրուածիւնը: Ստացել ենք ձեր ամսիս 15-ի հեռագիրը, որով ուզում էիք նկարներ եւ յայտնում ընկ. Զ[աւրիեւ]ի միասիայի առթիւ: Վերջինիս մասին հեռագրել ենք անմիջապէս, իսկ նկարների մասին ձեր հեռագրածը չհասկացանք թէ ի՞նչ նկարի մասին էր ձեր խօսքը. խնդրում ենք գրաւոր յայտնել:

Ընկ. Զ[աւրիեւ]ը Փարիզից վերջին օրերս եկաւ տեղս, կը մնայ մի շաբաթ ու նորից կը մեկնի Փարիզ: Փաշայի¹ հետ առիթ է ունեցել տեսնուել եւ երկար խօսելու թէ ընդհանուր գործի դրութեան առթիւ եւ թէ իր բռնած դիրքի դէպի կամաւորական շարժումը եւ վերջին հանգանակութիւնը, սկսուած Եգիպտոսից ու այլ տեղերից. հասկացրել է իր բռնած դիրքի վնասակարութեան մասին (անշուշտ այս բոլորը անուղղակի կերպով, որպէսզի նրա անձնականութիւնը շատ չխրծբծուի): Ընկերոջ ասելով փաշան գիտակցում է իր միասիայի կարեւորութիւնն ու լրջութիւնը եւ բաւական խոհեմ քաղաքականութիւնով առաջ տանում իրեն վստահացուած դերը: — Որ նա էլ մեղմացել ու երեւի իր սրտի խորքում հասկացել է իր վերջին հակառակութիւններու

անտակտութիւնը՝ երեւում է այն կենդանի փաստից, որ իր ձեռնարկած խոշոր հանգանակութիւնից (որ միայն 60.000 Ֆրանքի է կարողացել հասցնել) 25000 Ֆրանքը փոխադրել է Կովկաս, 10000-ը կամաւորական շարժման եւ 15000 գաղթականներին յատկացնելու համար, նոյն փաշան որ այդ շարժումը առ ոչինչ էր համարում եւ հայկական վիլայէթները կորսուած մեզ համար: Ի նկատի ունենալով նրա անձնաւորութեան եւ միասիայի կարեւորութիւնը, որի համար դժբախտաբար թէ բարեբախտաբար միակն է մեր իրականութեան մէջ, միւս կողմից՝ որ իրօք մեր ընտրելին է եւ կովկասեան մեր ընկերների համաձայնութեամբ է վստահացրուած նրան իր միասիան եւ երրորդ՝ որ կուսակցութեան սկզբնական եւ ներկայի տակտիկան եղել է եւ է, հնարաւորութեան սահմաններում ամէն ջանք գործ դնել օգտագործելու մեր բոլոր անհատ ու խմբական ոյժերը պաշտպանելու ազգային ամբողջականութիւնը, սրանով խընդրում ենք դադարեցնել ձեր պայքարը նրա եւ իւրայինների դէմ, յանձնարարելով նոյնը ձեր ստորադրեալ բոլոր մարմիններին (կոմիտէ, ենթակոմիտէ, թերթեր եւ այլն): Նոյն տեսակի առաջարկ ուղղել ենք նաեւ Բալկանի Կ.Կ.ին: Ներկայ մոմենտում աշխատելու ենք այդ ու նման ոյժերը խոհեմ քաղաքականութեամբ օգտագործել յօգուտ մեր դատի:

1.- Խօսքը Պօղոս Նուպարի մասին է, որ Ամենայն հայոց կաթողիկոսի կողմէ նշանակուած էր նախագահ Ազգ. Պատուիրակութեան՝ Երրօրայի մէջ Հայ դատի հետապնդման նպատակով:

*Ընկերական բարեւաններով
ԴՐՕՇԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ*

Փաստ. 1403ա-19

Բ 4.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻԻ 8 Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԷԻ

ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

(Կոմիտեները այս շրջաբերականը ստանալուն պես ժողով գումարելու են)

Ընկերներ,

Կրկնակի շրջաբերականներով անդրադարձած էինք արդեն, որ երկրորդ կամաւորական խումբ մը եւս պիտի ղրկենք Կովկաս, Հայ ազատագրութեան մեծ գործի դարբնումի սեղանին վրայ իրենց արիւնը զոհաբերելու համար: Զեզ ծանօթ մեր «Կոչ»ով կամաւորներու, դրամի ու ռազմամթերքի պէտքը շեշտած էինք պարտականութեան հրաւիրելով Ամերիկայի հայութիւնն ընդհանրապէս ու կազմակերպուած երիտասարդութիւնը մասնաւորապէս: Ուրախ ենք ըսելու, որ մեր շրջաբերականներուն ու «Կոչ»ին պատասխանած են հարիւրաւոր վրէժխնդիր երիտասարդներ: Մեր ընտրութիւններ ըրած, ուղղակի ու առանձինն իւրաքանչիւր կոմիտէի գրած ենք պատկան տեղերը հաղորդելու ու հարկ եղածը տնօրինելու համար: Ուրախալի երեւոյթ մըն է նաեւ այն պարագան, որ ինչպէս առաջին խմբին, նոյնպէս այս խմբին, իբրեւ կամաւոր կ'ընկերանան մտաւորական համալսարանական ընկերներ եւս: Խմբին կ'ընկերանան նաեւ ամերիկահայ բժիշկներ:

Կամաւորական այս երկրորդ խմբի մասին մեր վերջին խօսքն ըլլալով՝ կոմիտէները պարտաւոր են հետեւեալ կէտերը լուրջ նկատողութեան առնել անպայման ու ըստ այնմ գործադրել զանոնք անյապաղ:

1) Կամաւորական ղիմումնագրերն ու բժշկական վկայականները մեզի ղրկող ու ընտրուող կամաւորները, ամէնէն ուշը օգոստոս 16ին, երկուշաբթի օրը առաւօտեան ժամը 9ին, ոչ ոքի ըսելով, կազմ ու պատրաստ Նիւ Եորք պարտին կեդրոնանալ հետեւեալ հասցէին.

124 East 27th Street, New York, N.Y. կոմիտէին կլուպը:

2) Բոլոր կամաւորներն ալ առանց բացառութեան, գէթ երեք զոյգ ձմեռուայ բրդէ հաստ ներքնագգեստ ունենալու են հետերնին:

3) Անախորժութիւններ չպատահելու համար, անհրաժեշտ է, որ կոմիտէները վերահսկեն ու պահանջեն որ այն ընտրուող կամաւորները, որոնք պարտք ունին, իրենց պարտատէրերուն հետ հասկացողութեան եկած թուղթեր առնեն: Այդ տեսակ թղթերն անմիջապէս մեզի ղրկուելու են նկատի առնուելու համար:

4) Անախորժութիւններ չպատահելու համար թելադրելի է, որ կոմիտէի բացառիկ միջոցներով Ամերիկայէն գացող կամաւորներու յատկացուելիք գումարները մեզի ղրկուին, կեդրոնավայրին մէջ մեր միջոցով իրենց յանձնուելու համար:

5) Այն կոմիտէները, որոնք բացառիկ միջոցներով Ամերիկայէն գաղող կամաւորներու համար գումարներ հանգանակած էին ու հիմա կամ բնաւ կամաւորներ չունին եւ կամ գացող կամաւորներ քիչ են բաղդատաբար հանգանակուած գումարին, թելադրելի է, որ այդ տեսակ գումարները մեզի ղրկուին, որպէսզի ի վիճակի ըլլանք քանի մը արժանաւոր կամաւորներ աւելի ղրկել:

6) Այն բոլոր կամաւորները, որոնք կը փափաքին ու միջոց ունին կրնան հետերնին թէ ատրճանակ առնել եւ թէ հեռագիտակ: Ատրճանակները, օգտակար ըլլալու համար, պէտք է ըլլան ծանօթ տասնոց մավզէր ատրճանակները, փայտէ պատեաններով, 30 քալիպըր: Զգուշանալու է որ մավզէրները կեղծ չըլլան: Մավզէր չգտնելու պարագային Զոյք օթոնաթիք քիսթոլները գերադասելի են: Հեռագիտակները եւս օգտակար ըլլալու համար, պէտք է ըլլան 8,10 կրամ 12 power (diameter): Հետեւեալ կարգերու կը բաժնենք զանոնք տեսակի առաջնութեան համեմատ. ա) իւրաքանչիւր հեռագիտակ ունի universal adjustment մը երկու խողովակներու մէջտեղն եւ ալ eye-piece-ն ու-

ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

նի առանձին adjustment մը: ք) Իւրաքանչիւր հեռադիտակ ունի միայն universal adjustment մը: գ) Առանց universal adjustmentի իւրաքանչիւր eye-piece ունի առանձին adjustment մը: Գերադասելի են Lemaire, Chevalier, Bush, Zeiss, Bausch, Lamb գործարաններու հեռադիտակներ:

7) Այս վերջին խումբն — չաբաթ մը ժամանակ ըլլալով—, անհրաժեշտ է, որ ընտրուող կամաւորները գործերնին կարգադրեն, կազմ ու պատրաստ որոշեալ օրը, որոշեալ վայրը ներկայ գտնուին: Այս կարգադրութեան անսաստող կոմիտէներն ու կամաւորները պատասխանատուութեան պիտի ենթարկուին:

8) Կոմիտէները ջանալու են, որ իրենց ղրկելիք կամաւորներու թիւին վրայ, թիւ 6 շրջաբերականին հրահանգներուն համաձայն, քանի մը հատ եւս աւելցնեն: Կամաւորական նոր թեկնածուներու դիմումագրեր կ'ընդունինք, ամէնէն ուշը մինչեւ օգոստոս 14: Այդ թուականէն վերջ դիմումագրեր ղրկուելու չեն, ու չգործածուած դիմումագրերը վերադարձնելու են մեզի:

*Ընկերական բարեկեցութիւնով
Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ*

Օգոստոս 9, 1915, Պոսթըն, Մէս.

3. Գ.— Ինչպէս արդէն խոստացած էինք մեր նախորդ շրջաբերականներով որ կամաւորներու մեկնումի օրէն շաբաթ մը կամ աւելի առաջ ժամանակամիջոց պիտի տայինք անոնց՝ իրենց գործերը կարգադրելու, ու ահա այդպէս ալ կ'ընենք: Կը յուսանք, որ կամաւորներն այդ ժամանակամիջոցին մէջ իրենց բոլոր գործերը կը կարգադրեն եւ կազմ ու պատրաստ որոշեալ օրը, որոշեալ տեղը ներկայ կ'ըլլան:



Փաստ. 1403-137

Բ 5.- «ԱՍՊԱՐԷՉ» ԹԵՐԹԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Ֆրեզնո, 20 սեպտ. 1915

Սիրելի ընկերներ,

Ասկէ առաջ քանի քանի անգամներ ձեր ուշադրութեանը լուրջ առարկայ դարձնելու համար «Ասպարէզ»-ը թէ՛ հաւաքաբար եւ թէ՛ անհատաբար դիմումներ եւ առաջարկներ եղած էին ձեզի, թերթը իր ամբողջ կազմով Կեղըր կոմիտէի թեւարկութեան տակ առնելու համար: Զեր վերջին առաջարկը եղած էր որ մենք վերջին երկու տարուան հաշիւները ներկայացնէինք ձեզի, մանրակրկիտ կերպով, հակառակ անոր որ մենք ըսեր էինք ձեզի թէ թերթը իր ամբողջ գոյքով ո՛րեւէ պարտքէ զերծ պատրաստ էինք յանձնել ձեզի, եթէ զայն տեւականապէս հրատարակելու համար, այս շրջանին մէջ, մեզի դրական երաշխաւորութիւն չնորհէիք:

Երկար խորհրդակցութիւններէ վերջ տեղւոյս «Ասպարէզ»-ի ընկերները այն անախորժ եզրակացութեան եկած են, թէ կամ ա՛յն է որ դուք մինչեւ ցարդ չէք ըմբռնած այս շրջանին մէջ «Ասպարէզ»-ի կարեւորութիւնը, ինչպէս նաեւ անոր շուրջը բոլորուող քանի մը ընկերներու շարունակական գոհողութիւններով եւ տեղական սեփական ուժերով, զայն վարելու անբաւականութիւնը, եւ կա՛մ մենք անկարող գտնուեր ենք մինչեւ հիմա այս հիմնական ճշմարտութիւնը պէտք եղած պարզութեամբ ձեզի հասկցնելու: Յամենայն դէպս, կ'արժէ որ թիւրիմացութիւնները ճշդուին եւ անմիջական դարմանի մը մասին պահանջուած կտրուկ քայլեր առնուին:

Այս թղթակցութեան կցուած առանձինն հաշուետուութենէն դուք պիտի տեսնէք որ «Ասպարէզ»-ը կարող եղած է ցարդ ինքզինք ապրեցնել: Ցուցուած բացը դիւրաւ կարելի է գոցել գանձելի բաժանորդագիւններէ, որոնց գումարը կը հասնի 6-700 տոլարի:

«Ասպարէզ»-ի նիւթապէս կաղալուն գլխաւոր պատճառներէն մին եղած է թերթին միանձնական վարչութիւնը: Խմբագիր ըլլալու որոշուած անձը, անցելոյն մէջ եւ ներկայիս, եղած է թէ՛ խմբագիր, թէ՛ վարիչ, թէ՛ հաւաքիչ, թէ՛ ծանուցագրող եւ թէ՛ թղթակից: Դիւրին է անշուշտ ձեզ համար երեւակայել թէ այսպիսի բազմապաշտօն անձ մը որքա՞ն ձեռնհասութեամբ կարող է վարել պատասխանատու գործ մը առանց վտանգելու իր առողջութիւնը եւ կամ հրատարակութեան մը շահերը:

Ուստի, մեր այս շրջանի կարօտութեանց խորին գի-

տակցութեամբ, ձայնակցելով Ֆրեզնոյի կոմիտէի ցանկութիւններուն, մենք պիտի խնդրէինք — պիտի պահանջէինք որ գործիչ-խմբագիր մը անմիջապէս դրուէիք հոս, թէ՛ կոմիտէին եւ թէ՛ «Ասպարէզ»-ի պատասխանատուութիւնը ստանձնելու համար: «Ասպարէզ»-ի ներկայ խմբագիր-վարիչը, ընկ. Յ. Գապատայեան, որ քաջածանօթ է տեղւոյս ամերիկացի ու հայ առեւտրականներուն, պատրաստակամութիւն յայտնած է իր ժամանակը բացառաբար նուիրել ծանուցումներ հաւաքելու համար «Ասպարէզ»-ին եւ, այս վարչական գործերէն դուրս ալ, օժանդակել ձեր կողմէ ընտրուած ու ղրկուած եւ կամ նշանակուած յարմար ու ձեռնհաս գործիչ-խմբագիրին աշխատութիւններուն:

Այս ճամբան կը գտնենք միակ հնարաւոր ելքը մեր այլապէս անհանգստացուցիչ կացութեան: Ֆրեզնոն եւ շրջակաները կը ներկայացնեն ամերիկահայ գաղութին ամէնէն տարօրինակ միջավայրը: Ապառաժի նման կարծրասիրտ ու անտարբեր հայերու բերդ մըն է՝ զոր Հ. Յ. Դաշնակցութիւնը իրեն նշանաբան ընելու է քանդել կազմակերպական բոլոր առձեռն միջոցներով: «Ասպարէզ»-ը այս միջոցներուն ամէնէն ազդեցիկն է եւ պարզապէս բարոյական ոճիր մը պիտի ըլլար լքել զայն իր բախտին:

Տեղւոյն հեռաւորութիւնը պատճառ մը եղեր է որ մենք աւելի մօտէն չփուլմ չենք ունեցեր արեւելեան նահանգներու մեր ընկերներուն հետ: Սակայն ի՛նչ միութարակութիւն որ Ատլանտեանի ափերու վրայ հրատարակուող «Հայրենիք»-ը եւ Խաղաղականի ափերուն վրայ լոյս տեսնող «Ասպարէզ»-ը հաւասար խանդով նուիրուած են Հ.Յ.Դ-ի գաղափարին. բայց ի՛նչ դժբախտութիւն որ մինչ առաջինը հովանաւորուած օրկանն է զօրեղ կազմակերպութեան, երկրորդը տակաւին կը մնայ անհատ ընկերներու պարզ ձեռնարկ մը: Առանց սերմանելու անկարելի է հնձել. եւ եթէ դուք կ'ակնկալէք որ այս շրջանը աւելի պարտաճանաչ ըլլայ, գանդիկա արգասաւորելու համար պարտաւոր էք մշակներ հայթայթել:

Ուղիղ չէ որ շարունակաբար մեզ յանդիմանէք մեր կամքէն անկախ պատճառներով տեղի ունեցած թերութիւններու եւ անպատեհութիւններու համար: Հետեւաբար կ'արժէ որ դուք անբաժան ուշադրութեամբ մը հետեւիք մեր քալիֆորնիական կեանքի անցուղարձե-

րուն եւ գորավիզ ըլլաք մեզի ո՛չ միայն բարոյապէս այլ-լեւ նիւթապէս, եթէ կ'ուզէք լիաբուռն արդիւնք մը ձեռք բերել հոս:

Դարմանը մատնանշուած է ձեզի. եւ կը յուսանք թէ այս ուղղութեամբ առնուած ջանքերը յաջողութեամբ պսակելու ձեռն հական ձեռնտուութիւնը չէք զլանար մեզի:

Ընկերական սիրալիր զգացումներով կը մնանք Ձերդ՝

Ի դիմաց «Ասպարէզ» հաստ[ատութեան] ընկերու-թեան:

Ա. ՌՍՏԻԿԵԱՆ
Ա. ԹՅԷՆՔՃԵԱՆ
ՅՈՎՀ. ԳԱՊԱՏԱՅԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳՈՒԼԵԱՆ
Ա. Կ. ՍԷՔԼԷՄԵԱՆ

Փաստ. 1403-159

Բ 6.- ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

27 Հոկտեմբեր 1915

Սիրելի ընկերներ,

Կը հաստատենք մեր 217, 233, 235, 239, եւ 243 թուա-համար նամակները:

Ստացած ենք ձեր No 199 թուահամար նամակը, որու մասին կ'անդրադառնանք մեր յաջորդ նամակով:

Մինչեւ հիմա ստացած կ'ըլլաք անշուշտ մեր փոխադ-րած 1000 \$ (հազար) գումարը, որուն հինգ հարիւր Ֆրանքը՝ ըստ մեր վերջին նամակին կը յատկացնէք խմբագրատան վերաշինութեան համար, իսկ մնացեալ մասը կը պահէք անձեռնմխելի, մինչեւ մեզմէ հրահանգ ստանալը:

Անցեալ անգամ գրած էինք, որ հայ կարօտեալնե-րուն օգնելու համար, տեղացիները յանձնախմբեր կազ-մած ու գործի սկսած էին: Վերջերս, այդ յանձնախմբե-րը, կեդրոնական յանձնախմբի միջոցով, Պոլսոյ ամե-րիկեան դեսպանին ղրկած են, \$ 100.000 (հարիւր հազար

տոլար) Միջագետք տեղափոխուած մեր արիւնակիցնե-րուն օգնելու: Այդ նպաստի շարժումը եռանդով առաջ կը տարուի:

Նիւ Եորքի մէջ, մեր մարմնին բարոյական վերա-հսկողութեան տակ, կ'իսամսեայ "New Armenia" անու-նով հանդէս մը սկսած է հրատարակուիլ: Անոր քաղա-քական credoն² պիտի ըլլայ Կովկասեան Ազգային բիւ-րոյի դաւանած credoն:

Համերաշխութեան մասին դեռ վերջնական բան մը չկայ: Հակառակորդները Պօղոս Նուպարի «Հիմնա-դրամ»ը բռնած կ'երթան: Իրենց բոլոր հանգանակած դրամները ուղղակի Պօղոս Նուպարի պիտի ղրկեն: Յա-ջորդ շաբաթ, համերաշխութեան մասին եւս ձեզի վերջ-նական բան մը կը գրենք:

Հաճեցէք ներփակեալ նամակը Պալքանեան Կեդր-կոմիտէին հասցնել:

Ընկ. բարեկներով
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

2.- Հաւատանքը:

Փաստ. 1403-173

Բ 7.- ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԷԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

9 Դեկտեմբեր 1915

Սիրելի ընկերներ,

Կը հաստատենք մեր 217, 233, 235, 239, 243, 249 եւ 264 թուահամար նամակները:

Հեռագրով փոխադրուած հազար տոլարի մասին ոչինչ չգրեցիք: Այդ գումարը ստացաք թէ ոչ հաճեցէք իմացնել:

Համերաշխութիւն մեր հակառակորդներու չկամութեան պատճառով չիրականացաւ: Մենք առանձինն հանգանակութեան սկսած ենք: Մեր ժողովներու արդիւնքներն աւելի արդիւնաւոր են քան անցեալ տարի: Շատ տեղեր իրենց տարած սկիզբի հանգանակութիւննին կրկնապատկած են: Փրովիտէնս, որ անցեալ տարի (այս տարուան սկիզբը) չորս հազար տոլար տուած էր՝ այս երկրորդ անգամին ինը հազար տոլար տուաւ: Մօ-

տերս մեծ գոհար մը պիտի դրկենք Ազգային բիւրոյին:

Օր ըստ օրէ մեր շարքերն ու մարմինները կը ստուարանան: Կոմիտէներու թիւն աւելի քան հարիւր է, իսկ Կարմիր խաչի խմբերունը աւելի քան յիսուն:

«Հայրենիք»ը օրաթերթի վերածած ենք: «Հայրենիք»ը դարձած է գաղութիս թերթը:

Վերջերս բնաւ տեղեկութիւն առած չենք Կովկասէն կամաւորական շարժման ու յարակից խնդիրներու մասին, հակառակ անոր, որ անձկանօք կը սպասենք այդ տեղեկութիւններուն: Եթէ դուք ոեւէ լուր ունիք հաճեցէք անմիջապէս անոնք մեզի հաղորդել:

Փափաքելի էր գիտնալ, թէ ի վիճակի եղա՞ք մեր ձեզի դրկած թղթակցութիւնները Հայաստանի մեր ընկերներուն հասցնել:

Ընկ. ջերմ բարեւներով՝
Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԷ

Փաստ. 1404ա-17

Գ 1.- ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐ
Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ 23ՐԴ ՊԱՏԳԱՄ. ԺՈՂՈՎԻ
1916 Դեկտեմբեր

1.- Հաշտետուութիւն եւ տեղեկագիր, գործիչ ընկերներու, «Հայրենիք»-ի, «Ասպարէզ»-ի (խմբագրական եւ վարչական), Կեդրոնական կոմիտէի, Հաշտեքնիչ եւ այլ մարմիններու կողմէ:

2.- Մեր գործունէութեան եղանակը Ամերիկայի մէջ յաջորդ տարի:

- Ա) Փրոփականտի ի՞նչ միջոցներ ընդգրկել:
- Բ) Օտար գրաւոր եւ բանաւոր փրոփականտ:
- Թեյադրանքներ ու գործնական առաջարկներ:

3.- Կուսակցական փոխ-յարաբերութիւններ: Տեղական, Կովկասի, Եգիպտոսի եւ այլ տեղերու մարմիններու հետ փոխ-յարաբերութիւններն ի՞նչպէս եղած են եւ ի՞նչպէս պէտք է ըլլան ապագային:

4.- Կուսակցական մամուլը: Անոր տարածման համար գործնական ի՞նչ միջոցներ կը թելադրեն կոմիտէները:

5.- Գործիչներ: Շրջանները գործիչներով բաժնելու եւ զօրացնելու միջոցներ: Երկու տեսակ գործիչ ունենա՞լ:

Ա) Կազմակերպողներ (organizer), որոնք կոմիտէներու ներքին կազմակերպական գործերով կը հետաքրքրուին:

Բ) Փրոփականտիստներ — հրապարակախօսներ (lecturer), որոնք հրապարակային եւ նման ժողովներու մէջ կազմակերպական աշխատանքը առաջ կը տանին:

6.- «Հայրենիք»-ի սեփական շէնք: Նկատի ունենալով որ «Հայրենիք»-ի տպարանի տեղւոյն մօտ հազար տոլար վարձ կը տրուի տարին, նկատի ունենալով, որ քանի մը տարին անգամ մը պէտք է տեղափոխութիւն կատարել քանի մը հարիւր տոլար ծախքով. նկատի ունենալով նամանաւանդ, որ «Հայրենիք»-ը օր ըստ օրէ կ'ընդարձակուի, պէ՞տք է «Հայրենիք»-ի սեփական շէնք մը գնել կամ շինել. եթէ այո՛, ո՞ր, եւ ի՞նչ միջոցներով: Թեյադրանքներ ու գործնական առաջարկներ:

7.- Ապառիկները գանձելու համար: Ի՞նչպէս գանձրէկելու են.

Ա) Կազմակերպական հին տուրքերն ու ապառիկները:

Բ) 1915 եւ 1916 տարիներու հրապարակային հանգանակային ժողովներու մէջ նուէրներ խոստացող ու չվճարող չէզոքներու հանդէպ ի՞նչ քայլեր առնուելու են.

Գ) Նոյն տարիներու նոյն տեսակ ժողովներու մէջ նուէրներ խոստացող ու չվճարող (որոնք կազմակերպական տուրքերին տուած են) ընկերներու հանդէպ ի՞նչ քայլեր առնուելու են.

Դ) Ի՞նչ տեսակ քայլեր առնուելու են, նոյն տարիներու, նոյն տեսակ ժողովներու մէջ խոստացած նուէրները վճարող ընկերներու հանդէպ, որոնք իրենց 1915 եւ 1916 տարիներու կազմակերպական տուրքերը չեն տուած:

Ե) Ի՞նչպէս գանձուելու են «Հայրենիք»-ի ապառիկները մեր մարմիններէն եւ ընկերներէն:

Թեյադրանքներ ու գործնական առաջարկներ:

8.- 1917 տարուան կազմակերպական տուրք:

Ա) 1917 տարուան կազմակերպական տուրքի նուազում կամ յաւելում պիտի ըլլա՞յ, եթէ այո՛, ո՞րքան.

Բ) Հրապարակային հանգանակային ժողովներ ընե՞լ 1917 տարուան շրջանին. եթէ այո՛, ի՞նչ անուամբ:

Գ) Կազմակերպական տուրքը պիտի խառնե՞լ 1917 տարուան շրջանին ըլլալիք հանգանակութիւններուն մէջ:

9.- Յեղափոխական ձեռնարկներու հարց: Թեյադրանքներ ու գործնական առաջարկներ:

10.- Կոմիտէներու վերաքննած կանոնագրի փոփոխութեան ու վաւերացման հարց: Երկու կարգի գործչի դրութիւնը ընդունելու պարագային, Շրջանային խորհուրդներու գոյութեան մասին կարծիքներ յայտնել:

11.- Կարմիր խաչի վերաքննած ծրագիր-կանոնագրի փոփոխութեան եւ վաւերացման հարց:

Ա) Կարմիր խաչը ի՞նչ տեսակ գործունէութիւն ընդգրկելու է.

Բ) Կովկասի կամ Երկրի մէջ որքանոց մը բանա՞լ Կարմիր խաչի անուամբ.

Գ) Կարմիր խաչի Կեդրոնական Վարիչ Մարմին մը ունենա՞լ:

12.- Հ.Յ.Դ. Զինավարժական, Դերասանական, Երաժշտական, Լսարանական խմբերու, ակումբներու ու գրադարաններու ծրագիր-կանոնագրի փոփոխութեան ու վաւերացման հարց: Կարելի՞ է ստիպել ընկեր մը, որ ակումբի ու նման հաստատութիւններու անդամ ըլլայ. ո՞րքան օրինաւոր է:

13.- Մեր յարաբերութիւնները Ազգային բիւրոյին հետ:

Ա) Կամաւորական հարց.

Բ) Նկատի ունենալով կամաւորական գնդերու վերակազմութիւնը, այսինքն անոնց հրացանակիր խմբերու վերածուիլը, ի՞նչ պիտի ըլլայ մեր տեսակէտն ու բռնելիք դիրքը անոնց հանդէպ.

Գ) Ի՞նչ պիտի ըլլայ մեր յարաբերութիւնը Ազգ. բիւրոյին հետ.

Դ) Պիտի կապուի՞նք Ազգային բիւրոյին եւ կամ գաղթականական գործերու համար գաղթականական ոեւէ մարմնի հետ.

Ե) Ի՞նչ դիրք բռնել՝

1. կամաւորական գնդերու վերակազմութենէն առաջ Ամերիկա վերադարձող ընկերներու – դասալիքներու – հանդէպ.

2. Հիւանդութեան, վերակազմութեան եւ այլ – ոչ-դասալքութեան – պատճառով Ամերիկա վերադարձող ընկերներու հանդէպ:

14.- Համերաշխութեան հարց:

Ա) Հայ քաղաքական կազմակերպութիւններու հետ.

Բ) Հայ ոչ-քաղաքական հաստատութիւններու հետ:

15.- Վէժէրաններու Ֆոնտը ճոխացնելու հարց: Ի՞նչ միջոցներով վէժէրաններու Ֆոնտը ճոխացնել, որպէս-զի ի վիճակի ըլլանք վէժէրան կարօտ ընկերներու ու

անոնց պարագաներուն հոգատարութիւն ընել:

16.- Ամերիկայի Պատգամաւորական ժողովի ժամանակի փոփոխման հարց: Նկատի ունենալով, որ մեր Ընդհանուր Պատգամաւորական ժողովները տեղի կ'ունենան յուլիսի վերջերը եւ կամ օգոստոսի սկիզբները, որով Ընդհանուր Պատգամաւորական ժողովներու պատրաստութեան համար ընդհանրապէս տեղական արտակարգ պատգամաւորական ժողովներ գումարել հարկ կ'ըլլայ, որոնց համար բաւականաչափ ծախս կ'ըլլայ. տեղական մեր Պատգ. ժողովներու ժամանակը փոխել, փոխանակ դեկտեմբերին գումարելու՝ մայիսին եւ կամ յուլիսին գումարելու՝ անոնք. եթէ այո՞, համաձայն էք, որ այս տարուան Պատգ. ժողովէն որոշուած անցուի, որ ա) եթէ մեր ընդհանուր Պատգ. ժողովը տեղի ունենայ 1917 տարուան շրջանին, մեր տեղական Պատգ. ժողովը գումարուի 1917ին, Պատգ. ժողովի որոշած ժամանակը. բ) եթէ 1917 տարուան շրջանին, մեր ընդհ. Պատգ. ժողովը չգումարուի, այն ատեն մեր տեղական Պատգ. ժողովը գումարուի 1918ին, Պատգ. ժողովի որոշած ժամանակը:

17.- Պատասխանատու պաշտօնեայ ընկերներու շաբաթականի յաւելման հարց: Նկատի ունենալով ապրուստի միջոցներու սղանալը, պատասխանատու պաշտօնեայ ընկերներու 12 տոլար շաբաթավճարին վրայ յաւելում ընել, եթէ այո՞, որչա՞փ յաւելում ընել:

18.- Դրամ փոխադրման հարց: Կովկաս ապաստանող ու Երկրի գրաւուած վայրերը գտնուող մեր արեւնակիցներու՝ իրենց պարագաներէն գումարներ փոխադրելու միջոց պիտի հանդիսանա՞նք:

19.- Զնախատեսուած հարցեր:

20.- Կեդրոնական կոմիտէի եւ այլ մարմիններու ընտրութիւն:

Հետեւեալ կոմիտէներն այլեւայլ պատճառներով մասնակցած չէին.

Պէթթընտորֆ, Պըֆֆլօ, Իվընսթըն, Չարլըսթաուան, Տընտէս, Իրի, Ֆաուլըր, Կոլթ, Կոլէլֆ, Լոս Էնճէլէս, Մէտիսըն, Մեսինա, Միտլպորո, Նուարթ, Նիւթըն, Ըփփըր Ֆոլս, Նիակարա Ֆոլս, Սան Ֆրանսիսքօ, Սէնթ ժոզէֆ, Մինիափոլիս, Ուէստ Փիցպըրկ:

ՇՐՋ. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պատգամաւորական ժողովը հիմնուած նախորդ երկու տարիներու Պատգ. ժողովներու այս մասին տուած որոշումներուն վրայ, որոշեց չլսել ՇՐՋ. խորհուրդներու տեղեկագիրը:

ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պատգամաւորական ժողովը լսելով գործիչ ընկերներու — Ա. Միքայէլեանի, Մ. Օզանեանի եւ Խ. Գալուստեանի — տեղեկագրերը եւ այդ առթիւ անոնց ըրած գործնական թելադրութիւնները, իր գոհունակութիւնը յայտնեց անոնց:

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պատգ. ժողովը լսելով «Հայրենիք»ի խմբագրութեան բերած տեղեկագիրը, եւ գտնելով որ խմբագիր ընկերները թերթը վարած են լաւ, իրենց ուժերու համեմատութեամբ, գնահատեց անոնց կատարած աշխատանքը:

«ԱՄՊԱՐԷՋ»Ի ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պատգ. ժողովը լսելով «Ասպարէզ»ի խմբագրութեան եւ թերթի վարչական գործերու տեղեկագիրը, գտաւ որ, թերթը կը հրատարակուի աննպաստ միջավայրի մը մէջ: Այդ առթիւ ժողովը ըրաւ իր գնահատութիւնը եւ քաջալերանքը, փափաք յայտնելով միաժամանակ, որ յառաջիկային թերթը որոշ կերպով ցոլացնէ կուսակցութեան հայեացքները:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

- Նկատի ունենալով,
- ա) Որ կուսակցական մամուլը անցեալին մէջ ունեցած չէ բաւարար չափով աշխատակիցներ, որոնք կարենային թերթի որակը բարձրացնել եւ բովանդակութիւնը ճոխացնել,
- բ) Որ մամուլին մէջ ընդհանրապէս եւ «Հայրենիք»ին մէջ մասնաւորապէս երբեմն հրատարակուած են անպատշաճ գրութիւններ,

Պատգ. ժողովը որոշեց, որ այսուհետեւ ամէն կերպ պէտք է աշխատիլ այդ պակասները դարմանել փոփոխելով նախ եւ առաջ՝ թերթերու խմբագրական եւ վարչական կազմերը, նշանակելով «Հայրենիք»ին խմբագրապետ մը, եւ ապահովելով կարող աշխատակիցներ, ի հարկին վարձատրելով զանոնք: Պատգամաւորական ժողովը կը ցանկայ նաեւ որ, թերթերու խմբագրութիւնները պարբերաբար իրենց աշխատակիցներու հետ միասին ունենան նաեւ խորհրդակցական ժողովներ. կը յանձնարարուի նաեւ դարձեալ, նորընտիր Կեդրոնական կոմիտէին, որպէսզի կարող եւ մասնագէտ ընկերներու միջոցով հետզհետէ հրատարակութեան տրուին պարզ, հասկնալի պրոչիւրներ՝ մեր կուսակցական հայեացքներն ու սկզբունքները պարզաբանող:

ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պատգ. ժողովը լսելով Կեդրոնական կոմիտէի 1916 տարուայ գործունէութեան մանրամասն տեղեկագիրը, միեւնոյն ատեն լսելով քննիչ յանձնախմբի բերանացի թէ գրաւոր տեղեկագրերը, եւ պատգամաւոր ընկերներու թեր ու դէմ դիտողութիւններն ու կարծիքները, գտաւ որ, Կեդրոնական կոմիտէն իր գործունէութեան ընթացքին թէեւ ունեցած է փոքրիկ վրիպումներ, բայց ընդհանրապէս իր թէ՛ հաշուական եւ թէ՛ ներքին կազմակերպական աշխատանքները տարած է խղճմտօրէն: Այդ առթիւ Պատգ. ժողովը իր գոհունակութիւնը յայտնեց:

ԳՈՐԾԻՉՆԵՐ

Պատգամաւորական ժողովը նկատելով պատերազմի ընթացքին ամերիկահայ գաղութի կեանքին մէջ առաջ եկած յուսալքուած դրութիւնը, անհրաժեշտ նկատեց ուշադրութիւն դարձնել գաղութի եւ կազմակերպական ներքին աշխատանքներու վրայ, որոշելով Ամերիկայի շրջանը բաժնել որոշ մասերու, աւելցնելով գործիչներու թիւը: Միաժամանակ նկատի ունենալով որ կարեւոր է նաեւ բաժնել գործիչներու զբաղմունքներն, որոշեց ունենալ պրոպագանդիստ եւ կազմակերպող գործիչներ:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Նկատի ունենալով որ 1917 տարուան ընթացքին երկու կարգի գործիչներ պիտի ըլլան — Փրոփականտիստներ եւ կազմակերպողներ, եւ նկատի ունենալով որ կազմակերպողներ, եւ նկատի ունենալով որ կազմակերպող գործիչները առանձնապէս պիտի զբաղուին



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

գուտ ներքին կազմակերպական եւ դատական խնդիրներով, Պատգամաւորական ժողովը որոշեց ջնջել Շրջանային խորհուրդներու գրութիւնը:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՓՈՒՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատգամաւորական ժողովը լսելէ յետոյ Կեդրոնական կոմիտէի եւ քննիչ յանձնախմբի բերած տեղեկագրերը՝ արտասահմանեան եւ տեղական մեր կուսակցական մարմիններու հետ եղած փոխ-յարաբերութիւններու, գտաւ զանոնք ընդհանրապէս գոհացուցիչ եւ թելադրեց որ յաջորդ Կեդրոնական կոմիտէն ալ շարունակէ այդ ուղղութեամբ իր աշխատանքը՝ գիտակ պահելով միաժամանակ տեղական մարմինները՝ ազգային, դիւանագիտական եւ մեր կուսակցական ներքին կեանքին մասին տալով հարկ եղած տեղեկութիւնները:

1917 ՏԱՐՈՒԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՏՈՒՐՔ

Պատգամաւորական ժողովը որոշեց 1917 տարուան կուսակցական տուրքը պահել նոյնը — տարեկան 12 տոլար:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՕՆԵԱՅ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՇԱԲԱԹԱԿԱՆԻ ՅԱԻԵԼՄԱՆ ՀԱՐՑ

Նկատի ունենալով, որ ներկայ պայմաններուն, երբ անհրաժեշտ է անհամեմատ աւելի գոհողութիւն, երբ կուսակցական միջոցներն այնքան նուազ են եւ դրամը այնքան անհրաժեշտ, երբ յեղափոխական գործիչները եկած չեն ապրելու կամ դրամ աւելցնելու դիտումով, այլ եկած են իրենց պաշտած գաղափարը տարածելու, եւ նկատի ունենալով նաեւ, որ եթէ գործիչներու շաբաթականներու գումարը աւելցուի, այն ժամանակ մեր ամբողջ գումարը պիտի յատկացուի միայն պաշտօնեաներու — Պատգամաւորական ժողովը որոշեց կազմակերպական գործերու հետ կապուած ամուսնացածներու շաբաթականը բարձրացնել 15 տոլարի, իսկ ամուսնիներու շաբաթականը պահել նոյնը՝ 12 տոլար:

ԱՊԱՌԻԿՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԻՋՈՅՆԵՐ

Նկատելով, որ կան մեր շարքերուն մէջ ընկերներ, որոնք առանց բանաւոր պատճառներ ունենալու, չեն ուզած վճարել իրենց 1915 եւ 1916 տարիներու կազմակերպական տուրքերը,

Նկատելով դարձեալ, որ կան ուրիշներ, որոնք հրապարակային հանգանակային ժողովներու մէջ խոստումներ ըրած են, բայց մինչեւ այժմ չեն պահած խոստումներն, Պատգ. ժող. որոշեց պարտադրել կոմիտէներու գործադիր մարմինները, որպէսզի բարոյական

ամէն միջոց ի գործ դնեն այդ ապառիկները գանձելու՝ մինչեւ երեք ամիս, եւ երբ չվճարողները կը յամառին դարձեալ եւ իրենց խոստումները չեն գործադրեր, կոմիտէները պարտաւոր են անմիջապէս հեռացնել այդ պիսիները մեր կազմակերպական շարքերէն:

Գալով անոնց, որոնք ընկեր չըլլալով ոչ մէկ կերպով չեն ենթարկուիր մեր կուսակցական մարմիններու թելադրութիւններուն, այդպիսիներուն, ինչպէս նաեւ այդ առթիւ մեր շարքերէն հեռացուելիքներու անուաները հրատարակել հրապարակ հանուելիք պրոչիւրներու մէջ եւ անոնց խոստացած նուէրները ցոյց տալ իբրեւ գանձելի գումարներ:

ՎԷԹԻՐԱՆՆԵՐՈՒ ՖՈՆՏ

Նկատի ունենալով համազգային մեծ աղէտը եւ անկէ առաջ եկած անթիւ կարիքները մեղմացնելու պահանջները՝ Պատգ. ժողովը որոշեց վէթէրաններու ֆոնտը ճոխացնել կուսակցական միջոցներով, ընելով բացառիկ հրատարակութիւններ, տալով ներկայացումներ եւ ունենալով կուսակցական գանազան ձեռնարկներ, որոնցմէ մէկն ու միւսը յարմար կը գտնեն կոմիտէներն ու Կարմիր խաչի խմբերը:

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՈՒՅՏՈՒՈՒԹԻՒՆ

Պատգ. ժողովը լսելով «Հայրենիք»ի վարչութեան եւ քննիչ յանձնախմբի տեղեկագրերը, տեղեկանալով, որ քննիչ յանձ. թէեւ գործակատարի աշխատանքները գտած է ընդհանրապէս գոհացուցիչ եւ խղճամիտ կերպով տարուած, եւ սակայն, Պատգ. ժողովը նկատելով որ քննիչ յանձ. իր իսկ խոստովանութիւնով, հնարաւորութիւն ունեցած չէ մանրամասն քննութեան անցնել թերթի վարչական գործերու յարակից կատարուած բոլոր աշխատանքները, իր գոհունակութիւնը յայտնելով հանդերձ գործակատարի կատարած ընդհանուր աշխատանքներու առթիւ, պարտադրեց նորընտիր Կեդրոնական կոմիտէն, որ մասնագէտ հաշուապահ մը հրաւիրէ, քննել տալու համար «Հայրենիք»ի վարչութեան 1916 տարուան ամբողջ աշխատանքները եւ ըստ այնմ քայլեր առնէ յաջորդ տարուան համար գործակատարի ընտրութիւնը կատարելու:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՓՈՓՈՒՅՈՒՄ

Նկատելով որ Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհարուր Պատգ. ժողովը տեղի կ'ունենայ Յուլիս-Օգոստոս ամիսներուն, Պատգ. ժողովը կ'որոշէ որ այսուհետեւ տե-



դական Պատգ. ժողովները եւս գումարուին Մայիս-Յունիս ամիսներուն, օրերու յարմարութիւնը ձգելով Կ. Կ-ին:

ՄԵՐ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՈՅԻՆ ՀԵՏ

Նկատելով, որ մինչեւ այժմ կազմակերպութիւնը մօտ կանգնած է Ազգային բիւրոյին՝ իբրեւ մեր քաղաքական իտէալները հետապնդող մարմին:

Նկատելով, որ Ազգային բիւրոյի աշխատանքները մինչեւ այժմ բաժնուած եղեր են գլխաւորաբար երկու մասի՝ պահել ռազմադաշտին վրայ կամաւորական զնդեր եւ դիւանագիտական հետապնդումներ կատարել:

Նկատելով, որ թէեւ կամաւորական զնդերը փոխուած են հրացանակիր զնդերու, բայց անոնք, դարձեալ, գոնէ երեւութապէս, կը փոխարինեն նախկին կամաւորական զնդերը, մենք պիտի աշխատինք այսուհետեւ ցոյց տալ մեր բարոյական եւ նիւթական աջակցութիւնն Ազգային բիւրոյին, նախապէս ստանալով մեր կուսակցական ղեկավարող մարմիններու համաձայնութիւնն այդ մասին:

ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆՈՎ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԱԾ ԴՐԱՄՆԵՐԸ

Նկատի ունենալով որ 2 տարիէ ի վեր մեր հանգանակութիւնները կատարուած են Հայ ազատագրութեան (կամաւորներու, կռուի, ինքնապաշտպանութեան) անունով:

Նկատի ունենալով որ Ազգային բիւրոն միջոցը եղած է Հայ ազատագրութեան իր կազմակերպած կամաւորական զնդերով:

Նկատի ունենալով որ այսօր, դժբախտաբար, կամաւորական զնդերը վերածուած են հրացանակիր զնդերու,

Պատգամաւորական ժողովը կը պահանջէ Ազգային բիւրոյէն՝ որ իր անունով հանգանակուած գումարներու մնացեալ մասն ալ յատկացնէ Հայ ազատագրութեան (ինքնապաշտպանութեան, եւլն-):

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ամերիկահայ կամաւորութիւնը մեր գաղութի հայրենասիրական ցանկութիւններէն բխած շարժում մըն էր,

Նկատի ունենալով նաեւ որ կամաւորներու Կովկաս հասնելու ատեն Վանի նահանջը, կամաւորական զնդերու կազմալուծումը եւ հայ ժողովուրդի հոգեկան յու-

սալքուած դրութիւնը կարող էին ազդել մեր կամաւորներու հոգեկան դրութեան վրայ, Պատգ. ժողովը որոշեց ընդունիլ մեր բոլոր ընկեր կամաւորները մեր շարքերուն մէջ, բացի այն կամաւորներէն, որոնք, ա) գտնուած են զինուորական եւ կուսակցական մասնաւոր յանցանքի մէջ. բ) Ամերիկա հասնելով հակադաշնակցական պայքար կը մղեն:

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՍԵՓԱԿԱՆ ՇԷՆՔ

Սօտաւոր ապագային «Հայրենիք»ին համար սեփական շէնք մը ունենալու բաղձանքը, Պատգ. ժողովը որոշեց առայժմ յետաձգել:

ՀԱՄԵՐԱՇՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Նկատի ունենալով,

ա) Որ եղած անհամերաշխութիւնը մեր ազգային ներքին կեանքին մէջ խոչոր վնասներ հասցուցած է ազգային դատին:

բ) Որ մեզ չըջապատող ազգութիւններն ու հայ դատին հակառակորդները չարաշահած են մեր այդ գոյավիճակը,

գ) Որ մեր ազգային ներքին իրականութիւնը չէ մնացեր ըրպէի պահանջին համապատասխան բարձրութեան վրայ,

դ) Որ երկու տարուայ ընթացքին մեր գլխին հասած հարուածները յառաջ բերած են յուսալքում, որմէ ելլելու համար համերաշխութիւնը անհրաժեշտ պայմաններէն մէկն է,

ե) Որ անհրաժեշտ է արտաքին աշխարհի առաջ մէկ ճակատով դուրս գալ՝ հայ դատի համար ըլլալիք դիւանագիտական յարաբերութիւնները յաջող կերպով առաջ տանելու համար՝

Պատգամաւորական ժողովը որոշեց, որ Կեդրոնական կոմիտէն հնարաւոր միջոցներ գտնէ, ընդհանուր համերաշխութիւն ստեղծելու Ամերիկայի չորս քաղաքական կուսակցութիւններու եւ միւս գործօն հոսանքներու միջեւ, այդ նպատակին համար թելադրելով, որ նորընտիր Կեդր. կոմիտէն անգամ մը եւս ջանայ բանակցութիւններ վարել յիշեալ մարմիններու առանձին առանձին ներկայացուցիչներուն հետ: Համերաշխութիւնը գոյացնելէ յետոյ — մինչեւ Կովկասի մէջ գաղթականական, որբերու գործերը ղեկավարող ընդհանուր կեդրոնական մարմնի մը կազմուելը — Կեդրոնական կոմիտէն դրամական առաքումներու կեդրոն ճանչնայ կաթողիկոսը:

Պատգ. ժողովը կ'որոշէ նաեւ, որ Կեդրոնական մարմինը կազմուի հայ կազմակերպուած բոլոր գործօն հոսանքներու ներկայացուցիչներէն, որոնք պէտք է ընտրուին փոխադարձ համաձայնութեամբ:



ՕՏԱՐ ՓՐՈՓԱԿԱՆՏ

Պատգ. ժողովը նկատի ունենալով օտար փրոփականտայի կարեւորութիւնը, յանձնարարեց Կեդրոնական կոմիտէին որ այդ ուղղութեամբ դրական քայլեր առնէ: Իսկ արդէն հրատարակուող «The New Armenia» թերթը կանոնաւոր հիմունքներու վրայ դնելու համար դրական միջոցներ ստեղծէ եւ աշխատի անոր տարածման:

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

.....
.....
.....³

1917 ՏԱՐՈՒԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պատգամաւորական ժողովը նկատի առնելով, որ համերաշխական բանակցութիւններու ելքին հետ կապուած է յետագայ տարուան ընթացքին կատարուելիք հանգանակութիւնները, որոշեց, առ այժմ այդ ուղղութեամբ քայլեր չառնել:

Բայց, եթէ ղժբախտաբար, մեր կամքէն անկախ պատճառներով, համերաշխութիւնը չիրականանայ, կոմիտէները պարտաւոր են առանձինն ձեռնարկել հանգանակային ժողովներու, փախստականներու, նահատակուած կամաւորներու ընտանիքներու, Երկրի վերաշինութեան եւ այլն կարիքներու համար:

Միեւնոյն ատեն որոշեց, այդ հանգանակութիւններուն չխառնել 1917 տարուայ զինուորական տուրքերը:

ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Նկատի ունենալով, որ մենք պիտի նպաստենք Ազգային պատուիրակութեան եւ ուժ պիտի տանք անոր դիւանագիտական ձեռնարկներուն,

Նկատելով նաեւ, որ օտար փրոփականտ մղելու համար անհրաժեշտ է որոշ չափով ծանօթ ըլլալ մեր գործունէութեան ապագայ ծրագրին, Պատգամաւորական ժողովը կ'որոշէ որ Կեդր. կոմիտէն հետապնդումներ ընէ ծանօթանալու համար Ազգային պատուիրակու-

թեան ծրագրին, ապա, յատուկ յանձնախումբի մը միջոցով, որոշ ուսումնասիրութիւն կատարէ՝ մեր քաղաքական խոհանարարը պարզաբանող, եթէ հնարաւոր է պրոչիւրներով ծանօթացնէ հասարակութեան մեր ապագայ ծրագիրները:

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԽՄԲԵՐՈՒ ԵՒ ԿՈՄԻՏԷՆԵՐՈՒ ԿԱՆՈՆԱԳՐԵՐՈՒ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Նկատի ունենալով, որ ներկայ անցման շրջանէն յետոյ, մեր կուսակցական կեանքի ներքին պայմանները եւս ենթակայ պիտի ըլլան փոփոխութիւններու, Պատգամաւորական ժողովը որոշեց Կարմիր խաչի խմբերու եւ կոմիտէներու կանոնագրերը պահել անփոփոխ, մինչեւ յառաջիկայ Պատգ. ժողովը:

ԴԱՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Պատգամաւորական ժողովը լսելով դատական յանձնախմբի տեղեկագիրը, յանձնարարեց նորընտիր Կեդրոնական կոմիտէին, որ տրուած տեղեկագրի համաձայն անցուած որոշումները հաղորդէ պատկան կոմիտէներուն:

Կ. Կ. Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Յանձնախմբի պատրաստած եռապատիկ ցանկէն գաղտնի քուէով նորընտիր Կեդր. կոմիտէի անդամ ընտրուեցան ընկերներ՝ Ն. Փ., Ա. Ս., Խ. Գ., Զ. Ն., Ս. Պ., Մ. Մ., Ս. Զ.⁴:

Կ. Կ. Ի ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՊԱՐԱԳԱՅ

Երբ Կեդրոնական կոմիտէի կազմէն մէկ կամ աւելի ընկերներ պակսին, Պատգամաւորական ժողովը որոշեց գործադրել ներքին կանոնագրի յօդուած 50-ը:

Պատգամաւորական ժողովը վերջացաւ Դեկտեմբեր 28-ին, երեկոյեան ժամը 10-ին: Գործիչ ընկերներու խանդավառ ատենախօսութիւններէն յետոյ, ժողովը փակուեցաւ Դաշնակցութեան քայլերգ «Մշակ բանուոր»-ով եւ պատգամաւորները մեկնեցան գոհ տպաւորութեամբ:

3.- Գաղտնապահութեան նկատմամբ «Յեղափոխական ձեռնարկներ» գլուխին բաժինը տպագիր յայտարարութեան մէջ նշուած է կիտաւոր: Որոշումներու ձեռագիր արձանագրութիւնը (փաստ. 1404ա-16) կը յայտնէ որ այս մասին եղած «արտայայտութիւնները անկարելի եւ աննպատակալարմար է» արձանագրել, բայց կը յանձնարարէ այդ ուղղութեամբ աշխատիլ եւ եթէ

հնարատր է «յատուկ յանձնախումբ» նշանակել:

4.- Սկզբնատառերով նշուած անուններն են յաջորդաբար՝ Ն. Փափազեան, Ահարոն Սաչաքեան, Խորէն Գալուստեան, Զատէն Նալպանտեան, Սեդրակ Պաղտոյեան, Մ. Մուրատ (Մուրատեան Մելիքսէօ), Սարգիս Չօչեան:



Փաստ. 1404ա-5

Գ 3.- ԻՆՉՊԵՍ ԾՆՈՒՆԴ ԿՎՈՆԵ ԿԱՄԱՌՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ (Մ. Օգանեսանի զեկուցագիրը Ամերիկայի Կեդր. կոմիտեից)

1.- Մեր վերջին Ընդհ. ժողովը – կայացած էրզրում, 1914ի ամառը – իր գլխավոր զբաղման առարկայ չէր դարձուցած թէ թուրքիան ալ կրնար շուտով պատերազմ յայտարարել: Թուրքիոյ ներկայ պատերազմին միջամտելու հարցը մերոնց համար այնքան ալ հաւանական չէր թուեր. բայց եթէ, հակառակ եղած բոլոր ենթադրութիւններուն, պայմաններու անակնկալ դասաւորումով մը թուրքիան ալ շուտով ինքզինքը նետէր պատերազմի թատերաբեմ, մենք՝ հայերս, համաձայն Ընդհ. ժողովի որոշման, պիտի մնայինք միանգամայն loyal⁵, աշխատելով կատարել միմիայն մեր քաղաքացիական պարտականութիւնը՝ հանդէպ մեր պատկանած տէրութիւններուն: Միաժամանակ սակայն Ընդհ. ժողովը կ'ընտրէ մի մարմին, որ պատերազմի յայտարարութեան մը պարագային պիտի որոշէր իսկոյն մեր դիրքը: Պատերազմը սակայն շուտով կը յայտարարուէր մինչ այդ լիազօրուած մարմինը հնարաւորութիւն չունենար ի մի իմբռնելու, նիստեր գումարելու, շնորհիւ այն հանգամանքի որ ընտրուած բոլոր ընկերները գանազան վայրեր էին ցրուած:

Սահմանի այս կողմը գտնուող ընկերներու համար սակայն պատերազմը անխուսափելի էր, միայն թէ բոլոր ընկերներն ալ համոզուած էին որ այդ պատերազմի մէջ նախադարձակողը չլինէր Ռուսաստանը, այլ նա կը սպասէ որ առաջին հարուածը գայ թուրքիայէն: Ռուս-գերման պատերազմը խանդավառած էր կովկասեան ժողովուրդը, ոգեւորութիւն մը վարակած էր ամէնքը, որ կը հաւատային անպայմանօրէն Ռուսաստանը կը պատերազմէր թուրքիայի դէմ:

Բիւրոյի ընկերներէն շատեր բացակայ էին այդ ատեն Թիֆլիսէն: Սկսուած էր արդէն մի ընդհանուր շարժում. մեր ռազմիկ ընկերներէն մի քանիներ – Համազասպ, Անդրանիկի վաշտապետներէն Սմբատ, Նիկոլ եւայլն – հաւատացած որ ռուս-գերման պատերազմին անմիջապէս հետեւելու է նաեւ ռուսեթուրք պատերազմ մը, սկսած էին արդէն ջանքեր թափել կամաւորական շարժում մը ստեղծելու՝ հաւաքելով հետզհետէ իրենց շուրջ հին ընկերներ եւ նոր կամաւոր զինուորներ: Ստեղծուած էր մի վերին աստիճանի փափուկ շրջան: Այդ ատեն բարեբախտաբար Թիֆլիս կը ժամանէ Ջաւրիեւը, իսկ քիչ յետոյ Վուսթեանը: Ջաւրիեւը իրերու ընդհ. կացութեան իրազեկ դառնալէ եւ եղած ընկերներու հետ երկար խորհրդակցելէ յետոյ, կը դիմէ

փոխարքային, ընդհանրապէս իրերու ներկայ կացութեան մասին անոր կարծիքը շօշափելու, միաժամանակ հարցնելու, թէ պատերազմի յայտարարութեան պարագային ի՞նչ պիտի լինի տաճկահայերու բարենորոգումներու հարցը: Փոխարքան այդ օրերուն կը բացակայէր Թիֆլիսէն եւ Ջաւրիեւ կը տեսակցի փոխարքայի օգնականին հետ: Տեսակցութեան պահուն օգնականը կը յայտնէ մեր ընկերոջ, թէ պատերազմը թուրքերը հանդէպ անխուսափելի է, բայց մենք պիտի սպասենք որ թուրքիան ինքը սկսի այդ պատերազմը: Երբ անոնց դէմ մեր կռիւր սկսի, անպայմանօրէն մենք պէտքը պիտի ունենանք ձեր աջակցութեան, բայց որովհետեւ ամէն գոհողութիւն կը կատարուի փոխարինութեամբ, այժմէն մեզ յայտնեցէք թէ ի՞նչ կերպով կ'ուզէք աջակցիլ մեզ եւ ատոր փոխարէն ի՞նչ կը պահանջէք մեզմէ: Ջաւրիեւը չէր կարող ի հարկէ ուղղակի եւ որոշ պատասխան տալ օգնականին, քանի որ չէր լսած ընկերներու կարծիքը այս մասին. նա միայն կը յայտնէ թէ կովկասահայեր ամէն կերպ կ'աջակցին ռուսական զէնքի յաղթանակին համար, իսկ մեր պահանջը ոչ այլ ինչ է, եթէ ոչ տաճկահայկական արդէն իսկ ծրագրուած բարենորոգումներու շուտափոյթ իրականացումը Հայաստանի մէջ: Բայց, կ'աւելցնէ Ջաւրիեւ, նկատի ունենալով տաճկահայերու չափազանց վտանգաւոր դրութիւնը, պատերազմի մը յայտարարութեան պարագային մի սպասէք անոնցմէ ձեզի ի նպաստ ապստամբական որեւէ շարժում: Օգնականը այդ ատեն դիտել կու տայ թէ մենք չենք սպասեր անոնցմէ այդպիսի շարժում եւ արդէն պէտք է ամէն կերպ զգուշացնէք զանոնք որ որեւէ շարժում չստեղծեն:

Ջաւրիեւի այս տեսակցութենէն անմիջապէս յետոյ, մեր ընկերներու կողմէ հեռագրով Թիֆլիս կը հրաւիրուին Ազգ. բիւրոյի պատ[ուոյ] նախագահ Մեսրոպ եպիսկոպոսը, փոխ-նախագահ Ս. Յարութիւնեանը, քաղաքազլուխ Խատիսեանը. միաժամանակ կը հրաւիրուին եւ մեր ցրուած եւ գանազան քաղաքներու կարեւոր ընկերները, որպէսզի կազմուին ուժեղացրած Բիւրոյի նիստերը: Եպիսկոպոսը եւ Ս. Յարութիւնեանը եւս երբ Թիֆլիս կը ժամանեն, Ազգ. բիւրոյի՝ կառավարութեան հետ յարաբերութիւնները կը ստանան աւելի կանոնաւոր բնաւորութիւն: Կառավարութեան հետ պաշտօնա-

5.- Օրինապահ:



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

պէս յարաբերողներն էին Մեսրոպ եպ.ը, քաղաքագլուխ Խատիսեանը, Սամսոն Յարուսթիւնեանը եւ Զաւրիեւը: Թիֆլիսի մէջ Ազգ. բիւրոյի եւ մեր դաշնակցական ուժեղացրած Բիւրոյի նիստերը գրեթէ գուզընթացաբար առաջ կ'երթան: Մեր ընկերները մի քանի օր առաջ միայն աշխատանքի էին սկսած:

Կառավարութեան հետ բանակցութեան ընթացքին, փոխարքայի օգնականը արդէն պարզօրէն յայտնած էր թէ կովկասահայերը պէտք է կազմեն կամաւորական զնդեր եւ ատով աջակցին ռուսական բանակին: Երբ մեր ընկերները կը սկսին իրենց նիստերը, բոլորն էլ սա հարցը կու տան՝ թէ մենք իրաւունք ունինք կամաւորական զնդեր կազմելու, քանի որ Ընդհ. ժողովի կամ տաճկահայ ընկերներու կարծիքը չենք առած այս մասին: Տարաբախտաբար մինչեւ այդ րոպէն Ընդհ. ժողովին եւ անոր տուած որոշումներու մասին ոչ մի տեղեկութիւն էր հասած Կովկաս: Կովկասի ընկերները չէին գիտեր թէ Ընդհ. ժողովը լիազօրած է իր կողմէն մի մարմին, որ պատերազմի պարագային պիտի որոշէր մեր դիրքը: տաճկահայ ընկերներ ալ չէին գիտեր թէ այստեղ — Կովկասի մէջ — ինչպիսի միջնուորտ էր ստեղծուած: Վերջին օրերը միայն Հայաստանի բիւրոյէն ստացուած էր մի նամակ, ուր գրուած էր թէ պատերազմի պարագային պէտք է աշխատիլ միայն թուրքիկ խմբեր պահել սահմանի վրայ, որպէսզի ինքնապաշտպանութեան կարօտ վայրերուն օգնութեան հասնին անմիջապէս: Հայաստանի բիւրոյի ընկերները խորհուրդ կու տային դարձեալ, թէ ինչպիսի շարժում ալ ստեղծէք, տուէք անոր համազգային բնաւորութիւն, եւ այս՝ գլխաւոր] երկու պատճառով — նախ, որպէսզի մեր կուսակցութեան արտաքին քաղաքականութիւնը չլինի տարատեսակ, եւ երկրորդ, բարդութիւններու պարագային կուսակցութիւնը չլինի միակ պատասխանատուն: Կովկասի ընկերները միանգամայն համաձայն էին տաճկահայ ընկերներու այս մտքին հետ:

Բիւրոյի ընկերները այնուհետեւ հարց կու տան, թէ ի՞նչ նպատակ պիտի ունենայ մեր կամաւորութիւնը: այս մասին ընկերներու մէջ երկու տեսակ կարծիք կար: Մաս մը ընկերներ կը պնդէին թէ մենք ամէն կերպ պէտք է աշխատինք ռուսական զէնքի յաղթանակին, որովհետեւ ռուս բանակի պարտութիւնը հայ ժողովուրդի բնաջնջումը պիտի բերէր իր հետ: Մնացեալ ընկերներն ալ կը պնդէին թէ մեր մի քանի հազար կամաւորներու օգնութիւնը մի մեծ նշանակութիւն չունի ռուս բանակին համար. մեր կամաւորներու աշխատանքը ուրեմն պիտի ըլլար մտնել անմիջապէս գրաւուած հայկական գաւառները եւ պաշտպանել այնտեղ գտնուած ինքնապաշտպանութեան կարօտ ժողովուրդը: Փոխարքայի օգնականը մեզմէ պահանջած էր 6000 կամաւոր, որոնք պիտի գործէին գլխաւոր վեց կէտերու վրայ — Կաղզուան, Իգտիր, Սալմաստ, Սարիղամիշ, Ուրմիս

եւ Օլթի: Փոխարքան ինքը սակայն մի քիչ փոխեց այս որոշումը, չուզելով կամաւորական շարժման մեծ ծաւալ տալ, որովհետեւ այդ պիտի գրգռէր թուրքերն ու վրացիները մեր դէմ. նա պահանջեց մեզմէ 3000ական կամաւորներէ բաղկացած զնդեր, որոնք իւրաքանչիւրը պիտի գործէր ցոյց տրուած այդ վեց կէտերուն վրայ: Մեր ընկերները մերժելով Ուրմիոյ եւ Օլթիի կողմը զնդեր ունենալը, կ'ընդունին փոխարքայի մնացեալ առաջարկները: Այնուհետեւ կ'որոշուի խմբապետութեան կոչել յայտնի ռազմիկ ուժեր — Անդրանիկը, որու գունդը միայն պիտի բաղկանար 1200-1500 կամաւորներէ եւ որը պիտի գործէր Սալմաստի ուղղութեամբ — Դրօ, Համագասպ եւ Քեռի, որոնք բոլորն ալ անցեալ եւ անուն ունեցող մարտիկ ընկերներ էին: Կ'որոշուի նաեւ մեր ընկերներու կողմէ որ Ազգ. բիւրոն կաթողիկոսին միջոցաւ ներկայացնէ գրաւոր կերպով մեր բարենորոգմանց պահանջագիրը: Գրաւոր փաստաթղթերը՝ բարենորոգմանց պահանջի վերաբերեալ, որոնք փոխանակուած են Ազգ. բիւրոյի եւ կառավարութեան միջեւ, կը գտնուին Ազգ. բիւրոյի արխիւներուն մէջ: Շարժման սկիզբները մեր ընկերներու եւ Ազգ. բիւրոյի պահանջները, ինչպէս կը տեսնուի, եղած են չափազանց համեստ:

Այս բոլորը լինելէ յետոյ, Բիւրոն կ'որոշէ զօրահաւաքի համար ընկերներ դրկել գաւառները — Երեւան, Ալեքսանդրապոլ, Ղարս, Գանձակ եւայլն. պահեստի համար նկատի կ'ունենան Ղարաբաղի շրջանը եւ այլ մասեր: Ամէն կողմէ գունդ-գունդ կամաւորներ կը սկսին գալ Թիֆլիս. ամենակարճ ժամանակի մէջ հազարաւոր կամաւորներ էին արդէն Թիֆլիս: Շարժումը անսպասելիօրէն ստացած էր շատ մեծ ծաւալ: Սկիզբները կառավարութիւնը կամաւորներուն տուած էր մի միայն գէնք եւ 100.000 (հարիւր հազար) ռուբլի բոլորովին գաղտնի, նախնական պէտքերու գործածելու համար (այս տրուած գումարին ալ մանրամասն հաշիւը պահանջած է յետոյ Ա. բիւրոյէն): Կամաւորներու մնացեալ բոլոր ծախսերը — ուտեստ, հագուստ, փոխադրութիւն եւայլն եւայլն — ինկած էին Բիւրոյի վրայ: Միայն երբ կամաւորները կռուի դաշտ ելան, կառավարութիւնը ուտեստի համար իւրաքանչիւր կամաւորի յատկացուց 32 կ[ոպէկ], որու վրայ Բիւրոն 13 կ. ալ աւելցնելով, սնունդի համար ամէն մէկ կամաւորի կը տրուի օրական 45 կ.: Սկզբնական շրջանին բիւրոյի ծախքերը չափազանց շատ էին. նախ որ պահանջուածէն շատ աւելի մեծ չափով եկան կամաւորներ, երկրորդ՝ բազմաթիւ կամաւորներ կու գային գրեթէ մերկ, ոտաբոսիկ, առանց նոյնիսկ թաշկինակ մը եւ մի քանի կոպէկ ունենալու իրենց գրպանը. բարեբախտաբար մի քանի շրջաններ — Ռաստով, Կարս, Ալեքսանդրապոլ — օգնութեան կը հասնին: Ռաստովը, օրինակ, մեզ դրկած է մարզուած խմբեր, պէտքերնին ալ հոգացած, որոնք



իսկոյն կռուի դաշտ ուղարկուած են: Ախլցիտան պարէնաւորուած եւ լաւ մարզուած մի խումբ է զրկած, որը կը միանայ իսկոյն մեր Դ. գնդին:

Երբ շարժումը հետզհետէ կը ծաւալի եւ մեր կամաւորները իրենց քաջութեամբ յայտնի զինուորականներու շնորհատուութեան կ'արժանանան, Ազգ. բիւրոն եւ ընկերները սիրտ առած կը սկսին նոր պահանջներ դնել կառավարութեան առաջ: Այդ ատեն Յարն ալ Կովկաս էր եկած, մերինները կ'ուզէն որ ցարական կառավարութիւնը մեզ համար հանէ մանիֆէստ եւ խոստանայ ինքնավարութիւն: Փոխարքան սակայն խորհուրդը կու տայ մեզ՝ թէ մանիֆէստի մը յայտարարութիւնը կրնայ վնասակար ըլլալ տաճկահայերուն. իսկ ինքնավարութեան պահանջը Ազգ. բիւրոյի որոշմամբ, կաթողիկոսը փոխարքայի միջոցաւ կը ներկայացնէ ցարին: Կաթողիկոսը, երբ ինք ալ կը տեսնուի ցարին հետ, կը կրկնէ ինքնավարութեան նոյն պահանջը, որուն ի պատասխան կը յայտնէ ցարը թէ այդ բոլորը իրագործելի եւ արդար պահանջներ են, մինակ պէտք է սպասել պատերազմի վախճանին:

2.- Յարական այն մանիֆէստը, որ հրատարակուեցաւ մի քանի եւրոպական թերթերու մէջ

Հաւանաբար Ամերիկայի մեր ընկերներն ալ գիտեն թէ եւրոպական մի քանի թերթեր հրատարակեցին եւ կովկասեան հայերուն ուղղուած մի ցարական մանիֆէստ: Պոլսոյ տաճիկ թերթերն ալ այդ մանիֆէստին առթիւ մի քանի յօդուածներ գրեցին, «Ազատամարտ» ալ զբաղեցաւ նոյն հարցով, Վարանդեանն ալ իր մի քանի յօդուածներով յիշած է այդ մանիֆէստը. բայց զարմանալի բան. Կովկասի Արեւելեան բիւրոյի մեր ընկերները կը յայտնեն թէ այդպիսի մանիֆէստ չէ հրատարակուած. գէթ իրենք տեղեկութիւն չունին պաշտօնական այդպիսի յայտարարութենէ մը:

3.- Կամաւորական շարժումը այժմ

Ռուս-թրքական պատերազմը երբ տակաւին իր սկզբնական վիճակին մէջ կը գտնուէր, երբ մեր կամաւորները պէտքը չափազանց զգալի էր ուսական բանակին համար, ուս կառավարութիւնը կը զնահատէր մեր ջանքերը եւ նոյնիսկ խոստումներ կու տար՝ հետզհետէ կամաւորական շարժման ալ մեծ ծաւալ տալ: Շատ երկար չտեւեց եւ ահա կառավարութիւնը փոխեց իր վերաբերմունքը: Իր անբարեացակամութիւնը գէպի կամաւորական շարժումը՝ նա յայտնեց նախ մամուլի միջոցաւ: Հետզհետէ գրաքննութիւնը սեղմեց ամէն ազատութիւն, թոյլ չտալով որ կամաւորական շարժման, կամաւորների կատարած քաջագործութիւնների

մասին գրեն: Իր անբարեացակամութիւնը հետզհետէ այնքան առաջ գնաց, որ նա մի քանի անգամ յայտնեց թէ պէտք է փոխել կամաւորութեան ներկայ ձեւը եւ ստեղծել պաթալիոններ, որոնք պիտի գործեն ուս սպաներու ղեկավարութեան տակ: Ազգային բիւրոն դիմադրեց կառավարութեան, բայց ամէնէն վերջը, երբ կտրական կերպով նոյն առաջարկութիւնը դարձեալ դրաւ Բիւրոյի առաջ, Բիւրոն հարկադրուեցաւ իր գանազան մասնաճիւղերէն ներկայացուցիչներ հրաւիրել, անոնց հետ խորհրդակցելով կառավարութեան պիտի տրուէր վերջնական պատասխան: Նախքան Ազգ. բիւրոյի ժողովը, մեր ընկերները նախապէս իրենք ունեցան ժողովներ, եղած առաջարկութեան մասին լրջօրէն զբաղուելու համար: Այստեղ ըսենք, որ Ազգ. բիւրոն կամաւորական շարժման միայն նիւթական-մատակարարական մասի հոգն էր ստանձնած, եւ երկրորդ՝ նա էր որ կը վարէր արտաքին, պաշտօնական յարաբերութիւնները կառավարութեան հետ, իսկ մնացեալ աշխատանքը, գուտ մարտական-ուսականը կը վարէր Դաշնակցութեան Արեւելեան բիւրոն, որ [Ազգային] բիւրոյի առաջ կը ներկայանար իբրեւ Կարգադրիչ մարմին: Աշխատանքի այս բաժանումը որոշուած էր նախքան կամաւորական շարժումը մեր՝ Դաշնակցութեան բիւրոյի նիստերէն մէկուն մէջ եւ Ազգ. բիւրոն ալ անոր համաձայնած էր: Հարցը բաւական կը զբաղեցնէ թէ մեր ընկերները թէ Ազգ. բիւրոն: Կարելի է ասել որ հետեւեալ ձեւով կարծիքները բաժանուած էին երկու մասի. ընկերներէ մի քանիներ այն կարծիքին էին թէ չպէտք է համաձայնի կառավարութեան կողմէ եղած առաջարկութեան, որովհետեւ նա այսպիսով հետզհետէ կ'ուզէ մեզ ճնշել. լեհերը աւելի շատ դիմադրող են եւ այդ պատճառով կառավարութիւնը հարկադրուած յաճախ գանոնք կը լսէ: Երկրորդ, եթէ թոյլ տանք որ նա ուզածին պէս փոխէ կամաւորութեան ներկայ ձեւը, վստահ պէտք է ըլլանք որ վաղը կամաւորութեան որակն ալ պիտի փոխուի, եւ այս առիթ պիտի ըլլայ որ ուս սպաները աննպաստ մտքեր տարածեն մեր կամաւորներու մասին, վատաբանելով նոյնիսկ մեր կատարած նախորդ աշխատանքը: Կառավարութեան առաջարկութեան դէմ գնալու տրամադիր ընկերները կը յայտնէին նաեւ թէ այս առաջարկութիւնն ալ արդիւնք չէ մի հետեւողական քաղաքականութեան. գուցէ նա արդիւնք է մի քանի provocateur-ներու⁶ կատարած սեւ աշխատանքին. հետեւաբար պէտք է դիմադրել, քաջքը չել, մինչեւ որ տեսնենք թէ ինչ նոր պայմաններ կը ստեղծուին:

Մեծագոյն մասը ընկերներու, սակայն, բոլորովին տարբեր կերպով կը մօտենար հարցին: Անոնք կ'ըսէին.— կառավարութիւնը, ինչպէս կը տեսնենք, ամէն

6.- Գրգռիչներու:



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

կերպ կ'ուզէ յաջողցնել ներկայիս պաթալիոններ ստեղծել. կան արդէն լեհական, լատիշական, վրացական եւայլն, այդ կերպ գնդեր: Կառավարութիւնը կարող է անկախ մեզմէ ալ իրագործել այդպիսի գունդերու կազմութիւնը, քանի որ հետզհետէ տաճկահայերը կը հեռանան բանակէն եւ կը մնան կովկասահայեր. բացի այդ, ռուսական բանակին մէջ կան հարիւր հազարաւոր հայեր, որոնցմէ կարող է կառավարութիւնը իր ուզածին չափ հայկական գնդեր պատրաստել: Երկրորդ, դիմադրութիւնը այժմ անօգուտ է. մեր դիմադրութեան եւ դժգոհութեան գլխաւոր արտայայտիչը պէտք է լինի մամուլը, իսկ մամուլը, մանաւանդ հայ մամուլը բոլորովին կաշկանդուած է: Եթէ կառավարութեան ցանկութեան ընդառաջ չգնանք, հակառակորդ մամուլը չպիտի ուզէ տալ պատճառները մեր արդար եւ իրաւացի դժգոհութեան. մենք ալ չպիտի կարողանանք ինքզինքնիս արդարացնել արտաքին եւ եւրոպական աշխարհին առաջ. չէ՞ որ մեր լեզուն եւ գրիչը կապուած են. հակառակորդներ մեզ պիտի մեղադրեն դարձեալ, թէ հայերը իրենց պարտականութեան կէս ճամբին մեզ լքեցին, դաւաճանեցին: Երրորդ, կամաւորութեան որակը ինչքան էլ փոխուի, դարձեալ անոր մատուցած ծառայութիւնը մեծ կը լինի. ռուսական բանակի յառաջապահներն արդէն հայ գնդերը կը լինին, որոնք անխնայ պիտի ուզեն կոտորել թուրքերն ու քրիւտերը: Թուրքերը միշտ ալ փախած են գրաւուած քաղաքներէն, երբ իմացած են որ հայ կամաւորներ կան բանակին հետ: Մեծամասնութիւնը ընկերներու կ'որոշեն ընդունիլ կառավարութեան առաջարկութիւնը:

Խուզարկու խմբեր.— Խօսք կար որ հայկական բանակներու կողքին կազմուին նաեւ խուզարկու խմբեր, որոնց ղեկավարները պիտի լինէին մեր խմբապետները: Կառավարութիւնը թէեւ առաջ ատոր համաձայն կ'երեւար, բայց վերջը այդ ալ չընդունուեցաւ:

Այժմ մեր բանակները չունին նախկին ձեւը. ամէնէն առաջ փոխուած է Վարդանի բանակը, իսկ միւսներն ալ հետզհետէ պիտի փոխուէին:

4.- Ազգ. բիւրոյի եւ կաթողիկոսի յարաբերութիւնը

Գաղութներու հայերը մասնաւորապէս զբաղուած են այս հարցով: Պէտք է ասել որ Բիւրոն կը վայելէ կաթողիկոսի հովանաւորութիւնը:

1) Առաջին անգամ երբ պալքանեան պատերազմէն յետոյ հայկական հարցը ստացած էր սուր բնաւորութիւն, կաթողիկոսը առանձին կոնդակով մը հրահանգած էր Մեսրոպ եպիսկոպոսին, որ կազմէ Ազգ. բիւրօ մը՝ զանազան ազգ[ային] հաստատութիւններու ներկայացուցիչներէն: Այդպէս ալ եղած է: Կաթողիկոսի այդ կոնդակը կը գտնուի այժմ Մեսրոպ եպ[ո]սին մօտ:

2) Մինչեւ այժմ նոր բիւրոներու ընտրութեան եւ վերակազմութեան համար 3 անգամ համագումար ժողովներ տեղի ունեցած են եւ կաթողիկոսը շարունակ ունեցած է իր ներկայացուցիչները այդ համագումարներուն:

3) Ազգ. բիւրոյի ամէն կարեւոր որոշում եւ հաշուետուութիւն վաւերացուած են կաթողիկոսին:

4) Կառավարութեան առաջ Ազգ. բիւրոյի ներկայացուցիչը եղած է շարունակ կաթողիկոսը:

5) Կաթողիկոսը միշտ օրհնած է կամաւորական գնդերը, յաճախ անոնց հետ նկարուած:

Ասոնք ահա արտաքին նշաններն են, որոնք ցոյց կուտան թէ Բիւրոն միշտ ալ հովաւորուած է կաթողիկոսին: Ներքնապէս սակայն բիւրոյի եւ կաթողիկոսի, մանաւանդ մեր եւ կաթողիկոսի յարաբերութիւնները եղած են շատ սառը: Կաթողիկոսը լինելով ինքնուրոյնութենէ զուրկ մարդ, յաճախ կը լսէ զանազան մարդկանց, մանաւանդ մեր հակառակորդներուն. այդ էր պատճառը որ մի անգամ պ. Խունուսեց, Ազգ. բիւրոյի փոխ-նախագահը, կաթողիկոսին երթալով կտրական կերպով յայտնած է — կամ մեզ հետ եւ կամ մեզ դէմ, ընտրէ՛ մէկն ու մէկը: Կաթ[ողիկոս]ը յայտնած է, որ ես շարունակ ձեզ հետ եմ, միայն թէ պէտք է զիս ալ լսէք մի քիչ:

Վերջերս մերոնք չափազանց զրգուած էին կաթողիկոսի դէմ: Հարուստ Երզրայաշեանի մը զաւակին մահուան առթիւ կաթողիկոսը ցաւակցական հեռագիրներ կու տայ անոր պարագաներուն, հոգեհանգիստ կատարել կու տայ, մինչդեռ Քեռիի մահուան առթիւ գրեթէ ոչինչ է ըրած: Յաւով դիտել տուած են այդ իրեն, բայց նա աշխատած է ինքզինքը արդարացնել ըսելով թէ ես անմիջապէս Սալմաստի եպ[իսկոպոս]ին եմ հեռագրած:

Բիւրոյի հաշիւները.— 1914էն մինչեւ 1916 Յունուար 1ի հաշիւներուն տախտակը միայն տեսայ ես: Դժբախտաբար չկարողացայ ես հետս բերել այդ հաշիւներու մէկ օրինակը, որովհետեւ ճանապարհին շատ խիստ խուզարկութիւններ կ'ըլլային: Բիւրոն սակայն մինչեւ այդ ատեն մուտք ունեցած է մօտ 1.470.000 ռուբլի. իր բոլոր ծախսերը անելէն յետոյ, այժմ իր մօտ կը գտնուի մօտաւորապէս 290.000 ռուբլի: Այս թիւերը ես կը նշանակեմ այստեղ մօտաւոր հաշուով:

Ընկերներ ինձ յայտնեցին որ այնքան ալ ճիշդ չէր Ազգ. բիւրոյի եւ մեր կուսակցական եկամուտներու հաշիւները իրար խառնել. գոնէ այսուհետեւ պէտք է այդ հաշիւները իրարմէ զատել: Յայտնեցին նաեւ որ Ազգ. բիւրոյի անունով հաւաքուած գումարը առայժմ թող մնայ Ամերիկա՝ Կեդրոնականի [կոմիտէի] մօտ, որովհետեւ այժմ Բիւրոն դրամի կարիք չունի եւ գուցէ նա, ո՛վ գիտէ, մօտ ժամանակին իր հաշիւներն ալ լիկիւրդացիայի ենթարկէ:



5.- Կազմակերպական ներքին կեանքը Կովկասի մէջ

Մեր կազմակերպական ներքին կեանքը հեռի է նախանձեղի ըլլալէ Կովկասի մէջ: Ամէնէն աւելի ծանօթ եմ Բագուի Կ. կոմիտէութեան շրջանին, ուր մնացած եմ բաւական ժամանակ իբրեւ ազատ ընկեր: Միակ կազմակերպական աշխատանքս այդ շրջանին մէջ պրոպագանդան էր: Ստեղծուեցաւ այդտեղ պրոպագանդայի դպրոց ալ, որը շարունակուեցաւ մի ամբողջ սէզոն: Կատարուած աշխատանքը սակայն չտուաւ ցանկալի արդիւնք: Այդտեղ Դաշնակցութիւնը աւելի շատ կուլտուրական, առեւտրական կազմակերպութիւն մըն է, քան յեղափոխական: Խումբերը կը վճարեն, երբ կանոնաւոր կերպով պրոպագանդիստներ կ'երեւան իրենց մօտ: Տարաբախտաբար այնտեղ ալ դաշնակցական մասսան չունի պահանջուած չափով կուսակցական գիտակցութիւն: Հիմնական գործը երեսի վրայ է թողուած: Զինավարժական խումբերն ալ մնայուն չեն: Թիֆլիսի մէջ մեր կազմակերպութիւնն ալ հեռու է նախանձեղի ըլլալէ. ալ չեմ խօսիր ես Երեւանի, Ալեքսանդրապոլի եւայլնի մասին, ուր չափազանց քայքայուած դրութեան մէջ ենք հասած, եթէ իրօք ճիշդ են իմ ստացած տեղեկութիւններս: Պէտք է ասել սակայն, որ սա անցողական շրջան է. ընկերներու բովանդակ աշխատանքը այլ ուղղութեամբ է որ կը վատնուի, եւ եթէ վաղը մեր ընկերները մի քիչ ինքնամփոփուին եւ գործի լծուին, Դաշնակցութիւնը դարձեալ կը ստանայ իր հին ոյժը:

6.- Մեր արտաքին քաղաքականութիւնը եւ մեր դիրքը այսուհետեւ ռուս կառավարութեան հանդէպ. ներքին եւ արտաքին ձեռնարկներ

Մեր քաղաքականութիւնը եւ մեր դիրքը ռուս կառավարութեան հանդէպ կը մնայ նոյնը: Մեր ազգային շահերը մեզ թելադրած են մօտենալ ռուս կառավարութեան եւ դաշնակիցներուն: Մենք աջակցեցանք անոնց գէնքի յաղթանակին. այսուհետեւ ալ մենք մեր համակրանքով թեքուած կ'ըլլանք դէպի այդ կողմը, որչափ ատեն որ անոնց վերաբերմունքը չէ փոխուած մեզի հանդէպ: Ըիշդ է, մի շարք քաղաքական հոսանքներ շատ են դժգոհ որ մենք համակրանքով կը վերաբերուինք դէպի ռուս կառավարութիւնը եւ կ'աջակցինք անոնց գէնքի յաղթանակին, բայց մենք չենք լսեր գանոնք, որովհետեւ մեր քաղաքականութիւնը արդիւնք է մեր ազգ[ային] շահերուն, զոր պարտաւոր ենք հետապնդել ամէն գնով:

Ներքին ձեռնարկներ գրեթէ չկան: Երկրի հիմնական վերաշինութեան գործը դեռ շատ է վաղաժամ: Գրաւուած վայրերուն մէջ չունինք դեռ հոծ բնակչութիւն:

Այսքան դժբախտութիւններէ յետոյ, ժողովուրդի համակրանքը նորէն Դաշնակցութեան կողմն է: Նոր-նոր ջանքեր կ'ըլլան կազմակերպութիւն ստեղծելու, դպրոց բանալու, դրամատուներ հաստատելու գրաւուած վայրերուն մէջ: Մօտ ժամանակէն կը մեկնին երկու ընկերներ – Ահարոնեան եւ Վարանդեան – դէպի Եւրոպա: Վարանդեանը շուտով կը մեկնի: Ընկեր Վարանդեան ինձ յայտնեց վերջին պահուն, թէ Եւրոպայի իր ճամբորդութեան ծախքը – ամսական 150 տոլար – պէտք է հոգայ Ամերիկայի Կեդրոնականը: Ընկերը խոստացաւ Եւրոպա անցնելէ յետոյ մնայուն կերպով աշխատակցիլ «Հայրենիք»ին եւ օրը օրին հայկական հարցի շուրջ կատարուածներէն իրագեկ պահել այստեղի ընկերները: Վարանդեան յայտնեց ինձ նաեւ թէ Ամերիկայի ընկերները արդեօք չեն կրնար այստեղի մեր բարեկամներուն միջոցաւ դիմում կատարել Գառնեկի, Րոքֆելլըրի⁷ եւայլն, անոնցմէ կարելոր գումարներ ստանալու համար:

7.- Չանագան թիւրիմացութիւններ կամաւորական խմբերի եւ գաղթականական հարցերի շուրջ

Պէտք է ասել որ պատահած են ցաւալի դէպքեր: Եղած են գեղծարար պաշտօնեաներ եւ ընկերներ, որոնք անմիջապէս պաշտօնանկուած եւ խայտառակուած են: Բայց յաճախ գուր տեղը մեղադրուած են նաեւ մի շարք ընկերներ ալ, ինչպէս Սամսոն, Սիրաք⁸ եւայլն. իսկոյն այսպիսիներու նկատմամբ կատարուած է քննութիւն եւ ճշմարտութիւնը երեւան հանուած: Կատարուած բոլոր բացասական երեւոյթներու պատասխանատուն չէ կարելի համարել Դաշնակցութիւնը:

8.- Ամերիկայէն գնացած գէնքերու հարցը

Բաւական քաջքընուած է նաեւ այս հարցը, մանաւանդ Ամերիկայէն Կովկաս գնացած կամաւորներու կողմէ: Ահա թէ ի՞նչ կը պատմեն այս մասին մեր ընկերները: Ամերիկայէն գէնքեր բերել տալու հարցը կապուած էր մեր ներքին վերակազմութեան եւ նոր բանակներ կամ պահեստի գինուորներ ունենալու հարցին հետ: Ընկերներու կողմէ դիմում կ'ըլլայ փոխարքային որ կամաւորական մի բանակ եւս կազմուի: Փոխարքան կը յայտնէ որ գէնք չկայ, հետեւաբար հնարաւոր չէ նոր բանակ կազմել:

Մերոնք կը յայտնեն որ իրենք կ'աշխատին հայթայ-

7.- Ամերիկացի հանրաժանօք գործարար բարերարներ:
8.- Խօսքը կը վերաբերի հաւանաբար Ստեփան Թադէոսեանի (Սամսոն) եւ Սիրական Տիգրանեանի:

Թել գէնքը: Փոխարքան կը համաձայնի: Անմիջապէս մեր ընկերներէն մէկը — Քաջագնունին — կը զրկուի Փեթրոկրատ, որպէսզի ճափոնական գէնքի Ֆիրմաներուն հետ յարաբերութեան մտնէ եւ անհրաժեշտ գէնքը հայթայթէ: միաժամանակ կը գրուի Ամերիկայի Կ. Կ[ոմիտէ]ին: Քաջագնունու աշխատանքները արդիւնք չեն տար, որովհետեւ համապատասխան բոլոր Ֆիրմաները պայմանաւորուած են եղեր ռուս կառավարութեան հետ եւ հետեւաբար արգիլուած է եղեր ուրիշներու գէնք տալ: Ընկերը կը դիմէ ուրիշ միջոցներու ալ, բայց անյաջող, կը վերադառնայ ձեռնունայն: Երբ կը հասնին Ամերիկայի գէնքերը, արդէն փոխուած էր փոխարքան: Նիկոլա Նիկոլայեւիչը կ'ուզէր չըջել իր նախորդին շատ մը կարգադրութիւնները. նա չուզէր Ամերիկայէն եկած գէնքերը մեզի յանձնել, մանաւանդ որ անոնց մէջ կային նաեւ ոչ-պատերազմական գէնքեր ալ: Փոխարժէքը, շատ չնչին գումար մը, կառավարութիւնը կ'ուզէ յանձնել Ազգ. բիւրոյին, բայց բիւրոն չի գիշանիր այդ չնչին գումարը վերցնել: Այստեղ ալ վրացիները մամուլի միջոցաւ շատ սեւ դեր կատարեցին:

9.- Գործիչներու հարցը

Բացի ինձմէ, Մ[արտիրոսեան] Յ[արութիւնն] ալ յանձն էր առած գալ, բայց երեւի ընկերը չպիտի կարողանայ ռուսական սահմաններէն դուրս գալ, քանի որ Դաշնակցութեան գործով ժամանակին ամբաստանուած ըլլալով, չ'ուզէր այժմ տարբեր անունով անցնիլ սահմանէն:

Որոշուած էր որ Արգումանն⁹ ալ զրկուէր այս կողմը, բայց դժբախտաբար նա ալ փակուած կը մնայ Սոփիայի մէջ: Կովկասի ընկերները երեւի առայժմ չեն կարող նոր ընկերներ զրկել այստեղ:

10.- Փեթրոկրատի գաղթականական համագումարը

Կովկասեան մամուլը բաւական բան գրեց համագումարի առթիւ: Մեր ընկերներէն ոմանք կը մտածէին նախապէս որեւէ կերպով չմասնակցիլ համագումարին. վերջը սակայն պոյքթի կողմնակից ընկերներն անգամ յետ կեցան այդ մտքէն, բացի մի քանիներէ, որոնք շարունակ անհաշտ մնացին դէպի համագումարը: Նախապէս, թէ՛ Բագուի եւ թէ՛ Թիֆլիսի մեր ընկերները որոշեցին որ՝ եթէ այդ համագումարը, բացի գաղթականական գործերէ, ուզէ միջամտել նաեւ քաղաքական ինքիւններու եւ ուզէ այդպիսի հարցեր ալ դնել սեղանի վրայ, իրենք անմիջապէս պիտի հրաժարէին եւ աշխատանքը կէս թողած պիտի մեկնէին. այդ քայլը պէտք էր առնէին, որովհետեւ — համաձայն հրապարակային յայտարարութիւններու, այդ համագումարը պիտի մնար լոկ գաղթականական գործերու սահմանին մէջ:

Համագումարի գլխաւոր նախաձեռնողն էր Մամիկոնեանը, որուն գլխաւոր նպատակն էր գաղթականներու անունով կազմուած համագումարներուն հետգհետէ տալ այնպիսի բնաւորութիւն, որ նա կատարէր քաղաքական գործ եւ աշխատանք ապագային. այսպիսով Մամիկոնեանը եւ իւրայինները կ'ուզէին մի մեծ խաչ դնել Ազգ. բիւրոյի վրայ: Այլապէս ինչո՞վ բացատրել երբ համագումարի նախաձեռնողները Փեթրոկրատ կը հրաւիրէին ներկայացուցիչները այնպիսի մարմիններու — ուսուցչական, գրասէրների, կուլտուրական, հրատարակչական եւայլն միաւորներու, որոնք ոչ մի մասնակցութիւն չէին բերած դէպի գաղթականական գործը:

Համագումարին շատեր չեն մասնակցած: Ընդհ. մասնակցողներու թիւը հազիւ 150-ի կը հասնի: Դաշնակցական բազմաթիւ ընկերներ ալ, որոնք համագումարին համար էին ընտուած, չգացին: Համագումարի տեւողութիւնը եղած է 4 օր եւ սեկցիական աշխատանքներ տարուած են բաւական կանոնաւոր (ես այս մասին չեմ տար մանրամասնութիւններ, որովհետեւ թերթերը արդէն բաւական գրեցին): Որոշուած է որ յաջորդ համագումարը տեղի ունենայ Կովկասի մէջ — Թիֆլիս, Երեւան կամ Էջմիածին: Ընտրուած է նաեւ կեդրոնական մարմին մը, որը տակաւին մինչեւ այժմ աշխատանքի չէ սկսած:

Արգումանը.— Մայրաքաղաքի մամուլը բաւական գրեց համագումարին եւ անոր կատարած աշխատանքներուն մասին, թէեւ մեր շատ մը ընկերներ կը գտնէին որ ռուսական մամուլը շատ անբաւարար չափով է զբաղուած մեզմով եւ այդ՝ արդիւնք համագումարը լաւ կազմակերպուած չըլլալուն: Կը յուսացուի որ կառավարութիւնը այսուհետեւ աւելի մեծ չափով նպաստէ թշուառ գաղթականներուն: Համագումարը սակայն չհասաւ իր գլխ[աւոր] նպատակին. նախ որ՝ մենք այդտեղ ռուս կառավարութեան չհասկցուցինք թէ ինչ զարհուրելի վնասի է որ ենթարկուում ենք. չհասկցուցինք նաեւ թէ որքան ապերախտ է այժմ մեզի հանդէպ կառավարութիւնը: Բացի այդ, համագումարը ցանկալի համերաշխութիւն ալ չստեղծեց:

Համագումարէն յետոյ մի շարք հասարակական գործիչներ եւ դաշնակցական ընկերներ, միասին հաւաքուած, կ'ունենան բաւական երկար գրոյց: Ներկայ կը լինին այդտեղ պետ[ական] Դոմայի անդամներ.— Մ. Պապաջանեան եւ Աճեմեան: Խօսք կ'ըլլայ համերաշխ գործակցութեան մասին. այդտեղ կը յայտնուի որ բոլորն ալ կողմնակից են հայկական ինքնավարութեան: Աճեմեան կը թելադրէ իր պաշտօնակցին որ այսուհետ

9.- Արգուման — ծածկանուն Խաչիկեան Տիգրանի, որ նկատի առնուած է էր իբր կուսակցական գործիչ Ամերիկա Իրախիելու:

տեւ այդ ուղղութեամբ խօսի պետ. Դոմայի ամպլոնէն: Պապաճանեան սակայն առ այժմ անպատեհ կը համարէ այս հարցի մասին խօսիլ հրապարակաւ:

11.- Ընկերներու ընտանիքներուն համար զրկուած 1000 (հազար) տոլարը

Մեր վեթերան ընկերներու ընտանիքներուն համար զրկուած այս գումարը ստացուած է եւ բաժանուած արդէն: Նպաստներ ընդունած են տիկին Զարդարեան (ունի 4 զաւակ), Տիկին Պերճուհի Բարսեղեան, Տիկին Վարդգէս, Իշխանի ընտանիքը, Տիկին Խաթակ, տիկին փրոֆ. Խաչատրեան եւ տակաւին ուրիշներ: Ընկերները խնդրեցին որ եթէ հնարաւոր է շարունակեն այդ ֆոնդը, որովհետեւ ընկերներու ընտանիքներուն ամբողջ հոգը ծանրացած է մեր վրայ:

12.- Մի քանի խօսք ալ Պալքաններու մասին

Անցեալ տարի Յուլիսին ես արդէն այնտեղ էի: Իմ այնտեղ հասած օրը մեկնեցաւ նաեւ ընկերուհի Սաթեւնիկ Օհանջանեանը դէպի Թիֆլիս: Շնորհիւ այն հանգամանքի, որ Պալքանի շրջանն ալ ամբողջապէս կտրուած էր Կովկասէն, Պալքանի Կ. կ[ոմիտէ]ն յաճախ բիւրոյական աշխատանքներ կը կատարէր, որովհետեւ, ինչ արած, այդպէս էին դասաւորուած պայմանները: Երկրի դժբախտ վիճակը կլանած էր մեր ընկերներու ամբողջ աշխատանքը: Այդ շրջանի մեր ընկերներու կատարած աշխատանքը կարելի է ստորաբաժանել հետեւեալ կերպով. 1- Թերթի եւ թռուցիկներու հրատարակութիւն. 2- Պոլիս մնացած ընկերներու հետ յարաբերութիւն. 3- Յարաբերութիւն պուլկար կառավարութեան, յեղ[ափոխական] եւ սոցիալիստ[ական] կուսակցութիւններու հետ. 4- Հանգանակութիւն. 5- Ներքին կուսակցական աշխատանք:

1- «Ազատամարտ»ի դադրելէն յետոյ, Սոֆիայի մէջ սկսած է հրատարակուիլ «Հայաստան»ը: Թերթի ուղղութիւնը որպէսզի լինի աւելի կանոնաւոր, Պոլսէն զրկուած է մեր ընկեր Լիպարիտը¹⁰, որ թերթին պատասխանատու խմբագրի պաշտօնը ստանձնած է: Թերթը շարունակուեցաւ մինչեւ բուլղարական պատերազմի սկզբնաւորութիւնը: Ձանազան առիթներով այնտեղի մեր մարմինը հրատարակած է նաեւ թռուցիկներ եւ կոչեր: Չմոռանամ ասել որ թերթի հիմնադիրն էր յայտնի մակեդոնացի յեղափոխական Տիմիթրի Լեպպով, իսկ արտօնատէրն էր բուլղարական բարլամենտի ծանօթ դէմքերէն մեր բարեկամ Գրիգոր Վասիլեւը: Այնտեղ մենք յաճախ վայելած ենք մեր բուլղար եւ մակեդոնացի բարեկամներու բարոյական աջակցութիւնը:

2- Պոլսի մէջ երբ մեր ընկերները կը ձեռքաւարտուին, այնտեղ մնացածները թէեւ ծածկուած, բայց կազմած էին ժամանակաւոր Կ. կոմիտէութիւն մը, որը կանոնաւոր յարաբերութեան մէջ մտած էր Պալքանի մարմնին հետ: Մի քանի անգամներ Պոլիս եւ Այազ զրկուած են բաւական կարեւոր գումարներ. այդ զրկուած դրամներէն հաւասարապէս օգտուած են ոչ միայն հնչակեան ձեռքաւարտ ընկերներ, այլեւ չէզոք ծանօթ գործիչներու — Զօհրապի եւայլն — ընտանիքները: Պոլսի ընկերները յաճախ դիմած են Պալքանի, յայտնելով որ իրենք կ'ուզեն փոխվրէժի սկսիլ. աղէտը կը ծանրանար իրենց գլխուն ալ, եւ Պոլսի մեր ընկերներ կ'ուզէին անպայման մի ցոյց կազմակերպել: Պալքանը ազատ թողուց իր Պոլսի ընկերները ընել այնպէս՝ ինչպէս պայմաններն ու հանգամանքները կը թոյլատրեն իրենց գործել:

3- Բուլղար կառավարութեան հետ մեր յարաբերութիւնը արտաքինապէս շատ լաւ էր: Յարաբերութիւն պահողը գլխաւորաբար մեր ընկեր Լիպարիտն էր: Ռատոսլավօֆը¹¹ յայտնեց մեզ մի անգամ թէ՛ եթէ բուլղարական մի քանի գլխ[աւոր] քաղաքներու հայ գաղութները միջամտութեան խնդրանքով մեզի դիմեն, մենք կը միջամտենք թրքական կառավարութեան, խնդրելով որ նա դադրեցնէ հայերի հանդէպ իր ցոյց տուած հալածանքները: Սոֆիա, Վառնա, Ռուսճուք, Ֆիլիպպէ, Շումլա միթիւններ կազմեցին եւ դիմեցին վարչապետին, բայց դժբախտաբար այս բոլորը մեզ չտուին մի բաւարար դիմում:

4- Եղաւ երկրորդ փորձ մը, աւելի ուժեղ: Բազմաթիւ քաղաքներ, որոնց մէջ նաեւ ուղմանական եւ յունական քաղաքներ, մի օր աշխատանքէ դադրելով, ընդհանուր սուգի օր յայտարարեցին. եղան միթիւններ, հրատարակուեցան ֆրանս[երէն] եւ բուլղարերէն կոչեր (վերջինը աւելի ընդարձակ. դժբախտաբար կառավարութիւնը թոյլ չտուաւ ցրուելու). այնուհետեւ հեռագրերով դիմուեցաւ դարձեալ Ռատոսլավօֆի կառավարութեան: Միջամտութիւն եղաւ, բայց շատ թոյլ:

Բուլղար սոցիալիստական եւ յեղափոխական կազմակերպութիւնները շատ հարեւանցի գաղափար մը ունէին մեր կրած տառապանքներու մասին: Այնտեղի Կ. կ[ոմիտէ]ի նախաձեռնութեամբ կազմուեցաւ մի ժողով, ուր իրենց ներկայացուցիչները զրկած էին գրեթէ բոլոր յեղ. եւ սոց. կուսակցութիւնները. այդտեղ էին նաեւ բուլղար մամուլի ներկայացուցիչներ: Այդ ժողովի մէջ մեր ընկերները կը խօսին թիւերով. ցոյց կու տան թէ մօտ 800.000 հայեր կոտորուած են: Բուլղարները կը

10.- Նազարեանց Լիպարիտ (1874-1947):
11.- Վասիլ Շատիսլավօֆ, Պուլկարիոյ վարչապետ:



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

մնան ապշած. իրենք կը խոստանան, անկախ Դաշնակցութենէն, դիմել կառավարութեան եւ անոր միջամտութիւնը պահանջել հայերու մասին: Բուլղար կառավարութիւնը սակայն ծախուած էր եւ այս բոլոր չտուին բաղձացուած արդիւնքը:

Մենք ուզեցինք նաեւ, մեր ձեռք անցած փաստերու եւ տեղեկագրերու հայթայթած թիւերուն վրայ կը լսենք, գոնէ մի քանի շրջաններու մէջ տաճկահայերու կրած կորուստները ստուգելու փորձ մը ընել, հրատարակելով գանազան լեզուներով պրոչիւրներ, բայց այդ գեղեցիկ ձեռնարկն ալ վիժեցաւ, որովհետեւ շուտ վրայ հասաւ պատերազմը:

Մեր ջանքերով էր որ Տոքթ. Լեպսիուսը Պերլինէն անցաւ Պոլիս, ուր տեսակցեցաւ Էնվերի, Թալէաթի, մի քանի տեղական անձնաւորութիւններու, հայոց պատրիարքին եւ մէկ երկու ծերակուտական հայերու հետ: Լեպսիուսի ջանքերն ալ արդիւնք մը չտուին մեզի: Էնվեր եւ Թալէաթ կը յայտնեն Լեպսիուսին թէ՛ եթէ հայերը չփորձեն Պոլսի մէջ որեւէ ցոյց կազմակերպել, Պոլիսն ու գաւառները կը մնան ազատ: Լեպսիուս աճնուհետեւ կու գայ Սոֆիա, ուր կը մնայ մօտ երկու շաբաթ. կը տեսնուի Յարին եւ վարչապետին հետ. կ'առնէ բազմաթիւ նոթեր մեր կատարած թղթակցութիւններէն եւ ստացած ծանօթութիւններէն, եւ աճնուհետեւ կը մեկնի Շուէցարիա, խոստանալով Միջագետքի հայերուն օգնութեան գործը կազմակերպել Կարմիր խաչի միջազգային կեդրոնական կոմիտէի միջոցաւ: Եւ իրօք, Լեպսիուս այդ ուղղութեամբ բաւական աշխատանք կը կատարէ. կու տայ նաեւ մի շարք դասախօսութիւններ Պերլինի մէջ, պատկերացնելով հայկական դժբախտութիւնները եւ [այս] բոլորին մեղսակից համարելով գերման կառավարութիւնը: Գերմանիոյ մէջ մեր հակառակորդները կը պատասխանեն Լեպսիուսին: Հայկական սարսափներու հարցը նորէն բեմ կը հանուի եւ այս անգամ անաչառ մարդիկ կու գան բարձրաձայն յայտարարելու թէ Լեպսիուսը միանգամայն իրաւացի է:

5- Հանգանակութիւն եղած է նաեւ Բալքաններու մէջ ալ, բայց առաւելապէս նոր Բուլղարիոյ մէջ. մնացած շրջաններուն մէջ տակաւին չէինք սկսած հանգանակութեան:

6- Կուսակցական կեանքը այնտեղ: Ունինք շատ քաղաքներու մէջ կազմակերպուած կոմիտէներ եւ ենթակոմիտէներ, որոնք հետզհետէ նորանոր ընկերներ կ'առնէին իրենց շարքերուն մէջ: Դժբախտաբար բուլղարական պատերազմը վրայ հասնելով, մեր կազմակերպութիւնը այնտեղ ալ անդամալուծութեան դատարտուեցաւ:

Այժմ մեր ընկերներէն Լիպարիտը կը գտնուի Պուլքարեստ. Արզումանը նախ բանտարկուած է եւ յետոյ ալ դատապարտուած է Սոֆիայէն դուրս չգալ երբեք, իսկ մնացեալ ընկերներն ալ ցրուած են հոս-հոն:

Մի քանի ուսու հիւպատոսներ, դեսպանական կցորդ եւայլն կը կասկածէին մեր մի քանի ընկերներուն վրայ, մանաւանդ որ Լիպարիտն ալ Գերմանիա էր գացած մի քանի անգամ: Այդ կասկածներու պատճառաւ թոյլ չտրուեցաւ նաեւ մեզ որ կամաւորներ ղրկենք ազատօրէն դէպի Կովկաս: Այս բոլոր կասկածները ցրուելու համար Պալքանի Կ. Կ[ոմիտ]էն, մի ընդարձակ գրութեամբ, դիմեց ուսական դեսպան Սաւինսկիին: Ղրկուած այս գրութիւնը եւ յետոյ անոր հետ կատարուած տեսակցութիւնը տուած են բաւական լաւ արդիւնք:

13.- Վերջին այս շարժումներու ընթացքին, արդեօք չգործեցինք մենք ալ հիմնական սխալներ

Այս հարցը տուի ես մեր ընկերներուն: Անոնք ինձ յայտնեցին թէ մենք ալ ուրիշներու պէս չնախատեսեցինք թէ պատերազմը կրնայ այսքան երկար տեւել: Ինձ կը թուի սակայն, որ մենք ունեցած ենք եւ ուրիշ սխալներ. սխալներ գորս կարող էինք չգործել: Այսպէս, Արմէն Գարոն, որ երէկ թուրքական բարլամենտի անդամ էր եւ կը պաշտպանէր բեմերու վրայէն օսմ. շահերը, յանկարծ երբ Կովկաս է անցած, կամաւորական շարժման գլուխը անցած է մի քիչ աղմկալից ցոյցերով, նկարուած է կամաւորներու հետ եւ այդ նկարները իսկոյն գնացած են Պոլիս: Այդ շարժումը եղած է այնքան աղմկալից, որ Խոյի տաճկ. հիւպատոսը իսկոյն հեռագրած է թէ Անդրանիկը 20.000 կամաւորներու գլուխ անցած կ'անցնի տաճկական սահմանը: Ընկեր Վարանդեանն ալ թէ «Դրօշակ»ի եւ թէ "Journal de Genève"ի մէջ նոյնպիսի ուղղութեամբ մըն է արտայայտուած, ուր բաց է բաց կ'երեւայ մեր մասնակցութիւնը այս շարժման մէջ: Մեր Ընդհ. ժողովին կողմէ իթթիհատի ներկայացուցիչներուն տրուած պատասխանն ալ եղած է բաւական չոր: Մենք կազմակերպելու էինք կամաւորական խմբեր Տաճկահայաստանի մէջ եւ դնելու կառավարութեան տրամադրութեան տակ:

14.- Կովկասի ընկերները յայտնեցին թէ ընկեր Ս. Վրացեանի կողմէ գրուած նամակները պէտք է ընդունիլ իբրեւ մեր նամակները եւ մեր տեսակէտները:

ՄԻՐԻՋԱՆ ՕԶԱՆԵԱՆ

Պոսթըն
25 Օգոստ. 1916



Փաստ. 1404ա-12

Ք 4.– ԳՈՐԾԻՉ ԱՐՄԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտէին!

Միրելի ընկերներ!

916 թուի ընթացքում ստանձնելով գործչի պաշտօնը, ես այն խորունկ համոզումն ունէի որ՝ Կամաւորական շարժման լուծումից յետոյ, հիասթափութիւն պիտի տիրէր եւ որ վերադարձող դասալիքներն իրենց միջին եւ յիւրիւրած[ոյ] պատմութիւններով պիտի աշխատէին թուլացնել ստեղծուած տրամադրութիւնը:

Ամբողջ տարուայ ընթացքով չնայած նոր կամաւորական խմբերի կազմութեան, խանդավառութեան նոր ալիքի բարձրացման, բայց եւ այնպէս ընդհանուր լքումը մնում էր նոյնը: Հարուածներն իրար յետեւից էին իջնում հայ ժողովրդի գլխին, որոնք եւ անդրադառնում են կուսակցական, կազմակերպական աշխատանքի վրայ:

Մի կողմից ռուս կառավարութեան բացասական դիրքը հայկական հարցի հանդէպ, միւս կողմից՝ էրզրուումի եւ գրաւուած վայրերի թիւրքերի տներն մէջ գտնուած հայ երեխաների եւ կանանց չատազուելը, երրորդ՝ կամաւորութեան հանդէպ ցոյց տուած չարակամ վերաբերմունքը, ապա հայկական իրականութեան մէջ բացասական տիպերի կատարած սեւ դերը, եւ այն, որ երկու տարուց աւելի հայ ժողովրդի բախտը ղեկավարող քաղաքական կուսակցութիւններն ու հիմնարկութիւնները մնացել են անտարբեր դէպի ընդհանուր համագործակցութիւնը — ազդել են ժողովրդի եւ կուսակցական շարքերի վրայ ու առաջ բերել յուսալքում:

Բացի այդ վերոյիշեալներէ՝ պատերազմի երկարումը, դաշնակից պետութիւնների իրար յետեւից պարտութիւնը, Թուրքիայի դիմադրութիւններն ու դիմացկունութիւնը եւ այդ բոլորի պատճառով մեր տառապանքի շարունակականութիւնն ու Միջագետքի հայութեան վիճակի անորոշութիւնը՝ առաջ են բերել յուսահատութիւն եւ յուսաբեկում:

Շեշտենք նաեւ այն հանգամանքը, որ երկու տարուց աւելի լինելով, հայութիւնը կտրուած է հայրենիքից եւ օթանդակութեան համար հնարաւորութիւն չունի դրամ փոխադրելու եւ որ գործերը լաւ լինելով՝ առատ դրամ են ունենում՝ ժողովրդի մէջ սկսուել է եւ աստիճանաբար զարգանալու վրայ է բարոյալքումը:

Զուտ ներքին կազմակերպական կեանքում, երբ երկու տարուայ ընթացքում մենք կուսակցական գործունէութիւնը մի կողմ նետած՝ չենք զբաղուել յեղափոխա-

կան, զաղափարական դաստիարակութեամբ, հաւաքուել են բազմաթիւ առկախ մնացած հարցեր, անհատական բնոյթ կրող խնդիրներ, որոնցով այժմ զբաղուում են եւ որ մեծ հարուած է իջեցնում մեր շարքերին ու անկարգապահութիւն մտցնում: Չպիտի մոռանանք եւ այն հանգամանքը, որ խանդավառութեան այս օրերին մեր շարքերէն ներս բաւական թուով մարդիկ, գլխաւորապէս նոր ոյժեր, որոնք կուսակցական դիպցիւլինին անծանօթ լինելով՝ առաջ բերին բարդութիւններ եւ կնճռոտ հարցեր:

Եւ այսպէս հայ ժողովրդի քաղաքական յուսաբեկումը, հասարակական կեանքում՝ յուսալքումը, բարոյալքումը եւ կազմակերպական շարքերում՝ յեղափոխական դաստիարակութեան պակասութեան ու նոր բազմաթիւ ընկերների անխտիր ընդունելութիւնն ստեղծել են մի բարդ եւ դժուարին դրութիւն, որ պահանջում է անմիջական եւ արմատական բարեկարգութիւն:

Եթէ այս բոլորի վրայ աւելացնենք նաեւ այն, որ երկու տարուայ ընթացքում մեր մարմինները՝ ամենասակաւաթիւ կոմիտէից մինչեւ բազմամղամբ, կոմիտէից մինչեւ Շրջ. խորհուրդն ու աւելի բարձր մարմին, գուցէ իրական պայմաններից դրդուած զանց են առել կանոնադրութիւնն ու իր կէտերի տրամադրութիւնը եւ շատ խնդիրներ աշխատել են լուծել հնավարի ու մի կերպ եղա տանել, այն ժամանակ պատկերն աւելի լրիւ կը դառնայ: Եթէ ըստ ներքին կանոնադրութեան յօդուածների քննութիւն բաց անենք՝ մենք որպէս արդիւնք կ'ունենանք բազմաթիւ ընկերներ, որոնք իրենց տարեկան տուրքերը չեն վճարել, հանգանակային ժողովներում իրենց խոստումները չեն կատարել, ընկերական ժողովներին մեծ մասով բացակայել են եւ այնուամենայնիւ կանչուել են կամ ընտրուել պատասխանատու պաշտօնների համար: Նման անմխիթական դրութեան եւ թոյլ վերաբերմունքի պատճառով առաջ է եկել դէպի դաշնակցական բարձր մարմինների որոշումն անվրստահութիւն եւ յարգանքի պակասութիւն:

Եւ զգալ, որ կոմիտէների ներքին կեանքը խանգարողները, զանազան հարցեր յարուցանողը եւ միաժամանակ անպարտաճանաչ բանակ կազմողները յատկապէս հին, փորձուած եւ գիտակից ընկերներն են՝ աւելի կարիք է զգացում զգուշաւոր գործունէութեան եւ անմիջական քայլերի:

Ուրեմն, ի նկատի առնելով վերոյիշեալ ստեղծուած պայմանները, որոնց մէջ մի ամբողջ տարի եւս աշխատեցի, ես պարտք եմ համարում որոշ առաջարկներ բե-

րել, որոնք իրագործումով, ըստ իս, կարող ենք դրու-
թիւնը որոշ փոփոխութեան ենթարկել:

1. Ուժ տալ գրաւոր եւ բանաւոր փրոպագանտային,
պարբերաբար գումարելով հրապարակային եւ բա-
ցատրական ժողովներ

2. Հրատարակել հասկանալի եւ թեթեւ բովանդա-
կութեամբ բրոշիւրներ՝ օրուայ հրատապ խնդիրներ
չուրջ, ժողովրդի մէջ տարածելու համար աժան գնով

3. Ստեղծել եւ օգտագործել 2016-ի դրութիւնը, աշ-
խատելով որոշ ազգային-յեղափոխական լաւ կազմա-
կերպուած պիեսաններ ներկայացնել եւ այդպիսով գրա-
ւել ու ոգեւորել ժողովրդին

4. Ունենալ երկու տիպի գործիչներ՝ փրոպագանդա-
յի եւ կազմակերպական գործերի համար:

5. Կատարել որոշ կանոնադր եւ զայն իրագործել
կեանքի մէջ՝ անխտրաբար պատասխանատուութեան
կանչելով բոլոր յանցաւորներին

6. Կ. կոմիտէի քարտուղարութիւնը երկուսի բաժա-
նել՝ գոտտ հաշուական եւ յարաբերական մասերով եւ
ունենալ երկու կարող եւ գաղափարական ընկերներ,
որոնք լինէին Կ. կոմիտէի անդամներ եւ վարէին այդ
պատասխանատու եւ յոյժ կարեւոր պաշտօնը:

7. Եւ պարբերաբար, ամէն ամիս աշխատել տեղ-
եակ պահել մեր շարքերը՝ մեր դրամական հաշիւների,
մեր ելք ու մուտքի՝ որպէսզի աւելորդ քանակատու-
թիւնների եւ հարցումների տեղիք չգրուին:

Բաւական համարելով վերոյիշեալները, ես պարտա-
կանութիւն կը զգամ ներկայացնելու ձեզ նաեւ տար-
ւայ ընթացքում ունեցածս ժողովների թիւը, որոնք հե-
տեւեալ կերպով կարող եմ ներկայացնել — ընկերական
ժողով՝ 86, հրապարակային ժողովներ՝ 61, բացատրա-
կան-դասախօսական՝ 44, Կ. խաչ՝ 9, Կ. կոմիտէ, Շրջ-
խորհուրդ եւ վարչութիւններ՝ 31 ժողով, որ ըսել է թէ
տարուայ ընթացքում ունեցել եմ 231 ժողով: Եթէ ի
նկատի առնենք նաեւ այն, որ ամսից աւելի պառկած եմ
եղել եւ հիւանդ, այն ժամանակ հասկանալի կը լինի թէ
ինչո՞ւ անցեալ տարուայ հետ համեմատած աւելի քիչ
ժողովներ եմ գումարել:

Բոլոր վերոյիշեալ ժողովների մէջ ունեցել ենք 97 նոր
ընկերներ, որ շատ քիչ է քան անցեալ տարուայ թիւը,
որովհետեւ նախկին խանդավառութիւնը չկար եւ բացի
այդ ամէն մարդու չէինք ընդունում՝ մերժած լինելով
«բաց դռներ»ի քաղաքականութիւնը:

Նորից եւ նորից պիտի շեշտեմ, որ որքան գործիչ-
ներն իրենց վրայ դրուած պարտականութիւնը կատա-
րեն, նրանք չեն կարող զգալի, շօշափելի արդիւնք տալ:
Անհրաժեշտ է եւ պէտք է, որ կարեւոր շրջաններում՝ Ս.
Լուիզ, Չիքակո, Տիթթոյիթ եւլն., ունենալ յատուկ մնա-

յուն ընկերներ, որոնք ամբողջ տարուայ ընթացքում
բնակուելով այդ վայրերում՝ կարողանան կառավարել
տեղական գործերն ու տուն տալ հասարակական աշ-
խատանքին: Նման մնայուն ընկերներին պիտի որոշել
եւ իր իսկ գործերով տեղափոխել: Դրանք իրենց խոշոր
դերը կը խաղան: Նաեւ չպիտի մոռանալ որ կուսակցու-
թիւնը պարտաւոր է Ազգային կարիքներին արձագանք
տալ ո՛չ միայն դրամական միջոցներ հայթայթելով եւ
կամ կամաւորներ ուղարկելով, այլ իւրաքանչիւր մի
ազգային շարժման — փախստականների գործի, որբեր-
հայեր հաւաքելու քրդերի մօտից — համապատասխան
մարդիկ ուղարկել՝ նախօրօք խիստ եւ մանրակրկիտ
քննութեանց ենթարկելով:

Վերոյիշեալները յանձնելով Ձեր լուրջ ուշադրու-
թեան ես նորից տրամադրութիւն ունիմ ներկայացնե-
լու նաեւ իմ հրաժարական՝ գործչութեան պաշտօնից:

Ես կուսակցական աշխատանքներից չեմ խուսա-
փում, ես պիտի շարունակեմ իմ աննշան կարելիս ընել՝
ազգային կուսակցական գաղափարներս համար, բայց
այս անգամ ո՛չ թէ Ամերիկայում, այլ գործի վայրում,
Հայաստանում, ուր աշխատանքն այնքան անմիջական
է ու գործիչների ահագին կարիք ունին:

Դուք կարող էք մեղադրել ինձ, սիրելի ընկերներ, որ
անձամբ ներկայացնելով ձեզ յառաջիկայ գործունէու-
թեան պլատֆորմը, ես միաժամանակ հակասութեանց
մէջ եմ ընկնում՝ հրաժարականս ներկայացնելով:

Ներկայացնելով ձեզ դիտողութիւններս, ես պիտի
թելադրէի որ Արտասահմանից (Ժընեւից) աշխատէիք
նոր ոյժեր բերել, իսկ ինձ ազատ կացուցանէիք, որ կա-
րողանայի աւելի մօտ լինել ազգային տառապանքին՝ եւ
պարտքս կատարել: Այդ իմ հոգեկազմ պահանջն է եւ ան-
հրաժեշտութիւնը: Տուէք ինձ մի քանի լաւ, գաղափարա-
կան ընկերներ որոնք հետ մոռացած մեր անձնականը՝
կարողանանք յիովին նուիրուել Մեծ աշխատանքին, որ
այնքան հեւհեւ տարուում է Հայաստանի գրաւուած
վայրերում:

Մի ստիպէք որ մտադրութիւնս իրագործեմ՝ պնդե-
լով առաջարկիս վրայ եւ յամառելով: Աշխատեցէք որոշ
ելք գտնել եւ Ամերիկայի միջնորոտից ազատելով ինձ
դէպի երկիր փոխադրել:

Ուժերի փոփոխութիւն է պէտք եւ կարծում եմ թէ
դուք ընդառաջ կը գնաք օրուայ այդ հրամայական պա-
հանջին:

Վերջացնելով տեղեկագիրս, մնամ յուսով եւ սիրա-
լիւ

Բարեկներով՝ Ա. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

19/XII/916
Բոստոն

Փաստ. 1404ա-13

Գ 5.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԽՈՐԷՆ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ

Հ.Յ.Դ. Կեդր. կոմիտէին

Սիրելի ընկերներ,

Այս տարուայ Յունուարի կէսին ձեր կարգադրութեամբ յանձն առի կոմիտէներուն այցելել, իբրեւ գործիչ, հակառակ այդ պատասխանատու գործին անյարմար ուժիս:

Իբրեւ գործունէութիւն, թոյլ տուէք ներկայացնել հետեւեալ ցանկը.—

- 1. Շարքերուն վրայ աւելցան նոր ընկերներ 97
- 2. Նոր կոմիտէ կազմուած՝ Ինտիանա Հարպըր 1
- 3. Նոր Կարմիր խաչ կազմուած՝ Համիլթըն 1
- 4. Հրապարակային ժողովներ 41
- 5. Դասախօսական ժողովներ 31
- 6. Կոմիտէական ընկ[երական] ժողովներ 103
- 7. Կարմիր խաչի հրապ. ժողովներ 2
- 8. » » Անդամական ժողովներ 11

Տիթրոյիտ քաղաքի կոմիտէն ներքին աններդաշնակութեան եւ անպարտաճանաչութեան պատճառով լուծուեցաւ եւ վերակազմուեցաւ ձեր իսկ հրահանգով:

Կարդացած ըլլալուս ընկերներ Ա. Միքայէլեանի եւ Մ. Օզանեանի տեղեկագրերը, աւելորդ կը նկատեմ կրկնութիւններ ընել միեւնոյն կէտերը շեշտելով: Կը բաւականանամ, սակայն, պնդել, որ անոնց շօշափած կէտերուն գործադրութիւնը անհրաժեշտ է մեր կազմակերպութեան ներքին զարգացման եւ արտաքին յառաջդիմութեան համար: Պաշտօնական մարմիններու, այն է՝ Կեդր. կոմիտէի, իմբազրութեան, «Հայրենիք»ի վարչութեան ընկերական յարաբերութիւնները կոմիտէներու, աշխատակիցներու եւ գործակալներու հետ ամենախաղաղ պայմաններէն մէկն է կուսակցական գործի ընդհանուր յառաջդիմութեան:

Յուսալով, որ այս տարուայ պատգամաւորական ժողովը, նկատի ունենալով ազգային եւ կուսակցական յուսալքումը, յարմարագոյն որոշումներ պիտի անցնէ եւ յանձնարարութիւններ կատարէ Կեդր. կոմիտէի յաջորդ կազմին, ես առանձնապէս կը փափաքէի շեշտել հետեւեալներուն վրայ.—

1.- Որոշ փոփոխութիւններ մտցնել Կեդր. կոմիտէի քարտուղարութեան մէջ բաժնելով հաշուական գործը:

2.- Իւրաքանչիւր շրջաբերականի մէջ յիշել կուսակցութեան գանձային վիճակը նշանակելով իւրաքանչիւր կոմիտէի ստացուած գումարները նոյն ամսուայ ըն-

թացքին: Այս նորութիւնը ոչ միայն պիտի փութացնէ վճարումներու գանձումը, այլեւ՝ պիտի ստեղծէ փափաքուած հաշուեպահութիւնը կոմիտէներու կողմէ:

3.- Յանձնարարութիւններու եւ նամակներու պատասխանուի եւ գործադրուի անմիջապէս:

4.- Տիթրոյիտի, Չիքակոյի, Քանատայի եւ Քալիֆորնիայի շրջաններուն տալ մէկ-մէկ գործիչ, որոնց պաշտօնը ըլլայ միայն ներքին գործերով պարապիլ եւ հոգ տանիլ ընկերներու դաստիարակութեան ընդհանրապէս եւ կուսակցա-յեղափոխական դաստիարակութեան մասնաւորապէս:

5.- Նկատելով որ շատ մը ընկերներ ձանձրացած կոմիտէական ժողովներու մէջ անհատական վէճերէն՝ կանոնաւորապէս չեն յաճախեր ժողովներուն,— օրէնք անցնել, որ ոեւէ կոմիտէական ժողով երկու ժամէն աւելի չպէտք է տեւէ, պարտականութիւն դնելով կոմիտէի ատենապետին վրայ, որ երկու ժամը լրանալուն ժողովը փակուած յայտարարէ: Այս նորութիւնը, իմ կարծիքով, աստիճանաբար պիտի դադրեցնէ անհատական վէճերը, տեղ տալով կուսակցական աշխատանքներուն:

6.- Տարուայ մը փորձառութիւններս զիս բերած են այն եզրակացութեան, որ կարգ մը կոմիտէներու աններդաշնակութեան գլխաւոր պատճառները համեմատաբար «փորձառու» կամ «գիտակից», «գործօն» ճանչցուած ընկերներն եղած են: Այս անփափաքելի վիճակը դարմանելու միակ միջոցն է ոեւէ պաշտօն չյանձնել այդ կարգի ընկերներու, որոնք հարկաւ անհատական խնդիրներ կ'ունենան:

7.- Արգիլել կոմիտէներուն, որ իրենց օրակարգին մէջ կազմակերպական աշխատանքներէն զատ որեւէ հարց չնշանակեն: Դատական ոեւէ խնդիր նիւթ չընեն կոմիտէական նիստերուն: Իւրաքանչիւր կոմիտէ ունենալու է դատական եւն. յանձնախումբ մը, համագործակցելով վարչութեան:

8.- Պրակներու վերածել անդամական տուրքի դրոշմները, որոնց իւրաքանչիւրը ունենայ 60, 120, 240 եւ 480 դրոշմներ:

9.- Վերջացնել շրջանային խորհուրդներու ներկայ բաժանումը եւ անոնց տեղ ընդունիլ նոր ձեւ մը, այն է՝



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

կոմիտեները բաժնեկալի աշխատանքները, որոնք մասնաճյուղի անունը իրարու: Այսպէս. — Չիքալիօ եւ իր անմիջական շրջանի կոմիտեները, Տիթրոյիտ եւ նոյնը, Ս. Լուրիգ եւ նոյնը, Քայիֆորնիա եւ նոյնը, Հիւսիսային Նիւ Եորք եւ նոյնը, միջին Նիւ Եորք եւ նոյնը, հարաւ-արեւելեան Նիւ Եորք եւ նոյնը, Քանաուս եւ նոյնը: Նիւ Ինկլէնտի կոմիտեները բաժնեկալի չորս շրջաններու մինչեւ թրոյ:

10.- Բոլոր շրջաբերականները տպել մէկ երեսի վրայ եւ ոչ աւելի քան անհրաժեշտ բովանդակութիւնով: Երկրի եւ կուսակցական լուրերու ամփոփումը միայն հաղորդել բաւական է:

11.- Քաղաքները բոլոր կոմիտեներու եւ շրջաններու մէջ գտնուած կարող ընկերները, մանաւանդ երիտասարդ ուժերը:

12.- Միջոցներ ստեղծել դադրեցնելու համար իրարահայած կամ ընկերահայած մտայնութիւնը, մանաւանդ կազմակերպական բարձրագոյն շրջաններու մէջ, ուրկէ սկսուած համաճարակը աւելի վտանգաւոր կը դառնայ: Ընկերներու մէջ ստեղծել փոխադարձ յարգանք եւ արդարադատութիւն:

13.- Տարիներով պահանջած ենք, որ թէ հասարակութիւնը, եւ թէ, բնականաբար, մեր ընկերները օժանդակեն մեր կուսակցութեան բոլոր ձեռնարկներուն: Տարիներով պահանջած ենք, որ ժողովուրդն ու ընկերները մօտ ապրին յեղափոխական գաղափարին ու գործին, բայց, դժբախտաբար, շատ քիչ հոգ տարած ենք անոնց դաստիարակութեան՝ գէթ մեր կուսակցութեան օժանդակելու համապատասխան որակով: Այս տողերը գրելու պահուս կը մտածեմ, որ եթէ ջանք չընենք մեզի յաջորդող սերունդին եւ ընկերներուն յառաջդիմութեան եւ չպատրաստենք գանոնք, որ [պէսզի] իրենց նախոր-

դէն ա՛լ աւելի ընդունակ եւ պատրաստուած ըլլան, պիտի ընդունինք, ուրեմն, որ յառաջդիմութեան անիւր կը կանգնի ու մենք կը մնանք յետադիմութեան մէջ:

14.- Գտնել եւ դարմանել այն բոլոր պատճառները, որոնք կազմակերպական գործ են, «Հայրենիք»էն ու առ հասարակ հասարակական կեանքէ հեռու կը պահեն գէթ մեր շարքերուն մէջ գտնուած մտաւորական երիտասարդները: Իմ քաղաք տեղեկութիւններէն եզրակացուցած եմ, որ ընկերական ոչ-պատուաբեր վերաբերումն է ասոր գլխաւոր պատճառը, շատ անգամ պաշտօնական մարմիններու անդամներուն կողմէ:

15.- Գործիչներու, ատենախօս ընկերներու, «Հայրենիք»ի աշխատանքներուն եւ տեւական գործօն ընկերներու հետ մօտիկ յարաբերութիւն պահելու է Կեդր. կոմիտէն:

16.- Թէեւ իրաւասութիւն չեմ զգար ոեւէ թելադրութիւններ ընել «Հայրենիք»ի խմբագրական գործերու վերաբերմամբ, բայց համոզուած եմ, որ որոշ փոփոխութիւններ մտցնելով աւելի լաւ կը խմբագրուի «Հայրենիք»ը եւ գերծ կը մնայ շեղումներէ: Իմ կարծիքով ոչ թէ խմբագիրներ պէտք է ունենալ, այլ՝ խմբագրական մարմին, որուն անդամներէն մէկը ըլլայ Կեդր. կոմիտէի քարտուղարը: Կ'ենթադրեմ թէ «Հայրենիք»ին աշխատող ընկերներուն իրաւասութիւնները ճանչնալով նպաստած կ'ըլլանք անոր բովանդակութեան որակին:

Գործիչի աշխատանքս վերջացած նկատելով յաջողութիւն կը մաղթեմ ձեզի եւ ձեզի յաջորդող Կ. Կ.ի կազմին:

Խ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Պոսթըն
Դեկտ. 22 1916



Փաստ. 1404ա-14

Գ 6.- ՏԵՂԵԿԱԳԻՐ «ԱՍՊԱՐԷՉ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԵՐՈՒՆ

Սիրելի ընկերներ,

Յուսալով որ ընդհ. պատգ[ամաւորական] ժողովի բացումէն առաջ «Ասպարէզ»ի վարչութեան կազմի ղեկավար ընկեր Արտաւազդ Ռստիկեանէն կը ստանաք մանրակրկիտ հաշուետուութիւնը 1916ի տարեկան ելեւմուտքին, ես ինքս պիտի բաւականանամ ամփոփ տեղեկութիւններ հաղորդելով անոր մասին:

Ըստ նախորդ տարւոյ Պատգ. ժողովի որոշման՝ թերթին հրատարակիչ ընկերները զայն նուիրեցին Դաշնակցութեան եւ օրինական թղթերը ստորագրելով յանձնեցին ձեռ կողմանէ իբրեւ ժամանակաւոր գործիչ նշանակուող ընկերոջ: Կը յուսանք թէ այդ սեփականատիրութեան ձեռնփոխութիւնը կը գտնուի դիւանիդ ձեռքին մէջ:

Պէտք է խոստովանիլ, սակայն, որ երկու թոշակաւոր պաշտօնէից ներկայութիւնը, զբաշարական ու տպագրական ծախքերը՝ թերթը իր նախկին ինքնապահ վիճակէն հանելով նիւթապէս փոքր ինչ անբաղձալի դրութեան մը մէջ դրին: Որպէսզի եկամուտի նորանոր աղբիւրներ ստեղծէինք, Ալեքսանդր Մելիքի 1000 տոլարէն աւելի ծախքով մը հիմնուած տպարանը, ձեռ հաւանութեամբ, գնուեցաւ. եւ հաշուեկշիռին մէջ Armenian Type Founder Cr.ի անուան առջեւ ցուցուած 500 տոլարի պարտքը յիշեալ տպարանին համար եղած վճարգինն է:

Մինչեւ Դեկտ. 10, այսինքն իմ Ֆրեզնոյէն մեկնելու օրը, ընկ. Ռստիկեանի ներկայացուցած հաշիւներուն ցուցակագրութիւնը հետեւեալն է.—

Ընդհ. մուտքը 5,096.31 ընդհ. ելքը 4,962.37

Հայերէ եւ ծանուցումներէ գանձելի գումարներ

Burnett-էն	15.00
Ohannisian-էն	5.50
Simonian-էն	2.25
Copl-էն	2.50
Dr. Tashjian-էն	9.00
Fresno Fruit market-էն	30.00
Որբախնամ ընկերութեանէն	45.00
Կարմիր խաչէն	33.00
Գինիի ընկերութեանէն	60.00
B.B.H.-էն	9.00
Sarkissian-էն	20.00
Keosheyan-էն	250.00
Prewitt Pub Co. -էն	250.00
Նոյեմբեր ամսոյ ծանուցումներէն	100.00
Գանձին մէջ պատրաստ դրամ	133.00
Համագումար	\$ 732.25

Վճարելի պարտքեր

American Type Founders Cr. -ին	\$ 500.00
Valley Paper Co.-ին	105.00
Prewitt Pub Co.-ին	200.00
Fresno Photo Engr. Co.-ին	45.00
Ուրիշ մանր պարտքեր	29.00
Bank of Central Calif-ին	235.00
Արտաւազդ Ռստիկեանին	450.00*

Համագումար \$ 1554.00

Թերթին նիւթականին կաղալուն զլիսաւոր պատճառը պարզապէս վերագրելի է անբաւական ու անձեռնհաս ոյթերու: Մէկէ աւելի անգամներ այս կէտը մատ-

*) Ծան.— Առանց գիտնալու թէ Կ. Կ[ոմիտէն] ինչ տնօրինութիւն ըրած էր «Ասպարէզ»ի վարչական բաժանումին համար, թերթին նախկին ընկերները որոշում մը անցուցեր էին թէ վարչական գործը ստանձնող ընկերը բոլոր բաժանորդագրութիւններէն եւ ծանուցումներէն 20%ը պիտի ստանայ իբրեւ իր վարձատրութիւնը: Այս որոշման վրայ յենելով է որ դեռ վերոյիշեալ գումարը իբր իր իրաւունքը կը պահանջէ ընկերը: Սոյն տարեշրջանի միջոցին էր իմացանք թէ Ա. Ռստիկեան որպէս Քալիֆորնիոյ շրջանի կազմակերպիչ ընկեր Կ. Կ.էն կը ստանայ եղեր շաբաթական 4 տոլար:

նանչուած է Կ. Կ[ոմիտէ]ին՝ թերթին ու կազմակերպու-
թեան շահերուն նախանձախնդիր ընկերներէն:

Հարկ չկայ կրկնել թէ «Ասպարէզ»ի անցեալ ութ
տարուան պատմութիւնը աննման գոհաբերութեան եւ
անզուգական գաղափարակցութեան շրջան մը կը բոլո-
րէ: Թերթը համակիրներու լայն շրջանակ մը ստեղծած
է եւ անոր բաժանորդները օրրատօրէ կ'աւելնան: Ներ-
կայիս ունի մօտաւորապէս 1650 վճարող բաժանորդ-
ներ եւ շրջաբերութիւնը մօտ 2000 է: Ֆրեզնոյի պէս
բազմաձայ գաղութի մը մէջ՝ ուր պահպանողական
թունդ ոգին կ'արտայայտուի երեք դաւանական եկեղե-
ցիներու խայտաբղէտ ժողովուրդին մէջ, ազատական
գաղափարներու եւ դաշնակցական պրոպականտի այս
արեւմտեան օրկանը արդարեւ մեծ գործ մը ունի կա-
տարելու. եւ քաջալերական է տեսնել մեր երբեմնի հա-
կառակորդներուն սրտի փոփոխութիւնը, երբ անվերա-
պահօրէն, յայտնապէս ու գաղտնապէս, անոնք մեր ջա-
տագոված սկզբունքներուն ջերմ պաշտպան կը կանգ-
նին:

«Ասպարէզ», նկատի առնելով ռուսերէն լեզուի կա-
րեւորութիւնը, ձեռնարկած է, աշխատասիրութեամբ
Ա. Մելիքի, ռուսերէն «Ինքնուսուցիչ»ի մը հրատարա-
կութեան, որուն ցարդ Արդ պրակը լոյս տեսած է —
բազմաշխատ ու բազմաձախս գործ մը, որ կը թուի թէ
աւելի քան պիտի փոխարինէ նիւթական գնահատելի
հասոյթ մը բերելով թերթին: Անցեալ տարի 70 տոլարի
ծախքով մը հրատարակած էինք 1000 օրինակ ամերիկա-
հայ գրականութեան ծանօթ Ս. Մ. Մոցիկեանի «Դէպի

փրկութիւն»ը, որմէ 250 օրինակ բաժին հանելով հեղի-
նակին, մնացեալը թերթի հաշուոյն կը ծախենք: Միեւ-
նոյն հեղինակին հետ պայմանաւորուած ենք նաեւ հրա-
տարակել պատկերագրող երկու հատոր «Արարատ-
Կովկաս» շահեկան աշխատասիրութիւնը: Յուսով ենք
որ մեր մատենաշարի այս երկու ձեռնարկներն ալ դրա-
կան որոշ արդիւնք պիտի ունենան:

Մեր անմատչելի հեռավորութիւնը պատճառ եղեր է
որ մենք զուրկ ենք մնացեալ մեր արեւելքի պաշտօնա-
կիցներու փորձառական զիտութիւններէն եւ, ի վեր
քան զամենայն, Կեդր. կոմիտէի անմիջական հսկողու-
թենէն: Անցեալ տարուան Ֆրեզնոյի պատգամաւորու-
թեան ցանկալի պտուղը եղաւ պաշտօնական ճանաչու-
մը «Ասպարէզ»ին որպէս Դաշնակցութեան թերթերէն
մէկը. եւ այս տարուան պատգամաւորութեան պտուղը
կը յուսանք թէ պիտի ըլլայ սերտ յարաբերութիւնը
պաշտօնական մարմնին՝ մեր հեռավոր, այլ կարեւոր
գաղութին հետ, խմբագիր-գործիչի մը անմիջական
հայթայթումը, ինչպէս նաեւ մնայուն պրոպականտիս-
տի մը ներկայութիւնը Քալիֆորնիոյ շրջանին համար:

Այս բաղձանքները եւ պահանջները ներկայացնելով
ձեզի,

Կը մնամ յարգանք, Ձերդ
Յ. ԳԱՊԱՏԱՅԵԱՆ
Խմբագիր «Ասպարէզ»ի

Դեկտ. 22, 1916
Պոսթըն, Քալիֆ.

Փաստ. 1404-118

Գ 7.– Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

London, le 25 nov. 1916

Թարգմանութիւնը.—

Mes chers amis,

Սիրելի բարեկամներ,

J'écris en français – j'espère que vous saurez lire – ainsi ma lettre vous parviendrait plus vite.

Ֆրանսերէն կը գրեմ. կը յուսամ որ պիտի կարենաք կարդալ. այս ձեռով նամակս աւելի շուտ կը հասնի ձեզի: 12 օր առաջ Լոնտոն հասայ, մօտաւորապէս ամսուան մը ուղեւորութենէ ետք:

Je suis arrivé à Londres il y a 12 jours, après avoir fait un long séjour (d'un mois environ) en route.

Կը փափաքէի ուղղակի Փարիզ երթալ, սակայն Լոնտոնի հայրենակիցները (տարբեր հոսանքներու եւ կուսակցութեանց պատկանող) հրաւիրեցին զիս ատեն մը, նոյնիսկ քանի մը ամիս մնալ, որովհետեւ, կ'ըսէին անոնք, դուրսէն եկած մարդիկ իրենց ներկայութեամբ կրնային մղղում տալ «գործին»:

Je voulais aller directement à Paris, mais les compatriotes de Londres (de différentes opinions, partis etc.) m'ont engagé à rester quelque temps, même quelques mois, car disaient-ils, les personnes venues de dehors pourraient par leur présence avtiver le "business".

Պիտի չուզէի ըսել որ այստեղի մարդիկ անտարբեր են, սակայն թոյլ են եւ պէտք է խթանել, քաջալերել զիրենք:

Je ne dirais pas que les gens d'ici soient indifférentes, mais elles sont un peu molles et il faut les pousser, les encourager.

Հայկական Կոմիտէն ունեցաւ լիազուժար ժողով մը, ուր հրաւիրուեցայ զեկոյց մը ներկայացնելու: Ապա տեղի ունեցաւ երկար քննարկում, որ մասնաւոր կերպով շահագրգռեց զիս: Ծանօթ չէի Լոնտոնի հայ համայնքին:

Le Comité arménien a eu une réunion plénière, où j'ai été invité à présenter un rapport. A la suite, il y a eu une longue discussion qui m'a particulièrement intéressé. Je ne connaissais pas la colonie arménienne de Londres.

Վաղը համայնքը հրապարակային համախմբում մը ունի: Հրաւիրուած եմ, մեր բարեկամ Վ. Հոտքինի հետ, խօսք առնելու:

Demain il y a un meeting de la colonie. Je suis invité à prendre la parole, avec notre ami anglais W. Hodgkin.

Կը խնդրեն ինձմէ որ Փարիզէն վերադառնամ եւ ատեն մը հոս մնամ: Գրեթէ խոստացայ: Սակայն եւ այնպէս, պէտք է շրջապտոյտի մը ելլեմ Ֆրանսա, Իտալիա եւ Զուլիցերիա:

On me prie de revenir de Paris pour rester quelque temps ici. J'ai presque promis. Toutefois, Je dois faire un tournoi en France, en Italie et en Suisse.

Մեր խօսակցութեանց գլխաւոր առարկան – ըլլայ ժողովներու թէ ընթրիքի սեղաններու շուրջ – բնականաբար մեր ջանքերու համակարգումն է (համերաշխութիւն): Այդ մասին միշտ պիտի խօսուի: Յայտնեցի որ մեր կազմակերպութիւնը, Ռուսիոյ մէջ եւ ամէնուրեք, անկեղծօրէն եւ եռանդուն կերպով կողմնակից է համերաշխ գործունէութեան մը:

La question de coordination de nos efforts ("solidarité") est naturellement le principal objet de conversation, soit dans les réunions, soit autour de la table de diner. On en parlera toujours. J'ai dis que notre association en Russie et partout est sincèrement et ardemment désireuse d'un travail solidaire.

Յանուն մեր անհամար եւ հերոս նահատակներուն, դարձեալ կը խնդրեմ ձեզմէ որ ներշնչուիք համերաշխութեան միեւնոյն ոգիէն եւ, թերթերու մէջ թէ հրապարակային համախմբումներու ընթացքին, բանավէճեր չբորբոքէք: Մի՛ պատասխանէք հակառակորդներու չարակամ յարձակումներուն, եւ ի վերջոյ պիտի լռեն անոնք հաւանօրէն: Վասնզի Ամերիկայի եւ Եգիպտոսի մէջ է, որ կուսակցական վէճերը կը թունաւորեն բոլոր յարաբերութիւնները եւ յուր տպաւորութիւն կը գործեն մեր օտար բարեկամներուն վրայ: Հարկ է վերջ

Je vous supplie encore une fois, au nom de nos innombrables et historiques morts, de vous inspirer du même esprit de solidarité et ne pas nourrir les polémiques, soit dans les journaux, soit dans les meetings.

Ne répondez pas aux attaques malveillantes des adversaires et ils finiront probablement par se taire.

Car c'est en Amérique et en Egypte que les querelles de partis enveniment tous les rapports et font une fâcheuse impression sur nos amis étrangers. Il faudrait en finir. Peut-être rédigerons nous à Paris un appel collectif... Il y a, malheureusement, à Paris aussi un journal qui fait

une mauvaise besogne.

L'histoire du Caire (avec Tékéyan) est très désagréable. Tout le monde en parle et je ne puis vraiment pas défendre nos camarades.

Il faut encore que je leur écrive, ça ne peut pas continuer ainsi.

* * *

On me dit ici que l'envoi des correspondances en Amérique en langue arménienne est accompagné de sérieuses difficultés. Je vous écrirai souvent en français. Vous pouvez m'écrire en anglais, je peux lire.

Rien de nouveau. Il semble que mon pauvre Schahbaz soit vivant. Et tant d'autres?

J'apprends qu'Aharonian a assumé le rédactionat de "l'Horizon". Il ne viendra donc pas prochainement...

* * *

Je pars dans 3-4 jours. M. B. Nubar m'écrit de Paris qu'une certaine somme est arrivée d'Amérique, mais qu'il ne peut pas toucher, car, malheureusement, vous avez envoyé à l'adresse de M. Varandian (Av. Trocadéro 12). Cette somme arrive très tard. L'argent reste donc à l'Américan Exp. Cie, et M. Nubar m'a envoyé de l'argent de sa propre bourse, car j'en avais grand besoin. J'ai fait des dettes encore à Genève d'où on m'a envoyé 600 fr. en Scandinavie. Le malheur est que je n'ai pas pu apporter une grande somme de Russie, car à la frontière on ne vous laisse que 500 roubles (presque 60 dollars).

Ainsi vous pouvez considérer qu'en arrivant à Paris je n'aurai presque rien, après avoir payé mes dettes. Soyez donc si gentils, envoyez moi régulièrement tous les deux ou trois mois la somme que j'ai demandée (160 ou 170 dollars par mois (1000 fr.). Je vous assure que ce n'est pas trop, c'est le minimum pour les conditions actuelles et pour le représentant d'une grande association. Ainsi, une fois pour toutes cette question désagréable sera réglée et je ne ferai plus de dettes. Il a été convenu à Tiflis que vous prendrez cet argent à la caisse du Bureau National.

Je vous prie donc, au reçu de cette lettre, de m'envoyer par cable 1000 fr. (à l'adresse: S. E. Boghos Nubar, Avenue Trocadéro 12, POUR Varandian). Et puis après, régulièrement, tous les deux ou trois mois (je donnerai mon adresse).

Bien des salutations
M. VARANDIAN

տալ այս բոլորին: Հաւանաբար [այս մասին] Փարիզի մէջ հաւաքական կոչ մը խմբագրենք... Դժբախտաբար Փարիզի մէջ ալ կայ թերթ մը որ վատ գործ կը կատարէ:

Գահիրէի պատմութիւնը (Թէքէեանի հետ) շատ տհաճ է: Բոլորը կը խօսին այդ մասին եւ ես խսկապէս չեմ կրնար պաշտպանել մեր ընկերները: Անհրաժեշտ է որ վերստին գրեմ իրենց. կարելի չէ շարունակել այս ձեւով:

* * *

Այստեղ ինծի կը յայտնեն որ Ամերիկա հայերէն լեզուով թղթակցական հաղորդակցութիւնները լուրջ դժուարութիւններ կը յարուցանեն: Յաճախ Ֆրանսերէնով պիտի գրեմ ձեզի: Դուք անգլերէն կրնաք գրել ինծի, կարող եմ կարդալ:

Ոչ մէկ նորութիւն: Կը թուի որ խեղճ Շահպազը ողջ է: Եւ այնքա՛ն ուրիշներ ?...

Կ'իմանամ որ Ահարոնեան ստանձնած է «Հորիզոն»ի խմբագրութիւնը: Հետեւաբար պիտի չգայ ի մօտոյ:

* * *

3-4 օրէն կը մեկնիմ: Պարոն Պօղոս Նուպար Փարիզէն ինծի կը գրէ, որ Ամերիկայէն որոշ գումար մը հասած է, սակայն չի կրնար գանձել, որովհետեւ դժբախտաբար ղրկած էք Մ. Վարանդեանի հասցէին (12, Թրոքատերօ պողոտայ): Այս գումարը շատ ուշացած է: Դրամը հետեւաբար կը մնայ Ամերիքըն ընկերութեան մօտ, եւ պարոն Նուպար ինծի դրամ ղրկած է իր քսակէն, որովհետեւ մեծ կարիք ունէի անոր: Դարձեալ պատքեր ըրի ժընեւ, ուրկէ ինծի 600 Ֆրանք ուղարկեցին Սկանտինաւիա: Դժբախտաբար Ռուսիայէն մեծ գումար չկրցայ բերել, որովհետեւ սահմանին վրայ միայն 500 ռուբլի թոյլ կու տան (մօտ 60 տոլար):

Այնպէս որ, Փարիզ հասնելուս կրնաք նկատի ունենալ որ, պարտքերս վճարելէ ետք, գրեթէ ոչինչ պիտի ունենամ: Հաճեցէք, ուրեմն, իւրաքանչիւ երկու կամ երեք ամիսը մէկ, ուղարկել ինզրած գումարս՝ ամսական 160 կամ 170 տոլար – 1000 Ֆրանք: Կը վստահեցնեմ որ չափէն աւելի չէ. ներկայ պայմաններուն մէջ եւ մեծ կազմակերպութեան մը ներկայացուցիչին համար՝ նուազագոյնն է: Այսպիսով միանգամ ընդմիջտ կարգադրուած պիտի ըլլայ այս անհաճոյ հարցը եւ ես այլեւս պարտք չեմ ըներ: Թիֆլիսի մէջ այն համախոհութեան եկանք, որ այս գումարը դուք պիտի գանձէք Ազգ. Բիւրոյէն:

Այս նամակի ստացումէն ետք, ուրեմն, կը խնդրեմ հեռագրով ինծի 1000 Ֆրանք ուղարկեն (Ն. Վ. Պօղոս Նուպարի հասցէին. — 12, Թրոքատերօ պողոտայ, Վարանդեանի համար): Ապա նաեւ կանոնաւորաբար, ամէն երկու կամ երեք ամիսը մէկ (հասցէս պիտի տամ):

Ձերմ բարեկենդանով՝
Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

Փաստ. 1404-134

Գ 8.- ՊՕՂՈՍ ՓԱՇԱՅԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Փարիզ, 20 Դեկտեմբեր 1916

Délégation Nationale Arménienne
12, Avenue du Trocadéro

Paris, le 20 Դեկտ. 1916

Գերապատիւ Տէր Տ. Արսէն Ծ. Վ. Վեհունի
Առաջնորդ Ամերիկայի Հայոց
Ուստր

Սրբազան,

Պատիւ ունիմ տեղեկացնել, Ձեր Սրբազնութեան,—
իբր Առաջնորդի Ամերիկայի Հայոց,— որ Պատուիրա-
կութիւնս որոշած է զրկել Ամերիկա մի քանի վստահե-
լի անձինք Հայկական զանազան գոմիթէներու — մաս-
նաւորապէս, եւ Հայ գաղութին՝ ընդհանրապէս, հա-
ղորդելու համար մեր ազգային դատին վերաբերեալ
ի՛նչ ի՛նչ խնդիրներ:

Բայց կը փութամ, այս անձանց ժամանումէն առաջ,
խնդրել Ձեր Սրբազնութենէն, որ իր ձեռքէն եկածը ընէ
արգիլելու համար հրատարակումը ոեւէ յօդուածի՝
Միացեալ Նահանգներու Հայ հանդէսներու եւ թերթե-
րու մէջ, Հայ կամաւորներու թէ՛ անցեալ գործունէու-
թիւնը ջատագովող, թէ՛ նոր կամաւորագրութիւններ
քաջալերող:

Անհրաժեշտ է, որ այս պահուս հայ մամուլը լուռ
մնայ այդ խնդրոյն շուրջ, քանզի ստոյգ աղբիւրէ իմա-
ցած ենք որ ժամանակէ մ'ի վեր թուրք եւ գերման կա-
ռավարութիւնները, ինչպէս նաեւ պաշտօնական եւ կի-
սապաշտօն գործակալներ, ամէն երկրի մէջ աչալուրջ
հսկողութիւն մը կը կատարեն Հայ մամուլին մէջ երեւ-
ցած յօդուածներու շուրջ, եւ անոնցմէ յօդուածներ
կ'արտատպեն ի վնաս մեզ, իրենց բրոքականտի գործը
յաջողցնելու համար՝ զոր ճարպիկութեամբ կը վարեն
ամէն տեղ:

Մասնաւորապէս Հայ կամաւորներու խնդիրն է որ
իբր փաստ եւ գլխաւոր ամբաստանութիւն կը գործա-
ծեն Հայոց դէմ: Այդ խնդրոյն վրայ յենլով է որ կ'ուզեն
արտայայտել իրենց գործած վայրագութիւնները եւ
օրինաւորել ապագային իրենց կատարելիք խժդժու-
թիւնները: Հետեւաբար կ'ըմբռնէք, կարծեմ, թէ որքա՛ն
կարեւոր է մեզ համար անոնց չհայթայթել ոեւէ՛ փաստ
կամ պատրուակ:

Նամակով այժմ միայն այս պարզ յանձնարարու-
թիւնը կրնամ ընել Ձեր Սրբազնութեան, աւելի մանրա-
մասն տեղեկութիւններ Ձեզ պիտի հաղորդուին Ձեզ
ներկայանալիք մեր պատուիրակներուն կողմէ:

Ամենախորին յարգանքով
ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Փաստ. 1404-135

Գ 9.- ՊՕՂՈՍ ՓԱՇԱՅԷՆ Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ

Փարիզ, 21 Դեկտեմբեր 1916

DELEGATION NATIONALE ARMENIENNE
124 Avenue du Trocadéro

Paris, le 21 Décembre 1916

Messieurs,

La Délégation Nationale Arménienne, d'accord avec nos amis des divers partis, a décidé d'envoyer prochainement en Amérique des personnes de confiance pour mettre au courant les divers Comités Arméniens d'Amérique de certaines questions qui intéressent notre cause nationale. En attendant leur arrivée aux Etats Unis, la Délégation vous prie de faire tout ce qu'il vous sera possible pour empêcher que les Revues et Journaux Arméniens d'Amérique publient des articles concernant les volontaires arméniens, soit pour les louer, soit pour encourager de nouveaux enrôlements.

Nous nous bornons à ces simples indications par lettre, nous réservant de vous en donner de plus précises par l'intermédiaire des personnes que nous enverrons auprès de vous; mais nous ajouterons que nous nous voyons obligés de vous faire ces recommandations, car nous avons, dans ces derniers temps, acquis la certitude que les Gouvernements turc et allemand, ainsi que leurs agents en tous pays, surveillent de très près tout ce qui se publie dans les journaux arméniens et reproduisent des extraits dans les brochures de propagande, pour s'en faire une arme contre nous. Ils s'appuient surtout et plus particulièrement sur la question des volontaires, dans cette propagande très active dans toute l'Europe, pour essayer de justifier leurs crimes passés et avoir des prétextes à de nouvelles représailles. Il est, par conséquent, de la plus haute importance pour nous de ne pas leur fournir ce semblant d'argument et de nous abstenir de façon absolue de parler de volontaires dans nos publications.

Recevez, Messieurs, l'assurance de mes sentiments distingués.

Comité Central A.R.F.
Hayrenik Press, Bennet Str. No 7
Boston

BOGHOS NOUBAR
Président de la Délégation
Nationale Arménienne

Թարգմանութիւնը.—

Պարոններ,

Հայ Ազգային Պատուիրակութիւնը, համաձայնաբար տարբեր կուսակցութեանց պատկանող մեր բարեկամներուն, որոշեց ի մօտոյ Ամերիկա առաքել վստահելի մի քանի անձեր, որպէսզի ամերիկահայ տարբեր կոմիտէները իրազեկ պահեն մեր ազգային դատը շահագրգռող որոշ հարցերու շուրջ: Նախ քան անոնց ժամանումը Միացեալ Նահանգներ, Պատուիրակութիւնը կը խնդրէ ձեզմէ՝ ընել կարելի ամէն բան արգելելու համար, որ Ամերիկայի հայ պարբերութիւններն ու լրագիրները որեւէ յօդուած հրատարակեն հայ կամաւորներու մասին, ըլլայ զանոնք գովաբանելու, ըլլայ նոր զինուորագրումներու իմաստով:

Կը բաւականանանք նամակով ուղղուած այս ցուցմունքներով, աւելի որոշակի տեղեկութիւններ հաղորդելու պարտականութիւնը վերապահելով ձեր մօտ ուղարկելիք մեր անձերուն: Աւելցնենք, սակայն, որ պարտք կը համարենք հետեւեալ յանձնարարութիւնները կատարելու ձեզի՝ նկատի ունենալով վերջերս մեր ստացած ստոյգ տեղեկութիւնները, ըստ որոնց թուրք եւ գերման կառավարութիւնները, ինչպէս նաեւ տարբեր երկիրներու մէջ գտնուող իրենց գործակալները, աչալուրջ կը հետեւին հայկական թերթերու հրատարակումներուն եւ իրենց քարոզչական գրքոյկներուն մէջ անոնցմէ քաղուածքներ կը կատարեն, վերջիններս իբրեւ զէնք մեր դէմ գործածելու համար: Ամբողջ Եւրոպայի տարածքին կատարուած այս շատ եռանդուն քարոզչութեան մէջ, անոնք մասնաւորապէս կը ծանրանան կամաւորներու խնդրին վրայ, որպէսզի փորձեն արդարացնել իրենց անցեալի ոճիրները եւ իբրեւ պատրուակ օգտագործեն զանոնք նորանոր բռնութիւններ գործելու համար: Հետեւաբար յոյժ կարեւոր է մեզի համար նման ապացոյցները չհայթայթել իրենց եւ բացարձակօրէն հրաժարիլ մեր հրատարակութիւններուն մէջ կամաւորներու մասին խօսելէ:

Ընդունեցէք, պարոններ, իմ ազնիւ զգացմանց հաւաստիքը:

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ
Նախագահ Հայ Ազգային պատուիրակութեան

Փաստ. 1404-136

Գ 10.– ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Պարիզ, 22 Դեկտ. 916

Սիրելի ընկերներ,

Ներփակ Պօղոս փաշայի մի նամակը ուղղուած Կ. Կ.ին: Պատճէններ դրկուած են եւ տեղւոյդ միւս կուսակցութիւններին: Իմ կողմից եւս նոյն խորհուրդները ու յորդորները: Փաշայի նամակը արդէն իմբագրուած է մեր երեքիս ձեռքով (Փաշա, Յովհ. Խան [Մասեհեան] եւ ես):

Կամաւորական շարժման մասին յատկապէս մեր Փրանս[իացի] բարեկամները խնդրում են քիչ գրել, լաւագոյնը՝ ոչինչ չգրել: Բերլինի, Բերնի, Վիեննայի եւ այլ տեղերի թուրք դեսպաններն ու գործակալները եռանդով հաւաքում են հայերի ձեռքով հրատարակուած յօդուածները, մանաւանդ այն հրատարակութիւնները, ուր հայ մարդիկ — à la Առաքելեան եւ Վանտոսպ — ձգտում են մեր անբախտութեանց պատասխանատուութիւնը նետելու մեզ վրայ:

Առհասարակ, չիսուենք այլեւս կամաւորութեան մասին, մանաւանդ որ կովկասեան ռազմաճակատում նա գրեթէ արդէն վերջացած է:

Գրել էի արդէն, ի պատասխան ձեր առաջին նամակին, որ Ամերիկա գալ չեմ կարող: Գործ շատ կայ այստեղ եւ յաճախ կարեւոր որոշումներ են ընդունուում պատասխանատու խնդիրների շուրջ, ուր մեզնից մէկի

ներկայութիւնը անհրաժեշտ է:

Չեմ կարող գրել ձեզ նամակով ամէն բան, ասեմ միայն, որ իմ ստացած լուրերը ուրախալի են, որ դաշնակիցների հաւանական յաղթանակից յետոյ՝ նոր ու յուսատու հեռապատկեր է, որ պիտի բացուի մեր բազմաչարչար ժողովրդի առջեւ:

Պատուիրակները — թուով երեք, զանազան հատուածներից — շուտով երեւի կը մեկնին դէպի ձեր կողմերը¹²:

Եգիպտոսից լաւ լուրեր ունիմ. համերաշխութիւնը կատարեալ է կուսակցութիւնների միջեւ: Երանի թէ այդտեղ եւս նոյնը իրագործուէր, եւ ըստ կարելւոյն շուտ:

Գրել էի, որ զրկէք Եփրեմի մասին ձեր ունեցած նիւթերը. գրում եմ եւ Կովկաս եւ Թաւրիզ:

Գրգռիչ յօդուածներ գրում է յաճախ եւ մեր ընկեր վրացեանը. զգուշութեամբ տպէք: Ոչ մի պոլեմիկ — այդ պէտք է լինի մեր բոլորիս նշանաբանը. խօսուել է եւ տեղիս հայ թերթի իմբագրի հետ, յուսով եմ, նա էլ վերջ կը տայ բանակուիւններին, կամ գէթ կը մեղմէ իր թափը:

Գրում ենք եւ Մարսէլ:

Ընկերական բարեւանքով՝
Մ. Ք.

12.— Եգիպտոսէն գալիք պատուիրակները պիտի ըլլային՝ Սապահ-Գիլեան (հնչակեան), Արտաւազ Կանըմեան (դաշնակցական) եւ Սիիրան Տամատեան (Մահմանադիր-Ռամկավար):

Արդարեւ, Եգիպտոսի մէջ գործող երեք հայ կուսակցութիւնները արդէն ազգային համերաշխութիւն գոյացուցած ըլլալով, «Ամերիկայի կուսակցական շարքերուն» ուղղեալ սրտառուչ Կոչ սը հրատարակած էին (տես յաջորդ փաստաթուղթը):



Ս Վ 158-37

Գ 11.- Կ Ո Չ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՆ

Եզիպտոսի Միջկուսակցական մարմնի կոչը քաղած ենք Միմոն Վրացեանի թղթածրարներէն: Փաստաթուղթը անթուակիր է: Ձեռնդեցինք 1916 թ. վերջին բաժնին մէջ: Արդարեւ շուտով Ամերիկա պիտի ժամանէին Դաշնակցութեան եւ Հնչակեան ու Ռամկավար կուսակցութիւններու ներկայացուցիչները,– որպէս պատգամատրներ Հայ Ազգ. պատուիրակութեան եւ Եզիպտոսի Ազգ. Միութեան – Միացեալ Նահանգներուն մէջ եւս համերաշխութիւն գոյացնելով՝ կեանքի կոչելու Ազգ. Միութիւնը:

Հայ կեանքի իրականութեան ներկայ գերագոյն պահանջին սատարելու ջերմեռանդ համոզումովն է որ կու գանք ձեզ ուղղել այս եղբայրական կոչը:

Համերաշխութիւնն է այդ հրամայական պահանջը:

Ձեզի պիտի չըսենք թէ ի՞նչ դառնաթոյն յուսավրիպումներ արժած է մեզի՝ քառորդ դարէ ի վեր՝ համերաշխութեան պակասը, մեր մղած ազգային ազատագրական պայքարին մէջ:

Դուք զիտէք անցեալը, կը ճանչնաք զայն իր բոլոր ցաւազին սայթաքումներովը, իր բոլոր ապարդիւն վատնումներովն ու դժբախտ վիժուածքներովը:

Մեր պայքարող, մեր կազմակերպուած շարքերուն անհամերաշխութիւնը գուցէ գլխաւոր պատճառներէն մին եղաւ որ մենք չկարենայինք օգտուիլ մեր ճակատագիրը վճռել սահմանուած մէկէ աւելի բարեպատեհ առիթներէ: Եթէ փրկագործումի մեծ աշխատանքը կատարեալ յաջողութեամբ չպսակուէր ալ, անտարակո՛յս մեր մաքառումին վեհութիւնը համապատասխանած պիտի ըլլար մեր իտեալին գեղեցկութեան, եւ մենք աշխարհի առջեւ կոթողած պիտի ըլլայինք զանգուածային դիւցազնութեան այնպիսի հոյակապ փաստեր, որոնք մեզի համար տարբեր տիտղոսներ պիտի ապահովէին տիեզերական յարգանքին մէջ՝ քան ինչ որ չենք վայելեր այսօր:

Համերաշխութեան պակասը պատճառ եղաւ որ, անցեալ աղէտաւոր պատակտումներէն վերջը, հինգ տարուան սա՛ վերջին «սահմանադրական» շրջանն ալ ամուլ անցնի մեր ազգային – եթէ ոչ ազատագրումին – գէթ ինքնապաշտպանութեան տեսակէտէն:

Պալքանեան դէպքերը մեզ յանկարծակիի բերին, եւ Թուրքիոյ ահաւոր քայքայումին մէջ՝ մենք յուսահատօրէն անդրադարձանք, թէ պատրաստուած չենք մեր ապահով գոյութեան արդար իրաւունքն իսկ խլելու վայրկեանին բացառիկ ձեռնադրութենէն:

Իսկ վա՞ղը... վաղը մեզի համար սալարկուած է դարաններով եւ դաւադրութիւններով, եթէ մենք չզիտմանք, համադրել մեր տրամադրած բոլոր ուժերը, եւ փութոյ պնդութեամբ պատրաստուիլ դիմագրաւելու ապագայ պատահականութիւնները:

Դէպքերու գահավէժ ընթացքը կրնայ անակնկալներ ծնիլ մեզի համար, նո՛յնիսկ նպաստաւոր կամ նախախնամական անակնկալներ: Բայց մենք պէտք չէ որ անջատ ու տկար ճիգերուն կառչած՝ յոյսերով օրօրուինք, եւ տարապայման ու թուլամորթ լաւատեսութիւններու անձնատուր ըլլանք:

Գործողութեան, եւ արագ ու ներուժ գործողութեան ժամն է, ընկերներ:



Մոռցէք հին քէներն ու հակակրօքիւնները, ծալեցէք մէկդի նետեցէք ատելութեան կրակն հրահրող անիծապարտ թուղթերը, վազ անցէք կուսակցական հմայքի ու հպարտութեան սին տեսակէտներէն, զգուանքով հրաժարեցէք իրարու դէմ իրաւունք ունենալէ, եւ մօտեցէք, մօտեցէք, մօտեցէք իրարու, միասին մտածելու համար ջանքի, զոհողութեան ու անձնուիրութեան բաժինին վրայ որ ձեզի կ'իյնայ հայրենի ինքնապաշտպանութեան նուիրական գործին մէջ:

Այսպէս ըրինք մենք, որ ուժացումի, հեռի ու կրքոտ ամլութեան ամբողջ անցեալ մը թաղելէ վերջ, տեսանք թէ մեր երեսակայածէն շատ աւելի եղբայրութիւն կը մնար մեր ներսիդին՝ փոխադարձ ընկերական համակրութեամբ բոլորուելու համար միեւնոյն սուրբ աշխատանքին շուրջ:

Թաղեցէք դուք ալ, ձեր կուսակցական պզտիկ ատելութիւնները, իջէք ձեր խղճմտանքին խորը, եւ պիտի տեսնէք թէ հոն ընկերական գորովներու ճնշուած կարօտն ու կսկիծը կան, արտայայտուելու, պոռթկալու պատրաստ...

ԳԱՂԱՓԱՐԻ ԸՆԿԵՐՆԵՐ, ձեր կոչումը այս բաներուն մէջ է, եւ դուք բանտարկեալներն էք այդ կոչումին: Դուք չէք կրնար իբրեւ անհաշտ հակառակորդ ծառանալ իրարու դէմ կամ խուսափիլ իրարմէ: Միեւնոյն պարտականութիւնը ձեզ ճակատագրօրէն կը միացնէ իրարու: Եւ զիրար ուրանալէ վերջն իսկ՝ դուք դատապարտուած էք զիրկրնդխառնուելու, եթէ չէք ուզեր դասալիքներ ըլլալ ձեր հասարակաց ուխտին ճամբէն:

Մրտերնիդ բացէք համերաշխութեան անտեղիտալի աղերսին, անվերապահ ու ինքնամատոյց թափով մը ընդ առաջ փութալով այն բաղձանքներուն, որոնք Վասպուրականէն մինչեւ Եգիպտոս, Եգիպտոսէն մինչեւ Պալքանները ձեր գաղափարի ընկերները, մեզ ամէնքս կ'ոգեւորեն, կը խանդավառեն այս բախտորոշ պահուն:

Համագործակութեան ձեր անտարբեր լուրերուն ակընդէտ:

Մնանք ընկերական բարեւներով՝
ՄԻՋԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ

Փաստ. 1405ա-6

Դ 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ (1916-1917) Յուլիս 2, 1917

**Ա. ՄԱՍ
ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ**

Ընկերները կը յիշեն անշուշտ որ անցեալ նոյեմբեր մէկէն ի վեր գոյութիւն ունէր միջնորդ յանձնախումբ մը, ընտրուած Երեսփ. ժողովին¹³ կողմէ, որ բանակցութեան մէջ մտած էր մեր նախորդ Կ. կոմիտէի հետ համաձայնութեան գետին մը գտնելու համար Հ. Յ. Դաշնակցութեան եւ Ազգ. Պաշտպանութեան Միութեան միջեւ: Յիշեալ բանակցութիւններու ընթացքին երեւան եկաւ որ թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ թէ Ազգ. Պաշտ. Միութիւնը ընդհանուր գծերու մէջ համաձայն էին գործակցելու:

1) Հայկական դատի բոլորականտի համար, համաձայն Ազգ. Պատուիրակութեան հրահանգներուն եւ թեղորութիւններուն:

2) Միջազգեպի աքսորականներուն նպաստելու համար:

3) Կովկաս եւ Հայաստանի վերագրուած մասերուն մէջ գտնուող կարօտեալներուն օգնելու համար, կաթողիկոսարանը ընդունելով իբրեւ բաշխման կեդրոն, մինչեւ որ բոլոր գործօն հոսանքներէ կազմուի նպաստամատոյց կեդրոնական մարմին մը:

Միակ գլխաւոր կէտը, որուն շուրջ տարակարծութիւն կար նախորդ Կ. կոմիտէի եւ Ազգ. Պաշտպանութեան միջեւ, եւ որ պատճառ դարձաւ վերջին բանակցութիւններու ձգձգման մինչեւ մեր նախորդ պատգամաւորական ժողովը, կեդրոնական մարմին մը անդամներուն փոխադարձ համաձայնութեամբ ընտրութեան ծանօթ սկզբունքն էր:

Վերջապէս տեղի ունեցաւ մեր վերջին Պատգ. ժողովը, որ բուռն եւ երկարատեւ վիճաբանութիւններէ յետոյ քուէարկեց հետեւեալ բանաձեւը համերաշխութեան մասին, հաստատելով նախորդ Կ. կոմիտէի քայլերն ու տեսակէտները, բայց աւելի զօրաւոր շեշտ մը դնելով համերաշխութեան անհրաժեշտութեան վրայ.—

Նկատի ունենալով ա) որ անհամերաշխութիւնը մեր ազգային կեանքին մէջ խոչոր վնասներ հասցուցած է մեր ազգային դատին, բ) որ մեզ չընկալող ազգութիւններն ու հայ դատին հակառակորդները չարաչահած են մեր այդ գոյավիճակը, գ) որ մեր ազգային ներքին իրականութիւնը չէ մնացեր ըրպէի պահանջի բարձ-

րութեան վրայ, դ) որ երկու տարուան ընթացքին մեր գլուխին հասած հարուածները յառաջ բերած են յուսալքում, ուրկէ դուրս գալու համար համերաշխութիւնը անհրաժեշտ պայմաններէն մէկն է, ե) որ անհրաժեշտ է արտաքին աշխարհի առջեւ մէկ ճակատով դուրս գալ դիւանագիտական յարաբերութիւնները յաջող կերպով յառաջ տանելու համար,

ժողովը կ'որոշէ որ Ամեր. Կ. Կ. ընտրուող միջոցներ գտնէ ընդհանուր համերաշխութիւն ստեղծելու բոլոր գործօն հոսանքներու միջեւ եւ այդ նպատակով կը թելադրէ որ ան անգամ մը եւս ջանայ բանակցութիւններ վարել յիշեալ մարմիններու առանձին ներկայացուցիչներու հետ, պայմանով որ այդ բանակցութիւններէ յետոյ կազմուի նոր անուսով մարմին մը:

2.- Որ մինչեւ փախստականներու, գաղթականներու եւ որբերու գործերը ղեկավարող մարմին մը ստեղծուի, Կ. Կ. ընտրուած մարմինը կապուելու դրամական առաքումներու ժամանակ՝ կաթողիկոսին հետ:

3.- Որ այդ բոլորէն յետոյ Կեդր. մարմինը պէտք է կազմուի Հայ կազմակերպուած գործօն հոսանքներու բոլոր ներկայացուցիչներով, որոնք պէտք է ընտրուին փոխադարձ համաձայնութեամբ:

Նորընտիր Կեդր. կոմիտէս ասկէ յետոյ իր սեղանին վրայ գտաւ Երեսփ. ժողովի լիազօր յանձնախումբի կողմէ գրուած նամակ մը, որուն կցուած էր Ազգ. Պաշտ. Միութեան լիազօր յանձնախումբին գրած մէկ նամակի պատճէնը, որ ո'չ միայն կը մերժէր ներկայացուցիչներու փոխադարձ համաձայնութեամբ ընտրութեան սկզբունքը, այլեւ համերաշխութիւնը ձախողանքի մատնելու յետին միտք մը կը տեսնէր մեր յիշեալ սկզբունքը պաշտպանելուն մէջ: Մենք ընդարձակ կերպով պատասխանեցինք պարզաբանելով եւ հիմնաւորելով մեր տեսակէտը: Զուգահեռաբար մեր մամուլը նոյն աշխատանքը կը կատարէր պատրաստելու համար հասարակութեան միտքը: Բայց Ազգ. Պաշտ. Միութիւնը մինչեւ վերջը մնաց իր տեսակէտին վրայ, ինչպէս եւ մենք մնացինք մեր տեսակէտին վրայ: Այսպէս լիազօր յանձնախումբը իր առաքելութեան մէջ ձախողած ըլլա-

13.- Խօսքը կը վերաբերի ամերիկահայ թեմի Ազգ. Երեսփոխանական ժողովին:

րով, Առաջնորդը համաձայն նախորդ Երեսփ. ժողովի որոշման, 1917 Փետրուար 18ին գումարեց արտակարգ Երեսփ. ժողով, ուր համերաշխութեան մասին հետեւեալ նոր եւ երեւութապէս մեր տեսակէտին աւելի համապատասխան բանաձեւը անցաւ.—

«Երեսփ. ժողովը լսելով լիազօր յանձնախումբի տրւած տեղեկութիւնները, եւ այդ առթիւ յայտնած կարծիքները, կը յանգի այն եզրակացութեան, որ համերաշխութեան իրականացման համար անհրաժեշտ է ընդունիլ ներկայացուցիչներու փոխադարձ համաձայնութեան սկզբունքը եւ կը պարտադրէ ազգին բոլոր գործօն հոսանքները եւ մարմինները համաձայնելու այս սկզբունքին շուրջ եւ իրականացնել ազգային բաղձացւած համերաշխութիւնը: Անհամաձայնութեան պարագային Երեսփ. ժողովը պիտի ճշդէ իր դիրքը»:

Այս բանաձեւին գործադրութիւնը յանձնուեցաւ նախորդ յանձնախումբին, որմէ ստացանք նոր նամակ մը, որով մեզմէ լիազօրներ կ'ուզէին բանակցութիւնները վերսկսելու համար: Մենք դեռ այդ նամակին չպատասխանած՝ եզրիպատահայ պատուիրակութիւնը հասաւ Ամերիկա: Որքան որ յիշեալ բանաձեւէն յետոյ լիազօր յանձնախումբին կամ Ազգ. Պաշտ. Միութեան եւ մեր միջեւ կարելի չեղաւ պաշտօնապէս կարծիքներ փոխանակել, բայց մամուլը երկուստեք կը շարունակէր բռնու պայքար մը: Հակառակորդ հոսանքները թերթերը առանց բացառութեան աւելի քան երբեք կը պայքարէին փոխադարձ համաձայնութեան սկզբունքին դէմ: Այնպէս որ կրնանք ըսել կացութեան մէջ ոեւէ փոփոխութիւն մտած չէր: Անոնք իրենց տեսակէտին վրայ այնքան հաստատուն կանգնած կը մնային որքան մենք մերինին վրայ: Եզրիպատահայ պատգամաւորները մեզի ներկայացան ներկայացուցչական երրեակ հանգամանքով, այսինքն իբրեւ պատգամաւորները Եզրիպատսի Հայ Ազգ. Միութեան, Ազգ. Պատուիրակութեան եւ Ֆրանսական կառավարութեան: Ահա թէ մօտաւորապէս անոնք ինչպէս բնորոշեցին իրենց առաքելութիւնը եւ ինչ շահեկան նորութիւններ հաղորդեցին մեզի.—

«Թուրքիոյ ներկայ պատերազմական մասնակցութեան օրերէն ի վեր, ինչպէս Ամերիկայի եւ Եւրոպայի, նոյնպէս եւ Եզրիպատսի հայ հասարակութեան, ինչպէս նաեւ Ազգ. Պատուիրակութեան կողմէ դիմումներ եղած էին դաշնակից պետութիւններու մօտ անոնց ուղարկութիւնը դարձնելու այն համակրութեան վրայ, զոր հայ ազգը կը տածէր դաշնակիցներու դատին հանդէպ, որուն հետ կապուած կը նկատէր իր դատը, միանգամայն ամէն պատրաստակամութիւն յայտնելով անոնց տրամադրելու իրենց ֆիզիքական, նիւթական եւ բարոյական աջակցութիւնը: Կովկասի հայ կամաւորներու ռուս բանակներու կողքին կատարած գործը փայլուն ապացոյց մըն էր հայ ժողովուրդի ռազմական

յատկութիւններուն: Անկէ յետոյ Սուէտիոյ Մուսա Լեւրան հերոսական ինքնապաշտպանութիւնը, եւ չորս հազար սուէտացիներու ազատումը եւ Փորթ Սայիտ փոխադրութիւնը անգամ մըն ալ դաշնակիցներու ուղարկութիւնը հրաւիրած էին հայերու զինուորական արժէքին վրայ:

Ֆրանսական եւ անգլիական զինուորական իշխանութիւնները զանազան առիթներով ձեռնարկեցին յիշեալ կիրիկեցի գաղթականները զինուորական մարզանքի ենթարկելու եւ զանազան ծրագիրներ յղացան զանոնք օգտագործելու համար: Ասկէ զատ Սուէտիայի հայ գաղթականները իրենք եւս առանձին դիմում ըրած էին Ֆրանսական կառավարութեան պատրաստակամութիւն յայտնելով իր դրօշին տակ կռուելու իրենց բնավայրին մէջ: Դաշնակիցները, մասնաւորապէս Ֆրանսա եւ Անգլիա որ սատարած էին իրենց դաշնակից փոքր ազգերու, Պերճիքայի, Սերպիոյ եւ Մոնթենեկրոյի ջախջախուած բանակներու վերակազմութեան, ինչպէս նաեւ յոյներու Վէնէզիէեան առժամեայ կառավարութեան զօրագունդերու եւ չէխերու եւ այլ ճնշուած ազգերու կամաւորական գունդերու կազմութեան, չէին կրնար անտեսել հայերու կողմէ յայտնուած այս տրամադրութիւնը:

Անգլիական եւ Ֆրանսական կառավարութեան միջեւ կայացած փոխադարձ համաձայնութեան մը հետեւանքով, Ֆրանսական կառավարութիւնը ինք ստանձնեց հայերէն կամաւորական գունդեր կազմելու գործը, զանոնք գործածելու համար մօտալուտ կիրիկեան արշաւանքի մը մէջ:

Ահա այս նպատակով Ֆրանսական կառավարութիւնը անցեալ սեպտեմբերին Եզրիպատս ղրկեց սպայ մը, որ պաշտօն ունէր ստուգելու թէ ինչ կարելիութիւններ կային Արեւելեան լեզէոն մը կազմելու: Յիշեալ սպան թէեւ զանազան հայ անհատներու հետ տեսնուած էր, բայց մէկ կողմէն տեղական Անգլ. իշխանութեան պէտք եղածին չափ քաջալերանք գտած չլլալով, միւս կողմէ հայկական շրջանակէ թելադրութիւն ստացած ըլլալով թէ այսպիսի պատասխանատու գործի մը համար Ֆրանսական իշխանութիւնները պէտք է բանաձեւեն եւ համաձայնին Ազգ. պատուիրակութեան եւ քաղաքական կազմակերպութիւններու հետ,— գնդապետ Պ. հարկադրուեցաւ շուտով վերադառնալ, ըստ այնմ տեղեկագրելու Ֆրանսական կառավարութեան, որպէսզի իրմէ վերջ գալիք սպան հարկ եղած հրահանգներով հասնի Եզրիպատս:

Միեւնոյն ատեն Ազգ. պատուիրակութիւնը իրագեկ պահուեցաւ այս անցուղարձեցողութիւնը վերաբերմամբ եւ Պօղոս Նուպար փութաց այս մասին յարաբերութեան մէջ մտնել Ֆրանսական նախարարական եւ զինուորական շրջանակներուն հետ, համաձայնեցաւ կամաւորական գործի մանրամասնութիւններուն եւ գլխաւոր



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

պայմաններուն մասին, եւ ըստ այնմ իր նպաստաւոր թելադրութիւնները եւ հրահանգները ղրկեց Եգիպտոս: Պօղոս Նուպարի նամակին հասնելէն մէկ քանի օր առաջ արդէն հասած էր գնդապետ Ռ., Փրանսական կառավարութեան արեւելեան զինուորական առաքելութեան պետը, իր փոքրիկ սպայակոյտով:

Յիշեալ հրամանատարը Անգլ. զինուորական իշխանութիւններուն կողմէ կատարեալ բարեացակամ վերաբերմունքի եւ աջակցութեան արժանացաւ եւ նոյնը կը վայելէ մինչեւ այսօր: Հրամանատարը տեսնուեցաւ Ազգ. իշխանութիւններու եւ հայ քաղաքական կուսակցութիւններու պետներուն հետ եւ պարզեց իր նպատակը: Ազգ. իշխանութիւնը եւ կուսակցութիւնները ջերմ համակրանքով եւ խանդավառութեամբ ընդունեցին Փրանսայի այս ձեռնարկը որ իրենց ամէնուն կարծիքով կը համապատասխանէր հայերու ազգային շահերուն: Իւրաքանչիւր կուսակցութիւն սակայն բոլորովին ինքնաբերաբար եւ անկեղծութեամբ յայտնեց հրամանատարին, որ իրմէ դուրս ուրիշ կուսակցութիւններ ալ կան, որոնց համակրութիւնն ու գործակցութիւնը պիտի կրնան ապահովել այս գործին: Հրամանատարը ինքն ալ յայտնեց իր կարգին, թէ ինքն ալ կը փափաքի գործ ունենալ այնպիսի մարմնի մը հետ, որուն մէջ ներկայացուած ըլլային ազգին բոլոր հատուածներն ու կուսակցութիւնները: Ահա երկուստեք այս յայտնուած փափաքին վրայ էր որ կուսակցութիւնները, որոնք իրարու դէմ բռնուց պայքար կը մղէին, կարծես միեւնոյն գսպանակով շարժուած՝ վայրկեանապէս դադարեցուցին իրենց բոլոր վէճերն ու անհասկացողութիւնները եւ բոլորուեցան Ազգ. համերաշխութեան սեղանին շուրջ եւ հակիրճ ու կտրուկ բանակցութիւններէ վերջ կազմեցին չորս քաղաքական կուսակցութիւններու միացեալ մարմինը, որ քիչ վերջը տեղական միւս բոլոր հաստատութիւններու ալ միացմամբ վերածուեցաւ Հայ Ազգ. Միութեան Եգիպտոսի հատուածին: Կենդանի գործը պատճառ եւ առիթ եղաւ որ Եգիպտոսի Ազգ. բոլոր մարմինները միաբանին իրարու եւ Ազգ. պատուիրակութեան հետ, ո՛չ միայն նոյն կենդանի գործին շուրջ՝ որ ինքնին ամէնուն աջակցութեան կը կարօտէր, այլ Հայկական դատին հետ ուղղակի առնչութիւն ունեցող մօտաւոր լուծումին բոլոր հարցերուն շուրջ: Մէկ խօսքով անոնք հռչակեցին Ազգ. սրբազան միութիւնը»:

Չորս քաղաքական կուսակցութիւնները կիլիկեան այս կամաւորական ձեռնարկին մօտեցան իրենց յեղափոխական սա՛ պարզ հասկացողութեամբ՝ թէ երեսուն տարուայ յեղափոխական զոհողութիւնները եւ ձեռնարկները արժեքներու, պսակելու եւ մեր Ազգ. բաղձանքները իրականացնելու համար մենք մինչեւ վերջին վայրկեանը պատնէշի վրայ գտնուելու էինք եւ այսօր պէտք է հանդէս բերել մեր ազգային գերագոյն ճիգը:

Սակայն միւս կողմէ նկատի առնուելիք երկու կարեւոր կէտեր կային,

Ա) Թուրք բարբարոս կառավարութեան ձեռքին մէջ տակաւին պատանդ մնացած մեր հարիւր հազարաւոր ազգակիցներուն ապահովութեան խնդիրը եւ

Բ) Ստանձնելիք նոր զոհողութիւններու փոխարէն դաշնակից պետութիւններու մեր ազգային ձգտումներուն իրականացման մասին տուած երաշխաւորութեան խնդիրը: Այս նախազգուշական միջոցները, որոնք նախատեսուած, յանձնարարուած եւ որդեգրուած թէ Փրանսական կառավարութեան կողմէ, թէ Ազգ. պատուիրակութեան կողմէ եւ թէ Եգիպտոսի Հայ Ազգ. Միութեան կողմէ, կարելի է գոհացուցիչ նկատել: Գալով երաշխաւորութիւններու խնդրին, Ազգ. պատուիրակութեան նախագահը Պօղոս Նուպար թէ՛ Եգիպտոսի Հայ Ազգ. Միութեան ուղղած պաշտօնագիրներովը եւ թէ՛ պատգամաւորութեան տուած բերանացի հաւաստիքներովը կը հաստատէ թէ ասկէ առաջ եւ թէ մասնաւորապէս ներկայ կամաւորական հարցի վիճաբանութեան ատեն՝ դաշնակից պետութիւններու երկուքին արտաքին գործերու նախարարութիւններէն որոշ եւ դրական խոստումներ առած է, թէ երբ ներկայ պատերազմը իր յաղթական վերջաւորութեան յանգի, Փրանսական կառավարութեան ազդեցութեան մէջ իյնալիք հայկական հողամասերուն մէջ, այսինքն Կիլիկիոյ, Սեբաստիոյ, Սարբերդի եւ Տիգրանակերտի կուսակալութիւններուն մէջ, հայերուն պիտի տրուի լայն քաղաքական ինքնավարութիւն մը: Այս խոստումները — եւ ասկէ աւելին կարելի էր ստացուել պատերազմի արդի հանգամանքներուն մէջ — թանկագին երաշխաւորութիւններ են, թէեւ չըլլան բացարձակ երաշխաւորութիւններ: Այդպիսի բացարձակ երաշխաւորութիւններ, նոյնիսկ մեր ազգային ձգտումներու լիակատար նկատառութիւնը՝ մենք կրնանք պահանջել Սաղաղութեան համաժողովէն, այնչափ աւելի բարձրաբարբառ՝ որչափ աւելի կատարած ըլլանք մեր ազգային պարտականութիւնները, ցուցադրենք մեր մեծագոյն ճիգերը, որչափ աւելի միացեալ ճակատով դիմագրաւենք ներկայ պատմական ըրպէն:

Շարժումը արդէն սկսած է. արձանագրուած են բոլոր գէնք բռնել կարող սուէտացիները եւ աւելի քան երեք հարիւր եգիպտահայեր: Դիմումներ եղած են նաեւ Հնդկաստանի մէջ գտնուած հայ գերիները նոյն նպատակին գործածել, նաեւ Հապէշխտանի եւլին: Պատուիրակութիւնը շարժման մասին գրած է Կովկաս Վեհ. կաթողիկոսին, Ազգ. բիւրօյին, Պապաջանեանին, եւ անոնց ալ աջակցութիւնը խնդրած:

Կատարեալ հասկացողութիւն կայացած է որ հայ կամաւորները պիտի կազմեն անջատ հայկական զօրախումբ մը Փրանսացի սպաներու հրամանին տակ, եւ պիտի գործածուին միմիայն հայկական ճակատի վրայ,



համահավասար իրավունքներ վայելելով Ֆրանսացի գինուորներու հետ:

Մենք ուրեմն¹⁴, եկած ենք հոս թարգմանը հանդիսանալու Եգիպտոսի Հայ Ազգ. Միութեան, Ազգ. պատուիրակութեան եւ Ֆրանսական կառավարութեան զգացումներուն, աջակցելու ձեզ կազմութեանը մէջ Հայ Ազգ. Միութեան Ամերիկայի հատուածին, որուն գլխավոր նպատակներէն մէկը եւ անմիջական գործը պիտի ըլլայ աջակցիլ ազատագրական այս շարժումին:

Այսպէս եգիպտահայ պատգամաւորութիւնը մեզ դրաւ վերին աստիճանի պատասխանատու եւ միանգամայն գրաւիչ պարտականութեան մը առջեւ:

Մենք անմիջապէս խորհրդակցական ժողովի հրաւիրեցինք մեր բոլոր գործիչները, խմբագիրները եւ մօտակայ քաղաքներու այն ընկերները, որոնց խորհուրդներէն կը կարծէինք թէ կրնանք օգտուիլ, եւ վերոյիշեալ ձեռնարկը երկար եւ մանրամասն քննութեան ենթարկելէ վերջ՝ հասանք հետեւեալ եզրակացութեան նկատելով՝

1) Որ ներկայ կամաւորական շարժումը համաձայն է մեր կազմակերպութեան սկզբունքներուն եւ աւանդութիւններուն:

2) Որ Ֆրանսական կառավարութեան տուած խոստումներն ու երաշխաւորութիւնները թէեւ դժբախտաբար գրաւոր չեն, բայց կը կրեն պաշտօնականութեան եւ հանդիսաւորութեան դրոշմ մը:

3) Որ սկսուած շարժումը ո՛չ միայն կը կրէ հաւանութեան կնիքը Ազգ. իշխանութեան, այլեւ մեր կազմակերպութեան Եգիպտոսի հատուածն ալ արդէն յարած է անոր:

4) Որ ասկէ առաջ մեր հեղինակաւոր ընկերները քանիցս գրած են նախորդ Կեդր. կոմիտէին ոչ միայն առիթ չփախցնել, այլեւ առիթներ ստեղծել կամաւորներ տալու Ֆրանսական եւ անգլ. կառավարութիւններուն,

Որոշեցինք մասնակցիլ այս շարժումին պահանջելով միանգամայն որ ջանք չհնայուի աւելի դրական երաշխաւորութիւններ ձեռք բերելու մեր կրեւիք գոհողութիւններուն փոխարէն: Այսպէս, համերաշխութիւնը անհրաժեշտ դարձնող պատճառներուն վրայ կ'աւելնար զօրաւոր եւ հարկեցուցիչ պատճառ մը եւս, եւ մենք այս մասին երկար խորհրդակցութիւններէ եւ վիճաբանութիւններէ վերջ տուինք հետեւեալ որոշումը:

Նկատելով

1) Որ անցեալ Պատգ. ժողովը պարտականութիւն դրած էր մեր վրայ՝ ամէն հնարաւոր եւ պատուաւոր միջոց գործածելու ազգին այս ճգնաժամին մէջ ընդհանուր համերաշխութիւն մը յառաջ բերելու համար,

2) Որ մեր վերին մարմինէն եւ հեղինակաւոր ընկերներէ շարունակ թելադրութիւններ կը ստանայինք կարելի ամէն համաձայնութիւններով եւ զիջումներով հա-

մաձայնութեան գալու ուրիշ հոսանքներու հետ,

3) Որ ներկայ կամաւորական շարժումը բացարձակապէս անյետաձգելի կ'ընէ ընդհանուր ազգային համերաշխութիւն մը,

4) Որ մեր հակառակորդները թէեւ ոեւէ զիջում ընելու տրամադրութիւն ցոյց չեն տար փոխադարձ համաձայնութեան սկզբունքին շուրջ, բայց անոնցմէ շատեր արդէն ամենամեծ զիջումը ընելու պատրաստ են մասնակցելով շարժումի մը, որուն դէմ ուղղակի կամ անուղղակի պայքար կը մղէին ցարդ,

Մենք ալ որոշեցինք համերաշխիլ, եթէ հարկ ըլլայ, փոխադարձ համաձայնութեան սկզբունքը զիջելու գծով:

Բայց եւ այնպէս կողմնակի ամէն միջոց գործածեցինք ապահովելու համար կիրարկութիւնը մեր այնքան ատեն պաշտպանած սկզբունքին: Եգիպտահայ պատգամաւորներէն մեր ընկեր Հանրմեանի վրայ պարտք դրինք որ բարոյական զօրաւոր ճնշում բանեցնէ պատգամաւորութեան միւս անդամներուն, մասնաւորապէս Տամատեանի վրայ, որպէսզի երկու ծանօթ առարկելի անձնաւորութիւններ հեռու պահեն Միութեան Կեդր. մարմնի անդամակցութենէն, եթէ կ'ուզեն իրականացած տեսնել համերաշխութիւնը: Ընկեր Հանրմեան իր կարելին ըրաւ իր վրայ դրուած պարտականութիւնը կատարելու եւ Տամատեանը խոստացաւ ամէն ջանք թափելու այդ ուղղութեամբ: Դժբախտաբար, սակայն, այդ բոլոր ջանքերը դրական արդիւնք չտուին եւ մենք համաձայն մեր վերոյիշեալ որոշման, եւ պատգամաւորութեան գրաւոր խնդրանքին վրայ, մէկդի դրինք փոխադարձ համաձայնութեան սկզբունքը, եւ նախ միւս երեք քաղաքական կուսակցութիւններուն հետ, եւ ապա երկու եկեղեցիներու եւ Հ. Բ. Ը. Միութեան հետ համերաշխեցանք հետեւեալ հիմնական նպատակներուն շուրջ — կիրիկեան կամաւորական շարժում, Հայաստանի նպաստի եւ վերաշինութեան գործ, Հայկական դատի փրոփականտ եւ դիւանագիտական դիմումներ Ամերիկայի մէջ — եւ կազմեցինք Հայ Ազգ. միութեան Ամերիկայի հատուածը:

Թէ ինչո՞ւ համար փոխադարձ համաձայնութեան սկզբունքը փոխանակ անգամ մը եւս պաշտօնապէս սեղանի վրայ դնելու, կողմնակի միջոցներու դիմեցինք անոր կիրարկութիւնը ապահովելու համար, պարզ է: Մենք, ինչպէս տեսանք, նկատի ունենալով ըոպէին բացառիկ եւ հրամայական պահանջները, որոշած էինք, հակառակ պարագային համերաշխիլ՝ փոխադարձ համաձայնութեան սկզբունքը զիջելու գնով: Արդ, մեր առջեւ դրուած կենդանի գործը եւ պատգամաւորութեան գրաւոր խնդրանքէն յետոյ՝ որ մէկդի դնենք սկզբունքային եւ այլ կարգի վէճերը, եթէ դարձեալ

14. - Իմա՝ Ամերիկա ժամանած երեք պատգամաւորները:



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

պաշտօնապէս սեղանի վրայ դնելինք մեր պահանջը, եւ մերժուելինք, ինչ որ բացարձակապէս ստոյգ էր, մեզ համար այլեւս պատուաւոր նահանջի ամէն ճամբայ փակուած պիտի ըլլար:

Ընկերներ, մենք այդ գիշուամբ ըրինք, ըսելու հարկ չկայ, միմիայն ազգային եւ կուսակցական գերազոյն շահերու ծառայելու փափաքէն մղուած, եւ ուրախ ենք յայտնելու որ Հայ Ազգ. Միութիւնը հազիւ բոլորած իր գոյութեան եռամսայ շրջանը՝ արդէն մտած է բեղմնաւոր գործունէութեան մը շաւիղին մէջ: Յարգ ան ունի աւելի քան հարիւր մասնաճիւղեր, որոնցմէ վաթսուներ միայն, հրապարակային հանգանակութիւններով, միութեան տուած են մօտաւորապէս երկու հարիւր հազար տոլար, որուն աւելի քան ութսուն հազարը արդէն մտած է միութեան գանձը: Այդ գումարէն միութիւնը վերջերս զրկած է տասը հազար տոլար կաթողիկոսին՝ Կարինի եւ Երզնկայի կարօտեալներուն համար, չորս հազար Հայկազի կարօտեալներուն, երկու հազար Պաղտատի կարօտեալներուն եւ չորս հազար Երուսաղէմի կարօտեալներուն:

Փանձը մնացած գումարին եւ անկէ աւելին պէտք ունի միութիւնը կամաւորներու փոխադրութեան համար¹⁵, որուն արդէն ձեռնարկուած է եւ շաբթի շաբաթ կը մեկնին անոնք փոքրիկ խումբերով:

Միութիւնը հեռու է կատարեալ եւ անթերի ըլլալէ, բայց իր մէջ ամէն խոստում ունի ապրելու, զօրանալու եւ մեր դատի լուծման հօր ազդակ մը դառնալու:

Ընկեր Շահան [Նաթայի]ի հարցը.— Ընկ. Շահան մէկն էր այն ընկերներէն, որոնք կը պնդէին, որ Ամերիկայի մէջ տեղի ունենալիք համերաշխութիւնը պէտք է բացարձակապէս հիմնուած ըլլայ փոխադարձ համաձայնութեան սկզբունքին վրայ: Մարտ 11ի խորհրդակցական ժողովէն յետոյ, թէեւ նա յայտնեց որ, եթէ «փոխադարձ համաձայնութեան» սկզբունքը պիտի չիրագործուէր, ինք պիտի չուզէր շարունակել գործիչի պաշտօնը, սակայն նա համաձայնեցաւ երթալ:

Շիքակո եղած ատեն (Ապրիլ 5), ընկեր Շահան կը հեռագրէ «Շիքակոյի մէջ խօսելէն վերջ որեւէ բան ընելէ առաջ պիտի սպասեմ մանրամասնութեանց»: Անիկա դարձեալ կը գրէր մէկ օր վերջ (Ապրիլ 6) «Երեւոյթները փրկելու համար՝ կիրակի օր կը խօսիմ եւ երկուշաբթի ճամբայ կ'ելնեմ Պոսթըն գալու համար»:

Ապրիլ 8ին տեղի ունեցաւ Շիքակոյի ժողովը, ուր ընկեր Շահան ըրաւ իր ծանօթ յայտարարութիւնը¹⁶: Լսելով այս մասին, մենք խորհրդակցական ժողովի մը մէջ (Ապրիլ 10) որոշեցինք անմիջապէս ետ կանչել զինքը, բայց նկատի ունենալով որ ան հեռագրած էր թէ ժողովին յաջորդ օրը ճամբայ պիտի ելնէր, Պոսթըն գալու համար, չհեռագրեցինք եւ չէինք գիտեր թէ ո՞ր կը գտնուէր ընկեր Շահան:

Վերադարձին ընկեր Շահանը մեզ յանձնեց հրաժարագիր բողոքագիր մը, որով շեշտելէ յետոյ,

Ա) Որ Կ. կոմիտէն վարկաբեկած է Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ ոտնակոխած 23րդ Պատգ. ժողովի որոշումը:

Բ) Որ ան տխուր գրպարտողի կամ դաւաճանի հետ գործակցելու դերին մէջ մտած է:

Անիկա կ'ամբաստանէր Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտէն:

Աչքի առաջ ունենալով այս բոլորը մենք ապրիլ 28ի նիստին մէջ երկար խորհրդակցութենէ մը վերջ, որոշեցինք:

Նկատի ունենալով 1) որ ընկեր Շահանը յանցանք գործած է Կ. Կ.էի, այսինքն զինք գործի հրաւիրող մարմնին դէմ, Շիքակոյի հրապարակային ժողովին մէջ ըրած յայտարարութիւնովը:

2) որ ընկեր Շահանը այդ քայլով ո՛չ միայն հակադարձապահական ընթացքի մը մէջ գտնուած է, այլեւ շատ ծանր յանցանք գործած է իր պատկանած կուսակցութեան դէմ: 3) որ ան ամբաստանած է Կեդր. կոմիտէն:

Որոշուեցաւ Ա) չընդունիլ իր հրաժարականը, այլ հրաժարեցնել զինքը եւ մինչեւ յառաջիկայ Պատգ. ժողովը ոեւէ պատասխանատու գործի չհրաւիրել: Բ) Կուսակցութեան դէմ գործած յանցանքին պարագան ի գիտութիւն հաղորդել իր պատկան կոմիտէին: Գ) Կ. Կ.ը ամբաստանելու պարագան յանձնել գալիք պատգամաւորական ժողովին:

Չարսթաունի կոմիտէի հարց.— Մեր իրագործած համերաշխութիւնը բաւական դժգոհութիւններ յառաջ բերաւ ընկերներէն ոմանց մէջ: Այդ դժգոհութիւնը առաւելապէս արդիւնք էր գործերու փափուկ հանգամանքին պատճառով մեր բռնած դիրքին: Մենք գանգատ չունինք ընկերներու այդ մտածելակերպին դէմ: Մենք վստահ էինք որ երբ պատեհութիւն ունենայինք մեր ներկայացուցիչներու միջոցաւ հարկ եղած բացատրութիւնները տալ մեր մարմիններուն, այդ դժգոհութեան պատճառները պիտի վերանային: Փաստերը զօրաւոր կերպով ապացուցին մեր ակնկալութիւնները:

Միայն Չարսթաունի կոմիտէի քայլն էր որ բացառութիւն կազմեց: Անոնց բաց թողուցած շրջաբերականը անախորժ դէպք մըն էր, որովհետեւ անոնք այդ շրջ-

15.- Հարցը կը վերաբերի Արեւելեան լեգէոնի կամաւորներուն, որոնց կեդրոնացման վայրը Կիպրոս կղզին էր:

16.- Հակառակ ազգային համերաշխութեան շուրջ գոյացած համաձայնութեան եւ այդ ուղղութեամբ Կեդր. կոմիտէի յղած թելադրանքներուն բոլոր կոմիտէներուն, Շահան Նաթայի նշուած հրապարակային հաւաքոյթին, ի զարմանս Հ.Յ.Դ. Շիքակոյի կոմիտէին, բուն կերպով դէմ էր արտայայտուած այդ համաձայնութեան (Տես Կեդր. կոմիտէի 29 Մարտի թիւ 3 Շրջաբերականը, էջ-- --):



լաբերականով ո՛չ միայն կարեւորութիւն չտուին մեր թելադրութիւններուն՝ սպասել, լսել մեր բացատրութիւնները, ու հաստատեցին որ դիմումնաւոր կերպով դէմ գնացին ներքին կանոնադրութեան տրամադրութիւններուն, այլեւ իրենց բոլոր քայլերուն տեղեակ պահեցին մեր հակառակորդ կուսակցութեան մը անդամները:

Մեր թելադրութեան վրայ արդէն Ազգային միութեան տեղւոյն մասնաճիւղին մասնակցող երկու ներկայացուցիչներ ընտրած էին ու ապրիլ 9 թուակիր նամակով մեզ տեղեկագրած: Յետոյ ապրիլ 24ին կը գրեն «Կոմիտէս անհամբեր կը սպասէ ձեր լրակատար բացատրութեան. ամէնէն ուշը յառաջիկայ հինգշաբթի ապրիլ 26, իսկ եթէ որոշեալ ժամանակը լրանայ, կոմիտէս աւելի լրակատար գոհացում ստանալու համար՝ պարտաւորուած պիտի ըլլայ օրինական միջոցներու դիմել»:

Սակայն տարօրինակը այն է որ Չարլսթաունի կոմիտէն, փոխանակ համաձայն իրենց փափաքին, ապրիլ 26ին սպասելու մեր ներկայացուցիչներուն, հետեւեալը գրեց մեզ. «Ձեր վերջին նամակով կը յանձնարարէք որ կոմիտէս քայլեր առնէ տեղւոյս վրայ համերաշխութեան մարմին մը ստեղծելու: Կոմիտէս առայժմ չպիտի կրնայ այդպիսի ձեռնարկ մը շարունակել՝ նամակ գրելու տեղիս մէջ գտնուած քաղաքական կուսակցութիւններու եւայլն ընկերութիւններու՝ ստեղծելու համար համերաշխութեան մարմին մը: Մենք առայժմ մեզի կը վերապահենք ձեռնարկի յապաղումը»:

Մեր թելադրութեան վրայ անոնք մայիս 1ին ինդրեցին որ նոյն ամսոյն 3ին մեր ներկայացուցիչները երթան բացատրութիւններ տալու, սակայն մէկ օր վերջը մայիս 2ին բաց գրութեամբ հետեւեալը կը գրեն. «Ստացած ենք Ձեր նամակը եւ սակայն (վաղը երեկոյին) մայիս 31 1917 ժողով պիտի չկարողանանք գումարել, ուստի հաճեցէք ձեր ներկայացուցիչները չդրկել»:

Բայց հակասութիւններու ամէնէն տարօրինակը փնտրելու է Չարլսթաունի կոմիտէի շրջաբերականի թուականին մէջ:

Մայիս 1ին դիմում կ'ըլլայ ներկայացուցիչ ղրկելու մինչդեռ շրջաբերականը լոյս տեսած էր ապրիլ 29-ին:

Այս բոլորը գիտնալով մէկտեղ մեր մայիս 2ի նիստին մէջ որոշեցինք ներկայացուցիչներ ղրկելով բացատրութիւններ տալ եւ յետոյ հասկանալ անոնց հակակարգապահական քայլին պատճառները ու հեղինակները: Բայց մեր բոլոր ջանքերը անցան ապարդիւն, որովհետեւ անոնք վերջնապէս պնդեցին որ իրենց քայլը շիտակ էր եւ օրինական: Մեզ միայն մէկ միջոց կը մնար բաց կախակայել Չարլսթաունի կոմիտէն մինչեւ ներկայ պատգամաւորական ժողովը:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Խմբագրական կազմի փոփոխութիւններ.— Ընկերներ Մ. Օզանեան եւ Մ. Համբարձումեան նշանակուեցան «Հայրենիք»ի պատասխանատու խմբագիրներ:

Թերթին գործը կը տարուէր խմբագիր ընկերներու փոխադարձ համաձայնութեամբ եւ խորհրդակցաբար, մինչեւ Ազգ. միութեան կազմուիլը: Միութիւնը իրականանալէ յետոյ ընկեր Մ. Համբարձումեան ընտրուեցաւ Միութեան պատասխանատու քարտուղար: Կ. Կ. ը նկատի ունենալով գործին կարեւորութիւնը, իր հաւանութիւնը տուաւ եղած կարգադրութեան:

Ընկեր Համբարձումեանի նոր պաշտօնը, շատ բնական էր որ կը պակսեցնէր թերթին կարեւոր ուժերէն մէկը. կը մնար ընկեր Մ. Օզանեան իր երկու օգնական խմբագիրներով գործին գլուխը. ուրախ ենք ըսելու, որ արտակարգ աշխատութեամբ վարեցին թերթին գործը մինչեւ այսօր:

«Հայրենիք»ի գործակատարի խնդիրը.— Նկատի ունենալով ընկեր Մ. Սանդալի գործին վերաբերմամբ ունեցած փորձառութիւնը, փափաքեցանք գոնէ այս կարճ շրջանին մէջ օգտուիլ իր անցեալ փորձառութեանէն, սակայն ցաւալի է ըսել որ մեր կրկնակի դիմումները մերժումի հանդիպեցան:

Դիմեցինք ընկեր Ա. Սաչազլեանին. ընկեր Սաչազլեանի պայմանները թոյլ չէին տար իրեն ընդունելու առաջարկուած պաշտօնը: Կ.Կ. էի պնդումին վրայ՝ գործի սիրոյն ընկեր Սաչազլեան ընդունեց եղած հրաւերը:

Գործի սկսելու առաջին օրերուն մէջ, բաւական դժուարութիւններ երեւան եկան, որոնք արդիւնք էին գործաւորներու պակասին, սակայն կարճ ժամանակի մը մէջ կարելի եղաւ կանոնաւորութիւնը հաստատել, դժուարութիւնները որոշ չափով մեղմացան: Առաջին օրերուն մէջ թերթի անկանոն առաքումներու առիթով եղած դժգոհութիւնները դադարեցան: Ըսել չենք ուզեր, որ բոլոր դժուարութիւնները հարթուեցան եւ գործը հասաւ իր բաղձալի վիճակին, ո՛չ. բայց հաւատքն ունինք, որ ընկեր Սաչազլեանի ներկայութիւնը որոշ ժամանակի մը մէջ կարող պիտի ըլլայ ընդհանուր գործը գոհացուցիչ վիճակի մը հասցնել:

«Ասպարէզ» թերթի խմբագրական կազմ.— Կ. Կ. էն նկատի ունենալով Քալիֆորնիոյ շրջանի ընկերներու պահանջը եւ «Ասպարէզ»ի խմբագրի մը անհրաժեշտ պէտքը, ընկեր Արսէն Միքայէլեանը նշանակեց Քալիֆորնիոյ շրջանէն գործիչ, խմբագիր ընկեր Գապատայեանի հետ խորհրդակցաբար վարելու «Ասպարէզ»ի խմբագրական եւ վարչական գործերը:

Յենուած Քալիֆորնիոյ շրջանի մարմիններու տուած տեղեկութիւններուն վրայ, ուրախ ենք ըսելու



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

որ ընկեր Արսէն Միքայէլեան, կարճ ժամանակի մը մէջ կարող եղած է տեղական ժողովրդին եւ ընկերներու շրջանակին մէջ լայն համակրութիւն մը ստեղծել թերթին ու կազմակերպութեան շուրջ:

Գործիչներ.— Ընտրուեցան երկու փրոփականդիստ գործիչներ, ընկերներ Շահան Նաթալի եւ Սահակ Չիթչեան. երկու ընկերներն ալ մինչեւ Ազգ. միութեան կազմուիլը, նախապէս պատրաստուած ծրագրի մը համաձայն, հրապարակային ժողովները կը շարունակէին զանազան քաղաքներու մէջ: Սակայն Ազգ. միութեան կազմուելովը ծրագրուած հրապարակային ժողովներու մէկ մասը մնաց անկատար:

Կազմակերպիչ գործիչներ.— Կազմակերպիչ գործիչներու համար՝ դիմեցինք ընկերներ Կորոյեանի, Յ. Դարբինեանի եւ Յովհաննէս Աստիկեանի. ընկերներ Կորոյեան եւ Դարբինեան բացարձակ կերպով մերժեցին: Միայն ընկեր Աստիկեան ընդունեց եղած հրահրերը:

Այդ օրերուն էր, որ Միութեան կողմէ պահանջ կ'ըլլար գործիչներ տրամադրելու միութեան հրապարակային եւ բացատրական ժողովներուն համար. մեր կողմէ նշանակուեցան ընկերներ Սահակ Չիթչեան, Սարգիս Մալճանեան: Սարգիս Չիթչեան եւ Յով. Աստիկեան. յիշեալ ընկերները միութեան հրապարակային ու բացատրական ժողովներու համար այցելած վայրերը. իրենց պարապոյ ժամերուն, կազմակերպական գործով զբաղած են, սարքուած են դասախօսական եւ ընկերական ժողովներ:

Նոր գործիչներ բերելու հարց.— Նոր գործիչներ բերելու համար դիմեցինք Արեւելեան բիւրոյին եւ ընկեր Վարանդեանին, պարզելով միեւնոյն ժամանակ ընկեր Արսէն Միքայէլեանի Կովկաս մեկնելու վճռական որոշումը. Արեւելեան բիւրոյն ոչ մի պատասխան այդ մասին: Իսկ ընկեր Վարանդեան կը գրէր որ «գործիչ ճարել անհնար է այս օրերում, անգամ երկրորդական: Արսէնին պահեցէք այդտեղ, Վրացեանը կանչեցէք, նրան փոխարինելը Կովկասում դժուար է»:

Առանց յուսահատելու կրկին գրեցինք Արեւելեան բիւրոյին, խնդրեցինք որ նկատի ունենայ մեր գործիչի պահանջը, պարզելով գործիչի անհրաժեշտ կարիքը. մեր կրկնակի դիմումները կրկին մնացին անխելի եւ առանց պատասխանի:

Գործիչի այս նեղ օրերուն ընկեր Ա. Հանրմեանի ներկայութեանն օգտուելով, Կ.Կ.էի որոշումով ան այցելեց կարգ մը կոմիտէներ եւ իր այցելութիւնը գնահատելի օգտակարութիւն ունեցաւ կազմակերպականօրէն:

«Հայրենիք»ի հաշուեքննիչ յանձնախումբ.— 23րդ պատգամաւորական ժողովի որոշման համաձայն, հե-

տեւալ երեք ընկերներէն ընտրուեցաւ հաշուեքննիչ յանձնախումբը:

Ա. Սաչազլեան իբրեւ մասնագէտ, Խ. Գալուստեան եւ Մ. Մուրատ, որոնք աւելի քան երկու շաբաթ մանրակրկիտ կերպով քննեցին «Հայրենիք»ի հաշիւները եւ գոյքերը: Յանձնախումբի տուած տեղեկութեան վրայ յենուած, կու գանք յայտարարելու, որ բոլոր հաշիւները եւ գոյքերը գտանք համապատասխան տոմարներուն:

Ընկերներու ինքնագարգացման եւ փրոփականդիստներ պատրաստելու հարց.— Նկատի ունենալով ատենախօս ընկերներու պակասը եւ կոմիտէներու պահանջը, ընտրուեցաւ կեդրոնական յանձնախումբ մը, կազմակերպուեցաւ դասախօսական ժողովներու շարք մը, որը կանոնաւոր կերպով առաջ կը տարուէր. հրահրուած էին ընդունակութիւն եւ հետաքրքրութիւն ցոյց տուող ընկերներ, Պոսթընի մօտիկ շրջաններէն: Տրուած է 7 դասախօսութիւններ:

Թէեւ ծրագիրը ընդհանուր էր, եւ որ տեղի պիտի ունենար նման դասախօսական ժողովներ զանազան շրջաններու մէջ, սակայն ուժերու պակասին պատճառաւ անկարելի եղաւ իրագործել, այս կարճ ժամանակաշրջանին մէջ:

Գրական «Պարբերական մը» հրատարակելու հարց.— Չանազան կողմերէ եղած դիմումներուն վրայ Կեդր. կ.էս յարմար նկատեց «Հայրենիք»ի շաբաթ օրուան ութ էջերը վերածել չորս էջանի եւ անոր փոխարէն հրատարակել գրական պարբերական մը. սակայն նկատի ունենալով պատգամաւորական ժողովի մօտալուտ գումարումը, որոշեց, նախքան գործին ձեռնարկելը, ժողովիդ լուրջ ուշադրութեանը յանձնել:

Կարմիր խաչերու եւ կոմիտէներու կանոնագրերու վերաքննութեան հարց.— Ընտրուեցաւ յանձնախումբ մը այդ ուղղութեամբ աշխատանք կատարելու համար:

Յանձնախումբը ըրաւ իր կարելին, սակայն հագիւ կարող եղաւ կոմիտէներու կանոնագրի վերաքննութիւնը լրացնել:

Կուսակցական արտասահմանեան յարաբերութիւններ.— Հակառակ մեր կանոնաւոր յարաբերութեան, որ եղած է Արեւելեան բիւրոյին, ժընեւ «Դրօշակ»ի խրմբագրութեան, ընկեր Մ. Վարանդեանին եւ Եգիպտոսի մարմնի հետ, բացի ընկեր Վարանդեանէն, միւսները կանոնաւոր եւ ոչ մէկ տեղեկութիւն տուած կամ պատասխանած են մեր նամակներուն:

Արեւելեան բիւրոն մեր նամակներուն ի պատասխան միայն մէկ երկու անգամ հեռագրով դրամ պահանջած է:



Նոյնպէս եղած են ժրնեւի յարաբերութիւնները մեզի հետ. ընկեր Վարանդեան սակայն օրը օրին պատասխանած է մեր նամակներուն լրացուցիչ տեղեկութիւններով:

Գաղթականական գումարներ փոխադրելու հարց եւ Ազգ. բիւրօ.— Ինչպէս գիտէք նախորդ Կ. Կ.ներու որոշումով գաղթականներուն համար՝ իրենց բարեկամներն ու ազգականները գումարներ կը փոխադրէին Կովկաս՝ Ազգային բիւրոյին, յանձնելու համար պատկանեալներուն:

Ցաւալի է ըսել, որ այդ գործին մէջ չափազանց անհոգութիւններ պատահած են եւ որ պատճառ դարձած են դժգոհութիւններ ստեղծելու:

Կ. Կ.էն նկատի ունենալով զանազան կողմերէ հասած գանգատները, որոնք կրնան օր մը վատ բարդութիւններ առաջ բերել, որոշեց դադրեցնել գաղթականներուն դրամ փոխադրելու գործը:

Կ. Կ.էի պակաս անդամի խնդիր.— Ընկեր Ա. Սաչազլեանի «Հայրենիք»ի գործակատար ընտրուելովը Կ. Կ.էի մէկ անդամը կը պակսէր. պատգամաւորական ժողովի որոշման համաձայն, իր ժամանակին շրջաբերականով երեք թեկնածու ընկերներու ցանկ մը պատրաստելով զրկեցինք կոմիտէներուն քուէարկելու համար. ցաւալի է ըսել որ այդ գործին մէջ կոմիտէները շարժեցան չափազանց դանդաղ եւ մէկ մասն ալ բնաւ չզրկեց քուէներու արդիւնքը:

Միաժամանակ քուէները բաժնուեցան երեք մասերու. ընկեր Զատիկ [Մաթիկեան] թէեւ առաւելագոյն քուէն շահողն էր, սակայն նկատի ունենալով որ երկու երրորդի օրինականութիւնը չէր լրացներ եւ նկատի ունենալով որ երկու ամիս կը մնար պատգամաւորական ժողովի գումարման եւ անկարելի էր նոր ընտրութեան ձեռնարկելու, պարտաւորուեցանք ընկեր Սաչազլեանի Կեդր. կոմիտէի անդամակցութիւնը պահել մինչեւ պատգամաւորական ժողովը:

Հայանպաստ փրոփականտ եւ «Նիւ Արմենիա».— Համաձայն 23րդ պատգամաւորական ժողովի որոշումներուն, մեր կարելի աջակցութիւնը չխնայեցինք «Նիւ-Արմենիային», տարածելու զայն օտար շրջանակներու մէջ:

«Նիւ-Արմենիան» ունեցաւ իր դժբախտ վայրկեանները. երկու անգամներ դադրելու վիճակին հասած էր: Նկատի ունենալով ու Ազգ. բիւրոն հայանպաստ փրոփականտի պարտականութիւնն ալ մասամբ իր վրայ վերցուցած էր եւ որ «Նիւ-Արմենիան» Ամերիկայի մէջ հայանպաստ փրոփականտի միակ միջոցն էր, Ազգային բիւրոյի դրամէն \$500 (հինգ հարիւր տոլարի) գումար մը տրամադրեցինք փակուելու վտանգէն ազատելու համար «Նիւ-Արմենիան»:

Միօրինակ հաշուապահութեան եւ արձանագրութեանց տեսքեր.— Պատգամաւորական ժողովի որոշման համաձայն, գործադրուած է եւ այժմ պատրաստ են եւ կարելի է գործադրութեան դնել:

Դրամական առաքումներ.— Ղրկուած՝ Արեւելեան բիւրոյին 12,000,00 (տասներկու հազար տոլար) որուն երկու հազարը զրկուած է վեթերան կարօտ ընկերներուն եւ անոնց պարագաներուն:

Վրամեանին քրոջը՝ Վարանդեանին միջոցաւ հարիւր տոլար, յիսուն տոլար՝ ընկեր Ատրուսիի կնոջը:

Կոմիտէներու եւ ընկերներու թիւր.— Կոմիտէներու թիւն է 102, որոնց երկուքը խումբ են: Ընկերներու տեղափոխութեան պատճառաւ լուծուած են երեք կոմիտէներ: Այս շրջանին ընկերներու ընդհանուր թիւր հասած է 4199ի. ասոնց մէջ են 108 արտաքսուած եւ հրաժարուածներ, 100 տեղափոխուածներ. կան նաեւ անորոշ թիւով շատ մը ուրիշ տեղափոխուածներ, որ դժբախտաբար՝ հնարաւորութիւն չունեցանք ճշդելու, քանի որ օր օրին ճշգրիտ տեղեկութիւններ հաղորդած չեն մեզի կոմիտէները:

Կարմիր խաչեր եւ ընկերուհիներ.— Կարմիր խաչերու թիւն է 49 խումբ, 898 ընկերուհի. ասոնցմէ հրաժարուածներ եւ հեռացուածներ են 4 ընկերուհիներ: Կարմիր խաչերու թիւն ալ կոմիտէներու նման ճշդելու հնարաւորութիւն չենք կրցած ունենալ:

Յաջողութիւն կը մաղթենք

Ընկերական բարեկներով
Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 1405ա-15

**Դ 2.- ՈՐՈՇՈՒՄՆԵՐ Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ ՇՐՁԱՆԻ
24ՐԴ ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԻՆ
1917
(ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ)**

Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի շրջանի 24-րդ Պատգամաւորական ժողովը բացուեցաւ 1917, յունիս 30-ի, իրիկուան ժամը 7-ին, Պոսթընի մէջ: Մեր 102 կոմիտէներէն Պատգամաւորական ժողովին կը մասնակցէին 69 կոմիտէներ, 84 պատգամաւորներով, որոնք կը ներկայացնէին 93 ձայներ, Կեդրոնական կոմիտէն, գործիչներ՝ մէկ-մէկ ձայնով:

Հետեւեալ կոմիտէները ունէին իրենց պատգամաւորները.

Ահմիթ	1
Էքըրն	1
Պինկէմթըն	1
Պոսթըն	2
Պրիմփորթ	2
Պրիմուոթըր	1
Պրաքթըն	1
Քէմտըն	1
Ս. Ֆոլս	2
Չլսի	2
Ուէսթ Փոլմըն	} 6
Ուոքէկըն	
Շիքակօ	
Րէյսին	
Քնուշա	
Միլուոքի	
Ս. Միլուոքի	
Քլիվլէնտ	1
Տիթրոթի	2
Ուէսթ Տիթրոթի	} 2
Փոնթիաք	
Իսթ Քէյպլըիճ	1
Իսը Սէնթ Լուիզ	} 2
Սէնթ Լուիզ	
Իսթ Ուէյմըթ	1
Ֆիչպըրկ	1
Ֆրանքլին	1
Ֆաուլըր	1
Ֆրեզնօ	2

Համիլթըն	} 2
Կոլֆ	
Հարթֆըրտ	1
Հէյվըհիլ	1
Հոփուէլ	1
Հըասըն	1
Ինտիլըն Օրչըրտ	2
Լորէնս	2
Լոէլ	1
Լին	2
Մէտիսըն	1
Մանչէսթըր	2
Մէսինա	1
Միտուէլ	1
Միլֆըրտ	1
Նիւ Պրիթէյն	2
Նիւ Հէյվըն	1
Նիւ Եորք	3
Նիակարա Ֆոլս	2
Փորթլէնտ	1
Փրաւիտէնս	5
Րիչմոնտ	1
Սփրինկֆիլս	1
Սթոնհէմ	1
Սիրաքիւզ	2
Թրոյ	1
Ուոթըրվիլթ	1
Ուոթըրթաուեն	2
Ունսքի	1
Ուէսթ Հոպոքըն	2
Ուասըր	3
Ուայթինսվիլ	2
Մոլտըն	1
Ֆիլատելֆիա	2
Ունսաքէթ	1
Փէթէրսըն	1
Նիւպրիփորթ	1
Եուլթիքա	1
Ս. Պոսթըն	1
Սէնթ Քէթրին	1
Կ. Կոմիտէ	1
Գործիչներ	1

Ձանազան պատճառներով հետեւեալ կոմիտէները մասնակցած չէին Պատգամաւորական ժողովին,

Պէնթոնորֆ, Պինկհէմ, Պրանդֆրատ, Պրուքլին, Պուէնոս Այրէս, Քանքըրտ, Քոլումպոս, Հէրքըմըր, Իրի, Կրանտ Բափրտս, Քանսաս Սիթի, Ինտիանա Հարպըր, Միտլլայոբո, Միլիս, Մինէափոլիս, Կրով Սիթի, Նէշուէ, Նիւ Քէսըլ, Նուարք, Նիւթըն Ըփփըր Ֆոլս, Փիպատի-Սէյլըմ, Փարլիըր, Բիտլի, Բոչեսթըր, Սան Ֆրանչիսքօ, Ս. Շիքսփ, Ս. Ճոզէֆ, Սթոնհէմ, Ս. Փօլ, Թոլէտօ, Ուալփրէզօ, Երնկաթառն:

ՇՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱԿՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ

Պատգամաւորական ժողովը, իր գումարման առիթով, որոշեց շնորհաւորական հեռագրեր ղրկել նախագահ Ուիլյամին, ռուսական Առժամեայ կառավարութեան, ռուս պատերազմական նախարար Քերենսկիի, Հայաստանի եւ Արեւելեան բիւրոներուն:

Պատգամաւորական ժողովը միաձայն հաւանութեամբ որոշեց նամակով մը շնորհաւորել Ազգային միութեան կեդրոնական մարմինը՝ համերաշխութեան իրականացումի եւ իր կատարելիք դերի մասին, եւ յայտնել մեր սիրայօթար եւ գոհաբերող գործակցութիւնը անոր ընդգրկած ձեռնարկներուն:

Մեր պատգամաւորական ժողովի եւ Հ. Ս. Ռամկավար եւ Վերակազմեալ հնչակեան կուսակցութեանց Պատգամաւորական ժողովներուն միջեւ շնորհաւորական գիրեր փոխանակուեցան:

ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պատգամաւորական ժողովը լսելով գործիչ ընկերներ — Ա. Միքայէլեանի, Ս. Չթճեանի, Շահան Նաթալիի եւ Յ. Աստիկեանի — տեղեկագրերը, գտաւ որ անոնք իրենց յանձնուած աշխատանքը առաջ տարած են կանոնաւոր եւ գնահատելի կերպով, եւ այդ առթիւ իր գոհունակութեան քուէն յայտնեց:

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պատգամաւորական ժողովը լսեց «Հայրենիք»ի խմբագրութեան տեղեկագիրը, եւ գտնելով որ «Հայրենիք»ի բարելաւումին համար մեծ աշխատանք կատարուած է, իր գոհունակութիւնը յայտնեց:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Նկատի ունենալով որ ամերիկահայ իրականութիւնը

կը ներկայացնէ անհամեմատ բարդութիւններ, կուսակցական եւ հասարակական տեսակէտներէ, որ մամուլը այդ բարդութիւններու լուծման մէջ նշանակելի դեր կը խաղայ, Պատգամաւորական ժողովը կը թելադրէ նորընտիր Կեդրոնական կոմիտէին, «Հայրենիք»ի համար ընդունիլ պատասխանատու խմբագրի դերութիւնը, այդ պաշտօնը յանձնելով իր ձեռնհաս նկատած ընկերոջ, պարտք դնելով անոր վրայ, որ գործը վարէ խմբագիր ընկերներու խորհրդակցութեամբ. իսկ «Ապարէզ»ը շարունակել նախորդ Պատգամաւորական ժողովի որոշման համաձայն:

ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ.Յ.Դ. 24-րդ Պատգամաւորական ժողովը լսելով Կեդրոնական կոմիտէի վեցամսեայ գործունէութեան տեղեկագիրը, եւ այս մասին եղած թեր ու դէմ վիճաբանութիւնները, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

ա.- Կեդրոնական կոմիտէն կուսակցական աշխատանքները տարած է տուեալ պայմաններու մէջ, բաւական յաջող.

բ.- Համերաշխութեան խնդրին մէջ ան ընդառաջ երթալով տարիներէ ի վեր մեր հետապնդած նպատակին, ինչպէս նաեւ օրուան հրամայական պահանջին՝ իրականացուցած է անհրաժեշտ համերաշխութիւնը ազգային գանազան հոսանքներու մէջ, ժողովս այս մասին կը գտնէ զինք շնորհաւորելի եւ կը յայտնէ իր գոհունակութիւնը:

գ.- Իսկ նկատի ունենալով, որ Կեդր. կոմիտէն իր այս ջանքերուն մէջ ընթացած չէ 23-րդ Պատգամաւորական ժողովի գծած ուղղութեամբ — փոխադարձ համաձայնութեան սկզբունքով — գայն կը նկատէ քննադատելի՝ կարգապահական տեսակէտէն:

Ժողովը իմանալով որ Կեդրոնական կոմիտէի քարտուղարութիւնը մինչեւ վերջին նիստին կարող եղած չէ իր ընդհանուր հաշուեկշիռը պատրաստել եւ ներկայացնել Պատգամաւորական ժողովին, իր դժգոհութիւնը յայտնեց այս անպատեհ յետաձգումին եւ նշանակեց յանձնախումբ մը, որ իրաւասութիւն ունենայ, առ առաւելն մինչեւ երկու շաբաթ, վերջնականապէս քննել Կեդրոնական կոմիտէի հաշուեկշիռը եւ գայն տեղեկագրել կոմիտէներուն:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՏՈՒՐՔ

Կազմակերպական տուրքի վրայ մասնաւոր յաւելումով «Հայրենիք»ը ընկերներու ճրի ղրկելու հարցը, առանց վիճաբանութեան, մեծամասնութեան քուէով մերժուեցաւ: Կուսակցական տուրքի գումարը կը մնայ նոյնը:

ԿԱՆՈՆԱԳՐԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Կանոնագրի վերաքննութեան յանձնախումբը իր աշխատանքները կատարած եւ սակայն այս աշխատութեանց արդիւնք ձեռագրերը անմիջապէս իր ձեռքին տակ չունենալով, ժողովը որոշեց, իրաւասութիւն տալ Կեդրոնական կոմիտէի կողմէն ընտրուած յանձնախումբին, որ օժանդակութեամբ Պատգամաւորական ժողովին կողմէ ընտրուած յանձնախումբին իր աշխատանքները լրացնէ եւ զանոնք կոմիտէներու վերաքննութեան ենթարկելէ յետոյ յանձնէ տպագրութեան:

ԹԵՄԱԿԱՆ ՀԱՐՑ

Նկատելով որ թեմական հաստատութիւնները որոշ դէր կը խաղան զանազան խնդիրներու մէջ (կրթական, ազգային), եւ նկատելով, նաեւ որ, Ազգային երեսփոխան ժողովը պաշտօնապէս կը մասնակցի Ազգային միութեան, ինչպէս եւ տեղական հոգաբարձութիւնները՝ Ազգային միութեան մասնաճիւղներուն,

Ժողովս կ'որդեգրէ նախորդ Պատգամաւորական ժողովին որոշումը, միանգամայն բարոյական պարտք դնելով բոլոր ընկերներու վրայ, որ հաւաքաբար ջանք թափեն այդ ուղղութեամբ:

ԴԱՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պատգամաւորական ժողովը վաւերացուց դատական յանձնախումբի արձակած վճիռները ներքին միջանի խնդիրներու վերաբերմամբ եւ որոշեց զանոնք յանձնել յաջորդ Կեդրոնական կոմիտէի՝ ի գործադրութիւն:

ՉԱՐԼՍԹԱՌՈՒՆԻ ԿՈՄԻՏԷԻՆ ԽՆԴԻՐԸ

Չարլսթաունի կոմիտէն իր ծանօթ թուուցիկ շրջաբերական շրջաբերութիւնովը կանոնագրի տրամադրութեան հակառակ քայլի մը մէջ գտնուած ըլլալու յանցանքով, Կեդրոնական կոմիտէի կողմէ կախակայուած էր մինչեւ ներկայ Պատգամաւորական ժողովի գումարումը:

Յիշեալ կոմիտէն այդ խնդրին առթիւ դիմած էր Պատգամաւորական ժողովին, որ քննելով այս խնդիրը, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

ա.- Որ Չարլսթաունի կոմիտէն, ըստ մեր ներքին կանոնագրի յօդուած 53-ի, իր իրաւասութեան սահմանէն դուրս ելած ըլլալով, Կեդրոնական կոմիտէն իր իրաւունքին մէջն էր յիշեալ վճիռը տալու.

բ.- Որ յիշեալ կոմիտէն կախակայումի ժամանակը եւ ներկայ Պատգամաւորական ժողովին մասնակցութեան գրկուելը բաւ համարելով իբրեւ պատիժ, հրաւիրել

րել Չարլսթաունի կոմիտէն, որ ընդունի իր սխալը, եւ այդ հիման վրայ Կեդրոնական կոմիտէին պարտադրել, որ սկսի իր յարաբերութիւնը այդ կոմիտէին հետ:

Շահան Նաթալիի խնդիր.— Պատգամաւորական ժողովը նկատի ունենալով ընկ. Շահան Նաթալիի հակա-կարգապահական վարմունքը Շիքակոյի հրապարակային ժողովին մէջ, որուն առթիւ Կեդրոնական կոմիտէն արդարացիօրէն յիշեալ ընկերը դադրեցուցած էր իր գործիչի պաշտօնէն, կը հրաւիրէ ընկեր Շահան Նաթալին, ընդունիլ իր այդ սխալը, ինչպէս նաեւ ետ առնել այս առթիւ Կ. Կ.ի դէմ իր ըրած ամբաստանութիւնները, եւ այսպէսով խնդիրը փակուած նկատել:

ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԻ ՀԱՐՑ

Շրջանային խորհուրդներու վերահաստատութեան հարցը մերժուեցաւ: Պատգ. ժողովը հաստատեց անցեալ Պատգամաւորական ժողովի որոշումը, երկու տեսակ, այսինքն պրոպագանդիստ եւ կազմակերպող գործիչներու դրութիւնը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՕՆԵԱՅ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՇԱՐԱԹԱԿԱՆԻ ՅԱԻԵԼՄԱՆ ՀԱՐՑ

Պատգամաւորական ժողովը որոշեց մեր կազմակերպութեան պատասխանատու պաշտօնեայ ընկերներու վճարել շաբաթական 15 տոլար ամուրիներու, իսկ շաբաթական 18 տոլար ամուսնացողներու համար:

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ

Կամաւորական հարցի շուրջ Պատգամաւորական ժողովը անցուց հետեւեալ բանաձեւը.—

Նկատելով որ

ա.- Մեր ազգային դատը եւ քաղաքական ինքնուրոյնութեան հարցը կապուած է Դաշնակից պետութիւններու գէնքի յաղթանակին, որուն իրականացումին համար թափած մեր ջանքերը բարոյական ու քաղաքական մեծ նշանակութիւն պիտի ունենան փոքր ազգերու քաղաքական ճակատագիրը վճռելու պարագային,

բ.- Որ գէնքի յաղթանակը մեր ազգային հարցի լուծման տեսակէտէն արդէն մեր կուսակցութեան հաւատամքը եղած է տարիներէ ի վեր, եւ մօտաւոր անցեալի մէջ ալ ստեղծուած ազգային շարժման մենք նուիրուած ենք մեր ամբողջական թափով,

Պատգամաւորական ժողովը կ'որոշէ զօրավիզ ըլլալ սկսուած կամաւորական շարժման, հնարաւոր եղած չափով տալով անոր ժողովրդական լայն ծաւալ:

Եւ կը թելադրէ Կեդրոնական կոմիտէին, որ բանակցի արտասահմանի պատկան մարմիններուն հետ, յա-

ուղ բերելու ազգային համանման շարժում մը կողմից սահման ճակատին վրայ:

ԱԶԳ. ԲԻՒՐՈՅԻՆ ԱՆՈՒՆՈՎ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԱԾ ԴՐԱՄՆԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Նկատի ունենալով որ Ազգային բիւրոյի անուկով բաւական խոշոր գումար մը կայ մեզ մօտ, որոշեց որ Կեդրոնական կոմիտէն անմիջապէս տեղեկանայ կողմից սահման ճակատի վրայ կազմուելիք կամաւորական շարժման մասին, եւ եթէ այդպիսի շարժում գոյութիւն ունի՝ ամբողջ գումարը տրամադրել այդ շարժման. իսկ եթէ ոչ՝ մէկ մասը պահել երկրի ինքնապաշտպանութեան, փոխ-հատուցումի եւ ուրիշ մարտական ձեռնարկներու համար, եւ մնացած գումարը յատկացնել ազգային անմիջական կարիքներու (Միջագետքի եւ Կովկասի փախստականներուն, Մուրադի ձեռնարկին¹⁷), Ազգային բիւրոյի միջոցով եւ Արեւելեան բիւրոյի խորհրդակցութեամբ:

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Նկատի ունենալով որ համերաշխութիւնը, ներկայ պատմական օրերուն, մեր ազգային իտէայը իրականացնելու տեսակէտէն հրամայական անհրաժեշտութիւն մըն է,
Պատգամաւորական ժողովը կ'որոշէ ուժ տալ կազ-

մրած Ազգային միութեան, եւ որպէսզի այդ Միութիւնը տեւական նուաճումներ կատարէ հայ կեանքին մէջ՝ կը պարտադրէ նորընտիր Կեդր. կոմիտէին, որ ուժեղ կերպով հետապնդէ համերաշխութեան զօրեղացման գործը, եւ անկեղծ ու համերաշխ տարրերու հետ կողք կողքի աշխատի չէզոքացնել համերաշխութեան սպառնացող ուժէ պատահականութիւն, ինչպէս նաեւ Միութեան դիւանագիտական աշխատանքները եւ հայկական դատի պրոպագանդի գործը յանձնել ձեռնհաս մարմնի մը:

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԵՐՈՒ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Նկատի ունենալով, որ Հ.Յ.Դ. Կարմիր խաչի խումբերը կը ղեկավարուին Հ.Յ.Դ. Կ. կոմիտէէն, որուն ներկայացուցիչները ներկայիս արդէն կը մասնակցին Հայ ազգային միութեան, եւ նկատի ունենալով նաեւ, որ գոյութիւն չունի Հայ ազգային Կարմիր խաչի կազմակերպութիւն մը, ժողովս կ'որոշէ, որ Հ.Յ.Դ. Կարմիր խաչերը մնան իրենց նախկին դրութեան մէջ՝ գործակցելով միանգամայն Ազգային միութեան այն ձեռնարկներուն, որոնք կը համապատասխանեն Հ.Յ.Դ. Կարմիր խաչի ընդգրկած նպատակներուն:

Կ.Կ.Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Յանձնախումբի պատրաստած եռապատիկ ցանկի վրայէն, գաղտնի քուէով նորընտիր Կեդր. կոմիտէի անդամ ընտրուեցան ընկերներ՝ Ն. Տ. Ս. Թ., Զ. Մ., Մ. Հ., Զ. Ն., Յ. Ա., Ա. Յ. Ս., Վ. Պ.:

17.- Խօսքը կը վերաբերի դաշնակցական յայտնի մարտիկ Սեբաստացի Մուրատին: Ատեն մը կը մտածուէր զինք հրաւիրել դեկավարելու համար Արեւելեան Լեզնոնի հայ կամաւորները:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԹԻՒ

Դ 3.- ԿՈՉ ԱՍԵՐԻԿԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Պոսքըն, 3 Ապրիլ 1917

Հայրենակիցներ,

Պատմութեան այն վճռորոշ դարձումաժքին վրայ, ուր բռնապետութիւններ կը տապալին՝ տեղ տալու համար փոքր ազգութիւններու ծղումին՝ այդ ազգութիւնները ամէն ժամանակէ աւելի պէտք է գտնուին իրենց կոչման բարձրութեան վրայ:

Արինձի ու Եղեռնի կարմիր գոլորշիներուն մէջէն ազատութեան արշալոյսն է որ կը բացուի բոլոր իրաւագործ ժողովուրդներուն համար՝ եւ այդ ժողովուրդները բոլորն ալ կ'ամփոփեն իրենց ուժերը, վերջ կը դնեն իրենց ներքին անհամաձայնութեանց՝ պատրաստուելու համար վճռական գրոհին:

Իրաւագործ ազգերու շարքին մէջ հայ ազգն ալ իր պատուոյ տեղը կը գրաւէ, եւ անոր համար եւս կը ճշուի ահա՛, ազատութեան ցանկալի արշալոյսը:

Բայց իր քաղաքական ինքնօրինակութիւնը ձեռք բերելէ առաջ՝ հայութիւնը պէտք է ի յայտ բերէր իր քաղաքացիական հասունութիւնը. քաղաքական միութիւն մը կազմելէ առաջ պէտք է կազմէր իր ազգային ներքին միութիւնը:

Հայրենակիցներ,

Պատմական այս բախտորոշ րոպէներուն մէջ, ուր մենք կը գտնուինք ազգովին՝ ամերիկահայութիւնն զգաց իր պարտականութիւնը եւ այսօր մենք ուրախ ենք Չեզի աւետելու թէ ազգային միութիւնը, Ամերիկայի մէջ եւս, կատարած իրողութիւն մըն է արդէն, երկու եկեղեցիներու, հայ քաղաքական չորս կազմակերպութեանց եւ ՀԲՄիութեան համերաշխ գործակցութեամբ:

Չեզ կը մնայ ուրեմն, հայրենակիցներ, բոլորուիլ Հայ Ազգային Միութեան շուրջ, թեւ ու թիկունք հանդիսանալ անոր, զօրացնել զայն ձեր բոլոր աջակցութեամբն ու օգնութեամբը՝ մէկ սիրտ, մէկ հոգի, մէկ մարմին՝ ընդ առաջ երթալու համար մեր ազգային բոլոր պարտականութիւններուն:

Վեց հարիւր տարուայ գերութենէ դէպի ազատութիւն անցնելու համար վերջին ճիգ մըն ալ պէտք է, վերջին զոհողութիւն մըն թերեւ: Այդ ճիգը մենք պէտք է կատարենք ազգովին, այդ վերջին զոհողութեան մենք պէտք է սիրայօժար ընդ առաջ երթանք՝

Հայրենիքին համար,
Վերջնական յաղթանակին համար,
Կեցցէ՛ Հայ Ազգային Միութիւնը:

«Հայրենիք», Ապրիլ 6, 1917

Ամերիկահայ Ազգ. Երեսփ. ժողովի ներկայացուցիչներ, Հայ Աւետ. եկեղեցւոյ ներկայացուցիչներ
Ս. Դ. Հնչակեան կուս. Ամերիկայի գործադիր յանձնախումբ, Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի Կեդր. կոմիտէ
Վեր. Հնչակեան կուս. Ամերիկայի նահանգ. վարչութիւն, Հ. Ս. Ռամկավար կուս. Ամերիկայի նահանգ. վարչութիւն
Հ. Բ. Ը. Միութեան ներկայացուցիչներ

Դ 4.- ՊԱՏԳԱՍԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆԻՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՆԱԽԱԳԱՀ ՈՒՒԼՍԸՆԻՆ

Հայկական Դաշնակցութիւն կուսակցութեան 24րդ Պատգամաւորական ժողովը հաւաքուած Ֆրէնքլին Իւնիլըն Հօլի մէջ, Պոսքըն, Մէս., իր սրտագին գնահատութիւնը կը յայտնէ այն հաստատուն կեցումաժքին համար, որ դուք ի գործ կը դնէք ընդհանրացնելու ռամկավարութեան սկզբունքները, ազատելով փոքրիկ ազգերը ինքնակալութեան օրէնքներէն: Պատգամաւորական ժողովը յոյս ունի, որ Հայաստանն ալ, որ յանձնուած է այս մեծ հանրապետութեան եւ դաշնակից պետութիւններու հոգատարութեան, պիտի մտնէ փոքրիկ ազգերու ցանկին մէջ եւ գալիք խաղաղութեան համաժողովը պիտի ըլլայ միջոց, որով ձեր կողմէն յայտարարուած ռամկավարութեան սկզբունքները պիտի իրագործուին:

(«Հայրենիք», 1 Յուլիս 1917, էջ 1):

Փաստ. 1405ա-2

Դ 5.- ՁԵԿՈՒՑՈՒՄ Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Սիրելի ընկերներ!

Այս տարուայ յունուարին, Կ. կոմիտէիդ պնդումներուն գիշանելով, անցայ Քալիֆորնիոյ շրջանը՝ իբրեւ խմբագիր-գործիչ, տեղական գործերը վարելու համար:

Չնայած բազմիցս հրաժարականներու եւ Կովկաս երթալու մտադրութեան, ես տեղի տուի եւ վերջին անգամ յարգելով պատգամաւորական ժողովի եւ Կ. կոմիտէի ինձ ուղղուած դիմումները, անցայ հեռաւոր այդ շրջանը:

Քալիֆորնիան, ուր մօտ 13 հազար հայութիւն է ապրում, բաւական պարարտ հող է ներկայացնում կուսակցական աշխատանքների համար: Այնտեղ գոյութիւն ունեցող քաղաքներէն՝ Ֆրեզնոյի, Ֆաուլըրի, Բարիլըրի, Րեալիի, Լոս-Անճելոսի եւ Սան-Ֆրանսիսքոյի մէջ կոմիտէներ ունինք: Վերջերս ալ երկու կարեւոր վայրերում Ետեմ եւ Քինկսպուրկ հող պատրաստուած է եւ նոր կոմիտէներ պիտի կազմուին:

Առաջին պատեհութեամբ անցայ ժողովներու կարգին եւ վեց ամսուայ ընթացքում ունեցայ հետեւեալ ժողովները:—

Հրապարակային	— 19
Բացատրական	— 35
Ընկերական	— 51
Կ. խաչ	— 8

Ընդամենը 6 ամսուայ ընթացքում, Դեկտ. 24-ից մինչեւ Յունիս 24-ը ունեցել եմ 113 ժողով:

Այդ ժողովների մէջ գլխաւորապէս ծանրացել եմ համերաշխութեան, կամաւորութեան, փախստականներու, դիւանագիտութեան եւ գլխաւորապէս ներքին կեանքին վերաբերող հարցերի վրայ:

Քալիֆորնիայի շրջանում մենք բաւարար հող ունինք եւ համակիրներու ստուար թիւ: Եթէ այս ժամանակաշրջանում աշխատանք թափուած չէ նոր ընկերներու թիւը աւելացնել (ուրեք եւ միայն 19 ընկեր), պատճառն այն է որ կոմիտէներու ներքին կեանքն այնքան ալ լաւ չէ եւ հնարաւորութիւն չունէին կուսակցականօրէն դաստիարակելու եւ կապելու մեր գաղափարներուն հետ:

Սխաթեմատիք կանոնաւոր աշխատանք չի թափուել գործչի պակասութեան պատճառով: Այդ նպատակաւ հոն մնայուն մէկի կարիքը կայ:

Անցնինք թերթին: «Ասպարէզ»ը կուսակցական թերթ է: Միակ թերթն է եղել Քալիֆորնիոյ շրջանում, որ 10 տարուայ ընթացքում պայքարել է պահպանողական-յետադիմական տարրերու դէմ եւ կարողացել է որոշ համակրութիւն վայելել: Թերթը մօտ 2000 ցրում ունի: Այդ մի կարեւոր թիւ է, որ կարելի է աստիճանաբար բարձրացնել, կուսակցական-ազգային փրօփազանտն առաջ տանելու համար:

Թերթի նիւթականն այնքան ալ լաւ վիճակի մէջ չէ: Հին ժամանակներէն պարտք կայ՝ թուղթի, տպագրութեան եւն. եւ այդ արդիւնք է այն բանի, որ թերթը սեփական լայնութեամբ՝ տպագրական մեքենայ չունի եւ այդ պատճառով տարեկան \$ 600 աւելի կը վճարուի շարողին: Այդ նպատակով, Կ. կոմիտէի համամտութեամբ, մտադրած են տեղի ընկերները գնել մեքենայ մը եւ արդէն մօտ 650 տոլար հաւաքուած է: Կ. կոմիտէն, եթէ կամենայ որոշ չափով օժանդակութեան հասնիլ, կարող է ընկ. Գապատայեանի շաբթավճարն ինքը վճարել — իսկ միւս գործչի շաբթականը, որ աւելի նուազ պիտի ըլլայ թերթէն, ու որով տարեկան մօտ 150.00 խնայուած կ'ըլլայ եւ թերթը աւելի բարուք դրութեան մէջ կը լինի:

Եթէ հնարաւոր լինի նաեւ մի քանի հարիւր տոլար փոխառութիւն տալ — մեքենայ գնելու համար, մենք կարող ենք այդ գումարը յետ վերադարձնել: Օժանդակութիւնն «Ասպարէզ»ին անհրաժեշտ է եւ լուրջ մտածողութեան նիւթ:

Այնտեղ, Քալիֆորնիոյ շրջանում, անհրաժեշտ է մի մարդ՝ գործը առաջ տանելու համար:

Վերջացնելով տեղեկագիրս — կը յուսամ թէ այս անգամ այդ շրջանը պիտի մեր մտահոգութեան նիւթ դառնայ:

Բարեկներով՝
Ա. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

28 VI 1917
Բոստոն

Փաստ. 1428ծն-53

Դ 6.- Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Պոսթըն, 14 Մարտ 1917

Ընկերներ,

Եզրպտոսի Հայ ազգային միութեան եւ Հայկական պատուիրակութեան կողմանէ մասնաւոր յանձնարարութեամբ Ամերիկա ուղարկուած պատգամաւորական մարմինս, ներկայիս կու գայ խնդրել ձեռնէ որ բարի ըլլաք նշանակել ձեր կողմէ երեք լիազօրներ՝ մասնակցելու համար այն խորհրդակցական ժողովին, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ ուրբաթ, երեկոյեան ժամը 8-ին, Ուաշինկթըն փողոց, թիւ 724-ի ժողովասրահին մէջ, հայ քաղաքական չորս խմբակցութեանց լիազօրներու մասնակցութեամբ՝ նպատակ ունենալով Ամերիկայի մէջ եւս առաջ բերել հայ ազգային միութիւնը:

Պատգամաւորութիւնս ջերմօրէն կը խնդրէ ձեռնէ ընկերներ, որպէսզի յանձնարարէք ձեր լիազօրներուն չբերել խորհրդակցութեանց սեղանին վրայ բոլոր այն խնդիրները — սկզբունքային թէ այլ, փոխադարձ համաձայնութեան եւայլն — որոնք անցեալին մէջ պատ-

ճառ են դարձեր անհասկացողութիւններու եւ կամ որոնք ապագային եւս կարող են բարդութիւններ ստեղծել: Մենք կը խնդրենք ընկերներ, որ դուք մէկ կողմ ձգէք անցեալը, եւ մօտենաք համերաշխութեան սեղանին կատարեալ սրտբացութեամբ եւ անվերապահութեամբ. պատմական ըրպէին պահանջն է այդ, եւ մենք վստահ ենք դուք պիտի ընէք այդ զոհողութիւնը յանուն տանջուած հայութեան գերագոյն շահերուն եւ ի սէր համերաշխութեան:

Ընկերական յարգալիբ բարեւներով
Եզրպտոսի Հայ Ազգ. միութեան
եւ Հայկական պատուիրակութեան
պատգամաւորներ՝

**ԱՐՏԱԻԱԶԴ ՀԱՆԸՄԵԱՆ
Մ. ՏԱՄԱՏԵԱՆ
Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ**

Փաստ. 1428ծն-56

Դ 7.- Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Աստ

Ընկերներ,

Չորս քաղաքական կուսակցութեանց Ամերիկայի Կեդր. մարմիններու լիազօրներուն մասնակցութեամբ գումարուած խորհրդակցական ժողովները, կատարեալ համաձայնութիւն գոյացնելէ յետոյ վերջացած ըլլալով՝ ներկայիս ուրախ ենք Ձեզ յայտնելու որ այդ ժողովներու յանգած եզրակացութեանց հիման վրայ պիտի կազմուի Ամերիկայի Հայ Ազգ. Միութիւնը:

Առաջին ժողովը պիտի գումարուի յառաջիկայ Երկուշաբթի օր, 2 ապրիլ, թիւ 724 Ուաշինկթըն փողոցի սրահին մէջ, երեկոյեան ժամը 6¹/₂-ին, ուր կը խնդրենք

որ ներկայ գտնուին մնայուն մարմնի համար Ձեր կողմէ նշանակուած երեք ներկայացուցիչ անդամները, իրենց պաշտօնական վկայաթղթով:

Ընկերական ջերմ բարեւներով
Եզրպտոսի Հայ Ազգ. միութեան
եւ Ազգային պատուիրակութեան
պատգամաւորներ՝

**ԱՐՏԱԻԱԶԴ ՀԱՆԸՄԵԱՆ
Մ. ՏԱՄԱՏԵԱՆ
Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ**

Փաստ. 1405ա-10

ԽԻՍ ՔԱՂՏՆԻ

**Դ 8.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 3
Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻ**

ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Միտելի ընկերներ,

Ինչպես մամուլի հրատարակություններին տեղեկացաք անշուշտ, Եզիպտոսի Հայ Ազգային միության եւ Փարիզի Ազգ. պատուիրակության կողմէ մասնատր պատգամատրութիւն մը հասած է տեղս մօտ ամիսէ մը ի վեր: Այդ պատգամատրութիւնը, որուն մէջ կը գտնուի նաեւ մեր ընկեր Ատաւազը Հանրմեանը, յայտարարուեցաւ թէ պաշտօն ունի համերաշխութիւն մը զոյացնելու Ամերիկայի չորս քաղաքական կուսակցութեանց միջեւ, բայց իրականին մէջ ան եկած էր մեզ տեղեկացնելու նոր ու մեծ ձեռնարկի մը մասին, որուն լծուած են ազգովին Եզիպտոսի, Սուէտիոյ, Կիպրոսի եւ Եւրոպայի հայ զաղութները, որուն կապուած, համամիտ ու աջակից է Ազգային պատուիրակութիւնը եւ որ շրջապատուած է բոլորին համակրութեամբ:

Այդ ձեռնարկը ընկերներ, որ կը բացուի լաւագոյն պայմաններու մէջ, որը նոր եւ անուրանալի իրաւունքներ պիտի ստեղծէ մեր ազգային սրբազան դատին համար եւ որուն մասին թանկագին խոստումներ ստացուած են արդէն իսկ, անկարելի է որ չժպտի ամէն ճշմարիտ հայու եւ մանաւանդ յեղափոխականի սրտին:

Պատգամատրութիւնը, որ այդ ձեռնարկին լուրն աւետեց մեզի, միեւնոյն ժամանակ փաստացիօրէն ցոյց տուաւ, որ անոր յաջող գործադրութիւնն ապահովելու եւ լաւագոյն արդիւնքները քաղելու համար անկից՝ անպայմանօրէն անհրաժեշտ է որ համագործակցութեան գետնին վրայ կազմուի Ազգային միութիւնը՝ որը ինք միայն իրաւունք պիտի ունենայ գործին վերին հսկողութիւնն ստանձնելու:

Այդ պայմաններուն մէջ՝

Նկատի ունենալով գործին ստիպողականութիւնն ու անոր ներկայացուցած գերազանցօրէն ազգօգուտ հանգամանքը,

Նկատի ունենալով, որ Դաշնակցութեան պատմական աւանդութիւններուն դէմ ամենածանր մեղանշում մը պիտի ըլլար մեզ այս ձեռնարկէն անմասն մնալը,

Նկատի ունենալով այն ծանր պարտականութիւնը, որ դրուած էր մեր վրայ վերջին պատգամատրական ժողովին կողմէ՝ կարելի եղած բոլոր միջոցներով համերաշխութիւնը իրականացնելու համար,

Նկատի ունենալով նաեւ այն ճնշող տպաւորութիւնը որ պիտի թողոր հասարակութեան վրայ մեր որոշ կէտերու մասին պնդումը՝ երբ Եզիպտոսէն մինչեւ Եւրոպա, երկուայ անհաշտ թշնամիներ բոլորը ձեռք կը կարկառեն իրարու,

Կեդրոնական կոմիտէս, երկար խորհրդակցութիւններէ յետոյ, որոշեց մօտենալ համերաշխութեան բանակցութիւններուն կատարեալ անվերապահութեամբ՝ ի հարկէ միջոցներ ձեռք առնելով՝ որպէսզի յարգուին մեր ծանօթ տեսակէտները, բայց ամէն գնով Ազգային միութիւնը յաջողցնելու որոշումով:

Այդ ուղղութեամբ եւ այդ ոգիով մօտ երկու շաբաթ ի վեր քաղաքական միւս կուսակցութեանց հետ առաջ տարուած բանակցութիւնները յաջող ճամբու մէջ են արդէն եւ մենք յոյս ունինք, որ քանի մը օրէն ի վիճակի պիտի ըլլանք հրապարակով հռչակելու սրբազան միութիւնը՝ Հայ ազգային միութեան Ամերիկայի Կեդրոնական մարմնի կազմութեամբ:

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՆԲ

399

Հայ Ազգային միութիւնը, կոչուած ըլլալով իր մասնաճիւղերն ունենալ Ամերիկայի բոլոր կարեւոր կեդրոններուն մէջ՝ ներկայիս կու գանք խնդրել ընկերներ, որպէսզի *անմիջապէս եւ եթ* երկու լիազօրներ ընտրէք ձեր մէջէն, առաջին հրաւերին վրայ իսկոյն մասնակցելու համար տեղւոյդ մէջ կազմուելիք մասնաճիւղին՝ եւ մեզ տեղեկագրէք փութով անոնց անունները եւ հասցէն:

Յուսալով որ շուտով հաճոյքը կ'ունենանք ձեզ աւետելու համերաշխութեան բարի լուրը՝ որուն վստահ ենք սրտովին կը ցանկաք, եւ խնդրելով որ բացարձակապէս գաղտնի պահէք այս շրջաբերականով ձեռնարկի մասին տրուած տեղեկութիւնները:

Ընկերական ջերմ բարեւներով՝
Հ.Յ.Դ. ԱՄԵՐ. ԿԵՂՐ. ԿՈՍԻՏԷ

Պոսթըն, 29 Մարտ 1917

Յ. Գ.- Հետեւեալ կէտերը ձեր մասնաւոր ուշադրութեան կը յանձնենք:

1.- Ներկայ շրջաբերականը լինելով միմիայն մեր ընկերներուն յատուկ, բացարձակապէս արգիւտած է ընկերական շրջանակէ դուրս խօսիլը:

2.- Շրջաբերականը ստանալնուդ անմիջապէս արտակարգ ընկերական ժողով կը գումարէք ու կարդալէ յետոյ՝ վայրկենապէս մեզի կը վերադարձնէք. շրջաբերականները ետ չվերադարձնող կոմիտէները յաջորդ թիւը չպիտի ստանան անխտիր:

3.- Կը թելադրենք, որ այսուհետեւ ընկերներու ծանօթութեամբ տրուած տեղեկութիւններու վրայ, ոեւէ՛ կոմիտէի ոեւէ մէկ անդամը չընդունիք ձեր կոմիտէին մէջ, մինչեւ պատշաճ յանձնարարական չստանաք պատկան կոմիտէէն:

4.- Նկատի ունենալով որ Ամերիկայի զանազան քաղաքներու մէջ, մեր ընկերները եւ ուրիշ հայեր, ամերիկեան բանակին մէջ կամաւոր կ'արձանագրուին, մենք ի հարկէ կը քաջալերենք մեր ընկերներու մարտական եռանդը՝ մեր թշնամի կառավարութեան մէկ դաշնակցին դէմ, սակայն կը թելադրենք, որ սպասէք մինչեւ ամերիկահայ Ազգ. միութիւնը կազմուի եւ միջոցներ խորհի թէ ինչ լաւագոյն եղանակով կրնանք մեր համակրանքը յայտնել ամերիկեան հանրապետութեան, հաւաքական եւ համազգային ձեւի տակ:

Փաստ. 1405-48

Գ 9.- ՃԷՅՍՍ ՊՐԱՅՍԻ ՆԱՍԱԿԸ «ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ

April 9th
1917
HINDLEAP,
FOREST ROW,
SUSSEX.

My dear Sir
I beg to thank
you for the kind letter of
Feb. 27th which has
reached me. I can assure
that all I have sought
to do in the interest of
the Armenian people
has been done gladly, from
a recognition of their noble

fidelity to the cause of
their ancient nation, their
attachment to their ancient
faith, & that love of liberty
which has supported them
through centuries of misfortune.
We in England rejoice to
think that there is now a
good prospect that liberty &
peace under autonomous
institutions may at last
be secured for Armenia.

I am, Sir, truly yours,
The Editor, James Bryce
Hairenik.

April 9th 1917

Hindleap,
Forest Row, Sussex.

My dear Sir,

I beg to thank you for the kind letter of Feb. 27th which has reached me. I can assure that all I have sought to do in the interest of the Armenian people has been done gladly, from a recognition of their noble fidelity to the cause of their ancient nation, their attachment to their ancient faith, and that love of liberty which has supported them through centuries of misfortune. We in England rejoice to think that there is now a good prospect that liberty and peace under autonomous institutions may at last be secured for Armenia.

I am faithfully yours
JAMES BRYCE

The Editor of Hairenik

Թարգմանութիւնը.—

Ապրիլ 9, 1917

Սիրելի բարեկամս,

Շնորհակալութիւն Փետրուար 27-ի ձեր ազնիւ նամակին համար: Կրնամ ձեզ վստահեցնել, որ այն ամէնը որ ըրած եմ յօգուտ հայ ժողովուրդին, ըրած եմ ուրախութեամբ, ծանօթ ըլլալով իրենց [հայերու] ազնիւ հաւատարմութեան դէպի իրենց հինաւուրց ազգին դատը, կապուածութիւնը իրենց հին հաւատքին, եւ ազատութեան այն սէրը, որ ապրեցուցած է զիրենք դարաւոր դժբախտութեանց ընդմէջէն: Մենք Անգլիոյ մէջ ուրախ ենք, խորհելով որ այժմ գոյութիւն ունի լաւ հեռանկար մը, որպէսզի ինքնավար կարգերու տակ՝ Հայաստանի համար ապահովուին ազատութիւնն ու խաղաղութիւնը:

Հաւատարմութեանմբ Ձերդ՝
ՃԷՅՍՍ ՊՐԱՅՍ

«Հայրենիք»ի խմբագրին



Փաստ. 1405ա-7

Դ 10.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 1 Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ

Հ.Յ.Դ. ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՆ

Սիրելի ընկերներ!

Այս գերազանցապես գործի օրերուն, մենք անգամ մըն ալ ականատես եղանք մեր շարքերուն մէջ տիրող յեղափոխականի, ազնիւ հայրենասէրի եւ կատարեալ անձնուէրի տիրապետող ոգին: Հ.Յ.Դ. Ամերիկայի շրջանի 24-րդ Պատգամատրական ժողովը եկաւ ու անցաւ անգամ մըն ալ շեշտելով, որ մեր ընկերները հաստատուն կերպով կանգնած են իրենց պարտականութեան պատնէշին վրայ՝ քամահրելով բոլոր խոչերն ու խոչընդոտները:

24-րդ Պատգամատրական ժողովը անցուց օրուան պահանջներուն համապատասխան լուրջ եւ գործնական որոշումներ, եւ մենք, ընտրուած՝ գործադրելու այդ որոշումները, զիտակ մեր պարտականութեան, կը սկսինք մեր պատասխանատու գործին, վստահ ըլլալով, որ դուք բոլորդ, հաւաքաբար թէ անհատաբար, միշտ ալ կանգնած պիտի ըլլաք մեր կողքին՝ դժուարութիւններու, ինչպէս նաեւ անակնկալներու երեւումին ատեն:

Հիմնուած այս խոր համոզման վրայ, արդէն ըրած ենք հետեւեալ կարգադրութիւնները.

Ա.- «Հայրենիք»ի խմբագրական կազմը.– Ընկեր Մ. Օզանեան ընտրուած է իբրեւ խմբագրապետ, անոր իրատունք տալով ընտրելու իրեն համար երեք օգնականներ:

Բ.- «Ապարեզ»ի խմբագրական կազմը.– Ինչպէս զիտք, անցեալ քանի մը ամիսներու ընթացքին, ընկեր Ա. Միքայէլեան Քալիֆորնիա կը գտնուէր իբրեւ խմբագիր-գործիչ՝ ընկեր Յ. Գապատայեանի հետ միասին: Ժամանակը կարճ էր, շատ կարճ, բայց արդիւնքը մեծ: Մեր այդ հեռաւոր գաղութը շատոնց զրկուած կարող ու անձնուէր գործիչներէ՝ զիտցաւ զնահատել նախորդ Կ. Կ.-ի իմաստուն քայլը:

Այսպէս, նկատի ունենալով սկսուած գործի գերազանց կարեւորութիւնը, մենք դարձեալ որոշեցինք ընկեր Ա. Միքայէլեանը դրկել Քալիֆորնիա, իբրեւ խմբագիր-գործիչ:

Գ.- Գործիչներ.– Ինչպէս լսած էք, վերջին Պատգամատրական ժողովը վերահաստատեց նախորդ Պատգամատրական ժողովին որոշումը, երկու կարգի գործիչ ունենալու մասին: Հիմնուած այս որոշումին վրայ, ներկայ շրջանին համար ըրինք հետեւեալ կարգադրութիւնը.

1. Պրոպագանդիստ-գործիչ՝ ընկերներ Ա. Կ. Մանուէլեան (արձակուրդի ընթացքին) եւ Վահէ Արծրունի (Մ. Մուրադ):

2. Կազմակերպող-գործիչ՝ ընկերներ Ն. Ն. Փաշալեան եւ Սարգիս Ռշտունի (Մալճանեան):

3. Ազգային Միութեան գործիչ՝ ընկեր Սահակ Չթճեանը: Ասկէ ի զատ նաեւ որոշած ենք նոր գործիչներու համար դիմում կատարել մեր արտասահմանեան ընկերներու եւ մարմիններու քով:

Դ.- Արտասահման մարդ դրկել.– Նկատի ունենալով, որ գործին վայրը, Կովկաս, հակառակ մեր բոլոր բաղձանքին ու ջանքերուն, ցարդ մնացած է չափով մը օտար մեզի, որոշեցինք այս տարի ներկայացուցիչներ դրկելով՝ մէկ կողմէն կանոնաւոր յարաբերութիւն պահպանելու Կովկասի մեր մարմիններու ու մեր միջեւ, միւս կողմէն՝ ազդեցութիւն բանեցնելու տեղւոյն վրայ արգիլելու սխալ հասկացողութիւնները ազգին զանազան հոսանքներու միջեւ: Ատոնցմէ զատ կար նաեւ ուրիշ պատճառ մը մեր այս որոշման: Քանի մը օր առաջ ընկ. Ռոստոմը Ստոքհոլմէն մեզ կը հեռագրէր, որ պատգամաւոր դրկենք հոն, ընկերվարականներու քոնֆերանսին: Այս երբեակ պատճառներով՝ որոշած ենք դրական քայլեր առնել:

Ե.- «Հայրենիք»ի գործակատարութիւնը.– Պատգամատրական ժողովի որոշումով ընկեր Ա. Յ. Սաչազեան ընտրուած ըլլալով Կ. Կ.ի անդամ եւ նոր կազմին մէջ քարտուղարութեան պաշտօնին կանչուած ըլլալով, «Հայրենիք»ի գործակատարութեան հրաւիրեցինք ընկեր Սարգիս Պաղտոյեան, որ շուտով պիտի սկսի գործի:

Ընկերներ,

Ինչպէս երէկ, Թուրքիոյ խաբուսիկ սահմանադրական օրերուն, այսօր ալ, մեր կուսակցութեան բաժին ինկած է՝ առաջնորդել մեր ժողովուրդը եւ ուղղութիւն տալ անոր քաղաքական ձգտումներուն: Ռուսական յեղափոխութիւնը գործունէութեան նոր եւ ընդարձակ դաշտ մը բացած է մեր կուսակցութեան առջեւ: Նիւթական, ֆիզիքական եւ բարոյական ուժեր պէտք են՝ պատմական այս նշանակալից եւ պատասխանատու վայրկեանին, կարենալ իրագործելու մեր կուսակցութեան վրայ դրուած յոյսերը:

Առ այժմ, կովկասեան նոր երեւոյթները մեզմէ կը պահանջեն երկու բան – նիւթական եւ բարոյական աջակցութիւն: Անցեալ երկու ամիսներու ընթացքին, մենք արդէն փոխադրած ենք տասնհինգ հազար տոլար (\$ 15,000) Արեւելեան եւ Հայաստանի բիրտներուն:

Ասիկա պատկերին մէկ կողմն էր միայն. կայ եւ միւս



կողմը – արտաքին աշխարհի վերաբերումը դեպի մեր հարցը: Հայ Ազգային միութեան իրականացումը եւ նոր կամաւորական շարժումը հիմնուած էին մեր դատին շուրջ դաշնակիցներուն միջեւ կայացած խոստման մը վրայ – Խարբերդ – Տիգրանակերտ – Սեբաստիա – եւ Կիլիկիայէն կազմուած ինքնավար Հայաստան մը ընդ հովանաւորութեամբ Ֆրանսայի:

Վաւերական աղբիւրներէ ստացուած նամակէ մը կ'իմանանք, որ 1916-ի դաշնակիցներու համաձայնութիւնը՝ Թուրքիան բաժնելու վերաբերմամբ, հիմնովին փոխուած է:

«Ռուսական յեղափոխութիւնը եւ Ամերիկայի մասնակցութիւնը պատերազմին, տակն ու վրայ ըրին բոլոր եղած համաձայնութիւնները, բացի Լոնտոնի ծանօթ համաձայնութիւնը, որ արգիլում է *«անջատ խաղաղութիւն»*»:

1916-ի համաձայնութեան ոչնչացումովը Հայկական պատուիրակութիւնը պարտաւորուած է ոչնչացած համարել եւ իր վերջին պահանջը՝ այն է, Խարբերդ – Տիգրանակերտ – Սեբաստիա եւ Կիլիկիա ինքնավար Հայաստանը: Այսպէսով, նա կը վերադառնայ իր նախնական եւ մեր սրտին աւելի մօտիկ ծրագրին՝ «Ինքնօրէն (autonomous) Հայաստան – բաղկացած բոլոր վեց վիլայէթներէն եւ Կիլիկիայից – պետութիւններու հովանաւորութեան տակ»:

Եթէ դեռ նոր ու գրաւոր խոստում չկայ ինքնավար Հայաստանի, կայ գրեթէ նոյնչափ, եթէ ոչ աւելի, արժէքաւոր հասարակաց կարծիք մը: Եթէ Հայաստանը պիտի չկցուի Ռուսիոյ, նաեւ ան պիտի չմնայ մէկ մասը Թուրքիոյ: Հայաստանը պիտի ազատուի իր դարաւոր լուծէն:

Այսպէս կը մտածեն շատ մը պետական անձնաւորութիւններ: Այս է փափաքը մեր դատին նոր ծանօթացած երոպական եւ ամերիկեան հասարակութիւններուն: Այս ուղղութեամբ է, որ յառաջ կը տանին մեր դատը հայոց բարեկամները, զանազան երկիրներու մէջ: Ու մենք իբրեւ կուսակցութեան մը անդամներ, որու համար յուսահատութիւնը ամօք է նկատուած, որու առաջնորդները միշտ ալ իրենց պարտականութեան գլուխը կեցած են Թուրքիոյ դժոխքին մէջ, աւելի գօտեպնդուած եւ աւելի զիտակ յառաջ պիտի քալենք՝ պարտաճանաչ, կիրք եւ հայրենասէր բանակի մը նման:

Յուլիս 31, երեքշաբթի օր, Պոսթըն հասաւ ընկեր Արմէն-Գարօ (տք. Փաստրմաճեան) իբրեւ մասնաւոր պատուիրակ Ամենայն հայոց վեհափառ կաթողիկոսին, պաշտօն ունենալով Սիւրբեայ Նահանգներու դիւանագիտական շրջանակներուն ներկայացնելու հայկական բաղձանքները եւ առ հասարակ նպատակելու հայկական պրոպագանդին՝ այս մեծ հանրապետութեան մէջ: Ընկեր տք. Փաստրմաճեան, իր այս պատասխանատու գործին մէջ սերտ յարաբերութիւն պիտի պահպանէ Ազգային

պատուիրակութեան եւ Ամերիկայի Հայ Ազգային միութեան հետ:

Ընկերը, որ ուղղակի Կովկասէն կու գայ, մեզի կը բերէ հետաքրքիր տեղեկութիւններ թէ կազմակերպական եւ թէ ընդհանուր ազգային կեանքէն: Յաջորդ շրջաբերականին թողլով ուրիշ տեղեկութիւններ, այս անգամ արդէն տպագրութեան յանձնուած այս շրջաբերականին կ'ուզենք կցել հետեւեալ շատ կարեւոր եւ ուրախալի լուրը:

Ռուսական յեղափոխութեան շնորհիւ, երբ ազատական նոր կառավարութիւնը իր քաղաքականութիւնը յայտարարեց ազգերու եւ մասնաւորապէս Հայաստանի ինքնօրինութեան մասին, ընկերներ տք. Չարիեւ եւ տք. Փաստրմաճեան մեկնած են Փեթրոկրատ – առաջինը իբրեւ ներկայացուցիչ Ազգային բիւրոյի, իսկ երկրորդը՝ Հ. Յ. Դաշնակցութեան, – եւ նոր կառավարութեան հետ յաջողած են հասկացողութեան գալ Հայաստանի գրաւուած վայրերու կառավարական ձեւի մասին: Այդ հասկացողութեան համաձայն, Հայաստանի գրաւուած վայրերը պիտի կառավարուին *ուղղակի Փեթրոկրատէն նշանակուած* կառավարիչով մը եւ յարաբերութիւն պիտի ունենան միայն Փեթրոկրատի հետ, *ոչ մէկ ազդեցութիւն կրելով Կովկասի փոխարքայութենէն*: Իբրեւ արդիւնք այս խորհրդածութեան, կառավարիչ կը նշանակուի¹⁸ իսկ անոր օգնական՝ ընկեր տք. Չարիեւ, ինչ որ ասկէ առաջ հեռագրուած էր մեզ եւ որու մասին դուք տեղեկ էք *«Հայրենիք»*էն:

Այս յաջողութիւնը, որ կրցած են ձեռք բերել մեր յիշեալ ընկերները, շատ մեծ է, եւ կարելի է ըսել, կը կազմէ առաջին գործնական քայլը դեպի ինքնավար Հայաստան:

Այսպէսով, ոչ միայն հայկական գրաւուած նահանգներուն մէջ պիտի կարենանք սկսիլ ազատ եւ շինարար աշխատանքի, այլեւ բարեբախտութիւնը պիտի ունենանք ջնջուած տեսնելու բոլոր հակահայ տրամադրութիւններով զինուած պաշտօնէութիւնները, որոնք Կովկասի թաթար եւ վրացի հայատեսացներէն էին կազմուած առ հասարակ:

Մէկ բան կայ, սակայն, որ պետք չէ մոռնանք՝ ապագայ յուսախաբութիւններու չենթարկուելու համար – այդ՝ ներկայ ռուս ազատական կառավարութեան տեսականութեան մասին զոյութիւն ունեցող վախն է: Յուսանք որ, այս կառավարութիւնը – որուն մէջ շատ բարեկամներ ունի Դաշնակցութիւնը (պատերազմական նախարար եւ այսօրուայ Ռուսիոյ ամենաուժեղ դէմքը՝ Քերենսկին, Դաշնակցութեան դատին պաշտպան փաստաբաններէն մէկն է եղած ցարիզմի օրով – պիտի ըլլայ տեսական: Այն ատեն, վստահ կրնանք ըլլալ այս հարցի լաւագոյն կերպով լուծման:

Ընկերական բարեւներով
Հ.Յ.Դ. ԱՄԵՐ. ԿԵՂԲ. ԿՈՍԻՏԷ

18.- Բնագրին մէջ կիտաւոր: Նշանակուած կառավարիչն էր գոր. Պ. Աւերիանով:

Օգոստ. 6, 1917

Փաստ. 1405ա-1

Դ 11.- ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐԷՆ ՄԻՀՐԱՆ ՍՎԱԶԼԵԱՆԻՆ ԵՒ ԱԶԳ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻՒՍ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ

DELEGATION NATIONALE ARMENIENNE
Paris, le 25 Juin 1917

Թարգմանութիւնը.—

Հայ Ազգ. Պատուիրակութիւն
Փարիզ, 25 Յունիս 1917

Mon cher Sevasly,

Սիրելի Սվազլի,

J'ai à vous entretenir aujourd'hui d'une question de la plus grande importance. Il s'agit des enrôlements de volontaires pour la légion d'Orient.

Այսօր ձեզի կը գրեմ յոյժ կարեւոր խնդրի մը մասին: Հարցը կը վերաբերի կամաւորներու զինուորագրութեան՝ Արեւելեան Լեգէոնի մէջ:

Je tiens tout d'abord à vous exposer rapidement cette question dès son origine, pour bien montrer comment la Délégation avait été amenée aux dispositions qu'elle avait prises à ce sujet.

Նախ եւ առաջ կ'ուզեմ համառօտակի պարզել այս խնդիրը իր սկզբնաւորութենէն, ցոյց տալու համար, թէ Պատուիրակութիւնը իր կարգադրութիւններուն մէջ ինչպէս ներքաշուեցաւ այս հարցին մէջ:

Comme vous le savez, une convention était intervenu, l'an passé entre la France, l'Angleterre et la Russie, en vue du démembrement éventuel de l'Empire ottoman.

Ինչպէս գիտէք, անցեալ տարի Ֆրանսայի, Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ համաձայնութիւն մը գոյացած էր Օսմանեան կայսրութեան հաւանական անդամահատութեան մասին: Երեք Պետութեանց միջեւ կնքուած այդ պայմանագրութեան համաձայն, Ռուսիան պիտի ստանար, բացի Կոստանդնուպոլսէն եւ Նեղուցներէն, Էրզրումի, Վանի եւ Պիթիւսի նահանգները: Ֆրանսան պիտի ունենար միւս երեք վերայէջները՝ Կիլիկիոյ եւ Սուրիոյ հետ միասին: Ահա այն ատեն է որ Ֆրանսան մեզմէ պահանջեց — որպէսզի սատար կանգնի մեզի եւ մենք օգտուինք ապագային — մասնակից դառնալ պատերազմին՝ հայ կամաւորներ հայթայթելով Արեւելեան լեգէոնին, որ կազմուած պիտի ըլլար Փոքր Ասիոյ մէջ ըլլալիք հաւանական ձեռնարկի մը համար: Թէեւ անձնապէս միշտ հակառակ եղած եմ հայ կամաւորական գունդերու կազմութեան՝ այն պատճառաւ որ անոնք վտանգներ կը յառաջացնեն թուրքիոյ մեր հայրենակիցներուն համար — փոխ-վրէժի սպառնալիքներ թուրքերու կողմէ — եւ որ այդ հակառակութեան պատճառաւ իսկ ենթարկուած եմ յարձակումներու, հարկադրուեցայ ընդունիլ, եւ Պատուիրակութիւնը հետո, որ կարելի էր մեզի համար ընդառաջ չերթալ Ֆրանսայի կողմէ, որուն թիկունք կը կանգնէր իր դաշնակիցը՝ Անգլիան, առանց որ նեղացնէք երկուքն ալ, եւ առանց որ կորսնցնէք մեր ազգային տենչերը իրագործելու ամէն յոյս: Այսուհանդերձ, Պատուիրակութիւնը դիտել տուաւ, որ ընդունելու պարագային անհրաժեշտ էր ձեռք առնել զգուշաւորութեան եւ խոհեմութեան ամէն միջոց, որպէսզի զինուորագրութիւնները թուրքերու կողմէ իբրեւ պատրուակ չգործածուին վրէժխնդրական արարքներու: Զգուշաւորութեան այդ միջոցները մանրամասնօրէն ճշգրտուած ըլլալով արդէն, աւելորդ

En vertu de cette convention, signée par les trois Puissances, La Russie aurait reçu, outre Constantinople et les Détroits, les trois vilayets d'Erzeroum, Van et Bitlis; la France devait avoir les trois autres vilayets avec la Cilicie et la Syrie. C'est alors que la France nous a demandé, afin d'acquérir des titres à sa bienveillance et à des avantages futurs, de prendre une part active à la lutte, on fournissant des volontaires arméniens pour une légion d'Orient, qui devait être formée en vue d'une action éventuelle en Asie Mineure. Bien que personnellement j'ai été toujours opposé à toute formation de corps de volontaires arméniens, à cause des dangers qu'ils craient pour nos compatriotes de Turquie, menaces de représailles de la part des Turcs, et que j'ai même été attaqué à cause de cette opposition, j'ai dû reconnaître et la Délégation reconnaître avec moi, qu'il ne nous était pas possible de ne pas répondre à l'appel de la France, appuyée par son allié l'Angleterre, sans les indisposer toutes deux contre nous et nous faire perdre tout espoir de réaliser nos aspirations nationales. La Délégation cependant fit remarquer combien en cas d'acceptation de notre part, il serait indispensable de prendre toutes les précautions et toutes les mesures de prendre pour que les enrôlements

ne devinsent pas un prétexte à des vengences de la part des turcs,— mesures qu'elle eut soin de spécifier dans tous leurs détails et qu'il est inutile de répéter ici.

Elle demanda en même temps et avant tout que la France s'engageait à ne pas annexer l'Arménie, mais à accorder la plus large autonomie à toutes les provinces arméniennes qui devaient lui revenir, c'est-à-dire la Cilicie et les autres vilayets de Sivas, Mamouret-ul-Aziz et Diarbékir, réunis en un seul Etat Autonome, sous la protection de la France. Le gouvernement de la République en donna l'assurance formelle et il fût convenu, d'autre part, que les enrôlements se feraient en dehors de notre action, par le gouvernement français lui-même, les Arméniens se bornant à les faciliter et à les encourager indirectement et le plus secrètement possible.

Tout ceci vous a déjà été dit par nos trois délégués, que nous avons complètement mis au courant de la question et qui ont été en parfait accord avec nous, nos compatriotes d'Egypte et d'ici. Je n'ai résumé brièvement aujourd'hui tous ces faits que pour vous montrer les motifs qui nous ont conduits à modifier notre programme.

Depuis lors, deux grands évènements se sont produits, qui changent absolument toutes ces conditions; c'est la Révolution Russe et l'entrée en guerre des Etats Unis. Ces deux évènements ont nécessairement amené la revision de la Convention entre les Puissances Alliées au sujet du partage de l'Empire Ottoman. Le nouveau régime russe ayant déclaré qu'il ne veut pas d'annexion, mettant ainsi leurs buts de guerre en harmonie avec les déclarations des Etats-Unis, il ne s'agit donc plus de réserver la Cilicie à la France, pas plus qu'il ne s'agit d'annexer à la Russie trois des six vilayets arméniens. Dans ces conditions, nos engagements envers la France deviennent caduques et les raisons qui nous avaient conduits à lui offrir des volontaires n'existent plus. Mieux encore, les Etats-Unis étant aujourd'hui en guerre, il est tout naturel que les Arméniens habitant aux Etats-Unis, au lieu de s'engager dans un corps français de la Légion d'Orient, s'engagent dans les armées américaines, s'ils veulent prendre part à la lutte.

D'un autre part, les dangers que nous risquions pour nos compatriotes de Turquie sont plus grands que jamais. On me les signale de tous côtés et même d'Amérique. Lord Bryce, tout dernièrement encore m'a écrit pour attirer mon attention sur ce point et pour me faire part des craintes que conçoivent, aux Etats-Unis

է կրկնել հոս:

Միեւնոյն ատեն Պատուիրակութիւնը պահանջեց որ Ֆրանսսան ամէնէն առաջ յանձն առնէ իրեն չկցել Հայաստանը, այլ ամենայայն ինքնավարութեամբ օժտել բոլոր հայկական նահանգները, որոնք պէտք է վերադարձուին Հայաստանին, այսինքն՝ Կիլիկիան եւ Սիւազի, Մամուրէթ-ու-Ազիզի եւ Տիարպէքիւրի վիլայէթները, բոլորը միացած Ֆրանսայի հովանաւորութեան ներքեւ՝ ինքնավար միակ պետութեան մը մէջ: Այդ մասին Ֆրանսական կառավարութիւնը յստակ հաւաստիք տուաւ եւ, միւս կողմէ, համախոհութիւն գոյացաւ, որ գինուորագրութիւնները պիտի կատարուին անկախաբար մեզմէ՝ նոյնինքն Ֆրանսական կառավարութեան կողմէ, հայերուն թողոյով, անուղղակիօրէն եւ կարելի դադանապահութեամբ գանոնք քաջալերելու եւ դիւրացնելու գործը:

Այս բոլորը ձեզի հաղորդուած է արդէն մեր երեք պատուիրակներուն միջոցաւ, զորս լրիւ կերպով տեղեակ պահած էինք հարցին մասին եւ որոնք կատարելապէս համաձայն էին մեզի հետ, ինչպէս նաեւ Եգիպտոսի եւ այստեղի մեր բոլոր հայրենակիցները: Ես այսօր միայն համառօտակի ամփոփեցի այս բոլորը ցոյց տալու համար այն շարժառիթները, որոնք մեզ մղեցին փոխելու մեր յայտագիրը:

Ատկէ ի վեր տեղի ունեցան երկու մեծ դէպքեր, որոնք ամբողջովին փոփոխութեան կ'ենթարկեն այդ պայմանները.— Անոնք են՝ ուսական յեղափոխութիւնը եւ Միացեալ Նահանգներու մասնակցութիւնը պատերազմին: Այս երկու դէպքերը պատճառ եղան որ վերատեսութեան ենթարկուի Օսմանեան կայսրութեան բաժանման մասին Դաշնակից պետութիւններու միջեւ կնքուած համաձայնութիւնը: Ռուս նոր վարչակարգը յայտարարած ըլլալով որ (հողային) կցում չ'ուզեր, պատերազմի իր նպատակներուն մէջ կը դառնար համահունչ Միացեալ Նահանգներու յայտարարութեանց: Ուրեմն հարցը այլեւս չի կայանար Կիլիկիան պահ տալու Ֆրանսային, եւ կամ հայկական վեց վիլայէթներէն երեքին Ռուսիոյ կցելու մէջ: Այս պայմաններուն տակ, ժամանցուած պէտք է նկատել մեր յանձնառութիւնները Ֆրանսայի նկատմամբ, եւ կամ գոյութիւն չեն ունենար այլեւս այս վերջինին կամաւորներ հայթայթելու պատճառները: Աւելին, Միացեալ Նահանգները այսօր պատերազմի մէջ ըլլալով, շատ բնական է որ այդ երկրին մէջ բնակող հայերը փոխանակ գինուորագրուելու Ֆրանսական բանակին պատկանող Արեւելեան լեզոնին, մտնեն ամերիկեան զօրքերուն մէջ, եթէ կ'ուզեն մասնակից դառնալ պատերազմին:

Միւս կողմէ, աւելի քան երեք մեծ են վտանգները թուրքիոյ մեր հայրենակիցներուն համար: Ամէն կողմէ եւ նոյնիսկ Ամերիկայէն, ուշադրութեանս կը յանձնեն այդ վտանգը: Դեռ վերջերս Լորտ Պրայս գրեց ինձի ուշադրութիւնս հրաւիրելու համար այս կէտին վրայ եւ հաղորդելու այն վախերը, զորս ունին Միացեալ Նա-

même, des arménophiles dévoués qui déconseillent fortement les enrôlements dans une Légion d'Orient.

En conséquence, après avoir mûrement réfléchi, la Délégation a décidé de ne plus continuer à encourager des enrôlements. Il ne s'agit nullement, bien entendu, de prendre des mesures ostensibles, ni de faire aucune déclaration publique, — pas plus d'ailleurs qu'on n'avait fait connaître publiquement jusqu'ici que des enrôlements avaient lieu; il s'agit tout simplement d'arrêter d'abord tout nouvel envoi de volontaires en France, et ensuite de cesser toute propagande à cet égard. In va sans dire que nous sommes pleinement dans notre droit en agissant ainsi, puisque nous ne devons fournir des volontaires qu'en échange de l'engagement pris par la France que, dans le cas où elle aurait pour sa part les provinces arméniennes, elle nous aurait accordé l'autonomie, sous sa protection. La politique nouvelle lui faisant renoncer à ce projet, notre entente avec elle tombe de ce fait même.

Nous devons naturellement nous abstenir de porter notre décision à la connaissance des autorités consulaires françaises en Amérique. Nous n'avons pas d'ailleurs à craindre que le gouvernement français soit surpris de ne plus recevoir de nouveaux volontaires car je sais pertinemment qu'il s'y attend depuis que les Etats-Unis sont entrés en guerre, trouvant tout naturel que, comme je vous l'ai dit plus haut, les arméniens d'Amérique fassent leur devoir envers le pays qu'ils ont adopté ou qui leur donne l'hospitalité.

Je vous prie donc, sitôt réception de cette lettre de voir les trois délégués auxquels elle est également destinée et de prendre d'accord avec eux des mesures pour arrêter tout nouvel envoi de volontaires et mettre fin aux enrôlements pour la Légion d'Orient.

Croyez, mon cher Sevasly, à mes sentiments les meilleurs.

BOGHOS NUBAR

Հանգնելու ամենէն անձնուէր հայասէրները, որոնք խորհուրդ չեն տար բնաւ մաս կազմել Արեւելեան Լեգէոնին:

Հետեւաբար, երկարօրէն խորհելէ ետք, Պատուիրակութիւնը որոշեց այլեւս չքաջալերել զինուորագրութեան գործը: Հասկնալի է որ հարցը չի վերաբերիր բնաւ ցուցական միջոցներու դիմելուն մէջ, ոչ ալ որեւէ յայտարարութիւն կատարելուն, — այլապէս նաեւ ցարդ հրապարակայնօրէն չենք ծանուցած որ զինուորագրումներ տեղի կ'ունենային —. պարզապէս խնդիրը կը կայանայ նախ կասեցնելու ղէպի Ֆրանսա կամաւորական նոր առաքումները, եւ ապա դադրեցնելու այս իմաստով ամէն քարոզչութիւն: Աւելորդ է ըսել, որ լիովին մեր իրաւունքներուն մէջ ենք այսպէս շարժելով, որովհետեւ կամաւորներ պիտի հայթայթէինք Ֆրանսայի այն յանձնառութեան դիմաց, որ Հայկական Նահանգները ձեռք բերելու պարագային ան իր հովանաւորութեան ներքեւ ինքնավարութիւն պիտի տար մեզի: Իբրեւ հետեւանք քաղաքական նոր իրավիճակին, ան հրաժարած ըլլալով այդ ծրագրէն, նովին բանիւ վերջ գտած կ'ըլլայ մեր համաձայնութիւնը իրեն հետ:

Բնականաբար ձեռնպահ պէտք է գտնուինք Ամերիկայի Ֆրանսական իշխանութիւններուն մեր որոշման մասին տեղեկացնելէ: Այլապէս նաեւ պատճառ չունինք վախնալու, որ Ֆրանսական կառավարութիւնը կը զարմանայ նոր կամաւորներ չստանալուն համար, որովհետեւ լաւապէս տեղեակ եմ որ ան կը սպասէր ատոր սկսեալ այն պահէն, երբ Միացեալ Նահանգները պատերազմի մտան եւ բնական էր որ, ինչպէս վերեւ ըսի, ամերիկահայերը իրենց պարտականութիւնը պիտի կատարեն իրենց բնական կամ հիւրընկալած երկրին նկատմամբ:

Ուստի կը խնդրեմ որ գրութեանս ստացումէն անմիջապէս ետք, տեսնէք երեք պատուիրակները — որոնց նոյնպէս սահմանուած է այս նամակը, եւ համաձայնաբար միջոցներ ձեռք առնէք դադրեցնելու համար կամաւորներու որեւէ նոր առաքում, եւ վերջ տաք Արեւելեան Լեգէոնի զինուորագրումներուն:

Սիրելի Սվազլի, լաւագոյն զգացումներով՝
ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Փաստ. 1281-6

Դ 12.- ԱՐՏԱԻԱԶԴ ՀԱՆԸՍԵԱՆԵՆ Հ.Յ.Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԵԻՆ

Բարիզ, 3 Մեպտ. 1917
115 Rue Curlaincourt 118^{ème}

Սիրելի ընկերներ,

Ամերիկայի մասին չպիտի խօսիմ. հին պատմութիւն է անհիկա այլեւս, եւ թերթերէն բաւականին տեղեկացած էք մեր կատարեալ յաջողութեան մասին եւ թէ ինչպէս չբաւականանալով համերաշխութեան կայացումով՝ մենք շրջեցանք գրեթէ ամբողջ Ամերիկայի հայաշատ կեդրոնները՝ խանդավառութեան աննկարագրելի հոսանք մը ստեղծելով մեր ամէն մէկ քայլին, ամրապնդելով ու տարածելով միութեան գաղափարը ժողովրդական լայն զանգուածներու մէջ, քարոզելով ամէն տեղ կռուի ու զոհաբերութեան աւետարանը, հազարաւորներ արձանագրելով նուիրական լեզէոններուն համար եւ Միութեան տրամադրութեան տակ դնելով մէկ միլիոն Ֆրանքէն աւելի պատկառելի գումար մը:

Արդէն գիտեմ որ այդ մասին չէ որ կ'ուզէք լսել, այլ այն անհամաձայնութեան մասին, որուն կ'ակնարկէք մեր Ամերիկայի ծանօթ հեռագիրը:

Այդ անհամաձայնութեան մասին նամակով տեղեկութիւն չեմ կրնար տալ, կամ աւելի ճիշտ է ըսել մամուլային տեղեկութիւններ չեմ կրնար տալ, բայց այսչափը գիտցէք որ ճիշտ ձեր վախճանն էր եւ ամենավճռական ձեւի տակ:

Բարիզ հասնելունս, մենք ունեցանք պատուիրակութեան հետ, այս 15 օրուայ ընթացքին, բազմաթիւ խորհրդակցական ժողովներ, ուր բարեբախտաբար կըրցանք համաձայնութեան մը գալ: Այդ համաձայնութեան մասին խօսելէ առաջ ըսեմ որ պատուիրակութեան նախագահէն աւելի մեր ընկեր Վարանդեանը սարսափի դողէն բռնուած էր եւ գինքը համոզելը գէթ նոյնքան դժուար եղաւ որքան միւսը, իսկ Տամատեանը խօսեցաւ ու գործեց իբր երկրորդ տպագրութիւնը Հանրմեանին:

Ըսեմ միջանկեալ որ այս եօթը ամսուայ ամէնօրեայ միացեալ գործունէութեան ընթացքին, Տամատեանը կատարելութիւնն իսկ եղաւ եւ ամենափոքր սայթաքումի հետքն իսկ չունեցաւ (նոյնը չեմ կրնար ըսել մեր երրորդ ընկերոջ համար, աւա՛ղ)¹⁹:

Համաձայնութիւնը կայացաւ հետեւեալ հասկացողութեամբ.

Նկատի ունենալով որ ամերիկահայ կամաւորներու այսօրուայ փոխադրութեան ձեւով մէկ տարուայ ընթացքին մինչեւ անգամ արձանագրուած կամաւորները

կարելի չէ փոխադրել ամբողջութեամբ, ինչ որ մէկէ աւելի խոշոր անպատեհութիւններ կը ներկայացնէ, ի միջի այլոց այն որ,

ա) Փոխադրութիւնները երկարաձգուելով անախորժ անգաղտնապահութիւններու շարքը կ'երկարի (եւ անոր վտանգաւոր հետեւութիւնները երկրի հայութեան համար նոյնպէս...?):

բ) Որ քաղաքական տեղական հանգամանքներու փոփոխումով այդ փոխադրութիւնները կրնան դժուարութեանց բախիլ ամերիկեան կառավարութեան կողմէ, ազգային շահերու հակառակ մեկնութիւններու տեղի տալ տեղական կառավարական շրջանակներու մէջ, եւ կամ նոյնիսկ արգելուիլ:

գ) Որ արձանագրուածներու ամիսներով եւ տարիով ճամբայ չհանուիլը կրնայ դժգոհութեան զօրաւոր հոսանք մը առաջացնել՝ Ազգային միութիւնը մատնելով դժուարին կացութեան մը եւ նոյնիսկ վնասելով անոր վարկին:

Այս նկատումներով որոշուեցաւ արմատական միջոցներ ձեռք առնել բոլոր արձանագրուողները երկու ամսուայ ընթացքին ճամբայ հանելու համար եւ այդ ուղղութեամբ դիմում կատարուեցաւ Փաշայի, Տամատեանի եւ իմ կողմէս հաւաքաբար պատկան իշխանութեանց մօտ: Անոնք սիրով մտիկ ըրին մեր պատճառաբանութիւններն ու տեղեկութիւնները, խոստացան հարցը ուսումնասիրել եւ քանի մը օր յետոյ մեզ տեղեկութիւն տուին որ հեռագրական ամենախիստ եւ կրտրուկ հրահանգներ տուած են Նիւ Եորք պատկան իշխանութեանց՝ 5-6 շաբթուայ ընթացքին բոլոր արձանագրուածները փոխադրելու համար:

Մենք ալ մեր կողմէն հեռագրով եւ նամակով նոյնը հաղորդեցինք մերիններուն՝ այնպէս որ խնդիրը գտաւ իր լաւագոյն լուծումը՝ եթէ երբեք սակայն իսկապէս կարելի ըլլայ այս երկու ամսուայ ընթացքին տրուած հրահանգներու կէտ առ կէտ գործադրութիւնով բոլոր արձանագրուածները փոխադրել՝ ինչ որ անկարելի չէ:

Գալով ինծի, ամէն գնով պէտք է աշխատիք որ թոշակի իրաւունքս պահելով զիս պաշտօնէս ազատ արձակեն: Ինչ ազդեցութիւն որ կրնաք բանեցուցէք այդ բանը յաջողցնելու համար: Պօղոս փաշան վերադարձին (օգրափոխութեան գնաց) ինքն ալ պիտի աշխատի այդ

19.- Ակնարկութիւնը հաւանաբար Սապահ-Գիլեանի:



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

ուղղութեամբ. իր անունովը կրնաք դիմել Առաքել պէ-
յին եւ Եագուպ Արթին փաշային՝ անոնց ազդեցութիւնն
եւս օգտագործելու համար²⁰:

Գիտէք որ իմ արձակուրդս կը վերջանայ Հոկտե-
մբերին: Թէքէեանը²¹ արդէն հազիւ Սեպտեմբերի վերջերը
հոս կ'ըլլայ, այնպէս որ եթէ ուզեմ իսկ չեմ կրնար այդ
թուականին հոտ ըլլալ:

Թէ ինչո՞ւ չեմ ուզեր վերադառնալ Եգիպտոս:

Նախ այն գուտ անձնական պատճառներուն համար
որոնք ծանօթ են ձեզի եւ ատոնց մասին կրկին խօսելու
պէտք չունիմ:

Երկրորդ որովհետեւ մեր Ամերիկայի ընկերները
պաշտօն յանձնած են ինծի, իբրեւ Կեդր. կոմիտէի ներ-
կայացուցիչ եւ «Հայրենիք»ի թղթակից Կովկաս երթա-
լու՝ ուր կարծեմ աւելի օգտակար կրնամ ըլլալ քան
Եգիպտոսի մէջ՝ մանաւանդ այս շփոթ օրերուն:

Երրորդ որովհետեւ Ազգային պատուիրակութիւնն
ալ պէտք ունի Կովկաս մարդ ղրկելու եւ համաձայն է
որ ես ու Տամատը երթանք իր կողմէն:

Ռուս կառավարութեան մեր մուտքը չարտօնելու
պարագային եւս, ես կը մտածեմ որ իմ Բարիզ ներկա-
յութիւնս թէ այստեղի գործերուն համար մեր տեսակէ-
տով օգտակար եւ թէ Ամերիկայի համար օգտակար
կ'ըլլայ:

Ահաւասիկ պատճառներս՝ որոնք համոզիչ են կար-
ծեմ: Դուք ձեր կողմէ կրնաք արժեցնել ձեր ունեցած
պատճառները. եթէ պէտք ըլլայ կրնաք նոյնիսկ առող-
ջութեանս ինդիքը արժեցնել, որովհետեւ թէեւ հոս լաւ
կը զգամ ինքզինքս, բայց գիտեմ որ վերադարձիս նո-
րէն ստամոքսս պիտի սկսի զիս տանջել:

Կը խորհիմ որ այդ դիմումները սկսիք անմիջապէս
եւեթ, եւ արդիւնքը հեռագրով հաղորդէք ինծի, որով-
հետեւ եթէ չյաջողիք պէտք է Սեպտեմբերի վերջերը
ճամբայ ելլալ:

Ընկեր Բաստրմաճեանը (Արմէն Գարօ) իմ մեկնելէս
4 օր առաջ Ամերիկա հասաւ իբրեւ կաթողիկոսի ներկա-
յացուցիչ բրոքականտի գործը վարելու համար Ամերի-
կայի մէջ:

Յաջորդով կը գրեմ իր առաքելութեան մասին:

*Ընկերական ջերմ բարեկներով՝
ԱՐՏԱԻԱԶԴԻ ՀԱՄԸՆՄԵԱՆ*

20.- Առաքել պէյը որդին է Պօղոս Նուպար փաշայի. Եագուպ Արթին փաշան (1824-1919) հիմնադիրներէն է Հ.Բ.Մ.ի եւ անդամ Ազգ. Պատուիրակութեան:

21.- Խօսքը բանաստեղծ Վահան Թէքեանի մասին է, որ նոյն-
պէս կ'աշխատակցեր Ազգ. Պատուիրակութեան:



Փաստ. 1406ա-29

Ե 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԵԻՆ 1917-1918

Ընկերներ,

24րդ Պատգամ. ժողովի որոշումներէն ու թելադրութիւններէն առաջնորդուած Կեղր. կոմիտէս ունեցաւ իր որոշ քաղաքականութիւնն ու հետեւեալ գլխաւոր նպատակները.

ա.- Գործադրել 24րդ Պատգ. ժողովի որոշումները:

բ.- Զօրացնել մեր կազմակերպութիւնը ներքնապէս:

գ.- Հետեւիլ Ազգ. ու քաղաքական շարժումներուն ու առաջնորդել զանոնք համաձայն մեր կազմակերպութեան աշխարհահայեացքին:

դ.- Յեղափոխական ձեռնարկներու համար քայլեր առնել:

ե.- Ներկայ աղէտի օրերուն համերաշխութիւնը պահել ամէն գնով ամերիկահայութեան մէջ:

Թէ որքան յաջողած է Կեղր. կոմիտէս իր այս նպատակներու գործադրութեան մէջ, պիտի ըսենք Զեզ, սոյն տեղեկագրի յաջորդական էջերով:

Կազմակերպական ներքին կեանք.—

Կեղր. կոմիտէս անցնող 1917-1918 շրջանին մասնաւոր աշխատանք թափեց, ճշտելու համար մեր իրաւասու ընկերներու եւ ընկերուհիներու ճշգրիտ թիւը եւ յաջողեցաւ կրկնակ քարթի սխիթեմով ունենալ ընկերներու եւ ընկերուհիներու լիակատար անուանացանկը, ինչպէս նաեւ մեր շարքերէն զանազան պատճառներով բացակայող ընկերներու եւ ընկերուհիներու անունները:

Տարիի սկիզբը ունէինք 100 կոմիտէներ եւ երկու խումբեր 2755 ընկերներով, 47 Կ[արմիր] խաչի խումբեր 723 ընկերուհիներով:

1918 յունիս 20-ին պատրաստուած վիճակագրութիւնը հետեւեալ թիւերը ցոյց կու տայ մեզ: 114 կոմիտէներ եւ չորս խումբեր 3411 ընկերներով: 50 Կ[արմիր] խաչի խումբեր 825 ընկերուհիներով:

Ներկայ շրջանին ունեցած ենք 14 նոր կոմիտէներ եւ չորս խումբեր: 640 նոր ընկերներ միացած են մեր շարքերուն:

Լուծուած, ինչպէս նաեւ նոր կազմուած կոմիտէներու անուններն ու հասցէները իր ժամանակին իմացուցած ենք կոմիտէներուն:

Մեր շարքերէն 253 ընկերներ ամերիկեան բանակին, իսկ 296 ընկերներ Արեւել. բանակին միացած են²²: Զին-

ւոր եւ կամաւոր մեկնող ընկերներու կենսագրականներն ու նկարները ունինք մեզ մօտ:

1917-1918 շրջանին զանազան պատճառներով մեր շարքերէն հեռացուած եւ բաժնուած են 150 ընկերներ:

Վիճակագրական այս աշխատանքէն առաջ մօտաւոր եւ ենթադրական գաղափար մը միայն ունէինք մեր անդամներու թիւին մասին: Ստեղծուած այս նոր դրութեան շնորհիւ տրուած վայրկեանին պիտի կրնանք գիտնալ թէ քանի ընկերներ ունինք, իւրաքանչիւր կոմիտէ քանի անդամ է կը բաղկանայ, ո՞ր ընկերները տեղափոխուած են, հեռացած կամ հեռացուած եւ ո՞ւր կը գտնուին անոնք:

«Հայրենիք» — Խմբագրական.—

Համաձայն 24րդ Պատգ. ժողովի թելադրութեան, Կեղր. կոմիտէս որոշեց ընդունիլ «Հայրենիք»ի համար պատասխանատու խմբագրի դրութիւնը, եւ պաշտօնի հրաւիրեց ընկ. Մ. Օզանեանը: «Հայրենիք»ի խմբագրութիւնը ըրած է իր կարելին ու լաւագոյնը թերթը բարոյապէս նախանձելի բարձրութեան մը վրայ դնելու եւ ժողովրդականացնելու համար:

Անցնող տարուան մէջ գործնականապէս տեսած ըլլալով պատասխանատու խմբագրի դրութեան օգտակարութիւնը, պիտի թելադրէինք մեր յաջորդներուն որ որդեգրէին զայն:

«Հայրենիք» — Վարչական.—

1917-1918 շրջանի սկիզբները «Հայրենիք»ի գործակատարի պաշտօնը յանձնեցինք ընկ. Սարգիս Պաղտոյեանին: Ընկ. Պաղտոյեան, իրեն յանձնուած պաշտօնը 5 ամիսներ լաւագոյն կերպով տանելէ վերջ, պարտաւորուած ըլլալով միանալ ամերիկեան բանակին, անոր տեղ գործակատար նշանակեցինք ընկ. Ա. Սաչազլեան:

Ընկ. Ա. Սաչազլեան ըլլալով Կեղր. կոմիտէի անդամ եւ քարտուղար չուզեց հրաժարելով Կ. Կ.ի անդամակցութենէն ընդունիլ առաջարկուած պաշտօնը, եւ սակայն մեր պնդումներուն վրայ տեղի տուաւ ան եւ խոստացաւ ստանձնել «Հայրենիք»ի գործակատարի պաշտօնը մինչեւ 25րդ Պատգ. ժողով:

22.- Արեւելեան բանակ անուան տակ պէտք է հասկնալ ֆրանսական բանակի Արեւելեան Լեզիոնը, որուն մեծագոյն մասը բաղկացած էր հայ կամաւորներէ:



ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

«Հայրենիք»ի տնտեսական բաժինը անհամեմատ կերպով բարելավուած է անցնող շրջանին: «Հայրենիք»ի վարչութիւնը կ'իմացնէ Ձեզ այդ իր Տեղեկագրով:

Փրոփականտիստ եւ կազմակերպող գործիչ ընկերները պիտի տան Ձեզ իրենց գործունէութեանց տեղեկագիրները:

«Ասպարէզ».-

Քալիֆորնիոյ շրջանի կազմակերպական շարքերու, նաեւ «Ասպարէզ»ի գործադրման համար Կեդր. կոմիտէս նոյն շրջանի գործիչ նշանակեց ընկ. Ա. Միքայէլեան, պարտականութիւն դնելով անոր վրայ, որ ընկ. Գապատայեանի հետ խորհրդակցաբար վարէ «Ասպարէզ»ի խմբագրական եւ վարչական գործերը:

«Ասպարէզ»ը անցնող շրջանին իր նոր շէնքին մէջ ունեցած է տողաշար մեքենայ մը — Կեդր. կոմիտէիս կողմէ գնուած — նաեւ տպող մեքենայ մը: Այս վերջինը գնուած է Լոս Անճելոսի ընկերներու նուիրատուութեամբ գոյացած գումարով: Վերջին պահուն իմացանք որ Ֆաուլթի ընկերներն ու ընկերուհիները ծալող մեքենայ մը գնելու համար որոշ գումար մը նուիրած են Ասպարէզին:

Քալիֆորնիոյ շրջանի գործիչ, ինչպէս նաեւ խմբագիր ընկերները իրենց օգտակար ծառայութեամբ բրած են իրենց լաւագոյնը գորացնելու համար մեր կազմակերպութիւնն ու օրկանը նոյն շրջանին մէջ:

Գործիչներ.-

Երկու կարգի գործիչներ ունենալու որոշումը 24րդ Պատգ. ժողովը վերհաստատած ըլլալով, Կեդր. կոմիտէս 1917-1918 շրջանի համար ըրաւ հետեւեալ կարգադրութիւնը:

ա.- Փրոփակականտիստ գործիչներ՝ ընկերներ Ա. Կ. Մանուէլեան — արձակուրդի ընթացքին եւ Վ. Արծրունի:

բ.- Կազմակերպող գործիչներ՝ ընկերներ Ն. Ն. Փաշալեան եւ Ս. Ռշտունի:

գ.- Ազգ. միութեան տրամադրեց, իբրեւ գործիչ ընկ. Ս. Չթճեան:

Ասկէ զատ նաև դիմած ենք արտասահմանեան մեր մարմիններուն նոր գործիչներու համար, եւ սակայն դրական պատասխան մը ընդունած չենք:

Մանթա.- Ընկ. Ն. Ն. Փաշալեան իր Ֆիզիքական տրակարութիւնը պատճառ նկատելով չստանձնեց իրեն յանձնուած ներքին գործիչի պաշտօնը:

Կեդր. կոմիտէս տարիի կէսին, նկատի ունենալով Նիւ Եորքի շրջանի կոմիտէներու պահանջը եւ մասնաւորապէս քանի մը կոմիտէներու ներքին աննախանձելի վիճակը, օգտուելով ընկ. Ս. Պաղտոյեանի ժամանակաւոր արձակուրդէն, նշանակեց զայն քանի մը շաբաթներու համար ներքին գործիչ եւ տուաւ անոր որոշ հրահանգներ:

Կովկաս եւ Ընկերվարական համագումարին մարդ զրկելու հարց.-

Նկատի ունենալով որ Կովկաս՝ գործի վայրը, հակառակ մեր բոլոր բաղձանքներուն ու ջանքերուն չափով մը մնացած է օտար, որ պատերազմական դրութեան պատճառաւ անցեալ երեք տարիներու ընթացքին մեր յարաբերութիւնները կովկասեան մեր մարմիններուն հետ եղած են անկանոն ու անբաւարար, որ ներկայ վրձնական օրերուն անհրաժեշտ եւ կարեւոր էր սերտ յարաբերութիւն պահել մեր արտասահմանեան մարմիններուն հետ, նկատի ունենալով դարձեալ որ պահանջ եղած է Ստոքհոլմի Ընկերվարական համագումարին, մեր կողմէ ընկեր ներկայացուցիչ մը ունենալ, Կեդր. կոմիտէս որոշեց ընկ. Հանրմեանը զրկել նախ Ստոքհոլմ եւ ապա Կովկաս, որոշ ժամանակաշրջանի մը համար:

Հակառակ սակայն սոյն որոշումին, ու ընկ. Ռոստոմի հեռագրով ըրած հրահանգին, Կեդր. կոմիտէս նկատի առաւ Դաշնակից պետութիւններու, մասնաւորապէս Մ. Նահանգներու դիրքը Ընկերվարական համագումարին հանդէպ, խոհեմութիւն նկատեց բեկանել Ընկերվարական համագումարին ներկայացուցիչ ճամբելու իր որոշումը եւ հեռագրով իմացնել ընկ. Հանրմեանին որ սպասէ մեր հրահանգներուն:

Քաղաքական դէպքերը այնպէս մը յաջորդեցին իրարու, եւ Ռուսաստանը այնպիսի դրութեան մը մատնուեցաւ, որ մեր Կովկաս մարդ զրկելու պարագան եւս կորսնցուց իր կարեւորութիւնը եւ մենք հրահանգեցինք ընկ. Հանրմեանին որ փոխանակ Կովկաս երթալու Ամերիկա անցնի կազմակերպական աշխատանք կատարելու համար:

Ընկ. Հանրմեան իբրեւ թղթակից եւ Տեղեկատու Փարիզի մէջ.-

Մեր հրահանգներուն ի պատասխան ընկ. Հանրմեան պատճառաբանեալ խօսքերով կ'իմացնէր, թէ պիտի չկրնայ ընդունիլ մեր հրահանգը, քանի որ իր ներկայութիւնը Կովկասի մէջ կամ [Ազգ.] Պատուիրակութեան մօտ կ'ունենայ աւելի դրական արդիւնք, երբ մանաւանդ նկատի առնուի Կովկասի ներքին վիճակը եւ պատուիրակութեան շուրջ հաւաքուած անհատներու կուսակցական հանգամանքները: Ընկ. Հանրմեան կ'իմացնէր նաեւ թէ պատուիրակութիւնը խնդրած է իրմէ



ստանձնելու Ազգ. հաստատութիւններու [հետ] յարաբերութեանց քարտուղարի պաշտօնը եւ ինք պիտի ընդունի, բայց մինչեւ այդ կարեւոր կը նկատէ ունենալ մեր հաւանութիւնը: Ընկ. Հանրմեան կ'աւելցնէր նաեւ թէ քանի որ իր Կովկաս երթալը ստեղծուած պայմաններու հետեւանօք անկարելի է, քանի որ պատուիրակութեան քարտուղարի պաշտօնը ինքնին կու գայ կը ներկայանայ, լաւ պիտի ըլլար չմերժել զայն: Մեր ուշադրութեան կը յանձնէր սակայն Պօղոս փաշայի բնաւորութիւնը եւ պատուիրակութեան կողմէ վարձատրուած պաշտօնեաներու վիճակը եւ կը խնդրէր որեւէ կարգադրութեամբ մը անկախ պահել զինք իր նոր ստանձնելիք պաշտօնին մէջ:

Կեդր. կոմիտէս նկատի առաւ ընկ. Հանրմեանի մեր ուշադրութեան յանձնած լուրջ պարագան, նկատի առաւ նաեւ Ազգ. պատուիրակութեան ներքին անկազմակերպ վիճակը ու զայն ղնելու համար կազմակերպ ու գործօն գետնի մը վրայ, որոշեց հետեւեալ գործնական միջոցները թելադրել ընկ. Հանրմեանին, ինչպէս նաեւ իր Միութեան ներկայացուցիչ ընկերներուն.—

Թէ՛ կարեւոր եւ անհրաժեշտ է ներկայիս որ Ազգ. գործին լծուած բոլոր մարմիններն ու ընկերակցութիւնները տեղեկ ըլլան Պատուիրակութեան տարած աշխատանքներուն. կարեւոր է որ հայ դատի փրոփականտը ամէն վայրի մէջ ունենայ միեւնոյն ուղղութիւնն ու ուժգնութիւնը. հարկաւոր է որ այժմէն իսկ պատրաստել հայ գաղութները հայրենիքի վերաշինութեան եւ տարագիրներու օգնութեան գործերուն համար:

Ժամանակն է որ Պատուիրակութիւնը իր կողքին կազմէ մէկէ աւելի վճարուած մարմիններ, հայ դատին եւ հայ իրականութեան հրամայական պահանջներուն գոհացում տալու համար: Պատուիրակութիւնը, իբրեւ հայ[կական] դատը վարող միակ հեղինակաւոր մարմինը, անհրաժեշտ է որ ունենայ իր որոշ կազմն ու որոշ պիւտճէն:

Սոյն թելադրութիւնները յանձնելով ընկ. Հանրմեանի ուշադրութեան, ի պատասխան իր նամակին ըսած ենք թէ Կեդր. կոմիտէս չի բաժնէր այն կարծիքը, որուն համաձայն անկախ ըլլալու համար պէտք չէ որեւէ կերպով պատուիրակութեան վարձատրուիլ, ընդհակառակը գոյութիւն ունեցող այդ մտայնութիւնը միանգամ ընդմիշտ չէզոքացնելու համար, ժամանակն է որ մեր Ազգ. գործին լծուած պաշտօնեաները վարձատրուին բուն իսկ ազգ. գանձէն:

Ընկ. Հանրմեան մեր սոյն նամակէն երկու ամիս վերջ, մայիս 15 թուակիր նամակով մը կ'իմացնէր թէ Պատուիրակութիւնը չվարձատրելու համար իր աշխատանքը, Մասեհեան խանի միջոցաւ ուզած է ետ առնել իր կողմէ տրուած պատուիրակութեան քարտուղարի պաշտօնը: Կ'իմացնէր թէ մօտ ժամանակէն ընկ. Վա-

րանդեան Լոնտոնի կոմիտէի հրաւերով եւ պատուիրակութեան որոշումով Սքանտինաւեան երկիրները պիտի անցնի փրոփականտի գործով: Գարձեալ մեր ուշադրութեան կը յանձնէր պատուիրակութեան ներքին անկազմակերպ վիճակը եւ անոր շուրջ հաւաքուած անհատներու կուսակցական հանգամանքները, եւ կարեւոր կը նկատէր դաշնակցական ընկերոջ ներկայութիւնը պատուիրակութեան մօտ:

Կեդր. կոմիտէս իր մայիս 30-ի ամբողջական նիստին մէջ նկատի առաւ ընկ. Հանրմեանի նամակը, նաեւ անոր յայտնած միտքերուն շուրջ ընկ. Գարոյի ըրած թելադրութիւնները եւ տուաւ հետեւեալ որոշումը.

Նկատի ունենալով որ ընկ. Հանրմեանի ներկայութիւնը Փարիզի մէջ Պատուիրակութեան մօտ կարեւոր է ազգային եւ կուսակցական տեսակէտէն, նկատի ունենալով որ Պատուիրակութիւնը հակառակ իր խոստումին չվարձատրելու համար ետ ուզած է առնել անոր յանձնուած Պատ. քարտուղարի պաշտօնը — ինչ որ մանաւանդ ներկայիս մեր ցրուած գաղութները իրարու եւ Պատուիրակութեան աշխատանքներուն ծանօթ պահելու համար այնքան կարեւոր է — նկատի ունենալով նաեւ ընկ. Հանրմեանի թղթակիցի, տեղեկատուի եւ դաշնակցականի կրկնակ հանգամանքները, Կեդր. կոմիտէս՝ առաջնորդուած Ազգ. Բիւրոյի եւ Կովկասի մեր բիւրոներու հրահանգներէն — որոնցմով կ'արտօնէին Ազգ. բիւրոյի հաշուոյն մեզ մօտ մնացած գումարէն վճարել հայ փրոփականտի աշխատանքին լծուած ընկերներուն՝ ընկ. Վարանդեանի, ընկ. Գարոյի եւ ուրիշներու, որոշեց պահել ընկ. Հանրմեանը Փարիզի մէջ Պատուիրակութեան մօտ վճարելով անոր 25 տոլար շաբթավճար — յունիս մէկէն սկսեալ:

Կովկաս գրամ փոխադրելու հարց.—

Իր ժամանակին շրջաբերականով իմացուցած ենք մեր կոմիտէներուն, թէ օրուայ հրամայական պահանջին գոհացում տալու համար, Կովկաս՝ Հայաստանի եւ Արեւելեան բիւրոներուն 15000 տոլար արդէն իսկ տեղափոխած եւ որոշած ենք 30000 տոլար եւս փոխադրել: Քաղաքական դէպքերը այնպէս մը յաջորդեցին իրարու որ հակառակ մեր եւ մեր շարքերու փափաքին ի վիճակի չեղանք որոշուած գումարը փոխադրել:

Կեդր. կոմիտէս ամէն կարելի միջոցներու դիմած եւ նոյն իսկ մէկէ աւելի անգամները հեռագրած է Կովկաս եւ այլուր վաճառականական տուներու եւ հաստատութիւններու միջոցաւ գործադրելու համար իր որոշումը: Մեր բոլոր գանազան միջոցներով ըրած դիմումներուն դրական պատասխաններ ստացած չըլլալով, որոշեցինք այն ատեն միայն փոխադրել որոշուած գումարը երբ պատեհութիւնն ու ժամանակը կը թոյլատրեն մեզ:

Փոխհատուցումի խնդիր.—

Հայաստանի սարսափներէն վերջ, հայերու, մասնա-
ւորապէս մեր ընկերներու սրտերը լեցուած են փոխ
վրէժի գգացումով: Այդ գգացումին իբր արտայայտու-
թիւն Չէրդ Պատգ. ժողովը տուաւ հետեւեալ որոշումը.

«Նկատի ունենալով որ Ազգ. բիւրոյի անունով խո-
շոր գումար մը կայ մեր մօտ, որոշեց որ Կեդր. կոմիտէն
անմիջապէս տեղեկանայ կովկասեան ճակատի վայ
կազմուելիք կամաւորական շարժման մասին եւ եթէ
այդպիսի շարժում գոյութիւն ունի, ամբողջ գումարը
տրամադրէ այդ շարժման, իսկ եթէ ոչ, մէկ մասը պա-
հել երկրի ինքնապաշտպանութեան, փոխհատուցու-
մին²³ եւ ուրիշ մարտական ձեռնարկներու համար եւ
մնացեալ գումարը յատկացնել ազգ. անմիջական կա-
րիքներուն:

Պատգ. ժողովի սոյն ժողովի որոշումի գործադրու-
թեանը համար կը սպասէինք մեր վերին մարմիններու
հրահանգներուն: Կը հաւատայինք թէ անոնք եւս կը
մտածէին յեղափոխական ձեռնարկներու եւ փոխ հա-
տուցումի մասին:

Ուրախ ենք ըսելու ձեզ թէ Հ.Յ.Դ. Ընդհ. ժողովը
ընտրած էր մարմին մը այդ նպատակին համար, բոլո-
րովին անկախ բիւրոներէն: Այդ միեւնոյն Արտակարգ
պատասխանատու մարմնոյն հրահանգով եւ զիտու-
թեամբ, Ամերիկայի շրջանի համար եւս կազմուած է
մարմին մը, իբր մէկ մասնաճիւղը Կեդր. մարմնոյն, որ
պիտի գործէ համաձայն իր վերէն ստացած հրահանգ-
ներուն ու ցուցմունքներուն:

Կեդր. կոմիտէս նկատի ունենալով Պատգ. ժողովի
որոշումը, Ազատագրութեան անունով մեզ մօտ գտնու-
ած գումարէն որոշեց փոխհատուցումին եւ վրէժի
Ֆոնտի անունով 25000 տոլար պահ ձգել դրամատան մը
մէջ եւ զայն գործածել միայն այդ երկու գլխաւոր նպա-
տակներուն համար:

**Մեր յարաբերութիւնները արտասահմանեան
մարմիններուն հետ.—**

Քաղաքականապէս աննպաստ անցնող շրջանին, մեր
յարաբերութիւնները Կովկասի մեր մարմիններու հետ
եղած է անկանոն եւ անգոհացուցիչ:

Ազգ. բիւրոյէն ստացած ենք նամակներ եւ կարգ մը
ստացագրեր:

Հայաստանի բիւրոյէն ընդունած ենք երեք նամակ-
ներ եւ մէկ շրջաբերական:

Սոյն նամակներու եւ շրջաբերականի բովանդակու-
թիւնը իր ժամանակին հաղորդած ենք մեր կոմիտէներուն:

Մեր յարաբերութիւնները Եւրոպայի մեր ընկերնե-
րուն եւ մարմիններուն հետ եղած է կանոնաւոր եւ գո-
հացուցիչ:

Նամակներ ընդունած ենք «Դրօշակ»ի խմբագրու-
թեանէն, ընկերներ Ա. Իսահակեանէն, Երուստիանէն եւ
Յովնանէն [Դաւթեան]:

Ընկ. Վարանդեան պարբերաբար գրած եւ տեղեկու-
թիւններ տուած է մեզ առհասարակ քաղաքական
բնոյթ ունեցող խնդիրներու շուրջ: Իր վերջին մայիս 15
թուակիր նամակով կ'իմացնէր մեզ թէ Լոնտոնի կոմի-
տէի հրաւերով եւ Պատուիրակութեան որոշումով
Աքանտինաւեան երկիրները պիտի անցնի հայ փրփա-
կանտի գործով: Կը տեղեկացնէր թէ վերջերս թուրք
կառավարութեան բողոքներուն եւ գործակալներու
փրփականտին իբր արդիւնք, չհզոք երկիրներու ըն-
կերվարական ներկայացուցիչներ որոշած են Կարնոյ
շրջանի թուրք ազգաբնակչութեան վրայ հայ կամաւոր-
ներու կողմէ ի գործ դրուած խփոթութիւնները քննող
յանձնախումբ մը դրկել հրատարակելու: Ընկ. Վարանդեան
կ'իմացնէր թէ ինք պիտի ջանայ ճամբուելիք յանձնա-
խումբին մէջ մտցնել տալ ծանօթ եւ կարող անձնաւո-
րութիւններ, որոնց պաշտօնը ըլլայ ոչ միայն հայ կա-
մաւորներու կողմէ ի գործ դրուած խփոթութիւնները
քննել, այլ եւ մօտէն տեղին վրայ ծանօթանալ ամբողջ
հայ ազգաբնակչութեան վրայ թուրք կառավարու-
թեան եւ ժողովուրդին կողմէ ի գործ դրուած վայրա-
գութիւններն ու նախճիրները, եւ ծանօթացնել զանոնք
քաղաքակիրթ աշխարհին:

Ընկ. Հանրմեան օրը օրին հաղորդած է մեզ զանա-
զան վայրերէ Պատուիրակութեան ստացած լուրերն ու
տեղեկութիւնները, ինչպէս նաեւ եւրոպական զանա-
զան թերթերու մէջ երեւցած ուշադրաւ լուրերը: Կ'ար-
ժէ ըսել թէ ընկ. Հանրմեան իր տեղեկագիրներով —
թիւով 11 — ծանօթ պահած է մեզ քաղաքական ու ազ-
գային բոլոր անցուղարձերուն, այլապէս դժուար պի-
տի ըլլար մեզ համար մեր շարքերու հետաքրքրութիւն-
ներուն եւ պահանջներուն գոհացում տալ:

Ընկ. Լ. Շանթէն երկու նամակներ ընդունած ենք.
անոր առաջին նամակի տեղեկութիւնները նոյնու-
թեամբ հաղորդած ենք մեր կոմիտէներուն:

Ընկ. Ռոստոմ տեղեկ պահած է մեզ Ստոքհոլմի մէջ
ընկերվարական համագումարի տարած աշխատանքնե-
րուն: Կարեւոր կը նկատենք իբր տեղեկութիւն հաղոր-
դել Ձեզ ընկերոջ վերջին նամակի պարունակութիւնը:
Չհզոք երկիրներու պատուիրակներու ժողովը պահան-
ջած է, Հայաստանի համար, հեռացում հայկական գա-
ւառներից այն մահմետականներին, որոնց տեղաւորել
են քաղաքական նպատակներով: Ժողովը անհրաժեշտ

23.- Իմա՝ փոխ վրէժի նպատակներուն, ինչպէս նշուած է վե-
րև:

եւ ստիպողական կը համարէ մեր հարցի լուծումը: Յիշատակագրի մէջ մեր հարցի լուծման առթիւ արտայայտուած միտքերը ունին երկու դժուարութիւններ, մին ներքին, միւսը արտաքին: Ներքին դժուարութիւններուն կը վերաբերի հայերու սակաւ թիւը, նաեւ թէ ինչպէս պէտք է կառավարել մահմետական տարրերը: Արտաքին դժուարութիւններուն կը վերաբերի մասնաւորապէս Գերմանիոյ, ան հակառակ կը լինի Թուրքիոյ բաժանման եւ որովհետեւ հաշտութեան համար անհրաժեշտ պիտի լինի փոխադարձ գիշուումներ, ուստի մեր դատը կարող է տուժել եւն:

Ընկ. Ռոստոմի սոյն նամակէն վերջ բաց գիր մը միայն ստացած ենք որով կ'իմացնէր թէ Փեթրոկրատ կ'երթայ Կովկաս անցնելու համար:

Անդրանիկի հրաժարման պարագան.—

Անդրանիկի մեր շարքերէն հրաժարման առթիւ ստացուած տեղեկութիւնը իր ժամանակին հաղորդած ենք մեր կոմիտէներուն: Մեր ռազմիկ ընկերոջ հրաժարման պատճառներուն ծանօթանալու համար գրած ենք Հայաստանի եւ Արեւելեան բիւրոներուն, ինչպէս նաեւ Անդրանիկին իրեն: Յարաբերութիւններու խզուած ըլլալուն հետեւանօք մեր նամակներուն պատասխանագրերը ընդունած չենք:

Հ.Յ.Դ. Կ[արմիր] խաչի խումբեր.—

1917-1918 շրջանին, Կ[արմիր] խաչի խումբերը, նախորդ տարիներու նման աշխատած ու իրենց պարտականութիւնները կատարած են, վեթերաններու Ֆոնտին եւ հայ կամաւորներուն ի նպաստ հանդէս ժողովներ ու ներկայացումներ սարքելով:

Կ[արմիր] խաչի անունի փոփոխութեան պարագան.— Անցեալ մարտ 22-ին, Պոսթընի ամերիկեան Կ[արմիր] խաչի անդամներու արձանագրութեանց յարկաբաժնի տնօրէնը առանձին նամակով մը կը խնդրէր մեզմէ Ամերիկայի մէջ գոյութիւն ունեցող Հ.Յ.Դ. Կ[արմիր] խաչի խումբերու մասնաւորապէս անունի մասին բացատրութիւններ ստանալ:

Մեր կողմէ ընկ. ներկայացուցիչի մը միջոցաւ անհրաժեշտ տեղեկութիւններն ու բացատրութիւնները տրուեցաւ իր ժամանակին:

Ամերիկ. Կ[արմիր] խաչի Պոսթընի Կեդր. մարմինը մայիս 30-ին ուրիշ պաշտօնագրով մը, Ուաշինկթոնէն ստացուած հրահանգի մը վրայ կը պահանջէր մեզմէ մեր խումբերու գործունէութեան եւ դարձեալ անունի գործածութեան մասին գրաւոր տեղեկագիր մը:

Սոյն պաշտօնագրին ի պատասխան Կեդր. կոմիտէիս քարտուղարութեան անունով պահանջուած տեղեկագիրն ալ ճամբուեցաւ:

Այս բոլորին արդիւնքը այն եղաւ որ Ամերիկ. Կ[արմիր] խաչի Պոսթընի վարչութիւնը Ուաշինկթոնէն ստացած իր մէկ հրահանգին վրայ արգիլեց մեզ գործածելու Կ[արմիր] խաչի անունը:

Այս պարագան նոյնութեամբ հաղորդելով Ձեզ կարեւոր կը համարենք ըսել թէ համաձայն Կ[արմիր] խաչերու համար գծուած կառավարական օրէնքին Ամերիկայի մէջ, բացի տեղական Կ[արմիր] խաչերէն ոչ մէկ ընկերակցութիւն իրաւունք ունի ու կրնայ գործածել Կ[արմիր] խաչի անունը:

Մենք պիտի թելադրէինք պահել մեր Կ[արմիր] խաչի խումբերը, իրենց ներկայ ծրագրով ու գործելակերպով կոչելով զանոնք փոխան Կ[արմիր] խաչի խումբերու, Հ.Յ.Դ. Քոյրեր:

Կանոնագրի վերաքննութեան հարց.—

24րդ Պատգ. ժողովի որոշման համաձայն Կեդր. կոմիտէս իրաւասութիւն տուաւ կանոնագրի վերաքննութեան համար նշանակուած յանձնախումբին, որ սրբազրուած օրինակը տպագրելով յանձնէ կոմիտէներու ուշադրութեան:

Սրբազրուած օրինակները իր ժամանակին ճամբուած եւ կոմիտէներու թելադրութիւններն ու դիտողութիւնները ստացած ենք. կը յանձնենք զանոնք Պատգ. ժողովի քննութեան ու վաւերացումին:

Գործիչ եւ պատասխանատու ընկերներու շաբթականի յաւելում.—

Կեդր. կոմիտէս նկատի ունենալով ընկ. Ա. Միքայէլեանի մասնաւոր դիմումը, նաեւ ապրելու սուղ պայմանները, միաձայնութեամբ որոշեց կազմակերպ. գործին լծուած պատասխանատու ընկերներու շաբթականին վրայ երկու տոլարի յաւելում մը ընել — նոր տարիէն սկսեալ:

Կեդր. կոմիտէի պակասող անդամի ընտրութիւն.—

Կեդր. կոմիտէիս անդամ ընկ. Ա. Սաչագլեան մեր կողմէ «Հայրեթ»-ի մէնէճը նշանակուած ըլլալով, անոր տեղ քուէներու առաւելութեամբ Կեդր. կոմիտէի անդամ ընտրուեցաւ ընկ. Գ. Տ. Կարապետեան:

Պիտի թելադրէինք Պատգ. ժողովին, որ նկատի ունենալով Կեդր. կոմիտէի պակասող անդամներու տեղ նոր ընտրութիւն կատարելու դժուարութիւնները, Կեդր. կոմիտէի անդամներու թիւը փոխան 7-ի տասնի բարձրացնէր, ճանչնալով վերջին նուազած քուէ շահողները փոխանդամներ, կամ զանազան պատճառներով Կեդր. կոմիտէէն պակասող անդամներու տեղ իրաւասու փոխարինող ընկերներ:

Խորհրդակցական ժողովներ.—

Մեր շրջանի ղեկավար ընկերները տեղեակ պահելու [համար] օրուան անցքերուն, եւ ամրացնելու նպատակով կազմ — ընկերական կապը, Կեդր. կոմիտէս անցնող շրջանին ունեցեր է երկու խորհրդակցական ժողովներ Պոսթրնի մէջ, իսկ մէկ ժողով Նիւ Եորքի մէջ:

Խորհրդակցական ժողովները ունեցած են ակնկալուած յաջողութիւնները: Կեդր. կոմիտէս նկատի առած է եւ օգտուած է անոնց թելադրութիւններէն:

Փրօփականտիստներ պատրաստող դասարաններ.—

1917-1918 շրջանին փրօփականտիստներու համար երկու նոր դասարաններ բացուած են գործիչ ընկերներու նախաձեռնութեամբ, մին Ռ. Ս. Լուիզի եւ միւսը Շիքակոյի շրջաններուն մէջ: Նոր բացուած դասարանները ունեցած չեն ակնկալուած յաջողութիւնները, կազմուած ըլլալով ոչ այնքան զօրաւոր գետնի վրայ: Ներքնապէս զօրանալու եւ դաստիարակուելու շարժումը սակայն սկսած է իր լայն տեղն ունենալ մեր շարքերուն մէջ: Պիտի թելադրէինք յաջորդ Կեդր. կոմիտէին սկսուած շարժումին թափ տալու համար անհրաժեշտ միջոցներն ու ուժերը տրամադրէր փրօփականտիստներ պատրաստող դասարաններուն:

Կեդր. կոմիտէս որոշած եւ տրամադրած է ձրիապէս մեր բոլոր հրատարակութիւններէն մէյմէյ օրինակ Ռ. Ս. Լուիզի եւ Շիքակոյի շրջաններու փրօփականտիստներու դասարաններուն, նաեւ Քալիֆօրնիոյ շրջանի համար Ֆրեզնոյի Ակնունի գրադարանին:

Որոշուած է դարձեալ բոլոր գործիչ եւ փրօփականտիստ ընկերներուն մեր փրօփականտի նուիրուած հրատարակութիւնները սովորականէն կէս գինով ծախել:

Չանագան որոշումներ եւ թելադրութիւններ.—

Կեդր. կոմիտէս որոշած է, մեկնող կամաւոր ընկերներուն փափաքին գոհացում տալու ու զանոնք մեր կեանքին ծանօթ պահելու համար, յարաբերութիւն պահել անոնց հետ, նաեւ ձրի թերթի ղրկել:

«Հայրենիք»ը տարածելու եւ անոր բաժանորդներու թիւը աւելցնելու համար, Կեդր. կոմիտէս պատշաճ թելադրութիւններ ընելէ զատ, «Հայրենիք»ի վարչութեան հրահանգած է մեր շարքերուն որ բաժանորդագրուին. նաեւ մասնաւորապէս պատրաստուած ընկալագիրներ յանձնած է իր գործիչ ընկերներուն որ նոր բաժանորդներ գտնեն եւ այդ ուղղութեամբ աշխատանք կատարեն: Մեր այս վերջին փորձը ունեցած է իր յաջողութիւնները:

Տիթրոյիտի մէջ հինգ կոմիտէներ եւ մէկ խումբ գո-

յութիւն ունենալով, տեղին վրայ գործող ընկ. գործիչի թելադրութեամբ եւ մեր հաւանութեամբ, կազմուած է միջ-կոմիտէական մարմին մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլայ մէկ կողմէ արգիլել ներքին խաչաձեւումները միւս կողմէ յարաբերութիւն պահել տեղական ուրիշ մարմիններու եւ հաստատութիւններու հետ:

Մեր պաշտօնավարութեան շրջանին ամէն շաբթու ունեցած ենք ժողով, որոնց մէջ տրուած են վերը յիշուած որոշումները: Շաբաթական մեր ժողովներուն նիւթ եղած են նաեւ տեղական բազմաթիւ եւ բազմապիսի հարցեր, որոնք անհրաժեշտ էին նկատի առնել, մեր կազմակերպութեան ուժեղացման եւ զարգացման համար: Ժողովի արձանագրութիւնները եւ անոնց կցուած լրացուցիչ վաւերացումները այդ մասին պիտի վկայեն, երբ դիւանական յարաբերութիւններու քննիչ յանձնախումբը իր աշխատանքը կատարէ:

Ընկ. Ա. Գարօ.—

Իր ժամանակին իմացուցած էինք մեր շարքերուն ընկ. Ա. Գարոյի Ամերիկա գալը: Ընկերը իբր մասնաւոր պատուիրակ ամենայն հայոց կաթողիկոսին, պաշտօն ունի Մ. Նահանգներու կառավարութեան եւ դիւանագիրտական շրջանակներուն ներկայացնելու հայկ. բաղձանքներն ու առհասարակ նպաստելու հայկական փրօփականտին:

Ընկ. Գարօ անցնող շրջանին ծանօթ պահած է մեզ քաղաքական բոլոր անցուղարձեւերուն: Մենք մեծապէս օգտուած ենք անոր ներկայութենէն ու թելադրութիւններէն:

Կը ցաւինք որ հակառակ մեր լայն տրամադրութեան, մեր կոմիտէներու բաղձանքներուն շատ քիչ անգամ միայն գոհացում տուած ենք, տրամադրելով ընկ. Ա. Գարոն իրենց ընկերային կամ այլ հանդէս-ժողովին. պատճառը այն եղած է որ մեր յարգելի ընկերը իր ամբողջ ժամանակը նուիրած է իր միսիային:

Առաջնորդական հարցը.—

Այս դժբախտ հարցը շատ զբաղցուց թէ մամուլը եւ թէ հասարակութիւնը: Կամաց կամաց ան արդէն սկսած էր սպառնալ ամերիկահայ գաղութին մէջ ստեղծուած այն համերաշխութեան, զոր սակայն պարտաւոր էինք ամէն գինով պահպանել մենք: Վերջ տալու համար այն արարքին, որ ինչպէս ըսինք արդէն ծայր տուած էր գաղութներու մէջ, մեր թերթի եւ «Պահակի»²⁴ խմբագիրները միասին խորհրդակցութիւն մը կատարելով, որոշեցին խորհրդակցական ժողով մը կանչել հնգական

24.- Պաշտօնաթերթ (շաբաթաթերթ) Ամերիկայի Վերակազմուելու հնչակեան կուսակցութեան:

ներկայացուցիչներէ, ընտրուած երկու կողմի թեմերէն: Տեղի ունեցաւ այդ ժողովը: Եկան երկու հակառակորդ հոսանքներէն ներկայացուցիչներ, որոնք որոշեցին, միաձայնութեամբ, չճանչնալ ոչ նախկին առաջնորդը եւ վարչութիւնը, որ արդէն իր մեծամասնութիւնը կորսնցուցած եւ լուծուած մարմին մըն էր, եւ ոչ ալ մեր կողմէ ապօրինի համարուած երեսփոխանական ժողովէ մը ընտրուած վարչութիւնն ու առաջնորդական տեղապահը: Խորհրդակցական այդ ժողովը որոշեց ընտրել նոր մարմին մը, երկու կողմի ներկայացուցիչներէն բաղկացեալ եւ տալ անոր հոգեւորական մը, իբր նախագահ, որ երկու ամսուայ ընթացքին նոր երեսփոխանական ժողով մը գումարելու պատրաստութիւնները տեսնեն: Այդ մարմինը մէկ շաբաթէն կազմելու որոշումով հեռացան խորհրդակցութեան կանչուած ներկայացուցիչները: Դժբախտաբար այդ ժողովէն յետոյ ալ շատ անփոյթ գտնուեցան մեր հակառակորդները. անոնք կարելի է ըսել խաղ ըրին եւ հակառակ մեր թերթի խմբագրի հետապնդումներուն, ամբողջ երկու ամիս, զանազան պատրուակներով չնշանակեցին կազմուելիք նոր մարմնի համար իրենց ներկայացուցիչները: Բացի այդ, անոնք նախապէս իրենց ուզած որոշումներն ալ ուզեցին փոփոխութեան ենթարկել: Ճարահատ, ընկ. խմբագիրը հրաժարեցաւ այդ գործը հետապնդելէ:

Տեղի ունեցաւ այնուհետեւ նոր երեսփոխանական ժողով, անիրաւուած թեմերը չմասնակցեցան անոր: Իսկ կազմուած երեսփոխանական ժողովը, առանց ամբողջ ամբերկահայութիւնը իր հետ ունենալու, ընտրեց իր առաջնորդական տեղապահը եւ վարչութիւնը, որոնք իրենց ներկայացուցիչներն ալ ղրկեցին Ազգ. միութեան մէջ: Մեր ընկերները բողոքած են անոր դէմ: Ատկէ աւելին ընել հնարաւոր չէր. սխալ պիտի ըլլար այդ խնդրի առթիւ երկար բարակ վէճեր ստեղծել: Բայց որովհետեւ անիրաւուած թեմերը շարունակ զանգատներ կը ղրկէին «Հայրենիք»ին, խմբագրութիւնը նկատի ունենալով որ անոնց հրատարակութիւնը ահագին յուզում առաջ պիտի բերէ գաղութին մէջ, ներկայացուց խնդիրը Միութեան, առաջարկելով անոր որ թեյադրէ առաջնորդական տեղապահին եւ վարչութեան, որ նոր երեսփ. ժողով մը գումարել տալով, վերջ մը տան այս խնդրին:

Մինչեւ այս ատեն կաթողիկոսն ալ նախորդ երեսփ. ժողովը եւ անոր որոշումները հաստատող նամակ մը ղրկած էր առաջնորդական տեղապահին: Այդ նամակը անոնց դիրքը կը զօրացնէր: Խմբագրութեան միութեան ըրած դիմումին կը պատասխանուի որ այդ հարցի լուծումը իրենց իրաւասութենէն վեր է եւ թէ զայն պէտք է ներկայացնել առաջնորդական տեղապահին: Խմբագրութիւնը այդ ուղղութեամբ ալ վերջերս կատարած է որոշ աշխատանք: Դժգոհ թեմերը այժմ կ'ուզեն նոր երեսփ. ժողով մը գումարել: Մեր թերթի միջո-

ցաւ յայտարարուած է անոնց որ այս օրերուն միութեան անուղղակիօրէն չվնասելու համար, իրենց ձեռնարկի իրագործումը յետաձգեն հանգանակութիւններէն վերջ: Առաջնորդական այս ծանօթ խնդիրը եթէ այսքան ձգձգուած է եւ չէ յաջողած, պատճառը այն է որ նախորդ առաջնորդը եղած է շատ թոյլ, վարանոտ եւ անհամարձակ: Ան միշտ յայտարարած է որ ինք կը գործէ եթէ իր հետ ըլլայ Դաշնակցութիւնը: Իսկ մենք, յայտնի բան է, չէինք կրնար երբեք հրապարակ գալ եւ պաշտօնապէս միջամտել այս խնդրոյն: Ասկէ զատ շատ տեղ դժգոհ թեմերն ալ ինքնագործունէութիւն մը ցոյց չեն տուած:

Համերաշխութիւնը ամէն գնով պահպանելու մտահոգութիւնն ալ մեր շատ մը ընկերները կաշկանդած է եւ լուեցուցած է զանոնք նոյնիսկ գործուած էնթրիկներու դիմաց: Եւ իսկապէս այս օրերուն մանաւանդ, շատ սխալ պիտի ըլլար ոտքով ձեռքով այդ գործին մէջ մտնել, մեր ուզած ուղղութիւնը տալու համար անոր: Երկրի սարսափելի վիճակը աչքի առաջ ունենալով, ոչ մենք եւ ոչ մեր թերթը կրնար այդ հարցը ձեռնել եւ հասարակութիւնը անով զբաղցնել. ասով մէկտեղ մենք կը յուսանք որ կարելի պիտի ըլլայ ստեղծել միջոց մը այդ խնդիրն ալ իրար հասկացողութեամբ մը վերջացնելու համար:

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՍԵՐԻԿ. ՀԱՅ. ԱԶԳ. ՄԻՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ

1917 Յուլիս – 1918 Յուլիս

Միութեան կազմութեան եւ անոր եռամսեայ գործունէութեան շուրջ հարկ եղած տեղեկութիւնները արդէն անցեալ պատգամաւորական ժողովին տրուած ըլլալով, մենք այս առթիւ ամփոփ ծանօթութիւններ միայն պիտի տանք Միութեան անցեալ յուլիսէն ասդին կատարած գլխաւոր գործերուն եւ անոր մէջ տեղի ունեցած կարեւոր իրադարձութիւններուն վերաբերմամբ:

Կամաւորական շարժում.—

Կամաւորական շարժումը մէկն էր Միութեան ծնուցիչ գլխաւոր պատճառներէն, եւ ինչպէս գիտէք Միութեան կազմութենէն անմիջապէս յետոյ հանգանակութիւններուն հետ զուգահեռաբար ձեռնարկուեցաւ նաեւ միեւնոյն գործը: Ամբերկահայ երիտասարդութեան մէջ խանդավառութիւնը մեծ էր այս սրբազան գործին հանդէպ, եւ մենք յոյս ունէինք որ գէթ երեք չորս հազարնոց հայ կամաւորական գունդ մը պիտի կրնայինք փոխադրել ռազմաճակատ, բայց փոխադրութեան մի-



Նոցներու պակասը մէկ կողմէն եւ ամերիկեան զինուորազորութիւնը միւս կողմէն, անյաղթելի դժուարութիւններ յարուցին Միութեան առջեւ եւ ան անցեալ յուլիսէն մինչեւ նոյեմբեր, հինգ ամիսներու ընթացքին հազիւ կրցաւ զրկել ընդամէնը 1200 հոգի:

Միութեան գէթ կարեւոր մէկ մասին մէջ զօրաւոր տրամադրութիւն եւ փափաք կար շարունակելու կամաւորներու առաքումը, բայց Ազգ. Պատուիրակութեան կրկնակի եւ կարուկ հրահանգները ստիպեցին Միութիւնը գէթ առժամապէս դադրեցնելու կամաւորական շարժումը: Պատուիրակութիւնը իր տեսակէտը կը հիմնէր այն իրողութեան վրայ, թէ մենք արդէն դաշնակիցներու ակնկալածէն աւելի մարդ զրկած էինք եւ թէ որքան երկարէր կամաւորներու առաքումը այնքան աւելի հաւանական կը դառնար նոր կոտորածներու կազմակերպումը Թուրքիոյ ճիրաններուն մէջ մնացած մեր ժողովուրդի բեկորներուն վրայ:

Այս անգամ Միութիւնը հարցին ուրիշ ճամբով մը մօտեցաւ: Ան կրկին գրեց Պատուիրակութեան որ Ֆրանսական եւ անգլիական կառավարութիւններուն միջոցով դիմում կատարուի ամերիկեան կառավարութեան, արտօնութիւն ձեռք բերելու համար, որպէսզի ամերիկեան բանակի հայ զինուորները փոխադրուին հայկական ճակատ:

Պատուիրակութեան վերջին նամակները ոչ միայն մեզի բերին այն աւետարտ թէ Ֆրանսական կառավարութիւնը յանձն առած էր այդպիսի դիմում մը կատարել ամերիկեան կառավարութեան մօտ, այլ կը հրահանգէն Միութեանը՝ անյապաղ վերսկսելու կամաւորներու առաքումը: Այնպէս որ նոր կամաւորական շարժման մը ձեռնարկելու խնդիրը Միութիւնը լրջօրէն զբաղեցնող հարցերէն մէկն է այսօր:

Միութիւնը իր կարգին, ուժ տալու համար Ֆրանսական կառավարութեան կողմէ այս մասին եղած եւ ըլլալիք դիմումներուն, կաթողիկոսի ներկայացուցչի միջոցով արդէն դիմումներ կատարած է թէ ամերիկեան կառավարութեան եւ թէ Ֆրանսական դեսպանին մօտ: Ստացուած պատասխանները դժբախտաբար այնքան քաջալերական չեն: Ամերիկեան կառավարութիւնը ցոյց կու տայ առ առաւելն իր բանակին հայ կամաւորները միայն մեզի տրամադրելու:

Կիպրոսի մէջ ունեցած մեր կամաւորներու մասին ստացուած պաշտօնական եւ անպաշտօն բոլոր տեղեկութիւնները վերին աստիճանի գոհացուցիչ են: Անոնց առողջական վիճակը շատ լաւ է եւ տրամադրութիւնները բարձր են: Թէ գործողութիւններու սկսած են թէ ոչ, եւ կամ ճիշտ երբ եւ ուր պիտի սկսին, պաշտօնական տեղեկութիւններ չունինք:

Փրփականաւ եւ դիւանագիտական դիմումներ.—

Մեր դատին ի նպաստ փրփականաւ եւ դիւանագիտական դիմումներու գործը եւս, ինչպէս գիտէք, Միութեան հիմնական նպատակներէն մէկը եղած է: Միութեան կազմութենէն միայն քանի մը ամիսներ վերջ հրապարակ դրուեցաւ սեփական անգլերէն օրկան մը ունենալու հարցը: Այս հարցը սկիզբէն թէպէտ Միութեան մեծամասնութեան կողմէ ընդդիմութեան հանդիպեցաւ, բայց վերջ ի վերջոյ սկզբունքով ընդունուեցաւ: Մեր ներկայացուցիչ ընկերները եւ մէկ քանի ուրիշներ առաջարկ տարին Միութեան որ փոխանակ նոր պարբերականի մը հրատարակութեան ձեռնարկելու, Միութիւնը հասկացողութեան մը գայ Տը Նիւ Արմենիայի հետ եւ գայն իր հովանաւորութեան տակ առնէ, որով ոչ միայն նոր եւ աւելորդ ծախքերու դուռ չի բացուիր, այլ եւ առաջը առնուած կ'ըլլայ ապագայ անբաղձալի մրցակցութիւններու եւ անախորժութիւններու:

Տը Նիւ Արմենիայի խմբագրին անձին դէմ Միութեան մեծամասնութեան մէջ գոյութիւն ունեցող իրաւացի թէ անիրաւ նախապաշարումները, ինչպէս նաեւ կուսակցական հին ու նոր շիւ նկատումները, սակայն, ցցուեցան մեր այս առաջարկին դէմ: Բայց մեր պնդումներուն վրայ Միութիւնը պարտաւորուեցաւ, նախ քան նոր թերթի հրատարակութիւնը, բանակցութեան մէջ մտնել Տը Նիւ Արմենիայի վարչութեան հետ: Վերջինին պահանջին վրայ երկու կողմէն ընտրուեցան երեքական ներկայացուցիչներ, որոնք անցեալ Սեպտ. 9-ին ժողով մը գումարեցին Պոսթընի մէջ, խորհրդակցելու համար թէ ինչ պայմաններով կարելի է Տը Նիւ Արմենիան Միութեան օրկան դարձնել:

Տը Նիւ Արմենիայի ներկայացուցիչները յիշեալ ժողովին մէջ առաջարկեցին հետեւեալ պայմանները.—

- 1- Ընտրել վարչութիւն մը, որ արդէն իր մէջ [ունենայ] գործի գլուխ կանգնած Տը Նիւ Արմենիայի վարչութիւնը եւ Ազգ. միութեան ներկայացուցիչները:
- 2- Թոյլ տալ որ թերթը ըստ առաջնոյն հրատարակուի Նիւ Եորքի մէջ:
- 3.- Թերթի խմբագիր նշանակել Ա. Մահտեսեանը:

Միութեան ներկայացուցիչները դիտել տուին թէ աւելի յարմար է որ թերթը փոխադրուի Պոսթընի Ազգ. միութեան կեդրոնավայրը, եւ խմբագրի ընտրութիւնը ձգուի Միութեան, որ ի հարկէ աննկատ չի թողուր պրն. Մահտեսեանը, որ այնքան օգտակար եղած է իր գործին մէջ:

Յետոյ միութեան ներկայացուցիչներու այն հարցումին թէ, եթէ Միութիւնը ձեզ հետ չհամաձայնելով ինք հրատարակել սկսի այստեղ իր անգլերէն թերթը, դուք պիտի շարունակէ՞ք հրատարակութիւնը Տը Նիւ Արմենիայի. պատասխանուեցաւ թէ այդ պարագային երկ-



ընդ թերթի մը պէտքը չըլլալով կը դադարի հրատարակութիւնը Տը Նիւ Արմենիայի: Այս խորհրդակցական ժողովէն յետոյ Միութիւնը, տեսնելով թէ Տը Նիւ Արմենիայի վարչութիւնը ոչ միայն ունի անգիջելի պայմաններ չունի, այլեւ պատրաստ է թերթը փակելու, եթէ Միութիւնը իր պայմանները չընդունելով ձեռնարկէ նոր թերթի մը հրատարակութեան, սկսաւ թերթի խմբագրի ընտրութեան: Նկատի առնուեցաւ թեկնածուութիւնը պ. պ. Սվազըրի, Մահտեսեանի, Կ. Փափազեան եւ պատ. Ասատուրեանի: Սվազըր ետ առաւ, գլխաւորաբար մեր ներկայացուցիչ ընկերներու կողմնակի աշխատանքներուն եւ թելադրութիւններուն վրայ: Մնացեալ երեքէն պրն. Փափազեան եւ պատ. Ասատուրեան յայտնեցին թէ իրենց ամբողջ ժամանակը չեն կրնար տրամադրել գործին եւ հետեւաբար մէկ կողմ դրուեցաւ իրենց թեկնածուութիւնը: Հրապարակի վրայ կը մնար պրն. Մահտեսեանի թեկնածուութիւնը եւ երբ գրեթէ իր ընտրութիւնը ապահովուած էր, պրն. Մահտեսեան յայտնեց ի պատասխան իրեն հաւանութիւնը առնելու համար գրուած նամակին, թէ ինք զբաղուած պիտի ըլլայ Տը Նիւ Արմենիայի հրատարակութեան գործով: Երբ յայտնեց ի պատասխան իրեն հաւանութիւնը առնելու համար գրուած նամակին, թէ ինք զբաղուած պիտի ըլլայ Տը Նիւ Արմենիայի հրատարակութեան գործով: Երբ յայտնեց ի պատասխան իրեն հաւանութիւնը առնելու համար գրուած նամակին, թէ ինք զբաղուած պիտի ըլլայ Տը Նիւ Արմենիայի հրատարակութեան գործով: Երբ յայտնեց ի պատասխան իրեն հաւանութիւնը առնելու համար գրուած նամակին, թէ ինք զբաղուած պիտի ըլլայ Տը Նիւ Արմենիայի հրատարակութեան գործով:

Խնդրոյն այս կերպ լուծուածէն Կեդ. կոմիտէն բոլորովին դժգոհ, մասնաւոր նամակով մը Տը Նիւ Արմենիայի հետ հասկացողութեան մը գալու համար նոր փորձ մը ըրաւ հարցը Միութեան սեղանին վրայ դնելով, որուն իբր հետեւանք Միութիւնը վերանկատելով այդ խնդիրը կրկին նամակով մը դիմեց Տը Նիւ Արմենիայի վարչութեան, իմանալու համար թէ ինչ պայմաններով կարելի էր միացնել Արմէնիան Հերըլտը եւ Տը Նիւ Արմենիան եւ ունենալ մէկ օրկան: Միութեան այս նամակին ի պատասխան Տը Նիւ Արմենիայի վարչութիւնը կրկինէ վերջ իր նախորդ պայմանները եւ անոնց վրայ աւելցնելով նոր պայման մը եւս թէ թերթին միութեան օրկանը ըլլալը պիտի յայտարարուի թերթին ճակատը, կը յայտնէր թէ յիշեալ պայմանները անփոփոխելի էին:

Միութիւնը ինքզինք վերջնագրի մը առջեւ գտնելով ապարդիւն նկատեց բանակցութիւններու շարունակութիւնը եւ որոշեց շարունակել հրատարակութիւնը իր առանձին օրկանին:

Արմինիան Հերըլտէն գատ Միութիւնը մտադիր է նաեւ հրատարակել անգլերէն ընդարձակ գիրք մը, հայ ազգին անցեալ եւ ներկայ կեանքի եւ ապագայի պահանջներու մասին, ինչպէս արդէն մամուլով յայտարարուած է, բայց դեռ հնարաւորութիւն ունեցած չէ այդ ուղղութեամբ գործնական աշխատանք կատարելու:

Գրաւոր փրոփակատին հետ կարեւոր է բերանացի փրոփականտ, բայց դժբախտաբար այդ ուղղութեամբ ալ Միութիւնը շատ քիչ դրական աշխատանք կրցած է կատարել անցեալի մէջ: Մտադրութիւն կայ սակայն յառաջիկային ունենալ մէկ երկու գործիչներ, որոնք դասախօսութիւններով եւ անհատական տեսակցութիւններով աշխատին զօրաւոր հանրային կարծիք մը պատրաստել ի նպաստ մեր դատին եւ պահանջներուն:

Գալով դիւանագիտական դիմումներուն, Միութիւնը ջանացած է օգտուել իրեն ներկայացած առիթներէն եւ մեր հարցը իր զանազան փուլերուն մէջ ներկայացնել այս երկրին պետական շրջանակներուն եւ անձնաւորութիւններուն:

Այս տեսակէտէն ընկ. Ա. Գարոյի Ամերիկա գալը մեծ օրհնութիւն մը եղաւ: Իր փորձառութիւնը, մեր երկրի եւ Կովկասի մասին ունեցած մանրակրկիտ ծանօթութիւնը եւ գործին հանդէպ ցոյց տուած խղճամիտ եւ լուրջ վերաբերումը մեծապէս դիւրացուցին Միութեան դիւանագիտական աշխատանքները: Ներկայացուած յիշատակագիրներու մեծ մասը ինքը անձամբ խմբագրած է: Իր թողուցած տպաւորութիւնը թէ՛ կառավարական շրջանակներու եւ թէ՛ բոլոր անոնց վրայ, որոնց հետ ինք ունի շփում ունեցած է, վերին աստիճանի նպաստաւոր են: Միմիայն անոր լուրջ եւ յամառ ջանքերուն շնորհիւ էր որ Մ. Նահանգներու կառավարութեան կրցանք ձեռք բերել Կովկասի Ազգ. Խորհուրդին քսան միլիոն տոլար տրամադրելու խոստումը:

Ընկ. Գարոյի, իբր կաթողիկոսի մասնաւոր պատւիրակ Ամերիկա ժամանումին վրայ հասկնալի պատճառներով շատ հաշտ աչքով չնայեցան մեր քոյր կազմակերպութիւնները: Բայց կարգադրութիւնը վերէն էր եւ անոնք կամայ ակամայ ստիպուած էին համակերպիլ: Հարկ չկայ աւելցնելու թէ ընկ. Գարո ուղղակի կաթողիկոսին կողմէ նշանակուած ըլլալով հանդերձ կատարեալ ներդաշնակութեամբ կը գործէ Ազգ. պատուիրակութեան եւ անոր տեղոյս ներկայացուցչին եւ Միութեան հետ:

Ընկ. Գարոյի եւ Միութեան դիւանագիտական հետապնդումներուն ուժ տալու համար յաջողուած է վերջերս կազմել յայտնի ամերիկացիներէ յանձնախումբ մը, որուն անդամներն են Է. Ռուլֆ, Օ. Տաճ, Չ. Քրէյն, Տր. Պարթըն եւ Փիթ: Այս յանձնախումբը ցարդ շօշափելի գործ կատարած չէ, բայց կը յուսանք որ ապագային օգտակար մարմին մը պիտի դառնայ մեր դատին համար:

Պաղտատ ներկայացուցիչներ դրկելու հարց.—

Ազգ. միութիւնը նկատելով որ անգլիական բանակի առաջնադասքով արդէն բաւական թուով հայեր ազատուած են Միջագետքի մէջ եւ կարելիութիւններ կան

բազմաթիւ ուրիշներ ալ ազատելու, նկատելով նաեւ որ պլընք. Խ. Գալուստեան, Չանգալեան եւ Հերեան տրամադրութիւն յայտնած են երթալու եւ այդ ուղղութեամբ աշխատանք կատարելու, եթէ Միութիւնը գէթ իրենց ճանապարհածախսը հոգայ, յանձն առաւ հայթայթել անոնց ճանապարհածախսը: Ընկ. Խ. Գալուստեան տեսնելով որ Միութիւնը տրամադիր չէ գործին համար մասնաւոր պիւտճէ մը յատկացնելու, եւ վախնալով թէ մի գուցէ հոն երթալէ վերջ պարտաւորուին գաղթականներու հացը կիսելու, հրաժարեցաւ իր մտադրութենէն: Միւս երկուքը, Չանգալեան եւ Հերեան գացին մինչեւ Փարիզ եւ անկարող ըլլալով անգլիական իշխանութիւններէն արտօնութիւն ձեռք բերելու Միջագետք անցնելու համար, իրենց ճամբան փոխեցին եւ միացան կամաւորներուն:

Ընկ. Խ. Գալուստեանի հրաժարումէն վերջ կեդր. կոմիտէս ճամբուածներու կողքին մեր կողմէ մէկու մը ներկայութիւնը ամէն կերպով օգտակար համարելով, մեր գործիչ եւ փրօփականտիստ ընկերներու տրամադրութիւնը շօշափեց իմանալու համար թէ արդեօք անոնցմէ մէկն ու մէկը յօժար պիտի ըլլա՞ր այս գործին լծուելու:

Ուրախ ենք յայտնելու որ մէկէ աւելի ընկերներ պատրաստակամութիւն յայտնեցին, բայց նկատի ունենալով անգլիական իշխանութիւններու յարուցած դժուարութիւնները, ընթացք չտուինք խնդրոյն:

Միութեան ներքին վիճակը.—

Նկատի ունենալով դեռ մօտաւոր անցեալի մէջ կազմակերպութիւններու միջեւ տիրող վէճերն ու անհամաձայնութիւնները եւ անոնց ուրոյն ներհակ շահերը, կարելի է ըսել որ Միութեան բաղկացուցիչ տարրերու փոխյարաբերութիւնները առհասարակ գոհացուցիչ եղած են: Ս. Դ. Հնչակեան ներկայացուցիչներն են եղած գլխաւորաբար որ Միութեան կազմութենէն ի վեր իրենց թեթեւսօղիկ ընթացքով եւ անպատասխանատու խօսքերովն ու արարքներովը յաճախ զբաղցուցած են Միութեան ժողովները: Իրենց կարգ մը մասնաճիւղերու անցեալ հանգանակութիւններու շրջանին կատարած անջատ կուսակցական հանգանակութիւնները եւ առ հասարակ իրենց կեդր. մարմինին, օրկանին, ինչպէս նաեւ շարքերու թոյլ վերաբերումը Միութեան ձեռնարկներուն հանդէպ, Միութեան մէջ իրենց դէմ հասկնալի կասկած մը եւ անվստահութիւն մը ստեղծած էին: Այս երեւոյթը կուսակցական հակառակութեան եւ Միութեան մեծամասնութեան կողմէ իրենց դէմ կազ-

մըւած պլըքի մը վերագրելով, անոնք օր ըստ օրէ աւելի առաջ գացին Միութեան հանդէպ ցոյց տուած իրենց բացասական վերաբերումին մէջ, մինչեւ որ Միութիւնը ստիպուեցաւ պահանջել Ս. Դ. Հնչակեան կեդրոնական մարմինէն որ Ս. Չագիկեան, իրենց ներկայացուցիչներէն ամէնէն աղմկարարն ու անտանելին, փոխարինուի ուրիշ ներկայացուցիչով մը: Անոնք մերժեցին այդ ընել, զանազան պատճառաբանութիւններով արդարացնելով իրենց ընկերով ընթացքը: Վերջ ի վերջոյ Միութիւնը պահանջեց Ս. Դ. Հնչակեան ներկայացուցիչներէն որ ժողովէն ներողութիւն խնդրեն, անցեալին մամուլին մէջ Միութեան գործունէութեան շուրջ տուած իրենց անճիշդ յայտարարութիւններուն եւ ժողովին ուղղած վիրաւորական խօսքերուն եւ գրութիւններուն համար: Ս. Դ. Հնչակեան ներկայացուցիչներ գոհացում տուին Միութեան այդ պահանջին եւ խոստացան իրենց բովանդակ աջակցութիւնը Միութեան ձեռնարկներուն եւ խնդիրը փակուած համարուեցաւ:

Եգիպտոսի Ազգ. Միութենէն ստացուած վերջին նամակէն կը յայտնուի որ այդ կուսակցութեան Եգիպտոսի հատուածը եւս համանման կեցուածք մը ցոյց է տուեր Միութեան կազմութենէն ի վեր, եւ Միութեան միւս տարրերը վերջերս միաձայնութեամբ կախակայք են Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչները:

Միութեան յարաբերութիւնները արտասահմանեան մարմիններուն հետ.—

Կովկասի Ազգ. մարմիններու հետ յարաբերութիւն հաստատելու Միութեան ճիգերը անցած են բոլորովին ապարդիւն: Միութեան Ազգ. խորհուրդի եւ կաթողիկոսին քաշած մէկէ աւելի հեռագիրներուն եւ ոչ մէկուն պատասխանը ստացուած է, ինչ որ ենթադրել կու տայ թէ անոնց եւ ոչ մէկը տեղը հասած է:

Միութեան եւ Ազգ. պատուիրակութեան յարաբերութիւնները եղած են բաւական կանոնաւոր եւ գոհացուցիչ: Անտարակոյս անոնք աւելի սիսթեմաթիք կ'ըլլային եթէ Ազգ. պատուիրակութեան կազմը հաստատուած ըլլար գործի բաժանման սիսթեմին վրայ, եւ ունենար իր առանձին քարտուղարութիւնը արտաքին յարաբերութիւններու համար:

Ազգ. պատուիրակութենէն գատ Միութիւնը յարաբերութիւն պահած է Եգիպտոսի Ազգ. միութեան հետ: Թղթակցութիւններ փոխանակուած են նաեւ Մարսէյի եւ Կիպրոսի Ազգ. միութիւններուն հետ:

Փաստ. 1406ա-3

**Ե 2.- ՈՐՈՇՈՒՄՆԵՐ Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻՆ
25ՐԴ ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԻՆ
1917-1918**

(ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ)

Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի շրջանի 25-րդ Պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ Պոսթընի մէջ, 1918 յունիս 29 – Յուլիս 5: Այս ժողովին կը մասնակցէին 71 կոմիտէներ 97 ձայներով: Կեդր. կոմիտէն իր կազմով, եւ գործիչները կը մասնակցէին մէկ-մէկ ձայնով:

Հետեւեալ ցանկը կը ներկայացնէ Պատգ. ժողովի մասնակցող կոմիտէները համապատասխան ձայներով:

Կոմիտէներ	Ձայն
Պինկհէմթըն	1
Պոսթըն	2
Պրանտֆորթ	4
Պրիմփորթ	2
Պրիմոնթըրր	1
Պրաքթըն	1
Պրոքլին	1
Քէմտըն	1
Փուլթաքէթ	} 2
Սէնթրըլ Ֆոլս	
Չարլսթաուն	1
Չըսի	3
Քափըր Սիթի	1
Տիթրոիթ	5
Շիքակոյի շրջան	3
Իսթ Քէյմպրիճ	1
Սէնթ Լուիզի շրջան	2
Իսթ Ուէյմընթ	1
Ֆիչպըրկ	1
Ֆրանքլին	1
Քալիֆորնիայի շրջան	2
Կոլթ	1
Կոլֆ եւ Համիլթըն	2
Հարթֆորտ	2
Հէյվըրհիլ	2
Հըտսըն	1
Ինտիւրն Օրչըրտ	2
Լորէնս	1
Լօուէլ	1

Լին	2
Մոլտըն	1
Մանչեսթըր	1
Մեսինա	1
Միլֆորտ	1
Նիւ Պրիթէյն	1
Նիւ Պրիփորթ	1
Նիւ Հէյվըն	1
Փաթըրսըն	1
Նիւթըն Ըփըր Ֆոլս	1
Նիւ Եորք	4
Նիաքարա Ֆոլս	2
Ֆիլատելֆիա	1
Փոնթիաք	2
Փորթլէնտ	1
Փրովիտէնս	5
Սփրինկֆիլս	1
Սէնթ Քաթէրինս	2
Սիւրաքիւզ	2
Թրոյ	1
Ուոթըրվիլիթ	1
Ուոթըրթաուան	2
Ուայթինսվիլ	2
Ուինոուքի	1
Ուստըր	3
Նեշուէ	1
Նիւ-Արք	1
Ուեսթ Հոպոքըն	2
Գործիչներ	1
Կեդր. կոմիտէի կազմ	1

Չանագան պատճառներով 25րդ Պատգ. ժողովին չեն մասնակցած հետեւեալ կոմիտէները-

Էքըրն, Պէթընտորֆ, Պինկհէմ-Քանըն, Պուոնոս-Այրէս, Քիլվիլնտ, Քանքըրտ, Տ. Իսթ Ճէֆֆըրսըն, Իրի, Ֆաուլըր, Կերի, Կրանդ Րափիտս, Կրով Սիթի, Հոփուէլ, Հըպըլ, Քէնսաս Սիթի, Քինկըսպուրկ, Լէյք Լինտըն, Մէտիսըն, Միտվիլ, Միտըլպորո, Մերիտըն, Միլիս, Մոնթրէօլ, Նիւ Քէսըլ, Օյլ Սիթի, Փարլիէր, Փէյնստէյլ, Փիպատի (Սելիմ), Փոնթիաք, Րիտլի (Քալիֆորնիա), Ռաշտէյլ, Սան Ֆրանչիսքօ, Սաութ Պոսթոն, Սաուլթ



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Միլոնքի, Սիլվիա, Սէն Ճոզֆ, Թոլիսո, Թօրանթա, Թօրէն, Իւթիքա, Վալփարէզօ, Ուէսթ Փոլմէն, Ունսաքէթ, Րիչմընտ, Տիրպորն (խումբ):

տրուած պատասխանները՝ անոնց գործունէութիւնը կը գտնէ գնահատելի:

«ՀԱՅՐԻՆԻՔ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Մանօթ.— Այս կոմիտէներէն 14ը նոր կազմուած ըլլալով ըստ կանոնագրի իրաւասութիւն չունէին մասնակցելու Պատգ. ժողովին:

Պատգ. ժողովը լսելով «Հայրենիք»ի պատասխանատու-խմբագիր ընկ. Մ. Օզանեանի տեղեկագրութիւնը եւ անոր շուրջ եղած թեր ու դէմ արտայայտութիւնները, կը գտնէ որ «Հայրենիք»ի խմբագրութիւնը իր ներկայ կազմով, տրուած պայմաններուն մէջ, գործը վարած է իր ուժերուն լաւագոյն կիրարկութիւնով, եւ կը գտնէ գնահատելի:

Պատգ. ժողովին խորհրդակցական ձայնով մասնակցելու հրաւիրուած էին 15-ի մօտ ընկերներ շրջակայ կոմիտէներէն:

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Պատգ. ընկերներու միաձայն որոշումով ընկ. Արմէն Գարօ հրաւիրուեցաւ Պատգ. ժողովին մասնակցելու իբրեւ պատուակալ նախագահ:

Պատգ. ժողովը նկատի ունենալով որ Պատգ. ժողովին կողմէն ընտրուած Հաշուեքննիչ յանձնախումբ մը ո՛չ ձեռնհասութիւն, եւ ո՛չ ժամանակի հնարաւորութիւն ունի Պատգ. ժողովի ընթացքին լիակատար հաշուեքննութիւն կատարելու, ընդունեց այդ գործը մասնագէտ հաշուեքննիչի (public accountant) մը յանձնելու սկզբունքը, եւ որոշեց երեք անհատ ընկերներէ բաղկացեալ յանձնախումբ մը ընտրել, անոր իրաւասութիւն տալով հրաւիրել մասնագէտ հաշուեքննիչ մը եւ անոր միջոցով «Հայրենիք»ի բոլոր հաշիւները քննել եւ Պատգ. ժողովի թուականէն առ առաւելն երկու ամիս ժամանակամիջոցի մը մէջ պատրաստել մանրակրկիտ եւ լիակատար հաշուեկէշիտ մը եւ զայն տեղեկացնել կոմիտէներուն:

ՇՆՈՐ ՀԱՒՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Պատգ. ժողովը շնորհաւորեց կովկասահայ հանրապետութեան հոգակումը հեռագրով մը, որուն մէջ փափաք կը յայտնուէր շարունակել ազգային ազատագրութեան գործը մինչեւ Հայաստանի ամբողջական ինքնավարութեան իրագործումը: «Ասպարէզ»ի տասնամեակի առիթով շնորհաւորական հեռագիր տրուեցաւ «Ասպարէզ»ի խմբագրութեան: Պատգ. ժողովի դիւանին յանձնուեցաւ շնորհաւորական նամակ մը ուղարկել Հայ Ազգ. միութեան, անոր ուժեղացումին եւ յարատեւութեան համար յայտնելով իր ջերմ փափաքը:

Այս իրաւասութիւնով երեք անհատներէ բաղկացած յանձնախումբ մը ընտրուեցաւ Պատգ. ժողովի կողմէ:

ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Պատգ. ժողովը լսելով «Հայրենիք»ի գործակատար ընկ. Ա. Սաչագլեանի տեղեկագրութիւնը «Հայրենիք»ի վարչական գործերու մասին եւ անոր շուրջ եղած հարցապնդումները եւ տրուած բացատրութիւնները, կը գտնէ որ «Հայրենիք»ի վարչութիւնը, հակառակ պատերազմի ստեղծած բացառիկ պայմաններուն, գործը վարած է իր ուժերու լաւագոյն կիրարկութիւնով, եւ ջանացած է «Հայրենիք»ի մէջ մտցնել վարչական բարեփոխութիւններ, եւ անոր բացատրութիւնները կը գտնէ բաւարար, սակայն իր վերջնական որոշումը տալու համար կը սպասէ որ Պատգ. ժողովի ընտրած հաշուեքննիչ յանձնախումբը իր վերջնական տեղեկագրութիւնը պատրաստէ:

Քալիֆորնիայի շրջանի գործիչ-խմբագիրը կարգաց իր տեղեկագրութիւնը իր ներկայացուցած շրջանի կուսակցական աշխատանքներու եւ մասնաւորապէս «Ասպարէզ» թերթի դրութեան մասին, եւ շեշտեց Քալիֆորնիայի շրջանին մէջ գոյութիւն ունեցող կազմակերպական աշխատանքի կարելիութիւնները:

ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պատգ. ժողովը լսելով ընկ. Արսէն Միքայէլեանի տեղեկագրութիւնը եւ անոր շուրջ եղած հարցումները եւ լուսաբանութիւնները, կը գտնէ որ անիկա գործը վարած է լաւագոյն կերպով, տրուած աննպաստ պայմաններու մէջ, եւ կը յայտնէ իր գնահատութիւնը, միանգամայն թելադրելով յաջորդ Կեդր. կոմիտէին՝ գործը շարունակել ուժեղ թափով մը:

Պատգ. ժողովը լսելով Կեդր. կոմիտէի տեղեկագրութիւնը, ինչպէս եւ անոր դիւանական թղթերուն ու հաշուական գործառնութիւններու Քննիչ յանձնախումբին

Պատգ. ժողովը լսելով այս շրջանի երկու գործիչներու՝ ընկերներ Ս. Ռշտունիի եւ Ա. Արծրունիի տեղեկագիրները եւ նկատի ունենալով եղած հարցումներուն

25.- Մալճեան Սարգիս եւ Տուլեան Արծրուն:



տեղեկագիրը, նաև եղած հարցապնդումները եւ տրր-
լած լուսաբանութիւնները, եկաւ այն եզրակացութեան
որ,—

Ա) Կեդր. կոմիտէն կազմակերպական գործերը վա-
րած է խղճմտօրէն. պահած է գոհացուցիչ յարաբերու-
թիւններ, կատարած է զանոնք սխիթեմաթիք կերպով եւ
ստեղծած է խիստ գոհացուցիչ դիւանական-հաշուա-
կան դրուժիւն իր արխիւներուն մէջ, շնորհիւ իր քար-
տուղարի բարեխիղճ աշխատանքին:

Բ) Ազգային քաղաքականութեան մէջ, նկատի ունե-
նալով այն հանգամանքը, որ քաղաքական ներկայ պայ-
մաններու մէջ մեր կուսակցութեան վրայ պարտք կը
ծանրանայ լծել հայ ժողովուրդի բոլոր հոսանքները հայ
դատի աշխատանքին, որ, քաղաքական պայմանը մեզ
կը պարտադրէ նոյնիսկ զոհել կուսակցական տեսա-
կէտները՝ որոշ չափով՝ յօգուտ ազգային տեսակէտնե-
րու, եւ այն՝ որ ներկայիս բոլոր հոսանքները ընդգրկած
են ազգային կուռի գաղափարը, որուն համար մենք
քառօրդ դարու չափ մաքառած ենք, Պատգ. ժողովը կը
գտնէ որ Կեդր. կոմիտէն Ազգ. միութեան իր գործառ-
նութիւններու եւ փոխ յարաբերութիւններուն մէջ —
չնայած շարք մը գիշումներուն — հետեւած է մեր կու-
սակցութեան քաղաքական տեսակէտներուն եւ Ամերի-
կայի շրջանի մեր կազմի համերաշխական ուժեղ բաղ-
ձանքներուն՝ եւ կը յայտնէ իր գոհունակութիւնը:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Պատգ. ժողովը կուսակցական մամուլը ուժեղացնե-
լու եւ մեր գրաւոր պրոպականտը աւելի լայն կերպով
տարածելու համար, որոշեց.—

Ա.- Պահել պատասխանատու-խմբագրի դրուժիւնը,
համաձայն նախորդ Պատգ. ժողովի որոշումին.

Բ.- Պահել Կեդր. կոմիտէի քոնկրորի դրուժիւնը
«Հայրենիք»ի վրայ, եւ պարտադրել Կեդր. կոմիտէի որ
այդ քոնկրորի սկզբունքը կիրարկէ ուղղակի եւ անմի-
ջական կերպով, որպէսզի մեր կուսակցական մամուլը
ըլլայ հետեւողական մեր կուսակցական տեսակէտնե-
րուն եւ օրուան քաղաքականութեան:

Գ.- Իբր կուսակցական-բարոյական պարտականու-
թիւն՝ ազդուապէս պարտադրել մեր բոլոր մտաւորա-
կան ուժերուն՝ իրենց գրական կարողութիւնը ի սպաս
դնել կուսակցական մամուլի ուժեղացումին:

Դ.- Պատասխանատու խմբագիրը պարտաւոր է,
առնուազն երեք ամիսը անգամ մը, խորհրդակցական
ժողովներ գումարել ընկեր աշխատակիցներու եւ մտա-
ւորականներու միջեւ, ապահովելու համար անոնց աշ-
խատակցութիւնը, եւ անոնց միջեւ ստեղծելու եւ պահե-
լու համագործակցութեան ոգին:

Ե.- Կուսակցական երկու օրկաններու, «Հայրենիք»ի
եւ «Ասպարէզ»ի միջեւ ներդաշնակութիւն ստեղծելու
համար թելադրել պատասխանատու խմբագիրներուն
որ սերտ յարաբերութիւն պահեն իրարու հետ:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊՐՈՊԱԿԱՆՏ

Պատգ. ժողովը նկատի ունենալով.—

Ա) Որ կուսակցական մամուլի տարածումը մեծա-
պէս կը նպաստէ մեր պրոպականտի գործին եւ հետե-
ւաբար կազմակերպութեան ուժեղացման,

Բ) Որ մեր կուսակցութեան ծրագիրը գրուած ըլլա-
լով ժողովուրդին ոչ այնքան դիւրամատչելի լեզուով,
չատերուն համար կը մնայ անհասկնալի,

Գ) Որ պէտք եղած աշխատանքը թափուած չէ ցարդ
պատրաստելու պրոպականտիստ ընկերներ՝ որոնց մի-
ջոցով կարելի ըլլար աւելի մեծ զարկ տալ ընկերներու
յառաջդիմութեան,

Որոշեց՝

Ա) Պարտադրել Կեդր. կոմիտէին որ իր բոլոր ջանքե-
րը ի գործ դնէ մամուլը տարածելու, ընկերներու եւ հա-
սարակութեան մէջ.

Բ) Մեր Ծրագրի մասնաւոր կէտերը հասարակու-
թեան մատչելի լեզուով մը հրատարակել «Հայրենիք»ի
եւ «Ասպարէզ»ի մէջ, ինչպէս նաև մեր կուսակցու-
թեան պատմութիւնը՝ յարմար եղանակով, եւ եթէ հարկ
ըլլայ՝ նաև պրոչիւրներով:

Գ) Մեծ շրջաններու մէջ ընկերները դաստիարակելու
համար մասնաւոր դասարաններ հաստատել:

Դ) Որքան հնարաւոր է յաճախ սարքել հրապարակա-
յին եւ ընկերային դասախօսական ժողովներ թէ՛ ընկեր-
ները եւ թէ՛ հասարակութիւնը դաստիարակելու համար:

ԱԶԳ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԱՆ ԶԵՒԻ ՀԱՐՑ

Պատգ. ժողովը ընդունելով հանդերձ ժողովրդական
քուէի սկզբունքը Ազգային միութեան մարմիններու
ընտրութեան մէջ, եւ նկատելով սակայն որ ամերիկա-
հայ ազգ. կեանքին մէջ գոյութիւն չունի քաղաքային
կեդրոնական պարտադիր հեղինակութիւն,— կը գտնէ
որ այդ դրուժիւնը աննպատակալարմար է առ այժմ,
եւ կ'որոշէ պահել ներկայացուցչական ներկայ սիստե-
մը, միանգամայն թելադրելով Կեդր. կոմիտէին որ ընդ
առաջ երթայ ժողովրդական քուէարկութեան սիստե-
մին միայն այն ժամանակ երբ այդ ուղղութեամբ պա-
հանջ մը կը ներկայացուի միւս հոսանքներու եւ կամ
հասարակութեան կողմէ:

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ

Կամաւորական հարցի շուրջ ժողովը ընդունեց հե-
տեւեալ բանաձեւը.— Նկատի ունենալով, որ քաղաքա-
կան հանգամանքները կրնան առիթ տալ մեզ կանգնիլ
կուռի ճակատ վճռական վայրկեանի մէջ, Պատգ. ժողո-
վը որոշեց պարտք դնել Կեդր. կոմիտէի վրայ, ամէն մի-
ջոց ձեռք առնել համագաղափար ընդհ. պարտաւորիչ գիւ-
ւորագրութիւնը իրագործելու Ազգային Միութեան մի-
ջոցով:



ՀԱՅ ԱԶԳ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Պատգ. ժողովը նկատի ունենալով՝

ա) որ հայկական դատի եւրոպական պատգամաւորութիւնը իր ձեռքին մէջ ունի հայկական խնդրի նման կենսական դատ մը,

բ) որ այդ պատուիրակութեան կազմը անհամապատասխան է իր ստանձնած ծանրակշիռ եւ բազմապիսի գործին,

գ) որ ամերիկահայ գաղութը իր ազգային հետապնդումներուն մէջ որոշ նիւթական եւ բարոյական պարտաւորութիւններ ստանձնած է հանդէպ Պատգամաւորութեան,

Պարտք կը դնէ Կեդր. կոմիտէին վրայ, որ հետապնդէ նպատակաւոր միջոցներով պատուիրակութեան կազմը դնել ներկայացուցչական լայն հիմունքներու վրայ:

ԱՍԵՐԻԿԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ՀԱՐՑ

Նկատելով որ թեմական գործի սահմանին մէջ կը մտնեն մեր ազգային-կուլտուրական խնդիրները,

Նկատելով որ հոգաբարձութիւնները ազգային-հասարակական, ինչպէս նաեւ քաղաքական մարմիններու մէջ որոշ ձայն եւ ազդեցութիւն ունին,

Նկատելով որ այդ հաստատութիւնները զուտ կրօնական հողի վրայ դրուած չեն,

Պատգ. ժողովը կ'որոշէ որ Կեդր. կոմիտէն ընկերներու անհրաժեշտ եւ հաւաքական մասնակցութեամբ կազմակերպէ բոլոր ցրուած ուժերը ամէն գաղութի մէջ եւ ի մի համախմբելով ապահովէ այդ մարմիններու նպատակաւոր մասնակցութիւնը ազգային-հասարակական հարցերու եւ հաստատութիւններու մէջ:

ՄԵՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑՉՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ Մէջ

Պատգ. ժողովը աչքի առջեւ ունենալով այն առաջարկը, որ կը թելադրէր Ազգ. Միութեան Կեդր. Մարմինին մեր ներկայացուցիչները ընտրել Կեդր. կոմիտէի կազմէն դուրս, եւ այս մասին թեր ու դէմ կարծիքներ յայտնելով, եկաւ այս որոշումին:—

Նկատի ունենալով այն հանգամանքը որ Կեդր. կոմիտէն Ամերիկայի Հ.Յ.Դ. գործադիր մարմինն է եւ իրաւասութիւն ունի վարելու մեր գաղութի կուսակցական եւ ազգային-քաղաքական բոլոր գործերը, Պատգ. ժողովը իրաւունք կու տայ Կեդր. կոմիտէին ընտրել իր ներկայացուցիչները իր յարմար գտած եղանակով:

ՊՐՈՊԱԿԱՆՏԻ ԵՒ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Պատգ. ժողովը նկատի ունենալով որ Ամերիկայի մէջ հայ դատի պրոպագանտի գործը եւ գաղթականա-

կան աշխատանքները իրենց համազգային հանգամանքով կ'իյնան Ազգ. միութեան եւ Ազգ. Վերին իշխանութեան իրաւասութեան սահմանին մէջ, պարտք կը դնէ Կեդր. կոմիտէին վրայ, որ համապատասխան միջոցներով հետապնդէ, որ այդ աշխատանքները առաջ տարւին մեր ազգային շահերու համաձայն, եւ ձեռնհաս մարմիններու միջոցով:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ԽՄԲԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Պատգ. ժողովը նկատի ունենալով որ Շրջանային խորհուրդի դրութիւնը կը ստեղծէ աշխատանքի բաժանում եւ այդպիսով պատեհութիւն կու տայ հեռաւոր շրջաններու մէջ ստեղծելու համագործակցութեան ոգի եւ ապակեդրոնացեալ աշխատանք, կ'որոշէ վերահաստատել Շրջ. խորհուրդի դրութիւնը, բացառութիւն նկատելով Պոսթընի շրջանը, նկատելով որ այս վերջինը կը գտնուի Կեդր. կոմիտէին մօտիկ, եւ կ'որոշէ ձեւակերպել կանոնագրութիւն մը՝ ճշդելու եւ սահմանելու համար Շրջանային խորհուրդներու իրաւասութիւնը եւ անոնց Կեդր. կոմիտէի հետ ունեցած յարաբերութիւնները, եւ իրաւունք կու տայ Կեդր. կոմիտէին որոշ պիտոճէ յատկացնել անոնց՝ համաձայն իւրաքանչիւր շրջանի պահանջներուն:

Պատգ. ժողովը նկատի ունենալով Շրջանային խորհուրդներու վերահաստատումի հարցին մէջ Քալիֆորնիայի եւ Պոսթընի ներկայացուցած բացառիկ դրութիւնը, որոշեց Կեդր. կոմիտէին յանձնել որ նոր կանոնագրին մէջ վերոյիշեալ շրջաններու մասին մասնաւոր օրէնքներ սահմանէ:

Պատգ. ժողովը լսելով խմբային դրութեան հարցին շուրջ պատգամաւորներու եւ գործիչներու թեր ու դէմ կարծիքները եւ թելադրութիւնները՝ եկաւ այն եզրակացութեան, որ մեր միջավայրը խմբային դրութեան յարմար հող չի ներկայացներ, եւ որոշեց թոյլ տալ գործիչ ընկերներուն եւ կոմիտէներուն, որ Կ. կոմիտէի խորհրդակցութեամբ եւ հաւանութեամբ, կոմիտէական բաժանումներ ստեղծեն այն քաղաքներու մէջ, ուր անհրաժեշտ պահանջ կայ:

ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ՀԱՐՑ

Նկատի ունենալով որ յաջորդ շրջանին մէջ կուսակցական ներքին կազմակերպական, ընկերներու դաստիարակութեան եւ կուսակցական ընդհանուր պրոպագանտի բազմապահանջ գործը կը պահանջէ համապատասխան աշխատանք, եւ այդ աշխատանքը ի գլուխ հանելու համար բաւարար գործիչներու կարիք կայ, պարտք կը դնէ Կեդր. կոմիտէին վրայ յաջորդ շրջանին համար:—

ա) Նշանակել գործիչ-խմբագիր մը անմիջապէս Քա-



լիֆորնիայի շրջանին համար:

բ) Միևս շրջաններու համար ջանալ գտնել առնուազն չորս գործիչներ, բաւարարութիւն տալու համար կուսակցական աշխատանքներուն: Այս գործիչներու աշխատանքը բաժնել շրջաններու վրայ՝ անոնց ներկայացուցած կարիքներու համեմատութեամբ:

գ) Ձնջել երկու կարգի գործիչներու դրուութիւնը:

ԿԱՆՈՆԱԳՐԻ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Նկատելով որ Պատգ. ժողովի կողմէ ընտրուած կանոնադրի վերաքննիչ յանձնախումբը հնարաւորութիւն չէ ունեցած աշխատանք կատարելու, Կեդր. կոմիտէի Պատգ. ժողովիս ներկայացուցած վերաքննուած կանոնադրին վրայ,

Որ կանոնադրի վերաքննութիւնը պէտք ունի սխտեմաթիկ եւ հիմնական փոփոխութիւններու,

Որ անոր մէջ գտնուած շարք մը առաձգական տրամադրութիւնները պէտք ունին ենթարկուելու որոշ ձեւակերպութեան եւ մասնաւորումներու,

Որ կանոնադրին մէջ կը պակսին շրջանային խորհուրդներու իրաւասութիւնները եւ անոնց Կեդր. կոմիտէին հետ ունեցած յարաբերութիւնները ճշգրտ համապատասխան կանոնադրութիւններ,

Որ կոմիտէներու մէջ ընդհանուր պահանջ կայ ժողովավարական կանոններու,

Որ այդ բազմապահանջ գործը կը պահանջէ համապատասխան աշխատանք վերաքննիչ յանձնախումբի կողմէ,

Պատգ. ժողովը պարտք կը դնէ Կեդր. կոմիտէին վրայ որ իր կողմէ ընտրէ գործիչներէ եւ ձեռնհաս ընկերներէ կազմուած վերաքննիչ յանձնախումբ մը եւ անոնց յանձնէ կանոնադրի վերաքննութեան եւ ժողովավարական կանոններու պատրաստութեան գործը՝ պայմանաւ որ վերաքննուած կանոնադիրը Կեդր. կոմիտէի կողմէ վաւերացուելէ յետոյ, առ առաւելն երկու ամիսէն զտրուի կոմիտէներուն, եւ ի գորու ըլլայ մինչեւ յաջորդ Պատգ. ժողովի վաւերացումը:

**«ՀԱՅՐԵՆԻՔ»Ը
ՊԱՐՏԱԻՈՐԻՉ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՐՅԸ**

Պատգ. ժողովը նկատի ունենալով «Հայրենիք»ի բաժանորդագրութիւնը ընկերներուն պարտաւորիչ դարձնելու հարցին շուրջ յայտնուած կարծիքները, որոշեց մեր ընկերներու վրայ բարոյական պարտաւորութիւն դնել նիւթական եւ բարոյական ամէն միջոցներով օժանդակել կուսակցական մամուլի տարածման:

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՀԱՐՅԸ

Պատգ. ժողովը նկատելով Կարմիր խաչի խումբերու մասին եղած խորհրդակցութիւնները, որոշեց թելադրել Կեդր. կոմիտէին որ ջանայ ամէն հնարաւոր միջոցներով պահել Կարմիր խաչի անունը, հակառակ պարագային զանոնք անուանել Հ. Յ. Դաշնակցութեան կանանց խումբեր, նոյնը պահելով կանոնադրութիւնը:

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ
ՇԱԲԱԹԱՎՃԱՐԸ**

Պատգ. ժողովը նկատի ունենալով որ բաղդատամբ անցեալ տարիներու, ապրուստի միջոցները աւելի դժուարամատչելի են, որոշեց պատասխանատու պաշտօնեաներու վճարումի սակը բարձրացնել ամուսնացածներու համար 22-ի, եւ ամուրիներու համար 18 տոլարի:

Պատգ. ժողովը որոշեց վերահաստատել Հ.Յ.Դ. զինավարժ խումբերու, ահումբներու, թատերախումբերու եւ վեթերաններու ֆոնտին մասին նախորդ Պատգ. ժողովի որոշումները, եւ յանձնարարել Կեդր. կոմիտէին եւ անոր կողմէ ընտրուած կանոնադրի վերաքննիչ յանձնախումբին մշակել համապատասխան կանոնադրութիւն:

THE NEW-ARMENIA-Ի ՀԱՐՅ

Պատգ. ժողովը նկատի ունենալով որ Հայ դատի օտար պրոպականտը Ամերիկայի մէջ պէտք է առաջ տարուի միայն մէկ մամուլով, կը յանձնարարէ Կեդր. կոմիտէի որ ջանայ Ազգ. միութեան միջոցաւ իրականացնել The New Armenia-ի եւ The Armenian Herald-ի միացումի գործը, հակառակ պարագային ուժ տալ The Armenian Herald-ի:

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ

Դատական յանձնախումբը Պատգ. ժողովին ներկայացուց իր որոշումները իրեն ներկայացուած խնդիրներու շուրջ: Պատգ. ժողովը վերաքննելէ յետոյ անոնց ներկայացուցած վճիռները յանձնեց նորընտիր Կեդր. կոմիտէի ի գործադրութիւն:

ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Պատգ. ժողովը երկու երրորդի մեծամասնութեամբ եռապատիկ ցանկի մը վրայէն ընտրեց յաջորդ Կեդր. կոմիտէի կազմին անդամները՝ Վ. Պ., Մ. Հ., Զ. Մ., Գ. Ռ., Ն. Տ. Ս. Թ., Մ. Տ. Մ., Պ. Գ.:

Փաստ. 1406-12

Ե 3.- ԱՐՄԷՆ ԳԱՐՈՅԷՆ Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

Ուաշինգթոն, 28 Յունուար 1918

Ընկերներ,

Ներփակ կ'ողարկեմ Ա. Իսահակեանի նամակը: Ինչպէս կը տեսնէք մեր աքսորուած ընկերներու օգնութեանը համար ձեր ուղարկած 1000 տոլլարը դեռ չեն ստացած ժընեւ:

Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ նաեւ Աւոյի դրութեանը վրայ, ինչպէս նաեւ Շանթի ընտանիքի: Ինձ կը թուի թէ «Հայրենիքը» պէտք է ուրախութեամբ գնէ նրա ոտանաւորներու այդ նոր հատորը 1000 Ֆրանքի-բացի օգուտից ոչ մի հետեւանք չի լինելու, եւ դրանով օգնած կը լինի նաեւ մեր ընկերոջ:

Գալով Շանթի ընտանիքի հարցին, ես կ'առաջարկէի մի հազար Ֆրանքի գումար մը (230-240 տոլլար) ուղարկել մեր ընկերներու օգնութեանը համար հաւաքուած գումարներէն:

Ռոստոմէն ստացած նամակս Ստոքհոլմէն է, Դեկտ. 5 թուակիր: Իւր գրած միջոցին կը պատրաստուի եղբր վերադառնալու Ռուսաստան, բայց ինչպէս կ'երեւայ յետոյ միտքը փոխել է եւ բժիշկ Ջաւրիեւի հետ միասին դէպի Փարիզ որոշել են գալ: Նամակի վերջումը կ'ըսէ որ եթէ Փարիզ գան ինձ հեռագրելու են որ ես էլ գնամ այնտեղ խոր[հր]դակցութեան համար:

Ռոստոմը գրում է թէ ժընեւ մերոնք մի նամակ են ստացել Խաչիկեանէն²⁶ (Կարնոյ մեր ընկերներէն մէկը որ հիմա Բուլղարիա կը գտնուի), որից ենթադրում են թէ Խաչատուրը (Ակնունի) եւ մեր ընկերներէն ոմանք ողջ են եւ կը գտնուին Գոնիա: Այս լուրը հաստատ չէ, բայց Ռոստոմը կը խոստանայ նորից տեղեկութիւններ հաւաքել այդ մասին:

Ուրիշ աղբիւրէ ստացած լուրերու համաձայն Նոյեմբերի վերջերը Պոլսէն մեկնող մի եւրոպացու վկայութեամբ Տաճկաստանում այլեւս հայկական հալածանք չկան:

Գալով իմ գործերուն, բացի այն որ մշտական շփման մէջ եմ այստեղի երեսփոխաններու հետ, ներկայումս գբաղուած եմ երկու տեղեկագիր պատրաստելու մէկը Ռուսահայաստանի մասին, ինչպէս գրեցի նախորդ նամակովս, իսկ միւսը՝ Տաճկահայաստանի. նաեւ նիւթեր եւ տեղեկութիւններ կը պատրաստեմ Պոլսոյ նախորդ դեսպան պր. Մորկընթաուին համար: Մի քանի

օր առաջ այստեղ էր եւ ինձ խնդրեց որ մեր հարցի մասին իրեն նիւթեր տամ: Սա մի լաւ առիթ էր մեզ համար մի հեղինակաւոր ամերիկացու բերանով ըսել այն ինչ որ մենք մտածում ենք մեր մասին:

Ընկերներ, նամակս վերջացնելէն առաջ, նորից մի դրական խնդրի մասին ստիպուած եմ գրելու: Ինչպէս գիտէք, պատերազմի պատճառով մեր ընկեր Ռոստոմի ընտանիքը, կիսն ու աղջիկը, ստիպուեցան ժընեւ մնալ, եւ մինչեւ այս վերջերս Տիկին Ջօրեանը դասեր տալով եւ մասամբ էլ իւր եղբայրներէն ստանալով, կարողացել է իւր գլուխը պահել առանց Ռոստոմին օգնութեանը: Ռոստոմը իւր վերջին նամակում գրում է որ Տիկինը դրութիւնը շատ նեղն է հիմա, որ Ռուսաստանից դրամ ստանալու հնարաւորութիւն չունի եւ ինձ կը դիմէ որ մի կերպ օգնեմ իրեն: Պէտք է գիտնաք որ մինչեւ այսօր ո՛չ Ռոստոմը եւ ոչ Տիկինը ոչ մի ատեն կազմակերպութեանը չեն դիմած իրենց ընտանեկան հոգսերով: Տիկինը այնքան աշխատասէր եւ արի եղած է որ իրենց ամուսնութիւնից ի վեր ինքը իւր սեփական աշխատանքով պահել է ընտանիքը՝ Ռոստոմը թողնելով բոլորովին ազատ կազմակերպութեանը համար: Եւ գիտնալով նրա հոգեբանութիւնը, պիտի խնդրէի որ նրան ուղարկելիք դրամական աջակցութիւնը ուղարկէիք ինձ, որ ես իմ քրոջ միջոցաւ իրեն հասցնեմ, ապա թէ ոչ եթէ իմանայ թէ կազմակերպական միջոցներից է, խեղճ Ռոստոմին գլխին կրակ կը թափէ:

Ինձ թուում է որ եթէ մի հազար Ֆրանք հասցնենք իրեն, 4-5 ամիսով բաւական պիտի լինի մինչեւ որ տեսնենք թէ ինչ կը լինի Ռուսաստանի դրութիւնը:

Եթէ դուք Պոսթոնէն ուղղակի ժընեւ դրամ չէք կարող փոխադրել, այդ դէպքում միւս գումարներն էլ ուղարկեցէք ինձ (Աւոյին եւ Շանթի ընտանիքին), ես այստեղից ուղղակի կարող եմ փոխադրել:

Նամակս անհամ նամակ դուրս եկաւ, դրամ, դրամ... Բայց թէ Ակնունիի մասին տուած լուրս ճիշդ դուրս եկաւ, այդ դէպքում կարծեմ մի քանի հազար տոլլարներ արժեն այս անհամ նամակս:

Ընկերական բարեկներով
Ա. ԳԱՐՈ

Յ. Գ.— Աւոյի նամակը խնդրեմ կարդալէն յետոյ ինձ դարձնէք:

26.- Խաչիկեան Տիգրան, ծանօթ Արգոման ծածկանունով:

Փաստ. 1406-36

Ե 4.- ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԷՆ Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

Ժրգնու, 22 Մարտ 1918

Սիրելի ընկերներ,

Ամիսների ընթացքում ստացել եմ նամակներ Գարոյից, Օզանեանից եւ երէկ էլ ընկեր Կարիսից[?]. ամէն անգամ պատասխանել եմ, սակայն նամակներս՝ որոնք ի հարկէ ամէն կասկածից վեր են, տեղ չեն հասնում, Փրանսական գրաքննիչը արգելում է: Recommandé²⁷ նամակին պաշտօնապէս յայտնում են թէ բռնել են, իսկ հասարակ նամակին ոչ մի խօսք:

Մնացել եմ շուարած թէ ինչ կերպով Ձեզ նամակ հասցնել: Գնացի այստեղի Փրանսական կոնսուլի մօտ բողոքեցի. կոնսուլը լսելով նամակների բովանդակութիւնը, մնաց զարմացած եւ յայտնեց թէ՛ կամ հայ գրաքննիչը թշնամի է ձեզ կամ չար, ծոյլ յիմարի մէկն է: Խոստացաւ դիմել Փարիզ կառավարութեանը. ես եւս դիմում եմ՝ թէ ինչ պատճառով հնարաւորութիւն չեն տալիս թղթակցելու. մարդիկ մի՞ թէ կարող են քաղցած ապրել. ես գրող մարդ եմ եւ գրածներս բռնում են:

Դեռ անցեալ Հոկտեմբերի 22-ին recommandé նամակով առաջարկ էի արել Ձեզ, որ հրատարակէիք իմ նոր ոտանաւորների եւ պոէմների մի գրքոյկ. այդ նամակը վար է դրուած, հանձարեզ գրաքննիչը կասկածելի բան գտնելով նրա մէջ:

Ընկեր Գարոյի առաջարկը՝ տպելու ուղարկել «Ուս-

տա Կարօ» վէպս չեմ կարող, որովհետեւ մօտս չէ, այլ գտնուում է ուրիշ տեղ պահուած, որ չեմ կարող ստանալ շնորհիւ ազնիւ գրաքննիչների:

Ընկեր Կարիսից առաջարկ ստացայ վերատպելու Աբու-Մահարիս. համաձայն եմ, բայց պայմանների մասին չեմ կարող որոշ բան յայտնել, թողնում եմ ընկերների որոշմունքին:

Սակայն Աբու-Մահարիս սրբագրել եմ եւ մօտ օրերս կ'ուղարկեմ սրբագրածը, որ այն տպէք. սրբագրածը անհամեմատ լաւ է հնից:

Աբու-Մահարուց յետոյ կ'ուղարկեմ եւս մի տետրակ նոր ոտանաւորների եւ պոէմների՝ առանձին հրատարակելու համար. կը բռնէ մօտաւորապէս 80-100 էրես:

Լսեցիք արդէն մեր դժբախտ ընկեր Յ. Դաւթեանի մահը...

Հայաստանից ո՛չ մի լուր չունենք. բացարձակապէս կտրուած ենք ամէն յարաբերութիւնից:

Ամբողջ մի տարի է դրամ չեմ ստացել. այնպէս որ մեծ շնորհակալութեամբ ստացայ Արմէն Գարոյի ուղարկած 1000 Փրանքը:

Մի նամակ ուղարկեցի Ձեզ Իտալիայի վրայով, յոյս ունենալով որ այնտեղի գրաքննիչը աւելի լայնամիտ է:

*Ձերմ ընկերական բարեկներով
Ձեր Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ*

27.- Յանձնարարեալ, պատուիրեալ:

Փաստ. 1406-88

Ե 5.- ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ՄԱՐՄՆՈՅՆ

1918 Յուլիս 6

Յարգելի հայրենակիցներ,

Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի 25-րդ Պատգ. ժողովը, որպէս թարգման մեր ընկերներու ցանկութեան, նորէն կու գայ յայտնելու Ձեզ, որ Դաշնակցութիւնը իր բարոյական եւ նիւթական բոլոր ուժով պիտի կանգնի Ազգ. Միութեան կողքին, հաւատալով որ քաղաքական ներկայ պայմաններուն մէջ մեր ժողովուրդին բոլոր հոսանքներուն համերաշխ գործակցութեամբ միայն հնարաւոր է մեր բոլոր ուժերը կիրարկել հայ ժողովուրդին ազատագրութիւնը իրագործելու համար:

Հաւատալով որ Ազգ. Միութեան միւս բոլոր հոսանքներն ալ պիտի առաջնորդուին այս միեւնոյն տեսակէտներով կը մնանք,

*Յարգանքներով
ԴԻԻԱՆ Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ
25ՐԴ ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԻՆ*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբեան Կարապետ – 229, 232:

Ադոնց Նիկողայոս – 73, 93:

Ազնաւորեան Է. – 300, 316:

Ազնաւորեան Յ. – 286, 321:

Աթարբէկեան Գէորգ – 93:

Ալեքսանդր Մելիք – 374, 375:

Ալեքսանեան Թովմաս – 229, 232:

Ալլահվերտեան Արմենակ – 229, 232, 233:

Ակնունի Է. – 109, 423:

Ահարոնեան Աւետիս – 6, 10-12, 14-16, 18, 26, 27, 30, 57, 96, 102, 182, 185, 199, 307, 366, 377:

Աղբարեան Նիկոլ – 6, 124, 157, 170, 173, 181-183, 199, 207:

Աճէմեան Հայկ – 279, 280:

Աճէմեան Մ. – 93, 124, 367:

Ամատունի Յովհ. – 106, 153, 196, 207, 298:

Ամիրեան Հ. – 300, 315:

Անդրանիկ (Օզանեան) – 5-8, 50, 52, 85, 100, 101, 103, 108, 109, 121, 176, 200, 303, 304, 329, 362, 363, 369, 412:

Անտոն Գոչ (Պոյաճեան) – 17, 39, 40, 42, 48:

Ապրեսեան Արամ – 229, 232:

Առաքելեան Համբարձում – 18, 29, 124:

Աստիկեան Յովհ. – 389, 392:

Արամեան Մատթէոս – 229, 232:

Արարատեան Սարգիս – 99, 107, 178, 179, 183:

Արէշեան (գոր.) Միք. – 199:

Արծրունի Վահէ – Տես Մուրադեան Մելիքսէթ:

Արղութեան Յովսէփ (Իշխան) – 6, 100, 101, 157, 178, 347:

Արմէն Գարօ (Փաստրմաճեան) – 10, 14, 33, 35, 37, 40-45, 63, 69, 71, 72, 74, 75, 78, 81, 167, 174, 176, 201, 369, 402, 407, 410, 413, 416, 419, 423, 424:

Արշաղ Հիւմայուն – 224:

Աւանէսով Վառլամ – 92-94:

Աւետիսեան Տիգրան – 204:

Աւերիանով Բորիս – 4, 5, 42, 69, 174, 402:

Աֆթանդիլեան Երուանդ – 228, 229:

Բարալեան Ա. – 178, 179, 181:

Բարայեան Վ. – 204:

Բաբլոյեան Յ. – 246:

Բաղդասարեան Տիգրան – 175, 176, 211:

Բաղդասարեանց Ա. – 275:

Բարսեղեան Պերճունհի – 368:

Բարսեղեան Սարգիս (Շամիր) – 145:

Բերար Վիկտոր – 30:

Բէժանբէգ (զնդապետ) – 108:

Բրայս Ջէյմս – 28, 33:

Բրանտինգ Եալմար – 32:

Գաբրիէլեան Սեդրակ – 288, 315, 321:

Գալիկեան Հրանտ – 5:

Գալուստեան Խորէն – 358, 361, 372, 373, 389, 417:

Գապատայեան Յովհ. – 352, 353, 375, 388, 396, 401, 409:

Գասպարեան Արշաւիր – 229, 232:

Գասպարեան Վարսենիկ – 94:

Գաւաֆեան Արշակ (Քեռի) – 101, 125, 132, 285, 305, 363, 365:

Գիբբոնս Հերբերտ – 30:

Գիւլիզեան – 52:

Գիւլիսանդանեան Աբրահամ – 171:

Գուշակեան Թորգոմ եպս. – 305:

Գրիգորեան Խաչատուր – 229, 232, 233, 245:

Գրիգոր Զօհրապ – 34, 368:

Գրիգոր Պուլկարացի – 145, 148, 151, 152, 208, 209, 211, 212:

Գրինֆիլդ Ջէյմս – 19, 64:

Դանիկ վարդապետ – 147, 150, 151, 210, 212:
 Դարբինեան Արտակ – 5:
 Դարբինեան Յ. – 389:
 Դարբինեան Ռուբէն – Տես Չիլինգարեան Արտաշէս:
 Դաւթեան Յոնան – 10, 11, 13-19, 24, 25, 34, 39, 41, 46, 65, 201, 411, 424:
 Դաւթեան Ռուբէն – 246, 250:
 Դերձակեան Ս. – 331:
 Դրօ – 6, 7, 9, 101, 104, 108, 110, 142, 180, 199, 363:

Եազուպ Արթին փաշա – 407:
 Եազուպեան Տիգրան – 317, 323:
 Եանուշքեւիչ (գօրավար) – 110:
 Եզանեան Տիգրան – 229, 232:
 Եգոր (Տէր Մինասեան) – 104:
 Եղիազարեան Գ. – 279:
 Եղիազարեան Հայրիկ – 90:
 Եոսուֆեան Յովհ. – Տես Իոսուֆեան Յովհ.:
 Եսայեան Չապչի – 5, 158, 219:
 Եսայեան Ս. Ա. – 162:
 Եսայեան Ստեփան – 288, 324:
 Եփրեմ Խան – 380:
 Եփրեմեան Մկրտիչ – 299, 315-317, 322, 323, 331:

Զարգարեան Մկրտիչ – 247, 248:
 Զաւարեան Սիմոն – 63, 132, 157, 162, 182, 330:
 Զաւրեան բժ. Յակոբ (Վիգէն) – 5, 15-17, 19, 21-24, 26, 33, 42, 65, 69-71, 90, 92, 94, 174, 200, 248, 291, 294, 307, 349, 362, 363, 402, 423:
 Զաքարեան Մկրտիչ – 252:
 Զեմլեակ – 104:
 Զոհրապեան Թադէոս – 246:
 Զօրեան Եղիսաբէթ – 48, 59, 423:
 Զօրեան Տիգրան – 176:

Էլիբէզեան Յ. – 204:
 Էնվեր – 369:

Թադէոսեան Արշակ – 29:
 Թադէոսեան Յովսէփ – 90, 91:
 Թազուորեան Ռուբէն – 296, 297, 301-303:
 Թալէաթ – 65, 369:
 Թամանով – 37:
 Թարվերդեան – 236:
 Թաֆթ Ուիլեամ Հովրատ – 57:
 Թերզեան Կ. – 296, 297:
 Թերզիպաշեան – 210:
 Թերլեմէզեան Միհրան – 145:
 Թերլեմէզեան Փանոս – 124:
 Թէքէեան Վահան – 308, 313, 377, 407:
 Թիրեաքեան – 43:
 Թոթովեց Վահան – 176:
 Թոմաս Ալպերթ – 35, 36:
 Թոյրնպի Արնոլտ – 38, 82:
 Թրոցկի (Տրոցկի) – 74, 90-92:

Ժոֆֆր Ժոզէֆ – 308:

Իչխան – Տես Արղութեան Յովսէփ:
 Իոսուֆեան Յովհ. – 39, 48, 411:
 Իսահակեան Աւետիք – 17, 19, 21, 40, 42, 48, 60, 65, 411, 423, 424:
 Իուդեանիչ Նիկոլայ – 26:
 Իսրայէլեան Աշոտ – 176:
 Իուզպաշեան Բ. – 150, 152:

Լալայեանց Աւետիք – 283, 286, 287, 289-291, 329, 330:
 Լենին – 6, 7, 83, 91-94, 216:
 Լենսինկ Ռապրթ – 10, 47-50, 52, 57, 71, 78:
 Լեպսիոս Եոհաննէս – 15, 19, 64, 65, 369:
 Լեոնեան Տիգրան (գօրավար) – 93:
 Լեոնեան Վահրամ – 301, 302, 304, 314:
 Լիթըլ Էտուրատ – 36, 40, 45, 49, 50, 52, 53, 74, 75:
 Լոճ (ծերակուտական) – 74:
 Լոուեցեան Ս. – 204:
 Լուկեվիչ Վալերիան (Արարատսկի) – 27-29, 177, 182, 183:

Խ աժակ Գարեգին – 22:
 Խաչատուրեան Մինաս – 288, 311, 330, 331:
 Խաչիկեան Տիգրան (Արզուման) – 107, 367, 369, 423:
 Խատիսեան Ալեքսանդր – 184, 194, 362, 363:
 Խատիսեան Գէորգ – 178, 180, 181:
 Խեչօ (Դաշնակցական) – 132:
 Խլղաթեան Յովսէփ – 145, 151:
 Խոջամիրեան Մարգար – 250:
 Խոջայեան Միքայէլ – 132:
 Խոնոնոնց Յովսէփ – 100, 105, 365:
 Խրիմեան Մկրտիչ (Հայրիկ) – 45:

Մ ոցիկեան Ս. Մ. – 375:

Կ ամենեւ – 92:
 Կանայեան Դրաստամատ – Տես Դրօ:
 Կապուտիկեան Բարունակ – 144, 145, 147, 150, 152, 178, 184, 190, 211:
 Կարախան(եան) Լեւոն – 90, 92, 94:
 Կարապետեան Գ. Տ. – 412:
 Կարինեան Արտաշէս – 93:
 Կարինեան Հրանտ (Բազրունի) – 156, 158:
 Կարծիկեան Խաչատուր – 170, 171, 173, 193:
 Կաֆեան Կարապետ (Շմաւոն) – 36, 37:
 Կերենսկի – Տես Քերենսկի:
 Կոբոյեան Յ. – 389:
 Կոմիտաս վարդապետ – 34:
 Կոսոյեան Լեւոն – 147:
 Կորկոտեան Ջաւէն – 210, 211:
 Կոմկոմաճեան Արտաւազդ – 208:
 Կրէյ (լորտ) – 82:

Հ ամազասպ (Սրուանձտեանց) – 6:
 Համբարձումեան Կոստի – 111, 149, 150, 176, 209:
 Համբարձումեան Մ. – 388:
 Հայկունի Գուրգէն – 93:
 Հանրմեան Արտաւազդ – 38, 39, 41, 44, 49, 50, 54, 56, 69, 174, 283, 288, 303, 311, 380, 386, 389, 397, 398, 406, 407, 409-411:

Հառւղ (գնդապետ) – 48, 50, 51:
 Հացագործեան Ա. – 158, 212:
 Հենտերսոն – 36:
 Հետին Ս. – 28:
 Հեքիմեան Գարեգին – 252:
 Հիւսմանս – 36:
 Հոյենհոլթ Էրնեստ – 65:
 Հոտքին Վ. – 376:
 Հրանտ Ասատուր – 34:

Ղ ազազեան Կորիւն – 133, 171, 182, 184, 185, 204:
 Ղազարեան Արշ. – 171:
 Ղազարեան Գ. – 171:
 Ղազարեան Միսակ – 12, 17, 19, 24, 25:
 Ղազարեան Յ. – 278:

Մ թիկեան Ջատիկ – 43, 390:
 Մալինցեան Նորայր – 130, 272, 273:
 Մալխասեան Ա. – 182, 316:
 Մալխասեան Միսակ – 252:
 Մալճանեան Սարգիս – 389, 401:
 Մալճեան Ա. – 300:
 Մալումեան Խաչատուր (Ակնունի) – 183:
 Մակինցեան Պօղոս – 92:
 Մահտեսեան Ա. – 415, 416:
 Մաճառեան Օննիկ – 68:
 Մամիկոնեան Ստեփան – 58, 124, 367:
 Մանասեան Սարգիս – 204:
 Մանասէրեան Ալեքսան – 246, 252, 254:
 Մանգասարեան Ս. – 236:
 Մանուէլեան Ա. Կ. – 409:
 Մանուկեան Արամ – 5, 6, 8, 9, 109, 124, 125, 131, 132, 148, 156-158, 178, 181, 183, 184, 199, 218:
 Մանուկեան Հմայեակ – 132, 158, 208, 209, 211:
 Մանուկեան Վուստիան – 34:
 Մասեհեան Յովհաննէս (Խան) – 19-24, 30, 33, 36, 37, 40, 307, 380, 410:
 Մատինեան Նիկոլ – 183:
 Մարգարեան Միհրան – 145:
 Մարգարեան Սմբատ – 92:

Մար Շիմոն – 224, 242:
 Մարտիրոսեան Յարուժիւն – 367:
 Մաքսապետեան Արմենակ – 145, 150-152, 210:
 Մելիք-Բաղդասարեան Բաղդասար – 246, 254:
 Մելիքեան Յովակիմ – 229, 232, 233:
 Մելիք-Ղարակէօզեան Գէորգ – 77:
 Մելիք-Վարդանեան Խաչատուր – 229, 232:
 Մելիք-Փարսաղանեան Ա. – 162, 163:
 Մելքոնեան Տիգրան – 146:
 Մեսրոպեան Սահակ – 208:
 Մեսրոպեան Սամուէլ – 150, 211, 214:
 Միսնիկեան Ալեքսանդր – 93:
 Միլիկով Պաւել – 20, 26, 32, 107, 110, 273:
 Մինոր – 132:
 Միքայէլեան Արսէն – 29, 358, 370-372, 388, 389, 392, 396, 401, 409, 412, 419:
 Միքայէլեան Քրիստափոր – 132, 162, 182, 183, 272:
 Մխիթարեան Օննիկ – 158, 201:
 Մ. Մուրատ – Տես Մուրատեան Մելիքսէթ:
 Մովսէսեան Յ. – 279:
 Մորկրնթաու Հենրի – 48, 57, 58, 88, 307, 423:
 Մուրատեան Մելիքսէթ – 361, 389, 401, 409:
 Մուրատ (Սեբաստացի) – 8, 245, 308, 394:

Յակոբեան Սիմոն – 90, 102:
 Յակովբեան Գասպար – 229, 232-234, 236, 238, 241, 242, 246, 249, 250, 252-25:
 Յարուժիւնեան Առ. – 246:
 Յարուժիւնեան Արտաշէս – 229, 232, 238, 252:
 Յարուժիւնեան Գրիգոր – 229, 232, 246, 250:
 Յարուժիւնեան Մարտիրոս – 29, 196:
 Յարուժիւնեան Սամսոն – 124, 362, 363:
 Յովհաննէսեան Երուանդ – 301, 314:
 Յովհաննիսեան Ալեքսան – 229, 232, 233, 238, 246, 249:
 Յովհաննիսեան Աշոտ – 94:
 Յովհաննիսեան Արշակ – 178, 181, 182:
 Յովհաննիսեան Խաչատուր – 229, 232:
 Յովհաննիսեան Յովսէփ – 215, 217:
 Յովհաննիսեան Ս. – 275:
 Յովսէփեան (գնդապետ) – 108:
 Յովսէփեանց Գարեգին եպս. – 9, 124:

Նազարբէկեան Թովմաս – 7, 8, 85, 176, 199:
 Նազարեանց Լիպարիտ – 10, 17, 29, 77, 89-94, 180, 290, 291, 368, 369:
 Նաթալի Շահան – 29, 387, 389, 392, 393:
 Նալպանտեան Զաւէն – 361:
 Նաւասարդեան Վահան – 157, 170, 178, 180, 182:
 Նեւրուզ (Տոբթ.) – 288, 309, 331:
 Նիկոլա Նիկոլայեւիչ – 367:
 Նիկոլ Դոման – 272:
 Նորատունկեան Գաբրիէլ – 19, 21-23, 29, 307:
 Նորատունկեան Մեսրոպ – 288, 311, 314:
 Նուպար փաշա – Տես Պօղոս Նուպար:

Շարճեան Ա. – 331:
 Շահբերունի – 178:
 Շահինեան Գառնիկ – 132:
 Շահխաթունեան Աւետիք – 132, 137, 179-184, 204, 205:
 Շահմազեան Արսէն – 171, 182, 199:
 Շահպաղ Բարսեղ – 34, 377:
 Շահումեան Ստեփան – 92:
 Շահրիկեան Յարուժիւն – 22:
 Շահրիկեան Ս. – 178:
 Շաղոյեան Լեւոն – 175, 211:
 Շաղոյեան Փանոս – 146:
 Շանթ Լեւոն (Սեղբոսեան) – 5, 35, 37, 38, 42, 49, 157, 158, 290, 411, 423:
 Շարաֆեան – 173:
 Շէյխ Նասրուլլահ – 264:
 Շմաւոնեան Արշակ – 51-53:

Ոսկանեան Տիգրան – 229:
 Ուիլսըն – Տես Վիլսըն:

Չաթոյեան Միհրան – 33:
 Չալիուչեան Գրիգոր – 124:
 Չամպրոզ Տոբթ. – 48:
 Չարլզ Արամ – 33:
 Չերնոզուբով – 151:
 Չթչեան Սահակ – 361, 389, 392, 401, 409:

Չիլինգարեան Արտաշէս – 89, 92, 182, 290, 291:

Չիչերին – 73:

Չիսնկելի – 71, 86:

Չոլրեան Լ. – 204:

Չոլրեան Յովսէփ – 145:

Չոպանեան Արշակ – 33:

Չրաքեան Մ. – 331:

Պաղտոյեան Սարգիս – 43, 361, 408, 409:

Պանդուխտ (Սեֆերեան Միքայէլ) – 6:

Պանիրեան Հայրապետ – 229, 232, 234, 235, 238, 246, 249, 252:

Պապաջանեան Միքայէլ – 109, 110, 124, 367, 368, 385:

Պառնէս – 36:

Պարթեւեան Սուրէն – 290:

Պարթըն Ճէյմս – 30, 48, 52, 53, 74, 95, 416:

Պարոյրեան – 51:

Պիոնեան Կարապետ – 226:

Պլաքուէլ – 52:

Պրայս Ճէյմս – 82, 400, 404:

Պրանտինկ – 36:

Պրիան Արիսթիս – 20, 308:

Պօղոսեան Անդրանիկ – 246:

Պօղոսեան-Միքայէլեան Նիկոլ (Իշխան) – 145:

Պօղոս Նուպար – 10-24, 26-31, 33, 36-38, 41, 45, 46, 52, 56, 58, 71, 74-76, 158, 294, 295, 307, 349, 353, 377-380, 384, 403, 405, 410:

Ջամալեան Արշակ – 77, 97, 132, 199:

Ջանփոլադեան Ա. – 107, 108, 125:

Ռշտունի Ս. – 409, 419:

Ռոստոմ (Ջօրեան Ստեփան) – 7, 10, 14, 17, 26, 34, 37, 39, 45, 59, 69, 82, 93, 94, 99, 101, 109, 124, 125, 131-133, 153, 156, 159, 161, 165, 174, 176, 201, 205, 219, 401, 411, 412, 423:

Ռորպախ Փօլ – 64:

Ռստրիկեան Արտաւազդ – 353, 374:

Սագինեան Ջօրա – 229, 232, 233:

Սահակեան Աշխէն – 229, 232:

Սահակեան Աւետիք (Հայր Աբրահամ) – 29, 124:

Սահակեան Մկրտում – 229, 232, 235, 238:

Սամարցեան Ս. – 199:

Սամսոն (Թաղէոսեան Ստեփան) – 238, 242, 246-248, 250, 252-254, 366:

Սանդալ Մ. – 388:

Սաչաքլեան Ահարոն – 53, 361, 388-390, 401, 408, 412, 419:

Սապահ-Գիւլեան – 33, 36, 380, 397:

Սասունի Կարօ – 5, 157, 171, 197:

Սարուխանեան Սարգիս – 246:

Սեպուհ (Ներսէսեան) – 5, 8, 245:

Սերենկիւլեան Յովհ. (Վարդգէս) – 34:

Սեֆերեան Միհրան (Պանդուխտ) – 108:

Սէքլէմեան Ա. Կ. – 353:

Սլթոն (Ծերակուտական) – 49, 50, 52:

Սիլիկեան Մովսէս – 8, 199:

Սմիլօ – 223, 224, 237, 241:

Սոսոյեան Մարգար – 145, 208:

Սուրէնեան Սերգէյ – 252:

Սուրէնեանց Գէորգ Ե. (Կաթողիկոս) – 9:

Սվազլեան Միհրան – 10, 30, 37, 45, 46, 48, 58, 74, 75, 403, 406, 416:

Ստեփանեան Միք. – 228, 229, 232, 246:

Ստեփանեան Յարուսթիւն – 100, 101, 270:

Սրուանձտեանց Համազասպ – 101, 144, 175, 215, 363:

Վահէ – 264, 277:

Վանդերվելդ – 32:

Վանկենհայմ – 64:

Վանցեան Արտ. – 156:

Վանփուշ – 158:

Վարանդեան Միքայէլ – 10, 12, 14, 17-20, 22, 24-27, 29, 30, 32, 34-37, 40, 41, 54, 57, 69, 70, 81, 88, 183, 302, 329, 364, 366, 369, 376, 377, 380, 389, 390, 410, 411:

Վարդան (Խանասորի) – 6, 100, 101, 105, 106, 110, 125, 201, 215, 365:

Վեհիպ փաշա – 8:

Վեհունի Արսէն Ծ. Վ. – 30, 378:

Վիլսոն Վուարօ – 30, 63, 74, 392, 395:

Վորոնով – 148, 149:

Վուամեան Արշակ – 33, 40, 98, 145, 362:

Վրացեան Սիմոն – 6, 10, 89, 95-97, 99, 103, 104, 107, 109, 125, 130, 137, 176, 178, 181, 182, 193, 198, 201, 202, 253, 369, 380, 381, 389:

Տամատեան Միհրան – 41, 308, 380, 386, 397, 406, 407:
Տերմէն – 148:

Տէր Գաբրիէլեան Սահակ – 92, 94:

Տէր Գէորգեան Վ. – 182, 204:

Տէր Գրիգորեան Ղազարոս քհն. (Ջալալսեցի) – 162:

Տէր Դաւթեան Յովսէփ – 11, 18:

Տէրեան Վահան – 92, 93:

Տէր Ջաքարեան Յ. – 5:

Տէր Իսրայէլեան Յ. – 178, 179, 181, 182, 184, 185:

Տէր Կարապետեան Գեղամ – 34:

Տէր Մինասեան Երուանդ – 51, 169, 176:

Տէր Մինասեան Ռուբէն – 6, 109, 111, 131, 166, 168-171, 173, 176, 180, 182:

Տէր Միքայէլեան Հայկ – 124:

Տէր Մովսիսեան Մեսրոպ եպս. – 100, 362, 363, 365:

Տէր Յակովբեան Ալեքսան – 229, 232, 234, 235, 238:

Տէր Յակովբեան Վաղինակ – 229, 232, 238:

Տէր Յարութիւնեան Գարեգին (Նժդէհ) – 171, 173, 182, 194:

Տէր Յովհաննիսեան Բագրատ (Պետրոս) – 263, 265:

Տէր Նիկողոսեան (գնդապետ) – 108:

Տէր Պօղոսեան Պ. – 170, 171, 173:

Տէր Սահակեան Մ. – 288, 327:

Տէրտէրեան Համբարձում – 182:

Տընսթերվիլ – 74:

Տիգրանեան Սիրական – 242, 366:

Տիւրկէրեան Գ. – 331:

Տուլեան Արծրուն – 419:

Րոբֆէլլըր – 366:

Փաշայեան Ն. Ն. – 401, 409:

Փափազեան Կ. – 416:

Փափազեան Ն. – 361:

Փափազեան Վահան (Կոմս) – 5, 109, 113, 124, 131, 158, 178, 200:

Փիրումեան Դանիէլ բէկ – 8:

Փիրումեան Պաւել բէկ – 218:

Փոխանեան Արմենակ – 157, 158, 160, 189:

Քաղազնունի Յովհ. – 185, 215, 367:

Քեալաչեան Գ. – 204:

Քեմալ Մուսթաֆա – 93:

Քեռի – Տես Գալաֆեան Արշակ:

Քերենսկի Ալեքսանդր – 47, 69, 71, 90, 91, 162, 174, 209, 232, 402:

Քոլմար Ֆոն տէր Կոլդ – 65:

Քրմոյեան Վահագն – 64:

Օզանեան Մերուժան – 29, 46, 65, 358, 362, 369, 372, 388, 401, 408, 419, 424:

Օհանջանեան Համազասպ – 90, 177-179, 81-84, 201, 205:

Օհանջանեան Սաթենիկ – 367:

Օհանջանեան Սարգիս – 111, 170:

Յալո Լէոփոլտ – 19, 28, 33:

Յեռերօ Գ. – 67:

Յիլիպս – 58, 61:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

- Ա**զարէն – 145, 292:
 Աթանանց – 216:
 Արաչկերտ – 3, 5, 8, 158, 175, 197, 200, 218, 263, 292, 346:
 Արատաղ – 115, 116:
 Արափարս – 158, 160:
 Արեքսանդրապոլ (Գիւմրի) – 4, 8, 63, 83, 117, 128, 133, 160, 171, 181, 184, 186, 194, 195, 200, 201, 206, 216, 363, 366:
 Արիւր – 144, 146, 151:
 Ալլավերդի – 186, 203:
 Ախալցխա – 8, 35, 128, 129, 135, 186, 201, 203, 364:
 Ախալքալաք – 4, 8, 63, 128, 129, 135, 181, 186, 188, 203:
 Ախլաթ – 116, 120, 175:
 Ախոռիկ – 292:
 Ակունք – 160:
 Աղաջան – 244:
 Աղբակ – 242, 246, 253, 254, 292:
 Աղեքսանդրիա – 22, 283, 285, 286, 288, 289, 298-300, 308, 311, 315-324, 326-328, 330, 331:
 Աղջավերան – 144:
 Ամասիա – 83:
 Ամենաշատ – 144:
 Ամերիկա – Տես Միացեալ Նահանգներ:
 Ամկուբերդ – 144:
 Ամսթերտամ – 63:
 Այաչ – 368:
 Այգեստան (Վան) – 144, 147, 148:
 Այնթափ (Պայազիտի շրջան) – 167:
 Անատոլիա – 26, 34, 82, 84, 87:
 Անգլիա – Տես Մեծն Բրիտանիա:
 Անդիջան – 162:
 Անդրկովկաս – Կովկաս – 3-7, 10, 12, 16-18, 20, 24, 26, 29, 30, 33, 35, 39, 41-48, 50-63, 69, 71-75, 78-84, 86, 87, 90, 91, 93, 95-99, 111, 113, 124-126, 131, 137-141, 145, 149, 156-158, 160, 163, 166-168, 170, 172, 174, 175, 177, 180, 181, 183-188, 192, 193, 196-202, 204-206, 209, 215, 216, 218, 220, 224, 227, 230, 236, 242, 256, 259-263, 265-268, 272-274, 276, 277, 281-284, 287, 289, 292, 294, 307, 310-312, 329, 332, 333, 336, 337, 350, 355, 360, 363, 364, 366-369, 380, 383-385, 389, 396, 401, 402, 407, 409, 410, 412, 416, 419:
 Անկշտանց – 144:
 Աննավանք – 144:
 Աշտարակ – 158, 160, 189, 191:
 Ապաղա – 115, 121, 145, 292:
 Ապպեվիլ – 56:
 Ասկերան – 216:
 Աստարա – 281:
 Աստուածաշէն – 144:
 Ատանա – 34:
 Ատելճեւազ – 115, 116, 120, 121:
 Ատնականց – 144, 146:
 Ատրպատական – 87, 121, 134, 194, 220-257, 264, 292:
 Արատենց – 144:
 Արդուին – 292:
 Արխանգելսկ – 97:
 Արճակ – 121, 144, 145, 147, 152:
 Արճէչ – 101, 103, 104, 115, 116, 119-121:
 Արմաւիր – 160, 189, 216:
 Արմշատ – 144:
 Արտաբիլ – 238, 246:
 Արտահան – 7, 60, 73, 83, 186, 201, 292:
 Արտամեո – 144, 146:
 Արտաշատ – 5, 54, 55, 129, 158, 160, 189, 191:
 Արտավէզ – 144:
 Աւանց – 144, 146, 147:
 Աւստրիա – 102, 220:
 Աֆղանիստան – 35, 87, 101:
 Բաբերդ – 8, 48, 175, 188, 216:
 Բազու – Տես Պաքու:
 Բալախանի – 134, 142:
 Բաղդադ – Տես Պաղտատ:
 Բաչ Ապարան – 9, 160:
 Բասեն – 5, 158, 167, 175, 195, 346:
 Բարզուշատ – 181:
 Բարվար – 144:
 Բելգիա – Տես Պելճիքա:
 Բերկրի – 115, 116, 121, 144, 145, 149, 152:
 Բժնկերտ – 146:
 Բիբի-Հէյբաթ – 134:
 Բողազքեասան – 144, 145:
 Բաբերդ – 8, 48, 175, 188, 216:
 Բազու – Տես Պաքու:
 Բալախանի – 134, 142:
 Բաղդադ – Տես Պաղտատ:
 Բաչ Ապարան – 9, 160:
 Բասեն – 5, 158, 167, 175, 195, 346:
 Բարզուշատ – 181:
 Բարվար – 144:
 Բելգիա – Տես Պելճիքա:
 Բերկրի – 115, 116, 121, 144, 145, 149, 152:
 Բժնկերտ – 146:
 Բիբի-Հէյբաթ – 134:
 Բողազքեասան – 144, 145:

Բոստոն – Տես Պոսթրն:
Բորթ-Սայրա – 285, 286, 288, 298, 308, 309, 327, 328, 331, 384:
Բորչալու – 129, 186, 188, 203:
Բուքրէչ – Տես Պուքրէչ:

Երեւան – 4, 5, 8, 9, 14, 57, 63, 83, 101, 103, 106, 107, 115, 122, 128, 130, 134, 142, 144, 148, 154, 156, 158, 160, 163, 171, 173, 175, 181, 184, 186, 188-191, 194-197, 205, 211, 216, 218, 366, 367:
Երզնկա – 8, 48, 175, 216, 292, 387:
Երուսաղէմ – 218, 387:
Եւրոպա – 10-12, 24, 26, 33, 36, 219, 366, 379, 384, 398, 411:

Գաշիրէ – 22, 283, 284-286, 289, 290, 298, 301, 308, 310, 312, 315, 319, 324, 327-331, 377:
Գանձակ – 8, 54, 88, 129, 134, 171, 181, 184, 186, 188, 195, 201, 215, 216, 363:
Գաւաշ – 144, 145, 293:
Գերմանիա – 7, 19, 26, 28, 32, 73, 96, 101, 102, 137, 138, 209, 220, 369, 412:
Գէոտեբորդ – 28:
Գրրգ-Բուլաղ (Ակունք) – 189:
Գիլան – 260, 261, 263-265, 273, 278-281:
Գիւմրի – Տես Ալեքսանդրապոլ:
Գոմս – 144:
Գոնիա – 423:
Գորիս – 128:
Գործօթ – 144, 145:
Գունէյ – 224:
Գրոզնի – 160:

Զանգեզուր – 129, 181, 186:
Զարանց – 144, 146:
Զէյթուն – 292:
Զիլանաձոր – 115, 116, 119-121, 175:
Զուիցերիա – 23, 25, 26, 28, 33, 35, 38, 74, 369, 376:
Զրուանդանց – 144:

Դամասկոս – 169:
Դանիա (Տանրմարք) – 26, 28:
Դաշտապար (Վասպ.) – 208, 209:
Դարմանգիւղ – 144:
Դերջան – 8, 175:
Դիզա – 240:
Դիլիջան – 160, 203:
Դիլման – 224:
Դուշէթ – 203:
Դուրան-Բարձրաւանդակ – 197:
Դուլաշէն – 144:

Էլիզավէթպոլ – Տես Գանձակ:
Էյլար (Աբովեան) – 189, 191:
Էնգելի – 61, 62, 261, 278, 280, 281:
Էջմիածին – 5, 12, 15, 18, 22, 33, 128, 129, 158, 163, 189, 194, 307, 367:
Էվիան – 19, 21:
Էրերին – 144, 146:
Էրզրում – Տես Կարին:
Էրիմերի – 144:

Եգիպտոս – 10, 11, 16, 25, 28, 30, 45, 102, 131, 174, 190, 219, 220, 282-333, 344, 349, 355, 376, 380, 381, 382, 384-386, 389, 398, 404, 406, 407, 417:
Եկմալ – 144, 145:

Թաղ – 144:
Թանթա – 283, 285, 286, 288, 298, 306, 327, 328, 330, 331:
Թանտուրէք – 116:
Թաւրիզ – 35, 55, 87, 166, 220, 221, 223-226, 232-235, 237-239, 243, 246, 249-251, 257, 380:
Թափարէզ – 115:
Թելաւ – 203:
Թեհրան – 54, 61, 64, 100, 101, 130, 219, 221, 229, 232-234, 259-261, 263-266, 273-275, 279:
Թիմար – 144-147, 208:
Թիֆլիս – 4-6, 8, 10, 11, 26, 27, 29, 33, 35, 37, 39 42, 43, 51, 55, 58, 61-63, 69, 74, 75, 78, 83, 86, 87, 90, 92, 95, 96, 100, 101, 103, 105, 107, 109, 112, 115, 125, 130, 132-135, 140, 141, 143, 148, 151, 153-155, 158, 160, 162, 164, 171, 173, 174, 177-179, 183, 186, 188, 189, 191-196, 198, 199, 203-205,

207, 209, 210, 215-217, 245, 247, 250, 253, 262, 362, 363, 366-368, 377:

Թորոս գիւղ – 194:

Թուխաք – 116:

Թուլուլ – 74, 75:

Թուճ – 115:

Թուրքեստան – 87, 162, 163:

Թուրքիա-Տաճկաստան – 3, 4, 5, 7, 19, 26, 32, 35, 37, 45, 52, 53, 58, 63, 65, 71, 73, 74, 78, 83, 84, 86, 87, 100, 113, 123, 131, 169, 170, 186, 199, 216, 220-222, 224, 226, 260, 266, 289, 336, 346, 362, 370, 381, 384, 401-404, 412, 415, 423:

Թրոյ – 373:

Ճընեւ – 10-12, 17, 19, 21, 24, 25, 33, 38, 39, 46, 48, 65, 66, 68, 70, 77, 97, 294, 298, 307, 349, 371, 377, 389, 390, 423, 424:

Իգաիր – 5, 8, 115, 116, 119, 150, 151, 158, 160, 189, 218, 363:

Իգմիր – 34:

Ինտիանա Հարպըր – 372:

Իսկենտերուն – 32:

Իտալիա – 10, 24, 26, 27, 376, 424:

Լահիճան – 123:

Լառնաքա – 301:

Լեհաստան – 24, 67:

Լեռնավայր – Տես Կիլիկիա:

Լէզք – 144, 146, 147:

Լիբանան – 88:

Լիմ – 146:

Լիմասոլ – 301, 314:

Լիւցերն – 183:

Լոնտոն – 11, 14, 17, 22, 28, 33, 35-38, 44, 50-52, 55, 62, 70, 88, 295, 307, 310, 376, 402, 410, 411:

Լոռի – 4, 8, 186, 203:

Լոս-Անճելոս – 396, 409:

Լօզան – 12, 33, 307:

Խանասոր – 241, 242:

Խառակոնիս – 144:

Խարականց – 144:

Խարբերդ – 32, 34, 292, 385, 402, 404:

Խարկով – 109, 189, 218:

Խաւենց – 144, 146:

Խէք – 144:

Խփշկ – 146:

Խիզան – 144:

Խնուս – 5, 8, 95, 103, 104, 111, 117-119, 158, 161, 175, 176, 197:

Խոյ – 55, 57, 221, 222, 224, 229, 232, 233, 238, 239, 242, 245, 246, 250-256, 369:

Խոչապ – 121, 144, 146, 148, 175:

Խոտորջուր – 188:

Խորզոմ – 144, 147:

Օալիա – 181, 186:

Օակդար – 144:

Օիծանց – 144:

Օվստան – 144:

Կարդուան – 128, 181, 186, 188, 363:

Կաճես – 144:

Կայնամերան – 144:

Կարանլուխ (Լոսագիւղ) – 189:

Կարեազին – Տես Ջիբրայիլ:

Կարին-էրզրում – 3, 5, 7, 8, 14, 26, 32, 33, 37, 38, 51, 52, 69, 78, 80, 83, 95, 105, 109, 111, 114, 142, 156, 166, 174, 175, 188, 195, 197, 200, 209, 216, 283, 292, 362, 387, 403, 411, 423:

Կարկառ – 144, 292:

Կարճկան – 145:

Կարս – 4, 7, 8, 57, 60, 73, 78, 83, 100, 128, 133, 158, 160, 170, 171, 181, 184, 186, 188, 194, 195, 200, 216, 363:

Կեմ – 144:

Կենդանանց – 144:

Կզլտաշ – 144:

Կէօրանդաշտ – 144:

Կիլիկիա – 14, 16, 17, 19, 21, 22, 24, 26, 32, 34, 42, 64, 168, 284-287, 298, 346, 385, 402, 403, 404:

Կիպրոս – 75, 283, 285, 286, 288, 291, 296-298, 303, 310-314, 327, 328, 331, 398, 417:
 Կիսլոդոնովսկ – 14, 30:
 Կիրաշէն – 144:
 Կիւսնենց – 144, 146:
 Կղզի – 144:
 Կողպանց – 144:
 Կոճ – 144:
 Կոճպաշ – 115:
 Կովկաս – Տես Անդրկովկաս:
 Կոռոնկաշ – 144, 146:
 Կոփ – 103, 116, 117:
 Կրետէ – 283, 291:

Հագօ – 114:
 Հալէպ – 33, 48, 169, 387:
 Հաճըն – 34:
 Համատան – 57, 221, 259, 261:
 Համիլթըն – 372:
 Հայկավանք – 147:
 Հայոց Ձոր – 144-148, 150, 152:
 Հաշտարխան – 92, 93:
 Հապէշխտան – 283, 291, 331, 385:
 Հասանով – 243:
 Հասպտան – 145:
 Հաւթուան – 224:
 Հեղիոպոլիս – 22:
 Հեքքիարի – 44:
 Հիրճ – 146:
 Հիւրթիւկ – 144, 146:
 Հնդկաստան – 35, 87, 100, 101, 385:
 Հնդստան – 144, 262, 291:
 Հոլանտա – 35:
 Հոմս – 169:
 Հոոմ – 11, 17, 26:

Ղազախ – 129, 181, 186, 203:
 Ղազուին – 221, 261, 268, 272:
 Ղալասար – 246:
 Ղամարլու – Տես Արտաշատ:
 Ղարաբաղ – 363:
 Ղարաղաղ – 222, 229, 232, 233, 238, 243, 244, 245:

Ղարաղան (Սեւ Արիւն) – 259, 262, 269, 270:
 Ղարաքիլիսա (Վանաձոր) – 8, 9, 135, 158, 160, 189, 194, 203:
 Ղարս – Տես Կարս:
 Ղուրտուղուլի – Տես Արմաւիր:

Ճանիկ – 144, 149:
 Ճաւա – 36:
 Ճափոն – 97:

Մազանդարան – 280:
 Մակու – 221, 224, 238:
 Մահլամ – 241, 242:
 Մամախաթուն – 114, 175, 216:
 Մանազկերտ – 101, 116, 117, 119, 175, 176, 197:
 Մանդան – 144:
 Մարաղա – 229, 233, 236, 238, 246:
 Մարաշ – 34, 169:
 Մարզա – 144:
 Մարմետ – 146:
 Մարոք – 32:
 Մարսէյլ – 380, 417:
 Սեծ Ղարաքիլիսա – Տես Ղարաքիլիսա – Վանաձոր:
 Սեծն Բրիտանիա – Անգլիա – 3, 18, 19, 21, 22, 26, 32, 82, 96, 222, 259, 294, 384, 400, 403:
 Սեշափարա – 243:
 Սեշէդ – 221:
 Սիւանտալ – 122, 238:
 Սիւսեալ Նահանգներ – Ամերիկա – 10, 12, 13, 16, 26, 28, 30, 32, 33, 35, 37, 39, 41, 48, 50, 70, 72, 75, 76, 78, 80, 88, 96, 99, 102, 107, 125, 131, 74, 90, 98, 201, 220, 291, 307, 311, 329, 334-424:
 Սիւանո – 26:
 Սիջադետք – 3, 26-28, 30, 32, 34, 44, 132, 168, 169, 346, 353, 369, 370, 383, 394, 416, 417:
 Սոլլա Գեօքչայ (Մարալիկ) – 194:
 Սոկս – 122, 148:
 Սոնթանա – 25:
 Սոնթենեկրօ – 384:
 Սոսկուա – 10, 55, 57-60, 62, 89-94, 112, 124, 216, 218:
 Սուժամբար – 226, 229, 232, 233, 235, 238:

Մուշ – 5, 8, 11, 14, 95, 100, 103, 107, 109, 111, 119, 158, 161, 171, 292:

Մուսա Լեռ – 286, 384:

Մուսուլ – 112:

Յ ունաստան – 283, 291:

Ն ախիջեան – 63:

Նապաթ – 144:

Նիկոսիա – 296, 297, 301, 304, 313:

Նիւ Եորք – 42, 43, 46, 48, 50, 51, 54, 63, 96, 201, 335, 340, 350, 353, 357, 373, 406, 409, 413:

Նիւ Ինկլենտ – 373:

Նոր Բայագէդ (գաւառ) – 5, 128, 158, 160, 189:

Նորգեղ – 144:

Նորդուզ – 175:

Նոր Նախիջեան – 124, 125, 142:

Նորչէն – 116:

Նորք – 191:

Նուխի – 218:

Շ ահգեալդի – 144, 146:

Շաղպաղի – 144, 146, 147:

Շապին Գարահիսար – 175:

Շատախ – 122, 144, 145, 148, 176:

Շարաֆխանէ – 224, 236-239, 241, 246, 250, 254:

Շարուր-Դարալագեազ – 63, 129:

Շիրազ – 221, 264:

Շիրակ – 160:

Շիքալօ – 336, 345, 371-373, 387, 393, 413:

Շորաւ – 238, 240, 241, 251:

Շուէտ – 26:

Շուլաւէր – 135, 203:

Շումլա – 368:

Շուշանց – 144, 146:

Շուշի – 4, 83, 128, 129, 171, 181, 195, 196, 216, 218:

Ո գմ – 144:

Ողան – 244:

Ոստան – 101, 175:

Ուաշինկթըն – 10, 26, 43-63, 71, 72, 74, 76, 78, 412, 423:

Ուէսթ Հոպոքըն – 53-55:

Ուստր – 378:

Ուրմիա – 55, 61, 87, 109, 122, 125, 220-224, 229, 232, 237, 238, 245-249, 251-254, 256, 257, 363:

Ուրֆա – 169:

Ուքրայնա – 198:

Չ արլթաուն – 387, 388, 393:

Չինաստան – 71:

Չիպուխլու – 145:

Չիքալօ – Տես Շիքալօ:

Պ ազէլ – 38:

Պաթուկ – 7, 8, 35, 37, 73, 78, 83, 85, 86, 134, 160, 201, 216:

Պաքաններ – 10, 72, 131, 283, 344, 368, 369, 380, 381:

Պաղեստին – 75:

Պաղտատ – 34, 44, 48, 56, 60, 72, 99, 102, 168, 324:

Պայագէտ (Հին) – 158, 175:

Պայրակ – 144, 146:

Պատնոս – 104, 116, 117, 120, 121:

Պարիզ – Տես Փարիզ:

Պարսկաստան – 35-37, 44-46, 52, 54, 55, 57, 58, 60-62, 72, 85, 87, 101, 113, 119, 121-123, 130, 131, 145, 170, 190, 210, 215, 220-281:

Պաքու – 4, 5, 8, 26, 27, 35, 39, 54, 55, 57, 58, 61, 74, 79, 84, 85, 89, 90, 92, 102, 124, 130, 134, 141, 142, 158, 160, 162, 168, 171, 191, 195, 196, 215, 218, 219, 302, 366, 367:

Պելճիքա – 24, 88, 384:

Պելուճիստան – 87:

Պետրոգրադ – Պետերբուրգ – 10, 11, 26, 27, 29, 33, 34, 41, 55, 71, 73, 89-91, 93, 95, 109, 112, 124, 125, 133, 134, 163-165, 167, 172, 178, 181, 201, 205, 209, 216, 218, 294, 367, 402, 412:

Պերլին – 19, 28, 35, 64, 65, 73, 77, 86, 89, 90, 262, 369, 380:

Պերն – 38, 380:

Պզտիկ գիւղ – 145:

Պիասիգորսկ – 26:

Պիթիլիս (Բաղէշ) – 3, 4, 7, 69, 83, 95, 109, 113, 119, 122, 123, 144, 174, 209, 292, 293, 403:
Պէյրուլթ – 96, 296, 301:
Պոլիս – 15, 26, 28, 32, 34, 39, 51, 63, 64, 65, 68, 71, 84, 98, 102, 132, 156, 283, 346, 353, 364, 368, 369, 403, 423:
Պոսթըն – 37, 41, 42, 47, 48, 50, 52, 59, 62, 63, 74, 75, 89, 95-97, 126, 335, 340, 341, 343, 351, 357, 369, 373, 387, 389, 391, 395, 397, 399, 402, 412, 413, 415, 418, 421, 423:
Պոլէնոս Այրէս – 39:
Պոլլանըլ – 103, 197:
Պոլկարիա – 26, 90, 98, 220, 284, 369, 423:
Պոլքրէշ – 29, 109, 298, 369:
Պրեստ-Լիթովսկ (դաշնագիր) – 7, 8, 10, 73, 75, 78, 80, 82-84, 86, 91, 93, 201, 332:

Ջալալ-օղլի (Ստեփանաւան) – 203:
Ջիբրայիլ-Կարեագին – 181, 186:
Ջիւանչիր – 129, 181, 186:
Ջուլֆա – Տես **Ջուղա**:
Ջուղա (Հին) – 57, 239, 242, 253:
Ջուղա (նոր) – 229, 232, 238, 259-261, 263, 273, 276:

Ռաշտ – 62, 221, 261, 265, 278, 281:
Ռոստով – 90, 189, 191, 363:
Ռոմանիա – 102, 220, 291, 298:
Ռոսիա – Ռուսաստան – 3, 6, 7, 16, 18, 19, 26, 27, 32-34, 99, 43, 52, 59, 66, 69, 70, 72, 73, 79, 80, 84, 92, 98, 105, 124, 127, 130-134, 136-140, 43, 49, 51, 57, 61, 63, 64, 74, 81, 82, 84, 85, 88, 89, 92, 93, 96, 98, 201, 209, 210, 212, 220, 222, 259, 273, 274, 276, 277, 294, 295, 362, 376, 377, 402-404, 409, 423:
Ռուսճուք – 368:

Սալմաստ – 122, 123, 221, 222, 224, 226, 233, 235-239, 241, 245-247, 249, 251, 253, 254, 256, 292, 363, 365:
Սալոնիկ (Սելանիկ) – 102, 329:
Սամբրղանո – 162:
Սան-Ֆրանսիսքօ – 396:
Սասուն – 114, 292, 347:
Սարղարապատ – 8, 9, 87, 158:

Սարիղամիշ – 114, 195, 200, 363:
Սեբաստիա-Սվազ – 32, 385, 402, 404:
Սերպիա – 24, 72, 80, 384:
Սեւան – 144, 145:
Սեւտիկին – 144:
Սէյդավար – 238, 240, 241, 250, 251:
Սէնթ Լուիզ – 371, 373, 413:
Սիպերիա – 147, 198:
Սիսիան – 129:
Սկանտինաւիա – 26, 377:
Սղզա – 144, 146, 147:
Սղնախ – 203:
Սնջուան – 243:
Սոչի – 107:
Սոսրաթ – 144:
Սուէտիա – 283, 298, 384, 398:
Սուլթանաբադ – 259-261, 274:
Սուլտուզ – 122, 123, 238:
Սուխում – 5, 158, 160:
Սուտան – 283, 331:
Սուրիա – 3, 32, 34, 75, 88, 169, 403:
Սուրմալու – 63, 189, 191:
Սոֆիա – 64, 96, 98, 367-369:
Սպահան – 264, 265:
Սպարկերտ – 144:
Սպեր – 188:
Ստոկհոլմ – 22, 26, 28, 34, 60, 68-70, 82, 93, 165, 174, 401, 409, 411, 423:
Սօուջբուլադ – 101, 122, 238:

Վաղարշապատ – 160, 191:
Վան – 3, 5, 7, 8, 15, 37, 44, 54, 57, 61, 69, 75, 78, 83, 95, 100, 101, 107, 109, 111, 113, 119-123, 144, 147, 148, 151, 152, 161, 174, 175, 208-212, 214, 216, 218, 251, 253, 254, 290, 292, 360:
Վաչինկիթոն – Տես Ուաչինկիթըն:
Վառնա – 368:
Վասպուրական – 5, 109, 113, 132, 144, 145, 147, 148, 150-152, 160, 197, 208-214, 263, 292, 346-348, 403:
Վերսալլ – 53, 54, 55, 80:
Վիեննա – 380:
Վլադիվոստոկ – 97:
Վրաստան – 6, 7, 62, 63, 86, 87, 201, 218:

Տաճկաստան – Տես թուրքիա:

Տաշկենտ – 162, 163, 171:

Տարօն – 5, 346-348:

Տերսիմ – 109, 114:

Տիատին – 115, 158:

Տիարպեքիր – Տիգրանակերտ – 32, 112, 292, 385, 402, 404:

Տիթրոյիթ – 371-373, 413:

Տղմուտ (գալառակ) – 243:

Տրապիզոն – 3, 5, 14, 83, 95, 114, 158, 166, 167, 188, 216:

Տփլիս – Տես թիֆլիս:

Ցիւրիւ – 38, 65:

Փարիզ – 11, 12, 14, 17, 19-22, 24-27, 29, 30, 32, 33, 35, 37, 38, 46, 52-60, 63, 69, 71, 76, 82, 294, 307, 310, 329, 349, 376-378, 380, 398, 403, 406, 407, 409, 417, 423, 424:

Փեթերսպուրկ – Տես Պետրոգրադ:

Փեսանդաշտ – 146:

Փրկարիպ – 144:

Փրովիտչնա – 354:

Քալիֆորնիա – 343, 372-374, 388, 397, 401, 409, 413, 419, 421:

Քանատա – 340, 345, 372, 373:

Քանաքեռ – 129, 189, 191:

Քապապիկ – 144:

Քալթառու (Փանիկ) – 194:

Քերծ – 146:

Քէօթահիա – 34:

Քէօշկ – 144, 147:

Քիեւ – 142, 218:

Քիւրտիստան – 36, 44, 46:

Քոչանի – 144, 146:

Քրիստիանա – 26:

Օդեսա – 37, 69, 174, 218:

Օլթի – 186, 201, 363:

Օչական – 158, 160, 189, 191:

Օրտուպատ – 63:

Տիլատելֆիա – 46, 58:

Տիլիպէ – 368:

Տիչպուրկ – 336:

Տիրենցէ (Տլորանս) – 67:

Տրանսա – 3, 18, 19, 21, 24, 26, 32, 33, 174, 294, 307, 329, 376, 384, 385, 402-405:

Տրեզնօ – 344, 352, 374, 375, 396, 396, 413:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱՔԱՆ ----- 3

ԳԼՈՒԽ I

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

(էջ 10 – 94)

Քաղաքական գործունեություն ----- 10

Ա 1–Ա 11.- Յոնան Դաթեանի նամակները Արեւելեան բիւրոյին (1916) -----11-23

Ա 4.- Արեւելեան բիւրոյի պատասխանը Յոնան Դաթեանին (1916) -----14

Ա 12.- Ընկեր Յոնանի կարծիքները մեր անելիքների մասին (15/1/917) ----- 24

Բ 1 – Բ 5.- Միք. Վարանդեանի նամակները Ամերիկայի Կեդր. կոմիտէին (1916) ----- 26-31

Բ 4.- Մի համաձայնութեան առթիւ ----- 32

Բ 6 – Բ 8.- Միք. Վարանդեանի նամակները Արմէն Գարոյին (1918) ----- 35-40

Գ 1.- Արմէն Գարոյէն Յոնան Դաթեանին (1917) ----- 41

Գ 2 – Գ 29.- Արմէն Գարոյի նամակները Ամերիկայի Կեդր. կոմիտէին (1917-1918) ----- 43-63

Դ 1.- Թէ ինչպէ՞ս Տոքթ. Լեփսիոս յաջողեցաւ Պերլին երթալ 1915ին ----- 64

Դ 2.- Ժընեւի դաշնակց. խմբակցութեան կողմէ հեռագիր ուղղուած 1917 թ. Ապրիլ 5-ի հաւաքին ----- 66

Դ 3.- Իտալացի հայասերներու հեռագիրը ռուս նախարարին ----- 67

Դ 4.- Ժընեւի դաշնակց. ուսանողութեան բողոքը ընկերվար միջազգ. թուրք պատուիրակներու ընդունման դէմ ----- 68

Դ 5.- Արտաւագր Հանըմեանէն Հ.Յ.Դ. Եգիպտոսի կոմիտէին ----- 69

Դ 6.- Ռոստոմէն Յոնան Դաթեանին ----- 70

Դ 7.- Արմէն Գարոյի դիմումը Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար

Ռապրոք Լենսինկի Կովկասի տազնապալի կացութեան մասին ----- 71

Դ 8.- Ռուսահայոց Ազգ. Խորհուրդի կոչը Գերմանիոյ ----- 73

Դ 9.- Պրեսոս Լիթովսկի դաշնագրի դեմ ռուս կառավարության բողոքը Գերմանիոյ -----	73
Դ 10.- Պօղոս Նուպարեն Արմեն Գարոյին եւ Միհրան Սվազլեանին (18-4-1918) -----	74
Դ 11.- Պօղոս Նուպարեն Արմեն Գարոյին եւ Միհրան Սվազլեանին (20-4-1918) -----	75
Դ 12.- Լիպարիտ Նազարեանցեն Հ.Յ.Գ. Ժընեւի հայ կոմիտէին (27-4-1918) -----	77
Դ 13.- Արմեն Գարոյի երկրորդ դիմումը Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Լենսինկի Կովկասի տագնապալի կացութեան մասին (10-5-1918) -----	78
Դ 14.- Կովկասի ողբերգութիւնը -----	82
Դ 15.- Լիպարիտ Նազարեանցեն Ս. Վրացեանին -----	89

ԳԼՈՒԽ II

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

(էջ 95 – 125)

Կամաւորական շարժում -----	95
----------------------------------	----

Բաժին Ա.

Ա 1.- Արեւելեան բիւրոյի ծածկագիր նամակը Թեհրանի Կ. Կ.ին -----	96
Ա 2.- Ամերիկայի Կ. Կ.էն «Դրօշակ»ի խմբագրութեան (28-7-1915) -----	97
Ա 3.- «Դրօշակ»ի խմբագրութենէն Ամերիկայի Կ. Կ.ին (5-9-1915) -----	97
Ա 4.- Ամերիկայի Կ. Կ.էն «Դրօշակ»ի խմբագրութեան (15-10-1915) -----	99
Ա 5.- Ռոստոմէն Ամերիկայի Կ. Կ.ին -----	97
Ա 6.- Արեւելեան բիւրոյէն Թեհրանի Կ. Կ.ին (30-12-1915) -----	101
Ա 7.- Միմոն Վրացեանէն «Հայրենիք»ի խմբագրութեան (20-1-1916) -----	103
Ա 8.- Արեւելեան բիւրոյէն Ամերիկայի Կ. Կ.ին (6-3-1916) -----	105
Ա 9.- Միմոն Վրացեանէն Հ.Յ.Գ. Ամերիկայի Կ. Կ.ին (2-4-1916) -----	107
Ա 10.- Արեւելեան բիւրոյի ծածկագրի պատճէնը (14-4-1916) -----	110
Ա 11 – Ա 12.- Հ.Յ.Գ. Արեւելեան բիւրոյի ծածկագիր նամակները Ամերիկայի Կ. Կ.ին (1916 Մայիս) -----	112-114

Բաժին Բ.

Բ 1.- Հայ կամաւորական Բ. գունդի գործունէութիւնը -----	115
Բ 2.- Հայ կամաւորական Ա. գունդի գործունէութիւնը -----	119
Բ 3.- Հայ կամաւորական Է. գունդի գործունէութիւնը -----	122
Բ 4.- Միմոն Վրացեանէն Հ.Յ.Գ. Ամերիկայի Կ. Կ.ին (20-5-1916) -----	124

Բ 3.- Հ.Յ.Գ. Վասպուրականի Շրջանային ժողովը (18-1-1918) -----	208
Բ 4.- Յովսէփ Յովհաննիսեանի զեկուցագիրը Թեհրանի համայնքային խորհուրդին Բազուի կացութեան մասին (13-2-1918) -----	215
Բ 5.- Արամ Մանուկեանի նամակը Վանի ընկերներուն (6-3-1918) -----	218
Բ 6.- Ռոստոմէն Եգիպտոսի կոմիտէին (3-4-1918) -----	219
Բ 7.- Ռոստոմէն Թեհրանի Կ. Կ.ին (3-4-1918) -----	219

Կ Ա Ձ Մ Ա Կ Ե Ր Պ Ա Կ Ա Ն
Շ Ր Ձ Ա Ն Ն Ե Ր

ԳԼՈՒԽ IV

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ

(էջ 220 – 257)

Ատրպատականի Կեդր. կոմիտեւորին -----	220
Բաժին Ա.	
Ա 1.- Ատրպատականի անցքերը 1906-1918 տարիներուն -----	221
Բաժին Բ.	
Բ 1.- Հ.Յ.Գ. Ատրպատականի շրջանային ժողովը (25-5-1917) -----	225
Բ 2.- Չեկուցում Վրէժի ժամանակաւոր մարմնից Հ.Յ.Գ. Ատրպատականի Շրջանային ժողովին (20-6-1917) -----	226
Բ 3.- Արձանագրութիւն Հ.Յ.Գ. Ատրպատականի Շրջանային ժողովի նախապատրաստական նիստի (20-24/6/1917) -----	229
Բ 4.- Արձանագրութիւններ Հ.Յ.Գ. Ատրպատականի Տրդ Շրջանային ժողովի -----	232
Բ 5.- Չեկուցումներ Հ.Յ.Գ. «Մինարէթ» կոմիտէի 1917 թուի գործունէութեան -----	239
Բ 6.- Աւարայր-Խոյ քաղաքի տեղեկագիր -----	240
Բ 7.- Գասպար Յակոբեանի զեկուցագիրը Ատրպատականի հայոց դրութեան մասին (27-6-1917) -----	241
Բ 8.- Չեկոյց ընդհանուր զձերով Ղարաղաղի -----	243
Բ 9.- Հ.Յ.Գ. Ատրպատականի Կ. Կ.ի դիմումը (20-12-1917) -----	245
Բաժին Գ.	
Գ 1.- Հ.Յ.Գ. Ատրպատականի շրջանային խորհրդակցութիւն (6-9/1/1918) -----	246
Գ 2.- Աւարայր-Խոյի կոմիտէն Հ.Յ.Գ. Ատրպատականի Կ. Կ.ին (5-1-1918) -----	255
Գ 3.- Հ.Յ.Գ. Ուրմիոյ մարմնին, Չինուորական մարմնին եւ ընկերներին -----	256
Գ 4.- Հ.Յ.Գ. Ատրպատականի Կ. Կ.ի անդամ Արտաշէս Յարութիւնեանին (20-12-1917) -----	257

ԳԼՈՒԽ V

ԹԵՀՐԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՆՈՒԹԻՒՆ

(էջ 258 – 281)

Թեհրանի Կեդր. կոմիտեություն ----- 258

1.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Շահստանի Կ. Կ.ի (1914 Յունիս-1918 Մայիս) ----- 259

2.- Գիլան կոմիտեն Արեւելեան բիւրոյին (2-9-1915) ----- 263

3.- Գետափ-Նոր Ջուղայի ենթակոմիտեն Շահստանի Կ. Կ.ին (5-9-1915) ----- 264

4.- Գիլանի կոմիտեն Շահստանի Կ. Կ.ին (6-9-1915) ----- 265

5.- Հ.Յ.Դ. Շահ քաղաքի կոմիտեի 1914 թ. Սեպտ. 6-ից մինչեւ 1916 թ. Յունուար 1-ի տեղեկագիրը ----- 266

6.- Թեհրանի Կ. կոմիտեն Արեւելեան բիւրոյին (6-4-1917) ----- 273

7.- Արձանագրութիւն Հ.Յ.Դ. Սուլթանաբադի մարմնի (28-8-1917) ----- 274

8.- Գետափ-Նոր Ջուղայի ենթակոմիտեն Հ.Յ.Դ. Շահստանի Շրջանային ժողովին (1-1-1918) ----- 276

9.- Արձանագրութիւններ Գիլանի վեցերորդ Շրջանային ժողովի (28-2-1918– 4-3-1918) ----- 278

ԳԼՈՒԽ VI

ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԵՆՈՒԹԻՒՆ

(էջ 282 – 333)

Եգիպտոսի կոմիտեություն ----- 282

Բաժին Ա.

Ա 1.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Եգիպտոսի կոմիտեի ընդհ. գործունէութեան (1915 Յունուար – 1916 Յուլիս) ----- 283

Ա 2.- Ամփոփում Հ.Յ.Դ. Եգիպտոսի շրջանին վեցերորդ Շրջանային ժողովի աշխատանքներուն ----- 285

Ա 3.- Ձեկուցում «Յուսաբեր»ի մասին ----- 289

Ա 4.- Մի մոռանաք հայրենիքը (կոչ եգիպտահայ հասարակութեան) ----- 292

Ա 5.- «Դրօշակ»ի խմբագրութենէն Հ.Յ.Դ. Եգիպտոսի կոմիտեին (12-9-1915) ----- 294

Ա 6.- Հ.Յ.Դ. Կիպրոսի շրջանի կազմակերպութեան առթիւ (28-9-1915) ----- 296

Ա 7.- Պատճէն Հ.Յ.Դ. Նիկոսիոյ ընկերներու Ա. նիստին (28-9-1915) ----- 297

Ա 8.- Եգիպտոսի կոմիտեն Հ.Յ.Դ. «Դրօշակ»ի խմբագրութեան (18-11-1915) ----- 298

Բաժին Բ.

Բ 1.- Վեցամսեայ տեղեկագիր Հ.Յ.Դ. Աղեքսանդրիոյ ենթակոմիտեին ----- 299

Բ 2.- Տեղեկագիր No Ա. Հ.Յ.Դ. Կիպրոսի ենթակոմիտեի (28 Սեպտ. 1915 – 30 Յունիս 1916) ----- 301

Բ 3.- Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Թորգոմ եպս. Գուշակեանի
Քեռիի (Ա. Գաւաֆեան) նահատակութեան առթիւ արձակ բանաստեղծութիւնը (2-7-1916) ----- 305

Բ 4.- Տեղեկագիր Հ.Յ.Գ. Թանթայի ենթակոմիտեի (26-6-1916) -----	306
Բ 5.- «Գրօշակ»ի խմբագրութենէն Հ.Յ.Գ. Եգիպտոսի կոմիտեին (22-7-1916) -----	307
Բ 6.- Հ.Յ.Գ. Եգիպտոսի կոմիտեին Աղեքսանդրիոյ ընկերներուն (6-11-1916) -----	308
Բ 7.- Հ.Յ.Գ. Եգիպտոսի կոմիտեին Կիպրոսի ենթակոմիտեին (10/23-1-1917) -----	310
Բ 8.- Կիպրոսի տեղեկագիր No Բ. (1-7-1916 – 30-6-1917) -----	312

Բաժին Գ.

Գ 1.- Վեցամսեայ տեղեկագիր Հ.Յ.Գ. Աղեքսանդրիոյ ենթակոմիտեին (1-8-1916 – 15-2-1917) -----	315
Գ 2.- Եռամսեայ տեղեկագիր Հ.Յ.Գ. Աղեքսանդրիոյ ենթակոմիտեին (ներկայացուած Ընկերական Ընդի. ժողովի 1917 թ. Օգ. 16-ի նիստին) -----	317
Գ 3.- Ամփոփում Հ.Յ.Գ. Եգիպտոսի Է ^ր Շրջանային ժողովի ատենագրութեանց -----	327
Գ 4.- Շրջաբերական (8-4-1918) -----	332

ԳԼՈՒԽ VII

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ

(էջ 334 – 424)

Ամերիկայի Կեղր. կոմիտեութիւն -----	334
---	-----

Բաժին Ա.

Ա 1.- Որոշումներ Հ.Յ.Գ. Ամերիկայի շրջանի 21րդ Պատգ. ժողովին (1914 – քաղուածքներ) -----	335
--	-----

Բաժին Բ.

Բ 1.- Որոշումներ Հ.Յ.Գ. Ամերիկայի շրջանի 22րդ Պատգ. ժողովին (1915 – քաղուածքներ) -----	340
Բ 2.- Պաշտօնական կոչ ամերիկահայ զաղութին -----	346
Բ 3.- «Գրօշակ»ի խմբագրութենէն Ամերիկայի Կեղր. կոմիտեին (20-6-1915) -----	349
Բ 4.- Շրջաբերական թիւ 8 Հ.Յ.Գ. Ամերիկայի Կեղր. կոմիտեին (9-8-1915) -----	350
Բ 5.- «Ասպարէզ» թերթի հաստատութենէն Հ.Յ.Գ. Ամերիկայի Կեղր. կոմիտեին (20-9-1915) -----	352
Բ 6.- Ամերիկայի Կեղր. կոմիտեին «Գրօշակ»ի խմբագրութեան (27-10-1915) -----	353
Բ 7.- Ամերիկայի Կեղր. կոմիտեին «Գրօշակ»ի խմբագրութեան (9-12-1915) -----	354

Բաժին Գ.

Գ 1.- Օրակարգի հարցեր Հ.Յ.Գ. Ամերիկայի շրջանի 23րդ Պատգամ. ժողովի (1916 Գեկտ.) -----	355
Գ 2.- Որոշումներ Հ.Յ.Գ. Ամերիկայի շրջանի 23րդ Պատգ. ժողովին (1916 – քաղուածքներ) -----	357
Գ 3.- Ինչպէս ծնունդ կ'առնէ կամատրական շարժումը -----	362
Գ 4.- Գործիչ Արսէն Միքայէլեանի տեղեկագիրը -----	370
Գ 5.- Տեղեկագիր Խորէն Գալուստեանի -----	372
Գ 6.- Տեղեկագիր «Ասպարէզ» թերթի խմբագրական եւ վարչական կազմերուն -----	374

**ՆԻԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ – ԺԳ. ՀԱՏՈՐ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ**

**Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ
ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒԲԵԱՆԻ**

**Համակարգչային շարուածք եւ էջադրում
ԹԱՄԱՐ ՄՆԱՊԵԱՆ-ՍՈՒՐՃԵԱՆԻ**

ՆԻԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
շարքի բոլոր հատորները տեղադրուած են
www.elibrary.am եւ www.historyofarmenia.am կայքէջերուն վրայ:

TOME XIII

**ARCHIVAL DOCUMENTS FOR THE HISTORY
OF
THE ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION – DASCHNAKZOUTIOUN**

*All volumes of the series
ARCHIVAL DOCUMENTS FOR THE HISTORY OF THE ARF – DASCHNAKZOUTIOUN
can be found at
www.elibrary.am and www.historyofarmenia.am websites, in digital format.*

ՑՐՈՒՈՒՄԻ ԿԵԴՐՈՆ

HAMAZKAYIN PRINTING & PUBLISHING HOUSE

P.O.BOX 80-1096

BOURJ HAMMOUD – LEBANON

TEL.: 00961 - 1 - 241263/4

FAX: 00961 - 1 - 260329

E-MAIL: print@hamazkayin.com

www.hamazkayin-bookstore.com



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ